

Գրիգոր Հոթոյեան

ՃԱՆԱԴԱՐԿ

Թորոնթօ
2007



Գիրքս կը նուիրեն սիրելի կնոջս՝
Շաքէ Զորոյեանին
որ մեր անուսնութեան թուականէն
18 Յունուար 1953էն ի վեր, քաջալերած է
գրական աշխատանքներս եւ իր հրեշտակային
գուրգուրանքով հսկած է առողջութեանս:
Իր հոգածութեան եւ հանդուրժողութեան
կը պարտին Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ
Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառին կողմէ
1 Զոկտեմբեր 2005ին, «Ս. Մեսրոպ Մաշտոց»
շքանշանին արժանանալս:

ԳՐԻԳՈՐ ԶՈԹՈՅԵԱՆ



ԳՐԻԳՈՐ ՅՈԹՈՅԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Իմ խորին եւ սրտագին շնորհակալութիւններս կը յայտնեմ իմ բանաստեղծութիւններս եղանակաւորող երաժշտագէտ-յօրինող Յակոբ Մանուկեանին, Գեորգ Յարութիւնեանին, Սարգիս Համպոյեանին եւ Անահիտ Կուտսուզեանին:

- Գիրքիս յառաջաբանը գրող, պատմաբան, հեղինակ, խմբագիր եւ հրատարակիչ ընկեր Արմէն Տօնոյեանին:
- Գիրքիս մէկ մասին գրաշարութիւնը անհատոյց կատարած ընկերուհի Սիւզի Գալթակեանին:
- Գիրքիս գրաշարութիւնը, սրբագրութիւնները, էջերու եւ նըկարներու ձեւաւորումները խղճմտօրէն եւ գնահատելի հասկացողութեամբ եւ կարողութեամբ կատարող ընկերուհի Մեղեդի Էթեմեզեանին եւ մօրը՝ տիկին Սօսի Էթեմեզեանին:
- Իմ բոլոր պատմուածքներս եկեղեցւոյ «Շողակաթ» ամսաթերթին մէջ հրատարակող Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանին:
- Մարդկային զանազան բարիքներով ինծի օգտակար եղող, գիրքիս կողքը գծագրող արուեստագէտ ընկեր Յակոբ Ծանպազեանին:
- Եւ ամէն անոնց, որոնք իրենց օժանդակութիւններով եւ քաջալերութիւններով աջակցեցան այս գիրքի հրատարակութեան:

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ



Այս հատորին մեկենասութիւնը
սիրով ստանձնեց աղջիկս՝
Անի Ջոթոյեան-ժոլի եւ թոռնիկներս՝
Քրիստափորը եւ Ստեփան-Արմէնը:
Հազար շնորհակալութիւն իրենց հայաշունչ
եւ ծնողասէր ոգիին:

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԿՈՂՄԷ

Իմ 60-ամեայ գրական գործունեության ճանապարհին, բանաստեղծություններով, յօդուածներով, թղթակցություններով, պատմուածքներով իմ աշխատակցությունս բերած են Սփիւռքի եւ Յայաստանի մամուլին, որոնցմէ առանձին գիրքով հրատարակուած են «Սիրտը Ափին Մէջ» (բանաստեղծություններ՝ 1987ին), «Նուիրում» (երգեր եւ բանաստեղծություններ՝ 2002ին) եւ «Ի Խնդիր Բարոյական Գնահատութեան» (պատմուածքներ՝ 2005ին) հատորները:

Սակայն, մամուլին մէջ եւ անտիպ կը մնան մեծ թիւով ուսումնասիրություններ, յօդուածներ, թղթակցություններ, հարցազրոյցներ, երգեր եւ բանաստեղծություններ, որոնցմէ զատեցի իմ հայեցողութեամբ պատմականօրէն կարելոր եւ սրտիս խօսող գրություններ, որոնք ամփոփուեցան սոյն հատորին մէջ եւ որոշ ուղղութիւն եւ պատկեր մը կու տան կեանքիս հանգրուաններուն եւ 60 տարիներու ընթացքին հայ կեանքի որոշ շրջանակներու եւ հատուածներու մէջ գոյութիւն ունեցող տագնապներուն եւ յաջողություններուն, յիշեցնելով մասնաւորաբար այդ օրերու ազգային, գրական եւ եկեղեցական կեանքի զանազան երեսները եւ մթնոլորտը՝ Սուրիոյ, Լիբանանի, Քանաւայի եւ Յայաստանի մէջ:

Սոյն հատորը գրական-գեղարուեստական բովանդակութիւն չունի: Հոն ամփոփուած գրությունները, որոնցմէ շատերը լոյս տեսած են 50-60 տարիներ առաջ, որոնք մամուլի էջերէն դուրս հանելով պատրաստուեցաւ այս հատորը, որ մեծ դիւրութիւն կ'ընծայէ անցեալին կատարուած ձեռնարկներուն նպատակը, բովանդակութիւնը եւ թուականները յիշեցնելու, որոնց ընթերցումը այդ շրջաններուն գործող եւ ապրող հայ ազգայիններուն, կը վերյիշեցնէ այդ օրերը: Իսկ նոր սերունդները կ'ունենան անցեալին կատարուած ձեռնարկներէն որոշ գաղափարներ, ընդօրինակելով անոնք հայրենասիրական, ազգային եւ եկեղեցասիրական ոգին:

Այս նպատակով եւ յանձնառութեամբ կը հրատարակուի «Ճանապարհ» հատորը, որ եթէ արդարացնէ իմ ծրագրուած նպատակը, խոր գոհունակութիւն պիտի զգամ:

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄՏԱԽՈՐԱԿԱՆ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻՆ ԲԱՐԻ «ՃԱՆԱՊԱՐ»

Իմաստասերներ՝ մտաւորականութեան մասին իրենց ուղղուած հարցումին կը պատասխանեն ըսելով, որ մտաւորականը ոչ միայն գիր ու գրականութեան նը-
կիրուած ստեղծագործողն է, այլ ազգային, մշակութային, մարդկային արժէքներուն
հետեւող, անոնց կերտումներուն եւ պաշտպանութեան նուիրուած առաջնակարգ
յանձնառու անձնաւորութիւնն է:

Գրիգոր Յոթոյեանի կտրած կեանքի ուղին եւ զայն պարուրող հարուստ
փորձառութիւնը թուղթին, պատմութեան ճակատագրին յանձնումի այս վկայագրու-
թեան առթիւ՝ մեր յարգանքը յայտնելով, պիտի ջանանք կարգ մը հաստատումներ
կատարել վերոյիշեալ բացատրութեան ուղեգրութեամբ:

Ան մեր մշակութային բազմաթիւ ներդրումներ իրագործող նուիրեալներէն է.
հեղինակ՝ ստեղծագործական հատորներու, եւ գրականութեան մտերմութեամբ ա-
ռաջին իսկ տարիներուն՝ մեզի իր նուիրումներով, իսկ այսօր այս հատորով մեզ հա-
ճելի անակնկալի կը մատնէ այս բացառիկ եւ իր տեսակին մէջ եզակի վկայաշատ ե-
րաշխիքով: Հատոր մը, որ պիտի հանդիսանայ փաստական հետքը հայկական գա-
ղութի մը ժամանակի տարածքին կատարած իրագործումներուն:

Ականատես, ականջալուր, մասնակից պատմողն է ընթացքային երեւոյթնե-
րուն: Վերլուծողական փաստագրական քանդակող մը:

Բանաստեղծութեամբ «Սիրտը Ափին Մէջ» դրած, այդ սիրտը վերածեց հա-
մայնական «Նուիրում»ի, եւ ահաւասիկ աւելի քան ութը հարիւր էջերէ բաղկացած
կոթողական հատորով մը իր ապրումներու գործնական զեղումներու մատուցումը:
Կոթողական, ոչ միայն անոր ծաւալի գնահատանքով, այլեւ բովանդակութեան այ-
լազանութեամբ, հայթայթուած հարուստ տեղեկութիւններով:

«Ճանապարհ» կ'ելլենք Ռագգայէն, Տէր Ջօրի եւ Եփրատի հարեւանութենէն
անցնելու համար, պատերազմի թոհուրոհին մէջէն, եւ ապրուած խաղաղութիւն, որ-
քան այլաշարժային հանգրուաններ, որքան առատ շնչառութիւն, թրքերու ինչպիսի
առագաստաւորումներ, յուշագրութեան հանգրիծումներ, սփիւռքագրութեան սքան-
չելի վկայութիւններու պատկերներ, որոնք գրողի ներշնչումներուն կ'ենթարկուին իր
շրջապատի հեռու եւ մօտ անցուդարձող իրադրութիւններով: Զգացականօրէն իրա-
պաշտ, հիացականօրէն գրանցուած բացայայտումներ:

Գրականութիւն, այո, դպրոցներ, ձեռնարկներ, այո, այս բոլորը թղթակցու-
թեան պատճառներով կը հասնին մեզի: Կը հասնին ջերմութեամբ, խանդաղատան-
քով, կենդանութիւն, ապրում եւ քերթողական մթնոլորտ բուրող զգայնութիւններով:

Առաջին բաժնով մտաւորական գրողին հետ մուտք կը գործենք գաղութի ե-
րեւեփուող աշխուժութեան մէջ շարժանկարային երանգներով:

Առանց գրական բոյրի հարստութեան վկայարան պիտի չկրնար ըլլալ, Յոթո-
յեանի «Ճանապարհը», անոր անդաստանը պիտի այսպէս չլիցքաւորուէր ժամադ-
րութիւններով, ուր այցի կու գան հայ գրականութեան մէջ արդէն իսկ տուն տեղ կեր-
տած դասական դէմքեր: Զրոյցներ, որոնց կ'ընկերակցին, այդ մեծութիւնները վե-
րարժեւորող իր դիտումներն ու դատումները, դէպքերու եւ դէմքերու գնահատանքա-
յին արծազանգներով, դէմքեր ու դէպքերու նորովի արտայայտութիւններու հաճոյա-
լի արծանագրութիւններով:

Այս առաջին բաժնի բովանդակութեան գնահատանքը կը կայանայ երկուայ
եւ այսօրուայ ժամանակներու հասարակաց կտաւին վրայ միացած՝ միեւնոյն ազգա-
կերտ երեւոյթներու ժամանակակցութիւնը: Երեկի եւ այսօրուայ դաստիարակչական

լուծումներով զօղումներով ստեղծուած մարտահրաւերները կը վերածուին համընդհանուր գաղափարախօսութեան մը հիմնահարցի ճիւղաւորումներու:

Այստեղ կը միանան մշակոյթին, հայ մշակոյթին առընչուող իրականութիւններ, ուսումնասիրութիւններ, դիմաստուերներ եւ միջավայրային օրերու եւ պայմաններու թելադրութիւններ: Պատմուածքներ ըլլան անոնք կարծէք, կը կարդացուին հեղինակին հոգեշունչ նկարագրութեամբ, կ'արարուին, այնպիսի ջերմութեամբ, կենդանութեամբ եւ մանաւանդ հաւատքով: Արձանագրութիւնները անցնելով հեղինակին հոգե-աշխարհի քուրայէն, կենդանութեան կը վերածուին, երբեմն կը հարստանան կամ կը պահպանեն ներկայացուածներուն որակային ճոխութիւնը:

Տրամադրութիւններու բարձր մթնոլորտի մէջ հաւատք կը դառնան եւ հաւատացէք այնքան զեղեցիկ եւ յարմար նկրտումներով ամբողջացած կը շղթայուին բաժինները մէկը միւսին:

Եւ մամուլին մէջ տեղ գտած գաղութը, Մերձ-Արեւելքի հայութեան նոր աշխարհի հոսքը չի կրնար ջերմ աշխուժութեան չվերածուիլ բանաստեղծի գրիչին տակ: Գաղութը անհանդարտ եռեւեփումի մէջ է, անխոնջ, անտեղիտալի, յարածուն: Ի պատիւ հայ ժողովուրդին եւ ի պատիւ անոր զաւակներէն Յոթոյեանին, որ պահեցող, շարժումները, ընթացքները բռնել գիտցած է եւ զայն շնչող, ապրող թելադրող վկայութիւններու վերածած:

Կը հասնինք այցելութիւններուն, յրբելեաններուն, մաղթանքներուն, որոնք իսկապէս մաղթանքային եռացող ներկայացումներու հանգամանքով տրուած են: Որքան ճիգ կայ այնտեղ, հայութեան ճիգերը բեղմնաւորող, որքան հիացմունք կայ ժողովուրդիս հատնումները հոգեկան սնունդի վերածող: Մեր զաւակներուն տըքնանքները գնահատող այդ էջերը, հայրենիքէն մինչեւ Գանատական ակերուն կը դառնան հպարտութեան ովասիսներ, կը դառնան իրարու յաջորդող սերնդափոխութեան վերնընծիւղումներ:

Ձեռնարկներ, զորս միայն հիացմունքով կարելի է կարդալ, իսկ անոնց յառաջացուցած խորհուրդներու զօրութիւնը մեզ պարզապէս կը մղեն ակամայ երկու մեծ պառօններով արտայայտելու մեր յուզումնախառն հպարտութիւնը, մէկը բնականաբար ուղղուած մեր անման ժողովուրդին, իսկ միւսը իր արժանաւոր զաւակին՝ պատմողին, վկայողին, դէպքերը գնահատական ելոյթներու վերածող հեղինակին:

Հատորներու ստեղծագործութիւնները իրենց արծազանգը գտած են արտերկրի հայրենիքի այս ակերուն, մտաւորականի հաւատքով, գրականութեան փորձառութեամբ, ժողովրդային շրջանակներէն արուեստի եւ մշակոյթի բարձրութեան հասնող երկնումներով:

Ինք է եւ իր անմիջական շրջապատը, անբաժան գիրն ու գրիչը: Կերտողն ու հիացողը, ժողովուրդն ու մշակները: Անձէն դէպի հաւաքական իրագործում, հաւաքական այնքան արժեւորումի հարստութեամբ օժտուածութիւն: Մեզի համար արդէն պարզ իրականութիւն է կարդալ անուններ, որոնք ժամանակի գնահատանքին հետ այժմէականացած են, եկած եւ մաս կազմած մեր օրերու պատմութեան, միաձուլուած երէկի պատգամով, այսօրուայ պատմութեան:

Հայու անժամանցելի, անսահմանագծելի պատմութիւնը:

Նոյնքան գնահատելի է այս հաստատումով, երէկը այսօրուայ ճիգերու վերածող գնահատական նամակներ, որոնք գրուած են կարծէք հեղինակէն պահանջելու այս գիրքին պատրաստութիւնը: Գրուած են սիրողական հարկադրանքով, մտերմիկ ջերմութեամբ:

Ապրողներու եւ մեկնողներու մասին յատկացուած բաժինը նմանապէս հետաքրքրական մօտեցումով դասաւորուած է: Պարզ են մեզմէ յաւետ բաժնուած մեծութիւններուն նուիրուած իր ջերմութիւնը, որուն ընդմէջէն անոնք կը դառնան յաւերժութեան ճամբորդներ, մեր օրերու ճիգերուն մաս կազմող կամ ճանապարհի ընկերակիցներ հանդիսացող անմահներ:

Ամռնք ոչ միայն կը յիշուին, այլ կ'անցնին մեր պատմութեան, կը դառնան մը-
շակոյթի պատմութեան, գաղութային պատմութեան հիմնակէտերը: «Ի խնդիր բարո-
յական ճշմարտութեան» պիտի ըսէր ինք, իսկ մենք կ'ըսենք ի խնդիր ազգային յա-
ւերժականութեան:

Եկող ու գացող այցելուներ, որոնց հետ Հոթոյեան ցոյց տուած է հարցազը-
րոյցներ արժեւորելու եւ ամէն հնարաւորութիւն ազգային մտահոգութեան թեմանե-
րու վերածելու: Ամէն արժանաւորի հետ դարձնել պահի, թելադրող էջը, ներկայի եւ
ապագայի միջեւ ինկող հարցերու քննարկումներ կատարելու, պեղելու, անոնցմէ
քաղուած արտայայտութիւնները իրարու միացնելով յառաջացնելու տեսակ մը յա-
ճախապատում: Այդ բոլորին մէջ կան ազգային, կրթական, գրական, քաղաքական
կարեւոր դիրքեր գրաւած անձնաւորութիւններ:

Գրիգոր Հոթոյեանի չափածոյ կամ արձակ գործերուն կողքին այս հատորը,
իր կեանքի վերընձիւղումներուն պատմագրական գրաւականն է: Հարուստ հատոր
մը, որ արժանաւորապէս կը ներկայացնէ գանատահայ գաղութի պատմութիւնը, տե-
սակ մը տարեգրքային:

Մեզի կը մնայ պարզապէս գնահատել նման մեծ աշխատասիրութիւն մը, որ
գանատահայ կեանքին մէջ, կեանքի թեժ ելեւէջներ ունեցած հեղինակը, որ օգտուե-
լով ընծայուած այս հնարաւորութենէն, հայութեան հանդէպ իր ունեցած անհուն սի-
րոյ այս մատեանը կը մատուցանէ մեզի:

Հիմնուած իր գրական լայն պաշարին, խմբագրական ուժեղ գրիչին: Հարկ է
կրկնել, որ անհրաժեշտ է շնորհաւորել հեղինակը, որ քաջութիւնը ունեցած է, մինա-
կը, նման մեծածաւալ գործ մը իրականացնել:

Շնորհակալութիւն եւ շնորհաւորութիւն:

Ապրիլի Գրիգոր Հոթոյեան:

Ապրիլս, որ ապրեցուցած էս տարիներու պատմութիւն մը. ի մի բերելով հիմն
ու նորը, հաւասարապէս քու եւ գրչի, մտքի ընկերներուդ արգասիքով:

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

Գրող, հեղինակ, պատմաբան, խմբագիր,
հրատարակիչ, դաստիարակ

Ա.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՄՇԱԿՈՅԹԸ ՄԵՋԻ ՊԱՀԱՊԱՆ

Քանակով քիչ, բայց որակով մեծ ազգի մը զաւակներն ենք:
Ամենահին մշակոյթ ունեցող ազգերէն մէկը:
Մեր նախնիքները...: Ի՞նչ հաւատաւոր եւ հանճարեղ մարդիկ:
Ունեցած ենք մշակոյթ, երբ Արեւմուտքը կը նիրհէր տակաւին մթու-

թեան մէջ:

Ոսկեղար...:

Մեր փառքի եւ պարծանքի թուականը:

Ունեցանք մեր սեփական այբուբենը եւ գրականութիւնը: Հայերէնը անցաւ մագաղաթներուն, թարգմանուեցան Աստուածաշունչն ու գանձ դարձած գիրքերը մեր: Հայ լեզուն կոփուեցաւ, յղուեցաւ եւ կազմաւորուեցաւ: Մեր մատենագիրները առիթը ունեցան իրենց յղացումները գրելու հայերէնով եւ մատչելի դարձնելու իրենց գործերը՝ ժողովուրդին: Բացուեցան բազմաթիւ ուսումնարաններ, ուր հայերէնը ականդուեցաւ ժողովուրդին, Ս. Մեսրոպի եւ իր աշակերտներուն կողմէ: Թարգմանուեցան հելլէն գրականութենէն գլուխ գործոցներ, եւ բացատրուեցան ժողովուրդին: Հայ ժողովուրդը իր եկեղեցիին մէջ Աստուծոյ խօսքը հայերէնով սկսաւ լսել եւ ըմբռնել: Տիտանեան վաստակ մը ողողեց մեր եօթը դարերը, Ե - ԺԲ դար...:

«Թարգմանչաց Տօն» է այսօր: Մեր մեծագոյն տօնը, ուր առիթ կ'ունենանք յիշելու մեր առաջին բարգմանիչները, հայ լեզուի լուսապայծառ սպասարկուները, եւ հայ մշակոյթի հանդէպ սէրը հրահրելու՝ մեր նոր սերունդին մէջ:

Սուրբեր՝ Սահակ եւ Մեսրոպ: Երկու տիտաններ, որոնց կը պարտինք մեր բովանդակ գրական պատմութիւնը, եւ որպէս ազգ ապրելու կարելիութիւնը: Անոնք ճգնեցան եւ մեր լեզուն օժտեցին սեփական գիրերով, ու այս կերպով ստեղծեցին ինքնորոյն գրականութիւն ունեցող ազգ մը:

Անի քաղաքը՝ իր հազարամէկ եկեղեցիներով, որոնք մէյ՛յ մէկ կոթողներ են մեր ճարտարապետութեան մէջ: Օտարներ ակնածանքով կը նային մեր ճարտարապետական հոյակապ ոճին: Իսկ գրական տիտաններ Նարեկացի, Մխիթար Գոշ, Ներսէս Շնորհալի, Գրիգոր Մագիստրոս, Խաչատուր Տարօնցի, Սայաթ-Նովա եւ ուրիշներ, որոնք փառքը կը կազմեն մեր գրականութեան:

«Թարգմանչաց Տօն»ին առիթիւ կ'արժէ խորհրդածել մեր ներկային եւ ապագային մասին: Ի՞նչ պատկեր կը պարզէ հայ իրականութեան մեջ մեր լեզուն եւ գրականութիւնը: Կը շարունակե՞նք հաւատարիմ մնալ մեր անցեալին: Դժբախտաբար, ոչ: Այսօր, մեր հայրենիքին մէջ կը տիրէ վարչակարգ մը, որ հիմնովին փոխած է Ս. Մեսրոպեան ուղղագրութիւնը, փոխարինելով զայն մեր լեզուին գեղեցկութեան եւ ճկունութեան վնասող բարբարոս ուղղագրութեամբ մը: Այսօր, հոն, տարուէ տարի, «պլան»ի վրայ, մեր լեզուն ձեւափոխելու եւ աղճատելու փորձեր կը կատարուին: Հարազատ հայերէն բառերը վերցուելով՝ կը գործածուին օռուսերէն կամ եւրոպական բառեր, օր մը ունենալու համար բոլորովին անճանաչելի հայերէն մը, հարազատ, միմիայն, թերեւս իր հոլովումներով: Ինչո՞ւ այս անտարբերութիւնը՝ մեր ոսկեզնիկ լեզ-

ւին հանդէպ: Հապա Ի՞նչ բանի են ակադեմականները՝ Հայաստանի մէջ: Ինչո՞ւ չեն պայքարիր այս ոտնձգութեան դէմ: Ի՞նչ կը նշանակէ այս լուսթիւնը, որ մեղսակցութեան նշան է:

Իսկ այս բոլորին դէմ, սփիւռքի կարգ մը գաղութներու մէջ, հայ լեզուին կը մնայ աւելի քան առոյգ, եւ կենսայորդ, զարգացումի իր ուղիին վըրայ:

Թէեւ հայ գրականութիւնը կը մշակուի Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ, բայց հայ լեզուն իր մաքրութեանը մէջ պահող անձերու կը պարտինք ըլլալու ինքնորոյն գրականութիւն ունեցող ազգ մը:

Անոնք մեզի տուին զէնք մը, որ դիմադրեց ամէն տեսակի հալածանքներու եւ յարձակումներու, մեր ամբողջ գոյութեան տեւողութեան ընթացքին: Եւ, աստիճանաբար, սերունդէ սերունդ, այդ զէնքը կատարելագործուեցաւ, հասաւ քսաներորդ դարու կիսուն:

Ներկայիս, երբ կը տօնենք «Թարգմանչաց Տօն»ը, դուրս կ'ելլենք Ոսկեդարի սահմաններէն, հասնելու համար մինչեւ ժամանակակից հայ մշակոյթի սահմանները, յիշելով եւ փառաբանելով բոլոր սպասարկուները, սկսած Սահակէ, Մեսրոպէ, Կորիւնէ, Եզնիկէ մինչեւ Ներսէս Շնորհալի, Նարեկացի, Լամբրոնացի, մինչեւ նորագոյն Սայաթ-Նովա, Ահարոնեան, Օշական, եւայլն: Այս բոլորը, կատարեցին իրենց մեծագոյն պարտականութիւնը, իրենց կեանքի ամբողջ տեւողութեան ընթացքին, հայ մշակոյթը հասցնելով ամէնաքաղաքակրթուած ազգերու մշակոյթներու մակարդակին: Անոնք ստեղծագործեցին այնպիսի գլուխ գործոցներ, որոնք պատիւ կը բերեն մեր ցեղին: Եղան միջագային առումով արժէքներ, որոնք կրնան մրցիլ բոլոր այլ մշակոյթներու հսկաներուն հետ:

«Թարգմանչաց Տօն»ը փառքի տօն մըն է: Գիտակցութեան եւ յաղթանակի տօն մը: Անոնց թարգմանիչներուն, կը պարտինք մեր գոյութիւնը: Առանց անոնց, մեզի ժամանակակից բազմաթիւ ազգերու նման պիտի ձուլւէինք կամ կորսուէինք մեզմէ հօր ազգերու մէջ, ինչպէս Ասորեստան, Բաբելոն եւ ուրիշներ: Մենք մնացինք, ապրեցանք, եւ ոչ միայն նոյնութեամբ պահեցինք մեզի ձգուած աւանդը, այլ՝ զարգացուցինք, ստեղծագործելով մշակոյթի բոլոր մարգերուն մէջ, առանց ընկրկելու մեր երկրին վրայ ծանրացող այլազան ազգերու վայրագութեանց առջեւ: Երաժշտութիւն, ճարտարապետութիւն, քանդակագործութիւն, գրականութիւն, եւայլն, հասան նախանձելի բարձրութեան մը: Այսօր, եւրոպական կարգ մը եկեղեցիներու յատակագիծները եւ ճարտարապետութիւնը, հայկական դրոշմ կը կրեն, եւ առնուած են հազարաւոր տարիներ առաջ կառուցուած հայ եկեղեցիներէն:

Այսօր, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, բայց հայ լեզուն իր մաքրութեանը մէջ պահող անձերու կը կարօտինք: Պէտք է պայքարինք անուղղաներու դէմ, պահենք մեր լեզուն իր հարազատութեան եւ ճշգրտութեան մէջ, որպէսզի անոր կազմաւորման համար աշխատող, քրտինք թափող, իրենց ամբողջ կեանքը նուիրող սպասաւորներ հանգիստ մնան իրենց շիրիմներուն մէջ: Ամուր պահենք աւանդը, փոխանցելու համար գալիք սերունդներուն, որպէս ամէնաթանկագին աւանդ:

«ԱՐԵՎԵԼ», 9 ֆոկտեմբեր 1949, Զալեպ

ՓԱՌԱՎՈՐ ԹՈՒԱԿԱՆ ՄՐ

Անհուն գոհողութիւններով, մարդկային ահաւոր կորուստներով, դառն ճգնաժամերէ վերջ շահուած անկախութեան կեանքը շատ կարճ եղաւ:

Միլիոնաւոր նահատակներու արիւնով ու հայութեան ապրելու կամքով շահախուած հայ պետականութեան շէնքը շուտ քանդուեցաւ:

Մեր ազգային գոյութեան երկու թշնամիներու դաւադիր գործակցութեամբ, որոնք Հայաստանի երկու կողմէն յարձակեցան հազիւ խաղաղած մեր թշուառ երկրին վրայ: Կ'առաջադրուէր վերջնականապէս հայ անունը աշխարհէն ջնջել:

Ուրիշ ելք չկար: Պէտք էր ընտրել «երկու չարեաց փոքրագոյնը»: Եւ, հայկական կառավարութիւնը ստիպուեցաւ լեզու գտնել «քրիստոնեայ» համայնավարներուն հետ:

Սակայն, ժողովուրդին յոյսերը ի դերեւ ելան: Դաշնագրով կնքուած համաձայնութիւնը երկու պետութիւններու միջեւ չգործադրուեցաւ Հայաստանի մէջ: Ժողովուրդը թշուառացած էր պատերազմի հետեւանքով: Եւ թըրքահայ մօտ կէս միլիոն գաղթականներ՝ կու գային կիսամերկ ու անօթի, իրենց կեանքը, Ֆիզիքական գոյութիւնը փրկելու միակ մտահոգութեամբ՝ քուլեղով թուրք ու քիւրտ ասպատակներէն:

Այս ժողովուրդը, որ ազատ եւ անկախ ապրելու համար պատերազմեցաւ թրքական գրոհներու դէմ, զրկուեցաւ ամէն հանգստութենէ, չէր կրնար ենթարկուիլ անմարդկային, գազանական ու չտեսնուած բռնակալութեան մը:

Արդարեւ, երբ բոլշեւիկները նուաճեցին Հայաստանը, ստեղծեցին այնպիսի սարսափազդու մթնոլորտ մը, որ կը հակասէր հայ նահապետական բարքերուն: Հակառակ իրենց խոստումին, ձերբակալուեցան հայ ժողովուրդի բարօրութեան եւ ազատութեան համար պայքարած բոլոր հերոսները եւ ղեկավարները: Անձեր, որոնց անունով կ'երգուէին հայ բազմութիւնները, որոնց անունները սուրբերու եւ հերոսներու շարքին էր դասուած: Բռնագրաւուեցան Չեկայի անունով, բոլոր ինչքերը, ու շատեր մնացին չոր փսիաթներու վրայ: Բանակի սպայութիւնը, որ արիւն թափած էր հայրենիքի ազատագրութեան համար, դաւադրութեամբ ձերբակալուելով զրկուեցաւ Սիպի'ր: Եւայլն, եւայլըն...:

Ազատութեան եւ հայ դարաւոր բարքերու նախանձախնդիր հայ ժողովուրդը, չէր կրնար տոկալ եւ հանդուրժել այս բռնութիւններուն: Եւ, ապրստամբեցաւ:

1921 Փետրուարի 18ին:

Պատուախնդրութեան եւ հայրենասիրութեան օր մըն է այս թուականը: Փետրուար 18: Արարք մը, զոր երեւակայեւն իսկ գլխու պտոյտ կը պատճառէ: Խաղաղութեան եւ բարօրութեան հետամուտ հայ ժողովուրդը ընդվրճեցաւ, այս անշնչելի մթնոլորտը ցրուելու համար եւ ապստամբութեան դրօշը պարզեց:

Անոնք որոնք կը պնդեն, թէ Դաշնակցութիւնն էր, որ ապստամբեցաւ կորսուած հանրապետութիւնը վերահաստատելու համար, չարաչար կը սխալին: Ապստամբութեան բո՛ւն հեղինակը ժողովուրդն էր, հա՛յ ժողովուրդը:

Ազնուական ու պատուախնդիր հայ ժողովուրդը չէր կրնար հանդուրժեալ այն նախատինքին, որ ուղղուած էր իրեն: Չէր կրնար հանդուրժել, որ Երեւանի կեդրոնական բանտին մէջ կացինահար սպաննուին իր հերոսները, յանուն բոլշեւիկեան գաղափարաբանութեան: Չէր կրնար հանդուրժել, որ սանձարձակ անպատուուի հայ կնոջ պատիւը: Եւ ապստամբեցաւ հայ ժողովուրդը:

Ու ահա, զինուած ամէն կարգի զէնքերով, յարձակում գործեցին բոլոր ճակատներուն վրայ ու քանի մը օրուան արիւնալի կռիւներէ վերջ դուրս չը պըրտեց համայնավար բանակը եւ իր մանկլաւիկները՝ Հայաստանի սահմաններէն:

Ազա՛տ էր Հայաստանը:

Արձակուած էր Երեւանի բանտէն հայ ղեկավարութիւնը, որոնց ժողովուրդը ուսամբարձ կը պտըտցնէր Երեւանի փողոցներուն մէջ: Մի քանի ժամուան մէջ, հիմնովին փոխուած էր քաղաքին դիմագիծը: Ու ամբողջ քաղաքը զարդարուած էր եռագոյն դրօշակներով: Բայց չկային բազմաթիւ հերոսներ: Ինկած էին պայքարի փշոտ ճամբուն վրայ: Ձոհուած էին Ազատութեան Բագինին, որպէսզի ապրի ցեղը, Հա՛յ ցեղը:

Թէեւ ազատութիւնը երկար չտեւեց, բայց բոլշեւիկը գիտցաւ, կշռեց հայ ժողովուրդի անձնուրացութիւնը, եւ ծանօթացաւ անոր ազատ ու պատուով ապրելու կամքին: Կարելի չէր բռնութեամբ իշխել, եւ, համայնավար կեդրոնական կառավարութիւնը հաշտուեցաւ այս գաղափարին հետ ու փոխեց Հայաստանի Յեղկոմը: Վրագրաւուեցաւ Հայաստանը՝ օգնական նոր զօրքերով, բայց փոխուեցաւ համայնավար վարուելակերպը հայ ժողովուրդին հանդէպ:

Փա՛ռք եւ պատիւ ազատասէր հայ ժողովուրդին:

Յարգա՛նք կացինահար նահատակուած հերոսներու սրբազան շիրիմին:

«ԱՐԵՒԵԼՔ»
20 Փետրուար 1949

ՄԱՅԻՍ 28

Երեսուն եւ երեք տարիներ անցած են Հայաստանի Հանրապետութեան հռչակումի թուականէն: Անկախութիւն՝ որ ձեռք բերուած է հայ ժողովուրդի ծովանման արեան գնով:

Մայիս 28ը, թուրք ճիւղներու ծրագրով «գերեզմանուած եւ ոչնչացուած» հայ ժողովուրդի յարութեան թուականն է: Հայաստանի վեց հարիւր տարուան գերութենէն, ստրկութենէն ձերբազատումի, եւ որպէս անկախ, գերիշխան Հայաստանի մը ստեղծումի թուականը: Մայիս 28ը Հայաստանի մութ, չարամոյն երկնակամարէն հրաշագործուած պայծառ արշալոյս մըն է, ամպամած հորիզոնին վրայ վառ արեգակ մը, որ եկաւ իր պայծառափայլ եւ ոսկի շողերով հալեցնելու հայութեան սրտին վրայ կուտակուած լեռնանման ձիւնը: Ան սփոփեց, բալասանը եղաւ կարեւելք սրտերու եւ պաշտպանեց հայ ժողովուրդի Ֆիզիկական գոյութիւնը:

Մայիս 28ը, հայ ժողովուրդի «լինելու եւ չլինելու» թուականն է: Առանց այդ թուականին ու անոր ստեղծումին համար գոհունոյ հերոսներուն, այսօր հայ ժողովուրդը պիտի դադրէր գոյութիւն ունենալէ՝ իբրեւ ուրոյն ազգ: Առանց այդ թուականի կերտումին համար թափուած արիւնին, այսօր, նոյնիսկ Սովետական Հայաստան մը գոյութիւն պիտի չունենար:

Ինչո՞ւ այս անտեսումը, կարգ մը հայկական «կուսակցութիւն»ներու կողմէ: Ո՞ւր էին իրենք այդ թուականին: Ո՞ւր էր իրենց համար կրօնք հանդիսացող համայնավարութիւնը: Ինչո՞ւ չեն խոստովանիր, թէ առանց այդ շըրջանի դիմադրութիւններուն եւ գոհաբերութիւններուն, թուրքերը պիտի մաքրագործէին նաեւ Այրարատեան Հայաստանը: Եւ հիմա, իրենք ո՞ր Հայաստանով պիտի հպարտանային:

Այո՛, թէեւ հայ ժողովուրդը ջարդուեցաւ, իր հսկայ մէկ զանգուածը կորսնցուց իր հայրենիքը, քշուելով արաբական անապատները, կորսնցնելով նաեւ իր թիւէն մօտաւորապէս մէկուկէս միլիոնի հասնող պատկառելի թիւ մը, բայց եւ այնպէս՝ մեր թշնամիները չյաջողեցան իրենց նպատակին մէջ եւ հայ ժողովուրդը, իր ոյժով, մահու գիտակցութեամբ՝ ապրեցաւ, կերտեց իր անկախ եւ ազատ հայրենիքը:

Մայիս 28ը, հպարտանքի թուական մըն է: Առանց այդ թուականին, մեր բոլոր սրբութիւնները, մեր տաճարները, մեր պատիւը, մեր ազգային մըշակոյթն ու կոթողները, պիտի պղծուէին, պիտի աւերուէին եւ պիտի կործանուէին: Ազգի մը գոյութեան սահմանուած բոլոր ազգակները պիտի ջնջուէին: Եւ հայ ժողովուրդի խլեակները՝ հրեայ ժողովուրդին նման՝ պիտի թափառէին անտէր, սփիւռքի չորս ծագերուն, դատապարտուած՝ ի սպառ ոչնչանալու:

Երբ մենք, երեսուն եւ երեք տարիներ վերջ, կը վերլուծենք այդ շրջանին մեր դէմ պատրաստուած դաւը, եւ, հայ ժողովուրդի ծառայումը՝ բոլոր տեսակի թշնամիներուն դէմ, գնահատելով ժամանակի ծանրակշիռ հանգամանքը, մեր ժողովուրդի կատարած հերոսագործութիւնը կը գտնենք հրաշքի համագօր:

Մայիս 28ը, ուխտի թուական մըն է:

Ամէն տարի, երբ կ'ողջունենք զարնանային արփիափայլ բնութեան մէջ, այս թուականը, երեւակայութեամբ մեր հոգիները կը ճախրեն երկնի ծովին մէջ՝ անցնելով երեսուն եւ երեք տարիներու պատմութեան ընդմէջէն՝ ապրելու համար, դարերով մեր երազած անկախ հայրենիքին մէջ:

Ազա՛տ հայրենիք...: Ի՛նչ ներգոր եւ յուզումնաւոր գաղափար: Ազատութեան գաղափարը շողաղուած է հայ ժողովուրդի միսին եւ արիւնին հետ: Այդ ոգին ժառանգած ենք մեր նախահայրերէն: Ուրարտացի Արամէէն, նախահայր Հայկէն, Արամ Նահապետէն եւ ազատութեան համար պայքարած վերջին հայդուկէն: Մեր պատմութեան ընթացքին, միշտ, հայ ժողովուրդը պայքարած է չկորսնցնելու համար իր ազատ ապրելու իրաւունքը:

Սա վայրկեանին, երբ գրի կ'առնեմ զգացումներս, առջեւս ունիմ Հայաստանի Հանրապետութեան շրջանէն մնացած դրամանիշ մը: Դրամանիշ մը, որ թրջուած է արցունքներու շիթերով: Տպագրուած է հայերէն տառերով՝ «Հայաստանի Հանրապետութիւն» «250 ըուբլի»: Ուրեմն, ունէինք հայկական դրամ: Ինչո՞ւ արժեզրկուեցաւ, որո՞ւ կողմէ, վատե՛ր...: Այո՛, ունէինք նաեւ հայկական բանակ, նախարարներ, վարչապետ, նախագահ: Ինչո՞ւ մեզմէ շատ անարժէք ազգեր ունին եւ մենք չունինք: Մայիս 28ի առջեւ գլուխ չծռող հայեր թող պատասխանեն:

Թէեւ Մայիս 28ով ստեղծուած Հանրապետութիւնը երկար կեանք չունեցաւ (չուրջ երկուքուկէս տարի), որովհետեւ թուրք եւ համայնավար բարբարոսները դաշնակցած արշաւեցին Հայաստան՝ աքցանի մէջ առնելով մասնուկ, նորաբողբոջ Հայաստանը, հիմնայատակ կործանելով որոշ առաջադրութեամբ, բայց, երկուքուկէս տարուան ընթացքին կազմուեցաւ միատարր Հայաստան մը: Հայաստանի բնակչութեան յիսուն առ հարիւր օտարներ էին: Հայաստան դարձաւ ապահով՝ իր ներքին թշնամիներէն: Ասիկա գործ մըն է, որ իր ազդեցութիւնը ունեցաւ յետագային մղուած կռիւներու ընթացքին: Եւ ինչո՞ւ չէ, Մոսկուան, օտարներով բնակուած այդ շրջանները, պիտի չդարձնէ՞ր Ազրպէյճանի ենթակայ ինքնավար շրջաններ, ինչպէս են ներկայիս՝ Նախիջևեւանը, Ղարաբաղը, Արմաւիրը եւ Ախալքալաքը: Մանաւանդ Նախիջևեւանը՝ որ դաշոյն մըն է միտուած Հայաստանի սրտին:

Մայիս 28ով ստեղծուած Հանրապետութեան շնորհիւ էր նաեւ, հայութիւնը տիրացաւ թանկագին մուրհակի մը: Սեւրի Դաշնագրին: Մեր ապագայ գործունէութեան իտէալը պիտի ըլլայ՝ այդ դաշնագրով եւ Ուիլսոնեան սահմանագծումով Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի մը կերտումը:

Երբ ժողովուրդ մը կը յուսալքուի եւ իտէալ ունենալէ կը դադրի, կը դատապարտուի ոչնչանալու, ինչպէս ոչնչացան անցեալին մէջ, մեզի դրացի ազգեր, որոնց անունը միայն կը յիշուի պատմութեան գիրքերու մէջ: Հայ ժողովուրդը չի կրնար անոնց նմանիլ, ան կը սիրէ ազատութիւնը, իր հայրենիքը եւ պատրաստ է միշտ զոհուելու վեռք բերելու համար իրեն փոխանցուած պայենական սիրելի աւանդը:

«ԱՐԵՒԵԼԸ» Օրաթերթ
27 Մայիս 1951
Յալէպ

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ

15 դարեր անցած են այն շրջանին ի վեր, երբ յաւէտ պաշտելի Ս. Մեսրոպի կողմէ եւ Վռամշապուհ թագաւորի եւ օրուան Կաթողիկոս Ս. Սահակի օժանդակութեամբ ստեղծուեցան հայ լեզուի տառերը ու ձեռնարկուեցաւ Աստուածաշունչի թարգմանութեան:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, մենք մեր երախտագիտութեան եւ յարգանքի տուրքը կը մատուցանենք թարգմանիչներու խնկելի յիշատակին:

Թարգմանիչներ, որոնք մեր Ոսկեդարը կերտեցին: Մեզ սպառազինեցին զէնքով մը, որպէսզի կարենանք դիմագրաւել մեր գոյութեան սպառնացող ամէն տեսակի վտանգ:

Ի՞նչ պիտի ըլլար մեր ժողովուրդին ճակատագիրը, եթէ չստեղծուէր մեր Ոսկեդարը:

Շատ որոշ է, պիտի ենթարկուէինք մեզի ժամանակակից ազգերու՝ Ասորեստանի, Աղուանիստանի, եւայլն՝ ճակատագրին: Դարերու ընթացքին պիտի ձուլուէինք դրացի զօրաւոր ազգերու մէջ, եւ պատմութենէն շատո՞նց արդէն սրբուած պիտի ըլլար հայ ժողովուրդը:

Սակայն, ուրախ ենք որ, պատահած է ճիշդ հակառակը: Ոչ միայն չենք ձուլուած, այլ՝ մեր ազդեցութիւնը տարածուած է Հայաստանի սահմաններէն շատ հեռուներ: Մեր մշակոյթը եւ ճարտարապետութիւնը, յարգանք պարտադրած են օտարին՝ հանդէպ հայ ժողովուրդին:

Մեր թարգմանիչները...:

Սուրբեր էին անոնք:

Մեր փառքը կերտողները...:

Բազմաթիւ են անոնք: Ս. Մեսրոպ, Ս. Սահակ, Եգնիկ, Կորիւն, եւ տակաւին, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Մազիստրոս, Ներսէս Շնորհալի, Մխիթար Գօշ, Մովսէս Խորենացի, Փաւստոս Բիւզանդ, Ներսէս Լամբրոնացի եւ ղեռ շատեր...:

Գործի սկսուեցաւ Ս. Սահակով, Ս. Մեսրոպով: Շարունակուեցաւ դարերու ընթացքին, կը շարունակուի տակաւին եւ պիտի շարունակուի յաւիտեան, քանի կ'ապրի հայ ժողովուրդը:

Վիթխարի էր աշխատանքը, զոր կատարեցին թարգմանիչները: Առաջին գրութիւնը, որ գրուեցաւ հայերէն լեզուով հետեւեալն էր. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ» եւայլն: Իսկ առաջին թարգմանութիւնը՝ Աստուածաշունչը, որ թագուհի թարգմանութեանց կոչուեցաւ: Յետագային թարգմանուեցան զանազան աշխարհական եւ եկեղեցական գիրքեր եւ հիմը դրուեցաւ հայ գրականութեան: Այլեւս դարու ամէնէն արժէքաւոր գիրքերը մատչելի էին հայ բազմութիւններու եւ այսպէսով կը ստեղծուէր հայ ուսումի եւ գրականութեան Ոսկեդարը:

Ինչո՞ւ թարգմանիչներ կոչեցինք Ե. դարէն վերջ, մինչեւ մեր օրերը հայ գրագէտները: Ե. դարուն թարգմանիչները ստեղծեցին հայ գիրն ու գրականութիւնը եւ սրբացան, իսկ յետագային, դարերու ընթացքին, ուրիշներ շարունակեցին անոնց գործը եւ նոր գոհարներով ու փառքով օժտեցին հայ գրա-

կանոնադրված են արուեստը: Մեզի համար նոյնքան սիրելի եւ պաշտելի է Գրիգոր Նարեկացի մը կամ Ներսէս Շնորհալի մը, որքան Եզնիկ մը կամ Ղազար Փարպետի մը: Նոյնքան սիրելի եւ յարգելի է Նահապետ Քուչակ մը կամ Սայեաթ Նովա մը, որքան Կորիւն մը կամ Փաւստոս Բիւզանդ մը: Եւ տակաւին նոյնքան «Թարգմանիչ»ներ են Վարուժան մը, Օշական մը կամ Ահարոնեան մը, որքան Մխիթար Գօշ մը, անանիա Շիրակացի մը կամ Վարդան Արգեկցի մը:

Ասոնք եւ ուրիշ շատ թանկագին գրագէտներ եւ արուեստագէտներ մէկ-մէկ լուսափայլ աստղեր են, հայ գրականութեան երկնքին մէջ: Սակայն, կարեւորը ոչինչէն ստեղծելն է: Մեր թարգմանիչները ոչինչէն ստեղծեցին հայ գրականութիւնը եւ գիշեր ցերեկ աշխատելով, դպրոցներ բանալով՝ հայ ժողովուրդի սեփականութիւնը դարձուցին ստեղծուածը:

Մեր եկեղեցին, որ դարերու ընթացքին պահապան հանդիսացած է մեր ազգին, հասկնալի դարձաւ, բացատրուեցաւ եւ ամրացաւ, շնորհիւ ստեղծուած հայկական տառերուն եւ թարգմանիչներուն: Հայ տաղանդը, որ անուանի էր նոյնիսկ հեթանոսական շրջանին, ուռճացաւ եւ փառաւորուեցաւ, շնորհիւ թարգմանիչներու թափած արիւն քրտինքին:

Ժողովուրդի մը քաղաքակրթութեան ազդակը գրականութիւնն է: Մեր ժողովուրդը, շնորհիւ թարգմանիչներու ստեղծագործ ճիգին, ունեցաւ իր սեփական գրականութիւնը եւ արուեստները, եւ այսօր, կը համարուի աշխարհի ամէնահին գրականութիւնը ունեցող ազգերէն մէկը:

Հակառակ մեր պետականութեան անկման եւ կրած անասելի տառապանքներուն՝ վայրագ ասպատակողներու կողմէ՝ մեր գրականութեան կանխորդը չմարեցաւ երբեք: Մեզի հասած ձեռագիր մագաղաթները կը փաստեն, թէ հայ վանականները եւ գրագէտները ի՛նչ ձեւով եւ ի՛նչ զրկանքներով կը ցած են գլուխ հանել իրենց սկսած աշխատանքները: Մահուան տառապանքի եւ գերեզմանութեան վախը իրենց սրտերուն մէջ, ամէն ժամ յարձակումի ենթակայ, անոնք չեն դադրած ստեղծագործելէ, որպէսզի հայ գրականութիւնը գիրքով մը եւս հարստանայ:

*

* *

Թարգմանչաց տօնն է այսօր:

Աշխարհի մէջ չկայ ժողովուրդ մը, որ իր գրականութեան եւ տառերու ստեղծիչներուն համար տօն մը սահմանած ըլլայ: Բայց հայ ժողովուրդը ունի՛ այդ տօնը:

Թարգմանչաց տօնը առիթ մ'ըն է, որ մեզի հնարաւորութիւն եւ առիթ կու տայ, որպէսզի տարին օր մը մտածենք, մեր գրականութեան մասին, թէ ի՛նչ ըրած ենք, ի՛նչ կ'ընենք եւ ի՛նչ պէտք է ընենք:

Առաջին Համաշխարհային պատերազմէն ետք, երբ մեր ժողովուրդը ապրեցաւ կեանքի եւ մահուան տարիներ եւ մեզի ծանօթ Եղեռնին՝ վրայ տրուաւ պապենական հողերը եւ զոհ մտաւորականութեան ընտրանին, հայ ժողո՞

վորդի բեկորները ցրուեցան աշխարհի մէջ, իսկ մէկ մասն ալ ենթարկուեցաւ համայնավար տիրակալութեան:

Այս պատկերին դիմաց, ի՞նչ երեւոյթ կը պարզէ հայ գրականութիւնը:

Սփիւռքի մէջ, հակառակ օտար ազդեցութիւններու եւ կեանքի զըրկանքներու, հայ ժողովուրդը իր ծոցէն ծնաւ անուանի գրագէտներ եւ արուեստագէտներ, որոնք ամէն գնով կը յամառին վառ պահել հայ գրականութեան ջահը: Այսօր ամէնուրեք, ունինք արժէքներ, որոնք ոչ միայն հայկական, այլ՝ համաշխարհային արժէք ներկայացնող երկեր ստեղծած են եւ կը շարունակեն «Թարգմանիչներու» աշխատանքը:

Իսկ Հայաստանի մէջ, հակառակ պարտադրուող գաղափարական գրականութեան, երբեմն կը ճաճանչեն հայ գրականութեան գանձարանը հարըստացնող երկեր: Արձակ կամ բանաստեղծութիւն: Իսկ հայ արուեստագէտները, Սփիւռքի եւ Հայաստանի մէջ, միջազգային հռչակ ստացած են:

Ուրեմն, ինչպէս կը տեսնուի, հայ գրականութիւնը կ'ապրի եւ հայ գրագէտը կը ստեղծագործէ՝ հակառակ բազմաթիւ դժուարութիւններու:

Ստեղծագործելը հայ ժողովուրդի գլխաւոր յատկանիշներէն մէկն է:

Յիշատակն թարգմանչաց օրհնեալ եղիցի:

**«ԱՐԵՒԵԼՔ»
8 Յոկտեմբեր 1955**

**ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԻՐԱԿԱՆ ԴԻՐՔՐ՝
ԿՐՕՆՔԻ ՀԱՆԴԷՊ
(Կաթողիկոսական ընտրութեան առիթով)**

«Կրօնը ժողովուրդի հաշիշն է:
Կրօնը հոգեւոր օդու մի տեսակն է...»

ԼԵՆԻՆ

Եւ եղաւ որ, երկուքուկէս տարիէ ի վեր թափուր մնացած Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին վրայ բազմի Հայաստանեայց Եկեղեցւոյ ամէնէն անբասիր եւ արժանաւոր եպիսկոպոսներէն մէկը:

Եւ մարդիկ՝ որոնք՝ Աստուծոյ գոյութեան իսկ չեն հաւատար եւ Քրիստոսը կը հռչակեն մտացածին՝ դարձած են «եկեղեցապաշտպան», իսկ ուրիշներ՝ որոնք իրենց արիւնը թափած են հայ եկեղեցւոյ պաշտպանութեան համար՝ դարձած են «եկեղեցւոյ թշնամի»:

Ի՞նչ է այս երեւոյթին գաղտնիքը:

Որովհետեւ, անհաւատ համայնավարները կ'ուզեն եկեղեցին միջոց դարձնել իրենց շիլ նպատակներուն, իսկ հակահամայնավարները՝ Հայաստանեայց Եկեղեցին կ'ուզեն տեսնել իր իրական բարձրութեան վրայ՝ հեռու քաղաքական հաշիւներէ եւ ազդեցութենէ:

Առաջինները՝ հեթանոս են, իսկ վերջինները՝ քրիստոնեայ:

Բայց ի՞նչպէս կ'ըլլայ, որ, արտասահմանի մէջ «յառաջդիմական» կոչուած ճակատը կը դառնայ «քրիստոնեայ» եւ «եկեղեցապաշտպան», իսկ Խորհրդային Միութեան մէջ անոնց տէրերը կը պայքարին՝ կեանքի ամէն ճակատներու վրայ՝ կրօնական հաւատալիքներուն դէմ:

Ահա հոս է պահուած օձին գլուխը: Հայաստանի մէջ կրօնքի թշնամի, իսկ Սփիւռքի մէջ «ջերմ պաշտպան»:

Ինչո՞ւ այս աչքբացութիւնը:

Մինչեւ ե՞րբ պիտի խաբեն այս ժողովուրդը շահագործելով սրտին երկու նուիրական զգացումները՝ Հայաստան եւ Էջմիածին:

Բայց ո՞վ է արիւն թափած այդ երկու նուիրական սրբութիւններու համար: Դաշնակցութիւնը եւ իրաւ հայ ժողովուրդը, որուն պատմութիւնը արիւնի ծով մըն է, ազատագրելու Հայաստանը օտար եւ բռնակալ գրաւումներէ եւ 1903ի Էջմիածնապատկան կալուածներու գրաւումի ատեն, ծառանալով ցարական ոտնձգութեան դէմ, թէ՛ համայնավարներն ու իրենց ձագուկները, որոնք դաւաճանեցին հայ ժողովուրդին, մեր դարաւոր թշնամի թուրքին՝ ռազմամթերք եւ ոսկի տալով՝ յարձակելու համար վերընձիւղած մանուկ Հայաստանի վրայ, եւ տականին՝ գրաւելով եւ յափշտակելով Էջմիածնի կալուածները եւ ինչքերը եւ արմատախիլ ընելով հայ եկեղեցականութիւնը ու խեղդամահ ընելով Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Խորէն Ա. Մուրատէկեանը:

«Ձորն ասեմ եւ գորն խոստովանիմ»:

Բայց այս մարդիկը խպնիլ չեն գիտեր:

Սփիւռքի մէջ «Էջմիածնապաշտպան» են: Իսկ Հայաստանի մէջ, նայեցէք թէ ինչ կ'ըսէ Քրիստափոր Թափալցեան իր «Ոսկէ Հովտում» վէպին մէջ.-

«- Նորիկ Լեւոնիչ ցաւում եմ, որ մինչեւ հիմա մեր շրջանի մարդկանց չես ճանաչում: Նրանք մինչեւ Ս. Աստուածածնին գառ ու ոչխարով էջմիածին ուխտ չգնան, իրենց երեխաներին չկնքեն, ԶԱԳՍ կը գրանցե՞ն:

- Զեր շրջանը կրօնամոլ է, ես այդ գիտեմ:

- Կեցցե՛ս, ճիշդ ասացիր:

- Շրջանի ղեկավարութիւնն է մեղաւորը:

- Ապրե՛ս, այս սրտիցս ես խօսում: Մի երկու տարի առաջ լինէիր, հիմի ոչ ոք ոտը չէր դնի վանքի բակը...

- Այդ վանքը պիտի փակել,- բռունցքները սեղմեց Նորիկը» («Սովետական Գրականութիւն», 1955, թիւ 4, էջ 20):

Այո՛ հոն փակելու մասին կը մտածեն, իսկ հոս՝ «պաշտպաններ» են:

Իսկ ինչ կը վերաբերի ներկայիս պաշտօնական բերաններէ յայտարարուած այն արտայայտութեան, թէ Խորհրդային Միութեան մէջ կրօնական վերազարթօնք մը տեղի կ'ունենայ, այդ նոյնպէս խաբեբայութիւն մըն է:

Ջրենք:

«Սովետական Գրականութիւն» ամսագրի 1955, թիւ 5ին մէջ, հեթանոս մը՝ Ա. Շահինեան՝ գրած է յօդուած մը՝ «Գիտա-Աթէիստական պրոպագանդայի համար», ուր կոչ կ'ընէ «կրօնական նախապաշարումների դէմ»:

Այս համայնավար բարակը կ'ըսէ.-

«ՍՍՌՄ Կոնստիտուցիայի (Սահմանադրութեան) 124րդ յօդուածով ասուած է. «Քաղաքացիներու համար խղճի ազատութիւնն ապահովելու նպատակով եկեղեցիին ՍՍՌՄում բաժնուած է պետութիւնից եւ դպրոցը՝ եկեղեցուց: Կրօնական պաշտամունքների կատարման ազատութիւնը եւ հակակրօնական պրոպագանդայի ազատութիւնը ճանաչուած է բոլոր քաղաքացիների համար»: Բայց, ինչպէս նշուած է ՍՄԿՊ Կենտկոմի որոշման մէջ, «եթէ պետութեան նկատմամբ կրօնը մասնաւոր գործ է եւ, ուստի եկեղեցին անջատուած է պետութիւնից, ապա կոմունիստական պարտիան (կուսակցութիւնը), որը յենուած է միակ ճիշդ գիտական աշխարհայեացքի՝ մարքսիզմ-լենինիզմի եւ նրա թէորիական հիմքի՝ տիալեկտիկական մատերիալիզմի (տրամաբանական-նիւթապաշտութիւնով) վրայ, չի կարող անտարբեր, չէզոք վերաբերուիլ կրօնին, որպէս մի իդէոլոգիայի (գաղափարի), որը գիտութեան հետ ընդհանուր ոչինչ չունի»: (Անդ. էջ 129):

Ինչպէս կը պարզուի, թէեւ Խորհրդային Միութեան Սահմանադրութեան մէջ տեսականօրէն ազատութիւն գոյութիւն ունի՝ կրօնական պաշտամունքի համար, սակայն, իշխող կուսակցութիւնը կրօնը սխալ գաղափարաբանութիւն կը նկատէ եւ կ'առաջնորդէ պայքարիլ այդ հակագիտական գաղափարին դէմ:

Եւ տակաւին, դեռ 1909 թուականին, համայնավարութեան մեռած «աստուածը»՝ Լենին՝ «բանուորական պարտիայի վերաբերմունքը դէպի կրօնը» յօդուածին մէջ կը գրէր.-

«Արդի կապիտալիստական (դերամատիրական) երկրներում այդ արժանեքը (կրօնի) գլխաւորապէս սոցիալական (ընկերվարական) են: Աշխատաւոր մասսաների (զանգուած) սոցիալական ճնշուածութիւնը, նրանց առերեւոյթ կատարեալ անօգնականութիւն կապիտալի կոյր ուժերի հանդէպ, որն ամէն օր եւ ամէն ժամ հազարապատիկ աւելի ամէնասոսկալի տառապանքներ, ամէնավայրագ տանջանքներ եւ պատճառում շարքային բանուոր մարդկանց, քան ամէն տեսակ արտակարգ պատահարները, ինչպէս, օրինակ, պատերազմները, երկրաշարժները եւայլն, ահա թէ որտեղ է կրօնի արդի ամէնախոր արժանեքը»:

Իսկ «Սոցիալիզմը եւ Կրօնը» յօդուածին մէջ Լենինի գրած է.-

«Կրօնը, հոգեւոր ճնշման մի տեսակն է, որ ամէնուրեք եւ ամէն տեղ ծանրացած է ուրիշների համար յաւէտ աշխատող, կարիքի եւ մենատիրութեան տակ ճգմուած ժողովրդական մասսաների վրայ: Կրօնը ժողովուրդի հաշիւն է: Կրօնը հոգեւոր օղու մի տեսակն է, որի մէջ կապիտալի ստրուկները խեղդում են իրենց մարդկային պատկերը, փոքր ի շատէ մարդավայել ապրելու իրենց պահանջը»:

Եղա՞ւ ասիկա Լենին «փաշա»:

Քանի կրօնը հաշիւ է եւ օղի, ինչո՞ւ քու ձագուկներդ Սփիւռքի մէջ իրենք զիրենք հաւատաւոր քրիստոնեայ կը ներկայացնեն հանրութեան եւ կրօնի «պաշտպանութեան» ախոյեանները կը հանդիսանան: Կեղծիք չըլլա՞յ...:

Քանի որ կրօնը հաշիւ է եւ օղի, ինչո՞ւ քու ձագուկներդ գերմանացիներու դէմ մղուած պատերազմին, մեծ չափով թոյլ ձգեցին կրօնական պաշտամունքը: Չըլլա՞յ որ անդրադարձան, թէ առանց կրօնական եւ հոգեկան հաւատքի, կարելի չէ պատերազմ մղել...:

Կրնա՞ք երեւակայել մարդ մը, որ որեւէ կրօնի չհաւատայ: Մարդկային կեանքի ստեղծումէն ի վեր, մարդիկ, միշտ, պաշտամունքի առարկայ մը ունեցած են: Վստահօրէն, առանց կրօնի մարդիկ կը դադրին ՄԱՐԴ ըլլալէ եւ կը դառնան անասուն կամ առ առաւելն ՄԱՐԴ ՄեֆենԱՅ:

Կրնա՞ք երեւակայել մարդ մը, որ որեւէ նեղ պարագայի կամ ճակատագրական մէկ վայրկեանին՝ Աստուծոյ ոյժին չապաւինի: Կարելի բան չէ: Ճիշդ այս կէտին համար, «Մեծ» Լենինի յաջորդ «արեւ» Սթալին, պատերազմի շրջանին թոյլ տուաւ կրօնական պաշտամունքը եւ դադրեցուց հակակրօն պայքարը:

Սակայն, ներկայիս, ի՞նչ կ'ընեն:

Կրկին պայքար «կրօնական նախապաշարումների» դէմ՝ Խորհրդային Միութեան մէջ, բայց «բարեկամ» եւ «պաշտպան» կը ձեւանան՝ արտասահմանի մէջ, ժողովուրդներու աչքին փոշի փչելու համար:

Իսկ Ա. Շահինեան, յամին Տեառն 1955ին, կը պատգամէ.-

«Հակակրօնական պրոպագանդան պէտք է տարուի նաեւ որպէս բնագիտութեան պրոպագանդա, մասսայականացնելով այն խոշոր նուաճումները, որ ձեռք է բերել գիտութիւնը բնութեան վրայ իշխելու պայքարում»:

«Գիտա-աթէիստական, հակակրօնական պրոպագանդան պէտք է տարուի ոչ թէ առիթից-առիթ, այլ սխտեմատիկաբար (ծրագրով):»

«Կրօնական նախապաշարումների դէմ պայքարելու համար անհրաժեշտ է աստծու (գլխադրով չէ գրուած) հաւատքի ծագման պարզաբանումը, դժոխքի, դրախտի, աղօթքի, կրօնական ծէսերի ու զանազան սրբերի, սրբատեղիների ուժի մասին եղած պատկերացումների պարզաբանումը՝ գիտական-մատերիալիստական մարք-լենինեան ուսմունքի հիման վրայ, ինչպէս նաեւ կրօնական պրոպագանդայի զանազան ձեւերի մերկացումը:

«Մեր դասախօսական կազմակերպութիւնները պէտք է տան հանրամատչելի գեղուցումներ եւ գրոյթներ տիեզերքի կառուցուածքի, մարդու ծագման, արեւի եւ լուսնի խաւարումների, բնութեան զանազան երեւոյթների եւ այլ թեմաների մասին:

«Վերջին տարիների ընթացքում գիտա-աթէիստական, հակակրօնական հարցերի վերաբերեալ շատ քիչ գրականութիւն է լոյս տեսել: Անհրաժեշտ է ձեռնարկել մասսայական գրականութեան հրատարակմանը, յատկապէս մասսայականացելով մարքսիզմ-լենինիզմի կլասիկները (դասական) ասոյթները կրօնի մասին:

«Յատուկ խնդիրներ են դրուում դպրոցների մանկավարժական կոլեկտիւնների եւ կոմերիտական կազմակերպութիւնների առաջ: Մեր դպրոցներում դասաւանդման պրոցէսը (դասաստան) եւ արտակրօնական աշխատանքը բոլոր դէպքերում չէ, որ կապոււմ է գիտա-աթէիստական պրոպագանդայի հետ»: (Անդ. էջ 131):

Կը տեսնէ՞ք «կրօնական ազատութիւնը»:

Արտասահմանի մէջ գիշեր ցերեկ թմբուկ կը զարնեն, ականջնուս թըմբուկը պայթեցնելու աստիճան, որ Խորհրդային Միութեան մէջ կրօնական ազատութիւն գոյութիւն ունի, սակայն անդին «սխտեմատիկ» պայքար կը կազմակերպեն «կրօնական նախապաշարումները» արմատախիլ ընելու համար:

Հոս էջմիածնի «պաշտպան» են. իսկ անդին էջմիածինը «փակել»ու մասին կը մտածեն:

Չէ՛ն ամչնար:

Եւ տակաւին, կը ծրագրեն հակակրօնական պայքարը դպրոցական գրասեղաններէն, մանուկներու հոգին փճացնելու համար՝ «մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով»:

Ո՞ր մէկուն հաւատանք:

Հոս, ամէն մէկ հայու կը պատգամեն սուտ խենթ ձեւանալ եւ «տէր կանգնիլ» եկեղեցիին եւ կաթողիկոսարանին, իսկ անդին՝ Ա. Շահինեանի թունածոր գրչով կը պատգամեն.- «Պարտիայի իւրաքանչիւր կազմակերպութիւն, նրա իւրաքանչիւր անդամ պարտաւոր է հակակրօնական պրոպագանդա մղել: Նրանք լաւ պէտք է հասկնան ու ըմբռնեն, որ գիտա-աթէիստական, հակակրօնական պրոպագանդան այն միջոցն է, որ պէտք է մինչեւ վերջ լիկլիթացնի (ոչնչացնէ) կրօնական նախապաշարումները մարդկանց գիտակցութիւնից, հակակրօնական պրոպագանդան մեր ընդհանուր իդիոլոգիական-աբիտացիան (շարժում) աշխատանքի անքակտելի մասն է»: (Անդ. էջ 131):

Ուրեմն, այդպէ՞ս:

Պարզ է նպատակը: «Միստեմատիկ»օրէն, ամէն մէկ համայնավար եւ կազմակերպութիւն, պիտի աշխատի «լիկւիթացնել կրօնական նախապաշարումները»:

Բայց ինչո՞ւ երկու չափ երկու կշիռ: Կարելի չէ՞ արդեօք առանց կեղծիքի եւ որպէս գայլ՝ գառնուկի մորթին մէջ մտնելու, արտասահմանի եւ Խորհրդային Միութեան մէջ կիրարկել նո՛յն քաղաքականութիւնը, հակակրօնական պայքարը:

Անշուշտ կարելի է, սակայն, այդ ձեւով, պիտի չկրնան խաբել քրիստոնեայ եւ հայրենասէր տգէտ զանգուածները: Եւ ամբողջ քրիստոնեայ աշխարհը պիտի գտնեն իրենց դէմ:

Արտասահմանի մէջ «մաքուր քրիստոնեայ եւ եկեղեցւոյ պաշտպան» ձեւանալ, իսկ հայրենիքի մէջ քրիստոնէութեան թշնամի: Հակակրօնական «պրոպագանդիստ»:

Եւ պէտք է ըսել որ, արտասահմանի իրենց վեղարաւոր կամ անվեղար մունետիկները, լաւապէս կը կատարեն իրենց տրուած դերերը:

Մենք, Սփիւռքի մէջ, սկսած մանկապարտէզէն, նախակրթարանէն եւ կիրակնօրեայ դպրոցներէն, քրիստոնէութեան սկզբունքները ու վեհ բարոյականը կը դասաւանդենք հայ աշակերտութեան, անդին՝ հայրենիքի մէջ, համայնավար ոստիկանները քրիստոնէութեան հիմքը կը փորեն՝ դպրոցներէն իսկ:

Մենք, Սփիւռքի մէջ, մեր զաւակներուն ձեռքերէն բռնած եկեղեցի կ'առաջնորդենք, անդին՝ մեծերն իսկ կասկածելի կը նկատուին, երբ եկեղեցի երթան:

Այս բոլորը արդեօք չե՞ն գիտեր, մեր «յառաջդիմական» մունետիկները եւ իրենց խաբուած զանգուածը:

Անշուշտ, Երեւան գացող-եկող գործակալները գիտեն, սակայն, չեն կրնար ճշմարտութիւնը խոստովանիլ, որովհետեւ, այդ պարագային, իրենց գոյութիւնն իսկ աւելորդ պիտի դառնայ, իրենց «կուսակցութիւններով» միասին:

Եւ գիտէ՞ք տակաւին այս հեթանոսը (որովհետեւ հայ մը հեթանոս չի կրնար ըլլալ, այլ՝ հայ քրիստոնեայ, իսկ երբ հեթանոս է, հայ չէ) ինչպիսի միջոցներ կ'առաջարկէ, հակակրօնական պայքարը ուժեղացնելու եւ յաղթանակով աւարտելու համար:

Ահաւասիկ.-

«Մեր պարտիական եւ կոմերիտական կազմակերպութիւնները պէտք է լայնօրէն օգտագործեն ակումբները, կուլտուրայի (մշակոյթ) տները, գրադարանները, դասախօսական խմբակները՝ աշխատաւորութեան եւ յատկապէս երիտասարդութեան հանդիստը կազմակերպելու համար: Սովետական պետութիւնը քաղաքում եւ գիւղում ստեղծել է կուլտուրայի օջախների աշխատանքի լայն ցանց. կուլտուր-լուսաւորական հիմնարկները, Ֆիզ-կուլտուրման (մարմնակրթանքը) սպորտը, թատրոնները, ռատիօն, կինոն, զբօսայգիները, էքսկուրսիաների (մրցում) ու խաղերի կազմակերպումը, երաժշտական խմբերը լայնօրէն պէտք է օգտագործուէին հակակրօնական պրոպագանդայի համար» (Անդ. էջ 131):

Այսպէ՛ս, հայրենիքի բոլոր միջոցները զօրաշարժի ենթարկուած են, կրօնը արմատախիլ ընելու համար:

Կարծեմ սուտ գոյութիւն չունի, քանի որ իրենց աղբիւրներով կը խօսինք:

Հարցում մը «յառաջդիմականներուն»:

- Որո՞նք են հակաքրիստոնէաները եւ հակաէջմիածնականները:

Մե՞նք, որ բոլոր միջոցները զօրաշարժի ենթարկած ենք, եկեղեցի մը աւելի շինելու, քրիստոնէութիւնը քիչ մը աւելի տարածելու համա՞ր, թէ իրենք համայնավարները, որոնք իրենց պետական բոլոր միջոցները զօրաշարժի ենթարկած են, քրիստոնէութիւնը արմատախիլ ընելու «լիկւիթացնելու» համար, «էջմիածինը փակելու» համար:

Եւ այսօր, երբ Կիլիկեան Գահին վրայ կը նստի արժանաւոր եկեղեցական մը, որ, ատենին, կրցաւ բարձրաձայն պատասխանել Երեւանի ռատիոկայանի Քրիստոսը մտացածին որակումին, համայնավարները եւ իրենց համախոհները իջած են փողոցները, ամէնէն լիբր արարքներով եւ վայնասուններով: Ի՞նչ եղաւ: Հայը հեթանոս դարձա՞ւ արդեօք, թէ Անթիլիասը էջմիածնի ճակատագրին ենթարկուեցաւ:

Բայց այս մարդիկը անարի են:

Եթէ իրենք իրաւ քրիստոնէայ են, ինչո՞ւ օր մը օրանց բողոք չբարձրացուցին, երբ մեր էջմիածնապատկան եւ եկեղեցապատկան բոլոր կալուածները գրաւուեցան համայնավար բռնակալներուն կողմէ, երբ մեր եկեղեցականները աքսորուեցան եւ անսուղ վախճանեցան, երբ էջմիածնի Գահակալը խեղդամահ նետուեցաւ վանքին բակը, երբ հայ եկեղեցականները եւ էջմիածինը նոյնիսկ ասեղ եւ դերձանի կարօտ մնացին:

Ինչո՞ւ բողոք չբարձրացուցին եւ այսօր, երբ Անթիլիասը կ'ունենայ իր անկաշառ եւ արի հովուապետը, այսքան տմարդի աղմուկ կը բարձրացնեն, փոխանակ ցնծութեան:

Կ'ուզենք, մի անգամ ընդմիջտ յայտարարել հակակրօն այս բռնակալներուն, թէ՛ պարսիկները, սելճուգները, մոնկոլները, թաթարները եւ թուրքերը չկրցան հայ ժողովուրդի սրտէն արմատախիլ ընել քրիստոնէութիւնը, որուն շէնքին պատերը հայ նահատակներու եւ սուրբերու արիւնովն են շաղախուած, նաեւ, համայնավարութիւնը պիտի չկրնայ իր բոլոր պետական միջոցներով «լիկւիտացնել» այդ, եւ, պէտք է գիտնան, թէ, որքան պայքարին, ա՛յդքան աւելի պիտի արմատանայ քրիստոնէութիւնը հայ ժողովուրդի սրբտին մէջ:

*

* *

Ինչպէս տեսանք, համայնավար Շահինեան կը պատգամէր, երիտասարդութեան բացատրել զժողքի, դրախտի, սրբատեղիներու, սուրբերու, աղօթքի եւ այլն, անտեղիութիւնը:

Զեզմէ՞ ո՞վ, երբ ծունկի եկած աղօթքի կը նստի Աստուծոյ առջեւ, հոգեկան բաւարարութիւն եւ գոհունակութիւն չի ստանար:

կը պարզուի որ, համայնավարները կ'ուզեն անկրօն երկրապաշտ մարդիկ ստեղծել:

Նայեցէք թէ ինչ կ'ըսէ Գրիգոր Տաթեւացի իր «Գիրք Հարցմանց», էջ 274ին մէջ, այդպիսի մարդոց համար.-

«Մարդ իր իմացական եւ հոգեկան կարողութիւններով է, որ վե՛ր է բոլոր «աշխարհ»էն (արարածներէն) եւ կը տիրէ անոր վրայ:

«Մարդ երբ կը յարի երկրաւոր բաներու, վա՛ր կը մնայ «աշխարհ»էն, այն ատեն կը մերկանայ իր աստուածային պատիւը եւ կը նմանի անասուններուն, այսպէս՝ ան իր ցանկութեան համար կը կոչուի՝ խոզ, իր բարկութեան համար՝ շուն, իր յափշտակութեան համար՝ գայլ, եւայլն»:

Տեսէք թէ՛ այս մարդիկ, դպրոցներէն իսկ հակակրօնական պայքար մը՝ դելով ինչպիսի մարդիկ կ'ուզեն պատրաստել:

Միանգամ ընդմիշտ, Սփիւռքի «յառաջդիմականները» պէտք է գիտնան, որ կա՛մ հայ կը մնան (քրիստոնեայ) եւ եկեղեցւոյ անունով կը խօսին եւ միջամուխ կ'ըլլան եկեղեցական գործերուն, կա՛մ համայնավար՝ ուրեմն դուրս՝ հայ եկեղեցիէն, որովհետեւ մարդ չի՛ կրնար թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մամոնային ծառայել, քանի որ ինչպէս փաստուեցաւ, համայնավարները հակակրօն են, անաստուած են, հետեւաբար, ազգային գործերուն մէջ որեւէ աշխատանք չունին կատարելիք: Իսկ համայնավար ուղեկիցներուն կը մնայ կա՛մ հայ մնալ եւ կա՛մ պաշտօնապէս իրենք զիրենք հայմայնավար հռչակել, առանց քօղածածուկ աշխատանք կատարելու:

«ԱՐԵՒԵԼՔ» Օրաթերթ
1956
Հալէպ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ

«Արեւելք»ի 11 եւ 12 Սեպտեմբեր 1957ի թիւերուն մէջ, հանգամանօրէն անդրադարձած էինք Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներու կարեւորութեան եւ օգտակարութեան մասին:

Սակայն, ասօր, կրկին պարտք կը զգանք արտայայտուիլ այս յոյժ կարեւոր հաստատութեան շուրջ, մատնանշելով կարգ մը ցաւեր եւ ներկայացնելով կարգ մը առաջարկներ՝ անոր կազմակերպման համար:

Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու հիմնադրութիւնը արդէն թեւակոխած է իր 31րդ տարեդարձը: 31 տարի է ի վեր, այս հաստատութիւնը, տանեակ հազարաւոր հայ մանուկներու եւ պատանիներու կրօնա-բարոյական դաստիարակութիւն ջամբած է, պատրաստելով գիտակից հայ քրիստոնէաներ:

Անոնց սորվեցուցած է սիրել հնադարեան մեր եկեղեցին, երգել անոր հոգեգմայլ շարականները եւ արտասանել սաղմոսներն ու աղօթքները: Սորվեցուցած է անոնց նաեւ, մեր եկեղեցւոյ պատմութիւնը, կարգ-կանոնը եւ օրէնքները, այս ձեւով, իր մեծ բաժինը բերելով հայապահմանման մեծ գործին:

Այսօր, նիւթապաշտ այս դարուն, երբ մարդիկ կը վազեն դիւրին հաճոյքներու ետեւէն՝ մոռնալով երկնայինը, ի՞նչ կը խորհին ընել, փրկելու համար նոր սերունդը: Ի՞նչ պէտք է ընենք, որպէսզի նոր սերունդը ապրի այնպէս, ինչպէս կ'ապրէին իր պապերը: Ի՞նչ պէտք է ընենք, որպէսզի ան լաւագոյնս տէր կանգնի իրեն փոխանցուած եւ վստահուած մեր ազգային եւ եկեղեցական սրբազան աւանդներուն: Ի՞նչ պէտք է ընենք, որ ան կապուի իր եկեղեցիին եւ մշակոյթին:

Արդեօք շա՞տ է թիւը այն ծնողներուն, որոնք պատրաստ են մեզի հետ մտածելու՝ վերոյիշեալ հարցումներու պատասխաններուն շուրջ:

Ըստ իս, հայ նոր սերունդը, հարիւրին տասը յանցաւոր չէ իր ներկայ անտարբերութեան համար: Քանի որ, նախ, ան հայ հողը չունի իր ոտքին տակ: Երկրորդ՝ Ի. դարու կեանքը չի նմանիր անցեալին: Այսօր, ստեղծուած են կեանքի նոր պայմաններ, հաճոյքի նորոյթներ, որոնք ենթական անխուսափելիօրէն կ'առնեն իրենց երախաներուն մէջ, եթէ նախօրօք պաշտպանողական միջոցներու չդիմենք:

Այսօր, հայ ծնողներ, չեն արգիլեր իրենց զաւակները, որպէսզի չյաճախեն սինեմաներ, պարասրահներ եւ զանազան խաթարիչ վայրեր:

Ինչո՞ւ:

- Որովհետեւ, այդ երիտասարդներուն մէջ կրօնա-բարոյական դաստիարակութիւնը թերի է, չըսելու համար անգոյ:

Որո՞ւն է յանցանքը:

- Ծնողներուն: Որովհետեւ, անոնք իրենց զաւակները մանկութենէն չեն առաջնորդեր կիրակնօրեայ դպրոց: Չեն սորվեցներ եկեղեցի երթալ:

Եթէ առաջնորդած ըլլային կիրակնօրեայ դպրոց, անոնք լաւապէս պիտի ճանչնային իրենց եկեղեցին: Փոխանակ օտար երգեր երգելու, պիտի եր-

գէին մեր մեղեդիները եւ շարականները:

Այսպէսով, անոնք իրենց կրօնական գիտակցութեամբ զրահուած գերի պիտի չդառնային աշխարհիկ հաճոյքներու եւ չմոռնային հայ ժողովուրդի բիւրաւոր նահատակներուն արիւնով շողախուած Հայց. Եկեղեցին:

Այսօր, նոր սերունդը, տարին հազիւ քանի մը անգամ եկեղեցի մտնելու առիթ կ'ունենայ, ան ալ, բարեկամի մը կամ ազգականի մը նշանախօսութեան, Ս. Պսակին կամ մահուան պատճառներով: Իսկ եկեղեցւոյ մէջ, հաւատացեալի մը վայել կեցուածք նոյնիսկ չունենար:

Իսկ կիրակնօրեայ դպրոցէ մը ընթացաւարտ երիտասարդը, օրինակելի է ամէն տեղ:

Ինչո՞ւ այս անտարբերութիւնը:

- Կրօնաբարոյական դաստիարակութեան պակաս:

Հայց. Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցները, լիովին կու տան այս դաստիարակութիւնը, փոխարէն ոչինչ պահանջելով հայ ծնողներէն:

Սակայն, դժբախտութիւն է, որ կարգ մը ծնողներ, չեն անդրադառնար իրենց սխալին, այլ՝ գիտակցօրէն կ'արգիլեն իրենց զաւակներուն կիրակնօրեայ դպրոց յաճախել, առարկելով՝ «ամբողջ շաբաթը արդէն կը յոգնին աւօրեայ դպրոցին մէջ, կիրակին ալ թող հանգիստ ընեն»:

Եղա՞ւ այս, սիրելի՛ ծնողք: Կը գիտակցի՞ս, որ քու զաւակներդ, աւօրեայ դպրոցին մէջ, գրեթէ կրօնական դաստիարակութիւն չեն ստանար՝ դասացուցակներու խճողումին պատճառաւ: Կը գիտակցի՞ս, արդեօք, թէ ի՞նչ դժբախտութեան դուռ կը բանաս այս ձեւով:

Անոնք ուրկէ՞ պիտի սորվին գթած ըլլալ, ողորմած ըլլալ, բարեսէր ըլլալ, մէկ խօսքով՝ իրաւ հայ քրիստոնեայ ըլլալ, քրիստոնէավայել կեանք ապրել:

Մեր պապերը շատ լաւ սովորութիւն մը ունէին: Ամէն տուն Աստուածաշունչ Մատեան մը ունէր, եւ, ան էր իրենց ընթերցանութեան գլխաւոր առարկան:

Այսօր, ի բացառեալ հոգեւոր եղբայրներէ եւ կիրակնօրեայ դպրոցներու շրջանաւարտներէ, տեսա՞՞ծ էք հայ պատանի մը, որ տան մէջ նստած սերտէ այդ Մատեանը...:

*

* *

Հալէպի վեց կիրակնօրեայ դպրոցները, կարելի չափով կը կատարեն իրենց պարտականութիւնը՝ Հայց. Եկեղեցւոյ հաւատացեալներ պատրաստելով:

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութիւնը վայելող այս դպրոցները, սակայն, պէտք ունին հոգածութեան, աւելի ուշադրութեան եւ քաջալերութեան:

Այս պարտականութիւնը կ'իյնայ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կիրակնօրեայ դպրոցներու վարիչ տնօրէնին վրայ, որ պէտք եղած ուշադրութիւնը չի դարձներ Սուրբոյ շրջանի կիրակնօրեայ դպրոցներուն:

Այս առնչութեամբ, պարտականութիւններ ունին կատարելիք Բերիոյ Թեմի Ազգային Իշխանութեան Կրօնական Ժողովը եւ Ուսումնական Խորհուրդը:

Կ'առաջարկենք՝ նշանակել Սուրբոյ շրջանին համար քարտուղար մը, որուն պարտականութիւնը ըլլայ ղեկավարել այս գործը, կապ պահելով վարիչ տնօրէնին հետ:

- Վերակազմել Բերիոյ Թեմի Կրօնական-Դաստիարակչական Խորհուրդը, որուն նախագահն է Սրբազան Առաջնորդը:

- Պարտականութիւն տալ բոլոր աւօրեայ դպրոցներու տնօրէններուն, որպէսզի իրենց աշակերտները մղեն դէպի կիրակնօրեայ դպրոց:

- Յայտարարել՝ եկեղեցիներուն բեմերէն:

- Պաշտօն տալ քահանայ հայրերուն, որպէսզի իրենց ծուխերուն բացատրեն կիրակնօրեայ դպրոցներու դերը եւ թելադրեն անոնց, իրենց զաւակները ղրկել կիրակնօրեայ դպրոց:

Ահա, այս միջոցներով, կը խորհինք փրկել մեր նոր սերունդը այլասերումէ եւ դնել զանոնք աստուածահաճոյ կեանքի մը մէջ:

«ԱՐԵՒԵԼԸ»
1957
Յալէպ



Յալէպի Հայաստանեայց Կիրակնօրեայ Դպրոցներու Կեդրոն բաժնի ուսուցչական կազմը
Նստած մէջտեղը՝ տեսուչ Գրիգոր Յոթոյեան

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներու հիմնադրութիւնը կատարուած է 1929ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսներ Տ. Տ. Սահակ եւ Բարգէն Կաթողիկոսներու քաջալերութեամբ, եւ Պրն. Լեւոն Զէնեանի ու Տ. Ներսէս Քհնյ. Թաւուզճեանի աշխատանքով: Առաջին դպրոցը, որ հիմնուած է, եղած է Հալէպի Ազգ. Մանկապարտէզի Սրահի Կեդրոն Բաժինը: Յետագային, դպրոցներու ճիւղերը տարածուած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերէն ներս, նոյնիսկ աւելի հեռուներ, ինչպէս՝ Ամերիկա, Եգիպտոս եւայլն, եւ, այսօր, կը ներկայանայ որպէս պատկառելի հաստատութիւն մը, միմիայն Սուրիոյ, Լիբանանի եւ Կիպրոսի մէջ ունենալով 400է աւելի ուսուցիչ-ուսուցչուհիներ եւ 5,000է աւելի աշակերտներ:

Այսօր, 400է աւելի ուսուցիչներ, բոլորովին ձրի, գոհելով իրենց հանգիստը եւ այլ զբաղումները, նուիրուած են հայ մանուկներու կրօնա-բարոյական դաստիարակութեան գործին:

Երբ մանուկ մը կը կրթուի, ազգը կրթուած կ'ըլլայ: Մանուկը որքան օժտուի կրօնական առողջ դաստիարակութեամբ, նոյն համեմատութեամբ իր ազգը եւս բարոյական բարձր մակարդակի մը վրայ կը կենայ: Քանզի այսօրուան մանուկը՝ ապագայ ժողովուրդին ներկայացուցիչը պիտի ըլլայ: Ուստի, մանուկը բարձրացնել, ազգ մը բարձրացնել է, իսկ ազգ մը բարձրացնել՝ մարդկութիւնը բարձրանել կը նշանակէ:

Մանուկը կը տարբերի չափահասէն իր ուրոյն հոգեբանութեամբ իրերը ըմբռնելու ու արտայայտելու իր ձեւովը: Այս տարբերութիւնը ըլլալէ աւելի, աստիճանի տարբերութիւն է: Մանուկը նախամարդը կը ներկայացնէ իր հոգեբանութեամբը, կը զգայ, քան թէ կը խորհի: Կը հետեւի, քան թէ կ'առաջնորդէ, կ'ընդօրինակէ, քան թէ կը ստեղծէ: Թէեւ գիտակից դասատուին ներշնչումներուն ներքեւ կրնայ մղուիլ ստեղծագործութեան:

Արդի ըմբռնումով, մանուկը այնքան հոգեւոր էակ է, որքան՝ չափահասը: Ըստ ներկայ տեսութեան, մանուկը կը ծնի կրօնական միտումներով տոգորուած: Ուստի ազնիւ նկարագիր մը ստանալու համար, պէտք ունի բարոյական դաստիարակութեան, որպէսզի կարող ըլլայ իր կրօնական միտումներն ու ընդունակութիւնները զարգացնել: Կրօնական դաստիարակներ այժմ խորապէս համոզուած են, թէ ցեղը ազնուացնելու համար միակ կերպը՝ մանուկը ազնուացնելն է, օժտելով զայն ազնիւ նկարագրով մը: Իմաստունը իրաւամբ կ'ըսէ. «Կրթի մանուկը իր ճամբուն սկիզբը, եւ երբ ծերանայ, այլեւս անկէ պիտի չչեղի»:

Հայոց եկեղեցին դարերով իր ձեռքին մէջ պահած էր հայ մանուկին դաստիարակութեան գործը:

Մեր վանքերը, մեր անապատները եղան ու մնացին երկար շրջաններ համալսարաններ, մեր ուսանող սերունդներուն համար:

Ամէն եկեղեցիի քովիկը կար հայ դպրատուն մը, ուր առաջնորդութեամբ հաւատաւոր, բանիմաց, առաքինի, եւ ազգին ու ժողովուրդին սիրովը խանդավառ հայ քահանաներու շունչին տակ, կը կրթուէր ու կը դաստիարակուէր մեր մատաղ սերունդը:

Եւ շնորհիւ կրօնական այս առողջ դաստիարակութեան, պատրաստուեցան հաւատաւոր այն սերունդները, որոնք արիաբար ու դարերով դիմադրեցին ազգին գլխուն եկած ահաւոր աղէտներուն:

Մեր եկեղեցին միեւնոյն գործը կատարելու ի վիճակի՞ է այսօր: Դժբախտաբար՝ ո՛չ:

Մեր դպրոցները կրնա՞ն նոյն գործը կատարել ներկայիս, երբ դասացուցակները այնքա՛ն խճողուած են զանազան լեզուներով եւ նիւթերով, ու կրօնի դասին շաբաթական տրուած է հազիւ մէ՞կ պահ: Դժբախտաբար՝ ո՛չ...:

Կիրակնօրեայ դպրոցին նպատակն է, ներկայ անհաւատ եւ նիւթապաշտ դարուն մէջ, առաջնորդել մեր մանուկները՝ ճանչնալու զԱստուած: Սորվեցնել անոնց մեր հոգեգմայլ շարականները, աղօթքները եւ սաղմոսները, ինչպէս նաեւ քրիստոնէութեան սկզբունքները եւ մեր ազգային ու կրօնական սօսները:

Ինչ կ'արժէ քրիստոնեայ ծնիլ եւ կոչուիլ, երբ չենք ապրիր զայն: Քրիստոնեայ ապրելու համար պէտք է սորվիլ քրիստոնէութեան սկզբունքները եւ կանոնները ու կիրարկել զանոնք:

Այսօր, եթէ մեր եկեղեցիներէն կը բացակայի երիտասարդութիւնը, անոր պատճառը, անոնց կրօնական դաստիարակութեան թերի ըլլալն է: Կիրակնօրեայ դպրոցները Հայց. Եկեղեցւոյ հաւատացեալներ կը պատրաստեն:

Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցները մանուկներու մէջ կը ըստեղծեն առաքինութիւնը: Առաքինութեան վարձատրութիւնը բարոյական է: Այդ վարձատրութիւնը դրամով չ'առնուիր: «Որովհետեւ անգին է, անոր գինը գոհարներէն շատ աւելի է» (Առակ ԼԱ. 10): Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Ինչ առաքինութիւն եւ ինչ գովութիւն որ կայ, այդ բաներուն վրայ խորհեցէք» (Փիլիպ. Դ. 8): Որովհետեւ անոնք են որ արժէք կը ներկայացնեն եւ յաւիտենական են, եւ անհատին ու ազգին իրական գանձն ու հարստութիւնը կը կազմեն: Կիրակնօրեայ դպրոցները մանուկին մէջ կը ստեղծեն հաւատքը եւ առաքինութիւնը, եւ, այս երկուքը ունեցող անհատ մը, միմիայն, իր ազգին եւ մարդկութեան պատիւ կրնայ բերել:

Կիրակնօրեայ դպրոցները կրնան յաճախել 5 տարեկան մանուկները, որոնք 12 տարի հետեւելէ վերջ, 17 տարեկանին կը ստանան շրջանաւարտի վկայական, զոր կը ստորագրէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը: Չկայ որեւէ կրթական դասընթացք, ուրկէ ելած շրջանաւարտները ստանան Կաթողիկոսէ մը ստորագրուած վկայական մը: Միմիայն Կիրակնօրեայ դպրոցներէ ելած շրջանաւարտները կը ստանան զայն:

Կիրակնօրեայ դպրոցները, գաղթաշխարհի ներկայ տազնապալից կեանքին մէջ, ազգապահպանման տեսակէտէն դիտուած՝ սրբազան եւ մեծապէս օգտակար գործ մըն է, որ կը կատարեն:

Հայ ընտանիքին, Հայց. Եկեղեցւոյ եւ ամէնօրեայ հայ դպրոցի կողքին ու անոնց գորացման եւ գոյատեւման սատարող բազմօգուտ ազգային-եկեղեցական հիմնարկ մըն է հայ Կիրակնօրեայ դպրոցը:

Կիրակնօրեայ դպրոցը յատուկ դասախօսութիւններով եւ ուսուցումներով՝ իր աշակերտներուն կը ներշնչէ ազգասիրական, հայրենասիրական ոգի եւ անոնց մէջ կ'արթնցնէ ազգային գիտակցութիւն մը՝ որ զանոնք կը մղէ Հայ ապրելու, գիտակցութիւն մը՝ որ զանոնք կը կապէ իրենց հաւաքական մարմնին եւ եկեղեցւոյ: Այդ հաւաքական մարմինն ու եկեղեցին՝ ազգային կեանքի այն վառարաններն են՝ որոնց ջերմութեան ազդեցութենէն դուրս ապրող հայ անհատները՝ կ'ուժանան, կը սառնին, կ'այլասերին, այլ խօսքով՝ կը ձուլուին: Ուրեմն, որքան արդիւնաւէտ հաստատութիւն մըն է Կիրակնօրեայ դպրոցը, որ հայ մանուկներուն, պատանիներուն եւ պատանուհիներուն հայրենասիրական ոգի կը ներշնչէ ու անոնց մէջ կ'արթնցնէ ազգային գիտակցութիւն:

Նկատի առէք օտար որեւէ դաւանանքի պատկանող մանուկ մը, կամ պատանի մը: Ան հայ մանուկէ մը շատ աւելի լաւ եւ ճշգրիտ կերպով կը պատասխանէ ձեզի կրօնական որեւէ հարցումի մը:

Ի՞նչն է պատճառը:

Պատասխանը շատ յստակ է: Կրօնական դաստիարակութիւնը:

Օտար համայնքներ, մեզմէ շատ աւելի արժէք կու տան կրօնական դաստիարակութեան, վստահ ըլլալով որ, միայն այդ դաստիարակութեամբ կարելի է տոկուն եւ մաքուր նկարագիր կազմել:

Եթէ փորձենք վիճակագրութիւն մը կազմել, ի յայտ կու գայ, որ Կիրակնօրեայ դպրոց յաճախող մանուկը, ապագային շատ աւելի հաւատաւոր եւ բարձր նկարագրով երիտասարդ մը կը դառնայ, քան ան, որ կրօնական դաստիարակութիւն չէ ստացած: Կիրակնօրեայ դպրոցները իրենց 28 տարուան գոյութեամբ հայ կեանքէ ներս, պատրաստած են սերունդ մը, որ իրապէս հայ քրիստոնեայ է, եւ պատիւ կը բերէ իր ժողովուրդին:

*

* *

Մեր եկեղեցական եւ ազգային կեանքի արեկոծումէն վերջ, հիմա, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Զարեհ Ա.ի կարգադրութեամբ, Կիրակնօրեայ դպրոցներու վարիչ-տնօրէն նշանակուած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբաններէն Հոգշ. Տ. Սահակ Վրդ. Այվազեանը, սպասելի է, որ Կիրակնօրեայ դպրոցներու շարժումը նոր թափ ստանայ:

Մենք վստահ ենք, որ՝ Վեհափառ Զարեհ Ա.ի հովանիին ներքեւ, Կիրակնօրեայ դպրոցները դէպի բարգաւաճում պիտի դիմեն՝ ի փառս Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ:

*

* *

Բերիոյ Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Ղեւոնդ Սրբ. Արքեպիսկոպոսի շնորհիւ կարելի եղաւ վերաբանալ Կեդրոն Բաժնի Կիրակնօրեայ դպրոցը, որ 7-8 ամիսէ ի վեր փակուած կը մնար զանազան պատճառներով:

Նորին Սրբազնութիւնը գործնապէս կը քաջալերէ Կիրակնօրեայ դպրոցները: Ան բազմաթիւ անգամներ ներկայ գտնուեցաւ Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչական հաւաքոյթներուն, ինչպէս նաեւ Կեդրոն Բաժնի դպրոցը, ուր իր գեղեցիկ խօսքերով քաջալերեց ուսուցչական կազմը եւ աշակերտութիւնը, եւ թելադրեց սիրել չայց. Եկեղեցին եւ յաճախել Կիրակնօրեայ դպրոց:

Առաջնորդ Սրբազան Հայրը, կեդրոն Բաժնի վերաբացումի առնչութեամբ, Հալէպի եկեղեցիներու բեմերէն կոչ ուղղել տուաւ, որ հայ ժողովուրդը իր զաւակները ղրկէ չայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցները՝ հաւատաւոր հայեր պատրաստելու համար:

Այս առթիւ յիշենք որ, Հալէպի մէջ գոյութիւն ունին վեց Կիրակնօրեայ դպրոցներ.- Կեդրոն Բաժին (Սալիպէ), Նոր Գիւղի բաժին (Հայ Հոգեւոր Եղբայրներու կեդրոն), Գերմանիկ թաղի բաժին (Ազգ. վարժարան), Ճեպէլ Սէյտէ (Ազգ. վարժարան), Տաւուտիէի բաժին (Տաւուտիէի եկեղեցին), Սեպիլի բաժին (Ազգ. վարժարան):

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին, որ անյապաղ իրենց զաւակները ղըրկեն Կիրակնօրեայ դպրոցներ, որպէսզի իրենց զաւակները իբր հաւատաւոր, առաքինի եւ մաքուր նկարագրով հայ քրիստոնէաներ կը թուին:

«ԱՐԵՎԵԼՔ»
12 Յոկտեմբեր 1957
Յալէպ



Բերիոյ Թեմի Կրօնա-Բարոյական Դաստիարակութեան Խորհուրդը՝ 16 Յուլիս 1968

ՀԱՅ ԴՊՐՈՅՈՒ ԼՈՅՍԻ ԱՂԲԻՒՐ ՄԵՍՐՈՊԵԱՆ

Մեծ ուսուցիչի խաչատուր Աբովեան, իր «Վերջ Հայաստանի» գիրքին մէջ կը գրէր. «Ա՛խ լեզուն, լեզուն որ չըլի, մարդ ընչի՞ նման կըլի: Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հաւատը: Լեզուդ փոխի՛ր, հաւատդ ուրացի՛ր, էլ ընչո՞վ կարես ասել, թէ որ ազգիցն ես:

«Զեզ եմ ասում, ձեզ, հայոց նորահաս երիտարարդք՝ ձեր անունին մեռնեմ, ձեր արեւին ղուրբան, տասը լեզու սորվեցէ՛ք, ձեր լեզուն, ձեր հաւատը դայիմ բռնեցէ՛ք»:

Հայ ժողովուրդը շատ լաւ ըմբռնած է Աբովեանի պատգամը եւ շինած է ու կը շինէ հայ դպրոցներ հայահոծ բոլոր գաղութներուն մէջ, որպէսզի հայ նորահաս սերունդները կրթուին եւ դաստիարակուին հայաբոյր եւ առողջ մթնոլորտի մէջ:

Հայ ժողովուրդը իր բազմադարեան պատմութեան ընթացքին եղած է մշակութասէր եւ շինարար ժողովորդ: Ծինած է իր հայրենիքին մէջ: Ծինած է օտար երկիրներուն մէջ: Ուր որ գացած է, իր գլխաւոր մտահոգութիւնը եղած է շինել եկեղեցի եւ դպրոց, այն հաստատ համոզումով, որ հայ մնալու եւ գոյատեւելու համար անհրաժեշտ են գինուիլ հայու լուսաւորչեան հաւատքով եւ մեսրոպահնչիւն լեզուով:

Այդ գիտակցութեամբ եւ յոյսով հայ մամիկը Տէր-Զօրի սոթակէզ աւապատներուն վրայ, մահուան ճիրաններուն մէջ նոյնիսկ, աւազը գործածելով որպէս թուղթ եւ մատը՝ մատիտ, հայերէն տառերը սորվեցուց իր թոռնիկին, քաջ գիտնալով, որ միմիայն հայերէն լեզուն իր թոռնիկը պիտի պահէ հայ, եւ պարտադրէ տէր դառնալու ազգային աւանդութիւններուն ու մշակոյթին:

Հայկեան ոգին եւ ոսկեղնիկ մեր լեզուն առոյգ եւ հնչուն պահելու համար հայ մանուկներու շրթներուն, 1976ին, երբ յայտարարուեցաւ Թորոնթոյի հայ նոր կեդրոնի շինութեան ծրագիրը, օրուան Հ.Յ. Դաշնակցութեան «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէն հրապարակ իջաւ հայ նոր կեդրոնի եւ հայ ամէնօրեայ վարժարանի շինութեան ծրագրով, որովհետեւ անհրաժեշտութիւն էր հայ կեդրոնի կողքին տեսնել հայ վարժարանը, Թորոնթոյի հայ նոր սերունդներու հայեցի կրթութեան եւ գաղութը հայկական դիմագիծի անվթար պահպանումին համար:

1979 Յունիսին, բացմումը կատարուեցաւ հայ կեդրոնի նորակառոյց շէնքին: Նոյն տարուան Յունիսին յայտարարուեցաւ բացումը Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանին, նպատակ ունենալով սկսիլ Մանկապարտէզի երկու եւ նախակրթարանի մէկ դասարանով եւ յաջորդ հինգ տարիներուն, տարեկան մէկ դասարան աւելցնելով, ունենալ լրիւ Մանկապարտէզ եւ նախակրթարան, մինչեւ Զ. կարգ:

1979 Սեպտեմբեր 4ին, բացումը կատարուեցաւ Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանին՝ 80 աշակերտ-աշակերտուհիներով եւ տեղաւորուեցան հայ կեդրոնի վարչական եւ միութենական սենեակներու եւ սրահներու մէջ:

Տարուէ տարի աշակերտութեան թիւը աւելցաւ եւ դպրոցը տարածուեցաւ հայ կեդրոնի գրադարանի սրահին եւ վերի սենեակներուն մէջ:

Ստեղծուած նոր պայմաններուն եւ կացութեան դիմաց, անմիջական կարծիքը զգացուեցաւ դպրոցի սեփական շէնքի մը կառուցումին:

Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ վարժարանի սեփական շէնքի հիմնարկէքի պաշտօնական հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 15 Նոյեմբերին:

Վարժարանի շէնքը կառուցուեցաւ 22,000 քառակուսի ոտք տարածութեամբ, երկու յարկի վրայ՝ չորս մակարդակով: Պաշտօնական բացման հանդիսութիւնները տեղի ունեցան Կիրակի, 7 Նոյեմբեր 1982ին:

Դպրոցի շինութիւնը աւարտած էր: Ժողովուրդը փաստելով իր ազգասիրութիւնը, հիմնարկէքի եւ շէնքի աւարտումին առիթներով կատարուած հանգանակութիւններուն մասնակցեցաւ առատաձեռն, տուաւ սրտին խորէն, անսակարկ, բանալու համար լոյսի մեսրոպեան աղբիւրը՝ հայ դպրոցը, որպէսզի այս ափերուն վրայ իր գոյութեան հիմերը ապառաժի վրայ հաստատուին, որպէսզի փչող սաստիկ հողմերը որեւէ ձեւով չազդեն, չապականեն ու չաղճատեն հայ նորահաս սերունդներուն հայկական նկարագիրն ու դիմագիծը:

Հ.Օ.Մ.ի Պապայեան Մանկապարտէզի ու Գոլոլեան Վարժարանի աշակերտութիւնը այս ձեւով բախտաւորութիւնը ունեցաւ նոր տարեշրջանին իրենց ուսումը շարունակելու լուսաւոր եւ դպրոցական լաւագոյն յարմարութիւն ունեցող դասարաններու մէջ:

Դպրոցի սեփական շէնքի բացման առթիւ կը խորհրդածենք.- եթէ հաւատանք, որ արժանիքը եւ իրաւունքը ունինք իբրեւ ազգ ապրելու եւ յարատեւելու, նախընտրաբար մեր պապենական հողերուն վրայ, բայց նաեւ հիւրընկալ երկիրներուն մէջ հարկադրաբար, անհրաժեշտ է կառչիլ ցեղին հիմնական խարխիւին՝ հայ մշակոյթին:

Եթէ կ'առաջնորդենք մեր ազգային իտէալները փոխանցել նոր սերունդին, անհրաժեշտ է բանալ անոր մտքի եւ հոգիի պատուհանները հայ գիրին եւ պատմութեան անդաստանին վրայ:

Եթէ կ'ուզենք, որ մեր գաւակները յաջողին կեանքի մէջ իբրեւ հայ մարդ, պէտք է դաստիարակել զանոնք պատիւի, հոգեկան արժանիքներու, աշխատասիրութեան եւ տոկունութեան գիտակցութեամբ:

Եթէ որոշած ենք այս հիւրընկալ ափերուն վրայ հայութիւն ու հայկականութիւն պահել, միջոցներուն մէջ ամէնէն հիմնականը եւ կենսականը՝ հայ դպրոցն է:

Ահա թէ ինչու հայ դպրոց կերտելու եւ պահելու ծանրակշիռ պատասխանատուութիւնը կը ստանձնէ Թորոնթոյի հայ գաղութը:

Արդէն իսկ 15 տարիներ անցած են Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի հիմնադրութենէն:

Վարժարանը տարուէ տարի բարգաւաճած է: Նախակրթարանի վեցերորդ կարգին վրայ աւելցած են միջնակարգի եօթերորդ եւ ութերորդ կարգերը:

Վեցերորդ եւ ութերորդ կարգէն վկայուած են հարիւրաւոր աշակերտներ, որոնք իրենց ուսումը շարունակած են գանատական պետական եւ մասնաւոր դպրոցներուն մէջ, արձանագրելով բացառիկ յաջողութիւն՝ բաղադրամամբ

իրենց տեղացի դասընկերներուն՝ գնահատանք եւ պատիւ բերելով հայկական վարժարանին, ուրկէ շրջանաւարտ եղած են:

Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանը 15 տարիներու ընթացքին, շնորհիւ Ուսումնական Մարմիններուն, 15 տարիներու տնօրէն Պրն. Մարգար Շարապ-խանեանի եւ անձնուէր ուսուցիչ-ուսուցչուհիներու ջանքերով մեծապէս յառաջդրւած է, օժտուելով համակարգիչներով, գրադարանով եւ այլ մարզական յարմարութիւններով:

Գնահատելի է փոխ-տնօրէն եւ երաժշտութեան ուսուցիչ Պրն. Վարուժան Նիկոլեանի կազմած «Արցախի Սոխակներ» եւ «Կոռնկ» աշակերտական երգչախումբերու ելոյթները, ինչպէս նաեւ գծագրութեան եւ ձեռագիր աշխատանքի ուսուցչուհի Տիկ. Բարիս Մաղաքեանի կողմէ պատրաստուած աշակերտական ցուցահանդէսները: Ինչպէս նաեւ հայերէն լեզուի ուսուցիչներ՝ Պրն. Մուշեղ Գարագաշեանի եւ Տիկ. Յասմիկ Պապեանի կողմէ կազմակերպուած արտասանական մրցումները, այդ ձեւով աշակերտներուն սիրցնելով հայ բանաստեղծութիւնը:

Ինչպէս իր արմատներուն փարած ամէն հայ կը հաւատայ, որ հայ դըպրոցն է գլխաւոր ազդակը հայապահպանման եւ իր կարելի միջոցներով զօրավիգ կանգնած է անոր գոյութեան եւ բարգաւաճումին, այս օրերուն ալ, հակառակ Արցախի եւ Հայաստանի համար մեզմէ պահանջուած օգնութիւններուն, պէտք է շարունակենք մեր օգնութիւնը նաեւ հայակերտումի օրրան հայ վարժարանին, քանի որ հայ մանուկն ու պատանին զաւակն է ազգին. ա՛ն է մեր ապագան, ազգային տեւականացման մեր միակ ապաւէնն ու սիւնը:

Հայ Օգնութեան Միութեան Պապայեան Մանկապարտէզի, Գոլոլեան Նախակրթարանի եւ Միջնակարգի հիմնադրութեան 15րդ տարեդարձի տօնակատարութիւնը պաշտօնապէս պիտի նշուի Կիրակի, 6 Մարտ 1994ին, հայ կեդրոնի սրահին մէջ:

Վստահ ենք, այս անգամ եւս, հայ դպրոցին դերը գնահատող մեր ազգայինները իրենց ներկայութեամբ եւ նուիրատուութիւններով կը սատարեն հայ դպրոցի գոյութեան տեւականացման եւ առաքելութեան:

Պատիւ անոնց, որոնք կը հաւատան հայ դպրոցին:

Առաւել պատիւ անոնց, որոնք կը գործեն ի խնդիր հայ դպրոցի ծաղկումին:

Զաւակիդ Հայկազեան դպրոց տար,
Եկ գրենք Մեսրոպեան տառերով,
Եկ խօսենք մեր անոյշ բառերով:
Մեզ ցրեց մի բազուկ անօրէն,
Թէ կ'ուզես սերունդներ մեզ ներեն,
Մենք հայ ենք, եկ խօսենք հայերէն:

Հայ պատանի խօսի՛ր հայերէն,
Որպէսզի ապրիս հայօրէն:

«ՅՈՐԻՉՈՆ»

ԿՈՉ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Հայ Ժողովուրդը իր բազմադարեան պատմութեան ընթացքին եղած է մշակութասէր եւ շինարար ժողովուրդ: Այդ կը փաստեն էրէբունի պեղումները եւ Հայաստանի ամբողջ տարածքին կառուցուած բերդերը, վանքերն ու տաճարները:

Հայը շինած է իր հայրենիքին մէջ, շինուած է օտար երկիրներուն մէջ: Ո՛ւր որ գացած է, իր գլխաւոր պարտականութիւնը եղած է շինել եկեղեցի եւ դպրոց, այն հաստատ համոզումով, որ հայ մնալու եւ գոյատեւելու համար անհրաժեշտ են հաւատքն ու լեզուն:

Սփիւռքի տարածքին ցրուած հայ ժողովուրդը, այսօր գիտակից է իր կացութեան եւ կարելի բոլոր միջոցներով կը պայքարի հայ ապրելու եւ հայ մնալու համար :

Հայ ժողովուրդը որոշած է պահել իր գոյութիւնը եւ այդ նպատակին իրագործման համար, պիտի պահէ իր մշակոյթն ու լեզուն: Պիտի մնայ հայ, մինչեւ որ իր երագները իրականանան եւ վերադառնայ իր պապենական սըր՝ բազան հողերուն:

Այդ գիտակցութեամբ եւ յոյսով հայ մամիկը Տէր-Զօրի տօթակէզ անպատներուն վրայ, մահուան ճիրաններուն մէջ, աւագը գործածելով որպէս թուղթ եւ մատը՝ մատիտ, հայերէն տառերը սորվեցուց իր թոռնիկին, քաջ գիտնալով որ հայերէնը միայն իր թոռնիկը պիտի պահէ հայ եւ ստիպէ տէր դառնալու իր Դատին:

Հարիւր յիսուն տարի առաջ, Մեծ ռահվիրայ Խաչատուր Աբովեան, իր «Վերք Հայաստանի» գիրքին մէջ կը գրէր.

«Ա՛խ՝ լեզուն, լեզուն, լեզուն որ չըլի, մարդ ընչի՞ նման կըլի: Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հաւատը: Լեզուդ փոխի՛ր, հաւատը ուրացիր, էլ ընչո՞վ կարես ասել, թէ ո՞ր ազգիցն ես:

«... Ձեզ եմ ասում՝ ձեզ՝ հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անունին մեռնիմ, ձեր արեւին ղուրպան, տասը լեզու սորվեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատը զայիմ բռնեցէք»:

Հայ ժողովուրդը շատ լաւ ըմբռնած է Աբովեանի պատգամը եւ շինուած է եւ կը շինէ հայ դպրոցներ հայահոծ բոլոր գաղութներուն մէջ:

Իսկ Ամերիկահայութիւնը, վերջին տասը տարիներու ընթացքին շինած է տասը աւելի դպրոցներ զանազան քաղաքներու մէջ, որպէսզի հայ նորահաս սերունդները կրթուին եւ դաստիարակուին հայօրէն:

Հայ ժողովուրդը,

Ասկէ առաջ փաստեցիր քու ազգասիրութիւնդ եւ տուիր սրտիդ խորէն, տուիր քու կարողութեանդ սահմաններուն մէջ, անսակարկ, եւ ունեցար տունդ՝ հայ կեդրոնը, որ այսօր պատիւ կը բերէ քեզի:

Տուի՛ր, բանալու համար լոյսի աղբիւրը՝ հայ դպրոցը՝ որ այս տարի կը բոլորէ իր երրորդ տարեշրջանը՝ 160 աշակերտներով:

160 աշակերտներ հայեցի կրթութիւն կը ստանան, հայերէն լեզու կը սորվին՝ Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ վարժարանի «Պապայեան» Մանկապարտէզի մէջ:

Գալ տարի անոնց թիւը 200ը պիտի անցնի:

Բայց, ո՞ւր է գանոնք պարփակող դպրոցական շէնքը, որ ըլլայ արդիական եւ յարմարի գանատական դպրոցական շէնքերու օրէնքներուն:

Պիտի շինէք մեր գաւակներուն արժանի եւ յարմար դպրոցական շէնքը՝ հայ կեդրոնի կողքին:

Պատրաստ է հողը, պատրաստ է ծախսին կէսը:

Միւս կէսը պէտք է գոյանայ, հայ ժողովուրդ: Պէտք ունինք չունեւորին «յուժայ»ին եւ ունեւորին՝ անսահման նուիրաբերումին:

Նոյեմբեր 15ին կը կատարուի դպրոցի նոր շէնքին հիմնարկէքը: Շինութիւնները պիտի սկսին եւ վերջանան, պատրաստ ըլլալու համար 1982-83 տարեշրջանի վերամուտին:

Սիրելի հայրենակից,

Եկուր Նոյեմբեր 15ին հիմնարկէքին, հետդ բեր ազգականներդ, բարեկամներդ եւ ծանօթներդ եւ հպարտացիր:

Հպարտացիր, որովհետեւ, կը շինուի արդիական եւ բոլոր յարմարութիւններով օժտուած դպրոց մը:

Մենք վստահ ենք, որ այս անգամ եւս հայ ժողովուրդը գիտակցօրէն ու հեռատեսութեամբ պիտի ուզէ իր գոյութեան հիմերը ապառաժի վրայ հաստատել, որպէսզի այս համայնակուլ ափերուն վրայ փչող սաստիկ հողմերը որեւէ ձեւով չազդեն, չապականեն ու չաղճատեն մեր հայկական նկարագիրն ու դիմագիծը:

Տո՛ւր, հայ ժողովուրդ, տո՛ւր անսակարկ սրտիդ ամենամօտ հաստատութեան՝ հայ դպրոցին, որպէսզի անապատի աւազներուն մէջ տարտղնուած հայ նահատակներու ոսկորները մխիթարուին եւ յումպէտս չփոշիանան:

Սիրելի՛ հայրենակից,

«Հերթը մի պահ քոնն է հիմա»...

Հայ Կեդրոնի «ԼՐԱՏՈՒ»

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐՈՒ ԱՒԱՆԴԸ

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոս Խորեն Մուրադեզեան 1937ին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոս Գարեգին Յովսէփեանց 1946ին, իրենց Սրբատառ Կոնդակներով, Հոկտեմբեր ամիսը յայտարարեցին «Հայ Մշակոյթի Պանծացման» ամիս:

Եկեղեցին արդէն շատոնց սուրբերու կարգին դասած էր ոչ միայն նահատակներու, հաւատքի համար արիւն թափածներու, այլեւ՝ Մշակոյթի եւ Լուսաւորութեան գործի մեծ վաստակաւորներուն՝ Ս. Սահակին եւ Ս. Մեսրոպին՝ իրենց «թարգմանիչ» աշակերտներով. ապա՝ Նարեկացին եւ Շնորհալին, ինչպէս եւ աւելի ուշ ժամանակներուն՝ Յովհան Որոտնեցին եւ Գրիգոր Տաթեւացին, որոնք ախոյեանները հանդիսացան Հայաստանեայց Եկեղեցւոյ մեծութեան եւ անկախութեան պահպանման, դառնալով պաշտելի անձնաւորութիւններ հայ հաւատացեալներու համար:

Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ Ս. Սահակ-Մեսրոպ՝ շատ բան փոխուեցաւ հայոց քաղաքական կեանքին մէջ: Տրդատներու, Արշակներու եւ Պապերու ժամանակները անցած էին: Հայաստանի եւ հայութեան պահպանութեան ու պաշտպանութեան համար նոր տեսակէտ մը, նոր ոյժ մը պէտք էր: Հայոց թագաւորական գահին վրայ բազմած էր շատ խելացի, հայրենասէր Արշակունի մը՝ հիանալի Վռամշապուհը, որ շանթարգելի պէս պահ մը հեռացուց Հայաստանի պարսիկ եւ հռոմէական հորիզոններէն երկու ընդդիմամարտ քաղաքական հոսանքներուն բախումը: Հայաստանի նորակազմ Քրիստոնէական Եկեղեցւոյ գլուխը կը գտնուէր Մեծն Սահակ՝ Լուսաւորչի տոհմէն՝ Մեծն Ներսէսի որդին: Սահակի աջ բազուկն էր Մեսրոպ Մաշտոց, որ քաղաքական զինւորութեանէ անցած էր Աւետարանի զինուորութեան:

Երկուքն ալ պատրաստուած անձեր՝ գիտութեամբ, փորձառութեամբ եւ աւետարանական կեանքի հասկացողութեամբ: Սահակ-Մեսրոպ-Վռամշապուհ՝ որոշեցին Հայաստանը պահել ինքնուրոյն, նոյնիսկ իր ներքին ուժերով: Եւ այս նպատակով ձեռնարկեցին Լուսաւորչի հաստատած եւ Մեծն Ներսէսի կազմակերպած լուսաւորութեան գործին, Աւետարանին դասերը հայացնելու եւ ազգայնացնելու:

Հոս չեմ ուզեր անդրադառնալ Մեսրոպի ճամբորդութիւններուն՝ դէպի Ամիգ (Տիգրանակերտ), Եդեսիա եւ Սամոսատ քաղաքները իր խումբ մը աշակերտներով, հայ գրերու գիւտին համար: Այս մասին երկար գրած է Կորիւն իր «Վարք Մաշտոցի» գրքին մէջ:

Վերջապէս, կ'աւելցնէ Կորիւն, Մեսրոպի մեծ ջանքը պասկուեցաւ յաջողութեամբ: Ան հնարած էր հայկական նշանագրերը. «Հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին»:

Այս մասին շատ գեղեցիկ արտայայտուած է հայ մեծ գրագէտ եւ քաղաքական գործիչ Աւետիս Ահարոնեան. -

«Հայ աշխարհի Գիրը մի չքնադ երազ չէ՞ միթէ, որ Տարօնի Հացեկաց գիւղի վիթխարի հայր՝ Մեսրոպ Մաշտոց յղացում է որպէս միակ փրկութիւն,

երբ տեսնում է իր ցեղի գոյութիւնը՝ որպէս նաև փոթորիկի ժամին՝ կորըստեան ենթակայ: Ո՛չ, մտացածին ու սին առասպել չէ պատմագրի աւանդը, թէ Մեսրոպ «կէս-քուն, կէս-արթուն, որպէս երազի մէջ տեսաւ լուսեղէն թաթը, որ գրում էր Հայկական Այբ-Բենը»: Հայկական Ոսկեդարի մեծ վարպետը բարբառի լուսեղէն ձեւերը իրապէս մի չքնաղ երազով հիւսեց»:

Իսկ Արշակ Զօպանեան, բանաստեղծ մտաւորական եւ հեղինակ, կը գրէ.-

«Թարգմանչաց Տօնը, տօնը՝ մեր ազգային մշակոյթին իր որոշ, ինքնաշարժ ձեւին մէջ վճռապէս հաստատող երկու հսկաներուն, եւ անոնց գործը դարերու ընթացքին ընդլայնող ու ծաղկեցնող հայ վարպետ մտաւորականներուն, մեծագոյն տօնն է մեր ազգին, աւելի մեծ քան նոյնիսկ Վարդանանց Տօնը, վասնզի Վարդան, գաղափարի հերոսը, Հայ Քրիստոնէութեան անձնագոհ ախոյեանը չէր կրնար գոյութիւն ունենալ, եթէ իրմէ առաջ Մեսրոպ եւ Սահակ մեր ազգային մշակոյթը կազմաւորած ու ամուր հիմերու վրայ գետեղած, ատով իսկ գիտակից ու ինքնուրոյն «Հայ Ազգ» մը դարբնած, ցեղին դըրոշմը կրող քրիստոնէական եկեղեցի մը ձեւակերպած, ցեղին հոգին ու հանձարն արտայայտող լեզուն ու գրականութիւնը իրենց հրաշալի ճիգով ու իրենց մեծատաղանդ աշակերտներուն հօր աշխատութիւններով հոյակապ գեղեցկութեան մը հասցուցած չըլլային»:

Հայոց գրերու գիւտը տեղի կ'ունենայ 403-405 թուականներուն: Երբ մայրաքաղաք Վաղարշապատի մէջ կը լսուի Մեսրոպի վերադարձի մասին, Վռամշապուհ թագաւորը, Սահակ Կաթողիկոսը եւ նախարարներ ու բազմահար ժողովուրդը քաղաքէն դուրս գալով կը դիմաւորեն գայն՝ Ռահ գետի ափին եւ ցնծութեան երգերով ետ քաղաք դառնալով՝ օրեր շարունակ կ'անցընեն տօնական ուրախութեամբ:

Այդ՝ ազգային տօն էր:

Այնուհետեւ, մեծ թափով կը սկսի թարգմանական աշխատանքը՝ Մեսրոպի, Սահակի եւ իրենց աշակերտներուն կողմէ:

Հայերէն առաջին թարգմանութիւնը կ'ըլլայ սողոմոնի առակներէն. -

«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Ապա՝ բնականաբար Աւետարանի թարգմանութիւնը, որ հայերէնի մէջ միայն կը կոչուի Աստուածաշունչ, եւ ապագային կը յայտարարուի թագուհի թարգմանութեանց:

Ուսման եւ կրթութեան կեդրոնը կը դառնայ բնականաբար Վաղարշապատ մայրաքաղաքը: Բազմաթիւ աշակերտներ կը հաւաքուին հոն: անոնց կը սորվեցնեն ու կը կրթեն եւ ուսուցիչներ կը պատրաստեն, եւ խումբ-խումբ կ'ուղարկեն Հայաստանի զանազան կողմերը՝ հայերէն գիր ու դպրութիւն սորվեցնելու: Այդ խումբերէն մէկուն մէջ եղած է նաեւ Ս. Մեսրոպի կենսագիր Կորիւնը:

Ասոնցմէ գատ, Մաշտոցն ու Սահակը, Վաղարշապատի մէջ կը սորվեցնեն արքունիքի մարդոց եւ ազնուականներուն: Ուրիշներու կարգին՝ Սահակը աւելի կարեւորութեամբ կ'ուսուցանէ Մամիկոնեան տոհմի անդամներուն, որոնցմէ էր Վարդան, նոյնինքն Սահակի թոռը, ապագայ հերոսը Վարդանանց պատերազմին:

Իսկ Մաշտոց, բազմաթիւ օգնականներու հետ կը շրջի Հայաստանի գաւազան շրջանները, մանաւանդ հեթանոսական շրջանները: Նախ կ'անցնի Գողթըն, ապա՝ Սիւնիք: Ամէն տեղ որ կ'երթայ՝ կը սորվեցնէ հայերէն դպրութիւն եւ ապա իր աշակերտներէն մէկը վերակացու կը թողու՝ գործը շարունակելու համար:

Արեւմտեան Հայաստանի (Պարսկական) ուսուցման գործը գլուխ հանելէ ետք, Մաշտոց կ'անցնի Արեւմտեան Հայաստան (Յունական): Բայց դպրոց բանալու գործը մեծ դժուարութիւններու կը բախի: Արեւելեան Հայաստանի մէջ կար Հայոց Թագաւորը, որ ամէն կերպ կ'օգնէր այդ ազգային գործին. իսկ Արեւմտեան Հայաստանի յոյն կառավարիչը չի թոյլատրեր յունարէն լեզուի փոխարէն հայերէն սորվեցնելը:

Մաշտոց ստիպուած կ'ըլլայ իր հետ տարած աշակերտները ձգել Մելիտինէ քաղաքին մէջ եւ սակաւաթիւ աշակերտներով կը մեկնի Կոստանդնուպոլիս՝ այդ գործը յարգարելու համար: Հոն ալ գինք կ'ընդունին պատուով: Մաշտոց կը համոզէ Թէոդորոս Բ. Կայսրը, որմէ հրաման կը ստանայ հայերէն սորվեցնելու:

Դպրոցական գործը Արեւմտեան Հայաստանի մէջ եւս յաջողութեամբ կազմակերպելէ ետք, Մաշտոց իր աշակերտներէն երկուքը վերակացու կը թողու հոն եւ բազմաթիւ աշակերտներով կը վերադառնայ Վաղարշապատ եւ կը ներկայանայ Կաթողիկոսին ու Վռամշապուհի որդի Արտաշէս Թագաւորին եւ ամբողջ բանակին:

Ապա կ'անցնի Աղուանից երկիրը, ստեղծելով անոնց ալ այբուբենը, յետոյ՝ Վրաստան:

Այսպէս, Հայաստանի, Վրաստանի եւ Աղուանիքի բոլոր կողմերը շրջելով, Մաշտոց իր ամբողջ կեանքի ընթացքին 45 տարի շարունակ աշխատեցաւ՝ մտաւորական եւ հոգեկան լուսաւորութեան համար:

Մաշտոցի հետ կ'աշխատէր Սահակ Կաթողիկոս:

Երկուքն ալ կը հասնիր խոր ծերութեան: Սահակ կը վախճանի Բագրեւանդ գաւառի Բլրոցաց գիւղին մէջ՝ 439 թուականի Նաւասարդ ամսի 30ին (Սեպտ. 7) եւ մեծ հանդիսութեամբ կը տարուի եւ կը թաղուի Տարօնի Աշտիշատ գիւղը: Մինչեւ վերջերս դեռ կար իր գերեզմանը:

Իսկ Մաշտոց կը վախճանի 440 թուական Մեհեկան ամսի 13ին (Փետր. 17) Վաղարշապատի մէջ, շրջապատուած իր սիրելի աշակերտներով: Անոր մարմինն ալ մեծ հանդէսով եւ ժողովրդային հսկայ բազմութեամբ կը տանին ու կը թաղեն Օշական գիւղը: Անոր գերեզմանը մինչեւ այսօր կը մնայ Օշականի եկեղեցւոյ սեղանի տակի խորանին մէջ եւ դարձած է ժողովուրդի համար սրբատեղի մը: «Թարգմանչաց Գերեզման» անուանով:

Ահա թէ ինչ կը գրէր բանաստեղծ Սողոմոն Տարօնցին՝ այցելելով Մաշտոցի գերեզմանին. -

ՍԱՇՏՈՅԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՍՕՏ

Այստեղ հանճարն է հանգչում, յաւերժական լուրթիւն,
Ընդներմղուած խոր լուրթեան ժամանակի մէջ անժայր,
Սեպտոպ, սրտի հուր կանթեղ, մտքի անդուլ արթնութիւն,
Սեր դպրութեան հօր Յայկ, ժողովուրդիս պէս պայծառ:

Այս պաղ, անդորր մատուցում՝ միայն յաւերժն է արթուն,
Հսկում քեզ, մեծ ընթերցող, հսկայ պապրդ ոսկերառ,
Բայց բարախում ես դու յար ե՛ւ ծերունու հին սրտում,
Եւ մանկան նո՛ր սրտի մէջ - արեւի պէս մշտավառ:

Ահա մի ողջ տքնաջան եւ քաջասիրտ ժողովուրդ,
Որպէս երկինք, տանում է քո արեւը դարից-դար,
Քո լոյսի հետ, լոյսի մէջ, մի սերունդից մի սերունդ:

Հանգիստ քեզ, օ՛, Բանի սիրտ, մտքի սէր եւ մխիթար,
Ահաւասիկ քո սրտով ու քո մտքով մշտաբոց՝
Երկրէ երկիր է թելում հանճարեղ խօսքը Հայոց:

*Հայերէն այբուբենի գիւտը, Սուրբ Գրոց հայերէն եւ հայեցի թարգմա-
նութիւնը նոր դարագլուխ մը բացաւ Հայաստանի պատմութեան մէջ, որ ծա-
նօթ է Ոսկեդար անունով:*

*Սահակ-Մեսրոպ թարգմանիչ կոչուած են՝ իբրեւ հիմնադիրներ եւ պե-
տեր Ոսկեդարեան դպրոցին, որ իր երեւելի թարգմանիչ-մատենագիրներով
Հայաստանի գրական լուսաւորութեան գործը գլուխ հանեցին:*

*Հայ տառերու գիւտին համար առաջին առաքեալը եղաւ Մեսրոպ Մաշ-
տոց վարդապետ, որ աշխատանքի լծուեցաւ Սահակ-Պարթեւ Հայրապետին
հետ: Այս երկու կրօնականներուն ամէն տեսակ աջակցութիւն ընծայեց Հայոց
Թագաւոր Վռամշապուհ:*

*Մեսրոպ Մաշտոց.- Մեսրոպ ծնած է Տարօնի Հացեկաց գիւղը: Հայրը
եղած է կէս ազնուական մը: Շատ ուշիմ էր եւ փոքր տարիքէն իսկ ծանօթ հել-
լէներէնի: Ստացած է գինուորական կրթութիւն եւ ատոր համար ալ մեծ դիր-
քերու կրցած է հասնիլ. եղած է մինչեւ իսկ թագաւորական գիււանին քարտու-
ղարը:*

*Ս. Մեսրոպ իր ճշմարիտ կեանքը սկսաւ երբ լքելով աշխարհական
կեանքը դարձաւ ճգնաւոր: Այնուհետեւ մէկ մտածում ունէր. «Հայ ազգին տալ
հարազատ այբուբենը»:*

Շատ չանցած վարդապետ դարձաւ եւ լծուեցաւ Հայ գրերու գիւտին:

*Սահակ Պարթեւ Հայրապետ.- Արշակունեաց թագաւորութեան տկար
օրերուն աննման Կաթողիկոսն էր Ս. Սահակ Պարթեւ, արժանաւոր որդին Մե-
ծըն Ներսէս Հայրապետին: Ս. Սահակ երկար տարիներ մնացած էր յոյներու
երկիրը եւ մայրենի լեզուին նման սորված էր յունարէնը ու մեծցած էր կրօ-
նական շունչով: Հայաստան վերադարձին՝ մեծ հանդիսութեամբ Կաթողիկոս
օծուեցաւ: Պարսիկ կառավարութեան հետ շատ մեծ դժուարութեանց բախե-
ցաւ, մանաւանդ երբ Վռամշապուհէն ետք երկու տկար թագաւորներ ունե-
ցանք. երրորդին՝ Արտաշէսի գահակալութեան օրով նախարարները երբ բողո-
քեցին եւ ուզեցին զայն վար առնել, Ս. Սահակ միայն մէկ պատասխան տուաւ
այդ բողոքին. «Ես իմ հիւանդ ոչխարս չեմ փոխեր ուրիշի առողջ գազանին
հետ»:*

*Ս. Սահակ հայրապետի, Վռամշապուհ թագաւորի եւ Ս. Մեսրոպի գոր-
ծակցութեան շնորհիւ իրականացաւ Հայ գրերու գիւտը:*

ՎՌԱՄՇԱՅԱԿՈՒՏ.- Հայոց պատմութենէն գիտենք, թէ ինչ սարսափելի օրեր անցուցին հայերը Մանուէլ Մամիկոնեանի մահէն ետք: ՎՌԱՄՇԱՅԱԿՈՒՏ թագաւոր շատ իմաստուն էր եւ հայրենասէր: Քաղաքականութենէ աւելը կը զբաղէր մշակոյթով, եւ շնորհիւ մշակոյթի հանդէպ իր մեծ գուրգուրանքին՝ ունեցանք մեր Այբուբենը: Ան էր որ սկիզբի օրերէն ըմբռնեց հայերէն այբուբենի անհրաժեշտութիւնը եւ Ս. Սահակի թելադրանքներուն ընթացք տալով ոչ մէկ գոհողութենէ վախցաւ՝ գործի յաջողութեան համար:

Գրերու գիւտին իր բերած մեծ աջակցութեան համար, Արշակունեաց թագաւորութեան մէջ մեծ դէմքերու շարքին կը դասենք նաեւ ՎՌԱՄՇԱՅԱԿՈՒՏ Արքան:

Թարգմանիչները.- Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Աստուածաշունչի թարգմանութեան հսկայ այդ աշխատանքը առանձնաբար չէին կրնար առաջ տանիլ, ուստի իրենց շուրջ հաւաքեցին կարող աշակերտներ եւ ստեղծեցին մտաւորականներու փաղանգ մը: Թարգմանութեան նաեւ բազմաթիւ գործեր, մանաւանդ Ոսկեղարու ոսկեղնիկ լեզուով, եւ անոնք այսօր մաս կը կազմեն մեր մատենագրական հարստութեան:

Թարգմանական աշխատանքին հետ նաեւ պատմական եւ գրական մեծ աշխատանք մը տարուեցաւ: Գրուեցան մեծ գործեր: Ստորեւ ցանկը գրական մշակներուն.-

Եզնիկ Կողբացի եղած է հայ առաջին գրագէտը: Ան գրած է իմաստասիրական մեծ գործ մը՝ չորս մասերէ բաղկացած: Այդ գիրքը կը կոչուի «Եղծ Աղանդոց»:

Կորիւն գրած է Մեսրոպ Մաշտոցի կեանքը «Վարք Մաշտոցի»: Ան եղած է Մեսրոպի աշակերտն ու աշխատակիցը: Շնորհիւ Կորիւնի այդ գրքին, մենք ծանօթացանք Գրերու Գիւտի պատմութեան եւ այդ շրջանի կեանքին:

Ագաթանգեղոս, իր «Հայոց Պատմութեան» մէջ, մեզի տուած է Հայոց քրիստոնէութեան դարձը: Անկէ է որ մենք կը տեղեկանանք Ս. Գրիգոր Լուսաւորիչը եւ Ս. Տրդատ Թագաւորի կեանքին: Այս գործը շատ մը օտար լեզուներու թարգմանուած է:

Փաւստոս Բիւզանդի գործը մեզի մանրամասն կը ներկայացնէ Ե. դարու հայ ազգին ծառայող բոլոր մեծ դէմքերը, ինչպէս նաեւ քաղաքական եւ ընկերային բոլոր իրադարձութիւնները:

Ղազար Փարպեցի պատմութիւնը կը կոչուի «Հայոց Պատմութիւն եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան»: Այս գիրքը կը պատմէ 384-485 թուականը երկարող դէպքերու մասին, կը խօսի Արշակունեաց թագաւորութեան մասին, կը գովաբանէ մանաւանդ Մամիկոնեան տոհմը: Հոն մենք կը գտնենք Վարդանանց հերոսամարտի պատմական ճշգրիտ նկարագրութիւնը:

Մովսէս Խորենացի գրած է ամբողջ մեր պատմութիւնը Զրհեղեղէն մինչեւ իր օրերը, ասոր համար ալ գինք սովորաբար կը կոչենք Պատմահայր:

Եղիշէ ամէնափայլուն պատմագիրը եղած է մեր ամբողջ գրականութեան մէջ: Անոր գործը, որ կը կոչուի «Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին», բանաստեղծական շունչով գրուած դիւցազնավէպ մըն է: Այնքան գեղեցիկ կերպով կը ներկայացնէ Վարդանանց պատերազմը:

Անոնք, թարգմանիչ վարդապետները, խորապէս ըմբռնեցին աւետա-
րանական սա պատգամը.- «Եթէ ցորենի հատիկը հողին տակ չմեռնի, արդիւնք
չի կրնար տալ: Իսկ եթէ մեռնի, բազմապատիկ արդիւնք պիտի տայ»: Այս յա-
ւիտենական ճշմարտութեան համոզումով է որ թարգմանիչ-վարդապետները
եւ յաջորդող դարերու մատենագիրներ՝ Նարեկացի, Մխիթար Գոչ, Ներսէս
Շնորհալի, Գրիգոր Մագիստրոս, Խաչատուր Տարօնցի, Դաւիթ Անյաղթ, Եզնիկ
Կողբացի, Ստեփանոս Ասողիկ, Մամբրէ Վերածնող, Նաղաշ Յովնաթան, Նահա-
պետ Քուչակ, Սայաթ Նովա, Խաչատուր Աբովեան, Բաֆֆի, Դանիէլ Վարու-
ժան, Չարենց, Սեւակ, Շիրազ, Պարոյր Սեւակ, Թէքէեան եւ ուրիշներ, յաճախ
աշխարհաքանդ արշաւանքներէ խուճապահար, «մութ անձաներու խորը պըլ-
պըլացող կանթեղներու լոյսին տակ», խստամբեր կենցաղով, աչքի լոյս սպա-
ռելով, անձնուիրաբար դարբնեցին ու կերտեցին հայ մատենագրութիւնը:

«Ուրք գերկնաւոր մեծութիւն փառաց՝ խաւար կոչեցին» (մեծութիւնն
երկրաւոր փառքին՝ խաւար կոչեցին), թարգմանչաց նուիրուած շարականի
հեղինակէն յափշտակուած այս մէկ տողը արժանաւորապէս կը ցոլացնէ անոնց
մաքուր նկարագիրը եւ գործունէութեան ուղղութիւնը: Այսինքն՝ մոռնալ
«ես»ը, սեփական ստացուածքը, աշխարհի անցողական վայելքները եւ բովան-
դակ նուիրումով գործել այլոց մտքի լուսաւորութեան եւ բարիքին համար:
Թարգմանիչ վարդապետներու մարդասիրական եւ ազգասիրական այս առա-
քինութիւնը, որ առաքինութեանց մեծագոյնն է, անոնց յիշատակի տօնա-
խըմբման եւ հոկտեմբերեան այս օրերուն, պէտք է դառնայ նաեւ առաքինու-
թիւնը այն ամէն մէկ հայուն, որ ինքզինք կը զգայ արժանաւոր յաջորդը եւ
ժառանգորդը թարգմանիչներուն ու անոնց աւանդ թողած անգին ու սուրբ
ժառանգին: Սա կը նշանակէ թէ նման զգացում ունեցող իւրաքանչիւր հայ
անհատ, պարտականութիւն ունի կատարելիք իր ցեղակիցներուն հանդէպ, ու
այդ պարտականութիւնը՝ բարոյական, ֆիզիքական եւ նիւթական կարողու-
թեան իր ամբողջական նուիրումով գործադրելու պատասխանատուութիւնը:

Թարգմանչաց, Վարդանանք, Ապրիլ 24 թէ Մայիս 28, բոլոր այս տօնե-
րը, որոնք մեր պատմութիւնը կերտած են, ո՛չ մէկ արժէք պիտի ունենան, եթէ
չծառայեն իրենց նպատակին: Բաւական չէ տարին անգամ մը, եւ օր մը միայն
տրամադրելով վճարել մեզմէ պահանջուած տուրքը:

Ամէն սերունդ իր պարտաւորութիւնները ունի լրացնելիք եւ ստիպ-
ւած է բան մը աւելցնել հինին վրայ:

Աչք մը նետեցէք չորս դին ու եթէ կրնաք՝ գտէք մեր բաժինը ընդհա-
նուրին մէջ: Չենք խօսիր ձգտումնաւոր եւ պարտադրուած գրականութեան եւ
մշակոյթի մասին:

Բայց Միլուքը իր գոյութեան շէնքը անսասան պահելու համար, պէտք
ունի թարգմանիչներու առաքելութիւնը շարունակողներու: Ապա թէ ոչ, ի՞նչ
արժէք կը ներկայացնէ հիներու գովքը հիւսելը:

Խրախուսիչ երեւոյթ է տեսնել այսօր Հիւսիսային Ամերիկայի եւ Գա-
նատայի մէջ բացուած եւ բացուող հայ դպրոցները, որոնց հիմնադիրները
թարգմանչաց Ոգիով եւ առաքինութիւններով տոգորուած՝ Հայերու գոյու-
թեան պատերազմ կը մղեն զօրաւոր եւ հաւասար ուժերու դէմ:

Պէտք է գիտակից ամէն հայ թեւ եւ թիկունք կանգնի Հայ ազգի գոյա-

տեւման եւ մշակոյթի պահպանման ու զարգացման համար նետուած քայլերուն:

Ազգի մը մեծութիւնը իր ունեցած երկրին տարածութեամբ եւ բնակչութեան քանակով չի չափուիր:

Պատմութենէն գիտենք, որ մեզի ժամանակակից բազմաթիւ ազգեր՝ Բիւզանդացիներ, Հռոմէացիներ, Աղուաններ, Ասորիներ, Սելճուզներ, Մեմլուքներ եւ այլն, անհետացած են պատմութեան թատերաբեմէն, հակառակ իրենց ունեցած հողային ընդարձակութեան եւ բնակչութեան ու հզօր բնականներուն:


Անոնք պարտուեցան եւ մոռցուեցան՝ որովհետեւ չունէին մշակոյթ, չունէին գիր-գրականութիւն եւ արուեստներ:

Մենք տոկացինք՝ շնորհիւ թարգմանիչներու կատարած անձնուէր գործունէութեան, հակառակ մեր երկրի դիրքին բերումով, այլազան ուժերու յարձակումներուն եւ աւերումներուն ենթարկուած ըլլալով:

Տոկացինք եւ պիտի տոկանք՝ քանի ունինք նոր թարգմանիչներ, քանի ունինք գիտակից մայրեր, որոնք Մեծ Եղեռնի տարագրութեան ընթացքին՝ մահուան սպառնալիքին տակ ամէն վայրկեան, տաք աւազներու վրայ իրենց որդիներուն եւ թոռներուն սորվեցուցին Մեսրոպեան աստուածատուր մեր նշանագրերը:

Կը տոկանք, մինչեւ որ օր մը իրականանայ Ազատ, Միացեալ եւ Անկախ Հայաստանի իտէալը, այն ատեն Հայկական պետութեան վերապահելով նոր թարգմանիչներ ըլլալու հանգամանքը:

«ՅԱՅՐԵՆԻՔ» Օրաթերթ
13 Յոկտեմբեր 1984



Զախէն աջ՝ գրագետներ Յակոբ Կարապետեան, Վահէ Օշական, Գրիգոր Յոթոյեան, Մինաս Թէօլէօեան

«ՄԻՐՏՍ ՅԱՒՈՒՄ Է. ԻՆՉՈՒՒՄ»

1985ին սկսած Կորպորացիոն վերակառուցման, ժողովրդավարութեան եւ հրապարակայնութեան ալիքը Երեւան հասաւ, Խորհրդային Հայաստանի Համայնավար Կուսակցութեան առաջին քարտուղար Կարէն Դեմիրճեանի անկումէն եւ յատկապէս Փետրուարին սկսած Արցախեան շարժումին ստեղծած հայրենաբորբ ու յուզախուով միջնորդաշէն ետք:

Ստալինեան եւ Պրեժնեկեան սարսափի օրերը անցած համարելով, հայ մտաւորականութիւնը՝ օրինակուելով ռուս մտաւորականութեան ունեցած խիզախ ելոյթներէն՝ քաջութիւն զգաց եօթանասուն եւ աւելի տարիներէ ի վեր բանտարկուած իր զգացումները արտայայտելու հրապարակաւ եւ մամուլով:

Հետեւելով խորհրդահայ մամուլին, կը կարդանք բազմաթիւ յօդուածներ, որոնք նոր լոյս կը սփռեն հայրենի մեր ժողովուրդին ապրած դժնդակ եւ անմարդկային սարսափներու մասին, յատկապէս ճիւղա Ստալինի եւ Բերիայի միահեծան տիրապետութեան ներքեւ եւ Պրեժնեկեան լծացման տարիներուն:

Խոր եւ տխուր ցաւեր, մարդկային արժանապատուութիւնը տժգունող արատներ, պետական եւ ազգային գոյութեան սպառնացող արարքներ, աքսոր, սպանութիւն, ողբերգութիւն, եւայլն, որոնց մասին դաշնակցական մամուլը յիսուն տարիէ ի վեր անհաշիւ մելան սպառած է, տեղեկացնելով եւ լուսաբանելով «Արեւ Ստալին»ի շնորհած բարիքները Խորհրդային Միութեան ժողովուրդներուն եւ մասնաւորաբար հայ ժողովուրդին:

Հիմա որ կեղծ հայրերը չուած են այս աշխարհէն, իրենց ետին ձգելով եղեռնագործի անուն եւ յիշատակ, Խորհրդային Միութեան ժողովուրդները՝ ընդհանրապէս եւ հայ ժողովուրդը՝ մասնաւորապէս սկսած են շնչել համեմատաբար մաքուր օդ եւ քաջութիւն զգալով ժայթքելու տարիներէ ի վեր կուտակուած ազգային գիտակցութեան հրաբորբոք լաւան՝ թուելով եւ մատնանըչելով կենցաղային եւ ազգային թերութիւններն ու ցաւերը:

Հայրենի աչքառու գրեթէ բոլոր մտաւորականները, քաղաքական, պետական եւ գիտական գործիչները բուռն յօդուածներով հրապարակ իջած են, խարազանելով ախտավարակ երեւոյթներ, անտեսումներ եւ օրինազանցումներ, պահանջելով մանաւանդ հայ ազգային արժանապատուութեան վերահաստատումը՝ հանրային եւ մշակութային մարզերէն ներս՝ սրբագրելով անցեալի սխալները:

Հայաստանի գիտութիւններու Ակադեմիայի Նախագահ Վիքթոր Համբարձումեանէն սկսեալ, մինչեւ Հայաստանի Համայնավար Կուսակցութեան առաջին քարտուղար Սուրէն Յարութիւնեան, Գրողներու Միութեան Վարչութեան Նախագահ Հրաչեայ Յովհաննէսեան, Մշակութային Հիմնարկի (Փոնտ) Նախագահ գրագէտ Վարդգէս Պետրոսեան, բժիշկ-լրագրող Զօրի Բալայեան, գրագէտներ Սերօ Խանզատեան, Հրանդ Մատթեոսեան, Ռաֆայէլ Ղազանճեան, Կարէն Սիմոնեան, դերասան Սօս Սարգիսեան, բանաստեղծներ Վահագն Դաւիթեան, Սիրվա Կապուտիկեան, Ռազմիկ Դաւոյեան, Սասուն Գրիգորեան, եւայլն, եւայլն, խորհրդահայ մամուլին մէջ յօթուածներ կը ստորագրեն թը-

ւելով եւ պահանջելով անցեալի թերութիւններն ու գայթակղութիւնները սրբագրել՝ արդարութեան, իրաւունքի, ճշմարտութեան եւ ազգային արժէքներու եւ պատմութեան վերագնահատման լոյսին տակ:

Արտերկրի հայ մամուլը, անհուն գոհունակութեամբ կը հետեւի եւ լայն տեղ կու տայ ազգային վերածնունդ բուրոյ այդ յօդուածներուն, Սփիւռքի հայրենակարօտ հայ գաղութները տեղեակ պահելով հայրենի մտաւորականութեան սրտակեղէք եւ անկապտելի ցասումներուն:

Ահա այդպիսի յօդուած մը ստորագրած է հայրենի շնորհալի բանաստեղծ Սասուն Գրիգորեան, «Սովետական Հայաստան» օրաթերթի (Օրգան Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագոյն Սովետի եւ Մինիստրընքերի Խորհրդի), Ուրբաթ, 4 Նոյեմբեր 1988ի թիւին մէջ՝ «Խորհրդ Հ.Կ.Կենտկոմի Սեպտեմբերեան Պլենումից Յետոյ» եւ «Սիրտս Յաւում է. Ինչո՞ւ» խորագրով:

Անտքի եւ Մարաթուկի բարձունքներէն ժառանգաբար Սասունի օդ ծծած եւ Սասնոյ քաջերուն ոգիով սնած սասունցի հայ բանաստեղծը, իր յօդուածը կը սկսի այսպէս.-

«Վերակառուցման, դեմոկրատիայի եւ հրապարակայնութեան այս օրերին յետադարձ հայեացք գցելով մեր ժողովրդի անցած յեղափոխական, մարտական եւ աշխատանքային ուղուն՝ ակամայից մտաբերում ես ուսմ մեծ ծովակալ Պաւել Նախիմովի խօսքերը.- «Ամէն մէկի կեանքը պատկանում է իր Հայրենիքին: Եւ իրօք, ո՞ւմ է պատկանում Անդրանիկ Զօրավարի եւ Գայի, Գէորգ Չաւուշի եւ Յունան Աւետիսեանի, Արաբոյի եւ Շահան Կարախանեանի կեանքը: Բայց եւ ո՞ւր է «իբրեւ արծիւ լեռ ու ժայռ սաւառնոյ» զօրավարի մասին տպուած երգը: Չորս հայ մարշալներից եւ հարիւր չորս հայորդի հերոսներից այսօր որի՞ մասին գեղարուեստական որեւէ բարձրարժէք ստեղծագործութիւն: Երիտասարդութեան ռազմահայրենասիրական դաստիարակութեանը գաղափարական նոր լիցք հաղորդելու համար արդեօք ժամանակը չէ՞ տէր կանգնիլ (ոչ թէ պետականացնել) սասունցի երախտապարտ ժողովուրդի մաթեմատիկոս որդու (այժմ հանգուցեալ) Գէորգ Մելքոնեանի խնայողութեամբ եւ ջանքերով Աշնակում կառուցուած իր հօրեղբօր՝ Գէորգ Չաւուշի յուշակոթող տանը, այն դարձնելով հայ ազգային ազատագրական պայքարի պատմութեան պետական թանգարան: Զէ՞ որ մենք նաեւ դրանից պիտի հայրենասիրութեան գործնական դասեր առնենք: Ե՞րբ պէտք է Երեւանում իր դռները բացի Անդրանիկ Զօրավարի անունը կրող Մետրոպոլիտէնի կայարանը, նրա անունով ե՞րբ պիտի կոչենք դպրոց եւ փողոց: Մենք ե՞րբ պիտի Պերլաչէզում թաղուած մեր Զօրապետի աճիւնը տեղափոխենք հայոց նորօրեայ քաղաքամայր եւ նրա յուշարձան-մոնումենտին ծաղկեպսակներ դնենք:

«Կը նշո՞ւի արդեօք նրա ծննդեան 120ամեակը՝ 1990 թուականին: Զէ՞ որ Ուշանում, վերին Սասնաչէնում, Աշնակում, Իրինդում... նախկին զինուորների եւ նրանց յետնորդների սրտերում նա ունի իր յաւերժական ապաստարանը: Զգիտեմ, ինչպէ՞ս պիտի արդարանան մեր կիրնգործիչները, մեր էկրաններին մենք ե՞րբ պիտի տեսնենք Արա Գեղեցիկին եւ վարդան Մամիկոնեանին, Սամոնէլին եւ Գէորգ Մարգաբետունուն, անդրանիկ եւ Սմբատ զօրավարներին... Մեծ Եղեռնի եւ մեծ հայրենականի յաւերժ անմահ մեր հայրուկ

Փիղալիներին: Բաւական չէ՞ հանրապետութեան պետարխիւում ծերանան դէ- սուդէնից հայթայթուած Հայոց Մեծ Եղեռնը վաւերացնող Կինօ եւ լուսանկա- րանային ժապաւէնները: Դրանց ուշահաս էկրան բարձրանալը արդեօք չի՞ նը- պաստում թուրքերի զրպարտչական պարպագանդային, վերջապէս ի՞նչ են մտածում մեր պատմաբաններն ու կինովաւերագրողները: Չէ՞ որ եաթաղա- նից մագապուրծ ազատուած մարդկանց վերջին մոհիկանների ձայնագրումը, տեսագրումն ու ցուցադրումը ամէնագօրեղ վկայ-մեղադրանքն ու փաստա- կան ապացոյցը կը լինեն այն բոլոր վայրագութիւնների, որոնց զոհը դարձաւ շուրջ երկու միլիոն անմեղ հայեր»:

Սասուն Գրիգորեանի զայրոյթը եւ բողոքը տեղին է ու արդար: Այլեւս ժամանակը եկած է կը համարէ հայ ժողովուրդի ազատագրական պայքարի անձնուէր Ֆետայիներուն եւ հերոսներուն պաշտած պատիւ ու յարգանք ար- տայայտելու եւ հայոց լեռներու Արծիւին աճիւնները Հայրենիք փոխադրելու համար, որպէսզի հայ նորահաս սերունդները հաղորդուին անոնց ոգիով եւ հայրենասիրութեամբ:

Այլեւս պէտք է իրականանայ այս բաղձանքը, որ մեր ազգային արժա- նապատուութիւնը վիրաւորած է տասնեակ տարիներէ ի վեր, առանց նկատի առնելու «եղբայր» ազերիներու բողոքները, որոնք տազնապալի այս օրերուն հովին հետ պէտք է անհետանան:

Չօրավար, հայդուկ, Ֆետայի Անդրանիկ ազգային հերոս մըն է, որ իր ամբողջ կեանքը նուիրեց հայ ժողովուրդի ազատագրութեան պայքարին եւ իր անունը բաղէղի պէս փաթթուած է ամէն մէկ հայու սիրտին մէջ:

Հայրենի բանաստեղծ Լուդուիգ Դուրեան վերոյիշեալ ապրումով գը- րած է հետեւեալ ոգեշունչ քերթուածը.-

ԵՒ ԻՆՔԸ ՊԻՏԷ, ՈՐ ՉԻ ՄԱՅԱՆԱՅ

Եւ ահագարհուր մի ձորում Սասնայ,
Որպէս ֆիդայի դեռ ապրում է նա...
Աստուած տալիս է նշխար-մանանայ,
Ու ինքը գիտէ, որ չի մահանայ:

Մինչեւ որ զգայ Անդրանիկը քաջ,
Սպասում դարձած ու դարձած ականջ՝
Որոնում է ծայնն իր գօրավարի
Եւ կանչում.- Ո՛ւր ես Անդրանիկ արի՛...
Դորդում ահեղ.- Ա՛նդ... Ա՛նդ... Անդրանիկ:

Արծագանգ է վրժի ուժով,
Դառնում խել գետի խռովքը խուժող,
Սարսափած այդ բամբ ծայնից մշտաթում
Ձորը չի մտնում ոչ մի ո՛չ մի թուրք:

Իր հարիւր տարին մաշած ֆիդային,
Պահում է ձորում մեծ ոգին հայի...
Աստուած տալիս է նշխար-մանանայ,
Ու ինք գիտէ, որ չի մահանայ,
Մինչեւ որ չգայ Անդրանիկը քաջ:

Այնուհետև բանաստեղծ Սասուն Գրիգորեանի սիրտը կը ցաւի. ինչո՞ւ, որովհետև որպէս Հայաստանի Գրողներու Միութեան Ռազմահայրենասիրական Գրականութեան Յանձնաժողովի Նախագահ, նկատած է որ իսկական հերոսներու մասին շատ քիչ գրուած է: Որովհետև այսօր գոյութիւն չունի ռազմահայրենասիրական որեւէ ուսումնարան: «Երեւանում գործում էր Ալ Միասնիկեան անուան ռազմահրաձգային ուսումնարանը: Քանի՛-քանի՛ անուանի զօրահրամանատարներ տուեց նա պատերազմի տարիներին: Ալ չեմ խօսում այն մասին, որ խիստ ցածր է ռազմական գործի ուսուցման դրուածքը մեզ մօտ թէ՛ բուհերում եւ թէ՛ դպրոցներում: Մայրենի լեզուով ռազմագիտութեան ձեռնարկ անգամ չունենք: Եւ քանի որ խօսք բացուեց ձեռնարկներ, դասագրքերի մասին, չեմ կարող չասել, որ հայկական դպրոցների բարձր դասարանցիների համար հրամցող հայ գրականութեան ձեռնարկները շատ խղճուկ են: Ինչպէ՞ս կարելի է հայ երեխային հայրենասիրութիւն ներարկել, երբ 8-10րդ դասարանների ծրագրերից վտարուել են հայ ազգային ազատագրական պայքարի այնպիսի շեփորահարներ, ինչպիսիք են Ռ. Պատկանեանն ու Մ. Պէշիկթաշլեանը»:

Իրապէս ցաւալի է լսել, որ մեր պաշտելի Հայրենիքին մէջ, Պատմական Հայաստանէն ազատագրուած 30,000 քռ. քմ. տարածութիւն ունեցող Խորհրդային Հայաստանին մէջ, դպրոցական ծրագրերէն դուրս կը դրուին Քամար Քաթիպայի եւ Պէշիկթաշլեանի նման ազգայնաշունչ բանաստեղծներու անունները՝ «ժողովուրդներու իմաստուն առաջնորդ»ին մանկաւարդներու կողմէ, որպէսզի հայը յաւիտենապէս ստրուկ ապրի:

Սասուն Գրիգորեան կը յայտնէ թէ Ստալինի 1937 թ. Սեպտեմբերի 8ի գաղտնի ցուցում նամակը ուղղուած Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Բիւրոյին, որ Հայաստան բերեն Գ. Մ. Մալենկովն ու Ա. Թ. Միկոյեանը, պատճառ դարձաւ որ ժողովուրդի թշնամի պիտակ ստանան «Վիչերնի Իզվեստիա»ի, «Պրավդա»ի եւ «Իզվեստիա»ի անբասիր աշխատակից Ռուբէն Քոթանեանը, պատմաբան, գրականագէտ, հրապարակախօս Աշոտ Յովհաննիսեանը, լրագրող Արօ Աղոյեանը, Թիֆլիսի «Պրոլետար» (այժմ Սովետական Վրաստան) հայկական թերթի խմբագիր Ա. Մարգարեանը, Հայաստանի Նկարիչներու Միութեան քարտուղար Աշոտ Հախումեանը, Հայկական Խորհրդային Հանրապետութեան Ժողկոմխորհին առընթեր արուեստի գործերի վարչութեան պետ Արտօ Եղիազարեանը եւ շատ ուրիշներ: Թրոցքիստներ, արտասահմանեան լրտեսներ, յեղափոխութեան եւ ժողովուրդի թշնամիներ յորջորջուեցին Եղիշէ Չարենցը, Ակսել Բակունցը, Վահան Թոթովենցը, Զապէլ Եսայեանը, Դրաստամարտ Տէր Սիմոնեանը, Եղիա Չուբարը, Պողոս Մակինցեանը եւ ուրիշներ, որոնց արիւնը հեղուեց չեկայի տարբեր բանտախուցերուն մէջ, իսկ դիակները յայտնի չէ, հողին բաժին դարձա՞ն, թէ՛ ոչ: Հապա գիշերային դաժան ծեծն ու ջարդը, ստորնացումն ու վիրաւորանքը, Սիպիր աքսորուելը: Անոնք ալ բաժին հասան Գուրգէն Մահարիին, Վաղարշակ Չարենցին, Վահրամ Ալազանին, Մկրտիչ Արմէնին եւ ցաւալիօրէն մեր ամէնամեծ լեզուաբան Հրաչեայ Աճառեանին:

Բանաստեղծ Գրիգորեան կ'աւելցնէ.- «Ինչպէ՞ս սիրող չցաւի, երբ Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճիւղի ֆոնդերում

հանդիպես ՀԿԿ Կենտկոմի տրուած հայկական ՍՍՀ ՆԳԺԿի այն զեկուցագրին, ուր ասուած է, որ՝ «1936 թ. բանտարկուած 1138 մարդոց 417ը տրոցկիստ են, 93ը՝ դաշնակ, 14ը՝ մուսավաթիստ, 251ը՝ հակայեղափոխական ագիտադոր, 13ը՝ տեռորիստ, 20ը՝ հակայեղափոխական ապստամբ, 12ը՝ լրտես, 172ը՝ այլ հակա-յեղափոխականներ, 8ը՝ խաբեբայ, 2ը՝ դիվերսանտ, 4ը՝ հայրենիքի դաւաճան»:

Ստալինեան շրջանի սարսափներն ու հալածանքները, սպանութիւններըն ու աքսորը, չկրցան հայ ժողովուրդի ազատատենչ ոգին ստրկացնել եւ ընկճել՝ հայ վատագի դործակալներու եւ ծախուածներու ձեռքով: Անոնք չըկըրցան արմատախիլ ընել Վարդանէն, Վահանէն, Գէորգ Մարզպետունիէն, Քրիստափորէն, Անդրանիկէն, Գէորգ Չաւուշէն, Գալէէն, Մկրտիչ Եօթնեղբայրեանէն, Գարեգին Նժդեհէն, Դրոյէն եւ հազարաւոր անձնագոհ հերոսներէն ժառանգած քաջութիւնն ու ազգասիրութիւնը, որոնք այսօր, Հայաստանի, Արցախի եւ հայահոծ գաղութներու մէջ հասակ նետած հայ երիտասարդներուն հոգիները կը բովաւառեն Սարտարապատի ոգիով:

Հայ մտաւորականութեան եւ գրագէտներուն հանդէպ ցոյց տրուած անտարբերութեան եւ խտրականութեան անդրադառնալով բանաստեղծ Սասուն Գրիգորեան կը գրէ.-

«Սիրտս ցաւում է. ո՞վ եւ ե՞րբ ի մի կը բերի ստալինեան բանտախուցերում, հիթլերեան համակենդրոնացման ճամբաներում եւ այլ զնդաններում ու մարտադաշտերում կեանքից հեռացած հարիւրից աւելի (նրանցից 30ը Ղարաբաղից էին) տաղանդաշատ հայ գրողների բազմաթիւ ձեռագրերը, նամակներն ու յուշերը, որոնց մի մասին այսօր սպառնում է ոչնչացման վտանգը: Մի՞թէ Երեւանում, արուեստի եւ գրականութեան թանգարանում տեղ չկայ թաթուլ Հուրեանի ֆոնդերին: Նրա հարուստ ձեռագրերն ու նամակներն այսօր հանգրուանում են Բաքում՝ զոհուած բանաստեղծի այրու՝ Մանիշակ Խաչատրեանի մօտ: Ինչո՞ւ ենք ուշացնում Սեւաստապոլեան հողում հանգչող անվեհեր լէյտենանտի, երեսնամեայ բանաստեղծի «Ընտիր Երկեր»ի տպագրութիւնը. ո՞վ այն գլուխ բերի եւ ե՞րբ. թէ դրանք էլ թողնենք, որ մի օր արժանանան Միսաք Մանուշեանի արխիւի ճակատագրին՝ «Հայաստան ուղարկելիս ճանապարհին կորել է»: Ժամանակը զոհուածների օգտին չի աշխատում: Նըրանց գրական վաստակը կորստից փրկել է պէտք... կամ ինչպէ՞ս անտարբեր անցնես Սփիւռքահայ տաղանդաւոր արձակագիր, հրապարակախօս, գրականագէտ եւ խմբագիր Սիմոն Սիմոնեանի «Լեռ եւ ձակատագիր» գրքի կողկով: Սասունցի այս հեղինակը մեզ մօտ՝ մայր հայենիքում, արգիլուած է նրա համար, որ Հայաստան այցելելուց յետոյ իր խմբագրած «Սփիւռք» թերթում քննադատական խօսք է առել... Ի. Վ. Ստալինի հասցէին»:

Յօդուածագիր բանաստեղծը կը յիշէ մէկ անուն Սփիւռքահայ գրագէտներէն, որուն գործերը Հայաստանի մէջ չեն հրատարակուած Ստալինը քննադատած ըլլալուն համար, որպէս հայ ժողովուրդին հանդէպ գործադրուած Բ. եւ Գ. Եղեռնի հեղինակ: Իսկ մնացեալ գրողնե՞րը.- Նիկոլ Աղբալեան, Կարօ Սասունի, Յակոբ Օշական, Աւետիս Ահարոնեան, Մուշեղ Իշխան, Համաստեղ, Արամ Հայկազ, Նշան Պէշիկթամլեան, Նիկողոս Սարաֆեան, Զարեհ Որբունի, Շաւարշ Նարդունի, Յակոբ Կարապենց եւ ուրիշներ, որոնք մինչեւ այսօր անծանօթ անուններ են Հայաստանի ժողովուրդին համար:

Բանաստեղծ Գրիգորեան, Ղարաբաղեան պահանջատիրական շարժումին եւ բողոքի ձեւերուն անդրադառնալով կ'աւելցնէ.-

«Յանուն արդարութեան, յանուն ազգային շահի, յանուն լուսաւոր ապագայի մարտնչելը քաջութիւն է, բայց եկէք քաջութիւնը չչփոթենք խղճահարութեան հետ: Ի՞նչ կը լինէր, եթէ 1915 թ. Մեծ Եղեռնի ժամանակ Սասունում, Մուշում, Վանում, Ուրֆայում եւ Արեւմտեան Հայաստանի միւս հատուածներում թշնամու մերկացրած սրի դէմ մարտնչող հայգուկները գուլթադերսէին թուրք ենիչերիներէ: Ուստի հացադուլը եւ այլ կարգի երեւոյթները խորթ են մեր ժողովուրդին: Եւ դրանցից պէտք է հրաժարուել»:

Ըսել ուզելով, որ այս օրերուն կրկին թուրքի եաթաղանը կը բարձրանայ հայութեան գլխուն եւ հացադուլով կարելի չէ պաշտպանուիլ եւ մեր հողերը եւ ժողովուրդը պաշտպանել: Մարտնչիլ պէտք է. ինքնապաշտպանութիւն, որու շնորհիւ փրկուեցան Արեւմտեան Հայաստանի կարգ մը շրջաններու հայութիւնը: Ի՞նչ պիտի ըլլար ճակատագիրը Մուսա Լեւրան ժողովուրդին, եթէ երբեք ինքնապաշտպանութեան չդիմէին եւ ոչխարի հօտերուն նման ենթարկուէին թուրք ճիւղներուն հրամաններուն: Ինքնապաշտպանութիւնը մարդկային արդար իրաւունք մըն է: Նոյնիսկ կենդանիները ունին ինքնապաշտպանութան աստուածատուր կազմուածք, իրենց գոյութիւնը պահելու համար զիրենք փճացնելու եւ ոչնչացնելու ձգտող կենդանիներուն դէմ:

Իսկ մենք մարդ ենք եւ աւելի արդարացի պատճառներ ունինք ինքնապաշտպանութեան դիմելու, քանի մեծ պետութիւնները իրենց շահերը ամէն բանէ վեր կը դասեն եւ «իրաւունքը զօրաւորին է» յաւիտենապէս:

Իր քննադատական յօդուածի վերջաւորութեան, հայրենի տաղանդաւոր բանաստեղծը իր խօսքը կը վերջացնէ յուսալով.-

«Ժողովուրդի աչքը բացուել է, եւ դա մեծ ուրախութիւն է պատճառում մեզ: Դա զօրեղ նախադրեալն է, որ հասարակութեան արատները կը վերանան: Թող որ դժուարութեամբ եւ խոչընդոտների յամառ յաղթահարմամբ»:

Այս է նաեւ ամբողջ հայութեան փափաքը:

1988



Չախէն աջ՝ Գրիգոր Դոթոյեան, Գեներալ Մայրո բանաստեղծ Սամուէլ Սաֆարեան եւ բանաստեղծ, պատմաբան, հրապարակագիր, հրատարակիչ, Միջազգային Ռազմածովագիրներու փոխ նախագահ Սասուն Գրիգորեան

ՄՇԱԿՈՅԹԻ ԸՆԴՈՒՆԱԿ ԱԶԳԵՐ ՉԵՆ ՄԵՌՆԻՐ (ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ)

Մշակույթը ազգապահպանման ու գոյատևման գլխաւոր հիմքն ու խաւրիսխն է, մասնաւորաբար թիւով փոքր ժողովուրդներու, որոնց կարգին մասնաւանդ հայ ժողովուրդին համար, որուն թիւին կէսէն աւելին տարագիր դարձած տարտղնուած է աշխարհի չորս ծագերուն եւ ենթակայ ձուլման եւ ուժացման բոլոր հողմերէն եւ փոթորիկներէն:

Այո՛, մշակույթ ունեցող եւ մշակույթի ընդունակ ազգեր չեն մեռնիր, անմահ են:

Նէյման գերմանացի պատմաբանը կը գրէ.

«Եթէ հայերը բոլոր այն փոթորիկներուն մէջ, որ Ե. դարէն սկսած դըրրդեցուցին ամբողջ Ասիան եւ մասնաւանդ Հայաստանը, կրցան որպէս անկախ քրիստոնեայ ազգ մնալ, պատճառը, գլխաւորաբար ազգային լեզուի տառերու գիւտին տալու է, որով կարելի եղաւ սեփական գրականութիւն ունենալ եւ առանձին հոգեւոր կազմակերպութիւն պահպանել»:

Իսկ հայ քնարերգութեան մեծ վարպետ Աւետիք Իսահակեան, յաճախ ընդգծած է հայ լեզուի եւ մշակույթի կարեւորութիւնը՝ որպէս գլխաւոր գէնք ինքնապաշտպանութեան եւ գոյապայքարի հետեւեալ խօսքերով.

«Ամէն բան քայքայուեց Հայաստանում, հայ ժողովուրդի շուրջը ամէն բան փուլ եկաւ, բայց կանգուն մնաց լեզուն՝ հարուստ, հոյակապ, պատկառելի: Իսկ լեզուն պետականութիւնը կորցրած, ստրկացած մի ժողովուրդի համար ամէն ինչ է: Լեզուն փոխարինել է ե՛ւ պետութիւն, ե՛ւ բանակ, ե՛ւ բերդ»:

«Հայ ժողովուրդը կորցրեց պետութիւն եւ իշխանութիւն, զօրք, բանակ, նախարարներ եւ պարսպաւոր բերդաքաղաքներ, դարձաւ գերի, ռայա, հարկատու օտար գազանաբարոյ տէրերի՝ խաների եւ շահերի, խալիֆաների եւ Սուլթանների, բայց պահեց իր լեզուն ամէն բանից բարձր: Եւ իր ապրելու կամքը կենսագործեց իր գրականութեան եւ իր բանահիւստութեան՝ Փոլկորի մէջ»:

«Կեանքի ու մահուան անհաւասար կռուի մէջ բռնուած ժողովուրդին հայ գրականութիւնն էր, որ ոգի էր ներշնչում, քաջալերում դիմադրելու, տուկալու, պահելու ազգային անաղարտութիւնը, պաշտպանելու իր իտէալները»:

Աշխարհի մէջ կան 2796 լեզուներ, որոնց մէջ հայերէնը 5000 տարիներէ ի վեր կը հոսի մեծասքանչ վեհութեամբ, որպէս լեզու մշակույթի, լեզու քաղաքակրթութեան, լեզու պետական՝ սեփական այբուբենով օժտուած յատկանիշներ, որոնք այս 2796 լեզուներէն շատ քիչերուն շնորհուած են:

Մշակույթը, ինքը, գոյատևման ամէնահզօր կերպն է: Մշակույթ կրնան ստեղծել կեանքը սիրող եւ անմահութեան հաւատացող ազգեր: Ուստի մեր ժողովուրդը կը ստեղծագործէ այնքան ատեն, որ ապրելու եւ տեսնելու կամքը հզօր է իր մէջ:

Հայ պետականութենէ եւ անոր մշակութային նախարարութենէն զըրկուած, Սփիւռքի հայութիւնը, եղեռնէն ասդին, 70 տարիներու ընթացքին, յատկապէս Մերձաւոր Արեւելեան երկիրներուն մէջ, իր տունը՝ տեղը չի նկատու:

հանդերձ, չինեց ազգային վարժարաններ, եկեղեցիներ, ակումբներ, մշակութային կեդրոններ եւ այլ հաստատութիւններ, որպէս հայ գոյատեւելու եւ ապրելու համար կենսական կռուանները:

Հայ մշակոյթը վառ պահելու եւ զարգացնելու, ծանօթացնելու եւ մշակոյթի ճամբով ժողովրդային լայն զանգուածներուն ծառայելու համար, 1930էն սկսեալ Եգիպտոսի, Լիբանանի, Սուրիոյ եւ հետզհետէ հայահոծ այլ գաղութներու մէջ հիմնուեցան «Համազգային»ի մասնաճիւղերը, որոնք ջահակիրը հանդիսացան հայեցի դաստիարակութեան ու կրթութեան, հայ մշակոյթին, գրականութեան եւ հայապահպանման նուիրական գործին:

Համազգայինի հիմնադիր անդամներուն՝ Տոքթ. Համօ Օհանջանեանի, Լեւոն Շանթի, Նիկոլ Աղբալեանի, Գասպար Իփէկեանի, Ստեփան Եսայեանի, Սեդրակ Պալըզճեանի, Մինաս Խաչատուրեանի, Սարգիս Մալխասեանի եւ Յակոբ Պալըզճեանի հիմնական նպատակը եղած է՝ դարաւոր հայ մշակոյթը պահպանել, յաւերժացնել եւ մշակոյթի գէնքով՝ ճակատագրի բերումով օտար երկիրներու մէջ հաստատուած մեր ժողովուրդին յարատեւութիւնը ապահովել, անոր կենցաղն ու նկարագիրը պահպանել, հայ լեզուով ու հայ հոգիով անոր կրթական մակարդակը բարձրացնել եւ մտաւորական սերունդներ պատրաստել: Որովհետեւ «Համազգային»ը ոչ միայն հայը իր անցեալին կապելու, իր հարուստ մշակոյթին տէր դարձնելու եւ մեր նախնիքներուն գործը շարունակելու առաջնորդութեամբ հիմնուեցաւ, այլ եւ մեր քաղաքական նպատակներուն ծառայելու, գաղափարական երիտասարդութիւն, քաղաքական պայծառ դիտակցութեան տէր հայութիւն պատրաստելու համար:

«Համազգային»ը եօթանասուն տարիներու իր գոյութեան ընթացքին, Սփիւռքի զանազան հայահոծ գաղութներուն մէջ, մշակութային եւ կրթական հսկայ գործ մը տարած է եւ կը տանի եւ պատրաստած է սերունդներ, որոնք այսօր պատնէշի վրայ են ամէնուրեք եւ նուիրուած են հայ մշակոյթի ջահով լուսաւորելու մատղաշ սերունդները:

«Համազգային»ը փառաւոր եւ կենսական գործ տարած է իր հրատարակչականով, իր թատերախումբերով, պարախումբերով, երգչախումբերով, լսարաններով եւ յատկապէս իր ճեմարաններով:

Կեդրոնանալ Միացեալ Նահանգներու եւ Գանատայի հայկական գօտիներուն վրայ, հրճուալից է հաստատել, որ մեծամասնօրէն սփիւռքեան այլ գաղութներէն եկևոր երիտասարդներու նկատելի զանգուած մը «Համազգային»ի մէջ ու շուրջ խմբուած, սկսած է մտածել, ծրագրել ու գործել՝ մշակոյթի բոլոր մարզերուն մէջ: Երազ հիւսել, բայց նաեւ միջոցներ նախատեսել ու լրձուիլ գործնական աշխատանքի՝ ուղի հարթելու համար շարժումի մը, որով կարելի պիտի ըլլայ ամայացող ածուները փրկել անապատ դառնալու ճակատներէն: Միւս կողմէ, շօշափելի ներկայութիւն դառնալ մտքի ու գրի ճակատներուն վրայ, յիշեցնելու համար հեւասպառ վազքի մէջ ապրողներուն՝ թէ ընտանեկան իրենց երդիքներուն քովն ի վեր, նաե՛ւ լոյսի կեդրոններ պէտք է ունենալ, եթէ կ'ուզեն իբրեւ հայութիւն ապրիլ: Պէտք է հետաքրքրուին նաեւ մշակութային եւ իմացական արժէքներուն, ճանչնալ ինքզինք ու կարենալ շաղախ դառնալ անոնց համար, որ պիտի գան:

Վերջին քսան տարիներուն բան մը «չարժած» է արդէն ամերիկահայ եւ գանատահայ կեանքին մէջ: «Համագգային»ի ծնունդն իսկ փաստ է այն մասին, որ կը խլրտինք: Յաջորդական արտագաղթերու հետեւանքով՝ Միջին Արեւելքէն դէպի այս ափերը ապաստան փնտռող երէց թէ կրտսեր սերունդներուն մօտ, սկզբնական շրջանի հասկնալի շուարումէն եւ խարխափումէն ետք:

Մշակութային արժէքներու ճանաչման եւ տարածման գործին նուիրուած միութիւններ առանձին պէտք է ձգուին իրենց ճիգերուն եւ աշխատանքներուն մէջ:

«Համագգային»ի նման միութիւններ, մշակութային սերմնացանութեան իրենց առաքելութեամբ լրիւ կրնան ծառայել ա՛յն ատեն միայն, երբ տնտեսական բաւարար միջոցներ ունենան Մ. Նահանգներուն եւ Գանատայի նման տարածուն գօտիներու մէջ իրենց ծրագիրները իրականացնելու համար:

Ինչպէս ծանօթ է, թատերախումբի մը, երգչախումբի մը, պարախումբի մը կամ անհատ արուեստագէտի մը շրջապտոյտը երկրէ-երկիր, նահանգէ-նահանգ եւ քաղաքէ-քաղաք՝ կը կարօտի մեծ գումարներու: Մշակութային որեւէ ձեռնարկ, դասախօսական որեւէ հաւաքոյթ, նոյնիսկ միութեանական որեւէ համագումար՝ նիւթական անյաղթահարելի դժուարութիւններ կը ըստեղծէ: Հրատարակչական պատահական նախաձեռնութիւններ կամ գեղարուեստական որեւէ գործի հրատարակութիւն՝ կը պարտադրեն տնտեսական արտակարգ գոհողութիւններ, իսկ դպրոցական դասագիրքեր պատրաստելու եւ հրատարակելու գործը՝ հսկայ դրամագլուխ:

Ամէն մարդ գիտէ, թէ գրականութիւնը արուեստներուն ամէնէն ամբողջականն է, ամէնէն մարդկայինը եւ ինչու է, ամէնէն կատարելալը: Ինչո՞ւ ուրեմն հայ գրագէտին չտալ իր արժանի տեղը կամ առնուազն այն տեղը՝ որ կը տրուի պատահական առաջին երգիչին:

Չի բաւեր բեմերէն պոռալ «ունի՛նք մշակոյթ, ունի՛նք լեզու, ունի՛նք գրականութիւն» եւ հանդուրժել հայ գրագէտներու տառապանքին, մինչ անդին պատահական երգիչներ, թմբկահարներու օժանդակութեամբ իրենց էսթրատային երգերով կը քնացնեն ամբոխները:

Անմահ բանաստեղծ Վահան Թէքէեան, հայ լեզուին նուիրուած իր քերթուածներէն մէկուն մէջ վախ կը յայտնէ, որ «հարիւր տարի ետք կրնայ զինք հասկցող չունենալ, որովհետեւ, օրէ օր կը պակսին ո՛չ միայն հայերէն կարդացողները, այլեւ,՝ ինչ որ աւելի եղերական է, հայերէնով խօսողներ...»:

Քերթողը մտահոգ է, որ Մայրենիքը պիտի որբանայ հետզհետէ, իր վաստակը պիտի դատապարտուի «անկիւն մը պառկելու» եւ հայերէնը պիտի դառնայ լքեալ գոյք:

Ափսոսանքի իւրայատուկ իր ձեւով՝ որ ամէնէն անհատական ապրուածին անգամ անանձնական ու ազգային ծաւալ կու տայ, բանաստեղծը կը գրէ:

Լեզուն՝ որով գրեցի, երկրի երեսը քիչե՛ր
Կը կարդային գայն արդէն, ու պակսեցան անոնք ալ...
Հարիւր տարի վերջ միայն, իր այս ձեւով, այս սխալ
Կամ ճիշդ ձեւով ու հնչմամբ՝ լեզուն անոյշ, զոր խօսեր

Էին անոյշ տղաքներ, գուցէ խօսող չունենա՛յ...
Եւ քերթուածները, որոնց մէն մի բառին ու վանկին
Վրայ ես սիրտ հատցուցի, գուցէ անկիւն մը պառկիմ՝
Առանց որ մէկը դնէ իրենց բուն շեշտն անոնց վրայ...

Տե՛ր, ցաւ մ'ալ ա՛յս է հիմա, ցաւերէն ետք անհամար...

Թէեւ Թէքէեանի գրութեանէն հարիւր տարի անցած չէ, որպէսզի կարենանք հաստատել կամ ժխտել բանաստեղծին ենթադրութիւնները:

Բայց մինչեւ այսօր, Սփիւռքի ամբողջ տարածքին պայքար կը մղուի գոնէ եղածը պահելու:

Այլասերման եւ ձուլումի վտանգը այնքան հրատապ եւ մտահոգիչ ներկայութիւն մըն է, որ իւրաքանչիւր հայ իր խղճին եւ ամբողջ ազգին առջեւ պատասխանատու կը մնայ հանրային եւ ազգային ընթացքին համար: Նահանջե՞լ, անձնատուր ըլլա՞լ, թէ հնարաւոր բոլոր միջոցներով պայքարիլ, որպէսզի հարիւր տարի վերջ Սփիւռքի մէջ գտնուին մեծ թիւով հայեր, որոնք կարգան Թէքէեանը եւ ուրիշ հեղինակներ:

Թէեւ հայ պատանին Սփիւռքի մէջ, իբրեւ հա՛յ ուսանող դատապարտուած է յաղթահարելու դժուարութիւններ, որոնք յատուկ են միայն իրեն: Իբրեւ հայ ուսանող պարտաւորուած է իւրացնել նախ տեղական երկրի ուսումնական պահանջները, ապա՝ սեփական մշակոյթի ժառանգը: Հայեցի դաստիարակութեան տագնապը սխալ պիտի ըլլար փաթթել դպրոցի եւ ուսուցիչներու վզին: Ճիշդ է թէ հայերէն նիւթերու կարող եւ շունչ ունեցող ուսուցիչներ կը պակսին հետզհետէ: Ժամանակին գիտական եւ ուսողութեան ուսուցիչներու տագնապ մը կար, մինչ հայերէնի (լեզու, գրականութիւն) հմուտ ուսուցիչներու առատութիւնը: Այժմ պատկերը փոխուած է: Ուսողութեան եւ գիտութեան դասատուներու մեծ թիւ մը ունինք, իսկ հայերէն դասաւանդող մասնագէտ ուսուցիչներու պակասը անել կացութեան կը մատնէ մեր թերթերը, ազգային կեանքը եւ առհասարակ հայ մշակոյթի զարգացման գործը: Չի բաւեր աւաղել եւ ողբ կարգալ: Անհրաժեշտ է այս երեւոյթին դէմ ուժեղ կերպով հակազդել, ինչ գիտով որ ըլլայ, որպէսզի Սփիւռքի հայեցի մեր հաստատութիւնները անտէր չմնան, որպէսզի նորահաս սերունդի հոգիին եւ մտքին մէջ խոր արմատներ նետէ հայ մշակոյթի սէրն ու գիտութիւնը:

Այս կենսական նպատակին համար արժէ կատարել նիւթական եւ բարոյական ամէն զոհողութիւն:

Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ:

Պէտք է արմատացնել հայ ժողովուրդի մէջ հայ մշակոյթը, որպէսզի ան կարենայ ապրիլ իբր ուրոյն ազգ, իսկ այդ կրնանք կատարել հայ վարժարանով եւ հայ գիրքով, այսինքն՝ դաստիարակութեամբ եւ գրականութեամբ:

Վտանգուած չենք իբր անհատ, բայց վտանգուած ենք իբր ազգ: Այս կացութիւնը մեզ պէտք է թելադրէ դաստիարակութեան իւրայատուկ եղանակ, ուրոյն ծրագիր: Ուրիշ ազգերու դպրոցական սիսթեմը չի կրնար գոհացնել մեզ, որովհետեւ մենք կը գտնուինք այլ պայմաններու մէջ: Մեր վիճակը բացառիկ է եւ ուրոյն, դաստիարակութեան մեր սիսթեմն ալ պէտք է ըլլայ բացառիկ եւ յատուկ:

Մենք պէտք է պատրաստենք մոլեռանդ հայեր, մոլեռանդ հայուհիներ, որպէսզի կարենանք պահպանել մեր սեփական կերպարանքը, մեր ինքնուրոյնութիւնը եւ նկարագիրը:

Երիտասարդութիւնը պէտք է դաստիարակել եւ վարակել այս մոլեռանդ ոգիով: Պարզ գրագիտութիւնն անբաւարար է մեր ներկայ իրականութեան համար: Պէտք է հիմնել երկրորդական վարժարաններ, ուր երիտասարդներուն միտքն ու նկարագիրը կազմուին ազգայնապէս: Այնտեղ կ'իւրացուի, կը հետապնդուի եւ կը մշակուի հայ ոգին ու մշակոյթը:

Գիշերօթիկ ճեմարանի մը հիմնումը Մ. Նահանգներու կամ Գանատայի մէջ՝ հրաշալի բալասան մը կրնայ ըլլալ կոտտացող վէրքերուն վրայ:

«Համազգային»ի 70-ամեակը կը յուսանք անկիւնադարձ մը կ'ըլլայ վերոյիշեալ գաղափարները գործի վերածելու եւ այս ափերուն վրայ պահելու մեր ինքնութիւնը մինչեւ այն օրը, երբ Սփիւռք ըլլալէ կը դադրինք, հասնելէ ետք մեր գլխաւոր իտէալին՝ «Ամբողջական Հայութիւն՝ Ամբողջական Հայաստանի մէջ»՝ ազատ եւ անկախ:

«ՅՈՐԻՉՈՆ»
25 Ապրիլ 1988



Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեան եւ Գրիգոր Յոթոյեան

ԹՈՐՈՆԹՈՅԻ «ՌՈՒԲԻՆԱ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԸ

Ինչպէս «Լրատու»ի Մարտ 1987 թուին մէջ յայտարարած էինք, որ մօտ օրէն Ընկերային Ծառայութեան գրասենեակի պաշտօնական բացումը պիտի կատարուէր, ուրախ ենք յայտարարելու որ, սոյն խոստումը, իրականացաւ, Ուրբաթ, Մայիս 1, 1987ին, Հայ Կեդրոնին մէջ, ներկայութեամբ զանազան կառավարական եւ գաղութիս կազմակերպութիւնները ներկայացնող հայ եւ օտար անձնաւորութիւններու: Օրին, սոյն բացումը կատարեց Հ.Օ.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետուհի Արփի Չարխուտեան:

Վերոյիշեալ թուականէն ի վեր, գրասենեակի աշխատանքները կանոնաւորապէս կը շարունակուին, զանազան կարիքներու գոհացում տալով:

Մեր աշխատանքներու ծիրին մէջ կ'իյնան ծերանոցներու այցելութիւն հոն՝ ուր հայեր կան, բնակարանային, թարգմանական, յանձնարարական եւ տեղատուական զանազան միջոցներու հայթայթում, ըլլան անոնք կառավարական, փաստաբանական կամ առողջապահական մարզերու մէջ: Այս աշխատանքները տանելու համար կազմուած է յատուկ անձնակազմ մը բաղկացեալ ընկերուհիներ Մարօ Մարտիրոսեանէ՝ ատենապետ, Էօթէնի Շէհիրեանէ՝ քարտուղար, Շաքէ Ստեփանեանէ՝ գանձապահ, Սիւզի Գալթաքեանէ՝ խորհրդակցական, Անի Էթիմէզեանէ՝ ընկ. ծառայող (վկայեալ), Վերժին Հէքիմեանէ՝ ընկ. ծառայող (վկայեալ), Պայծառ Սուքիասեանէ՝ կամաւոր, Հուրի Նաճարեանէ՝ վարչական ներկայացուցիչ:

Այս անձնակազմի կողքին ունինք երկու վկայեալ ընկերային ծառայող տիկիներ, Զարուհի Քիլիճեան եւ Կրէյս Նալպանտեան, որոնց կը դիմենք յատուկ առիթներով:

Այս բոլորէն անկախ, կան նաեւ կամաւոր մեր օգնական ընկերուհիները, որոնք բոլոր առիթներով օգտակար կը հանդիսանան իրենց յանձնուած աշխատանքին:

Վերոյիշեալ առօրեայ եւ ընթացիկ աշխատանքները կը կատարուին գրասենեակի շարունակական բաց ժամերուն, Երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը, կ.ե. ժամը 2:30-4:30, երեկոյեան ժամը 7:30-9:30: Գրասենեակի ժամերէն դուրս, ունինք ձայնագիր մեքենայ, որ կապուած է հեռաձայնին. թիւն է 491-2211:

Անձնակազմը նաեւ կատարեց յատուկ աշխատանքներ, առօրեայէն դուրս:

ա. 167 նամակներ ուղարկուեցան քաղաքիս մէջ գտնուող ծերանոցներու եւ անկեղանոցներու, խնդրելով անոնցմէ մեզի փոխանցել հայ ազգայիններու անունները, որոնք կը գտնուին իրենց մօտ: Ուրախ ենք ըսելու, որ այս հաստատութիւններէն ստացանք քաջալերական եւ շնորհաւորական նամակներ եւ նաեւ անունները մեր անհատ ազգայիններուն: Մինչեւ օրս, կը հաշուենք 18 այր ու կին: Ընկերուհիներ Մարի Աբրահամեան, Փառանձեմ Մարտիրոսեան, Սեդա Թաչճեան եւ Վարսենիկ Սարգիսեան, շաբաթական կանոնաւոր այցելութիւններ կու տան Bendale Acres եւ Cummer Lodge ծերանոցները:

բ. Նամակներ յղեցինք մասնագիտութիւն ունեցող ազգայիններու (բըժիշկ, ատամնաբոյժ, ակնաբոյժ) եւ նաեւ անձնական հաստատութիւններ ունեցող ազգայիններուն, տեղեկացնելով հաստատումը մեր գրասենեակին եւ անոր նպատակն ու առաքելութիւնը գաղութիս կեանքին մէջ, նաեւ խնդրելով՝ չզլանալ իրենց աջակցութիւնը ու նաեւ օգտագործել գրասենեակի հայթայթած դիւրութիւնները, գործաւոր-աշխատաւոր գտնելու գործին մէջ, նախապատուութիւնը եւ առաջնահերթութիւնը ընծայելով մեր ազգայիններուն:

Այս կարճ ժամանակաշրջանին, արդէն ստացած ենք 200է աւելի դիմումներ, զանազան դժուարութիւններ ունեցող ազգայիններէ, որոնց համար գրասենեակը իր կարելին ըրած է լուծելու կամ ուղղութիւն տալու, ինչ որ ալ ըլլայ ներկայացուած պարագան:

Մեզի հասած են նաեւ դիմումներ տեղական տարբեր գրասենեակներէ, եւ մանաւանդ, դպրոցներու պատասխանատու մարմիններէ, հիւանդանոցներէ, երբ խնդրոյ առարկան եղած է հայ եւ անկարող եղած են անհատին հետ լեզուական կամ այլ պատճառներով հարցը լուծել:

Ընկերային ծառայութեան գրասենեակը բաց է բոլորին համար, առանց կրօնական, ընկերային, քաղաքական եւ կամ այլ պատկանելութեան խորութեան: Սոյն գրասենեակի անմիջական մարզը գանատահայ գաղութն է, մանաւանդ նորեկներու դիմակալած զանազան հարցերն ու դժուարութիւնները:

Անձնակազմը օրակարգի վրայ ունի տակաւին յատուկ աշխատանքներու տարբեր ծրագիրներ, որոնք հանրութեան սեփականութիւնը կ'ուզենք դարձնել, զանոնք իրագործելէ ետք միայն:

Այս հակիրճ տեղեկատուութեամբ, ուզեցինք պատկերը տալ մեր նորակազմ աշխատանքին, որ կը կատարուի կամաւոր անձնակազմով:

Վստահ ենք, որ պիտի չուշանայ ժամանակը, որ մեր գրասենեակի պահանջները պիտի ստիպեն մեզի վճարովի պաշտօնէութեան դրութիւնը ստեղծելու, որպէսզի կարողանանք մեր առաքելութեան ճամբով, ինչպէս միշտ, նեցուկ կանգնիլ մեր ժողովուրդի գաւակներուն:

«Լրատու»
Մայիս 1988

ՀՈՐԻՉՈՆ 10 ՏԱՐԵԿԱՆ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի շրջանի պաշտօնաթերթ «Հորիզոն»-ի 10րդ տարեդարձը պատեհ առիթ համարելով, պեղելով մը՝ տածումներու բլուրները, խորհրդածութեան նիւթ կ'ուզեմ դարձնել «Հորիզոն»-ի անցած ուղին, բովանդակութիւնը եւ ապագայի առաջադրութիւնները, ինչպէս նաեւ հայ մամուլին վիճակուած կենսական դերն ու առաքելութիւնը՝ յատկապէս Սփիւռքի զանազան գաղութներու մէջ՝ հոն տիրող ազատութիւններու լոյսին տակ, զանց առնելով խորհրդահայ մամուլը, ուր թերթերն ու պարբերաթերթերը կը հրատարակուին պետական հսկողութեամբ եւ միջոցներով, նկատի ունենալով, որ անոնք նիւթական դժուարութիւններ չունին եւ անոնց ծրագրէն եւ հետաքրքրութիւններէն դուրս կը մնան համազգային նշանակութիւն ունեցող հարցեր, ի բացառեալ արտասահմանի հայութեան համար հրատարակուող թերթերէն, ինչպէս «Հայրենիքի Ձայն» շաբաթաթերթը եւ «Սովետական Հայաստան» ամսաթերթը:

Համայն աշխարհի հայահոծ գաղութներու մէջ լոյս կը տեսնեն բազմաթիւ թերթեր եւ պարբերաթերթեր՝ գաղափարական, գրական, կրօնական, մարզական, եւայլն բովանդակութեամբ, որոնց ջախջախիչ մեծամասնութիւնը հովանաւորուած են ազգային կուսակցութիւններու եւ անոնց ենթակայ կազմակերպութիւններուն կողմէ:

Հայերէն առաջին մամուլին հրատարակութենէն՝ 1794էն ի վեր՝ 195 տարիներու ընթացքին, աշխարհի բոլոր հայահոծ գաղութներուն մէջ հրատարակուած են հարիւրաւոր առօրեայ եւ պարբերական թերթեր, որոնց նպատակըն ու առաքելութիւնը եղած է տարասփիւռ հայ զանգուածներուն սիրցնել հայերէն լեզուն եւ անոնց հոգիներուն մէջ անթառամ պահել սէրն ու հետաքրքրութիւնը հանդէպ հայ դարաւոր մշակոյթին, աւանդութիւններուն, ժառանգութիւններուն, քաղաքական եւ կրօնական համոզումներուն, զանազան գաղութներու եւ հայրենիքի հետ միջ-հաղորդակցութեան, ձգտելով հասնիլ այն գաղափարին, որ հայը ուր որ ալ գտնուի եւ կայք հաստատէ, անբաժանելի մասնիկն է ամբողջական հայութեան եւ բոլորին գլխաւոր առաջադրութիւնն ու վախճանական նպատակը՝ մէկ ազգ, մէկ հայրենիք կերտելու վսեմ իրազործումը:

Վերոյիշեալ գաղափարները ընդհանուր յայտարարի տակ առնելով, արագ ակնարկ մը կը նետեմ Գանատայի շրջանի մեր պաշտօնաթերթին՝ «Հորիզոն»-ի անցած տասը տարուան հաւաքածոներուն վրայ, ապա՝ բերելու կարգ մը առաջարկներ եւ թելադրութիւններ, զայն տեսնելու համար աւելի գեղեցիկ, աւելի բովանդակալից, աւելի բարգաւաճ եւ տարածուն թերթ մը:

Երիտասարդական կեանքիս տասը տարիները անցուցած ըլլալով Հալէպի «Արեւելք» օրաթերթի եւ «Նայիրի» ամսագրի գրաշարատուններուն եւ հրատարակութեան մէջ, ինծի համար գաղտնիք չեն այն բոլոր դժուարութիւնները (մանաւանդ նիւթական), որոնք իրենց խոժոռ դէմքը ցոյց կու տան ամէն շաբաթ վարչական տնօրէններուն: Բազմաթիւ թերթեր եւ պարբերաթերթեր չկարողանալով դիմանալ ելեմուտքի բացերուն, յուսահատած դադ-

րած են գոյատեւելէ: Սակայն, գաղափարական եւ ազգակերտութեան առաքելութեամբ ճամբայ ելլող թերթերը, հակառակ վերոյիշեալ տագնապներուն, կը շարունակեն առաջնորդողի իրենց սրբազան պարտականութիւնը՝ շնորհիւ գաղափարապաշտ ընկերներու օժանդակութեան:

Թէեւ Գանատայի հայութիւնը անցեալ տարի հանդիսաւորապէս նշեց իր 100-ամեակը, սակայն այս ամիսը ունի վրայ հաստատուած հայութեան թիւը ուռճացաւ յատկապէս վերջին 30 տարիներուն ընթացքին եւ տակաւին կը շարունակուի, Մերձաւոր Արեւելքի երկիրներուն քաղաքական եւ տնտեսական անկայուն վիճակին հետեւանքով:

1975էն սկսեալ, Հ.Յ. Դաշնակցութեան Գանատայի Շրջանի Կեդրոնական Կոմիտէն միշտ իր օրակարգին վրայ ունէր պաշտօնաթերթ մը հրատարակելու հրամայական պահանջը եւ անհրաժեշտութիւնը, որ կը մեկնէր շրջանի ընկերներուն, համակիրներուն եւ յատկապէս հայ ժողովուրդին ամէնէն հիմնական եւ առհասական ձգտումներուն ծառայելու գաղափարէն, որպէսզի քայլ պահէր Գանատահայ կեանքի առօրեայ ճիգերուն հետ եւ ըլլար հայ գիրի, հայ դատի եւ գաղափարի ջահակիրը՝ Սփիւռքի մէկ բեկորին՝ գանատահայութեան՝ բայց ամբողջ հայութեան յոյսերով, ձգտումներով եւ տեսիլքներով:

Արդարեւ, յատուկ կարգադրութեամբ եւ ծրագրով, ամբողջացնելէ ետք թերթի մը հրատարակութեան անհրաժեշտ սարքաւորումներն ու անձնակազմը, 28 Մայիս 1979ին, Հայաստանի Հանրապետութեան 61րդ տարեդարձին առթիւ, լոյս տեսաւ «Հորիզոն» շաբաթաթերթի առաջին թիւը, ութը էջերով եւ ճորտ բովանդակութեամբ, արժանանալով գանատահայութեան ազատատենչ եւ գաղափարապաշտ զանգուածներուն խանդավառ ընդունելութեան:

«Հորիզոն»ի առաջին թիւէն սկսեալ, աշխատակցելով եւ թղթակցելով թերթին, հետեւելով տասը տարիներու անոր հելքին, ականատես եղած եմ անոր ծրագրուած վերելքին եւ յաջողութիւններուն:

1981ի ամառը «Հորիզոն» սկսաւ լոյս տեսնել 12 էջերով, ապա տարիներու թաւալումով դառնալու համար 16 էջնոց շաբաթաթերթ մը, Սփիւռքի լաւագոյն թերթերէն մէկը, ամբողջութեամբ հայերէն մաքուր լեզուով, առաջնորդելով, ներշնչելով եւ զօտեպնդելով հայ զանգուածները՝ Գանատայի հիւրընկալ այս ամիսը ունի:

«Հորիզոն», Ամանորի եւ տօնական այլ առիթներով հրատարակեց նաեւ բացառիկ թիւեր եւ ամէն ամիս յատուկ բաժիններ տրամադրել գրական, մարզական, երիտասարդական, մանկապատանեկան շարժումներուն, իսկ յոբելեաններուն բաժինը իր մնայուն անկիւնը ունէր լոյս տեսնող ամէն մէկ թիւին մէջ:

«Հորիզոն»ի ամէնահետաքրքրական բաժինը կարելի է համարել իր կազմակերպած կլոր սեղանի զրոյցները, ուր առիթ կը տրուէր նիւթին ծանօթ մտաւորականներուն արտայայտուելու եւ անձնական կարծիքներով մասնակցելու հարցադրուած նիւթին:

«Հորիզոն»ի խմբագրականները ընդհանրապէս կը շօշափէին ազգային այժմէական հարցեր եւ երեւոյթներ, առաջնորդող գաղափարներով լուսարձակի տակ առնելով հայ ժողովուրդի անժամանցելի եւ արդար իրաւունքները, գոյատեւման եւ ազատութեան տենչերը՝ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ,

միշտ լսելի դարձնելով Հ.Յ. Դաշնակցութեան եւ անոր ընդհանուր ժողովներուն որոշումներուն լոյսին տակ, հայ ժողովուրդի շահերուն, ապահովութեան եւ գոյատեւման դէմ սպառնացող վտանգներուն ընդդիմանալու եւ պայքարելու կարգախօսները:

«Հորիզոն» իր էջերը լայնօրէն տրամադրեց նաեւ ընդհանրապէս Հայաստանի, Սփիւռքի եւ մասնաւորապէս Գանատայի տարածքին կատարուող քաղաքական, մշակութային եւ կրօնական ձեռնարկներու նուիրուած լուրերու եւ թղթակցութիւններու, հոգեկան կապ մը հաստատելով տարանցիկ հայութեան բեկորներուն միջեւ, մեկնելով այն իրականութենէն, որ հակառակ աշխարհագրական հեռաւորութիւններու, հայութիւնը պէտք է ապրի եւ ձգտի ազգային պատկանելիութեան անջնջելի գաղափարին:

Յատկապէս գնահատելի էին 1988 Փետրուարին սկսած Արցախ-Ղարաբաղը Հայաստանին վերակցելու պահանջով Հայաստանի, Արցախի եւ ըՍփիւռքի մէջ հրապարակ իջած ամբողջ հայ ժողովուրդի տողորումներն ու տագնապները, ցոյցերն ու պայքարները օրը-օրին հանրութեան սեփականութիւն դարձնելու «Հորիզոն»ի ճիգերը, որուն վրայ աւելնալով 7 Դեկտեմբեր 1988ի Հայաստանի ահռելի երկրաշարժը, անոր ձգած աւերները, ինչպէս նաեւ Ղարաբաղի Կոմիտէի անդամներուն եւ այլ հայրենասէրներու ձգտումնաւոր ձերբակալութիւնները, աւելի լայն եւ ծանր պարտաւորութիւններու ենթարկեցին թերթի խմբագրութիւնը, որուն յարատեւ եւ մնայուն կապերուն շնորհիւ Հայաստանի պետական եւ մտաւորական շրջանակներուն հետ, գանատահայութիւնը ծանօթացաւ դէպքերու զարգացումին եւ աղէտի ծանրութեան:

Գնահատելի կը գտնենք նաեւ Խորհրդային Միութեան «Ժողովրդակառնացման» եւ «Հրապարակայնութեան» շնորհիւ ազգային եւ կենցաղային հարցերով մտահոգ հայ մտաւորականներու գրութիւնները «Հայրենի Ձայներ» խորագրին տակ հրատարակուելը, զօրակցելով անոնց պարզած արդար մտածումներուն եւ դիտողութիւններուն եւ քննադատութիւններուն, ի խնդիր Հայաստանի յառաջդիմութեան եւ հայրենաբնակ ժողովուրդին առողջ եւ հայադէմ ապրելակերպին որպէս պետութիւն ունեցող ազգ եւ հայրենիք:

«Հորիզոն» արդէն 10 տարեկան է:

Նախնական սարքաւորումներով սկսած թերթի խմբագրութիւնը, որպէս խմբագիր ունենալով գաղափարապաշտ մտաւորական-գրագէտ ընկեր Վրէժ-Արմէն Արթինեանը, սակաւաթիւ անձնակազմով, անհամար դժուարութիւններով, կարողացաւ թերթը կանոնաւորաբար հրատարակել եւ հասցնել ներկայ պատուաբեր պատուանդանին՝ էջերու յաւելումով եւ բովանդակութեամբ եւ արդիական սարքաւորումներով:

«Հորիզոն» անցնող տասը տարիներու ընթացքին իր էջերուն մէջ հիւրընկալեց Սփիւռքահայ ծանօթ եւ անուանի գրողներն ու հրապարակագիրները, սկսնակ գրողները՝ քաջալերելով անոնց գրական երկչոտ քայլերուն: Նաեւ՝ շրջապատուած ըլլալով թղթակիցներու ցանցով մը, կարելի արագութեամբ արձագանգելով Գանատայի հայահոծ շրջաններու մէջ կազմակերպուած ազգային, քաղաքական, կրօնական, մշակութային, մարզական եւ դպրոցական բոլոր ձեռնարկները, ամբողջականօրէն նիւթ պարփակելով, Գանատայի վերջին տասը տարիներու պատմութենէն:

Մակայն, ինչպէս հայերէն բոլոր թերթերը, «Հորիզոն»ն եւս կը դիմա- կալէ անտեսական կարեւոր դժուարութիւններ: Ահաւասիկ մտահոգիչ պարա- գայ մը, որուն համար պէտք է խորհրդածենք եւ որոնենք դարմանումի մի- ջոցները:

Մինչ այդ, գնահատելով հանդերձ «Հորիզոն»ի տասը տարուան բովան- դակութիւնը, խոնջէնքը եւ կատարուած նորարական ճիգերը, կը ներկայաց- նեմ իմ անձնական նկատողութիւններս եւ թելադրութիւններս, որոնց գոր- ծադրութեամբ, կը հաւատամ, մեր սիրելի թերթը ի վիճակի պիտի ըլլայ ինք- նաբաւ ըլլալու եւ աւելի բարգաւաճելու:

Ա. Որպէս բովանդակութիւն, բաժիններու էջադրումները փոխել: «Հո- րիզոն»ի ամէն մէկ թիւը պէտք է պարունակէ քաղաքական, գրական, մշակու- թային, մարզական, առողջապահական, կնոջական, երիտասարդական, պատա- նեկան, դպրոցական գրութիւններ եւ լուրեր: Եթէ կարելի չըլլայ բոլոր նիւ- թերը մէկ թիւին մէջ գետեղել՝ էջերու անբաւարարութեան պատճառով, ա- ռայժմ կարելի է երկու անգամով տալ: Մանաւանդ գրական եւ երիտասարդա- կան բաժինները՝ գոհացնելու համար բոլոր ընթերցողներու ճաշակներն ու հե- տաքրքրութիւնները:

Բ. Հրաժարիլ գրական եւ երիտասարդական առանձին պրակներ հրա- տարակելու գաղափարէն, մեկնելով այն տպաւորութենէն, որ բազմաթիւ ըն- թերցողներու համար այդ ձեւը ձեռնտու չէ եւ պատճառ կը դառնայ որ շատեր այդ պրակները մէկ կողմ դնեն եւ չկարդան: Զանոնք գետեղելով թերթի էջե- րուն մէջ, աւելի դիւրութիւն կ'ընթացուի ընթերցանութեան:

Գ. էջադրումներու ներկայ ձեւը հաճելի չէ: Սկսող յօդուածները աշ- խատիլ տեղաւորել էջի վերի մասին վրայ եւ նոյն էջին վրայ վերջացնել: Յօդուածներու շարունակութիւնը էջէ-էջ փոխադրելով շարունակական կապը կը տկարանայ եւ յաւելեալ ճիգ կը պահանջէ ընթերցողէն: Ներելի է միայն ա- ռաջին էջի վրայ դրուած գրութիւններուն շարունակելիութիւնը, պայմանաւ որ յաջորդող էջերէն մէկուն վրայ վերջանայ:

Գանատական թերթերու ձեւը կարելի չէ ընդօրինակել, որովհետեւ այդ կու գայ առեւտրական հաշիւներէ եւ ոչ թէ արդիական ճաշակէ:

Դ. Աւելի ուշադիր ըլլալ քերականական, ուղղագրական եւ տպագրա- կան սխալներու սպրդումին, որոնք արդարօրէն անհաճելի տպաւորութիւն կը գործեն քիչ-չատ հայերէն գիտցող ընթերցողներուն վրայ:

Ե. Բազմացնել նկարները, որոնք կատարուած ձեռնարկներու եւ հաւա- քոյթներու նպատակը դիւրութեամբ կրնան փոխանցել, մանաւանդ այն ըն- թերցողներուն համար, որոնք յօդուածը կամ թղթակցութիւնը կարգալու ժա- մանակ կամ փափաք չունին:

Զ. Հայահոծ շրջաններուն մէջ ունենալ գործակալներ եւ թղթակիցներ, որոնց պարտականութիւնը պիտի ըլլայ ընթացք տալ բաժանորդներու եւ ըն- թերցողներու բողոքներուն, դիմումներուն եւ լուծեն դժուարութիւնները: Գործակալը ստանձնելով տեղական գանձումները, հասցէներու փոփոխու- թիւնները, նոր բաժանորդագրութիւնները, առեւտրական յայտարարութիւն- ները, մեծապէս կրնայ նպաստել բաժանորդներու յաւելումին եւ թերթին հետ կապուած հարցերու արագ լուծումին:

Իսկ սեփական թղթակիցը կամ թղթակիցները պարտականութիւն ունենան տեղեակ ըլլալու եւ ներկայ գտնուելու շրջանի հայկական բոլոր ձեռնարկներուն եւ համագաղութային լուրեր եւ թղթակցութիւններ փոխանցեն «Հորիզոն»ին: Եւ այս, շատ տրամաբանականօրէն, պատճառ կրնայ դառնալ բաժանորդներու թիւին զգալիօրէն յաւելման եւ Դաշնակցութեան գաղափարաբանութեան տարածման:

Է. Ընթերցող զանգուած մը գոյութիւն ունի, որ չ'ուզեր բաժանորդագրուիլ, սակայն, կ'ուզէ երբեմն ունենալ: Այսպիսիներուն համար, ինչպէս Մոնթրէալի մէջ, միւս գաղութներու մէջ ալ ստեղծել հատուկ ձեռնարկներու թիւնը, նախընտրաբար Հայ Կեդրոններու մէջ:

Կը սիրեմ յուսալ, որ «Հորիզոն»ի խմբագրութիւնը նկատի կ'առնէ վերոյիշեալ թելադրութիւններս, որոնք մղուած են անձնական փորձառութենէս եւ ընթերցող հասարակութեան հետ ունեցած շփումներէս:

Ի խորոց սրտէ կը շնորհաւորեմ «Հորիզոն»ի 10-ամեակը, Հայաստանի Հանրապետութեան Ծրգ տարեդարձին առթիւ, հաստատ այն համոզումով, որ օր մը կարելիութիւններ պիտի ստեղծուին «Հորիզոն» վերածելու եւօրեայի, շաբաթը երկու թիւ, աւելի թարմ եւ արագ տեղեկութիւններ փոխանցելու հայ ընթերցողներուն: հաւասարակշռուած ելեւմուտքով եւ բաւարար անձնակազմով:

Նոր տասնամեակներու մաղթանքով:

«ՅՈՐԻԶՈՆ» շաբաթաթերթ
1989
Թորոնթօ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐ

Կաղանդ է կրկին դաշնակցական ընկե՛ր. . .

Կաղանդ պապային գալուստով փոքրիկներու համար ուրախութեան, ցնծութեան եւ նուէրներով ու ուելիքներով ոգեւորուելու եւ խանդավառուելու օր: Իսկ երիտասարդներու եւ տարեցներու համար՝ անցնող տարուան իրենց կեանքին, գործունէութեան եւ ելեւմուտքին քննութեան եւ հաշուետւութեան օր:

Սակայն մեզի համար դաշնակցական ընկե՛ր, այս Կաղանդը կը զգի՞նու այլ գոյն եւ երանգ, տարբեր ընթացիկ կաղանդներէն, որոնք սահեցան մեր կեանքի բեմէն, որովհետեւ, մեր պաշտելի կուսակցութեան՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադրութեան 100րդ տարեդարձը, 1990ի ընթացքին պատշաճօրէն տօնախմբելէ ետք, մեր ուխտն ու երդումը երկիւղածութեամբ նորոգելէ ետք, կը զգանք որ այս Կաղանդը մեզ կը դնէ նոր պարտաւորութիւններու, մարտնչումներու, պայքարներու եւ զոհողութիւններու դէմ յանդիման:

Եւ այս առթիւ, դաշնակցական ընկե՛ր, ազգին եւ հայրենիքին գերագոյն շահերուն, նպատակներուն եւ իղձերուն իրագործման նուիրուած հայորդի, պարտք կը զգամ մեր պատմութեան ընդմէջէն, դաշնակցութեան մէկ դարու սխրագործութիւններու ընդմէջէն՝ մտածումներս եւ խորհրդածութիւններս բաժնել հետո՞ ինչպէս սովորաբար կ'ընեն միեւնոյն գաղափարի եւ առաքելութեան շուրջ բոլորուած անհատեր ու կազմակերպութիւններ՝ Նոր Տարուան սեմին:

*
* *

Նոր Տարի է դաշնակցական ընկե՛ր: Վարդագոյն չեն մեր օրերը: Դժժւար եւ ճակատագրական շրջանի մը մէջ կ'ապրինք՝ Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ: Արդարութիւնն ու իրաւունքը տակաւին պարզ եւ բառարանային իմաստ ունին: Բռնութիւնն ու զազանային բնագոյները տակաւին կ'իշխեն միջազգային քաղաքական բեմերու վրայ եւ կ'առաջնորդուին մեծապետական եւ կայսերապաշտական երկիրներու շահերէն՝ անտեսելով գերեզմարուած ազգերու ինքնորոշման իրաւունքն ու արդար պահանջները: Բիրտ ուժը կը տիրապետէ ամէնուրեք եւ կը խեղդէ ազատատենչ ազգերու անձկալից աղաղակները:

Պատմութենէն տեղեակ ունէ անձ, լաւապէս գիտէ, թէ ինչպէս կործանուած են բռնապետական կայսրութիւնները, որոնք զէնքի ուժով դարերով փորձած են գերել եւ ստրկացնել բազմաթիւ ազգութիւններ, սակայն վերջիվերջոյ տապալած՝ արդարութեան եւ ազատութեան հարուածներէն: Ո՞ր են այսօր հռոմէական, բիւզանդական, յունական-մակեդոնական, սասանեան, սելճուքեան, արաբական, օսմանեան կայսրութիւնները...:

Պատմութիւնը կը կրկնուի, եւ այսօր, սկանապետ կ'ըլլանք համայնապար կայսրութեան տապալումին:

Բոլշևեիկեան բռնակալութիւնը, կորսնցնելէ ետք Արեւելեան Եւրոպայի իր արբանեակները, մտած է իր հսկայ կայսրութեան քայքայման փուլին մէջ: Համայնավար ստալոյզ վարդապետութիւնը կը նահանջէ արեւելքի եւ Արեւմուտքի մէջ: Իսկ Խորհրդային Միութեան մաս կազմող հանրապետութիւնները, իրար ետեւէ կը յայտարարեն իրենց անկախութեան հռչակագիրները՝ երեսփոխանական ազատ ընտրութիւններու ընթացքին, պարտութեան մատնելով եօթանասուն տարիներէ իվեր հարիւրէ աւելի ազգերը «եղբայրացնելու» եւ միաձուլելով (ռուսականացնելու) ձգտող համայնավար կուսակցութիւնը, որուն խոստացած բարօր եւ երջանիկ կեանքը՝ համայնավար վարչակարգի ստեղծելիք դրախտը՝ մնացած էր երազ ու խաբկանք, որուն հասնելու ճանապարհին զոհուեցան 50 միլիոնէ աւելի անմեղ քաղաքացիներ՝ Լենինէն մինչեւ Կորպաչեւ եւ յատկապէս «հայր» Ստալինի արիւնածարաւ տիրապետութեան տարիներուն:

Հայ ժողովուրդը, երիտասարդ թուրքերու ճիւղային ծրագրով եւ Օսմանեան պետութեան գործադրութեամբ, 1915ին, ենթարկուեցաւ դարուս առաջին անմարդկային ցեղասպանութեան եւ պատահած ջարդերուն, տեղահանութիւններուն եւ աքսորներուն հետեւանքով Արեւմտեան Հայաստանն ու Կիլիկիան ամայացաւ հայութենէն: Եօթը հազար տարուան հայութեան բնօրրանը ողողուեցաւ հայկական արիւնով՝ հակառակ ինքնապաշտպանութեան կռիւներուն՝ Սասունէն մինչեւ Ուրֆա, Շապին-Գարահիսարէն մինչեւ Մուսա Լեռ:

Այո՛, Արեւմտեան Հայաստանը եւ Կիլիկիան պարպուեցաւ հայութենէն, սակայն, թուրքը չյաջողեցաւ բնաջնջել հայ ժողովուրդը: 1918ին պատահեցաւ հրաշքը: Հայ ժողովուրդը փիւնիկի նման մոխիրներէն յարուսթիւն առաւ եւ Սարտարապատի, Ղարաքիլիսայի եւ Բաշ-Ապարանի ճակատագրական ճակատամարտերով ու յաղթանակով կերտեց Ազատ եւ Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը:

Այն ինչ որ տեղի ունեցաւ 1918ի Մայիսեան օրերուն, իր տարողութեամբ եւ իր նշանակութեամբ անչափելի էր մեր դաժան պատմութեան մէջ: Հայոց աշխարհի սրտին՝ Սարտարապատի դաշտին վրայ, Ղարաքիլիսայի ձորերուն մէջ եւ Բաշ-Ապարանի լեռնալանջերուն վրայ կը վճռուէր հայ ժողովուրդի ճակատագիրը, անոր գոյութիւնը: Կը թուէր, թէ այլեւս ոչ մէկ ուժ կարող չէ փոխել արիւնալի իրադարձութիւններու ընթացքը: Ո՛չ ոք այլեւս հրաշք չէր սպասեր: Հրաշքը պէտք է գար իր կործանման եզրին հասած հայ ժողովուրդի բազուկներէն: Եւ տեղի ունեցաւ Հայոց Նոր Աւարայրը: Սակայն, այս անգամ յաղթանակով: Ազատ ապրելու յաղթանակով:

Երկար դարեր ստրկութենէն յետոյ, հայ ժողովուրդը արեան գնով ձեռք բերաւ հարազատ ազգային պետութիւն եւ անկախ ապրելու իրաւունքը: Սակայն կարճատեւ եղաւ Հայաստանի Հանրապետութեան կեանքը: Հազիւ երկուքուկէս տարի: Միջազգային քաղաքական եւ դիւանագիտական դէպքերու հետեւանքով, Հայաստան առանձին մնաց թրքական Սալի եւ ռուսական Մուրճի միջեւ: Եւ այդ օրերու Հայաստանի Դ. Վարչապետի Սիմոն Վրացեանի դաշնակցական կառավարութիւնը, ազգին շահը վերադասելով կուսակցական շահերէն, հայ ժողովուրդի Ֆիզիքական գոյութեան եւ արեան հեղեղներով կերտուած հանրապետութեան տեւականացման իրականութենէն առաջնորդուած,

բուլղեւիկ Լեզրանի եւ հանրապետութեան ներկայացուցիչ Դրոյի միջեւ կնքուած դաշնագրով, Հայաստանի իշխանութիւնը խաղաղօրէն յանձնեց համայնավար իշխանութեան:

Հայ ժողովուրդի ամէնաընտիր զաւակներուն արիւնով Հայաստանի երկնակամարին վրայ երեւցած ազատութեան արեւը ողբալիօրէն խաւարեցաւ, բայց որպէս ասուպ փայլատակեց մեր բախտի երկնակամարին վրայ եւ իր ցոլարձակ լոյսով շառաւիղ ձգեց մեր անցեալի, ներկայի եւ գալիքի միջեւ:

Հայաստանի նոր ղեկավարները՝ Յեղկոմը, հակառակ իրենց խոստումին եւ կնքուած համաձայնութեան, բանտարկեցին, աքսորեցին, կացինահարեցին եւ սպաննեցին հայ մտաւորականութիւնը, պետական նախկին ղեկավարութիւնն ու հայկական բանակի բարձրաստիճան սպայութիւնը: Պետականացուցին, իւրացուցին եւ բռնագրաւեցին հայ քաղաքացիին եւ գիւղացիին տուները, ինչքերը եւ սնունդը: Ժողովուրդը ընդվզեցաւ, պռութկաց եւ ծագեցաւ ժողովրդային տարերային ապստամբութիւնը՝ 18 Փետրուար 1921ին, որուն ղեկավարութիւնը ստանձնեց Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, կազմելով Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ եւ Հայաստանի սահմաններէն վտարեց բուլղեւիկ յեղուկակները: Սակայն, տեղի տալով ռուսաստանէն բերուած համայնավար նոր ուժերու գոռհներուն, եւ, մանաւանդ, նոր արինահեղութիւններու առաջին առնելու մտահոգութեամբ:

Փետրուարեան ապստամբութեան շնորհիւ ստոյգ մահէ ազատուեցան բազմահարիւր մտաւորականներ, կուսակցական գործիչներ, պետական պաշտօնեաներ եւ զինուորականներ, որոնք անցան Զանգեզուր, ապա՝ արտասահման եւ իրենց ազգակերտ առաքելութիւնը շարունակեցին հայկական գաղութներուն մէջ: Իսկ Հայաստանի բուլղեւիկ հին ղեկավարները փոխարինուեցան նորերով, որոնք որոշ դրական փոփոխութիւն մտցուցին իրենց կառավարման ձեւին մէջ:

Բայց, տասնըհինգ տարի չանցած, նոր հովեր փչեցին հիւսիսէն: Գլխաւորութեամբ արինարբու մենատէր Ստալինի եւ անոր հլու ծառայ Բերիայի, Սովետ Միութեան մէջ տեղի ունեցաւ համայնավարական «մաքրագործում»:

Հայերս անմասն չմնացինք խորհրդային իշխանութեան մռայլ ժամանակներու մէջ յայտնի 1937ի համատարած ապանդէն: 1937էն առաջ եւ ետք, ո՛չ միայն Հայաստանի, այլ նաեւ այլ հանրապետութիւններու մէջ ապրող տասնեակ հազար նշանաւոր, վաստակաշատ հայ մտաւորականներ դարձան Ստալինեան կամայականութիւններու զոհեր: Բերիայի կողմէ անարգօրէն սպաննուեցաւ Հայաստանի համայնավար կուսակցութեան Ա. Քարտուղար վանեցի ազգայնական Աղասի Խանջեան եւ սպաննուեցան կամ աքսորուեցան հարիւրաւոր պետական գործիչներ, մտաւորականներ եւ գրագէտներ, ինչպէս՝ Եղիշէ Չարենց, Ակսել Բակունց, Չապէլ Եսայեան, Գուրգէն Մահարի, Վաղարշակ Նորենց, եւայլն:

Հայ ժողովուրդը, համաշխարհային Բ. պատերազմի ընթացքին սովետական բանակին տուաւ տասնեակներով մարեշալներ, ծովակալներ եւ զօրավարներ: Կրկին Հայատեաց Ստալինի նենգութեամբ, Քերչի պարանոցը գերեզմանը դարձաւ շուրջ 300,000 հայ զինուորներու՝ Կովկասը պաշտպանելով

գերմանական գրաւումէն: Արտասահմանի հայութեան նուիրած հրասայլային Բաղրամեան գորասիւնի եւ «Թումանեան»ի հայկական գորագունդի անհուն գոհաբերութիւններու փոխարէն, «հայր» Ստալին, 1949ին, շուրջ 150,000 մեծ մասամբ հայրենադարձ հայեր, որպէս դաշնակցականներ եւ հակայեղափոխականներ աքսորեց Սիպերիոյ սառնամանիքները, որոնք դատապարտուած էին տաժանակիր աշխատանքով եւ մահուան գնով քաւելու իրենց հայրենասիրութեան «մեղք»ը:

Համայնավարութիւնը իր եօթանասունամեայ տիրապետութեան ընթացքին՝ վախի եւ սարսափի մթնոլորտին մէջ՝ միայն արիւն եւ աւեր տարածած է Հայաստանի մէջ՝ Լենինի կողմէ «կրօնքը աճիոն է» կարգախօսին հետեւանքով, փակուած կամ կործանուած է հայկական հնադարեան վանքերն ու եկեղեցիները եւ մահուան դատապարտուած կամ աքսորուած հայ եկեղեցականները, ջանալով մեռցնել հայ ժողովուրդի կրօնական եւ ազգային զգացումները՝ ստեղծելու համար մարդ-մեքենաներ, որոնք պատրաստ ըլլան դաւաճանելու իրենց ծնողքին, ազգին եւ հայրենիքին: Համայնավար վարչակարգին ներքեւ եւ անոր լայնատարած քարոզչութեան եւ սարսափին հետեւանքով, հայ ժողովուրդի հարազատ նկարագիրը ձեւագերծուեցաւ եւ խաթարուեցաւ եւ որպէս իր պատմութեան եւ անցեալին անտեղեակ հաւաքականութեան յոյսով ապրեցաւ, սպասելով երկրային դրախտի կերտումին՝ կոմունիզմին, որուն հասնելու ճանապարհները գոյութիւն ունենալէ դադրեցան՝ վերջին քանի մը տարիներուն:

Դաշնակցութիւնը ծնունդ առնելով հայ ժողովուրդի ազգային տարերքէն, անոր ազատագրական ձգտումներէն եւ մաքառումներէն, իր գործունէութիւնը տարածած է ելլելով բացառապէս հայ իրականութեան ազգային իրականութիւններէն: Դաշնակցութեան գլխաւոր նպատակն եղած է հայրենիքի ազատութիւնը: Երբ իրաւունքն ու արդարութիւնը կը դիմագրաւէ վայրագութիւնն ու ջարդը, աքսորն ու հալածանքը, Դաշնակցութիւնը չէր կրնար լըռել եւ ձեռնածալ մնալ: Դաշնակցական մամուլը, եօթանասուն տարիներէ ի վեր, միշտ գաղափարական պայքար մղած է Հայաստանին պարտադրուած համայնավար իշխանութեան ազգամուս վարչակարգին դէմ, ինչպէս նաեւ անոր արտասահմանի մանկալաւիկներուն եւ խամաճիկներուն դէմ, միշտ ելլելով հայ ժողովուրդի գերագոյն շահերուն պաշտպանութեան գաղափարէն:

Դաշնակցութիւնը, իր հիմնադրութեան թուականէն սկսեալ, մէկ նպատակ հետապնդած է՝ տէր եւ պաշտպան ըլլալ հայ ժողովուրդի մարդկային եւ ազգային իրաւունքներուն՝ պայքարելով Օսմանեան Թուրքիոյ Կարմիր Սուլթան Համիտի հայաջինջ քաղաքականութեան, ձարական ռուսիոյ հակահայ ծրագիրներուն, հայ ժողովուրդի թշնամի ամէն տեսակ ուժերու, ինչպէս նաեւ Հայաստանին պարտադրուած սովետական բռնակալութեան անմարդկային արարքներու եւ ապագային քաղաքականութեան դէմ:

Հայոց նորագոյն պատմութեան լուսաւոր էջերը կը կազմեն Պանք Օթթօմանի գրաւումը, հայ Ֆետայիներու անձնուէր մարտնչումները, Խանասորի արչաւանքը, Սասնոյ ապստամբութիւնները, հայ-թաթարական կռիւները, առաջին աշխարհամարտին ռուսական բանակներու կողքին կռուող հայկական կամաւորական բանակներու սխրագործութիւնները, այլազգի ճիւղերէն-

րու եւ յատկապէս Եղեռնի պատասխանատու ճիւղներու ահաբեկումները եւ 20րդ դարու նոր Աւարայրը՝ Սարտարապատի ճակատամարտը եւ 28 Մայիս 1918ին ստեղծուած Հայաստանի Հանրապետութիւնը:

Դաշնակցութիւնը ծնած ըլլալով հայ ժողովուրդի տառապեալ ծոցէն եւ ժառանգած ըլլալով Հայկ Նահապետի ազատատենչ ոգին, իր հարիւր տարուան պատմութեան ընթացքին անդադար գործած է եւ իր ամէնէն ընտիր զաւակներուն թանկագին արիւնով օծած հայ ժողովուրդի ազատութեան ճանապարհը՝ սկսելով իր հիմնադիր երրորդութենէն՝ Քրիստոսակերտ Քրիստափորի նահատակութենէն՝ Վիտոշի բարձունքներուն վրայ, երբ կը պատրաստէր Երլարզի ուժերը, առաջնորդուելով Խրիմեան Հայրիկի «երկաթէ շերեփ»ի պատգամէն:

Մեր պաշտելի կուսակցութիւնը, թրծուած 28 տարուան յեղափոխական պայքարներով եւ ինքնապաշտպանութեան մարտնչումով, հայ ժողովուրդի մնացորդացի ազատատենչ եւ անձնուէր զաւակներուն խիզախ եւ հերոսական պայքարին շնորհիւ, 28 Մայիս 1918ին կերտեց Հայրենիք՝ Ազատ եւ Անկախ, իր Եռագոյն դրօշակով, զինանշանով, հինմնով, ազգային բանակով եւ դեսպանատուններով: Հիւանդութեան եւ սովի ճիրաններուն մէջ տառապող բնակչութիւնը դարձուց ազգ եւ դարձաւ բալասանը խոցուած վէրքերուն: Իր քաջարի Ֆէտայիներուն ջանքերով, նորաստեղծ Հայաստանը հայացուց եւ բացաւ մշակութային կեդրոններ եւ համալսարան: Սակայն, ինչպէս վերեւ յիշեցինք, քաղաքական դէպքերու բերումով, որպէս կազմակերպութիւն, 1936ին Հայաստանէն հեռացաւ, բայց մնաց հոն որպէս գաղափար եւ ոգի: Արտերկրի մէջ աչքի լոյսի պէս պահեց ազգային սրբութիւնները՝ ազգային դրօշն ու ազատութեան ոգին՝ սերունդներ դաստիարակելով եւ անոնց փոխանցելով հայրենիքի սէրը, ազգային գիտակցութիւնը, հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներուն, բռնագրուած հայրենի հողերուն տէր եւ պահանջատէր դառնալու կամքն ու կարողութիւնը:

Եւ այդ տեսիլքով ու հայրենասիրութեամբ զինուած սերունդներ հասակ առին, կազմաւորուեցան եւ դարձան հայրենիքի եւ ազգի գերագոյն նպատակներուն համար իրենց կեանքը զոհաբերելու հայորդիներ՝ Լիզպոնի, Պելկրատի, Լոս Անճելլոսի, Օթթաուայի եւ այլ քաղաքներուն մէջ:

Այո, սիրելի՛ դաշնակցական ընկեր, Դաշնակցութեան գաղափարականը եւ ազատութեան ոգին կ'ապրի եւ ահեղ զօրութեամբ զարթնած է նաեւ այս օրերուն Հայրենիքի եւ Արցախի մէջ, հակառակ 70 տարիներէ ի վեր Դաշնակցութիւնը թաղելու բոլշեւիկեան արարողութիւններուն եւ փափաքին, 1988 Փետրուարին, Արցախի լեռներէն հնչող ազատութեան ձայնը, իր մօրը գիրկը վերադառնալու պոռթկումը, առիթ մը եղաւ, որպէսզի հայրենի ժողովուրդը ինքզինք վերագտնէ եւ վերադառնայ իր արմատներուն՝ թօթափելով իր վրայէն բոլշեւիկեան արիւնարբու թաթը: Հայութիւնը ամէնուրեք զօրավիգ կանգնեցաւ Արցախի արդար պահանջքին՝ ցոյցերով եւ հսկայածաւալ հաւաքներով: Սակայն, կեդրոնական կառավարութեան շահախնդրական եւ միակողմանի քաղաքականութեան հետեւանքով, Ատրպէյճանցի թուրքեր քաջալերուեցան Սումգայիթի ոճիրներն ու սպանդը կազմակերպելու՝ խեղդելու համար Արցախի կանչը:

Սակայն, հայու չար բախտին, «Ուրբաթը Շաբաթին առաջ եկաւ» եւ աս-
ուելի երկրաշարժը՝ 7 Դեկտեմբեր 1988ին, Հայաստանի մէկ երրորդը աւերակ
դարձուց եւ խլեց տասնեակ հազարաւոր գոհեր: Վրայ հասաւ նաեւ Պաքուի եւ
Ատրպէյճանի այլ շարժաններու մէջ տեղի ունեցող ջարդերու հետեւանքով
հարիւր հազարաւոր հայ փախստականներու Հայաստան ողողումը եւ Հայաս-
տանի հայութիւնն ու կառավարութիւնը դրին դժուարին կացութեան մը առ-
ջեւ:

Աշխարհ օգնութեան ձեռք երկարեց աղէտահար Հայաստանին: Ար-
տերկրի հայութիւնը իր բոլոր միջոցները զօրաշարժի ենթարկեց թեթեւցնե-
լու համար երկրաշարժի հետեւանքով հարուածի ուժգնութիւնը: Հայաստան
ղրկուեցան բժշկական սարքաւորումներ, դեղեր, հագուստեղէն եւ սննդամը-
թերք, որոնք մեծ մասամբ տեղ չհասան եւ թալանուեցան Մոսկուայի եւ
Ատրպէյճանի մէջ:

Հայաստանի տնտեսական դրութիւնը եւ քանդուած շրջաններու վերա-
շինութեան գործը, Մոսկուայի թելադրութեամբ Ատրպէյճանի կողմէ Հայաս-
տանի ու Արցախի շրջափակումը աւելի վատթարացան եւ այդ կացութիւնը
մինչեւ օրս կը շարունակուի:

Հայաստանի եւ Արցախի տարածքին տեղի ունեցած վերջին երկու
տարուան դէպքերը, եկան հայոց պատմութեան թատերաբեմէն հանելու 70
տարուան հատուած մը եւ հայ ժողովուրդը դնելու դարասկիզբի իրավիճակի
առջեւ: Կրկին թրքական խուժանը, պատրաստ յօշոտելու հայը, կրկին ռուսա-
կան հին քաղաքականութիւնը՝ պատրաստ գոհելու Հայ Դատը իր շահերուն եւ
ծրագիրներուն համար:

Հայաստանի քաղաքական խառն ու անստոյգ կացութեան կը գուգադի-
պի Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան պանծալի 100-ամեակը եւ հրաշալի
գուգադիպութեամբ, Հ.Յ. Դաշնակցութեան Բիւրոն իր 8 Օգոստոս 1990 թուա-
կիր յայտագրով կը բացայայտէ Դաշնակցութեան կազմակերպական ներկա-
յութիւնը Հայաստանի մէջ՝ գիտակցօրէն ստանձնելով իրեն վիճակուած առա-
քելութիւնը:

23 Օգոստոս 1990ին, Հայաստանի նորընտիր խորհրդարանին կողմէ հը-
րատարակուած «Հռչակագիր՝ Հայաստանի Անկախութեան Մասին» յայտարա-
րութեան սկզբունքներով, 24 Օգոստոսին, Հայկական Խորհրդային Սոցիալիս-
տական Հանրապետութիւնը «Հայաստանի Հանրապետութիւն» վերածուիլը եւ
Հայաստանի Հանրապետութեան պետական դրօշը՝ կարմիր, կապոյտ, նարնջա-
գոյն ընդունուիլը եւ պետական գինանշանի եւ հիմնի մրցոյթի ստեղծման ո-
րոշումները, համայնավար միահեծան կուսակցութեան տիրապետութեան
վերջ դրուիլը, մեր տեսիլքէն եւ ազգային դիմագիծէն որոշ հայադրոշմ նկա-
րագիր սրսկեցին, սակայն, տակաւին երկար ճանապարհ ունինք կտրելու, հաս-
նելու համար մեր վերջնական նպատակին՝ հաւաքական «Հայրենիք, հաւաքա-
կան հայութեամբ» իրականութեան:

Հայ Դատը շահիլը մեծ ու դժուարին գործ է, կը պահանջէ անխոնջ եւ
յարատեւ պայքար, եւ ատոր պէտք է նախապատրաստուիլ խելացի եւ ամէնա-
կարեւորը՝ միասնական ուժերով: Պատմութեան ընթացքը աննախատեսելի է:
Քանի մը տարիներ առաջ ո՞վ կրնար գուշակել, որ Արեւելեան Եւրոպայի եր-

կիրնները կրնան թօթափել համայնավար վարդապետութեան կապանքները եւ վերատիրանալ իրենց ազգային ինքնուրոյնութեան եւ անկախութեան: Հինգ տարի առաջ ո՞վ կրնար երեւակայել, որ Խորհրդային Միութիւն կոչուած կայսրութիւնը քայքայուելու սեմին կրնայ հասնիլ եւ Արեւմտեան պետութիւններէն, Համաշխարհային Բ. պատերազմին պարտուած Գերմանիայէն տնտեսական օգնութիւն հայցել: Մենք պէտք է մէկ մարդու պէս ազգովին պատրաստ ըլլանք պատմութեան նպաստաւոր ամէն մէկ առիթէն օգտուելու, Հայ Դատի լուծումին հասնելու համար:

Հայ ժողովուրդը ամէնէն առաջ պէտք է ձերբազատուի ուրիշի օգնութեամբ ազատագրուելու եւ բռնազրուած հողերուն տիրանալու ամուլ մը տայնութենէն, միամտաբար խաբուելով «բարեկամ» պետութիւններէն, այլ՝ միայն հաւատայ եւ վստահի իր ուժերուն: Մեր մեծանուն ընկեր գրագէտ Լեւոն Շանթ կ'ըսէ. «Ժողովուրդները իրենց անկախութեան ձգտելուն համար չէ որ կը մեռնին: Շատ աւելի ճիշդ է հակառակը: Կը մեռնին ապրելու կամքն ու վճռակամութիւնը չունենալուն համար: Եթէ հայութիւնը դիմացեր է այսքան դարեր, իր դիմադրութեամբ է դիմացեր. դիմադրելով, որ չկլանուի, դիմադրելով, որ ազատուի: Կամքը ուժ է, մեծ ուժ, շատ աւելի մեծ ուժ, քան սովորաբար կը կարծուի: Միւրեք մեր կամքերը բոլոր միջոցներով, ադիկա է այն միակ զէնքը, որ իրապէս կը պաշտպանէ մեզի մահէն, ադիկա է այն միակ սուր զէնքը, որ մեր բարձրացման ու մեր զարգացման առջեւ ճամբայ կը բանայ»:

Իբրեւ աներկբայ ապացոյց, հոս բաւական է յիշել պատմական այն իրողութիւնը, որ ազգային պետականութենէն շատոնց զրկուած շատ ազգեր ու ժողովուրդներ անհետացած են երկրագունդի երեսէն ու դարձած թանգարանային սեփականութիւն, որոնց անուններուն կը հանդիպինք պատմութեան գիրքերուն մէջ միայն:

Այսօր, դաշնակցական ընկե՛ր, Հայրենիքը կ'ապրի ճգնաժամային օրերու մէջ: Արցախը կը հեծծէ Ատրպէյճանցի հրոսակներուն, աւազակներուն եւ Խորհրդային ներքին գործոց նախարարութեան զօրքերուն յարձակումներուն ու ճնշումներուն հետեւանքով: Գետաչէնի եւ Շահումեանի շրջանները եւ յատկապէս Բերդաճոր եւ գիւղերը քաջաբար կը դիմադրեն՝ մղելով ինքնապաշտպանութեան կռիւներ: Հայաստանի եւ Արցախի պաշտպանութեան համար զէնքը գրկած են նոր Ֆետայիներ, որոնք ինչպէս մեր դաշնակցական հերոսածին Ֆետայիները, երզում ըրած են.- «Այսուհետեւ իմ բարձր Հայաստանի լեռները կ'ըլլան եւ իմ ամէնամեծ բաղձանքը՝ Հայրենիքի համար մեռնիլը» եւ կ'երգեն.-

Ահա կ'երթամ սիրելի մայր, ազգիս համար մեռնելու,
Քաջ ընկերներով միասին բռնութիւնը ջնջելու.
Մի լար մայր իմ, մ'ողբար մայր իմ, վերադարձիս սպաստ,
Ազգիս հայոց ազատութեան տիւ եւ գիշեր աղօթ...:

Կա՛ս նաեւ դուն, դաշնակցական ընկե՛ր, ականջալուր Հ.Յ. Դաշնակցութեան 24րդ Ընդհանուր ժողովի «Դէպի Երկիր» պատգամին, ինչպէս միշտ, այսօր եւս իւրաքանչիւր օրդ հատնում է եւ իւրաքանչիւր վայրկեանդ՝ զոհաբե-

րում եւ տառապանք, որովհետեւ կ'ապրիս ցեղիդ համար, կը շնչես ցեղիդ համար եւ կ'երագես մեռնիլ ցեղիդ համար:

Դո՛ւն անխախտ ես քու հաւատամքիդ մէջ, որովհետեւ քաջ գիտես, թէ ցեղդ անմահ է եւ դուն վերջին պահակն ես դժբախտ ազգիդ: Դուն գիտես, թէ երէցներդ, պարծանքը հայ ժողովուրդին ու ազնուագոյն շռուաւիղը հերոս նախնիքներուդ, իրենց նախնական զէնքերով Սուլթաններ սարսեցին իրենց արիւնոտ գահերուն վրայ եւ ստրկացած հայ մարդը արժանաւոր եւ գիտակից տիպարիդ վերածեցին:

Նոր Տարի է դաշնակցական ընկե՛ր: Ու Նոր Տարուան առաջին գիշերը դուն ալ գլուխդ դիր բարձիդ եւ ականջ տուր սրտիդ ձայնին: Անուշ եւ տարտամ մեղեդիի պէս քեզի օրօր պիտի ըսեն բոլոր նահատակներդ ու հերոսներդ: Պիտի լսես ձայնը Ռոստոմին, Քրիստափորին, Ջաւարեանին, ձայնը Աղբիւր Սերոբին, Գէորդ Չաւուշին, Գալէին, Անդրանիկին եւ Նժդեհին, Դրոյին եւ Արամ Մանուկեանին, ձայնը՝ տարաբախտ Վարուժանին, Սիամանթոյին, Սեւակին, Ջարդարեանին եւ Խաժակին: Անոնց ձայնը պիտի լսես անապատներէն, Սասնայ լեռներէն, Ջանգեղուրէն, զնտաններէն, Սարտարապատէն եւ Սիւպերիոյ սառնամանիքներէն:

Ինչքան հարուստ է անցեալդ, ինչպէ՛ս առոյգ է հոգիդ, ինչպէ՛ս ամուր է կամքդ: Ո՞վ ունի հերոսներուդ խիզախութիւնը, նահատակներուդ վեհութիւնը, խոյանքիդ թափը, հաւատքիդ ուժը, սրտիդ մեծութիւնը, դաշնակցական ընկե՛ր, ազատութեան աշտարակ եւ հաւատքի միջնաբերդ, գաճաճներու մէջ հսկայ եւ փերեզակներու մէջ վեհաշուք մեծատուն:

Արարատը մեզ կը կանչէ, յառա՛ջ...

«Հայրենեաց պաշտպան վե՛հ Դաշնակցութիւն»:

«ԵՍ ՏԵՍԱՅ ԸՆԿ. ԴՐՈՆ»

Անցնել է առաջ ինծի տրուած հարցումի պատասխանին՝ դաշնակցականի կեանքիս մէջ ամէնէն տպաւորիչ պահը նկարագրելու, կ'ուզեմ փակագիծ մը բանալ եւ ընդգծել հետեւեալ իրականութիւնները, որոնք կը վերաբերին ինծի, եւ ինչու չէ, նաեւ ինծի պէս բազմաթիւ ընկերներու:

Ծնած եմ հայ՝ հայ ծնողքէ, անգիտակցաբար, առանց նախասիրութեան՝ ինչպէս բոլոր հայ երախաները: Մեծցած եմ եւ դաստիարակուած հայաշունչ մթնոլորտի մէջ, միշտ ունենալով ու ապրելով հայ ծնած ըլլալու վսեմ հպարտանքը:

Սակայն, իմ պարագայիս, հայ ծնելով հանդերձ, ծնած եմ նաեւ դաշնակցական, այդպէս ժառանգական օրէնքներով: Տակաւին երախայ, հայ-քրիստոնեայ մկրտուելէ ետք, օրօրոցին մէջ, թանկագին մօրս անարատ կաթը ծրծած շրջանիս, աչքերս սեւեռած եմ լեռնցի հօրս հայրենակիցներուն եւ ազգականներուն՝ սասունցի խիզախ ու անվեհեր Ֆեդայիներու տպաւորիչ նկարներուն, որոնք կը զարդարէին Հալէպի Սիւլէյմանիէ թաղամասի հայկական հիւղաւաններու մէջ գտնուող մեր տան տախտակեայ պատերը: Եւ այդ նկարները, որպէս հօրս սրտին անբաժան մասերը, մեզի հետ կը փոխադրուէին տունէ-տուն եւ քաղաքէ-քաղաք, անուցանելով մեզ՝ փոքրերս, յեղափոխական գաղափարներով եւ զգացումներով:

Հայրս ծնած ըլլալով Սասնոյ Ապաղանք նշանաւոր գիւղին մէջ, իր մանկութեան ակնատես եղած է Սասնոյ ապստամբութեան, ինքնապաշտպանութեան կռիւներուն եւ ապրած՝ ակնաւոր հայ Ֆեդայիներու՝ Անդրանիկի, Գէորգ Չաւուշի, Սպաղանցի Մակարի եւ Գալէի շունչին տակ՝ մեզի կը պատմէր ու կը նկարագրէր անոնց կեանքն ու պայքարը, անհաւասար կռիւները՝ քրտական կարգ մը ցեղախումբերուն եւ թրքական կանոնաւոր բանակներուն դէմ, յանուն հայ ժողովուրդի պատիւին, արժանապատուութեան եւ ազատութեան, աւելցնելով նաեւ, որ ինքնապաշտպանութեան այս շարժումները կը ղեկավարուէին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կողմէ, որ հրապարակ իջած էր ստրկացուած հայուն վերադարձնելու իր մարտունակութիւնն ու մարդկային իրաւունքները:

Արիւնիս ճամբով ժառանգած եւ հօրս կողմէ կենդանացած դաշնակցականի ոգին սկսած էր կազմաւորուել: Հազիւ թեւակոխած Հ.Յ.Դ. Պատանեկան Միութեան անդամագրուելու տարիքը, արդէն հոն էի, շարքերուն մէջ, պատրաստ դաստիարակուելու եւ գործօն ներկայութիւն դառնալու՝ Սփիւռքի մէջ ծնած առաջին սերունդի քաղաքականացման աշխատանքներուն մէջ:

Դաշնակցական ըլլալու հպարտութիւնը ունեցած եմ միշտ, ամէն օր, որովհետեւ, հայ ժողովուրդի արիւնէն ծնած Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, 1890 թուականէն մինչեւ այսօր, 97 տարիներու ընթացքին հետապնդած է մէկ նպատակ՝ ազգակերտում, ազատութիւն եւ անկախութիւն, տալով հազարաւոր նահատակներ այդ նպատակի իրականացման ճանապարհին:

Դաշնակցութիւնը եղաւ այն ոյժը, որ Եղեռնով ջարդուած հայ ժողովուրդի մնացորդացին տոկալու, ապրելու եւ կռուելու կամք ներշնչեց եւ ա-

հեղ գոյամարտով Մարդարապատի հրաշքը կերտեց: Վեց դարերու ստրկութեան շղթաները փշուռեցան 28 Մայիս 1918ին: Հայաստանի անկախութեան հռչակումով եւ այսօրուան Խորհրդային Հայաստանի գոյութիւնը եւ հայ ժողովուրդի բարգաւաճումը կը պարտինք Դաշնակցութեան:

Դաշնակցութիւնը կուսակցական գաղափարաբանութիւն մը չէ միայն, այլ հաւատք՝ հայութեան ապագային հանդէպ: Մարդկային եւ ազգային ընդոճին տենչերուն, իտէալներուն եւ ձգտումներուն արտայայտիչն ու խորհրդանիշն է ան, Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան ստեղծելու ոյժը եւ կարողութիւնը:

Եւ այն բոլոր հայերը, որոնք իրենց հոգիին մէջ կը կրեն ազգային գիտակցութեան զգացումը եւ հպարտ են իրենց ազգային պատկանելութեամբ, ինքնաբերաբար դաշնակցական ծնած են: Քանի որ Դաշնակցութիւնը ծնունդ առած է Վահագնեան շունչով, ժառանգելով Հայկ Նահապետի եւ Սասունցի Դաւթի ազատատենչ ոգին, կրանիթեայ կամքը եւ մարտունակութիւնը:

Որպէս քառասունհինգ տարուան դաշնակցական պատանի եւ երդուեալ շարքային, տպաւորիչ պահեր, անխառն յուզումներ եւ ապրումներ շատ ունեցած եմ բնակած եւ այցելած երկիրներու մէջ՝ Սուրիա, Լիբանան, Գանատա եւ Մ. Նահանգներ, սակայն կարելի է ըսել ամէնէն տպաւորիչ պահը անջնջելի մնացած է յիշատակներու պաստառին վրայ, եւ որպէս համեստ շարքային դաշնակցական, զգացած եմ հպարտութիւնը դաշնակցական ընտանիքին մաս կազմած ըլլալու:

Անոնցմէ մէկն է զօրավար Դրօ Կանայեանի Հալէպ այցելութիւնը 1948ին, որ այնքան տպաւորած է զիս, պարտադրելով յիշատակութիւն մը ձրգել յուշատետրիս մէջ՝ օրուան ազդեցութեան լոյսին տակ՝ հետեւեալ վերնագրին տակ. «Ես տեսայ ընկեր Դրօն»: Անկէ կը քաղեմ հետեւեալը.

Ուրբաթ, 29 Մայիս 1948ին, Նոր Գիւղի «Ձաւարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան 30րդ տարեդարձը՝ նախագահութեամբ զօրավար Դրօ Կանայեանի:

Բազմահազար հայորդիներ, ժամեր առաջ տեղ գրաւած էին սրահին, յարակից սենեակներուն, բակին եւ փողոցին մէջ, անձամբ տեսնելու եւ լսելու հայ ժողովուրդի մեծ զաւակը՝ Հայաստանի կերտիչներէն զօրավար Դրօն:

Ժողովուրդին ոգեւորութիւնը աննախընթաց էր: Բազմահազար ժողովուրդի ներկայութիւնը եկաւ փաստելու, որ հայ ժողովուրդը խոր գիտակցութիւն եւ հաւատք ունի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հանդէպ եւ գիտէ գնահատել անոր ղեկավարութիւնը եւ ազգակերտ գործունէութիւնը:

Ընկեր Դրօն խելացի եւ հեզ մարդու տպաւորութիւն թողուց վրաս: Իր խորիմաստ եւ հիւմիւրով համեմուած խօսքերը կը հմայէին ունկնդիրները: Արդէն, առաջին իսկ նայուածքով, կախարդած էր զիս: Իրաւ հայրենասէր մը տեսած ըլլալու գոհունակութիւնը երանութիւն կու տար հոգիիս: Իրաւ հայրենասէր մը, որ պատանի տարիքէն իր կեանքը նուիրած է հայրենիքի ազատութեան ու անկախութեան գաղափարին: Իր կատարած ահաբեկչութիւնները, Կովկասի մէջ՝ ընդդէմ հայ ժողովուրդի ոխերիմ թշնամիներուն, կը մնան պատուաբեր արարքներ՝ հայութեան իրաւունքներուն պաշտպանութեան պատմութեան մէջ:

Զօրավար Դրոն իր հոյակապ ճառով անդրադարձաւ Սարգարապատի, Ղարաքիլիսայի եւ Բաշ-Ապարանի ճակատագրական ճակատամարտերուն, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակման, պետականութեան կազմակերպման, Հայաստանի հայացման, հասնելով մինչեւ խորհրդայնացում, իր եւ Լրգրանի միջեւ կնքուած դաշնագրին, որուն հիման վրայ կառավարութիւնը կը փոխանցուէր խորհրդային իշխանութեան: Սակայն, ինչպէս ծանօթ է, դաշնագրի բովանդակութիւնը խախտուեցաւ, եւ ստեղծուեցաւ անտեղի կացութիւն: Սոյն կացութեան ակնարկելով ընկ. Դրոն ըսաւ. «Ես կրնայի սովետական զօրքերը արեան մէջ խեղդել, որովհետեւ բանակը դեռ իմ ձեռքն էր, բայց ես հայրենիքի սիրոյն չըրի այդ արարքը եւ հեռացայ Հայաստանէն դէպի Մոսկուա, ապա՝ Եւրոպա»:

Ահաւաստիկ երկու խտացեալ նախադասութիւններ, որոնց մէջէն կը ճանապարհէ Հ.Յ. Դաշնակցութեան հայրենասիրութեան չափն ու սահմանը, որ վերլուծման չի կարօտիր:

Այդ գիշեր, երկար մտածեցի Դրոյի ճառին մասին: Հայրենասիրական զգացումներ եւ յուզումներ պաշարած էին էութիւնս: Հպարտ էի, որ ես ալ մաս կը կազմեմ անձնագոհ ու հերոսական այն փաղանգին, որոնք իրենց գաղափարական եւ կուսակցական երզումով կը խոստանան հաւատարիմ մնալ կուսակցութեան Ծրագիր-Կանոնագրին եւ ի պահանջել հարկին, իրենց կեանքին գնով պաշտպանել հայրենիքը եւ հայ ժողովուրդի արդար իրաւունքները:

Զօրավար Դրօ Կանայեանի եւ գնդապետ Տիգրան Պաղտասարեանի Հալէպ այցելութիւնը 1948 թուականին, դաշնակցականի կեանքիս առաջին տասնամեակին, մեծապէս տպաւորած է զիս, որուն արձագանգը տակաւին զիս կը ցնցէ՝ 40 տարուան հեռաւորութեան մը ընդմէջէն:

«ՅՈՐԻՉՈՆ»
30 Նոյեմբեր 1987

ԴՐՈՅԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ազգային մեծ հերոս եւ դաշնակցական ղեկավար մրրկածին Դրոն, երկրորդ անգամ Հալէպ այցելեց 1951ին եւ Հալէպի քաղաքապետարանի դաշտին վրայ կատարուող Հ.Մ.Լ.Մ.ի Միջ-Մասնաճիւղային մրցումներուն ներկայ գտնուեցաւ Հալէպի Առաջնորդ Գերաշնորհ Զարեհ Ս. Արք. Փայասլեանի կողքին:

Երբեք կարելի չէ մոռնալ 1954ին Հալէպի այցելութիւնը, ուր կրկին Հ.Մ.Լ.Մ.ի Միջ-Մասնաճիւղային մրցումներուն ներկայ գտնուեցաւ գնդապետ Տիգրան Պաղտասարեանին հետ, Նաւասարդեան դաշտին վրայ:

Զօրավար Դրօ Կանայեան մահացաւ 8 Մարտ 1956ին եւ պատշաճ յարգանքով թաղուեցաւ Պոսթընի Mt. Auburn գերեզմանատան մէջ:

Խորապէս զգացուած իմ պաշտելի հերոսին մահէն, հետեւեալ քերթըւածը գրեցի, որ տպուեցաւ Գրիգոր Վարդգէս ստորագրութեամբ Հալէպի «Արեւելք» օրաթերթին մէջ.

ԶՕՐ. ԴՐՕ ԿԱՆԱՅԵԱՆ (Մահուան առթիւ)

Ո՛չ եւս է... հայ ժողովուրդի մեծ զաւակը տիտանեան,
Հերոսական խոյանքներու դիւցազունը թորգոմեան,
Հայ լեռներու վէս Արծիւը՝ թռիչքներով անահման,
Դաշնակցութեան վրիժառու հօգի ծեռքը անխափան,
Կերտիչն ահեղ Բաշ Ապարանի պատերազմի յաղթութեան,
Անմահ մարտիկ հերոսածին՝ Ընկեր Դրօ Կանայեան:

Սեր պատմութեան ճգնաժամին հրապարակ դուն իջար,
Որպէս լուսաստղ ճաճանչաւոր, որպէս պաշտպան հրեշտակ,
Նեմեսիսէն առած հուրը վրիժառու գնդակիր,
Ամենազգեան դաւաճաններ դուն մաքրեցիր անհամար,
Դո՛ւն առաքեալ Դաշնակցութեան, որպէս մարտիկ անխորտակ,
Գացիր մեզմէ անդարծօրէն դեռ չհասած երագիր:

Դո՛ւն որ կեանքդ անզուգական նուիրեցիր հայութեան,
Ու կերտեցիր հերոսական փառքը մեր նոր պատմութեան,
Զգայագիրկ՝ գիշերային հոգեվարքիդ մէջ դաժան՝
Երբ աչքերդ կը փակէիր վերջին անգամ՝ յաւիտեան,
Տեսա՞ր արդեօք հայրենական Արարատը անմման,
Եւ Արաքը լացակումաց երգե՞ց մահերգ մայրական:

Ինչպէս ասուպ մը լուսավառ գացիր մեզմէ ո՛վ անդարծ,
Հանգչեցնելու յոգնած մարմինդ կռիւներէն անհամար,
Թողած դիակդ օտար ափեր, ընկերներու խնամքին,
Սակայն հոգիդ հայրենաբաղձ,- վստահ գիտեմ,- վերամբարձ
Հայաստանի երկնքին մէջ կը սաւառնի անդադար,
Մինչեւ հասնի կատարունը չիրագործուած փափաքին:

Գացիր մեզմէ անդարծօրէն, ձգելով մեզ սգաւոր,
Ես կը տեսնեմ դէմքեր տարտամ, դէմքեր յուզուած ամէնուր,
Բայց լա՛ւ գիտցիր՝ յիշատակդ ու անունդ անթառամ,

Սենք կը պահենք զուրգուրանքով որպէս ծաղիկ մը բուրեան,
Եւ անվարան կը հետեւինք կեանքիդ ճամբուն առնական,
Մինչեւ հանգչին ոսկորներդ Պանթոնին մէջ հայկական:

«ԱՐԵՒԵԼ»
28 Ապրիլ 1956
Յալէպ

Այնուհետեւ տարիները թաւայեցան, 1975ին Գանատա հաստատուեցանք: Որպէս Համազգային Մշակութային Միութեան ծառայած անդամ, մաս կազմեցի Թորոնթոյի Համազգայինի մասնաճիւղին:

1988ին, որպէս Համազգային Գանատայի Շրջանային Վարչութեան փոխ-ատենապետ ներկայ գտնուեցայ Պոսթընի մէջ տեղի ունեցող Համազգային Մշակութային Միութեան 13րդ համախմբումին եւ յարգելու վաստակը Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային միութեան 60-ամեայ կրթական եւ մշակութային վաստակը՝ 7, 8, 9 Հոկտեմբեր 1988ին:

Համախմբումին մշակութային զանազան ձեռնարկներու կողքին, գործադիր յանձնախումբը, ծրագրած էր այց՝ զօրավար Դրոյի Շիրիմին, ուխտագրնացութիւն հերոսի ապրող ու կենդանի շունչը փոխանցելու մեր մատղաշ սերունդին, այն հերոսին, որ տասնամեակներ շարունակ թեւ ու թիկունք կանգնեցաւ Համազգայինին, ոգի ներշնչեց եւ սերունդներ ամբողջ պատրաստեց, նոր հորիզոններու հեռանկարով:

Յուզիչ էր տեսարանը: Թափօրը Պոսթընի Հ.Մ.Ը.Մ-ի սկառտներու, արենոյշներու եւ փողերախումբի առաջնորդութեամբ ուղղուեցաւ Մաունթ Օպըրնի գերեզմանատուն, Դրոյի շիրիմին առջեւ հաւաքաբար եւ երկիւղածութեամբ նոր ուխտ մը կատարելու: Եկեղեցական արարողութիւններէ ետք, օրւան պատգամը տուին գրագէտ Պօղոս Սնապեան եւ Գրիգոր Հոթոյեան, Կիրակի, 9 Հոկտեմբեր 1988ին, հո՞՞ բազմութեան ներկայութեամբ:

Հապճեպով պատրաստուած խօսքս.

«Հոս, այս շիրիմին տակ կը հանգչի 20րդ դարու հայոց պատմութեան կերտումին մասնակից անձերէն մէկը, որ կը կոչուի Դրաստամարդ Կանայեան, զօրավար Դրոն, որուն կեանքը ամբողջութեամբ նուիրում մը եղաւ հայ ժողովուրդին:

«Ան իր պատանի տարիքէն մինչեւ իր մահը, հետապնդեց մէկ նպատակ՝ վերադարձնել հայ ժողովուրդին իր պատիւը, իր արժանապատուութիւնը, իր մարտունակութիւնը եւ հայկեան ոգին:

«Որպէս անձնագոհ Ֆետայի, յեղափոխական, ահաբեկիչ, զօրավար եւ կուսակցական ղեկավար, երբեք հանգիստ չտեսաւ, մոմի պէս հալեցաւ, լուսաւորելով իր շուրջը եւ օրինակ հանդիսանալով անտարբերներուն:

«Ան իր հերոսական արարքներով եւ ոսկի տառերով արձանագրուած կը մնայ հայոց պատմութեան, յատկապէս ազատատենչ հայութեան արտայայտիչ կազմակերպութեան՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութեան մէջ:

«Դժուար է հոս թուել իր հերոսական սխրագործութիւնները մանրամասնօրէն, սակայն չենք կրնար չյիշել իր ճակատագրական դերը՝ հայ ժողովուրդի լինելու եւ չլինելու ճգնաժամային օրերուն, 1918ի Սարգարապատի ճակատումի օրերուն, Բաշ-Ապարանի ճակատամարտի ղեկավարութիւնը, ուր յաղթեց հայ ժողովուրդի դահիճներուն եւ եղաւ կերտիչներէն Հայաստանի Հանրապետութեան:

«Չենք կրնար չյիշել իր ստանձնած դերը՝ Հայաստանի Հանրապետութեան համայնավարներուն փոխանցման ընթացքին կատարուած բանակցութիւններուն ընթացքին:

«Չենք կրնար չյիշել Երկրորդ Համաշխարհային Պատերազմի արհաւիրքի օրերուն գերմանական տիրապետութեան ենթակայ երկիրներուն մէջ կայք հաստատած հայ զանգուածներու ապահովութեան համար:

«Աստ կը հանգչի անձ մը, որուն մահը կը նմանի ցորենի այն հատիկին, որ մեռնելով հողին մէջ, ցորենի բազմաթիւ հատիկներու ծնունդ կու տայ:

«Հոս կ'ուզեմ ձեզի կարգալ, իր մահուան առթիւ իմ գրած քերթուածին վերջին համարը.-

Գացիր մեզմէ անդարծօրէն, ձգելով մեզ սգաւոր,
Ես կը տեսնեմ դէմքեր տարտամ, դէմքեր յուզուած ամէնուր,
Բայց լա՛ւ գիտցիր՝ յիշատակդ ու անունդ անթառամ,
Մենք կը պահենք գուրգուրանքով որպէս ծաղիկ մը բուրեան,
Եւ անվարան կը հետեւինք կեանքիդ ճամբուն առնական,
Մինչեւ հանգչին ոսկորներդ Պանթոնին մէջ հայկական:

«Եւ ինչպէս կը տեսնէք, Համազգայինի գինուորագրեալները՝ հայ մշակոյթի պահապանները, մշակութային համախմբումի ԺԳ. այս օրերուն, չեն մոռնար ազգային հերոս Զօր. Դրոն եւ եկած ենք մեր յարգանքը եւ սէրը յայտնելու անոր շիրիմին, այն խոր հաւատքով, որ մենք եւ մեզմէ ետք եկող սերունդները երբե՛ք պիտի չմոռնանք հայ ժողովուրդին ծառայած գինուորական, քաղաքական եւ մշակութային հերոսները եւ անոնց յիշատակը եւ անունը միշտ անթառամ պիտի մնան մեր հոգիներուն մէջ:

«Սիրելի ընկեր Դրօ,

«Համազգայինի Ծրջանային գոյգ վարչութիւններուն եւ բոլոր մասնաճիւղերուն անունով կու գանք մեր սէրն ու հաւատարմութիւնը յայտնելու քու իտէալիդ եւ գաղափարաբանութեանդ եւ հետեւելու քու անձնագորհ կեանքի ճանապարհին:

«Յարգանք Քեզ»:

*
* *

Ինծի համար մեծ ուրախութիւն պատճառեց Հայաստանի կառավարութեան եւ զօրավար Դրոյի հարազատներուն միջեւ կնքուած համաձայնութիւնը, Ազգային Հերոսի անունները Հայաստան փոխադրելու համար: Սոյն հա-

մաճաչնութեան գործադրութեան համար կազմուեցաւ յատուկ յանձնախումբ մը, նիւթական միջոցներ գոյացնելու եւ ծրագիրը իրագործելու համար:

**«ՀՈՐԻՉՈՆ»
1988**



Դրոյի գերեզմանին Համազգայինի անդամներուն այցելութեան ընթացքին խօսք կ'անուէ Գրիգոր Յոթոյեան, 9 Յոկտեմբեր 1988, Պոսթըն

ԶՕՐԱՎԱՐ ԴՐՈՅԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան Գանատայի Դեսպանութեան եւ կազմակերպութեամբ Զօրավար Դրոյի անուան կառավարման բարձրագոյն հիմնարկի հաստատման Թորոնթոյի Յանձնախումբին, Զօրավար Դրաստամարտ Կանայեանի (Դրօ) աճիւններու Հայաստան փոխադրութեան եւ իր անուան կառավարական բարձրագոյն հիմնարկի հաստատման առթիւ ժողովրդային հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 2 Ապրիլ 2000, երեկոյեան ժամը 7:30ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ, որուն ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ հովիւ Գերապատիւ Տէր Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերարքեւի Հայր եղիա Մ. Վրդ. Գիրէշեան, Քեմպրիճի Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւ Վերապատուելի Յովհաննէս Սարմազեան, Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան հաւատարմատար յարգարժան Վալերի Մկրտումեան եւ տիկինը, Ամերիկայի Մ. Նահանգներու մօտ Հայաստանի զինուորական կցորդ եւ ՆԱԹՕի ներկայացուցիչ Գնդապետ Հայկ Քոթանջեան, Զօրավար Դրոյի գաւակը՝ Պրն. Մարտիրոս Կանայեան, տիկինը եւ գաւակը՝ Դրօ Կանայեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ ընկեր ՎՐԷԺ Գասամանեան, Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի հերթապահ ընկեր Մհեր Առաքելեան, պաշտօնական այլ հիւրեր եւ շուրջ 800 ազգայիններ:

Պաշտօնական հիւրերը սրահ մուտք գործեցին բարեւի կեցած Հ.Մ.Ը. Մ.ի սկառտական կազմերու շարքերուն ընդմէջէն: Հ.Մ.Ը.Մ.ի նուազախումբին կողմէ նուագուած Գանատական եւ Հայկական օրհներգներէն եւ երեք ըսկառտներու կողմէ Հայաստանի, Արցախի եւ Գանատայի դրօշներու բեմին վրայ հաստատուելէն ետք, բացման խօսքով հանդէս եկաւ օրուան հանդիսավար ընկեր Ռաֆֆի Տէր Պօղոսեան:

Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի «Կռունկ» երգչախումբը, ղեկավարութեամբ երաժշտութեան ուսուցչուհի տիկին Անահիտ Կռտսուզեանի եւ դաշնամուրով ընկերակցութեամբ Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի շրջանաւարտներէն պատանի Խաթակ Պօղոսեանի հանդէս եկան երեք երգով՝ «Ձայն Տուր Ով Ֆետա», «Պատերազմ Ենք Գնում», եւ «Դրոյի Յիշատակին» երգերով:

Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի խօսքը ըրաւ հերթապահ ընկեր Մհեր Առաքելեան եւ կոմիտէի կողմէ շնորհաւորելէ ետք ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբը, իր խօսքին մէջ կարեւորութեամբ ընդգծեց զօրավար Դրոյի անսահման ծառայութիւնը հայ ժողովուրդի ազատութեան եւ անկախութեան ճանապարհին: Թորոնթոյի ծանօթ երգիչ Գրիգոր Ճանկէօզեան, դաշնամուրով ընկերակցութեամբ օրդ. Հիլտա Գանտահարեանի, երգեց «Իմ Հայաստան» եւ «Արփա-Սեւան» երգերը:

Հայաստանի Դեսպանութեան կողմէ խօսք առաւ հաւատարմատար յարգարժան Վալերի Մկրտումեան եւ Դրոյի անձնուէր կեանքին անդրադառնալէ ետք, կարեւորութեամբ շեշտեց Դրոյի անուան Հայաստանի մէջ հիմնը:

ւելիք կառավարական բարձրագոյն հիմնարկի ստեղծման համար առնուած որոշումը:

«Արմենիա» պարախումբը, ղեկավարութեամբ պարուսոյց տիկին Արփի Մերասի հանդէս եկաւ հայկական կարգ մը պարերով:

Հանդիսավար ընկեր Ռաֆֆի Տէր Պօղոսեան կարգաց Ուաշինկթընի մօտ Հայաստանի դեսպան վսեմաշուք Արման Կիրակոսեանի շնորհաւորական գիրը, Թորոնթոյի մէջ տեղի ունեցող ժողովրդային հանդիսութեան առիթով: Զօրավար Դրոյի կեանքին նուիրուած լուսապատկերներով ցուցադրութիւն տեղի ունեցաւ պատրաստութեամբ ընկեր Յակոբ Չագմագեանի եւ ընկեր Մուշեղ Գարագաշեանի, որ սքանչելի առողանութեամբ, արտայայտչական ոճով եւ լողունգներով հետեւեցաւ ցուցադրուած պատկերներուն:

Օրուան բանախօսն էր Ուաշինկթընէն յատկապէս հրաւիրուած Մ. Նասանգներու մօտ Հայաստանի Հանրապետութեան գինուորական կցորդ եւ ՆԱԹՕի ներկայացուցիչ, Ռուսաստանեան Ռազմական Գիտութիւններու ակադեմիայի իսկական անդամ, քաղաքական գիտութիւններու դոկտոր-փրոֆեսոր Գնդապետ Հայկ Քոթանճեան, որ իր խօսքով անդրադարձաւ Հայաստանի գինուորական կարողութիւններու, նորագոյն գիտութեամբ հայկական բանակը օժտելու կարեւորութեան, Հայաստանի թշնամի երկիրներու հնարաւորութիւններու եւ գինուորական այլ հարցերու մասին, ապա, շեշտը դրաւ ղեկավարման բարձրագոյն հիմնարկի անհրաժեշտութեան, կարող եւ արդիական գիտութեամբ օժտուած ռազմաքաղաքական ղեկավարութիւն պատրաստելու համար, որուն տրուած է հայ ժողովուրդի մեծ գաւակ, Բաշ-Ապարանի յաղթական հերոս Զօրավար Դրօ Կանայեանի անունը:

Այնուհետեւ, «Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագրի պատասխանատու Սուրէն Զէքիճեանի կողմէ պատրաստուած պատկերիզի ցուցադրութիւն մը տեղի ունեցաւ:

Խօսք առաւ նաեւ հերոս Դրոյի որդին Մարտիկ Կանայեան: Ան յիշեց իր հանդիպումը Հայաստանի նահատակուած Վարչապետ Վազգէն Սարգիսեանի հետ իր տեսակցութիւնը, Դրոյի աճիւնները Հայաստան փոխադրելու եւ իր անունով ղեկավարման բարձրագոյն հիմնարկ հաստատելու Հայաստանի կառավարութեան որոշումին շուրջ, ապա, անդրադարձաւ Սփիւռքի մէջ կայացած եւ կայանալիք ժողովրդային հանդիսութիւններու շուրջ եւ գնահատանքով անդրադարձաւ Գանատայի կազմակերպիչ Յանձնախումբին, անոր պատասխանատու ընկեր Վազգէն Թերզեանին եւ յատկապէս Թորոնթոյի Յանձնախումբին նման արժանավայել ձեռնարկ մը կազմակերպած ըլլալուն համար:

Ընկեր հանդիսավարը խօսք առնելով ներկաներուն ուշադրութիւնը ուղղեց պատերուն վրայ դրուած Դրոյի կեանքին եւ գործին նուիրուած գրութիւններուն եւ պատկերներուն, որոնք պատրաստուած են Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի 7րդ եւ 8րդ դասարաններու աշակերտներուն կողմէ, որպէս դաստիարակչական նիւթ:

Կազմակերպիչ Յանձնախումբը մրցոյթ յայտարարած ըլլալով, մրցանակը տուաւ երկու դասարաններուն, որոնք շատ կարճ ժամանակի ընթացքին կրցած են այդքան տպաւորիչ եւ բովանդակալից աշխատանք կատարել: Մըր-

ցանակը վարժարանի տնօրէնին փոխանցեց Զօրավար Դրոյի թոռ՝ Դրօ Կանայեան եւ այս առիթով իր սրտի խօսքը արտայայտեց:

Ընկեր հանգիստավարը բեմ հրաւիրեց Ճորճթառնի որբերէն ընկեր Գուրգէն (Գըրգ) Մակարեանը, որ Հայաստանի դեսպանութեան հաւատարմատարի ձեռամբ ստացաւ Հայաստանի հանրապետութեան անձնաթուղթը (փաստփոր), որ դեսպանին ներկայութեան ստորագրեց եւ խօսք առնելով իր շնորհակալութիւնը յայտնեց այդ պատիւին համար:

Այնուհետեւ տեղի ունեցաւ սուրճի եւ կարկանդակի հիւրասիրութիւն: Եղան սրտաբուխ նուիրատուութիւններ:

«ՅՈՐԻՉՈՆ»
2000



Զօրավար Դրոյի աճիւնները փոխադրող օդանաւին մէջ հանգուցեալ
Գուրգէն (Գըրգ) Մակարեան եւ Գրիգոր Յոթոյեան

ԶՕՐԱՎԱՐ ԴՐՈՅԻ ԱՃԻՒՆՆԵՐՈՒ ՏԱՐԵԴԱՐՁ

Չորեքշաբթի, 24 Մայիս 2000ին, Պոսթընէն Երեւան հասաւ զօրավար Դրաստամարտ (Դրօ) Կանայեանի աճիւնը, որուն կ'ընկերակցէին Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան ստեղծած Յանձնաժողովի անդամներ՝ զօրավար-հազարապետներ Միքայէլ Գրիգորեան եւ Աստուածատուր Պետրոսեան, Ազգային Ժողովի անդամ Միասնիկ Մալխասեան, «Դրաստամարտ Կանայեան Հիմնադրամ»ի գործադիր տնօրէն Բագրատ Կանայեան, պատմաբան Համլէթ Գէորգեան, հայկական բանակէն երեք սպաներ, Գերաշնորհ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեան, Դրոյի հարազատները եւ Մ. Նահանգներէն եւ Գանատայէն մեծ թիւով ուխտաւորներ:

Չորեքշաբթի, 24 Մայիսի գիշերուան ժամը 10ին, զօրավար Դրոյի դադաղը եւ ընկերակցողները փոխադրող հայկական օդանաւը Երեւանի Զուարթնոց օդակայանը վայրէջք կատարեց, ուր փողերախումբի ընկերակցութեամբ զօրավարին դադաղը դիմաւորելու եկած էին Ազգային Ժողովի նախագահ Արմէն Խաչատրեան, վարչապետ Անդրանիկ Մարգարեան, Երեւանի քաղաքապետը, նախարարներ, բարձրաստիճան անձնակորուսիւններ եւ մեծ թիւով հայրենակիցներ:

Ընդունելութեան ներկայ էին նաեւ Հ.Յ. Դաշնակցութեան մեծաթիւ պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին Հ.Յ.Դ. Բիւրոյի, Գերագոյն Մարմնի եւ Կոմիտէներու անդամներ, Հայ Երիտասարդաց եւ «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութիւններու ներկայացուցիչները:

Օդակայանին մէջ լրագրողներուն հարցումներուն պատասխանելով, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան շեշտեց, թէ «Դրոն» որպէս զինուոր, մասնաւորապէս այսօր շատ բան ունի հաղորդելու, որ զինուորը զինուոր է միշտ եւ չունի որեւէ առակելութիւն քաղաքացիի նկատմամբ եւ բացի բարոյական պարտքը, ոչ ոք պարտականութիւններ չունի անոր հանդէպ»:

Իսկ Դրոյի որդին՝ Մարտիրոս Կանայեան ընդգծեց, թէ «Դրոն հիմա պէտք է ասէ՛ր՝ գործի լծուէ՛ք, լաւատես եղէ՛ք եւ պահէ՛ք այս երկիրը: Վերադառնալով իր բոյնը, Դրոն ձեզ հանգիստ չի թողնի, մեր հոգին պէտք է հանի, մինչեւ որ շիտակ հունով ընթանանք եւ պարապախօսութեամբ չզբաղուենք»:

Օդակայանէն Դրոյի աճիւնը զրահապատ մեքենաներով տեղափոխուեցաւ Երեւանի «Կարէն Դէմիրճեան»ի անուան մարզամշակութային կեդրոնը, ուր ժողովուրդը երկու օրեր (Հինգշաբթի 25 եւ Ուրբաթ 26 Մայիսին) առիթը ունեցաւ իր վերջին յարգանքը տալու հերոս զօրավարին եւ մասնակցելու համապատասխան արարողութիւններուն:

Շաբաթ, 27 Մայիսին, զօրավարին աճիւնը փոխադրուեցաւ Ս. Էջմիածին Մայր Տաճարը, ուր տեղի ունեցաւ ոգեկոչման եւ հոգեհանգստեան արարողութիւն, որուն ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Ռոպերթ Քոչարեան, Ազգային Ժողովի Նախագահ Արմէն Խաչատրեան, Վարչապետ Անդրանիկ Մարգարեան, նախարարներ, Դրոյի հարազատներ, հիւրեր արտասահմանէն եւ մեծ թիւով ազգայիններ:

Սուրբ Պատարագէն ետք, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. իր խօսքն ուղղեց հաւատացեալ ժողովուրդին՝ յիշատակելով հայ ժողովուրդի եւ հայրենիքի հանդէպ Դրոյի ունեցած մեծ քաջագործութիւնները, «որոնք երբեք չեն մոռցուիր ժողովուրդին կողմէ: Դրոյի վերադարձը եւ իր ածիւնի ամփոփումը մայր հողին մէջ, նորանոր յաղթանակներու կ'ոգեկոչէ մեր ժողովուրդին, կ'օգնէ մեզի միաբանելու, ամրապնդելու մեր հայրենիքը: Իսկ հայրենիքը յաւերժական արժէք է»:

Կէսօրին, Դրոյի ածիւնը տեղափոխուեցաւ Ապարան եւ տեղաւորուեցաւ Ապարանի եկեղեցւոյ մէջ:

Կիրակի, Մայիս 28, Ապարանի եկեղեցին այդ յաղթական, տօնական օրը, հիւրընկալօրէն իր դուռները բացաւ հաւատաւոր ժողովուրդի առջեւ: Դրոյի ածիւնը դրուած էր եկեղեցիին կեդրոնը: Արագածոտնի թեմի հոգեւոր հայրերը Պատարագ եւ Հոգեհանգիստ մատուցեցին: Իսկ ժամը 13:30ին, ածիւնը, ռազմական մեքենայով, զինուորներու ուղեկցութեամբ տեղափոխուեցաւ Բաշ-Ապարան հերոսամարտի յաղթական յիշատակին կառուցուած յուշահամալիր:

Դրոյի ոգեկոչման եւ վերայուղարկաւորութեան հանդիսաւոր արարողութեան մասնակցելու եկած էին Նախագահ Ռոպերթ Քոչարեան, Ազգային Ժողովի Նախագահ Արմէն Խաչատրեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ., բարձրաստիճան եկեղեցականներ, կառավարութեան անդամներ, Ազգային Ժողովի պատգամաւորներ, կուսակցութիւններու ներկայացուցիչներ եւ բազմահազար հայորդիներ:

Ազգային Ժողովի նախագահ Արմէն Խաչատրեան այս առիթով իր խօսքով նշեց. «Հայրենիքի ազատագրութեան համար մղուող մարտերուն զոհուած հայորդիներու այս յուշարձան-համալիրը, որ «Վերածնունդ» անունը կը կրէ, այսօր մենք կ'ամփոփենք Հայաստանի առաջին Հանրապետութեան նախարար, գեներալ Դրաստամարտ Կանայեանի ածիւնը, կատարելով իր՝ Դրոյի եւ անոր զինակից ընկերներու, հարազատներու եւ ժողովուրդի կամքը: Մեծ խորհուրդ կայ այն բանին մէջ, որ Դրոյի վերայուղարկաւորութիւնը կը կատարուի այն օրը, երբ 1918 թուականին մեր ժողովուրդի համար չափազանց բարդ ռազմաքաղաքական պայմաններուն մէջ հռչակուեցաւ Հայաստանի առաջին Հանրապետութիւնը, մէկ երկու խօսքով նկարագրելով Զօր. Դրոյի յաղթական ուղին, անոր անձնական խիզախութեան եւ աներեւակայելի նուիրուածութեան բազում պահերը»: Ազգային Ժողովի նախագահը միեւնոյն ժամանակ նշեց, որ վերջապէս իրականացաւ Դրոյի երազանքը եւ փափաքը, ան վերադարձաւ հայրենիք:

Դրոյի որդին Մարտիրոս Կանայեանը նշեց, որ Դրոյի ճամբորդութիւնը Մայր Հայրենիք սկսաւ 1994 թուականին, երբ Մ. Նահանգներ այցելեց, նա եւ Պոսթըն քաղաք, Դրոյի շիրիմին Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը: Այնուհետեւ, 1998 թուականին, Վազգէն Սարգսեանի նախաձեռնութեամբ ու մտայղացումով ուրուագծուեցաւ Դրոյին վերադարձնելու ձգտումը:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Սարգսրեան պահը գնահատեց նշանակալից եւ մեծախորհուրդ: «Դրոյի

վերադարձով, հայրենիքը աւելի ու աւելի բարոյականացաւ, առնականացաւ եւ աւելի ու աւելի հարազատ դարձաւ: Դրոն տուն կը վերադառնայ ոչ միայն որպէս սրբազան աճիւն, այլ որպէս տանամեակներու ուրացումները յաղթահարած գաղափարական մարտիկի վերանորոգ ժառանգ»:

Ոգեկոչման հանդիսութիւններու աւարտէն յետոյ, Դրոյի աճիւնը յուշահամալիրէն տեղափոխուեցաւ այն բարձունքը, ուր զինուորական անմիջական ուղեկցութեամբ եւ պաշտպանութեան նախարարութեան փողերային նըլազախումբի նուագակցութեամբ, իջեցուեցաւ գերեզան...:

Պետական, զինուորական եւ ազգային մեծ պատիւներով, հայոց մեծահամբաւ եւ առիւծասիրտ զօրավար Դրոյի աճիւնը իր վերջնական հանգիստը գտաւ հայրենի հողին մէջ, որուն համար պայքարած եւ մարտնչած էր ան իր ամբողջ կեանքին ընթացքին:

«ԴԻՏԱԿ»
2000
Պէյրութ



Զօրավար Դրոյի աճիւնները հայ սպաներու կողմէ կ'առաջնորդուի դէպի իր վերջական հանգստարանը

ՀԱՅ ԳՐԱԳԷՏՈՒ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ

Ի՛նչպէս, մարդկային ի՛նչպիսի քար դարձած զգայարանքներու եւ ըզ՝ գայնութիւններու թեւադրութեամբ ու տրամաբանութեամբ կարելի է ընդունիլ Հինգշաբթի, 20 Հոկտեմբեր 1994ին Պոսթընէն Թորոնթօ հասած դառնաշունչ գոյժի սրտաճմլիկ իրականութիւնը՝ «ոչ եւս է սփիւռքահայ բազմավաստակ գրագէտ, արձակագիր, հրապարակագիր եւ մտաւորական ընկեր Յակոբ Կարապենց»:

Սակայն, կը կրկնեմ, ինձի համար անհաւատալի է պատահածը եւ կարելի չէ դիւրութեամբ հաշտուիլ մեզի համար այնքա՛ն սիրելի եւ յարգելի մաքրամաքուր հայ, ազնիւ եւ խոնարհ Յակոբ Կարապենցի մահուան գաղափարին հետ, քանի որ տակաւին չորս ամիս չէ անցած իր Թորոնթօ այցելութեան թուականէն, ուր հրաւիրուած էր Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան կողմէ, իր վերջին երկու հատորներուն՝ «Երկու Աշխարհ» եւ «Մի Մարդ ու Մի Երկիր» հրատարակութեան առթիւ:


Երկուշաբթի, 20 Յունիս 1994ի առաւօտեան, Կարապենց այցելեց Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանը, Հայ կեդրոն եւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցին: Իսկ գիշերը, ի պատիւ հայ գրագէտին ընդունելութիւն մը տեղի ունեցաւ ընկեր եւ ընկերուհի Մարգար եւ Էլիզ Շարապխանեաններու բնակարանին մէջ, որուն ներկայ գտնուեցան Համազգայինի Գանատայի վարչութեան, տեղական վարչութեան եւ կարգ մը յանձնախումբերու անդամներ: Հիւրասիրութեան առընթեր ստեղծուեցաւ մշակութային եւ գրական մթնոլորտ:

Հաւաքոյթի ընթացքին Կարապենց կենսաթրթիւ հոգեվիճակ մը ունէր: Բոլոր ներկաներուն հետ խոր ծանօթութիւն եւ մտերմութիւն ունէր, որոնք կազմուած էին վերջին 20 տարիներու ընթացքին զանազան առիթներով եւ հրաւէրներով իր Թորոնթօ այցելութիւններէն: Ան յաճախ հպարտութեամբ ինքզինքը Թորոնթոցի կը նկատէր, Թորոնթոյի Հայ Գաղութին մէջ տեսնելով հայաշունչ կենսունակութիւն՝ ականատես ըլլալով մշակութային պատուաբեր ձեռնարկներու եւ կրթական օճախներու կազմութեան:

Այդ գիշեր, մեր սիրելի գրագէտը, գրեթէ բոլոր ներկաներուն հետ մը տերմօրէն խօսելու եւ շատերուն հետ նկարուելու առիթը ունեցաւ: Ամէն մարդ բան մը ունէր ըսելիք եւ պատմելիք: Կարապենց լիահնչիւն կը խնդար եւ ուրախ էր: Հիւրասենեակի տաք մթնոլորտէն պահ մը ուզեց հեռանալ եւ դուրս ելաւ թարմ օդ առնելու: Հետեւեցայ իրեն եւ շուրջ կէս ժամ առանձնանալով անկեղծ մտերմութեամբ խօսեցանք միջազգային, ազգային, միութենական, մշակութային եւ անձնական հարցերու շուրջ: Մտահոգուած էր կարգ մը մարմնական ցաւերով՝ զանոնք վերագրելով հեծիկէ իյնալուն: Թեւադրեցինք իրեն Պոսթըն վերադարձին բժշկական լուրջ քննութեան ենթարկուիլ...

Մեր սրտագին խօսակցութիւնները խզուեցաւ տան-տիրուհիին պահանջով, որպէսզի Կարապենց կրկին հիւրասրահ վերադառնայ: Հպատակեցաւ ընկերուհի Էլիզի պահանջին եւ դառնալով ինձի սրտցաւօրէն ըսաւ. Գրիգոր, շատ կը ցաւիմ, որ առիթ մը չկրցանք ստեղծել լայնօրէն խօսելու եւ խորհրդո-

դածելու մեզ մտահոգող հարցերուն շուրջ: Սակայն, հաւանօրէն ստեղծենք յառաջիկայ օրերուն:



Յայ տաղանդաշատ գրագէտ Յակոբ Կարապետնց
եւ Գրիգոր Յոթոյեան

Երեքշաբթի, 21 Յունիս 1994, երեկոյեան ժամը 8:30ին, Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Յակոբ Կարապետնցի վերջին երկու գործերուն՝ «Երկու Աշխարհ» եւ «Մի Մարդ ու Մի Երկիր» ներկայացումը, ներկայութեամբ շուրջ 150 գրասէրներու:

Հաւաքոյթի վերջաւորութեան խօսք առաւ Կարապետնց եւ իր շնորհակալութիւնները յայտնեց Համագգայինի շրջանային եւ տեղական վարչութիւններուն, գնահատելով Թորոնթոն հայկութեան իւրայատուկ ազգային գիտակցութիւնն ու հայ մշակոյթի պահպանման համար կատարուած գոհողութիւնները, ապա խօսեցաւ «Գրողը եւ իր Կեանքը» նիւթին շուրջ: Աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ Կարապետնց մակագրեց ծախուած գիրքերը:

Հինգշաբթի, 23 Յունիս 1994, երեկոյեան ժամը 7:30ին տեղի ունեցաւ Հ.Օ.Մ.ի Պապայեան Մանկապարտէզի, Գոլոլեան Նախակրթարանի եւ Միջնակարգի ամալերջի աւարտական հանդէսը, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ Յակոբ Կարապետնց:

Տրդ դասարանի 1993-1994 տարեշրջանի շրջանաւարտները շատ բախտաւոր աշակերտներ են, որոնք բախտը ունեցաւ իրենց վկայականները ստանալու ժամանակակից ամէնէն տաղանդաւոր գրագէտներէն Յակոբ Կարապետնցի ձեռամբ:

Այս առթիւ, խօսք տրուեցաւ Կարապենցին, որ իր սրտի խօսքը ուղղելով շրջանաւարտներուն, ի միջի այլոց ըսաւ.

«1979ին ես ականատես ու ներկայ եղայ այս դպրոցի հիմնադրութեան եւ ահաւասիկ 15 տարիներ անցած են այդ թուականէն: Դուք այս դպրոցի Զրդ հունձքն էք:

«Այս դպրոցը իր անձնուէր տնօրէնով եւ ուսուցչական կազմով, ամէն գնահատանքի արժանի է եւ ես ի խորոց սրտէ կը շնորհաւորեմ զանոնք իրենց կատարած ազգակերտ աշխատանքին համար:

«Դուք սիրելի աշակերտներ, յառաջիկայ տարի ձեր ուսումը պիտի շարունակէք երկրորդական վարժարաններու, ապա՝ համալսարաններու մէջ: Պիտի դառնաք անուանի մարդիկ, մասնագիտանալով զանազան ասպարէզներու մէջ: Սակայն, որքան բարձրանաք, որքան հռչակի տիրանաք, յիշեցէք ձեր հայր-յութիւնը եւ ապրեցէք որպէս ազնիւ հայեր:

«Դուք իրապէս երջանիկ էք, որ Հայաստան վերատիրացաւ իր անկախութեան եւ Արցախը ազատագրական մարտնչումներով կ'ուզէ տիրանալ իր անկախութեան: Մեր բոլորին պարտականութիւնն է մեր բոլոր կարելիութիւններով օգնել հայրենի պետականութեան ամրացման եւ բարգաւաճման ինչպէս նաեւ մեր ամէնօրեայ կեանքին մէջ յիշել, որ իր ազատութեան համար պայքարի ելած Արցախը պէտք ունի մեր օժանդակութեան»:

Յակոբ Կարապենց, Թորոնթօ իր վերջին այցելութեան, ընկեր Գալուստ Պապեանի կարգադրութեամբ հանդիպում մը ունեցաւ գանատահայ անուանի Ֆիլմարտագրիչ եւ հեղինակ Աթոմ Էկոյեանի հետ, որ միջազգային շարժանկարային արուեստի մէջ արդէն իսկ մրցանակներու արժանացած է: Երկու արուեստագէտները մտերմաբար խօսեցան շարժանկարային արուեստի կարելորութեան շուրջ, յատկապէս Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն ընթացքին, ծրագրելով կարգ մը ծրագիրներ, որոնք կրնային իրականանալ ապագային, սակայն, աւա՛ղ... դաւադիր քաղցկեղը, որ ժամանակէ մը ի վեր գաղտնօրէն իր որջը հաստատած էր Կարապենցի լուսատու մարմնին մէջ եւ յանկարծ ինքզինքը ցոյց տալով, հոգեմաշ չարչարանքներ եւ ցաւեր պատճառեց հէք Կարապենցին, որոնց արժանի չէր ազնուագարմ այս հայրըդին:

Յակոբ Կարապենց իր մաքուր եւ սքանչելի հայերէնով գրած է իր հրատարակած ինը հատորները: Նոյնիսկ Հայաստան հրատարակուած հայ հեղինակներու հայերէնը եւ ոճը չունին Կարապենցի հայերէնի հմայքը: Ան մայրենի լեզուի ջերմեռանդ պաշտպաններէն եղած է միշտ: Ան մեր լեզուն նուիրական եւ անգնահատելի գանձ համարած է: «Ինչպէս գիտէք, մեր մեծագոյն գանձը մեր լեզուն է: Յատկապէս մեզ՝ սփիւռքահայերուս համար: Հայոց լեզուն մեր հայրենիքն է: Եւ այս բոլորը մենք պարտական ենք մեր գրերու գիւտարար Սուրբ Մեսրոպ Մաշտոցին: Գրերի Գիւտի շնորհիւ է, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ պայքարել է ամէն տեսակ ոսոխների եւ թշնամիների դէմ եւ կարողացել է պահպանել իր ազգային անաղարտ նկարագիրը: Այնքան մեծ է Մաշտոցի գործը, որ հայ ժողովուրդը նրան սուրբերու շարքին է դասել», ըսած է հայ լեզուի գոյատեւման եւ անեղծ մնալուն համար պայքարող մեծ մտաւորականը:

Հայ մեծ գրող եւ հրապարակագիր Յակոբ Կարապենց, իր հրատարակած ինը հատորներու կողքին կ'աշխատակցէր նաեւ Հայ Մամուլին եւ ամերիկեան մամուլին՝ մշակութային, ազգային եւ քաղաքական յօդուածներով՝ մեծապէս գնահատուելով ընթերցողներէն:

Հոս կ'ուզեմ օրագրել նաեւ իր Սփիւռք-Պրոմէթէս յօդուածէն քանի մը պարբերութիւն, ցոյց տալու համար Կարապենցի ազգայնական զգացումներուն խորութիւնն ու անկեղծութիւնը:

«Եւ մի օր էլ Զեւսի պատուէրով Պրոմէթէսին շղթայակապ արին Կովկասեան լեռնաշղթային, գամողը եղաւ Հեփեսոսը: Շատ յաճախ մըմնջում էր Պրոմէթէսը իր այս տանջանքների պատճառը գտնելու: «Բայց ինչո՞ւ կրեցի այս տառապանքները, նրա համար, որ մեծագոյն շնորհներ տուեցի մարդկանց»: Քրիստոսը մի անգամ խաչուեց մարդկութեան համար: Իմ ժողովուրդը բերաւոր անգամներ է խաչուել Քրիստոսի համար եւ հիմա ասում է, որ այլեւս բաւական է, որ այս ժողովուրդին այլեւս հանգիստ թողէք իր ուրոյն ճակատագիրը կոփելու: Հիմա Սփիւռք ու Հայաստան մէկ են: Սփիւռքը Հայաստանին շարունակութիւնն է: Հանգիստ թողէք այս ժողովուրդին, որպէսզի կարօտի լիճը չորնայ, որպէսզի արցունքի գետերը բերկրանքի ալիքների վերածուին»:

«Ես ասում եմ ունենք չունենք մի Հայաստան ունենք, գանք մեր լաւագոյնը տանք Հայաստանին, որպէսզի հայրենիքը հոգեկան գոյութեան հետ զուգընթաց ծաղկի ու բարգաւաճի որպէս նիւթական գոյութիւն: Որպէսզի Սփիւռքը ազատագրէ ինքն իրեն»:

Կարապենց մամուլով կ'արտայայտուէր նաեւ կարգ մը հեղինակներու եւ նոր հրատարակուած գիրքերու մասին իր կարծիքը՝ գրախօսելով անոր բովանդակութիւնը եւ հեղինակին արուեստը: Կապ կը պահէր նաեւ կարգ մը հեղինակներու հետ, որոնց գիրքերը գրախօսելու ժամանակ չգտնելով, նամակով կը յայտնէր իր տպաւորութիւնները եւ կարծիքը:

Չեմ կրնար մոռնալ 1987ին իմ հեղինակութեամբ լոյս տեսած «Սիրտը Ափին Մէջ» քերթուածներու հատորին առթիւ ինծի գրած նամակին բովանդակութիւնը, որ նոր կորով ներշնչեց ինծի շարունակելու համար իմ ծառայութիւնս հայ գրականութեան:

Ան իր նամակով կը գրէր. «Հաճոյքով կարդացի «Սիրտը Ափին Մէջ» քերթուածներու գիրքը, թէեւ մամուլի մէջ մերթ ընդ մերթ հանդիպել էի բանաստեղծութիւններիդ, սակայն ամբողջութիւնը եղաւ աւելի տպաւորիչ, աւելի զգլխիչ: Այդ որքա՛ն հարուստ ներաշխարհ ես ունեցել: Այդքան սէր ու կարօտ ինչպէ՞ս ես պարփակել սրտիդ մէջ: Սիրեցի թէ՛ հայրենասիրական երգերդ եւ թէ՛ սիրային տաղնապներդ: Որքան բացաշունչ են յեղափոխական երգերդ, նոյնքան տրամանոյշ են անձնական տուայտանքներդ: Չեմ կարող ասել, թէ որ երգերը աւելի նախընտրեցի, որովհետեւ իւրաքանչիւր երգ ունի իր ուրոյն կառոյցը, տրամադրութիւնն ու յոյզը:

«Ես ծանօթ էի քո հրապարագրական յօդուածներին ու հաղորդագրութիւններին, սակայն այս գրքի մէջ է, որ տեսայ քո գեղեցիկ հայերէնը՝ միանգամայն հասուն, ճկուն ու հարուստ: Ուրեմն, կեցցէ Հալէպը, որ քեզ պէս բանաստեղծ է տուել: Այլեւս ես Թաւրիզով չպիտի հպարտանամ»:

«Այս բոլորն ասում եմ ասած լինելու համար, որ ըմբռնչվածքի գիրքդ, որ շնորհակալ եմ որ երգերը ինձ հետ բաժանած լինելուդ համար եւ որ գրիչդ միշտ դալար մնայ»...: 21 Դեկտեմբեր 1987, Քընեթիքըթ:

Յակոբ Կարապենց իր գրականութեամբ, մտաւորական կարողութիւններով եւ ազգային միւռնի պէս մաքուր նկարագրով եզակի պիտի մնայ հայ գրականութեան պատմութեան մէջ: Անոր կորուստով մեր գրական եւ հասարակական կեանքը կ'արձանագրէ արի մտաւորականի մը անժամանակ մեկնումը այս աշխարհէն: Ան տակաւին նոր երգերով պիտի հարստացնէր հայ գրականութիւնը, սակայն, իր այնքան փայփայած եւ երազած ծրագիրները չամբողջացան ճակատագրի դժիւեմ կարգադրութեամբ:

Քու կորուստդ խոր ցաւ պատճառեց համայն հայութեան եւ յատկապէս Թորոնթոհայութեան ու սրտակից բարեկամներուդ եւ ընկերներուդ, սիրելի՛ Կարապենց:

Թէեւ մարմնապէս մեկնեցար այս աշխարհէն, սակայն, դուն կաս, կ'ապրիս, քու հրատարակած ինը հատորներուդ ընդմէջէն:

Դուն անմահ ես հայ ժողովուրդին եւ գրականութեան պէս:

**«ՅՈՐԻՉՈՆ»
1994**

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

1994-ը հայ մամուլի նախակարապետ «Ազդարար»ի 200-ամեակն է, որ պատշաճ հանդիսութիւններով եւ ձեռնարկներով կը տօնուի Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ:

Արդարեւ, 1794 Հոկտեմբեր 16ին, Հնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ հիմը կը դրուէր հայերէն առաջին թերթին՝ հրատարակութեամբ եւ խրմբագրութեամբ Յարութիւն Ա. Քհնյ. Շմաւոնեանի:

«Ազդարար»ի առաջին էջի կողքին վրայ կը կարդանք «Ազդարար» Թիւրոյ Ամսոյ, 1794, ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու Սրբազան Կաթողիկոսի Ամենայն Հայոց ի Վաղարշապատ: Ի Թագաւորութեան Օգոստոսափայլ Տեառն Երկրորդի Հերակլայ Արքայի ի Թիֆլիզ: Ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնայ Եկեղեցոյ որ ի Մատրաս: Ի տպարանի Տէր Յարութիւն Շմաւոնեան Շիրազեցոյ:

Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի կեանքին մասին շատ քիչ տեղեկութիւններ հասած են մեզի: Գիտենք, որ ան ծնած է Պարսկաստանի Շիրազ քաղաքը՝ 1750ին: 1784ին, քահանայական պաշտօնով կը փոխադրուի Մատրաս, նոր Զուղայի Առաջնորդ Մկրտիչ Արքեպիսկոպոսի կարգադրութեամբ:

«Ազդարար» կը հրատարակուի 1794ին եւ նոյն տարին լոյս կը տեսնէ 4 թիւ (հին տոմարով՝ Սեպտեմբերէն Դեկտեմբեր, նոր տոմարով՝ Հոկտեմբերէն մինչեւ Յունուար 1795): 1795ին՝ 12 թիւ, իսկ 1796ին՝ 2 թիւ: Իւրաքանչիւր թիւը՝ մօտաւորապէս 50 էջ: «Ազդարար» լոյս տեսաւ մինչեւ 1796 Մարտ (18 թիւ): Անկէ ետք լոյս չտեսաւ: Ի՞նչ են պատճառները թերթին դադարման, մեզի անծանօթ են: Թերթը սիրուած էր գաղութէն, մանաւանդ անոր երիտասարդ գրասէր տարրէն: Բայց թերթ մը ամէն բանէ առաջ նիւթական հաստատ կռուաններու պէտք ունի, իր գոյութիւնը կարենալ ապահովելու համար: Հաւանաբար այդ էր որ պակսեցաւ «Ազդարար»ին:

Տէր Յարութիւն Քհնյ. Շմաւոնեան վախճանած է 1824 թուականին եւ թաղուած իր հովուական եկեղեցին՝ Մատրասի Ս. Աստուածածին եկեղեցոյ բակին մէջ:

Այս տարի «Հորիզոն» շաբաթաթերթը կը բոլորէ իր հրատարակութեան 15-ամեակը:

Արդարեւ, Հայաստանի անկախութեան հռչակման 61րդ տարեդարձին՝ 28 Մայիս 1979ին լոյս տեսած Հ.Յ. Դաշնակցութեան Գանատայի շրջանի պաշտօնաթերթ «Հորիզոն» շաբաթաթերթը կը հրատարակուէր այն առաջադրանքով, որ սկզբունք եղած է դաշնակցական թերթերու՝ ժողովուրդին փոխանցել Դաշնակցութեան գաղափարաբանութիւնն ու խօսքը, ինչպէս նաեւ արձագանգելով գանատահայ գաղութի կեանքին ազգային, կրօնական, մշակութային, կրթական, մարզական եւ այլ շարժումները, միեւնոյն ատեն հոգեկան կապ հաստատելով սփիւռքահայ գաղութներու, Հայրենիքի եւ Արցախի միջեւ:

28 Մայիս 1979ին, 8 էջով լոյս տեսած թերթը այսօր վերածուած է 16 եւ երբեմն 24 էջերու՝ ճոխ եւ այլազան բովանդակութեամբ:

Որպէս «Հորիզոն»ի Թորոնթոյի ներկայացուցիչ, առօրեայիս մաս կը

կազմեն հանդիպումներ բաժանորդներուն հետ՝ ընդառաջելու եւ գոհացնելու անոնց պահանջները: Բողոքողները ընդհանրապէս կը գանգատին թերթի ուշացումին համար: Կան նաեւ բողոքողներ Թորոնթոյի ձեռնարկներուն թըրթակցութիւնները շատ ուշ լոյս կը տեսնեն: Անշուշտ անոնց պատշաճ պատասխաններ կը տրուին մեր կողմէն, արդարացնելով թերթին վարչական պատասխանատուին եւ խմբագրին աշխատանքները:

Ներկայիս, այնքան ալ դիւրին չէ այս ասիերուն վրայ թերթ հրատարակել: Վերջին մէկ երկու տարիներու ընթացքին դժբախտութիւնը ունեցանք տեղեկանալու հայերէն քանի մը թերթերու ձեւափոխման: Օրաթերթը վերածուեցաւ շաբաթաթերթի, շաբաթաթերթերը՝ ամսաթերթի:

Օրէ օր աւելցող ծախսերը, բաժանորդներու նուազումը եւ այլ պատճառներ կը ստիպեն նոր միջոցառումներ որդեգրելու, նորանոր պարտքերու չենթարկուելու համար:

Անշուշտ «Հորիզոն»ը բացառութիւն չի կազմեր: Հակառակ կուսակցական պաշտօնաթերթ ըլլալուն եւ իր ունեցած պատկառելի տպաքանակին, չի կրնար իր ծախսերը հաւասարակշռել:

«Հորիզոն»ի 15-ամեակին առիթով, ամէն հայ, ամէն գաղափարապաշտ հայ պէտք է իր միջոցներով եւ իր կարողութեան չափով օգտակար ըլլայ «Հորիզոն»ի հրատարակութեան, որպէսզի ան դառնայ աւելի բովանդակալից, աւելի ճոխ եւ աւելի ծաւալուն:

Շնորհաւորելով «Հորիզոն»ի 15-ամեակը, կը մաղթեմ, որ շնորհիւ գանատահայ գիտակից ժողովուրդի անվերապահ օժանդակութեան, «Հորիզոն»ը դառնայ եռօրեայ եւ ինչու չէ օրաթերթ, թարմ լուրերով եւ թղթակցութիւններով ոռոգելու ընթերցողներու հոգիները:

Այս առիթիւ յիշողութեանս պաստառին վրայէն կը տողանցեն Հայէպի «Արեւելք» օրաթերթի հրատարակութեան պարագաները եւ առաջին օրէն իսկ որպէս գրաշար իմ աշխատանքս՝ այդ օրերուն յատուկ նախնական դրութեամբ:

Պէտք է ըսել, որ այդ օրերուն գոյութիւն չունէին համակարգիչներ եւ յօդուածները կը շարուէին կապարէ գիրերով, որոնք կը կոչուէին Գէորգեան կամ Արամեան գիրեր՝ զանազան չափերով՝ ընդհանրապէս 8, 10 եւ 12 բունթօ գիրերով: Այդ գիրերը յատուկ խոռոչներով (մեծ եւ փոքր) պատրաստուած քասաններուն մէջ կ'ըլլային եւ հատ-հատ առնելով կը շարուէին քոմբասներու մէջ:

Գրաշարի մը արժէքը կը գնահատուէր անոր արագ եւ անսխալ կամ քիչ սխալով շարելուն մէջ, ինչպէս նաեւ անոր ծանօթութիւնը ու գիտութիւնը հայերէն լեզուի քերականութեան եւ ուղղագրութեան: Եւ ընդհանրապէս գրաշարութիւն ըրած ոեւէ անհատ, տարիներու ընթացքին կը մասնագիտանար հայերէնի ուղղագրութեան, որպէս արհեստ ընտենալանալով այդ գիտութեան:

1946 Մարտ 1ին Ֆրանսական բանակէն արձակուելով, 12 Մարտին ծննդավայրս՝ Հայէպ վերադարձայ: 1941ին նախակրթարան աւարտած եւ 1943ին Ֆրանսական բանակին միացած մէկը ինչ արհեստ կրնայ ունեցած ըլլալ: Մակայն, հանգուցեալ հայրս իմ մէջ տեսած ըլլալով հայ գրականութեան հանդէպ

որոշ հետաքրքրություններ եւ սէր, թելադրեց որ գրաշարութիւն սորվիմ. սակայն ո՞ւր: Այս օրերուն լոյս կը տեսնէր հայերէն Եփրատ օրաթերթը, որ Ռամկավարներուն պաշտօնաթերթն էր եւ գոյութիւն ունէր հալէպահայ ուսուցչական միութեան «Սեւան» տպարանը, սասունցի ուսուցիչ (այժմ հանգուցեալ) գրագէտ Սիմոն Սիմոնեանի ղեկավարութեամբ:

25 Մարտ 1946ին մուտք գործեցի «Սեւան» տպարան եւ սկսայ սորվիլ քասայի մէջ տառերուն տեղերը: Երկրորդ շաբաթը սկսայ շարել եւ շաբաթէ շաբաթ աւելի յառաջդիմել: Սակայն, վճարումը անբաւարար էր երիտասարդի մը, որ պէտք ունէր իր եւ ընտանիքին ծախսերուն հասնելու:

Ահա այդ պայմաններուն ներքեւ 1946ին հրատարակուեցաւ «Արեւելք» օրաթերթը, որ գրաշարներու պէտք ունէր եւ յայտարարած էր թերթին մէջ:

Թերթը լոյս կը տեսնէր «Հոգետան» մէջ հաստատուած Անդրանիկ Մառուկեանի «Նայիրի» տպարանէն, որուն վարպետն էր իմ հայրենակիցս՝ Ճորճ Մակարեան:

Որպէս փորձառու գրաշար ներկայացայ եւ անմիջապէս գործի ընդունուեցայ: Եւ ի մեծ ուրախութիւն ինծի այդ շաբաթ վճարեցին 17 սուրիական ոսկի: Այնուհետեւ, ամէն շաբաթ մէկ ոսկի յաւելու ստանալով, 20 Դեկտեմբեր 1946ին շաբաթականս հասած էր 30 սուրիական ոսկիի, որ լաւ գումար մը կը համարուէր:

Այդ օրերուն «Արեւելք»ի վարչական պատասխանատուն (այժմ հանգուցեալ) Օննիկ Մելիքսէթեանն էր, իսկ խմբագիրները՝ անդրանիկ Մառուկեան եւ Մինաս Թէօլէօլեան:

Մեր գրաշարանոցը կը գտնուէր հոգետան երկրորդ յարկին վրայ, «Տիգրիս» գրադարանէն երկու դուռ անդին: Շարուած գիրերը յատուկ տախտակներու վրայ կ'իջեցնէինք վար տպարան «Նայիրի» եւ հոն տեղի կ'ունենար էջագրումները եւ քանի մը անգամ սրբագրուելէ ետք կը տպագրուէր: «Արեւելք»ը լոյս կը տեսնէր չորս մեծագիր էջերով: Առաջին էջին վրայ կը գրուէր խմբագրականը: Քաղաքական լուրեր եւ յաճախ Պիծակին օրը-օրին խայթոցները, 2 եւ 3 էջերը՝ յօդուածներ, թղթակցութիւններ, եւայլն, իսկ 4րդ էջը՝ տեղական լուրեր եւ յայտարարութիւններ:

«Արեւելք»ի այդ օրերու գրաշարանոցը պատուհան ալ չունէր եւ ահուելի տաք կ'ընէր յատկապէս ամառուան ընթացքին: Եւ աւելի ցաւալին, ելեկտրական հովահար չունենալով, առաստաղէն կախած էինք մէկ մէթը լայնքով եւ 50 սանթիմէթը հասակով քարթոն մը, որմէ կախուած չուանը շարժելով հովահարելու պաշտօնը յանձնած էինք այդ օրերուն հոգետան «խենթ»ին՝ Գրիգորին, որ առանց տրտնջալու եւ երբեմն ալ սրտաճմլիկ երգերով մեզ յուզելով կ'արժանանար որոշ վարձատրութեան:

Հայաստան ներգաղթը սկսած էր եւ «յառաջդիմական» ճակատը՝ Հայաստանի համայնավար վարչաձեւէն ղեկավարուած, կը պայքարէր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դէմ, միակ նպատակ ունենալով քանդել հայ ազգային կառոյցները եւ հայ ժողովուրդը լծել համայնավար գաղափարաբանութեան տարածման ստոր գործին:

Սակայն, շնորհիւ Հ.Յ. Դաշնակցութեան շարքերուն կրանիթեայ կամփին եւ հաւատքին, «Արեւելք» օրաթերթի ազգայնաշունչ խմբագրականները

րուն, անոնց բոլոր հաշիւները եւ մտադրութիւնները ի դերեւ ելան, եւ 1947ի վերջաւորութեան, անոնց ձախողութիւնը կատարեալ եղաւ, որովհետեւ ներգաղթը դադարեցաւ եւ հազարաւոր ընտանիքներ իրենց տունն ու կահ-կառասիները ծախած ըլլալով, մնացին ողբերգական պայմաններուն ներքեւ:

Տարիներ ետք, «Արեւելք» օրաթերթը բարգաւաճեցաւ, ունեցաւ իր սեփական տպարանը՝ առեւտրական գործերու, թերթ եւ գիրք հրատարակելու ամէն յարմարութիւններով:

«Արեւելք» տպարանէն լոյս տեսան նաեւ բազմաթիւ դասագիրքեր եւ գրական ու բանաստեղծական հատորներ:

1946էն մինչեւ 1961, քանի մը տարիներ բացակայելով, պաղտօնի կոչւելով որպէս ուսուցիչ, ծառայեցի հայ գիրին, հայ մամուլին եւ հայ մշակոյթին՝ գրաշարական ծանր բայց քաղցր աշխատանքով, թերթերու աշխատակցութեամբ եւ այլ միջոցներով: Այդ ժամանակաշրջանին «Արեւելք» օրաթերթը որպէս վարչական տնօրէն ունեցաւ Օննիկ Մելիքսէթեանը, Միհրան Հերարդեանը, Նշան Իսրայէլեանը եւ Լուսեր Մասպանաճեանը, իսկ որպէս խմբագիր Անդրանիկ Մառուկեանը, Մինաս Թէօլէօլեանը, Գէորգ Տօնապետեանը եւ Երուանդ Մոնոֆարեանը, իսկ տեղական լուրերու խմբագիր՝ Ներսէս Պարսումեանը:

«Արեւելք»ի տպարանէն նաեւ լոյս կը տեսնէր «Արեւելք Մարգար-խարհ»ը, որուն խմբագրի պաշտօնը կը վարէր ընկ. Զաւէն Սապունճեան:

Երբ այսօր, երեսուն եւ աւելի տարիներ ետք կը յիշեմ այդ օրերը, կը զարմանամ, որ ինչպէս դիմացած եմ այդքան ծանր աշխատանքի: Գիշերուան ժամը 3ին արթննալ եւ քալելով Սիւլէյմանիէէն մինչեւ Սալիպէ երթալ՝ շարելու համար առաջին եւ 4րդ էջերու քաղաքական եւ տեղական լուրերը:

Իմ կարծիքով, հայ մամուլին եւ հայ լեզուին հանդէպ իմ ունեցած սէրս եւ պաշտամունքս ինձի ոյժ եւ կարողութիւն պարգեւած են, խանդավառութեամբ եւ հպարտութեամբ կրելու այդ ծանր, սակայն, քաղցր պարտականութիւնը՝ անտեսելով ուրիշ ասպարէզներու պարգեւած բարգաւաճ եւ հանդիստ կեանքը:

«ՅՈՐԻՉՈՆ»ի 15-ամեակի Բացառիկ, 30 Մայիս 1994



Զախէն աջ՝ Բանաստեղծուհի, թարգմանիչ Լիլիթ, Գրիգոր Դոթոյեան եւ Բանաստեղծուհի Մետաքս

ՓՇՈՒՐ-ՓՇՈՒՐ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Կարգալուծ Նշան Շահէնի «Փշուր-փշուր մանկութիւն» հատորը, մանաւանդ սկիզբի «Մնուժ է հրաշալի մի մանուկ, բայց...», «Իմ առաջին հարցականը», «Ֆիտէլ՝ մեր շունը», «Սկսում են իմ ձախորդութիւնները», «Ձախորդութիւն՝ ձախորդութեանց», «Մեծ մայրս եւ Սուլթան Հանըմի ողբը...», եւ «Ֆրս-Ֆրս Յակոբ կամ՝ թրքական դրօշը» գլուխները, յիշողութեանս պաստառէն տողանցեցին իմ մանկութեան եւ պատանութեան տարիները՝ գրեթէ Նշան Շահէնի մանկութեան եւ պատանութեան նմանողութեամբ:

1915ին Երիտասարդ Թուրքերու կողմէ ծրագրուած եւ իրագործուած Մեծ Եղեռնի ջարդերէն ազատուած հայ ժողովուրդի խլեակները ապաստան գտնելով Սուրիոյ զանազան քաղաքներու եւ յատկապէս Հալէպի մէջ, իրենց համար անծանօթ միջավայրի կեանքին յարմարուելու, աշխատելու եւ ապրուստը հոգալու որպէս առաջին քայլ, պէտք ունէին բնակարաններու: Եւ, աքսորի ճամբաներէն, անապատի կիզիչ արեւէն խանձուած ու մահուան ճիրաններէն ճողոպրած հազարաւոր հայեր՝ տարագրուած Հայաստանի եւ Կիլիկիոյ հայաբնակ քաղաքներէն եւ գիւղերէն, Ֆրանսական իշխանութեան շնորհիւ եւ ազնուական արաբ ազգի մարդասիրական նկարագրին թոյլտուութեամբ, հազարաւոր ընտանիքներ հաստատուեցան խաներու եւ հսկայ բակերով բնակարաններու մէջ: Իսկ ուրիշներ, անձնական տուն ունենալու փափաքով նախաձեռնեցին փայտով եւ թիթեղով պարաքներու շինութեան Հալէպի Համիտիէ եւ Սիւլէյմանիյէ շրջաններու մէջ, ուր, ինչպէս կը գրէ Նշան Շահէն ծնած է 1928 Մարտ 11ին, իսկ ես՝ 5 Օգոստոս 1927ին, նոյնպէս Համիտիէ շրջանին մէջ:

Իմ հօրս շինած տունը, դժբախտաբար թէ բարեբախտաբար, իմ ծնունդէս քանի մը տարի ետք կառավարութեան որոշումով փլցուած է եւ հայրս այս անգամ, Նոր Գիւղի շրջանին մէջ, Համիտիէի պարաքով տունին փոխարէն կը շինէ աղիւսով տուն, քանի մը սենեակով եւ տանիքներն ալ գերանով, տախտակով եւ յատուկ հողով ծածկուած:

Սակայն, Նշան Շահէնենց եւ իմ ազգականներէս շատերուն տունները երկար ատեն մնացին այդ շրջանին մէջ, ուր շինուած էին հայկական դպրոց եւ Ս. Գէորգ Եկեղեցին, որ յետագային փոխադրուեցաւ Նոր Գիւղի շրջանը:

Նշան Շահէն իր «Մնուժ է հրաշալի մի մանուկ, բայց...» գլխուն մէջ կ'անդրադառնայ իր հօր այդ օրերու հոգեվիճակին եւ կը գրէ. -

«Ի՛նչ արած, կեանք է: Եւ քանի որ կեանք է՝ ապա, ուրեմն, հարկաւոր է ենթարկուել նրա պահանջներին ու ապրել ապրելու համար էլ հարկաւոր է ինչ որ ապաստարան եւ հաց ունենալ: Ո՞վ կը տայ այն...: Մի՞թէ կայ այդպիսին: Զբաղուել մուրացկանութեամբ... ո՛չ, հազար անգամ ո՛չ: Հայր սովոր չէ ձեռք մեկնելու ուրիշներին: Զեռքերը մուրացկանութեան համար չեն, դրանք աշխատանքի եւ ստեղծագործելու համար են միայն: Եւ քանի որ իրենք ձեռքերից զուրկ չեն, ապա ուրեմն կարելի է քարից էլ հաց քամել:

«Հայրս աշխատանք է ճարում մի փուռ ուրպէս աշկերտ, թէկուզ: Ուրեմն կարելի է հացը վաստակել: Ապաստարանի համար էլ սկսում է (մեղա՛յ, մեղա՛յ, քիչ մնաց ասէի՝ կառուցել ի՛նչ հեզնանք) յարմարեցնել մի տնակ,

պարզապէս մի օղակ, այլ տնակները շղթայում: Այսպիսով է հիմքը գցուած քաղաքի հիւսիսային կողմի վրայ Համիտի կոչուած թաղամասում ստեղծուած բարաքները»:

Եւ այդ տնակին մէջ կը ծնի «Հրաշալի մի մանչուկ, բայց...», «մի տարի էլ դեռ չբոլորած»՝ բռնած է «անդի աշխարհի պոչից եւ երկար ժամանակ բաց» չէ թողած:

Հիւանդութիւնը եղած է ծանր եւ մարմինը ծածկուած է վէրքերով, սակայն վերջ ի վերջոյ, Իտալիայէն եկած երիտասարդ բժիշկի մը դեղատոմսով (խաշած գետնախնձորով) կը բուժուի՝ անբուժելի նկատուած երեխան:

«Իմ առաջին հարցականը» պատմուածքով հեղինակը արդէն իր հետաքրքրութեան շառաւիղը կ'ընդլայնէ եւ հետախուզութեան կ'ենթարկէ իրենց բնակարանին նկուղը եւ «չարտախ»ը եւ նկատի կ'առնէ, թէ նկուղին մէջ զանազան առարկաներու կարգին պահուած են իւր, պանիր եւ զանազան անուշեղէններ: Եւ համարձակութիւն կ'ունենայ օգտուելու անուշեղէնի եւ պանիրի գոյութենէն՝ անշուշտ առանց իր մօր գիտակցութեան, մինչեւ որ «հազիւ էի կարասի բերանը ծածկող շորը բարձրացնել, տեսայ մի մուկ, որ «ատլետիկ» ցատկեր էր կատարում: Ինձ այնպէս թուաց, թէ ահա ուր որ է պիտի յարձակուի իմ վրայ: Սարսափից ճչացի»:

Սքանչելի պատմուածք մըն է «Ֆիտէլ՝ մեր շունը», որ ցոյց կու տայ Ֆիտէլի հաւատարմութիւնը, խելքը եւ զգացումը, որպէս ընկերակից, խաղընկեր, հաւատարիմ բարեկամ: Մանաւանդ Նշանի մօր հիւանդութեան եւ մահուան ժամանակաշրջանին անոր անցուցած հոգեկան տառապանքները եւ ի վերջոյ աղեխարշ մահը:

Նշան Շահէն «Սկսում են իմ ձախորդութիւնները» եւ «Ձախորդութիւն՝ ձախորդութեանց» գլուխներու մէջ կը նկարագրէ իր մանկապարտէզ յաճախելը, հայերէն այբուբեն սորվելը, արտասանելը, եւ առաջին վկայական ստանալը: Իսկ աներեւոյթ դառնալու համար սեփ-սեւ կատու որոնելը եւ իր ընկերոջ Աբրահամին հետ, մանկական երազանքի փորձ մը:

Սակայն, երկար թափառումներէ եւ փնտռումներէ ետք, իրենց բոլոր յոյսերը ի դերեւ կ'ելլեն, բռնելու սեւ կատու մը, որ ոչ մէկ սպիտակ մազ չունենար մարմնի որեւէ մասին վրայ, մորթել, խաշել այնքան որ ոսկորները իրենք իրենց անջատուէին իրարմէ, կրճոսկրէն հատ մը ակռաներով սեղմել եւ ապա դառնալ անտեսանելի... Եւ այս ընել, որպէսզի «Անտեսանելի լինելու մեր ձգտումը ինչ նպատակ կարող է ունենալ, եթէ ո՛չ, հասնել մեր նախնիների երկիրը, մեր ծնողների տունը (իսկ թէ ինչպէ՞ս՝ այդ դեռ անյայտ էր), գուցէ թեւե՞ր էլ պիտի ունենայինք, սրի քաշել բոլոր, բոլոր թուրքերին»:

«Մեծ մայրս եւ Սուլթան Հանըմի ողբը...», ուր թուրք Սուլթան Հանըմ, Նշանի մեծ մօր կը խոստովանի երկրի՝ իմա՝ Մարաշի մէջ կատարուած զագրելի ոճրագործութեան մը ծաւրերը, ջուլթակ Գերոբի սպաննութիւնը:

«Ֆրս-Ֆրս Յակոբ կամ թրքական դրօշը» պատմուածքը ինձի համար ծանօթ ողբերգութիւն մըն է, քանի Հալէպի մէջ ճանչցած եմ ֆրս-ֆրս Յակոբը, որ այն ատեն հազիւ 35-40 տարեկան երիտասարդ մըն էր, եւ միշտ ոտքերը վեր-վար շարժելով կը ֆսֆսար, ինչպէս կը գրէ հեղինակը, «ամբողջ օրը կանգնած էր լինում Հալէպի Նոր Գիւղ անունը ստացած արուարձանային հայ»

կական նորակառույց թաղամասի մօտ գտնուող բաղնիքի նույնպես նորակառույց մուտքի ճիշդ հանդիպակաց կողմը, ճանապարհի եզրին եւ անցորդներից խնդրում էր երեք...ղրուշ...»:

Սակայն, ողբերգականը, Փրանսական բանակի սիրուած փողահար Յակոբի վերոյիշեալ վիճակին հասնելու պատճառը եղած են Փրանսացիները, որովհետեւ Յակոբ, 1938ին, Փրանսական կառավարութեան կողմէ Սիւրիոյ Սանճաք նահանգը թուրքիոյ տալու պաշտօնական հանդիսութեան, մերժած է նուազել թրքական դրօշի բարձրացման եղանակը եւ այդ յանցանքին համար տանջալից բանտարկութեան ենթարկուելով իր մտքին առողջութիւնը կը կորսնցնէ:

«Հայկազ քեռին» 40 էջնոց վիպակ մըն է, ուր կը պատկերանայ Կիլիկիոյ Մարաշ քաղաքի հայութեան տեղահանութեան դէպքերը եւ Հայկազ քեռին ողբիսականը, թուրք Օսմանին շահատակութիւնները, աւագակուլութիւնները եւ աղջիկներու առեւանգումները:

Հայկազի քրոջ առեւանգումը թուրք Օսմանին կողմէ՝ պատճառ կը դառնայ որ Հայկազ սպաննէ Օսմանը, սակայն ճիւղաղ չի մեռնիր եւ իր վրէժը կը լուծէ Հայկազի ընտանիքէն:

Ի վերջոյ, տարիներ ետք, Հայկազ՝ Օսմանի հարէմին մաս կազմող Հըռիփսիմէի միջոցաւ կրցաւ մուտք գործել Օսմանի հարէմը եւ շան սատակ դարձնել արինարբու ճիւղաղը:

Իսկ «Քոյր եւ եղբոր առեղծուածը» մեզ կը տանի եղեռնի ջարդերէն ազատուած հայ որբերու ճակատագրին, որոնք Տէր Զօրի, Ռաս Իւլ-Այնի, Մէսփէնէի եւ Ռաքայի եւ աքսորի ճամբաներուն վրայ փրկուեցան քիւրտ ցեղախումբերու եւ արաբ ցեղախումբերու պետերուն կողմէ:

Երկու քիւրտ ցեղախումբերու մէջ ապրող Ասատ (Արմէն) եւ Գիւլիզար (Արշալոյս), առանց գիտնալու թէ երկուքն ալ հայ են եւ քոյր-եղբայր, գիւրար կը սիրեն եւ կ'ամուսնանան, սակայն, առագաստի գիշերը, խօսելով իրենց անցեալէն, կը վերյիշեն իրենց ազգութիւնը, ընտանիքը եւ քոյր-եղբայր ըլլալին եւ այդ գիշեր Արշալոյս կամ Գիւլիզար չկարենալով դիմանալ հոգեկան տառապանքին, սրտի տագնապով կ'իյնայ եւ կը մեռնի, իսկ Արմէն-Ասատ, չկարենալով ապրիլ Գիւլիզարի մահուան հետեւանքով իր ունեցած հոգեկան ցնցումին, անձնասպան կ'ըլլայ...: Պատկերազարդ պատմութիւն հայոց:

«Քոյր եղբոր առեղծուածը», որ այնքան հետաքրքրութեամբ եւ սրտի խոր հառաչանքով կարդացի, քիչ մը աւելի զարգացնելով կրնայ վէպի մը առաղձը ըլլալ, որ իրական է եւ մաս կը կազմէ հայոց պատմութեան սեւագոյն թուականէն առթած դժբախտութիւններու, տառապանքներու եւ առեղծուածներու:

Վերագառնալով Նշան Շահինի մանկութեան եւ պատանեկութեան կրած թշուառութեան եւ դժբախտութեան, հոս կ'ուզեմ աւելցնել, շեշտելով այն իրողութիւնը, որ բնաւեր եւ գաղթական մեր ծնողները, որոնցմէ շատեր գիւղացի կամ գիւղացիի գաւակ, առանց արհեստ մը ունենալու, արաբական այս քաղաքին մէջ ի՞նչ կրնային ընել, հազիւ փռապանութիւն եւ ջաղացպանութիւն, որ մեծ փորձառութեան եւ մասնագիտութեան կարիքը չէր փրկուողներ եւ անօթի մնալու վախ ալ գոյութիւն չունէր:

Եւ, Սփիւռքի մէջ ծնած առաջին սերունդը, այսինքն մենք՝ Նշանը, ես եւ մեր տարեկիցները, մանկութիւն չունեցանք: Ծնորհքով հագուստ, սնունդ եւ մանկական կեանք բնորոշող բարիքներ, խաղալիկներ եւ միջավայր՝ անծանօթ մնացին մեզի:

Նշան Ծասէնի հետ մեր ծանօթութիւնը կը սկսի 1942 թուականէն: 1936 թուականին, մօրս հիւանդութեան պատճառով նիւթական կարիքի հետեւանքով, հայրս ստիպուած ծախած էր Նոր Գիւղ թաղամասին մէջ իր ձեռքերով շինած տունը եւ խանութը եւ այդ թուականէն եղած էինք վարձուոր: Քանի մը տուն փոխելէ ետք, մօրս մահէն եւ հօրս վերամուսնութենէն յետոյ, փոխադրուեցանք Հալէպի «Արա Աճուր» կոչուող հայկական նորակառոյց թաղամասը եւ սենեակ մը վարձեցինք փռապան Յարութիւն Թէքքէլեանի կալուածէն: Տանտէրը կը բնակէր երկրորդ յարկը, իսկ մենք՝ առաջին յարկին մէջ գտնուող բաւական ընդարձակ սենեակի մը մէջ: Խոհանոցը եւ արտաքնոցը ընդհանրական էին:

Մեր դրացիութեան առաջին օրերէն ի յայտ եկաւ, որ Նշանին մօրը մահուանէն ետք, հայրը՝ ինչպէս իմ հայրս՝ կնքած էր նոր ամուսնութիւն եւ երկուքս ալ յանձնուած էինք մեր խորթ մայրերուն խղճմտանքին:

Տարիներ անցան, մեր տուներուն հասցէները եւ կեանքը փոխուեցան:

Ես, որպէս Դաշնակցական ծնած եւ մեծցած պատանի եւ ապա երիտասարդ, իմ ընկերական յարաբերութիւններս պահեցի համայնավար գաղափարաբանութեան ծառայող Նշան Ծասէնին հետ, որ արդէն իսկ հրատարակած էր բանաստեղծութիւններու երկու հատորները՝ «Դէպի Գարուն» (1948) եւ «Բռնկումներ» (1958):

Սուրիոյ մէջ տեղի ունեցած քաղաքական դէպքերու բերումով, Նշան Ծասէն եւ իր կինը՝ Զարուհին, որուն հետ Հալէպի մէջ որպէս պաշտօնակից գրաշար աշխատած եմ, Հայաստան ներգաղթեցին 1961ին:

Նշանին հանդիպեցայ 1971ին՝ Հալէպի մէջ, եկած էր տեսնելու իր հարազատներն ու ծննդավայրը: Հաճելի օրեր անցուցինք իրարու հետ: Վերադարձաւ հայրենիք:

1975ին, կեանքի պարտադրանքով ես եւ ընտանիքս գաղթեցինք Գանատա եւ հաստատուեցանք Թորոնթօ քաղաքը: Տարիներ ետք, Լոս Անճելըս հրատարակուող «Նոր Կեանք» շաբաթաթերթին մէջ կարգացի իր մէկ բանաստեղծութիւնը՝ Հայաստանի երկրաշաժին նուիրուած: Թերթի խմբագիր Պրն. Գրիգոր Ծէնեանին գրեցի եւ խնդրեցի ինծի ուղարկէ Նշան Ծասէնին հասցէն: Եւ օր մըն ալ Նշանէն հեռաձայն: Ծուրջ քսան տարիներ իրարմէ անտեղեակ ըլլալէ ետք, կրկին հանդիպում եւ մտերմութիւն:

1991ին, վերջապէս գիրկընդխառնուեցանք Լոս Անճելըսի իր բնակարանին մէջ, ուր սրտի խոր մորմոքով ունկնդրեցի իր անցուցած դժուարին տարիները Սովետական Հայաստանի մէջ եւ իրեն հանդէպ կատարուած անարդարութիւններն ու հալածանքները՝ իր բանաստեղծութիւններու երրորդ հատորին՝ «Մինչեւ Լուսաբաց»ի հրատարակութենէն ետք:

Մեր ի մանկունց սկսած բարեկամութիւնը վերանորոգուեցաւ փոխադարձ այցելութիւններով եւ հայ գրականութեան հանդէպ մեր տածած սիրոյն համընկնումէն:

Եւ ահաւաստիկ հանրութեան սեփականութիւնը կը դառնայ Հայաստան գրելու սկսած, սակայն նիւթական հնարաւորութենէն զրկուած «Փշուր-Փշուր Մանկութիւն» արձակ հատորը: Հետաքրքրութեամբ կարդացի գիրքը ամբողջութեամբ, տառապագին զգացումներով ապրեցայ հայ գաղթականի իր բնաշխարհէն վայրատուած ցաւատանջ կեանքը, հայ ժողովուրդի ոխերիմ թշնամի թուրքին անմարդկային սարսափներուն եւ անոր գործադրած ցեղասպանութեան հետեւանքով ողջ մնացողներուն խորշակահար կեանքին:

Նշան Շահէն կը գրէ մաքուր եւ սահուն արեւելահայերէնով, թէեւ ինք Կիլիկեցի (մարաշցի) ծնողներու զաւակ է, ունի պատմելու սքանչելի շնորհ՝ համեմուած պատկերաւոր ասոյթներով եւ քնարական շունչով: Կը քայլէ Վահան Թոթովեցի «Կեանքը հին հոռմիական ճանապարհի վրայ», Գուրգէն Մահարիի «Մանկութիւն եւ պատանեկութիւն», Աւետիս ահարոնեանի «Իմ Գիրքը» եւ անդրանիկ Մառուկեանի «Մանկութիւն չունեցող Մարդիկ» հատորներու բովանդակութեան շատ մօտ արահետներով:

Նշան Շահէնի «Փշուր-Փշուր Մանկութիւն» հատորը տպուած է 1993ին, Լոս Անճելըսի մէջ, տպագրութիւն «Շիրակ» հրատարակչականին, 213 էջ:

Գիրքը նկարագարողուած է գեղանկարիչ Սարգիս Գասապեանի կողմէ, իր ամէն մէկ պատմուածքի բովանդակութիւնը ցոլացնող նկարով մը ճոխացուցած է հատորը:

Նշան Շահէն այս հատորով կ'ոգեկոչէ իր ծնողները, ազգականները, Մարաշի գաղթը, եւ, գլխաւորաբար իր մանկութիւնը: Կը սիրենք յուսալ, որ ան շուտով կը ձեռնարկէ իր պատանեկութեան, երիտասարդութեան եւ հասուն տարիքին Հայաստանի մէջ իր անցուցած կեանքէն դրուագներ գրելու աշխատանքին:

Վստահ ենք, որ սոյն հատորը եւս մեծ հետաքրքրութեամբ պիտի կարդացուի եւ իր տեղը պիտի ունենայ հայ գրականութեան պատմութեան մէջ, իր հրատարակած եւ հրատարակելիք այլ գործերու կարգին:

Կանխայայտ շնորհակալութիւն:

Վարձքդ կատար, սիրելի գրչեղբայր...:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ» Շաբաթաթերթ
7 Յուլիս 1994
Լոս Անճելըս

ԽՈՐ ՎԻՐԱՊ՝ «ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆ»

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայաստանի պաշտօնաթերթ «Ազատամարտ»-ի թիւ 31, 5-11 Օգոստոս 1994ի թիւին 12րդ էջերը գրաւող վերոյիշեալ խորագրով Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ. Տ. Գարեգին Բ-ի սրտայոյզ, հայաշունչ եւ կրօնաշունչ սքանչելի յօդուածը կարդացած եւ խորապէս տպաւորուած էի Վեհափառ Հայրապետին գերզգայուն արտայայտութիւններէն:

Նոյն յօդուածին 12րդ էջին վրայ գրուած պատկերը՝ Մեծ եւ Փոքր Մասիսները՝ ստորոտին՝ «Խորհուրդ Խորին» Խոր Վիրապը, ուր շուրջ 1700 տարիներ առաջ, Հայոց Տրդատ Թագաւորին հրահանգով, 12 տեսակ չարչարանքներու ընթարկուելէ ետք, հայոց հաւատքին Լուսաւորիչը՝ Ս. Գրիգոր, արքայասպան Պարթեւ Անակի որդին, մնաց 13 տարիներ ու ապրեցաւ:

Գարեգին Վեհափառ իր յօդուածին մէջ կը գրէ.

«Ու ելայ գացի Խոր Վիրապ»

«Ի՛նչ հոյատեսիլ պատկեր» Արարատեան դաշտի պռունկին, պատմական Արտաշատի սրտին, Մայր Արաքսի «հին-հին դարուց յիշատակ»ներու յուշարար դրացնութեան մէջ եւ Արարատի բարձունքը որպէս երկինք ունեցող այս բլրակին վրայ քարերն ուրիշ իմաստ ունին: Տաճարի ու մատուռի քարերը կարծես աչքեր ըլլային բացուած Արարատեան դաշտին վրայ, աչքեր՝ որոնցմէ Աստուծոյ Լոյսը երկինքէն իջած՝ լայնածիր կարկին-հորիզոնով կը սփռուի ողջ տարածութեանը վրայ Արարատեան կանաչագոգեստ դաշտին: Այստեղէն մարդ չէ որ իր մտեղէն աչքերով կը նայի սա հողի տարածքին եւ լեռան բարձունքին, Աստուած է որ մարդուն մէջէն կը նայի եւ կը ժպտի հայոց աշխարհին. Դիտուած է սա, ուրկէ կը նայիս հազար եօթ հարիւր տարիներու վերայ անձայրածիր պարագրումով եւ բազմազունակ այլազանութեամբ սփռուած հայութեան քրիստոսատեսիլ կեանքի հորիզոններուն, որոնք Արարատեան դաշտէն ու աւելի հեռուն եւ Արարատ լեռնէն անդին՝ կը տարածուին մինչեւ Սիւնիք եւ Արցախ, Տայք ու Գուգարք, Վան ու Վասպուրական, Տարօն ու Տուրուբերան եւ մինչեւ Անի ու Կարին, մինչեւ Հռոմկլայ, ու Սիս, ի Միջերկրական եւ ի Կիլիկիա, եւ դեռ մինչեւ Սուրբ քաղաքն յԵրուսաղէմ եւ ի Կայսերաբնակ Կոստանդնուպոլիս, ի Նոր Զուղայ եւ յԱտրպատական, ի Բերիա, յերկիրն Սուրիոյ, Անթիլիաս, յերկիրն Լիբանանի եւ մինչեւ ի ծագս աշխարհի.»

*
* *

Հիւանդի մը այցելութեան համար ընկերներ Յակոբ Ճանպագեանի եւ Ռոստոմ Եղոյեանի հետ Թորոնթոյի Ուէլլի (Wellesley) հիւանդանոցն ենք եւ մեր քայլերը կ'ուղղուին դէպի հիւանդին սենեակը:

Յանկարծ, երեքս, կարծես ելեքտրական հոսանք է մը հաղորդուած քամուած կը մնանք տեղերնիս: Ի՛նչ տեսնենք, հիւանդանոցի ամէնէն աւելի տեսանելի եւ յարգի պատին վրայ, թանկարժէք շրջանակով մեզի կը դիտեն հայ ժողովուրդի համար երկու սրտագին եւ թանկագին կոթողներ՝ Արարատն ու Խոր Վիրապը:

Գարեգին Հայրապետի արտայայտած զգացումներու բեռան տակ երկար ատեն հայկական պատմական անցեալի եղելութիւններով ապրելէ ետք, ահաւասիկ, Թորոնթոյի Ուէլլզի հիւանդանոցի ամէնէն փառաւոր պատին վրայ Արարատը եւ Խոր Վիրապը՝ «Ես իմ Մասիս եարն եմ սիրում» մականգրութեամբ:

Երեքս կը խորհրդածենք, այս պատկերը որո՞ւ միջոցաւ եկած է եւ բազմած է Թորոնթոյի ամէնէն նշանաւոր հիւանդանոցին պատին վրայ:

Հանգոյցը կը քակէ Համագգայինի «Յ. Մանուկեան» գրադարանի եւ գրատարածի պատասխանատու ընկերը՝ Ռոստոմ Եղոյեանը. «Այս նկարը ես ծախած եմ այս հիւանդանոցի միզաբանութեան բաժնի պետ Տոքթ. Արա Քէրէսթէճիին»:

Կեցցե՛ս հայրենակից, Տոքթ. Արա Քէրէսթէճիին:

Պոլսոյ մէջ թուրքերու կողմէ կտրուած մականունիդ «եան»ը չէ կրցած սրտէդ հանել հայրենիքի եւ հայ եկեղեցւոյ հանդէպ քու ունեցած սէրը եւ հայտնութիւն բուրոզ այս նկարը գնելով եւ գեղեցիկ շրջանակով հաստատելով Թորոնթոյի այս հիւանդանոցի պատին վրայ, քու այլ բարեմասնութիւններուդ կարգին, հայրենասէրի եւ ազգասէրի պատիւը կրելուդ համար, ի խորոց սրտէ կը շնորհաւորենք քեզ սիրելի Տոքթ. Արա Քէրէսթէճիին:

«ՅՈՐԻՉՈՆ»
1994

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՈՒՂԻՈՎ

Հայաստանը իր աշխարհագրական դիրքի բերումով կամուրջ հանդիսացած է Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ, հետեւաբար, միշտ ենթակայ եղած է յարձակումներու՝ երկու կողմերու կողմէ:

Բնականաբար, հարեւան հզօր պետութիւններու իրար դէմ ունեցած բոլոր բախումներու պատճառով՝ հայ ժողովուրդը, ստիպուած, պաշտպանելու համար իր ինքնուրոյնութիւնը եւ հայրենի երկրի ամբողջականութիւնը, ռազմի դաշտ իջած է իր գերիշխանութիւնն ու անկախութիւնը պաշտպանելու համար:

Հայոց պատմութեան 386-451 եւ 451-484 թուականներու երկու դըր՝ ւազները եւ ուսումնասիրութեան եթէ նիւթ դարձնենք, հոն պիտի տեսնենք, որ մեր հաւատքին, մշակոյթին եւ ազգային ինքնութեան վրայ բռնացող ուժերու դէմ մեզ պայքարի դաշտ առաջնորդող հրամայականը եղած է գոյատեւում:

Խօսք միայն Ֆիզիքական գոյութեան մասին չէ: Հայրենիքի եւ ազգութեան գաղափարէն կարելի չէ անջատել ազատ եւ անկախ ապրելու գիտակցութիւնը, սեփական հողի, ինքնիշխան կեանքի մշակութային անկաշկանդ գարգացման, խղճի ազատութեան ու մարդկային իրաւունքներու ըմբռնումները:

Վարդանանց դիւցազնապատումը քննարկող ամէն հայ մարդ կրնայ հաստատել, թէ Աւարայրէն մինչեւ Նուարասկի Դաշնագրի կնքումը, այսինքն 451 Յունիս 2էն մինչեւ 484 թուականի աւելի քան երեսնամեայ դրուագը կը խտացնէ Վարդանի եւ Վասակի անունով խորհրդանշուող երկու տարբեր կարծիքներ գոյատեւումի, որոնցմէ առաջինին մէջ տիրական եւ ազգային արժանապատուութեան եւ ամբողջական անկախութեան գաղափարը, իսկ երկրորդին մէջ՝ դիւանագիտութեան եւ հաւաքական ապահովութեան երաշխիքը, փոյթ չէ, որ այդ ապահովութիւնը գիշումներ պարտադրած ըլլայ տկարին...

Սասանեաններու սպառնալիքը՝ կրօնական իր բնոյթով, քաղաքական նպատակներ կը հետապնդէր: Կրօնա-քաղաքական այդ վտանգին դէմ Մամիկոնեաններու ծառայումը, ապա նաեւ ազգային գոյամարտը Աւարայրի մէջ՝ քրիստոնէութեան չափ նաեւ՝ մեր ազգային ինքնիշխանութեան պայքարն էր:

Ոգեկոչել Վարդանանց պատերազմը՝ կը նշանակէ վերապրիլ հինգերորդ դարու հաւատամարտը, ըմբռնել գայն ո՛չ միայն կրօնական առումով, այլե՛ւ մշակութային-ընկերային եւ ազգային քաղաքական էութեամբ:

25 Մայիս 451 թուականին, հայ ժողովուրդը անհաւասար կռիւի դաշտ նետուեցաւ Պարսկաստանի 300 հազար մարդ հաշուող բանակներուն դէմ՝ միմիայն 66 հազար կտրիճներով, գործնապէս ո՛չ ըսելու համար անոր ստրկացումի եւ ձուլումի հրաւէրին:

Հայ ժողովուրդը, առանձինն, նախարարական իր տոհմերով, քաջարի կտրիճներով, հայ մշակոյթի պաշտպան կրօնաւորներու իր դասով, «փափքասուն տիկիրներ»ու գօտեպնդիչ խրախուսանքով, գեղջուկով, պատանիներով եւ պարմանուհիներով, մէկ խօսքով՝ բովանդակ հայ ժողովուրդը իր Ֆիզիքական եւ հոգեմտաւոր գոյատեւումը պաշտպանելու համար հայրենի հողին,

հայրենական մշակույթին, քրիստոնէական հաւատքին եւ աւանդութիւններուն սպառնացող թշնամիին, թէ՛ հայը կը մերժէ ենթակայ ըլլալ օտարի «բարեկան հոգատարութեան» հայը կը մերժէր հրաժարիլ իր պապենական այն ժառանգութիւններէն, որոնք կը կոչուին հայ գիր, հայ մշակույթ, եւ հայկական ինքնուրոյն աւանդութիւն:

Աւարայրի ճակատամարտով հայ ժողովուրդը շահեցաւ իր գոյատեւման կռիւը, ինչ փոյթ, որ իր քաջ սպարապետը՝ Վարդան Մամիկոնեանը ու անոր հետ 1036 հերոս հայորդիներ զոհուեցան՝ ի խնդիր իր սեփական դիմագիծին պահպանման:

Վարդան Մամիկոնեան հայոց բանակին սպարապետը, 451 թուականի Մայիս 26ին, Աւարայրի դաշտին վրայ իր արտասանած ճառին մէջ ի միջի այլոց ըսաւ.

«Զվախնանք թշնամի բանակի թուական գերիշխանութենէն ու մեր կուրծքը ցոյց տանք անոնց մահկանացուի սուրին: Եթէ Տէրը մեզի յաղթութիւն չնորհէ՝ թշնամիին զօրութիւնը կը խորտակուի եւ կը յաղթանակէ ճշմարտութիւնը: Իսկ եթէ հասած է ժամանակը, որ մեր կեանքը վերջ գտնէ պատերազմի Սուրբ մահով՝ ուրախ սրտով ընդունինք մահը. մեր քաջութեան հետ վատութիւն չխառնենք»:

Հայ ժողովուրդի պատմութիւնը լեցուն է պատերազմներով եւ ճակատամարտներով, սակայն, բոլորին մէջ Աւարայրի ճակատամարտը կը գրաւէ յատուկ տեղ մը: Աւարայրի ճակատամարտը փրկեց հայուն ինքնութիւնը: Ինքնութեան պահանջման, հայկականութեան գոյատեւման ի խնդիր մղուած այս ճակատամարտը սկսած էր 451 թուականէն շատ առաջ, սկսած էր այն օրէն, երբ յոյնն ու պարսիկը գրաւած էին հայկական հողը: Հայաստանը բաժնելով երկու կայսրութիւններու միջեւ: Հայ ժողովուրդը իր պայքարը սկսած էր գիրերու գիւտով, ամբօրէն կառչելով քրիստոնէութեան իր սեփական ըմբռնումներուն եւ վերջապէս՝ սուրով:

«Պատմութիւնը ինքզինք կը կրկնէ» կ'ըսեն: Այսօր հայ ժողովուրդը դարձեալ լծուած է իր գոյութեան պահպանման կռիւին, հայօրէն գոյատեւելու կռիւին:

Անկախացած հայրենիքը եւ Արցախը շրջափակուած են թշնամիներով: 1988էն ի վեր Հայաստան եւ Արցախ, Սփիւռքի հայութեան օժանդակութեամբ, կը մղեն գոյապայքար՝ ընդդէմ թրքական եւ ազրպէյճանական շրջափակումներուն եւ գինուորական յարձակումներուն: Սփիւռքի մէջ ցումման վտանգը կանգնած է ժողովուրդի գլխուն եւ գայն կը կրծէ շարունակ: Հայկական պատկանելիութեան զգացումը խեղդելու համար ճիգ չի խնայուիր ոչ մէկ տեղ: Տակաւ առ տակաւ հայը կը դառնայ ամերիկացի, ֆրանսացի, գանատացի, իրանցի, լիբանանցի, սուրիացի, եւ այլն:

Հայեր հարկադրուած են ամէնուրեք մղելու աւարայրեան ճակատամարտներ: Եւ Աւարայրէն 1500է աւելի տարիներ ետք, մեր գէնքերը կը շարունակեն մնալ նոյնը՝ լեզու, մշակույթ, սեփական արժեզափեր եւ գինուորական ուժը:

Այս գէնքերով է, որ հայը պիտի շարունակէ մնալ հայ, իր լեզուով է, որ հայ անհատը պիտի շարունակէ կապուած մնալ իր ժողովուրդին, հայերէ՛

նով է, որ Սփիւռքի զանազան գաղութներն ու հայաբնակ մեր ժողովուրդը կապուած պիտի մնան իրարու եւ պիտի զարգացնեն մշակոյթը, հայկական մշակոյթը, որ հայ հաւաքականութիւնները պիտի զատորոշէ իրենց շրջապատներէն եւ պիտի զարգացնեն ուրոյն աշխարհներ: Սեփական արժեզօններով է, որ հայ ժողովուրդը անկախ պիտի մնայ ուրիշներէն, պիտի ծնի նոր տեսլականներ եւ պիտի նուաճէ զանոնք, պիտի ձգտի ազատ, անկախ եւ ամբողջական Հայաստանին, որովհետեւ միայն հայրենի ազատ հողին վրայ է, որ հայը կրնայ մնայ իսկապէս հայ, իսկ ազատագրումը չի կրնար իրականանալ առանց սուրբ: Վկայ՝ մարդկութեան պատմութիւնը: Փաստ՝ Արցախի ազատագրական եւ ինքնապաշտպանութեան մարտերը:

Բազմիցս ըսուած է այն իրողութիւնը, որ գոյատեւման այս պայքարին մէջ անհրաժեշտ է հայ ժողովուրդի ուժերուն ամբողջական լարումը, անոր բոլոր կարողութիւններուն եւ կարելիութիւններուն սեւեռումը՝ դէպի մէկ եւ միակ նպատակ՝ բռնագրաւուած հայրենիքի ազատագրումը՝ հայ դատի արդար լուծումով: Վասակները տեղ եւ ձայն պէտք չէ ունենան մեր ազգային կազմակերպութիւններուն եւ կառոյցներուն մէջ:

Վարդան Մամիկոնեանն ու Ղեւոնդ Երէցը՝ շրջապատուած կտրիճ նախարարներ Խորէն Խորխոռունիէ, Արտակ Պալունիէ, Տաճատ Գնդունիէ, Հըմայեակ Դիմաքսեանէ, Ներսէս Քաջբերունիէ, Վահան Գնունիէ, Արսէն Ընծայացիէ, Գարեգին Սրուանձեանէ եւ այլ ազատասէր հերոսներէ:

Աւետարանն ու խաչը բարձրացուցած դիմեցին Աւարայրի դաշտը, ո՛չ թէ որպէս կոյր կրօնամոլներ, այլ՝ իբր գիտակից քրիստոնեաներ: Ու այդ գիտակցութիւնով էր որ քրիստոնէական հաւատքի վկայութեան համար անոնք ինկան, նահատակուեցան, մարտիրոսացան, ու այդ մահը իմացեալ ըլլալուն համար նաեւ անմահացան: Հայ ազգը երբեք չէ զղջացած այդ կամաւոր պատարագին համար – Քրիստոնէութեան գրաւականը մեր գոյութեան գլխաւոր ազդակը, մեր ազգութեան ու հիմը մեր մշակոյթին:

Յարգանք անոնց անթառամ յիշատակին...

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ ԵՒ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1975-ին ի վեր, Թորոնթոյէն, որպէս թղթակից եւ աշխատակից, բազմաթիւ թղթակցութիւններով եւ յօդուածներով աշխատակցած եմ «Հայրենիք» օրաթերթին եւ շաբաթաթերթին, հանդուցեալ ընկեր Մինաս Թէօլէօլեանի եւ Գէորգ Տօնապետեանի խմբագրի պաշտօն վարած շրջանին, որոնց հետ ծանօթութիւնս կու գար Հայկալի «Արեւելք» օրաթերթի իրենց խմբագրի պաշտօն վարած շրջանէն: Իսկ ես բանաստեղծութիւններով, թղթակցութիւններով, յօդուածներով եւ գրաշարական աշխատանքով իմ մասնակցութիւնս կը բերէի «Արեւելք» օրաթերթի հրատարակութեան, 1947-էն մինչեւ 1961, քանի մը տարի ուսուցչական եւ այլ աշխատանքով բացակայելով տպարանէն:

Այս առիթով, յետ մահու, որպէս երախտագիտական խօսք եւ արտայայտութիւն, կ'ուզեմ խորագրաց եւ անկեղծ գնահատանք յայտնել ընկեր Մինաս Թէօլէօլեանին, որուն քաջալերանքով իմ առաջին եւ այնուհետեւ բազմաթիւ քերթուածներս լոյս տեսան. «Արեւելք» օրաթերթի թիւերուն մէջ: Ուրեմըն, ամենայն տրամաբանութեամբ կ'ուզեմ յայտարարել, թէ ընկեր Մինաս Թէօլէօլեանի կողմէ «Արեւելք» օրաթերթերուն մէջ իմ քերթուածներս եւ յօդուածներս հրատարակելով, ան պատճառ դարձաւ, որ ինծի պէս տղաք, որոնք հայ լեզուի եւ գրականութեան հանդէպ պաշտամունք ունէին, աւելի եւս փարին իրենց նախասիրութեան եւ իրենց կեանքին գլխաւոր սէրը ըլլայ ծառայել հայ մամուլին եւ գրականութեան՝ որպէս պաշտօն եւ նուիրում:

Ուրեմն, որպէս սկսնակ գրող, իմ առաջին քայլերս նետած եմ «Արեւելք» օրաթերթի էջերէն, ապա տարածուելով Սուրիա-Լիբանանի այլ օրաթերթերու եւ գրական հանդէպներու հրատարակութեան մէջ եւ 1975-ին հաստատուելով Թորոնթօ, Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի կողմէ նշանակելով պաշտօնական թղթակից «Հայրենիք»ին, շուրջ քառորդ դար, թղթակցութիւններով եւ յօդուածներով աշխատակցութիւնս բերած եմ անոր հրատարակութեան, ինչպէս նաեւ Գանատայի Հ.Յ.Դ.աշակցութեան պաշտօնաթերթ «Հորիզոն»ին, իր հրատարակութեան թուականէն: 28 Մայիս 1979-էն սկսեալ:

Գալով «Հայրենիք» շաբաթաթերթին, որ այս տարի կը լրացնէ իր հարիւրամեայ երթը, 1899-1999, ամբողջ մէկ դար՝ 100 տարի, որպէս Հ.Յ.Դ. պաշտօնաթերթ լուսաւորելով ամերիկահայութեան միտքերը:

Մատրասի մէջ, Հնդկաստան 1794 Հոկտեմբեր 16-ին, Յարութիւն Ա. Քհնյ. Շմաւոնեանի խմբագրութեամբ հրատարակուած հայկական առաջին թերթի հրատարակութենէն ի վեր, 205 տարիներու ընթացքին բազմաթիւ թերթեր հրատարակուած են Սփիւռքի եւ Հայաստանի մէջ, սակայն անոնցմէ ոչ մէկը կրցած է հասնիլ «Հայրենիք»ի երկարակեցութեան, նիւթական եւ քաղաքական աննպաստ պատճառներով դադարեցնելով իրենց հրատարակութիւնները:

Հոս պէտք է խոստովանիլ, որ Պոսթընի մէջ հրատարակուող «Հայրենիք» ամսագրի, «Հայրենք» օրաթերթի եւ «Հայրենիք» շաբաթաթերթի կեանքի ուղին այնքալ ալ հեզասահ չէ եղած: Դժուարութիւններու հետեւանքով դադար

րած է այնքան բովանդակալից «Հայրենիք» ամսագիրը, օրաթերթին շաբաթաթերթի վերածուած «Հայրենիք» օրաթերթը, որուն վերջին խմբագիրները եղած են Ռուբէն Դարբինեան, Մինաս Թէօլէօլեան եւ Գէորգ Տօնապետեան եւ միշտ փոխ խմբագիր՝ Խոսրով Ներսէսեան (Գիսաւոր), որոնք իրենց գաղափարական հաւատքով եւ նուիրուածութեամբ իրենց դրոշմը դրած են «Հայրենիք»ներու հրատարակութեան եւ հասցուցած 21րդ դար: Այժմ հերթը հասած է երիտասարդ ընկերներու: Ընկեր Վահագն Գարագաշեան (Գանատայի) «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրի պաշտօնին կոչուելէն ետք, ներկայիս խմբագրի պաշտօնը ստանձնած է Հալէպի «Գանձասար» շաբաթաթերթի եւ, ապա, Գահիրէի «Յուսաբեր»ի նախկին խմբագիր՝ ընկեր Խաժակ Մկրտիչեան, որուն ուսերուն վրայ կը ծանրանայ «Հայրենիք» շաբաթաթերթի երթը վարելու 21րդ դարու ճանապարհը:

«Հայրենիք»ի 100-ամեայ յորելեանին առթիւ, կը շնորհաւորեմ Հ.Յ.Դ. Միացեալ Նահանգներու Արեւելեան Շրջանի Կեդրոնական Կոմիտէն, կոմիտէները, ընկերները եւ «Հայրենիք»ի անձնակազմը, մաղթելով յարածուն վերելք ու բարգաւաճում:

Արտասահմանի մէջ, եւ ներկայիս նաեւ Հայաստանի եւ Արցախի մէջ, թերթ հրատարակելն ու պահելը իսկապէս քաջագործութիւն է, հակառակ, որ թերթերու մեծամասնութիւնը կը հրատարակուին կուսակցութիւններու միջոցներով: Կարելի չէ սակայն միշտ կազմակերպութիւններու ապաւինել թերթ մը կանգուն պահելու համար: Թերթը նկատի պէտք է առնել որպէս առեւտրական ձեռնարկ եւ հոն լոյս տեսնող յայտարարութիւններով հաւասարակչուել հրատարակութեան ծախսերը: Այլապէս, տարիներ շարունակ վնասող հրատարակութիւն մը կանգուն պահելը շատ ծանր կրնայ կշռել կուսակցական մարմիններուն: Պէտք է ընդունիլ, որ արտերկրի մամուլը ընդհանրապէս կուսակցական է ու իբր այդ բնական է, որ ան կուսակցութիւններու գաղափարական սկզբունքներ ջատագովէ ու գաղափարական, կուսակցական եւ քաղաքական քարոզչութիւն ընէ: Սակայն պէտք է խոստովանիլ, որ կուսակցական մամուլը իր կատարած գաղափարական քարոզչութեան կողքին, յաջողած է պատրաստել զիտակից սերունդներ, անոնց մէջ ներմուծելով ազգային զոհաբերութեան եւ հայրենասիրութեան ոգին: Հայ Յեղափոխական եւ ազատագրական շարժումը պատրաստող մտաւորական առաջնորդները, մամուլի միջոցաւ է, որ յաջողեցաւ հայ ժողովուրդի հոգիէն արմատախիլ ընել ստրկութեան եւ ենթակայութեան զգացումը:

Մամուլը գրաւոր հաղորդակցութեան միջոց է, որուն հիմնական գործունէութիւնը կը կեդրոնանայ առաւելաբար հետեւեալ երկու ասպարէզներու ծիրին մէջ: Առաջին՝ տեղեկութիւն-լրագրութիւն: Երկրորդ՝ քարոզչութիւն: Սակայն, կուսակցական թերթ մը ամբողջութեամբ կամ առաւելաբար կուսակցական քարոզչութեամբ լեցնելը, կրնայ իր նպատակէն շեղիլ եւ թերթի բաժանորդներուն մէջ (մեծ մասին մէջ) դժգոհութիւն յառաջացնել: Իմ կարծիքով, կուսակցական պաշտօնաթերթ մը միայն կուսակցական ընկերներու համար չի հրատարակուիր: Բաժանորդներու մեծ մասը, համակիրներ եւ պարզ հայորդիներ են, որոնք հայկական թերթի մը մէջ կը փնտռեն իրենց նախասիրած նիւթերը, որոնք կրնանք բաժնել գլխաւոր հետեւեալ գլուխներ:

րու.- խմբագրականներ, թղթակցութիւններ, յօդուածներ ազգային եւ եկեղեցական տօներու վերաբերող, բժշկական յօդուածներ, կնիքական եւ մարզական լուրեր:

Կուսակցական թերթի մը խմբագիրը, վերոյիշեալ այլազանութիւնը պահելով հանդերձ, կրնայ կուսակցական եւ գաղափարական քարոզչութիւն կատարել, առանց ձանձրացնելու ընթերցողները երկարապատում քարոզչութիւններով, պատճառ դառնալով, որ ընթերցողը հարեւանցիօրէն անցնի այդ քարոզչութեան վրայէն:

Եթէ կուսակցական թերթ մը այլազանութիւն ունենայ եւ կարենայ գոհացնել զանազան հետաքրքրութիւն ունեցող ընթերցողները, այդ պարագային, բաժանորդներու թիւը կը բարձրանայ եւ այդ ձեւով թերթին եկամուտը կ'աւելնայ:

Սակայն, հայ իրականութեան մէջ չկան թերթեր, որոնք կ'ընթանան վերոյիշեալ հասկացողութեամբ: Չկան թերթեր, որոնք կը բաւարարեն այսօրու ընթերցողին հրապարակագրական ճաշակն ու նիւթերու հետաքրքրութիւնը: Մեր մամուլէն էսպէս կը պակսին քննական յօդուածներ, ընկերային երեւոյթներու վերլուծականը, համամարդկային եւ ազգային մտահոգութիւններ եւ կենցաղային հարցեր արծարծող աշխատութիւններ եւ մանաւանդ քրննադատական յօդուածներ:

Քննադատական յօդուածները ամէն պարագայի շատ համակիրներ չունի հասարակութեան անդամներուն եւ միութիւններու վարչութիւններուն մօտ: Կը բաւէ թղթակից մը շինիչ քննադատութիւն կամ թելադրանք ուղղէ միութեան մը եւ կամ կազմակերպող յանձնախումբի մը անդամներուն, վայնասունը կը փրթի եւ յօդուածագիրը կը դառնայ դատապարտութեան արժանի եւ քանդիչ: Մեր միութիւններու պատասխանատուները տակաւին չեն կըրցած ըմբռնել, որ առանց քննադատութեան եւ մեղմասուն թելադրանքներու ձեռնարկները կը լծանան եւ կը նեխին:

Հայ մամուլը, այս պարագային կուսակցական եւ իր կոչումին գիտակից հայ մամուլը, եզակի դեր մը ունի հայ դատի քարոզչութիւն կատարելու: Քարոզչական մեծ կարելիութիւններով եւ կարողականութեամբ օժտուած միջոց մըն է հայ մամուլը: Մեր ոտնակոխուած իրաւունքները, մեր արդար դատը, մեր նոր սերունդի սեփականութիւնը դարձնելու այդ ազգօգուտ պարտականութիւնը դարձեալ հայ մամուլին ճիտին պարտքն է: Վերջապէս չափազանցութիւն մը ըրած չենք ըլլար, եթէ ըսենք թէ ժողովուրդի մը, քաղաքակրթութեան մակարդակը, որոշ չափով կը գնահատուի նաեւ նոյն այդ ժողովուրդին: Իր մամուլին հանդէպ ունեցած գիտակցութեան եւ զայն գնահատելու կարողութեան մակարդակով:

Ուրեմն, սփիւռքը լաւապէս պէտք է գիտակցի այս խիստ կենսական ազգային պատասխանատուութեան եւ պարտաւորութեան եւ իր նիւթական եւ բարոյական աջակցութեամբ պէտք է միշտ զօրավիզ կանգնի իր մամուլին: Պէտք է մեր աւօրեայի հետաքրքրութեամբ, ընթերցասիրութեամբ եւ բաժանորդագրուելու յօժարակամութեամբ, գիտակցինք գնահատել եւ սնուցանել մեր մամուլը եւ անոր սեւ աշխատանքին լծուած անձնուէր աշխատակիցները՝ ի խնդիր մեր գոյատեւման պայքարին:

Սակայն, ինձի մտահոգող գլխավոր հարցը, այս գաղութներուն մէջ, Մերձաւոր Արեւելքէն գաղթողներու, հայերէն գրել, կարդալ գիտցողներու նուազումով, հայերէն թերթ կարդացողներու թիւին նուազիլը կը նկատեմ: Ամերիկաներու տարածքին շատ է թիւը թերթերու ուղղուած նամակներուն, ուր կ'ըսուի «հայրս (կամ մայրս) մեռաւ, հայերէն կարդացող չունինք, թերթը դադրեցուցէք» բովանդակութեամբ:

Նման թատերական տխուր պատկերներու առաջը առնելու եւ օր ըստ օրէ, հայերէն թերթ կարդացողներու թիւին նուազումին պատճառ չդառնալու համար, որպէս դարման ունինք միմիայն մէկ ճամբայ՝ գաղթողները օժտել հայկական երկրորդական վարժարաններով, ուրկէ շրջանաւարտ հայ աշակերտը իր ազգասիրական եւ հայրենասիրական զգացումներուն դրդումով ստիպւի հայերէն թերթերու բաժանորդագրուելու եւ հայերէն թերթ կարդալ: Անգլերէնով կամ ֆրանսերէնով հրատարակուող հայկական թերթերը մեր կոտորացող վէրքին բալասան չեն կրնալ բերել: Հայկական ոգին արթուն կրնայ մնալ միմիայն Մեսրոպեան տառերով եւ հայերէն լեզուով ընթերցանութեամբ:

Ամերիկաներու եւ Գանատայի եւ Եւրոպայի տարածքին գործող մեր բոլոր կազմակերպութիւններու ղեկավարները, եթէ կ'ուզեն Սփիւռքի հայութեան կեանքը երկարել, պարտին հայ մամուլի եւ հայ գրականութեան հետեւող սերունդներ պատրաստել:

Հայկական մամուլն ալ, ներկայիս, ազգակերտ քարոզչութիւններով կրնայ մեծապէս օգտակար հանդիսանալ հայապահպանութեան աշխատանքներուն եւ հայեցի դաստիարակութեան կարեւորութեան:

**«ՀԱՅՐԵՆԻՔ»ի 100-ամեակի Բացառիկ
1999**



Հայաստանի Գրողներու Միութեան
Նախագահ պրոֆ. Լեւոն Անանեանի հետ
Արցախ այցելութեան ճամբուն վրայ


ՀԱՅ ԳԻՐՔՆ Է ՃԱՆԱՊԱՐՔՈՂ ՀԱՅՈՒՆ՝ ԱՇԽԱՐԻ ԶՈՐՍ ԾԱԳԵՐՈՒՆ

Երջանկայիչատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիոյ իր գահակալութեան շրջանին, սովորութիւն ըրած էր Կաթողիկոսարանի մէջ «Հայ Գիրքի Օր» կազմակերպել տարին մէկ անգամ եւ այդ առիթով, իր գաղափարները եւ մտածումները գրի առնելով մամուլով հրատարակեց, շեշտելով կարեւորութիւնը Հայ Գիրքին:

Իր մտածումներէն կ'առնենք հետեւեալները.-

- Հայ գիրքը ճանապարհն է հայուն: Ան որ գիտէ քալել այդ ճանապարհէն, կ'անցնի հայ հոգիի եւ հայ կեանքի քուրայէն եւ այսպէս աշխարհի մէջ հայութեան իր գոյնը կը պահէ վառ ու բիւրեղ:
- Գիրքը մարդուն հոգեմտաւոր աշխարհին արտացոլումն է:
- Գիրքը զգացումների բխումն է՝ գիրի հունով հոսող:
- Գիրքը մտածումներու մարմնացումն է՝ գիրի տարազով հանդերձըլող:
- Գիրքը մարդու շարունակական ինքնակերտումի ամէնէն կարեւոր ազդակն է:
- Գիրքը քաղաքակրթութեան տարածման եւ զարգացման անինն է:
- Խաւար է աշխարհը առանց գիրքի:
- Մեր ժողովուրդը հաւատաց, որ գիրքը իր անմահութեան ճամբուն վրայ լոյս կը ցանէ: Հաւատաց, որ «խօսքը կը թռչի, գիրը կը մընայ» ու իրեն հետ կ'ապրեցնէ գինք հոգիով լեցնող մարդն ու ազգը:
- Հայ գիրքը սոսկ անցեալ չէ: Հայ գիրքը շատ երկար եւ ճոխ պատմութիւն ունի, բայց ինք պատմութիւն դարձած չէ: Հնատիպ գիրքը հայոց մշակոյթի ոսկի էջերէն մին կը կազմէ: Բայց նորատիպ գիրքը թէ՛ Հայաստանի եւ թէ՛ արտասահմանի մէջ, տարբեր պայմաններու տակ, անցեալի փառքի ստուերին տակ չապրիր, այլ՝ նոր շողեր կ'աւելցնէ այդ փառքին դրասանդին վրայ:
- Գիրքին բուն, վախճանական տեղը գրատունը չէ, ոչ ալ մատենադարանը: Գիրքին իսկական տեղը հայ տո՛ւնն է: Գիրքին տէրը սոսկ հեղինակը կամ հրատարակիչը չէ, գիրքին իրական տէրը հայ մարդն է, հայ ընտանիքը, որուն համար կեանքի կը կոչուի գիրքը որպէս աղբիւր ապրումներու, գաղափարներու, ձգտումներու, ծանօթութիւններու:
- Գիրքերը գնայուն մարդերէն մնայունը փրկեցին եւ ներկայ ըրին բոլոր ժամանակներուն մէջ եւ բոլոր աշխարհամասերուն վրայ եւ բոլոր մարդերուն համար:
- Մենք կա՛նք մեր լեզուին շունչը մեր ազգին մէջ կենդանի պահող գիրով եւ գիրքով:
- Ով որ հայ գիրք կը կարդայ, աւելի հարազատօրէն հայ կը զգայ,

- նման այն մարդուն, որ ջուրը ակէն կը խմէ զով ու զուլալ:
- Այն մարդը եւ այն ազգը, որ կը կտրուին գիրքի աշխարհէն, չոր ա՛նապատ ու տափաստան կը դառնան, ուր միայն փուշն ու տատասկը, օձն ու կարիճը տուն կը գտնեն...:
 - Գիրքը գիրքէն աւելի բան մըն է հայուն համար, մանաւանդ ըս՝ փիւռքի անհող ու անլաստ հայութեան համար: Հայրենիք է հայ գիրքը:
 - Հայ ազգի կեանքին մէջ գիրքը լուսացոյց այն ճանապարհը եղաւ, որուն մէջէն քալեց մեր ժողովուրդը իր տաք ու պաղ օրերուն եւ մանաւանդ ամպամած այն օրերուն, երբ մարդիկ ուզեցին իրենց կեանքի թելը սուրով կտրել: Փոխարէն, հայ մարդը իր գիրքերով իր կեանքը յաղթանակի վերածեց եւ շղթայանման շարալարութեամբ սերունդէ սերունդ՝ ոսկի թելի պէս կապեց:
 - Հայ գիրքը հայ կեանքին մէջ ազդու եւ սրսուադրիչ ներգործութեան համար անհրաժեշտութիւն մըն են հանրային ժողովրդամտաչելի գրադարանները, ուր պարզ հայ մարդիկ վարժուին երթալ, ինչպէս կ'երթան հանրային ճաշարան կամ գրասալայր:
 - Գրադարան մը ապրող մարդերու կենսաշրջանակ մըն է, որուն մէջ մտնելու միակ դուռը ընթերցումն է՝ աչքը ունենալով որպէս կըղձ պանք եւ սիրտը, միտքն ու կամքը՝ որպէս բանալի:
 - Հայ գիրքը միւռոն է մեր ժողովուրդի գաւակներուն համար: Ան որ հայ գիրք կը կարդայ, կը միւռոնուի հայութեամբ:
 - Գիրքը կերակուրն է միտքին, սնունդը՝ հոգիին:



Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. եւ Գրիգոր Յոթոյեան

Վեհափառ Հայրապետի վերոյիշեալ մտածումներէն առաջնորդուելով, Երեքշաբթի, 10 դոստոս 2000, երեկոյեան ժամը 5:00ին, այցելեցի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ «Լեւոն Ֆերմանեան» գրադարանը, ծանօթանալու համար հոն կատարուող նորարական եւ ճոխացման աշխատանքներուն:

Հայ Աւետարանական Եկեղեցւոյ «Լեւոն Ֆերմանեան» գրադարանը հիմնուած է 1982ին, եկեղեցւոյ նախկին շէնքի յատուկ բաժնին մէջ: Գրադարանը օրին կոչուեցաւ երիտասարդ տարիքին (Ծն. 1944, Մահ. 1967) արկածով մահացած Լեւոն Ֆերմանեանի յիշատակին, Ֆերմանեան ընտանիքին կողմէ եղած նիւթական նուիրատուութեամբ: Ապագային, Տէր եւ Տիկին Մկրտիչ եւ Լիւսի Ֆերմանեաններ, տարբեր առիթներով, գրադարանի բարգաւաճման համար, շարունակեցին իրենց նիւթական օժանդակութիւնը:

1982ին, գրադարանի պաշտօնական բացումը կատարուեցաւ 400 գիրքերով, իսկ ներկայիս, եկեղեցւոյ նորաշէն համալիրին մէջ տեղաւորուած «Լեւոն Ֆերմանեան» գրադարանը կը հաշուէ շուրջ երկու հազար կրօնական, հոգեւոր, հայագիտական, գրական, պատմական, գեղարուեստական գիրքեր եւ պարբերաթերթեր:

Գրադարանի պատասխանատուներուն հիմնական սկզբունքը եղած է որակաւոր եւ ընտրեալ գիրքեր հաւաքել, որոնց շարքին Հայ Դատի եւ Հայոց Եղեռնի շուրջ գրուած հայերէն, անգլերէն եւ ֆրանսերէն գիրքեր եւ հնատիպ պարբերաթերթեր, գիրքեր եւ ձեռագիրներ:

Գրադարանի հաւաքածոններուն մաս կը կազմեն նաեւ հայերէն եւ անգլերէն գանազան պարբերաթերթեր եւ շաբաթաթերթեր:

«Լեւոն Ֆերմանեան» գրադարանի հիմնադրութեան թուականէն սկսեալ, վարիչ-անօրէնութեան պաշտօնը ձեռնհասօրէն եւ նուիրումով կը վարէ Պրն. Միհրան Ճիգմէճեան, որ ճիգ չի խնայեր գրադարանի զարգացման եւ ճոխացման համար:

Սոյն գրադարանի հիմնադրութեան նպատակը եղած է ստեղծել հայագիտական եւ պատմագիտական հետազոտութեան կեդրոն մը, որմէ կարողանան օգտուիլ հայ եւ օտար ուսանողները, որոնք կ'ուզեն որոշ գաղափար ունենալ հայ գրականութեան, մշակոյթին եւ պատմութեան՝ որոշ ուսումնասիրութիւն պատրաստելու համար, ինչպէս նաեւ ամենայն դիւրութեամբ եւ պայմաններով առիթ տալ հայերէն գիրքերով հետաքրքրուող եւ կարգալ փափաքող մեր ազգայիններուն, առիթ տալով, որ անոնք զան գրադարան եւ իրենց նախասիրած գիրքերը առնելով իրենց գրական ճաշակին գոհացում տան:

«Լեւոն Ֆերմանեան» գրադարանի ղեկավարութիւնը, պահանջքը զգալով գրադարանը արդի գիտական սկզբունքներով, միջոցներով եւ կազմակերպական կանոններով օժտելու, հրաւիրած է գանատական գրադարաններու մէջ որպէս գրադարանագէտ պաշտօնավարած Պրն. Սարգիս Համպոյեանը, որ անհատոյց շուրջ վեց ամիսէ ի վեր կ'աշխատի գրադարանը արդիականացնել, ցուցակագրելով բոլոր գիրքերը եւ պարբերաթերթերը, որոնք ապագային պիտի անցնին համակարգիչի մէջ, աւելի դիւրութեամբ գործածուելու համար:

Նկատելի է, որ գիրքերու բովանդակութիւններու սկզբունքներով, անոնք գրադարանի մէջ տեղադրուած են իրենց յատուկ պահարաններու մէջ:

Գրադարանի գիրքերուն ցուցակագրութենէն վերջ, Ուրբաթ, 27 Հոկտեմբեր 2000ին, տեղի պիտի ունենայ գրադարանի պաշտօնական վերաբացումը, եկեղեցւոյ վարչութեան հրաւերով եւ կազմակերպութեամբ գրադարանի յանձնախումբին:

Այս աշխատանքներուն եւ զարգացումներու ընթացքին, եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Վերապատուելի Յսայի Սարմազեան եւ եկեղեցւոյ զանազան մարմինները, իրենց դրական կեցուածքով օժանդակեցին գրադարանի բարգաւաճման եւ ճոխացման գործին:

Գրադարանին նիւթապէս եւ գիրքերով օժանդակելու փափաք ունեցողները կրնան դիմել գրադարանի վարիչ-տնօրէն Պրն. Միհրան Ճիզմէճեանին, հեռ. (416) 429-1007, կամ գրելով հետեւեալ հասցէին.-

*Levon Fermanian Library
2600, 14th Avenue
Markham, Ontario
Canada
L3R 3X1*



«Նոր Դար» գրական ամսագրի խմբագիր գրականագետ Աբգար Ափինեանի հետ 2002 թուականին

ԳԱՆԱՏԱՀԱՅ ՏԱՂԱՆԴԱԽՈՐ ԵՐԳՉՈՒՆԻ ՕՐԻՈՐԴ ԻԶԱՊԷԼ ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ

Գանատայի եւ Միացեալ Նահանգներու տարածքին, մեծ համբաւի եւ գնահատանքի արժանացած է թորոնթոնայ տաղանդաւոր երգչուհի օրիորդ Իզապէլ Պայրադտարեան, որ իր սոփրանօ ձայնով եւ դասական երգչուհիի ամբողջական շնորհներով, միջազգային յաջողութեան հասած է, որպէս օփերայի երգչուհի, արդար հպարտանք եւ պատիւ բերելով իր ազգին:

Օրիորդ Իզապէլ Պայրադտարեան ծնած է Զահլէ (Լիբանան): Փոքր տարիքէն սկսած է երգել տեղւոյն եկեղեցւոյ դպրաց դասին մէջ: 6 տարեկանին հետեւած է դաշնամուրի դասընթացքներու: Հետագային սորված է նաեւ սըրինդ նուագել:

1989ին, ընտանեօք փոխադրուած է Թորոնթօ, ուր 1992ին հետեւած է Թորոնթոյի «Conservatory of Music»-ի դասընթացքներուն: 1995ին բարձրագոյն նիշերով կ'աւարտէ երաժշտանոցի Զրդ դասարանը, ապա իր երաժշտական ուսումը կը շարունակէ «Royal Conservatory of Music»-ի մէջ՝ զոյգ կրթաթոշակներով: Ան իր առաջին երգահանդէսը տուած է 1995ի Գեկտեմբերին:

Ան ներկայացած է նաեւ «Canadian Chamber Academy»-ի «Gala Concert»-ին՝ «Art Gallery of Ontario»-ի մէջ: Ան նոյնպէս ելոյթ ունեցած է Գանատայի «Bravo» հեռատեսիլին: Մասնակցած է բազմաթիւ ելոյթներու եւ արժանացած պարգեւներու:

«Most Accomplished Vocalist of the Year»՝ 1991ին, «Music Fest Canada Competition»-էն: «Most Valued Participant in Music»՝ 1992ին, «Kiwans Choral Music Competition»-էն: «Best in Category» եւ «Best in Division»՝ 1994ին, «N.A.T.S. Ontario Chapter Competition»-էն: Ստացած է «R.C.M.»-ի «Margaret Laidner Scholarship»-ին՝ 1994 Յուլիսին:

Օր. Պայրադտարեան միակ հայը ըլլալով, մասնակցեցաւ «Canadian Music Competition - CMC» 1995ի երգեցողութեան բաժնին եւ շահեցաւ «National Canada»-ի առաջնութիւնը իր դասակարգին մէջ (20 տարեկան): Այս եզակի եւ պատուաւոր արդիւնքին հասնելու համար ան շահեցաւ նաեւ առաջին մրցանակը բոլոր դասակարգերու մէջ (20-28 տարեկան), մրցումներուն, «CMC Provincial (Ontario)» եւ «CMC Regional (Toronto)» արժանանալով կրթաթոշակի 1995ին:

Իզապէլ անգամ եղած է «Opera in Concert» chorus-ին՝ 1994-1995 եւ մասնակցած զանազան օփերաներու, ինչպէս Լինէն, Վերտիէն, Պիզիթէն եւ Կրանատոսէն: Ան մրցանակակիր է 1997 տարեշրջանի «Metropolitan Opera National»-ին եւ իրաւունք ստացաւ ելոյթ ունենալու Մեթրոփոլիթէն օփերայի բեմին վրայ, ընկերակցութեամբ Մեթրոփոլիթէն օրքեսթրի, առաջնորդութեամբ հռչակաւոր մայեսթրօ Մուլլըրի: Ան պարգեւատրուած է նաեւ «Միսիս Էտկար Թոպին» մրցանակով՝ 1995ին:

Իր բազմաթիւ մրցանակներու կողքին, ան ունի «Լաւագոյն Կատարելագործող Արթիստ» մրցանակը եւ «Բարձր Մակարդակի Երգող»-ի առաջին մրցանակը: 1995ին «International Armenian Allied Art» Ասիլէրն մրցոյթին՝ Գալի-

Փորնիոյ մէջ, ան շահեցաւ առաջին մրցանակը եւ կրթաթոշակ՝ «Բարձր եւ Յաղթանչան Ձայն»-ի դասին: Դարձեալ 1995ին, Քիվանես Միւզիք մրցոյթին: Որպէս մենակատար մասնակցած է ձայնի փառատօնին՝ «Windmerry Music Festival»-ին եւ Ռուստի Music Festivalին: Ան երկու անգամ ելոյթ ունեցած է «Canadian Chamber Academy»-ի օրփէսթրային հետ՝ «Ford Center Recital Hall»-ի մէջ եւ որպէս հիւր արթիստ մաս կազմած է էթնօպիքոքի Ֆիլհարմօնիք օրփէսթրայի կողմէ իրենց 1995-1997 երաժշտական ելոյթին: Ան ընդունուած է նաեւ որպէս «Young Artists» 1996-1997ին «Մուրտէյլ Քոնսերթ Սիրէյզ»-ի ներկայացումին:

Չանազան երգահանդէսներու առիթները հնարաւոր դարձած են, որ օրիորդ Պայրազտարեան հասնի մինչեւ Նիւ Եորք, Շիքակօ, Գալիֆօրնիա եւ Գանատայի այլ քաղաքները:

Օրիորդ Պայրազտարեան «Royal Conservatory of Music»-ի կրթաթոշակ ըստացող աշակերտուհի է եւ ան 1993էն ի վեր կ'աշակերտէ Ժան Մաֆֆայի դասընթացքներուն: Վերջին տարիներուն իր մարզիչը եղած է պրն. Սթիուըրթ Հեմիլթըն:

Հայ շնորհալի երգչուհի Իգապէլ Պայրազտարեան, Կիրակի, 14 Դեկտեմբեր 1997ին, Թորոնթոյի «Մարքհամ» թատերասրահին մէջ մենակատարութեամբ ելոյթ ունեցաւ, ի նպաստ Ս. Աստուածածին Առաքելական Եկեղեցւոյ եւ Հայ Կեդրոնի շինութեան Փոնտին: Երգելով շարականներ եւ մեղեդիներ, երգեց նաեւ Շուփերթէն եւ այլ դասական երաժշտներէն:

Օր. Պայրազտարեան ներկայիս շրջանաւարտ է Թորոնթոյի համալսարանի «Biomedical Engineering» տիտղոսով, ինչպէս նաեւ Թորոնթոյի Արքայական երաժշտանոցէն:

Օրիորդ Պայրազտարեան իր ստացած բոլոր պարգեւներու եւ մրցանակներու կողքին, ունի գնահատելի արժանիքը եկեղեցասիրութեան եւ մեր տոհմային, ժողովրդական եւ դասական երաժշտութեան ու բացառիկ սէր՝ եկեղեցական շարականներու հանդէպ: Ան ներկայիս կը շարունակէ ծառայել Ս. Աստուածածին Հայաստանեայց Եկեղեցւոյ, որպէս փոխ-դպրապետ:

Երգչուհին 25, 26 եւ 27 Օգոստոս 1998ին, իր մասնակցութիւնը բերաւ «Altamira No Load Opera» կազմակերպութեան կողմէ կազմակերպուած երգահանդէսին, որ տեղի ունեցաւ Թորոնթոյի «Հարպըրֆրոնթ» կեդրոնին մէջ, որուն 3 օրերու ընթացքին ներկայ գտնուեցան հազարաւոր թորոնթոցիներ եւ հիւրեր:

Գանատայի թերթերը օրին անդրադարձան այս ելոյթին: Համազանաւորական «Globe and Mail» թերթը գրեց. «Ձայն, երիտասարդութիւն, գեղեցկութիւն, կոչում, խելացութիւն, փառասիրութիւն, հրապոյր, սիրերգութիւն, այս բոլորին կը տիրապետէ Սոփրանօ Իգապէլ Պայրազտարեան»:

Օր. Պայրազտարեան, Կիրակի, 4 Հոկտեմբեր 1998ի կէսօրէ ետք ժամը 2:30ին, «Իմ Միջերկրական» բնաբանով, 5 լեզուով երգեց «Glen Gold Studio»-ի մէջ, մասնակցութեամբ Սթիուըրթ Հեմիլթընի եւ դաշնամուրի վրայ ընկերակցութեամբ Պորիս Չարանքինի եւ Իննա Փըրքիսի:

Սոյն երաժշտական ճամբորդութեամբ, Իգապէլ պիտի ներկայացնէ «Իմ Միջերկրական» երաժշտութիւն՝ Ռոսինի, Ռէյդվըլ, Ֆալլա եւ Ալան Յով-

հաննէս, որ պիտի երգուի 5 լեզուներով: Հանրածանօթ դաշնակահար Սթի-
ուըրթ Հեմիլթըն պիտի ընկերակից իգապէլին: Առաւել՝ որպէս բացում՝ նա-
խատեսուած է 4 մեծ գործեր Ռոսինէն: «Պարպըր աւ Սեզայ» դաշնամուրով
պիտի ներկայացնեն Զարանքին-Փըրքիս զոյգը:

Օր. Պայրազտարեան, որ մրցանակակիր է (Օգոստոս 1998) Մարիլին
Հորն Հիմնակութեան, պիտի մասնակցի 1998-1999 տարեշրջանին, «Center
Music» ելոյթաշարերուն:

Նորանոր յաջողութիւն կը մաղթենք սիրելի իգապէլին:

«Դիտակ», Պէյրուք
Նոյեմբեր 1998



Թորոնթոյի Միջ-Յարանուանական երգչախումբը,
ղեկավար-խմբավար Սարգիս Համպոյեան

ՀԱՅԱՑՆԵՆՔ ԱՐՅԱԽԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԱԾ ՀՈՂԵՐԸ

Լաչինը (Քաշաթաղ) ազատագրուեցաւ 1992ին, շնորհիւ արցախեան ազատամարտիկներուն մղած թէժ կռիւներուն: Ունի ռազմագիտական կարեւորութիւն եւ կը հանդիսանայ Լեռնային Ղարաբաղի հարաւ Արեւմտեան սահմանի դարպասը: Կը տարածուի Գորիսի եւ Ստեփանակերտի միջեւ: Անոր անունը արդէն յաւերժ անցած է հայ ազգի ռազմական յիշողութիւններու ցանկին մէջ: Լաչինը խորհրդանիշն է հայ ազգի վերածնունդին, հայկական այս հողատարածքին վրայ: Երէկ քանի մը հազար հաշուող զիւղաքաղաքը, այսօր արդէն կեդրոն է, շրջան մը, որ ըստ Քաշաթաղի նահանգապետ եւ Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւոր Ալեքսան Յակոբեանի, ցարդ կը հաշուէ աւելի քան 2800 բնակարան, 12,000 բնակիչներով:

Յակոբեան կ'ըսէ. «Մենք զանազան միջոցներու կը դիմենք, որպէսզի այդ տարածքները վերաբնակեցնենք, վերականգնենք, Հայաստանէն եւ ըՄփիւռքէն եկած հայորդիներով, անոնց ընծայելով կենցաղային յարմարութիւններ եւ ապրուստի լաւագոյն պայմաններ: Սոյն բնակեցման ծրագիրը կը նպատակադրէ Լաչին բնակչութեան թիւը հասցնել 20,000ի: Այստեղ կեանքը հեշտ է, իւրաքանչիւր բնակիչ կարող է գործ եւ բնակարան ունենալ»:

«Մենք այստեղ ենք ու կը մնանք: Լաչինը միացման կէտն է Հայաստանի եւ Արցախի միջեւ, եւ այս շրջանի վերաբնակեցումը ազգային սուրբ գործ է: Բոլորիս համար ան մեր ազգի գոյատեւման երաշխիքն է», կը հաստատէ Քաշաթաղի նահանգապետ Ալեքսան Յարութիւնեան:

Իսկ Իրանա-Հնդկաստանի թեմի բարեջան Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Կորիւն Ս. Արք. Պապեան, «Արտերկրի Հայկական Պատմամշակութային Ժառանգութեան Ուսումնասիրման եւ Պահպանութեան Խնդիրները» նիւթը շուրջ 21-24 Մայիսի՝ 1999ին տեղի ունենալիք միջազգային գիտաժողովին իր մասնակցութեան նախօրեակին դէպի Արցախ ուխտագնացութիւնը կատարելէ ետք, «Տպաւորութիւններ եւ Խորհրդածութիւններ» յօդուածաշարքով մը, թեհրանի «Ալիք»ին մէջ Քաշաթաղի մասին կը գրէ:

«Ճանապարհին ականատես եղանք երեւոյթների: Այսպէս, երբ Հայաստանի երբեմնի սահմանը վերջացաւ, «Ազատագրուած Արցախը ողջունում է ձեզ» բառերը՝ ցուցատախտակի վրայ արձանագրուած, հոգեկան հպարտութեամբ լցրին իմ սիրտը: Մտածում էի՝ անցնող տարիների ընթացքում աշխարհի չորս ծագերում գտնուող քանի՛ քանի՛ հայեր, Արցախի եւ Հայաստանի հայերի հետ ներդաշնակելով իրենց սրտի զարկերը, ինձ նման տաղնապել եւ տառապել, աղօթել եւ յուսացել էին տեսնել Արցախի ազատագրումը, աւելի քան 70 տարիներ Ատրպեճանական զազանային վայրագութեանց դիմադրած, բռնապետական դաժան լուծի դէմ պայքարած Արցախի հայութեան ազատութեան արեւածագը:

«Ահա ուշացած ուխտաւորիս «աչքալուսանք» տուող առաջին ողջոյնը Արցախի. «Ազատագրուած Արցախը ողջունում է ձեզ»: Այլ խօսքով՝ բարի գալուստ է մաղթում ձեզ մեր ազատագրած Արցախ աշխարհը: Իջնում եմ ինքնա-

չարժից, բարձրաձայն կարգում եմ ցուցատախտակի ողջոյնի խօսքը, այս անգամ ձայնիս յուզական ապրում եւ բանաստեղծական թռիչք: Ոգեւորուած, աւելի բարձր ձայնով արտասանում եմ նոյն բառերը, ապա, խոնարհում եմ ցուցատախտակի առաջ, զգում եմ Արցախի ազատութեան համար զոհուած ազատամարտիկների ոգիների ներկայութիւնը իմ մէջ եւ իմ շուրջ, ուստի հանդիսաւորապէս պատասխանում եմ:

«Ողջո՛յն, հազա՛ր ողջո՛յն ազատագրուած Արցախին եւ հազար համբոյր քո սուրբ ճակտին...» եւ սէգ սարերը Արցախ աշխարհի՝ ձորերն ի վեր բարձրացող սաղարթախիտ անտառներով պսակուած, ողջունում են ինձ...»

Լեռնային եւ դաշտային Ղարաբաղի կարգ մը շրջաններու ազատագրումը ուր տասնեակ տարիներ առաջ ազերի հովիւներ բնակութիւն հաստատած էին Ստալինեան Հայաստեայց սահմանազօնումով, եւ, այժմ հեռացած հայկական բանակի յառաջխաղացումով եւ ազերիական բանակներու նահանջով, հայ ժողովուրդի բոլոր զաւակները կը դնէ շատ կարեւոր եւ կենսական պարտաւորութիւններու տակ: Հայ բնակչութեամբ վերահայացնել ազատագրուած հայկական հողերը:

Տեսէք, թէ ինչ կ'ըսէ Արմէն Ստեփանեան, որ Խոջալուի բնակիչներէն է 5 տարիներէ ի վեր: Ան ծնած է Ստեփանակերտ եւ Երեւանի մէջ ուսանած է վիրաբուժութիւն: Երբ պատերազմը սկսած է Արցախի մէջ, ան ամէն ինչ թողնելով միացած է Արցախեան բանակին: Յաղթանակէն ետք, ան կ'որոշէ մնալ Արցախ եւ Խոջալուի մէջ զբաղիլ հողագործութեամբ: Արմէն հիւրերուն ցոյց կու տայ իր շքեղ բնակարանն ու այգիները եւ կը խոստովանի, թէ այստեղ Երեւանէն աւելի լաւ են իր տնտեսական պայմանները: «Հողը եւ բերքը առատ են այստեղ, մենք մեր հողում ենք, ինչո՞ւ ուրախ չլինենք: Ասացէք Սփիւռքի մեր եղբայրներին, որ այստեղ դեռ մշակելի հողեր շատ կան: Այս հրաշագործ հողերը վերամշակելով, վերաբնակեցնելով է, որ ամբողջ Արցախը կը վերահայկականանայ»:

*

* *

Արցախի եւ Հայաստանի Հանրապետութեան սահմանամերձ շրջաններու, ինչպէս նաեւ դաշտային Ղարաբաղի ազատագրուած շրջանները հայութեամբ վերաբնակեցնելու կարեւորութիւնը նկատի ունենալով, Լիբանանեան բանակի հրամանատարներէն զօրավար Նարեկ Աբրահամեան, չորս տարիներ առաջ, կը ձեռնարկէ հայ բնակչութեամբ զօրացնել Հայաստանի հարաւային սահմանամերձ շրջանները եւ առաջին հերթին հիմը կը դրուի Գիցմայրի գիւղին, որուն վերածաղկման նախաձեռնութեան կը նուիրուին սփիւռքահայ դաշնակցական երիտասարդներ:

Գիւղի առաջին բնակիչները եղած են 5 սփիւռքահայ երիտասարդներ, որոնք բնակութիւն հաստատած են վրանի մը մէջ: Հակառակ տեղացի ղեկավարներու այն համոզումին, որ «մէկ ամիսէն աւելի կարելի չէ դիմանալ», այսօր ո՛չ միայն անոնք դիմացած են մէկ տարիէ աւելի, այլ նաեւ գիւղի բնակ-

չութեան թիւը անցած է 30 ընտանիքը (ընդհանուր՝ 105 հոգի), աւելի քան 22 երեխաներով:

Շրջանը հոսանքապատուած է Սան Ֆրանսիսքոյէն Անիւեան ընտանիքի նուիրատուութեամբ:

Բնակեցման ծրագրի պատասխանատուն է Լիբանանեան բանակի զօրավար ընկեր Նարեկ Աբրահամեան, որուն հետ Լիբանանի «Արծիւ» ամսաթերթը վերջերս ունեցած է շահեկան հարցազրոյց մը, ուր «Վերաբնակեցման ծրագիր»-ը այսօր ի՞նչ պատճառով դարձած է առաջնահերթ» հարցումին, զօրավարը պատասխանած է հետեւեալ արտայայտութեամբ.

«Ես կը հաւատամ, որ իւրաքանչիւր հայ, որ կը դատարարակուի ազգային ոգիով, ըլլայ ան կուսակցութեանց, ընտանիքին կամ դպրոցներու մէջ, չի կրնար չմտածել հայ ժողովուրդի գոյատեւման պարագաներուն շուրջ եւ չի կրնար իր հայրենիքին ապագայով չմտահոգուիլ: Այս իրավիճակէն մեկնելով բացայայտ է այսօր, թէ ազգեր ինչպէս կարողացած են իրենք զիրենք պարտադրել կամ հակառակը, ամբողջովին բնաջնջուած: Ուրեմն, մեր պարագային, վաղուան մեր վիճակը կախեալ է մեր ռազմավարական ուղղութեանէն: Այսինքն որպէս ազգ ի՞նչ էինք երէկ, ո՞ւր ենք այսօր, ո՞ւր կ'ուզենք հասնիլ վաղը եւ մանաւանդ ի՞նչ պիտի ընենք հոն հասնելու համար: Ինծի համար յստակ է, որ մենք կ'ուզենք զօրաւոր Հայաստան մը եւ այդ հզօր Հայաստանը իրականութիւն կը դառնայ այն ատեն միայն, երբ մենք մեր ունեցածը կը յաջողինք պահպանել ե՛ւ ժողովուրդով, ե՛ւ ռազմավարական տուեալներով: Գաղափարական հիմունք ըսելով ուրիշ բան չեմ կրնար հասկնալ»:

Հայրենաշինութեան նուիրուած զօրավար Նարեկ Աբրահամեանի ծրագիրները լայն տարողութիւն ունին, որոնց իրագործումը պիտի զօրացնէ Հայաստանի եւ Արցախի ինքնապաշտպանութիւնը եւ հզօրացնէ տնտեսութիւնը: Քաշաթաղի, Քարվաճառի եւ այլ ազատագրուած շրջաններու հայութեամբ վերաբնակեցումը կենսական է Հայաստանի եւ Արցախի ռազմական կարողութիւններուն եւ պաշտպանելու համար նենգ թշնամիներու անակնկալ յարձակումներուն:

Հայաստանի եւ Արցախի հայութեան թշնամի Ատրպէյճանի բանակներուն դէմ արձանագրած յաղթանակը քաղաքականապէս յաղթանակի վերածելու համար պէտք է զօրացնենք Հայաստանի եւ Արցախի տնտեսութիւնը եւ նիւթապէս եւ բարոյապէս զօրավիզ կանգնինք ազատագրուած շրջաններու վերահայացումի ծրագիրներուն:

Ահա, այս ծրագիրներու յաջողութիւնը իրագործելու համար շուտով մեր շրջանը պիտի այցելէ Արցախի վերաբնակեցման ծրագրի ղեկավար զօրավար Նարեկ Աբրահամեան: Այս առիթով, շրջանիս մէջ կազմուած է յատուկ ձեռնարկներ կազմակերպող յանձնախումբ մը, ատենապետութեամբ ընկեր Յակոբ Ճանապահեանի:

Բացառիկ այս ձեռնարկներու նպատակը պիտի ըլլայ ժողովուրդին գեկուցել կատարուած եւ կատարուելիք ծրագիրներու մասին: Թորոնթոյի ձեռնարկը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 25 Փետրուար 2000, երեկոյեան ժամը 9ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ, ուր խօսք պիտի առնէ զօրավար Նարեկ Աբրահամեան:

*Վստահ ենք, որ հայ ժողովուրդը խանդավառութեամբ պիտի ընդառա-
ջէ եղած ազգակերտ կոչերուն եւ նիւթապէս բարոյապէս իր օժանդակութիւնը
բերէ կազմակերպուած ձեռնարկներուն, զօրակցելու համար Հայաստանի եւ
Արցախի պետականութիւնները:*

**«ՅՈՐԻՉՈՆ»
Փետրուար, 2000**



**Ձախէն աջ՝ Արցախի Հանրապետութեան նախագահ Արկաթի Ղուկասեան,
Գրիգոր Գոթոյեան եւ վարչապետ Լէոնարտ Պետրոսեան**

ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐԿՈՎ

Գանատայի գլխավոր երկու հայաշատ քաղաքները՝ Թորոնթոյի եւ Մոնթրէալի հայուիթեան կողմէ Հայաստանի վերանկախացման 10րդ տարեդարձի տօնակատարութիւններուն մասնակցելու համար, Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Ն.Վ. Պրն. Արա Պապեան գնահատելի գաղափարը ունեցած էր հրաւիրելու Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան խորհրդարանի նախագահ Ն.Վ. Պրն. Օլեգ Եսայեանը, Ղարաբաղի Պաշտպանութեան փոխ նախարար, Արցախի հերոս Զօր. Սամուէլ Կարապետեանը եւ Հիւս. Ամերիկայի Արցախի Հանրապետութեան ներկայացուցիչ Ն.Վ. Պրն. Վարդան Բարսեղեանը, որոնք ներկայ գտնուեցան Շաբաթ, 6 Հոկտեմբեր 2001ին, հայ կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցած տօնախմբութեան եւ Կիրակի, 7 Հոկտեմբեր 2001ին, Մոնթրէալի հայ կեդրոնի Ա. Ահարոնեան սրահին մէջ տեղի ունեցած տօնակատարութեան եւ իրենց խօսքերով եւ պատգամներով ճոխացուցին օրուան յայտագիրը:

Օգտուելով հայրենի պատուիրակութեան Թորոնթօ այցելութենէն, յատուկ հետաքրքրութեամբ եւ հպարտութեամբ հետեւեցայ Զօր. Սամուէլ Կարապետեանին եւ իր հետ «Հորիզոն»ի համար ուղեցի հարցազրոյց մը ունենալ: Սակայն, նկատի ունենալով զօրավարին եւ պատուիրակութեան միւս անդամներուն բազմազբաղ ըլլալուն պատճառաւ, չկարողացան ամբողջութեամբ պատասխանել մեր հարցումներուն:

Ամէն գնով ծանօթանալու համար Զօր. Կարապետեանի մարտական կեանքին, բախտը ունեցայ կարգալու Սոկրատ Խանեանի եւ Արշիլ Մխիթարեանի կողմէ գրի առնուած «Անմահութեան Ճանապարհով» գրքոյկը, հրատարակուած 1997ին՝ Երեւան, ուր կ'արտացոլայ իր կեանքը Արցախի ազատագրութեան նուիրած ազգային հերոսին մարտական ուղին՝ կամաւոր արձանագրուած պարզ զինուորի աստիճանէն բարձրանալով մինչեւ զօրավարի, Արցախի Պաշտպանութեան փոխ-նախարարի եւ Արցախի Պաշտպանութեան հարւածային գունդի հրամանատարի պաշտօններուն:

Հայ ժողովուրդի ազգային ազատագրական պայքարի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ կը գրաւէ Արցախեան պատերազմը: Ան հայ ժողովուրդի Ֆիզիքական եւ բարոյական ուժերու համախմբման նոր դրսեւորումն է, անոր ըմբոստութեան եւ ցասման արտայայտութիւնը ընդդէմ անարդարութեան, որ ի գործ դրուած է Ստալինեան հակահայ հրամանագրով, յանուն Մայր Հայաստանի հետ հայոց աւանդական երկրամասի վերամիաւորման:

Արցախի քաջագուն հրամանատարներէն է Զօրավար Սամուէլ Զամիլի Կարապետեան, որ անջնջելի հետք ձգած է արցախեան յաղթանակներու ոսկիէ մատեանին մէջ:

1962ին Ստեփանակերտ ծնած ապագայ հրամանատարը, Ստեփանակերտի թիւ 2 միջնակարգ դպրոցը աւարտելէ ետք, 1982-1985, Մոսկուայի մէջ ծառայած է խորհրդային բանակին, իւրացնելով ռազմական արուեստը: Վերադառնալով իր ծնողներուն մօտ, անցած է աշխատանքի: Արցախեան շարժ-

ման սկիզբը զինուորագրուած է հայրենի լեռնաշխարհի ազատագրութեան սուրբ գործին:

Շատերուն յայտնի է «Կեդրոնական պաշտպանութեան շրջան» (ԿՊՇ) գունդի անցած հերոսական ուղին: Զեւաւորուելով արցախեան պատերազմի ամենաթէֆ օրերուն, «ԿՊՇ» իրեն ցուցաբերեց որպէս հաւաքական անպարտելի ստորաբաժանումներէն մէկը: Ամէն անգամ, երբ Ատրպէյճանի կառավարութիւնը կը յանդգնէր ոյժ գործածել, Սամուէլ Կարապետեանի ղեկավարած գունդը անոր կը պատասխանէր եռակի ուժով եւ վճռականութեամբ, «ԿՊՇ»-ին իր մասնակցութիւնը ունեցած է Արցախի բոլոր ռազմաճակատներուն վրայ, հրամանատարութեամբ Սամուէլ Կարապետեանի:

Սամուէլ Կարապետեան, զգալով Արցախը գէնքով պաշտպանելու կարելորութիւնը, 22 Փետրուար 1988ին, խումբ մը հայրենասէրներու հետ պաշտպանեց Ասկերանը եւ այդ օրուընէ կը ծառայէ հայրենիքին: Որպէս պարզ զինուոր մասնակցած է Հադրութի, Էդիլլուի, Աղբուլաչի, Խանձաձորի, Քաղբէկի, Նախիջեւանիկի, Փրջամալի, Խրամոյթի, Խանաբազի եւ այլ գիւղերու ինքնապաշտպանութեան կռիւներուն:

Զինուորեալ Սամուէլ Կարապետեանի մարտական ճանապարհը անգիւղում մաքաւման, ժողովուրդի ազատութեան եւ անկախութեան երազանքի, քաջագուն զինակիցներու անկոտրում կամքի, նահատակուած ընկերներու անոնց ցաւի, յաղթանակներու վայելքի, ապագայի հանդէպ անմար հաւատքի խորհրդանիշ է՝ շօշափելի, օրինակելի: Իւրաքանչիւր մարդու ծանօթութիւնը անոր անցած ճանապարհին՝ կը վերածուի դասի եւ խորհուրդի, դեռ աւելին՝ երախտիքի եւ ոգեկոչումի զգացողութեան: Այդ զգացողութիւնը առաւել թեւաւոր կը դառնայ, երբ Սամուէլ Կարապետեանին կը տեսնես Արցախը եւ հայ ժողովուրդի պատիւը փրկող առաջին մեծութեան աստղերուն հետ:

Ծանօթանալով Սամուէլ Կարապետեանի կեանքին, կը համոզուիս, որ անոր անցած ճանապարհը ամբողջ սերունդի մը խիզախութեան եւ պատուի ուղի է: Անոր անցած ուղին կը հաստատէ այն ճշմարտութիւնը, որ արցախեան պատերազմը համաժողովրդական ըմբոստացման արդիւնք է, ազատ ու անկախ ապրելու բաղձանքի գրսեւորում: Եւ եթէ սկզբնական շրջանին կարելոր էր ինքնապաշտպանութեան ֆետայական պայքարը, յետագային ժամանակը եկաւ ունենալու ինքնապաշտպանութեան կանոնաւոր բանակ, որ պէտք է գործէր միասնական հրամանատարութեան ղեկավարութեամբ: Եւ եկաւ այդ պահը 1992 Յուլիսին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան պետական կոմիտէի նախագահի հրամանագրով:

1992 Օգոստոս 29ի ԼՂՀ պաշտպանութեան պետական կոմիտէի նախագահի թիւ 013 հրամանագրին համաձայն, 4րդ եւ 6րդ վաշտերու միացումով կազմաւորուեցաւ Կեդրոնական Պաշտպանութեան Շրջանը: Կարճ ժամանակ ետք, այդ համալրուեցաւ իր անձնակազմով եւ ընդհանուր հրամանատար նշանակուեցաւ Սամուէլ Կարապետեան:

8 Մայիս 1992ի գիշերուան ժամը 3:00ին, Շուշիի ազատագրման գործողութիւնը սկսելու պահուն, սովորականէն արագ բաբախեց Սամուէլ Կարապետեանի կոփուած սիրտը: Դժուար յանձնարարութիւնը պիտի իրականացուի: Սամուէլ գիտէր իր պարտականութիւնները: Մարտական գործողութիւնը

ներով թրծուած Սամուէլ Կարապետեան իսկապէս կը գիտակցէր պահի լրջութեան: Պարզ կը տեսնէր ճկունութեան, յամառութեան, խիզախութեան այն հնարները, որ պէտք է օգտաւորուին Շուշի բերդաքաղաքը մտնելու ճանապարհին: Սամուէլ համոզուած էր, որ մի քանի ժամ ետք, Շուշիի չորս կողմերէն բարձունքներն ու ժայռերը պիտի մագլցին հայ ազատամարտիկները, պարիսպներէն ներս մտնեն արծուային ճախրանքով: Համոզուած էր, որովհետեւ գիտէր, որ հայ զինուորներու ոտքերուն տակ պապենական հողն է որ խլուած է դաւաճանութեամբ, նենգութեամբ, խաբէութեամբ: Այդ ամէնուն գիտակցումով ու սրտի թելադրանքով ան իր զինուորները կը տանէր Շուշիի գրաւման հիմնական ճանապարհով: Եւ երբ Շուշիի վրայ ծածանած է հայոց Եռագոյնը, Սամուէլ անոր մէջ տեսած է նաեւ իր արեան, իր երազի, իր հաւատքի երանգներու բաժինը եւ խորհիլ: Շուշին ազատագրելու գործողութիւններուն մասնակցելու համար արժէ, որ ինք աշխարհ եկած է եւ երջանիկ են բոլոր այն զինուորները, որոնք իրենց հոգիներուն կրակները ցանած են հարազատ քաղաքի փրկութեան ճանապարհին:

Սամուէլ Կարապետեանի կեանքը շարքային զինուորութենէն զօրավարի աստիճանին հասնելու, սիրտն ու հոգին հայրենիքին եւ ժողովուրդին ընծայելու հրաշալի օրինակներէն մէկն է: Արցախի պաշտպանութեան եւ ազատութեան համար մղուած բոլոր մարտերուն մասնակցած է ան: Իսկ երբ ան կը նշանակուի Կեդրոնական պաշտպանական շրջանի հրամանատար, առանց անոր գունդի բախտորոշ ոչ մէկ ճակատամարտ տեղի չէ ունեցած: Օրինակ, բոլորին յայտնի է Օմարի լեռնանցքի նշանակութիւնը ազերիներու դէմ մղուած պատերազմի ընթացքին: Չորս անգամ հրաման եկած է գրաւել Օմարը: Վերջին եւ վճռական յոյսը եղած է Կեդրոնական Պաշտպանութեան Շրջանի գունդը: Օմարի գրաւման մասնակցած են 67 մարտիկներ: Սամուէլը լաւ գիտէ այդ մասին: Հետաքրքիրն այն է, որ ռազմական մեծ նշանակութիւն ունեցող բարձունքը գրաւուած ատեն միայն մէկ զոհ տուած ենք:

Չօր. Սամուէլ Կարապետեան երեք անգամ վիրաւորուած է Հորադիզի, Մարտակերտի եւ Քէլբաջարի մարտերու ընթացքին: Դիւցազուն զօրավարը իր քաջագործութիւններուն համար արժանացած է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանին Արցախի եւ Հայաստանի կողմէ: Արժանացած է յատկապէս «Արցախի հերոս»ի շքանշանին, եւ այլ շքանշաններու:

Հոս կ'արժէ յիշատակել Սամուէլ Կարապետեանի մասին հետեւեալ վրկայութիւնը.- «Սամուէլ Կարապետեանը մարտավարական հօր ուժի տէր է: Մեզմէ մեծ խումբ մը Հորադիզի շրջանին մէջ շրջապատուած էր թրքական գիւղի մը մէջ: Սամուէլի հմուտ գործողութիւններուն շնորհիւ, զօրախումբը առանց զոհի ճեղքեց եւ դուրս եկաւ օղակէն: Սամուէլը սովորական հրամանատար չէ: ան գէնքը ձեռքին միշտ մեզի հետ է եղած, մեր կողքին, մեր շարքերուն մէջ: Մենք երբեք ձախողած մարտական գործողութիւն չենք ունեցած, քանի որ Սամուէլ գիտէր մեր բոլոր հնարաւորութիւնները եւ ճիշդ կը տեղադրէր մեր ուժերը: Մեր գունդին պատերազմի մասնակցութեան ընթացքին, առաջին հակայարձակումը տեղի ունեցած է Սամուէլի հրամանատարութեամբ: Չլրբանէն մինչեւ Դրմբոն: Սամուէլի կեանքը ամբողջութեամբ սրբանք է: Իւրաքանչիւր զինուորի համար Սամուէլի խօսքը սրտաբուխ օրէնք

է: Եթէ Սամուէլ ըսէ դէպի մահ կ'երթանք, ուրեմն պէտք է երթանք: Իսկ Սամուէլի կոչը գիտակցուած մահուան՝ հայրենիքը փրկելու եւ ազատագրելու վճռականութիւնն է»:

Կեդրոնական Պաշտպանութեան Շրջանի գունդին սպաներէն մայր Անտրէ Սարուխանեան, որ միշտ ընկերացած է Սամուէլի պատերազմական գործողութիւններուն, կ'ըսէ.- «Հնարաւոր չէ չյարգել Սամուէլ Կարապետեանին, մարդու մը, որ պատանեկան տարիքէն իր անձը նուիրած է հայրենի երկնակամարի ազատութեան եւ անկախութեան վեհ գործին, փորձութիւններու մէջ կոփուելով, դժուարութիւնները յաղթահարելով իմաստուն դարձած, շարքային զինուորութեանէն զօրավարի աստիճանին հասած, հայրենիքը սիրող մարդը չի կրնար չպաշտել նման զինուորեալին: Ով որ կ'աշխատի Սամուէլի հետ եւ կը ծանօթանայ անոր կենսագրութեան, կը պաշտէ անոր...»:

«Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւն» թերթի թղթակիցին հետ ունեցած հարցազրոյցին, Շուշիի ազատագրման Տրդ տարեդարձին առթիւ, Զօր. Կարապետեան կը պատասխանէ.- «Մայիս 7ին ստացանք գրոհի հրամանը: Իմ դասակը 50 հոգի է կը բաղկանար, թէեւ շատ ցանկացողներ կային, բայց ընտրեցինք ամենամարտունակներուն, լաւ գիտէինք, թէ ուր կ'երթանք: Վրճաւորոջ, ճակատագրական մարտ էր եւ ոչ ոքի մտքէն չէր անցնէր, թէ յանկարծ ճախողութիւն կրնայ պատահիլ: Կ'երթայինք դաժան հրճուանքով, մեռնիլ յանուն Շուշիի՝ այդ պատիւ էր բոլորիս համար:

«Մեր վաշտը կը շարժէր կեդրոնական ճանապարհով, կ'երթայինք հեռատեսիլի աշտարակի ուղղութեամբ: «Հանգիստ» յառաջ կը շարժէինք, երեսուն մեթր մնացած է հասնելու հակառակորդին՝ արդէն հսկողութեան տակ էինք առած անոնց դիրքերը, իսկ ազերիները այդ չէին ըմբռնած: Թուրքի դէմ կը կռուէինք, գրաւեցինք: Եթէ թշնամին ուրիշ ազգ ըլլար, Շուշին հաւանաբար չկարենայինք գրաւել: Մեզ առաջ մղողը ոգին էր: Միայն մէկ հրասայլ ունէինք քաղաքի մատոյցները հասած, զարնուեցաւ, ահագին գործ ընելէ ետք: Եթէ այդ հրասայլը չըլլար, հնարաւոր չէր նոյն օրը Շուշի մտնել:

«Մայիս 9ի առաւօտեան ժամը 6:00ին մտանք Շուշի: Այդ պատմական սխրանք էր: Այդ պահին միտք մը գոյութիւն ունէր ուղեղիս մէջ: Ստեփանակերտը այլեւս չի ռմբակոծուիր: Հինգ տարին ինչպէ՛ս անցաւ: Մէկ մէկ ետ կը նայիմ, մեր անցած ճանապարհին, 1991, 1992, 1993 թուականները երբ կը յիշեմ, կը զարմանամ, թէ այնքան դժուարութիւններն ինչպէ՛ս յաղթահարեցինք, հասանք այս օրուան եւ ի՛նչ գնով: Աղղամէն՝ Ֆիզուլի, Ֆիզուլիէն՝ Մարտակերտ, Օմար, Քէլբաջար, Հադրութ, Ասկերան, եւ այլն: Գնում էինք՝ մտածելու ժամանակ չունենալով: Երբ տղաներուն կ'ըսէինք՝ գնում ենք, երբեք չէին տրտնջում, դեռ աւելին՝ կ'ըսէին. էլ ո՞վ, եթէ ոչ մենք»:

Զօր. Կարապետեանին այսօր կը ճանչնայ հայ ժողովուրդը: Ամէնուրեք գիտեն, որ ան իր փառքին ու պատուին հասած է սեփական արեան գնով, հայրենիքի եւ ժողովուրդի ազատագրութեան գործին անձնուրաց նուիրումով, մեր պապերու եւ հայրերու կողմէ մեզի աւանդուած սուրբ օճախները պահպանելու վճռականութեամբ, հայոց Արցախը ներկայ եւ գալիք հայ սերունդներու կենաց աղբիւրը տեսնելու երազանքով:

Մենք բոլորս գիտենք Ձօր. Անդրանիկին, Աղբիւր Սերոբը, Գէորգ Չաւուշը, Սպաղանցի Մակարը, Գալէն եւ ուրիշներ, այսինքն 17րդ դարու վերջի եւ 20րդ դարի սկիզբի մեր ազգային դիւցազուններուն: Սամուէլ Կարապետեան այդ անմոռանալի նուիրեալներու արժանի ժառանգորդներէն է, միաժամանակ նաեւ այն քաջերէն, ովքեր ասպարէզ իջան հեծած Քուկիկ Ջալալին, առած Թուր Կեծակին եւ ուղղեցին մեր պապերու սխալները լրացնելով անոնց կիսատ գործը:

Սամուէլ Կարապետեան իր մարտական ընկերներու վկայութեամբ հէքիաթային դիւցազն մըն է: Պատերազմական թոհ ու բոհի մէջ ան առասպելական հերոս է: Ան մեր անցեալի հերոսներէն ժառանգած է վճռականութիւն, խիզախութիւն, հմտութիւն, կամք, ընկերասիրութիւն, անձնուիրութիւն եւ այլ բարեմասնութիւններ, միշտ համեստ եւ լռակեաց, չխօսող, այլ գործող, պատերազմի եւ խաղաղութեան շրջանին, որուն անդրադարձանք իր Թորոնթօ այցելութեան շրջանին, իրեն հետ մեր ունեցած հանդիպումներուն եւ խօսակցութեան ընթացքին:

Մեր հարցումին, թէ այսօրուան դրութեամբ ի՞նչպիսի վիճակի մէջ կը գտնուի Արցախեան բանակի մարտական պատրաստակամութիւնը, ան գրաւոր պատասխանեց.

«Արցախեան բանակը դեռ եւս պատերազմի ժամանակ ցոյց տուեց, որ նա պատրաստ է ո՛չ միայն պաշտպանելու, այլեւ յարձակուելու եւ յաղթելու: Այսօր այն արդէն կայացած զինուորական միաւոր է եւ աշխարհատարած քում ունի բաւականին լուրջ հեղինակութիւն: Ժամանակի ընթացքում, պաշտպանութեան բանակն անցել է բարեփոխումների երկար ճանապարհ եւ այն այսօր էլ շարունակում է անցնել:

«Աւելի լաւ պատկերացում կազմելու համար փորձէք այցելել Ղարաբաղ եւ տեղում ծանօթացէք նրա վիճակին: Այդ ժամանակ հեշտ կը լինի համաձայնուել իմ ասածների հետ»:

Չօրավար Կարապետեան Արցախի ազատագրութեան բոլոր մարտերուն իր մասնակցութիւնը պատուով բերելով, երեք անգամ վիրաւորուելով, իր արեան խառնած հայրենի սրբազան հողին, արժանացած է հայ ժողովուրդի յարգանքին եւ իր ողջութեան մուտք գործած անմահութեան դուռէն ներս, միանալով հայոց պատմութեան հերոսներու փաղանգին:

«ՅՈՐԻՉՈՆ»ի բացառիկ
2001

Ի ՓԱՌՍ ՊԱՏՈՒԻ ԵՒ ՀԱՅՐԵՆԵԱՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Արցախեան ազատագրական մարտերու եւ անձնուէր ազատամարտիկներու մասին բազմաթիւ հեղինակներ, ինչպէս Սոկրատ Խանեան, Արշիկ Մխիթարեան, Սենատ Հասրաթեան, Բագրատ Ուլուբաբեան, Յովիկ Վարդումեան եւ ուրիշներ, յատուկ գիրքերով նկարագրած են ազերի թուրքերու դէմ մղուած մարտնչումներու մասին, իսկ զարաբաղեան բանակի փոխ գնդապետ Ռազմիկ Պետրոսեան, «Արցախի պաշտպանութեան դիրքերում» գիրքով (Պետրոսեանի յուշերը գրի առած եւ հրատարակութեան պատրաստած է պատմական գիտութիւններու դոկտոր Վարդան Գրիգորեան), ուր նուիրուած է Արցախի ազգային ազատագրական շարժումին, ազերի հրոսախումբերու դէմ ծաւալուած անզիջողական պատերազմին, պատմելով իր անմիջական մասնակցութեամբ տեղի ունեցած իրադարձութիւններու մասին:

Արցախի Կեդրոնական պաշտպանական շրջանի կազմութեան եւ մարտական ուղիին մասին, փոխ գնդապետ Ռազմիկ Պետրոսեան հետեւեալ վկայութեամբ կը նկարագրէ պաշտպանական շրջանի մարտական ուղին. «Մեր ջոկատը վերադարձաւ Ստեփանակերտ հանգստանալու: Տղաները ցրուեցան իրենց տները, բայց երկու օր անց հաւաքուելու եւ անմիջապէս ռազմաճակատ մեկնելու հրաման եկաւ: Ազերիները հասել էին Խաչէն գեղի ափը: Պէտք էր կանգնեցնել նրանց:


«Սամուէլ Կարապետեանի եւ իմ ջոկատները պաշտպանում էին Կիչան գիւղի շրջակայքը: Մեր խնդիրն էլ թոյլ չտալ, որ թշնամին անցնէր Խաչէնի աջ ափը: Եթէ մենք յանձնէինք մեր պաշտպանած բարձունքները, թուրքերը կը գրաւէին Գանձասարի վանքը: Ամէն գնով պէտք էր կանգնեցնէինք թշնամուն, հակառակ դէպքում, արցախեան երկրի ամէնանշանաւոր վանական համալիրը, հայ ճարտարապետութեան հիասքանչ յուշարձանը կ'ընկնէր ատելի թշնամու ձեռքը, որը յուշարձաններ քանդելու եւ պղծելու գործում մեծ փորձ ու վարպետութիւն ունէր: Կ'աւերուէր ու կ'ամայանար նաեւ Գանձասարից ցած գտնուող հինաւուրց Վանք գիւղը:

«Կիչանի շրջակայքը պաշտպանում էին Առաջաձոր, Վանք, Քուլատա գիւղերի, Մարտակերտի շրջանի գիւղերի ջոկատները, որոնց հրամանատար Նորիկ Դանիէլեանն էր: Նրանց օգնութիւն էին ցոյց տալիս Սամուէլ Կարապետեանի եւ իմ ջոկատները: Ընդհանուր հրամանատարութիւնը իրականացնում էր Սամուէլ Կարապետեանը:

«Սերժ Մարգսեանի, Սամուէլ Բաբայեանի եւ Սէյրան Օհանեանի եռանդուն ջանքերով, կարճ ժամանակում, պատերազմական փորձառութիւններով անցած այդ մարտական ջոկատների հիման վրայ ստեղծուած է Ղարաբաղի պաշտպանական բանակը: Դա վերին աստիճանի կարեւոր, անյետաձգելի գործ էր, որը մեր շարժմանը հաղորդելու էր նոր թափ ու նոր որակ:

«Նախ ստեղծուեց Կեդրոնական Պաշտպանական Շրջանը, որի հրամանատար նշանակուեց գործունեայ, մարտիկների ու հրամանատարների շրջա-

նում մեծ հեղինակութիւն վայելող Սամուէլ Կարապետեանը: Շտապի պետ նշանակեցին ինձ:



Ջորավար Սամուէլ Կարապետեան
եւ Գրիգոր Հոթոյեան

«Կեդրոնական պաշտպանական շտաբի մէջ մտան հետեւեալ զօրամիաւորները. առաջին վաշտը (հրամանատարը Գենան էր): Դա Աշոտ Ղուլեանի (Բեկորի) ստեղծած վաշտն էր: Նա հսկայական աշխատանք էր տարել ուժեղ, մարտունակ այդ ջոկատի կազմաւորման ուղղութեամբ: Բեկոր (Օսկոյկա) անունը տուել էին մեր սիրելի Աշոտին, որովհետեւ մի քանի անգամ վիրաւորւել էր արկի բեկորներից, որոնցից մի քանիսը այդպէս էլ մնացել էին նրա մարմնի մէջ: Վէրքերը դեռ չբուժած՝ Աշոտը նետուում է մարտի դաշտ՝ պաշտպանելու արցախեան սիրելի երկիրը: Նա հերոսաբար գոհուեց Պօղոսազոմեր գիւղի մօտ յարձակման ժամանակ, երբ ձգտած էինք ազատագրել Դրմբոնը:

«Այդ ժամանակ ես գտնուում էի Մեհմանայի բարձունքում: Գիտէի, որ Բեկորը գիշերը յարձակման էր անցնելու Դրմբոնը գրաւելու համար: Նա խփուել էր այն պահին, երբ թշնամու վրայ կրակ բաց անելու հրաման էր տրւել: Այդ ցաւալի բօթը ես իմացայ ռատիոյով: Սիրտս կծկուեց խորը ափսոսանքից: Բեկորը մեր շարժման ամէնապայծառ դէմքերից մէկն էր: Նա վիթխարի գործ է կատարել զէնքեր կուտակելու եւ մարտական ջոկատ ստեղծելու համար: Նա բոլորի կողմից սիրուած հրամանատար էր եւ նրա մահը անփոխարինելի կորուստ էր մեզ համար:

«Երկրորդ վաշտի հրամանատարը Վահան Ղարիբեանն էր: Հրաշալի մարդ, կարգապահ, ընկերասէր: Մասնակցել է շատ մարտերի, եղել է Շուշիի

ազատագրողների մէջ, աչքի ընկել Ասկերանի ու Մարտակերտի ազատագրուման մարտերում:

«Երբորդ վաշտի հրամանատարն էր Սամուէլ Յարութիւնեանը: Նրա վաշտը աչքի ընկաւ յատկապէս Մարսանդի ջրաւազանի գրաւման ժամանակ: Յաւօք սրտի, Սամուէլը, այդ հրաշալի հրամանատարը, չտեսաւ մեր յաղթանակը: Մաղաւուզ գիւղի ազատագրումից յետոյ «Ուազ» մեքենան, որի մէջ էր նա իր չորս ընկերներով, պայթեց ականի վրայ: Զոհուեցին բոլորը:

«Երբ ստեղծուել էր Կեդրոնական Պաշտպանական Շրջանը, Հնարաւոր եղաւ անցնելու հակայարձակման: Կիշանի ճանապարհով մենք պէտք է մտնէինք Դրմբոն: Կարճ ժամանակի ընթացքին, Կիշանից մինչեւ Առաջածորի բարձունքները զբաղեցնող մեր երեք վաշտերը եւ Մարտակերտի ուժերը (Նորիկ Դանիէլեանի հրամանատարութեան տակ) յարձակման անցան դէպի Զլբրան, Դրմբոն, Հաթերք: Հենց այդ ժամանակ էլ զգացուեց բանակային նոր զօրամիաւորման առաւելութիւնը: Առանձին-առանձին գոյութիւն ունեցող ջոկատների միաւորմամբ ստեղծուած պաշտպանական շրջանը, համագործակցելով այլ միաւորումների հետ, ի վիճակի էր լուծելու կարեւոր մարտական խնդիրներ: Անցնելով հակայարձակման՝ մէկ-երկու օրում մենք Խաչէին ամբարից հասանք Դրմբոն եւ Թարթառի հովիտ, հակայարձակմանը մեծ օգնութիւն էր ցոյց տալիս Գրադ ժողայի հրետանին: Զինամթերքի պակաս ունէինք: Շուշիում ազերիներից գրաւել էինք «գրադ»ի արկեր, իսկ Զլբրանում վերցրել էինք չորս թնդանօթ, որոնց փողերն անմիջապէս ուղեցինք նահանջող թուրքերի կողմը:

«Մեր զօրքերը սրբնթաց գրոհով ազատագրեցին Մոստը, Հաթերքը, Զագլիկը, Զափարը, Վաղուհասը, Կճողուտը, եւ այլ բնակավայրեր: Մի քանի օր հանգստանալուց յետոյ, պատրաստուում էինք ազատագրել Մեծ Շէնը, Մաղաւուզը, Մոխրաթաղը, եւ ամէնակարեւորը, Մարսանդի ջրամբարը»:

Լեռնային Ղարաբաղի բանակի Կեդրոնական Պաշտպանական Շրջանի մարտական ուղիին մասին ԼՂՀ պաշտպանութեան նախարար, պաշտպանական բանակի հրամանատար Գեներալ-Լէյտենանտ Սէյրան Օհանեան կու տայ իր վկայութիւնները հետեւեալ մանրամասնութեամբ. «Պաշտպանական բանակի ստեղծումը պատմական անհրաժեշտութիւն էր: Դեռեւս արցախեան գոյամարտի սկզբնական փուլում քաղաք Ստեփանակերտում եւ նրան յարակից բնակավայրերում ձեւաւորուեցին առաջին վաշտերը, որոնք համալրուած էին համապատասխան հաստիքներով: Դրան գուգահեռ կազմուեցին նաեւ Ստեփանակերտի գնդի հաստիքները, որը պէտք է կազմաւորուէր արդէն իսկ գործող վաշտերի հիմքի վրայ: Նախատեսուում էր գնդի հրամանատար նշանակել գիս: Սակայն, մի շարք առումներով մտայղացումը կարծես փոքր-ինչ ժամանակավրէյս էր: Գոնդն այսպէս էլ չկայացաւ: Նշուած ժամանակահատուածում գործող վաշտերը մարտնչում էին հանրապետութեան տարբեր շրջաններում՝ իրենց առջեւ նպատակ ունենալով ապահովել բնակավայրերի պաշտպանութիւնը, նման պարագայում, իրօք, դժուար էր վաշտերը համախմբել զինուորական մէկ կառոյցի շրջանակում»:

«Որոշ ժամանակ անց, այնուամենայնիւ, մեր առջեւ նորից ծառայաւ կանոնաւոր բանակի ձեւաւորման անհրաժեշտութիւնը: 1992ի Սեպտեմբերի

պանական Շրջանը յատուկ պատրաստուածութիւն ունեցող 30 հոգինոց ջոկատը, գնդի հրամանատար Սամուէլ Կարապետեանի գլխաւորութեամբ...

«Մէկ օր ետք, 27 Յունիսին, զարաբաղեան զօրամիւսերներու վերահըսկողութեան տակ առնուեցան Մարտակերտ քաղաքը եւ շրջակայ գերիշխող բարձունքներն ու հիմնական ճանապարհային ուղղութիւնները: Այսպէս աւարտեցաւ Մարտակերտի ազատագրման ռազմագործողութիւնը:

«Անոնց առջեւ խնդիր էր դրուած թիկունքէն շեշտակի հարուածով դրոհ ձեռնարկել հակառակորդի վրայ, խուճապ յառաջացնել անոր շարքերուն մէջ եւ փակել Օմարի լեռնանցքով Քարվաճառ տանող ճանապարհը, քանի որ այդտեղ էր, որ թշնամին կը ստանար իրեն օգնութեան հասնող հիմնական լըրացուցիչ ուժերը: Ապրիլ 2ին, մեր զինուժը ամրացաւ Քարվաճառը Գանջայի հետ կապող խաչմերուկին մէջ: Ատրպէյճանական հրամանատարութիւնը այդ ուղղութեամբ շարժեց 8 միւսեր զրահատեխնիկա եւ 250 հետեւակ: Կեդրոնական Պաշտպանական Շրջանի զինուորներն իրենց վրայ վերցուցին հարուածի ծանրութիւնը: Մարտի մէջ մտնելով ազերիներու դէմ, անոնք յաջողեցան թշնամիէն գրաւել մէկ եւ խփել երեք միւսեր զրահատեխնիկա: Ոչնչացուեցաւ շուրջ 60 հետեւակ զինուոր: Մարտական գործողութիւններու ժամանակ վիրաւորուեցաւ գունդի հրամանատարը:

«Անկէ վերջ հակառակորդը այլեւս անգօր ըլլալով դիմադրել Ղարաբաղեան ուժերու ճնշման, ստիպուած էր տեղահանել քաղաքացիական բնակչութիւնը եւ լքել Քարվաճառի ռազմական յենակէտը: Այդպիսով, 1993 Ապրիլի սկիզբը աւարտեցաւ Ատրպէյճանի Քելբաջարեան զօրախումբի ջախջախման մարտական գործողութիւնը»:

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

«Մօտ երկու ամսուան հանգիստէն ետք, 12 Յունիսին, 2րդ, 3րդ, 4րդ եւ 5րդ պաշտպանական շրջաններուն հետ, Կեդրոնական Պաշտպանական ստորաբաժանումները ձեռնամուխ եղան Մարտակերտ քաղաքի եւ շրջանի ազատագրման լայնածաւալ գործողութեան: Կարճ ժամանակով գրաւելով մարտավարական նշանակութիւն ունեցող շարք մը կարեւոր բարձունքներ, Ղարաբաղեան ուժերը ճեղքեցին հակառակորդի պաշտպանութիւնը եւ մինչեւ 20 Յունիս ոչնչացուցին Ղարաչինար, Բայաճմաղլի, Փափրաւենդ գիծերու թշնամական յենակէտերը: Այնուհետեւ, մարտական գործողութիւններու թատերաբեմը տեղափոխուեցաւ «Պուշկին Եալ» կոչուող բարձունքի ուղղութեամբ: 26 Յունիսին վաղ առաւօտեան ժամը 4:55ին, ռազմավարական կարեւորութեան այդ յենակէտը վերջապէս անվերադարձ ազատագրուեցաւ մեր կողմէ:

«Մէկ օր ետք, 27 Յունիսին, զարաբաղեան զօրամիւսերներու վերահսկողութեան տակ առնուեցան Մարտակերտ քաղաքը եւ շրջակայ գերիշխող բարձունքները ու հիմնական ճանապարհային ուղղութիւնները: Այսպէս աւարտեցաւ Մարտակերտի ազատագրման ռազմագործողութիւնը:

«Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան բանակի շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Անատոլի Զինեւիչ կը պատմէ Կեդրոնական Պաշտպանական

Շրջանի ցուցաբերած պատերազմական գործողություններու մասին. «Եթէ խօսենք մարտական գործողությունների ժամանակ Կենտրոնական Պաշտպանական Շրջանի ցուցաբերած գործնական մասնակցություն, Հայրենիքի ազատագրության եւ պետության պաշտպանության գործում նրա ունեցած դերի մասին, հաւանաբար հարկ կը լինի այդ պատմությունը բաժանել երկու մասի՝ մինչեւ 1992 թ. Օգոստոսը եւ Օգոստոսից յետոյ: Առաջին շրջանում ստեփանակերտցի կամաւորականներն իրենց տարանջատ ստորաբաժանումներով լուծում էին ԼՂՀ բնակավայրերի պաշտպանությունն առնչուող խնդիրները: Իսկ Օգոստոսից յետոյ՝ ԿՊՇԻ (այն ժամանակ Յրդ, ներկայումս Տրդ առանձին մարտահրահայտի գունդ) ստեղծման պահից այն դարձաւ լաւագոյն, շարժունակ, հարուստ աշխարհից մէկը, որն իր անմիջական մասնակցությունն էր բերում անցկացուող համարեայ բոլոր մարտական գործողություններին: Որտեղ դժուար էր, միշտ էլ այնտեղ էին ուղարկուում ԿՊՇԻ ստորաբաժանումները: Այդպէս է եղել 1992ի աշնանը՝ Չլդրանում, վաղուհասում...: Ամէնածանր պահերին նրա հրամանակագրը կարողանում էր որոնել եւ գտնել արդիւնաւէտ ելք իրավիճակից դուրս գալու համար: Կուսապատի եւ Դրմբոնի շրջանում, 1993 թ. Յունուարի, Փետրուարի ցրտաշունչ օրերին մղուած մարտական գործողություններում. յստակ կերպով երեւում էին ԿՊՇԻ անձնակազմի տոկոսները, արիւթները եւ հերոսները»:

«Ոչ պակաս կարեւոր է նաեւ նրա անձնակազմի խաղացած դերը Ադդամի ռազմական յենակէտի վերացման ժամանակ, Դեկտեմբերին, Հորադիզի ուղղությունում, 1994ին՝ Օմարում ծաւալուած բուռն մարտերում»:

«Նոյնիսկ 1994ի Ապրիլ-Մայիսին՝ մարտական գործողությունների ամէնավերջին փուլում, ԿՊՇԻ տեղը եղել է գլխաւոր հարուստի ուղղությունում, այնտեղ որտեղ դժուար էր: Մենք խոր յարգանքով գլուխ ենք խոնարհում բոլոր նրանց առաջ, ովքեր հերոսի մահով ընկան՝ յանուն Ղարաբաղի մղուած մարտերում»:

«Կեդրոնական Պաշտպանության Շրջանի զօրքերը, 1993ի Օգոստոս 15ին, յարձակողական մարտերով մտան պատմական Դիզակի Ձոր գիւղը, ապա զարգացնելով յառաջխաղացքը ազատագրեցին Բանաձոր եւ Առաքիւլ բնակավայրերը: Այնուհետեւ մարտերը տեղափոխուեցան յարակից Ջերբայիլի շրջանի տարածքը: Օգոստոս 23ին հայկական զօրքերը մտան Ջերբայիլ»:

«Արցախեան ազատամարտի տարեգրության մէջ, Կեդրոնական Պաշտպանական Շրջանն ունի իր ուրոյն տեղը: Այն մարտական փառաւոր կենսագրության տէր զօրամաս մըն է, որ իր յաջողությունները կերտած է արեան գրնով: Պատերազմը ամէնադաժան օրերուն, գունդը մարտեր մղած է ռազմաճակատի բոլոր ուղղություններու մէջ եւ մեծապէս ունեցած է փայլուն յաղթանակներ: Այդ կը նշանակէ, որ մեր գինուորը պատուով տարած է պատերազմի բոլոր զրկանքներն ու դժուարությունները»:

ԼՂՀ Կեդրոնական Պաշտպանական Շրջանի հրամանատար, «Ոսկէ արծիւ» շքանշանի ասպետ, պաշտպանական բանակի հրամանատարի տեղակալ գեներալ-մայոր Սամուէլ Կարապետեան, կը խօսի Կեդրոնական Պաշտպանական Շրջանի մասին ըսելով, որ «ԿՊՇԻ մասին պատմելու շատ բան կայ, բաւարարուենք նրանց ինչի շուրջ կը ցանկանայի այժմ կիսուել ձեզ հետ: Ընդհանր

րապէս, աշխարհի բոլոր պատերազմները եղել են դաժան... Մինչդեռ մեր պատերազմն իր էութեամբ սուրբ էր, քանի որ այն մղուում էր յանուն ազատութեան եւ անկախութեան: Այսօր ես հպարտ եմ, որ ծառայել եմ այն բանակում, որն ունի փառաւոր մարտական կենսագրութիւն եւ նրա զինուորն աշխարհի հետ խօսում է վարդան Մամիկոնեանի, Անդրանիկի եւ Նժդեհի թողած հօր անանդոյթները լեզուով:

«Աշխարհի իւրաքանչիւր անկիւնում ապրող հայ, լինի նա մանուկ, թէ՛ ծեր, պարտաւոր է սիրել իր ժողովուրդին եւ նրա ոստանը հանդիսացող հայոց երկիրը: Սա իմ համոզմունքն է եւ այդպիսին կը ցանկանայի տեսնել բոլոր նրանց, ովքեր շարունակելու են մեզ: Շատերը քաջաբար նահատակուեցին այդ գաղափարի համար: Մարդիկ, որոնց կատարած հերոսութիւններին պատմութիւնը դեռ կ'անդրադառնայ, որոնք իրենց ապրելու իմաստը որոնում էին հայոց յաղթանակի մէջ: Եւ շնորհիւ նրանց, մենք կարողացանք պատուով դուրս գալ մեզ պարտադրուած պատերազմից... Բայց ոչ վերջնականապէս... Լիակատար յաղթանակի հասնելու ճանապարհը դեռ եւս մեզ է սպասում: Ծշմարիտ է ասուած, որ խաղաղութիւնը ժողովուրդներին տրուում է պատերազմի նախապատրաստուելու համար: Այսօր, քան երբեւէ, մենք ունենք վերջնական յաղթանակի հասնելու բաւականին մեծ հնարաւորութիւն: Պարզապէս հարկաւոր է դրան շարունակ պատրաստուել... Պատերազմները միշտ էլ գալիս են մեր ցանկութիւններին հակառակ: Դա մեր այսօրուայ իրականութեան դրուածքն է մեր գոյատեւման, թերեւս, ոչ այնքան ցանկալի պայման, հենց այդ պայմանից ելնելով մեզնից շատերը որդեգրուեցին արցախեան գոյամարտին, կարողացան արժանապատուօրէն իրականացնել այն բոլոր մարտացումները, որոնք սկսուել ու ձգուել են Արաքսից-Օմար, Գիլիսլայից-Ղոչաղ ընկած ռազմաճակատային գծի ամէնաթէժ հատուածներում: Եւ ես, անձամբ երախտապարտ եմ բոլոր նրանց, ովքեր գիտակցել եւ գիտակցում են, որ բիբլիական Արարատ լեռանն ուղիղ աչքերով նայելու համար (անկախ նրանցից, թէ նա աշխարհի որ անկիւնում է ապրած) անհրաժեշտ է հոգով ու մտքով լինել առաւելապէս ՀԱՅ եւ ապրել ՀԱՅԱՎԱՐԻ: Կեդրոնական Պաշտպանական Շրջանի զինուորը պատերազմի տարիներին մտածում էր հենց այդպէս, եւ ես յոյսով եմ, որ այսօր էլ նա շարունակում է հայրենիքի հանդէպ իր առաքելութիւնը կատարել նոյն ոգիով ու նուիրուածութեամբ»:

Ղարաբաղի Կեդրոնական Պաշտպանութեան Շրջանի մարտական ուղին գնահատող հետեւեալ ուղերձը կը փակեմ այս յօդուածը ուղղուած գունդի անձնակազմին, զօրամասին մարտական դրօշ յանձնելու առիթով, 1996 թ. Մայիսին, ԼՂՀ Նախագահ Ռոպերթ Քոչարեանի կողմէ. «Ղարաբաղում ամէնքը գիտեն, որտեղ դժուար էր, որտեղ անհրաժեշտ էր լուծել մարտական բարդ խնդիր, այնտեղ էլ ուղարկուում Կենտրոնական Պաշտպանական Շրջանը: Դա փառաւոր ականդոյթներ ունեցող զօրամաս է: Ստեփանակերտցի շատ տղաներ են ընկել քաջի մահով եւ իրենց մահով անմահացրել են այս զօրամասի զինուորական փառքը, բարձր պահել մեր հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտի պատիւն ու անունը: Սերնդափոխութեան հետեւանքով, այսօր շատ տղաներ, շատ նորակոչիկներ են ծառայում: Իմ խօսքն ուղղելով նրանց, ուզում եմ յիշեցնել, դուք այսօր հնարաւորութիւն ունէք հասնել լինել զին»

ւորական գիտութեանը եւ դրանով դաս տալ թշնամուն, եթէ նա կրկին փորձի ստուգել մեր ուժն ու տոկունութիւնը:

«Նման հնարաւորութիւն ձեր նախորդները չեն ունեցել: Բանակում այն ձեռք է բերուել յընթացս կենաց-մահու դէժ մարտերի բովում: Դուք այսօր ծառայում էք այնպիսի ււանդոյթներ ունեցող զօրամասում, որը թեւաւորուել է արեան ու մահուան դաժան յորձանոտում: Եւ դուք պէտք է հպարտ ու աներեր տանէք այդ դրօշը, տանէք մինչեւ յաղթական աւարտ:

«Զեմ կարող ջերմ խօսքեր չասել ձեր հրամանատարի՝ զնդապետ Կարապետեանի մասին (ներկայիս գեներալ-մայոր), որի անցած ուղին անչափ յիշեցնում է հենց մեր բանակի անցած ուղին: Դա զինուած պայքարի ութ տարիներն են, դա մի քանի ծանր վէրքերն են, դա Ֆիդայուց մինչեւ զնդապետ ձգուող դաժան փորձութիւններով յագեցուած երկար ու ձիգ ուղին է: Զեր բախտը բերել է: Զեզ գլխաւորում է Արցախի լաւագոյն մարտական հրամանատարներէից մէկը:

«Այն ինչ տեղի է ունենում այսօր, դա պարզապէս պատմական իրադարձութիւն է Կենտրոնական Պաշտպանական Շրջանի կեանքում: Դա իրադարձութիւն է, ամբողջութեամբ վերցրած, ԼՂՀ պաշտպանական բանակի կեանքում: Դա ԼՂՀ ՊԲ շտաբի, ԼՂՀ պաշտպանութեան նախարարութեան, պաշտպանութեան բանակ հրամանատարութեան ծառայութիւնն է: Դա նրանց աշխատանքի արդիւնքն է, դա բոլորիս անբասիր աշխատանքի արդիւնքն է:

«Շնորհաւորում եմ ձեզ բոլորիդ, ԿՊՇի ողջ անձնակազմին, պաշտպանութեան նախարարութեանը՝ այս նշանակալից իրադարձութեան առթիւ: Բոլորիդ մաղթում եմ յաջողութիւն՝ մարտական պատրաստութեան գործում»:

«ՅՈՐԻՉՈՆ»ի Բացառիկ
Դեկտեմբեր 2002

«ԼՈՅՍ» ԵՐԿԱՄՍԵԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

«Լոյս» կրօնական, եկեղեցագիտական եւ Սուրբ գրային պաշտօնական երկամսաթերթ, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Գանատայի Առաջնորդական Փոխանորդութեան, որուն առաջին թիւը՝ Սեպտեմբեր-Հոկտեմբեր եւ երկրորդ թիւը՝ Նոյեմբեր-Դեկտեմբեր 2000, արդէն իսկ լոյս տեսած են, 24 էջով եւ ճոխ, իմաստալից եւ դաստիարակիչ բովանդակութեամբ:

Երկամսաթերթը, որպէս Գանատայի Առաջնորդական Փոխանորդութեան պաշտօնաթերթ, կը վայելէ հովանաւորութիւնը Առաջնորդական Փոխանորդ Գերշ. Տ. Խաժակ Եպիսկ. Յակոբեանի, իսկ խմբագրի պաշտօնը ստանձնած է «Արմաշ» պարբերաթերթի խմբագիր-հրատարակիչ, ծանօթ մտաւորական Բարգէն Թօփճեան:

«Լոյս» երկամսաթերթի հրատարակութեան առաջին թիւին մէջ, որպէս գերօրհնութեան եւ վերստին «Լոյս» խմբագրով, Գերշ. Խաժակ Եպիսկ. Յակոբեան, իր խօսքը գանատայի հաւատացեալներուն ուղղելով, ի միջի այլոց գըրած է.

«Երկար տուայտանքներէ եւ ծրագրումէ ետք, յուսալով Աստուծոյ նախախնամութեան եւ մեր հաւատացեալ ընթերցողներու քաջալերանքին, ահա ձեզի կը ներկայացնենք Գանատայի Առաջնորդական Փոխանորդութեան պաշտօնաթերթ՝ «Լոյս»ի առաջին թիւը:

«Կը փափաքինք եւ կը հաւատանք, որ այս «Լոյս»ը պիտի ըլլայ վերածընունդը ուրիշ «Լոյս»ի մը, որ 95 տարիներ առաջ հրատարակուեցաւ Կ. Պոլսոյ մէջ: Եւ իր գոյութեան երկու կարճ տարիներուն ընթացքին մեր աստուածաբանական, եկեղեցագիտական եւ հայ եկեղեցւոյ հետ առնչուող ընդհանուր ծանօթութիւնները մեծապէս ճոխացոց եւ հարստացուց:

«Մեր սրբազան Աստուածաշունչը կը սկսի գեղեցիկ դրուագով մը.- «Եւ ասաց Աստուած, եղիցի՛ լոյս, եւ եղեւ լոյս: Եւ ետես Աստուած զլոյսն զի բարի է... »:

«Լոյսը ուր որ ալ ըլլայ, ինչ կերպարանքի ներքեւ ալ ներկայանայ, բարի է: Բարի է ան իբրեւ բնութեան լոյս, իբրեւ աչքի լոյս, իբրեւ մտքի ու հոգիի լոյս:

«Կը մաղթենք, որ այս «Լոյս»ն ալ բարի ընթացք մը կ'ունենայ եւ իր չորսդին հայու ընտանիքներու եւ կեանքերուն մէջ կը դառնայ տարածիչը բարիին:

«Հոս կը փափաքինք մեր շնորհակալութիւնները յայտնել մեր սիրելի եղբօր՝ Բարգէն Թօփճեանին, որ սիրայօժար կերպով ստանձնեց խմբագրական աշխատանքը այս երկամսաթերթին եւ կոչ կ'ուղղենք բոլոր անոնց, որոնք սէրն ու նախանձախնդրութիւնը ունին հայ եկեղեցւոյ եւ մարդկային բարոյական արժէքներուն, որպէսզի իրենց մասնակցութիւնը բերեն մեր այս ճիգին, ի սպաս Հայաստանեայց Եկեղեցւոյ պայծառացման եւ հայ հաւատացեալի լուսաւորութեան»:

«Լոյս» երկամսաթերթի խմբագիր Բաբգէն Թօփճեան, «Լոյս»ի առաջին թիւին մէջ, որպէս առաջադրութիւն կը գրէ.

«Կ. Պոլսոյ Պատրիարք Մաղաքիա Արք. Օրմանեան, երբ պաշտօն կու տար Արմաշական Բաբգէն Մ. Վրդ. Կիւլէսէրեանին վերահրատարակել «Լոյս» շաբաթաթերթը, իր «Թուղթ Օրհնութեան» գրութեան մէջ հետեւեալ թելադրութիւնը ըրած է.

«Գրողներուն կը յանձնարարեմ, աւելի ժողովուրդին պէտքին հետեւիլ՝ քան իրենց ճաշակին, աւելի օգտակարութիւն մեր դնել՝ քան հաճելոյն: Խորշիլ անձնականութիւններէ, հակառակաբանութիւններէ, աւելորդ խնդիրներէ: Նոյնիսկ կրօնական կամ դաւանաբանական նրբութեանց մէջ չմտնել, այլ աւելի բարոյական ուղղութեան վրայ քայլել: Ասոր հետ սորվեցնել հաւատացելոց իւր դասաւանդութիւնը, իւր արարողութիւնները եւ իւր կանոնները, բացառել ընտանեկան սրբութիւնը, ծնողական եւ որդիական պարտքերը, հանրութեան անդամակցելու փոխադարձ յարաբերութիւնները, դաստիարակութեան նուիրականութիւնը, կրթական պահանջները, եւ գրական ուղին եւ մաքուր ճաշակի պայմանները» (1905, Ա. տարի, էջ 4):

«Ստանձնելով խմբագրութիւնը Գանատայի Առաջնորդական Փոխանորդութեան պաշտօնաթերթ նոր «Լոյս»ի հրատարակութեան, մենք եւս կ'ընդառնանք Օրմանեանի յորդորին ու կը ջանանք նաեւ հետեւիլ «Լոյս»ի խմբագիրին ուղղութեան, որ պիտի մշակէ գլխաւորաբար հայ եկեղեցագիտութիւնը՝ իր բոլոր ճիւղերուն մէջ... ձեռնհաս ու ժի՛ր մշակներով՝ ըլլայ եկեղեցական, ըլլայ աշխարհական (նոյն, անդ. էջ 2), աւելին՝ ընթերցողներուն պիտի ներկայացուի քրիստոնէական եկեղեցին յուզող այժմէական հարցեր եւ այլ հետաքրքրական նիւթեր»:

«Լոյս» երկամսաթերթի Ա. տարի, թիւ 1, 2000ի մէջ գրութիւններ եւ յօդուածներ ունին հետեւեալները.-

Փռնէն Վրդ. Վարդանեան յօդուած մը գրած է «Տօն Վարագայ Ս. Խաչի» (Հայոց Խաչի տօն) մասին, Վաչէ Մ. Վրդ. Իգնատոսեան՝ «Ներողամտութիւնը» խորագրով յօդուածով կ'անդրադառնայ ներողամտութեան (քանի մը անգամ պէտք է ներել, ներողամտութեան պարզեւները) մասին, Գրիգոր Վրդ. Չիֆթճեան, «Հայ եկեղեցին եւ հայ երիտասարդը դէմ առ դէմ» ընդհանուր խորագրով եւ «Կինը Աստուծոյ գործին շարունակողը» յօդուածով կ'անդրադառնայ կիներու պարտականութիւններուն եւ ծառայութիւններուն, յատկապէս մայրութեան կոչումին եւ մարդկային ցեղին Ֆիզիքական շարունակութեան, գաւակներու հոգատարութեան եւ գուրգուրանքին. երկամսաթերթի վերջին յօդուածը Ֆրանսերէնով գրած է Թամար Տասնապետեան՝ "Marie Mère Influante du Christ - Roi dans les Charagnots Chymnaire Arménien" խորագրով:

«Լոյս» երկամսեակի երկրորդ թիւին մէջ, առաջին յօդուածով, Խաթակ Եպիսկ. Յակոբեան կ'անդրադառնայ Ս. Գրիգոր Լուսաւորչի Խոր Վիրապէն ելքին եւ Տրդատ Թագաւորի եւ այլ նախարարներ բուժելէն ետք, հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակին, յիշատակելով Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հետեւեալ խօսքը.-

«1700-ամեակը սոսկ հպարտութեան առիթ մը պէտք չէ դառնայ՝ յիշելով եւ աշխարհին յիշեցնելով, թէ մենք պետականօրէն քրիստոնէութիւնը ըն-

դունած աշխարհի առաջին ժողովուրդն ենք: 1700-ամեակը՝ թէ՛ մեր եկեղեցական դասուն, թէ՛ մեր եկեղեցւոյ զաւակները պէտք է մղէ ինքնաքննադատական մօտեցումով լրջօրէն մտածելու, թէ մենք, որպէս եկեղեցի, ինչ պարտաւորութիւններու դիմաց կը գտնուինք»:

«Յիսուս աշխարհի լոյսը» խորագրով յօդուած մը ստորագրած է Բաբգէն Թօփճեան, Վեր. Վահան Յ. Թութիկեանի, «Յիսուսի տասներկու աշակերտները, տասներկու աշակերտներու ինքնութիւնը ու դերը» խորագրով տուած է տասներկու աշակերտներու անունները ըստ աւետարանիչներու եւ անոնց դերը քրիստոնէաութեան տարածման առաքելութեան մէջ: «Դաւանական» խորագրով քերթուած մը ստորագրած է Խորէն Ա. Քհնյ. Ներսէսեան: Փառէն Վրդ. Վարդանեան, «Հայ բարեպաշտական սովորութիւններ»ու մասին յօդուածով մը կը բացատրէ ծոմապահութիւնը, պահեցողութիւնը, խաչակնքելը, մոմավառութիւնը, տնօրհնէքը, դանձանակ-պնակ-ժամուց հաւաքելը, Վարդավառի տօնին ջուր սրսկելը, եւայլն, սովորութիւններուն մասին, «Հովիւ-հօտ կապը այսօր» նիւթին շուրջ յօդուած գրած է Արժ. Տ. Արմէն Ա. Քհնյ. Իշխանեան, ցաւով անդրադառնալով այս օրերուն հովիւ-հօտ յարաբերութիւններու դժուարութիւններուն: «Օրմանեանի ազգայնականութիւնը» շարունակելի յօդուած մը գրած է վախճանեալ Ներսոյեան Սրբազանի կրտսեր եղբայր Յակոբ Ներսոյեան, լայնօրէն թուելով Օրմանեան Պատրիարքի գործունէութիւնները ազգային, եկեղեցական եւ պատմագրական կալուածներուն մէջ:

Գանատայի Առաջնորդական Փոխանորդութիւնը լոյս ընծայելով «Լոյս» երկամսաթերթը, եկեղեցական գիտելիքներով կը սնուցանէ հայ հաւատացեալները, որոնցմէ շատեր քրիստոնեայ դարձած են ի ծնէ, Հայ Եկեղեցւոյ մկրտութեան աւագանէն եւ ամենեւին տեղեակ չեն Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութենէն, սովորութիւններէն եւ հաւատալիքներէն:

Կը սիրենք յուսալ, որ «Լոյս» երկամսաթերթի կողմէ լուսաւորուելով, հայ հաւատացեալները իրենք կը զարգանան, դառնալով հաւատացեալ հայ քրիստոնեաներ եւ իրենց գիտութիւնը զանազան միջոցներով կը փոխանցեն նորահաս սերունդին, նուազագոյնը զանոնք առաջնորդելով կիրակնօրեայ վարժարաններ, ուր կը դասաւանդուի իրենց կրօնա-բարոյական գիտելիքներ:

«Լոյս» երկամսաթերթը, որպէս Գանատայի Առաջնորդական Փոխանորդութեան պաշտօնաթերթ, լաւ կ'ըլլար, եթէ թղթակցութիւններով եւ տեղեկատուութիւններով անդրադառնար փոխանորդութեան ենթակայ եկեղեցիներու առօրեայ կեանքին եւ նուաճումներուն:

Նորանոր յաջողութիւններ կը մաղթենք «Լոյս»ի ճանապարհին:

«Լոյս» կարելի է ստանալ եկեղեցիներու գաւիթներէն:

«ՅՈՐԻՉՈՆ»
5 Փետրուար 2001

**ՓՈԽԱՆ ՎԵՐՋԱԲԱՆԻ ՈՒՂԵՐՁ՝
ԱՌ**

**Ն.Ս.Օ.Տ.Տ.ԱՐԱՄ Ա. ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻՒԻԿԻՈՅ**

Վեհափառ Տէր,

Ձեր Կաթողիկոսական Ընտրութեան, Գահակալութեան եւ Օծման 10-ամեակին, Կաթողիկոսարանի Դպրեվանքի 75-ամեակին եւ Հայ Գիրերու Գիւտին 1600-ամեակին առիթով, Գանատայի Ձեր հօտին տրուած հովուապետական օրհնաբաշխ այցելութիւնը՝ Հինգշաբթի, 22 Սեպտեմբերէն մինչեւ Չորեքշաբթի, 5 Հոկտեմբեր 2005 թուականը, պատմական կարելի է կոչել, եւ, բարձրադաղակ գոչել՝ «Եկաք, Տեսաք եւ Յաղթեցիք»:

Յաղթեցիք, որովհետեւ Ձեր առաքելութիւնը յաղթանակով պսակուեցաւ, «Յանուն Կրօնի եւ Հայրենեաց» մղուած ազգակերտ եւ աստուածահաճոյ ճակատամարտներով: Եկաք տեսաք այն աչքառու եւ մեծ փոփոխութիւնները, զորս տեղի ունեցած են գանատայ կեանքին մէջ, հինգ տարի առաջ Ձեր տուած հովուապետական այցելութենէն ի վեր: Գանատայի ամբողջ տարածքին, հայութեան թիւը ներկայիս մօտեցած է հարիւր հազարի: Մերձաւոր Արեւելքէն արտագաղթած հայութիւնը, իր հին բոյնը լքելով, այս փերրուն վըրայ շինեց նոր եւ արդիական բոյն եւ իր հայկական տաղանդին շնորհիւ արագօրէն կազմակերպեց իր տնտեսութիւնը, միեւնոյն ատեն լայն բանալով իր քսակը, մեծ եւ փոքր նուիրատուութիւններով լծուելու ազգապահպանման ամբողջներու՝ հայ կեդրոններու, հայ եկեղեցիներու եւ հայ դպրոցներու կերտումին:

Վեհափառ Տէր.

Եկաք Գանատա եւ արժանացաք բացառիկ, խանդավառ եւ յարգալից ընդունելութիւններու, զորս ցոյց տուին Ձեր հօտին հաւատացեալ զաւակները՝ Գանատայի ամբողջ տարածքին, խուռներամ շարքերով ներկայ գտնուելով Ձեր Ընտրութեան, Գահակալութեան եւ Օծման 10-ամեակի, Դպրեվանքին 75-ամեակի, Հայ Գիրերու Գիւտին 1600-ամեակի տօնախմբութիւններուն, Ձեզի ի պատիւ կազմակերպուած ճաշկերոյթներուն եւ Ձեր կողմէ մատուցուած պատարագներուն ամէն տեղ, ունկնդրելով Ձեր ազգայաշունչ եւ կրօնաբոյր քարոզներն ու պատգամները, որոնցմէ գլխաւորները՝

«Անթիլիասի փառքն ու պատիւը իր ծառայութիւնն է: Անթիլիասի խօսքը՝ իր ծառայութիւնն է»,

«Մառայութիւն, ծառայութիւն ու միայն ծառայութիւն: Ահա մեր կեանքի ճամբան»,

«Համագործակցութիւնն է մեր ազգի միակ ճամբան»,

«Աստուծոյ վրայ մեր ունեցած հաւատքն է որ մեզ պիտի մօտեցնէ եկեղեցոյ ու Աւետարանի ուսուցումներուն եւ մեր կեանքը պիտի դարձնէ աւելի արդիւնաւէտ»,

«Երիտասարդներ, պէտք է տեսնէք մեր ազգային, եկեղեցական արժէքները եւ հետամուտ ըլլաք անոնց պահպանման ու ծաղկումին: Մեր լեզուն, մեր մշակոյթը, մեր դպրոցը, մեր եկեղեցին վաւերական արժէքներ են, որոնցմով պէտք է հարստացնենք մեր կեանքը: Անոնք են մեր ազգին սրբութիւնները»,

«Հայ ըլլալ՝ կը նշանակէ ամէն բանէ առաջ հայերէն խօսիլ, հայերէն կարդալ, հայերէն գրել, հայերէն երգելու մեր մշակոյթի արժէքներուն բաց-ւիլ: Օտարներուն հետ պիտի խօսինք տարբեր լեզուներով, սակայն, իրարու հետ միայն հայերէնով», որոնց արձագանքները կը շարունակեն լսուիլ հայ հաւատացեալներու կողմէ:

Եկաք եւ տեսաք իր արմատներուն եւ հաւատքին ամուր կապուած Ձեր հօտի զաւակները, որոնք Լուսաւորչեայ սուրբ հաւատքով, Ս. Մեսրոպեան գիրերով եւ գրականութեամբ փարած են իրենց ազգային եւ տոհմիկ սրբութիւններուն եւ ավանդութիւններուն ու պատրաստ են ամէն տեսակ զոհողութիւններով եւ նուիրումով վառ պահելու Լուսաւորչի կանթեղը եւ Ս. Մեսրոպի ջահը, իրենց աչքերը միշտ յառած դէպի Հայրենիք, դէպի Արարատ Լեռ, դէպի էջմիածին եւ Անթիլիաս, իրենց սրտերուն մէջ անջնջելի գիրերով դըրողմուած պահելով հայրենասիրութեան եւ եկեղեցասիրութեան ոգին:

Եկաք եւ տեսաք Գանատայի մէջ կանգնած նոր եկեղեցիներ, բարեգարդարուած եւ ներքնապէս գեղեցկացած եկեղեցիներ, Գանատայի Ազգային Առաջնորդարանի նորակերտ սքանչելի շէնքը, Թորոնթոյի Հայ Երիտասարդական հոյակապ Համալիրը, իր թատերասրահով, մարզարանով եւ Հ.Օ.Մ.ի Երկրորդական Վարժարանի բաժանմունքով, որ պատիւ միայն կը բերէ հայ գաղութին եւ հայ ազգին, որ որոշած է այս ափերուն վրայ հայ ապրիլ եւ պայքարիլ ուժացումի եւ ձուլումի վտանգներուն:

Եկաք եւ Ձեր հայակերտ քարոզներով եւ պատգամներով՝ «Դէպի Աղբիւրը Լոյսին», բացիք մեր հոգիները, Քրիստոսի լուսաճաճանչ կեանքով օծեցիք մեր հաւատքին արմատներն ու զգայնութիւնները, վերանորոգեցիք եւ վերագարթնեցուցիք մեր պապենական հաւատքի խորհուրդները, Նարեկացիի աղօթքներով զօրացուցիք մեր հաղորդակցութիւնը Աստուծոյ հետ եւ Ս. Ներսէս Ծնորհալի Հայրապետին հոգեպարար շարականներու բովանդակութեամբ բացիք մեր սրտերուն կափարիչները:

Վեհափառ Տէր.

Հինգշաբթի, 29 Սեպտեմբերին 5 Հոկտեմբեր, Թորոնթոյի այցելութեան ընթացքին, ակնատես եղաք հայ ժողովուրդին Ձեզի հանդէպ գործնականօրէն ցոյց տուած ակնածանքին եւ յարգանքին՝ Աջահամբոյրէն մինչեւ Թորոնթոյէն Ձեր մեկնումը, սակայն, վստահօրէն դուք մեծապէս գնահատեցիք Երկուշաբթի, 3 Հոկտեմբերին, Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ՝ շուրջ 300-350 երիտասարդներուն Ձեզի հետ ունեցած հանդիպումը, ու Ձեր հովուապետական խօսքէն վերջ, տեղի ունեցած հարցումներ եկեղեցական, կրօնական, գիտական, միջազգային եւ ազգային հարցերու շուրջ, որոնց շուրջ լայնօրէն լուսաբանութիւններ տրուեցան Ձեր կողմէ:

Վեհափառ Տէր.

Եկաք Գանատա եւ Ձեր հօտին տրուած հովուապետական օրհնաբեր այցելութեան ընթացքին, Ձեր պատուին կազմակերպուած պաշտօնական ճաշկերոյթներուն ընթացքին, հայրական հոգածութեամբ գնահատեցիք եւ պատուեցիք հայ ազգին, հայ եկեղեցիին, հայ դպրոցին, հայ գրականութեան եւ հայ մշակոյթին ծառայող անձերն ու հայ մշակները, եւ հետեւելով Քրիստոսի պատգամին՝ «Քանզի մշակը արժանի է գնահատանքի»ն, միշտ գիտակցօրէն մօտենալով անոնց կեանքին եւ գործին, անոնց մասին յայտարարած էք «Պատիւ՝ Արժանաւորացս»:



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Գրիգոր Գոթոյեանը կը պատուէ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով՝ 1 Հոկտեմբեր 2005ին

Նկատի ունենալով, որ 1 Հոկտեմբեր, 2005, Շաբաթ երեկոյեան, ի պատիւ Ձեզի կազմակերպուած պաշտօնական ճաշկերոյթին, Թորոնթահայ կարգ մը ազգայիններու կարգին, իմ խոնարհ անձս պատուեցիք «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, հայ ազգին, հայ եկեղեցիին, հայ դպրոցին, հայ մշակոյթին, հայ գրականութեան եւ հայ լրագրութեան իմ 60-ամեայ ծառայութեան որպէս օրհնութիւն եւ գնահատանք, զոր ընդունեցի որդիական անխառն զգացումներով եւ երախտագիտութեամբ:

Այս առիթով, իմ խորազգաց շնորհակալութիւններս կը յայտնեմ Ձեզի, Վեհափառ Տէր, Գանատայի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Բարձրաշունորհ Տէր Խաթակ Ս. Արք. Յակոբեանին եւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ժրջան եւ անձնուէր Հոգեւոր Հովիւին, որոնց բարեխօսութեամբ արժանացայ այս պատիւին:

Վեհափառ Տէր.

Ի խորոց սրտէ կը շնորհաւորեմ որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Դարաւոր Աթոռին Կաթողիկոս Ձեր Ընտրութեան, Գահակալութեան եւ Օծման 10-ամեակը, մաղթելով կատարեալ առողջութիւն եւ արեւշատութիւն՝ ի փառս հայ ազգին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին եւ համայն մարդկութեան:

Մնամ՝ մատչելով ի համբոյր Ձերդ Օծեալ Ս. Աջոյն

Գրիգոր Հոթոյեան

**«Շողակաթ»
Սեպտեմբեր-Յոկտեմբեր 2005**



**Գրիգոր Գոթոյեան եւ իր թոռները՝ Քրիստափոր եւ Ստեփան-Արմէն
1 Կոկտեմբեր 2005ին
«Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանի տուչութենէն ետք**

Բ.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՃԱՆՉՆԱՆՔ ՌԱԳԳԱՆ

Մենք, հայերս, որ կ'ապրինք Սուրբիոյ մէջ, շատ բան չենք գիտեր անոր մասին: Մանաւանդ կարգ մը քաղաքներու մասին, որոնք ունին պատմական անցեալ:

Այսպիսի քաղաք մըն է Ռագգան: Ներկայիս՝ գիւղաքաղաք մը:

Րագգա կը գտնուի 36րդ գուգահեռականի վրայ, ծովէն 224 մեթր բարձրութեամբ: Նոր քաղաքին կից՝ կան աւերակներ, յունական եւ իսլամական շրջաններէն, Հին Ռագգայի հիմնադիրները եղած են Սելեւկեանները:

Եղած է շատ յառաջադէմ քաղաք մը, արհեստներով, մշակոյթով եւ ճարտարապետութեամբ: Իր հին անուններն էին, Քալիսիսոս, Նիքֆորտոմ:

Աւերակներուն մէջ եթէ պեղումներ կատարուին, նոր լոյսեր կրնան ծագիլ այս երկրին պատմութեան վրայ: Սակայն, բնակչութիւնը յարգանքով չի վերաբերիր այդ թանկագին աւերակներուն հանդէպ: Սուրբիոյ վրայ տիրող իշխանութիւններ՝ նկատի չեն առած այս կարեւոր աւերակները: Օսմանեան շրջանին՝ մարդիկ ազատօրէն փլցուցած են ինչ որ կրնային: Նոյնիսկ, ներկայիս տարիքաւոր մարդիկ կը պատմեն, թէ իրենք տեսած են սքանչելի ճարտարապետութեամբ շէնքեր՝ այդ աւերակներուն վրայ: Ֆրանսացիներու իշխանութեան օրով, կրկին շարունակուած է անտարբերութիւնը՝ այդ աւերակներուն հանդէպ: Նոյնիսկ ֆրանսացիները փլցուցած են Հարուն էլ Րաշիտի պալատը, անոր քարերը օգտագործելու՝ զօրացնելու շինութեան համար: Բնակչութիւնը, մանաւանդ, գաղտնի եւ յայտնի միջոցներով փլցուցած է այդ շինութիւնները, նախ՝ անոնց քարերը ոգտագործելու համար, երկրորդ՝ գտնելու յոյսով թանկագին առարկաներ, որոնք կը ծախուէին շնչին արժէքով:

Անոնք չէին կրնար երեւակայել, անշուշտ, որ այդ թանկագին շէնքերը կրնան մնալ որպէս նմոյշներ արեւելեան ճարտարապետութեան: Նոյն շէնքերը ունէին իրենց վրայ պարսկական ճարտարապետութեան դրոշմը, զոր բերած էին իսլամները: Այդ կը փաստեն պայտաձեւ պատուհանները:

Ռագգայի անունը եկած է արաբական էլ Ռագգա բառէն, որ կը նշանակէ «Ջուրի եզերքը գտնուող հողամաս»: Բուն իսլամական շրջանը կը սկսի քրքրիստոնէական 736 թուականէն: Տիրապետողը եղած է Այատ Լպն Ղանամ հրամանատարը:

Արաբ բանաստեղծ Սուհէյլ Լպըն Արին կ'ըսէ.

Երբ մենք ելանք ճեզիրէն Գիզակներով,
Եփրատն ելաւ մեր երեսին կարկաչելով,
Մահիկի պէս երբ երեւցաւ նոր լուսընկան,
Յաղթանակով գրաւեցինք ճերմակ Ռագգան:

Հին շրջաններու մէջ, Ռագգան նորոգած է Յիշամ Լպն ապտէլ Մալէք Խալիֆա Ամալին: Անիկա Եփրատէն ջրանցքներ բացած է, ոռոգելու համար շրջակայ ընդարձակ դաշտերը: Այդ ջրանցքներուն հետքերը կան տակաւին:

Հին Ռագգայի մէջ, Ապտըլ Մալէք Խալիֆան շինած է նաեւ, շուկաներ, որոնք մեծ հռչակ առած են արաբական աշխարհին մէջ: Մանաւանդ «Սուք էլ

Աթարին»ը, որ եզակի եղած է: Ինչպէս կ'երգէ քրիստոնեայ էլ Ախթալ բանաստեղծը.

Հեռու դաշտերէն երբ կը տեսնուին,
Բարձրը շէնքերը ճերմակ Ռազգային,
Թող որ Ըմ Մարիամ սիրուհիիս զոհուի,
Սէն մի խանութի համար խնկելի:

Միեւնոյն Խալիֆան, որ շինարար եղած է, շինած է նաեւ նոր քաղաք մը, Ռազգային կից՝ էլ Րաֆիղա անունով, որ ներկայիս կը կոչուի Մուսթաճիա Նուզերպ: Հին շէնքերը բոլորովին փլցուած են ներկայիս:

Ռազգան, իր աշխարհագրական դիրքով սահման եղած է բիւզանդական եւ իսլամական կայսրութեանց: Խալիֆաները, մեծ թիւով զօրք կը պահէին հոն:

Շինած էին ընդարձակ զօրանոցներ, որպէս կայան, բիւզանդացիներու դէմ պատերազմի գացող զինուորներու: Հոս զինուորները կը հանգստանային, կը ստանային ռազմամթերք, պաշար, եւայլն:

Ռազգայի մէջ կային օճառի գործարաններ, այգիներ, ձիթապտուղի, թուփի, նուռի եւ խնձորի ծառեր:

Ռազգան տուած է արաբական աշխարհին հռչակաւոր գիտնականներ, որոնցմէ թուենք հետեւեալները. Ապու Ամըր, Ըպն Ալ Ալա, էլ Ռազգի եւ Մուհամատ Ըպն էլ հասան էլ Ռազգի:

Ներկայ Ռազգա քաղաքի հիմնարկութեան թուականը նոր է, հազիւ 70 տարուան հնութիւն մը ունի: Ժամանակին, բոլորովին աւերակ էր եւ շրջակայքը կը բնակէին պետեւի արաբները: Բոլորն ալ վրանաբնակ էին: Հին Ռազգայի աւերումին պատճառ եղած են մոնղոլեան եւ թաթարական արշաւանքները:

Նոր Ռազգային կ'ըսեն նաեւ Ռազգա էլ Պէյտա, այսինքն՝ ձերմակ Ռազգա:

Կը պատմեն, թէ Ռազգայի շրջակայքը պարտէզներ եղած են եւ Պաղտատի դուռէն մինչեւ Ռազգա պարտէզներուն մէջէն կ'երթան եղեր: Այլազան կենդանիներ գտնուած են: Մերուկներ կան, որոնք կը փաստեն թէ առիւծներ տեսած են:

*
* *

Ռազգայի հայ գաղութը կազմուած է 1922ին, Կարմուճէն եւ Ուրֆայէն գաղթական հայերով: Մօտաւորապէս հարիւր տուն հայութիւն ունեցած է: Սակայն, 1940էն վերջ հայ բնակչութիւնը նուազած է, եւ ներկայիս գոյութիւն ունի հազիւ 80 տուն հայութիւն: Բոլորն ալ կ'ապրին բարեկեցիկ կեանք մը: Իրենց զբաղումներն են.- վաճառական, արհեստաւոր, խանութպան եւ ցանքի գործով զբաղուող մարդիկ: Աղքատ գոյութիւն չունի:

Ունին Ազգային Վարժարան մը 90 աշակերտով: Դպրոցին մէջ կը պաշտօնավարեն չորս հոգի: Շէնքը վարձու է: Սակայն, հայեր ունին ընդարձակ

Հողամաս մը՝ քաղաքի ամենակարեւոր մասին վրայ: Այս տարուան թաղակա-
նութիւնը որոշած է սկսիլ շինութեան նոր վարժարանի մը, իր սեփական հո-
ղին վրայ: Նոյնիսկ գործնական քայլերու դիմած են եւ շինութեան քարերու
մէկ մասը գնուած է: Ունենալու համար սեփական վարժարան մը, ու նաեւ ե-
կեղեցի, Ռազգայի գաղութը պէտք ունի արտաքին օժանդակութեան:

Կը գործեն միութիւններ, Ս.Օ. Խաչ, Հ.Մ.Ը.Մ., Հ.Բ.Ը.Մ.: Բոլորն ալ կ'աշ-
խատին օգտակար դառնալու ազգին եւ դպրոցին:

«ԱՐԵՎԵԼ»
24 Ապրիլ 1951



Հալէպի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Զարեհ Ս. Արք. Փայասլեանի
Ռազգա այցելութեան առթիւ նկարուած դպրոցական աշակերտներուն հետ
14 Հոկտեմբեր 1950

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Ոչ ոք մեր գրականութեան մէջ, ա՛յնքան անկախ է ժամանակէն ու արուեստի դիմայեղումներէն, որքան Դանիէլ Վարուժան, որուն քերթողութիւնը եղաւ երբեմն դառն, երբեմն մրրկավառ ու ընդհանրապէս՝ քնարական զեղումը իր կեանքին:

Գրական հոսանքներու ազդեցութիւնը մեր քերթողական արուեստին մէջ խաթարած է ընդհանրապէս մեր ցեղային յատկանիշները ու շարունակ գոյն եւ հուն փոխել տուած է մեր գրողներուն, որոնք Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ երեւուն, խառնուրդ զգայութիւն եւ ոճ բերած են հանդէս: Մասնուրաբար գերմանական ըմբռնողիմբ, Ֆրանսական գրականութեան ճամբով, ախտագին շատախօսութեան եւ զգացումներէ տարուած բաներգութեան մը՝ դած են մեր վիպագիրներէն կամ բանաստեղծներէն շատերը, որոնք աւելի առողջ կլիմայի եւ տոհմիկ դաստիարակութեան տակ՝ ապահովաբար կարենային աւելի մեր մտքին եւ ուղեղին դիմել, քան մեր սրտին ու անվստահելի ըզգայարանքներուն: Անկախ հազուադէպ փայլատակումներէ.– Մեծարենց, Տէրեան, Թէքէեան, որոնք յաջորդաբար ենթարկուեցան անգլիական, ռուսական կամ Ֆրանսական անհատապաշտ հոսանքներու ազդեցութեան եւ ներանձնական դեգերումներու մէջ կրցան որոնել եւ գտնել համամարդկային տարրը, հայ բանաստեղծութիւնը ներշնչեցաւ առհասարակ հիւանդագին տրամադրութիւններէ, քիչ մը գոյնի նրբազգածութենէ եւ առաւելապէս երեւակայութեան թոկէն:

Այս ցաւը անկախ ու ծով նիւթ կրնայ հայթայթել մեզի, ինչ որ պիտի ուզէի ընդգծել, Վարուժանի քերթողութեան առնչութեամբ այն է, որ երբեմնի «չինական» ու ապագայի «արքայիկ» այս խառնուածքը, ստեղծագործական իր սկզբնական թոթովումներէն մինչեւ իր հոյաթեւ սաւառնումները, մնաց առողջ, տրամաբանական, քնարականօրէն մարմրեղէն քերթողութեան մը ոստերը: Իր աչքերը բացաւ հրախաղութիւններու, ծովու, աստղերու, բուրումի եւ արեգութեան օրրան Վենետիկի կամարներուն տակ, եւ իր հոգին թեւբախեց ջրածին այդ քաղաքին լոյսերուն տակ, բայց այս բոլոր վտանգաւոր հեշտանքները չկրցան լպրծուն գետին դառնալ իր ցեղային «զեղուն աւիշ»ին համար, որ, ընդհակառակն՝ քաղաքակրթութեան այդ դարաւոր ոստանի պատմութենէն կրցաւ առնել իր լարերուն բեղմնափոշին:

ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾԵՐԸ

Դանիէլ Վարուժան, բուն անունով Դանիէլ Գրիգորի Չպուքեարեան, Թէոդիկի ուղղած իր մտերիմ նամակներէն մէկուն մէջ կը գրէ.– Ամէնուն Տարեցոյցը, 1909.–

«Մնած եմ 1884ին Սեբաստիոյ մօտ Բրգնիկ գիւղը, ուր աճած է մանկութիւնս, ուռիներու տխուր հովանիներուն տակ, երազկոտ, կամ գետեզերքներուն վրայ քար նետելով բազերուն՝ անառակօրէն: Հազիւ թիթեռնիկներ

որսալու հասակիս մէջ՝ հայրս պանդխտած է Պոլիս, իսկ մայրս, ձմեռնային երկար իրիկունները թոնրատունը նստած, երեւակայութիւնս օրօրած է եէնե-չէրիներու եւ գայլերու պատմութիւններով, երբ Մէյրէ գոմի հովը կու գար ոռնալ բուխերիկին մէջ եւ կամ լալ՝ դեւի ձագի մը նման:

Գիւղին դպրոցը հազիւ սկսածեմ ժամագիրքը կարգալ սորվիլ, երբ զիս տարած են Պոլիս՝ 1896ին, կոտորածի այդ օրերուն»:

*
**

1906ին հրատարակուած է «Սարսուռներ»՝ նախապէս հրատարակուած 1905ին «Գեղունի»ին մէջ, որուն մէջ կը հաստատենք մարդկային վիշտերու եւ ընկերային անարդարութեանց հանդէպ զգայուն հոգի մը. սարսուռն երիտասարդ մը, որ կը մտածէ արդէն մարդոց եւ ժողովուրդներու ունայնամտութեան, կեանքի անիրաւութեանց եւ մեզի վերապահուած տրամութիւններու մասին:

1909ին «Յեղին Սիրտը», որ պիտի նուիրագործէր քերթողի իր անունը ու պիտի դառնար հայուն ցեղային փառքն ու անխորտակ ոգին վերծանող ոսկեմատեան մը: Չունինք քերթող մը, որ վարուժանի չափ ակունքէն ըմպէր մեր ժողովուրդի ոգեկան մենութիւնը, ու կարենար իր մատեանը վերածել ո՛չ թէ պարագայական եւ տուեալ շրջանէ մը միայն թելադրուող ապրումներու, ազգային եւ ազատագրական տենչերու պարունակի մը: Անոնք հայ տառապանքի եւ յեղափոխութեան պատմութիւնը կը կազմեն եւ կը բնորոշեն ցեղին ինքնութիւնը:

1912ին «Կորած Հեթանոս Երգեր», որուն մէջ պիտի պարպէր ոյժին, գեղեցկութեան եւ սիրոյ նուիրուած իր տաղերը: «Հեթանոս Երգեր»ով Վարուժան փաստեց հայ բանաստեղծութեան ամէնէն արուեստագէտ քերթողը ըլլալը:

Իր նահատակութենէն վերջ, 1915ին, իր բարեկամները հրատարակեցին «Հացին Երգը» հայրենի դաշտերուն, մշակին ու հողին նուիրուած երկերու շարքը:

Վարուժանի գրական գործունէութիւնը կարճ ժամանակամիջոց մը ունեցաւ, այսինքն 1905 - 1915 տարիներու շատ ամփոփ շրջանը:

Վարուժանի բանաստեղծական փառքի կոթողը սակայն կը մնայ «Հեթանոս Երգեր» գիրքը, լոյս տեսած 1912ին, Պոլիս: ան կը փառաբանէ հայ ժողովուրդի ասպետական դարերը «հարճը», իբրեւ օրինակ քաջութեան ու գեղեցկութեան, սիրոյ եւ յաղթանակի՝ ներկայ սերունդները մղելով ըլլալու ա՛յն ասպետներուն պէս, որոնք գիտեն ո՛չ միայն սիրել բուռն ու անկեղծ սիրով, այլեւ կռուիլ եւ յաղթել: Այդ գիրքով է որ Վարուժան առաջին երգիչը կ'ըլլայ իր ժամանակի քաղաքի, ուր մարդը մարդու գայլ է, ուր ոսկի հորթը (դրամը) կ'իշխէ եւ ուղղութիւն ու ելք կը գծէ մարդկային կիրքերուն: Մեծ քաղաքի գործարանային առօրեան, խլացուցիչ թոհուփոհը, մեքենաներու դարձադարձիկ շփոնդը, բանուորներու ահարկու ցոյցերը, որ «օր մը բարբարոս ջահը պիտի վառեն անիծապարտ տյրերու գլխուն, անոր գրչին տակ կը գծագ-

րուին մեծատարած պատկերներով ու գունագեղութեամբ, որոնք բանաստեղծը կը դարձնեն կատարեալ իրապաշտ:

Վարուժան այս գիրքով կը հռչակուի մեծ մարդասէր: Ան կը խղճայ անգործ բանուորին եւ թոքախտաւոր բանուորուհիին, կ'ուրուագծէր անոր տառապալից կեանքը, որ սոսկալի է ո՛չ միայն մեքենաներու դարձին ժամանակ, այլեւ դուրսը, տան մէջ, փողոցի մայթին վրայ, ամէն տեղ, ուր կ'երեւան, ինչ բանի որ կ'ապաւինին ապրելէ յուսահատ, բանտին մէջ գտած են այդ տըխուր օրերուն՝ ստօրէն ամբաստանուած:

Կը դիտէք, անշուշտ, որ պատանի քերթողը բացած է արդէն իր հոգին մեր անմեկնելի ողբերգութեան վրայ, եւ իր լարերը կը սարսուան ջարդերու եւ հառաչներու սկզբնական անդրադարձումին տակ: Սաղմն էր, որ կը թաղէր իր մէջ, քիչ վերջ պոքոթկալու համար այնքան հրաշագան եւ հոգեցունց գոյներով:

Բանաստեղծը ինը տարի մնաս Մխիթարեաններու մօտ: 1896-1902 Պոլիս եւ 1902-1905 Ս. Ղազար: Ծիծաղելի պիտի ըլլար ըսել, թէ առանց Մխիթարեաններու շրջապատին պիտի խամրէր ապագայ մեծ քերթողը. բայց նոյնքան անարդար պիտի ըլլար կասկածի ենթարկել բարերար դերը Մուրատ Ռափայէլեանին՝ Վարուժանի կազմաւորումին մէջ:

Ժամանակակից Մխիթարեաններու կարգին՝ մասնաւորապէս Հայր Արիստակէս Գասգանտիլեան կրցած է անոր պատանի հոգին տեսնել ու փայփայել, ընդնշմարելով այդ հոգիին մէջ վաղուան խոստումը, թափ տալ անոր առաջին փորձերուն, եւ ցոյց տալ ապա բեղուն ստեղծագործութեան ճամբան:

Ինք Վարուժան, անհուն խնադադատանքով կը յիշէ այս բարի վանականին անունը, երբ կը գրէ իր ինքնակենսագրութեան մէջ.-

«Հայր Արիստակէս Գասգանտիլեան, որ նոյն ատեն տեսուչ եղած է Քաղկեդոնի Վարժարանին, առաջադրած է մանկական նախափորձերս՝ սրբագրելով սիրահարական ոտանաւորներս եւ յետոյ՝ 1902ին ուղարկած է զիս Վենետիկ՝ Մուրատ Ռափայէլեան, բարեւելու իր տեղ Ալիշանի նուիրական աճիւնին»:

Իրողութիւն է դարձեալ, որ Վարուժան մեծ ասպնջականութիւն գտաւ Հայր Սիմոն Երեմեանի «Գեղունի»ին մէջ: Արդարեւ, բանաստեղծին երախայրիքը՝ «Սարսուռներ» ամբողջութեամբ հրատարակուեցաւ նախ «Գեղունի»ի մէջ, 1905ին:

Դանիէլ Վարուժան 18 տարեկան էր, երբ հասաւ Ս. Ղազար, եւ 21 տարեկան՝ երբ անցաւ Կանա (Պելճիքա): Այդ երեք տարիները, սակայն, իր բանաստեղծութեան վրայ ունեցան խոր եւ բազմաճիւղ ազդեցութիւն:

Մեծ քերթողը Վենետիկի կը պարտի պերճութիւնը իր գոյներուն: Ան Վենետիկէն կ'առնէ մարմարաքանդակ փարթամութիւնը իր բովանդակ գործին: Կ'ուզեմ բանաստեղծին իսկ վկայութեան փոխարել հոս:

«Երկու միջավայր ազդած է վրաս» կը գրէ ան Թէոթիկի ուղղեալ իր նամակներէն մէկուն մէջ («Ամէնուն Տարեցոյցը», 1909, էջ 78), Վենետիկը՝ իր թիցիանայով, եւ Ֆլանտրը՝ իր Վանտիքով: Առաջինին գոյները եւ վերջնոյն բարբարոս իրապաշտութիւնը յօրինած են վրձինս, զոր սնափառութիւնն ու-

նիմ թաթխած ըլլալու միմիայն հայրենական հողին որդան կարմիրին մէջ եւ իր ծովածուկի արեան»:

Այլ նամակի մը մէջ, ուղղուած Վարդգէս Ահարոնեանի, քերթողը կը ճշգէտ.-

«Ամբողջովին կը զգամ, որ Վենետիկը ազդած է վրաս, իր գոյներու, ստուերներու եւ լոյսերու յարափոփոխ գանձերով: Քաղաք մը, ուր առանց պատկերի մտածել կարելի չէ» («Հայրենիք» ամսագիր, 1929, Յունուար):

Վենետիկի Մուրատ Ռափայէլեան Վարժարանը ուսանողութեան տարիներուն քերթողը կը ծանօթանայ ինչպէս հայ, նոյնպէս եւ օտարազգի հեղինակներուն: Անոր սիրելի գրողները կը դառնան Շեքսպիրը, Վիքթոր Հիւկոն, Թոլսթոն, Ալիշանը, Բաֆֆին, Վերհարնը, մանաւանդ Դուրեանն ու Աբովեանը, որոնց ան հանճարներ կը հռչակէ:

Կանտի Վարժարանը ողջունելէ առաջ, պէտք է հիացումով հսկել պատանի Դանիէլի վրայ, որ Բրգնիկէն-Պոլիս եւ Պոլիսէն-Վենետիկ՝ բերաւ հայրենական հողի մեծագոյն երգիչը, կազմուած է արգէն:

Ճիշդ է թէ միայն 1909ին հրատարակուեցաւ «Յեղին Սիրտը» եւ 1912ին՝ «Հեթանոս Երգերը», սակայն, այդ երկու մատենաներուն շունչը, իր լիութեան ու բխումին մէջ էր, եւ բանաստեղծը կը դեգերէր Վենետիկի լուսացընցող մայթերուն վրայ եւ կապելաներուն մէջ:

Վարուժան, ճակատագրէ հալածական ժողովուրդի մը զաւակը, որուն բիբերը կը պահէին տակաւին դողն ու ստուերը ահաբեկումին, պիտի չկարենար բենթարկուել կախարդանքին, զոր իր մորթերէն սիրտ պիտի հոսեցնէ միջավայրը: Հուսկ ուրեմն, քերթողը գտաւ երկինքը, որ կը պակսէր իրեն Համիտեան խաւարին մէջ:

Մուրատ Ռափայէլեան կը հրդեհէր հայրենական հրայրքը բանաստեղծին, որ եթէ զգայարաններով կապուած էր քնարերգութեան, սիրտով եւ ուղեղով կը շրջէր ցեղային լարին վրայ: Նոյնքան ներշնչեալ եւ նոյնքան հրաչուի մեծ հայրենասէրը հաւասար տաղանդով երգած է «հաճոյքի ու տառապանքի գեղեցկութիւնը», ինչպէս կը բնորոշէ ինք՝ «Հեթանոս Երգեր»ու մուտքին, մաքառումներն ու ընդվզումը ցեղին եւ վերջապէս սրբազան քրտինքը մշակին եւ անդապահին:

Կանտի համալսարանին մէջ յղկուած է արուեստագէտը, եւ իր բազմալար տաւիղը պատրաստ է ձեւ ու մարմին տալու հոյաքանդակ էջերու: Գրականութեան ու քաղաքական-տնտեսական գիտութեանց ուսանող, բանաստեղծը այստեղ կը թրծուի ընդհանուր զարգացումով եւ մանաւանդ ընկերվարական հակումներով:

1909-1912, Վարուժան ուսուցիչ է Եւդոկիոյ եւ Սեբաստիոյ մէջ, իսկ 1912-1915 տեսուչ՝ Պոլսոյ Լուսաւորչեան ուսումնարանին եւ ահա՛ արիւնարբուի թաթը կ'իջնէ իր արգաւանդ ուղեղին:

Վարուժանի առաջին գիրքը՝ «Սարսուռներ» հրատարակուեցաւ 1906ին, երկրորդ գիրքը՝ «Յեղին Սիրտը», 1909ին, երրորդ գիրքը՝ «Հեթանոս Երգեր», 1912ին, իսկ չորրորդ գիրքը «Հացին Երգը», անկատար, որ գրաւուած էր թուրք գրաքննութեան պաշտօնեաներուն կողմէ, Տիկին Արաքսի Վարուժանի վճարած խոշոր փրկագինի շնորհիւ դաւաճան Արշալիր Եսայեանի միջո-

ցաւ, կարելի եղաւ փրկել կորուստէ, եւ, յետ մահու հրատարակել բարեկամներու աջակցութեամբ, 1928ին:

1909-1914 թուականներուն, Վարուժան ծրագրած էր մշակել «Սասմանց Տուն» դիւցազներգութիւնը ամբողջութեամբ, գրել «Գինիի Երգեր»ը եւ հայ ժողովուրդի պատմութեան հերոսական դրուագներն արտացոլող բանաստեղծութիւններուն շարքը, այսպէս կոչուած «Հայկական Հոմերագիրք»ը, վերջացնել «Աչքերը» տրաման եւ ամբողջապէս «Հացին Երգը», գեղջկական երգերու մեծ շարքը: Դժբախտաբար, մեծ բանաստեղծին իղձերը մնացին անկատար:

Դանիէլ Վարուժան նահատակուեցաւ 31 տարեկանին, բայց այս ճղճիմ ժամանակին մէջ՝ անբաղդատելիօրէն անհուն եղաւ իր ստեղծագործական թափը: Զայն կարելի չէ սեղմել այն տեւողութեան մէջ, որուն բերքը ունինք մենք այսօր, գործ՝ որ պիտի ապրի «անսահման ժամանակաւ»:

Վարուժանի երախայրիքը՝ «Սարսուռներ»ը, առանձին գիրքով լոյս կը տեսնէ, որուն մէջ կը հաստատենք մարդկային վշտերու եւ ընկերային անարդարութեանց հանդէպ զգացած հոգի մը, սարսուռն երիտասարդ մը, որ կը մտածէ արդէն մարդոց եւ ժողովուրդներու ունայնամտութեան, կեանքի անիրաւութեանց եւ մեզի վերապահուած տրտմութեանց:

Այս գիրքին բազմազանութիւնը, լայն ընդգրկումը, նոր ու թարմ պատկերներու գործածութիւնը, զգացումներու ջերմութիւնը եկան ըսելու, որ հայ գրականութեան մէջ յայտնուած է նոր, հզօր ու առնական լայն թռիչքներով բանաստեղծ մը:

Վարուժան իր այս գիրքով հանդէս կու գայ որպէս համամարդկային գրող, երգելով տնանկին ու թշուառին (Զիւնէ Դագաղը), խորտակուած սրտերու վիշտը «Արիւնոտ Ճիւղ», մարդկային տառապանքը «Երազ եւ Խոհ», «Հիւանդ է», «Մուրացիկը», բանաստեղծը երանի կու տայ աւագանի ձուկերուն, որոնք հակառակ աղքատի ու տնանկի «գէթ աւագան մ'ունին», մինչդեռ այստեղ, պոլսական խաներու ցուրտի ու բորբոսի մէջ, կը մեռնին անտիրական հայ պանդուխտները, որոնց կը թաղեն «մէկ աչքը բաց»: Ահա երկու համար «Հիւանդ է» քերթուածէն.

Ըստուերիմ մէջ խամի մ'անկիւնը լըքուած
Թշուառ պանդուխտ, հիւանդ է.
Խոնաւութիւնն անոր մարմինը շիթ-շիթ,
Գերեզմանէն կը նետ:

Երիտասարդ է տակաւին, եւ փեսայ,
Պոլսէն միմչեւ վաճ հեռու,
Հոն՝ հաց կ'ուզեն հարսն ու ծնողք, զի՛նք կ'ուզեն,
Դեռ շատ շուտ է մեռնելու:

1909ին, այսինքն Օսմանեան տիրահռչակ Սահմանադրութենէն տարի մը յետոյ, լոյս տեսաւ Վարուժանի «Յեղին Սիրտը» գիրքը, որ պիտի նուիրագործէր քերթողի իր անունը ու պիտի դառնար հայուն ցեղային փառքն ու անխորտակ ոգին վերածնող ոսկեմատեան մը: Չունինք քերթող մը, որ Վարուժանի չափ ակունքէն ըմպէր մեր ժողովուրդի ոգեկան մեծութիւնը, ու

կարենար իր մատեանը վերածել ո՛չ թէ պարագայական եւ տուեալ շրջանէ մը միայն թելադրուող ապրումներու, ազգային ու ազատագրական տենջերու պարունակի մը: Անոնք հայ տառապանքի եւ յեղափոխութեան պատմութիւնը կը կազմեն եւ կը բնորոշեն ցեղին ինքնութիւնը:

Վարուժանի գործը կը վերակոչէ իր ժամանակաշրջանի ողբերգական դէպքերը: Անվարան կարելի է հաստատել թէ՛ Վարուժան 20րդ դարու հայ միակ բանաստեղծն է, որ գիտցաւ իր ժամանակի ընկերութիւնը յուզող հարցերը դնել այնքան ուժգնութեամբ եւ ջերմութեամբ:

Դժուար աշխատանք պիտի չըլլայ, անշուշտ, անոնց համար, որոնք վերլուծական ճամբով քերթուածի մը ներքին կրակէն կրնան ճանչնալ զայն քանդակող արուեստագէտը, Դանիէլ Վարուժանի «Յեղին Սիրտը» հատորին մէջ փնտռել ու գտնել մեր ազգայնութեան միակ ու ճշմարիտ արուեստագէտ քերթողը:

Այս եզրակացութիւնը եթէ ստուեր կը բերէ այլ անուններու վրայ, լոյս կը սփռէ միաժամանակ անոնց բանաստեղծական երկունքին ու ձգտումներուն վրայ, որոնք տարբեր մտահոգութիւններէ կը մեկնին ու կը հասնին տարբեր գազաթներու:

Վարուժան ներքին կշռոյթ, գոյներու եւ պատկերներու դաշնակութեան բանաստեղծ է: Իր բառերը, իրենց ձայնական տարրերէն աւելի, իրենց գոյնով, իմաստով ու պատկերներու կշռոյթ են, իրենց խորքն է, որ կ'ապրեցնէ զիրենք ու մեր զգայարաններուն վրայ մենք իրենց իմացումը ունինք քան՝ լսողութիւնը: Յանգաւոր կամ տաղաչափութիւն Վարուժանի մօտ չեն ապաւինիր, ճիգին կամ մտահոգութեան: Յանգաւոր կամ ոչ-յանգաւոր՝ իր բոլոր քերթուածները առաւելապէս քնարականութեամբ ու ներքին խորհրդով կը շնչեն: Յակոբ Օշական, պերճախօս կերպով ժուժկալ է, երբ դիտել կու տայ-

«Դանիէլ Վարուժանի հոգտորութիւնը կը մնայ չափաւոր, տարօրէն հարգատ՝ ոգեկոչական էջերու վրայ, եւ այն միւսներուն մէջ, ուր իր ժողովուրդին մէջ, ուր իր ժողովուրդին տառապանքը, ողբերգութիւնը ունի սեւեռելու: Իր կշռոյթը, երբեք գրքունակ, միշտ քաղցր, նոյնիսկ ճոխ, տեսակ մը խառնուածքի հով կը թուի բերել քերթուածներու փարթամ կառոյցներուն: կը կարդանք զանոնք, առնուած անզգալաբար, այդ ներքին հոսանքին մէջ»:

Վարուժանի քերթողութեան մայր երակը կ'երկարի դէպի «Յեղին Սիրտը» եւ անկէ անդին՝ դէպի ակունքը մեր փառաւոր պատմութեան:

Չեմ ուզեր իր դիմագիծը շեշտել այստեղ քնարերգակի իր խորասոյգ արտայայտութիւններուն մէջ, որովհետեւ, ես կը հաւատամ, թէ բանաստեղծը եթէ պիտի ապրի քնարական իր զեղումերով, պիտի անմահանայ դիւցազնաշունչ իր քերթուածներով:

Արեւմտահայ գրականութեան մէջ, որ անգնահատելի է իր ազգայնաշունչ կամ ցեղակրօն գործերով, Դանիէլ Վարուժան «հսկող աչքն» է մեր իրականութեան կամարին վրայ:

Քերթողը կ'ուզէ միշտ պատմական ենթահողի վրայ մնալ դիւցազնաշունչ-ազգայնական իր լարով: Իսկ իր եղեռաշունչ քերթուածները, որոնք նոյնքան որոշ շերտ մը ունին անանձնականի, քան անձնականի, միշտ տարրեր ունին մեր անցեալէն: «Յեղին Սիրտը», որ կ'ամփոփէ 1906-1909 շրջանի իր

գործերը, համադրութիւն մըն է փառքի, կարօտի, արիւնի, պայքարի եւ տան իսկութեան դիմող երգերու: Բանաստեղծը հաւասար ուժգնութեամբ կ'ապրի այդ խռովքներն ու տազնապները եւ հակառակ վիրաւոր սրտի մը, զոր կը կրէ նոյնիսկ իր գայրոյթի ու ատելութեան վայրկեաններուն, կը մնայ առողջ, միշտ աւելի ուղեղ՝ քան զգացում:

Պիտի ուզէի միայն շեշտել այստեղ իր ազգայնաշունչ քերթուածներու հիմնական մէկ առանձնայատկութիւնը.- «Յեղին Սիրտը» հատորի գրեթէ իր բոլոր քերթուածներուն մէջ՝ Դանիէլ Վարուժան՝ ոճի իր մտահոգութիւններով կը ձգտի քանդակել նիւթեղէն մարմին մը հայ ոգիին, խորքի իր մշտանորոգ կենդանութեամբ երկնել անոր ներքին էութիւնը-իսկութիւնը ու քնարական իր մտահոգութիւններով արտայայտութիւն տան այդ արձանին: Այս տպաւորութիւնը հասարակաց է «Յեղին Սիրտը» հատորի իր բոլոր քերթուածներուն համար, բայց շոշափելի է ուղղակի իր «Հայրենիքի Ուրիշ» քերթուածին մէջ:

«Յեղին Սիրտը» հատորին մէջ, մեծ քերթողը կ'երգէ հայկական կոտորածները «Ջարդը», «Կիլիկեան Մոխիրներուն» եւ ցոյց կու տայ արիւնոտ իրականութենէն դուրս գալու ելքը՝ ժողովրդական պայքար ընդդէմ սուլթանական բռնակալութեան: սերունդը ոգեւորելու համար՝ Վարուժան վկայութեան կը կանչէ հայ ժողովուրդի անցեալի փառքերը «Անիի Աւերակներուն Մէջ»: Ան ժողովուրդը վրիժառութեան կը հրաւիրէ: Վրէժ. ահա՛ բռնակալներու միակ հատուցումը: Դիմելով Վրէժի աստուածուհիին՝ Նեմեսիսին, Վարուժան կը գրէ.-

Ժողովուրդն է, ժողովուրդն է որ կու գայ,
ճամբաներուն, փողոցներուն մէջ քաղաքին
Գետեր են որ թըխակոհակ կը հոսին.
Հարստահարուած ժողովուրդն է, որ կու գայ...
Գործատուներն, թիարաներն, բանտերն
Գրո՞հ կու տան...:

«Կռուի Երթ» մարտաշունչ բանաստեղծութեան մէջ, տղան կ'ոգեւորէ իր սիրած աղջկան՝ յոյսը դնելով միատեղ կռուելու վրայ: Մեծ կիրքով եւ յոյզով համակուած այս քերթուածը, հայ բանաստեղծութեան լաւագոյն գործերէն է:

Երթա՛նք երթա՛նք հայուհի՛,
Դուն, ո՞վ արծուիկ, հեղեղատին բոնքիւնով...
Լերան կողին օրօրերգուած եւ մեծցած,
Երթա՛նք արդար բախումին...:

Բանաստեղծը հեզնութեամբ կը խօսի սահմանադրութեան մասին, տալով անոր «Աւերակներու Տիկն» ծաղրանունը: Ան կ'ապրի եւ կը տառապի զրկուած եւ հասարակ մարդոց բախտով՝ «Լուսցարարուհին, Հօրս Բանտին Մէջ», «Մարած Օջախը»: Ատելութեամբ է լեցուած դէպի դարաւոր թշնամին՝ Սուլթանիզմը («Օձը», «Ծեր Կռունկը», «Կարմիր Հողը» եւ այլն): Ան միւս կողմէ կ'երգէ նահապետական կեանքը եւ քաջ հովիւին, որ հերոսութիւն կը ներշնչէ

«Հովիւր», «Պապա», կը կերտէ հերոսական կերպարներ «Արմենահիւս», «Յաղթողը» եւ այլն:

«Զօնը» հայրենասիրական երգի գլուխ գործոց մըն է:

Եղեգնայ գորչով երգեցի փառքեր,
Քեզի ընծա՛, իմ հայրենիք:

Վարուժանի ստեղծագործական քանքարը աւելի ցայտուն դարձաւ «Հեթանոս Երգեր» գիրքով, որ մեծ մասով հերոսական անցեալի եւ միաժամանակ պայքարով լեցուն ներկայի ոգեշունչ փառաբանութիւնն է: Ան կը փառաբանէ հայ ժողովուրդի ասպետական դարերը, իբրեւ օրինակ քաջութեան ու գեղեցկութեան, սիրոյ եւ յաղթանակի՝ ներկայ սերունդները մղելով ըլլալու ա՛յն ասպետներուն պէս, որոնք գիտեն ոչ միայն սիրել բուռն ու անկեղծ սիրով, այլեւ կռուի՛լ եւ յաղթե՛լ:

«Հեթանոս Երգեր»-ու մէջ, իր տեսիլները կը բուրեն վայրի անկեղծութիւն, կին ու գինի, քաջութիւն ու մաքրութիւն: Հեթանոսական իր ըմբռնումը՝ եթէ երբեմն հոլանի պատկերներու նկարչութեան կը մղէ գինք, երբեք չի հեռացներ սակայն անխառն հաճոյքի արբեցումէն: Իր ամէնէն մերկ էջերուն վրայ իսկ, Վարուժան չէ երգած անբարոյութիւն ու վատ հեշտախորութիւն: Բանաստեղծը գիտէ բաժնել քեզ քու քաղաքակրթութեանդ «արդիական» բոլոր շքեղանքներէն եւ փոխադրել վայրի, ծանր, նախնական, բայց «մարդկայնական»էն թելադրուած մարդոց բազմութեան մը մէջ: Այստեղ ո՛չ միայն խռովքի, ապրումի եւ յուզումի, կիրքի եւ ապրումի, այլեւ տեքորներու կատարեալ հարազատութեան մը քեզ կը տանի մարդկային հեշտասիրութեան ամէնէն անկաշկանդ, բայց ամէնէն սրտագրաւ շրջանը: Սպարտացին քաջութեան եւ յանդգնութեան առաքինութիւնները կը փառաբանէր գողութեան արարքին մէջ: Վարուժան գեղեցկութեան ու փարթամութեան հեշտանքը կը փառաբանէ հոլանի այդ պատկերներուն մէջ, «Մաղուռնական», «Արեւելեան Բաղնիք», «Գրգանքս», «Ո՛վ Լալագէ», «Ո՛ Տալիթա»:

Հոս կ'ուզէի ձեր նկատողութեան յանձնել «Առաջին Մեղքը» խորագրուած իր այնքան քնքուշ եւ խորասոյգ քերթուածը, որ գլուխ գործոց մըն է այլաբանական բանաստեղծութեան, սրբազան երգը հեշտանքին եւ կնոջ գերագոյն գոհագործումին, իր ամէնէն մաքուր իմացումին մէջ առնուած:

Մերթողական որեւէ աշխատանք առաւելապէս իր յուզական տարրերուն կը վստահի՝ հաղորդականօրէն ներգործելու համար: Ճիշդ է թէ որեւէ քերթուած մեզ լսողութեան զգայարանքէն ու ջիղերէն կ'անցնի նախ, բայց առաւելապէս մեր ջիղերն են, որ կը տանին զայն ուզելու: Որեւէ տաղ անհաղորդ է, երբ իր յուզական տարրերը համամարդկային ոչինչ ունին: Մենք խռովք կը կոչենք այն տենդը, որ կը հոսի բանաստեղծէն ընթերցող: Այս կէտէն առաջադրուած, Վարուժան ընկերվար քերթող է, այդ բառին ամէնալայն իմաստով:

Պէտք է ճշդել, որ սիրային ալեկոծութիւններ ալ ունեցաւ Վարուժան: Վենետիկի մէջ նախ, եւ աւելի ուշ՝ Կանտի մէջ: Կը թուի, թէ ճակատագրականօրէն յուսախաբուութիւններ եւ նաւաբեկութիւններ ունեցաւ այս մարգին մէջ

եւս: Վենետիկի իր պատկերներուն մէջ որոշ կերպով կը նշմարուի դիմագիծը իր Լինտային, եւ «Տրտունջ» հոյակապ քերթուածին մէջ բնորոշուած է դիմանկարը այն բարձր դասակարգի կնոջ, որ Եղիա Տէմիրճիպաշեանի բախտակից դարձուցած է Վարուժանը՝ սիրոյ գետնին վրայ:

Հաւանաբար, այս շրջանէն է, որ Վարուժան մարդատիացօրէն մարդասէր դարձած է: Իր դառնացումը մարդերէն՝ մղած է զինք այլասէր մը դառնալու, եւ հակելու առաւելապէս դէպի բարի, աղքատ, արդար, անկեղծ մարդոց բազմութիւնը: Իր այս տրամադրութիւնները զինք կը տանին մինչեւ բանուորն ու բանուորուհին, մինչեւ իսկ դէպի մեքենաները: Մեծ քերդողը, այնքան խոր ու եղբրական անկեղծութեան իր շեղտերով, այնքան ապրող ու կենդանի իր պատկերներով, յուզական տարրերու իր գունագեղութեամբ: «Ո՛վ Դար, Ո՛վ Դար», «Հրաշքին Աղբիւրը», «Սպասում», «Ընկեցիկը», «Մեռնող Բանուոր», «Խաբուած Կոյսեր», «Մեքենաներ», «Դադար», «Մայիս Մէկ» եւ Բանուորուհին»:

Վարուժանի «Հեթանոսական Երգերու» թագն ու պսակը «Հարճը» վիպերգն է: Պատմահայր Խորենացիի մի քանի ժլատ նախատասութիւնները հիմք ընդունելով, ան ստեղծած է սիրային սքանչելի վիպերգ մը, ուր հեթանոսական դարը եւ մարդիկը վեր հանուած են մեծ վարպետութեամբ: «Հարճը» ո՛չ միայն Վարուժանի, այլ մեր ամբողջ բազմադարեան բանաստեղծութեան գոհարներէն մէկն է:

Մասնաւորաբար «Հարճ»ին մէջ, Վարուժան մօտ է Հոմերոսին: Վեց հարիւր տողէ բաղկացած այս լուսաքանդակ պատկերին մէջ իր լեզուն ըստ մը իսկ չի դանդաղիր: Ընդհակառակն, առաջին բառէն մինչեւ վերջին վերջակէտը կը զարգանայ խօսքին հետ համընթաց, գրկուած, գրեթէ միաձոյլ:

Վարուժանի քերթողութեան վերջին գիրքը՝ «Հացին Երգը», յետ մահու բարեկամներու կողմէ հրատարակուած 1921ին, Պոլիս, գիւղին ու գեղջուկին, արտերուն ու ցորեններուն, դաշտերուն ու կանաչներուն, զանքին ու հունձքին փառաբանութիւնն է, իր այնքան համակող ու գեղուն աւելով, որ իրապէս հողէն կու գայ կարծես:

Վարուժան, իր քերթողութեան ճանապարհով կրցած է տալ ա՛յն, զոր Համաստեղ տուած է իր պատմուածքներով:

Երբ գիւղն ու արտերն են բանաստեղծութեան մը խարիսխը, անհրաժեշտ է ու կենսական՝ առաւելապէս գոհացում տալ հոտառութեան մեր զգայարանքին: Գիւղին հոտը, ու զուգահեռաբար գիւղին գոյները, ամէնէն հիմնական տարրը կը կազմեն այս սեռին: Ու ինչպէս Համաստեղ՝ մեր մեծ գիւղագէտը, նո՛յնպէս Վարուժան, նոյնքան տիրականօրէն բնական են իրենց գործին մէջ: Առաջինը եթէ բարքերուն ու կենցաղին կը դիմէ, երկրորդը կը դիմէ անոր ոգեղինացումին:

Մօտաւորապէս 35 տարի առաջ, Փրանսական հանգէս մը անստորագիր կը հրատարակէր Հիւկոյի եւ Վարուժանի երկու քերթուածները՝ «Սերմանողը» Հիւկոյի եւ «Ցանը» Դանիէլ Վարուժանի, Արչակ Չոպանեանի թարգմանութեամբ: Գրական այս մրցումին իրենց մասնակցութիւնը կը բերէին իբրեւ ժիւրի Փրանսացի մտաւորականներ ու ակադեմականներ: Հայ քերթողի

մեծամասնութեան ճնշիչ ձայնով «գերազանց» նկատուեցաւ մասնաւորաբար իր հետեւեալ տողերուն համար:

Մըշակ, ցանէ՛, յանուն տանըդ սեղանին,
Թելիդ շարժումն անպարագիծ թող ըլլայ,
Վաղը՝ նետած ցորեններդ այդ կը թափին
Օրինութեան պէս, թոռնիկներուդ գլխուն վրայ:

Վիքթոր Հիւկոյ, «անպարագիծ» շարժումի այս պատկերը գծելու համար ամբողջ քառեակ մը սպառած է՝ Վարուժանի մէկ տողին փոխարէն:

Քնարական ջերմութիւնն ու անկեղծ յուզականութիւնը, սքանչելի պատկերներն ու համեմատութիւնները, «Հացին Երգը» շարքը անգերազանցելի կը դարձեն:

Նոյն ոգիով յօրինուած են «Արտս Հասուն է», «Առաջին Ծիւեր», «Յորեանի Ծովեր», «Կակաչներ», «Խաչբուռ» բանաստեղծութիւնները եւ մանաւանդ «Օրհնութիւնը», որ գիւղական ընտանիքի փայլուն ներբող մըն է: «Անդաստանս» հոյակապ քերթուածով Վարուժանը խաղաղութիւն, բերկրութիւն եւ սիրերգութիւն կը ցանկայ ո՛չ միայն հայ գիւղին, այլեւ աշխարհի բոլոր կողմերուն՝ արեւելքին, արեւմուտքին, հիւսիսին եւ հարաւին:

Անոնք որ գբաղած են քիչ մը գրական համադրութեամբ, Վարուժանի երեք հատորներուն մէջ պիտի գտնեն խառնուածք մը, որ կ'ընդգրկէ հետեւեալ տրամադրութիւնները.-

ա. Ուժականութիւն.

բ. Պատկերներու եւ յուզական տարրերու պայծառութիւն.

գ. Հեթանոսական կիրքը.

դ. Գեղապաշտութեան աչքառու հակում.

ե. Արագութիւն եւ խոյանք.

զ. Աւելի միտք՝ քան զգայնութիւն, աւելի քանդակ՝ քան երաժշտութիւն.

է. Երեւակայութիւն մը, որ հինգէ աւելի զգայարանք կը պահէ իր տրամադրութեան տակ:

Ես փորձեցի կարելի ժողկալութեամբ ու ընդհանրացումներէ խուսափելով՝ տալ դիմաստուերը այն մեծ քերթողին ու գիւցագներգուի, որ Վարուժանը եղաւ: Մեծութիւն մը, բառի ամէնէն գունագեղ իմաստով: Հսկայ մը՝ որ մեր գրականութեան անդաստաններուն մէջ միշտ գաճաճ պիտի տեսնէ մեր բազմաթիւ փառքերը: Եթէ յաջողեցայ այս առիթով կատարել որո՛շ ճշգրտմաներ ու հաստատումներ, ի՛նչ բաւարարութիւն ինձի համար. . .

Կ'ուզէի այս բոլորէն վերջ, մեր երիտասարդութիւնը հրաւիրել անոր գործին վրայ հակելու՝ մասնաւորապէս սա՛ շրջանիս, առաւելապէս իր «Յեղին Սիրտը» հատորին վրայ: Ազգայնաշունչ բանաստեղծութիւնը սրբազան փքոց մըն է, եթէ ներէք այս բացատրութեան քիչ մը խորթ հնչականութիւնը, ու Վարուժանը առանցքն է գետնին վրայ: Իր գործը կը թելադրէ մեզի սեղմել շարքերը, կռնակ տալ մեղկութեան, ու յառիվ մեր ցեղային փառքերուն ու անցեալին վրայ: Մտածումի քով հաճոյքը, ու պատմութեան քով մշակոյթը պիտի գտնէք իր քերթուածներուն մէջ:

Վարուժան գրած է նաեւ արձակ, այդ ասպարէզին մէջ եւս հանդէս գալով որպէս խորագրաց ու յուզաթաթաւ բանաստեղծ: Անոր «Վենետիկէն-Աթէնք» ճանապարհորդական նկարագրութիւնը, մեր գրականութեան լաւագոյն էջերէն է:

Ան մեծ վարպետութիւն ցուցաբերած է նաեւ թարգմանական գրականութեան կալուածին մէջ: Անոր գրչին կը պատկանին Պելճիգայի գրող Մեթերլինգի «Ինքնամուտ» կոչուած մէկ գործողութեամբ թատերգութեան, Ադամ Մեցկեւիչի «Ալբուխարա»ի թարգմանութիւնները: Թարգմանած է նաեւ, ծագումով հայ, բայց Ֆրանսերէն գրող բանաստեղծուհի եւ նորավիպագիր Իսկուհի Մինասի կարգ մը արձակ բանաստեղծութիւնները եւ «Վասիլիկոյ» նորավէպը:

Վարուժան գրած է նաեւ քննադատականներ եւ յօդուածներ, իսկ իր նամակներուն հրատարակութիւնը՝ նոր լոյս սփռեց անոր գրական հայեացքներուն վրայ:

Մեծ բանաստեղծը 31 տարեկան էր երբ նահատակուեցաւ, 6 Սեպտեմբեր 1915ին, սակայն իր գործը 31 դարերու կեանք ստացաւ, ու ժամանակն իսկ պիտի չկարենայ ակերել անոր անունը, անմահ՝ Վարուժան, Հայ Վերգիլիոս:

1952
Յալէպ

ԱՐՇԱԿ Բ.Ի ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Նախքան Արշակ Բ.ի մասին խօսելու, հարկ կը տեսնեմ կարգ մը տեղեկութիւններ տալ՝ Հայաստանի ընկերային վիճակին շուրջ, որ կարեւոր է, այդ ժամանակաշրջանի թագաւորներու քաղաքականութեան ուսումնասիրութեան համար:

Արշակունեաց կառավարութեան ձեւը, ինչպէս Պարսկաստանի, նոյնպէս Հայաստանի մէջ նոյնն էր – ազնուապետական միապետութիւն: Թագաւորը օրինականօրէն Հայաստանի տէրն ու իշխանն էր եւ անոր իշխանութիւնը՝ ժառանգական: Սակայն այս իշխանութիւնը անուանական էր միայն, որովհետեւ թագաւորին իշխանութիւնը կը սահմանափակուէր ուրիշ ազնուապետական իշխանութեամբ մը, որ մեր մէջ նախարարութիւն կը կոչուէր: Նախարարութիւնը այնքան հին էր, որքան հայ ազգը: Եւ Վաղարշակը – կրտսեր եղբայրը Պարսիկներու եւ Պարթեւներու թագաւոր Արշակին, որ ցեղով Պարթեւ էր, – երբ Արշակ թագաւորին կողմէ Հայաստանի թագաւոր նշանակուեցաւ, ըստ Մ. Խորենացիի 132 թ. Ն.Ք., ուզեց գիտնալ, թէ իրմէ առաջ որո՞նք թագաւորած են Հայաստանի վրայ եւ ինչպիսի կարգ ու սարք ունեցած է պետութիւնը: Անոր համար Պարսկաստանի Պարթեւ Արշակ Մեծ թագաւորին ղրկեց Մար Աբաս կատինա անունով ասորին, որ յունարէնի մասնագէտ էր:

Ապա, Վաղարշակ Հայոց թագաւորը հաստատելով այս ազնուապետական դասակարգը, որուն հետեւիւնը, բխելով այն ցեղական իշխանութիւններէն, որոնք Հայաստանի դիրքին շնորհիւ անյիշատակ ժամանակներէն իսկ կազմուած էին երկրին զանազան կողմերը, նախարարութիւնները հետզհետէ զարգացան եւ զօրացան, եւ հայոց հին թագաւորներու բոլոր ջանքերը զուր անցան, զանոնք նուաճելու եւ կեդրոնական իշխանութեան հպատակացնելու: Երբ Վաղարշակ ձեռնարկեց Հայաստանը բարեկարգելու, ստիպուեցաւ օրինաւոր համարել այն հին կարգը, որ ըստ ինքեան թագաւորական իշխանութեան համար վտանգաւոր եւ վնասակար էր, նորոգելով իւրաքանչիւր նախարարութեան իրաւունքները ժառանգականութեամբ ստացած կալուածներու վրայ: Անոր միակ գործը այն եղաւ, որ նախարարներու վայելած առանձնաշնորհներու փոխարէն, քանի մը պարտաւորութիւններ դնէ անոնց վրայ, եւ, այսպէս սով, փոքր ի շատէ արքունիքին կապէ զանոնք:

Վաղարշակեան կարգադրութեամբ, նախարարները (որոնք ընդհանուր առմամբ կը կոչուէին «ազատ», եւ «ազատ եար», այսինքն ազնուական, հակառակ հասարակ ժողովուրդին, որ կը կոչուէր «անազատ»), երկու գլխաւոր դասի կը բաժնուէին, աւագ եւ կրտսեր: Առաջինները կը զանազանուէին կրտսերներէն իրենց իրաւունքներով եւ թագաւորէն կ'ընդունուէին «բարձ ու պատիւ աւագութեան», որով իրաւունք կը ստանային արքունիքը՝ թագաւորին ներկայութեան նստիլ բարձի վրայ՝ արեւելեան սովորութեամբ: Բայց, նոյնիսկ, աւագ նախարարները մէկը միւսէն նախապատիւ կը համարուէր, նայած իւրաքանչիւրին ազդեցութեան եւ երկրի ընդարձակութեան: Այս է, որ մեր պատմագիրները կ'անուանեն առաջին գահ, երկրորդ գահ, երրորդ գահ, եւ այլ լըն:

Բոլոր նախարարները կալուածներու տէր չէին: Անոնց մէջ կային, որ միայն արքունիքի պալատին մէջ ծառայելով, ազատ ու նախարար կը կոչուէին: Իսկ կալուածատէր նախարարները, որոնց գլխաւորը կը կոչուէր «Տէր» կամ «տանուտէր» եւ «նահապետ», իրաւունք ունէին՝

Ա. Թագաւորէն անկախ իշխել ժառանգութեամբ ստացած երկիրներու վրայ:

Բ. Իրենց երկրի բնակիչներուն դատերը տեսնել:

Գ. Հարկ առնել իրենց հպատակներէն:

Դ. Առանձին գօրք պահել՝ զինուոր առնելով իրենց հպատակներէն:

Այս իրաւունքներէն կը պարզուի, որ թագաւորը ամենեւին չէր խառնուէր նախարարներուն, իրենց երկրի կառավարութեան մէջ: Բայց այս բոլորին փոխարէն, նախարարները հպատակութեան տուրքերով կապուած էին թագաւորին եւ պատերազմի ժամանակ գօրքով եւ հարկով օգնել թագաւորին: Սակայն պարտականութիւնները միշտ ճշգրտութեամբ չէին կատարուէր եւ անոնցմէ ահաւոր չարիքներ առաջ կու գային: Ինչպէս պիտի տեսնենք, անոնցմէ ոմանք իրարու դէմ պատերազմ մղելով, երկիրներու աւերումի, երիտասարդութեան մահուան եւ ուրեմն սովի պատճառը կը դառնային, ուր նման պարագաներու թագաւորին միջամտութիւնը անհրաժեշտ կը դառնար: Տակաւին կային նախարարներ, որոնք իրենց սեփական շահուն համար թշնամիին կողմը անցնելով, իրենց ազգին մեծ վնաս պատճառած են: Եղած են նաեւ նախարարներ, որոնք բաժնուէլով թագաւորէն, ստեղծած են առանձին թագաւորութիւն: Եւ ուրեմն, այս ձեւով պատճառ դառնալով Հայաստանի տկարացումին:

Նախարարներէն յետոյ կու գար ժողովուրդը, որ Վաղարշակի օրէնքներուն համաձայն, երկու դասի կը բաժնուէին՝ քաղաքացիներ ու գիւղացիներ: Առաջիկաները կը բնակէին քաղաքներու մէջ եւ գիւղացիներէն բարձր կը համարուէին, որոնք պարտական էին քաղաքացիները պատուել իբրեւ «իշխաններ»: Հարկերը եւ տուրքերը կը ծանրանային գլխաւորապէս ստորին կարգի ժողովուրդին կամ գիւղացիներուն վրայ, որոնք այնքան պիտի հատուցանէին, որ երկու արքունիքի - թագաւորին եւ նախարարներուն պէտքերը հոգացուէին: Բացի անոնցմէ, Արշակունեաց ընդունած սովորութեամբ՝ շինական դասը՝ սակաւ առ սակաւ կը զրկուէր իր հողէն եւ երկրին հարստութիւնը կը կեդրոնանար քանի մը անհատներու ձեռքին մէջ: Վաղարշակի յաջորդները չբաւականանալով եղած նախարարական տուներով, հետզհետէ նորանոր նախարարութիւններ ստեղծեցին: Թագաւորը որեւէ հպատակի մը անձնուէր հաւատարմութիւնը եւ պատերազմի ժամանակ ցոյց տուած քաջութիւնը վարձատրելու համար, նախարարական պատուին կը հասցնէր գայն եւ շատ անգամ առանձին կալուածներ կը շնորհէր, ինչպէս՝ Վարուժնունիք, Դիմաքսեանք, Տրունիք, Առաւելեանք, Ամատունիք, Կամսարականք, եւ այլն: Միայն վերջերս, քրիստոնէութեան շրջանին, թագաւորը երբեմն անհաւատարիմ եւ ապրստամբ նախարարներու կալուածներով կը վարձատրէր իր սիրելիները:

Այս տեղեկութիւնները լրացնելէ առաջ, աւելցնեմ, որ Արշակունիները Հայաստանի վրայ իշխեցին ճիշտ 560 տարի, հետեւեալ կարգով, ըստ Մ. Խորենացիի, Վաղարշակ՝ 22 տարի Ք.Ա. 132 թուականին, Արշակ՝ 13, Արտաշէս Ա՝

25, Տիգրան Մեծ՝ 33, Արտաւազդ՝ 1, Արշամ՝ 38, Սանատրուկ՝ 30, Երուանդ՝ 20, Արտաշէս Բ.՝ 42, Արտաւազդ Բ.՝ 2, Տիրան՝ 21, Տիգրան Գ.՝ 42, Վաղարշ՝ 20, Խոսրով Ա. (Մեծն)՝ 41, Հայաստան պարսիկներէ նուաճուած՝ 27 տարի, Տրդատ՝ 56, Խոսրով Փոքր՝ 2, Տիրան՝ 11, Արշակ Բ.՝ 30, Պապ՝ 7, Արշակ, Վաչարշակ՝ 8, բաժանում Հայաստանի յոյներու եւ պարսիկներու միջեւ: Յունական բաժնին թագաւոր Արշակ, պարսկական՝ Խոսրով՝ 5, Վուամշապուհ՝ 21, Խոսրով Երկրորդ անգամ՝ 1:

Մասնաւորելով մեր խօսքը Արշակ Երկրորդի ժամանակաշրջանին վըրայ, կը կեդրոնանամ անոր ներքին եւ արտաքին քաղաքականութեան: Անոր կեանքը եւ քաղաքականութիւնը առատ նիւթ հայթայթած է մեր պատմագիրներուն եւ այդ շրջանը եղած է մեր պատմութեան ամէնէն յատկանշական շրջաններէն մէկը:

Հոս պէտք է խոստովանիլ, որ Արշակ Բ. եղաւ մեր ամենաքաջ եւ յանդուգն թագաւորներէն մէկը, սակայն, որպէս թագաւոր, իրեն կը պակսէր դիւանագիտական ճարտարութիւն:

Արշակ Բ. եղաւ ինքնահաւան, դիւրահաւատ, երդումնադրուժ եւ եկեղեցական օրէնքները անսաստող թագաւոր մը: Անոր թագաւորութեան շրջանը՝ 30 տարի, գրեթէ անցաւ պատերազմներու մէջ, մերթ յոյներու եւ գրեթէ պարսիկներու դէմ: Փաւստոս Բիւզանդ կը յիշէ պարսիկ 23 զօրավարներու անունները, որոնք իրենց բիւրաւոր զօրքերով արշաւեցին Հայաստան, սակայն, միշտ պարտուեցան հայոց քաջ բանակէն՝ Վասակ Մամիկոնեանի հրամանատարութեամբ: Այս պատերազմները պատճառ դարձան, որ հայ նախարարները ատեն Արշակը, եւ, անոնցմէ մի քանին Շապուհի կողմը անցան, իսկ երկիրը կը տկարանար եւ կ'աղքատանար:

Արշակ Բ.-ի հայրը՝ Տիրան Բ., նոյնպէս ինքնահաւան եւ եկեղեցւոյ պետը անարգող թագաւոր մը եղաւ: Տիրան Բ. բիրերով ծեծել տալով սպաննել տուաւ Յուսիկ Կաթողիկոսը, ինչպէս նաեւ՝ Դանիէլ Արքեպիսկոպոսը, որոնք համարձակած էին թագաւորին վատ արարքները ցոյց տալ եւ գինք յանդիմանել:

Արշակ Բ. եւս հետեւեցաւ իր հօր հակակրօնական ուղիին: Նոր ժամանակաշրջանի կաթողիկոսն էր Մեծ Ներսէս: Ան եղաւ հայրենասէր եւ մեծ կաթողիկոս մը: Բացի հարիւրաւոր վանքերէ, երկրին չորս կողմերը շինել տուաւ բազմաթիւ հիւանդանոցներ, աղքատանոցներ, որբանոցներ եւ հիւրանոցներ, եւ, այդ հաստատութիւններուն ապահովեց մնայուն եկամուտներ: Ներսէս Կաթողիկոսի օրով էր, որ արգիլուեցաւ մօտիկ ազգականներու (եօթը պորտ) ամուսնութիւնը հայոց մէջ: Նախարարական եւ իշխանական տուները իրարու միջեւ ամուսնութիւններ կը կնքէին, առանց նկատի ունենալու ազգականական մերձաւորութիւնը՝ միայն իրենց մէջ պահելու համար ժառանգութիւնները: Դարձեալ, Մեծն Ներսէսի օրով էր, որ արգիլուեցաւ մեռելներու ետեւէն արուեստական լաց ու շիւան փրցնել եղերամայրերու միջոցաւ, որոնք կը վարձատրուէին այդ գործին համար: Այդ սովորութիւնը կը մնար հեթանոսական օրերէն: Բնականաբար այդ հակառակ էր քրիստոնէական ոգիին եւ պէտք էր խափանուէր:

Արչակունի թագաւորները մեծ սէր ունէին քաղաքներ շինելու, որոնցմէ մէկն ունէր քաղաքական նպատակներով, բայց աւելի շատ թագաւորներու զըլարճութեան համար՝ իբրեւ ամառանոց, ձմեռանոց եւ արքայանիստ քաղաք: Գրեթէ չկայ թագաւոր մը, որ քաղաքի մը շինութեամբ ուզած չըլլայ իր անունը անմահացնել... Թէ այս ախտը որքան պիտի ծանրանար երկրին տնտեսական վիճակին վրայ, ամէն ճարտար լեզուէ աւելի գեղեցիկ կ'ապացուցանէ Սանատրուկ թագաւորի անունով Մօբինի մէջ կանգնել տուած արձանը: Այդ արձանը ձեռքը բռնած ունէր դրամ մը, որպէս թէ ցոյց տալու համար, թէ քաղաքի նորոգութեան վրայ տէրութեան գանձարանը սպառեցաւ եւ միայն մէկ դրամ մնաց:

Իսկ Արչակ Բ., որուն գլխաւոր մտահոգութիւնը, եղած էր զօրացնել կեդրոնական իշխանութիւնը, իր նախարարներու քմահաճոյքէն կախուած չըլլալ պատերազմի պարագային, քանի որ այդ նախարարները վտանգի պարագային նախ իրենց գիրենք կը մտածէին եւ փակուած իրենց անառիկ բերդերուն մէջ, հոգ չէին ընէր, թէ ընդհանուր հայրենիքը կամ ռամիկ ժողովուրդը ինչ ձեւով պիտի պաշտպանուին թշնամիէն:

Արչակ թագաւոր, որպէսզի նախարարները տկարացնէ, եւ, մանաւանդ, աւելի զօրաւոր կեդրոնական բանակ մը ունենալու մտահոգութեամբ, որոշեց քաղաք մը շինել, որուն ձեւը եւ բնակչութեան տեսակը եզակի է մեր պատմութեան մէջ:

Այսպէս, թէեւ գաղափարը սքանչելի էր եւ հայրենիքին օգտակար, սակայն, բնակչութեան տեսակը իրապէս դատապարտելի: Եւ ճիշտ անոր համար այս ձեռնարկը դժգոհ ձգեց թէ՛ նախարարութիւնները եւ թէ՛ եկեղեցիին:

Այս քաղաքը կոչուեցաւ Արչակաւան, որ շինուեցաւ Հովիտ կոչուած կող գաւառին մէջ՝ Մասիս լեռան թիկունքին: Թագաւորը մունետիկ կանչել տուաւ, թէ ով որ կարողանայ հոն գալ եւ բնակիլ, անոր վրայ դատաստան եւ իրաւունք չմնար: Այսպէս ամբողջ հովիտը ծովածաւալ բազմութեամբ լեցուեցաւ: Որովհետեւ, բոլոր աւանդառուներն ու պարտապանները, ծառաներն ու յանցագործները, գողերն ու մարդասպանները, ուրիշներու կիներ փախցնողները եւ այս տեսակի բիւրաւոր մարդիկ հոն ապաստանեցան:

Այն ատեն, Խաղ Արք., որ կաթողիկոսական տեղապահ էր, որովհետեւ Մեծն Ներսէս կը գտնուէր աքսորի մէջ, Վաղես կայսրի կողմէ աքսորուած ըլլալով, բազմաթիւ անգամներ յանդիմանեց Արչակին: Անոր համար թագաւորը հալածեց զինք:

Երբ Ներսէս կաթողիկոսը վերադարձաւ աքսորէն, յանդիմանեց Արչակ թագաւորին, անոր գործած ոչ քրիստոնէավայել արարքներուն համար, եւ թելադրեց, որ ցրուէ Արչակաւանի բնակչութիւնը: Թագաւորը կը ծիծաղէր կաթողիկոսին վրայ, եւ կը ծաղրէր անոր խօսքերը: Այն ատեն կաթողիկոսը բարկանալով ըսաւ.

«Գիտցած ըլլաս, ո՛վ թագաւոր, որ այս (քու ըրածի) մասին գուշակած է Աստուած մարգարէին բերնով.– «Վա՛յ անոր, որ տուն կը շինէ ոչ արդարութեամբ եւ վերնայարկ կը կառուցանէ՝ ոչ իրաւունքներով» եւ դարձեալ՝ թէ՛ «Իբրեւ առակ ողբեր պիտի ըսեն, վա՛յ անոր, որ ազահոթութեամբ կը խլէ այն որ իրը չէ, որովհետեւ եթէ գեղեցիկ ու մեծամեծ տուններ ըլլան՝ աւերակ կը դառն»

նան եւ անոնց մէջ մարդ չի բնակիր, գազաններու, բորենիներու, արջերու, ճագարներու եւ աղուէաներու ծերպեր, կռունկներու եւ ագռաւներու բոյներ, ցանքերու արտեր: Ուստի քու ձեռքերով շինածները կ'աւրուին ու ալ չեն շինուիր, անոր մէջ բնակութիւն հաստատած բոլոր անօրէնները, միանգամայն կը կոտորուին, այնտեղ եզները կը պառկին, ցիւենները կ'արածին, աղուէաները անոր յարկերը կը մտնեն ու կ'ելլեն: Անոնք չեն շինուիր եւ անոնց մէջ յաւիտեան մարդ չի բնակիր»:

Երանելի Ներսէսի բերանէն բխած այս խօսքերէն երեք օր վերջ, Աստուած Արշակաւան քաղաքը հարուածներու ենթարկեց: Մարդոց եւ անասուններու վրայ սկսան երեւալ վատորակ պալարներ, ոմանք կը կոչեն ժանտ: Այս հարուածները երեք օրէն աւելի չտեւեցին եւ քաղաքը անմարդացաւ: Կոտորածը ընդհանուր էր: Եւ թագաւորը սկսաւ փնտռել կաթողիկոսին եւ երբ գտաւ, աղաչեց որ աղօթէ իրեն համար, գուցէ ինքն ալ մեռնի, որովհետեւ ահաբեկուած էր: Այսպէս կը պատմէ Փաւստոս Բիւզանդ:

Իսկ Մովսէս Խորենացի մեր պատմաճօր պատմածը հետեւեալն է.

Ուրեմն երբ Արշակաւան քաղաքը, Արշակի դաստակերտը շինուեցաւ, նախարարները եւ եկեղեցականները վշտացան Արշակէն:

Նախարարները շատ անգամ բողոքեցին, բայց Արշակ իրենց չլսեց, այն աստիճան, որ անոնք Շապուհին դիմեցին: Եւ Շապուհ այն ատեն Յունաստանէն կը վերադառնար: Իր սպարապետներէն մէկուն հայ գունդով ուղարկեց, որ Արշակը բռնեն: Սակայն ան փախաւ Կովկասի կողմերը, վրացիներու հետ միաբանելով:

Իսկ պարսիկ սպարապետը Հայաստան գալով, նախարարներու օժանդակութեամբ կ'առնէ Անի ամրոցը, աւարի կու տայ հոն պահուած բոլոր արքայական գանձերը, նաեւ թագաւորներու ոսկորները, չեմ գիտեր Արշակին նախատինք հասցնելու նպատակով, թէ որեւէ հեթանոսական հմայքի համար: Բայց յետոյ, նախարարները խնդրեցին եւ ետ ստացան (ոսկորները) եւ թաղեցին Աղցք աւանին մէջ, Արագած կոչուած լեռան ստորոտը: Որովհետեւ անոնք չկրցան գատել հեթանոսներու եւ հաւատացեալներու ոսկորները, քանի որ գերողները խառնած էին իրար, ուստի արժանի չգտան թաղել սուրբերու հանգրստարանը՝ Վաղարշապատ քաղաքը:

Իսկ հայոց նախարարները, ժողովուրդով դիմեցին թագաւորական դաստակերտին՝ Արշակաւանի վրայ, ուր կոտորեցին տղամարդկանց եւ կանանց, բացի ծովեր երեխաներէն, որովհետեւ անոնցմէ իւրաքանչիւրը կատրած էին իրենց ծառաներու եւ վնասարարներու դէմ: Այս բանը թէպէտ իմացաւ Մեծն Ներսէս, բայց չկարողացաւ կոտորածէն առաջ հասնիլ, այլ՝ հասաւ վերջաւորութեան, երբ կոտորուածներու երախաները բաժնելով կ'ուզէին գերի տանիլ, ինչպէս հեռաւոր թշնամիներու երախաները: Մեծն Ներսէս անոնց ազատեց եւ հրամայեց քթողներով կրել գոմ մը: Անոնց համար կերակրողներ եւ սնունդ նշանակեց: Յետոյ անոնք (մեծնալով) աւան կազմեցին, որ այս պատճառով կոչուեցան որթք (քթոցներ):

Ահա այսպիսի վերջաւորութիւն ունեցաւ Արշակաւանը: Ինչպէս ըսի, թէ եւ նպատակը իմաստուն էր, սակայն բնակչութիւնը հաւաքելու ձեւը սխալ:

Այս՝ ձեռով մը անկարգութիւնը քաջալերել էր երկրին մէջ, քանի որ այդպիսի սիներուն ազատ ապաստան մը գոյութիւն ունէր:

Արշակ Բ-ի ներքին քաղաքականութիւնը ձախողած էր իր անխոհեմութեան եւ հակաքրիստոնէական արարքներուն պատճառով: Նախարարները չէին սիրեր զինք:

Արշակ Բ. ոխ պահած էր նախարարներուն դէմ, եւ կ'ուզէր Արշակաւանի վրէժը լուծել: Այլ ինչպէս կարելի էր ներքին անդորրութիւն եւ համագործակցութիւն ստեղծել: Նախարարները մէկիկ-մէկիկ գործիք կը դառնային պարսիկներուն ձեռքը: Ան իր ձախող գործերով ատելութիւն սերմանեց եւ երկարատեւ պատերազմներով զզուեցուց զանոնք: Երկիրը պէտք ունէր ներքին խաղաղութեան:

Արշակ Բ., որ պարսիկ հալածանքներէն փախած էր Վրաստան, իր սակաւթիւ կուսակիցներով եւ վրացի գունդով յարձակեցաւ հայ նախարարներուն վրայ, որոնք Ներսէս Կամսարականի առաջնորդութեամբ դիմադրեցին թագաւորին: Երկու կողմէ հազարաւորներ կը մեռնէին այս եղբայրական պատերազմի ընթացքին: Վնասողը հայ ժողովուրդն էր: Երկիրը կ'աւերուէր եւ հայ երիտասարդութիւնը կը սպաննուէր՝ գոհացում տալու համար Արշակի վրէժ խնդրական զգացումներուն: Հայ արիւնը գետի նման կը հոսէր:

Այս արիւնահեղութեան առաջը առնելու համար, կարգ մը նախարարներ դիմեցին Մեծն Ներսէս Կաթողիկոսին: Ան միջամտեց եւ հաշտութիւն կնքուեցաւ պատերազմիկ երկու կողմերու միջեւ: Սակայն, Մեծն Ներսէսի Յունաստան երթալով եւ հոն աքսորուելէ վերջ, Արշակ թագաւոր առիթէն օգտուելով, իր սրտին մէջ պահած բոլոր դառնութիւնը թափեց նախարարներուն վրայ: Կամսարականներու ամբողջ ցեղը սուրէ անցուց: Հրամայեց, որ անոնց դիակները առանց թաղելու թափել, որպէսզի շուներու կեր դառնան: Իսկ ինք, իբրեւ մեծ յաղթութեամբ պսակուած, քանի մը օր ուրախութիւն սարքեց: Հրամայեց նաեւ, անոնց միջերքները բերել եւ Արմաւիր քաղաքին մէջ ամբարել: Փորեցին եւ բացին Նախճաւան գիւղը գտնուող անոնց շատ խոր եւ լայն հորերը եւ սայլերու վրայ բեռնելով փոխադրեցին, հոն գտնուող միջերքը: Սայլապանները տեսնելով մարդկային ոսկորներ, որոնք թափուած էին փոսերու եզերքները, հարցուցին եւ իմացան, որ իրենց տէրերուն ոսկորներն են: Հաւաքեցին եւ եղէգով ծածկելով, տարին եւ միջերքերու հորերուն մէջ թաղեցին: Թագաւորը իմանալով սայլապաններու արարքը՝ հրամայեց, զանոնք նոյն հորերուն վրայ փայտէն կախել:

Այս դէպքերը մեծ ազդեցութիւն ունեցան կաթողիկոսական փոխանորդ Խաղ Արք-ի վրայ, որ ներկայանալով թագաւորին, յանդիմանական խիստ խօսքերով պարսաւեց զայն: Արշակ նեղուած, հրամայեց, որ քարկոծեն զայն եւ մեռցնեն, սակայն տեղապահը իրեն կողմնակիցներ ունենալով ազատուեցաւ ստոյգ մահէ:

Արշակ Բ. թագաւոր, շատ շուտ կը հաւատար եղած բամբասանքներուն եւ չարախօսութեանց: Եւ որոշում կ'առնէր հապճեպօրէն՝ առանց լուրջ ուսումնասիրութեան եւ հետազոտութեան: Որովհետեւ շատ կասկածամիտ էր եւ այս մեծապէս վնասեց իրեն եւ պատճառ դարձաւ որ ըլլայ հայրասպան թագաւոր մը: Պատմութիւնը բազմաթիւ փաստեր ունի այս առնչութեամբ:

Կ'ուզեմ յիշել իր եղբորորդի Գնելի սպանութեան պարագան: Այդ շըր-
ջանին, Հայաստան խառնակ վիճակ մը կը ներկայացնէր երկարատեւ պատե-
րագմներու հետեւանքով, որոնց պիտի անդրադառնամ, Հայոց Թագաւորին
փրկութեան միակ յոյսը՝ երկրին ներքին անդորրութիւնը եւ նախարարներու
սէրն ու միաբանութիւնն էր, որոնք համախմբուելով գահին շուրջ, կրնային
հրաշքներ գործել: Բայց դժբախտաբար, Արշակ Բ. թէ՛ իր ազգականներուն եւ
թէ՛ նախարարներուն հետ գժտուած էր:

Մեծն Ներսէս Կաթողիկոսի խնդրանքով՝ Բիւզանդիայէն արձակուած
պատանդներէն մէկը՝ Գնել, (Արշակի եղբոր Տրդատի որդին), որուն հայրը ըս-
պաննուած էր կայսեր կողմէ, հիւպատոսութեան պատուով եւ գանձերով ճո-
խացած՝ վերադարձեր էր Հայաստան, իր նախանձոտ հօրեղբորորդիին՝ Տիրի-
թին հետ:

Գնել բնակեցաւ Կուաշ աւանը, իր կուրցած պապին մօտ (Արշակի հօր),
որ իր զակին Տրդատի մահուան համար շատ վշտացած էր, որովհետեւ ինքն է
որ պատանդ ուղարկած էր զայն Յուլիանոս ուրացող կայսեր մօտ, իր բոլոր
կալուածները թողնելով պարգեւէց: Շուտով Գնել ամուսնացաւ Սիւնեաց Ան-
դովկի ըստ Բիւզանդի կամ Անդիոք՝ ըստ Խորենացիի, նախարարի գեղեցիկ եւ
հնարագէտ աղջկան՝ Փառանձեմի հետ եւ թագաւորավայել հարսնիք ըրաւ:
Նախարարները, որոնց Գնել իր բարեմասնութիւններով եւ առատաձեռնու-
թեամբ սիրելի էր դարձած, իրենց տղաքը երիտասարդ իշխանին պալատը ու-
ղարկեցին:

Այս բանէն օգտուելով, Տիրիթ, Վարդան Մամիկոնեանի հետ միաբա-
նած, որ իր մտերիմն էր, որ Արշակի մօտ գալով չարախօսեցին, Արշակին սիր-
տը կասկած ձգելով, թէ Գնել կը մտածէ զինք սպաննել եւ թագաւորութիւնը
յափշտակել: Մանաւանդ, ուրիշ պատճառ մըն ալ գոյութիւն ունէր, որ Այրա-
րատ նահանգի Կուաշ աւանը բնակելու իրաւունք ունէին միմիայն գահաժա-
ռանդ իշխանները: Իսկ Գնել գահաժառանգ չէր, եւ, ուրեմն Կուաշ իր բնակու-
թիւնը չարախօսութեանց հետեւանքով, իր կասկածները կը հիմնաւորէր: Եւ
Արշակ հրաման ղրկեց Գնելին, որ արձակէ նախարարներու տղաքը եւ հեռա-
նայ Կուաշէն: Գնել հնազանդեցաւ թագաւորին եւ քաշուեցաւ իր մայրենի ժա-
ռանգութիւնը եղող Շահապիվան գաւառը: Տիրան Բ., իր թոռան եղած անիրա-
ւութեան վրայ նեղացած, սաստիկ յանդիմանութիւն ղրկեց Արշակին: Ասոր
վրայ, գաղտնաբար, Արշակ Բ. խեղդել տուաւ իր հայրը: Ապա, Գնելի փարթամ
կեանքին վրայ նախանձելով եւ մանաւանդ աչք ունենալով անոր կնոջ Փա-
ռանձեմին վրայ, Տիրիթին եւ Վարդան Մամիկոնեանի հետ դաւ մը սարքելով,
սպաննել տուաւ զայն Վարդանի ձեռքով որսորդութեան ատեն Գնելի կալուա-
ծին մէջ, իբր թէ սխալմամբ:

Արշակ իր չարագործութիւնը ծածկել ուզելով սուգի մտաւ Գնելին հա-
մար, եւ, անոր մարմինը մեծ հանդէսով թաղել տուաւ: Սակայն, յետոյ իրա-
կանութիւնը երեւան եկաւ, երբ Փառանձեմը, որպէս հարս առաւ: Այս փառա-
սէր կինը, իր անգթութեամբ Արշակէն վար չմնաց: Ուզելով թագուհի դառ-
նալ, եւ, Ողիմպիադայի տեղը բռնել, Մըջիւնիկ անունով անխիղճ քահանայի
մը ձեռքով թունաւորել տուաւ զայն՝ հաղորդութեան ընթացքին: Սպաննել

տուաւ նաեւ Սիւնեաց Վաղինակ իշխանը եւ անոր տեղը իր հայրը՝ դարձուց Սիւնեաց իշխան:

Ուրիշ օրինակ մը եւս, իր դիւրահաւատութենէն.-

Պարսիկներու թագաւոր Շապուհ, որ պատերազմ պիտի մղէր Յոյներուն դէմ, օգնութիւն խնդրեց Արշակէն:

Հայոց թագաւորը մեծ ուրախութեամբ ընդունեց հրաւերը եւ հրամայեց Վասակ Մամիկոնեան սպարապետին, որպէսզի շուտով պատրաստէ զօրքը: 400,000 զինուոր կազմ ու պատրաստ, թագաւորով եւ նախարարներով դիրք գրաւեցին Մծբին քաղաքին դիմաց, ուր տեղի պիտի ունենար ճակատամարտը: Յունական զօրքը մեծ բազմութեամբ եկած եւ դիրք գրաւած էր: Սակայն, պարսիկները կ'ուշանային: Հայ նախարարները սպասելէ ձանձրացած դիմեցին թագաւորին, որպէսզի իրենք առանձին սկսին պատերազմի: Հայերը, Վասակ Սպարապետի հրամանատարութեամբ, ջարդեցին յոյներուն եւ յաղթանակը ապահովեցին: Երբ պարսիկները հասան, արդէն թշնամի զօրք չէր մնացած:

Այս յաղթութենէն շատ գոհ մնաց Շապուհ, եւ մեծապէս պատուեց Արշակին, Հայոց Սպարապետին եւ նախարարներուն: Ան կ'ուզէր մեծ պարգեւներով եւ փոխարինութիւններով հատուցանել Հայոց Արշակ թագաւորին այս մեծ ծառայութիւնը: Պարսիկ նախարարներ առաջարկեցին թանկագին գոհարեղէններ եւ կերպասներ նուիրել: Սակայն, Շապուհ ըսաւ, «Ինչ որ դուք կ'առաջարկէք՝ սէր չէ: Եկէք անքակտելի սէր հաստատենք Հայոց Արշակ թագաւորին հետ, այնպէս, որ ան մ'ինչեւ վերջ մեզմէ անբաժան մնայ: Իրեն կնութեան պիտի տամ աղջիկս եւ այնպիսի կալուած մը, որ երբ Հայաստանէն մեր մօտ գայ, Հայաստանէն մ'ինչեւ Տիգրոն իր կալուածներուն մէջ իջեւանի, մ'ինչեւ ան մեր քով հասնի: Թագաւորին այնպէս ընենք, իսկ Սպարապետին եւ միւս զօրականներուն ոսկի եւ գոհարեղէններ տանք»:

Շապուհ ուզեց Արշակ թագաւորը Ասորեստան տանիլ, որպէսզի հոն փեսայացնէ իր աղջկան հետ: Սակայն Անդովկի իշխանը, Փառանձեմի հայրը, միջոցներ խորհեցաւ որպէսզի երկու թագաւորներուն կապը խզէ եւ չյաջողեցնէ այս ամուսնութիւնը: Եւ գալով Արշակ թագաւորին չարախօսութիւններ ըրաւ, իբր թէ պարսիկ թագաւորը զինք կ'ուզէ ծուղակը ձգել եւ սպաննել, եւ յաջողեցաւ իր նպատակին մէջ: Արշակ, փոխանակ հանդարտօրէն ստուգելու խնդիրը, կը հաւատայ չարախօսութեանց եւ գիշերով անձայն կը փախչի, հետը առնելով ամբողջ զօրքը, սակայն եղածին պէս թողելով զինուորական վրանները:

Առաւօտեան, Շապուհ արքան, բարի լոյսի կու գայ Արշակ թագաւորին: Կը տեսնէ, որ զօրքը հեռացած է, ձգելով վրանները եւ խորանները, հովանոցներն ու սկահակները, բազմոցները ու անկողինները, կահ-կարասիները եւ սարքերը, մ'ինչեւ անգամ իրենց գանձերը, եւ, միայն իրենց գէնքերը առած են միասին:

Շապուհ երբ եղելութիւնը հասկցաւ, իր աւագ մեծամեծներէն շատերը դեսպան զրկեց Արշակին, սիրոյ եւ միաբանութեան երդումով, որպէսզի վերադառնայ եւ միասին քննեն չարախօսութիւնները եւ յանցաւորները պատժեն: Բայց Արշակ չուզեց լսել: Եւ անկէ վերջ սկսան կռիւները երկու երկիրներ:

րուն միջեւ, որոնք տեւեցին 30 երկար տարիներ: Արշակ եթէ քիչ մը դիւանա-
դէտ ըլլար եւ դիւրութեամբ չհաւատար իրեն ըսուած ամէն մէկ բամբասան-
քի, Հայ Ժողովուրդը, խնայուած պիտի ըլլար 30 տարիներու պատերազմ մը,
որ շատ սուղի նստեցաւ Հայաստանին վրայ, հակառակ անոր որ այդ պատե-
րագմները միշտ հայ բանակին յաղթանակովը վերջ կը գտնէին: Սակայն, այդ
ըսել չէ, որ Արշակի շնորհիւ կը շահուէին այդ յաղթանակները, այլ՝ հայ Ժողո-
վուրդին եւ հայ բանակին կամքին, հայրենասիրութեան եւ քաջութեան հետե-
ւանքով: Բայց եւ այնպէս առանց մեծ գոհողութիւններու յաղթանակ չ'ապա-
հովուիր: Հայաստան մարդկային եւ տնտեսական մեծ վնասներու կ'ենթարկը-
ւէր:

Ինչպէս ըսի, Արշակ Բ. թագաւորը, բարի խորհուրդներ մտիկ չէր ը-
ներ, եւ, ինչպէս իր հայրը, ինքը եւս, կաթողիկոսներուն բարի խորհուրդնե-
րուն դէմ կը շարժէր: Կը վարէր հակաքրիստոնէական կեանք մը՝ հեռանալով
մեր եկեղեցական սուրբ կանոններէն: Կաթողիկոսին յանդիմանութիւնները եւ
աղաչանքները անհետեւանք մնացին:

Փաւստոս Բիւզանդ կը յիշէ կաթողիկոսին եւ թագաւորին միջեւ տեղի
ունեցող վէճերը:

Այսպէս, երբ Մեծն Ներսէս Հայրապետը իր աքսորավայրէն վերադար-
ձաւ, վերահասու եղաւ իր տեղապահին՝ Խաղ Արք.ի գործունէութեան, որ շատ
մաքուր եւ Աստուածահաճոյ եղած էր: Բայց երբ անկէ կը լսէր թագաւորի
անօրէնութիւնները, չար գործերը, ծուռ ընթացքը՝ կը տրտմէր, կու լար, կ'ող-
բար հեծեծանքով, մանաւանդ Արշակաւան քաղաքի պատճառով, որ շինուեցաւ
մեղքերով, անօրէնութեամբ եւ յափշտակութեամբ:

Ապա, Մեծն Ներսէս կը մտնէ թագաւորին քով, կը խօսի անոր եւ կ'ըսէ.
«Ինչո՞ւ մոռցար Արարչի պատուիրանները, որ ամէն ինչ ոչինչէն ստեղծեց, որ
որբերու հայրն է, այրիներու դատաւորը, որ մեզի համար աղքատութիւն
կրէց: Ան որ աղքատները չէր մոռնար իր մարդասիրութեամբ անոնց կը կե-
րակրէ: Աստուած արդար դատաւոր է, հզօր եւ երկայնամիտ: Ան որեւէ մէկին
չ'արհամարուիր: Դուն ինչպէ՞ս եւ ի՞նչ բանէ դրդուած արհամարեցիր Անոր
պատուիրանները: Չէ՞ որ քու հայրդ եւս նոյնպիսի ամբարշտութեան պատճա-
ռով կորսուեցաւ: Իսկ դուն չյիշեցիր Անոր, որ քու հօրդ մեղքերը չյիշեց եւ
քեզի տուաւ անոր տեղը, այսինքն հօրդ թագն ու աթոռը: Դուն քու Տէր Աս-
տուծոյ առջեւ սկսար անօրէնութիւններ գործել, ամբարշտութիւն, անիրաւու-
թիւններ՝ բոլորովին Սողոմոնացիներու նման, եւ այս բաները դուն յայտնապէս
պարծենալով կը պատմես: Ամբողջ երկիրը կու լայ, վա՛յ կը կանչէ եղած զըր-
կանքներու եւ յափշտակութիւններու պատճառով, որոնցմով դուն ուզեցիր
մեծնալ, դուն չյազեցար քու ընդարձակ թագաւորութեան հարստութիւննե-
րով, որ քեզ պարգեւեց բոլորին Տէրը՝ Քրիստոս:

Արդ լսէ ինչ որ քեզի կ'ըսեմ, եւ կատարէ՛, որպէսզի կարողանաս քեզի
փրկել Աստուծոյ բարկութենէն եւ թշուառ Հայոց Աշխարհն ալ քու պատճա-
ռով չկորսուի, որովհետեւ ես երազ տեսայ, որ հայոց կորստական աշխարհի
համար կորուստ ու կործանում կը պատրաստուի գալ: Դուն հրաման տուր որ
այն տեղը (Արշակաւանը) քակուի, քու ժողոված մարդոց ցրուէ, որ իրենց տե-
ղերը երթան եւ վերադարձնեն իրենց պարտքերը, որպէսզի քու գործած չա-

րիքներուն պատճառով Աստուծոյ բարկութեան չենթարկուիս ու չկորսուիս: Իսկ քու գործած մեղքերուդ համար ամբողջ երկրին հրաման կու տանք, որ պէսզի փոխարէնդ պահք պահեն, խնդրուածք ընեն, եւ մենք ալ քեզի հետ միասին ապաշխարութեան մտնենք, գուցէ Տէրը կը ներէ քու գործած անչափ մեղքերը: Եթէ դուն անպայման կը փափաքիս այդ քաղաքը ունենալ, ես անձամբ շինել կու տամ արդարութեամբ եւ շէն կը պահեմ քեզի համար»:

Այս տեղի ունեցած է Արշակաւանի աւերուածէն առաջ, իսկ թագաւորը կը ծաղրէր կաթողիկոսին խօսքերը եւ քթին տակէն կը ծիծաղէր անոր ըսածներուն վրայ: Սակայն, ինչպէս քիչ առաջ ըսի, Արշակաւանի աւերումէն ետք փնտռեց եւ գտաւ կաթողիկոսը եւ ներողութիւն խնդրեց:

Գնելի սպաննութեան առթիւ նաեւ, Մեծն Ներսէս յանդիմանեց թագաւորը: Սակայն, կրկին Արշակ չուզեց լսել զինք: Անկէ վերջ, Ներսէս Հայրապետը այլեւս Արշակ թագաւորի երեսը չտեսաւ՝ հրաժարելով կաթողիկոսութենէ:

Թագաւորի հրամանով կաթողիկոս օծեցին Չունակ անունով ստրուկ մը, որ Ս. Գրիգորի սերունդէն չէր: Ան հլու հնազանդ էր թագաւորին, եւ աչք կը գոցէր անոր կատարած անօրէնութիւններուն:

Արշակ Բ., ներքին այսպիսի ազգակործան քաղաքականութեան առընթեր, կը հետեւէր նաեւ արտաքին երկրեմի եւ խախուտ քաղաքականութեան: Ճիշդ է, որ իրապէս դժուար էր այդ շրջանին անկախ ապրիլ կամ միայն պարսիկներուն կամ միայն յոյներուն բարեկամութեան ապաւինիլ, քանի որ երբ դրացի երկու պետութիւններէն մէկը կամ միւսը երբ կը զբաղէր իր կայսրութեան կարգ մը ընթոստութիւնները զսպելով, միւսը կ'ուզէր ունենալ Հայաստանի բարեկամութիւնը, ինչպէս նաեւ հարկերը: Իսկ երբ այդ պետութիւնները իրարու դէմ կը պատերազմէին, բան մը, որ յաճախ կը պատահէր, հայերը ստիպուած կ'ըլլային մէկուն կամ միւսին կողմը բռնելու: Իսկ միւս երկիրը վրէժխնդիր կ'ըլլար հայոց դէմ եւ իրեն յարմար մէկ ժամանակին կը յարձակէր Հայաստանի վրայ, լուծելու համար իր վրէժը:

Բայց, ինչպէս ըսի, արդէն, Արշակ իրեն երկարած խաղաղութեան ձեռքը մերժեց խաբուելով շարախօսութիւններէ եւ երկիրը մխրճեց պարսիկներու դէմ 30-ամեայ պատերազմի մը, որ թշուառութեան մատնեց Հայոց աշխարհը եւ նախարարները իրեն դէմ հանեց:

Արշակ Բ.ի թշնամութիւնը պարսիկներու հանդէպ, ես կը կարծեմ, որ հետեւանք կրնայ ըլլալ նաեւ պարթեւներու թագաւորութեան ջնջումին Սանասանեաններու կողմէ՝ Պարսկաստանի մէջ: Թէեւ ինք որպէս պաթեւ իրաւունք ունէր թշնամի ըլլալու Սանասանեան արքաներուն, բայց Հայաստանի շահը կը պահանջէր, որ խաղաղութեամբ ապրէր դրացի հզօր պետութեան հետ եւ թշնամութեան տեղի չտար, իր սրտին մէջ պահելու այդ ատելութիւնը:

Պատմութիւնը կը փաստէ, որ Արշակունիները ընդհանրապէս յունասէր էին: Անոնք մասնաւոր հոգածութեամբ կը սորվէին յունարէնը եւ յունական սովորութիւնները: Անոնք դրամներուն արձանագրութիւնները մեծ մասով յունարէն էին: Իսկ իրենք ալ ուրիշ տիտղոսներու կարգին կը կրէին Հելլենասէր անունը:

Ես կը կարծեմ այս յունասիրութիւնը կրնայ յառաջ եկած ըլլալ նախ՝ յունական բարձր մշակոյթին, երկրորդ՝ Քրիստոնէութեան գծով:

Սակայն, այդ բոլորին հետ մէկտեղ, Արշակունիները ունէին նաեւ արեւելեան սովորութիւններ եւ մասնաւորաբար բազմակնութիւնը, զոր ինչպէս կ'երեւի, Արշակունիները առաջին անգամ մտցուցին Հայաստան եւ անոնցմէ տարածուեցաւ նախարարներուն, բայց ո՛չ ժողովուրդին մէջ: Արշակունիները այնքան հետեւող էին բազմակնութեան որ քրիստոնէութեան դարերուն եւս պահեցին այդ պժգալի սովորութիւնը: Ուրեմն, իրենց յունասիրութիւնը արգելք կը հանդիսանար, որ պարսիկներուն հետ դաշնակից մնային, եւ, այս յաճախ աղետաբեր կ'ըլլար Հայաստանին: Բայց եւ այնպէս Արշակ Բ. կը հետեւէր երկդիմի քաղաքականութեան:

Արշակ Բ. երդումնադրուժ էր:

Թէեւ դիւանագիտութեան մէջ երդումն ու դաշնագրերը որեւէ նշանակութիւն չունին, երբ հայրենիքը շահը պահանջէ: Սակայն, Արշակի պարագային իր երդումնադրութիւնը որեւէ ձեւով չ'արդարանար:

Անիկա իր երդումը դրժելով՝ հայրենիքին շահ մը չապահովեց: Այլ՝ արեւի վնաս հասցուց՝ պարսիկներու թշնամութիւնը եւ անվստահութիւնը շահելով եւ պատճառ դառնալով Պարսկաստանի քրիստոնէաներուն ջարդին:

Փաւստոս Բիւզանդ այսպէս կը նկարագրէ երկու թագաւորներու բարեկամութիւնը, երդումը եւ խզումը.-

«Այն ժամանակ Պարսից Շապուհ թագաւորը, իր մօտ հրաւիրեց Հայոց Արշակ թագաւորին եւ զայն մեծ պատուով ու փառքով, ոսկիով եւ արծաթով ու թագաւորական ամէն տեսակ մեծութիւններով ընդունեց: Անոր փայփայեց, ինչպէս իր եղբայրը, ինչպէս իր որդուն, անոր պարգեւեց երկրորդական մեծ տունը Ատրպատական աշխարհին մէջ: Ուրախութեան ժամանակ անոնք մէկ թախտի վրայ կը բազմէին, միեւնոյն գոյնի եւ միեւնոյն նշաններով ու զարդերով միատեսակ զգեստ կը հագնէին: Ամէն օր միատեսակ թագ կը պատրաստուէր երկու թագաւորներուն համար, ինչպէս երկու հարազատ եղբայրներ: Անոնք անբաժան իրարու հետ էին ուրախութիւններու ժամանակ եւ անպատմելի ուրախութիւններով ժամանակ կ'անցնէին:

Արդ, մինչ Հայոց թագաւորը Տիգրոն էր, եւ, երկուքին մէջ մեծ սէր ու խաղաղութիւն կար, Պարսիկներու Շապուհ թագաւորը երկիւղ զգաց, մի՛ գուցէ Հայոց Արշակ թագաւորը իր սէրը ստէ, Յունաց կայսեր հետ միաբանի կամ իրմէ անջատուի, որովհետեւ չէր հաւատար անոր, թէ ան իր մտերմական սէրը կը պահէ եւ իր հետ կապած միաբանութեան ուխտին վրայ հաստատ կը մընայ: Ուստի կը պահանջէր, որ ան երդում ընէ եւ կը ստիպէր. «Համաձայնի՛ր, կ'ըսէր ան, եւ քու հաւատքով երդուիր, որ զիս չես խաբեր, չես դաւաճաներ»: Եւ Տիգրոն քաղաքէն քահանայ մը կանչեցին, բերել տուին Ս.Աւետարանը եւ Արշակ երդում ըրաւ, որ պիտի չդաւաճանէ իր ուխտին:

Բայց, յետագային, Արշակ երդումնադրուժ եղաւ:

Սակայն Շապուհ կրկին ներեց անոր, եւ, կամեցաւ միշտ անոր բարեկամութիւնը ունենալ: Այդ դէպքէն վերջ, Շապուհ, երբ յոյներուն դէմ պատերազմելու համար հրաւէր դրկեց Արշակին, ան ընդունեց: Այս մասին լսեցիք արդէն: Հայերը առանձին յաղթեցին յոյներուն:

ինչպէս կը տեսնուի, Արշակ Բ. յարափոփոխ քաղաքականութիւն մը կը վարէ, եւ, իր բարեկամութիւնը այս կամ այն կողմի հետ տրամաբանական հիմ մը չունի:

Ան իմաստութեամբ եւ դիւանագիտութեամբ պէտք է ապրէր դրացի երկու հզօր պետութիւններու միջեւ, ինչպէս ըրաւ իր յաջորդներէն Վռամշապուհ 400-421 թուականին: Վռամշապուհի 21 տարուան խաղաղ ու արդիւնաւոր թագաւորութիւնը ցոյց կու տայ, թէ ինչ բարիքներ կարող է ընել թագաւոր մը, որ իմաստութեամբ եւ զգուշութեամբ կ'առաջնորդէ իր ազգը, ճանշնալով իր փափուկ դրութիւնը դրացի հզօր պետութիւններու միջեւ: Արդարեւ, Վռամշապուհ իր խոհեմութեամբ այն աստիճան վստահութեան արժանացաւ Տիգրանի եւ Բիւզանդիոնի արքունիքներէն, որոնք անգամ մը, երբ պարսից եւ յունաց գործակալներուն միջեւ դժտութիւն ինկաւ Միջնագետքի մէջ, Հայոց թագաւորը յիշեալ պետութիւններուն հրակէրով, գնաց տեղւոյն վրայ երկու կողմերու վէճերը քննեց եւ գործը արագութեամբ լուծեց:

Սակայն, հակառակ ասոր, Արշակունի թագաւորները՝ Տրդատէն ետք, զուրկ էին խոհեմութենէ եւ աշարջութենէ՝ արտաքին քաղաքականութեան մէջ եւ արդար ու իմաստուն ընթացքէ՝ ներքին քաղաքականութեան մէջ: Անոնք կերուխումի եւ գուարձութիւններու ետեւէ ինկած, արեւելքցիներու յատուկ մոլութիւններու հետ խառնելով նաեւ Հռոմի սոսկալի վարքն ու բարքը: Իրենց կեանքը որսերու եւ կանանոցներու մէջ անցընելով, ո՛չ երկրին բարեկարգութեան խնամք կը տանէին, ո՛չ ալ անձամբ մասնակից կ'ըլլային այն պատերազմներուն, որոնց ասպարէզը Հայաստանն էր: Ճիշդ այս պատճառով արքունի հրամանները մեծ ազդեցութիւն չունէին փառամոլ նախարարներուն վրայ, որոնք մեծամեծ կալուածներով ու պատիւներով ճոխացած՝ մեծ ակնկալութիւն մը չունէին թոյլ եւ մեղկ թագաւորներէն եւ կը ձգտէին ինքնագլուխ ըլլալու: Ապաւինելով իրենց անառիկ բերդերուն, անոնք յաճախ իրարու հետ կը կռուէին եւ երբեմն ալ միաբանելով՝ թագաւորին դէմ, ու մինչեւ անգամ բացայայտ կերպով յոյներու եւ պարսիկներու կողմը կ'անցնէին, եւ անոնցմէ գանազան խոստումներ կ'առնէին:

Կեդրոնական իշխանութեան այս թուլութեան պատճառով, իւրաքանչիւր թագաւորին մահուան ժամանակ գահին վտանգ կը սպառնար, եւ եթէ Արշակունեաց թագաւորութիւնը Տրդատէն յետոյ դար մը կանգուն մնաց, այդ վերագրելու է դուրսէն՝ երկու դրացի պետութիւններու ոսոխութեան, որոնցմէ իւրաքանչիւրը աչք ունէր Հայաստանի վրայ, իսկ ներսէն՝ եկեղեցիի պաշտօնեաներ, որոնք յիշեալ հանգամանքէն օգտուելով, հայրենասէր իշխաններու աջակցութեամբ, կ'աշխատէին երկրին զօրութիւնները խարխլած գահին շուրջ կեդրոնացնել: Սակայն, անարժան թագաւորները չգիտցան գնահատել իրենց երախտաւորներուն ծառայութիւնները, եւ անոնց ծառայութեանց փոխարէն՝ կ'անարգէին զանոնք եւ կը սպաննէին իսկ:

Արշակ Բ. իր երկդեմի քաղաքականութեամբ, չկրցաւ ո՛չ Տիգրանի եւ ո՛չ ալ Բիւզանդիոնի բարեկամութիւնը շահիլ: Ընդհակառակն՝ երկու կողմերու թշնամութիւնը զրգուեց իր դէմ: Երկու անգամ կայսեր բարկութենէն ազատեցաւ, չնորհիւ Մեծն Ներսէս Կաթողիկոսին: Իսկ Պարսից թագաւորը նոյն

դժբախտութիւնը պիտի բերէր անոր գլխուն, որուն փորձը արդէն տեսչը էր իր հայրը՝ Տիրան՝ աչքերը վրայ տալով:

Արշակ Բ. ինքնահաւան եւ անբարտաւան էր:

Երբ Վաղենտինոս կայսրը նամակ ղրկեց իրեն որպէսզի հեռանայ պարսիկներէն եւ միանայ յոյներուն, ան նոյնիսկ չպատասխանեց անոր. այլ՝ ակռայ ցուցնելով արհամարհեց: Միեւնոյն ժամանակ Շապուհին կողմն ալ չանցաւ բոլոր սրտով, այլ՝ ինքնահաւանութեամբ կը պարծենար միշտ կերուխումներու ատեն եւ վարձկան երգիչներու բերնով, իբր թէ ինք Աքիլեսէն աւելի քաջ եւ արի է, եւ վախ չունի որեւէ մէկէն:

Արշակ Բ. ի ճակատագիրը որոշուած էր:

Ներքին զօրութիւնը, ոյժը եւ միաբանութիւնը, զորս պէտք էր ստեղծէր՝ դիմադրելու համար դրացի երկու հօր պետութիւններուն՝ չկարողացաւ: Այն իմաստուն եւ ճկուն քաղաքականութիւնը, զոր պէտք է ունենար՝ որպէս տկար ազգ ապրելու համար Բիւզանդիոնի եւ Տիգրոնի միջեւ՝ չունէր: Այդ դժուարացի ազգերը, գրեթէ միշտ իրարու մրցակից եւ թշնամի, կ'ուզէին Հայաստանը իրենց կողմը ունենալ, կարենալ յաղթելու համար մէկը՝ միւսին: Եթէ երկու պետութիւնները նմանցնենք կշիռքի մը, որուն նժարներուն վրայ դրուած ծանրութիւնները հաւասար կու գային միշտ. եւ, Հայաստանը որ նժարին վրայ ըլլար, այդ կողմը ծանր կը կշռէր: Ահա իրենց Հայաստանը սիրաշահելու կամ պատժելու դրդապատճառը: Հայաստանի հակումը մէկ կողմին՝ միւսին թշնամութեան առիթ կու տար, եւ, պատճառ կը դառնար պատերազմներու եւ արիւնահեղութեանց:

Իրապէս դժուար էր ապրիլ տուեալ պայմաններու մէջ, լաւ գիտնալով հանդերձ, երկու պետութիւններէն մէկուն օգնելու հետեւանքները: Սակայն, ինչպէս թուեցի վերը, Հայոց Թագաւորը ընդհանրապէս օգնած է մէկուն կամ միւսին, իսկ, երբ այդ երկու պետութիւններէն մէկը Հայաստանի վրայ արշաւած է, միւսը չէ կրցած օգնել, զբաղած ըլլալով իր պետութեան մէջ ստեղծուած ապստամբութիւնները ճզմելու գործով:

Ուրեմն, այս կացութեան մէջ ներքնապէս զօրանալ եւ կեդրոնական իշխանութիւնը զօրացնել պէտք էր, ուր կրկին ձախողեցաւ Արշակ Բ.:

Երկարատեւ պատերազմներէ յոգնած եւ սպառած նախարարները, ըստիպեցին թագաւորին, որ ընթացք տայ Շապուհի հրաւերին՝ Տիգրոն այցելելու, ուր ծուղակ մը լարուած էր Արշակ Բ. Հայոց Թագաւորին եւ Հայոց Սպարապետին՝ Վասակ Մամիկոնեանին դէմ: Արշակ ստիպուած մեկնեցաւ Տիգրոն, եւ, ինչպէս ծանօթ է, հոնկից ղրկուեցաւ Անյուշ բերդը, ցմահ բանտարկութեան:

Թէեւ մեր պատմահայր Մովսէս Խորենացին չէ յիշած, սակայն, աւանդութիւնը ըլլալով հանդերձ, հերոսական է եւ սքանչելի Արշակի դիրքը Տիգրոնի մէջ: Շապուհ հնարքի դիմեց, հասկնալու համար Արշակի անկեղծութիւնը:

Հոն պատահած դէպքը, ինչպէս կը յիշէ Փաւստոս Բիւզանդ գեղեցիկօրէն, հետեւեալն է.՝

Պարսից թագաւորը կը հրաւիրէ Արշակ Բ.ը Տիգրոն, որպէսզի տեսութիւն ունենան: Իսկ չգալու պարագային կրկին պատերազմի թող պատրաստը՝

ւի: Եւ իր խորին անկեղծութիւնը փաստելու համար բերաւ աղ, կնքեց Վարա՝
զակիր մատանիով եւ Արշակին ուղարկեց:

Արշակ կամայ ահամայ գնաց, Շապուհ վհուկներու, աստղահամաններու
նուէր եւ քաղեաններուն եւ անոնց թելադրանքով բերել տուաւ Հայաստանէն
հող եւ ջուր: Եւ երթեւեկելով, երբ հայկական հողին վրայ կը կոխէր Արշակ
առիւծ կը դառնար եւ կ'արհամարհէր Շապուհը, իսկ երբ պարսկական հողին
վրայ կը կոխէր, կը մեղմանար եւ գուլթ կը հայցէր: Այսպէս ճեմելով, միշտ
հայ հողի վրայ Արշակ կ'ըմբոստանար եւ կը նախատէր Շապուհը, իսկ պարսից
հողին վրայ կը զղջար իր ըսածներուն վրայ, եւ այս մինչեւ երեկոյ:

Սքանչելի է մանաւանդ հետեւեալ դէպքը:–

«Երբ երեկոյ եղաւ, Պարսից թագաւորը ընթրիքի ժամը հասաւ. սովո՞-
րութիւնն այնպիսին էր, որ Հայոց թագաւորի համար բազմելու տեղ կը պատ-
րաստէին միեւնոյն տախտի վրայ, իրար մօտ, օրէնք էր, որ Պարսից թագաւո-
րըն ու Հայոց թագաւորը մի տախտի վրայ կը բազմէին, մէկ գահի վրայ –
իսկ այդ օրը նախ պատրաստեցին բոլոր այնտեղ գտնուած թագաւորներու
բազմելու տեղերը, եւ, ամէնէն վերջը, բոլորէն վար, Արշակի բազմելու տեղ
պատրաստեցին, որուն տակ հայկական հող դրած էին: Նախ բոլորը բազմեցան,
ըստ իրենց աստիճաններուն, յետոյ բերին եւ բազմեցուցին Արշակին: Ան
կարճ ժամանակ մը նստաւ մոռութիւնները կախած, յետոյ ոտքի կեցաւ ու ըսաւ
Շապուհ թագաւորին.– «Իմս է այդ տեղը, որտեղ դուն բազմած ես. ելի՛ր այդ
տեղէն, որ ես այդտեղ բազմիմ, որովհետեւ մեր (Արշակունիներուն) ազգի տե-
ղը եղած է այդ: Իսկ եթէ ես իմ աշխարհը դառնամ՝ քեզմէ մեծ վրէժներ կը
պահանջեմ»:

Կը տեսնէք հայ հողին ոյժը: Որքան երեւակայական ըլլայ այս պատ-
մութիւնը, որուն մասին պատմական ուրիշ որեւէ աղբիւր չ'անդրադառնար,
կը փաստէ Արշակ Բ-ի հայրենասիրութիւնը եւ հպարտութիւնը:

Արշակ Բ-ի կեանքը վերջ կը գտնէ անձնասպանութեամբ Անյուշ բեր-
դին մէջ:

Հայոց Արշակ Բ. Արշակունի թագաւորը եղաւ քաջ, յանդուգն եւ հայ-
րենասէր թագաւոր մը, որ աշխատեցաւ Հայաստանի մեծութեան եւ անկա-
խութեան համար, սակայն, իրեն պակասեցաւ դիւանագիտութիւնը:

Միմիայն քաջութեամբ կարելի չէ յաղթել եւ զօրաւոր մնալ: Կարեւոր
է գլխաւորաբար դիւանագիտութիւն, խորամանկութիւն եւ ինչու չէ նաեւ
նենգութիւն, մնայու համար հօր եւ անասան: Սակայն, ոչ թէ միայն Արշա-
կին պակասած են անոնք, այլ գրեթէ մեր բոլոր թագաւորներուն: Այդ չունե-
ցանք մեր նորագոյն պատմութեան մէջ, եւ, չունինք նաեւ այսօր:

Անցեալի մեր սխալներէն պէտք է օրինակուինք, եւ ըստ այնմ յառա-
ջանանք դիւանագիտական նոր ուղիներէ, որպէսզի, օր մը իրագործուին մեր
ազգին բոլոր իտէալներն ու երազները:

Մինչ այդ պատրաստուած դիւանագէտներու կարիքը չափազանց զգա-
լի է:

Առաքինի ազգ մը եղած ենք հազարամեակներէ ի վեր, 2000 տարի ա-
ռաջ մեր թիւը եղած է վեց միլիոն, եւ, այսօր կրկին վեց միլիոն ենք, փոխա-

*Նաև ըլլալու 50 միլիոն: Եւ այս գլխաւորաբար՝ դիւանագէտ ազգ մը մեր չըլլալուն հետեւանքով եղած է:
Բայց եւ այնպէս կեցցէ՛ առաքինի հայ ազգը:*

22 Օգոստոս 1966
Յալէպ



**Չախէն աջ՝ Սասունցիներ
մշակոյթի նախկին նախարար Յովիկ Յովսէյեանի եւ
բանաստեղծ-պատմաբան Սասուն Գրիգորեանի հետ**

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ
18 Փետրուար 1921

Առաջին համաշխարհային պատերազմի թոհուբոհին ընթացքին, հայ ժողովուրդը կորսնցուց իր թիւին գրեթէ կէսը եւ իր հայրենիքին 9/10ը:

Թուրքը յաջողեցաւ իր ոճրային ծրագիրը գործադրել, նպատակ ունենալով միանգամայն ընդմիջտ ազատիլ Հայկական Հարցէն:

Սակայն, հայ ժողովուրդի բազմադարեան պատմութեան ընթացքին եզակի եղող այս Մեծ Եղեռնէն, սկսած 24 Ապրիլ 1915ին, հազիւ երեք տարի վերջ, հայ ժողովուրդը փիւնիկի նման մոխիրներէն յարութիւն առաւ եւ 28 Մայիս 1918ին իր անկախութիւնը յայտարարեց՝ Արեւելեան Հայաստանի մէջ:

Հայաստանի Հանրապետութեան 2.5 տարիներու ընթացքին, կազմուեցաւ հայկական բանակ, կառավարութիւն եւ խորհրդարան: Վեց դարերէ ի վեր իր անկախութիւնը կորսնցուցած հայ ժողովուրդը սկսաւ վերաշինել քանդուած, կեղեքուած եւ գաղթական արեւմտահայերով ողողուած հայրենիքը:

Մեր պատմութեան ընթացքին, յաճախ ենթարկուած ենք թաթար, մոնկոլ, պարսիկ, ասորի, յոյն, արաբ, հռոմէացի եւ այլ ազգերու տիրապետութեան կամ յարձակումներուն, գլխաւորաբար մեր երկրին աշխարհագրական դիրքին հետեւանքով:

Նոյն պատճառով էր թրքական յարձակումը մանուկ Հայաստանին վըրայ, որպէսզի բնաջնջելով հայ ժողովուրդը, կարենան իրագործել իրենց բանթուրանական ծրագրերը:

13 Սեպտեմբեր 1920ին, թրքական բանակը յարձակեցաւ Հայաստանի վրայ եւ հայ ժողովուրդի գոյութիւնը կրկին վտանգուեցաւ:

Մայիսեան ապստամբութեան հետեւանքով զգալի կերպով տկարացած Հայաստանը, մնացած էր կրկին առանձին իր դարաւոր թշնամիին առջեւ, որուն օգնութեան փութացած էին սովետները՝ զէնքով եւ ոսկիրով:

Տեղի ունեցած բանակցութիւնները թուրքերու եւ սովետներու հետ, միշտ աննպաստ արդիւնքով վերջացած էին:

Ռուսերը կ'ուզէին Հայաստանը խորհրդայնացնել, իսկ թուրքերը կը սպառնային մեր գոյութեան: Արդէն գրաւուած էին Կարսը, Սարըղամիշը եւ Ալեքսանդրապոլը:

Հայաստանի Հանրապետական կառավարութիւնը ընտրեց երկու չարեաց փոքրագոյնը, եւ, ընդունեց երկիրը խորհրդայնացնել:

2 Դեկտեմբեր 1920ին, Ռուսաստանի ներկայացուցիչներ՝ Լեզրանի եւ Մդիվանի հետ կատարուող բանակցութիւնները յանգեցան հետեւեալ համաձայնութեան.

1.- Հայաստանը կը յայտարարուի անկախ ընկերվարական խորհրդային հանրապետութիւն:

2.- Մինչեւ Հայաստանի խորհուրդներու համագումարի հրաւիրումը, կը կազմուի ժամանակաւոր Ռազմա-Յեղափոխական Կոմիտէ, որուն կ'անցնի Հայաստանի բովանդակ իշխանութիւնը:

3.- Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնը կ'ընդունի, որ Հայաստանի Ընկերվար Խորհրդային Հանրապետութեան հողերուն մէջ անվիճելի կերպով կը մտնեն՝ Երեւանի նահանգը իր բոլոր գաւառներով, Կարսի նահանգի մէկ մասը, որ զինուորական տեսակէտով կ'ապահովէ երկաթուղիի տիրապետութիւնը՝ Ջաջուռ կայարանէն Արաքս կայարանը, Գանձակ նահանգի Ջանգեզուր գաւառը եւ Ղազախ գաւառի մէկ մասը, Օգոստոս 10ի համաձայնութեան սահմաններուն մէջ, եւ Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետութեան տակ էին մինչեւ 1920 Սեպտեմբեր 28ը:

4.- Հայկական բանակի հրամանատարական կազմը չ'ենթարկուիր պատասխանատուութեան այն գործերու համար, որ կատարած է գտնուելով բանակի շարքերուն մէջ, մինչեւ Հայաստանի Խորհրդային իշխանութեան յայտարարումը:

5.- Դաշնակցութեան եւ ուրիշ ընկերվարական կուսակցութիւններու (Ս. Յ., Ս. Դ.) անդամները ոչ մէկ հալածանքի պիտի ենթարկուին կուսակցութեան պատկանելու եւ համայնավար կուսակցութեան դէմ մղուած կռիւններուն մասնակցելու ու Խորհրդային Հայաստանի յայտարարութենէն առաջ կատարած գործերուն համար:

6.- Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի մէջ կը մտնեն հինգ անդամներ համայնավար կուսակցութեան կողմէ նշանակուած եւ երկու անդամ ձախ դաշնակցականներու խմբակէն՝ համաձայնելով համայնավար կուսակցութեան հետ:

7.- Ռուսաստանի Խորհրդային կառավարութիւնը միջոցներ ձեռք կ'առնէ անմիջապէս կեդրոնացնելու Հայաստանի Ընկերվարական Խորհրդային Հանրապետութեան պաշտպանութեան համար անհրաժեշտ զինուորական ուժեր:

8.- Սոյն համաձայնագիրը ստորագրուելէ յետոյ, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը կը քաջուի իշխանութենէ: Իշխանութիւնը ժամանակաւոր կերպով, մինչեւ Յեղափոխական Կոմիտէի գալլը, կ'անցնի զօրահրամանատարութեան, որու գլուխ կը գտնուի Դրօն: Խորհրդային Ռուսիոյ կողմէ Հայաստանի զօրահրամանատարութեան կրից կոմիսար կը նշանակուի ընկ. Սիլինը:

Ռուսիոյ կողմէ ստորագրեց լիազօր ներկայացուցիչ՝ Լեգրան, Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմէ՝ Դրօ եւ Տէրտէրեան:

Միաժամանակ Լեգրանի եւ կառավարութեան միջեւ համաձայնութիւն կայացաւ, որ Դեկտեմբեր 2ի գիշերուայ ժամը 12ին իշխանութիւնը յանձնուի զինուորական նախարար Դրոյին եւ ան, խորհրդական ունենալով Լեգրանի ներկայացուցիչ Սիլինին, կառավարէ երկիրը, մինչեւ Յեղկոմի ժամանումը Ատրպէյձանէն:

Նոյն իմաստով խմբագրուեցաւ ու հրատարակութեան տրուեցաւ նաեւ հետեւեալ աթիւր, որ հեռագրուեցաւ գաւառական իշխանութիւններուն ու զօրամասերու պետերուն ի գործադրութիւն եւ փակցուեցաւ Երեւանի պատերուն:

ԱՔԹ

«Ի նկատի ունենալով արտաքին հանգամանքներ, շնորհիւ երկրին մէջ ստեղծուած կացութիւնը՝ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը, իր 1920 Դեկտեմբեր 2ի նիստին որոշեց՝ հրատարակել իշխանութենէն եւ յանձնել զինուորական եւ քաղաքացիական բովանդակ իշխանութիւնը զօրաբանակի ընդհանուր հրամանատարին, այդ պաշտօնին նշանակուեցաւ ռազմական նախարար Դրօն:

Նախարարներու խորհուրդի նախագահ՝ Ս. Վրացեան, նախարարներ՝ Ա. Յովհաննէսեան, Արշամ Խոնդկարեան, Հ. Տէրտէրեան, Դ. Կանայեան:

Այսպէսով, Հայաստան Խորհրդային դարձաւ բոլորովին խաղաղ կերպով, առանց որեւէ յեղափոխութեան, առանց մէկուն քիթը արիւննելու: Սակայն, ո՛չ հայ ժողովուրդի յօժար կամքով, այլ արտաքին ուժերու ճնշման տակ, 1920 Դեկտեմբեր 2ին Հայաստանի մէջ տեղի ունեցաւ վարչաձեւի փոփոխութիւն. ժողովրդավար իրաւակարգի տեղը բիրտ ուժով բռնատիրական իշխանութիւնը հաստատուեցաւ: Խորհրդարանական կառավարութեան յաջորդեց Հայաստանի յեղկումը, ռուսական սուլիներու պաշտպանութեան տակ:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը, երկիրը յանձնելով Բոլշեւիկներուն, կը յուսային որ.

1.- Վերջ կը գտնէ երկրին մէջ պատերազմի հետեւանքով առաջ եկած քայքայումը:

2.- Վերջ կը գտնէ պատերազմը, եւ թուրքը կը հեռանայ Հայաստանի սահմաններէն:

3.- Խորհրդային Ռուսաստանի միջամտութեամբ բարեկամական յարաբերութիւններ կը հաստատուին Հայաստանի եւ թուրքիոյ միջեւ. Խորհրդային Ռուսաստանի աջակցութեամբ, այս կամ այն ձեւով կը լուծուի թրքահայկական հարցը:

4.- Կը վերագտնուի երկրին ներքին անդորրութիւնը եւ ժողովուրդը կրկին հնարաւորութիւն կը ստանայ լծուելու խաղաղ ու շինարար աշխատանքի:

Բոլշեւիկները եւս իրենց հերթին, պաշտօնական թէ անպաշտօն շուսյլ խոստումներով կ'ուժեղացնէին այս տրամադրութիւնները:

Այսպիսի պայմաններով եւ տրամադրութեամբ ու յոյսերով Հայաստանի Հանրապետութիւնը դարձաւ Հայաստանի Ընկերվարական Խորհրդային Հանրապետութիւն, 1920 Դեկտեմբեր 2ին:

Բոլշեւիկները առանց ամչնալու, մինչեւ այսօր կը պնդեն եւ կը յայտարարեն, թէ Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցաւ Նոյեմբեր 29ին՝ Հայաստանի գիւղացիութեան եւ բանուորութեան ապստամբութեան հետեւանքով: Նոյեմբեր 29ին, ինչպէս յայտնի է, Հայ Բոլշեւիկներու փոքրաթիւ խմբակ մը մտաւ Ատրպէյճանի սահմանակից Իջեւան գիւղը եւ ցրուեց Բաքուէն բերուած թուղցիկներ, ուր կը յայտարարուէր, թէ դաշնակցական կառավարութիւնը տապալուած է Հայաստանի մէջ, եւ, անոր տեղը եկած խորհրդային իշխանութիւն. մինչ նոյն այդ միջոցին Խորհրդային Ռուսաստանի լիազօր ներկայացուցիչը Երեւանի մէջ խաղաղ բանակցութիւններ կը վարէր «դաշնակներու» կառավարութեան հետ: Երեք օր վերջ, Դեկտեմբեր 2ին միայն, Հայաստանի կառավարութեան եւ Խորհրդային Ռուսաստանի միջեւ կնքուած համաձայնութեան հիման վրայ, Հայաստանը յայտարարուեցաւ խորհրդային: Ինչպէս ըսի, ո՛չ մէկ զնդակ չարձակուեցաւ, ո՛չ մէկ ապստամբութիւն տեղի չունեցաւ, ո՛չ մէկի քիթը չարիւնեցաւ, իսկ Հայաստանի գիւղացիութիւնն ու բանուորութիւնը լուռ էր: Լուռ էր ու կսկիծը սրտին՝ կ'ողբար հայրենիքի կործանումը: Եւ կը սպասէր «խաչապաշտ» ռուսին:

Կը սպասէր, որ ռուսը գայ, բայց ռուսի փոխարէն Հայաստան մուտք գործեց Յեղկոմը եւ հետը քանի մը հարիւր կարմիր բանակայիներ ու հայ բոլշեւիկներ՝ շատերը ծանօթ Մայիսեան խռովութիւններէն իրենց զանազան արարքներով – Սարգիս Կասեան, Ասքանազ Մուսեան, Աւիս Նուրիջանեան, Աշոտ Յովհաննէսեան, արիւնկզակ Աթարբէգեան եւ ուրիշներ: «Մուտք գործեց», որովհետեւ Յեղկոմը իսկապէս ինքզինքը կը նկատէր իբրեւ յաղթական կերպով մուտք գործող ոյժ մը, որ իր ոտքերուն տակ պատրաստ էր տրորելու պարտուած թշնամիին:

Հակառակ որ ժողովուրդը եւ նախկին իշխանութեան մարդիկ խիստ բարեացակամ վերաբերում ցոյց տուին եւ պատրաստութիւն յայտնեցին ամէն բանով աջակցելու նոր կառավարութեան, Յեղկոմը առաջին օրէն իսկ թշնամական դիրք բռնեց դէպի բոլոր ոչ-բոլշեւիկ տարրերը եւ կը վերաբերէր ճիշդ այնպէս, ինչպէս կը վերբերին թշնամի երկիրը մտնող նուաճող բարբարոս ոյժ մը:

Լեգրանի հետ ստորագրուած դաշնագիրը չեղեալ յայտարարուեցաւ: Դեկտեմբեր 6ին կազմուեցաւ եւ անմիջապէս գործի անցաւ Չեկան, ու սկսան ձերբակալութիւնները: Իրար ետեւէ բանտարկուեցան նախկին վարչապետ Համօ Օհանջանեան, նախկին նախարար Ռ. Դարբինեան, Խորհրդարանի անդամներ բժ. Յ. Տէր Դաւթեան, Վահան Նաւասարդեան, Վ. Բաբայեան, Գ. Վարչամեան, Երեւանի քաղաքային խորհուրդի անդամ Ա. Աստուածատրեանը, Սոցեալ Դեմոկրատ պարագլուխ Բաշխի Իշխանեան, խմբապետ Համազասպը եւ ուրիշներ: Քիչ վերջ բանտարկուեցան Խորհրդարանի նախագահ Ա. Սահակեանը, առողջապահութեան եւ գիւղատնտեսութեան նախարարներու օգնականներ բժ. Յ. Տէր Միքայէլեան եւ Թ. Տոչեանը, Խորհրդարանի անդամ բժ. Ա. Ղազարեանը եւ ուրիշներ: Դեկտեմբերի վերջերը արձանագրութեան են-

Թարկուեցան Հայկական Բանակի բոլոր սպաները եւ 70 ընտիր զինուորականներ անմիջապէս աքսորուեցան Պաքու:

Յունուար 10ին Ռուսաստան աքսորուեցաւ Դրօն իր զինակից սպաներու հետ:

Յունուար 24ին, Ռուսաստան աքսորուեցան Հայկական Բանակի մնացած սպաները, 1200 հոգի, որոնց մէջ էին սպարապետ Նազաբէգեանը, զօրավարներ՝ Սիլիկեանը, Հախվերտեանը եւ Ղամազեանը: Ձմրան դաժան ցուրտին եւ ձիւնին, չրջապատուած ռուսական հրացանաւոր ու զնդացիրաւոր պահակներով, հետիոտն, ժողովուրդը ընդհանուր սուգի մէջ ձգելով, Հայկական Բանակի զինուորականները քշուեցան անծանօթ ուղղութեամբ:

Երկրի բոլոր կողմերը խուզարկութիւններ եւ անվերջ ձերբակալութիւններ տեղի կ'ունենային: Հայաստանի բանտերը բերնէ-բերան լեցուեցան կալանաւորներով: Բացի վերոյիշեալներէն բանտարկուեցան Լեւոն Շանթը, Յովհաննէս Քաջագունին, Նիկոլ Աղբալեանը, Երեւանի քաղաքապետ Մ. Մուսինեանը, եւ ուրիշ հարիւրաւորներ: Բանտարկեալները կը պահուէին անտանելի պայմաններու մէջ, զնդակահարութեան մշտական սպառնալիքի տակ:

Միեւնոյն ժամանակ, Երեւանի եւ ամբողջ երկրի մէջ կը կատարուէին անկանոն եւ անհաշիւ բռնագրաւումներ: Կը գրաւուէին ամէն ինչ - բնկարան, կարասիներ, հագուստ, ուտելիք, ձի, տաւար, հաւ ու հաւկիթ, մինչեւ իսկ թել ու ասեղ: Ժողովուրդը Ռուսաստանէն օգնութիւն կը սպասէր, այժմ իրմէ կը խլուէր հացի վերջին պատառը եւ կ'ուղարկուէր Ռուսաստան: Բեռնակիր ինքնաշարժերը Հայաստանէն «ընկեր Լենինին» կամ «Կարմիր Բանակին» նուէր կ'ուղարկէր պետական պահեստներէն եւ ժողովուրդէն բռնագրաւուած պաշարը - սպիտակ ալիւր, խտացուած կաթ, քաքաօ, շաքար, կօշիկի կաշի, հագուստեղէն, եւայլն:

Թէ ինչ կը կատարուէր Հայաստանի մէջ այդ օրերուն, շատ ցայտուն կերպով նկարագրած է Բոլշէկ պատմաբան Բորեանը: Խօսքը տանք իրեն.

«Յեղկոմը,- կը գրէ ան,- ձեռնարկեց անխնայ եւ վճռական բռնագրաւումներու, առանց խտրութեան եւ առանց դասակարգային սկզբունքի, առանց հաշուի առնելու գիւղացիութեան ընդհանուր տնտեսական դրութիւնը եւ նրա հոգեբանական վիճակը: Բռնագրաւումը տեղի էր ունենում անկազմակերպ ձեւով, ծրագրուած եւ յեղափոխական - դասակարգային բնոյթ չունէր եւ կատարում էր անհարկի բռնութիւններով: Առանց կազմակերպուած ու կարգապահ մեքենայի, առանց նախնական քարոզչական պատրաստութեան եւ առանց հաշուի առնելու երկրի իւրայատուկ պայմանները, Յեղկոմը կարգախօս է ուղղում՝ բռնագրաւել եւ պետականացնել պարէնը քաղաքներում մասնաւոր մարդկանցից եւ հացի պաշարը գիւղացիներից: Անկարգ կերպով գրաւում ու պետականացում էր ամէն ինչ - զինուորական հագուստներ, արհեստաւորների գործիքներ, մասնաւոր եւ ամէն տեսակ բրինձի աղօրիներ, անխրտիր բոլոր ջրաղացները, սափրիչի գործիքներ, մեղուի փեթակներ, սպիտակեղէն, հագուստ, քաղաքացիներու տան կահ-կարասիները, առանց նկատի ունենալու նրանց դասակարգային վիճակը, եւայլն: Բնական է, որ այդ բռնի միջոցները եղան երկրի ապստամբութեան հիմնական պատճառները: Ու Բոր-

եանը մէկիկ մէկիկ կը թուէ Յեղկոմի հանած հակաօրինական հրամանագրերը եւ կատարած ապօրինին գործերը:

Հոս վկայութեան կ'ուզեմ բերել նաեւ Հայաստանի անդրանիկ վարչապետ Յ. Քաջագունիի կարծիքը, առնելով իր յուշերէն.

«Անցել էր մօտ երկու ամիս այն օրից, երբ Բոլշեւիկները մտել էին Հայաստան, կազմակերպուել եւ հաստատուել էին:

«Հայկական Եռագոյն դրօշակը եւ «Մեր Հայրենիք»ը իբրեւ հակայեղափոխական սիմբոլներ վերացուել էին ասպարէզից: Նրանց փոխարինել էին պրոլետարական կարմիրն ու պրոլետարական «ինդերնացիօնալը»:

«Կարմիր Բանակի գինուորները տեղաւորուել էին քաղաքացիների բնակարաններում, ուտում էին նրանց հացը եւ վառում էին նրանց վառելիքը:

«Պաշտօնեաներն ու կուսակցական գործիչները գրաւել էին քաղաքի լաւագոյն տները, կահ-կարասիները, անկողինները:

«Յեղկոմը հրատարակում էր ամէն օր դեկրէտներ ու հրամաններ: Չեկաները անսպառ եռանդով կատարում էին իրենց փրկարար գործը այնպիսի մեծ եռանդով, որ Հայաստանի բանտերում այլեւս ասեղ ձգելու տեղ չէր մնացել»:

Յ. Քաջագունի իր յուշերուն մէջ երկարօրէն կը թուէ Բոլշեւիկներու կատարած խուժուժութիւնները եւ ոճիրները, որոնց յիշատակութիւնը հոս, մեզմէ պիտի խլէ երկար ժամանակ:

Մէկ խօսքով, ինչպէս կ'ըսէ ժողովրդային առածը, դանակը ոսկորին հասած էր: Անշնչելի մթնոլորտը կը սպառնար խեղդել տառապած եւ խաղաղութեան կարօտ հայ ժողովուրդը:

Յեղկոմի որդեգրած քաղաքական ուղղութիւնը եւս հանդէպ թուրք-իոյ, վերջացաւ անփառունակ ձախողանքով:

Թուրքերը շարունակեցին իրենց ջարդարար ընթացքը հայկական գիւղերուն մէջ, որոնք գրաւուած էին իրենց կողմէ, ինչպէս նաեւ սահմանամերձ գիւղերուն մէջ:

Թուրքերու կողմէ գրաւուած հայկական հողերը տակաւին կը մնային գրաւուած եւ ժողովուրդը ենթակայ բնաջնջումի: Քեազիմ Գարապաքիրի զօրքերը անպատիժ քար ու քանդ կ'ընէին հայկական գիւղերը, իսկ անդին, Մոսկուայի մէջ Մուսթաֆա Քեմալի ներկայացուցիչները Չիչերինի հետ բանակցութիւններ կը վարէին, որոնք վերջի վերջոյ յազեցան 1921 Մարտ 15ի բարեկամութեան եւ եղբայրական դաշնագրութեանը, որ Հայաստանի համար անհամեմատ եւ աւելի ծանր պայմաններ կը պարունակէր, քան նոյնիսկ Ալեքսանդրապոլի դաշնագիրը:

Այսպէս, Ալեքսանդրապոլի դաշնագրով Կարսի նահանգը եւ Սուրմալուն վիճելի կը համարուէին միջեւ 3 տարի, եւ այդ ժամանակաշրջանին Հայաստանի կառավարութիւնը, ազատ էր հանրաքուէ կատարելու՝ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգներուն: Մոսկուայի դաշնագրով այդ նահանգները վերջնականապէս եւ առանց պայմանի թուրքիային կը յանձնուէին:

Ալեքսանդրապոլի դաշնագրով Շարուրը եւ Նախիջեւանը ժամանակաւորապէս կ'օժտուէին ինքնավարութեամբ՝ գտնուելով թուրքիոյ հովանաւոր:

րութեան տակ, մինչեւ որ որոշուի անոնց բախտը: Մոսկուայի դաշնագրով, Շարուրն ու Նախիջեւանը կը յանձնուէին Ատրպէյճանին, եւ այս վերջինը իրաւունք չունէր փոխանցելու երկրորդ կողմի մը, այսինքն՝ Հայաստանին:

Ահա այս ներքին եւ արտաքին առարկայական եւ ենթակայական պատճառները, կարճ ժամանակամիջոցի մը մէջ, ընդհանուր հիասթափութիւն եւ զայրոյթ առաջ բերին հայ ժողովուրդի մէջ, եւ, ի վերջոյ, յանդեցան համաժողովրդական տարերային ապստամբութեան. Փետրուար 18ին:

Հայաստանի խորհրդայնացումէն մինչեւ Փետրուար 18, երկու եւ կէս ամիս բաւական եղաւ, որպէսզի Յեղկոմի իշխանութիւնը բոլորովին վարկաբեկուի ժողովուրդի աչքին եւ Հայաստանի մէջ տեղի ունենայ յեղափոխութիւն, խորհրդային կարգերու դէմ եղած առաջին ապստամբութիւնը:

Բոլշեւիկները յամառօրէն կը պնդեն, թէ այս յեղափոխութիւնը նախապատրաստուած էր Դաշնակցութեան կողմէ: Ծիծաղելի է: Մենք կարգ մը փաստերով ծանօթացուցինք Բոլշեւիկներու վայրագ գործունէութիւնները եւ ձախողութիւնները:

Որեւէ առողջ տրամաբանութիւն չի կրնար ընդունիլ, որ 2.5 ամիս առաջ, առանց դիմադրութեան, իշխանութիւնը Բոլշեւիկներուն յանձնող Դաշնակցութիւնը, այն ժամանակուան պայմաններուն ներքեւ, չէր կրնար իշխանութիւնը վերագրաւելու նպատակ ունենալ: Եթէ Դեկտեմբեր 2ին իշխանութիւնը Բոլշեւիկներուն փոխանցելէ վերջ, եթէ Դաշնակցութիւնը մտածէր շուտով իշխանութիւնը խլել Յեղկոմի ձեռքէն, ինչ իմաստ ունէր սպասելը մինչեւ Փետրուար 18ը: Ան ինչո՞ւ թոյլ պիտի տար, որ իր գործօն ուժերը հեռանան կամ աքսորուին Հայաստանէն:

Դեկտեմբեր 1ին, Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն որոշեց, որ քաղաքացիական բարդութիւններու առիթ չտալու համար, Բիւրօյի անդամները հեռանան երկրէն, եւ Հայաստան մնայ միայն Սիմօն Վրացեանը, իբրեւ կուսակցութեան ներկայացուցիչ եւ վերջին կառավարութեան նախագահ: Բիւրօյի նոյն որոշումով, Հայաստանէն պէտք է հեռանային կարգ մը նախկին նախարարներ եւ պատասխանատու գործիչներ, որոնց ներկայութիւնը երկրին մէջ Յեղկոմի հաճելի կրնար չլինիլ: Եւ նոյն օրը Երեւանէն հեռացան, նախկին զինուորական նախարար՝ Ռուբէն Տէր Մինասեանը, գաղտնի ոստիկանութեան պետ՝ Լեւոն Քալանթարեանը եւ ուրիշներ: Յաջորդ օր, Վրաստանի վրայով արտասահման անցնելու համար, Երեւանէն մեկնեցան նախկին վարչապետ՝ Համօ Օհանջանեանը, նախկին նախարար՝ Ա. Չիլինգարեանը (Ռ. Դարբինեան), նախկին նախարար՝ Ս. Արարատեանը, Խորհրդարանի անդամ՝ բժ. Յ. Տէր Դաւթեանը, Վ. Նաւասարդեանը, Երեւանի պարէտ՝ Ա. Շահխաթունին եւ ուրիշներ, որոնց մէկ մասը միայն կրցաւ հասնիլ Թիֆլիս, իսկ միւսները Համօ Օհանջանեան, Ա. Չիլինկիւրեան, բժ. Յ. Տէր Դաւթեան, Վ. Նաւասարդեան եւ այլքըն, ձերբակալուեցան, վերադարձուեցան նուաստացուցիչ պայմաններու ներքեւ եւ նետուեցան Երեւան բանտը: Երբ Դաշնակցութիւնը իշխանութիւնը վերագրաւելու մասին մտածէր, թոյլ կու տա՞ր, որ նման դէպքեր տեղի ունենային, երբ դեռ ինքն էր իշխանութիւնը:

Դաշնակցութիւնը այնքան կարճամիտ էր, որպէսզի թոյլ տար, որպէսզի Հայաստանի ժողովուրդի պաշտամունքի առարկան՝ Դրօն իր լաւագոյն ըս-

պաներու հետ հեռացուէր Հայաստանէն, իբրեւ պատանդ Բոլշեւիկներու ձեռքը, կամ թոյլ կու տար, որ Հանրապետական Բանակի 1200 սպաները աքսորւէին երկրէն, կամ հայ մտաւորականութեան ամենաընտիր դէմքերը բանտարկուէին անարգել: Դաշնակցութիւնը կրնար այդ բոլորին առաջը առնել, սակայն, կը խուսափէր, որպէսզի երկիրը քաղաքացիական կռիւներու ասպարէզ չդառնայ: Մէկէ աւելի անգամներ Ս. Վրացեանը, կուսակցութեան ներկայացուցչի եւ նախկին վարչապետի հանգամանքով, դիմումներ ըրաւ Չեկալի պետ Աթարբէգեանին, Յեղկոմի նախագահ Կասեանին, անգամ Ասքանազ Մըռաւեանին, զինուորական Կոմիսար Աւիսին, յորդորելով որ վերջ տան հալածանքներուն, այլապէս երկիրը կրնար մատնուիլ քաղաքացիական կռիւներու քառսին: Նման առաջարկներ ներկայացուց նաեւ Հայաստանի անդրանիկ վարչապետ Յովհաննէս Քաջագնունին: Ամէն անգամ ալ պատասխանը եղաւ նոյնը. «Հայաստանը պէտք է անցնի քաղաքացիական կռիւներու բովէն, պէտք է պուրժուազիայի արիւնը հոսի պրոլետարիատի վերջնական յաղթանակը ապահովելու համար»: Եւ արիւնը հոսեցաւ: Դրոյի աքսորէն, բայց մանաւանդ, Հայաստանի Բանակի սպաներու տաժանալի պայմաններու մէջ Ռուսաստան տարուելէ վերջ, երբ Հայաստանի բանտերը եւ Չեկայի զնտանները բերնէ բերան լեցուած էին բանտարկեալներով, երբ բռնագրաւումները եւ ապօրինութիւնները ծայրայեղ աստիճանի հասան, երկրի բոլոր կողմերը ժողովուրդը յուսահատութեան մատնուած՝ սկսաւ վրդովումի նշաններ ցոյց տալ: Տեղի ունեցան իշխանութիւններուն ընդդիմութեան դէպքեր, նոյնիսկ բռնագրաւումներու կամ ձերբակալութիւններու համար եկող կառավարական գործակալներու սպանութիւններ: Կարգ մը վայրերու մէջ, գաւառներէն առաջ եկան գաղտնի խմբակներ, որոնց գլուխը անցան բանտարկութենէն խուսափած տեղական գործիչներ, խմբապետներ, կամ զինուորականներ:

Երեւանի մէջ եւս կազմուած էր մարմին մը՝ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ անունով: Այդ բոլորը գաղտնի, իրարմէ անկախ կազմուած խմբակներու նպատակն էր ժողովուրդի պաշտպանութիւնը Յեղկոմի գործակալներու բռնութիւններէն: Զուտ ժողովրդական, տարերային շարժում էր՝ ինքնապաշտպանութեան բնագոյն մղուած: Ժողովրդական ցասումի բաժակը առատ լեցուած էր եւ առիթ էր պէտք, որպէսզի պռութկար:

Առիթը չուշացաւ: Փետրուար 9ի լոյս 10ի գիշերը տեղի ունեցան զանգուածային նոր ձերբակալութիւններ: Ամբողջ գիշեր, փողոցները հսկողութեան տակ առնուեցան եւ ինքնաշարժներով եւ հետիոտն, խիստ հսկողութեան տակ Չեկայի շէնքէն փոխադրուեցան աւելի քան 200 ձերբակալուածներ:

Անոնց մէջ էին Հայաստանի անդրանիկ վարչապետ եւ Խորհրդարանի փոխ-նախագահ՝ Յովհաննէս Քաջագնունին, նշանաւոր գրող եւ Խորհրդարանի երկրորդ փոխ-նախագահ Լեւոն Շանթ, ականաւոր քննադատ՝ Նիկոլ Աղբալեան եւ բազմաթիւ ուրիշներ:

Երեւանը սուգի մէջ էր: Ժողովուրդի վրդովումը սահման չունէր: Այդ ձերբակալութիւններու հետեւանքով երկրի զանազան կողմերը իրարմէ անկախ, ծայր տուին տարերային ըմբոստացումներ: Տեղական այս շարժումները հետզհետէ միացան Երեւանի Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի միջոցաւ եւ ընդհանուր բնոյթ ստացան:

Ապստամբութեան ազդանշանը տուին Արագածի փէշերուն բնակութիւն հաստատած Սասունցիները, որոնք անուանի խմբապետներու ղեկավարութեան տակ՝ գիւղերէն դուրս քշեցին Յեղկոմի գործակալները եւ գրաւեցին Աշտարակը, ապա՝ Էջմիածինը: Միաժամանակ ապստամբութիւն ծայր տուաւ Բաշ-Գառնիի շրջանին մէջ, տարածուելով դէպի Կոտայք եւ Ախթա: Ամէն տեղ ժողովուրդը մէկ մարդու պէս ոտքի ելաւ, տապալելու համար Բոլշեւիկեան ատելի բռնակալութիւնը:

Փետրուար 16-17ին մայրաքաղաքը ամէն կողմէ շրջապատուած էր ապստամբ ժողովուրդով: Յեղկոմը յուսահատական դիմադրութեան փորձեր ըրաւ, բայց անյաջող: Երեւանի բանտին մէջ, Փետրուար 16-17ի գիշերները Չեկայի կողմէն տեղի ունեցան բանտարկեալներու վայրագ սպանութիւններ, որոնց զոհ պիտի երթային հայ մտաւորականութեան լաւագոյն դէմքերը, եթէ Յեղկոմը քանի մը օր եւս կանգուն մնար: Բայց, ժողովրդական ապստամբ ուժերու սպառնալիքի տակ գլուխը կորսնցուցած՝ Յեղկոմը դիմեց փախուստի, լեցնելով կայարանը գտնուող գնացքները իր տրամադրութեան տակ եղած զինուորական ուժերն ու համայնավար պաշտօնէութիւնը, պետական գանձարանէն յափշտակուած գումարները եւ պետական պահեստներէն հաւաքած մթերքները, գէնքն ու ռազմամթերքը, զրահապատ երկու գնացքի պաշտպանութեան տակ փախաւ դէպի Ղամարլու, միանալու համար Շարուրի բարեկան թուրքերուն:

Փետրուար 18ը յարութեան օր եղաւ Հայաստանի ժողովուրդին համար: Առաւօտ կանուխ, ազատագրուած շրջաններէն ապստամբ ուժերը Կոռօ Թարխանեանի եւ խմբապետ Մարտիրոսի ղեկավարութեան տակ, թաքստոցէն դուրս եկան վերջին կառավարութեան անդամները: Չեկայի ու բանտի դռները բացուեցան, եւ հազարաւոր բանտարկեալներ ազատութիւն ստացան: Կարծես հրաշագործ ձեռքով մը Երեւանի բոլոր շէնքերը զարդարուեցան Եռագոյն դրօշակներով եւ գոյնզգոյն գորգերով ու կարպետներով: Ժողովուրդը խոնրած էր փողոցները նմանը չտեսնուած խանդավառութեան մէջ, եւ ցնծութեամբ կ'ողջունէր օրուայ հերոսները եւ բանտէն ու Չեկայի նկուղներէն ազատուածները: Մանօթ եւ անծանօթ կը համբուրուէին եւ կը շնորհաւորէին ազատութեան օրը:

Մինչ այդ Երեւանը կը մաքրուէր Բոլշեւիկներէն: Յեղկոմը լուսաբացին, վերջին փամփուլտները պարպելով՝ փախուստի դիմած էր Շարուրի ուղղութեամբ:

Փետրուար 18ի առաւօտեան, Հայաստանի Խորհրդարանի շէնքին մէջ, խանդավառ ցոյցերէն ու ճառախօսութիւններէն յետոյ, տեղի ունեցաւ Երեւանի Փրկութեան Կոմիտէի ու նախկին կառավարութեան անդամներու, ինչպէս նաեւ անհատ պատասխանատու գործիչներու եւ ապստամբ շրջաններէն հասած վարիչներու մասնակցութեան ժողով մը, ուր որոշուեցաւ կեանքի կոչել Վրացեանի կառավարութիւնը՝ ամբողջացնելով նոր անդամներով, Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի անունով: Կոմիտէն, որ դարձաւ Հայաստանի յեղափոխական շրջանի գերագոյն իշխանութիւնը, բաղկացած էր հետեւեալ անդամներէն.

Միմոն Վրացեան՝ նախագահ եւ արտաքին գործերու, գիւղատնտեսութեան եւ պետական գոյքերու վարիչ, Արշակ Յովհաննէսեան՝ գինուորական գործերու վարիչ, Կարօ Սասունի՝ ներքին գործերու վարիչ, Հ. Տէրտէրեան՝ ելմտական գործերու վարիչ, Յ. Տէր Յակոբեան՝ պարենաւորման վարիչ, բժ. Ս. Եղիազարեան՝ խնամատարութեան վարիչ: Յետոյ աւելցան նաեւ Արշամ Խանդկարեան՝ արդարադատութեան վարիչ, Վահան Մինախորեան՝ պարենաւորման, ռազմաճակատ մեկնած Յ. Տէր Յակոբեան տեղ: Աւելի ուշ՝ երկու ներկայացուցիչներ՝ Վասպուրականի Զինուորական Մարմնի կողմէն՝ Ս. Մեսրոպեան եւ Ա. Մաքսապետեան:

Այսպիսով, Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն իր մէջ կը մարմնացնէր նախկին կառավարութիւնը եւ յեղափոխական իշխանութիւնը:

Բանակի Ընդհանուր Հրամանատար նշանակուեցաւ Գնդ. Կուռօ Թարխանեան:

Կազմակերպուելէ անմիջապէս վերջ, Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն ժողովուրդին ուղղեց, թիւ 1, հետեւեալ կոչը.

«Քաղաքացիներ,

«Բոլշեւիկեան իշխանութիւնը Հայաստանում վերացուած է:

«Մինչեւ կառավարութեան կազմուելը՝ ամբողջ իշխանութիւնը գտնուում է Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի ձեռքը: Ամէն քաղաքացի պէտք է պաշտպանի կարգն ու օրէնքը: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի կողմից հրատարակուած բոլոր կարգադրութիւնները խիստ կերպով պէտք է կատարուեն քաղաքացիների կողմից:

1921 թ. Փետրուար 18
Երեւան

Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահ՝
Ս. Վրացեան

Այնուհետեւ սկսաւ յեղափոխութեան ղեկավարներու եւ ամբողջ երկրի փոթորկալոյզ, տենդոտ աշխատանքը՝ Հայրենիքի եւ ազատութեան պաշտպանութեան համար, որ Երեւանի մէջ տեւեց մինչեւ Ապրիլ 2, եւ ամբողջ Հայաստանի մէջ՝ մինչեւ Յուլիս 10:

Առաջին երկու օրերը՝ 18-19 Փետրուար, անցան իշխանութեան եւ բանակի կազմակերպութեան, ուժերու դասաւորութեան եւ ընթացիկ բազմազան աշխատանքներու մէջ: Անմիջապէս նշանակուեցան ճակատներու հրամանատարներ եւ միջոցներ ձեռք առնուեցան հետապնդելու փախչող թշնամին:

Բոլշեւիկները, ինչպէս յիշեցի, փախած էին Շարուր-Նախիջեւանի ուղղութեամբ, թուրքերու մօտ, բռնութեամբ տանելով իրենց հետ երկու զրահապատ գնացքներ, 2րդ եւ 3րդ հայկական գունդերը հետիոտն, քաղաքը գրտնուող ռուսական զօրամասերը, բոլոր կոմունիստները, ամբողջ գնացք մը ռազմամթերք ու պարէն, որ առաջուրէն լեցուցած էին վակոններն ու բեռնակիր ինքնաշարժերը: Ամբանալով Շարուրի դուռը եւ Արարատ կայարանի մօտ, Բոլշեւիկները ճակատ բացին Երեւանի ուղղութեամբ:

Միևս կողմէ, հիւսիսէն, տեղական ուսուցիչները եւ թուրք զինուած զիւղացիները եւ Ատրպէյճանէն հասած Բոլշեւիկները եւ կարմիր բանակայինները գրուելու անցած, Երեւանի դէմ ճակատ էր բացած Հայաստանի Չեկայի պետ Մ. Աթարբէգեանը:

Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն, առաջին օրն իսկ, շարք մը ռազիօ-հեռագիրներով ջանաց արտաքին աշխարհի առջեւ ճշգրիտ պատկերով ներկայացնել Հայաստանի մէջ տեղի ունեցած դէպքերը: Երեւանի ռատիօկայանէն, Պասրայի վրայով, քաշուած ընդարձակ հեռագրով Փարիզ, Հ.Հ. պատուիրակութեան հաղորդուեցաւ Փետրուար 18ի յեղաշրջման մասին: Նոյն բովանդակութեամբ հեռագիրներ ուղղուեցան մեծ պետութիւններու կառավարութիւններուն՝ Փարիզ, Լոնտոն, Հռոմ, Ազգերու Դաշնակցութեան, Ժընեւ: Հեռագիրներ քաշուեցան Մոսկուա՝ Լինինին եւ Չիչերինին՝ ներկայացնելով Հայաստանի Փետրուարեան շարժման իսկական բնոյթը, որ Յեղկոմի բռնութիւններէն յուսահատ աշխատաւոր ժողովուրդը տարերային պոռթկում էր եւ ուղղուած չէր Ռուսաստանի կամ ընդհանրապէս Խորհրդային իշխանութեան դէմ: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն կը խնդրէր Լենինէն եւ Չիչերինէն բարեացակամ միջամտութիւնը եւ Հայաստանի անկախութեան ճանաչումը:

Վրաստանի խորհրդայնացումով, Յեղկոմի լուծէն ազատագրուած Հայաստան, բոլորովին կտրուած էր արտաքին աշխարհէն: Բոլորովին միմակ, լքուած ամէնքէն, անօգնական, առանց հացի, առանց վառելիքի, առանց տեղի, անհուն ատելութեամբ դէպի Բոլշեւիզմը եւ ազատ ու անկախ ապրելու վճռական կամքով:

Եւրոպան լուռ էր եւ անտարբեր, Խորհրդային Ռուսաստան կը պահանջէր առանց պայմանի անձնատուութիւն, բայց անձնատուութեան մասին մը տածելն իսկ ոճիր կը համարուէր Հայաստանի մէջ: Պէտք է կռուել, ազատութիւն կամ մահ, ուրիշ հեռանկար չէր երեւում հայ ժողովուրդի աչքին: Եւ կը ուրիշ շարունակուեցաւ անընդհատ ու յամառ, բոլոր ճակատներուն վրայ:

Ո՞վ էր կռուողը, փաստօրէն զօրք չէր մնացեր Հայաստանի մէջ: Սպայութիւնը աքսորուած էր Ռուսաստան, քանի մը հոգի միայն, այս կամ այն ձեւով, մնացած էին Հայաստան: Չօրամասերը՝ բարոյալքուած ու կազմալուծուած: Ռազմական արժէք ներկայացնող ամէն բան կամ փճացած էր, կամ Բոլշեւիկները տարած էին: Կռուողը ինքը՝ հայ ժողովուրդն էր: Գիւղացիներն ու քաղաքացիները, միահամուռ կամքով: Ճակատ ու թիկունք միախառնուած էին, ամբողջ երկիրը վերածուած էր ռազմաճակատի, ողջ ժողովուրդը դարձած էր բանակ:

Ապստամբութեան առաջին օրէն մինչեւ Ապրիլ 2, բոլոր ճակատներուն վրայ, հայ ժողովուրդը կռուեցաւ իր բոլոր միջոցներով՝ Բոլշեւիկեան դաժան բռնատիրութեան դէմ՝ պահելու համար իր անկախութիւնը, ազատութիւնը եւ արժանապատուութիւնը:

Մարտ 20ի երեկոյեան Երեւան եկաւ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահին տուած զեկուցումէն պարզուեցաւ, որ իրենց կարծիքով Փետրուարեան յեղաշրջումը զուտ կուսակցական գործ է եւ կրնայ աղետաբեր ըլլալ հայ ժողովուրդին համար: Թիֆլիսի հայ մտաւորականներու ժողովին որոշուած է Երեւան ուղարկել Թումանեանը:

նին: Ի՞նչ առաքելութեամբ, որոշ չէր Թումանեանի բացատրութենէն, բայց քանի որ ան կու գար Օրջոնիկիձէի արտօնութեան (Կովկասի Կարմիր փոխարքային) պէտք էր ենթադրել, որ որոշ յանձնառութիւն ունէր վերջինէն: Յամենայն դէպս, նոյն օրն իսկ Թիֆլիս, Օրջոնիկիձէին ուղարկուեցաւ հեռագիր մը՝ Ս. Վրացեանի կողմէ, Ապստամբութեան էութեան մասին:

Թումանեանին տրուեցաւ լայն հնարաւորութիւններ, այցելելու պետական եւ հասարակական հիմնարկութիւնները, տեսնելու ուզած մարդիկը եւ ծանօթանալու իրերու կացութեան: Քանի մը օր վերջ, Մարտ 24ին, Թումանեանը Օրջոնիկիձէին հեռագրեց, մանրամասն բացատրութիւն տալով Հայաստանի կացութեան մասին, ուր կը դատապարտէր տարածայնուած սխալ լուրերը եւ ապստամբութիւնը վերագրելով ամբողջ հայ ժողովուրդին, եւ ո՛չ թէ Դաշնակցութեան:

Մարտ 25ին Կարմիր Բանակը ընդհանուր յարձակման հրաման ստացաւ: Մեծ Ռուսաստանը իր վիթխարի ուժով ոտքի կանգնած էր ճգմելու համար փոքրիկ եւ ուժասպառ Հայաստանը:

Ամուր պահելով հանդերձ ճակատները՝ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն սկսաւ պատրաստուել նահանջի:

Փրկութեան Կոմիտէի Երեւան գտնուող անդամները, պատասխանատու գործիչներու հետ միասին, խորհրդակցութիւն ունեցան նահանջի հետ կապուած խնդիրներու մասին: Նախատեսուած էր երկու հնարաւորութիւն: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի անդամներուն մէկ մասը տրամադիր էին բովանդակ ուժով գրոհ տալ եւ խորտակելով Ղամարլուի ճակատի Բոլշեւիկ պատնէշը, Շարուր-Նախիջեւանի վրայով միանալ Զանգեզուրին: Ոմանք գերադաս կը համարէին բռնել Բաշ-Գառնի-Միլի Զոր-Դարալագեազ գիծը, որ թէեւ դեռ փակուած էր ձիւնով, բայց շուտով կրնար բացուիլ:

Վերջի վերջոյ որդեգրուեցաւ Բաշ-Գառնիի գիծը, ուր անմիջապէս փոխադրուեցաւ Երեւանի մտաւորականութեան այն մասը, որու ներկայութիւնը անհրաժեշտ չէր:

Մարտ 25ի թշնամիին ընդհանուր յարձակումը սաստիկ էր: Երեւանը ջղային վիճակով կ'ապրէր: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն կոչով մը հրաւիրեց ժողովուրդը հանգստութեան եւ ճակատի պաշտպանութեան: Հայաստանի Ընկերավարական Կուսակցութիւնները միացեալ ռատիօ-հեռագրով դիմեցին աշխարհի բոլոր ընկերավարականներուն՝ բողոքելով Բոլշեւիկներու յարձակման եւ գործադրած բռնութիւններու դէմ:

Հակառակ ուժերու գերազանցութեան, Կարմիր Բանակը չկարողացաւ արագ հարուածով գրաւել Երեւանը: Հայերը յուսահատական դիմադրութիւն ցոյց տուին՝ կուրծքով պաշտպանելով հայրենի իւրաքանչիւր մեթր հողը:

Ապրիլ 2ի առաւօտեան, հայկական դիրքերը Սուխոյ Ֆոնտանէն այս կողմ չբիւրացան եւ նահանջեցին: Սասունցիներու ձիաւոր խումբը սրարչաւ անցաւ Երեւանի փողոցներով՝ խուճապի մատնելով բնակիչները, Բոլշեւիկեան թնդանօթը որոտաց Քանաքեռի բարձունքէն:

Կէսօրին, մայրաքաղաքը արդէն պարպուած էր: Կառավարութիւն եւ զօրք, պաշտօնէութիւն, մաքրելով հիմնարկութիւնները, հեռացան քաղաքէն: Տասնեակ հազարաւոր բնակիչներ արդէն Բաշ-Գառնիի ճամբան էին: Քաղաքը

մնացած էին միայն ծերեր, կիներ, ու երախաներ, որոնք լալով ճանապարհ կը դնէին ուսանողական պահակախումբով շրջապատուած, դէպի անյայտութիւն դիմող Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի անդամները: «Աստուած պահէ ձեզ: Մենք կը սպասենք ձեզ: Բարի վերադարձ» կը լսուէր ամէն կողմէ:

Երեւանի հարաւային ծայրը խոնուած բազմութիւնը պահ մը կեցաւ արցունքոտ աչքերով: Մէկը բարձր բռնած էր Հայկական Եռագոյնը:

Բազմահազար բազմութիւն խուճապահար կը փախչէր հարազատ երկրէն: Երեւանի մէջ երիտասարդ չէր մնացած: Զաւթիչները վախով, Քանաքեռի բարձրունքէն մտան ամայի փողոցները, ուր անոնց դարձեալ վախով դիմաւորեցին պարսկական հիւպատոսը, ամերիկացի բժիշկ Լոչէր եւ Օրջանիջի-ձէի ուղարկած ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը:

Երբեք, եւ ո՛չ մէկ տեղ, յաղթական բանակ մը այսպիսի անփառունակ մուտք չէր ունեցած իր նուաճած քաղաքը:

Այս ձեւով, Բոլշեւիկները ճգմեցին Հայաստանի անկախութիւնը եւ ազատութիւնը:

Մակայն, Զանգեզուրի մէջ, հայ ժողովուրդը, դեկավարութեամբ զօրավար Գարեգին Նժդեհի, երկար կռիւներ մղեց Բոլշեւիկներու եւ թաթարներու դէմ, յայտարարելով Սիւնիքի ինքնավարութիւնը:

Վերջի վերջոյ, տասնեակ հազարաւոր ժողովուրդ, պետական պաշտօնէութիւն, զինուորներ եւ հայդուկներ նահանջելով անձայն Պարսկաստան, եւ, անոնցմէ շատեր խոր ծերութեան հասնելով ննջեցին, Հայաստանը միացեալ եւ ազատ տեսնելու յոյսը իրենց սրտերուն մէջ վառ պահած:

Իսկ մենք, Սփիւռքի մէջ ծնած նոր սերունդը, այսօր եւ միշտ ամուր կառչած կը մնանք Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի գաղափարին, եւ երբեք պիտի չընկրկինք զայն իրականացնելու համար:

Պատի՛ւ եւ յարգա՛նք Հայաստանի անկախութեան համար ինկած հերոսներուն:

15-18 Փետրուար 1971
Յալէպ

ՀՈՆ
Փետրուարեան Ապստամբութեան Յիշատակին

Հո՛ն...

Ուր մեր պապերուն գերեզմանները կը գտնուին,
Ուր Արարատը խրոխտ կ'իշխէ՝
Ձիւնէ գլխարկը գլխուն,
Ուր այգիները կը տարածուին՝ պտուղներով քաղցրահամ,
Ուր Էջմիածնի գմբէթները կը բարձրանան երկնասլաց,
Ուր լազուարթ Սեւանը միշտ գեղատեսիլ կը պսպղայ,
Օր մը, վայրագ բռնակալութեան շղթաները փշրուեցան:

Հո՛ն...

Ուր քառագագաթ Արագածը կը մայրանայ,
Օրհնաբեր ամբերու ոլորտներուն մէջ,
Եւ երկինքը խորագագաց կու լայ ի տես այս պատկերին,
Ուր մայր Արաքսը կը հոսի փրփրաթէզ
Ու կը բաշխէ իր ջուրերը մայրական
Հայրենիքի ծարաւ հողին,
Օր մը, հնչեցին զանգերն ապստամբութեան:

Հո՛ն...

Ճաճանչագեղ ազատութենէ ետք,
Երբ տիրեցին սարսափելի բռնակալներ,
Փետրուարեան պայծառ առաւօտ մը,
Հայկեան ցեղին ազատատենչ ժառանգորդներ,
Դաժան վարչաձեւի մը արիւնարբու եւ անմարդկային
Տիրապետութիւնը խրոխտաբար խորտակեցին,
Անկախութեան տիրացումի անբանտելի ոգիով:

Հո՛ն...

Գետանման հոսող արեան ճապաղիքներու մէջէն անցած,
Ինկած սովամահութեան զագրելի ճիրաններուն տակ,
Վահագնեան ոգին անգամ մըն ալ կենդանացաւ,
Մոխրացած փիւնիկի նման մարմնացաւ,
Բանտերու մէջ կացինահար հերոսներուն ի խնդիր,
Բարձրացան զէնքերն ազատութեան,
Եւ քշուեցան բռնակալ ուժեր մեր հողերէն սրբազան:

Հո՛ն...

Ուր հայութեան տարագիր բեկորները տանջուած,
Երկարատեւ մաքառումներէ ու պայքարներէ ետք,
Հազիւ գտած իրենց նոր օթեւանը հայրենի,
Հազիւ շնչած անոյշ բոյրը Հայաստանի,
Ազատութիւնն անարգօրէն խլուեցաւ՝
Ժողովուրդէ մը անմահութեան սահմանուած:

Փա՛ռք...
Հազար փա՛ռք այն վեհ ոյժին Արմենական,
Որ իր արիւնով կերտեց Հայաստան,
Փա՛ռք, հազար փա՛ռք բոլորին,
Մեր նայրերուն, հայրերուն,
Մեր բիւրաւոր զոհերուն,
Անկախութեան իրենց անշէջ երազին...:

«ԱՐԵՎԵԼՔ» օրաթերթ
18 Փետրուար 1950
Հալէպ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ (Ծննդեան 125-ամեակին առիթով)

Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի ծննդեան 125-ամեակը արժանաւորապէս տօնուեցաւ Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ:

Հայ հանճարեղ բանաստեղծը ծնած է 1869ին, Լոռիի Դսեղ գիւղը. հայրը՝ Տէր Թադէոս քահանան, եղած է շատ մարդասէր, առակախօս ու շէնչող, բայց միաժամանակ խիստ լրջախոհ անձնաւորութիւն մը, իսկ մայրը՝ գիտէր ժողովրդական անհատնում հէքիաթներ եւ գրոյցներ, որոնցմէ սնած են մանուկ Թումանեանի հոգին եւ երեւակայութիւնը: Հայրենի չքնաղ բնութիւնը եւս մեծ ազդեցութիւն գործած է բանաստեղծի ամբողջ ստեղծագործութեան վրայ:

Հայրենի գիւղին մէջ քանի մը տարի ուսանելէ ետք, 1879ին, կ'ընդունուի Զաւլա-Օղլուի քառամեայ դպրոցը: Սակայն, այդ դպրոցը շուտով կը փակուի եւ Թումանեան հնարաւորութիւն չունենար զայն աւարտելու: 1883ին կ'ընդունուի Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, բայց նիւթական ծանր պայմանները չեն թոյլատրեր շարունակելու իր ուսումը եւ պատանին կը ստիպուի հեռանալ դպրոցէն եւ մտնելու աշխատանքի: Սակայն, յամառ ինքնագարգացումով Թումանեան կը դառնայ իր ժամանակի ամէնագարգացած մտաւորականներէն մէկը:

Թումանեան գրել սկսած է իր աշակերտական տարիներուն, սակայն, իր գրութիւնները տպագրուիլ կը սկսին 1880ական թուականներուն: Իրարու ետեւէ լոյս կը տեսնեն «Շունն ու Կատուն», «Անբախտ Վաճառականները», հէքիաթները, «Գութանի Երգը», «Մարերում» եւ «Հին Օրհնութիւն» բանաստեղծութիւնները, «Մարօ» պոէմը: Բայց Թումանեանի համաժողովրդական հռչակ բերին 1890ին եւ 1892ին հրատարակուած բանաստեղծութիւններու առաջին եւ երկրորդ ժողովածուները, որոնց մէջ էր «Անոյշ» պոէմը:

Թումանեանը գլուխ գործոցը կը նկատուի «Անոյշ» պոէմը, որ գրուած է հովուերգական եւ սիրային ողբերգութեան մը վրայ: Պոէմին կերպարները, անոնց փոխ-յարաբերութիւնները, գործողութեանց շրջանակը վրձինուած են նուրբ վարպետութեամբ եւ հրաշալի տաղանդով:

Հայ քերթողութեան գագաթներէն Յովհաննէս Թումանեանի ստեղծագործութեան մէջ առանձնայատուկ տեղ կը գրաւեն հայրենասիրական բովանդակութեամբ բազմաթիւ գործեր, որոնցմէ ամէնէն ծաւալունն է «Թմբկաբերդի Առումը» պոէմը: Հանճարեղ գրողը իր ստեղծագործական կեանքի առաջին իսկ օրէն իր ժողովուրդին մէջ է: Իր ժողովուրդով կ'ապրի: Եթէ քնարաշունչ էջեր ունի, որոնց մէջ իր սրտին ու հոգիին խռովքը կայ, անոնք սակայն հայրենի բնութենէն կ'առնեն իրենց մ'թնոլորտի գոյնն ու գիծերը:

1886-1887 տարիներուն, իր քերթողական էջերը կը համադրեն գիւղէն պատկերներ, մեր ժողովուրդի բարքերէն լայն գիծեր: Գիւղացին, հօտաղը, հայրենի հողին պաշտամունքով ապրող պապն ու թոռիկը, այդ երգերուն մէջ կ'ամբողջացնեն մեր հին ու նոր կեանքին խիտ վկայութիւնները: Քանի մը

տողով յուզելու իր կարողութեամբ, Թումանեան քերթուածը կը վերածէ ժողովուրդի մը վաղեմի առաքինութիւններուն՝ արդարութիւն, մաքրութիւն, կորով, աշխատանքի կիրք, հայրենասիրութիւն, երկիւղածութիւն, բարիին պաշտամունքը:

Անոնց կը հակադրուին 1880-1890ական թուականներու մեր կեանքէն տխուր, դառն իրողութիւններու՝ կոտորած, պանդխտութիւն, զրկանք, ինչպէս «Մեր Նախորդներին», «Տէ՛ր, մինչեւ ե՛րբ», եւ «Կարօտ» քերթուածները:

1893էն ետք կը մշակէ նաեւ արձակը, ինչպէս՝ «Սովի ժամանակից», «Գիքոր», «Աղքատին Պատիւը», «Քաջերու Կեանքից» եւայլն: Արձակ թէ քերթուած, իր բոլոր ստեղծագործութիւններուն մէջ Թումանեան հայ հողին ու հայ հոգիին հետ է:

Թումանեանի ամբողջական վաստակը կ'ընդգրկէ գլխաւորաբար քնարաչունչ քերթուածներու, հէքիաթներու, պատմուածքներու, դիւցազներգական էջերու, առասպել-առակներու եւ քառեակներու այլազանութիւն մը, որուն մէջ հաւասար տաղանդով կը յայտնուին երգողի, պատմողի եւ մտածողի իր արժանիքները:

Քերթողական իր էջերուն մեծամասնութիւնը կու գայ 1887-1895 տարիներէն: Սկզբնական շրջանին՝ երիտասարդական իր ապրումները, մինչ քառեակները՝ չափահասութեան եւ հանդարդ մտածումի ճամբով կը հասունանան (1916-1922):

Թումանեան մեծագոյն վարպետութեամբ մշակած է ժողովրդական բանահիւստութեան բազմաթիւ նմոյշներ (Սասունցի Դաւիթ, Քաջ Նազար, Անիծած Հարսը, Ախթամար, Փարլանա, Հազարան Բլբուլ, եւայլն), եւ նոր ուժով փայլեցողցած ժողովուրդի իմաստութիւնը եւ գեղագիտական ճաշակը:

Գիւղի հասարակական իտէալներու լաւագոյն արտայայտութիւնն իր իսկ ստեղծագործութիւնն է. Թումանեանի գրականութեան գլխաւոր բովանդակութիւնը հալածուողի, հարստահարուողի եւ իր արդար իրաւունքին համար անվերապահ պաշտպանութիւն: Այդ կ'արտայայտեն անոն «Ճառաչանք»ն ու «Անոյշ»ը, «Գիքոր»ը, «Իմ Ընկեր Նեսոն», «Աղաւնու Վանքը» եւ «Թագաւորն ու Չարչին», ինչպէս նաեւ անոր հէքիաթներն ու քառեակները:

Այդ կերպարներուն մէջ արտացոլուած են մարդկային իտէալի Թումանեանական որոնումները: Անոնց մէջ բանաստեղծը արտայայտած է մարդկային գոյութեան իմաստի իր ըմբռնումը: Այդ հերոսներու արարքներն ու նպատակները մարդասիրական են, եւ անոր համար կը մնան անմահ: Մարդը կը մնայ սերունդներու յիշողութեան մէջ իր գործով եւ այդ է որ բանաստեղծը արտայայտած է սրտայոյզ եւ թեւաւոր խօսքերով:

Անց են կենում սէր ու խընդում,
Գեղեցկութիւն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք մահիմը,
Մարդու գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լաւ իմացք,
Որ խօսուում է դարձ դար,
Երնէկ նրան, որ իր գործով,
Կ'ապրի անվերջ, անդադար:

Արդարեւ, իր հայրենիքը նոյնպէս, Թուժմանեանի բանաստեղծական պատկերացումով, կը ներկայանար անիրաւի հայածուողի եւ իր արդար իրաւունքի համար մաքառողի ողբերգական վսեմ կերպարանքով:

Մեր ճամբէն խաւար, մեր ճամբէն գիշեր,
Ու անհատնում,
Էն անլոյս մթնում,
Երկար դարերով գնում ենք դէպ' վեր,
Հայոց լեռներում,
Դըժար լեռներով...:

Կամ՝

Հայոց վիշտը՝ անհուն մի ծով,
Խաւար մի ծով ահագին,
Էն սեւ ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին:

Մերք զայրացկոց ծառս է լինում
Մինչեւ երկինք կապուտակ,
Եւ մերք յոգնած սուզում, իջնում
Դէպի խորքերն անյատակ:

Ոչ յատակն է գտնում անվերջ
Ու ոչ հասնում երկնքին...
Հայոց վշտի մեծ ծովի մէջ
Կառապում է իմ հոգին:

Այսպէս կը գրէր Թուժմանեան իր ու իր ժողովուրդի մասին, թէ ինչպէս ժողովուրդի վիշտը կը դառնայ բանաստեղծի վիշտը: Եւ բնական է, որ բանաստեղծը, անդիմադրելի պահանջ կը դառնար արտայայտելու համար զայն: «Ես չեմ տիրում – կը գրէր ան իր նամակներէն մէկուն մէջ–, որովհետեւ խոր ու լայն զգում եմ որ վշտոտ ազգը, տառապած ազգը շարժում է իմ մէջ, ուզում է խօսել»:

Եւ Թուժմանեանը կը խօսէր ամբողջ հայ ժողովուրդի ու անոր տառապանքի անունով, կ'արտայայտէր անոր ողբերգութիւնը, եւ այն ժամանակ, երբ կը գրէր հայ ժողովուրդի սեւ բախտը խորհրդանշող երկու սեւ ամպերու մասին, եւ «Հին Կռիւր» պոէմի մէջ, երբ կը խօսէր արեւմտահայերու տառապանքներուն եւ անոնց ազգային ազատագրական պայքարի մասին: «Հայոց Լեռներում» եւ «Հայոց Վիշտը» բանաստեղծութիւններու հեղինակը պէտք է իր ժողովուրդին հետ ըլլար անոր կեանքի ամէնածանր օրերուն: Եւ այդպէս ալ եղաւ:

Իրապէս Թուժմանեան հայրենասիրական ազնիւ վարկագիծով հանդէս եկաւ Ա. Համաշխարհային պատերազմի տարիներուն, Մեծ Եղեռնի ժամանակ, երբ անձամբ իր ձեռքերով կը դարմանէր աղէտի զոհերուն վէրքերը:

Ան Ս. Էջմիածին հաւաքուած բազմահազար գաղթականներու տուած այցելութեան տպաւորութեան տակ գրեց «Հոգեհանգիստ» բանաստեղծութիւնը:

1918ին, Թումանեան կը մասնակցի նաեւ Հայաստանի ինքնապաշտպանութեան գործին, անձամբ գլխաւորելով Լոռիի պաշտպանութիւնը՝ ընդդէմ Անդրկովկաս խուժող օսմանեան զօրքերուն:

Իր կեանքի վերջալոյսին, ան ամբողջովին կը նուիրուի ազգային հասարակական գործունէութեան: Կը նշանակուի Հայաստանի Օգնութեան Կոմիտէի Նախագահ: 1921ին, ազգային առաքելութեամբ կը մեկնի Պոլիս: Վերադարձին քաղցկեղէ վարակուելով կը գամուի անկողին:

Թումանեան խորապէս ապրեցաւ իր ազգին տառապանքներով, մոմի նման վառելով լուսաւորեց իր շրջապատը եւ հայ գրականութիւնը ու հալեցաւ 1923 Մարտ 23ին Մոսկուայի մէջ, իր գրագէտի եւ հայրենասէրի պարտականութիւնները լաւագոյնս կատարելէ եւ անմահութիւնը ժառանգելէ ետք: Մարմինը փոխադրուեցաւ եւ թաղուեցաւ Թիֆլիս, Խոջեվանքի մէջ:

Հանճարեղ Լոռեցին իր կեանքը ամբողջութեամբ նուիրեց հայ ժողովուրդին եւ հայ գրականութեան եւ ապրեցաւ հայ գրագէտի չքաւորութեամբ: Ան իր քառեակներէն մէկուն մէջ կ'ըսէ.-

Յէ՛յ, ազաի մարդ, է՛յ անգոի մարդ, միտքդ երկար, կեանքդ կարճ,
Քանի՛ քանիսն անցան քեզ պէս, քեզնից առաջ, քո առաջ,
Ի՞նչ են տարել նրանք կեանքից, թէ ի՞նչ տանեն քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրուան ես ճամբէդ:

Յարգանք իր պայծառ եւ անթառամ յիշատակին:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ»
1 Դեկտեմբեր 1994



Գրիգոր Յոթոյեան, հանրածանօթ գրող Թորոս Թորանեանի հետ Արցախի ճամբուն վրայ
2004 - Յայաստան

ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ ՄՊԱՂԱՆԱՅ ԳԱԼԷ

Անվիճելի է, որ հայդուկային պայքարը ժողովուրդը Օսմանեան լուծէն ազատագրելու միջոց չէր, այդ շարժումը ուղղուած չէր ժողովուրդին ազատագրումին, այլ՝ ինքնապաշտպանութեան եւ ժողովուրդին զօրավիգ կանգնելու միջոց մըն էր: Հայ ժողովուրդին հանդէպ պետութեան եւ պետութեան քաջալերանքով տեղի ունեցող հարստահարութիւններու, անպատիժ սպանութիւններու եւ անարդարութիւններու դէմ պայքարելու համար, հայ Ֆետայիներ լեռներ բարձրանալով, զէնքով եւ անձնուրացութեամբ պաշտպանեցին հայ գեղջուկին պատիւն ու կալուածները:

Սասունը պաշտպանող հարիւրաւոր Ֆետայիներու՝ Արաբոյի, Սերոբ Փաշայի, Անդրանիկի, Գէորգ Չաւուշի, Մակարի, Ակէի եւ այլ Ֆետայիներու կարգին Գալէ Սպաղանցին, Սասնոյ հին եւ ամէնէն քաջ Ֆետայիներէն մէկն էր, անբաժան զինակիցը Գէորգ Չաւուշին: Ծնած է Տալուորիկի Սպաղանք գիւղը, հաւանաբար 1870-ականներուն: Այս գիւղը ընդամէնը քսանհինգ տուն ունէր, բայց տուաւ քանի մը նշանաւոր հայդուկներ: Այս գիւղէն էր նաեւ հայդուկային շարժման նահապետ Մակարը եւ Ֆետայիներ՝ Ազէն, Ազոն եւ խմբապետ Ակէն:


Գալէն մարտական մկրտութիւն ստացաւ պատանի հասակին, երբ մասնակցեցաւ աղջիկ փախցնելու համար Տալուորիկի եւ Կեապընիի միջեւ ծագած կռիւին, որ իսկական պատերազմի վերածուեցաւ: Կեապընցիները աղջիկ փախցնելը համարեցին իրենց պատուի վայրենի ոտնահարում ու պատերազմ յայտարարեցին Տալուորիկի դէմ: Եղածը անմիտ եւ եղբայրասպան կռիւ էր: Ապագային Գալէն կը մասնակցի Խիանքի եւ Մարաթուկի քիւրտ ցեղերու դէմ մղուած կռիւներուն:

1890ին, երբ Խալիլ Փաշան կոտորեց Սպաղանքին ազգաբնակչութիւնը, Ս. Մարուքէ եկեղեցին ապաստանած ժողովուրդը, եկեղեցին կրակի տալով եւ խեղդամահ ընելով, ուր զոհ գացին Մակարի եւ Գալէի հարազատներն ու ազգականները: Այդ ողբերգական իրադարձութիւնը վերջնականապէս որոշեց Գալէին ուղին: Ան երդում ըրաւ իր կեանքը նուիրել ժողովուրդի փրկութեան գործին, դառնալ հայդուկ՝ ժողովրդական վրիժառու:

1892ին, ան կը մտնէ քեռի Մակարի խումբը, անոր միջոցով կը ծանօթանայ Գէորգ Չաւուշին հետ: Գալէն կը մասնակցի Գէորգի մղած բոլոր մարտական գործողութիւններուն:

Ըլլալով արտակարգ քաջ ու ճարպիկ կռուող, Գալէն մեծ դեր ունեցաւ Խարսի, Տալուորիկի, Բերդակի կռիւներուն: 1904ին, անոր յանձնարարուեցաւ Գրեգորի դիրքերու պաշտպանութիւնը, որ ան իրականացուց աներեւակայելի քաջութեամբ եւ հմտութեամբ:

Գալէն հասարակ մահկանացու չէր. Փիզիքապէս ամուր, առիւծի սիրտ ունեցող, բայց դանդաղաշարժ ու սակաւախօս: Ան Գէորգի եւ Մակարի անմիջական աջակիցն ու անբաժան զինակիցն էր եղած ամբողջ 25 տարի:



Առիւծասիրտ Ֆետայի Գալէ Սպարանցի

Գալէի ծննդավայր Սպաղանք գիւղը, խոր անդունդներու մէջ ինկած, աշխարհէն կտրուած գիւղ մըն էր, հարուստ իր երկաթէ լեռներու նման ստեղծած է շարք մը պողպատէ մարդիկ, մռայլ ու անվեհեր, սառն ու արի, քարսիրտ, բայց արդարամիտ: Ամբողջ գիւղը կարելի էր մէկ սերունդ, մէկ գերդաստան համարել:

Գալէն, հօրեղբորորդին էր հօրս, իսկ Մակարը՝ իր ազգականը եւ կնքահայրը: Գալէն ազգակից էր նաեւ հռչակաւոր Մակարին, Ակէին եւ նման այլ քաջերու: Դեռ մանուկ հասակէն սորված էր խէնջալ կապել եւ Տէրսիմի շէշխանա հրացանը գործածել: Ան 1893ին, աչքի զարնող կռուող էր: 1893-95ի Սասնոյ ապստամբութեան եւ խմբական կռիւներուն ան կը դառնայ անբաժան զինակիցը իր քեռի Մակարին: 1896-1900 թուականներուն Գալէն կը դառնայ Գէորգի ամէնամօտիկ գործակիցը: 1900էն մինչեւ 1907, մինչեւ իր մահը: Գալէն եղաւ բոլոր կռիւներու հոգին: Ան մասնակցեցաւ Սասնոյ բոլոր կռիւներուն եւ Սասունը ճնշուելէն ետքն ալ բնաւ դուրս չելաւ Սասունէն, այլ՝ Մակարի ղեկավարութեան տակ մնաց այնտեղ, դիմանալով անասելի դժուարութիւններու եւ վտանգներու:

Գալէն հետաքրքիր էր ոչ միայն իբր հին զինուոր, հին աշխատող եւ արկածներ ունեցող, այլ՝ իբր բնաւորութիւն, իբր տիպար քաջութեան: Ան դէմքով ու մարմնով ալ աչքառու էր, միջահասակէն վար, թիկնեղ, ամուր, թուխ դէմքով, սեւ աչքերով: Մռայլ էր առհասարակ եւ բնաւ չէր մտածեր, որ մսէ եւ ոսկորէ շինուած մարդ էր ան, աւելի շատ երկաթէ արձանի էր նման, ահարկու եւ տարօրինակ: Անոր դիմագիծերը քիչ կը շարժուէին, կնճիռ չկար երեսին վրայ, բայց աչքերն ու ծնօտը այնպիսի կենդանութիւն կու տային դէմքին, որ այդ արձանը վճիռ ու կամք կ'արտայայտէր, անբեկանելի, անխորտակելի:

Գալէն մեծ էր բոլորէն իր հոգիի եւ կամքի կարողութեամբ, բայց ամբողջ մեծութիւնը իր մէջ էր ամփոփուած: Եթէ ան ըլլար քիչ մը անհամեստ, քիչ մը փառասէր, կը դառնար առաջինը Սասուն աշխարհի մէջ: Ի գուր չէ, որ Գէորգ Չառուչ կ'ըսէր յաճախ՝ «Եթէ ես ունենայի Գալէի քաջութիւնը եւ մտածողութիւնը, առանց կատակի, Սութան Համիտին թախտից վար բերելը քանի մը շաբթուան գործ պիտի դառնար»:

Ռուբէն իր յուշերուն մէջ կը գրէ.- «Մենք Գալէն կ'անուանէինք «դանդաղ» Գալէ: Ան բնաւ չէր վիրաւորուեր այս մակդիրէն, այլ՝ կը պատասխանէր.- «դանդաղ շարժուի, երկար շարժուի»ով շուտ քալէ, Ռէխին կու գայ»: Ան ունէր միատեսակ, յամբաքայլ շարժումներ, դանդաղ եւ յարատեւ: Անոր հաստատ, ուղիղ եւ յամբ շարժումները չէր կարելի փոխել ոչ իսկ թնդանօթի գոռոցով: Եթէ ուժմբ մը կամ գնդակ մը իյնար իր առջեւ կամ իր ամէնասիրելի ընկերը զարնուէր կողքին, այդ սառն արձանային մարդը ո՛չ դէմքը կը փոխէր, ո՛չ շարժումները, այլ՝ քթի մէջէն «ըհը» մը կ'ընէր եւ իր գործը կը շարունակէր: Երբ իր շուրջը ոգեւորութիւն կամ խուճապ ստեղծուէր, ան աւելի անտարբեր կը դառնար ու դանդաղօրէն ծխախտոր հանելով գլանիկ մը կը շինէր, յետոյ հանգիստ կ'ըսէր.- «Շատ միք թրուվրտա, հանգիստ մնացէք»: Այսքան էր իր յուզումը:

«Այս բնաւորութեան համար ալ Մակար գինք կ'անուանէր «խոզ Գալէ», իսկ մենք յաճախ կը կոչէինք «գոմէշ»: Իսկապէս ալ վերջինի նման էր: Գալէի նստած դիրքը յաճախ կը հերկուէր ռումբի եւ գնդակի ակօսներով, իր մարմնի վրայէն արիւնը կը հոսէր, ընկերները, վիրաւոր կամ սպաննուած, իր շուրջը կը թաւալին, բայց ան անվրդով է ու հանգիստ, կարծես ոչինչ չէ պատահած, միայն քթի մէջէն կը մըթմըրթայ, գլանիկը կը քաշէ եւ իր մահաբեր հրացանով ուղղակի կը հնձէ, ինկածով չի հետաքրքրուիր, նոր գոհ կը փնտռէ:

«Ես իմ կեանքը Գալէին պարտական եմ, անոր հնարամտութեան: Ես եւ Գալէն մինակ Շէյխլան գիւղն ենք, ցերեկ է, տանիքի ծայրը նստած ենք, գիւղացիք, մեծ ու փոքր, մեր շուրջն են: Գալէն լուռ կը ծխէ, ես ալ գիւղական գործերը կը կարգադրեմ:

«Ան դիտակով կը նայի հանդարտ եւ յետոյ դիտակը ինծի տալով կ'ըսէ, որ նայիմ հեռուն: Երկու քիլոմէթր հեռուէն անթիւ զօրքն է, որ կուգայ դէպի Շէյխլան: Գիւղացիք կը նկատեն եւ կը սարսափին: Ժամանակ չկայ, որովհետեւ, ձիաւոր զօրքը շատ մօտ է: Ես շուարած եմ ու քարացած կը մնամ: Գալէն ծխախոտը բերանը, ինծի կը նայի, որ կարգադրութիւն ընեմ: Գիւղացիք մէկիկ-մէկիկ կը հեռանան եւ կը պահուին իրենց տուները: Միայն Շէյխլանի Պետրոսը կը մնայ, որ կ'առաջարկէ ինծի «պահուիլ գիւղին մէջ»: Գալէն կը խօսի.- «Ձէ, այդ չլինի, ամնիաթ (վստահութիւն) չկայ, որ ձեզ ծեծեն, մեզի կը մատնէք»: Գալէն իրաւունք ունէր: Գիւղը ամբողջ, կին ու երեխայ, մեզ տեսած էին, կրնային չարչարանքի տակ մեր տեղը ըսել: Ես կ'ըսեմ Գալէին.- «Մեզի մի ճամբայ կայ միայն՝ կռուինք»: «Ձէ, կը պատասխանէ ան, կը սպաննուինք, գիւղն ալ ձեռքէ կ'երթայ: Մենք պիտի ապրինք»: Այնպէս հաւատով ըսաւ «պիտի ապրինք»ը, որ դարձայ իրեն եւ յարեցի.- «Շատ լաւ Գալէ, դու ինծի խմբապետ, ես քեզի զինուոր»:

«Գալէն լուռ ելաւ ոտքի, հանց գէնքերը, ինծի ալ պատուիրեց զինաթափուիլ, գէնքերը տուաւ Շէյխլանի Պետրոսին եւ պատուիրեց տանիլ պահել Մուրատ գետի ափին, ճիշդ գետի կղզիին դիմաց: Երկու կուլաբ առինք վրաներս, արդէն ծակ արախչիները ծածկեցինք գլուխներս եւ հանգիստ, Գալէի քայլերով ուղղուեցանք դէպի դաշտը արածող նախիրը: Աչքերս ուղղած եմ գոմէշներուն, կարծես անոնք պիտի փրկեն մեզ: Զօրքը արդէն գիւղը հասած է: Մենք ալ հասած ենք փրկարար նախիրին: Հովիւը աչքերը բացած մեզի կը մօտենայ: Գալէն կը նստի եւ կը պատուիրէ անոր շորերը հանել: Ինքը կը հագուի եւ կ'ըսէ.- «Հովիւը ես եմ, դու եւ Ռուբէն հոս մնացէք»:

«Հովիւը գնաց: Զիավարներ կու գան դէպի նախիրը: Շատուոր չեն, 10 հոգի միայն: կը կենան մեզմէ քիչ հեռու եւ երեսները կը դարձնեն դէպի գիւղ, Շէյխլանի ճամբաները գոցողներն են: «Հէյ շունշանորդի, արէք էստեղ» կը կանչէ ենթասպան մեզի: «Դու մնա՛» կ'ըսէ Գալէն ինծի եւ ինք կը յառաջանայ դէպի ձիաւորները: Կը մօտենայ ենթասպային, կը բռնէ անոր ձիուն սանձը եւ լեզուանի մարդ դարձած կը պատմէ:

«Հէյ հայվան» կը կանչէ Գալէն ինծի: Իմ բախտէն ցուլ մը ինկաւ կովի մը ետեւէն: Ես օգտուեցայ առիթէն եւ ինկայ ցուլի ետեւէն, որպէսզի խանգարեմ անոր հաճոյքը: Նպատակս էր չլսելու տալ ենթասպայի հրամանը՝ երթալու իր մօտ: «Հայվան», կրկնեց Գալէն, չե՞ս լսեր, բուղան (ցուլ) թող գայ, գնա՛

գիւղից աղբիւր: Երբ երրորդ անգամ «հայվան» լսեցի, ուղղուեցայ դէպի գիւղ: Գալէն մօտեցաւ ինծի, բարձր հայհոյեց եւ կամաց մը ըսաւ.- «էջ չդառնաս»:

«Ես ինչպէ՞ս պիտի մտնէի գիւղ աղ բերելու համար: Անհրաժեշտ էր: Զօրքը պաշարած էր ու կը խուզարկէր: Կը մտնեմ տուն մը եւ կը նստիմ: Մինչ մէկ կողմը գիւղը կը խուզարկեն, միւս կողմէ Գալէն երինջ մը կը մորթէ եւ ձիւտներու խուրջիները կը լեցնէ մսի կտորները: Գալէն համոզեր է մորթել երինջը, որպէսզի ինքն ալ միս կարենայ ուտել եւ կը զբաղեցնէ զանոնք խորովածի գայթակղութեամբ:

«Փողը կը հնչէ: Զօրքը հաւաքուած է գիւղին մէջ: Զիւտներն ալ կը հեռանան: Գալէն ցուպը ձեռքը բարձր կը կանչէ.- «Մօսօ, Մօսօ»: Ես գլուխս կը հանեմ փոսէն: «Նախիրը քչէ դէպի ափ», կը հրամայէ Գալէն: Կը քշենք դէպի ափ: Կ'առնենք մեր պահուած հրացանները եւ տիկերը: «Գետը պիտի անցնիս եւ կղզին երթաս», կը հրամայէ Գալէն: Սարսափելի է այս պատուէրը, լողալ չեմ գիտեր, ի՞նչպէս պիտի անցնիմ: Տիկ մը կ'ուռեցնեմ եւ թեւիս տակ կ'առնեմ, գոմէջ մըն ալ առջեւս կը ձգեմ եւ կը մտնեմ ջուրը: Կը պլուրիմ գոմէջի պոչին եւ անհնարին նեղութիւններէ ետք կը հասնիմ կղզի:

«Քիչ վերջ Գալէն կու գայ հրացաններով միասին: Ան թէեւ ծիծաղիլ չի գիտեր, բայց դէմքէն կ'երեւայ, որ ուրախ է: «Մէկապետ էի, երկապետ եղայ», կ'ըսէ: Կ'ուզէր ըսել, որ այդ օր ինքն էր հրամանատարը: Եւ իրաւունք ունէր: Ան ազատած էր թէ՛ զինքը, թէ՛ զիս եւ թէ՛ գիւղը իր «երկապետութեամբ»: Գալէն չէր մոռցած երինջի միսէն բերել իր հետ: Անօթի էինք, ուստի հում-հում կերանք միսը: Աղ չունէինք, Գալէն նկատեց. «մեղքը քուկդ է, աղը բերողը դուն պիտի ըլլայիր»: Ծիծաղեցանք եւ ախորժակով թարմ միսը գազանի պէս լափեցինք:

«Գալէն քնացաւ: Երեկոյեան երբ մթնցաւ, անցանք Խէպեանի կալը: Շէյխլան գիւղացիք չէին գիտեր, թէ մենք ո՞ւր գացինք: Զկարծէք թէ Գալէն նման պատահարներ բանի տեղ կը դնէր: Ան անցածը անցած կը համարէր եւ կը լռէր, իսկ գալիքի մասին կը մտածէր ու կը սպասէր: Այսպէս, օրինակ, այս դէպքի մասին ոչ ոք չէր գիտեր: Գալէն ոչինչ կը պատմէր: Երբ շաբաթներ յետոյ, առասպելներ հիւսուեցան եւ ընկերներ ու գիւղացիներ ինծի հարց կու տային պատահածի մասին, ըսի, որ Գալէին հարցուցէք, քանի որ, ան խմբապետ էր այդ օրը: «Բան չունի՞ս, Գալէից խօսք մենք իմա՞լ քաշենք, դու պիտի պատմես»: Երբ ես պնդեցի.- «Գալէ, պատմէ երկապետութիւնդ», «վազ մնացէք ինձմէն, եկաւ ու անցաւ» պատասխանեց ու սկսաւ ծխել:

Եւ իսկապէս Գալէն «մէկապետ» էր, ինչպէս ինք կը սիրէր ըսել: Մեծ էր բոլորէն իր հոգիի եւ կամքի կարողութեամբ, բայց ամբողջ մեծութիւնը իր մէջ էր ամփոփած:

Գալէն մէկն էր այն խոնարհ հերոսներէն, որոնց մասին շատ յաճախ չենք լսեր եւ սակայն անոնք են, որոնք կերտեցին մեր մօտիկ անցեալի յեղափոխական սքանչելի պատմութիւնը, գիւցազներգութեան նոր էջ մը բանալով Գալէի 25 տարիներու յեղափոխական կեանքը լեցուն էր այնպիսի դրուագներով, որոնց իւրաքանչիւրը առանձինն կարելի է առաջնորդող օրինակ դարձընել իրմէ վերջ եկող եւ դեռ եւս գալիք մեր սերունդներուն:

Սպաղանք հայաբնակ գիւղը, նստած լերան լանջին, առջեւը անդունդ: Կամուրջ մը կը միացնէ գիւղը ցամաքին: Գալէն գիւղն էր, երբ Սպաղանք յարձակման կ'ենթարկուէր քիւրտ ու թուրք զինուորներու կողմէ: Շուտով գիւղի երիտասարդութիւնը իր շուրջ հաւաքած կը շտապէ կամուրջի գլուխը, արգելելու համար թշնամի ուժերու անցքը կամուրջէն դէպի գիւղ: Կուրը երկար կը տեւէ եւ թշնամի ուժերը հետզհետէ կը շատնան: Ճնշումը շատ զօրաւոր է կամուրջի միւս ծայրամասէն: Եւ երբ Գալէն չորս կողմ կը նայի, կը տեսնէ, թէ իրեն կողքին կուռելու եկած գիւղի երիտասարդութիւնը ամբողջութեամբ դիրքերը լքած եւ փախած է դէպի գիւղ, զինք մինակ ձգելով թշնամիին դիմաց: Գալէն ձայն կու տայ, մինչ այդ գիւղը մնացած իր կնոջ, որ իրեն հասցնէ երկրորդ հրացան մը, ինչպէս նաեւ ձիու շղթան՝ բանալիով միասին: Երբ շղթան իրեն կը հասնի, ան շղթայի մէկ ծայրը իր ոտքին եւ միւս ծայրն ալ քովի ծառի բունին կապելէ ետք, բանալիով կը կղպէ եւ գիւղացիներուն դառնալով կը պոռայ.- «Գալէն ինքզինք կապեց եւ կղպեց ծառին շղթայով, ահա բանալին կը նետէ անդունդ: Գալէն հոս է եւ հոս պիտի մնայ մինչեւ մահ»: Բանալին անդունդ նետելէն, ան միս-մինակ կը շարունակէ կուրը: Կուրով զբաղած Գալէն, ատեն մը ետք միայն կը նկատէ, որ այլեւս ինք մինակը չէր: Գիւղացիք սկսած էին վերագրաւել իրենց կուրի դիրքերը: Ահա, գիւղի բոլոր կուռողները հոն են, աւելի վճռական եւ աւելի զօրացած: Լաւ է մեռնիլ զէնքը ձեռքին եւ ճակատի վրայ, քան սպաննուիլ խուճապահար փախուստի ճամբան:

Մութը վրայ կը հասնի, թշնամին կամուրջը անցնելու ո՛չ մէկ յոյս ունի: Բազմաթիւ զոհեր ձգած եւ յուսահատ կը հեռանայ ճակատամարտէն: Գիւղը ազատած էր: Գալէն իր կամքի արիութեամբ յաջողած էր գիւղը վերածել մէկ ամբողջութեամբ:

Ազգային հերոս Զօրավար Անդրանիկ, իր յուշերուն մէջ կ'անդրադառնայ Սպաղանք գիւղը այրող Պշարա խալիլի սպաննութեան շուրջ.- «Աղբիւր Սերոբի վրէժը լուծելու համար, հայդուկները կ'որոշեն ձեռք անցընել աշիրաթապետ խալիլը եւ հետապնդումներէ ետք կը կտրեն անոր ճամբան: «Յանկարծ տեսայ խալիլը», կը պատմէ Անդրանիկ, «դուրս եկաւ դէպի մեզ: Այս անգամ տղաքը չէին տեսներ խալիլը: Քովիս ընկերներէն Գալէն տեղ մը ուղարկեցի, որ այդտեղից ոտաւոր մարդ չփախչի: Գլուխս դիրքէն վեր հանեցի ու պոռացի. «Շան որդի, ու՞ր պիտի ազատիս»: Ան ինքզինք ապահով կը զգար, թէ ազատուած է, բայց իմ պոռալուս՝ քիչ մը ձիւն կանգնեցուց, սակայն կրկին արագութեամբ սկսաւ վազցնել: Մի-մի հատ կրակեցինք, չբռնեց: Մտածեցի ձիւն է փախցնողը: Մի-մի ձիւն զարկինք: Ընկերոջս ըսի.- «Վեր կեցիք, խանջալները քաշենք, երթանք»: Ան ըսաւ.- «Ձին ալ չզարնուեցաւ», բայց ես հաստատ համոզուած էի, որ ձիւն զարնուեցաւ: Ռոպէ մը չտեւեց, ձիւն ինկաւ, խալիլի ոտքը մնաց ձիու տակ: Ան մեզմէ 400 քայլ հեռու էր: Մինչեւ վրայ հասնելն իս, Գալէն ոտնաւորի փախուստը կեցուց: Քիւրտը ծունկի չոքաւ, որ զարնէ Գալէին: Ղամաս (խանջալ) խածի ատամներով, երկու փամփուշտ զարկի էտ չոքած քրտուն, ան գնաց ինկաւ բլուրներու մէջ: Վազեցինք, բռնեցինք խալիլին: Անոր նստեցուցի եւ տուի Գալէի ձեռքը: Այդ ատեն ուզեցի քանջալովս զարնել, մոռցած էի, որ պայմանաւորուած էինք հարցաքննութիւն ընելու:

Մակար, Գէորգ, Յարութիւն հեռուէն պոռագին.- «Բան մը պիտի հարցնենք, մի՛ գարնեք»: Ես սպաննեցի, մինչեւ անոնց գալը:

«Այդ ժամանակ չորս կողմ հաւար էր ընկած: Մեր հրացանը սարի գա- գաթէն մինչեւ դաշտ արձագանգ կու տար: Շատ գիւղեր հասկցան, որ Խալիլը կը սպաննեն, որովհետեւ գիտէին անոր այդ ճամբայէն երթալը:

«Գէորգ եւ Յարութիւն բռնեցին Խալիլի թեւերէն եւ գլխամագերէն: Յարութիւն հարցուց.-

- Խալիլ, դը բէժէն դու է (Խալիլ որ կ'ըսեն, դո՞ւն ես):

Խալիլ ըսաւ.-

- Հել հիարիա ազըմ (հա', ե'ս եմ):

«Սարը Սերոբ Փաշա դու շարժէքը, դու խարխեսրաբքը (Սերոբ Փաշա- յի գլուխը դո՞ւ կտրեցիր, եւայլն, դուն էիր որ Սպաղանք գիւղը քանդեցիր):

«Իրմէ ձայն չէր ելլեր, պատասխան չէր տար:

- Ովքե՞ր էին հայ լրտեսներդ:

«Ան միայն կրցաւ ըսել.-

- Բասը, բասը, իշխուլումը թամամ բըր (բա՛ւ է, բա՛ւ է, ժամանակս լը- րացեր է):

«Գէորգ եւ Յարութիւն երկու կողմէն գարկին երկու խանջալ: Ես կըտ- րեցի գլուխը, որովհետեւ կը շտապէինք, հաւար հասնելու էր»:

Ինչպէս յիշեցինք, Սպաղանաց Գալէն մասնակցած է բազմաթիւ կռիւ- ներու, որոնց կարգին յիշենք հետեւեալները.-

Բերդակի կռիւին Գալէն կը վիրաւորուի թեւէն: Ֆետայիները, 10-15 հոգինոց խումբերու բաժնուած կը ցրուին գիւղերը: Գալէին դարմանելու հո- գը ստանձնած էր Կելիեկուզանցի Ռէյս Աւէն, որ գիւղին բժիշկի համբաւ կը վայելէր:

Յայտնի չէր, թէ Ռէյսը ի՞նչպէս կը կիրարկէր իր գիտութիւնը, գոր սորված էր, բայց իր խնամքներուն շնորհիւ, Գալէին վէրքը կը գոցուէր օրէ- օր: Խումբը գիւղերը կը պարտկուէր գոմին մէջ, մօտ չորս հարիւրի չափ ոչ- խարներու հետ, իսկ ցերեկը՝ զինավարժութեամբ կ'անցընէր ժամանակը:

Երբ Գալէն ինքզինք բաւական ուժեղ զգաց, խումբը հաւաքուեցաւ Խը- տան գիւղը, որպէսզի այնտեղէն ուրիշ խումբերու հետ անցնին Գեփին Սարը:

Կելիեկուզանի կռուին Գալէն կը մասնակցի որպէս տասնապետ, Սպա- ղանաց Մակարի դիրքերը պաշտպանելով: Թշնամին կը յաջողի գրաւել Կոտոյ Հաճիի դիրքերը եւ սուլիններով քշել հայ մարտիկները, սակայն անկարող կ'ըլլայ նուաճել Սպաղանաց Մակարի դիրքերը, որոնք կ'իշխէին բոլորին վը- րայ: Սպաղանաց Մակար յամառ է ու անընկճելի, ինչպէս են նաեւ իր տասնա- պետները՝ մասնաւորապէս մօրուք Կարօն եւ Սպաղանաց Գալէն:

Ֆետայիները ժողով կը գումարեն, որուն կը մասնակցի նաեւ Ղասըմ Պէկը: Մակայն անոր ներկայութիւնը կասկածանքով կ'ընդունուի կարգ մը ֆետայիներու կողմէ, որոնցմէ գլխաւորը Ջնտոն էր:

Գալէ, որպէս փորձառու եւ հեռատես ֆետայի, կը ձայնակցի Ջնտոյին եւ կ'ըսէ.- «Աստուած լէ հախ է, Ջնտոյի ըրած խօսքերը շատ դրուստ է: Ես լէ քրտերին լաւ կը ճանչնամ, անոնց ազդեցութիւնը շատ է Ռայա քրտերի վրայ, եթէ պէկերը եւ աղաները չըլլան, Ռայա քրտին կը դարձնենք այնպէս, ինչպէս

որ մենք կ'ուզենք: Ռայա քիւրտը վախկոտ է, կտրիճ կը դառնայ այն ատեն, երբ մէկը իրեն կը հրամայէ: Ես էլ Ջնտոյին համաձայն եմ Ղասըմ Բէկը մէջտեղէն վերցնելու»:

Աւա՛ղ, Ջնտոյին եւ Գալէին կասկածանքին ընթացք չտրուեցաւ եւ նենգ գազան Ղասըմ Բէկը տմարդօրէն, քնացած տեղը սպաննել տուաւ Ջնտոյին, Մէյտոյին եւ համալսարանական կրթութիւն ստացած Ջաւէնին, միեւնոյն տան մէջ, ուր տեղի կ'ունենար գինուորական խորհրդակցական ժողովը:

ՂԱՐՍ ԳԻՒՂԻ ԿՈՒՒՐ՝ 25 ԱՊՐԻԼ 1905ԻՆ

Այդ օր, Գէորգ Չաւուշ իր հետ ունէր 30ի չափ ընտիր մարտիկներ, որոնցմէ յիշենք Սպաղանաց Գալէն, Շենիկցի Մանուկը, Չոլոն, Ղազարը, Աւրանայ Արամը, Չաթօն, Մօրուք Կարօն, Մշեցի Եղոն, Ասատուրն ու Ախոն, Պօղէն եւ Մօսոն, Մոկուցի Ղազարը եւ իր ընկերները, բոլորն ալ տասնեակ կը ուիւնէր տեսած, մարմինները վէրքերու սպիներով ծածկուած, սակայն, հոգիները պողպատով ամրացուած հայդուկներ:

Բանակը կը հասնի գիւղ եւ կ'ուզէ խուզարկել տուները: Ֆետայիները ձերբակալելու համար: Կը հասնին Գէորգի եւ Գալէի թաքստոցը: Թշնամին կրակ կը բանայ, որուն կը յաջորդէ Գէորգի ազդանշանը: Գալէ ու միւս ֆետայիները համազարկներով դուրս կ'ելլեն իրենց թաքստոցներէն եւ Բաւայ Մարգարի տանիքին վրայ կը սպաննեն Մայաղինը: Ասոր վրայ թշնամին փախուստի կը դիմէ:

Հիւսնի Բէկը, որ մեծ վստահութեամբ եկած էր սպաննելու Գէորգը, իր ձեռքն ունէր Աղբիւր Սերոբի հրացանը, զոր ամէն տեղ հպարտութեամբ ցոյց կու տար եւ կը խօսէր իր հերոսութիւններուն մասին: Գէորգ տեսնելով, որ թշնամին կը մօտենայ իրեն, կը համբերէ, որ ան աւելի առաջանայ: Բայց, անհամբեր Գալէն, որ կը գտնուէր Գէորգէն աւելի բարձր դիրքի մը վրայ, շեշտակի մէկ հարուածով գետին կը տապալէ յոխորտացող Հիւսնի Բէկը:

Թշնամին կրկին յարձակում կը գործէ, սակայն, Գալէն եւ Չաթօն, Չոլոն ու Մանուկը կը խոյանան թշնամիներուն վրայ եւ փախուստի կը մատենն զանոնք: Սակայն, թշնամին աւելի մեծ թիւով ասկարներով կը մօտենայ ֆետայիներու դիրքերուն: Անոնք կը պոռային.- «Ջանֆետալար թէսլիմ օլուն, ձեր բոլորին համար Ստամպուլէն ներում կը բերենք, իսկ եթէ յամառիք եւ կռուիք, բոլորդ կը կոտորենք»:

Գալէն, որ Գէորգի քով պառկած պաղարիւն կերպով մտիկ կ'ընէր նըման բացազանչութիւնները եւ երբեմն-երբեմն ալ կը կրակէր թշնամի դիրքերուն վրայ, գլուխը քիչ մը բարձրացնելով կը սկսի քրտերէն հայհոյելու.- «Մըդ Գեւէ փեխամպարէ», եւ կրակ բացաւ գերեզմանաքարէն գլուխը վեր բարձրացուց քիւրտի մը, որ գլորեցաւ վար եւ սատկեցաւ:

ՍՈՒՆՈՒՄԻ ԿՈՒՒՐ՝ 27 ՄԱՅԻՍ 1907ԻՆ

Մայիս 25ին, Գէորգն ու իր ջոկատը մտան Սուլուխ գիւղ: Մինչեւ Մա-

յիս 25ի վերջալոյսը Սուլուխ հաւաքուեցան 84 հայդուկներ: Սուլուխցի Մեսրոպի տունը ջուր տաքցուցին, լողցան, խորոված պատրաստեցին եւ ուրախ կատակներով 84 հայդուկներ: Կը խօսակցին, երազ կը մեկնեն:

Սպաղանաց Գալէն չի մասնակցիր այդ գուարճութիւններուն: Ան օդայի մէջ հանգիստ նստած կը ծխէր: Յանկարծ, ներս կը մտնէ Սուլուխցի Մեսրոպը՝ գոյնը նետած, յայտնելով թէ Մուշէն գօրք կուգայ եւ արագութեամբ պատին մօտենալով, գէնքերը կը կապէ:

- Շա՞տ է, թէ քիչ, կը հարցնէ Գէորգ:

- Խոփերու դաշտը սեւացած է:

Հայդուկապետը հեռադիտակը վերցնելով կը բարձրանայ տանիք: Գալէն անշարժ նստած է տակաւին:

- Ա՛յ Գալէ, վե՛ր կաց, կը ձայնէ Գէորգ:

- Հը՛չ կացէք, կը պատասխանէ Գալէն, ծխամորճի կրակը նորոգելով:

Կուիւր կը սկսի Օսմանեան բանակին եւ քիւրտ աշիրէթներուն Քէօսա Պին Պաշիի ղեկավարութեամբ եւ հայ Ֆետայիներուն միջեւ: Կուիւր ընթացքին Քէօսէ Պին Պաշին կը սպաննուի: Թշնամի գօրքերը փախուստի կը մատնուին:

Գէորգի աջ կողմը կը կռուէր Գալէն: Յանկարծ անոր հրացանը կը դադրի կրակելէ: Գէորգը շուռ կու գայ դէպի Գալէն: Իր հայդուկային պատանեկութեան ընկերը՝ Գալէն սպաննուած էր: Կը յանձնարարէ Գալէն իջեցնել Քիւչուկի ախոռը, իսկ ինք կը շարունակէ կռուիլ: Բայց, յանկարծ, կրակել կը դադրի նաեւ Գէորգի հրացանը: Չսպանակը փճացած է: Ան ծունկը գետին իջեցուց եւ փորձեց կարգի դնել հրացանը, բայց այդ ժամանակ զնդակ մը անցնելով Գէորգի աջ թիկունքէն խոցուեցաւ անոր ծունկին մէջ: Գէորգը ձեւով մը կտուրէն վար իջաւ, մտաւ ախոռ եւ գիտակցութիւնը կորսնցուցած ինկաւ զոհուած ընկերոջ Գալէին կողքին: Գալէն երկու աչքէն կուրցած էր եւ սպաննուած, իսկ Գէորգ Չաւուշ վիրաւոր նստած էր:

Տալով աւելի քան 150 սպաննուած եւ շուրջ 250 վիրաւոր, Օսմանեան բանակը Սուլուխը չկարողացաւ գրաւել: Հարկադրուած Մուշէն թնդանօթներ բերել տուաւ:

Հայդուկներն ու սուլուխցիները, երբ կը մթնէր, կը թողուն իրենց դիրքերը եւ վերցնելով Գալէին դիակը եւ վիրաւոր Գէորգին կը հեռանան Արածանիի ուղղութեամբ:

Շենիկցի Մանուկը Ալզոնացի Մկոյի ուսէն վար կ'առնէ Գալէի դիակը, կը համբուրէ իր համեստ ընկերոջ ճակատը եւ դիակը կը նետէ Արածանիի ջուրերուն մէջ: Նոյն բանը ըրին նաեւ Հազոյի եւ Հասանոյի դիակներուն հետ: Վիրաւոր Գէորգին կը կապեն ձիու թամբին ու Մուրատ գետի հոսանքին հակառակ ուղղութեամբ կը շարժին դէպի Ղաշղալիթաղ գիւղը: Գէորգին կը դընեն եղջերուտի մէջ, ծածկելով կանաչ թուփերով, երեք սուլուխցիներուն պահակ կարգեցին անոր եւ գետը անցնելով հեռացան:

Յաջորդ օրը իր գօրախմբով այդտեղէն կ'անցնի քրտական ցեղապետներէն Չայնալ Բէկը եւ տնքոց լսելով կ'երթայ ձայնի ուղղութեան: Մածկուած թուփերը վերցնելով կը տեսնէ հայդուկի մեռնող դէմքը:

- Ջուր... կը լսուի մահամերձէն:

Ան Գէորգին կը ճանչնայ եւ անմիջապէս կը յանձնարարէ գրական Վրածանիէն ջուր բերել: Չայնալը Գէորգի գլուխը կը բարձրացնէ եւ գրական ջուրը կը մօտեցնէ անոր շրթունքին: Քիւրտ ցեղապետի ձեռքերուն վրայ հոգին կ'աւանդէ հայ ժողովուրդի պանծալի գաւակներէն Գէորգ Չաւուշը՝ 27 Մայիս 1907ին:

Սուլուխի կռիւին նահատակուեցաւ նաեւ անձնուէր եւ դիւցազուն Ֆետայի Սպաղանաց Գալէն:

Գէորգ Չաւուշի, Գալէի եւ հարիւրաւոր Ֆետայիներու ազգանուէր կեանքը օրինակ դարձաւ մերօրեայ քաջ Ֆետայիներուն, որոնք իրենց կեանքը զոհեցին Արցախի ազատագրական կռիւներուն եւ ազատագրեցին բռնագրաւուած հայ հողերը ատրպէյճանական տիրապետութենէն:

«ՅՈՐԻՉՈՆ»

29 Դեկտեմբեր - 5 Յունուար 2004

Գ.

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՍԷՐ

Մկրտիչ արթնցաւ: Գիշերը ուշ քնացած էր: Իսկ քնանալէ ետք, երկար ատեն մտածումներու, արկածալից երազներու եւ յուսահատութեան ճիրաններուն մէջ գալարուած էր: Քաշեց պատուհանին վարագոյրը: Արեւը արդէն բաւական բարձրացած էր: Մարմնին վրայ կոտորտուք մը զգաց, թուլութիւն մը: Արդեօք ուշացած էր: Չըլլայ որ շոգեկառքը մեկնած ըլլայ: Առանց նախաճաշի մասին մտածելու դուրս խոյացաւ:

Փողոցը տարբեր էին մարդիկ, տարբեր՝ հնամենի քաղաքը: Մարդկային բազմութեանց ալիքներ կը դիմէին դէպի շոգեկառքի կայարանը: Մկրտիչ գրեթէ կը վազէր: Նոյնիսկ հանրակառքը սպասելու տրամադրութիւն չունեցաւ: Մարիին պէտք է հասնիլ: Կ'ուզէր գոնէ վերջին անգամ ըլլալով տեսնել զայն: Դիտել անոր հրեշտակային դէմքը եւ լսել հրաժեշտի սրտայոյզ խօսքերը: Միակ սեւեռում մը ունէր, շուտով հասնիլ կայարան:

1947ի վերջին կարաւանն էր, որ կը մեկնէր: Այդ օր, 1946ին սկսած դէպի Հայաստան ներգաղթելու արտօնութիւն ստացած տարագիր հայեր կ'աճապարէին հասնելու Հալէպի շոգեկառքի կայարանը: Շոգեկառքը եւ նաւը կը բաժնէր մօտ երկու հարիւր միոն հեռաւորութիւն մը:

Շոգեկառքի մեկնումէն կէս ժամ առաջ, Մկրտիչ հասաւ կայարան: Առանց կողմերը նայելու, ճեղքեց ծովացած բազմութիւնը, որոնք բարի ճանապարհ մաղթելու եկած էին իրենց հարազատներուն եւ հսկայ շոգեկառքի վակոններուն պատուհաններուն առջեւէն անցնելով փնտռեց իր սիրած էակը: Գրնացքը կը բաղկանար պարզ վակոններէ, որոնք տրամադրուած էին ներգաղթող ընտանիքներուն: Արցունք կար անոնց աչքերուն մէջ, նաեւ՝ բարի ճանապարհ մաղթելու եկած ազգականներուն աչքերուն մէջ, արցունք, որ կը բխէր ուրախութեան եւ յուզումի զգացումներու միաձուլումէն:

Հինգերորդ վակոնին մէջ տեղաւորուած էին Մարին եւ իր ընտանիքը: Մարին տեսնելով Մկրտիչին արտասովոր դէմքը, ալլալեցաւ եւ պատուակով մը ծնողքին իմացուց, որ կ'ուզէր վար իջնել: Գնացքէն վար իջնելով գլուկընդախառնուեցաւ Մկրտիչին եւ յուզումնախառն զգացումներով գինովցած, դանդաղօրէն հեռացան հաւաքուած բազմութենէն: Այդ վայրկեաններուն երկուքն ալ վերացած էին: Կը նայէին իրարու, կարծես առաջին անգամ կը տեսնէին զիրար: Բան մը կը զգային էր բերանները: Կը քայլէին մագնիսացած, նայելով իրարու աչքերուն եւ զարմանալիօրէն կը հասկնային իրար: Առաջին խօսողը եղաւ Մարին:

– Մկրտիչ, ինքզինքս աշխարհի ամենաերջանիկ անձը կը զգայի, երբ ճանչցայ քեզ, հակառակ բազմաթիւ խոչընդոտներու ու պատահարներու, սիրեցի քեզ առանց վհատելու: Բայց այսօր, այնպիսի պատուար մը կը բարձրանայ մեր միջեւ, որ անկարելի կը դարձնէ մեր երջանկութիւնը: Բազմաթիւ դժուարութիւններ անցուցի, բայց չյուսահատեցայ: Քու լայն սիրտդ հովանի եղած էր ինձի եւ սէրդ՝ ճանապարհ: Շատ տառապեցայ, բայց երբեք չմտածեցի նահանջի մասին, որովհետեւ, առանց քեզի աշխարհը ունայն է ինձի համար: Բայց այսօր... յիշատակ դարձան մեր բոլոր ապրումները, երազներն ու իտ-

էալները, որոնցմով կը շինէինք մեր ապագայ երջանկութեան բոյնը: Հազար անգամ պիտի ցանկայի մեռնիլ քու ձեռքերուդ մէջ եւ չտեսնել այս օրը: Շատ մտածեցի, բայց չկրցայ եզրակացութեան մը յանգիլ:

– Շատ ծայրայեղութեան կ'երթաս, Մարի,– ըսաւ Մկրտիչ.– անցեալը քրքրելով բան չենք շահիր, հիմա ներկայով զբաղինք: Մի քանի վայրկեանէն արդէն մեկնած կ'ըլլաս, զիս ձգելով հոս առանձին: Այժմ կ'ուզէի քու անոյշ ու սփոփարար խօսքերդ լսել: Բայց, երբեմն ալ իրաւացիօրէն արդար կ'ըլլայ անցեալի վերլիշումը: Քանի՛ քանի՛ անգամներ ուզեցի համոզել ծնողքդ որ չերթան, անկարելի եղաւ: Հայրդ բաւական յամառ է: Չկրցայ համոզել զինք, որ եղածը իրական ներգաղթ չէ, թէ կոմիտէներուն պոռոտախօսութիւններուն պէտք չէ հաւատալ, թէ Հայաստան հնարաւորութիւն չունի մեծ թիւով ներգաղթողներ ընդունելու, թէ եթէ իրապէս հայեր պիտի տանէին հայրենիք, հապա ինչո՞ւ ազգային միութիւններէ եւ կազմակերպութիւններէ հրաժարելու խայտառակութիւնը ստեղծեցին:

– Ինձի կ'ըսես, որ անցեալը մի՛ քրքրէր,– ըսաւ Մարի,– բայց դուն, հիմա, վերջին պահուն նման հարցերու մասին կը խօսիս: Հաշտուինք իրականութեան հետ:

– Իմ պատմածս պատմութիւն չէ,– պատասխանեց Մկրտիչ.– այլեւ ճշմարիտ ու անողոք իրականութիւն: Հայաստան մեկնողներուն հարիւրին ինիսունը փոր մը հացի եւ հանգիստի համար կ'երթան, ատոնց կարգին քու հայրդ: Այս է իրական վիճակը: Այդ գացողներէն շատեր պիտի յուսախաբուին: Դուն պիտի տեսնես եւ դուք ձեր մորթին վրայ պիտի զգաք այս բոլորը, եւ, մտքիդ մէջ իմ խօսքերս լաւ դրոշմուած ըլլալով, երբ ոտքդ կոխես հայրենի պաշտելի հողին վրայ, իմ խօսքերուս ճշմարտութիւնը հաստատելով, պիտի յիշես զիս ու իմ պատկանած կուսակցութիւնը. եւ յիշելով անոր անշահախընդիր հայրենասիրութիւնը պատմես մեր երկրի նորահաս սերունդներուն: Բոլոր անոնք, որոնք մեզի «հակահայաստանեան», «դաւաճան» եւ «պուրժուայ» կը կոչեն, անոնք շատ լաւ գիտեն, թէ մենք ստեղծուած են հայ ժողովուրդին եւ հայ հայրենիքին ծառայելու համար: Մենք գաղափար մը ունինք, որուն իրականացման համար պատրաստ ենք մինչեւ իսկ մեր կեանքը զոհելու եւ մեր արիւնը տալու: Այդ է Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի ստեղծում: Ներկայ Հայաստանը մեր պատմական հայրենիքին հազիւ մէկ տասներորդն է: Մնացեալ հողերը կը մնան մեր թշնամիներուն կողմէ գրաւուած: Պիտի ստեղծենք հայրենիք մը, որ իր դռները լայն բանայ բոլոր հայերուն առջեւ անխրտիր: Ուրեմն հասկցա՞ր մեր հայրենասիրութեան աստիճանը:

Տակաւին այս խօսակցութիւնները երկար պիտի տեւէին, եթէ չլսուէր շոգեկառքին սուլիչը: Մարի սթափեցաւ, մօտեցած իր բաժանումի պահը: Կ'ուզէր «մնաք բարով» ըսելով մեկնիլ, սակայն ոտքերը գամուած էին գետնին: Մինչ այդ երկու թեւեր կամարուեցան աղջկան մէջքէն եւ սիրոյ կարօտ շըրթներ իրար փնտուեցին... Այսպէս, առանց խօսակցութեան, քանի մը անգամ, որոնք աղջիկէն մնալիք վերջին յիշատակները պիտի ըլլային:

Այնուհետեւ, երկու սրտերն էին որոնք արագ զարկերով կը խօսակցէին իրարու հետ: Անդին, զոյգ մը թռչուններ կեցած քովի ելեկտրական ձողին, նախանձող աչքերով կը դիտէին երկու սիրահարներուն սրտածմբիկ բա-

ժանուժը, իսկ հեռուն, ձերմակ ամպի մը ետեւէն արեւը անտարբեր կը դիտէր եւ կը տարածէր իր քաղցր ջերմութիւնը:

Հնչեց շոգեկառքին երկրորդ զանգը: Բաժանում...

Մարի շնչասպառ հասաւ ծնողքին մօտ, որոնք մտահոգութեամբ զինք կը փնտռէին: Տեղաւորուեցաւ վակոնին մէջ: Մօտեցաւ պատուհանին ու սկսաւ դիտել դուրսը: Մկրտիչ միայնակ, հեռուէն կը դիտէր իր սիրոյն վերջին արարը:

Եւ ահա, շոգեկառքին անիւները սկսան դառնալ: Ձերմակ թաշկինակներու ալիք մը բարձրացաւ օդին մէջ: Շոգեկառքին անիւները արագացան, աներեւոյթ դառնալով հորիզոնին վրայէն, հետը տանելով Մկրտիչին սիրտը...

*

**

Գնացքը մեկնելէն ետք, Մկրտիչ, արցունքները զսպելով, քայլամուտք, հալածուած անտեսանելի յուզումի ալիքներէ, հասաւ տուն եւ յոգնաբեկ, ինքզինքը նետեց մահճակալին վրայ: Առտուան խօսակցութիւնները, բաժանման սիրակէզ համբոյրները եւ Մարիին սրտածմբիկ արցունքները կ'այրէին ողջ էութիւնը: Ան գոցեց աչքերը եւ ահա, ժապաւէնի նման անցեալի դրուագներ սկսան տողանցել իր մտքի պաստառին վրայէն:

Մկրտիչ հագիւ 18 տարեկան էր, երբ ծանօթացաւ Մարիին հետ: Ազատ Ֆրանսական բանակին կը ծառայէր, հագիւ մէկ տարուան շրջան մը բոլորած, տասնապետ ըլլալու դասընթացքը աւարտած ըլլալով պրիկատիէ կոչումը ըստացած էր, միեւնոյն ատեն ինքնաշարժ վարելու դասընթացքի ալ հետեւելով, ստացած էր նաեւ ինքնաշարժ վարելու վկայականը:

Մկրտիչ որպէս ուշիմ գինուոր, արժանացած էր սպաներուն ուշադրութեան եւ գնահատանքին, որ թնդանօթածիզ բանակի բոլոր գիտելիքները սորվելու դասընթացքներուն հետեւելու առիթ ընծայած էին իրեն:

Մարիին ծանօթացաւ իր մէկ ընկերոջ միջոցաւ, որ իր մօրը հետ կը բնակէր Նոր Գիւղի չորրորդ թաղամասին մէջ գտնուող Մարիենց պատկանող բակով տունին մէկ սենեակին մէջ: Մկրտիչին եւ իր ընկերոջ յարաբերութիւնները շատ սերտ էին: Ան ամենայն ազատութեամբ մոտք կը գործէր ընկերոջ տունը, նկատի ունենալով, որ ընկերը տան մէջ կը զբաղէր դերձակութեամբ եւ միշտ տունն էր:

Մկրտիչ գինուորական տեսակաւոր ինքնաշարժերով, քիչ մըն ալ ցուցամուտքեամբ կը մտնէր թաղը եւ թաղեցիներուն նախանձելի աչքերուն առջեւ ժամերով կը հանգչէր Մարիենց դուրսի դուռին առջեւ:

Օր մը, երբ Մարի կը գտնուէր Մկրտիչին ընկերոջ տունը, Մկրտիչ գինուորական տարագով ներս մտաւ: Զինուորական ինքնաշարժը դուրսի դուռին առջեւն էր: Մկրտիչին մոտքովը Մարի յանկարծակի եկաւ եւ միայն «բարի եկաք» մը կըրցաւ փսփսալ Մկրտիչին: Լռութեան մէջ, Մկրտիչին եւ Մարիին նայուածքները բաւական ատեն զիրար փնտռելէ ետք, կանգ առին, քննեցին, խօսեցան, գրկեցին զիրար եւ ակամայ բաժնուեցան:

Հոգեկան կապը հաստատուած էր: Սիրոյ կրակը վառուած էր երկու սրտերուն մէջ:

Մինչ այդ, Մկրտիչ անծանօթ աղջիկը ճանչնալու պէտքը զգաց եւ դիմելով ընկերոջը հարցուց.

– Գէորգ, օրիորդը չեմ ճանչներ, կ'ուզե՞ս ներկայացնել:

– Օ՛, ներողութիւն,– պատասխանեց Գէորգ.– Օրիորդ Մարի Պալեան, մեր տանտէրին աղջիկը,– եւ դառնալով Մարիին ըսաւ,– Իմ ամենասիրելի ընկերս՝ Մկրտիչ Սահակեան, որ ներկայիս կը ծառայէ Փրանսական բանակին:

Երկու ձեռքեր, կարծր եւ փափուկ, իրար գրկեցին եւ դողողագին սեղմումէ մը ետք աւամայ բաժնուեցան, նոյն ատեն իրենց ուրախութիւնը յայտնեցին այս բարեբաստիկ ծանօթացման համար:

Մկրտիչին այցելութիւնները բազմացան Գէորգենց տունը, որոնք պատճառ դարձան, որ աղջկան ծնողքը նկատեն ստեղծուած յարաբերութիւններու մասնաւոր նպատակ մը հետապնդելը: Աղջիկը մօրը խոստովանեցաւ, որ կը համակրէր Մկրտիչին:

Մայրը, որ միշտ մտահոգուած էր իր աղջկան արժանի ամուսին մը ունենալու համար, վայրկեան մը անճրկեցաւ, սակայն, նկատի ունենալով իր աղջկան մօտեցումը Մկրտիչին, հաշտուեցան եղելութեան հետ: Եւ երբ Մկրտիչ կրկին այցելութեան եկած էր Գէորգենց, Մարիին մայրը նամակ մը գրել տալու պատճառաբանութեամբ Մկրտիչը հրաւիրեց իրենց տունը: Նամակը գրեց եւ այդ առիթով ծանօթացաւ Մարիին ընտանիքին բոլոր անդամներուն: Մկրտիչ ժամէ մը աւելի հոն մնալով, հաճելի ժամանակ անցուց եւ ուշացած ըլլալը յայտնելով պատրաստուեցաւ մեկնելու, նկատի ունենալով որ կէսօրուան կէս ժամ մնացած էր: Բայց Մարի եւ մայրը խնդրեցին որ անպայման իրենց հետ ճաշէ: Մկրտիչ սկիզբը պատճառաբանեց, որ շատ կարեւոր գործ ունի եւ պէտք է երթայ, սակայն, վերջի վերջոյ տեղի տուաւ, հրաւէրը իր սրտին ալ շատ մօտ ըլլալով:

Անոնք ճաշեցին ուրախ եւ հաճելի մթնոլորտի մը մէջ: Մկրտիչ եւ Մարի, միշտ գաղտնի եւ զմայլելի նայուած քներ կը փոխանցէին իրարու, փափաքելով, որ ճաշի արարողութիւնը երկար տեւէր: Անթապցիական «չիքէօֆթան» եւ «սալթան» ախորժակով կերաւ եւ քաղաքավարական շնորհակալութիւնները յայտնելէ ետք, ստիպուեցաւ մեկնել: Երբ զօրանոց հասաւ ժամը երկուքը անցած էր:

Մկրտիչ առանց բացակայելու սկսած է ամէն օր յաճախել իր ընկերոջ Գէորգենց տունը, չհամարձակելով ուղղակի Մարիենք տունը մտնել: Բայց Մարի Մկրտիչին գալը զգալով, իրենց դրան առջեւ կը կենար եւ Մկրտիչին դուրս ելած ատեն իրենց տունը կը հրաւիրէր:

Օր մը, երբ կրկին Մկրտիչ Գէորգին տունէն դուրս կ'ելլէր, Մարին զինք իրենց տունը քաշեց: Մայրը տունն էր, սակայն, հինգ վայրկեան ետք, շողած խմորը փուռը տանելու պատճառաբանութեամբ, տունէն հեռացաւ, Մկրտիչը եւ Մարին միմեկի ձգելով, երկու սիրահարներ հիացումով կը նայէին իրարու, խօսելու տրամադրութիւն չունենալով, վերջապէս բան մը ըսելու համար Մարի ըսաւ.– Մկրտիչ, կրնա՞մ զինուորական գլխարկը՝ «քէփի» դրուխս դնել, նայիս ինծի պիտի վայելէ՞:

– Անշուշտ կը վայելէ,– գլխարկը Մարիին տալէ ետք ըսաւ Մկրտիչ,– Գեղեցիկ մը ինչ որ հագնի կամ կրէ, մարմնին վրայ անպայման կը վայելէ: Դուն պարզութեանդ մէջ իսկ գեղեցիկ ես: Ես քեզի սիրեցի պարզութեանդ մէջ: Կը յիշե՞ս, քեզ տեսած առաջին օրը, պարզ հագուստ մը կը կրէիր:

– Կը սիրե՞ս գիս Մկրտիչ,– հարցուց Մարի:

– Այո՛... , իսկ դո՞ւն:

– Պատասխանս աւելորդ է:

– Վստահի՞մ որ ուրիշը չես սիրեր:

– Երբեք, դուն ես իմ առաջին սէրս:

– Սիրելիս, մեկնիմ այլեւս, արդէն ուշացայ, մայրդ կրնայ ուշանալ:

– Ե՞րբ մեզի ինքնաշարժովդ պիտի պտտցնես:

– Այս իրիկուն... .

– Ուրեմն պատրաստուի՞նք:

– Այո՛... .

– Ժամը քանիին:

– Ութին:

– Յը՛... .

– Յը՛... .

Իրիկունը, Մկրտիչ, զինուորական ինքնաշարժով մը եկաւ: Մարի տեղաւորուեցաւ Մկրտիչին քով: Մայրը չէր ուզած գալ: Ֆրանսական զինուորական մեքենան թաղէն դուրս գալով միացաւ կուպրուդիին: Մարին, որ գմայլելի ձայն ունէր, սկսաւ ապրումով երգել: Երկու սրտերուն մէջ խռովք մը կար, պաղ դող մը, անհասկնալի սարսուռ, որ գերեզարած էր զիրենք: Մկրտիչին աջ ձեռքը եւ Մարիին ձախը միշտ գրկած էին զիրար... . Իսկ Մկրտիչ ձախ ձեռքով հագիւ կրցած էր զսպել ինքնաշարժին արագութիւնը: Միայն երբեմն աջ ձեռքը չուզելով կը բաժնէր Մարիին ձախէն, փոխելու համար ինքնաշարժին արագութիւնը:

– Վարպետ քչոդ ես Մկրտիչ,– ըսաւ Մարի:

– Վրաս կը խնդա՞ս, չես տեսներ, որ ինքնաշարժը ինչպէս դէպի ձախ եւ աջ կ'ուղուի, գինովի մը քայլուածքին պէս:

Երկար ատեն, սիրահարներով իրարմով արբեցած, չէին տեսներ օթոյին արագութիւնը ցոյց տուող գործիքը: Արագութեան աննախընթաց թիւի մը վրայ կը սուրար ինքնաշարժը, երբ յանկարծ, ինքնաշարժը ճամբայէն շեղեցաւ եւ վայրենի ցուլի մը պէս կատաղութեամբ ճամբու եզերքի ջուրը ճեղքելով, իջաւ փոսի մը մէջ եւ զօրաւոր ցնցումով մը դուրս ելաւ: Մկրտիչ շրջաւարած եւ վախցած էր: Վայրկեան մը սառն լուծիւն տիրեց եւ Մկրտիչ որ մինչ այդ փարուած կը մնար աղջկան, յուզուած խօսեցաւ.

– Ո՛հ Մարի, ստոյգ մահէ մը ազատուեցանք: Գիտե՞ս, թէ ինչ դառն հետեւանք պիտի ունենար այդպիսի վախճան մը, մեզի եւ մեր ծնողներուն համար:

– Ճշմարիտ է սիրելի Մկրտիչ, բայց փառք տանք Աստուծոյ եւ այս չարաղէտ վայրկեանին, մեզ փրկող Աստուծոյ անունով խօսք տուր, որ մեր սէրը պիտի ըլլայ յաւիտենական եւ մենք պիտի պատկանինք իրարու, պայքարելով բոլոր տեսակի դժուարութիւններուն:

Մկրտիչ յուզուած երեւոյթ մը ունէր եւ պատասխանելու ուժ չէր գըտնէր իր մէջ: Մօտեցուց սիրատոչոր շրթները Մարիին... եւ ա՛յդպէս մնացին երկար ատեն...: Օգը ցուրտ էր, բայց անոնք չէին մսեր: Կրակ կար սրտերուն մէջ: Ժամանակը բաւական յառաջացած էր: Ինքնաշարժը բոլորովին անվնաս կը հսկէր անոնց սիրային արարողութիւններուն: Երկինքը պարզ էր, լուսնակ չկար, բայց երկինքէն անհամար աչքեր կը դիտէին երկու սիրայեղջ էակները:

– Երթանք Մարի,– ըսաւ Մկրտիչ,– այլեւս այս վիճակով անկարելի է մեր պտոյտը շարունակել:

– Այո՛,– ըսաւ Մարի,– երթանք, որովհետեւ, մայրս կը սկսի մտահոգ-ւիլ, թէեւ լուր ունի մեր պտոյտէն:

Մարի երբ տուն հասաւ, երկար ատեն կը մնար պատահարի ազդեցու-թեան տակ:

*

**

Տարիները թաւալեցան: Մկրտիչին եւ Մարիին սէրը աւելի խոր եւ ան-քակտելի դարձած էր: Միշտ իրարու հետ էին, երբեմն ալ, Մարիին ընտանիքն ալ իրենց կը միանար պտոյտներու ատեն:

Օր մը, կրկին պտոյտի գացած էին Յակոբին «ձէնկիէ» պարտէզը: Ա-մառնային կլիման մթնոլորտի ջերմութիւնը բաւական զովացուցած էր պար-տէզի ծառերուն ընդմէջէն անցնող հովերու ազդեցութեան տակ: Ամէնուրեք ծառերը հագած էին իրենց կանաչ գգեստները: Ամէն կողմ կանաչ ծով էր կար-ծես: Բնութեան գեղեցկութեան արփեցած, ազատ համարձակ կը պտըտէին, պարտիզպանէն վախ չունէին, որովհետեւ ան չէր համարձակեր արգելք հան-դիսանալ զինուորականի մը ազատ շրջագայութիւնը պարտէզէն ներս:

– Որքան գեղեցիկ ես այսօր Մարի,– ըսաւ Մկրտիչ:

– Սկսաւ նորէն: Մայրի՛կ, Մկրտիչը միշտ այսպէս վրաս կը խնդայ,– ը-սաւ Մարի:

– Չէ, աղջիկս,– ըսաւ Մարիին մայրը,– Մկրտիչ ճշմարտութիւնն է որ կը խօսի, այդ է իր ստացած իրաւ տպաւորութիւնը: Դուն այս վայրկեանիս կրնաս ուրիշին տգեղ երեւիլ բայց Մկրտիչին համար չնաչխարհիկ էակ մը կրնաս ըլլաւ: Անշուշտ ես կը խօսիմ փորձառութեամբ,– դառնալով Մկրտիչին հարցուց,– Մկրտի՛չ կ'ուզե՞ս, որ Մարի իր մագերը գանգրացնէ, թէ այսպէս մնայ:

– Ո՛չ, ո՛չ, ես կ'ուզեմ, որ Մարին մնայ պարզ, առանց չպարի: Դուն պէտք է գիտնաս, որ ես մարմնական գեղեցկութենէն աւելի հոգիի գեղեցկու-թիւնը կը փնտռեմ:

Անոնք այսպէս մտերմաբար կը զրուցէին, եթէ պարտիզպանները եկան եւ լծացած ջուրը բացին, որպէսզի ջրեն արտերը: Աւագանը հետզհետէ կը պարպուէր:

Մկրտիչ եւ Մարի թեւանցուկ կը յառաջանային պարտէզին խոտերը եւ ամայութենէն օգտուելով, յաճախակի համբոյրներով կը յայտնէին իրենց սէրը իրարու:

*
**

Մկրտիչ արթնցաւ սրտատրոփ երազանքէ, ուրախ եւ տխուր յիշատակներով ողողուած: Մայրը զինք ճաշի կը հրաւիրէր: Գրեթէ ուժասպառ, մօրը օգնութեամբ մօտեցաւ ճաշի սեղանին, սակայն, չկրցաւ ճաշել, ախորժակ չունէր: Երեւակայութեամբ Մարիին հետ էր: Շոգեկառքը կը մօտենար Պէյրութ, ռուսական «փոպետա» նաւը պատրաստ էր ընդունելու սովետական նոր քաղաքացիները:

*
**

Մարի Հայաստան հասնելէ եւ հաստատուելէ ետք, միջոցներ գտաւ ձեռով մը կապուելու Մկրտիչին հետ, սակայն այդ կապը չշարունակուեցաւ: Մը կըրտիչին ուղարկած նամակները անպատասխան մնացին...

Անդադրում հետապնդումներէ ետք, Մկրտիչ իմացաւ, որ իր սիրելին՝ Մարին, չկարենալով դիմադրել ծնողքին պնդումներուն եւ յատկապէս յուսահատելով, որ Մկրտիչին Հայաստան գալը անկարելի դարձած է, յօժարած է ամուսնանալ նոյնպէս 1947ին Պէյրութէն ներգաղթած Յակոբ Թաշճեան անունով երիտասարդի մը հետ:

*
**

Մկրտիչ, Մարիին ամուսնութենէն վեց տարի վերջ, Մարիին միանալու յոյսէն յուսահատած ամուսնացաւ Հալէպի մէջ եւ բախտաւորուեցաւ երկու զաւակներով, մանչ մը եւ աղջիկ մը:

Տարիները անցան, սովետական կարգերը քանդուեցան, 21 Սեպտեմբեր 1991ին, Հայաստանի մէջ կատարուած քուէարկութիւններով, Հայաստան յայտարարեց իր անկախութիւնը, որպէս Հայաստանի Հանրապետութիւն, ի մեծ ուրախութիւն ամբողջ հայութեան:

Հակառակ Հայաստանի մէջ ստեղծուած դժուարին պայմաններուն, արտասահմանէն հազարաւոր հայեր այցելեցին մայր հայրենիք, գոհացում տալու համար իրենց հայրենաբաղձութեան եւ ազգականներու տեսութեան կարօտին:

Մկրտիչ, երբեք չէր մոռցած իր առաջին սէրը, հակառակ իրենց բաժանումէն 50 տարիներ անցած ըլլալուն, 1997ին մեկնեցաւ Հայաստան, եւ իր արմատներուն փնտռտուքով, այցելեց գրեթէ բոլորին՝ որոնք կ'ապրէին գիւղերուն եւ քաղաքներուն մէջ:

Բախտի բերմամբ շուկայի մէջ հանդիպեցաւ Հալէպցի կնկայ մը, որ 1947ին ներգաղթած էր Հայաստան: Կնկան հարցուց, եթէ կը ճանչնար 1947ին Հալէպէն ներգաղթած Մարի Պալեան անունով աղջկայ մը, որ 1948ին ամուսնացած է Հայաստանի մէջ:

Հայաստանցի կիրնը յայտնեց Մարիին ճանչցած ըլլալը, աւելցնելով, որ Մարիենք իրենց շրջանի մէջ կը բնակին եւ պատրաստ է զինք անոր բնակարանը առաջնորդելու:

Մկրտիչ շատ ուրախ եղաւ այս հանդիպման համար եւ կանխայայտ շքանորհակալութիւն յայտնելով հետեւեցաւ տիկին Հերմինէին, այդպէս էր տիկնոջ անունը, որ ճամբան հետաքրքրական խօսակցութիւններ ունեցան իրարու հետ, յատկապէս Հալէպի հայութեան կեանքին շուրջ:

Տիկին Հերմին երբ Նոր Մալաթիա թաղը հասան, հեռուէն ցոյց տուաւ Մարիին տունը եւ ուզեց վերադառնալ, սակայն Մկրտիչ խնդրեց, որ ստուգէ եթէ Մարին տունն է: Ինք չէր համարձակէր ուղակի դուռը զարնել եւ ներս մտնել:

Մարիին տունը ըլլալը ստուգելէ ետք, հիւրերը ընդունուեցան տէր եւ տիկին Յակոբ եւ Մարի Թաշճեաններուն կողմէ, առանց ճանչնալու դրացի Հերմինին հետ եկող անձը:

Մկրտիչ արդէն իսկ ճանչցած էր 68 տարիքը բոլորած, սակայն իր առոյգութիւնն ու գեղեցկութիւնը պահած իր սիրեցեալ Մարին, առանց զգացական շարժում մը ընելու: Միեւնոյն ատեն Մարին ալ ճանչցած էր իր սիրելի Մկրտիչը, իր ճանչցած ըլլալը յայտնելով դէմքի գունափոխութեամբ եւ աչքերու ճառագոյթումով:

Մկրտիչ ինքզինք ծանօթացուց Յակոբ Թաշճեան ընտանիքին, յայտնելով իր յարաբերութիւնները Պալեան ընտանիքին հետ, Մարիին եղբայրներուն հետ ունեցած իր ընկերական յարաբերութիւններուն շնորհիւ: Եւ, տիկին Հերմինէին հետ իր ունեցած հանդիպումը պատճառ դարձաւ այս անգամ Հայաստանի մէջ, հանդիպելու իր մտերիմ ընտանիքի մէկ անդամին, վերջիչելու եւ վերականգնելու 50 տարիով կտրուած բարեկամութիւնը, մասամբ մեղմացնելով իր սիրտը կրծող կորսնցուցած սիրոյ տազնապները:

Մկրտիչ այդ օր ստացած ուրախութեան տպաւորութիւններով եւ յոգնածութիւնը պատճառաբանելով բաժնուեցաւ Թաշճեան ընտանիքին, խոստանալով ուրիշ օր մը կրկին հանդիպիլ իրենց:

Մարիին ամուսինը՝ Յակոբ, որպէս հիւրասէր հայ, հրաւիրեց Մկրտիչը անպայման իրենց ճաշի հիւրը ըլլայ շաբաթավերջին, քանի իրենց զաւակներըն ալ կրնան ներկայ ըլլալ եւ ընկերակցիլ ճաշկերոյթին:

Մկրտիչ սիրով ընդունեց հրաւերը եւ որոշուած օրը եւ ժամուն արդէն Մարիենց դուրսի դրան առջեւ էր: Երբ ներս մտաւ, խումբ մը մանուկներ ուրախութեամբ դիմաւորեցին Մկրտիչ հօբարը:

Արդարեւ, Յակոբ եւ Մարի ունեցած էին երեք մանչ եւ մէկ աղջիկ, որոնք ամուսնանալով ունեցած էին բազմաթիւ զաւակներ:

Ճաշի ընթացքին եւ ճաշէն ետք, Մկրտիչ պատմեց իր 50-ամեայ կեանքին դրուագները, ապա, պահանջեց, որ Յակոբ եւ Մարի պատմեն իրենց անցուցած կեանքին մասին:

Մարին սկսաւ պատմել իր ընտանեկան կեանքէն՝ Պաթում նաւահանգիստէն մինչեւ իր ամուսնանալը: 1948ին ամուսնացած է Յակոբ Թաշճեանին հետ: Իր ամուսինը ուսանած եւ վարպետ մեքանիք ըլլալով իր Հայաստանի ջեւանեղէն ամիս մը ետք արդէն իսկ գործ գտած էր եւ կ'աշխատէր եւ սիրո՛

լած էր իր դեկավարներէն: Ամուսնութենէն ետք ամսականի յաւելում ալ ունեցած էր, սակայն, դժբախտաբար այդ յաւելումը պաշտօնակիցներուն նախանձը շարժած էր:

Յակոբ այդ յաջողութենէն ետք, հագիւ ամիս մը անցած, Հայաստանի գաղտնի ոստիկանութեան կողմէ կը ձերբակալուի ոսկիի եւ դրամական առեւտուրով զբաղած ըլլալու ամբաստանութեամբ:

Ոստիկանութիւնը Յակոբ Թաշճեանին, նշանաւոր խառատ-մեքանիքին, որպէս դրամական առեւտուրով զբաղով դատարան կը յանձնէ: Յակոբ, դատախազին կողմէ իրեն հանդէպ եղած ամբաստանութեան որպէս ինքնապաշտպանութիւն, հետեւեալ պաշտպանողականը կ'արտասանէ դատարանին մէջ.

«Քաղաքացի դատաւոր, քաղաքացի դատախազ,

«Վալուութիւ կամ վալութային սպեկուլացիան, ասա յանցագործութեան նշանակ այս երեք բառերը, որոնք մօտիկ անցեալում կարգ մը ընտանիքների անդամներին կանգնեցրին ողբերգութեան անդունդի եզրին:

«Ո՞վ է եղել Վալութչին կամ ովքեր են զբաղուել վալութային սպակուլացիայով:

«Ո՞չ, քաղաքացի դատաւոր, Թաշճեան Յակոբը երբեք էլ չի զբաղուել վալութային սպեկուլացիայով, ոչ ոք չի կարող ասել, թէ Թաշճեան Յակոբը ոեւէ մէկից մի բան է գնել եւ ապա վերավաճառելով ուրիշին գերշահոյթ է կործել:

«Ահա նրանք, ասա այն մի տուժին անձինք, որոնք սխտեմաթիքաբար զբաղուել են վալութային սպեկուլացիայով եւ դարձել են այդ կեղտոտ գործարքների մոլեռանդ հեղինակները:

«Ահա նրանք, ասա այն անյագուրդ շահամոլները, որոնք հրապուրուած ոսկու շքեղափայլ տեսքից, պարապել են հեշտ կերպով հարստանալու մարմաջից եւ գիտակցաբար կատարել են այդ յանցագործութիւնները, ո՛չ քաղաքացի դատաւոր, մի որեւէ քաղեկորայի պատկանող սբեկուլանդ չի եղել: Այն ժամանակ երբ փրոֆեսիոնալ վալութչիկներ վարակուած շահամոլ նեարդախտից, ոգեւորուած հեշտ եկամտաբեր զբաղմունքից հարստութիւն էին կուտակում, Պալճեան Յակոբը այդ կեղտոտ գործարքների առաջին անհրաժեշտութիւնը համարուող իր սեփական ոսկեդրամները վատնում էր իր աջ ու ձախին, նոյնիսկ մտքովն էլ չէր անցկացնում, որ այդպիսի սբեկուլացիաների միջոցաւ դրանց քանակը աւելցնել կամ կրկնապատկել:

«Այո քաղաքացի դատաւոր, ինչպէս դերասանները, գրողները, նկարիչները, երգիչները, եւայլն, օժտուած են իրենց արուեստի առանձնատկութիւններից, նոյնպէս էլ այդ փրոֆեսիոնալ վալութչիկները օժտուած են սպեկուլաթի եւ առանձնատկութիւններից, եթէ Թաշճեան Յակոբն ալ ունենար այդպիսին, ինչպէս իր դէմքին չի սագում ճաղատութիւնը, այնպէս էլ չի սագում ինձ, անշահամոլիս, սպեկուլանտի կոչումը: Ինձ հաճելի չէ երբեք տեսնել իմ արդար կրճքին կպցրած վալութչիկ մակագրութեամբ պիտակը: Բայց եւ այնպէս ինչպիսի անհեթեթ մակդիրով են ինձ կոչեն, չեմ դադարիր ես ինքըս լինելուց:

«Հապա իմ ամենավերջին խօսքը քաղաքացի դատաւոր, թոյլ տուէք կրկնել իր ժամանակի լատին բանաստեղծի այն խօսքերը, որտեղ ասուած է. *Fiat Justitia Pereat Mundus*. Արդարութիւնը թող կատարուի թէկուզ աշխարհը կործանուի»:

Արդարութիւնը չկատարուեցաւ եւ Յակոբ եւ Մարի թաշտեանները դատապարտուեցան Սիպերիա աքսորի:

Յակոբ եւ Մարի պատմեցին իրենց աքսորը դէպի Սիպերիա, 13 Յունիս 1949ին՝ շոգեկառքով: «Մեզի խաբեցին ըսելով, որ 20 քիլոմեթր պիտի երթանք, սակայն 20 օր ճամբորդեցինք մինչեւ Սիպերիոյ Սարսքին քաղաքը: Անկից, կառքերու մէջ նստեցուցին ձերերը եւ երեխաները, իսկ երիտասարդները քալելով, 24 քիլոմեթր հեռու Ալամպայսքի շրջան եւ կացին եւ սղոց տըւին, անտառին ծառերը կտրելու: Երկու տարի մնացինք այդ շրջանը: Մեզի հետ եկողներուն 40 տոկոսը այդ ծանր գործին եւ ցուրտին պատճառով մահացան:

«Հայաստանէն եւ Ղարաբաղէն 50 հազար հայեր կային այդ շրջանին մէջ: Ամէն ամսուան վերջը ռուս չեկիստ քոմանտան մը կու գար եւ կը ստուգէր ապրողներուն թիւը: Չեկիստը՝ քոմանտան Մարկերով, այդ ամիս եկած էր: Աքսորուած 95 տարեկան հայ ծերունի մը, որուն երիտասարդ տղան զոհուած Քերչի Պարանացի կռիւներուն, մօրուքը բռնած քոմանտանին մօտեցաւ եւ ըսաւ. «Ամօթ Սթալինին, ամօթ ռուս ժողովուրդին, ամօթ ռուս բանակին, այս սպիտակ մօրուքէն վախեցան եւ 8 տարեկան թոռնիկիս հետ աքսորեցին Սիպերիա»:

«Չեկիստ քոմանտանը, ձեռքը կզակին դրած, հինգ ռոպէ յետոյ, շատ խեղճ եւ ցաւալի ձայնով ըսաւ. «Պապա՛ս, ինչով է մեղաւոր Սթալինը, ինչո՞վ է մեղաւոր ռուս ժողովուրդը, ինչո՞վ է մեղաւոր ռուս բանակը, որոնք ոչինչ չեն իմանան, թէ Հայաստանում ի՞նչ է կատարուում: Եթէ ես իրաւունք ունենայի հիմա քեզ կ'ուղարկէի Հայաստան: Ո՛չ Սթալինը գիտէ քու 95 տարեկան ըլլալը, ո՛չ ռուս ժողովուրդը, ո՛չ ալ ռուս բանակը: Մեղաւորը ձեր պետութիւնն է: Անմեղ մարդկանց բռնի աքսորած է հոս, որպէսզի աշխատին չարէշար եւ ցուրտէն մեռնին»:

«1956ին Մալենքովը ազատեց մեզ: Եկանք Ուզպէքստան, Ուզպէքստա, նի մէջ գործ գտնելով աշխատեցայ եւ մէկ տարուան ընթացքին 500 ռուբլի խնայելէ ետք եկանք Հայաստան:

«Իմ մասնագիտութեանս յատուկ գործ կը գտնէի, սակայն անձնագիրս երբ ուզէին, հոն գտնուող գաղտնի նշանի մը հետեւանքով զիս գործի չէին առներ, ցաւով շարունակեց պատմել Յակոբ: Վերջապէս խղճով եւ մաքուր հայ մը, որ մեքենական գործարանի մը տնօրէնն էր, համարձակութիւն եւ քաջութիւն ունեցաւ զիս գործի առնելու: Մարին ալ դերձակութեան գործ մը գտաւ եւ ապրեցանք:

«Ձորս գաւակներ ունեցանք, երեք մանչ եւ մէկ աղջիկ, որոնք ամուսնացան եւ գաւակներու տէր դարձան:

«Հիմա, փառք Աստուծոյ, մենք կենսաթոշակ կը ստանանք եւ մեր գաւակներն ալ մեզի կ'օգնեն: Տունը մեր սեփականութիւնն է, վարձք չունինք եւ ուրախ կ'ապրինք անկախացած Հայաստանի մէջ, իրականացած տեսնելով

մեր երազը՝ ապրիլ ազատ եւ անկախ Հայաստանի մէջ, ոգեւորութեամբ դիտելով Հայկական դրօշը, որ կը ծածանի Հայաստանի եւ արտասահմանի պաշտօնական հաստատութիւններու վրայ:

«Մենք հպարտ ենք, որ բախտ ունեցանք տեսնելու Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը իր դրօշով, զինանշանով, օրհներգով, բանակով, դեսպանատուններով եւ պետական հաստատութիւններով, նախագահով, վարչապետով եւ նախարարներով: Մենք վստահ ենք, որ Հայաստանին պիտի միանան Արցախի եւ Արեւմտեան Հայաստանի հողերը, ստեղծելով Միացեալ, Ազատ եւ Անկախ Հայաստան:

«Մենք ուրախ ենք, որ քեզ ընդունեցինք մեր յարկին տակ: Մեծապէս ուրախ պիտի ըլլանք, եթէ տիկնոջ Մարիին ընտանիքին եւ մեր ընտանիքին հետ մեր բարեկամութիւնը կը շարունակուին, այս անգամ հայրենիքի հողին վրայ»:

Մկրտիչ Հալէպ վերադարձաւ նորոգուած սիրով, այս անգամ դէպի Թաշճեան ընտանիքի անդամները:

ՇՈՒՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Համաշխարհային Առաջին պատերազմի ընթացքին, Օսմանեան թուրք պետութեան կողմէ գործադրուած Հայոց Յեղասպանութեան հետեւանքով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Սահակ Խապայեան, կ'աքսորուի Երուսաղէմ, ապա պատերազմի վերջաւորութեան, թրքական բանակներու պարտութենէն եւ Անգլիական եւ Ֆրանսական բանակներու կողմէ տեղի կ'ունենայ Սուրիոյ եւ Լիբանանի ազատագրումը թրքական տիրապետութենէն, տառապեալ Վեհափառը կու գայ Սուրիա՝ տարագրուած եւ ջարդերէն ազատուած իր ժողովուրդին մօտ եւ կը ծրագրէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռը հաստատել Սուրիոյ Հալէպ քաղաքի «Նոր Գիւղ» հայկական շրջանին մէջ: Սահակ Հայրապետ, իր ծրագիրը իրագործելու համար, յարմար հողամաս մը գտնելով, ներկայի Սահակեան Վարժարանի եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հողամասին վրայ, կը ձեռնարկէ շինել Կաթողիկոսարանի յարմար շէնքեր:

Այդ շէնքերէն մէկը, հայերէն «ա» պարզ տառի ձեւով, շուրջ 24 սենեակներէ կը բաղկանար, իսկ յաջորդ շինութիւնը՝ «խաչի» բաժանումներով, 8 սենեակներով շէնք մը:

Ապագային, Կաթողիկոսարանը Անթիլիաս (Լիբանան) հաստատուելու առիթ ներկայանալով, Հալէպի մէջ որպէս Կաթողիկոսարան շինուած շէնքերը կը տրամադրուին, 1929ին, հիմնադրուած Ազգային Սահակեան Երկսեռ վարժարանին:

Որպէս Նոր Գիւղի բնակիչ, 5 տարեկանիս, բախտը ունեցայ յաճախելու Ազգային Սահակեան վարժարանի մանկապարտէզի բաժինը, որպէս ծիւ դասարանի աշակերտ: Մանկապարտէզի աշակերտներուն յատկացուած խաչաձեւ շէնքին մէջ որուն մէկ սենեակը այդ օրերուն վերածուած էր եկեղեցիի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի անունով:

Ապագային, 1924ին, Հալէպի (Բերիոյ) Թեմին Առաջնորդ ընտրուած Արտաւազդ Արքեպիսկոպոս Սուրմէլեանի նախաձեռնութեամբ եւ ջանքերով, Սահակեան վարժարանի երկու բաժիններու միջեւ գտնուող հողամասին վրայ շինուեցաւ քարաշէն հոյակապ եկեղեցի մը, անուանակոչուելով Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, որուն մէջի քարաշէն հաստ սիւները խիստ քննադատութեան ենթարկուեցան կարգ մը ճարտարապետներու, շինարարներու եւ մասնաւանդ Պոլսոյ «Տոլմա Պաղչայ» Սուլթանական պալատի շինութեան մասնակցած բալուցի Տատային կողմէ, որուն աչքերը, ծերութեան հետեւանքով մեծապէս տկարացած էին այդ օրերուն:

Սահակեան մանկապարտէզի չորս կարգերը աւարտելէ ետք, 9 տարեկան, որպէս առաջին կարգի աշակերտ, «ա» ձեւով շինուած շէնքը փոխադրուեցայ:

Տարիները սահեցան եւ 12 տարեկանիս փոխադրուեցայ «այբ» շէնքի երրորդ դասարանը, որ կը գտնուէր «ա» գիրի առաջին քառակուսիի անկիւնը:

Մանկապարտէզէն սկսեալ, յաջողութեամբ կը փոխէի կարգերս: Շատ աշխատասէր չէի, յառաջագէմ եւ առաջնակարգ աշակերտի համբաւ չահելու

եւ յոխորտալու մտադրութիւն չունէի, սակայն ուսուցիչները կ'ըսէին. «Գրիգոր, եթէ դուն ուզես աշխատիլ, շատ դիւրութեամբ դասարանին լաւագոյն աշակերտը կ'ըլլաս»: Բայց, ես չէի ուզեր աշխատասէր ըլլալ, ինչո՞ւ, քանի իմ նիշերս ընդհանանրապէս ճէն վեր կ'ըլլային՝ առանց տքնաջան աշխատանքի եւ դասարան փոխելու դժուարութիւն չէի ունենար, որպէսզի ժամանակ ունենամ ընկերական չարութիւններ եւ արկածախնդրութիւններ ընելու:

Որպէս 4րդ դասարանի աշակերտ, 1938ին, վարժարանի դասաւանդութիւններուն սկսած էի կանոնաւորաբար հետեւիլ: Բոլոր ուսուցիչները գոհ էին ինձմէ, որովհետեւ առիթ չէի փախցնէր ծառայելու իրենց, արտադարոցական պէտքերուն հասնելով, անշուշտ կատարեալ գաղտնապահութեամբ:

Աշնանային ցուրտն ու անձրեւները սկսած էին: Ծառերը կը դողային մերկանալով իրենց գեղեցիկ տերեւներէն: Պարտէզները ասպատակելու եւ արկածախնդրական միջոցներով պտուղներ քաղելու եւ պարտիզպաններու հետ կռիւներ սարքելու ամառնային հաճոյքները անցած էին եւ «Պոսթան Փաշայի եւ Այնթէլ Կէօզի»ի պարտիզպաններուն առիթ ընծայելով խաղաղ ապրելու:

Դպրոցի կէսօրուան արձակուրդին, տուն կ'երթայի ճաշելու համար, որովհետեւ, մեր տունը կը գտնուէր Նոր Գիւղի 4րդ թաղամասին մէջ, դպրոցէն շուրջ 300 մետր հեռաւորութեան վրայ: Երբ կէսօրուան անձակուրդի զանգը հնչեց, անապարեցի տուն հասնիլ, որովհետեւ, այդ առաւօտ նախաճաշ ըրած չըլլալով, շատ անօթի էի:

Հազիւ դասարանէն դուրս ելած, նկատեցի շնիկ մը, որ կը հետեւէր իմ քայլերուս: Քանի մը անգամ փորձեցի անկէ ազատիլ, սակայն կարելի չեղաւ: Ան յամառութեամբ կը շարունակէր ետեւէս գալ:

Մանկութենէս շատ կը սիրէի շուները, մանաւանդ փոքրամարմին շուները եւ կ'ատէի կատուները, որոնք ինչպէս լսած էի, ապերախտ էին զիրենք ինամող ընտանիքներուն:

Նկատելով որ օդը բաւական ցուրտ էր եւ հաւանաբար ինծի հետեւող շնիկը կը պաղէր, ես, չկարենալով գայն հեռացնել ինձմէ, որոշեցի անոր հետ կոշտ չվարուիլ եւ ձգել որ հետեւի ինծի:

Իմ ցոյց տուած վերաբերմունքէս քաջալերուած, ուրախութեան շնական արտայայտութիւններով զիս հետապնդելէ ետք, երբ հասանք մեր տան դարպասը, սկսաւ պոչը շարժել եւ քսուիլ ինծի, ջանալով իր լեզուով բաներ մը հասկցնել ինծի: Հաւանաբար անօթի էր:

Մեղքեցայ, ներս առի զինք: Կերակրեցի, լողցուցի եւ վիզէն անցուցի կապոյտ ժապակէն մը: Կէսօրուան ճաշի արձակուրդս գրեթէ անցուցի անծանօթ, բայց հաւատարիմ այս շունիկին հետ եւ որոշեցի անուն մը դնել անոր: Շարք մը անուններ գրեցի թղթիկներու վրայ եւ գաւաթի մը մէջ դնելով խառնեցի: Վիճակահանութեամբ թողթ մը քաշեցի, որուն վրայ գրուած էր «Բոթօ»: Զինք «Բոթօ» անուանելով, սկսայ իր հետ խօսիլ եւ զինք կանչել «Բոթօ» անունով: Կէս ժամուան ընթացքին ընտելացաւ իր անունին հետ եւ երբ իր անունը տայի, վազելով կը նետուէր գիրկս:

Հակառակ մօրս ընդդիմութեան, որոշեցի Բոթոյին տէր ըլլալ եւ մեր տունին մէջ պահել գայն, Աստուծո՛վ առաքուած նուէր մը ընդունելով իր գոյութիւնը, որպէսզի շանասիրութեան փափաքս գոհացնեմ:

Կէսօրուան ճաշս վերջացնելէ ետք, դէպի դպրոց ճամբայ ելայ, մօրս ապրսպրելով, որ ուշադրութիւն ընէ, որպէսզի Բոթոն դուրս չէլլէ: Սակայն, տունէն հագիւ յիսուն քայլ հեռացած, նկատեցի որ Բոթոն ետեւէն կու գայ: Բարկացայ, սպառնացի, որ տուն վերադառնայ, անօգուտ: Յամառօրէն շարունակեց ետեւէս գալ, ճանչցած ըլլալով իմ բարի տրամադրութիւններս:

Դասարան հասայ, կէսօրուան դադարը չէր վերջացած: Կը մտածէի ձեւով մը ձերբագատուիլ Բոթոյի ներկայութենէն: Ան կը շարունակէր ինծի հետեւիլ եւ տպաւորիչ շարժումներով հաճելի երեւիլ ինծի, որպէսզի բարեկամօրէն վարուիմ հետը:

Ճակատագրական վայրկեանները կը մօտենային: Ամէն վայրկեան դասարան մուտքի զանգը կրնար հնչել եւ ես, այս փորձանք շնիկէն ազատուելու ուղի մը չէի կրցած գտնել:

Գրասեղանի երկու ընկերներս՝ Գրիգոր Փաշայեան եւ Պետրոս Գահուէճեան, կանուխէն եկած ըլլալով, անոնց դիմացի, որպէսզի գաղափար մը տալով օգնեն ինծի ստեղծուած վտանգաւոր կացութենէն դուրս գալու համար:

Երկար խորհրդակցելէ ետք, ընկերս՝ Փաշայեան լուծում մը գտաւ: Առաջարկեց շունը տեղաւորել գրասեղանի դարակին մէջ՝ կտոր մը հաց դնելով անոր առջեւը, որպէսզի հանդարտ կենայ մինչեւ արձակուրդ:

Համաձայնեցանք: Այդպէս ալ ըրինք: Բոթօն դարակին մէջ խելօք-խելօք տեղաւորուեցաւ առանց ձայն հանելու, ուրախութիւն պատճառելով մեզի:

Կէսօրէ ետքի առաջին պահը յատկացուած ըլլալով աշխարհագրութեան դասին, ծանր քայլերով դասարան մտաւ Պրն. Սարգիս Չուլճեանը եւ ըստ իր ընկալեալ սովորութեան ինծի դասի հանեց, քաջ գիտնալով, որ ես միշտ դասս պատրաստած կու գամ եւ օրինակելի աշակերտ եմ:

Հազիւ սկսած էի դասը պատմել, յանկարծ լսուեցաւ շունի հաջոց մը: Ուսուցիչս ակնոցը քիթին վրայ շտկելով, աչքերը պտըտցուց դասարանի աշակերտներուն վրայ, հաջոցին հեղինակը գտնելու յոյսով: Սակայն, անօգուտ, ոեւէ մէկուն վրայ չկասկածելով, հարցուց.

– Ո՞վ էր շունի հաջոցով խանդարեց մեր դասը:

Պատասխանը չգտնուեցաւ:

Պրն. Չուլճեան թէեւ ջղայնացած, սակայն, դիւանագիտական մեղմութեանը ըսաւ.

– Ան որ հաջոցի ձայն հանեց, թող ոտքի ելլէ եւ նոյն հաջոցի ձայնը հանէ, վստահ ըլլալով, որ ես պիտի ներեմ իրեն, պայմանաւ, որ անգամ մըն ալ նման չարութիւն չփորձէ եւ դասը չխանդարէ:

Գրասեղանի ընկերներէս Պետրոս Գահուէճեան ոտքի ելլելով ըսաւ, թէ Փաշայեանն է յանցաւորը:

Պրն. Չուլճեան խօսքը Փաշայեանին ուղղելով հրամայեց, որ կրկին հաջէ, ինչպէս որ նախապէս հաջած էր:

Փաշայեան ոտքի ելաւ եւ լալով ըսաւ.

– Պարոն, հաջողը ես չեմ, այլ՝ շունն է:

– Ի՞նչ շուն. զարմացաւ Պրն. Չուլճեան:

Փաշայեան պատասխանեց.

– Պարոն, հաջողը Գրիգորին շունն էր: Դարակիրն մէջն է:

Արդարեւ, դասընկերս, Գրիգոր Փաշայեան, երբ ես դասը կը պատմէի, փորձած է շունը իմ դարակէս փոխադրել իր դարակը: Եւ երբ ձեռքը երկարած է շունը տեղափոխելու, ան զայրացած սկսած է հաջել, չուզելով իր տիրոջ դարակէն ուրիշ դարակ փոխադրուիլ:

Պրն. Չուլճեան դարակին մօտեցաւ եւ Փաշայեանին ըսաւ, որ շունը դուռէն դուրս հանէ: Գալով ինծի, Պրն. Չուլճեան ըսաւ.

– Այս շունը քեզմէ շատ խելացի է: Նայէ, Փաշայեանը զայն դուրս դըրաւ, սակայն, դուրսը պաղ ըլլալով կրկին ներս մտաւ եւ աղաչական նայուածքով խնդրեց, որ դասարանին մէջ պատսպարուի:

Եւ, իր քանակի ձեւով գաւազանով մօտեցաւ ինծի եւ տուր որ կու տաս, ձեռքերուս, սրունքներուս եւ ոտքերուս, որոնց ցաւին տակ կ'անիծէի այն ժամը, որ հանդիպեցայ հաւատարիմ, բայց անչափահաս Բոթոյին, որ պատճառ եղաւ ստացած գաւազանի հարուածներու ցաւերուն:

Երեկոյեան, երբ տուն մեկնելու զանգը հնչեց քննեցի սրունքներս, ուր գաւազանի հարուածները իրենց չափով կարմրագոյն նշաններ ձգած էին սրունքներուս վրայ:

Այնուհետեւ, ռի պահեցի անխիղճ ուսուցիչ Պրն. Սարգիս Չուլճեանի հանդէպ, եւ ինչպէս միշտ, երեկոյեան, դպրոցի աւարտին, իր ձեռքի առօրեայ գաւազանը, որուն օգնութեամբ կը քալէր, ինծի կու տար որ իրենց տունը տանիմ եւ միւս գաւազանը բերեմ: Սատանան մտաւ մէջս: Ուզեցի գաւազանի փոփոխութեան գաղտնիքը լուծել: Եւ երբ հետաքրքրութեամբ կ'ուսումնասիրէի գաւազանը, նկատեցի, որ բռնիչէն 15 սանթիմետր վար պղնձեայ օղակ մը գոյութիւն ունի: Վերէն եւ վարէն բռնելով, վերի մասը քակելու փորձ ըրի: Եւ ինչ տեսնեմ: Սուին մը գոյութիւն ունի գաւազանին մէջ:

Օրեր անցան, տարիներ անցան եւ ես այդ գաղտնիքը պահեցի սրտիս մէջ, մինչեւ Պրն. Չուլճեանի եւ իր ընտանիքին Հայաստան ներգաղթելը:

Ապագային լսեցի, որ Պրն. Սարգիս Չուլճեան եւ իր անդրանիկ գաւազանը՝ արաբագէտ Սուին Չուլճեան, որ նոյնպէս Սահակեան վարժարանի մէջ կը պաշտօնավարէր, ընտանեօք Սիպերիա աքսորուած են եւ հոն դժուարին պայմաններուն չկարենալով դիմանալ Պրն. Սարգիս մեռած է եւ թաղուած Սիպերիոյ մէջ:

Շատ ցաւեցայ էջմիածնի ձեմարանէն շրջանաւարտ Պրն. Սարգիս Չուլճեանի Հայաստանի եւ Սիպերիոյ մէջ ունեցած տառապանքներուն համար, սակայն, երբեք չմոռցայ այն ծեծը, որուն ենթարկուեցայ շնասիրութեանս հետեւանքով, 1938ին, 12 տարեկանիս, Սահակեան վարժարանի 4րդ դասարանի աշակերտութեանս ընթացքին:

Դասընկերներս՝ Գրիգոր Փաշայեան, 1947ին Հայաստան ներգաղթեց, իսկ Պետրոս Գահուէճեանը, որուն մականունը փոխուած էր Պետրոսեանի, քանի մը տարիներ առաջ հանդիպեցայ Թորոնթոյի մէջ, ուր հաստատուած էր

*ընտանեօք, սակայն, հազիւ տեղաւորուած, անակնկալօրէն մեկնեցաւ երկրա-
ւոր կեանքէն, ժամանակ չտալով, որ վերարծարձէինք շունի պատմութիւնը:*

«ՇՈՂԱԿԱԹ»
Յունիս, 2005

ԻՆՉՊԷՄ ՉՏԱՆՔ ԱՐԱԲԱՅԱԾ ՄՕՐԱՔՈՅՐՍ

Կիրիկիոյ քաղաքներէն Պեհեսնի կը գտնուի Մալաթիոյ, Ուրֆայի, Մարաշի եւ Այնթապի մէջտեղ, Հայաստանը, Կիրիկեան եւ Սուրիան իրարու զօդող առաջնակարգ դիրքի մը վրայ: Այս չորս մեծ քաղաքները, գրեթէ հաւասար հեռաւորութեան վրայ կը գտնուին Պեհեսնիի նկատմամբ: Անոնց հեռաւորութիւնը շուրջ 150 քիլոմէթր է:

Պատմական քաղաք մըն է Պեհեսնին: Ըստ պատմագէտ Ադոնցի, Պեհեսնիի անունը յիշատակուած է Շոգղատի մօտակայքի Պողոզ Քէոյի հին արձանագրութիւններուն մէջ՝ Շառվան անունով: Ըստ իրեն, Վանի սահմանապահ զինուորական կայաններէն մէկը եղած է Պեհեսնին, Կիրիկիոյ եւ Սուրիոյ սահմաններուն վրայ: Իսկ Պեհեսնիի պատմական բերդի անեղծ մնացած մէկ պատին վրայ կը գտնուի արձանագրութիւն մը, որ ըստ անգլիացի Լինջի, Վանի Պեհեսթունիս անունով ճանչցուած արձանագրութեանց նմանութեամբ քանդակուած է, կրանիտեայ ժայռերու վրայ, բերդի այդ բարձրաբերձ պատի կեդրոնը:

Յայտնի էր, թէ Պեհեսնիի հնադարեան ճարտարապետները, որպէս զինուորական քաղաք կառուցած էին, նկատի ունենալով լոկ ռազմագիտական տեսակէտը: Այլապէս պարտաւորուած պիտի չըլլային լերկ ու չոր լեռնաշղթաներու գիրկը դիւրապաշտպանելի ձորերով եւ կիրճերով շրջապատուած անառիկ դիրքի մը վրայ կառուցանել զայն:

Պեհեսնիի հայկական թաղերը կը պարփակէին հինգ-վեց հազար հայութիւն: Գոյութիւն ունէին Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին երեք քահանաներով՝ Տէր Յովհաննէս, Տէր Սուքիաս եւ Տէր Աբրահամ, Հայ Կաթողիկէ Եկեղեցի, որուն հոգեւոր հովիւն էր Հայր Կղեմէս Սինկերեան եւ Հայ Աւետարանական Եկեղեցի, որուն հոգեւոր հովիւն էր Վեր. Կարապետ Հասէսեան:

Գերմանիոյ կողքին Թուրքիոյ պատերազմի մուտքը 1914 Օգոստոս 3ին, պաշտօնապէս կը յայտարարուի Պեհեսնիի մէջ, գաւառի մուխթարներուն ղրկուած գոց պահարաններու բացումովը: Այդ թուղթերէն հարիւրաւոր օրինակներ փակցուած էին թաղերուն, շուկաներուն եւ պետական հասարակական հաստատութիւններու պատերուն եւ անկիւնադարձերուն վրայ: Միեւնոյն ատեն կառավարութեան մունետիկները կատաղի հնչումով, բարձրագոյն եւ խըրոխտ բացազանչութիւններով, զէնքի տակ կը կանչէին 18-45 տարեկանի միջեւ եղող բոլոր երիտասարդութիւնը, իսկ փախուստ տուողները պիտի յանձնուէին նորակազմ պատերազմական ատեաններուն:

Զօրաչարժի ենթարկուած հայ երիտասարդները, առանձին ջոկատներ կազմած, դէպի Կովկասեան ճակատ կ'ողղուէին, բռնելով Մալաթիոյ ճամբան: Անոնք կը քալէին օգոստոսեան կիզիչ արեւուն տակ, այնպիսի ճամբաներէն, որոնք կորսուած էին փուշերու եւ փոշիներու մէջ:

Ճակատ մեկնող սիրելիներուն քաղաքէն բաժանումը, ողբերգական եւ սրտաճմլիկ տեսարաններ կը պարզէին ամուսիններու եւ հայրերուն մեկնումով, անտէր մնացած եւ թշուառութեան գիրկը իյնալու դատապարտուած էին մեծ թիւով ընտանիքներ:

Կառավարութեան հրահանգով զօրակոչի չէին ենթարկուեր 41 ոսկի փրկագին տուողները:

Այնուհետեւ, տեղի ունեցած են բռնագրաւումներ, վաճառատուներու մէջ գտնուող բոլոր ապրանքները կը բռնագրաւուէին՝ պետութեան կողմէ:

Այնուհետեւ, պետութեան կողմէ առնուած որոշումով, քաղաքի հայերուն կը հրահանգուէր, պետութեան յանձնել իրենց մօտ գտնուող գէնքերը, միեւնոյն ատեն հայ երեւելիներուն տուները կը խուզարկէին, գէնք գտնելու վճռակամութեամբ:

Պեհեսնիի հայութիւնը, թէպէտ իմացած էին ճակատ տարուած իրենց զաւակներուն ոչխարներու հօտի նման սպանդանոց տարուելը, խողխողուելը, սակայն տակաւին չէին գիտեր, թէ թշնամիին հարուածը ընդհանուր հայութեան սրտին ուղղուած էր:

Խուզարկութիւններէն ետք, տեղի կ'ունենան հայ ղեկավարներու ձերբակալութիւնը, որոնց մէջ կը գտնուէին թաղերու բոլոր երեւելիները, պետութեան եւ քաղաքապետութեան հայ պաշտօնեաները, հարուստներ, նշանաւոր արհեստաւորներ, կուսակցականներ, եւայլն:

Պեհեսնիի Գայմագամին կողմէ հայութեան եւ հայ կիներուն դաւանափոխութեան առաջարկ կ'ըլլայ, սակայն, հայ առաքինազարդ մայրերը, մահաւան գաղափարին հետ հաշտուած, բացարձակապէս կը մերժեն ընդունիլ այդ առաջարկը:

Հայ կիներու կողմէ Գայմագամին հաւատափոխութեան առաջարկը մերժուելէն ետք, Գայմագամը երեք օր պայմանաժամ կու տայ, որպէսզի տեղւոյն հայութիւնը պատրաստ ըլլայ աքսորի:

Պայմանաժամի վերջաւորութեան, Պեհեսնիի հայութիւնը կարաւաններով եւ առաջնորդութեամբ կարաւանապետերու եւ ժանտարմաներու, ճամբու կը դրուի, դէպի չարչարանք, տառապանք եւ մահ՝ Պեհեսնիէն մինչեւ Տէր Զօր, ենթարկուելով վայրենի թուրք եր քիւրտ աւազակներու, ինչպէս նաեւ պատասխանատու ժանտարմաներու գազանութիւններուն, կողոպուտներուն, բռնաբարումներուն եւ սպաննութիւններուն:

Պեհեսնիի մեծամեծներու եւ աչքառու կուսակցականներու շարքին ձերբակալուած էին իմ մօրենական մեծ հայրս՝ ոսկերիչ Օհան Գուլումճեան եւ իր որդին՝ Ռուբէն, որպէս դաշնակցականներ, որոնք երբեք չվերադարձան տուն եւ աներեւակայելի չարչարանքներով սպաննուեցան Տէվէճի խանին մէջ, ուր բանտարկուած էին բոլոր ձերբակալուածները:

Մեծ հայրս ունէր նաեւ երկու աղջիկ, մեծը՝ Մարիամ, որ ամուսնացած է 15 տարեկանին եւ ունէր մանչ զաւակ մը Յարութիւն անունով, որ այն ատեն երկու ամսու էր, իսկ երկրորդ աղջիկը՝ Զարուհի, տարագրութեան ատեն հազիւ 5 տարեկան:

Ուրեմն, մեծ մայրս եւ Զարուհին առաջին կարաւանով ճամբայ կ'իյնան, իսկ մայրս՝ Մարիամ՝ երկրորդ կարաւանով:

Պեհեսնիէն ճամբայ ելած կարաւաններու խլեակները ջարդուելէ ետք ճամբու ընթացքին, պահ մը կանգ առնելէ ետք Սուրֆազ աւանի պատմական ծառախումբերուն տակ, իրիկուան դէմ կը հասնի իր առաջին հանգրուանը՝ Գարա-կէօչէք գիւղը: Ճամբան կրկին կը կողոպտուին Քիւլէֆ-էօնիւ գիւղ չը՝ հասած, ապա ճամբան շարունակելով կայք կը հաստատեն կէօք-Սուի ափին, ուր որոշ ատեն մը հանգչելէ ետք, կարաւանի առաջին մասը կ'անցնի կիսամութին, երկրորդը՝ առաւօտուն:

Գետի ափէն հեռացող կարաւանները կ'ենթարկուին ջարդարարներու վայրագ խուժանի մը յարձակման, որոնք կացիներով եւ սուրերով կը կոտորէին անմեղ եւ անպաշտպան հայ կիները եւ աղջիկները:

Վերջապէս, առաջին կարաւանի մնացորդացը կը հասնի Եփրատի ափին, որուն մակերեսին վրայ անհամար դիակներ կը ծփային: Առաջին կարաւանէն վերապրողները նաւակով կ'անցնին միւս ափը, որուն մէջ կը գտնուէին մեծ մայրս եւ մօրաքոյրս՝ Զարուհին:

ժանտարմաները լսած ըլլալով, որ մեծ մօրս ամուսինը ոսկերիչ է խուզարկելով անոր մարմինը, կը գտնեն պահուած ոսկիները եւ սուրի մէկ հարուածով կը մեռցնեն անպաշտպան մեծ մայրս եւ կը նետեն Եփրատի ալիքներուն:

Մայրս, իր գրկին Յարութիւն անունով որդին, երկրորդ լաստանաւով կ'անցնի Եփրատի միւս ափը, ջուրի ալիքներուն վրայ արցունքոտ աչքերով եւ աղիողորմ լացերով կը տեսնէ մօրը զարհուրած դէմքը եւ ոսկեգոյն մագերը Եփրատի հոսանքն ի վար:

Յամաք հասնելով, մայրս կը փնտռէ իր հինգ տարեկան քոյրը՝ Զարուհին, սակայն չի գտներ: Ականատեսներ կ'ըսեն, որ հոն եղող արաբները տեսնելով անտէր մնացած եւ մօրը փնտռող աղջնակը, առին եւ իրենց տունները տարին:

Փնտռուողները ի դերեւ կ'ելլեն: կարաւանը կը շարունակէ իր ընթացքը, անցնելով Պէրէճիկէն: Մայրս եւ քանի մը կիներ, իրենց քովը մնացած ոսկիները կաշառք տալով կարաւանապետին, յատուկ ջորեպաններով կը հասնին Քիլիս, սակայն, ճամբու ընթացքին, մօրս անդրանիկ զաւակը՝ Յարութիւն կը մեռնի չգիմանալով անօթութեան եւ ծարաւի:

Քիլիս հասնելով, մայրս հագիւ 18 տարեկան, նորահաս գեղեցիկուհի մը, հօրս կը հանդիպի աքսորականներու ապաստարանին մէջ եւ կ'ամուսնանան, նկատելով, որ մօրս առաջին ամուսինը սպաննուած էր, Պեհեսնիի մէջ թրքական բանակին միանալով՝ պարտադիր զինուորագրութեամբ:

Քիլիս հաստատուած սասունցի հայրս, ջաղացպանութիւն ընելով իր ընտանիքը կ'ապրեցնէր յաճախ խուսափելով եւ փախուստ տալով թրքական զինուորական հետապնդումներէ:

Քիլիսի մէջ կը ծնի մեծ քոյրս՝ Սիրանուշը, 1918ին, ապա, հայրս կ'անցնի Սուրիա եւ կը հաստատուի Ազէզ գիւղաքաղաքը, ուր կը ծնի Յարութիւն եղբայրս՝ 1922ին:

Հալէպ հաստատուելով, 1927ին կը ծնիմ ես, 1929ին՝ Յովհաննէս եղբայրս եւ 1932ին՝ Արշալոյս քոյրս:

Մանկութեան տարիներուս, շատ լաւ կը յիշեմ մօրս լացերը, իր ծնողքին, թուրք դազաններու կողմէ սպանութեան եւ իր քրոջ՝ Զարուհիին կորուստին համար: Զանազան միջոցներով, զանազան մարդոց միջոցաւ կատարուած փնտռութիւնները արդիւնք չտուին: Ֆաբրիներ, գուշակներ, ֆալճիներ չկրցան յայտնագործել մօրաքրոջս գտնուած տեղը: Եւ, տարիներու լաց ու կոծը, աքսորի ճամբաներուն վրայ զգացած տառապանքները, սիրելիներուն մահը եւ քրոջ անհետ կորուստը, մաշեցուցին խեղճ մօրս դիմադրական կարողութիւնները:

Մեծ քրոջս՝ Սիրանուշին ամուսնութիւնը եւ զաւակով մը բախտաւորւելը քիչ մը սփոփանք բերաւ մօրս, սակայն, դժբախտ պարագաներու տակ քրոջս առաջին զաւակին՝ Վարդուհիին մահը նոր ցաւ մը աւելցուց իր կրած ցաւերուն վրայ:

Տասնմէկ տարեկան էի, երբ մայրս քանի մը հիւանդութիւններով տկարացած եւ պէտք եղած դեղերու դնումը անկարելիութիւն դարձած ըլլալով՝ հօրս համար, մայրս մահացաւ 1938 Նոյեմբեր 2ին, 38 տարեկան ծաղիկ հասակին, որը ձգելով իր հինգ զաւակները, անիծելով թրքական արիւնարբու կառավարութիւնը, որ իր տունը քանդելով, ծնողքը եւ ամուսինը չարչարանքով սպաննելով, պատճառ դարձած է, որ աքսորական տառապալից կեանք մը ունենայ:

Մայրս մեռաւ առանց քոյրը տեսնելու:

1953 թուական:

Հայրս, որպէս հայրենասէր սասունցի, միշտ կ'այցելէր իր հայրենակիցներու տուները: Այն օր, այցելելով Նոր Գիւղի չորրորդ թաղամասի վրայ գտնուող իր մէկ հայրենակիցին տունը, կը սկսի խօսիլ (ժղլիլ) իրենց բարբառով, վերջիչելով իրենց անցեալը, Սասունի ապստամբական կռիւները, հպարտանալով Գէորգ Չաւուշով, Գալէով, Մակարով, Անդրանիկով, Սերոբ Աղբիւրով եւ հարիւրաւոր Փետայիներու քաջութիւններով, որոնք սարսափ տարածած էին թուրք պետութեան եւ քիւրտ ցեղապետներուն:

Երբ աղուոր եռացած սուրճը կու գայ, հայրս կը նկատէ կին մը, որ բաւկէն կ'անցնի եւ խոհանոց կ'երթայ: Ուշադրութեամբ դիտելէ ետք, հայրս իր սասունցի հայրենակիցին կը հարցնէ, թէ այս կինը արա՞բ է, թէ՛ հայ, հակառակ ձեռքերուն եւ ոտքերուն վրայ արաբական թաթոններու գոյութեան:

Սասունցին կ'ըսէ, որ հայ է, սակայն արաբներու մէջ մնացած է եւ ամուսնացած է արաբի հետ եւ ունի մէկ որդի՝ Իսա անունով:

Հայրս, այդ կնկան արտաքինը հանգուցեալ մօրս նմանցնելով, կը խնդրէ իր հայրենակիցէն որ կանչէ իր տան տիրոջ տիկինը, իրեն ուղղելու կարգ մը հարցումներ:

Կինը կու գայ: Հայերէն չէր գիտեր, ինչպէս բոլոր պեհեսանիցները, կը խօսէր արաբերէն եւ թրքերէն: Հայրս կը հարցնէ, թէ ինք ուրկէ՞ է, հօրը անունը ի՞նչ է, ընտանիքը քանի՞ հոգի է կը բաղկնայ, իրենց տունը ի՞նչ ձեւի էր, եւ այլն:

Մօրաքոյրս կը պատասխանէ այնպէս, ինչպէս մայրս պատմած էր: Հայրս կ'ուրախանայ եւ կը յայտնէ, թէ ինք իր կնոջ քոյրն է եւ կորսուած է տարագրութեան տարիներուն, երբ Եփրատ գետէն կ'անցնէին:

Մօրաքոյրս, Ջարուհի կը պատմէ իր ոգիսականը: Երբ մայրը կը կորսնցնէ, լալով կը փնտռէ եւ չի կրնար գտնել: Արաբ կիներ կու գան եւ կ'առնեն զինք եւ կը տանին իրենց գիւղը: Կ'որդեգրուի գիւղի ազնուական արաբի մը կողմէ, երբ 15 տարեկան կը դառնայ, արաբ մարդը Ջարուհին կ'ամուսնացնէ իր երիտասարդ մանչին հետ:

Ամուսնանալէ ետք, որոշ շրջան մը կ'ապրին գիւղը, ապա գաւակ մը ունենալէ ետք, ամուսինը երկաթուղագիծի վրայ պաշտօն մը կը ստանձնէ եւ կը բնակին Պէրէճիկի մօտ գիւղ մը:

Պաշտօնէն եւ գիւղական կեանքէն ձանձրացած, ընտանեօք կը փոխադրուին Հալէպ եւ Նոր Գիւղի մէջ տուն մը գնելով կ'ապրին:

Մօրաքոյրս գտնուեցաւ:

Մեր յարաբերութիւնները որպէս հարազատի շարունակուեցան, 1965ին ամուսինը մահացաւ: Մնացին մայր եւ որդի: Որդին Հալէպի արաբական երկրորդական վարժարանէն շրջանաւարտ ըլլալէ ետք Գերմանիա մեկնեցաւ: Աշխատելով եւ ուսանելով, հայու կամքով եւ ուշիմութեամբ բժշկութիւն ուսանեցաւ: Ամուսնացաւ գերմանուհիի մը հետ եւ ունեցաւ երեք գաւակներ՝ մէկ աղջիկ եւ երկու մանչ: Որպէս գերմանական հպատակութիւն ունեցող անձ, մինչեւ այսօր կը մնայ Գերմանիա եւ հակառակ 68 տարեկան ըլլալուն, կը շարունակէ աշխատիլ եւ իր անունով գիւտ մը յայտնաբերած ըլլալով, կը բուժէ մահացու հիւանդութիւններ եւ կը զօրացնէ յոգնած զգայարանքները:

Իսկ մօրաքոյրս, Ջարուհին, որուն արաբական անունը Նուրիէ դրած էին, քանի մը անգամ այցելեց իր գաւակին՝ Գերմանիա, իր միակ գաւակին բըժըշկական խնամքին ենթարկուելով, կրցաւ ապրիլ մինչեւ 93 տարեկան, մահացաւ միանալով իր զոհուած ծնողներուն եւ զինք մինչեւ մահ փնտռող քրոջ՝ Մարիամին:

Մօրաքրոջ տղան՝ Իսա, յաճախ հեռաձայնով կը խօսի Գերմանիայէն եւ կը խնդրէ, որ Գերմանիա երթամ, սրսկուելու համար իր գիւտը եղող ասեղներէն, որպէսզի առողջ եւ երջանիկ ապրիմ, միշտ յիշելով արաբ-հայ մօրաքոյրս եւ արաբ-հայ մօրաքրոջ տղան:

«ՇՈՂԱԿԱԹ»
Ապրիլ 2005

ՀԱՅՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐ

13 Ապրիլ, 1975ին սկսած Լիբանանի քաղաքացիական պատերազմը, որ տեւեց շուրջ 20 տարիներ, պատճառ դառնալով մարդկային հազարաւոր զոհերու, տնտեսական եւ կալուածային վնասներու, աւերումներու, քանդումներու, կողոպուտներու:

Անմարդկային պատերազմին պատճառաւ, Լիբանանի մայրաքաղաք Պէյրուսը բաժնուեցաւ երկուքի՝ Արեւմտեան Պէյրուսը՝ իսլամական շրջանի եւ Արեւելեան Պէյրուսը՝ քրիստոնէական: Այս բաժանումին հետեւանքով շատեր կորսնցուցին իրենց տուներն ու կալուածները, փոխադրուելով մէկ շրջանէն միւսը, ըստ իրենց կրօնին:

Իրարու դէմ պատերազմող կողմերու՝ կրօնական, քաղաքական, կուսակցական, համայնքային եւ գաղափարային ղեկավարներ, հովանաւորուած արտաքին ազդեցութիւններէ, որոնք նիւթապէս եւ բարոյապէս կ'օգնէին պատերազմող կողմերուն, անոնց ձեռքով իրականացնելու իրենց նպատակները:

Պատերազմող կողմերու ղեկավարներ՝ Քամիլ Շամուն, Փիէլ ժեմայէլ, Ֆրանճիէ, Ճոմպլաթ, Քարամէ, Սայէպ Սալամ, ինչպէս նաեւ պաղեստինցիներու ղեկավար՝ Արաֆաթ, կը ղեկավարէին այս միջ-համայնքային կռիւները, գործածելով պատերազմական արդիական զէնքեր, միջոցներ եւ նոյնիսկ առեւանգում ու սպանութիւն կատարելով արձակագէտներու կողմէ, որոնք նիւթական հատուցման կ'արժանանային, իրենց սպաննած մարդոց թիւին համաձայն, իրենց այս ոճրային գործին ղեկավար կազմակերպութիւններու կողմէ:

Գործածուած զէնքերը արտասահմանէն կու գային յատուկ գործակալութիւններու կողմէ: Ատրճանակներ, զէնքեր, արագահարուածներ, ձեռնառումբեր, հրթիռներ, 155 եւ 210 միլիմետրնոց թնդանոթներ իրենց քանդիչ պարտականութիւնը կը կատարէին անընդհատ, անհաշիւ վնաս պատճառելով ամէնուրեք եւ անմարդկային տառապանք՝ ժողովուրդին, որոնք իրենց տուներուն գետնայարկներուն եւ ապաստարաններուն մէջ կ'ապրէին, արձակուող ահուելի ուժերէն պաշտպանուելու համար:

Երկրին մէջ ստեղծուած անիշխանութեան եւ թոհոփոհին հետեւանքով, քաղաքին նաւահանգիստին մէջ գտնուող միլիոնաւոր տղարներու արժէքով ապրանքներ, մեծ ընկերութիւններու պատկանող մթերանոցներ եւ խանութներ կողոպտուեցան: Շատեր հարստացան եւ ուրիշներ՝ աղքատացան: Անգործութեան եւ պատերազմական մթնոլորտին պատճառով, հազարաւոր ընտանիքներ, մեծագումար ծախսելով, կաշառքներով եւ ճամբորդական անբեւակայելի դժուարութիւններով, Կիպրոսի ճամբով կը հեռանային Լիբանանէն, իրենց կեանքին ապահովութեան համար միջոցներ գտնելով հաստատուելով եւրոպական երկիրներ եւ Ամերիկա:

Քաղաքացիական այս անիմաստ պատերազմին հետեւանքով, Լիբանանի հայ գաղութն ալ ենթարկուեցաւ ահուելի վնասներու: Ի պատիւ հայ նախարարներու, երեսփոխաններու եւ ազգային ղեկավարներու առողջ եւ հեռատես քաղաքականութեան, որոնք մերժեցին միանալ կռուող կողմերուն, հաւատա-

րիմ մնալով Լիբանանի պետականութեան եւ անկախութեան, դրական չէզոքութեան դիրք բռնելով, հայ ժողովուրդին խնայեցին անդարմանելի աղէտներ:

Հայ ժողովուրդին որդեգրած դրական չէզոքութեան քաղաքականութիւնը ողջունուեցաւ քաղաքացիական կռիւներուն մասնակցող գլխաւոր ուժերու ղեկավարներուն կողմէ, առիթ տալով հայ ղեկավարութեան, որպէս Լիբանանի գերիշխանութեան կողմնակից համայնք, կարենան միջնորդել պատերազմող կողմերուն, ստեղծելու համար ազգային հաշտութիւն եւ պատեքովի դադարում:

Հայկական թաղերու ապահովութեան եւ պաշտպանութեան համար, Հայկական Միջ-Կուսակցական Մարմինը ստեղծեց հայկական թաղերու պաշտպանութեան նուիրուած երիտասարդական ջոկատներ, որոնք գիշերօցերեկ հսկեցին հայ ժողովուրդի ապահովութեան, առաջը առնելով հայ ժողովուրդի մարդկային եւ նիւթական վնասներուն:

Պէտք է խոստովանիլ, որ հայկական թաղերէ հեռու ապրողներ կալուածային եւ նիւթական վնասներու ենթարկուեցան, յատկապէս անոնք, որոնք իսլամական թաղերէն քրիստոնէական թաղեր փոխադրուեցան, իրենց տուները, կալուածները եւ գործատեղիները ձգելով ետին:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով, հազարաւոր հայ ընտանիքներ միջոցներ գտան արտագաղթելու Լիբանանէն եւ հաստատուելով ապահով երկիրներ, սրտի խոր կսկիծով հեռանալով Սփիւռքի մէջ երկրորդ Հայաստան հանդիսացող Լիբանանէն, ուր հաստատուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը, Հայկական Համալսարանը, հայկական երկրորդական վարժարաններ եւ նախակրթարաններ, հայկական տպարաններ, ուր լոյս կը տեսնէին հայկական բազմաթիւ ամսաթերթեր, պարբերաթերթեր, շաբաթաթերթեր, ինչպէս նաեւ գրական եւ այլ բովանդակութեամբ գիրքեր, որոնք իրենց լոյսը կը տարածէին Սփիւռքի տարածքին գրասէր հասարակութեան:

*

* *

Հալէպ ծնած եւ մեծցած Յակոբ Սիմոնեան, հրապուրուած Լիբանանի հմայքէն եւ գեղեցկութենէն, 25 տարեկանին կը փոխադրուի Լիբանան, ուր կը բնակէր իր աւագ եղբայրը՝ Զաւէն, որ հինգ տարի առաջ՝ 1965ին, հաստատուած էր Լիբանան եւ ատաղձագործութեամբ կը զբաղէր:

Քանի մը տարի եղբօրը ատաղձագործարանին մէջ աշխատելէ ետք, եղբօրը ստիպումով կ'ամուսնանայ էշրէֆիէ թաղամասը բնակող Օր. Հռիփսիմէ Գուլումճեանին հետ եւ Գուլումճեան ընտանիքին մօտ ըլլալու համար յարկաբաժին մը կը գնէ էշրէֆիէի Ս. Յակոբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մօտ շէնքէ մը:

Յակոբ եւ Հռիփսիմէ Սիմոնեանները կը բախտաւորուին երկու զաւակներով՝ Գուրգէն եւ Դալար, որոնք իրենց դպրոցական տարիքը բոլորելով կը յաճախեն Ազգային Զաթալպաշեան Վարժարան:

Մինչ այդ, Յակոբ, որպէս նպարավաճառ խանութ մը կը բանայ նոյն թաղամասին մէջ, մեծապէս սիրուելով թաղի դրացիներէն, որպէս պարկեշտ եւ պատուաւոր անձնաւորութիւն, յարգելով եւ ծառայելով իր յաճախորդներուն:

*
* *

Յակոբ Սիմոնեանի ընտանիքին ուրախութիւնը կը խանգարուի 1975-ին սկսած Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով: Պէյրութ կը սկսի այրիլ ռումբերու կրակներով, որոնք խելայեղօրէն կ'արձակուէին իրարու թշնամի ուժերուն կողմէ:

Պատերազմական այս պայմաններուն հետեւանքով եւ ռմբակոծումներու պատճառած վնասները ստիպեցին շրջանի բնակիչներուն, ապաստանիլ շէնքերու ապաստարաններուն մէջ, ապրելով խոնաւութեան եւ անմարդկային մթնոլորին մէջ, դժուարութեամբ ճարելով ապրելու եւ սնունդի անհրաժեշտ պիտոյքներ:

Եւ նկատելով, որ սկսուած պատերազմը վերջ գտնելու յոյս չէր տար եւ անօթի ծարաւ, անտանելի պայմաններով ապրելու հեռանկարով կորսնցուցած ըլլալով, ամէն մարդ կը խորհէր հեռանալ Լիբանանէն:

Եւ պատահեցաւ աննախատեսելին: Ռումբ մը եկաւ եւ քանդեց սնունդի աղբիւր, Յակոբին նպարավաճառի խանութը, քանի մը տարիէ ի վեր իր ընտանիքին քաշած տառապանքն ու վախը աւելի խորացնելով:

Այր եւ կին կը խորհրդակցէին, ինչպէ՞ս ապրիլ, ինչպէ՞ս տոկալ ստեղծուած անտանելի ցաւերուն, երբ այլեւս գործ չունէին եւ չէին կրնար թաղեցիներուն սնունդ ապահովել եւ դրամ շահիլ:

Երկար խորհրդակցելէ ետք, կը մտածեն իրենց տունը ծախել եւ այդ գումարով Միացեալ Նահանգներ փոխադրուիլ:

Նկատի ունենալով, որ իր աւագ եղբայրը, հինգ տարի առաջ փոխադրուած է Լոս Անճելըս եւ կը բնակի Հոլիվուտի շրջանը, եւ քոյրը՝ Օրէնճ Գառնթի, որոնք Լիբանանի պատերազմական կացութենէն փախչելով եւ բազմաթիւ դժուարութիւններ յաղթահարելով հաստատուած էին Մ. Նահանգներ: Եղբօրը լուր կը ղրկէ, որ միջոցներ գտնէ իր ընտանիքին Մ. Նահանգներ մուտք գործելու արտօնութիւն ապահովելու համար:

Տարի մը տեւող դիմումներէ ետք, Յակոբ Սիմոնեանի ընտանիքին կ'արտօնուի ներգաղթելու Մ. Նահանգներ:

Սիմոնեան ընտանիքը, ծախելով իր սեփական տունն ու տան առարկաները, 1984ին կը բաժնուին հայահոծ Լիբանանէն, հաստատուելով Լոս Անճելըսի Հոլիվուտ թաղամասին մէջ, ուր կը բնակէր եղբայրը:

Լոս Անճելըս հասնելէն քանի մը օր ետք, եղբօրը օգնութեամբ, եղբօրը տան մօտերը տուն մը կը վարձեն եւ շուկայ իջնելով կը սկսին գնել տունին կենսական առարկաները եւ կահ կարասիները:

Յակոբին եղբայրը Ջաւէն, իր եղբօր կ'առաջարկէ աշխատիլ իր ատաղձագործական գործարանին մէջ, նկատի ունենալով, որ Յակոբին նախնական արհեստը ատաղձագործութիւնն է, զոր սորված էր Հալէպի մէջ:

Երկու եղբայր, իրենց մասնագիտութեամբ հռչակաւոր կը դառնան շրջանին մէջ եւ մեծ յաջողութիւն կը գտնեն, յաճախորդներուն գնահատանքին արժանանալով:

Յակոբին քոյրը, որ Օրէնճ Գառնիթի կը բնակէր, յաճախ, իր ընտանիքին հետ այցելութեան կու գար եղբայրներուն, եւ երեք ընտանիք ուրախ եւ երջանիկ ժամեր կ'անցընէին իրարու հետ, սակայն, զարմանալիօրէն, իրենց խօսակցութիւններուն ընթացքին երկու եղբայր եւ քոյր, կը յիշէին Սուրիոյ եւ Լիբանանի իրենց կեանքը, ազգականները եւ բարեկամները, քաղաքացիական պատերազմէն առաջ Լիբանանի հայութեան բարգաւաճ կեանքը եւ պատերազմի պատճառով ստեղծուած անապահովութիւնը, արիւնահեղութիւնները եւ անմարդկային սպաննութիւնները ու կործանումները, պատճառ դառնալով հազարաւոր հայ ընտանիքներու արտագաղթին:

*

* *

Առիթով մը, երկու եղբայրներ, իրենց ընտանիքներով կը հրաւիրուին Օրէնճ Գառնիթի բնակող իրենց քրոջ տունը: Հովիվուտէն Օրէնճ Գառնիթի ազատ ճամբան, եղբայրները իրենց ինքնաշարժներով եւ օրինական արագութեամբ մէկ ժամէն առաջ կը հասնին քրոջը տունը, մեծ խանդավառութիւն ստեղծելով երեք ընտանիքներու անչափահաս զաւակներուն մէջ:

Օրը Կիրակի ըլլալով, երեք կիներ իրենց զաւակներով նախ կը հանդիպին շրջանի Ս. Քառասնից Մանկանց Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի, ներկայ ըլլալով եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Գերապատիւ Տ. Մուշեղ Մ. Վրդ. Մարտիրոսեանի կողմէ մատուցուող պատարագին:

Պատարագէն ետք, խումբը, Յակոբ եւ Ջաւէն եղբայրներուն եւ քրոջ առաջնորդութեամբ կ'ուղղուին Օրէնճ Գառնիթի մօտ, Խաղաղական Ովկիանոսի եզերքը գտնուող տեսարժան վայրերը եւ հանդարտ քալելով կը յառաջանան դէպի ովկիանոսի խորը ձգուած նաւամատոյցը, որուն երկու կողմերը շուրջ 150 սանթիմեթր բարձրութեամբ պաշտպանական երկաթէ բազրիքներ կային:

Տղաքը ուրախ զուարթ կը քալէին դէպի ովկիանոս, դիտելով ալիքներու մակընթացութիւնը եւ տաղատուութիւնը:

Այդ միջոցին, տախտակամածին վրայ երթեւեկող բազմութեան մէջ աչքի կը զարնէր բարձրահասակ սեւամորթ երիտասարդ մը, որ խնդրութեամբ անցաւ մանուկներուն առջեւէն: Յակոբ Սիմոնեանին աղջիկը՝ 12 տարեկան Արաքսին, լալով եւ վախով փաթթուեցաւ մօրը, խնդրելով շուտով հեռանալ այս սեւ մարդուն մօտէն, որ կորելլայի կը նմանէր:

Խումբը կը յառաջանար դէպի ովկիանոս: Մանուկները կը շարունակէին դիտել մինչեւ հորիզոն տեսանելի ովկիանոսը, իրարու ցոյց տալով ջուրներուն վրայէն անցնող նաւակները:

Արաքսի, բազրիքին յենած, ինքն ալ իր կարգին կը դիտէր երթեւեկող նաւակները, սակայն, ուզելով աւելի մօտէն տեսնել զանոնք, աւելի ծռեցաւ եւ գլուխը մարմինէն ծանր ըլլալով, հետաքրքիր Արաքսի հինգ մեթր բարձրութենէ ինկաւ ովկիանոսին մէջ:

Արաքսիին մայրը, Նանուկը եւ հօրաքոյրը, տեսնելով Արաքսիին իյնալը, սարսափահար բացագանչութիւններով օգնութիւն կը խնդրէին անցորդներէն, որոնք հետաքրքրութեամբ կը դիտէին աղջնակին խեղդուելը ովկիանոսի ջուրերուն մէջ:

Այդ պահուն, Արաքսիին աչքերով կորելլայի նմանող երիտասարդը, առանց ժամանակ կորսնցնելու նետուեցաւ ովկիանոս եւ վարպետ լողորդութեամբ ջուրերու յատակէն դուրս հանեց Արաքսին եւ ցամաք հանելով շնչատուութեամբ պարպեց Արաքսիին խած ջուրերը:

Եւ, ով հրաշք, Արաքսին աչքերը բացաւ եւ հազալով դիտեց շրջապատը:

Արաքսիին մայրը, Նանուկը եւ հօրաքոյրը, իրենց շնորհակալութիւնը յայտնեցին ազատարար երիտասարդին եւ անոր առաջարկեցին որոշ գումար մը: Սեւամորթը մերժեց ընդունիլ նման վարձատրութիւն: Խնդրեց անոնցմէ մարդկային ազնիւ զգացումներով սիրել եւ յարգել իրարու եւ պէտք եղած ատեն օգնութեան հասնիլ անօգնական մարդոց, հետեւելով Քրիստոսի պատուիրաններուն:

Իսկ Արաքսիին մայրը, Հռիփսիմէ, խոր յուզումով փաթթուած իր գաւակին, ըսաւ.

«Տեսա՞ր աղջիկս, մեր օգնութեան աղաղակներուն ականջալուր եղան հոն գտնուող բազմաթիւ մարդիկ, բայց անոնց մէջէն միայն սեւամորթ այս երիտասարդը, որուն համար գարշանքով կ'ըսէիր կորելլայի կը նմանի, իր կեանքը վտանգելով քեզ ազատեց ովկիանոսի ջուրերուն մէջէն: Մարդիկ հաւասար են առանց գոյներու տարբերութեամբ եւ ցեղային պատկանելիութեամբ: Մարդոց զգացումներուն խորհրդաւորութիւնը միայն Աստուծոյ ծանօթ է եւ միայն Ան կրնայ լուծել»:

«ՇՈՂԱԿԱԹ»
Փետրուար 2006

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Սերոբ Գաբրիելեան, կինը՝ Զապէլ եւ մանչը՝ Զաւէն կ'ապրէին Լիբանանի Թրիփոլի քաղաքի ծովեզերեայ Մինա շրջանին մէջ:

Սերոբ ձկնորսութեամբ կը զբաղէր, յատկապէս գիշերները իր փոքրիկ նաւակով ծովուն խորերը երթալով եւ յատուկ լուսաւորումով, մինչեւ առաւօտ, կարեւոր քանակութեամբ ձուկ կ'որսար եւ առաւօտուն, ձուկի շուկան տանելով կը ծախէր, այս ձեւով ապահովելու իր ընտանիքին ապրուստը, շուկային մէջ մրցակցելով արաբ ձկնորսներուն, որոնք միշտ յանդգնութիւն կ'ունենային իրենց որսացած ձուկերը բարձրաձայն գովելով եւ յաճախորդներուն ուշադրութիւնը գրաւելով Սերոբէն առաջ իրենց ձուկերը կը ծախէին:

Սակայն Սերոբ ունէր իր հայ յաճախորդները, որոնք յատուկ կու գային Թրիփոլի քաղաքամէջէն եւ յատկապէս Մինայի շրջանէն: Ան շատ կը ցաւէր, որ արաբերէն սահուն չէր կրնար խօսիլ, այլապէս, իրեն համար դիւրին կ'ըլլար մրցելու արաբ ձկնորսներուն հետ:

Սերոբ Թրիփոլի հաստատուելէն առաջ կը բնակէր Սուրիոյ Սանճաք (Հաթայ) նահանգի Իսկէնտէրուն քաղաքին մէջ եւ հոն ալ ձկնորսութեամբ կը զբաղէր, օգտակար հանդիսանալով իր ծնողքին, մինչեւ 1938 թուականը, երբ Ֆրանսացիները Սանճաքը յանձնեցին թուրքերուն, պատճառ դառնալով այս անգամ Սանճաքի հայութեան դաղթին՝ դէպի Սուրիա եւ Լիբանան: Այսպէս, պարպուեցան Իսկէնտէրունի, Գըրըզ Խանի, ինչպէս նաեւ Մուսա Լեբան հայկական գիւղերու բնակչութիւնը:

Սերոբ որպէս արհեստավարժ ձկնորս Թրիփոլի Մինա շրջանը հաստատուեցաւ եւ փոքրիկ նաւակ մը գնելով ձեռնարկեց գործի եւ իր աշխատասիրութեան շնորհիւ, կրցաւ յաջողութիւն գտնել նոր միջավայրին մէջ:

Տարիներ ետք, իր տնտեսական եւ նիւթական կացութիւնը բարւոքելով կ'ամուսնանայ իր հայրենակիցներէն Զապէլ Եսայեանի հետ եւ տարի մը վերջ կը բախտաւորուի մանչ զաւակով մը, որ մկրտուելով Թրիփոլի Ս. Հոգեգալստեան Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ կը կոչուի Զաւէն՝ Սերոբի հօր անունով:

Գաբրիելեան ընտանիք երջանիկ եւ ուրախ իրենց մանչ զաւակով, կը շարունակեն ապրիլ Մինայի հայութեան շրջանակին մէջ, ստեղծելով իրենց բարեկամական շրջանակը՝ յարգուելով բոլորէն:

Փոքրիկ Զաւէն երբ հինգ տարեկան կ'ըլլայ, կ'արձանագրուի Մինայի Ազգային Խորիմեան վարժարան: Իր հօր եւ մօր գուրգուրանքով եւ հոգածութեամբ կը մեծնայ եւ մանկապարտէզէն նախակրթարան յաջողութեամբ կ'անցնի, միեւնոյն ատեն Կիրակի օրերը ծնողքին հետ եկեղեցի կ'երթայ, ապա, որպէս կրօնասէր եւ եկեղեցասէր աշակերտ կը յաճախ տեղւոյն Կիրակնօրեայ դպրոցը, ուր կը լսէ Աւետարանի կենարար պատգամները, Յիսուսի քարոզները, հրաշքները, շարժարանները, խաչելութիւնը եւ յարուսթիւնը՝ դառնալով հաւատացեալ Քրիստոնեայ: Զաւէն հոն յատուկ ուշադրութեամբ կը հետեւի Կիրակնօրեայ դպրոցի տեսուչին հետաքրքրական մէկ պատմու-

թեան, Մեծն Ներսէս Պարթեւ Կաթողիկոսին մասին, թէ ան եղած է առաքելա-տիպ հայրապետ մը, խոնարհաբար գիջանած է գիւղերու տանիքներուն վրայ նստելով, վիրաւոր գիւղացիներուն վէրքերը դարմանել, աղքատներուն օգնած է, Արշակաւան քաղաքի կործանումով ողջ մնացած որբերը հաւաքելով, որբանոց բացած է, ինչպէս նաեւ ծերանոցներ, հիւանդանոցներ եւ անկէլանոցներ բանալով բարեգործ հայրապետ մը եղած է:

Զաւէն, այնքան կը խանդավառուի եւ կը կ'ոգեւորուի Սուրբ Գիրքի դասաւանդութիւններէն եւ տեսուչին դաստիարակիչ պատմութիւններէն, կ'որոշէ հետեւիլ Մեծն Ներսէս Հայրապետի օրինակին, ըլլալու բարեգործ անձ մը եւ օգնել իր նմաններուն, որոնք օգնութեան կարօտ են:

Գաբրիէլեան ընտանիքին երջանիկ կեանքը վերջ կը գտնէ տիկին Զապէլին անակնկալ հիւանդութեամբ: Բժշկական բոլոր միջոցները եւ դարմանումները չեն կրնար փրկել Զապէլին կեանքը: Ան կը մահանայ, անտանելի ցաւ պատճառելով պրն. Սերոբին եւ որբ մնալու տառապանքին դատապարտելով Զաւէնը:

Այս դժբախտութիւնը խոր անդրադարձ կ'ունենայ պրն. Սերոբին վըրայ: Արդէն բաւական ծերացած ըլլալով եւ ձկնորսութիւնը շարունակելու ուժ եւ կարողութիւնը չունենալով, կը ծախէ Մինայի իր տունը եւ որսորդական նաւակը եւ փոքրիկ տուն մը շինել կու տայ Թրիփոլի եւ Շէքքայի միջեւ գտնուող բարձունքի մը վրայ, ուր հայր եւ որդի կ'ապրին վայելելով բնութիւնը, մաքուր օդը եւ միշտ ականջալուր ծովի ալիքներուն մակընթացութեան եւ տեղատուութեան հոգեպարար ձայներուն:

Մերուկ հայրը իր տղուն, Զաւէնին կը զգուշացնէ, որ եթէ լողալու համար ծով պիտի իջնէ, ուշադիր ըլլայ, որովհետեւ, իրենց տան հանդիպակաց ջուրերուն մէջ ցից ժայռեր եւ խութեր կան, որոնք պատճառ կրնան դառնալ մարդոց եւ նաւերու դժբախտութեան:

Զկնորս հօր պատմած եւ թելադրած զգուշութիւնները, արկածներու առաջքը առնելու համար, Մեծն Ներսէս Հայրապետի տկարներուն հանդէպ ցուցաբերած գթոտ վերաբերումը, մեծ ազդեցութիւն գործած ըլլալով Զաւէնին մտքին մէջ, ան իր հօր կողմէ իրեն տրուած դրամները խնայելով լապտեր մը կը գնէ, որուն ապակին կարմիր կը ներկէ եւ զայն կը տեղաւորէ իրենց տունին ծովահայեաց պատուհանին մէջ, որպէս նշան վտանգի՝ ուղեկորոյս նաւերուն, մանաւանդ, երբ ծովը փոթորկած ըլլայ:

Օրեր կ'անցնին եւ ձմեռնային ամպոտ եւ փոթորկոտ օր մը, ճամբորդներով եւ ապրանքներով լեցուն նաւ մը, մութ գիշերին ճամբան կորսնցուցած ըլլալով, դէպի ձկնորսին տունը կը յառաջանար, բայց հեռուէն նշմարելով պատուհանի լոյսը, ծովուն բացերը խարխախ կը նետէ, այսպիսով ստոյգ կործանումէ փրկելով նաւը:

Յաջորդ առաւօտ ծովը կը հանդարտի: Նաւապետը կը տեսնէ, որ իրենց նաւը կործանումէ փրկողը իսկական նաւահանգիստի մը լոյսը չէ, այլ՝ տնակէ մը արձակուող լոյս: Նաւապետը ցամաք կ'ելլէ ստուգելու համար իրականութիւնը: Երբ կը հասկնայ, թէ պարզապէս ձկնորսի մը տղուն բարեգործութիւնըն ու ծառայութիւնն է, կը տեղեկագրէ պատահածը իր նաւային ընկերութեան, որուն կեդրոնը կը գտնուի Փարիզ (Ֆրանսա):

Նաևապետը կու գայ ձկնորս Սերոբին տունը եւ շնորհակալութիւն կը յայտնէ տան պատուհանին դրած լոյսին համար, որուն շնորհիւ փրկուեցան նաևուն մէջ գտնուող ճամբորդներն ու ապրանքները: Սերոբին կը յայտնէ նաևային ընկերութեան որոշումը՝ Գաբրիէլեան ընտանիքը առնելու իրենց պաշտպանութեան տակ եւ կ'առաջարկեն լոյսի գաղափարը յղացող Զաւէնը ղրկելու Փարիզ, ուսանելու համար նաևային գիտութեան դպրոց մը:

Պրն. Սերոբ խանդավառութեամբ կ'ընդունի իրենց եղած առաջարկը, քաջ գիտնալով, որ իր գաւազը Փարիզի մէջ ուսանելով, ապագային նշանաւոր անձ մը կ'ընայ ըլլալ, օգտակար դառնալով իր ազգին եւ հայրենիքին:

Ֆրանսացի նաևապետը, տեղեկանալով Զաւէնին հայ ըլլալուն, թարգմանիչ մը բերած ըլլալով, Զաւէնին կը հարցնէ, թէ ո՞վ իրեն թելադրած է իրենց տան պատուհանին փարոսի նմանող փոքր, սակայն տեսանելի լոյս մը դնել:

Զաւէն կը պատասխանէ. «Ես երբ փոքր էի կը յաճախէի հայկական դպրոց եւ Կիրակնօրեայ դպրոց: Կիրակնօրեայ դպրոցին մէջ մեզի կը սորվեցնէին կրօնական գիտելիքներ եւ մասնաւորաբար Հայաստանեայց եկեղեցւոյ աղօթքները, շարականները, սաղմոսները, եկեղեցական պատմութիւն, ուր արձանագրուած են մեր եկեղեցւոյ սրբազան եւ մեծ կաթողիկոսներու եւ եկեղեցականներու կեանքն ու գործունէութիւնը, որովհետեւ հայ ժողովուրդը առաջին ազգն է, որ 301 թուականին պետականօրէն ընդունած է քրիստոնէութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կաթողիկոսին կողմէ:

«Կիրակնօրեայ դպրոցին մէջ մեզի պատմուած էր Մեծն Ներսէս Հայրապետի բարեգործութիւններուն մասին: Օրինակուելով բարեգործ Կաթողիկոսի կեանքէն, եւ, հետեւելով Քրիստոսի պատգամին՝ սիրէ ընկերդ քու անձիդ պէս, նոյնիսկ՝ քու թշնամիներդ, որոշեցի հօրս կողմէ ինծի տրուած դրամներով լապտեր մը գնել եւ դնել մեր տան պատուհանին, որպէսզի իրենց ուղղութիւնը կորսնցուցած նաւերը այդ լոյսը տեսնելով զգուշանան դէպի ցամաք յառաջանալէ, ուր կը գտնուի ժայռեր եւ խութեր»:

Զաւէն Գաբրիէլեան իր ծերունի հօր հետ կը մեկնի Փարիզ եւ կ'արձանագրուի Ֆրանսայի Նաևային Գիտութեան Համալսարան: Տարիներու ընթացքին Զաւէն կը տիրապետէ ֆրանսերէն լեզուին եւ նաևային գիտութեան: Որպէս սպայ, քանի մը տարի ֆրանսական նաևատորմին ծառայելէ ետք, հրաւէր կը ստանայ առեւտրական նաւի մը նաևապետութեան եւ հայ դպրոցին ու Կիրակնօրեայ դպրոցին մէջ ստացած հայաշունչ եւ քրիստոնէական դաստիարակութեամբ զինուած կը ծառայէ մարդկութեան եւ հայ ժողովուրդին:

«ՇՈՂԱԿԱԹ»
Ապրիլ 2006

ՆԻՒԹԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Հալէպի հոգետունը՝ ընդարձակ բակ մը, բակին մէջտեղը ջրհոր մը, որ մէկ կ'օգտուէին հոգետան բնակիչները: Բակին չորս կողմը գրասենեակներ, տը պարան Արաքս, տպարան Նայիրի, հայկական փուռ, բակի երկրորդ յարկին վրայ կը գտնուէր բնակելի տուններ, տանըմարքացի Քաչիկի հաստատութիւնը, ուր հայ կիներ ձեռագործներ կը բերէին եւ վճարումով կը յանձնէին հաստատութեան պատասխանատու Պրն. Յարութիւն Չազըրեանին եւ այդ ձեռագործները կը դրկուէին Տանըմարքա եւ հոն կը ծախուէին: Երկրորդ յարկին վրայ կը գտնուէր նաեւ «Տիգրիս» գրադարանը:

Հոգետունը ունէր մուտք մը Թէլէլ պողոտայէն, որ գիշերները կը գոցուէր եւ մուտք մը Սալիպէ թաղամասէն: Շրջանը ամբողջապէս հայերէ կը բաղկանար, ուր կը գտնուէր Ազգային Առաջնորդարանը եւ Ս. Քառասնից Մանկանց եւ Ս. Աստուածածին եկեղեցիները:

Հոգետունը կը պատկանի Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Պատրիարքութեան: Հայաստանէն եւ Կիլիկիայէն դէպի Երուսաղէմ ուխտի գացողները, Հալէպ հասնելով կ'իջեւանէին հոգետուն, ապա, կը շարունակէին իրենց ճամբան:

Սակայն, 1946ին, հոգետուն իջեւանողներ այլեւս չկային, եւ հոգետունը բնակուած էր Հայոց Մեծն Եղեռնէն վերապրած ընտանիքներէ եւ կարգ մը գործարարներէ:

Ինծի համար հոգետան բնակիչներուն ամէնէն հետաքրքրականը հոգետան փուռն էր, որ կը պատկանէր սասունցի հայրենակիցներու՝ Յակօ եւ Սեդրակ Կիրակոսեաններուն, որոնց հետ ամէն օր ժղլելու առիթ կ'ունենայի, լսելով դրուագներ իրենց կեանքէն եւ Սասնոյ յեղափոխականներու Արաբոյի, Սերոբ Աղբիւրի, Գէորգ Զաւուշի, Ապաղանաց Մակարի, Գալէի, Անդրանիկի եւ այլ Ֆետայիներու մարտնչումներէն:

Տարիներու ընթացքին հոգետան բնակիչներէն շատեր փոխուեցան, փոխուեցան նաեւ խանութպաններէն շատեր:

Հոգետան մնայուն բնակիչներէն էր նաեւ խենթ Գրիգորը, որ չէս գիտեր որով միջոցաւ եւ առաջնորդութեամբ փառաւորապէս տեղաւորուած էր առաջին յարկէն երկրորդ յարկ բարձրացող աստիճաններուն տակ, գրաւելով խենթ Միխայէլի մահէն ետք թափուր մնացած տեղը:

Մարդ չէր գիտեր, թէ ո՞վ էր ան, ուրկի՞ց եկած էր եւ ինչո՞ւ խենթացած: Սակայն, մաշած համագգեստը եւ գունաթափուած փողկապը կու գային վկայելու, որ խելքին ջերմութեան աստիճանին բարձրանալը հին պատմութիւնը չէր կրնար ըլլալ:

Խենթ Գրիգոր քառասուն տարեկան ըլլալ կը թուէր: Միջահասակ, թիկնեղ, հայու քիթով, որուն վրայ գոյգ մը սրճագոյն աչքեր՝ զինք տեսնողէն բարեսրտութիւն կը հայցէր միշտ: Իսկ խենթութեան շրջանին իր կրած հոգեկան եւ մարմնական տառապանքը խոր աղօսներ ձգած էին ճակտին վրայ:

Ամէն առաւօտ, իր գրաւած անկիւնէն արթննալով, հոգետունէն անցնողները կը դիտէր եւ բակի ջրհորէն ջուր քաշելով կը լուացուէր, եւ վերա-

դառնալով իր «տունը», իր գեղեցիկ ձայնով կ'երգէր «Առաւօտ Լուսոյ» շարա-
կանը: Ուտելիքի մասին հոգ չունէր, սասունցի փռապանը եւ բարեսիրտ հոգե-
տունցիներ եւ անցորդներ կը հոգային, իրենց աւելցած կերակուրներէն բա-
ժին հանելով անոր: Շատեր որպէս ողորմութիւն հին կօշիկ մը եւ ճերմակե-
ղէններ կու տային, նոյնիսկ՝ մանր դրամներ:

Խենթ Գրիգոր աշխատասէր խենթ էր: Ջրհօրէն, օրը քանի մը անգամ
ջուր կը քաշէր եւ դոյլերով կը փոխադրէր իր բարերարներուն:

Հոգետան երկրորդ յարկին վրայ գտնուող «Արեւելք» օրաթերթին գը-
րաշարանոցին գրաշարներուն յաճախ պաղ ջուր կը բերէր եւ առաստաղէն
կախուած խաւաքարտէ հովահարով կը զովացնէր գրաշարանոցը, որ պատու-
հանէ գուրկ ըլլալով չափազանց ըլլալով չափազանց տաք կ'ընէր: Ի՞նչ կընար
ընել աւելին, արդէն եթէ արհեստի մը հետեւելու չափ խելք մնացած ըլլար իր
վրայ, ի՞նչ գործ ունէր Հալէպի տաքին-պաղին ապրելու հոգետան աստիճան-
ներուն տակ:

Ըսողներ կային, որ խենթ Գրիգոր արհեստով ինքնաշարժի վարիչ
եղած էր, իր բեռնատար ինքնաշարժով Հալէպ-Մուսուլ կ'երթեւեկէր: Բարե-
կեցիկ ընտանիքի մը մէկ անդամն էր, որոնք կը բնակէին Մուսուլ քաղաքը եւ
տակաւին, ինք այս վիճակին հասած էր, չկարենալով միանալ իր սիրած աղջը-
կան:

Յետագային, Մուսուլէն եկած հայրենակից մը հոգետունէն անցած ա-
տենը հանդիպելով խեղճ Գրիգորին, «Արեւելք»ի գրաշարանոց եկաւ եւ ցաւով
պատմեց հետեւեալը.

«Մեղք եղաւ այս երիտասարդին, ո՞վ կընայ երեւակայել, թէ այս ըս-
քանչելի երիտասարդը՝ զարգացած, պարկեշտ, եկեղեցասէր, ծնողասէր, ազ-
գասէր, կընայ այս վիճակին հասնիլ եւ այս պայմաններու մէջ ապրիլ: Անէ՛ծք
այդ աղջկան ծնողքին: Նշանուած էին, խենթի պէս զիրար կը սիրէին, ամուս-
նութիւնը հեռու չէր, սակայն, նիւթամոլ գոքանչը, աւելի հարուստ երիտա-
սարդ մը գտած ըլլալով, ետ դրկեց նշանտուքի մատանին եւ հակառակ աղջը-
կան կամքին, բռնութեամբ ամուսնացուց աղջիկը հարուստ երիտասարդին
հետ:

«Գրիգոր չկրցաւ դիմանալ այս զօրաւոր հարուածին, կորսնցուց իր
գրտակցութիւնը, խենթացաւ, եւ օր մըն ալ քաղաքէն կորսուեցաւ: Իր ծնողքը
եւ ազգականները երկար փնտռութիւններէ ետք յուսահատեցան: Իսկ աղջիկը,
որ բռնութեամբ ամուսնացաւ ուրիշին հետ, լսելով իր սիրած երիտասարդին
տառապանքը, թոյն խմելով անձնասպան եղաւ:

«Երանի խեղճը տեսած չըլլայի այս վիճակին մէջ, եթէ եղբայրները
տեղեակ ըլլան որ հոս է, թռչունի թեւերով կը հասնէին իրեն, թերեւս կարե-
նային զինք փրկել...

«Գիտե՞ս որքան եկեղեցասէր էր: Մանուկ տարիքէն մինչեւ սարկաւա-
գութիւն կը ծառայէր եկեղեցին, ի՞նչ գեղեցիկ ձայն ունէր, մանաւանդ Աւագ
Շաբթու Խաւարումի գիշերը իր երգած «Ուր եւ Մայր Իմ»ը կը լացնէր եկե-
ղեցույ հաւատացեալները»:

Իրապէս գեղեցիկ թէնոր ձայն ունէր Գրիգոր, եւ երբեմն, յիշելով իր
անցեալը, խոր յուզումով կ'երգէր: Շատ կը սիրէի իր երգած մեղեդիները: Ան-

ցորդները կը կենային ունկնդրելու համար իր ապրումով երգած շարականները եւ երգերը, որոնց կարգին, Վարդանանց տօնակատարութեան շրջանին «Իմ Հայրենեաց Հոգի Վարդան», «Թէ Հայրենեաց Պսակադիր» ազգային երգերը, ծնունդի շրջանին «Խորհուրդ Մեծ», եւ «Այսօր տօն է» շարականները, ինչպէս նաեւ սիրային բազմաթիւ երգեր, որոնցմէ կը յիշեմ հետեւեալ երգը որ միշտ կ'երգէր.

Գեղեցիկ, հոտաւետ,
Դու ծաղիկ լեռնային,
Ո՞ւմ համար դու բուսար,
Ո՞ւմ համար ծաղկեցար:

Յըրտերում մեծացար,
Անխընամ մէն-միմակ,
Սի լաւ օր չըտեսար,
Որբի պէս վշտակիր:

Ու անցաւ քո կեանքը,
Սըգաւոր, տըխրագին,
Գեղեցիկ հոտաւետ,
Դու ծաղիկ լեռնային:

Կամ՝

Հայոց աղջիկներ, ձեր հոգում մատաղ,
Երբ միտս էք գալիս՝ ասում եմ ես ա՛խ:
Հալում եմ, հալում օտարութեան մէջ,
Ա՛խ սիրտըս խորում, ցալիս վերջ չկայ:

Խեղճ Գրիգոր, ամէն առաւօտ քունէն արթննալէն վերջ, կը սկսէր անօրինակ որսորդութեան մը: Կը հանէր հագուստները, համբերութեամբ կը փնտռէր աղտոտութեան հետեւանքով կեանք առած եւ բազմացած ոջիւնները եւ երկու բթամատներուն միջեւ առնելով, վրէժ խնդրութեամբ կը ճզմէր զանոնք, որոնք արգելք եղած էին գիշերը հանգիստ քնանալու:

Գրիգորին աշխարհը հոգետունն էր: Աւելի ճիշդը՝ նոր աշխարհը: Անցեալը գինք մոռցած էր եւ ինք՝ իր անցեալը: Սակայն, ի՞նչ ձեւով եւ ի՞նչ պայմաններով Մուսուլէն հասած էր Հալէպ, այդ մնաց անլուծելի: Իսկ որո՞ւց ուց մունքով եւ առաջնորդութեամբ հասած էր հոգետուն եւ գրաւած նշանաւոր խենթ Միխայէլի անկիւնը՝ այդ ալ ուրիշ գաղտնիք...:

Արդարեւ, հոգետունը իր մնայուն բնակիչներուն առընթեր, միշտ ունեցած է իր աստիճանի տակի բնակիչը: Այսպէս՝ Միխայէլ, Գրիգոր եւ երկու ոտքերէ գոլրկ հայ-ասորի մը, որոնցմէ ամէն մէկը տեսակ մը խենթ եւ տեսակ մը խեղճ: Միխայէլը՝ վայրագ, Գրիգորը՝ խեղճ եւ անվնաս, իսկ հայ-ասորին՝ երկու սրունքներէն կտրուած, կարօտ ամէն տեսակ հոգատարութեան եւ օգնութեան:

*
**

«Գողցողին մայրը..., քո՛յրը..., սինսիլէ՛ն...: Մօ՛ մեղք եմ մե՛ղք... Ի՞նչ կ'ուզէ՞ք ինձմէ, փասփորթս, անձնաթուղթս, նամակնե՛ր, նկարնե՛ր չկան...: Վա՛՛յ իմ գլխուս...: Առնողին Աստուած հոգին առնէ»:

Այդ առաւօտ այս բառերով մեզ դիմաւորեց խենթ Գրիգոր 1947ի Օգոստոսեան առաւօտ մը, դէպի տպարան Նայիրի մուտքին:

Իրապէս շատ զայրացած էր: Աչքերէն արիւն կը ժայթքէր, բարկութեանէն կու լար...:

Ի՞նչ պատահած էր...:

Փողոցային դատարկապորտներ, առտու կանուխ, խեղճ Գրիգորը քնացած տեսնելով գողցած էին անոր դրամապանակը, որուն մէջ կը գտնուէր իր անձնաթուղթը, անցաթուղթը (փասփորը), թուղթէ յիշատակներ...: Զինք կեանքին կապող յիշատակներ...:

Ոջիւններով ողողուած անկողինը տակնուվրայ կ'ընէր, ծակ ու ծուկ կը փնտռէր, «չկա՛յ, չկա՛յ...: Վա՛՛յ իմ գլխուս», կը յայտարարէր:

Վախով մօտեցանք իրեն, ուզեցինք հանդարտեցնել, սակայն, անօգուտ: Այդ օր, մինչեւ իրիկուն, հոգետան բնակիչները կարեկցութեամբ մտիկ ըրին Գրիգորին հայհոյանքները եւ լացն ու կոծը: Որեւէ մխիթարական խօսք թըշնամութեամբ կը դիմաւորուէր: Նոյնիսկ մերժեց կերակուր ընդունիլ: Կարծես, առ ի բողոք հացադուլ հռչակած ըլլար, սակայն որո՞ւ դէմ, ի՞նքն ալ չէր գիտեր:

Յաջորդ օր, բարեկամաբար մօտեցայ իրեն եւ հարց տուի, թէ ի՞նչ կար լալու չափ թանկագին այդ դրամապանակին մէջ, որ զինք երէկուան սարսափելի վիճակին մատնած էին:

Ան վայրկեան մը մտածեց, նորէն լացաւ, կրկին հայհոյեց գողերուն հասցէին եւ շնչաց... «Անգիւնէին նկարը եւ նամակները կային...»: Հասկցուեցաւ:

Ես ալ կը մտածէի, որ անձնաթուղթը, անցաթուղթը եւ այլ պաշտօնական թուղթեր պատճառներ չէին կրնար ըլլալ զինք երէկուան ահարկու վիճակին հասցնելու: Արդէն անոնց պէտք չունէր այլեւս: Ուրիշ պատճառ մը կար, սրտին շատ մօտ, որ արդէն խելագարած մարդուն ուղեղը աւելի ուժգին խախտելու... իսկ դրամապանակին մէջ արդէն դրամ գոյութիւն չէր կրնար ունենալ...:

Հեռանալով խեղճացած Գրիգորէն, ընկերներու ըսի. «Մարդը արդէն կորսնցուցած է իր սիրածը: Կորսնցուցած է իր խելքը, իր անցեալը, հիմա ալ, անխիղճ մարդիկ շատ կը տեսնեն այն քանի մը նամակները զորս կը մնային Անգիւնէին իբրեւ յիշատակ...: Եւ այդ յիշատակներն էին, որոնք զինք կեանքին կը կապեն: Այլեւս դժուար թէ ապրի այս խեղճը»:

Այնուհետեւ, խեղճ Գրիգոր, օրէ-օր աւելի մեղամաղձոտ դարձաւ: Շատ քիչ կ'երգէր, շատ քիչ կ'ուտէր...:

Սկիզբները կը յուսար, որ փողոցային դատարկապորտները այդ դրամապանակին մէջ դրամ չգտնելով կը վերադարձնեն զայն, սակայն, օրերը կ'անցնէին եւ կորսուած դրամապանակէն լուր չկար:

Նախապէս երբեմն կ'ածիլուէր, ինքզինքը կը շտկէր, մարդու երեւոյթ կ'առնէր: Այդ սեւ օրէն ետք, մօրուքը ածելի չտեսաւ, իսկ երեսը՝ ջուր: Օրըստօրէ կը հիւժէր, աստիճանին տակէն դուրս ելլել չէր ուզեր:

Ձմրան ցուրտ օր մը, բօթը հասաւ հոգետան բնակիչներուն: Գրիգոր մեռած գտնուած էր հայոց գերեզմանատան ճամբուն վրայ: Պաշտօնական որեւէ ստուգում կարելի չեղաւ կատարել, քանի որ պաշտօնական որեւէ թուղթ չունէր իր վրայ: Միայն կարելի եղաւ թաղելու արտօնութիւն ստանալ քաղաքապետութենէն՝ որպէս օտար եւ անտէր եւ անհաւասարակչիռ անձ:

Խեղճ Գրիգորին տառապած դիակը դրուեցաւ եկեղեցապատկան դա՛գաղին մէջ, յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցոյ մէջ Տէր Մկրտիչ Աւագ Քահանայ Մուրատեանի կողմէ եւ հոգետունի բնակիչներէն քանի մը սգաւորներու ներկայութեամբ: Թաղուեցաւ հայոց գերեզմանատան մէջ, հեռու իր սիրելիներէն եւ ազգականներէն:

Արդեօք անդենականին մէջ միացա՞ւ իր պաշտած Անգիւնէին...:

**«Շողակաթ»
Մարտ 2006**

ՄԵՆՔ ԱԼ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՑԱՆՔ

Թուրքիոյ հայաջինջ քաղաքականութեան հետեւանքով եւ 1915ին գործադրուած Հայոց Մեծ Եղեռնէն ետք ծնած առաջին սերունդը եւս մանկութիւն չունեցաւ, ինչպէս մանկութիւն չունեցան Հայոց Մեծ Եղեռնէն իրենց ծնողները կորսնցուցած եւ արաբացած մանուկները:

Մանկութիւն չունեցան, որովհետեւ իրենց ծնողները, բռնազաղթի, տարագրութեան եւ աքսորի ճամբաներուն վրայ ցմրուր քամեցին չտեսնուած չարչարանքներ եւ տառապանքներ, իրենց բնակավայրերէն մինչեւ Սուրիական անապատները, ենթարկուելով ջարդի, թալանի, բռնութիւններու, բռնաբարումներու եւ սպաննութիւններու: Տարագրուածներէն բեկորներ, հրաշքով եւ անձնական նախաձեռնութիւններով մահուան ճիրաններէն փրկուելով, Սուրիոյ, Լիբանանի եւ արաբական այլ երկիրներու մէջ ապաստան գտնելով կազմեցին ընտանիք եւ ունեցան զաւակներ, որոնք իրենց ծնողներու նիւթական անբաւարար պայմաններուն հետեւանքով ապրեցան թշուառութեան եւ նիւթական ծանր միջոցաւորութիւն մէջ, որոնց զաւակները մանկութիւն չունեցան, զրկուած ըլլալով մանկական բոլոր տեսակի ապրելակերպէ եւ հոգածութենէ:

Արեւմտեան Հայաստանէն եւ Կիլիկիայէն աքսորուած եւ վերապրած մեր ծնողները, որոնք մեծամասնութեամբ արհեստ չունեցող եւ արաբական երկիրներու լեզուին՝ արաբերէնի անծանօթ, մեծ դժուարութեամբ կրնային իրենց ընտանիքներուն ապրուստը հոգալ եւ իրենց զաւակները վճարովի հայկական դպրոց դրկել:

Ճիշդ է, Եղեռնէն առաջ հայրենիքի մէջ ծնած սերունդներէն բախտաւորներ, որոնք իրենց ծնողներուն, հարազատներուն եւ ազգականներուն ըսպաննութենէն ետք, կարգ մը թուրքերու, քիւրտերու եւ արաբներու կողմէ մահանալէ փրկուելով, կրցան ողջ մնալ եւ ապագային, պատերազմի աւարտին, հայկական կազմակերպութիւններու կողմէ ամէն մէկ որբի ազատագրուածին մէկ ոսկի տալով, զանոնք տեղաւորեցին որբանոցներու մէջ, որոնք իսկապէս մանկութիւն չունեցան, առանց հօր-մօր հոգածութեան ապրելով եւ մեծնալով:

Սակայն, ինչպէս ըսի, դիւրին չեղաւ հայոց ցեղասպանութեան նախճիրներէն ազատուած եւ իրենց ապաստանած երկիրներուն մէջ ամուսնացած բազմաթիւ ընտանիքներու զաւակներուն մանկութիւնը, որոնք մանկութիւն չունեցան, որովհետեւ իրենց ծնողները կարողութիւն չունէին իրենց զաւակներուն բարօր եւ մանուկի մը համար էական մանկութիւն մը շնորհել:

Հայր-մայր ունեցող եւ մանկութիւն չունեցող հազարաւոր մանուկներու կարգին, իմ գիտակցական կեանքիս ընթացքին միշտ անխճած եմ մեր ծնողները իրենց հայրենիքէն աքսորած եւ մեծ մասով բնաջնջած Օսմանեան թուրք կառավարութիւնը եւ անոր քաջալերութեամբ շուրջ երկու միլիոն հայ ջարդած թուրք, քիւրտ եւ չէչէն գազաններու վայրագութիւնները որոնք պատճառ դարձան Եղեռնէն ճողոպրած հայ սերունդներուն եւ անոնք զաւակներուն մանկութիւն չունեցած մեծնալու:

Եւ այդ պատճառով, ամուսնական կեանքիս ընթացքին, միշտ աշխատած եմ իմ զաւակներուս, կարելիութեանս սահմաններուն մէջ զանոնք մեծցընել մանկական գուրգուրանքով եւ մանուկներու համար անհրաժեշտ մթնոլորտի մէջ:

Հայոց Մեծ Եղեռնէն հրաշքով հայրս՝ Ղազար (Խարզօ) Հոթոյեան, Սասնոյ Տալոորիկ գաւառի Սպաղանք գիւղէն, Սասունէն Կիլիկիա գալով, որպէս ջաղացական աշխատած է սասունցիներուն մօտ, Քիլիսի շրջանին մէջ՝ 22 տարեկանին, առաջին աշխարհամարտէն առաջ, 1914ին:

Եղեռնի շրջանին՝ 1917ին, Քիլիսի մէջ կ'ամուսնանայ Մալաթիոյ շրջանի Պեհեանի քաղաքէն Մարիամ Գույումճեանին հետ, որուն հայրը, մայրը, եղբայրները եւ հարազատները սպաննուած էին թուրքերու կողմէ:

1918ին, Քիլիսի մէջ կը ծնի քոյրս՝ Սիրանուշը, 1920ին՝ Քիլիսի մէջ կը ծնի եղբայրս՝ Զաքարը, որ կանուխ կը մեռնի, 1922ին՝ Ազէզի մէջ (Սուրիա) կը ծնի եղբայրս՝ Յարութիւնը, 1925ին՝ Հալէպի մէջ կը ծնի եղբայրս՝ Գրիգորը, որ կանուխ կը մեռնի, 1927ին՝ Հալէպի մէջ կը ծնի Գրիգորը (ես), 1929ին՝ Հալէպի մէջ կը ծնի եղբայրս՝ Յովհաննէսը եւ 1932ին՝ Հալէպի մէջ կը ծնի կրտսեր քոյրս՝ Արշալոյսը:

Ահա այսպիսի ընտանիքի մը հոգը կախուած կը մնայ Սասնոյ Սպաղանք գիւղէն, գիւղացի հօրս վիզէն, որ տասնեակ մը արհեստներ եւ գործեր կը փորձէ ընտանիքին ապրուստը ապահովելու եւ զաւակներուն տանելի մանկութիւն ստեղծելու համար:

1938ին, մեր մայրը կը մահանայ, 22 տարի ամուսնական շրջանէ մը ետք, 38 տարեկանին, մեզ ձգելով որք եւ անխնամ, բժիշկներու եւ դեղերու ծախսերուն հասնելու նիւթական միջոցներ չունենալուն պատճառով:

Այդ շրջանին մենք կը բնակէինք Հալէպ, Նոր Գիւղ հայկական շրջանի չորրորդ թաղամասին մէջ, արաբ քրիստոնեայ ընտանիքի մը պատկանող բակով տունի մը մէջ սենեակնոց տունին մէջ: Տանտէրին կինը կուզէր, սակայն, շատ լաւ հոգ կը տանէր իր ընտանիքին եւ քիչ մըն ալ մեզի, մինչեւ հօրս մեզի հոգատար խորթ մայր մը բերելը:

1940ին, հայրս եւ քեռայրս, բանտէն փախած եօթնան Յակոբին մեր տան մէջ ապաստարան-անկողին տրամադրած ըլլալուն համար՝ վեցական ամիս բանտարկութեան դատապարտուեցան: Եւ որպէսզի չբանտարկուին, ոստիկանութեան հետապնդումներէն փախան եւ Սուրիոյ Գամիշլի գիւղաքաղաքը ապաստանեցան, ուր բաւական մեծ թիւով սասունցիներ կ'ապրէին:

Քեռայրս, Արշակը, փռապան (հացթուխ) ըլլալով, որպէս եփող գործ կը գտնէ Սասունցի Արուշին փուռին մէջ, անմիջապէս լուր կը դրկէ Հալէպ քրոջս, որպէսզի Գամիշլի գայ իր առաջնեկ մանչուն հետ:

1940 Յունիս 24ին, ես եւ քոյրս՝ Սիրանուշը, մարդատար ինքնաշարժով ճամբայ ելանք դէպի Գամիշլի, անցնելով ժողովուրդի հաւաքական գերեզմանը հանդիսացող Ռազգայէն, Ռաս-Իլ-Այնէն, Տէր Զօրէն եւ Սուրիական անապատներէն, ուր մեր մեքենան կը յառաջանար անապատային փոշիներու ընդմէջէն, մինչեւ Գամիշլի, ուր մեզ դիմաւորեցին քեռայրս ու հայրս, զիս ազատելով գիրկիս մէջ երբեմն արթուն, երբեմն քնացած փոքրիկ Արշակէն:

Մեր Գամիչլի հասնելն երկու շաբաթ ետք, Գամիչլի եկան նաև խորթ մայրս, մեծ եղբայրս՝ Յարութիւնը, կրտսեր երբայրս՝ Յովհաննէսը եւ կրտսեր քոյրս՝ Արշալոյսը:

Մեծ եղբայրս Հալէպի մէջ քանի մը տարի դերձակութիւն ըրած ըլլալով, սորված էր ժագէթ եւ տափատ կարել: Հայրս Ամերիկայէն ներածուած գործածուած ժագէթներ գնելով տուն բերաւ, ես եւ փոքր եղբայրս քակելով գբաղեցանք, իսկ մեծ եղբայրս ներսը դուրս դարձնելով կարելու սկսաւ: Իսկ հայրս, պագարի օրերուն պասթա բացած կը ծախէր:

Սակայն այդ գործը մեր ընտանիքին ծախսերուն չէր բաւեր: Ստիպուած, ես եւ կրտսեր եղբայրս սկսանք քահքա (կարկանդակ) ծախել, շրջագայելով Գամիչլի փողոցները, գլուխնիս վրայ կրելով քահքայով լեցուն տախտակէ խոշոր ափսէներ, թաղ-թաղ պոռալով՝ քահքայա՛թ...: Մանաւանդ երբ մեծ եղբօրս ոտքը կարիճը խայթեց, դուրսը բացօդեայ քնացած ատեն, պատճառ դառնալով, որ երկար ատեն չկարենար աշխատիլ, հօրս կողմէ կարիճի խայթած տեղը այրելուն հետեւանքով:

Ահա քեզի մանկութիւն: Հօրս Գամիչլիի մէջ ձերբակալուելով եւ բանտարկուելէ ետք Հալէպ վերադարձանք եւ հաց եւ այլ ուտելիքներ գնելու դըրամ չունենալով, Գամիչլիէն մեր հետ բերած ձաւարը խորթ մայրս առանց իւղի կ'եփէր ամէն օր, մինչեւ լրանայ 100 քիլօնոց պարկը: Պատերազմի տարիներ էին, եւ, հաց ունենալը դիւրին չէր:

Հայրս մոլի սիկառէթ ծխող էր: Կը պատահէր, որ սիկառէթ գնալու դըրամ չէր ունենար, անգործութեան եւ գործի ձախողութեան շրջաններուն: Իրեն համար շատ դժուար էր առանց ծխախոտի մնալ, ստիպուած, եղբայրներուն հետ կը շրջագայէինք Նոր Գիւղի փողոցները եւ գետնէն կը հաւաքէինք սիկառէթներու աւելցուքները: Հայրս այդ աւելցուքներուն թուղթերը կը պատռէր եւ ծխախոտները իր ծխախոտի տուփին մէջ կը լեցնէր եւ ծխախոտ փաթեթելու յատուկ թուղթերով կը փաթեթէր եւ կը ծխէր...:

Մանկապարտէզէն սկսեալ դպրոցական պայուսակ չեմ ունեցած: Դըպրոց կ'երթայի մօրս կողմէ կարուած պայուսակով, շապիկով եւ տափատով: Մատիտ, գրիչ, մելան գնելու կարողութիւն չունէի եւ յաճախ կ'օգտուէի ունեւոր ընկերներու աւելցուքներէն:

Մանկութեանս երբեք կօշիկ չեմ հագած: Ամառ-ձմեռ սանտալով ըստիպուած կը գոհանայի: Այդ նշանաւոր սանտալը եւ մօրս կարած շապիկը եւ տափատը յիշեցնող ջուրի նկար մը ունիմ որպէս յիշատակ երիտասարդ տարիքին մահացած ընկերոջս Երուանդ Յովհաննէսեանին հետ, նկարուած Հալէպի էֆէնտի պաղպաղակի խանութին դիմացի թաղին մուտքին, դէպի Սալիպէ գացող ճամբուն սկիզբը, ուր հայ նկարիչներ, իրենց ջուրով նկարող գործիքները հոն կը հաստատէին եւ ջրանկար քաշելով իրենց օրապահիկը կ'ապահովէին:

Խաղալիք երբեք չեմ ունեցած: Մեր խաղերը կ'ըլլային փողոցներուն եւ դաշտերուն մէջ: Փողոցներուն մէջ կը խաղայինք չալիք, պագտանպաճ, փիթ, գլխարկ փախցնել, եւայլն: Իսկ դաշտերուն վրայ լաթով շինուած գնդակով հազիւ կրնայինք կոլին հասնիլ: Իսկ նոր տարուան նուէր՝ երբեք չեմ ստա-

ցած: Միայն կը յիշեմ Սահակեան վարժարանի Կիրակնօրեայ Դպրոցի ամա-
նօրեայ հանդէսին աշակերտներուն բաժնուած նարինջէն հատ մը ունենալու:

Երբեք չեմ մոռցած մանկութեանս շրջանին դրամ շահելու եւ ընտանի-
քիս ապրուստին օգնելու հետեւեալ միջոցառումը:—

Հալէպի մէջ, եկեղեցական տաղաւարներուն յաջորդ օրուան Մեռելոցի
օրուան առթիւ, մեծ թիւով ժողովուրդ, շարան-շարան, Քուէյք գետի տախ-
տակէ կամուրջին վրայէն անցնելով կ'այցելէին հայկական գերեզմանատունե-
րը, հոն գտնուող եկեղեցականներուն կողմէ օրհնել տալու իրենց սիրելիներ-
րուն գերեզմանները: Գերեզմանները օրհնել տալու փափաքողներուն թիւը
այնքան շատ կ'ըլլար, որ հոն գտնուող քահանաները չէին հասներ գոհացում
տալու բոլոր խնդրողներուն, եւ, յաճախ տեղի կ'ունենար քաշքշուք՝ երկու, ե-
րեք կողմէ, որոնք քահանային ձեռքէն կամ վերարկուէն դէպի իրենց կողմը
կը քաշէին, մէկը միւսէն առաջ օրհնել տալու իրենց սիրելիին գերեզմանը:

Քահանաներու կողմէ գերեզմաններու օրհնութեան կը մասնակցէր
խնկարկող մը՝ մանուկ կամ պատանի, այդ նպատակով պատրաստուած խնկա-
մաններով, գերեզմանի օրհնութեան ընթացքին խնկարկելով հոգեհանգրստ-
եան միջոցով կը ստեղծէր: Այդ խնկամանները շինուած էին մետաղէ աման-
ները երկաթէ թելերով ամրացնելով, որպէս բռնիչ գործածելով երեք թելե-
րու վերնամասը, իսկ ամանին մէջի ածուխով կրակը միշտ նորոգուած կ'ըլ-
լար, պատրաստ խնկարկելու: Գերեզմանի օրհնութենէն ետք, քահանային
տրուած նուէրին հետ, նաեւ, խնկարկող տղուն կը տրուէր առաւելագոյն 25
դրուշ:

Մենք ալ, տեսնելով շահաբեր այս գործը, մեր հանգուցեալ մօր գերեզ-
մանը օրհնել տալէ վերջ, որոշեցինք այդպիսի խնկամաններ շինել եւ յաջորդ
մեռելոցին գործի սկսիլ: Մեծ եղբայրս, ածուխի եւ խունկի պաշարներով կը
հետեւէր ինծի եւ Յովհաննէս եղբօրս: Ամէն մէկս քահանայի մը հետ կը մաս-
նակցէինք գերեզմաններու օրհնութեան:

Գերեզմանօրհնէքը կը տեւէր մինչեւ կէսօրէ ետք ժամը 2-3 եւ ժողո-
վուրդը կամաց-կամաց տուն կը վերադառնար, իսկ մենք՝ երեք եղբայր, տուն
գալով կը հաշուէինք օրուան հասոյթը, թեթեւցնելով հօրս ուսերուն ծանրա-
ցող ապրուստի բեռը:

Երբ քիչ մը մեծցանք, մեր ուսանողական շրջանին, արձակուրդի օրե-
րուն, հերթով, ես եւ եղբայրներս, հօրս հետ ամերիկեան գործածուած եւ խան
հաճի Մուսայի հայ Պալիսի գործատէրերուն կողմէ նորոգուած ժազէթներ
կը ծախէինք Հալէպի Պապ-էլ-Ֆարաճի եւ ներսի շուկայի մէջ: Ժազէթները
մեր ձախ ուսերուն վրայ հանգչեցնելով՝ մեր կարողութեան համաձայն, թաղ-
թաղ կը պտրտէինք եւ կը փորձէինք ժազէթները ծախել որոշ շահով:

Երբ յաջող օր մը բոլորէինք, քանի մը ժազէթ ծախած ըլլալով, հայրս
խորոված կը կերցնէր ինծի, ներսի շուկային մէջ գտնուող խորովածագործնե-
րուն ոչխարի համեղ միսերէն:

Հօրս հետ ժազէթ ծախելու համար ձախ ուսիս վրայ 5-6 ժազէթներ
ժամերով կրելով, ժամանակի ընթացքին, ձախ ուսս աջէն քիչ մը ցած մնաց
եւ այդ կը զգամ մինչեւ այսօր:

Մանկուլթիւն չունեցած ըլլալս կը զգայի նաեւ ուսանողութեան շրջանին, երբ դպրոցէն զիս տուն կը դրկէին տարեթոշակս բերելու համար: Բարեբախտաբար, այդ հարցը լուծուեցաւ շնորհիւ տանըմարդացի հայասէր Միս Գարէն Եփփէ հաստատութեան սան ընդունուելով, ինչպէս նաեւ յետագային, Սասնոյ Հայրենակցական Միութեան:

Հայոց Մեծ Եղեռնին հետեւանքով, ծնողազուրկ մանուկները մանկուլթիւն չունեցան, իսկ մենք՝ Եղեռնէն ետք առաջին սերունդի մանուկներ, մենք ալ դժբախտաբար մանկուլթիւն չունեցանք:



Հայ Կեդրոնի շրջափակին մէջ գտնուող Հայոց Մեծ Եղեռնի Յուշարձանին առջեւ Չախէն աջ՝ ընկեր Յակոբ Ճանապազեան, բանաստեղծ ժագ Յակոբեան եւ Գրիգոր Դոբոյեան, Դոկտեմբեր 2006ին

ԻՆՉՊԷՍ ՀԻՄՆՈՒԵՑԱԻ ՌԱԳԳԱՅԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԸ

1950 ամառը, Բերիոյ Թեմի Առաջնորդ Բարեչնորհ Տ. Զարեհ Ս. Արք. Փայասլեան (Ապագայի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս), դառուս Յակոբին միջոցաւ գիւս Առաջնորդարան կանչեց, ըստ դառուս Յակոբին, կարեւոր խօսակցութեան մը համար:

Առաջնորդ Սրբազանը ինծի ինչ կարեւոր ըսելիք կրնայ ունենալ մտածելով եւ մտահոգուելով, անհամբեր սպասեցի ժամադրութեան եւ ժամանակէն առաջ արդէն Առաջնորդարան էի եւ կը սպասէի, որ դառուս Յակոբի թոյլատրութեամբ վեր բարձրանայի, Առաջնորդ Սրբազանի գրասենեակը, որ կը գտնուէր Երկրորդ յարկի աջին՝ առաջին սենեակը:

Աստուած օգնական Սրբազան ըսի եւ աջը համբուրելէ ետք, ոտքի, ըսպասեցի իր ըսելիքին:

Հրաւիրեց որ նստիմ, ապա, որպէսութիւնս հարցնելէ ետք, ըսաւ.

– Գրիգոր, ես տարիներէ ի վեր կը հետեւիմ քու կեանքիդ, եւ որոշ գաղափար ունիմ քու եկեղեցական, ուսուցչական եւ գրական կարողութիւններուդ մասին: Գիտեմ, որ մանկութենէդ ի վեր կը ծառայես Հայաստանեայց Առաքելական եկեղեցիին որպէս դպիր, աշակերտած ես Կիրակնօրեայ վարժարան եւ ներկայիս որպէս ուսուցիչ կը պաշտօնավարէս Նոր Գիւղի Ս. Գէորգ եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցին մէջ: Ձեր բանաստեղծութիւնները, յօդուածները եւ թղթակցութիւնները կարդացած եմ «Արեւելք» օրաթերթին մէջ, գընահատելով ձեր գրելու կարողութիւնը եւ բանաստեղծական շնորհը: Այս բոլորը գիտնալով, քեզի արժանի կը նկատեմ 1950-1951 տարեշրջանին համար ըստանձնելու Ռազգա գիւղաքաղաքի Ազգային Նուպարեան վարժարանի տնօրէնութիւնը:

Հոգեպէս ուրախացայ այս առաջարկին եւ վստահութեան համար, եւ որովհետեւ երազս եղած է ուսուցիչ դառնալ եւ ծառայել հայ մանուկներու հայեցի դաստիարակութեան, Սրբազան Հօրմէն խնդրեցի երեք օրուան պայմանաժամ, վերջնական պատասխան մը տալու համար, նկատի ունենալով գըրաշարական եւ տպարանային աշխատանքս՝ «Նայիրի» տպարանին մէջ:

Ամէն պարագայի երեք օրերը շուտ անցան եւ ես դրական պատասխան տուի Առաջնորդ Զարեհ Սրբազանին:

Վարժարանի պաշտօնական վերաբացումէն շաբաթ մը առաջ, արդէն Ռազգա կը գտնուէի եւ թաղականութեան ատենապետ պրն. Յակոբ Սարգիսեանի ընկերակցութեամբ առաջնորդուեցայ ինծի համար վարձուած մէկ սենեակնոց բնակարանը, մահճակալով եւ կարգ մը տնային պիտոյքներով (ամաններ, դգալ, պատառաքաղ, եւայլն), սեղանով եւ աթոռով:

Ռազգա հասնելուս Երկրորդ օրը, թաղականութեան ատենապետին հետ շրջապտոյտ մը կատարեցի գիւղաքաղաքին մէջ, այցելութիւն տալով թաղականութեան անդամներուն գործատեղիները (վաճառատուները) եւ ծանօթանալով անոնց հետ:

Երրորդ օրը սկսան աշակերտական արձանագրութիւնները, որոնց թիւը մինչեւ շաբթուան վերջ հասաւ 90ի:

Վարժարանի պաշտօնական վերաբացումին ներկայ եղան թաղականութեան անդամները եւ հոծ թիւով ծնողներ: Բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ վարժարանի բակին մէջ, ուր խօսք առաւ թաղականութեան ատենապետ պրն. Յակոբ Սարգիսեան եւ աշակերտութեան ներկայացուց նոր տնօրէնը, ապա, հրաւիրեց զիս աշակերտութեան խօսելու:

Ռազգայի Նուպարեան վարժարանը կը բաղկանար մանկապարտէզի բողբոջ, կոկոն եւ ծաղիկ դասարաններէ եւ նախակրթարանի՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ դասարաններէ: Ուսուցչական կազմը կը բաղկանար տնօրէն-ուսուցիչէ, ուսուցիչ պրն. Յակոբ Տողրամաճեանէ, մանկապարտիզպանուհի օր. Տողրամաճեանէ եւ արաբերէն լեզուի արաբ ուսուցիչ մը:

Վարժարանի պաշտօնական բացումէն առաջ արդէն իսկ կազմած էի բոլոր դասարաններու յատուկ դասացուցակները եւ բաժնած ուսուցչական կազմին եւ դասաւանդութիւնները սկսան պաշտօնական բացումէն ետք աշակերտներու իրենց դասարանները մուտքով:

Դպրոցական տարեշրջանը սկսանք ներդաշնակ աշխատանքով, նուիրումով գործադրելով վարժարանի կրթական ծրագիրը: Սակայն, հակառակ մեր կրօնագիտական դաստիարակութեան, մեր աշակերտներուն կը պակսէր ազգային-եկեղեցական ուսում, որպէսզի մեր աշակերտները սորվին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ աղօթքները, սաղմոսները եւ շարականները:

Մանկական տարիքիս աշակերտած ըլլալով Հալէպի Կիրակնօրեայ Դպրոցները եւ ապագային որպէս ուսուցիչ ծառայելով Կիրակնօրեայ դպրոցներու աշակերտութեան, որոշեցի աշխատանք տանիլ Ռազգայի մէջ Կիրակնօրեայ դպրոց հիմնել:

Այդ նպատակով դիմեցի Բերիոյ Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Զարեհ Ս. Արք. Փայասլեանին, որպէսզի իր արտօնութեամբ Կիրակնօրեայ դպրոց բացուի Ռազգայի մէջ:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքով եւ խանդավառութեամբ ընդառնալեց իմ դիմումիս եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կիրակնօրեայ Դպրոցներու վարիչ-տնօրէն պրն. Լեւոն Զէնեանին եւ Բերիոյ Թեմին Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդին համամտութիւնը առնելէ ետք, ինծի իմացուց, որ իրեն տեղեկացնեմ Կիրակնօրեայ դպրոցի պաշտօնական բացման թուականը:

Ռազգա նորբաց Կիրակնօրեայ վարժարանի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 1950 Դեկտեմբերի սկիզբը, ներկայութեամբ Սուրիոյ շրջանի Կիրակնօրեայ դպրոցներու վարիչ-քարտուղար պրն. Գէորգ Ներսոյեանի, Տէր Զօրի եւ Ռազգայի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ գաւակններուն հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Եղիշէ Քհ. Տողրամաճեանի, թաղականութեան անդամներու եւ հոծ թիւով ազգայիններու եւ շուրջ 70 աշակերտներու:

Բացման հանդիսութեան խօսք առաւ պրն. Գէորգ Ներսոյեան եւ խօսեցաւ Կիրակնօրեայ դպրոցներու առաքելութեան եւ օգտակարութեան մասին:

Խօսք առաւ նաեւ Տէր Հայրը եւ ողջունելէ ետք Կիրակնօրեայ դպրոցի հիմնարկութիւնը, օրհնեց առնուած աստուածահաճոյ քայլը եւ յաջողութիւն մաղթեց:

Իմ կարգիս խօսք առնելով, շնորհակալութիւն յայտնեցի Բերիոյ Թեմի Առաջնորդ Սրբազան հօր, Կիրակնօրեայ դպրոցներու վարիչ-տնօրէն պրն. Լեւոն Ն. Զէնեանին, Բերիոյ Թեմի Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդին, հոգեւոր հովիւին, թաղականութեան անդամներուն եւ աշակերտութեան ծնողներուն, որոնց ջանքերով կարելի եղաւ հիմնել Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ առաջին Կիրակնօրեայ դպրոցը Ռազգայի մէջ, կոչ ուղղելով երիտասարդ սերունդին, որպէսզի իրենց մասնակցութիւնը բերեն Ռազգայի Կիրակնօրեայ դպրոցին, որպէս ուսուցիչ եւ օգնական կրօնական եւ ազգային դաստիարակութիւն փոխանցեն աշակերտութեան:

Այնուհետեւ, ընդառաջելով իմ հրաւերին, շաբթէ-շաբաթ տասէ աւելի ուսուցիչ-ուսուցչուհիներ եկան միանալու մեր քրիստոնէավայել աշխատանքին:

Ռազգայի Կիրակնօրեայ դպրոցի բացումէն ետք, Մեծի Տանն Կիլիկիոյ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու վարիչ-տնօրէնէն ստացայ նամակներ, որոնցմէ երկուքը իր կարեւորութեան համար կ'արձանագրեմ հոս.

Թիւ 3871

12 Յունուար 1951, Անթիլիաս-Լիբանան

Մեծայարգ
Պրն. Գրիգոր Չոթոյեան
Տեսուչ Յայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի
Ռազգա, Սուրիա

Սիրելի պատօնակից,

Ուրախութեամբ տեղեկացած էիք մեր պաշտօնակից պրն. Գեորգ Ներսոյեանէն, թէ հակառակ Ձեր բազմազբաղ վիճակին բարեհաճեր էիք ստանձնել գաղութիդ մէջ նոր հիմնուած Կիրակնօրեայ դպրոցի տեսչական պաշտօնը:

Անշուշտ ի մօտոյ պաշտօնապէս պիտի հաստատենք Ձեր տեսչական պաշտօնը, Հալէպի Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդի առ այդ տրուած որոշումը յետ պրն. Ներսոյեանի յանձնարարութեան: Սակայն, մինչ այդ, կը փութանք շնորհաւորել Ձեզ Նոր Տարւոյ սեմին վրայ, որ լաւագոյն կադանդէքը տուած եղաք Յայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներուն, յանձն առնելով Ռազգայի մասնաճիւղի տեսչական պաշտօնը: Կը մաղթենք, որ Տէրը պարգեւէ Ձեզ ուժ, կարողութիւն եւ երկնային իմաստութիւն՝ վարելու նաեւ այս եկեղեցւանուէր գործը, որուն յետ այսու կամաւորներէն մին պիտի նկատենք Ձեզ այդ հեռաւոր գաղութին մէջ:

Շնորհակալութեամբ ստացանք ձեր դրկած թղթակցութիւնը, որ լոյս կը տեսնէ Յունուարի մէջ: «Մեր Կեանքը» թերթիկէն օրինակներ դրկեցինք ձեր հասցէին: Եթէ նկարաքարտեր չեն հայթայթուած Հալէպէն, գրեցէք մեզ աշակերտութեան թիւը եւ ուղղակի փոստով դրկենք ձեր հասցէին:

Յուսանք օրին մէկը կ'ունենանք բախտը ողջունելու ձեզ եւ դպրոցի սիրասուն սաները, սակայն մինչ այդ հաճեցէք ընդունիլ մեր սիրալիր բարեւներն ու լաւագոյն մաղթանքները:

Մնամ յարգանօք՝
Լեւոն Ն. Զէնեան
Վարիչ-Տնօրէն

Մեծայարգ
Պրն. Գրիգոր Յոթոյեան
Տեսուչ Յայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի
Ռազգա, Սուրիա

Սիրելի պատօնակից,
Ուրախութեամբ տեղեկացանք Բերիոյ եւ վիճակաց պատուարժան Կրօնական
Դաստիարակութեան Խորհուրդէն թէ՛ ըստ Կիրակնօրեայ Դպրոցներու հիմնական կանոնագրի
յօդուած ԼԱ.ի տրամադրութեան, միաձայնութեամբ նշանակուած էք Ռազգայի Կիրակնօրեայ
Դպրոցին Տեսուչ՝ 1951 տարուան համար:

Ուստի, հաճոյքն ունինք պաշտօնապէս հաղորդելու ձեզ սոյն որոշումը, որուն յա-
պաղման համար կը խնդրենք ձեր ներողամտութիւնը:

Պատուարժան Խորհուրդը եւ մենք սրտանց կը գնահատենք անցեալի մէջ Կիրակ-
նօրեայ Դպրոցին ձեր մատուցած անձնուէր ծառայութիւնները եւ այժմ կը մաղթենք, որ Տէրը
պարգևէ ձեզ ուժ եւ կարողութիւն, խղճմտօրէն շարունակելու համար այս դժուարին եւ պա-
տասխանատու պաշտօնը:

Մեր տեսուչներէն կ'ակնկալուի ա) հսկել հիմնական եւ ներքին կանոնագիրներու տը-
րամադրութեանց գործադրութիւնը. բ) խնամքով պահել յայտագրի տետրակ մը՝ իւրաքանչիւր
տարուան համար. գ) գործածել միայն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն վաւերացուած դասագիր-
քեր, պատկերներ եւ այլ հրատարակութիւններ. դ) հաւատարիմ մնալ Յայց. Առաքելական Ե-
կեղեցւոյ դաւանանք, վարդապետութիւն եւ աւանդութեանց: Տեսուչներէն կ'ակնկալուի ոչ
միայն ամէն Կիրակի ներկայ ըլլալ Ս. Պատարագի, այլ նաեւ հոգ տանիլ, որ ուսուցիչները եւ
աշակերտները եւս երթան Եկեղեցի, մանաւանդ Կիրակի եւ տօնական օրերուն:

Ընդհատելով ձեզ նոր շրջանի մը սկիզբը, կը հայցենք Աստուծոյ արդիւնեշատ
տարի մը ձեր դպրոցին համար:

Սպասելով ձեր դրական պատասխանին, որուն համար հաճեցէք ընդունիլ մեր կան-
խայայտ շնորհաւորութիւնները:

Մնամ եղբայրական սիրով եւ յարգանքով՝
Լեւոն Ն. Զէնեան
Վարիչ-Տնօրէն

*Այնուհետեւ, նորաբաց Կիրակնօրեայ դպրոցը բացառիկ յաջողու-
թեամբ ընթացաւ շնորհիւ ուսուցիչներու նուիրումին եւ ծնողներու քաջակե-
րութեան, միշտ գնահատուելով Վարիչ-Տնօրէնութենէն:*

*Գոհունակութեամբ հոս կ'ուզեմ արձանագրել, որ 1950ին իմ նախա-
ձեռնութեամբ հիմնուած Ռազգայի Կիրակնօրեայ դպրոցը մինչեւ թուականս
կը շարունակէ իր իւրայատուկ առաքելութիւնը Ռազգայի գաղութի գաւակ-
ներուն ջամբելով կրօնա-բարոյական դաստիարակութիւն եւ ազգային ոգի:*

*Ռազգայի Նուպարեան նախակրթարանի տնօրէնութիւնը ստանձնելու
առիթով, թաղականութեան անդամներուն խոստացած էի իմ կարելիս ընել,
որպէսզի մեր վարժարանի հինգերորդ կարգը աւարտած աշակերտը, քննու-
թիւն տալով ընդունուի Հալէպի Սահակեան եւ Հայկազեան վարժարանի վե-
ցերորդ դասարանը:*

*1950-1951 տարեշրջանը բոլորեցինք յաջողութեամբ եւ 1951-1952 տա-
րեշրջանին Հայկազեան վարժարան ընդունուեցան Նուպարեան վարժարանի*

*Հինգերորդ դասարանին շրջանաւարտ երկու աշակերտներ, մեծ դոկտորակու-
թիւն պատճառելով Ռազգայի հայու թեան:*



**Բերիոյ Թեմի Առաջնորդ Գեր. Ջարեհ Արք. (ապագային Կաթողիկոս)
Ռազգայի Մէջ**

ՀԱՒԱՏՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Արմէն Գրիգորեան, 24 Յունիս 1943էն սկսեալ կը ծառայէր Ազատ Ֆրանսական բանակի Սուրիա-Լիբանան գտնուող հրետանիական բաժանմունքին եւ շուրջ երեք տարիներու ընթացքին, հետեւած թնդանօթաձգային գիտութեան դասընթացքներուն, յատկապէս մասնագիտանալով ամերիկեան 75 միլիմետր եւ Ֆրանսական 105 միլիմետր տրամագիծով թնդանօթներուն, որպէս ենթասպայ վարելով թնդանօթաձգային բոլոր պաշտօնները, նշանառութենէն մինչեւ փանփուշտցու (OBUS) տեսակներու ընտրութիւնը եւ պայթելու չափը:

1945ին, Սուրիոյ մէջ սկսած անկախութեան եւ Ֆրանսական հոգատարութենէն ազատագրման պայքարներուն հետեւանքով եւ համաշխարհային երկրորդ պատերազմէն առաջ Ֆրանսական եւ սուրիական կառավարութիւններու կողմէ կնքուած համաձայնութեան եւ անգլիական կառավարութեան երաշխաւորութեան պարտադրումով, Սուրիոյ մէջ գտնուող Ֆրանսական բանակները տեղափոխուեցան Լիբանան, այնտեղէն Ֆրանսա փոխադրուելու համար:

Ենթասպայ Արմէնին թնդանօթային գումարտակը տեղաւորուեցաւ Լիբանանի Ռայազ քաղաքի օդակայանին մէջ գտնուող յատուկ զինուորակայաններուն մէջ:

Օդակայանի ընդարձակ տարածութիւնները կ'օգտագործուէին ամէնօրեայ թնդանօթաձգային փորձերուն՝ 105 միլիմետրնոց թնդանօթներուն վրայ:

Կեանքը բնական եւ հեզասահ կը շարունակուէր Ռայազի օդակայանին մէջ: Արմէն եւ իր ընկերները, երեկոները քաղաք կ'իջնէին եւ կը յաճախէին նշանաւոր եւ տեսարժան վայրերուն մէջ գտնուող սրճարաններն ու ճաշարանները, երբեմն ալ հանդիպելու Ռայազի բնակող հայերու, անոնց հետ ծանօթանալով եւ բարեկամանալով, կ'ընդառաջէր անոնց հրաւերներուն, այցելելով անոնց տուները, հայկական ընտանեկան ջերմութիւն եւ հիւրասիրութիւն վայելելով հոն:

1945 Յունիսին, թնդանօթային արկածի մը հետեւանքով, Արմէն անմիջապէս փոխադրուեցաւ Ռայազի զինուորական օդակայանի զինուորական երեք յարկանի ընդարձակ հիւանդանոցը եւ Ֆրանսական բանակի զինուորական սպայ բժիշկներու կողմէ ենթարկուեցաւ վերահատուցեան, փրկուելով ձախ ձեռքի դաստակէն ձեռքը կորսնցնելու վտանգէն:

Այդ օրերուն, Ռայազի զինուորական հիւանդանոցին մէջ կը դարմանուէին Ֆրանսական բանակի զինուորներն ու անոնց ընտանիքները: Արմէն, ահաբեկի ցաւերով փոխադրուեցաւ հիւանդանոցի իրեն յատկացուած անկողինը: Զախ ձեռքի դաստակին ներսի կողմի միսերը ցաւալիօրէն ճգմուած էին եւ ոսկորը կ'երեւար: Ի պատիւ զինուորական բժիշկ եօթնան ժորժին ճարտարութեան եւ հմտութեան, ան իր ամբողջ կարելիութիւնները ի գործ դրաւ, յատուկ ուշադրութեամբ կտրելու բացուածքին վնասուած միսերը եւ մաքրելու վէրքը՝ յանձնարարելով, որ երբեք չհամարձակի քակել վիրակապերը:

Նոյն օրը, կէսօրէ ետք, վէրքին սկիզբի ցաւերը ժամէ-ժամ զօրացան, արիւնը կը շարունակէր մեղմօրէն հոսիլ, կարմիր գոյնով ներկելով վիրակապերը:

Անդիմադրելի ցաւին ազդեցութեան տակ, Արմէն դիմեց հիւանդապահուհիներուն, աղաջելով, որպէսզի ճար մը գտնեն ցաւը մեղմացնելու եւ արիւնի հոսումը կեցնելու: Անօգուտ: Հիւանդապահուհիները մերժեցին վիրակապերը քակել, քանի որ այդպէս յանձնարարուած էր գլխաւոր բժիշկին կողմէ:

Արմէն ստիպուած, աղօթելով եւ ցաւը մեղմացնող դեղեր առնելով դիմադրեց ցաւերուն, ամբողջ գիշեր չկրցաւ քնանալ: Առաւօտուն, հիւանդապահուհիները Արմէնին վիրակապերը քակեցին, արիւնը դադրած էր հոսելէ, դեղերով մաքրեցին վէրքը եւ նոր վիրակապերով կապեցին, յուսադրելով, որ ցաւերը օրէ-օր կը մեղմանան:

Օրեր եւ շաբաթներ անցան: Արմէնին վէրքը դարմանումի ենթարկուելով ցաւերը մեղմացան եւ տրամադրութիւնն ալ բարելաւուեցաւ, ժպիտ երեւցաւ դէմքին, ուրախութիւն պատճառելով դարմանող բժիշկին, հիւանդապահուհիներուն եւ դարմանող այլ հիւանդներուն, որոնց հետ մտերմիկ յարաբերութիւն հաստատած էր եւ մանաւանդ, հայ զինուորներու ընտանիքներուն եւ անոնց պարագաներուն հետ, որոնք յաճախակի կ'այցելէին իրենց հիւանդ ազգականներուն եւ հարազատներուն:

Արմէն, հիւանդանոցին մէջ, մանաւանդ անտանելի ցաւ ունեցած շրջանին, իր մարմնական ցաւին տառապանքներուն դիմադրելու համար, ամէն օր, ժամանակ կը գտնէր կարդալու, իր մօտ տարիներէ ի վեր գուրգուրանքով պահած Աստուածաշունչէն համարներ, որոնք իրեն ուժ եւ եռանդ կու տային սփոփուելու աստուածային օրհնութեամբ: Ան մեծապէս կը խրախուսուէր Պօղոս Առաքեալի հոովմայեցիներուն ուղղուած թուղթի 12րդ գլուխ 12-13 համարներու ընթերցումով, ուր կ'ըսուէր. «Յոյսով ուրախացէք, նեղութեան մէջ համբերող եղէք, յարատեւ աղօթեցէք: Կարիքի մէջ եղող եղբայրներուն օգնեցէք եւ միշտ հիւրասէր եղէք»:

Պօղոս Առաքեալի իմաստուն այս խօսքերը Արմէնին կեանքի հանդէպ իր հասկացողութիւնը ճիշդ ճամբաներով առաջնորդեցին, թեթեւցնելով իր հոգեկան տառապանքները, իրեն յոյս ներշնչելով ամբողջական բուժման հասնելու:

Արմէն, մէկ ամիսէն աւելի հիւանդանոցին մէջ դարմանուելով, իր նախկին առողջութիւնը գրեթէ գտած էր, կը մնար իր ստացած վէրքին վերջնական բուժումը: Մտաբերելով Պօղոս Առաքեալի հետեւեալ խօսքը՝ «Կարիքի մէջ եղող եղբայրներուն օգնեցէք», Արմէն որոշեց իր օգնութիւնը առաջարկել հիւանդներուն նախաճաշի, ճաշի եւ ընթրիքի սպասարկութեան:

Արմէնին առաջարկը գնահատութեամբ ընդունուեցաւ հիւանդանոցի պատասխանատուներուն կողմէ, առիթ տալով, որ հիւանդանոցին մէջ իր բարեկամական շրջանակը ընդլայնի:

Այդ օրերուն, հիւանդանոց բերին հայ զինուոր մը, որ ծանրօրէն վիրաւորուած էր Սուրիոյ Րազգա քաղաքին մէջ սկսած սուրիական ազատագրական կռիւներուն ընթացքին, արաբ ազգայնականներու կողմէ, նկատելով, որ

ան Ֆրանսական զինուորական ոստիկանութեան կը պատկանէր եւ ազատուած էր ստոյգ մահէ տեղացի հայ բնակիչի մը կողմէ, որ ծանօթ էր անոր, որպէս հայորդի, որ միշտ կ'օգնէր տեղւոյն հայ գաղուծին:

Վիրաւոր հայ զինուորը, որ Ֆրանսական հպատակութիւն ժառանգած էր իր հօր՝ Ֆրանսական բանակի օտար լէգէոնին մէջ ծառայած ըլլալուն համար, շատ ծանր կերպով վիրաւորուած էր եւ նոյնիսկ խօսելու կարողութիւն չունէր: Միայն ցաւերու ընդմէջէն կ'արտասանէր «մայրիկ, հասի՛ր» խօսքերը:

Արմէն հետաքրքրութեամբ մօտեցաւ վիրաւոր զինուորի մահճակալին եւ յստակօրէն լսեց անոր արտասանած «մայրիկ, մայրիկ» բառերը: Ուրեմն, ծանրօրէն վիրաւորուած զինուորին հայորդի մը ըլլալը փաստելէ ետք, մտածեց ամէն ձեւով օգտակար ըլլալու անոր, մղուած մարդկային-քրիստոնէական եւ հայկական զգացումներէ:

Շաբաթ մը ետք, բժշկական ամէնօրեայ դարմանումներու ենթարկուելէ ետք, ժան (այդպէս կը կոչուէր վիրաւոր հայ զինուորը, որուն անունը Արմէն ստուգեց կարդալով մահճակալի վրայի պատին գրուած անոր անունը), կամաց-կամաց աչքերը բացաւ եւ զարմանքով դիտեց չորս կողմերը, եւ տեսնելով իրեն յուզումով նայող անձ մը, Ֆրանսերէնով հարցուց անոր ով ըլլալը:

Արմէն, վստահ ըլլալով անոր հայ ըլլալուն, հայերէնով ինքզինք ծանօթացուց եւ յայտնեց իր պատրաստակամութիւնը իրեն օգնելու, որպէսզի իր ցաւերը մեղմանան եւ վէրքերը բուժուին ամէնակարճ ժամանակամիջոցին եւ թելադրեց անոր, որպէսզի աղօթէ առ Աստուած, որպէսզի շուտով ապաքինի:

Ժան դժգոհութեամբ ընդունեց Արմէնին թելադրութիւնը, յայտարարելով, որ ինք անհաւատ է եւ հակառակ իր ծնողքին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ գաւակները ըլլալուն, ինք չի հաւատար Աստուծոյ եւ Քրիստոսի գոյութեան եւ իր կեանքի ընթացքին ոչ աղօթած է եւ ոչ ալ եկեղեցի գացած:

Արմէն, այս խօսքերը լսելով խորապէս տրտմեցաւ, որովհետեւ, երբեք չէր կրցած երեւակայել հայորդի մը, որ անհաւատ ըլլար եւ դէմ Քրիստոսի վարդապետութեան եւ անոր աստուածային եւ մարդկային կեանքին:

Արմէն, նեղուած հեռացաւ ժանի մահճակալէն, եւ որոշեց ամէն գնով արթննալ ժանի խիղճը, որպէսզի ան հաւատայ Աստուծոյ գոյութեան, յաւիտենական կեանքի եւ հոգեւոր ճշմարտութիւններու:

Շաբաթ մը ետք, հէք ու անհաւատ զինուորին վիճակը տակաւ առ տակաւ կը ծանրանայ ու կը մօտենայ մահուան: Անոր աչքերուն առջեւ պատկերացաւ ստոյգ մահուան ստուերը, մահուան անարգել եւ սեւ վարագոյրի իջնելը իր վրայ: Վայրկեանները արագ-արագ կը սահէին, ստոյգ մահուան գաղափարը յանկարծ ցնցեց անհաւատ եւ մեղաւոր զինուորը: Տխուր էր, ոչ թէ լոկ անոր համար որ քիչ ետք պիտի մեռնէր, հապա անոր համար, որ իր անմահ հոգին անսուղ մնացած էր եւ ինք՝ իր անձը սոսկ պատասխանատու էր այդ աններելի եւ աղիտաբեր թերացումին, որով շատ յստակ կը տեսնէր իր հոգւոյն կորուստը:

Հիւանդապահուհիին մինջոցաւ կանչել տուաւ Արմէնը եւ լալազին աղերսանքով խնդրեց փրկել իր հոգին, որպէսզի մեղաւոր չմեռնի:

Արմէն, Ժանի սնարին մօտենալով բացաւ Աստուածաշունչը եւ կարգաց Յովհաննու Աւետարանի երրորդ գլուխ 16րդ համարէն. «Որովհետեւ, Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ՝ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ, Աստուած իր որդին աշխարհ ղրկեց, ո՛չ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր չի դատապարտուիր, իսկ ով որ չի հաւատար անոր արդէն իսկ դատապատուած է, Աստուծոյ միածին որդիին չհաւատալուն համար»:

Ապա, Արմէն շարունակեց կարդալ Աւետարանի 5րդ գլուխ 24րդ համարը, ուր Յիսուս կ'ըսէ. «Լաւ գիտցէք, ով որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր, որ զիս ղրկեց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ, արդէն իսկ մահէն կեանքի անցած է»:

Անհաւատ զինուորը մտիկ ըրաւ եւ հասկցաւ համարին իմաստը եւ վայրկեանական կեանքի փոփոխութիւն ունեցաւ: Աչքերը բացաւ, եւ, Արմէնէն խնդրեց, որ հայ քահանայ մը բերուի, որպէսզի իր մեղքերը խոստովանի եւ հաղորդուի:

Արմէն ծանօթ Ռայազի հայու մը հետ լուր ղրկեց Զահլէի հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Մաշտոց Աւագ Քհն. Ոսկերիչեանին, որպէսզի հոգեվարքի հասած հայ զինուորի մը վերջին կամքը կատարէ:

Շատ ժամանակ չանցած Տէր Մաշտոց հիւանդանոց ժամանեց եւ հիւանդանոցի պաշտօնեաներուն եւ զինուոր Արմէնին ներկայութեան, յատուկ արարողութեամբ, աղօթքներով Աստուծմէ խնդրեց, որ ներէ զինուոր Ժանին մեղքերը:

Զինուոր Ժան, արտասուալից աչքերով խոստովանեցաւ իր մեղքերը, աղաչելով, որ հայ քահանան միջնորդէ Աստուծոյ եւ Քրիստոսի, որպէսզի ներեն իրեն անհաւատ կեանք մը ապրած ըլլալուն համար:

Եւ հրաշք... հոգեվարքի մէջ եղող զինուոր Ժան, իր քրիստոնէական հաւատքին զօրութեամբ, արթնցաւ եւ նստեցաւ անկողնին մէջ, փառք տալով Աստուծոյ, որ իրեն նոր կեանք պարգեւեց, որպէսզի հետեւի իր ծնողներուն եւ հայ ազգի կրօնքին, հաւատալով Աստուծոյ գոյութեան եւ Քրիստոսի Աստուծոյ Որդի ըլլալուն:

«ՇՈՂԱԿԱԹ»
Մայիս 2006

ԲԱՐԵՎՈՐԾ ՀԱՅՐԱ

Հայրս՝ Ղազար (Խարզո) Հոթոյեան, հօրը անունը՝ Գրիգոր, ծնած է Սասուն, Տալևորիկի Սպաղանք գիւղը՝ 1892ին:

Ապաղանք գիւղը կը բաղկանար իրարու ազգական 26 ընտանիքներէ, որոնք հայ ազգագրական շարժման գլխաւոր գործիչները եղած են, որոնց շարքին յայտնի Ֆետայիներ Սպաղանաց Մակարը, Ապաղանաց Գալէն, Ապաղանաց խմբապետ Ակէն, եւայլն, որոնք իրենց մասնակցութիւնը բերած են թուրք կանոնաւոր զօրքերուն եւ քիւրա կողոպտիչ աշիրէթներու դէմ մղուած կռիւներուն, պաշտպանելու համար ժողովուրդին անտեսութիւնը, պատիւը, արժանապատուութիւնը եւ ազատ ապրելու իրաւունքը:

Սասնոյ Սպաղանք գիւղը եղած է Ֆետայիներու հաւաքավայրը եւ ամբողջը, ուր նշանաւոր եւ ղեկավար Ֆետայիներ հաւաքուելով ժողով կը գումարէին ծրագրելու համար իրենց ապագայ գործունէութիւնը: Ֆետայիներ Անդրանիկ, Գէորգ Չաւուշ, Ռուբէն յաճախ կը գտնուէին Սպաղանք գիւղը՝ ղեկավարելով Ֆետայիական շարժումը:

Հայրս, թէեւ այդ տարիներուն դեռ պատանի, հետաքրքրութեամբ ներկայ կ'ըլլայ Ֆետայիներու ժողովներուն եւ Անդրանիկին միջոցաւ լողալ կը սորվի եւ Ֆետայիներուն կը ծառայէ:

Ուսումնաստենչ ըլլալով կ'ուսանի Մշոյ կարապետ Վանքին մէջ, ուսուցչական պաշտօնով կը ծառայէ գիւղի դպրոցին, միեւնոյն ատեն որպէս դրպիր եւ սարկաւազ կը ծառայէ գիւղի «Ս. Մարութէ Ճգնաւոր» եկեղեցին, որ ապագային պաշարուեցաւ հայ ժողովուրդի ոխերիմ թշնամի աշիրաթապետ Պշարա Խալիլի կողմէ, որ կրակի տալով խեղդամահ ըրաւ եկեղեցի ապաստանած ժողովուրդը, որոնց մէջ էր նաեւ վաստակաւոր Ֆետայի ծերունի Մակարի ընտանիքը:

Ապագային, Անդրանիկի, Մակարի, Գալէի եւ այլ Ֆետայիներու կողմէ Պշարա Խալիլ բռնուեցաւ եւ գլխատուեցաւ իր գործած աններելի յանցանքներուն համար:

Հայրս, տէր դառնալով քիւրտերու յարձակումներուն սպաննուած քիւրտի մը չախմախլու գէնքին, պատանի տարիքին կը մասնակցի Սասնոյ ապրստամբութիւններուն իր ազգական Ֆետայիներուն կողքին: Տօնօ Մակար հօրս ազգական եւ կնքահայրն էր, Գալէն եւ Ակէն, հօրեղբօրը զաւակները, որոնց շուքին տակ կը մեծնայ, պատրաստ զոհուելու հայրենի ժողովուրդին պաշտպանութեան համար տեղի ունեցող կռիւներուն:

1914ին, թուրք ոստիկաններու հետապնդումէն ազատուելով, կը հեռանայ Սասունէն եւ երկար եւ տառապալից ճամբաներէ անցնելով կը հասնի Կիլիկիա եւ ծանօթանալով Քիլիս քաղաքի իր հայրենակիցներուն, որոնք ջաղացպաններ էին, կ'ապաստանի անոնց մօտ, եւ կը դառնայ անոնց պէս ջաղացպան:

Հայրս Քիլիս հասնելէն տարի մը ետք, թուրքիա Գերմանիոյ հետ դաշնակցելով պատերազմի կը մտնէ Ֆրանսայի, Անգլիոյ եւ Ռուսիոյ դէմ եւ երկրին մէջ կը սկսի պարտադիր զինուորագրութիւն, բոլոր զինուորական տարի-

քի քաղաքացիներուն համար: Այդ օրերուն կը սկսի նաեւ Թուրքիոյ մէջ ապուրող բոլոր հայերուն աքսորն ու սպանութիւնը: Հայաբնակ բոլոր քաղաքներն ու գիւղերը յատուկ հրահանգով կը պարպուին հայ բնակչութիւններէն, որոնք անօթի-ծարաւ, անտանելի պայմաններու ներքեւ, կը տարագրուին դէպի արաբական անապատները, ճամբաներուն վրայ ենթարկուելով կողոպուտի, բռնաբարումներու եւ խոչտանգումներու:

Թուրքիոյ արեւելեան նահանգներու մէջ, յատկապէս Սասունի, Վանի, Շապին Գարահիսարի, Էրզրումի եւ այլ քաղաքներու եւ շրջաններու մէջ տեղի կ'ունենան ինքնապաշտպանական կռիւներ, որոնք կը վերջանան պարտութեամբ, զէնքերու եւ ռազմամթերքի անբաւարարութեան պատճառով:

Ինքնապաշտպանական կռիւներ տեղի կ'ունենան նաեւ Կիլիկիոյ քաղաքներէն Այնթապի, Մարաշի, Հաճընի, Զէյթունի եւ այլ քաղաքներու մէջ, որոնք կ'արժանանան պարտութեան եւ աքսորի:

Պարտադիր զինուորագրութիւնը կը հասնի Կիլիկիա, Քիլիսի շրջանի ջաղացպանները եւ զինուորական փախստականներ կը հետապնդուին: Ուրիշներու կարգին հայրս ալ կը ձերբակալուի, սակայն, միջոցներ կը գտնէ փախչելու եւ թաքնուելու տարեց Սասունցիներու ջաղացներու մէջ: Զերբակալութիւնները կ'ըլլան յաճախակի, սակայն, հայրս միշտ միջոցը կը գտնէ փախչելու: 12րդ ձերբակալութենէն չի կրնար ազատիլ: Զինք կը փոխադրեն Հալէպ, Պապ-ըլ-ձընէնի շրջանին մէջ գտնուող ընդարձակ, երկյարկանի շէնքի մը մէջ կը բանտարկեն, ուր կը հանդիպի բազմաթիւ հայ եւ արաբ փախստական զինուորացուներու:

Բանտարկուած հայերու մէջ կը հանդիպի Սասունցի Մկրտ անունով հայրենակիցի մը: Կը մտերմանան, եւ, կ'որոշեն փախուստ տալ, զիրենք բանակ տանելէ առաջ, քաջ գիտնալով, որ բանակ երթալ կը նշանակէ դէպի մահ երթալ:

Երկար մտածելէ եւ շէնքին բոլոր մասերը քննելէ ետք, կը տեսնեն, որ պէտքարանները կը գտնուին երկրորդ յարկի վրայ: Երեկոյեան միջնալէ ետք, երկու սասունցի երիտասարդներ պէտքարան երթալու հրաման կ'առնեն եւ պէտքարանին դրան իրենց գօտիները կը դնեն, որպէսզի պատասխանատու զինուորները վստահ ըլլան, որ հրաման առնողները հոն են: Սակայն, երկու սասունցիները, պէտքարանին տանիքը ելլելով, հերթականօրէն կը ցատկէն քովի փողոցը: Բարեբախտաբար, ցատկելով իրենց ոտքին տակ կը հանդիպին կակուղ աղբերու եւ ողջ առողջ փախուստ կու տան:

Հայրս, ինչպէս ըսի, պատերազմի երեք տարիներու ընթացքին 12 անգամ կը ձերբակալուի, եւ, ըմբոստ սասունցի, միշտ փախուստ կու տայ: Հայրըս, իմ հետաքրքրութիւնս գոհացնելու համար զիս տարաւ եւ ցցուց Հալէպի «Պապ-ըլ-ձընէն» թաղի այն շէնքը, որուն երկրորդ յարկէն ցատկելով ազատած էր 12րդ իր ձերբակալութենէն:

Հայրս, 12րդ ձերբակալութենէն փախչելով կը վերադառնայ Քիլիս եւ կը շարունակէ ջաղացպանութիւնը: Քիլիսի մէջ կ'ամուսնանայ մօրս հետ, Կիլիկիոյ Պեհեսնի քաղաքէն Մարիամին հետ: Մեծ քոյրս Սիրանուշը կը ծնի Քիլիսի մէջ՝ 1918ին:

Զինադադարէն եւ Թուրքիոյ պարտութենէն ետք, հայրս կը փոխադրուի Սուրիոյ Ազէզ գիւղաքաղաքը: Ազէզի մէջ կը ծնի Յարութիւն եղբայրս՝ 1922ին: Սուրիա Ֆրանսական հովանաւորութեան կ'ենթարկուի: Հայրս եւ ընտանիքը կը փոխադրուին Հալէպ: Համիտիէ թաղին մէջ կը շինէ թիթեղեայ եւ փայտեայ տուն մը, ուր կը ծնիմ ես՝ 1927ին: Տարիներ ետք, պետական հրահանգով տարագիր հայերու թիթեղեայ տուները կը քանդուին, իսկ բնակիչներուն առիթ կը տրուի տուն շինելու Հալէպի Նոր Գիւղ թաղամասին մէջ:

Հայրս եւ մայրս, աղիւս թափելով, գիշերօցերեկ աշխատելով երեք սենեակնոց եւ բակով տուն մը կը շինեն, ուր կը ծնին եղբայրս Յովհաննէսը 1929ին եւ քոյրս՝ Արշալոյսը՝ 1932ին:

Նոր շինուած տունին մէկ սենեակը խանութի վերածելով, հայրս, քանի մը արհեստներ կը փորձէ ընտանիքը պահելու համար: Մսավաճառութիւն, նրպարավաճառութիւն կը փորձէ, «մուշապաք» շինելով կը ծախէ Ֆրանսացի գինուորներուն, թան շինելով կը ծախէ Հալէպի կեդրոնական շուկային մէջ եւ վերջի վերջոյ, տունը ծախելով կոկիկ գումարի մը տէր կ'ըլլայ, եւ Ազէզ գիւղաքաղաքին մէջ Ամերիկայէն գործածուած հագուստներու խանութ մը կը բանայ, Թուրքիայէն եկող թուրք մաքսանենգներուն ծախելով բաւական բարեկեցիկ կեանք մը կ'ապահովէ իր ընտանիքին, վարձքով բնակութիւն հաստատելով Նոր Գիւղի առաջին թաղամասին վրայ գտնուող քարաշէն երկյարկանի շէնքի մը մէջ:

Հայրս, որպէս նախկին ուսուցիչ եւ սարկաւազ, ուսումնատենչ հայ, իր հինգ զաւակները (երեք մանչ, երկու աղջիկ), նիւթական մեծ դժուարութեամբ կը հոգայ անոնց դպրոցական ծախսերը, որոնք կը յաճախեն Նոր Գիւղի Սահակեան վարժարանը:

Իր Ազէզի խանութը միամտաբար կորսնցնելէ ետք, Հալէպի մէջ կը ձեռնարկէ Ամերիկեան գործածուած ժագէթներու եւ վերարկուներու վաճառքի, Կիրակի եւ Ուրբաթ օրերը տեղի ունեցող պազարներուն մէջ յատուկ տեղ վարձելով: Յետագային ժագէթները ուսին վրայ կը շրջէր Հալէպի շուկաները, երբեմն ալ մեծ եղբօրս կամ գիւ իր հետ տանելով:

Իր գործադրած բազմաթիւ արհեստներու կողքին, քեռայրիս հետ ընկերանալով եղած է փռապան, սակայն իր գլխաւոր գործը եղած է փոքր եւ մեծ քանակութեամբ ժագէթ ծախելը:

Ինչպէս ծանօթ է, սասունցիներ Հալէպ կու գային, որպէս փռապան կ'աշխատէին եւ բաւարար գումար մը խնայելով կը վերադառնային Սասուն, ինչպէս յայտնի հայդուկապետ Գէորգ Չաւուշ, որ Հալէպի մէջ փռապանութեամբ գրամ խնայելով գէնք մը կը գնէ եւ կը վերադառնայ Սասուն:

Մեծ թիւով սասունցիներ, 1300 թուականէն սկսեալ հաստատուած են Հալէպ եւ շինած են Ս. Քառասուն Մանկաց եկեղեցին Սալիպէ թաղամասին մէջ:

Այդ թուականներուն, Հալէպի փոռներուն հարիւրէ ինիսունը կը պատկանէր սասունցիներուն եւ այդ պատճառաւ տեղացի արաբները փոռ կ'երթամ ըսելու փոխարէն «Սուսանի» ին կ'երթամ կ'ըսէին:

Հալիսի Սասունցիները կազմած էին Սասնոյ Հայրենակցական Միութիւնը, որ մեծապէս օգտակար կը դառնար սասունցի ընտանիքներուն բարելաման, կազմակերպելով նաեւ մշակութային ձեռնարկներ:

Հայրս, ծանօթ ուսուցիչ-մտաւորական Սիմոն Սիմոնեանէն ետք, միակ Սասուն ծնած եւ գրել-կարդալ գիտցող սասունցի, մաս կը կազմէր Սասնոյ Հայրենակցական Միութեան վարչութեան: Միութիւնը եթէ ոեւէ Հայրենակիցի նիւթական եւ բժշկական օգնութիւն պիտի ընէր, միութեան վարչութիւնը պէտք է որոշում առնէր:

Սակայն, վարչութիւնը համաձայն չըլլար սասունցի կնոջ մը Ալթունեան հիւանդանոցին մէջ կատարուելիք գործողութեան օգնելու, նկատի ունենալով, որ հինգ օսմանեան ոսկի կը պահանջուէր հիւանդանոցէն:

Կինը լալով կու գայ մեր տունը եւ կ'աղաջէ հօրս, որպէսզի միջոց մը գտնէ այդ գումարը հայթայթելու համար, այլապէս, կեանքը վտանգի տակ է եւ երեխաները որք պիտի մնան:

Հայրս ցաւելով եւ մեղքնալով սասունցի կնոջ, միութեան պաշտօնական թուղթը կը կնքէ, որպէս համաձայնութեան վաւերացում, խնդրելով կնոջմէ, որ գործողութենէն ետք ոեւէ մէկուն չըսէ, թէ ինք իրեն տուաւ կնքուած պաշտօնաթուղթը:

Սասունցի կինը, գործողութիւն կ'ըլլայ, տուն կու գայ իր շնորհակալութիւնները յայտնելով հօրս, որ համարձակեցաւ անօրէն ձեւով իրեն օգնելու եւ իր կեանքը փրկելու:

Ալթունեան հիւանդանոցէն հաշուեցոյց կու գայ Հայրենակցական Միութեան վարչութեան: Հինգ օսմանեան ոսկի կը պահանջուէր: Վարչութիւնը անակնկալի եկած վարչութեան անդամներուն կը հարցնէր, թէ ի՞նչպէս, որո՞ւ արտօնութեամբ կատարուած է այս գործողութիւնը: Հայրս, համարձակօրէն կը խոստովանի ըսելով. «հինգ օսմանեան ոսկիով Սասունցի մօր մը կեանքը փրկեցինք, որպէս սասունցի մեր պարտքը տուինք, որուն համար հիմնուած է այս միութիւնը»: Սասունցի այդ կինը մինչեւ մահ երախտագիտութեամբ կը պատմէր հօրս ըրած բարիքը:

Հօրս ըրած բարիքները բազմաթիւ են: Հոս կ'ուզեմ անդրադառնալ գլխաւորներուն.

Բանտէն փախած էր քեռայրիս ազգականներէն Եօթնան Յակոբ կոչեցեալ աւագակը, որ իր գործած բազմաթիւ գողութիւններուն համար երկարամեայ բանտարկութեան դատապարտուած էր:

Այդ օրերուն հրեշտակային մայրս նոր մեռած էր: Քեռայրս հօրս կ'առաջարկէ, որ Յակոբ մեր տունը մնայ քանի մը օր եւ մենք մնանք քրոջ տունը:

Հայրս, բարեկամներէն դրամ կը հաւաքէ, որպէսզի կաշառքով Յակոբը Պաղտատ փախցնէ: Մինչ այդ մատնութեան մը հետեւանքով ոստիկանութիւնը կը պաշարէ մեր եւ քրոջ տունները եւ Յակոբը հոն չգտնելով, հայրս եւ մեծ եղբայրս ոստիկանատուն կը տանին, ուր ծեծի ազդեցութեան տակ, եղբայրս կ'ըսէ, թէ հայրը Յակոբը ուրիշ տեղ տարաւ:

Ծեծի եւ այլազան պատժամիջոցներու գործադրութեան չդիմանալով, հայրս կը խոստովանի իր տարած տեղը, ուրկէ յաջորդ օր, մաքսանենգու-

Թեամբ զբաղող մարդիկ Յակոբը Իրաքի սահմանէն պիտի անցընէին: Ոստիկանութիւնը Յակոբը կը ձերբակալէ քնացած վիճակին մէջ, այլապէս արիւնսայեղութիւն կրնար պատահիլ:

Յաջորդ օր ոստիկանութիւնը կու գան եւ կը ձերբակալեն Հայրս եւ քեռայրս, որոնք դրամական երաշխաւորութեամբ բանտէն դուրս կ'ելլեն: Երկարատեւ դատավարութեան ընթացքին, փաստաբաններու վճարումներուն հասնելու համար կը ծախուի հօրս ամերիկեան գործածուած հագուստներու մը՝ թերքները, սակայն, այդ բոլորը հօրս եւ քեռայրիս անպարտութեան չեն բերեր: Կը դատապարտուին վեցական ամիս բանտարկութեան, փախստական բանտարկեալի պառկելու տուն տրամադրած ըլլալուն յանցանքով:

Քեռայրս կը յանձնուի, իսկ Հայրս, ըմբոստ սասունցին, փախուստ կու տայ եւ կ'ապաստանի Գամիշլիի սասունցիներուն մօտ: Մենք ալ ընտանեօք շրջան մը կը փոխադրուինք Գամիշլի, ապա, կը վերադառնանք Հալէպ, իսկ Հայրս կը ձերբակալուի Գամիշլիի մէջ եւ վեց ամիս կը բանտարկուի հոն:

• Ինչպէս յիշեցի, Հայրս, Ազէզի խանութը գոցելէ ետք, Հալէպի մէջ Կիրակի եւ Ուրբաթ օրերուն կատարուող պազարներուն պասթա կը բանար եւ ամերիկեան գործածուած բայց նորոգուած ժազէթներ եւ վերարկուներ կը ծախէր: Հոն նկատի կ'առնէ հօրս եւ իր հայրենակիցներուն հետ խօսուած հայերէնը մտիկ ընող երիտասարդ քիւրտի մը հետաքրքրութիւնը, եւ, քանի որ ինքն ալ քրտերէն գիտէր, կը մօտենայ քիւրտին եւ հարցնելով կը հաստատէ, որ ան հայ է եւ հայոց Մեծ Եղեռնին քիւրտերուն կողմէ որդեգրուելով ապրած է անոնց մօտ:

Հայրս, պասթան գոցելով, քիւրտը, որ Արէֆ կը կոչուէր կը տանի Ազգային Առաջնորդարան եւ այնուհետեւ Արէֆ իր վրայէն կը նետէ քրտական տարազը եւ հայանալով, կ'ապրի եւ կ'ամուսնանայ Հալէպի մէջ:

• Ամառնային օր մըն էր: Հայրս, արաբական հագուստով, եւ, մարմինը վրայ արաբական թաթուներով արաբ երիտասարդ մը բերաւ մեր տունը: Խօսակցութենէն յայտնի եղաւ, որ արաբ երիտասարդը, հայոց Մեծ Եղեռնին, 6-7 տարեկան մանուկ մը, կ'որդեգրուի Անապա ցեղախումբէն ընտանիքի մը կողմէ, հոն կը մնայ եւ կը մեծնայ արաբական սովորութիւններով, բայց երբեք չի մոռնար իր հայ արմատները եւ օր մըն ալ կ'որոշէ փախչիլ դէպի Հալէպ, լսելով, որ հոն շատ հայեր կ'ապրին: Հալէպ գալով, հարցնելով հայերու մասին, Նոր Գիւղի մէջ կը հանդիպի հօրս:

Արաբացած հայը, մեր տունը կը մնայ քանի մը օր, եւ, կ'արժանանայ հայկական հիւրասիրութեան: Այդ միջոցին ենթական կը յիշէ իր հայկական անունը՝ Սարգիս եւ Թուրքիոյ մէջ իրենց տունը եւ շրջանը:

Հայրս Սարգիսը Նոր Գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի կը տանի եւ հոն գտնուողները լսելով Սարգիսին բացատրութիւնները, կ'եզրակացնեն որ Սարգիս Այնթապցի ծնողներու զաւակ է:

Շարունակուող հարցուփորձերէն ետք, Սարգիս կը գտնէ իր ազգականները, որոնք տէր կ'ըլլան իրեն, կ'ամուսնացնեն եւ արհեստի տէր կ'ըլլայ, ապրելով որպէս պատուաւոր հայ, որ երբեմն կը հանդիպէր մեզի, իր երախտագիտութիւնը յայտնելով հօրս եւ մեր ընտանիքին:

Ես երբեք չեմ մոռնար Սարգիսը արաբական տարագրով եւ թաթուհներով եւ յետոյ, եւրոպական համազգեստով, սակայն, միշտ թաթուհներով, չմոռնալու համար իր անցեալի տառապանքները:

• Չեմ գիտեր բախտով, թէ հետաքրքրութեամբ, հայ կարօտեալներ եւ փախստականներ հօրս կը հանդիպէին:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներ էին: Օր մըն ալ հայրս հայ երիտասարդի մը հետ տուն եկաւ: Մենք ընտանեօք 15 տարեկանէն վար երեք եղբայր եւ մէկ քոյր կը բնակէինք մէկ սենեակնոց տունի մը մէջ: Հայրս ներկայացուց անծանօթ երիտասարդը՝ Յակոբ Գարակէօզ, փախստական թրքական բանակէն:

Յաջորդ քանի մը օրերուն ընթացքին, հայրս, իր բարեկամներէն որոշ գումար մը ապահովելով, որոշ գումարի մը փոխարէն, Յակոբը Լիբանան անցընելու անձը գտան: Յակոբ Պէյրութ հասնելով, շնորհակալական նամակով մը իր երախտիքը յայտնեց հօրս ըրած բարիքին համար, գնահատելով հօրս ազգասիրական զգացումները:

• Մեր կնքահայրը՝ Մելէ Գասպարեան, որ երկար տարիներ ջաղացպանութիւն ըրած է հիւսիսային Սուրիոյ քրտաբնակ լեռնաշխարհին մէջ, տարիքի բերմամբ անկարող ըլլալով, կը ստիպուի մտածել իր ընտանիքին ապրուստին համար եւ հօրս կարծիքը կ'ուզէ այդ ուղղութեամբ:

Հայրս, նկատի առնելով կնքահօրս մեծցած զաւակները, կը թելադրէ Հալէպ փոխադրուիլ, որպէսզի զաւակները գործ գտնելով եւ աշխատելով իրենց ապրուստը ապահովեն: Կնքահայրս ճիշդ գտնելով հօրս թելադրութիւնը, իր համաձայնութիւնը կը յայտնէ Հալէպ փոխադրուիլ:

Կնքահայրս, Ազգի իր տունը աժան գինով քիւրտի մը կը ծախէ եւ իր կնոջ եւ երկու աղջիկ եւ երկու մանչ զաւակներով Հալէպ կը փոխադրուին եւ կ'իջեւանին մեր տունը: Կնքահօրս զաւակները գործ կը գտնեն եւ կը սկսին աշխատիլ: Մեզի կը մնան երկու շաբաթ եւ յարմար վարձքով տուն մը գտնելով, փոխադրուին հոն:

Կնքահայրս մինչեւ իր մահը, երախտագիտութեամբ կը յիշէր հօրս ըրած մարդկային եւ ազգականական բարիքը:

• Երկրորդ Աշխարհամարտի տարիներուն, ինչպէս աշխարհի ամէն կողմ, նոյնպէս Սուրիոյ մէջ կը տիրէր տնտեսական ծանր վիճակ: Ուտելիքի, մանաւանդ հացի տագնապը անտանելի էր: Մէկ-երկու քիլօ հաց առնելու համար, կէս գիշերին փողօն առջեւ շարքի կենալով, հազիւ մինչեւ առաւօտ կարգը գար: Եւ երբեմն, մինչեւ կարգը գալը հացը կը վերջանար: Օրուան հաց ունենալը մեծ բախտաւորութիւն էր: Գիշերուընէ փողօն առջեւ կենալու մարդ չունեցող ընտանիքներ յաճախ առանց հացի մնալու դատապարտուած էին: Այդ օրերուն դժուար է գտնել հաւկիթ, կարագ, շաքար, բրինձ, եւայլն: Անտանելի եւ տաժանելի օրեր էին:

Այդ օրերուն, երէց եղբայրս Յարութիւնը, բաւականաչափ անգլերէն գիտնալով, կ'աշխատէր անգլիական բանակի խոհանոցին մէջ, որ հաստատուած էր Հալէպի կարմիր զօրանոցին մէջ, եւ, խոհանոցին կից ճաշարանին յաճախորդ ենթասպաններուն կերակուր մատուցանելու պարտականութեան ընթացքին կը ծանօթանայ որպէս թարգմանիչ անգլիական բանակին ծառայող:

Սարճըն Չարլիին, ակտորալիացի հայ երիտասարդ մը, որուն կ'առաջարկէ օգնել իրեն որպէսզի խոհանոցի եւ ճաշարանի ակեցուքները թափելու պարտականութիւնը առնել, որոշ գումարի մը փոխարէն:

Սարճըն Չարլիին կը յաջողցնէ ծրագիրը եւ համաձայնագիրը (քոնթրակտ) կը յանձնէ եղբօրս: Հայրս, որ այդ օրերուն գործ չունէր, կառք մը կը վարձէ եւ շաբաթը քանի մը անգամ գորանոց երթալով, կառքը կը լեցնէ խոհանոցէն եւ ճաշարանէն ակեցաց հացերով, միսերով, կերակուրներով, անուշեղէններով եւ զանազան ուտելիքներով եւ խմելիքներով եւ այս բոլորը կ'իջեցնէ մեր տունը: Բարեկամներու միջոցաւ լուր կը դրկէ Ձէյթուն Խանի, չորրորդ թաղամասի Աճուր Թարլայի հայ բնակիչներուն, որոնք արդէն կը տառապէին հացի, միսի եւ ուտելիքներու պակասէն, զան եւ աժան գինով զնեն իրենց ուզածները:

Հայրս կշիռք մըն ալ կը գնէ եւ մէկ օրուան ընթացքին կը ծախէ կառքի բովանդակութիւնը: Եւ այսպէս, քանի մը տարի, մինչեւ անգլիացիներու Սուրիայէն մեկնումը, հացով, միսով եւ այլ ուտելիքներով կշտացնելով մեր ընտանիքը եւ մեր տան շրջակայ հայութիւնը:

Պատերազմի այդ տառապալի օրերը յիշողները, գնահատանքով եւ երախտագիտութեամբ երկար տարիներ օրհնութիւն նկատելով սասունցի Խարզոյին կողմէ հացի եւ ուտեստեղէններու հայթայթումը, առիթ ստեղծելով, որ անօթի չմնան բազմաթիւ աղքատ ընտանիքներ, որոնք խաղաղ օրերուն նման սննդարար ուտելիքներ ուտելու առիթ չեն կրնար ունենալ:

• Հալէպ մեր բնակութեան ընթացքին, հօրս կողմէ մեր սեփական տունը ծախելէ ետք, զանազան շրջաններ որպէս վարձակալ ապրեցանք: Բանակէն վերադարձիս ծնողքս կ'ապրէր Արդուպ թաղամասը: Շրջան մը ետք փոխադրուեցանք Պոսթան-Փաշա, ապա Համիտիէ:

Հալէպի «Արեւելք» օրաթերթի գրաշարութիւնը, թէեւ յոգնեցուցիչ, սակայն, նախասիրած աշխատանքս էր, ճամբայ բանալով իմ մտաւորական եւ գրական երազներուս:

Արդէն սկսած էի յօդուածներ, թղթակցութիւններ եւ բանաստեղծութիւններ գրել «Արեւելք»ի մէջ, մաս կը կազմէի Հ.Յ. Դաշնակցութեան եւ այլ միութիւններու շարքերուն, նաեւ, որպէս ուսուցիչ ծառայելով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներուն մէջ եւ որոշ անուն եւ ծանօթութիւն ձգած միութենական շրջանակներու մէջ:

Երբեմն, մինչեւ իրիկուն գրաշարութենէն յոգնած, երբ տուն կը հասնէի, տունին մէջ անծանօթ կնոջ մը կամ այր մարդու մը կը հանդիպէի: Հայրըս, տեսնելով իմ հետաքրքրութիւնս կ'ըսէր. «Տիկինը (կամ պարոնը) բազմանգամ ընտանիքի մայր է (կամ հայր), երեք զաւակ ունի դպրոցական, սակայն, թոշակը վճարելու կարողութիւն չունի, իմ հոգին, բարիք մը ըրէ այս կնկան (կամ այս հայրենակիցին) նամակ մը գրէ Սուրիահայ Օգնութեան Խաչին կամ Հայրենասիրական Միութեան, որպէսզի օգնեն իրենց զաւակներուն դպրոցի թոշակին»: Եւ այս, յաճախ: Օր մը նեղուած ըսի. «Հայրիկ, ինչ է, դուն բարեգործական ես, ես ալ քու քարտուղարդ եմ»: Խնդաց եւ ըսաւ. «Տղաս, տրկար եւ անկար եւ աղքատ մարդոց օգնել մարդկային ամէնամեծ առաքելուն»:

Թիւնն է, ամբողջ կեանքիդ ընթացքին բարիք ընելէ մի՛ դադրիր, բարիք ըրէ ծովը թափէ»:

Հայրս նման բարիքներ չդադրեցաւ ընելէ մինչեւ մահ, հարստութիւն չսիրեց, որովհետեւ մեծցած էր Սասնոյ Սպաղանք գիւղը, Ֆետայիներու շունչին տակ, որոնք միայն ազգն ու հայրենիքը սիրեցին եւ պայքարեցան ազատ, անկախ Հայաստանի երազին իրականացման համար: Հայրս անոնցմէ էր եւ մեզի փոխանցեց այդ աւանդական զգացումները:

«ՇՈՂԱԿԱԹ»
Յուլիս-Օգոստոս 2006



Շուշիի Ղազանոց եկեղեցին

ԱՄԷՆ ՉԱՐԻՔԻ ՏԱԿ, ԲԱՐԻՔ ՄԸ ԿԱՅ

1941ին աւարտեցի Հայկալի Սահակեան Վարժարանը եւ այդ ամառ, ինչպէս նախորդ ամառները, դպրոցական երեք ամսուան արձակուրդներուն, հայրս կրկին զիս տարաւ Հայկալի Խան Հաճի Մուսա կոչուող վայրը, ուր հըսկայ բակին չորս կողմերը, երկու յարկերու վրայ գտնուող խանութները վարձուած էին հայ առեւտրականներով եւ դերձակներով: Առեւտրականները մեծաքանակ (պալեաններով) գործածուած ժագէթներ, մանթոներ եւ տափատներ կը ներածէին Ամերիկայէն եւ որոշ նորոգութիւններէ ետք կը ծախէին, յատկապէս Թուրքիայէն եկող մաքսանենգներուն (ղաչախչիներու), որոնք գնուած ապրանքները կը տանէին Թուրքիա եւ շատ սուղ գինով կը վաճառէին, իսկ դերձակները, քիչ-շատ հինցած ժագէթներ եւ մանթոններ կը քակէին եւ ներսը դուրս դարձնելով կը կարէին, գրեթէ նորի տպաւորութիւն ձգելով յաճախորդներուն վրայ:

Ուրեմն, հայրս զիս կրկին տարաւ Խան Հաճի Մուսայի երկրորդ յարկին վրայ գտնուող դերձակ Աճոյեանին խանութը, ուր որպէս վարպետ դերձակ կ'աշխատէր նաեւ իմ հայրենակիցս, Սասունցի Մուրատ անունով դերձակ մը, որուն մայրը՝ Խմլօն, Սահակեան Վարժարանի մեր մայրիկն էր:

Ամառները աշակերտելով պրն. Աճոյեանին, բաւական սորված էի ձեռքով եւ մեքենայով կարել: Արդէն աջ ձեռքիս միջնամատը եղունգէն ծռուած մինչեւ վեր կապած էին տարիներ առաջ, ոպէսզի կարի մատնոցը հանգչէր մատիս ծայրը եւ օգնէր ասեղով կարելուս, մատս պաշտպանելով ասեղի բուժմասէն վիրաւորուելէ:

Սակայն, տարին ամբողջանալէ ետք, եղբօրս միջոցաւ, որ կ'աշխատէր անգլիական բանակի զինուորական ենթասպաներու ճաշարանի խոհանոցը եւ նախաճաշի, ճաշի, թէյի ժամուն եւ ընթրիքի ընթացքին կը սպասարկէր զինուորներուն, որպէս ամանները լուացող գործ ունեցայ ենթասպաներու ճաշարանին մէջ:

Շրջան մը աշխատելէ ետք, թէեւ ենթասպաներուն ճոխ ուտելիքներէն մեզի ալ արդար բաժին կ'իյնար, սակայն, աման լուալէ կը պշգայի:

– Հայրիկ, ես ուսումս կ'ուզեմ շարունակել, խօսքերուս կը պատասխանէր ըսելով:

– Ամերիկեան եւ Ֆրանսական վարժարաններ ղրկելու նիւթական միջոցներ չունիմ, քիչ մըն ալ աշխատիր, դրամ խնայենք, որպէսզի դպրոցական ծախսերուդ հասնինք:

Սակայն, ո՛վ կը համբերէր, հասնելու համար այդ բարեբաստիկ օրւան: Մտածեցի անգլիական բանակին միանալ: Դիմեցի զինուորագրութեան կեդրոն, ապարդիւն: Դէմքիս եւ կազմիս նայեցան ու անյարմար գտան զինուորագրելու:

Դիմած ատենս իրական տարիքս 16 տարեկան էի, սակայն, անձնաթուղթիս մէջ՝ 18: Գրիգոր անունով եղբայրս ծնած էր 1925ին եւ մեռած ատեն չէն ջնջած, եւ երբ ես ծնած եմ 1927ին, քաղաքապետութեան մօտ չէն արձանագրած: Ուրեմն, 18 տարեկանի հովեր առած, այս անգամ դիմեցի Ֆրանսա-

կան գինուորագրութեան կեդրոն, ու ինծի պէս բազմաթիւ հայ երիտասարդներու հանդիպեցայ, որոնք կ'ուզէին արձանագրուել:

Դիմողներէն շատեր մերժուեցան զանազան պատճառներով, ընդունուեցան միայն 22 հայ երիտասարդներ, որոնց կարգին ես:

Երբ քննութեան կ'ենթարկուէի, երկու սպաներ՝ բժիշկի մը եւ արձանագրող սպայի մը կողմէ: Բժիշկը միւս սպային ըսաւ, որ ես պատանի մըն եմ եւ անյարմար գինուոր ըլլալու, սակայն, երկրորդ սպան ըսաւ, որ պատանի մըն է, բայց Փրանսերէն գիտէ եւ մեզի շատ օգտակար կրնայ դառնալ, համարձայնեցան:

24 Յունիս 1943ին, կառախումբով, Փրանսական բանակի շարքերուն միանալու առաջագրութեամբ, 22 հայ երիտասարդներով իջեւանեցինք Պէյրութ քաղաքի «Քագերն Տէկրէտը Լու» կոչուած զօրանոցը, որ կը գտնուէր Պէյրութի Մար Իլիաս թաղամասին ծովեզերեայ շրջանին մէջ:

Յաջորդ օրերուն, նորագիր հայ գինուորներս ստացանք գինուորական զգեստներ եւ մեր մագերը խուզուեցան զօրանոցի հայ սափրիչին կողմէ, որ նոյնպէս գինուոր էր:

Սկսան գինուորական մարզանքները, որպէս գինուոր քալելու, բարեւելու, աստիճանաւորի հրահանգներուն ենթարկուելու, բոլոր օրէնքները: Մէկ խօսքով, մինչեւ երեք ամիս, ամէնօրեայ դաստիարակութեամբ եւ վարժութեամբ դարձանք իրական գինուորներ, ազատ Ֆրանսայի բանակին:

Որպէս հրետանային ջոկատի գինուոր, պարզ հրացաններու եւ արագահատուածներու գործածութենէն ետք, սորվեցանք ամերիկեան 75 միլիմետր թնդանօթներու գործածութեան բոլոր գիտելիքներն ու պաշտօնները:

Զօրանոցին մէջ ամէն օր կատարուող գինուորական գիտելիքներով զբաղումներէն զատ, շարքով, 24 ժամ պահակութիւն ընելու պարտականութիւն ալ ունէինք, երկու ժամ պահակ կենալ, 4 ժամ հանգիստ ընել, երեք պահակներով, 24 ժամուան ընթացքին 8 ժամ պահակութիւն ընելով:

Թնդանօթային առանց փանփուշտի փորձեր կը կատարէինք զօրանոցին եւ Լիբանանի լեռնային անբնակ շրջաններուն մէջ, սակայն, կը պատահէր որ յատուկ նշանակէտերուն կը հարուածէինք իրական փանփուշտներով:

Կը յիշեմ, հաւանաբար Օգոստոսի կէսերուն, մեր թնդանօթային ջոկատը (8 թնդանօթներով) կայք հաստատեցինք Լիբանանի լեռնային Համմանա գիւղի բարձունքներու վրայ եւ թնդանօթներու անձնակազմեր սկսան թնդանօթները ամրացնել, փանփուշտները փոխադրակառքերէն իջեցնել, իսկ սպայութիւնը՝ տարուած էր նշանակէտներու հաշիւներով:

Թնդանօթները քաշող կրիայի ձեւին նմանողութեամբ ինքնաշարժերէն իջնող գինուորներն ու ենթասպաները արդէն պատրաստութեան մէջ էին, պատրաստ ընդառաջելու իրենց տրուելիք հրահանգներուն:

Թէեւ իմ մարմնական կազմս՝ 16 տարեկան պատանիի մը տեսքով, թնդանօթային պարտականութիւններէն զերծ մնացած էի, սակայն միշտ կ'ընկերանայի բարձր սպայութեան, կրելով եւ սարքելով հեռաւորութիւններու հաշուակալական գործիքները, որոնց շնորհիւ նշանարութեան ճշգրիտ չափերը կը փոխանցուէր թնդանօթաձիգներուն:

Այդ օր, այդ գործիքները ինքնաշարժ էին իջեցնելու միջոցին, բաւական ծանր սեղանը ձեռքէս սահելով վար ինկաւ: Թնդանօթային ջոկատի հրամանատար քոմանտան Միշալէ տեսած ըլլալով պատահածը, ջղախնացած հրամայեց ստորադաս սպային, որպէսզի ես իմ հասակիս չափով գետինը փորեմ եւ 24 ժամ որպէս պատիժ մնամ հոն:

Գիշերը ցրտեց լերան վրայ եւ ես դողալով լուսցուցի գիշերը, իսկ արեւը ծագելէն ետք, դանդաղօրէն օդը տաքցաւ եւ սկսաւ այրիլ գլուխս եւ երեսըս: Այդ տառապանքիս ընթացքին միշտ կ'աղօթէի, որ Աստուած ինծի ուժ եւ համբերութիւն տայ դիմանալու համար մարմնական ցաւերուս, անիծելով անաստուած սպան:

Շրջան մը վերջ մեր ջոկատը Հալէպ փոխադրուեցաւ եւ տեղաւորուեցաւ Հալէպի Արդուպ թաղամասին մէջ գտնուող թրքական զօրանոցը, ուր բոլոր բանակայինները ամէն օր կը հետեւէին ռազմական դասընթացքներու եւ փորձերու:

Համամանայի լեռներու վրայ ստացած պատիժս, գիշերները պահակութիւն ընելով անքունութեամբ տառապանքս, մէջս արթնցուցին միջոցներ ըստ տեղծել բանակէն դուրս գալու համար:

Փորձեցի շինծու հիւանդութիւններ ստեղծել, մանաւանդ ծոնկի յօդացաւ (նոմանթիզմ) ունենալով չկարենալ քալել պատճառաբանելով զինուորական հիւանդանոցի յատուկ խնամքի ենթարկուելով:

Շաբաթ մը հիւանդանոց մնացի եւ բժշկական բոլոր դեղերն ու միջոցները որեւէ դրական արդիւնք չտուին: Կը շարունակէի կաղալով եւ ցաւի արտայայտութիւններով քալել:

Եկաւ ընդհանուր բժշկապետի կողմէ քննութեան օրը: Բոլոր հիւանդները իրենց մահճակալներուն վրայ պառկած կամ քովը կանգնած կը պատասխանէին բժշկապետի հարցումներուն: Կարգը եկաւ ինծի: Հարցուց թէ ինչպէ՞ս եմ եւ ի՞նչ ունիմ: Ըսի, ծոնկս շատ կը ցաւի եւ չեմ կրնար քալել:

– Լաւ, ըսաւ, քալէ տեսնեմ:

Փորձեցի կաղալով քալել: Այդ միջոցին բժշկապետը ուժգնօրէն հրեց զիս, քալելու ուղղութեամբ: Ես, փոխանակ իբր թէ իմ ունեցած ցաւին պատճառով գետին իյնալու, սկսայ կաղալով վազել:

Ինկած էի իմ փորած փոսին մէջ:

Փորձառու բժիշկը զիս մէկ կողմ քաշեց եւ ըսաւ. – «Երիտասարդ զինուոր, դուն կը ծրագրես զինուորութենէն հեռանալ, նման հիւանդութիւններ պատճառաբանելով, հիմա, կամ բանտ կ'երթաս, կամ, խելքդ գլուխդ հաւաքելով կը միանաս ջոկատիդ»:

Անշուշտ բանտ երթալ չէի ուզեր, ըսի կը միանամ ջոկատիս:

Հիւանդանոցէն տուն գալով, երկար մտածէցի եւ որոշեցի մնալ բանակին մէջ, սակայն, հետեւելով զինուորական դասընթացքներու, դառնալ աստիճանաւոր եւ ազատիլ պահակութենէ եւ այլ չարչարանքներէ:

Նախ հետեւեցայ մոթոբութիւթ քշելու դասընթացքներու եւ վկայուելով, դիմեցի ինքնաշարժ քշելու դասընթացքներու եւ քննութենէն յաջողելով, ստացայ ինքնաշարժ վարելու վկայականը:

Հետեւեցայ թնդանօթը փամփուշտներուն եւ ֆիւզէներու տեսակներուն եւ կարողութիւններ չափելու դասընթացքներուն, ապա, թնդանօթի նշանառուի (Բուանթէոր) դասընթացքներուն:

Ձոկատի սպայութիւնը յարմար տեսաւ զիս ուղարկելու Պրիկատիէ աստիճանի դասընթացքներուն, ապա, Մարեչալտուլուճի աստիճանի դասընթացքներուն, որոնք յաջողութեամբ աւարտելով եւ պատուաբեր պաշտօն ունենալով, հանգիստ կեանք մը վարեցի մինչեւ բանակէն հրաժարելու հօրս ադերսանքներուն, տեղի տալով, որպէսզի 1946ին Հայաստան ներգաղթէինք: Սակայն, այդ բախտին չարժանացանք մեր Դաշնակցական ըլլալուն համար:

Քոմանտան Միշալէի անարդար պատիժը, զինուորութեան առաջին շրջանի չարչարանքները եւ անոնց հետեւանքները որպէս չարիք նկատելով, Աստուածային տնօրինութեամբ մղեցին զիս յառաջանալու պարզ զինուորի աստիճանէն մինչեւ ենթասպայի աստիճանին, ծառայելով Ֆրանսական բանակին եւ արժանանալով Ֆրանսական ժողովուրդի գնահատանքը արտայայտող Ֆրանսայի նախկին պատերազմիկներու նախարարութեան պաշտօնական գընահատագիրին:

ԱՊՈՒ ՍԱԽՏ ԷԼ-ՊԱՐՐԻ

Հալէպի *Al-Shark* (Ալ Շարք – Արեւելք) գարեջուրի գործարանը կը գտնուէր Հալէպ քաղաքի Նոր Գիւղ հայկական արուարձանէն շուրջ 10 քիլոմետր հեռավորութեան վրայ, Միսլիմիէ չհասած, Առէճա գիւղին մօտ գտնուող ընդարձակ հողամասի մը վրայ:

Սուրիոյ մէջ իսլամական կրօնքի պատկանող քաղաքացիներուն չէր արտօնուած ոգելից ըմպելիներ շինել կամ ծախել: Այդ պատճառաւ օղիի եւ գարեջուրի պատրաստութիւնը ստանձնած էին քրիստոնեաներ, ինչպէս նաեւ՝ շուկայի վրայ, խանութներու մէջ ծախելու մենաշնորհը:

Եւ նկատի ունենալով, որ Սուրիոյ մէջ գարեջուրի գործարան գոյութիւն չունէր, Հալէպի քրիստոնեայ գործարար անձնաւորութիւններ՝ Պիթլիսի, Ռապպաթ, Անթաքի եւ ուրիշներ կը ծրագրեն ընկերութիւն մը հիմնել՝ բաժնետոմսային գրութեամբ եւ Արեւմտեան Գերմանական Հաստատութիւններէն կը գնեն գարեջուրի պատրաստութեան յատուկ մեքենաներ:

Գերմանիայէն կը հրաւիրեն նաեւ գարեջուրի պատրաստութեան եւ գործարանի շինութեան մասնագէտներ, որոնք գնուած հողին վրայ շինութեան կը ձեռնարկեն եւ մեքենաներու եւ կազմածներու հաստատուելէն ետք, գարեջուրի արտադրութիւնը կը սկսի 1958ի սկիզբները:

Գարեջուրի ընկերութիւնը կը ղեկավարուէր բաժնետոմսերու տէր անձերու կողմէ ընտրուած վարչական հինգ հոգիներու խորհուրդի մը կողմէ, որուն կը գլխաւորէր պաշտօնի կոչուած ընդհանուր տնօրէն մը:

Գարեջուրի պատրաստութեան պիտանի խառնուած գարին (մալթ) եւ գերմանական յատուկ խոտ մը, արաբերէնով հաշիշ էլ-տինար կը կոչուէր, որ գարեջուրին քիչ մը լեղիութիւն կու տար:

Ներածուած մալթը եւ բրինձը յատուկ մասնագիտութեամբ կ'եփէր խոշոր կաթսաներուն մէջ, ապա, կը փոխադրուէր թթխմորումի բաժին, ուր եօթը օր մնալով եւ կազ արտադրելէ ետք կը փոխադրուէր սառնարան սենեակներուն մէջ հաստատուած խոշոր կաթսաներուն մէջ, ուր 40 օր մնալէ ետք, գտումի գործիքներէ անցնելէ ետք փոմփերու միջոցաւ կը հասնէր շիշերը լեցնող մեքենային, ապա, բասթորիզ (շիշին օդը որոշ տաքութեամբ քաշող մեքենայ) ըլլալէ ետք կ'ամբարուէր եւ հոնկէ կ'իջնէր շուկայ:

Քեռայրս, Յակոբ Ասատուրեան, որ ելեկտրականութիւն արտադրող ալթերնատիվներու, քոմբրէսորներու եւ ընդհանրապէս մեքենական գործիքներու պատասխանատուն էր, լսելով, որ գերմանացի ելեկտրագէտը շուտով Գերմանիա պիտի մեկնի վերջնականօրէն, իմ մասին կը խօսի գործարանի ընդհանուր տնօրէնին, որպէս յարմար թեկնածու այդ պաշտօնին եւ յանձն կ'առնէ իսկ ներկայացնել ընդհանուր տնօրէնին:

Տնօրէնին հետ հանդիպումը յաջող անցնելէ ետք, կ'ընդունուիմ որպէս ելեկտրական բաժանմունքին պատասխանատու: Գործի կը սկսիմ 25 Ապրիլ 1961ին:

Գործաւորներու գործարան փոխադրութիւնը կը կատարուէր մարդատար ինքնաշարժներով (պասերով), իսկ պաշտօնեաներուն փոխադրութիւնը՝

վանով (մինի-պասով): Առօրեայ աշխատանքը կը սկսէր առաւօտեան ժամը 7ին եւ վերջ կը գտնէր կէսօրէ ետք ժամը 3ին: Ամառուան շրջանին, գարեջուրի լայն սպառման հասնելու համար լեցնելու բաժնի (էմպուլթէյափ) գործաւորներ եւ կարգ մը հսկիչ պատասխանատուներ աւելի ժամ կ'աշխատէին եւ ըստ այնմ ժամը ժամուկէս կը վճարուէին:

Մինչեւ իմ աշխատանքի սկսիլս, արդէն իսկ մալթի պատրաստութեան շէնքը շինուած էր եւ հաստատուելիք մեքենաներ հասած էին: Մեքենաներու տեղաւորումի աշխատանքին մղուած գործաւորներու կողքին, ես ալ իմ կարգիս ստանձնեցի մալթերի ելեկտրական լուսաւորումի, մեքենաներու մոթոուներու, թապլոններու, ելեկտրական թելերու ուղղութիւններու ճշգրտմին եւ հաստատումի աշխատանքներուն, անշուշտ օգնական գործաւորներով:

Բոլոր մեքենաներու աշխատանքը փորձելէ ետք, շոտիէրը (տաք ջուր կամ շոգի արտադրող գործիք) գերմանացի մասնագէտին հետ հաստատեցինք եւ որոշ շրջան մը ետք, տեղական գարիով սկսանք մալթ պատրաստել:

Գարեջուրի էլ-Շարք գործարանի աշխատանքները հիանալիօրէն կը շարունակուէր: Գարեջուրի գործարանի կարեւոր բաժիններու ղեկավարները հայեր էին: Մեքենական բաժին՝ Յակոբ Ասատուրեան, ելեկտրական բաժին՝ Գրիգոր Հոթոյեան, լեցնելու բաժին եւ նորոգիչ՝ Սարգիս Հինտոյեան, թթիւ մորումի բաժին՝ Գրիգոր Ժամկոչեան: Այլ բաժիններու մէջ ալ աշխատող հայեր կային: Ընդհանուր գումար 20 հոգի:

Քանի մը տարի գարեջուրի գործարանը եւ մալթի բաժինը որակաւոր գարեջուր արտադրելով, փնտռուած գարեջուր մը դարձած էր մրցելով գերմանական եւ այլ գարեջուրներուն հետ:

Եւ յանկարծ, մինչ այդ շրջող շուկաները իրականութիւն դարձան եւ Հայկազի գլխաւոր գործարանները ազգայնացուեցան, որոնց կարգին գարեջուրի գործարանը: Ընդհանուր տնօրէնը արձակուեցաւ իր պաշտօնէն: Վարչական խորհուրդը լուծուեցաւ եւ ազգայնացումէն քանի մը օր ետք պետութեան կողմէ նշանակուած նոր տնօրէնը եկաւ գործարան եւ հաւաքելով բոլոր գործաւորներն ու պաշտօնեաները, ազգայնական եւ ընկերավարական ճառ մը խօսելով հրաւիրեց գործաւորները, որպէսզի պատուով աշխատին եւ հոգ տանելով արտադրութեան որակին, նպասեն սպառումի յաւելումին:

Տնօրէնը իր ճառը վերջացուց ներկայացնելէ ետք, գործարանի պահակներու պետի պատասխանատուութիւնը ստանձնած Մուհամէտ Սաիտ Պարրի կամ Ապու Սաիտ Պարրի անունով անձնաւորութիւն մը:

Ապու Սաիտ Պարրի, 150 քիլոկրամ կշիռով, 170 սանթիմեթր հասակով, գլխուն մազերը խուզուած, կլոր երեսով, խոշոր եւ տպաւորիչ աչքերով, արաբական հագուստ հագած եւ գլխուն Ակիլ դրած անձնաւորութիւն մ'ըն էր:

Գործաւորներուն մէջ իր մասին լսած անձեր գտնուեցան, որոնք կը փսփոսային, որ Ապու Սաիտ, որպէս Արաբական Ազգային կուսակցութեան (Հզըպ էլ-Ուաթանի) մարտական պատասխանատուն եղած է եւ երեսփոխանական ընտրութիւններու ընթացքին իր կատարած ահաբեկչութիւններուն համար 15 տարի բանտարկութեան դատապարտուած է:

Ապու Սաիտ իր պաշտօնը խղճով եւ իմաստութեամբ կատարեց: Պահակները աւելի աչալուրջ դարձան, վախնալով Ապու Սաիտի նայուածքէն եւ գօտիին վրայ երեւցող մէկ եւ երբեմն երկու ատրճանակներու տեսքէն:

Գործարանի տնօրէններու փոփոխութեան հետ, Ապու Սաիտի ազդեցութիւնը կը զօրանար եւ օր մըն ալ հրահանգներու ցուցափեղկին մէջ կարգացինք, որ Ապու Սաիտ կոչուած է նաեւ ընդհանուր հսկիչի պաշտօնին:

Գարեջուրի գործարանին ազգայնացուելէն ետք, Հալէպի Արդուպ թաղամասին մէջ գտնուող ազգայնացուած Ալ-Շարք պիսքուրիթ-շոքոլայի գործարանը փոխադրուեցաւ գարեջուրի գործարանին շրջափակին մէջ գտնուող հողամասին վրայ կառուցուող եւ արդէն մասնագիտօրէն յղացուած եւ շինուած շէնքը, որուն ելեկտրական բոլոր տեսակի գործերը իմ պատասխանատուութեամբ իրագործուեցան, որպէս գարեջուրի, մալթի, պիսքուրիթի եւ շոքոլայի գործարաններու ելեկտրական բաժիններու պատասխանատու:

Ապու Սաիտ, որպէս ընդհանուր հսկիչ եւ պահակներու պատասխանատու, իրեն յատուկ գրասենեակները ունեցաւ գարեջուրի եւ պիսքուրիթ-շոքոլայի գործարաններուն մէջ:

Որպէս ելեկտրական բաժնի պատասխանատու, ի պաշտօնէ կ'այցելէի գարեջուրի, մալթի, պիսքուրիթ-շոքոլայի բոլոր բաժինները, եւ, ծանօթութիւն եւ գործակցութիւն հաստատած էի բոլոր պաշտօնեաներուն եւ գործաւորներուն, ինչպէս նաեւ պետական (մալիա) տուրքի պատասխանատու պաշտօնեաներուն հետ, որոնք արձանագրելով շուկայ իջնող գարեջուրի քանակները, պետական տուրք կը գանձէին գործարանէն:

Յաճախ կ'այցելէի Ապու Սաիտի գրասենեակները, ուր կ'ընդունուէի սիրով եւ յարգանքով: Անմիջապէս սուրճ կ'ապսպրէր, պիսքուրիթի տուփը (էլ-Շարք) կը դնէր սեղանին վրայ, մաքսանենգուած ծխախոտի տուփը հրամցնելով, կը հրաւիրէր, որ ծխիկ մը փաթթեմ:

Այդ այցելութիւններուն ընթացքին ան կը պատմէր իր սխրագործութիւններէն, երեսփոխանական ընտրութիւններու ընթացքին Արաբ Ազգայնական Կուսակցութեան եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործակցութեան, Արաբ Ազգայնական Կուսակցութեան ղեկավար տքթ. Քէյեալիի եւ Հրաչ Փափագեանի գործակցութեան մասին, միշտ ընդգծելով հայ ղեկավարութեան ուղղամտութիւնը, պարկեշտութիւնը եւ հաւատարմութիւնը Արաբական Ազգայնական Կուսակցութեան հետ իրենց գործակցութիւնը անխախտ պահելու՝ երեսփոխանական ընտրութիւնը կորսնցնելու գնով:

Ան ինծի պատմեց բանտի կեանքէն կարգ մը դէպքեր, պետութենէն բանտարկեալներու կարգ մը իրաւունքներու ստանձման համար իր կազմակերպած զանգուածային հացադուլին մասին, մինչեւ պահանջներու գոհացում:

Բայց ինծի համար շատ հետաքրքրական եւ զնահատելի էր իր բանտ մնացած շրջանին բանտարկուած հայերուն հանդէպ իր հոգածութիւնը եւ տիրութիւնը, մանաւանդ, բանտի խճողուած սենեակներուն մէջ հայ տղոց սեռային մօտեցում ցոյց տուող բանտարկեալներուն սպառնալով, որ հեռու մնան հայերէն: Եւ այս պատահածը ապագային ինծի պատմեցին ինծի ծանօթ երկու անձեր, որոնք այդ շրջանին բանտ մնացած են:

Վերոյիշեալ գործարաններու իմ երկարամեայ աշխատանքիս վերջին 5-6 տարիներուն, նոր տնօրէն նշանակուեցաւ երկրագործութեան էնժէնիոր Երիտասարդ մը, Սուրիոյ նախագահ Հաֆէզ Ասատի Ղրտահա գիւղէն, Պասս Արապի Իշթիրաքի կուսակցութեան ղեկավար անդամներէն Իւզթազ Մահ-մուտ Հասան:

Նոր տնօրէնին հետ իմ մտերմութիւնս եւ բարեկամութիւնս իրեն առիթ տուաւ, որ ինծի առաջարկէ անդամագրուիլ Արաբական Պասս Արապի Իշթիրաքի կուսակցութեան: Իմ պատկանած հայկական կուսակցութեան՝ Հ.Յ. Դաշնակցութեան կարծիքը առնելէ ետք, համաձայնութիւն յայտնեցի իր առաջարկին: Որպէս կուսակցութեան անդամ եւ գործարաններու մէջ կարեւոր պաշտօն վարող անձնակազմի ղեկավար նախագահ ընտրեցին գործարանի սենտիքային, ապա, այդ պաշտօնին հետեւանքով, դարձայ գործարաններու վարչական խորհուրդին անդամ, մասնակցելով խորհուրդի ժողովներուն եւ առնուաճառ որոշումներուն իմ կարծիքս եւ քուէս տալով:

Իմ պաշտօնիս բերմամբ, յաճախ կը հանդիպէի գործարաններու ընդհանուր քարտուղար, Լաթաքիոյ շրջաններէն Հալէպ փոխադրուած Աֆիֆ Արնուկին, յաճախ Գերմանիայէն ելեկտրական գործիքներ ապսպրելու համար, որովհետեւ հաստատութեան բոլոր ապսպրանքները իր միջոցաւ կ'ըլլային:

Աֆիֆ Արնուկի իմ հանդիպումներս, յաճախ գործով, մտերմութիւն մը ստեղծուեցաւ մեր միջեւ, եւ, սուրճ մը խմելու ընթացքին կը խօսէինք գործարանին, ընտանեկան, անձնական եւ ընկերային հարցերու մասին:

Նոյնը կը պատահէր իմ հերթական այցելութիւններուս ընթացքին Ապու Սաիտին, որուն հետ յաճախ կը խորհրդակցէինք գործարանի բանուորական կացութեան եւ ստեղծուած մանր-մունր դժուարութիւններու մասին: Այդ խօսակցութիւններու ընթացքին, ձեռով մը խօսք բացուեցաւ ապրուստի սղութիւններու մասին եւ իմ ունեցած դրամական նեղութեանս մասին: Ապու Սաիտ, առանց տատամսելու ձեռքը գրպանը նետեց եւ տրցակ մը հարիւրնոց եւ 50-նոց թղթադրամ դրաւ սեղանին վրայ ըսելով. «Մահալէմ Գարգուր, քեզի պէտք եղած գումարը առ եւ երբ ունենաս վերադարձուր»: Խորապէս զգացուած, Ապու Սաիտին ճակտէն համբուրեցի որպէս եղբայր, մեծապէս շնորհակատութիւն յայտնելով իր անկեղծ եւ անշահախնդիր առաջարկին համար:

Եւ օր մը պատահեցաւ, որ Ապու Սաիտ եւ Աֆիֆ Արնուկի իրարմէ նեղուեցան եւ սկսան իրարու հետ չխօսիլ: Իմ յարաբերութիւններս երկուքին հետ եղած էր եղբայրական: Գէշ կացութեան մատնուեցայ: Երբ Ապու Սաիտին մօտ նստած կ'ըլլայի, անարգանքով կը խօսէր Աֆիֆ Արնուկին մասին, նոյնը կ'ընէր Աֆիֆ Արնուկի Ապու Սաիտին մասին: Սակայն ես, երբ այդ բովանդակութեամբ կը խօսէին իրարու հանդէպ, կ'ըսէի, որ բայց անոնք ձեր մասին ափսոսանքով եւ զղջումով կը խօսին, ըսելով, որ չար ժամու մը արդիւնք էր եղածը:

Եւ օր մըն ալ այս երկու բարեկամներս հաշտուեցան իմ ներկայութեամբ, Ապու Սաիտ ըսաւ, որ ես միշտ քեզի հանդէպ շատ գէշ արտայայտութիւններ կ'ուսնայի, Մուհալէմ Գրիգորին քով: Նոյնը ըսաւ Աֆիֆ Արնուկի: Ապու Սաիտ լսելէ վերջ իմ կատարած դերս, դարձաւ ինծի ըսաւ. «Հալլալ ըլլայ քու կերած կաթը, դուն մարդկային ազնիւ զգացումներով սնած տղայ մըն ես, կ'արժէ քեզի հետ բարեկամութիւն պահել»:

Ապու Սաիտ, զիս եւ բոլոր հայերը այնքան կը սիրէր, որ որեւէ գործը՝
լած յանցանք տնօրէնին հասնելէ առաջ ինծի կը կանչէր եւ կը թելադրէր, որ
մեր միջոցներով հարցերը լուծենք:

Յաճախ աշխարհական եւ զինուորական բարձրաստիճան պաշտօնեա-
ներ եւ զինուորականներ կ'այցելէին գործարաններու ընդհանուր տնօրէնին,
որոնց ես եւ Ապու Սաիտն ալ ներկայ կ'ըլլայինք: Այցելուները կը հիւրասիրէ-
ինք գարեջուրով, պիսքիւթով եւ շոքոլայով եւ իրենց մեկնած ատեն իրենց
կը նուիրէինք գարեջուրի յատուկ գաւաթներ, որոնց վրայ արաբերէն եւ անգ-
լերէն Պիրա-էլ-Շարք գրուած էր:

Այս այցելութիւններու ընթացքին, պետական կարգ մը պաշտօնեանե-
րու եւ զինուորականներու ծանօթութեամբս եւ որպէս Պաաս կուսակցութեան
անդամ կուսակցական կապերով մեծապէս օգտակար եղայ իմ ազգիս, բարե-
կամական յարաբերութիւններ ստեղծելով հայութեան դեկավարութեան եւ
երկրի պետական անձնաւորութիւններու միջեւ, որ կը շարունակուի մինչեւ
այսօր:

Ապու Սաիտ անկողմնական եւ արդարասէր մարդ էր: Իմ հերթական
այցելութիւններուս ընթացքին, անոր խօսեցայ մալթերի աշխատող գործա-
ւորի մը յաւելում տալու մասին, նկատելով, որ լաւ եւ խղճամիտ աշխատող
մըն է: Յաջորդ այցելութեանս Ապու Սաիտ ըսաւ. «Մուհալէմ Գորգուր, դուն
անցեալ օր եկար եւ խնդրեցիր որ ասինչին յաւելում տրուի: Քու մեկնելէդ
վերջ այդ մարդը քովս եկաւ եւ քու վրայ զրպարտութիւններ ըրաւ: Ես դար-
ձայ իրեն ըսի, դուն չես ամչնար նման զրպարտութիւններ ընել մարդու մը
մասին, որ քիչ առաջ քովս էր եւ քեզի համար յաւելում կը խնդրէր: Մարդը
ամչցաւ եւ հեռացաւ, կը տեսնես այս մարդուն անզգամութիւնը եւ նախան-
ձը»:

Ամառները եւ ընդհանրապէս, գարեջուրի պահանջը զգացուած ատեն,
կարգ մը բաժիններու գործաւորներ, կարգ մը պատասխանատուներ եւ Ապու
Սաիտ յաւելեալ ժամ կ'աշխատէին:

Վերջընթեր տնօրէն Թալէք Զայեատ, լսելով որ կարգ մը գործաւոր-
ներ եւ Ապու Սաիտ աւելի ժամեր կ'աշխատին, կը հրահանգէ, որ աւելի ժամ
աշխատիլ արգելուած է եւ եթէ պէտք ըլլայ աշխատիլ, պէտք էր արտօնուի
տնօրէնին կողմէ:

Ապու Սաիտին այցելութիւնս դիմաւորուեցաւ տնօրէնին հասցէին
շարուած հայհոյութիւններով եւ սպառնալիքներով: Ուզեցի զինք յորդորել
եւ բարկութիւնը մեղմացնել, ըսելով որ այդ ժամանակաւոր կրնայ ըլլալ: Ան
կ'ըսէր, որ այս արգելումը ինծի համար եղաւ է ես գիտեմ, տակաւին տնօրէնը
չի գիտեր իմ ով ըլլալս: Դիտեցի Ապու Սաիտը, կողերուն մէկական ատրճա-
նակ ունէր եւ սեղանին ետին արագահարուած մը:

Այդ օր կէսօրէ ետք կրկին հանդիպեցայ Ապու Սաիտին, ան հետեւեալը
պատմեց. «Ինչպէս միշտ, տնօրէնը եկաւ գրասենեակս, ես, մասնաւոր արագա-
հարուածը սեղանիս ծայրը դրի, որ տնօրէնը տեսնէ: Առօրեայ խօսակցութե-
նէն վերջ, մեկնեցաւ: Մեկնելէն կէս ժամ ետք վեր ելայ, դուռը զարկի եւ ներս
մտայ: Խօսակցութեամբ մը զբաղած էր: Լրացուց: Մօտեցայ իրեն, ատրճանա-
կը քունքին մօտեցուցի եւ ըսի. դո՛ւն ով ես, որ կը համարձակիս իմ աւելի ժա-

մըս (օվըրթայմ) կեցնել: Հիմա այս փամփուշտը ուղեղդ կը պայթեցնէ: Նայիմ դուն թէ ես: Մարդը մեղմացաւ, Ապու Սաիտ այս արգելքը քեզի համար չէ: Սխալմունք մը եղած է: Դուն ազատ ես աշխատելու որքան որ ուզես: Եւ այսպէս հարցը վերջ գտաւ»:

Տարիներու ընթացքին Սուրիոյ մէջ գարեջուրի սպառումի յաւելում մով, գարեջուրի պահանջը շատցաւ: Հաստատութեան վարչական խորհուրդը որոշեց Արեւելեան Գերմանիայէն աւելի արագ շիշերու մէջ լեցնող մեքենայ բերել:

Շատ չանցած մեքենաները եկան, ինչպէս նաեւ մեքենաները լարող երկու գերմանացի մասնագէտներ: Իմ հասկացողութեամբս եւ աշխատանքով մոթոռներու եւ աշխատցնող կոճակներու թապլոներու (թելերու) գիծերը վերջացան: Ելեկտրական թապլոն, որուն վրայ կը գտնուին ժամացոյցները, բանալիները, կոճակներ եւայլն, երբ փորձեցի թելերուն կապել, նշմարեցի, որ սխալ թապլօ եկած է եւ այս թապլոն նոր հաստատուող մեքենաներուն չէ: Ապու Սաիտին յայտնեցի եղածը եւ միասին գացինք ընդհանուր տնօրէնին մօտ: Տնօրէնը շատ նեղուեցաւ, որովհետեւ ամառը կու գայ, գարեջուրի սպառումը կը շատնայ եւ հաստատութիւնը յաճախորդները գոհացնելու գարեջուր չունի:

Ապու Սաիտը ինծի դիմեց, ըսելով, որ կրնայի նոր մը գտնել: Որովհետեւ մինչեւ Գերմանիայէն նոր թապլօ գայ, երեք ամիս կը տեւէ: Ըսի. «Ես իմ գիտութեամբ կրնամ կացութիւնը փրկել, եթէ ինծի արտօնէք փոփոխութիւններ կատարել»:

Տնօրէնը խանդավառուեցաւ եւ ըսաւ. «Եթէ յաջողիս, քեզի դրամական եւ բարոյական գնահատանք կայ»: Ապու Սաիտը դարձաւ եւ ըսաւ. «Դուն հարցը լուծէ, մնացածը ինծի ձգէ»:

Քանի մը շաբաթէն, նախկինէն 5 անգամ արագութեամբ գիծը աշխատեցաւ եւ պետութենէն 300 սուրիական նուէր եւ գրաւոր գնահատանք ստացայ, ինչպէս նաեւ գրաւոր գնահատանք Գերմանիայէն:

Ապու Սաիտ Պարրի երեք մանչ գաւակ ունէր՝ Սաիտ, Իսմայիլ եւ Աճմատ: Երկու գաւակները՝ Սաիտ եւ Իսմայիլ պաշտօնի կոչուեցան գարեջուրի եւ պիսքիւթ-շոքոլա հաստատութեան մէջ, որոնք կ'աշխատէին մինչեւ իմ Գանատա հաստատուիլս 1975ին:

Որպէս ծանօթութիւն յայտնեմ, որ Ապու Սաիտ Պարրի կը պատկանէր Պէթ-Պարրի ընտանիքին, որոնք կը բնակէին Հալէպի Պապ-էլ-Ներապ շրջանին մէջ: Պէթ-Պարրի ընտանիքը կը բաղկանար շուրջ 500 անդամներէ: Պապ-էլ-Ներապի արաբ ցեղախումբերը յաճախ իրարու հետ վէճ, վիճաբանութիւն եւ կռիւ կ'ունենային եւ այդ պատճառով՝ Ապու Սաիտ Պարրի 1970ին, Հալէպի Պաղատտի կայարանի քրիստոնէական շրջանէն տուն մը գնեց եւ ընտանիքը հոն փոխադրելով հանգիստ կեանք մը ուզեց ապրիլ, իր կեանքին 15 տարիները բանտին մէջ անցնելուն խորապէս ցաւելով:

1975ին, Ապու Սաիտին, ընդհանուր տնօրէնին եւ այլ բարձրաստիճան սպաներուն միջնորդութեամբ յաջողեցայ բազմիցս մերժուած հրաժարականս ընդունիլ տալ նախարարութենէն, որովհետեւ այդ շրջանին մասնագէտներուն երկրէն հեռանալ եւ գործէն հրաժարիլ արգելուած էր, մանաւանդ իմ պարա-

գայիս, որուն նկարը, որպէս աշխատանքի հերոս, տարիներով կախուած էր
Հալէպի նամակատան դիմացի մայթին վրայ:

Երբեք չեմ մոռնար Ապու Սաիտի հետեւեալ արտայայտութիւնները՝
հետեւեալ խօսքիս.- «Ապու Սաիտ, գրպանդ երեք գրիչ-մատիտ կայ, տեսնողը
կը կարծէ, որ գոնէ երկրորդականը աւարտած ես»: Այս խօսքիս պատասխա-
նեց. «Ախ, միայն կարենայի այդչափ ուսում առնել, եթէ առնէի պիտի տեսնէ-
իր, որ ո՞ւր հասած կ'ըլլայի»: Երկրորդ, «Իմ բնաւորութիւնս տարբեր պէտք
էր ըլլար, ես քեզի իրապէս կը նախանձիմ, հարիւր հազար սուրիական ոսկի
պարտք ունենայի, միայն քու բնաւորութիւնդ եւ դիւանագիտութիւնդ ինձի
ըլլար: Ես հայ ժողովուրդը սիրած եմ, որովհետեւ աշխատասէր, ազիւ, հաւա-
տարիմ եւ բարեկամութեան յարգը գիտցող եւ պահող ազգ մըն է»:

«ՇՈՂԱԿԱԹ»
Սեպտեմբեր-Յոկտեմբեր 2006



Երեւան, խումբ մը գրագետներ...
Զախէն աջ՝ Մարգար Ծարապխանեան, բանաստեղծ, գրագետ, հրապարակագիր
Թորոս Թորանեան, բանաստեղծ Մանուէլ Քեօւէյեան, հայրենի արձակագիր
Արշակ եւ Գրիգոր Յոթոյեան

«ԴՈՒՔ ՀՐԱՇԱԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԷՔ»

Հալիպի «Էլ-Շարք» գարեջուրի, պիսքիլի, շոքոլայի եւ մածուխի պե-տականացուած գործարաններու ընդհանուր տնօրէն Իւզթագ Թարէք Ջայ-եաթ, 1968ին պաշտօնի բարձրացումով ստանձնեց Սուրիոյ սննդական ար-տադրութիւններու ընդհանուր տնօրէնութիւնը, որուն կեդրոնը կը գտնուէր Սուրիոյ մայրաքաղաք Դամասկոսի մէջ:

Իւզթագ Թարէք Ջայեաթի տնօրէնութեան ընթացքին, աշխատանքա-յին մեր ամէնօրեայ հանդիպումներուն յաճախ խօսակցութեան նիւթ կը դառ-նար գործարաններու արտադրութիւններու որակի բարձրացման եւ մասնա-գիտական հարցերու, ինչպէս նաեւ գործաւորներու կացութիւնը, նկատի ու-նենալով իմ գործաւորներու միութեան (սենտիքայի) նախագահի հանգաման-քըս եւ այդ պատճառով որոշ մօտիկութիւն մը ստեղծուած էր մեր միջեւ, ո-րուն հետեւանքով, համարձակութիւն կ'ունենար իր տնային ելեկտրական գործիքներու եւ սարքերու նորոգութիւններ կատարելու առաջարկ ներկա-յացնել ինծի, որոնք սիրով կը կատարէի: Մեր անձնական բարեկամութիւնը շարունակուեցաւ նաեւ իր Սուրիոյ Սննդական արտադրութիւններու գործա-րաններու ընդհանուր տնօրէնութիւնը ստանձնելէ ետք:

Իւզթագ Թարէք Ջայեաթի ընդհանուր տնօրէնութեան ընթացքին, որոշում առնուած էր ձեռքի Տրուզի շրջանի Սուէյտա քաղաքին մէջ գործող եւ ազգայնացուած «Ռայեան» օդի գործարանը ընդլայնել, եւ, Պուլկարական հաստատութեան մը հետ համաձայնութիւն կնքելով, աշխատանքները արդէն իսկ սկսած էին, ընդարձակումի սարքերը հասած ըլլալով, Պուլկարացի մաս-նագէտներու կողմէ:

Իւզթագ Թարէք Ջայեաթ, որպէս երկրագործութեան էնժեներ, գա-ղափար չունենալով գործարանաշինութեան մեքենական, ելեկտրական եւ շի-նարարական գործերէն: Այդ պատճառով, Հալիպի սննդական արտադրութիւն-ներու գործարաններու ընդհանուր տնօրէն Իւզթագ Մահմուտ Հասանէն կը խնդրէ, որպէսզի իրեն ծանօթ մասնագէտներ՝ ելեկտրանագէտ Գրիգոր Հոթո-յեանը, մեքենագէտ Յակոբ Ասատուրեանը եւ խողովակային սարքաւորումնե-րու մասնագէտ Սարգիս Հիտոյեանը յատուկ առաքելութեամբ ղրկուին Սուէյտա քաղաքը եւ քննեն հոն տեղի ունեցող աշխատանքներուն որակը:

Իւզթագ Մահմուտ Հասան, վերոյիշեալ երեք մասնագէտները իր գրա-սենեակը հրաւիրելով, յայտնեց Իւզթագ Թարէք Ջայեաթի կողմէ եղած կար-գադրութիւնը, նաեւ բացատրելով մեր կատարելիք գործողման մանրամաս-նութիւնները:

Հալիպի սննդական գործարաններու երեք հայ վարպետները, ընդառա-ջելով ընդհանուր տնօրէնի հրահանգին, յաջորդ առաւօտ, հաստատութեան ինքնաշարժով ճամբայ ելանք դէպի Դամասկոս, ինքնաշարժին մէջ արտասա-նելով «Տէրունական Աղօթք»ը, ապա, երգելով «Առաւօտ Լուսոյ»ի վեց համար-ները:

Ճամբան Սարգիս Հիտոյեան առաջարկեց նախ Մէզգէի գինուորական օդակայանը հանդիպիլ, ուր պարտադիր գինուորութեամբ սուրիական բանա-

կիրն կը ծառայէր իր աւագ որդին՝ Խաչիկը, յոյս ունենալով, որ թերեւս կարելիութիւն կը ստեղծուի իր գաւազը տեսնելու:

Երբ օդակայան հասանք, հանդիպեցանք զինուորական կառքերու եռուզերի եւ խճողումի, անկարելի դարձնելով մեր մօտեցումը մուտքի դրան: Ուրոշեցինք մեր ճամբան շարունակել դէպի Դամասկոս եւ մեր վերադարձին կրկին այցելել Մէզզէի օդակայանը:

Դամասկոս հասնելով այցելեցինք Սուրիոյ Մինդական Արտադրութեան (մատատ դազայիէ) գործարաններու ընդհանուր տնօրէնութեան գրասենեակը, ուր ընդհանուր տնօրէն Իզզթագ Թարէք Ջայեաթ մեզ հիւրասիրելէ ետք, պէտք եղած ուղղութիւններ տուաւ, յանձնելով մեզի մեր առաքելութիւնը բացատրող հրահանգ-փաստաթուղթ մը՝ յանձնելի «Ռայեան» օդի ընկերութեան տնօրէնին:

Ճէպէլ Տրուզի կանաչապատ լեռնայանջերէն եւ խաղողի այգիներու ընդմէջէն բարձրանալով, կէսօրէ ետք ժամը 3ին հասանք Սուէյտա քաղաքը, որուն ծայրամասին կը գտնուէր օդի գործարանը:

Երեքս, ամէն օր մէկս իր մասնագիտական քննութիւնները կատարելէ ետք, ներկայացանք տնօրէնին, որ շատ ուրախացաւ մեր հայ ըլլալը գիտնալով, մանաւանդ մեր արաբ չըլլալը փաստող արաբերէն խօսակցութեան շեշտերէն (աքսանդ):

Տիւրզի տնօրէնը մեզ իր տունը հրաւիրեց եւ մեզ պատուեց արդէն իսկ պատրաստուած համադամ ճաշերով եւ պտուղներով: Ապա, մեզ ճամբու դնելու ընթացքին, ամէն մէկուս նուիրեց ամենածանր, 90 աստիճան օդի պարունակող երկուքական «Ռայեան» օդի, որոնք խմելու համար հարկ եղաւ նոյն չափով ջուր խառնել, որպէսզի 40 աստիճան իջնէ ալքովը:

Շնորհակալութիւն յայտնելէ եւ ողջագուրուելէ ետք տնօրէնէն եւ իր ընտանիքէն վերադարձանք Դամասկոս: Մեր քննութիւններու արդիւնքները պարունակող տեղեկագիրը Իզզթագ Թարէք Ջայեաթին ներկայացնելէ ետք, շրջեցանք Դամասկոսի շուկաները, երեկոյեան ախորժակով ճաշեցինք խորոժած պատրաստող նշանաւոր ճաշարանի մը մէջ, ապա, կրկին շուկաները շրջելէ եւ կարգ մը յիշատակի գնումներ ընելէ ետք, գտանք աժանոց, երկրորդ կարգի պանդոկ մը եւ գիշերեցինք խաղաղութեամբ:

Առաւօտուն, կանուխէն արթննալով, շիտակ, դէպի Մէզզէի զինուորական օդակայան:

Օդակայանի մուտքի գլխաւոր դռուէն շուրջ հարիւր մեթր հեռու մեր ինքնաշարժը տեղաւորելէ ետք, սպասեցինք, որ գիշերը իրենց տուները պառկող զինուորները, ենթասպաները եւ սպաները փոխադրող մարդատար ինքնաշարժները (պասերը) անցնին եւ կարելի ըլլայ մուտքի դռուին մօտենալ:

Ինչպէս ըսի, մուտքի դռուէն հարիւր մեթր հեռաւորութեան կեցած, հետաքրքրութեամբ կը դիտէինք զինուորներուն ինքնաշարժներէն իջնելը եւ պահակապետին բարեւ տալէ ետք զօրանոց մտնելը:

Իմ Ֆրանսական բանակին մէջ ստացած զինուորական կրթութեամբ, ճիշդ չէի գտներ եղածը, թէ ինչպէ՞ս, ենթասպայ մը՝ պահակապետ՝ կրնայ սպայի մը դիտողութիւն ընել, որ իր երկար մագերը կտրել տայ, երկար մագերը անպատշաճ գտնելով զինուորական օրէնքներուն:

Շուրջ կէս ժամ մոլորի դուռէն հեռու սպասելէ ետք, նկատեցինք, որ երթեւեկը դադարեցաւ եւ պահակապետը իր զինուորական շապիկը հանելով սկսաւ երթեւեկել մոլորի դրան լայնքին, մարզական շարժումներ ընելով, հակառակ 38 աստիճան տաք ըլլալուն:

– Սարգիս,– ըսի,– երթեւեկը դադարեցաւ, գնա պահակապետին յայտնէ քու փափաքները, թերեւս քեզի կը գոհացնէ: Փորձէ:

Սարգիս մօտեցաւ պահակապետին, բարեւեց եւ իր գիտցած արաբերէնով խնդրեց, որ իր գաւակը տեսնել կ'ուզէ:

Սարգիսը կը պատմէ, «Պահակապետը, երբ հարցուց գաւակիս անունը եւ իմ արաբերէնս լսելով, ըսաւ, դո՞ւն հայ ես: Ըսի, այո: Դուրսի երկու ընկերներդ ալ հայ ես: Ըսի՛ այո: Ըսաւ, կանչէ հոս գան»:

Երեքս եկանք եւ մօտեցանք գլխաւոր դրան մոլորին: Պահակապետ ենթասպան մեզ առաջնորդեց պահականոց եւ մեր միջեւ տեղի ունեցաւ ընթացիկ եւ Սուրիոյ քաղաքական կեանքը հետաքրքրող հարցերու քննութիւն:

Այդ միջոցին համարձակութիւն ունեցայ պահակապետին ըսելու, որ ես զարմանքով դիտեցի, որ դուն նոյնիսկ սպաներուն դիտողութիւններ կ'ընէիր: Ես զինուորական կանոններէն կը հասկնամ, ըսի՛ ծառայած ըլլալով Ֆրանսական բանակին մէջ: Ինծի կրնաս արդարացնել այս պարագան:

– Լաւ,– ըսաւ պահակապետը,– ես այս զօրանոցի Պասա Արապի կուսակցութեան ընդհանուր քարտուղարն եմ եւ այդ հանգամանքով բոլոր զինուորականութիւնը կը յարգեն իմ պաշտօնս:

Այս խօսքերը լսելով, Սարգիս ըսաւ. «Գրիգոր, ժամանակն է քեզ ներկայացնելու որպէս կուսակցական անձ»:

Սարգիսին առաջարկը տրամաբանական գտնելով, գրպանէս հանեցի կուսակցականի փաստաթուղթս եւ ցոյց տուի պահակապետին:

Պահակապետը երբ փաստաթուղթը տեսաւ, անմիջապէս վիզիս փաթեթուեցաւ եւ կարգ մը հարցումներէ վերջ, ըսաւ. «Ես այս զօրանոցի Պասա Արապի կուսակցութեան ընդհանուր քարտուղարն եմ: Նախապէս զաղտնի պահած էի եւ անդամակցելով «Ախուան Միւսիւմին» կուսակցութեան, կրցայ քողակերծել իրենց զաղտնի գործունէութիւնը եւ այդ կուսակցութեան մաս կազմող սպաներուն անունները փոխանցեցի պետական յատուկ կազմակերպութեան: Բոլորը ձերբակալուեցան եւ բանակէն աքսորուեցան: Նման քողակերծումները կատարեցի նաեւ այլ կուսակցութիւններու նկատմամբ, թափանցելով անոնց կուսակցութեան մէջ, ներկայիս, զօրանոցի բոլոր սպաները տեղեակ են իմ կուսակցական պաշտօնէն եւ ըստ այնմ կը սարսափին ինձմէ»:

Պահակապետը ինքզինք ներկայացուց Ռազիպ Աուվալ Ապու Մուսա, կրօնքով Ալաուի, շուրջ 10 տարիէ ի վեր կը ծառայեմ սուրիական բանակին: Հիմա որ մենք ազգային–կուսակցական եւ եղբայրական յարաբերութիւն ունեցանք, ինծի տուէք Սարգիսին տղուն անունը»:

Սարգիսին տղուն անունը տուինք, խնդրելով որ մեզի առիթ տրուի զայն տեսնելու:

Պահակապետը, Ռաֆիզ (ընկեր) Ապու Մուսա զինուոր մը կանչեց եւ ըսաւ. «Գնա զինուոր Խաչիկը կանչէ եւ իմ անունով իր պատասխանատու սպային ըսէ, որ բոլորովին նոր հագուստներ տրուի իրեն»:

մը հրամայեց իրենց ցանած լուրիկներէն եւ վարունգներէն քաղէ եւ լուսլէ ետք բերէ ու հրամցնէ յարգելի հիւրերուն: Մենք ալ մեր կարգին շիշ մը օղի, որ մեզի տրուած էր «Ռայեան» գործարանի տնօրէնին կողմէ եւ Դամասկոսէն գնուած տուփ մը պարագէ տուինք պահակապետին:

Զինուոր Խաչիկ Հինտոյեան եկաւ բոլորովին նորոգուած հագուստով եւ կօշիկով: Բարեւեց Ապու Մուսային եւ ներկաներուն, ապա, ողջագուրուեցաւ հօրը հետ, որուն չէր տեսած բանակ կանչուելէն ի վեր:

Զինուոր Խաչիկին երթալէն ետք, Ապու Մուսա յայտարարեց, «Դուք հայերդ հրաշալի ժողովուրդ էք, կը հիանամ ձեր ունեցած բազմակողմանի տաղանդներուն եւ իմաստութեան վրայ: Եղբայր, զօրանոցիս մէջ գտնուող հայ զինուորներուն բազմաշնորհ ըլլալը ինծի կը զարմացնէ: Որպէս արհեստաւոր թէ մեքենիսիան են, թէ դերձակ են, թէ ատաղձագործ են, ամէն տեսակ արհեստէ գաղափար ունին: Անոնք նաեւ մարզիկ են, Փութպոլ, պասքէթպոլ եւ մարզական այլ ճիւղերու մէջ առաջնութիւն կը շահին: Ես պատիւ կը զգամ նման զինուորներ ունենալուս, ինչպէս նաեւ ձեզի պէս բարեկամներու ծանօթանալով: Որեւէ ատեն երբ Դամասկոս կու գաք, անպայման հանդիպեցէք ինծի, ես ուրախութեամբ կ'ընդունիմ ձեզի»:

Ապու Մուսա, արդէն նախապէս տեղեկացած ըլլալով մեր ունեցած պաշտօններուն եւ առաքելութեան, հասցէս ուզեց, որպէսզի որպէս կուսակցական ընկերներ մեր երբայրական կապը պահենք:

Մեր կատարած առաքելութենէն ամիս մը ետք, գաղափարական, կուսակցական եւ եղբայրական բովանդակութեամբ նամակ մը ստացայ Ապու Մուսայէն, որուն պատասխանեցի պատշաճօրէն:

Ապու Մուսային հետ իմ եղբայրական յարաբերութիւններս շարունակուեցան մինչեւ իմ Գանատա հաստատուիլս: Ան միշտ պատրաստակամութիւն յայտնած էր միշտ ինծի օգտակար դառնալու: Ինծի օգտակար դարձաւ երբ Հալէպի գարեջուրի, պիսքիւթ-շոքոլայի եւ մածոնի գործարաններու իմ պաշտօնէն հրաժարականները բազմաթիւ անգամներ մերժուեցան պատկան նախարարութեան կողմէ եւ ես ստիպուեցայ իմ սիրելի ընկեր-բարեկամիս Ապու Մուսային դիմել, որ մինչ այդ հասած էր բարձրագոյն սպայի աստիճանին եւ ստանձնած սուրիական բանակի յատուկ զօրագունդերու (ուահտաթխասս) հրամանատարութիւնը եւ իր միջամտութեամբ ընդունուեցաւ հրաժարականս:

Կարօտով եւ երախտագիտութեամբ միշտ կը յիշեմ բարեկամս՝ Ապու Մուսան եւ երբեք չեմ մոռնար ինծի հանդէպ ցոյց տուած սէրը եւ կատարած բարիքները:

«ՇՈՂԱԿԱԹ»
Նոյեմբեր-Դեկտեմբեր 2006

ՀԱՅ ԳԻՐՔՐԸ՝ ԿԵԱՆՔԸ ՀԱՅՈՒՆ

Թիմուր Պըն Թարակէյ Պարլաս, տարբեր անուններով Թիմուր Լենկ, Լենկ Թիմուր, Ամիր Թիմուր, Աքսաք Թիմուր, Թամէր Լան, Թամպուրլէն, 14րդ դարաշրջանի աշխարհակալը ծնած է 1336ին, Թրանսաքսիանա, Քէշի մօտ, Իւզպէքիստանի Սամարղանտ քաղաքէն 50 մղոն դէպի հարաւ:

Լենկ Թիմուր կը սերէր մոնղոլ աշխարհակալ Ճենկիզ Խանէն: Անոր հայրը՝ Թարակէյ, եղած է Պարլաս ցեղախումբի պետը: Ան կրօնքով իսլամ էր: Որպէս արկածախնդիր՝բռնակալ, ան հիմնադիրը եղած է Թիմուրիտ կայսրութեան (1370 - 1405):

Լենկ Թիմուր, իր հսկայ բանակով եւ սուրով հիմնեց իր կայսրութիւնը գրաւելով Սուրիան, Իրաքը, Քուէյթը, Իրանը, Արեւելեան Թուրքիան եւ իր երկաթեայ տիրապետութեան տակ առնելով Ղազախստանը, Աֆղանիստանը, Թուրքմէնիստանը, Իւզպէքիստանը, Քրկիզիստանը, Փաքիստանը եւ Հնդկաստանը, հասնելով մինչեւ Չինաստանի Քաշքար քաղաքը եւ Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկուայի դռները:

Ան որպէս հերոս ճանչցուած է Միջին Ասիոյ ժողովուրդներէն եւ մինչեւ այսօր, Արեւմտեան Ասիոյ ժողովուրդները իրենց զաւակներուն անունները կը կոչեն Թէյմուր Աշխարհակալ:

Լենկ Թիմուր, իր աշխարհակալական պատերազմներու ընթացքին, իրեն հաւատարիմ մոնղոլ հազարաւոր ձիաւորներով գրաւած է վերոյիշեալ երկիրները, եւ, որպէս անգութ եւ ջարդարար անձ, սարսափ տարածած էր գրաւեալ երկիրներու ժողովուրդներուն մէջ:

Սուրիոյ մէջ մինչեւ այսօր կը պատմուի, որ Լենկ Թիմուրի բանակները երբ կը գրաւեն Սուրիոյ մայրաքաղաք Դամասկոսը, Լենկ Թիմուր հրաման կու տայ իր բանակներուն ազատօրէն կողոպտեն քաղաքի հարստութիւնները եւ բռնաբարեն կիները: Այդ իմաստով, Դամասկոսի բնակչութեան մէջ գտնուող անգութ եւ վայրենի անձերուն համար կ'ըսեն Թիմուր Լենկի ընկեցիկներ (պանատիկ Թիմուր Լենկ):

Այս վայրագ եւ անգութ աշխարհակալը, Իրանը գրաւելէ ետք, իր անաւոր բանակով կը մտնէ Արեւելեան Հայաստանի սահմաններէն ներս, իր ճամբուն ընթացքին ջարդելով, սպանելով իր ուժերուն դիմադրողները եւ կողոպտելով բնակչութիւնը եւ կը հասնի Հայաստանի Իջեւանի շրջանին մէջ գտնուող Գօշավանքը: Լենկ Թիմուրը կը գրաւէ վանքը եւ վանքի շքեղութիւնը տեսնելով նախանձով լեցուած կը հրամայէ անմիջապէս քանդել վանքը: Ծառաները գործի անցնելով, շուտով կը համոզուին, որ վանքը շատ ամուր չինւած է եւ անկարելի է քանդել, ուստի վանքին մէջ մեծ քանակութեամբ փայտ կը լեցնեն եւ կ'այրեն: Հրդեհէն վանքը չի վնասուիր, այլ՝ միայն պատերը կը սեւնան:

Գօշավանքի (Նոր Գետիկ) շրջափակին մէջ կը գտնուէին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Աստուածածին եկեղեցիները, որոնք կառուցուած են 12-13րդ դարերուն՝ սքանչելի ճարտարապետութեամբ եւ վեհութեամբ:

Կը յիշատակուի, որ վանքին մէջ գոյութիւն ունեցած են վարժարան, համալսարան-ձեմարան, ուր պահուած եւ ստեղծուած են բազմաթիւ ձեռագրեր, ուր կրթուած եւ գործած են հայ մշակոյթի նշանաւոր գործիչներ Վանական վարդապետը, Կիրակոս Գանձակեցին եւ ուրիշներ: Վանքը ունեցած է բազմաթիւ կալուածներ, գիւղեր եւ վարելահողեր: Վանքային այս համալիրը հիմնադրուած է Մխիթար Գօշի ջանքերով՝ 1237-1241 թուականներուն:

Լենկ թիմուր գրաւելով Գօշավանքը, վանքի կրօնաւորներէն եւ գիւղացիներէն կը պահանջէ պահուած ոսկիները, վանքի հարստութիւնը: Կատարուող տանջանքները եւ չարչարանքները որեւէ արդիւնք չեն տար, ոչ ոք չէր խոստովաներ եւ ըսէր վանքի հարստութիւններուն տեղը:

Լենկ թիմուրի խորհրդականներէն մէկը, որ երեւի լաւ գիտէր հայ մարդոց ուժն ու թուրութիւնը, խորհուրդ կու տայ զօրավարին. «Միրելի՛ զօրավար, եթէ կ'ուզես յաջողութեան հասնիլ, այրէ վանքին գիրքերը եւ պիտի տեսնես, ինչպէս անոնց լեզուները պիտի բացուին»:

Հաւաքեցին, իրարու վրայ գիզեցին վանքի ձեռագիր մատեանները եւ այն է, շուտով կրակի պիտի տային, ժողովուրդը կը փակէ կրակի ճանապարհը. «Մի՛ այրէք, կ'ըսենք»:

Եւ ըսին ոսկիներու եւ հարստութեան պահուած տեղը:

Ապշած է ազահ զօրավարը:

Բերին, գիրքերու մօտ գիզեցին ոսկի, թանկարժէք քարեր եւ առարկաներ:

Լենկ թիմուր ձեռքը առաւ ձեռագիր գիրք մը, թերթեց, նկարները գեղեցիկ էին, սակայն ափսոս, մագաղաթի վրայէն ոսկին անհնար էր հանել:

– Կարդա՛, ի՞նչ է գրուած.– Լենկ թիմուրը գիրքը մեկնեց քովը կեցած գիւղացիին:

Մարդը վերցուց մատեանը, զգոյշ, ինչպէս քնացող երեխայի մը, թերթեց, թերթեց...

– Կարդալ չեմ գիտեր, զօրավար,– ըսաւ գիւղացին մեղաւորութեամբ:

Լենկ թիմուր գիրքը խլեց անոր ձեռքէն, տուաւ մէկ ուրիշին, յետոյ երրորդին:

– Մենք կարդալ չենք գիտեր, զօրավար, վանականներուն ըսէ...

– Մեր պատմութիւնն է, զօրավար,– տեղէն ոտքի կանգնելով ըսաւ վանահայրը,– մեր պատմութիւնն է եւ մեր աղօթքը:

Լենկ թիմուր նայեցաւ հաւաքուածներուն, նայեցաւ դիզուած գիրքերուն, յետոյ՝ ոսկիներուն, թանկարժէք քարերու կոյտերուն, եւ, կնճռոտուեցաւ ճակատը:

Հասկեցա՞ւ արդեօք Լենկ թիմուրը, թէ ո՞րն էր իրական հարստութիւնը:

Փրկուած այդ գիրքերէն շատերը ներկայիս կը գտնուին Հայաստանի Մատենադարանին մէջ, իսկ ո՞ւր է Լենկ թիմուրի յափշտական ոսկիները եւ թանկագին քարերը, հայ ժողովուրդէն յափշտակուած հարստութիւնները...:

Մեր նախահայրերը հայ գիրքերը նախընտրեցին ոսկիէն եւ թանկագին քարերէն: Սակայն, 1915ի Մեծ Եղեռնի շրջանին, թուրքերու կողմէ կազմակերպուած հայ ժողովուրդին հանդէպ կատարուած ցեղասպանութեան հետեւանքով, հազարամեայ մեր վանքերն ու եկեղեցիները կողոպտուեցան եւ

մեր մշակութային եւ գրական հարստութիւնները յափշտակուեցան թուրքերու եւ քիւրտերու կողմէ:

Ամենայն Հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեան, հայ գիրքի հանդէպ հայ մարդուն վերաբերումը կը պատկերացնէ սա գողտրիկ բառերով.

Թէպէտեւ բախտն մեզ շատ հարուածեց,
Երկար դարերով, ահեղ հարուածով.
Թէպէտ էսպէս ցրուեց, տարածեց,
Ձրգեց հողէ հող, փրռեց ծովէ ծով:

Վկայ է սակայն բովանդակ երկիր,
Որ մենք կարեւոր ապրում ենք կրկին.
Եւ ուր հասնում է հայ գիրքն ու գիր,
Կենդանի է դեռ հայութեան ոգին:

Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. (յետագային Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս), Անթիլիասի մայրավանքի շրջափակին մէջ կազմակերպուած 1985ին, ութերորդ հայ գիրքի ցուցահանդէսին առթիւ կը գրէ.

«Յեղասպանութենէն ետք, հայութեան վերապրումի շքեղ երեւոյթը շատ բան կը պարտի հայ գիրքին: Անապատի աւազին վրայ հայ մօր կմախքացած ու դողդողացող մատներով գրուած Ա. Բ. Գ.ի տեսիլքին խորհուրդէն լուսարձակուած իմաստը Հայ Գիրին՝ կ'ուզեմ որ դառնայ մեր համայնական մօր՝ մեր մայր եկեղեցիին եւ մայրենի լեզուին կաթը մեր կեանքի առողջ սնուցումին եւ աճումին համար՝ ի խնդիր մեր յաղթանակին: Երբ վերաթնութեան ոգին այս տարի նորաբուխ եւ յորդառատ ժայթքով կը շատրուանուի մեր կեանքի աւազանին մէջ, կ'ուզեմ որ Հայ Գիրքը ստանայ նոր փայլ եւ տա՛յ նոր փայլ յատկապէս մեր սփիւռքեան տօգունող եւ լուսահատնող կեանքին: Եթէ աւազներուն մէջ իր կեանքին վերջին շունչն աւանդող հայ մայրը իր յոյսին սլաքը ուղղեց Հայ Գիրին, կը հաւատամ, որ Ս. Մեսրոպը ծնող ազգին բնագրական իմաստութիւնն էր, որ շարժում տուաւ իր անշարժացող մատներուն: Եւ այդ իմաստութիւնը պա՛րզ էր բիւրե՛ղ՝ ցերեկուան լոյսին պէս եւ երկնքի կապոյտին նման ջինջ ու վճիտ: Առանց Հայ Գիրքին կը մեռնի հայ այսօր, ինչպէս կրնար մեռնի Ե. դարուն, եթէ Մեսրոպ իր «մաքուր արգանդ»ին մէջ երկնած չըլլար Գիրը որպէս ազգային ստեղծարար մեր ուժին բանալի եւ տագնապակոծ ու տառապահար մեր դարաւոր կեանքին վկայ՝ ի սպաս մեր հայկեան ինքնութեան եւ անկապտելի անկախութեան»:

Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմէ հայերէն գիրերու ստեղծումէն եւ հայերէն գիրերով գրուած գիրքերու հայ թարգմանիչներու եւ հայ հեղինակներու կողմէ հրատարակուելէ ետք, մինչեւ մեր օրերը, հայ ժողովուրդը գոյատեւեց, ոսկի է թանկագին քարերէ աւելի գիտնալով արժէքը հայ գիրքին եւ հայ գրականութեան, իսկ ձենկիզ Խանի, Լենկ Թիմուրի նման աշխարհակալներ պատմութեան բեմէն անժառանգ կորսուեցան:

Պատմութեան բեմէն ջնջուեցան նաեւ բազմաթիւ հզօր ազգեր, որոնք գիրքի, գրականութեան եւ մշակոյթի արժէքը չգիտցան:

*Երկրի մը ուժը եւ կարողականութիւնը չի գնահատուիր իր բնակչու-
թեան եւ բանակներու թիւով: Առանց գիրի եւ գրականութեան նման ազգեր
չեն կրնար գոյատեւել, ինչպէս որ չգոյատեւեցին բազմաթիւ աշխարհակալ
ազգեր:*

*Սիրենք, գուրգուրանք եւ արժեւորենք հայ գիրքը ոսկիէ եւ նիւթա-
կան հարստութիւններէ աւելի, որովհետեւ նիւթական հարստութիւնները կ'ո-
չընչանան, կը հալին, կը կորսուին, սակայն հայ գիրքը յաւիտենական արժէք
կը ներկայացնէ եւ կեանք կու տայ հայուն:*



Ձախէն աջ՝

**Բանաստեղծուհի Ռուզան Ասատրեանի, բանաստեղծ Սասուն Գրիգորեանի,
բանաստեղծուհի Լիլիթի եւ արձակագիր Շնորհիկ Շահինեանի հետ 2004ին**

ՀԱՅԱՅԱԾ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐՈՒՎԻ ՄԻՍ ԲԱՐԷՆ ԵՓՓԷ

Դանիացի մեծ բարերարուհի Քարէն Եփփէի կեանքը եղած է համակ նուիրում հանդէպ հայ ժողովուրդին: Ամբողջ 32 տարի ան բաժնած է հայու ցաւերը, խորապէս զգալով անոր վիշտն ու տառապանքը: Ան եղած է հազարաւոր որբերու մայր, այրիներու պաշտպան, տկարներու օգնական՝ բարոյական եւ նիւթական իրեն մատչելի բոլոր միջոցներով:

Միս Քարէն Եփփէ ծնած է 1876ին Դանիայի Լիւմպերկ քաղաքը, պետական ուսուցիչի բարեկեցիկ ընտանիքի մէջ: Ընտանիքը դաւանանքով կը պատկանէին Աւետարանական եկեղեցիին: Փոքրիկն Քարէն իր նախնական ուսումը ծննդավայրին մէջ ստանալէ ետք, կը հետեւի Քոփէնհագենի համալսարանի դասընթացքներուն:

19րդ դարու վերջերը Միսիոնական կազմակերպութիւններ գործունէութեան անցած էին Օսմանեան կայսրութեան տարածքին, որոնք Ուրֆայի մէջ միասնաբար հիմնած էին հիւանդանոց, որբանոց եւ աշխատանոց: Երիտասարդ Քարէն կը թղթակցէր անոնց հետ, ցանկութիւն յայտնելով բաժին բերել մարդասիրական իրենց առաքելութեան: Մնողքը, տեսնելով որ հաստատակամ է իրենց դուստրը իր որոշումին մէջ, ազատ կացուցին զինք, իրենց շրջապատի հարուստ բարեկամներէն ալ կոկիկ գումար մը ապահովելով, ուղարկեցին զինք Ուրֆա:

Քարէն Եփփէ Ուրֆա կը հասնի 1903ին, երբ 27 տարեկան էր, աշխատակցելու միւս միսիոնարներու հետ: Որպէս խելացի եւ հեռատես գործիչ, առաջին հերթին կը լծուի լեզուն սերտելու ու սորվելու այն ժողովուրդին, որուն ցանկութիւնը ունէր նուիրելու իր կեանքը:

Ուրֆայի մէջ քոյր Քարէնին կը սպասէին 300 որբեր: Ի տես ողբալի այդ վիճակին, քոյր Քարէն գործի կ'անցնի, թղթակցութիւններ կատարելով Եւրոպայի զանազան կեդրոններուն հետ, օժանդակութիւն խնդրելով: Այդ ալ բաւարար չնկատելով, արհեստանոցներ կը բանայ իր պաշտպանեալներուն՝ դերձակատուն, կաշեգործութիւն, ատաղձագործութիւն եւ այլ արհեստներ, որպէսզի իրենց աշխատանքով որբեր եւ այրիներ կարենան ապրուստ ճարել ու բարելաւել իրենց գոյավիճակը:

Քոյր Քարէն Ուրֆայի մէջ աշխոյժ քաջալերողը եղաւ, որ իր որբերը ընտանիք կազմեն իրար հետ ամուսնանալով, որպէսզի հայ մնան: Թէեւ ան մայր չեղաւ իր կեանքին մէջ, սակայն ունեցաւ մէկէ աւելի որդեգիրներ: Անոնցմէ մէկն էր Միսաք Մելքոնեանը: Ազնիւ այդ երիտասարդը ապագային դարձաւ իր մտերիմ գործակիցը: Հերոս տղայ, քոյր Քարէնի թելադրանքով կը պտըտէր գիւղէ-գիւղ, փնտռելով առեւանգուած երեխաներ՝ աղջիկ եւ տղայ, իւրաքանչիւրին համար վճարելով մէկ հնչիւն ոսկի փրկագին: Անոնցմէ շատեր հասակ առնելով կ'ամուսնանային իրենց նմաններուն հետ: Անոնց շարքին էր մայրիկի որդեգիրը՝ Միսաք Մելքոնեան, որ ամուսնացաւ որբուհի Լուսիայի հետ, կազմելով երջանիկ բոյն մը:

1915ին գէյթունցիներու առաջին կարաւանը կը հասնի Ուրֆա: Քոյր Քարէն ապաստան կու տայ եւ կը կերակրէ գանոնք ի գին մեծ գոհողութիւններու: Կարաւանները կը յաջորդեն զիրար էրզրումէն, Սեբաստիայէն, Տիգրասնակերտէն, Սէվէրէկէն եւ հայկական այլ շրջաններէն:

1920ին Քարէն Եփփէ կը հաստատուի Հալէպ, միանալով իր որդեգիր գաւակներուն եւ անմիջապէս անհատական ճիգերով կը լծուի տարագիր իր սիրելի հայ ժողովուրդին օգտական ըլլալու:

Քոյր Քարէնի առաքելութիւնը անմիջական օգնութիւն եւ գործ հայթայթեց մեր 1800 դաղթականներուն, որոնք այլապէս կրնային կորուստի մատնուիլ թշուառութեան մէջ: Ան մեծ գործ կատարեց որպէս որբահաւաք, իր որդեգիր օգնականներու միջոցաւ:

Նոյն այդ շրջանին, քոյր Քարէն դիմած էր Հալէպ գտնուող անձի մը, գործակցութեան առաջարկով: Լեհական ծագումով այդ անձը կը կոչուէր Լէսփոլտ Կասչիկ, արհեստով ինքնաշարժի վարիչ: Քոյր Քարէն ինքնաշարժ մը կը գնէ եւ Կասչիկը կը դառնայ իր վարորդը:

Քոյր Քարէն Լէսփոլտը կ'ամուսնացնէ իր աշխատանոցէն այրի տիկին Հոռոմին հետ, որ հմուտ մասնագէտ էր հայկական ժանեակի: Աշխատանոցը ժամանակի ընթացքին կ'ընդլայնի, բարեյոյս շարժում մը ստեղծելով, որմէ կ'օգտուին հարիւրաւոր չքաւոր ընտանիքներ:

Գաղթական հայուն հաստատութեան աշխատանք հայթայթելը տնտեսական առողջ քայլ մըն էր: Քոյր Եփփէ ջանք չխնայեց շուկայ գտնելու ժանեակի արդիւնաբերութիւնը սպառելու արտասահման՝ Գերմանիա ու հիւսիսային երկիրներ: Լէսփոլտ, որ կը տիրապետէր գերմաներէն լեզուին, օգտակար կ'ըլլայ Քարէնի թղթակցութիւններուն, այդ կերպով նեցուկ կանգնելով Քարէնի յանձնառութիւններուն:

Մինչ այդ կ'աճէր արտասահմանէն ստացուող պատուէրներու քանակը: Կասչիկ եւ քոյր Քարէնի որբերէն ուրիշ մէկ որդեգիր Յարութիւն Չագըրեանի հետ գործակցաբար, վաճառատուն հաստատեցին Հալէպի հոգետունի բակի արեւմտեան կողմը, մուտքի վրայ երրորդ յարկ, որ շարունակեց գործել մինչեւ Հայաստան ներգաղթի օրերը:

1924ին, Նոր Գիւղի (Մէյտան) մէջ (Հալէպ), հասը հազար կանգուն հողաչերտ մը գնեց քոյր Քարէն եւ շինել տուաւ 9 խոշոր տաղաւարներ, 80 սենեակներով, ուր փոխադրուեցան 200 ընտանիքներ, մեծամասնութեամբ այրի կիներ որբ գաւակներով: Մօտ հազար երեխայ դպրոց կը յաճախէին: Լէսփոլտ Կասչիկի որպէս գործակից նշանակուեցան Ուրֆացիներ Միհրան Հերարդեան եւ Գէորգ Մոնոֆարեան, որբանոցի հոգը եւ պատասխանատուութիւնը ըստանձնելու համար:

1927ին, քոյր Քարէն գաղափար ունեցաւ իր հողին վրայ դպրոց հիմնելու եւ իր մտադրութիւնը հաղորդեց օրուան Առաջնորդ Արտաւազգ Սրբազանին: Ուստի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Սահակ Խապայեանի համամըտուութեամբ հիմնուեցաւ մանկապարտէզ:

Քոյր Քարէն, որբերու եւ որբուհիներու համար Եւրոպայէն բարերարներ (հոգատարներ) կ'ապահովէր, իւրաքանչիւր որբին կենսագրութիւնը, նկատ

ըը եւ իր կողմէ շնորհակալական գիր մը կը ղրկուէր բարերարին, զոր թարգմանաբար կը կցուէր բարերարին ուղարկուած տեղեկագրին:

Քարէն Եփփէ 1927ին հիմնեց գիւղ մը չափահաս որբերու համար, Ռագագայի շրջան, Թել-Ապիատի կողմերը, որ կը կոչուէր Խըրպէթ Ռըզ:

Հալէպի մէջ քոյր Քարէն երբեք չփորձուեցաւ իր պաշտպանեալներուն ստիպել դաւանական այլափոխում: Ընդհակառակը՝ ան ամէն ինչ ըրաւ, որ հայ երեխան չհեռանայ Առաքելական Մայր եկեղեցւոյ ականդութիւններէն եւ առաւել եւս հիմնաւորուի որպէս Ազգային Մայր եկեղեցիի հաւատացեալ: Իսկ ինք, իր մասին կտակ ըրաւ, որ իր մահուան պարագային զինք թաղեն Հայ Առաքելական եկեղեցւոյ գերեզմանոցը:

Քոյր Քարէն Եփփէ ականդեց իր հոգին 7 Յուլիս 1934ին: Ունեցաւ Ազգային թաղում, ներկայութեան հազարաւոր նախկին որբերու եւ երախտապարտ հայ ժողովուրդի զաւակներուն:

Միս Քարէն Եփփէ Տանիմարքայի մէջ մեծ ժողովրդականութիւն կը վայելէր ու կը մնար տեսակ մը ազգային պարծանք, Ուրֆայի եւ Հալէպի մէջ հայ որբերուն տարած խնամքին համար: Քոյր Քարէնի մահէն տարիներ ետք, երբ իր շինել տուած որբանոցին մէջի որբերը հասակ կ'առնեն եւ կը փոխադրուին իրենց սեփական տուները, որբանոցը կը դառնայ անմարդաբնակ:

Ստեղծուած այս կացութեան հետեւանքով, Դանիայէն, Քարէն Եփփէի հոգատար ընկերութիւնը կ'որոշէ ծախել որբանոցի հողամասը եւ երկու օր իորդներ կը ղրկէ Հալէպ, ծախելու գործողութիւնը կատարելու համար: Սակայն, օրուան Առաջնորդ Զարեհ Սրբազանի եւ ազգային ղեկավարներու ջանքերով կարելի կ'ըլլայ Տանիմարքայի մէջ գտնուող ընկերութեան ղեկավարները համոզել, որ Միս Քարէն Եփփէի անունը եւ յիշատակը անմահացնելու համար հայկական ճեմարան մը հիմնել ծախու գրուած հողամասին մէջ:

Քարէն Եփփէ ճեմարանը 15 Հոկտեմբեր 1947ին բացուեցաւ մէկ դասարանով եւ 22 երկսեռ աշակերտութիւնով:

Ճեմարանի պաշտօնական բացումը կատարուեցաւ Կիրակի, 26 Հոկտեմբեր 1947ին: Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ կը պատարագէ եւ քարոզէ Առաջնորդ Զարեհ Սրբազան, որ անդրադառնալով օր. Քարէն Եփփէի կեանքին կ'ըսէ. «Եկաւ հեռաւոր Դանիայէն մեր պատմութեան մութ օրերուն, երբ կը հալածէին մեզ բախտն ու ջարդարար թուրքը: Երբ մեր բեկորները, աստանդական ու անտէր, ափ կ'առնէին ասպնջական այս երկրի դուռները, իրենց Ֆիզիքական գոյութիւնը, իրենց սրսփուն գոյութիւնը պատսպարելու համար: Ամբողջ երեսուն տարի, Օրիորդ Քարէն Եփփէ խառնուեցաւ մեր կեանքին, միսէն միս ու ոսկորէն ոսկոր հա՛յ դարձաւ, շաղխուեցաւ մեր հանրային գործունէութեան եւ օրէ օր, աւելի խոր ու իրաւ ընտանութիւն մը ըզգաց իր եւ մեր միջեւ: Կրնամ ըսել, թէ գոհաբերեց ան իր կեանքը հայ ժողովուրդին համար, զոր կը նկատէր գերիվեր բոլոր ազգերէն, «Քաղաքակրթութեան» դիմակի տակ մահ եւ սպանութիւն սփռող բոլոր ժողովուրդներէն»:

Ճեմարանի բացման արարողութիւններէն ետք, Սրբազան Հայրը, ազգային իշխանութեանց ներկայացուցիչներ, աշակերտութիւն եւ ուսուցչական կազմ կ'այցելեն Ազգային Գերեզմանատուն ու ծաղկեպսակներ կը զետեղեն Օրիորդ Քարէն Եփփէի շիրիմին վրայ:

Այս առթիւ, Զարեհ Սրբազան, Օրիորդ Քարէն Եփփէի պարագաներուն կը յղէ հեռագիր՝ «Քարէն Եփփէ Գոլէճի բացումը տեղի ունեցաւ այսօր, յետ հոգեհանգստեան մասնաւոր պատարագի՝ ի հանգիստ Օրիորդ Քարէն Եփփէի: Հայ ժողովուրդը բերաւ իր մասնակցութիւնը կրօնական թէ աշխարհիկ հանդիսութիւններով: Դասաւանդութիւնները սկսան 15 Հոկտեմբերին: Կը յայտնեմ հայ ժողովուրդի շնորհաշատ զգացումները: Զարեհ Սրբազան»:

*
**

Վերջերս, երբ հնամեայ նկարներ կը դիտէի, գտայ մոռցուած նկար մը, ուր կ'արտացոլար իմ հեռաւոր անցեալս:

Մինչեւ պատանեկան տարիքս յատկանշական որեւէ նկար չեմ ունեցած: Ինծի հասած են մեծ եղբօրս հետ նկարուած բոլորովին մերկ, հազիւ մէկ տարեկանիս քաշուած ջուրի նկար մը, 12-13 տարեկանիս դասընկերոջ մը հետ նկարուած ջրանկար մը եւ այս նկարը, հազիւ 11 տարեկանիս:

Օրին, երբ առաջին անգամ տեսայ այս նկարը, երկար մտածելէ ետք յիշեցի նկարին պատմութիւնը:

Հայրս, Սասունցի, Ղազար (Խարզօ) եւ մայրս՝ Պեհեսնիցի, Մարիամ, ամուսնացած են Հայոց Մեծ Եղեռնի սարսափելի օրերուն, Կիլիկիոյ Քիլիս քաղաքին մէջ եւ 22 տարի իրարո հետ ապրելով (մայրս մեռած է 2 Նոյեմբեր 1938ին) ունեցած են եօթը զաւակներ, 5 մանչ եւ երկու աղջիկ: Երկու մանչերը՝ Զաքար եւ Գրիգոր կը մահանան իրենց մանուկ տարիքին: Ապրող զաւակները՝ Սիրանուշ, Յարութիւն, Գրիգոր, Յովհաննէս եւ Արշալոյս, իրենց դպրոցական տարիքը հասնելով կը յաճախեն Հալէպի Հայկազեան եւ Սահակեան վարժարանները:

Գիւղացի հայրս (Սասնոյ Տալուրիկի Սպաղանք գիւղէն) իր կարելիութեան սահմաններուն մէջ կը փորձէ զանազան գործեր՝ ջաղացպան, փռապան, մուշապաք եւ թան ծախող, ամերիկեան գործածուած ժաքէթներու վաճառական, որպէս կարենայ կերակրել իր ընտանիքին անդամները եւ հասնիլ անոնց դպրոցական եւ ուսանողական ծախսերուն:

Սակայն, որոշ ժամանակ մը, հիւանդութեանց եւ դժբախտ պարագաներու բերումով չէ կրցած ժամանակին վճարել դպրոցական տարեթոշակները, մանաւանդ իմ, փոքր եղբօրս եւ փոքր քրոջս թոշակները:

Հայրս, որպէսզի իր զաւակները հայկական դպրոց երթալէ չզրկուին, կը դիմէ Միս Քարէն Եփփէ հիմնարկութեան, խնդրելով որ իր երեք զաւակներուն դպրոցական ծախսերուն հոգատարութիւն կատարեն:

Հիմնարկութեան պատասխանատուներ պրՓ. Միհրան Հերարդեան եւ Գէորգ Մոնոֆարեան կ'ընդունին հօրս առաջարկը եւ մենք կը դառնանք Միս Քարէն Եփփէ հիմնարկութեան սաներ:

Ներկայիս շատ լաւ կը յիշեմ, տարին անգամ մը մեզ կը տանէին որբանոցի իրենց գրասենեակը եւ նամակ կը գրէինք Եւրոպայի մեր հոգատարներուն, մեր նկարներն ալ ղրկելով անոնց:

Ուրեմն, հնամեայ նկարներէն զատուած այդ նկարը, իմ հոգատարիս ղրկուելու համար քաշուած նկար մըն էր, որ լաւ չեմ յիշեր ինչպէս ձեռքս անցած է: Հաւանաբար, հիմնարկութեան փակումէն ետք արխիւներու մէջէն պրն. Մոնոֆարեանի զաւակներէն մէկը գտած ըլլայ եւ տուած ինծի:

Քարէն Եփփէ հիմնարկութեան սան եղած շրջանիս, հոգատարս ոչ միայն կը հոգար իմ ուսումնական ծախսերս, այլ նաեւ երբեմն հագուստեղէն կը ղրկէր, եւ նկարին մէջ իմ հագած բուրդէ քաղակս, հոգատարիս ղրկած նըւէրն էր:

Կը յիշեմ, տարին անգամ մը կ'ենթարկուէինք բժշկական քննութիւններու որբանոցի գրասենեակին մէջ: Բժիշկ Յարութիւն Տէր Ղազարեան մեզ կը քննէր եւ անպայման որդի դեղ կու տար, նկատի ունենալով մեր ուտելիքներուն անմաքուր ըլլալուն պատճառով որդ կը վխտար մեր աղիքներուն մէջ:

Կը յիշեմ նաեւ Քարէն Եփփէի զանազան բարերարութիւններու կարգին, աղքատ ժողովուրդին բաժնուելիք զանազան կերակուրները յատուկ խոհանոցի մը մէջ, որմէ կ'օգտուէին Նոր Գիւղի աղքատները:

Միս Քարէն Եփփէ, իր կեանքին 30 տարիները յատկացուց հայ ժողովուրդի ծառայութեան՝ Ուրֆայի եւ Հալէպի մէջ, որպէս իրական մայր խնամելով հազարաւոր որբեր, այրիներ եւ աղքատ ազգայիններ: Եւ իր մահէն ետք, հազարաւոր որբեր, այրիներ եւ աղքատ ազգայիններ: Եւ իր մահէն ետք, Դանիացի իր բարեկամները եւ ծնողները, որբանոցի հոգամասը նուիրեցին հայ ժողովուրդին, ուր այսօր կը բարձրանայ Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանը, 1947էն ի վեր Սուրիոյ հայ նոր սերունդին տալով հայեցի դաստիարակութիւն եւ հայկական ոգի:

Հնամեայ նկարս դիտելով, դպրոցական անցեալս եւ կեանքս կը տողանցեն միտքիս պաստառին վրայէն, թելադրելով կրկին անգամ երախտագիտական զգացումներով յիշեմ եւ մօտենամ ազնուազարմ Միս Քարէն Եփփէին, հայացած Դանիացի այս առաքինատիպ հայուհիին եւ անոր ազգին:

Յիշատակն արդարոց օրհնեալ եղիցի:

Դ.

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԱԼՊՈՄ

Ձեռնարկ մը, որ արժանի է քաջալերանքի:

Կ'ապրինք մեր պատմութեան ամէնափափուկ եւ բախտորոշ շրջաններէն մէկը, ուր կը տիրեն հայ ոգին եղծանելու ատակ ամէն կարգի բարքեր: Հայ կեանքէն ներս ստեղծուած է այնպիսի մ'թնորորտ մը, որ Հայրենիք եւ վարչակարգ բառերը կորսնցուցած են իրենց իմաստը: Մայթերու վրայ կը սլքտայ նորելուկ «հայրենասէր»ներու խմբակ մը, որ ազգային ամէն սրբութիւն եւ աւանդութիւն կը զոհէ իր «գաղափար»ին համար:

Իսկ այս խաժամուժին դէմ, Դաշնակցութեան անմիջական ղեկավարութեան տակ, կայ հայ ժողովուրդի ստուար մեծամասնութիւնը, որ ունի առողջ նկատար, եւ տէր կը կանգնի ազգային ամէն սրբութեան: Իտէալ մը ունի, որուն իրականացման համար պայքար կը մղէ:

Մեր երէցները, որոնք ապրած են մեր պատմութեան ամէնաճակատագրական օրերը, եւ ականատես եղած այս ժողովուրդի յօշոտումին եւ հերոսական դիմադրութիւններուն, աշնանային տերեւներու նման կ'իյնան: Կ'իյնան անոնք պատնէշին վրայ, առանց աւարտելու իրենց վերապահուած մեծ գործը: Ու մենք, կը մտածենք երբեմն, թէ, նոր սերունդը պիտի կարենա՞յ, պիտի կարենա՞նք գրաւել թափուր տեղերը անոնց, որոնց աւագ պարտականութիւր եղաւ եւ է՝ այս ժողովուրդը առաջնորդել արտասահմանի մէջ: Տէր կանգնիլ մեր Դատին, եւ աշխատիլ անոր իրականացման համար:

Այս հարցումին պատասխանը անշուշտ պիտի ստանանք ապագային: Բայց, որպէսզի դրական ըլլայ այդ պատասխանը, մեր երէց սերունդն ալ ունի որոշ պարտականութիւնն, մասնաւորաբար դաստիարակութեան մարզին մէջ, եւ հայ ոգիի պաշտպանութեան ճակտին վրայ:

Ահա այդ աշխատանքներէն մէկն որ կը կատարէ Սասունցի Աւօ Թումայեան, հրատարակելով «Յեղափոխական Ալպոմ» ամսական պրակները: Ձեռնարկ մը, որ պիտի զօրացնէ նոր սերունդի հաւատքը՝ այս ժողովուրդի ապագային հանդէպ, եւ, որ պիտի յղէ զանոնք՝ իրենք զիրենք հպարտ գգալու, որպէս այնպիսի ժողովուրդի մը զաւակները:

Այդ «Ալպոմ»ին մէջ մենք կը գտնենք կեանքի գլխաւոր գիծերը հայ «Ֆէտայիներ»ուն: Պարզ, համեստ եւ անճնազոհ մարդիկ, որոնք իրենց կեանքը եւ արիւնը տրամադրած են այս ժողովուրդին, եւ անոր ազատագրութեան սուրբ դատին: Մարդիկ՝ գրագէտ, մտաւորական, գործաւոր, գիւղացի եւ անգլըրագէտ, որոնք հաւաքուելով Հ.Յ. Դաշնակցութեան Դրօշին տակ, պայքարեցան մեր բոլոր թշնամիներուն դէմ, որպէսզի Հա՛յն ալ մարդու պէս ապրի, իր հողին, իր քրտինքով վաստակած աշխատանքին, իր պատուին եւ ազատութեան տէրը ըլլայ:

Կը կորսուի ա՛յն ժողովուրդը, որ կը մոռնայ իր պատմութիւնը, եւ չի հետեւիր նախնիքներու ուղիին, չի հետաքրքրուիր անոնց անցեալով, եւ չօգտուիր անոնց փորձառութիւններէն:

Բայց, անցեալը, պատմութիւնը ծանօթացնելու համար նոր սերունդին, պէ՛տք են գիրքեր, հրատարակութիւններ, որոնք ըլլան դիւրամատչելի՝ իրենց

գիներով, եւ հասկնալի՝ բոլոր դասակարգի մարդոց: Այս ուղղութեամբ, «Յեղափոխական Ալպոմ»ի հրատարակութիւնը կոչուած է կատարելու իր կարեւորութեամբ, մեծ դեր մը:

Մարդիկ կան, որոնք այս կարգիւ ձեռնարկներ «աւելորդ» կը նկատեն, այն պատճառաբանութեամբ՝ որ «կրկնութիւններ» են անոնք, որպէս հրատարակութիւն: Բայց, պէտք է գիտնալ, թէ նոր սերունդը տեղեակ չէ այս բոլորին, եւ եթէ չհրատարակուին եւ չտարածուին մեր ամենայետին խաւերուն մէջ նոյնիսկ, թափուած գետանման արիւնները իզո՛ւր պիտի ըլլան:

Կենսական դեր կը կատարեն այս տեսակի հրատարակութիւններ, որոնք մեր մէջ անմար փարոսներ պիտի ըլլան, եւ, անոնց շնորհիւ, այս տարագիր բազմութիւնները, պայծառ օր մը, պիտի հասնին «նաւահանգիստն բարութեան»:

Այդ հերոսներուն կեանքը աչքի առջեւ ունենալով, պէտք է անոնց պատկերը, ոգի՛ն դրոշմենք մեր հոգիներուն մէջ, եւ հետեւինք անոնց օրինակին, իրենցմէ մնացած աւանդին պաշտպանութիւնը ստանձնելով: Կարելի չէ կարդալ որեւէ մէկուն կենսագրութիւնը եւ չհրճուիլ: Աւելի ճիշդ է՝ չուզել նրմանիլ անոնց: Անոնք՝ մեր մէկ աստուածային էակներ են, որոնք ծնան այս ժողովուրդի ծոցէն, խնկարկելու համար ազատութեան բազինին:

Համաշխարհային յեղափոխական պատմութեան մէջ չկայ որեւէ ազգ, որ այնպիսի անձնագոհ եւ հզօր կամքի տէր յեղափոխականներ ունեցած ըլլայ: Եւ, այս բոլորը կը պարտինք մեր ամէնահարազատ եւ անշահախնդիր կուսակցութեան՝ Հ.Յ. Դաշնակցութեան, որու շունչին տակ հասակ առաւ հերոսներու այս փաղանգը եւ անոր խիստ կարգապահական օրէնքներուն շնորհիւ գործեց հրաշքներ, փրկելով այս ժողովուրդը ամբողջական բնաջնջումէ: Արդարեւ, կուսակցութիւն մըն է Հ.Յ. Դաշնակցութիւնը, ծնած հայ ժողովուրդի միսէն եւ ոսկորէն, որ ներկայի իր վաթսունամեայ հասակովը կը կանգնի հայ իրականութեան մէջ աւելի քան երբեք առոյգ եւ կայտառ: Մի՛շտ պաշտպան մեր ազգի տարագիր խլեակներուն, միա՛կ իտէալով՝ «Մառայել մի՛միայն այս ժողովուրդին»: Ժողովուրդ մը՝ որուն կրած տառապանքները որեւէ ժողովուրդ չկրեց: Սակայն, ան տակաւին կը պահէ իր հաւատքը՝ ի՛ր իսկ յարութեան:

Կեանքը որ ապրեցան «Յեղափոխական Ալպոմ»ի հերոսները, կը կազմէ Հ.Յ. Դաշնակցութեան իրական պատմութիւնը: Պատմութիւն մը, որ շողախուած է ամէնավառ արիւնովը գաղափարապաշտ եւ անձնագոհ երիտասարդութեան մը, որ մէկգի ձգած անձնական հաճոյք եւ երջանկութիւն, բարձրացաւ լեռները, մնաց օրերով անօթի, ծարաւ, քնացաւ գետնի ցուրտ քարերուն վըրայ, ձիւներուն մէջ եւ կռուեցա՛ւ:

*
**

Փշոտ է ճանապարհը: Տակաւին ունինք տաժանագին վերելք մը՝ հասնելու համար մեր իտէալի իրականացման: Բայց օրինակ առնենք անոնցմէ, եւ չյուսահատինք: Ինչպէս անոնցմէ շատեր՝ որոնք տեսան վառ արշալոյսը, որ

ծագեցաւ 1918 Մայիս 28ին, Հայաստանի խաւար երկնակամարին վրայ: Կերտեցին անոնք հայրենիք մը, որ սակայն աւա՛ղ, հայ ժողովուրդի թշնամիներու դաւադրութեան զոհ դարձաւ երկուքուկէս տարեկան մանուկ հասակին:

Նոր սերունդ, գաղափարակի՛ց կրտսերներ, ձեզի՛ է խօսքս: Ունինք հայրենիք մը, որ բաժան-բաժան եղած է: Մէկ մասը՝ պարպուած է իր հարազատ բնակիչներէն: Հոն՝ բուերը կ'երգեն: Իսկ միւս մասին մէջ կայ անուանական «ազատութիւն» մը: Հոն հասակ կ'առնէ հայ նոր սերունդ մը, որ բուլշեւիկեան մեթոտներով մեծցած, կորսնցնելու վրայ իր իր հայու ոգին: Բուլշեւիզմը կը ջանայ եղծանել հայ ոգին եւ պատրաստել մեքենայ մարդեր, զուրկ՝ բարոյական գիտակցութենէ:

Մեր գործը պիտի ըլլայ կրե՛լ նաեւ անոնց բեռը մեր ուսերուն վրայ, որպէս «քաղցր լուծ»: Անդուլ աշխատանք է պէտք արտասահմանի մէջ, որպէս-զի, բախտաւոր օր մը, երբ արեւը պայծառ՝ ծագի մեր հայրենիքին վերեւ, եւ փայլի ազատութեան ծիածանը, կարողանանք ստանձնել մեզի ինկած պարտականութիւնը՝ հանդէպ ազգին եւ հայրենիքին: Հա՛յ մնանք, ապրինք մեր նախնիքներու աւանդութիւններով, հետեւինք անոնց լուսապայծառ ուղիին:

Այս բոլոր զոհողութիւնները կրնանք կատարել, եթէ այդ հերոսներու կեանքը մի՛շտ մեր աչքին առջեւ ունենանք: Իսկ այդ գիտակցութեան ամէնամեծ ազդակը կը հանդիսանայ «Յեղափոխական Ալպոմ»ի նման ամսօրեայ հրատարակութիւններ: Կարգա՛նք զանոնք, եւ սուրբ գիրքի մը նման պահենք մեր սնարին մօտ, որովհետեւ Յիսուսէ մը պակաս եւ տարբեր չմարտիրոսացան անոնք, որոնք հայ ժողովուրդի ազատութեան համար իրենց կեանքը զոհեցին:

«ԱՐԵՒԵԼՔ»
20 Սեպտեմբեր 1949
Յալէպ

**ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ
ՀԱՄԵՐԳԻՆ ԱՌԹԻՒ**

Ազգի մը մեծութիւնը կը չափուի ոչ թէ իր քանակով, երկրի տարածութեամբ եւ ունեցած հզօր բանակով, այլ՝ մշակութային հարուստ ժառանգութեամբ, արուեստագէտ գործիչներու փաղանգով եւ ժողովուրդին հասկացողութիւնը ու մօտեցումը՝ սիրելով, գնահատելով եւ քաջալերելով մշակութային որեւէ ձեռնարկ:

Ընդհանուր ազգաց պատմութենէն գիտենք, թէ ինչպէս հզօր եւ աշխարհակալ բազմաթիւ կայսրութիւններ ու պետութիւններ դադրած են գոյութիւն ունենալէ՝ չկարենալով ստեղծել ազգի մը գոյութիւնը ապահովող եւ տեւականացնող քաղաքակրթութիւն եւ մշակութային ամուր կռուաններ:

Բայց հայ ժողովուրդը, հակառակ «փոքր ածու» մը ըլլալուն, կրցած է գոյատեւել՝ դիմադրելով եւ պայքարելով իր գոյութեան սպառնացող բազմաթիւ արշաւանքներու, յաճախ անհաւասար ուժերով պատերազմելով, պահելու համար իր ինքնութիւնը եւ հայրենիքը:

Եւ, անշնչելի այդ պայմաններուն ներքեւ իսկ, վանքերու խցիկներու մէջ ճգնացած գրիչներ շարունակեցին գրել ու գծել աւետարաններ եւ այլ գիրքեր՝ հայկական զմայլելի մանրանկարչութեամբ զարդարուն, որոնք այսօր կը զարդարեն ազգային եւ միջազգային մատենադարաններ եւ հիացում կը պատճառեն այցելուներուն:

Հայ վարպետներ շարունակեցին շինել ճարտարապետական կոթողներ, վանքեր եւ տաճարներ, որոնք պատիւ կրնան բերել որեւէ քաղաքակրթուած ազգի:

Հայ ժողովուրդը, Ա. Աշխարհամարտին, ապրելէ եւ կրելէ ետք քսաներորդ դարու առաջին ցեղասպանութեան արհաւիրքները եւ հետեւանքները՝ երբեք յուսահատութիւն չճանչցաւ:

Նոյնիսկ Տէր-Ջօրի այրող աւազներու վրայ, մահուան դարպասին հասած, հայ մայրը, իր զաւկին կը սորվեցնէր հայ արուեստի եւ հանճարի գլուխգործոց Մեսրոպեան տառերը...:

Մեռած կարծուած հայ ժողովուրդը, յուսահատիլ չգիտցող այս ժողովուրդը, հրաշքով մը, Փիւնիկի նման յարութիւն առաւ մոխիրներէն եւ Սարդարապատով աշխարհով մէկ յայտարարեց Սասունցի Դաւիթի պէս.- «Կենդանի եմ, կը մնամ»:

Իսկ տարասփիւռ հայութիւնը, տարիներու թաւալումով բուժեց իր վէրքերը եւ սկսաւ վերակազմուիլ ապաստան գտած գաղութներու մէջ, կրկին ստեղծելով ազգային եւ մշակութային կեանք:

Գիտութեան եւ արուեստի բոլոր մարզերուն մէջ, միջազգային երկնակամարին վրայ սկսան փայլիլ հայ հռչակաւոր անուններ, համեմատաբար բաւական շատ, ուրիշ ազգերու հետ բաղդատելով, նկատի առնելով ազգային քանակութիւնները:

Սակայն, դժբախտաբար, վերջին 10-15 տարիներու Մերձաւոր Արեւելի երկիրներու քաղաքական վերիվայրումներու հետեւանքով, նոր գաղթ մը ծայր տուաւ դէպի աւելի ապահով երկիրներ:

Գանատահայութեան, որպէս կազմակերպուած գաղութ, պատմութիւնը կը սկսի 1965էն սկսեալ կարելի է ըսել եւ զօրացած վերջին 10 տարիներու ընթացքին:

Թորոնթոհայութիւնը՝ ի պատիւ իրեն՝ որուն թիւը 15 հազար չի հասնիր, վերջին տարիներուն, շնորհիւ կարգ մը «խենդ»երու յանդգնութեան, ունեցաւ հայութեան վայել Հայ Նոր Կեդրոն մը, ուր կը գործեն ազգային բոլոր միութիւնները եւ կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ Ամէնօրեայ Հայ Դպրոցը:

Իսկ Հայ Դպրոցը շուտով կ'ունենայ իր սեփական շէնքը՝ դպրոցական արդիական բոլոր յարմարութիւններով օժտուած, շնորհիւ հայ ժողովուրդի գիտակցութեան եւ զոհաբերութեան ոգիին:

Հայ Դպրոցի նոր շէնքին շինութեամբ, առիթ պիտի տրուի միութիւններուն, Հայ Կեդրոնին մէջ ունենալու մշակութային եռուն եւ այլազան գործունէութիւն:

Թորոնթոհայութիւնը ունեցաւ նաեւ Հ.Բ.Ը. Միութեան նախաձեռնութեամբ շինուած «Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրոն»ը, որ մեծածախս եւ բազմաթիւ յարմարութիւններով օժտուած շէնք մըն է:

Այս գաղութը՝ սկանջալուր ցեղին ձայնին՝ անգամ մըր եւս փաստեց, որ հայը շինարար եւ բարձր մշակոյթով օժտուած ազգ մըն է ու չկայ որեւէ ոյժ, որ կարենայ գինք հեռացնել իր արմատներէն:

Կարմիր ջարդերու արհաւիրքներէն անցանք անպատմելի զոհողութիւններով եւ խիզախումներով: Այսօր, մեզի կը սպառնայ անտեսանելի թըշնամին՝ ճերմակ ջարդը, որուն ճիրաներէն ալ պիտի ազատինք, շնորհիւ մեր մշակոյթին եւ անոր հաւատարիմ գործիչներուն անսահման զոհողութիւններուն, ինչպէս նաեւ հայրենիքի գոյութեան եւ հոնկէ զրկուած արուեստագէտներու հրաշագործ այցելութիւններուն:

Պիտի յաղթենք ճերմակ ջարդին, քանի կը շինենք մեր գոյութեան յենակները՝ եկեղեցիներ, դպրոցներ եւ կեդրոններ:

Քանի կը կազմենք միութիւններ եւ կազմակերպութիւններ՝ մշակութային, բարեսիրական, մարզական, երիտասարդական, եւ այլն:

Իսկ Թորոնթոյի Համագգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան երգչախումբին կազմութիւնը առհաւատչեան է մեր նպատակին, եւ նաեւ, մեր ինքնապաշտպանութեան ազդու զէնքերէն մէկը:

Այս շարժման գինուորները.-

Ղեկավար՝ վաստակաւոր երաժիշտ խմբավար Էդիկ Յովսէփեան եւ 155 հոգի, հաշուող պատկառելի խումբ մը:

Հայ երգի եւ երաժշտութեան նուիրեալներու այս բանակը, անտեսելով մեծ քաղաքի մը յատուկ հեռաւորութիւնները եւ խստաշունչ ձմեռուան դժուարութիւնները, ամիսներ շարունակ փորձի եկան, սորվեցան մեր սքանչելի երգերը եւ ներկայացան հանրութեան, տաքցնելու համար պաղ կլիմային ազդուած հայ զանգուածներու հոգիները՝ Կոմիտասով, Սայաթ-Նովայով, Ալթու-

նեանով եւ այլ հեղինակներու կողմէ յօրինուած հայերէն հոգեգմայլ ու քաղցրալուր երգերով:

Հազիւ մէկ տարի է անցեր Համազգայինի երգչախումբին կազմութեան թուականէն եւ արդէն երեք անգամ ելոյթ ունեցած է փառաւոր յաջողութեամբ:

Երգչախումբը իր անդրանիկ համերգը տուաւ 14 Յունիս 1981ին, Թորոնթոյի մէջ, երկրորդը՝ Պոսթընի Համազգայինի հրաւերով՝ 5 Դեկտեմբեր 1981ին, Պոսթընի մէջ, իսկ երրորդը՝ անհասկի...:

*
* *

Վերոյիշեալ խորհրդածուծութիւնները եւ մտածումները ժապաւէնի պէս կը տողանցէին երեւակայութեանս պատառին առջեւէն, երբ ներկայ եղայ Համազգայինի երգչախումբին զմայլելի եւ հպարտառիթ համերգին, որ տեղի ունեցաւ Կիրակի, 24 Յունուար 1982, երեկոյեան ժամը 7ին, Սենեքա Գոլէճի Սինքլէր ընդարձակ հանդիսասրահին մէջ:

Համերգը կը հովանաւորէր Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի եւ Գանատայի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Սրբ. Արք. Աշճեան: Սակայն, Սրբազանը ներկայ չկրցաւ գտնուիլ, Նիւ Եորքի մթնոլորտային աննպաստ պայմաններուն հետեւանքով:

Ներկայ էին՝ Հայց. Ս. Խաչ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Յուսիկ Քհնյ. Նշանեան, Հայ Աւետարանական համայնքի Հովիւ Վեր. Եսայի Սարմազեան, Հայ Կաթողիկէ համայնքի Հոգեւոր Հովիւ Գերշ. Տ. Եղիա Վրդ. Գիրէջեան, Օթթաուայի համալսարանի դասախօս Փրոֆ. Ճորճ Մխիթար, Մոնթրէալի Համազգայինի երգչախումբի երիտասարդ ղեկավար երաժիշտ Պետրոս Շուժոնեան եւ ութ հարիւրէ աւելի ունկնդիրներ, որոնք անտեսելով գերոյէն վար 20 աստիճան պաղի արգելքները, եկած էին հաղորդուելու հայ երգի եւ երաժշտութեան գարունին:

Երգչախումբի յանձնախումբի պատասխանատու ընկ. Կարօ Փաշայեանի կարգ մը յայտարարութիւններէն ետք վարձոյրը բացուեցաւ...

Հոյակապ տեսարան...

109 հոգի բեմին վրայ՝ սքանչելի ներդաշնակութեամբ եւ սրտառուչ գեղեցկութեամբ: Խմբավար էդիկ Յովսէփեան բեմ կու գայ՝ արժանանալով ներկաներուն ջերմ ծափողջոյններուն:

Կը սկսի յայտագրի առաջին մասը՝ քառաձայն «Տալուրիկ» երգով... ծափե՛ր... Ապա՝ 15 խմբերգներ եւ մեներգներ:

Ուրախութիւնը եւ յուզումը կը թրջեն աչքերը...:

Ի՛նչ հպարտութեան առիթ հայ ժողովուրդին համար:

Փոքրաթիւ՝ գաղութ, մեծաթիւ՝ երգչախումբ...:

«Եւ ինչո՞ւ պիտի չհպարտանանք... «Պ. Սեւակ»:

Յայտագրի երկրորդ մասը կը սկսի Գ. Ալէմշահի «Հայաստան» քառաձայն խմբերգով, ապա՝ 15 երգեր եւ մեներգներ:

Բոլոր երգերուն դաշնամուրով կ'ընկերակցէր ծանօթ դաշնակարուհի Ռիմա Մարտիրոսեան:

Իսկ մեներգողներն էին Տիկ. Լիւսի Ֆերմանեան, Պրն. Վահէ Գրիգորեան, Տիկ. Ալիս Եզնիկեան, Տիկ. Սաթիկ Գալստեան, Օր. Սեւան Մալխասեան, Պրն. Բաֆֆի Տէր Պօղոսեան եւ Տիկ. Լենա Պէյլէրեան:

Խմբերգներու վերջինն էր Ե. Սահառունիի «Քեզ Փառք»ը:

Ընդառաջելով ժողովուրդի խնդրանքին, յայտագրէն դուրս երգուեցաւ նաեւ «Սարգարապատը»:

Յոտընկայ ծափահարութիւններ եւ հուռուաներ...

Հիացում եւ գնահատանք...:

Համերգէն ետք, երգչախումբի անդամները՝ իրենց ընտանիքներով եւ Համագգայինի անդամներ հաւաքուեցան Հայ Կեդրոնի սրահին մէջ, տօնելու համար հայ երգի յաղթանակը:

Խօսք առին ընկ. Յակոբ Աթիկեան՝ երգչախումբի յանձնախումբին կողմէ, ընկ. Պետրոս Շուժունեան՝ Մոնթրէալի երգչախումբին կողմէ, ընկ. Սիմոն Հասըրճեան՝ Համագգայինի վարչութեան կողմէ եւ ընկ. Սոնա Յովհաննէսեան՝ Համագգայինի Շրջանային Վարչութեան կողմէ:

Բոլոր խօսողները դրուատեցին եւ գնահատեցին Համագգայինի երգչախումբի ղեկավար Էդիկ Յովսէփեանի եւ անդամ-անդամուհիներու տարած աշխատանքը եւ ճիգերը՝ այս ափերուն վրայ հայ երգի ջահը վառ պահելու եւ տարածելու կենսական գործին մէջ, շնորհաւորելով զանոնք ձեռք բերուած յաջողութեան առթիւ:

Ընկ. Ժիրայր Յովհաննէսեան կարդաց իր գրած չափածոյ գնահատականը՝ ուղղուած Էդիկ Յովսէփեանի անձին եւ գործին, արժանանալով ներկաներու գնահատանքին:

Իսկ ընկ. Մարտիկ Մնացականեան արտասանեց ազգայնաշունչ քերթըլած մը:

Տեղի ունեցան երիտասարդական տոհմիկ պարեր եւ երգուեցան ազգային երգեր:

Ներկաները ակամայ մեկնեցան գիշերուան ուշ ժամերուն, քիչ մը աւելի հայացած եւ կազդուրուած...:

«ՅՈՐԻՉՈՆ»
22 Փետրուար 1982

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՄԵՐԳ

Կազմակերպութեամբ Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ դպրաց դասին, Շաբաթ, 19 Յունիս 1983, երեկոյեան ժամը Ցին, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Սրբազան Համերգ:

Ս. Աստուածածին Եկեղեցւոյ 10-ամեակին առիթով կազմակերպուած սոյն համերգը նուիրուած էր Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Գերշ. Տ. Խաթակ Ծ. Վրդ. Յակոբեանի քահանայական ձեռնադրութեան 25-ամեակին:

Բացման խօսքով հանդէս եկաւ դպրապետ Պրն. Վարուժան Նիկոլեան:

Ապա, Պրն. Նիկոլեան ներկայացուց Հայր Սուրբը, տալով կենսագրական ամփոփ ծանօթութիւններ եւ որպէս Հայր Սուրբին դասընկեր Մեծի Տանըն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Դպրեվանքին մէջ, իր անձնական վկայութիւնները տուաւ Հայր Սուրբին Հայ Եկեղեցւոյ հանդէպ նուիրումին եւ մտաւորական կարողութիւններուն մասին:

Ս. Աստուածածին Եկեղեցւոյ կողմէ կազմակերպուած Սրբազան Համերգի յայտագիրը կը բաղկանար երկու մասերէ: Առաջին մասին ելոյթ ունեցաւ կրտսեր դպրաց դասը, իսկ երկրորդ մասին՝ երէց դպրաց դասը, ղեկավարութեամբ Եկեղեցւոյ դպրապետ Պրն. Վարուժան Նիկոլեանի եւ երգեհոնով ընկերակցութեամբ Տիկին Արաքսի Գասարճեանի:

Յայտագրի առաջին մասը սկսաւ «Խորհուրդ Խորին» շարականով, որուն յաջորդեց Եկեղեցւոյ «Հաւատամք»ը, մեներգողներ՝ Ն. Նիկոլեան, Կ. Քէպապճեան, Ռ. Ղազարեան, Վ. Պապեան, Ն. Սանոսեան եւ Ն. Աբգարեան, հինգէն տասը տարեկան մանուկներ:

Տիկին Արաքսի Գասարճեան, երգեհոնով նուագեց «Որ կազմեցիր» շարականը:

Կրտսեր դպրաց դասը կրկին բեմ գալով, յաջորդաբար երգեց «Սուրբ, Սուրբ», մեներգող՝ Ա. Աբգարեան, «Ամէն Հայր Սուրբ» եւ «Տէր Ողորմեա» (սարկաւազի բաժին՝ Ռ. Բաբխեան, Գ. Ուզունեան եւ Ս. Թելեան) շարականները:

«Եւ եւս խաղաղութեան» յիշատակութիւնը յաջողութեամբ ներկայացուցաւ: Սարկաւազի բաժինը կատարեց դպիր Ն. Պերեցեան:

Տասը վայրկեան դադարէ ետք, գործադրուեցաւ յայտագրի Բ. մասը, որ սկսաւ «Մեծացուցէ» եւ «Նոր Ծաղիկ» շարականներով: Երգչուհի Վարսենիկ Փափազեան երգեց «Տօնեմք» շարականը, որուն յաջորդեց երգչուհի Անի Իմաստունեան, որ երգեց «Ամէն Հայր Սուրբ» շարականը: Մոնթրէալէն հրաւիրուած երգչուհի Յասմիկ Գափասեան-Արզումանեան, որ իր երաժշտական ուսումը կատարելագործած է Երեւանի «Կոմիտաս»ի անուան երաժշտանոցին մէջ, երգեց «Հաւուն, Հաւուն» մեղեդին: «Եկեղեցին Հայկական» եւ «Խնկի Ծառ» երգերու երգչախումբին կողմէ երգուելէ ետք, երեք երգչուհիներ հերթականօրէն երգեցին շարականներ, արժանանալով ներկաներու ծափերուն. այսպէս՝ Յասմիկ Գափասեան երգեց «Տիրամայր» շարականը, Անի Իմաստունեան՝ «Յարեաւ Աստուածն» եւ Վարսենիկ Փափազեան՝ «Յորժամ» շարականը:

Մեծապէս գնահատելի էր երգչախումբի կողմէ երգուած Կանաչեանի «Նանոր»էն աղօթքի պատկերը:

Վերջին շարականի մեներգի բաժինը երգեց դպրաց դասի մեներգողներէն Իգապէլ Պայրագտարեան, որ երգեց «Պահապան ամենայնի»ն:

Յայտագրի վերջաւորութեան, դպրաց դասի յանձնախումբին կողմէ ծաղկեփունջեր նուիրուեցան խմբավարին եւ մեներգիչներուն, ապա, յանձնախումբի անունով խօսք առաւ Յասմիկ Թաթուլեան եւ շնորհակալութիւն յայտնեց խմբավարին, մեներգողներուն, երգչախումբի անդամներուն, ծաղիկները նուիրող «Ֆլէօր տ'Ամօր» հաստատութեան եւ բոլոր անոնց, որոնք օգնեցին եւ օժանդակեցին այս ձեռնարկի յաջողութեան:

Փակման խօսքով հանդէս եկաւ Խաժակ Մ. Վրդ. Յակոբեան, որ շնորհաւորելէ ետք մանուկներու եւ երէցներու դպրաց դասերու ելոյթները, գնահատեց դպրապետ Պրն. Վարուժան Նիկոլեանի անձնուէր աշխատանքը, յատկապէս մանուկներու դպրաց դասի կազմութեան եւ ելոյթ ունենալու առաջադրութեան մէջ:

Հայր Սուրբը անդրադառնալով իր քահանայական ձեռնադրութեան 25-ամեակին, ըսաւ, թէ ինք պարզ ծառայ մըն է հայ եկեղեցւոյ եւ կը հաւատայ, որ Հայաստանեայց եկեղեցին մեծ դեր ունի կատարելու հայ ժողովուրդի կրօնական եւ ազգային նկարագրի անեղծ պահպանման եւ ազգային մշակոյթի բարգաւաճման ասպարէզներուն մէջ:

Իսկ Սրբազան Համերգին իր ձեռնադրութեան 25-ամեակին նուիրելը ան նկատեց մեծագոյն գնահատանքը, զոր հայ եկեղեցական մը կրնայ ընդունիլ՝ գնահատուիլ Հայց. Եկեղեցւոյ շարականներու երգեցողութեամբ:

Ձեռնարկը փակուեցաւ Հայր Սուրբին «Պահպանիչ»ով:

Համերգէն ետք, դպրաց դասի յանձնախումբը ճաշկերոյթ-խրախճանք մը կազմակերպած էր եկեղեցւոյ Յովնանեան սրահին մէջ, որուն ներկայ գըտնուեցան երգչախումբի անդամներն ու անոնց պարագաները:

Խրախճանքին գործադրուեցաւ յանպատրաստից յայտագիր մը, ուր բազմաթիւ դպիրներ եւ դպրուհիներ հանդէս եկան այլազան երգերով: Մեծապէս գնահատելի էր երգչուհի Վարսենիկ Փափազեանի 10 տարեկան աղջկան – որ հայկական դպրոց յաճախելու բախտը չէ ունեցած Համիլթընի մէջ – արտասանութիւնը: Փոքրիկն Մարի Փափազեան արտասանեց Յովհաննէս Շիրազի «Իմ Հայրենիք» եւ Յովհաննէս Թումանեանի «Ո՞րն է պապս մեր հայրենիք» քերթուածները, ներկաներուն համբոյրներուն եւ ծափերուն արժանանալով:

Կը շնորհաւորենք Պրն. Վարուժան Նիկոլեանը եւ դպրաց դասը, այս մեծ յաջողութեան առթիւ, յուսալով, որ սրբազան գործը կը շարունակուի անընդմէջ:

«ՅՈՐԻՉՈՆ»
1983

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԳԻ-ՊԱՐԻ ՀԱՄՈՅԹԻ
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ
ԹՈՐՈՆԹՈՅԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻՆ**

Հայաստանի նշանաւոր պետական երգի-պարի համոյթը, Մայիս 29 եւ 30ին, Թորոնթոյի Մասէյ Հոլ սրահին մէջ երկու ելոյթ ունեցաւ, որոնց ներկայ եղան հայ երգի եւ պարի կարօտով տոչորուն Թորոնթոհայեր, իրենց հետ տանելով նաեւ գանատացի իրենց բարեկամները, ցոյց տալու համար անոնց, որ հայ ժողովուրդը բարձր մշակոյթով օժտուած ազգ մըն է:

Երգի-պարի համոյթի ղեկավարները, ընդառաջելով իրենց եղած հրաւէրին, Հինգշաբթի օր, Մայիս 31ին, այցելեցին Թորոնթոյի Ս. Սաչ Ամէնօրեայ Վարժարանի աշակերտութեան, ապա, Հայ Կեդրոն՝ Հ.Օ.Մ.ի Գոլոլեան նախակրթարանի եւ Պապայեան մանկապարտէզի աշակերտութեան, որ անհամբեր կը սպասէր հայաստանցի արուեստագէտներուն:

Հինգշաբթի, կէսօրէ ետք ժամը 3:30ին, համոյթի 75 հոգինոց խումբը եւ ղեկավարները ժամանեցին Հայ Կեդրոն, ուր դիմաւորուեցան աշակերտութեան եւ ներկայ ժողովուրդին կողմէ:

Վարժարանի աշակերտներէն երկու հոգի, մէկական ծաղկեփունջով բարի գալուստ մաղթեցին համոյթի գեղարուեստական ղեկավար Էմմա Ծատուրեանին եւ պարախումբի ղեկավար Ազատ Ղարիպեանին:

Հայ Կեդրոնի սրահին մէջ, վարժարանի աշակերտները հայրենի հիւրերուն ներկայութեան երգեցին եւ արտասանեցին հայկական գանազան երգեր եւ քերթուածներ:

Յուզում կար ներկաներուն սրտերուն մէջ: Հայրենիք-Սփիւռք, մէկտեղուած Հայ Կեդրոնի սրահին մէջ, որպէս մէկ ժողովուրդ կը միախառնուէին՝ նո՛յն զգացումներով, նո՛յն ապրումներու, նո՛յն մտահոգութիւններով:

Օրուան հանդիսավարն էր Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Վարչութեան ատենապետ ընկ. Անդրանիկ Արթինեան, որ կարգ մը հայրենասիրական խօսքերէ ետք, հրաւիրեց հայրենի արուեստագէտները պարով եւ նուագով խանդավառելու աշակերտութիւնը:

Համազգայինի վարչութիւնը, պատուելու համար հայրենի հիւրերը, շատ գեղեցիկ պտղասեղան մը շտկած էր, որուն շուրջ, համոյթի անդամները, Հայ Կեդրոնի ղեկավարները եւ վարժարանի պատասխանատուները մտերմիկ պահեր անցուցին:

Ընկ. Անդրանիկ Արթինեանի բարի գալուստի խօսքերէն ետք, հերթով խօսք առին ընկ. Յակոբ Ծանպագեան, ընկ. Մարգար Շարապխանեան եւ ընկ. Գալուստ Պապեան, որոնք ընդգծեցին Հայրենիք-Սփիւռքի մշակութային կապերու սերտացման անհրաժեշտութիւնը՝ ի խնդիր հայապահպանման եւ Հայ Դատի արգար լուծման:

Խօսողները թուեցին նաեւ այն բոլոր ճիգերը եւ զոհողութիւնները, գորս կ'ընեն հայ ծնողները եւ անհատները, Սփիւռքի մէջ հայ նորահաս սերունդը հայ լեզուով եւ մշակոյթով օժտելու եւ ձուլումի ահեղ ալիքներուն դէմ պայքարելու համար:

Հայրենի հիւրերէն՝ խօսք առին Ռոպեր Յակոբեան, Էմմա Մատուրեան եւ Ազատ Ղարիպեան, որոնք խօսեցան Հայաստանի վերածնունդին եւ հոն կատարուած մշակութային հսկայ իրադրծումներուն մասին: Անոնք իրենց հիացումը յայտնեցին Թորոնթոյի մէջ ստեղծուած մշակութային եւ ազգային եռուն գործունէութեան եւ դպրոցական ցանցին նկատմամբ, որոնք կը նպաստեն հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան եւ դոյատեման:

Հիւրասիրութեան աւարտին, Հայ Կեդրոնի անունով ընկ. Յակոբ Ճանպազեան հայրենի հիւրերը պատուեց Հայ Կեդրոնի «Քար մըն ալ ես դրի» ոսկեգօծ յուշանուէրով:

Փոխադարձաբար խումբի ղեկավարներէն Պրն. Ռոպեր Յակոբեան հայ դպրոցականերու յատուկ մեսրոպատառ յուշանուէրներ փոխանցեց ընկ. Արթինեանին:

Ստիպուած ըլլալով, հայրենի հիւրերը, մօտ մէկուկէս ժամ մնալէ ետք Հայ Կեդրոնի մէջ, մեկնեցան՝ ներկայ ժողովուրդի ծափողջոյններուն տարափին ներքեւ:

«ԳԱՆԱՏԱՅԱՅ»
23 Յունիս 1984



Բանաստեղծուհիներ՝ մայր ու աղջիկ՝ Մետաքսէ եւ Լիլիթ

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ
ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՆ
ԲԱՅԱՌԻԿ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ՊՄԱԿՈՒԵՑԱԽ**

Կիրակի, 24 Նոյեմբեր 1985, երեկոյեան ժամը 6:00ին, հայ կեդրոնի գեղազարդ սրահին մէջ, տեղի ունեցաւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան երգչախումբի յեղափոխական երգերու երեկոն:

Համազգայինի երգչախումբը, ղեկավարութեամբ վաստակաւոր խումբավար Էդիկ Յովսէփեանի, իր կազմութենէն ի վեր, տասէ աւելի համերգներով ներկայացած է հանրութեան, երգելով ընդհանրապէս՝ ազգային եւ գեղջկական երգեր: Սակայն, այս անգամ, մեր պաշտելի հայրուկներուն եւ հայ յեղափոխական երգերը՝ քառաձայն խմբերգով եւ մեներգով հրամցնելով հանրութեան, բացառիկ յաջողութիւն արձանագրեց, արժանանալով հայրենակարօտ եւ ազատատենչ ունկնդիրներու անվերապահ գնահատանքին, հայրենասիրական անկեղծ զգացումներու զարթօնքով, յուզումի տաք արտասուքներ խրլելով անոնց աչքերէն:

Այս առիթով, երգչախումբի յանձնախումբը սքանչելի գաղափարը յըղացած էր հրատարակելու գրքոյկ մը, ուր, յայտագրի կողքին, զետեղուած էր նաեւ երգուելիք երգերուն բառերը՝ կենսագրական ծանօթագրութիւններով:

Ինչո՞ւ այս համերգը:

Գրքոյկի ներածականին մէջ կ'ըսուէր.-

«Հայկական ազգային եւ յեղափոխական երգերու այս երգահանգէսը, զոր կը ներկայացնենք մեր գաղութին եւ մասնաւորապէս մեր երիտասարդ սերունդին, յարգանքի եւ սիրոյ համեստ տուրք մըն է հայ ժողովուրդի եւ հայրենիքի ազատութեան համար զոհուած այն հերոսներուն, որոնք ժողովուրդին սիրած բառերով կոչուեցան «Ճան Ֆետայիներ», «Հայոց Մարտիկներ»:

Ազգային եւ յատկապէս յեղափոխական երգերը, մեր պատմութեան վերջին հարիւրամեակին ծաղկած եւ տարածում գտած, ժողովրդական ստեղծագործութեան իւրայատուկ մէկ ոճը կը ներկայացնեն:

Անոնք յօրինուած են պարզ, երբեմն անգրագէտ մարդոց կողմէ, սրտաբուխ եւ զգացական բառերով պատմելու համար իր ազատութենէն զրկուած հայ մարդուն տառապանքը, վիշտերը, անզօր բողոքը, բայց յատկապէս երգելու համար անհաւատալի քաջութիւնը, սպառնալիքները եւ նոյնիսկ մահը արհամարհելով իրեն օգնութեան հասնող առասպելական Ֆետայիներուն, որոնք յանկարծ կը յայտնուէին վտանգի պահուն եւ իրենց փոքր խումբովը կը փրկէին անպաշտպան հայ գիւղացին կողոպտելու եկած թշնամիներէն:

Ազգային-յեղափոխական այս երգերը մեզի համար կարեւոր են, որովհետեւ անոնք ոչ միայն մեր ժողովուրդին մշակոյթին մէկ առանձին երեսը կը ներկայացնեն, այլ նաեւ անոր համար, որ այս երգերուն մէջէն կը վերակենդանանան դէպքերն ու դէմքերը հաւաւոր եւ սակայն անձնագոհութեան եւ դիւցազնական քաջագործութիւններով լեցուն այդ օրերուն:

Համազգայինի այս նախաձեռնությունն նպատակն էր, ուրեմն, մեր գաղութին եւ մեր երիտասարդութեան ծանօթացնել եւ կամ վերարժեւորել մեր ժողովուրդի ստեղծագործութեան մէկ յատուկ եւ թանկագին ժառանգութիւնը, մեր հասարակութիւնը եւ երիտասարդութիւնը գիտակից դարձնել այս երգերու հարազատ եւ ճշմարիտ մեկնաբանութեան, եւ այս բոլորէն վեր, մեր յիշողութիւններուն եւ կեանքերուն մէջ, ահագանգի մը պէս, որ մեզ միշտ ըզգաստութեան կը կանչէ, կենդանի պահել մեր ազգային պատմութեան մթնոթեամբ եւ լոյսով լեցուն այս կարեւորագոյն շրջանը:

Ուրեմն, վերոյիշեալ առաջադրութիւններով եւ նպատակով կազմակերպուած համերգը եւ յայտագրին մաս կազմող կարգ մը երգեր հարազատորէն եւ կարելի մեկնաբանութեամբ ներկայացնելու համար, կազմակերպչինէրը Լոս Անձեյըսէն յատկապէս հրաւիրած էր իր գեղեցիկ եւ տպաւորիչ ձայնով հանրածանօթ ազգային յեղափոխական երգերու նշանաւոր երգիչ Յովիկ Գրիգորեանը:

Երգչախումբին կ'ընկերանար Համազգայինի նորակազմ նուագախումբը, հետեւեալներով.–

Վանիկ Յովհաննէսեան՝ դաշնամուր, Զաքարիա Նուրեան՝ դափ, Կարօ Քէպպպեան՝ թմբուկ, Պերճ Փանոսեան՝ ֆլութ, Ռէյ Սպասովսկի՝ քլարինէթ, Լեւոն Իշխանեան՝ կիթառ:

Յայտարարուած ժամանակէն առաջ հոծ թիւով ազատատենչ հայրդիներ արդէն իրենց տեղերը գրաւած էին Հայ Կեդրոնի ընդարձակ սրահին մէջ: Համերգի բացումին արդէն սրահը կը յորդէր բազմութեամբ:

Յայտագրի առաջին մասը սկսաւ Պետրոս Սեմերճեանի յիշատակին «Վէրքերով լի ջան Ֆետայ եմ» խմբերգով (մշակում՝ Ալֆրետ Մարգոյեանի):

Համազգայինի երգչախումբի հարիւրի մօտ անդամներուն կողմէ երգուած երգը, ընկերակցութեամբ նուագախումբին, առաջին իսկ առթիւ, զօրաւոր տպաւորութեամբ վերջացաւ:

Բեմին վրայ, որոշ բարձրութեամբ, յատկապէս հաստատուած պաստառին վրայ, երգուած բոլոր երգերուն հետ առընթեր, սահիկներով կը ցուցադրուէին հայդուկներու նկարները, Դաշնակցութեան զինանշանը, Անկախ Հայաստանի պետական զինանշանը, Հայաստանի որոշ շրջաններու տեսարանները եւ այլ նկարներ, վառ պահելով ներկաներու լսողական եւ տեսողական զգայարանները՝ ազգային-յեղափոխական հոգեշունչ կրակով:

Երկրորդ երգը՝ «Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին» խմբերգը (մշակում՝ Էդ. Մինի) կրկին խոր ապրումով երգուեցաւ:

Մեներգիչ Յովիկ Գրիգորեան, ժողովուրդի որոտընդոստ ծափահարութիւններու ներքեւ բեմ եկաւ եւ հերթականօրէն երգեց «Անդրանիկ Փաշա», «Ղարիպ Մշեցի» եւ «Քեռի»ին երգերը:

Երգչախումբը, ոգեւորուած ժողովուրդին քաջալերական ընդունելութենէն, երգեց Սարգիս Կուկունեանի նուիրուած «Երբ այլևի՞նչ ծովու վրայ» (մշակում՝ Ա. Մարգոյեան) եւ Համազգասպի նուիրուած «Ծագեց արեւ ազատութեան» երգերը (մշակում՝ Վ. Մարգարեան):

Սրահը հայրենասիրական մթնոլորտով պարուրուած փոքրիկ Հայաստանի մը վերածուած էր կարծես: Աչքերս արթօնարագօ՞ծ կը յուզուէի դիտելով

կարգ մը վերապրողներու թաց աչքերը եւ լսելով իրենց հոգիին խորերէն արձակուած հառաչները. կը մտածէի, թէ քանի գոյութիւն ունեցած են ու ներկայիս ալ գոյութիւն ունին անձնագոհ հայ ֆետայիներ, աշխարհի վրայ ոչ մէկ ոյժ կրնար բանտել հայու ազատատենչ հոգին եւ բնաջնջել հայ ժողովուրդը:

Կրկին բեմին վրայ է երգիչ Յովիկ Գրիգորեան, իր պարթեւ հասակով եւ ֆետայիի հոգիով, որ երգեց «Խանի երգը», «Արամ Արամեանի երգը» եւ «Վան» երգը: Վերջինը՝ խօսք եւ երաժշտութիւն Արմէն Մանդակունեանի:

Հայ առասպելական հերոս Սերոբ Աղբիւրի եւ անոր առիւծասիրտ կնոջ Սոսէի նուիրուած երգը՝ «Գնդակ որոտաց» (մշակում՝ Ա. Մարդոյեանի) եւ մըշեցու մօր երգը «Խուժան Ասկեար» (Մշակում՝ Էդ. Մին.ի) խանդավառութեամբ երգուեցաւ երգչախումբի կողմէ:

Յայտագրի առաջին մասը վերջացաւ ներկաներու գնահատական երկարատեւ ծափահարութիւններով:

Յայտագրի երկրորդ մասը սկսաւ «Հալածուած ենք Հայաստանի լեռներէն» (խմբերգ, մշակում՝ Ա. Մնակեանի) եւ «Ձայն տուր, ո՛վ Ֆետայ» (մշակում՝ Ա. Մնակեանի) երգերով:

Յովիկ Գրիգորեան, որ օրուան խորհուրդին մեկնաբանութեամբ տողորուած անպարփակ ոգեւորութեամբ ապրումի սրտագեղ պահեր կ'ապրէր եւ կու տար իր պատգամը ժողովուրդին երգուած երգերուն բառերուն ընդմէջէն, հերթականօրէն երգելով «Հայ ենք մենք», «Սասուն Գաւառ» եւ «Անի» երգերը (վերջինը՝ խօսք եւ երաժշտութիւն՝ Արմէն Մանդակունեանի):

Այս անգամ, երգչախումբը կը փոխանցէր հին պատգամը՝ «Ի զէն հայեր ի սուր եւ ի հրացան» երգով (մշակում՝ Էդ. Մին.ի) եւ Գարեգին Նժդեհի երգը՝ «Արագի ափին ծնած ընկեր» (մշակում՝ Էդ. Մին.ի):

Երգիչ Յովիկ Գրիգորեան, վերջին անգամ բեմ գալով, յաջորդականօրէն երգեց «Անմար մնաս», «Սասուն» եւ «Բաբգէն Սիւնիի Մահը» երգերը:

Իսկ երգչախումբի վերջին երկու երգերը նուիրուած էին Հ.Յ. Դաշնակցութեան՝ «Արիւնոտ Դրօշ» (մշակում՝ Ա. Մարդոյեան) եւ Կամաւորական Քայլերգ՝ «Յառաջ Նահատակ» (խմբերգ, մշակում՝ Բ. Կանաչեան) հայ ազատագրական պայքարին, որուն ունկնդրութիւնը տեղի ունեցաւ յոտընկայս:

Յայտագիրը սպառած էր: Սրահը կ'եռար ծափերու աղմուկով եւ գնահատանքի արտայայտութիւններով:

Յանկարծ, ծափերու նոր տարափով մը եւ բացազանչութիւններով, միաձուլուած խնդրանք մը – «Սարդարապատ», «Սարդարապատ»...: Խմբավար ընկ. Էդիկ Յովսէփեան, ինքն ալ խանդավառ ու ոգեւորուած, ընթացք տուաւ ժողովուրդի փափաքին եւ երգչախումբը յայտագրէն դուրս երգեց ամէն հայու սրտին այնքան մօտիկ՝ հայու պատիւը եւ ինքնութիւնը պաշտպանող դիւցազներգութիւնը՝ «Սարդարապատ» երգը:

Այս առթիւ, մեր սրտագին շնորհաւորութիւնները կը յայտնենք Համազգային Հայ Մշակութային Միութեան Թորոնթոյի մասնաճիւղի վարչութեան, երգչախումբի յանձնախումբին ժրջան անդամ-անդամուհիներուն եւ մասնաւորաբար խմբավար Էդիկ Յովսէփեանին, դաշնակահար Վանիկ Յովհաննէսեանին, նորակազմ նուագախումբին ու երգչախումբի բոլոր անդամ-անդամուհիներուն անխտիր, որոնց անհուն գոհողութիւններուն եւ նուիրու-

մին շնորհիւ կարելի եղաւ վայելել յեղափոխական երգերու երեկոն եւ սատարել անոր կատարեալ յաջողութեան:

Որքան ցանկալի պիտի ըլլար, որպէսզի ուրիշ հայահոծ գաղութներ եւ ըստ կազմակերպէին նման հայակերտ ձեռնարկներ, որոնց նպատակը պիտի ըլլար կենդանի պահել հայու հոգին այս խորթ ափերուն վրայ եւ հայ նոր սերունդին փոխանցել հպարտութեան դէպքերու եւ դէմքերու պատմութիւնը:

Իսկ եթէ կարելի չըլլայ տեղական ուժերով նման ձեռնարկներ կազմակերպել, նիւթական որոշ յանձնառութիւններու գնով հրաւիրել Թորոնթոյի Համագգայինի պատուաբեր երգչախումբը, որպէսզի իր առաքելութիւնը սիրով կատարէ:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ»
9 Յունուար 1986



Երաժշտագետ-խմբավար Էդիկ Յովսէփեանի (կեդրոնը)
եւ գրագետ Կարապետի հետ

ՀԱՅ ԵՐԳՐ ՅԱՒԵՐԺ՝ ԱՐԱՐԱՏԻ ՊԷՍ

Հայ երգը զուլալ աղբիւր կենսայորդ՝
Ձայներանգներով յաւերժահնչիւն,
Յեղային զարթօնք, ազգահաւաքում,
Հայրենական հող, հայրենի կարօտ:

Գր. Հոթոյեան

Համազգային Հայ Մշակութային Միութեան «Գուսան» երգչախումբի 10-ամեակի տարեկան համերգը տեղի ունեցաւ Շաբաթ, 9 Յունիս 1990, երեկոյեան ժամը 8:00ին, Ուլինսթրն Չըրչիլ Վարժարանի հանդիսասրահին մէջ, ներկայութեամբ շուրջ 1,200 հայորդիներու, որոնք եկած էին հայեցիութեամբ ու գեւորութեամբ, հայօրէն խանդավառուելու եւ շնչելու հայ երգի եւ երաժշտութեան կենսայորդ մ'իծնորոտէն:

Ձեռնարկին իր մասնակցութիւնը կը բերէր Լոս Անճելըսէն «Բերդ» պարախումբը՝ ղեկավարութեամբ հանրածանօթ պարուսոյց Հերի Աբգարի:

Բացման խօսքով հանդէս եկաւ օրուան հանդիսավար Մարգար Շարպխանեան, անդրադառնալով Համազգայինի առաքելութեան եւ Համազգայինի «Գուսան» երգչախումբին եւ անոր արժանաւոր ղեկավարին՝ երաժիշտ-խմբավար Էդիկ Յովսէփեանի տասնամեայ վաստակին՝ այս ափերուն վրայ հայ երգն ու երաժշտութիւնը վառ ու կենդանի պահելու նուիրական գործունէութեան:

Յայտագրի առաջին մասին մէջ «Բերդ» պարախումբը հանդէս եկաւ «Լէզգի» պարով, ապա, մենակատար Վահէ Գրիգորեան, դաշնակի ընկերակցութեամբ Մարիա Մանանեանի երգեց՝ «Բարի Արագիլ», խօսք՝ Աշոտ Գրաչի, երաժշտութիւն՝ Ալ. Հեքիմեանի եւ «Գուսանի Երգը» (Դաւիթ Բէկէն), երաժշտութիւն՝ Արմէն Տիգրանեանի:

Յաջորդաբար մեներգեցին՝ Անահիտ Բաբայեան՝ «Անուշի Երգը» (Անուշ), խօսք՝ Յովհաննէս Թումանեանի, երաժշտութիւն՝ Ա. Տիգրանեանի եւ «Յասմիկին Երգը», խօսք՝ Ղուկասեանի, երաժշտութիւն՝ Արամ Խաչատուրեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Մարիա Մանանեանի եւ Ռաֆֆի Տէր Պօղոսեան՝ «Թոյլ Տուէք Դառնամ», խօսք՝ Թափառականի, երաժշտութիւն Ալֆրէտ Մարդոյեանի եւ «Աչուղն է խօսում», խօսք՝ Աչուղ Յովնանի, երաժշտութիւն՝ Էդիկ Յովսէփեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Վանիկ Յովհաննէսեանի:

«Բերդ» պարախումբը ներկայացուց երեք պար՝ «Նուպար», «Տղաների պար» եւ «Մուրազ»:

Մոնթրէալէն յատկապէս հրաւիրուած Կարօ Նշանեան երգիչը, իր տըր պաւորիչ պաս-պարիթոն ձայնով երգեց «Մովի Երգը», խօսք՝ Հ. Կոստանեանի, երաժշտութիւն՝ Ա. Մայիլեանի եւ «Շար Նազանի», երաժշտութիւն՝ Ա. Յովհաննէսի, դաշնամուրի ընկերակցութեամբ Մարիա Մանանեանի:

«Բերդ» պարախումբի վերջին պարն էր «Ապարան»ը:

Իրապէս մեծ անակնկալ մըն էր Լոս Անճելըսէն հիւրաբար ժամանած մենակատար Սաբօ Նազարեանի տպաւորիչ եւ խանդավառող ելոյթը: Սաբօ Նազարեան, իր հմայիչ պաս ձայնով եւ համարձակ արտայայտութեամբ երգեց «Ոտքի Հայ Ժողովուրդ» երգը, խօսք եւ երաժշտութիւն՝ Յ. Հարոյեանի, դաշնամուրով ընկերակցութեամբ կրկին Լոս Անճելըսէն Ալէնուշ Նազարեանի:

Բոլոր մենակատարներու երգերը ունկնդիրներու որոտընդոստ ծափերուն արժանացան:

15 վայրկեան դադարէ ետք, գործադրութեան դրուեցաւ յայտագրի երկրորդ մասը, որ ընդհանրապէս կը բաղկանար «Գուսան» երգչախումբի քառաձայն երգերով:

90 երգողներէ բաղկացած երգչախումբը, ղեկավարութեան խմբավար էդրիկ Յովսէփեանի եւ դաշնամուրի ընկերակցութեամբ Վանիկ Յովհաննէսեանի հերթականօրէն երգեց. «Դարձեալ Փայլեց», մշակում՝ Հ. Գասպարեանի, «Ով Հայոց Աստուած», երաժշտութիւն՝ Մակար Եկմալեանի, «Ապրիլեան Քայլերգ», խօսք՝ Ա. Գառօնէի, երաժշտութիւն՝ Հ. Գասպարեանի, «Հայրենիքիս հետ», խօսք՝ Յ. Թումանեանի, երաժշտութիւն՝ Ալ. Յարութիւնեանի, մենակատարներ՝ Վահէ Գրիգորեան եւ Անահիտ Բաբայեան:

Մենակատար Ռիմա Ղարախանեան, իր հմայիչ ձայնով երգեց «Վախենամ Քնեմ եւ Կանաչ ու Կարմիր», մշակում՝ Ռուբիկ Գրիգորեանի եւ «Մշոյ Աղջիկ», խօսք եւ երաժշտութիւն՝ Գուսան Շահէնի: Ներկաներու ծափողջոյններուն եւ կրկնութեան խնդրանքին ընդառաջելով երգչուհի Ղարախանեան յայտագրէն դուրս երգեց երգ մը եւս:

Ապա, երգչախումբը երգեց «Պողպատակուռ»ը, խօսք՝ Արամ Գառօնէի, երաժշտութիւն՝ Ալֆրէտ Մարգոյեանի եւ «Գարահիսար»ը, մշակում՝ Ա. Մարդոյեանի, մենակատար՝ Վրէժ Մասոյեան:

Գուսան Աշոտի «Յուշարձաններ»ը, մշակում՝ Աշոտ Պատմագրեանի, մենակատար՝ Հ. Զօհրապեան եւ Սայաթ Նովայի «Ուստի Կու գաս»ը, «Կռունկները», երաժշտութիւն՝ Խ. Աւետիսեանի, «Մառիս Տակը Կանաչ է», մշակում՝ Դ. Ղազարեանի, «Առնեմ Ելլեմ եւ Լորքէ», մշակում՝ Ռ. Գրիգորեանի, մենակատարներ՝ Սաբօ Նազարեան եւ Հելէն Զօհրապեան:

Սիլվա Յարութիւնեան, որպէս հմուտ երգչուհի, իր մեղմ ու թաւշային ձայնով երգեց երկու երգ, «Մարալ», մշակում՝ Ռ. Գրիգորեանի եւ Սայաթ Նովայի «Աշխարհում ա՛խ չեմ քաշի», արժանանալով ունկնդիրներու ջերմ գընահատանքին եւ անդադրում ծափահարութիւններուն, որոնց ընդառաջելով երգչուհին երգեց յայտագրէն դուրս «Հոյ Նար» երգը:

Երգչախումբը երգեց «Պաղ Աղբիւրի Մօտ եւ Գացի Արտեր»ը, մշակում՝ Կարա-Մուրզայի, մենակատար՝ Վրէժ Մասոյեան, «Երգ Մասիսին», երաժշտութիւն՝ Ալ. Յարութիւնեանի, մենակատար՝ Սիլվա Խաչիկեան եւ «Հելէ-Հելէ», մշակում՝ Բարսեղ Կանաչեանի:

Յայտագիրը վերջ գտած էր: Սակայն ներկաներու գնահատական ծափողջոյններով պահանջեցին «Մարդարապատ» երգը, որ երգուեցաւ երգչախումբին կողմէ:

Համերգին ներկայ էին ծանօթ երաժիշտ-խմբավարներ՝ Ռուբիկ Գրիգորեան եւ Ալֆրէտ Մարդոյեան, որոնց հեղինակութիւններէն կարգ մը երգեր յայտագրին մաս կը կազմէին: Խմբավար Էդիկ Յովսէփեանի խնդրանքով մեծահամբաւ եւ վաստակաւոր երաժշտագէտ-խմբավար Ռուբիկ Գրիգորեան բեմ բարձրացաւ եւ իր գնահատանքը յայտնելէ ետք «Գուսան» երգչախումբին եւ անոր ղեկավարին՝ Էդիկ Յովսէփեանին, իր պատգամը տուաւ ներկայ ժողովուրդին, ընդգծելով հայ երգին եւ երաժշտութեան կարեւորութիւնը հայ ժողովուրդի գոյատեւման պայքարին մէջ:

«Գուսան» երգչախումբի անդամները բեմ եկան եւ բոլոր մենակատարներուն, երգիչ-երգչուհիներուն եւ «Բերդ» պարախումբի ղեկավարին եւ անդամներուն նուիրեցին մեխակներ: Իսկ տասը տարի երգչախումբին մաս կազմողները ստացան յատկապէս պատրաստուած «գնահատագիր»ներ Համագրայինի վարչութեան կողմէ:

Համերգի աւարտին, հայ կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ խրախճանք, որուն մասնակցեցան հոծ թիւով համագրայնականներ եւ հիւրեր, որ տեւեց մինչեւ առաւօտեան ժամը 3:00:

«ՆՈՐ ԿԵԱԼՔ»
12 Յուլիս 1990

ԱՆԽՈՆՁ ՄՇԱԿԸ ԱՐԺԱՆԻ Է ՄԵԾԱՐԱՆՔԻ

Հայ երաժշտութեան անդաստանին մէջ,
Քառասունամեայ վաստակով բեղուն,
Պիտ' փայլի ընդմիշտ՝ ճաճանչով անշէջ,
Լուսաւորելով ամէն հայու տուն:

Գրիգոր Գոթոյեան

Համագգային Հայ Մշակութային Միութեան Թորոնթոյի մասնաճիւղի «Գուսան» երգչախումբի վաստակաւոր ղեկավար Էդիկ Յովսէփեանի երաժշտական եւ ուսուցչական 40-ամեայ գործունէութեան նուիրուած յոբելեանական հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 10 Յունիս, 1990, երեկոյեան ժամը 7ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ շուրջ 600 երաժշտասէր ազգայիններու:

Երաժշտագէտ-խմբավար Էդիկ Յովսէփեանի յոբելեանին ներկայ գլուխուէր եւ իրենց երախտագիտական զգացումները յայտնելու համար Թորոնթո ժամանած էին տաղանդաւոր երաժշտագէտ-խմբավարներ Ռուբիկ Գրիգորեան՝ Պոսթընէն, Ալֆրէդ Մարգոյեան՝ Լոս Անճելըսէն, Իրանի խորհրդարանի նախկին անդամ Սեւակ Սագինեան՝ Լոս Անճելըսէն, ինչպէս նաեւ Պոսթընէն, Նիլ Եորքէն, Նիլ Ճըրզիէն, Լոս Անճելըսէն, Մոնթրէալէն, Գերմանիայէն, Ջուրիցերիայէն, Ֆրանսայէն եւ այլ վայրերէն՝ մեծարուող խմբավարին նախկին աշակերտները, գործակիցներն ու բարեկամները՝ շուրջ հարիւր հոգի, որոնք անտեսելով հեռաւորութիւնը, ձգելով իրենց ամէնօրեայ զբաղումները, ամէն գոհողութիւն յանձն առնելով եկած էին իրենց սէրն ու գնահատանքը յայտնելու իրենց վաստակաւոր ուսուցչին, ղեկավարին, գործակիցին եւ բարեկամին:

Հանդիսութեան բացումը կատարեց Յոբելեանական Յանձնախումբի ատենապետ Լէօնիդ Օհանեան:

Պատկերիզով արձանագրուած Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Գարեգին Բ-ի պատգամը՝ ուղղուած յոբելեարին, ներկայացուեցաւ պաստառի վրայ:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ օրուան հանդիսավար՝ Լուսին Գլըճեան, որմէ ետք, Մոնթրէալէն յատկապէս հրաւիրուած ծանօթ երգիչ Կարօ Նշանեան երգեց «Լէպլէպուճի Հոր-Հոր Աղա»՝ «Կարինէ» օփերայէն քառեակներ, արժանանալով ունկնդիրներու բարձր գնահատանքին:

Օրուան բանախօս Լեւոն Հասըրճեան, խօսք առնելով տուաւ կենսագրական ծանօթութիւններ Էդիկ Յովսէփեանի մասին, անդրադառնալով անոր ուսուցչական, երաժշտական եւ խմբավարական կեանքին եւ գործունէութեան՝ Պարսկաստանի եւ Գանատայի մէջ:

Էդիկ Յովսէփեանի աշակերտուհիներէն՝ հիանալի եւ շնորհալի երգչուհի Անահիտ Հալէպի (Լոս Անճելըսէն), ապրումով եւ յուզումով երգեց Սայաթ Նովայէն «Դու էն գլխէն» եւ «Քեամանչա» երգերը, դաշնամուրի ընկերակցութեամբ Ալենուշ Նազարեանի:

Հայ կեդրոնի կողմէ խօսք առաւ Յակոբ Ճանպարհեան եւ Էդիկի վաստակը վերլուծելով, ընդգծեց կարեւորութիւնը հայ երգին ու երաժշտութեան, որպէս հայ մշակոյթի սրտագին արտայայտութիւն եւ արուեստի հոգեկան ըմբռնում:

Օրուան երգչախումբի մենակատար Սիլվա Յարութիւնեան, դաշնամուրի ընկերակցութեամբ Վանիկ Յովհաննէսեանի, երգեց «Էլ մի՛ արտասուիր», մշակում՝ Ռ. Գրիգորեանի եւ «Քանի վուր ջան իմ» (Սայաթ Նովա) երգերը:

Համազգայինի խօսքով հանդէս եկաւ Ռուբիկ Մնացականեան, իսկ «Գուսան» երգչախումբի կողմէ Պէթի Գարակէօզեան:

Լոս Անճելըսէն Սաքօ Նազարեան, դաշնամուրի ընկերակցութեամբ Ալենուշ Նազարեանի, իր տպաւորիչ ձայնով երգեց երկու երգ:

Ապա բեմ հրաւիրուեցաւ յոբելեար Էդիկ Յովսէփեանի ուսուցիչ, մեծահամբաւ խմբավար-երաժշտագէտ Ռուբիկ Գրիգորեան, որ իր սրտի խօսքն ըսելէ ետք՝ երբեմնի իր աշակերտին, տուաւ իր պատգամը ներկայ ժողովուրդին, որպէսզի աւելի եւս փարին հայ երգին ու երաժշտութեան, զայն տարածելով եւ սիրցնելով հայ մատղաշ սերունդին:

Ճաշի ճոխ սպասարկութենէ ետք, տեղի ունեցաւ սահիկներու ցուցադրութիւն՝ Էդիկ Յովսէփեանի քառասնամեայ ուսուցչական եւ երաժշտական կեանքին շուրջ, մեկնաբանութեամբ Յասմիկ Շարապխանեանի եւ Պետիկ Միքայէլեանի:

Համազգայինի «Գուսան» երգչախումբի ութեակը, որ կը բաղկանար Գէորգ Ճիգմէճեանէ, Յովհաննէս Գրիգորեանէ, Վահէ Գրիգորեանէ, Վրէժ Մասոյեանէ, Անահիտ Բաբայեանէ, Սօսի Գալլպճեանէ, Շաքէ Ֆէրմանեանէ եւ Հէլէն Զօհրապեանէ, երգեց չորս երգ, դաշնամուրի ընկերակցութեամբ Վանիկ Յովհաննէսեանի:

Հաճելի եւ տպաւորիչ անակնկալ մը պատրաստած էին Լոս Անճելըսէն եկող Էդիկի նախկին աշակերտները, ընկերները եւ երգիչները: Քառասուն հոգինոց երգչախումբ մը կազմած, դեկավարութեամբ Սաքօ Նազարեանի, սքանչելիօրէն ներկայացուցին փունջ մը խմբերգներ: Սրտի խօսքով եւ մեներգներով հանդէս եկան Լիլիթ Պաղտասարեան, Յոլակ Աւետիսեան, Անահիտ Հալչպի եւ Սիլվա Յարութիւնեան:

Համազգայինի Թորոնթոյի վարչութեան ատենապետ Ժիրայր Յովհաննէսեան, իր յատուկ ոճով ողջունեց Էդիկ Յովսէփեանի յոբելեանը:

Այս առիթով, Էդիկ Յովսէփեանի նախկին աշակերտները, ընկերները եւ երգչախումբերու անդամները, Թորոնթոյի Համազգայինի վարչութիւնը, երգչախումբի յանձնախումբը, յոբելինական յանձնախումբը, Լոս Անճելըսէն Տոքթ. Ալէք Տէր Պօղոսեան, Թորոնթոյէն Տէր եւ Տիկին Եղիա Սիւմպիլեան նուէրներով եւ յուշատախտակներով յարգեցին յոբելեարը եւ անոր ուժ եւ կորով ներշնչող կողակիցը՝ Յասմիկ Յովսէփեանը:

Յոբելինական յանձնախումբի նուէրը՝ Տէր եւ Տիկին Էդիկ Յովսէփեանի Հայաստան երթուղարձ տոմսը իրապէս խոր մտածուած արարք մըն էր: Էդիկ, Հայաստան երթալով, շաղախուելով հայրենի ժողովուրդին հետ, հազորդուելով հայ մշակոյթի ակունքներէն, նոր շունչ եւ աւել յստացած, պիտի շա-

րունակէ երիտասարդի մը խանդավառութեամբ սպասարկել հայ երգի եւ երաժշտութեան տաճարին:

Յոբելինական յանձնախումբի անդամները բեմն են: Խօսք կ'առնէ յոբելեար Էդիկ Յովսէփեան, եւ իր շնորհակալութիւնները կը յայտնէ բոլոր կազմակերպութիւններուն, միութիւններուն, յանձնախումբերուն, երգչախումբի անդամներուն, որոնց ամիսներու տքնաջան աշխատանքին շնորհիւ կարելի եղաւ կազմակերպել սոյն յոբելինական հանդիսութիւնը, որ իր անձին ընդմէջէն կ'երթայ հայ երգին եւ երաժշտութեան: Իր շնորհակալութիւնները յայտնեց նաեւ տարբեր երկիրներէ եւ քաղաքներէ եկած իր նախկին աշակերտներուն, գործակիցներուն եւ բարեկամներուն:

Գեղարուեստական յայտագիրը վերջ գտած էր: Կարգը եկած էր շնորհակալութեան եւ յիշատակի նկարներու: Այս առթիւ խնամքով տպագրուած եւ սեղաններու վրայ գետեղուած յուշամատենանը առիթ տուաւ մակագրութեան: Հարիւրաւորներ կարգի կը սպասէին, որպէսզի Էդիկ Յովսէփեանը, Ալֆրէդ Մարդոյեանը եւ Ռուբիկ Գրիգորեանը մակագրէին զանոնք:

Հանդիսութեան վերջաւորութեան տեղի ունեցաւ խրախճանք եւ պար, մինչեւ առաւօտեան ժամը երեքը:

Յիշատակելի եւ պատմական շաբաթավերջ մը Թորոնթոյի հայութեան համար:

Պատիւ արժանաւորաց:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ» ԵՎ «ՅՈՐԻՉՈՆ»
5 Յուլիս 1990

ԷԴԻԿ ՅՈՎԱՄԷՓԵԱՆԻ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ

Ազգի մը մեծութիւնը կը չափուի ոչ թէ իր քանակով, երկրի տարածութեամբ եւ ունեցած հզօր բանակով, այլ՝ մշակութային հարուստ ժառանգութեամբ, արուեստագէտ գործիչներու փաղանգով: Ընդհանուր ազգաց պատմութենէն գիտենք, թէ ինչպէս հզօր եւ աշխարհակալ բազմաթիւ կայսրութիւններ ու պետութիւններ դադրած են գոյութիւն ունենալէ՝ չկարենալով ստեղծել ազգի մը գոյութիւնը ապահովող եւ տեւականացնող քաղաքակրթութիւն ու մշակութային ամուր կռուանները:

Այն ազգերը, որոնք հարուստ են մշակութով կ'ապրին եւ կը գոյատեւեն, որովհետեւ մշակութիւնը հոգեկան ուժի արտայայտութիւն է: Այդ ուժը անմատչելի բերդ է, որեւէ թշնամի չի կրնար գրաւել եւ ոչնչացնել զայն:

Հայ ժողովուրդը հակառակ «Փոքր Ածու» ըլլալուն, կրցած է գոյատեւել՝ դիմադրելով եւ պայքարելով իր գոյութեան սպառնացող բազմաթիւ արշաւանքներու, հալածանքներու եւ ջարդերու, յաճախ անհաւասար ուժերով պատերազմելով, ի խնդիր իր ինքնութեան եւ հայրենիքի պաշտպանութեան:

Եւ, բարեբախտաբար, հայ ժողովուրդը, իր կազմութենէն ի վեր, միշտ ունեցած է մշակութիւն նուիրեալ անխոնջ ծառաներ, որոնք դժուարին եւ անշընչելի պայմաններու իսկ ներքեւ, վանքերու խցիկներու մէջ ճգնելով ստեղծեցին զմայլելի մանրանկարչութիւն, հայ վարպետներ շինեցին ճարտարապետական կոթողներ, վանքեր եւ տաճարներ, որոնք պատիւ կրնան բերել որեւէ քաղաքակրթուած ազգի: Ունեցած ենք թարգմանիչներ, գրագէտներ, երաժշտագէտներ եւ արուեստի զանազան ասպարէզներու մէջ հռչակ հանած արուեստագէտներու եւ մտաւորականներու հոյլեր, որոնց ստեղծած մշակութային ժառանգութիւնները մեզի հասած են եւ մեր ճակատները դրոշմած հայկական ինքնագիտակցութեամբ:

Ազգակերտ արուեստագէտներու եւ մտաւորականներու շարքին, ահաւասիկ համեստ անուն մը՝ Էդիկ Յովսէփեան, որ ամբողջ կեանք մը՝ քառասուն տարիներ՝ իր տաղանդն ու կարողութիւնները ի սպաս դրած է՝ երեսուն տարի Պարսկաստանի եւ տասը տարի Գանատայի մէջ՝ հայ երգն ու երաժշտութիւնը վառ պահելով, ծանօթացնելով եւ տարածելով հայ եւ օտար շրջանակներու մէջ: Որպէս երաժշտութեան ուսուցիչ, հայ մատղաշ սերունդներուն փոխանցած է հազարամեայ մեր երաժշտութեան ժառանգութիւնները, հայ երգի թովչանքով եւ բոյրով օծելով անոնց շրթունքները:

Պարսկաստանի քաղաքական կացութեան բերումով Գանատա գալով եւ հաստատուելով Թորոնթօ, ընկեր Էդիկ Յովսէփեան, ականջալուր իր սրտի ձայնին եւ նուիրեալ ասպարէզին, չի վարանիր հասած օրն իսկ Հայ Կեդրոն ացեղելու եւ իր պատրաստակամութիւնը յայտնելու ղեկավարելու Համագրային Հայ Մշակութային Միութեան երգչախումբը:

Որպէս Համագրային Հայ Մշակութային Միութեան վարչութեան այդ շրջանի ատենապետ, բախտաւորութիւնը ունեցայ ընդունելու ինծի համար

արդէն անունով ծանօթ երաժշտագէտ-խմբավար Էդիկ Յովսէփեանը եւ յառաջիկայ քանի մը օրերու ընթացքին, վարչութեան որոշումը իրեն փոխանցելու: Միեւնոյն ատեն հանդիպում ունենալով այդ շրջանի Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի Ուսումնական Մարմնի ատենապետ հանգուցեալ Անդրանիկ Արթինեանի հետ, համաձայնութիւն գոյացնելով Էդիկը հրաւիրելու որպէս երաժշտութեան ուսուցիչ պաշտօնավարելու վարժարանին մէջ:

1980ին կազմուած Համազգայինի երգչախումբը ղեկավարութեամբ վաստակաւոր երաժշտագէտ Գանատայի եւ Մ. Նահանգներու հայահոծ դադութներու մէջ, մեծապէս գնահատուելով Հայ երգի կարօտով պապական հայտարարի սրտերու կողմէ, որոնք խորապէս կ'ըմբռնեն Գանատայի եւ Ամերիկայի նման երկիրներու մէջ հարիւրէ աւելի անդամ-անդամուհի ունեցող երգչախումբի մը գոյութեան դժուարութիւնները:

Համազգային երգչախումբը ու անոր արժանաւոր ղեկավար՝ Էդիկ Յովսէփեան, մեր բոլորին գուրգուրանքին եւ հոգածութեան առարկայ են, որոնք անհատ գոհաբերութիւններով, տարեկան համերգներով եւ տօնական զանազան առիթներով հայ երգը քաղցրահնչիւն երաժշտութեամբ կը ջերմացնեն համայնակուլ այս ափերուն վրայ ծուարած հայ զանգուածները՝ չէզոքացնելով հայ ինքնուրոյնութեան եւ բարձրուն վրայ փչող պաղ հոսանքներուն աւերիչ հետքերը:

Ի խորոց սրտէ կը շնորհաւորենք հայ երգի եւ երաժշտութեան անձնուէր եւ խոնարհ ծառայ Էդիկ Յովսէփեանի ուսուցչական եւ երաժշտական գործունէութեան 40-ամեակը, մաղթելով իրեն քաջառողջ կեանք՝ իր առաքելութիւնը ամբողջացնելու համար, քաջ գիտնալով որ այս երկրաւոր կեանքի ընթացքին ամէն ինչ անցողակի է, միայն «Մարդուս գործն է միշտ անմահ»:

Կը շնորհաւորենք նաեւ Համազգայինի երգչախումբի 10ամեակը, այն խոր վստահութեամբ, որ յառաջիկայ տարիներուն ան պիտի աւելի որակաւորուի եւ հայ երգի ջանքով պիտի լուսաւորէ մեզ հայրենիքին կապող ուղիները:

Վարձքերնիդ կատար հայ մշակոյթի գինուորագրեալներ:

ԷՏԻԿ ՅՈՎԱԵՓԵԱՆ

Անուն մը պայծառ՝ Էդիկ Յովսէփեան,
Ուռիի նման համեստ ու խոնարհ,
Սակայն պտղատու՝ բոյրով նայիրեան,
Բազմերգանգ խորքով ոգեբարբառ ծառ:

Նահապետական Յովսէփեան տոհմէն,
Ժառանգած հուրը հայ մշակոյթի,
Ծլարծակուեցաւ մանուկ հոգիէն,
Նուիրում եւ ուխտ՝ որպէս հայորդի:

Բնատուր տաղանդ, շնորհք երկնային,
Ուռճացած լոյսով հայ երգի անմար,
Դարծաւ խմբավար երգչախմբային,
Հայ երգի ջահը վառ պահող կերպար:

Որպէս ուսուցիչ կրթեց սերմնոյններ,
Ջամբելով անոնց աւիշ հայկական,
Տեսլաշաւիղով քալեց աներեր,
Բերքով օրհնաբեր, վարքով խոհական:

Հայ երաժշտութեան անդաստանին մէջ,
Քառասունամեայ վաստակով բեղուն,
Պիտ փայլի անվերջ՝ ճաճանջով անշէջ,
Լուսաւորելով ամէն հայու տուն:

Գրիգոր Հոթոյեան
Էդիկ Յովսէփեանի
40-Ամեակի Երաժշտական
Գործունեութեան Յօբելեանին Առթիւ
Թորոնթօ, 1990

ՀԱՅ ԵՐԳՐ ԱԻԻՇ՝ ԱԶԳԱՊԱՆՊԱՆՄԱՆ

Իրապէս քաջալերելի եւ գնահատելի է Թորոնթոյի Հայ Աւետարանական եկեղեցւոյ Մշակութային յանձնախումբի վերջին քանի մը տարիներու գործունէութիւնը, մանաւանդ՝ հայ երգն ու երաժշտութիւնը կարօտեալ հայ յորդիններուն սրտերուն մէջ վառ պահելու եւ տարածելու ազգակերտ առաքելութեան մէջ:

Խումբ մը հայ երիտասարդներ, գլխաւորութեամբ յանձնախումբի ատենապետ Յակոբ Մուզենեանի, քաջ գիտնալով, թէ Հայ երգն ու երաժշտութիւնը աւելն են ազգապահպանման, ներկայ դժուարին օրերուն յանդէնութիւնը ունեցած էին կազմակերպելու լուրջ երգահանգէս մը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 3 Նոյեմբեր 1991, երեկոյեան ժամը 7ին՝ Ontario Science Centre Auditoriumի մէջ, որուն ներկայ գտնուեցան 400է աւելի երաժշտասէրներ:

Ելոյթ ունեցան Գանատահայ հանրածանօթ արուեստագէտներ Վարսենիկ Փփազեան (սոփրանօ, Համրլթընէն), Կարօ Նշանեան (թաւալարիթոն, Մոնթրէալէն), դաշնակահարուհի Մարիա Սէրայտարեան-Մանանեան (թորոնթոյէն):

Յայտագրի առաջին մասը կազմուած էր օտար դասական երգերէ: Բացումը կատարեց դաշնակահարուհի Մարիա Սէրայտարեան-Մանանեան, նուագելով Հայր Գրիգոր Հէպոյեանի «Movement Perpetuel» եւ Ֆրեսերիք Շոփէնի «Polonaise OP. No. 1»ը:

Դաշնակահարուհի Մարիա բազմաթիւ անգամ իր մանակցութիւնը բերած է գաղութին ձեռնարկներուն, սակայն այս անգամ մենանուագով եւ երգերու ընկերակցութեամբ նուագեց բացառիկ կարողականութեամբ եւ համարձակութեամբ:

Երգչուհի Փփազեան եւ երգիչ Նշանեան հերթականօրէն երգեցին տասը երգեր, որոնցմէ երկուքը զուգերգ: Սքանչելի էին Վարսենիկի երգած «Alleluia» (Մոցարթէն), «Il Bacio» (Արտիթիէն), «Norma-Castadiva» (Պելլինիէն) եւ յատկապէս «Barber of Seville (Una Voce Poco Fa)» (Ռոսինիէն): Իսկ Կարօ Նշանեան, խոր հասկացողութեամբ ու բեմական վայելչութեամբ երգեց Մոցարթէն «Die Zauberflote - O Isis Und Osiris»ը, «Musica Prohibita» (Կասթալտոնէն), «La Boheme Vecchia Zimmarra» (Փուչինիէն) եւ մեծ յաջողութեամբ երգեց Ռոսինիի «Barber of Seville - La Calunnia»ն:

Տպաւորիչ էին զուգերգները՝ Մոցարթէն՝ «Don Giovanni Laci Darem La Mano»ի եւ Ռոմպլըրկի «Will You Remember»ը:

15 վայրկեան դադարէ ետք գործադրուեցաւ յայտագրի երկրորդ մասը, որ բաղկացած էր հայերէն երգերէ:

Երգչուհի Վարսենիկ Փփազեան հերթականօրէն երգեց Արշակ Բ. Օփերայէն «Ողիմպիա»ի արեան (Տ. Չուխաճեան), «Օրօր» (Կանաչեան), «Քէլէ-Քէլէ» (Կոմիտաս) երգերը, իսկ երգիչ Կարօ Նշանեան՝ «Խորհուրդ Խորին» (Կոմիտաս), «Ինձ Մի Խնդրիր» (Գր. Սիւնի), «Դաշտերի Աղջիկ» (Ա. Խաչատուր-

եան) եւ «Արփա Սեւան» (Է. Յովհաննէսեան) եւ Չուխաճեանի «Մենք Քաջ Վարդանի» երգերը:

Ներդաշնակութեամբ եւ խոր ապրումով երգուեցան զուգերգներ «Ուռի» (Բ. Ղազարեան) եւ «Խմենք» (Ա. Պարթեւեան):

Հոս կ'ուզենք ընդգծել, որ երգուած բոլոր երգերը, մեր սիրելի երգիչներուն յայտագիրներուն մաս կազմած են ընդհանրապէս եւ լսելու առիթներ ունեցած ենք նախապէս: Որպէս նորութիւն, Վարսենիկ Փափազեան երգեց «Զայն Հայրենական» (Ղարաբաղի նուիրուած երգ), խօսք՝ (Գրիգոր Հոթոյեանի եւ երաժշտութիւն՝ Էդրիկ Յովսէփեանի), որ առաջին անգամ ըլլալով կ'երգուէր հրապարակաւ՝ արժանանալով ներկաներուն բուռն ծափողջոյններուն եւ գնահատանքին:

Յայտագրէն դուրս, Կարօ Նշանեան երգեց նշանաւոր «Յար Նազանի» երգը:

Այս առթիւ, կ'ուզենք ընել հետեւեալ թելադրութիւնները.

Լաւ կ'ըլլար, եթէ երգիչները բեմ գալով երգէին իրենց մեներգները: Փոխնիփոխ մէկ երգ երգելով, երթեկեկելով թէ ժամանակի կորուստ ունեցան, թէ՛ ձանձրացուցիչ թուեցաւ ունկնդիրներու աչքին:

Երկրորդ, օտար տասը երգ ներկայացնել հայ երգի կարօտն ունեցող ժողովուրդին, իսկապէս շա՛տ թուեցաւ: Երգիչներուն կարողութեամբ փոխանցելու համար վստահաբար կը բաւէր 4-5 երգ:

Մենք կը սիրենք միջազգային երաժշտութեան հսկաներուն յօրինումները մտիկ ընել, սակայն, այդ երգերը ամէն օր ձայնասփիւռներու եւ հեռատեսիլներու կողմէ կը սփռուին: Իսկ հայերէն երգերը ծանօթացնելու եւ տարածելու համար ունինք միայն մեր բեմերը եւ պէտք է օգտագործենք այդ առիթները, նոյնիսկ օտարներուն ցոյց տալու համար, որ մենք ալ ունինք մշակոյթ եւ միջազգային արժէքով երաժշտագէտներ եւ հեղինակներ, որոնց շարքը չենք ուզեր արձանագրել հոս:

Կը սիրենք յուսալ, որ մեր արուեստագէտները, իրենց ապագայ ելոյթներուն ընթացքին կը քալեն Մեծն Կոմիտասի շաւիղներէն:

Երգահանդէսի վերջաւորութեան, Հայ Աւետարանական եկեղեցիի Մըշակութային յանձնախումբին կողմէ երեք աղջնակներ ծաղկեփունջներով պատուեցին արուեստագէտները:

Ժամը 10ին, եկեղեցւոյ ղեկավարներ, խումբ մը ազգայիններ եւ արուեստագէտներ հաւաքուեցան Աւետարանական եկեղեցւոյ ներքնայարկի սրահը, ուր հիւրասիրուեցան սուրճով եւ կարկանդակներով ու անուշեղէններով: Խօսք առաւ եկեղեցւոյ հովիւ վեր. Եսայի Սարմազեան եւ եկեղեցւոյ անունով շնորհակալութիւն արուեստագէտները իրենց յաջող ելոյթին առթիւ, շնորհակալութիւն յայտնեց ձեռնարկին յաջողութեան նպաստող անձերուն եւ յատկապէս հազարական տուար նուիրելով ձեռնարկը հովանաւորող Տէր եւ Տիկին Ներսէս Փրստգճեանին, Տէր եւ Տիկին Խաչիկ Գանձապետեանին, Տէր եւ Տիկին Յարութիւն Մնչերեանին, Տէր եւ Տիկին Մարգար Քէթիկեանին եւ Տէր եւ Տիկին Կարպիս Ռուպեանին:

Ստեղծուեցաւ խանդավառ մթնոլորտ: Երգիչներ Փափազեան եւ Նշանեան երգեցին ազգային քանի մը երգեր, ընկերակցութեամբ դաշնակահարուհի Մարիա Մանանեանի:

«ՀՈՐԻՉՈՆ»
3 Նոյեմբեր 1991



Արծակագիր, երաժշտագէտ, յօրինող եւ խմբավար
Յակոբ Մանուկեան եւ Գրիգոր Զոթոյեան
19 Յուլիս 2006

ՀԱՅ ԵՐԳՐ՝ ՉՈՒՂԱԼ ԱՂԲԻՒՐ ԿԵՆՍԱՏՈՒ

Թորոնթոյի Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան «Գուսան» երգչախումբի տարեկան համերգը տեղի ունեցաւ Շաբաթ,¹ Մայիս 1993, երեկոյեան ժամը Ցին, Ուինսթըն Չըրչիլ վարժարանի սրահին մէջ, որուն ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին Հայոց Առաքելական եկեղեցւոյ հովիւ հոգեշնորհ Տ. Խաթակ Մ. Վրդ. Յակոբեան, Հայ Կաթողիկէ համայնքի հովիւ Գեր. Եղիա Վրդ. Գիրէշեան, Հայ Աւետարանական համայնքի հովիւ Վեր. Եսայի Սարմազեան, պաշտօնական անձնաւորութիւններ եւ մեծ թիւով ազգայիններ, որոնք եկած էին իրենց ծարաւը յագեցնելու հայ երգի կենսայորդ աղբիւրէն:

Բացման խօսքով հանդէս եկաւ երգչախումբի յանձնախումբին անդամներէն Շուշիկ Պէրպէրեան, որ անդրադարձաւ «Գուսան» երգչախումբի կազմութեան 13 տարիներու առաքելութեան եւ յատկապէս անոր արժանաւոր խմբավար՝ երաժշտագէտ-երգահան Էդիկ Յովսէփեան անսահման նուիրումին՝ հայ երգն ու երաժշտութիւնը այս փերուն վրայ ծանօթացնելու եւ տարածելու կենսական գործին մէջ:

Յայտագրի առաջին մասը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան «Մեր Հայրենիք» օրհներգով, որուն քառածայն մշակումը կատարած էր խմբավար Էդիկ Յովսէփեան:

Երգչախումբը յաջորդաբար երգեց «Սարգարապատ Մեր Փրկութեան» (խօսք եւ երաժշտութիւն Արմէն Մանդակուեանի) եւ «Վարդի Բլբուլ» (մշակում՝ Ն. Գալէնտէրեանի):

Երգչախումբի վաստակաւոր մեներգիչ Սիլվա Յարութեան հերթականօրէն երգեց «Իմ Գարուն» (խօսք՝ Յ. Արմանի եւ երաժշտութիւն՝ Աշոտ Պատմագրեանի) եւ «Արեւ Կ'ընէ» (մշակում՝ Ռուբէն Գրիգորեանի) եւ «Այ Աղջիկ» (մշակում՝ Կոմիտասի) երգերը, դաշնամուրով ընկերակցութեամբ Թալին Արթիւնեանի:

Գաղութիւս լաւագոյն երգիչներէն Ռաֆֆի Տէր Պողոսեան մեներգեց «Խոր Կարօտ» (խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի, երաժշտութիւն՝ Էդիկ Յովսէփեանի) որ առաջին անգամ ըլլալով որպէս նոր երգ կ'երգուէր եւ «Աշուղն է Խօսում» (խօսք՝ Աշուղ Յովնանի, երաժշտութիւն՝ Էդիկ Յովսէփեանի) երգերը, դաշնամուրով ընկերակցութեամբ Վանիկ Յովհաննէսեանի:

Մեներգող Ռաֆֆի Տէր Պողոսեանի երգերը անդադրում ծափողջոյններով գնահատուեցաւ ներկաներուն կողմէ: Ան յայտագրէն դուրս երգեց «Թոյլ Տուէք Դառնամ» (խօսք՝ Ս. Թափառականի, երաժշտութիւն՝ Ալֆրէտ Մարդոյեանի):

«Սարի Կէսլին» երգը (մշակում՝ Կ. Զաքարեանի) զուգերգով երգեցին Հելէն Զօհրապեան եւ Ռաֆֆի Տէր Պողոսեան: Իսկ, «Օսաննա» երգը՝ (մշակում՝ Թաթուլ Ալթունեանի) երգեցին Սաթիկ Գալուստեան եւ Ռաֆֆի Տէր Պողոսեան:

Երգչուհի Ռիմա Ղարախանեան իր սրտագրաւ ձայնով երգեց «Աստղով Եկայ» (մշակում՝ Գուսան Շահէնի) եւ «Օճախում» (մշակում՝ Երուանդ Ալեքսանեանի):

Ունկնդիրներուն բուռն ծափերուն եւ փափաքին ընդառաջելով երգչուհի Ռիմա Ղարախանեան յայտագրէն դուրս երգեց «Եղնիկի Պէս» (Գուսան Աշոտ) երգը:

Յայտագրի առաջին մասը վերջ գտաւ երգչախումբի կողմէ երգուած «Հայ Նուպար» երգով (երաժշտութիւն՝ Ժան Ալմուխեանի):

Քառորդ ժամ դադարէ ետք յայտագրի երկրորդ մասը սկսաւ երգչախումբի կողմէ երգուած «Ուռենուն» (խօսք՝ Աւետիք Իսահակեանի եւ երաժշտութիւն՝ Գ. Ղազարեանի) եւ «Սարերի Հովին Մեռնեմ» (երաժշտութիւն՝ Գրբիգոր Սիւնիի), դաշնամուրով ընկերակցութեամբ Վանիկ Յովհաննէսեանի:

«Գուսան» երգչախումբի այս համերգին իրենց մասնակցութիւնը բերին Մոնթրէալէն շնորհալի երգչուհի Յասմիկ Գալասեան-Արզումանեան եւ հայ երգին հանդէպ պաշտամունք ունեցող տաղանդաւոր երգիչ Կարօ Նշանեան:

Արուեստագէտ երգչուհի Յասմիկ Գալասեան-Արզումանեան իր թաւաշային սոփրանօ ձայնով երգեց «Երգիր Ինձ Համար» (խօսք՝ Աշոտ Գրաշիի, երաժշտութիւն՝ Ալ. Յարութիւնեանի) եւ «Եար Նազանի» (երաժշտութիւն՝ Ալան Յովհաննէսի) երգերը, դաշնամուրով ընկերակցութեամբ նոյնպէս Մոնթրէալէն վարպետ դաշնակահար Լիլիթ Յակոբեանի:

Երգչախումբը աշխուժով երգեց «Ջուրագալի» (մշակում՝ Անտոն Մայիլեանի) եւ «Սիրուն Մանուշակ» (խօսք՝ Ղազարոս Աղայեանի, մշակում՝ Թորոնթոնայ տաղանդաւոր երիտասարդ Հրաչ Շեհիրեանի):

Մանօթ երգիչ Կարօ Նշանեան բեմ գալով իր տպաւորիչ թաւապարիթոն ձայնով եւ սքանչելի արտայայտութեամբ երգեց «Սեւ Աչեր» (խօսք՝ Աւետիս Իսահակեանի եւ երաժշտութիւն՝ Արշակ Տիգրանեանի) եւ «Կ'անցնի Լուին» (երաժշտութիւն՝ Երուանդ Ալեքսանեանի), դաշնամուրով ընկերակցութեամբ Լիլիթ Յակոբեանի:

Ունկնդիրներու կրկնութիւն պահանջող ծափողոյններուն ընթացք տալով Կարօ Նշանեան յայտագրէն դուրս երգեց Արթիւր Այվազեանի «Ատամնաբոյժ Արեւելեան» խանդավառիչ երգը:

Երգչախումբի «Հայրենի Կարօտ» (խօսք՝ Շահագիգի եւ երաժշտութիւն՝ Բարսեղ Կանաչեանի) երգի երգեցողութենէն վերջ, հիւր երգիչներ Յասմիկ Գալասեան-Արզումանեան եւ Կարօ Նշանեան հանդէս եկան զուգերգներով: Առաջինը՝ «Լա Ջի Տարիմ Լա Մանօ» (Մոցարթի Տոն Ճիովաննիէն) եւ «Խմենք» (երաժշտութիւն՝ Արա Պարթիւեանի):

Հոս կ'ուզենք մեր գնահատանքը արտայայտել երկու արուեստագէտ երգիչներուն, որոնք իրենց մեներգներով եւ մանաւանդ զուգերգներով ցոյց տուին երաժշտական բարձր հասկացողութիւն եւ կարողութիւն:

Կարօ Նշանեանի կողմէ երգուած «Կենաց Երգ»-էն ետք (մշակում՝ Թ. Ալթունեանի), երգչախումբը երգեց «Գետաչէն» երգը (Հրաչ Շեհիրեանի):

Այս առթիւ «Գուսան» երգչախումբի յանձնախումբը գեղեցիկ գաղափարը յղացած էր յուշատախտակով պատուելու դաշնակահար Վանիկ Յովհան-

նէսեանն ու երգիչ Կարօ Նշանեանը: Առաջինը՝ որպէս երգչախումբի տարիներու դաշնակահար իր ժամանակն ու արուեստը հայ երգի տարածման նուիրած ըլլալուն համար, իսկ երկրորդը՝ անձնուիրաբար եւ առանց դոյզն հատուցման, միշտ ընդառաջած է իրեն եղած հրաւերին եւ Մոնթրէալէն Թորոնթօ գալով եւ մասնակցելով «Գուսան» երգչախումբի ելոյթներուն, մեծապէս օգտակար եղած է համերգներու յաջողութեան: Յուշատախտակներ ենթականերուն յանձնուեցան Համազգայինի Վարչութեան ատենապետուհի ընկերուհի Նորա Յովսէփեանի եւ յանձնախումբի ատենապետուհի ընկերուհի Պելլա Յակոբեանի կողմէ:

Երգչախումբի ղեկավարը, դաշնակահարները, մեներգիչներն ու երգչախումբի անդամ-անդամուհիներու զնահատուեցան ծաղկեկողովներով, ծաղկեփունջերով եւ մեխակներով, որոնք նուիրուած էին պր. Եղիա Սիւմպիւլեանին կողմէ:

Հանգիստավար Շուշիկ Պէրպէրեանի կողմէ երգչախումբի անդամներուն ծանօթացումէն ետք վերջ գտաւ համերգը՝ յայտագրէն դուրս երգուած «Սարդարապատ» յաղթական երգով:

Նոյն գիշեր համերգէն ետք, Հայ Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ-խրախճանք՝ ի պատիւ համերգին մասնակցողներուն, որ տեւեց մինչեւ առաւօտեան ժամը 3ը: Ներկաները սրահէն մեկնեցան, հայ երգի ճամբով ազգապահպանման աշխատանքներուն իրենց մասնակցութիւնը բերած եւ յաջողութիւն գտած ըլլալու գոհունակութեամբ:

«ՀՈՐԻՉՈՆ»
1 Մայիս 1993

ՀԱՅ ԵՐԳԻ ԱՆՆԱԽՆԸՆԹԱՅ ՓԱՌԱՏՕՆ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Հայ երգերը հրաշագան,
Որպէս աղբիւր Արարատեան,
Հայ սրտերուն աւիւն կու տան
Եւ սերունդներ հայ կը մնան:

Գր. Հոթոյեան

Ամիսներէ ի վեր Համազգային շրջանակներուն մէջ խօսակցութեան ամէնօրեայ նիւթ դարձած էր հայրէնի համբաւաւոր երգիչ Յովհաննէս Պատալեանի եւ տաղանդաւոր դաշնակահար Նաթթելա Պօղոսեան-Աճէմեանի թորոնթօ դալը, մասնակցելու համար Համազգայինի «Գուսան» երգչախումբի տարեկան համերգին:

Վերջապէս, բոլոր դժուարութիւնները հարթուեցան եւ հայ երգի առաքեալները թորոնթօ ժամանեցին Հինգշաբթի, 1 Դեկտեմբեր 1994ին եւ մինչեւ համերգի թուականը ներկայ եղան «Գուսան» երգչախումբի փորձերուն, ինչպէս նաեւ այցելեցին թորոնթոյի Ամէնօրեայ Վարժարանները, Եկեղեցիները եւ Կեդրոնները:

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան «Գուսան» երգչախումբի աննախընթաց համերգը տեղի ունեցաւ Շաբաթ 17 Դեկտեմբեր 1994, երեկոյեան ժամը 8:30ին, Սենեքա գոլէճի «Մինքլըր» հանդիսասրահին մէջ, որուն ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ գերշ. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ վեր. Եսայի Սարմազեան, Հայ Կեդրոնի մէջ գործող միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչները, պաշտօնական հիւրեր եւ շուրջ 1200 հանդիսականներ:

Համերգը նուիրուած էր Հ.Յ. Դաշնակցութեան 104-ամեակին եւ կը վայելէր հովանաւորութիւնը Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէին:

Երգչախումբը կը ղեկավարէր խմբավար Էդիկ Յովսէփեան: Դաշնամուրով խմբերգներուն կ'ընկերակցէր Վանիկ Յովհաննէսեան, իսկ Պատալեանի երգերուն՝ հայրենի շնորհալի դաշնակահար Նաթթելա Պօղոսեան-Աճէմեան:

Համերգի բացման խօսքով հանդէս եկաւ Համազգայինի Վարչութեան փոխ. ատենապետ ընկեր Ժան Պալճեան, որ ի միջի այլոց ըսաւ.

«Հաւատարիմ Հայ Մշակութի սատարման իր անսակարկ նուիրումին, Համազգային Հայ Մշակութային Միութիւնը մեծ ուրախութեամբ թորոնթօ-հայ գաղութին կը ներկայացնէ «Գուսան» երգչախումբի այս բացառիկ համերգը, ղեկավարութեամբ տաղանդաւոր խմբավար ընկեր Էդիկ Յովսէփեանի եւ մասնակցութեամբ սիրուած եւ համբաւոր երգիչ՝ յատկապէս Հայաստանէն հրաւիրուած պրն. Յովհաննէս Պատալեանի ու անոր ընկերացող տաղանդաւոր դաշնակահարուհի տիկին Նաթթելա Պօղոսեան-Աճէմեանի եւ մեր անձնուէր դաշնակահար ընկեր Վանիկ Յովհաննէսեանի:

«Համազգայինի թորոնթոյի մասնաճիւղը այս համերգը կը նուիրէ Հայ ազգին ազատագրական պայքարի ու հայ մշակոյթի պահպանման Սուրբ գործին իր ամբողջ ուժերը լարած եւ իր հազարն ներգրումը բերած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, որ այս տարի կ'ամբողջացնէ իր հիմնադրութեան 104րդ տարին:

«Այս առթիւ թորոնթոյի վարչութիւնը յատուկ շնորհակալութիւն կը յայտնէ այս ձեռնարկի յաջողութեան իրենց մասնակցութիւնը բերած բոլոր անհատներուն, հովանաւորողներուն, նուիրատուներուն եւ յատկապէս խմբավար Էդիկ Յովսէփեանին, պրն. Յովհաննէս Պատալեանին, դաշնակահարներ Նաթթեյա Պօղոսեան-Աճէմեանին եւ Վանիկ Յովհաննէսեանին, երգչախումբի յանձնախումբին եւ անդամներուն, որոնց հետեւողական աշխատանքի արդիւնք իրականացաւ այս երազը: Թորոնթոյի վարչութիւնը անկասկած պիտի ունենայ մշակութային բացառիկ երեկոյ մը, որուն ազդեցութիւնը ու յիշատակները վստահաբար երկար ժամանակ թարմ պիտի մնան եւ ուրախացնեն մեր բոլորիս սրտերը՝ ի տես ազգային գանձին՝ հարստացման այս գեղեցիկ յաւելումին»:

Բացուեցաւ բեմի վարագոյրը: «Գուսան» երգչախումբը գրաւած է բեմը իր ինիսուն անդամ-անդամուհիներով: Հիացական ծափահարութիւններ ժողովուրդին կողմէ:

Բեմ կու գան խմբավար Էդիկ Յովսէփեան եւ դաշնակահար Վանիկ Յովհաննէսեան:

Յայտագրի առաջին մասը կը սկսի երգչախումբին կողմէ երգուած Հայաստանի օրհներգով եւ Դաշնակցութեան քայլերգով:

Հայաստանի դիւղացիին յատուկ փափախով եւ շուրջառով զգեստաւորուած Յովհաննէս Պատալեան, սրահի ետեւի դռնէն մուտք գործելով եւ «Հորովել» երգելով դէպի բեմ յառաջացաւ՝ հաճելի տպաւորութիւն եւ հիացմունք պատճառելով հանդիսականներուն, արժանանալով որոտընդոստ ծափահարութիւններու:

Մենակատար երգիչ Ռաֆֆի Տէր Պօղոսեան բեմ գալով ապրումով երգեց Յովհաննէս Պատալեանի թորոնթոյի այցելութեան առթիւ յատկապէս գրուած «Զօն՝ Յովհաննէս Պատալեանին» երգը (խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի, երաժշտութիւն՝ Էդիկ Յովսէփեանի), դաշնամուրով ընկերակցութեամբ Վանիկ Յովհաննէսեանի:

Այնուհետեւ հերթականօրէն երգուեցան «Ինչ-ինչ ասեմ» խմբերգը, մենակատար՝ Յովհաննէս Պատալեան, մշակում՝ Թաթուլ Ալթունեանի: «Հայաստան» մեներգ, խօսք՝ Ա. Գրաշուի, երաժշտութիւն՝ Ա. Այվազեանի, մենակատար՝ Յովհաննէս Պատալեան, «Երեւանի Զուր» մեներգ, խօսք՝ Լ. Դուրեան, երաժշտ. Խ. Աւետիսեանի, մենակատար՝ Յ. Պատալեան, «Աշուղն է Խօսում» մեներգ. խօսք՝ Յ. Ունանեանի, երաժշտ. Էդիկ Յովսէփեանի, մենակատար՝ Յովհ. Պատալեան: «Վարդ Կօշիկս» խմբերգը (մշակում՝ Կարա Մուրզայի) երգուեցաւ, մենակատարութեամբ Յովհաննէս Պատալեանի եւ Սաթիկ Գալըստեանի, որուն յաջորդեցին «Ղարսա Բերդ եւ Զնգլօ» (մշակում՝ Ռ. Գրիգորեանի) «Ղարաբաղ» (խօսք եւ երաժշտ. Արմէն Մանդակունեանի) եւ «Տալուրիկ» (խօսք՝ Տամատեանի, մշակում՝ Էդիկ Յովսէփեանի) խմբերգները:

Յայտագրի առաջին մասի երկրորդ բաժինը ընդհանրապես կ'ընդգրկուի կէր զուգերգներ: Այսպէս հերթականօրէն երգուեցան «Քնարական» (երաժշտութիւն՝ Ստ. Զրբաշեանի, խօսք Գ. Սարմէնի), մենակատարներ Յովհաննէս Պատալեան եւ Վրէժ Մասոյեան, «Այ Այլուդ» (մշակում Կոմիտասի) մենակատարներ Յովհաննէս Պատալեան եւ Հելէն Զօհրապեան:

«Մարտիկի երգը» (երաժշտ. Ա. Սաթեանի, խօսք՝ Գ. Սարեանի) երգելէ առաջ, երգիչ Պատալեան յայտարարեց, թէ պրն. Աշոտ Տէր Պօղոսեան 50 տարի առաջ թեհրանի մէջ միասին երգած են եւ մաս կազմած երգչախումբերու, եւ ի՛նչ բախտաւորութիւն , որ ներկայիս կրկին միասին երգելու առիթ կ'ունենան այս համերգի ընթացքին:

«Դու Նորից Եկել Ես» (խօսք՝ Դեւի եւ երաժշտ. Ն. Գալանդարեանի) երգը մեներգեց Յովհաննէս Պատալեան, ապա, «Հաբրբան» (մշակում՝ Կոմիտասի) երգը Պատալեան երգեց իր աշակերտներէն Անահիտ Կուտսուզեանի հետ, որ վերջերս Երեւանէն ժամանած է Թորոնթօ:

«Բարակ Ես Բարդու Ծառ Ես» (երաժշտ. Թ. Ալթունեանի) երգը երգուեցաւ Յովհաննէս Պատալեանի եւ Սիրլիա Յարութիւնեանի կողմէ: Իսկ «Ո՞վ էր Մեղաւոր» (երաժշտ. Հ. Թորոսեանի երգը երգուեցաւ Յովհաննէս Պատալեանի եւ Ռիմա Ղարախանեանի կողմէ եւ արժանացաւ կրկնուելու:

15 վայրկեան դադարէ ետք գործադրուեցաւ յայտագրի երկրորդ մասը:

Երգչախումբի «Ուստի Կու դաս» (Սայաթ Նովա, մշակում՝ Ա. Պատմագրերեան) խմբերգին յաջորդեց «Յուշիկ Յուշիկ» խմբերգը (մշակում՝ Ռ. Գրիգորեանի, մենակատար Հելէն Զօհրապեան):

«Ասա Ին՞չ Անեմ եւ Բիլիբի» (մշակում Թ. Ալթունեան) երգը զուգերգեց Յովհաննէս Պատալեան եւ Ռիմա Ղարախանեան:

Երգիչ Յովհաննէս Պատալեան յաջորդաբար երգեց «Բլբուլի Հիդ» (Սայաթ Նովա), Վասպուրականի ժողովրդական երգերու շարան մը եւ «Երանի Թէ» (խօսք՝ Յ. Ղուկասեանի եւ երաժշտ. Ալ. Աճէմեանի):

«Յուշ Երգ» (խօսք եւ երաժշտ. Գոգօ Տէր Ներսէսեանի, մշակում՝ Հրաչ Շեհիրեանի) խմբերգին՝ մենակատար՝ Յովհ. Պատալեան յաջորդեց «Երգ Մասիսին» խմբերգը, (երաժշտ. Ալ. Յարութեան), մենակատար՝ Սիրլիա Յարութիւնեան:

Հանրածանօթ «Գետաշէն» երգը (մշակում՝ Հրաչ Շեհիրեանի) երգեց Յովհաննէս Գրիգորեան, իսկ «Ղարիբ Եմ, Եղսօ Զան եւ Ելա Երգիկ» (մշակում Մ. Եկմալեանի) երգեց Սիրլիա Յարութիւնեան:

«Սիրոյ Վալս» խմբերգը (խօսք՝ Վ.Արմուլի, երաժշտ. Ա.Սաթունցի) երգեց Ռաֆֆի Տէր Պօղոսեան:

«Շիրակի Գիշերները» (խօսք՝ Լ. Թորոսեանի, երաժշտ. Ա. Շիշեանի) երգուեցաւ երգչախումբի կողմէ, որուն յաջորդեց Յովհաննէս Պատալեանի կողմէ երգուած «Երեւանի Սիրուն Աղջիկ» երգը:

«Ազգ Իմ» (խօսք եւ երաժշտ. Աշուղ Զիւլանիի), «Երգ Յաղթութեան» (խօսք եւ երաժշտ. Յ. Հարոյեանի) եւ «Զարթիր Լաօ» (ժողովրդական) երգերը Յովհաննէս Պատալեանի կողմէ երգուելէ ետք, երգչախումբը որպէս փակման

երգ երգեց «Գովք Հայաստանի» խմբերգը (խօսք՝ Եղիշէ Չարենց, երաժշտութիւն՝ Ա. Սաթեանի) մենակատար՝ Յովհաննէս Պատալեանի:

Համերգը իր լրումին հասած էր, սակայն ժողովուրդը յոտընկայս ծափահարութեամբ կրկնութիւն կը խնդրէր:

Ընդառաջելով խնդրանքին, երգչախումբը երգեց «Սարգարապատ» ազգայնաշունչ երգը:

Խօսք առաւ երգիչ Յովհաննէս Պատալեան եւ իր սրտի խօսքը արտասանեց ողջունելով Հ.Յ. Դաշնակցութեան 104-ամեակը եւ այս առթիւ «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէին նուիրեց հայրենի արուեստագէտի մը կողմէ պատրաստուած քանդակ մը Հ.Յ.Դ.ի զինանշանով եւ արծուի քանդակով: Ան իր շնորհակալութիւնները յայտնեց նախ Մոսկուայի Գանատական Դեսպանին իրեն Գանատա մոտաքի արտօնագիր շնորհած ըլլալուն համար, ապա, Համագրային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Գանատայի Շրջանային եւ Թորոնթոյի Մասնաճիւղի Վարչութիւններուն, զինքը եւ դաշնակահար Նաթթեյա Պողոսեան-Աճէմեանը հիւրասիրող հայրենակիցներուն, «Գուսան» երգչախումբի գեղարուեստական ղեկավար Էդիկ Յովսէփեանին եւ ամէն անոնց, որոնք նպաստեցին սոյն համերգի յաջողութեան:

Իր սրտաբուխ եւ խանդավառ խօսքերէն ետք, պրն. Յովհաննէս Պատալեան երգեց կարգ մը յեղափոխական երգեր:

Փակման խօսքով հանդէս եկաւ երգչախումբի յանձնախումբի անդամներէն Շուշիկ Պէրպէրեան:

Այս առթիւ Համագրայինի Վարչութիւնը երգիչ Յովհաննէս Պատալեանը եւ դաշնակահար Նաթթեյա Պողոսեան-Աճէմեանը պատուեց յատուկ յուշատախտակներով եւ ծաղկեփունջերով:

Մաղկեփունջերով եւ մեխակներով պատուուեցան խմբավար Էդիկ Յովսէփեան, դաշնակահար Վանիկ Յովհաննէսեանն ու բոլոր մեներգողները:

Համերգէն ետք, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ ժողովրդային խրախճանք Հ.Յ. Դաշնակցութեան 104-ամեակին եւ երգչախումբի արձանագրած յաջող ելոյթին առթիւ, որ տեւեց մինչեւ առաւօտեան ժամը 4, որուն ներկայ գտնուեցան Յովհաննէս Պատալեան եւ երգեց կարգ մը ազգային եւ ժողովրդական երգեր, դաշնակահար Նաթթեյա Պողոսեան-Աճէմեան, «Գուսան» երգչախումբի անդամները, խմբավար Էդիկ Յովսէփեան, պաշտօնական անձիք եւ 400է աւելի հայորդիներ:

Այսպէս, Շաբաթ, 17 Դեկտեմբեր 1994ին, Թորոնթոյի հայութիւնը հայ երաժշտութեան եւ երգի կարօտով տոչորուած 1200 հայորդիներ բախտը ունեցան ներկայ գտնուելու հայ երգի աննախընթաց փառատօնին, որուն յաջողութեան մեծապէս նպաստեց հայրենի վաստակաւոր երգիչ Յովհաննէս Պատալեան:

Համերգի առթած տպաւորութիւնը եւ վայելքը երկար ատեն վառ պիտի մնան ներկաներու սրտերուն մէջ:

«ՅՈՐԻՉՈՆ»
1994

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՄԵՐԳ ԵՐԱՂ ԹԷ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1989ին, Թորոնթոյի մէջ կազմուեցաւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ երգչախումբը, հովանաւորութեամբ Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի Բարեջան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի եւ քաջալերութեամբ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Տ. Խաժակ Ծ. Վրդ. Յակոբեանի եւ պատուարժան հոգաբարձութեան:

Այդ թուականէն սկսեալ, ղեկավարութեամբ Հայ եկեղեցական երաժշտութեան հմուտ ուսուցիչ եւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ դպրապետ Վարուժան Նիկոլեանի, երգչախումբը Թորոնթոյի մէջ սրբազան համերգով բազմաթիւ անգամներ հանդէս եկաւ եւ լայն ժողովրդականութիւն շահեցաւ իր կատարողական նուրբ արուեստին համար:

Այս երգչախումբը կը բաղկանայ եկեղեցւոյ ծառայող դպիր-դպրուհիներէ եւ Հայ եկեղեցական երաժշտութիւնը սիրող տասնեակ մեր նուիրեալներէ, որոնց աշխատանքը զսպանակուած է Հայց. Առաք. Եկեղեցւոյ երաժշտական ժառանգութիւնը անաղարտ կերպով պահելու եւ զայն իր սեփականատիրոջ՝ Հայ ժողովուրդին փոխանցելու գիտակցութեան մէջ:

Հայց. Առաք. Եկեղեցւոյ սրբազան երաժշտութիւնը եւ շարականները հանրութեան ծանօթացնելու եւ տարածելու առաքելութիւնը ունեցաւ այս երգչախումբի համբաւը հասած ըլլալով Մ. Նահանգներու Շիգակոյի Հայ գաղութին, վերջին քանի մը ամիսներու ընթացքին երկու գաղութներու միջեւ համաձայնութիւն գոյացած էր Շիգակոյի մէջ ելոյթ ունենալ Շաբաթ, 8 Հոկտեմբեր 1994ին, Թարգմանչաց տօնին առթիւ:

Համերգին պատրաստուելու համար, շաբաթը երկու օր, երգչախումբը ձեռնարկեց փորձերու եւ խմբավար Վարուժան Նիկոլեանի անխոնջ աշխատանքով կազմուեցաւ յայտադիրը:

Վերջապէս հասաւ մեկնելու թուականը: Խումբը Թորոնթոյէն պիտի մեկնէր Ուրբաթ, 7 Հոկտ. 1994, գիշերուան ժամը 11:45ին: Խմբավար Նիկոլեանի եւ երգչախումբի յանձնախումբի ատենապետուհի Այտա Աթիկեանի կողմէ որպէս թղթակից, այս ճամբորդութեան եւ ձեռնարկին հրաւիրուած ըլլալով, մեկնումէն 15 վայրկեան առաջ ժամադրավայր՝ Հայ Կեդրոն էի, ուր CAN-ARի ճամբորդատար ինքնաշարժը կայք հաստատած էր:

Այս առիթով զարմանալի իրականութեան մը ակնատես եղայ: Երգչախումբի բոլոր անդամները ժամանակէն առաջ իրենց տեղերը ապահոված էին ինքնաշարժին մէջ եւ յայտարարուած ժամադրութիւնը յարգուած էր: Բացառիկ երեւոյթ...:

Տէրունական աղօթքով ճամբայ ելանք եւ շուրջ 900քմ. ճամբան կտրելով, երկու տեղ հանգստանալէ եւ նախաճաշելէ ետք, ապահով հասանք Շիգակո, Marriott պանդոկը, ուր դիմաւորուեցանք Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան եւ Ամենայն Սրբոց Եկեղեցւոյ ներկայացուցիչներուն կողմէ:

Պանդոկին մէջ տեղաւորուելու ձեւակերպութիւններէն ետք, խումբը ուղղուեցաւ Հայ Կեդրոնի Շահնագարեան սրահը, ուր Համազգայինի վարչութիւնը եւ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը ճաշկերոյթ կազմակերպած էին:

Շիգակոյի Համազգայինի եւ Ամենայն Սրբոց Եկեղեցւոյ կողմէ կազմակերպուած սրբազան համերգին հովանաւորութիւնը ստանձնած էր Բժ. Սեդա Սուլթանեան:

Համերգը տեղի ունեցաւ Շաբաթ, 8 Հոկտ. 1994, երեկոյեան ժամը 8ին, Կլէն Պոռլք Սառլթ Հայ Սգուլի հանդիսասրահին մէջ, որուն ներկայ գտնուեցան ամենայն Սրբոց Հայց. Առաք. Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան եւ շուրջ 200 հայ եկեղեցական երաժշտութիւնը սիրող եւ զբնահատող ազգայիններ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Համազգայինի վարչութեան ատենապետ ընկ. Սիրական Քերքիւնեան եւ ներկայացնելէ ետք Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ երգչախումբը եւ ղեկավարը, անդրադարձաւ հայ եկեղեցական երաժշտութեան եւ յատկապէս Կոմիտաս Վարդապետի ծննդեան 125-ամեակին իր յարգանքի տուրքը մատուցանելով անոր հայ երաժշտութեան անդաստանին մէջ կատարած անգնահատելի ծառայութեան:

Յայտագրի առաջին մասը սկսաւ երգչախումբի կողմէ երգուած Կոմիտասի «Օրհներգ Հայրապետական» եւ Հ. Պէրպէրեանի «Եկեղեցին Հայկական» երգերով:

Վարդանանց նուիրուած «Լոեց ամպերը եկան» (երաժշ. Մ. Եկմալեանի) երգը խումբին կողմէ երգուեցաւ երկիւղածութեամբ, մեներգող՝ Գարեգին Օտապաշեան, որմէ ետք հերթականօրէն երգուեցաւ Եղիշէ Արք. Դուրեանի «Խաչը» (երաժշ. Հ. Պէրպէրեան), մեներգող՝ Նուպար Քէշիշեան, Կոմիտասի «Գարուն ա» մեներգող՝ Իզապէլ Պայրազտարեան, նոյնպէս Կոմիտասի «Կաքաւիկ» մեներգող՝ Իզապէլ Պայրազտարեան, «Յորժամ» (երաժշ. Ա. Պապաջանեան) մեներգող՝ Անահիտ Պապայեան, Կոմիտասի «Տէր Ողորմիտա»ն, մեներգող՝ Ապուտ Սիվրի, «Սուրբ Սուրբ» (երաժշ. Մ. Եկմալեան), մեներգող՝ Անահիտ Պապայեան, «Քրիստոս ի մէջ» (երաժշ. խորէն Մէլիսանաճեան), Գէորգ Էմինի «Տէր Զօր»ը (երաժշ. Գրիգոր Փիտէճեան) եւ «Երջանկութեան աղբիւրը» (երաժշ. Յ. Փափազեան):

Յայտագրի առաջին մասի ավարտին, Համազգայինի ատենապետը բեմ հրաւիրեց համերգի հովանաւորութիւնը ստանձնած Բժ. Սեդա Սուլթանեանը եւ զայն պատուեց Լեւոն Թագաւորի յուշամետալով, հայ մշակոյթին հանդէպ անոր սնուցած սիրոյն եւ նուիրաբերումին համար: Ապա, բեմ եկաւ Համազգայինի փոխ ատենապետ ընկ. Յարութիւն Միքայէլեան եւ հակիրճ ձեւով կենսագրական ծանօթութիւններ տալէ ետք, բեմ հրաւիրեց Յարութիւն Տէր Պալեանը, որ Պէրպէրեանի սկսեալ կէս դար ծառայած է Հայց. եկեղեցւոյ եւ Համազգայինին եւ զայն պատուեց Յովհաննէս Այվազովսկիի յուշամետալով:

Յայտագրի երկրորդ մասը սկսաւ տասը վայրկեան դադարէ ետք: Ներսէս Շնորհալիի «Առաւօտ Լուսոյ» շարականի երգեցողութենէն ետք, մեներգող՝ Ռիթա Նիկոլեան, սրնգահար՝ Իզապէլ Պայրազտարեան, հերթականօրէն երգուեցան Մ. Եկմալեանի «Ով հայոց աշխարհ» եւ Ժ. Ալմուխեանի «Մեր հերոս մայրերուն» երգերը:

«Տէր Ողորմիա» շարականի (երաժշ. Խ. Մէյխանաճեան) երգեցողութեան էտք, մեներգողներ Այտա Աթիկեան եւ Գարեգին Օտապաչեան, երգեցին Ա. Յովհաննէսի «Պահապան ամենայնի», մեներգող՝ Իզապէլ Պայրազտարեան, Կոմիտասի «Գովեա Երուսաղէմ զՏէր», մեներգող՝ Վահէ Թղլեան, շարականները եւ Կոմիտասի «Կռունկ»ը, մեներգող՝ Անահիտ Պապայեան, Կոմիտասի «Ծիրանի Ծառ», մեներգող՝ Իզապէլ Պայրազտարեան:

Երգուած բոլոր շարականներուն եւ երգերուն դաշնամուրով կ'ընկերակցէր ծանօթ տաղանդաւոր երաժիշտ-դաշնակահար երիտասարդ արուեստագէտ Մէրուժ Գրաճեան, որ այս առթիւ նուագեց երկու կտոր. Պեթճովէնի Sonata n: 26op81a եւ Wilde Jagde (Wild Hunt) F. Lisztն:

Գնահատանքի անդադրում ծափերուն ընդառաջելով, Գրաճեան նուագեց Սայաթ Նովայէն «Քանի վուր ջան իմ» եւ Կոմիտասի «Տըլէ եաման» եղանակները:

Երգչախումբը կրկին բեմ գալով երգեց Բարսեղ Կանաչեանի «Նանոր»էն հատուած մը եւ «Նորահրաչ» շարականը (բառեր Ներսէս Շնորհալի), մշակում՝ Ա. Տիգրանեան, մեներգող՝ Գարեգին Օտապաչեան:

Ներկաներու կրկնութեան պահանջքին վրայ խումբը երգեց «Երջանկութեան աղբիւր» երգը:

Յայտագրի վերջաւորութեան, հանդիսավար ընկ. Սիրական Քերքիւնեան երգչախումբի ղեկավար Վարուժան Նիկոլեանը պատուեց Չուխաճեանի յուշամետալով:

Երգչախումբը, ղեկավարը եւ մեներգողները արժանացան ծաղկեփունջերու:

Սրբազան համերգէն ետք, հայ կեդրոնի Շահնազարեան սրահին մէջ տեղի ունեցաւ յաղթանակի խարխճանք: Եղան արտասանութիւններ եւ երգեր: Խօսք առին եւ երգչախումբի ելոյթը շնորհաւորեցին Համազգայինի ատենապետը եւ հոգաբարձութեան ատենապետ ընկ. Վարդան Յակոբեան:

Կիրակի առաւօտ ժամը 10:30ին, երգչախումբի անդամները իրենց մասնակցութիւնը բերին ամենայն Սրբոց Եկեղեցւոյ պատարագին, ուր պատարագիչ Հայր Սուրբը՝ Հոգշ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան իր քարոզին մէջ անդրադարձաւ սրբազան համերգին եւ շմեշտեց մեր եկեղեցական երաժշտութեան կարեւորութիւնը:

Կէսօրուան ճաշէն ետք, երգչախումբի 36 անդամ-անդամուհիները, խմբավարը եւ Թորոնթոյէն խումբին ընկերացող Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ ընկ. Կարօ Փաշայեան եւ այլ հիւրեր, առաջնորդութեամբ Համազգայինի ատենապետ Սիրական Քերքիւնեանի եւ հոգաբարձութեան անդամ ընկ. Միհրան Լէպլէպիճեանի, շուրջ երեք ժամ նաւային շրջապտոյտով եւ ինքնաշարժով շրջագայեցան Շիզակոյի գետին եւ լիճին վրայ եւ ծանօթացան քաղաքի տեսարժան վայրերուն:

Երեկոյեան, հայ կեդրոնի Շահնազարեան սրահին մէջ տեղի ունեցաւ ողջերթի ճաշկերոյթ-խորխճանք: Խանդավառ մթնոլորտի մէջ երգուեցան բազմաթիւ երգեր: Խօսք առին Ամենայն Սրբոց Եկեղեցւոյ Հովիւ Հոգշ. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, հոգաբարձութեան ատենապետը, Թորոնթոյի Ս.

Աստուածածին Եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ ընկ. Կարօ Փաշայեան, խմբավար Վարուժան Նիկոլեան եւ ընկ. Սիրական Քերքիւնեան:

Խօսք առնողները իրենց գանհատանքն ու շնորհակալութիւնը յայտնեցին երգչախումբի սքանչելի ելոյթին եւ այս առթիւ ստեղծուած խանդավառ ու հայաշունչ միջնորդութիւն համար: Եւ որպէսզի նման ձեռնարկները եւ հանդիպումներ ապագային կրկին կազմակերպուին Շիգակօ եւ Թորոնթօ քոյր քաղաքներ յայտարարուեցան: Կը սիրենք յուսալ, որ երկու քաղաքներու միջեւ ստեղծուած մշակութային եւ եկեղեցական յարաբերութիւնները աւելի կը սերտանան:

Խումբը Շիգակոյէն ճամբայ ելաւ Երկուշաբթի առաւօտ Թորոնթոյի ժամով 10:30ին եւ խանդավառ ու հաճելի միջնորդութեամբ, ազգային եւ եկեղեցական երգերով, ոգեւորող ճառախօսութիւններով եւ ապագայի ծրագիրներու առաջարկներով աւլցուն ճամբորդութեամբ Թորոնթօ հասաւ գիշերուան ժամը 10:30ին:

Հիմա որ հասած ենք մեր տուները եւ երբ կը վերլուծենք Շիգակոյի մէջ մեր անցուցած հոգեյոյզ եւ հպարտառիթ օրերն ու պահերը, պահ մը տատամսինք՝ երա՞զ էր, թէ՛ իրականութիւն...:

Որքան ցանկալի պիտի ըլլար, որ հայահոծ այլ գաղութներ, օրինակ՝ Ելոյթ Շիգակոյէն, յանդգնին Ս. Աստուածածին Եկեղեցւոյ երգչախումբը հրաւիրել, որպէսզի հայ եկեղեցական երաժշտութեան կարօտով տոչորող հայ ժողովուրդի բեկորները առիթն ունենան հաղորդուելու մեր սրբազան հայրապետներուն եւ շարականագիրներուն փառաւոր եւ խնկաբոյր ոգիներուն:

Վարձքերնիդ կատար երգչախումբի անդամներ եւ Շիգակոյի հիւրընկալ ազգայիններ:

«ՅՈՐԻՉՈՆ»
16 Յունուար 1995

ԲԱՅԱՌԻԿ ԵՐԳԱՀԱՆԴԷՍ

Հովանաւորութեամբ Գանատայի մօտ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան նորին վսեմութիւն պրն. Արա Պապեանի եւ կազմակերպութեամբ Հայաստանի քրիստոնէացման 1700-ամեակի Թորոնթոյի Միջ-Յարանուանական Մարմին, Կիրակի, 14 Հոկտեմբեր 2001, երեկոյեան ժամը 7ին, «Օնթարիօ Սայրնս Սենթր»ի սրահին մէջ տեղի ունեցաւ բացառիկ երգահանդէս, նուիրուած Հայաստանի Քրիստոնէացման 1700-ամեակին, որուն ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերայարգելի Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեան, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վերապատուելի Եսայի Սարմազեան եւ 450է աւելի երաժշտասէր ազգայիններ:

Օրուան հանդիսավարն էր պրն. Բաֆֆի Տուտազլեան, որ իր բարի գալուստի խօսքերէն ետք, անդրադարձաւ Հայաստանի քրիստոնէացման կարեւորութեան, որովհետեւ եթէ քրիստոնէութիւնը չընդունուէր, ըսաւ ան, մենք այսօր պիտի չունենայինք գիր եւ գրականութիւն եւ պիտի անհետանայինք ազգերու թատերաբեմէն: Ապա, աւելցուց. «Այսօրուան բացառիկ երեկոն յատուկ իմաստ ունի, քանի նուիրուած է Թարգմանչաց տօնին: Գիրերու ստեղծումէն ետք, Աստուածաշունչի թարգմանութեամբ քրիստոնէութիւնը արմատացաւ եւ տարածուեցաւ Հայաստանի մէջ եւ հայ երգը այդ ծիրին մէջ ունի յատուկ տեղ: Հայ երգի եւ շարականներու ուսուցումով, Աստուծոյ հետ մեր կապը ստացաւ յաւերժական բնոյթ եւ շարունակուեցաւ սերունդէ սերունդ»:

Այնուհետեւ, հանդիսավար պրն. Տուտազլեան բեմ հրաւիրեց Միջ-Յարանուանական Մարմնի ատենապետ պրն. Յակոբ Ճանպազեանը, Մարմնի անունով արտայայտուելու երգահանդէսի մասին:

Պրն. Ճանպազեան ի միջի այլոց ըսաւ.

«Հայաստանի քրիստոնէացման 1700-ամեակին առիթով, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ եւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ միասնական ճիգերով ծնունդ առած Թորոնթոյի Միջ-Յարանուանական մարմինս, նպատակ է ունեցած, քրիստոնէական տարազի եւ պարունակի մէջ, ազգային ու եկեղեցական յատուկ առիթներով գործադրուած հանդիսութիւններուն ընդմէջէն հաղորդակցութիւն եւ մտերմութիւն ստեղծել մասնակից եկեղեցիներու անդամներուն մէջ:

«Սրբոց Թարգմանչաց տօնին առիթով, Միջ-Յարանուանական Մարմնիս համար յատուկ ուրախութեան առիթ եղաւ Թորոնթոյեան հանրայայտ եւ վաստակաւոր մեներգող՝ պրն. Գրիգոր Ճանկէօզեանի ներկայ երգահանդէսին կազմակերպումը, հովանաւորուած Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան Դեսպան՝ Նորին Գերազանցութիւն պրն. Արա Պապեանի:

«Պրն. Գրիգոր Ճանկէօզեան ուրախութեամբ եւ օրինակելի ոգիով ընդառաջեց Մարմնիս հրաւէրին եւ կասկած չունինք, որ իր բծախնդիր արուեստագէտի ճիգերուն շնորհիւ, մեզի հրամցուելիք հոգեւոր շարականներու, դա-

սական եւ հայրենասիրական երգերու փունջը՝ վայելքի առիթ պիտի հանդիսանայ բոլորիս:

«Մեզի համար ուրախութեան կրկնակի առիթ է կարեւոր այս երգահանդէսին մասնակից ունենալ Գերմանիայէն հանրածանօթ մեցո սոփրանօ՝ Նորա Սուրուզեանը, Թորոնթոնայ տաղանդաւոր դաշնակահարուհի՝ Լարա Ֆրատրֆօնանը եւ համբաւաւոր դաշնակահար՝ Տէյվիտ Մաքարթնին: Սրտանց շնորհակալութիւն կը յայտնենք իրենց մասնակցութեան համար:

«Մեր սրտագին շնորհակալութիւններն ու խորագգաց շնորհակալութիւնները կը յայտնենք յատկապէս մենակատար պրն. Գրիգոր Ճանկէօգեանին եւ իր ազնիւ տիկնոջ՝ Աշխէնին, որոնք հաւատքով եւ մեծ սիրով իրենց կարելիութիւնները ի սպաս դրին Թորոնթոնի Միջ-Յարանուանական Մարմնիս կազմակերպութեամբ տեղի ունեցող այս երգահանդէսի յաջողութեան համար:

«Շնորհակալութիւն կը յայտնենք նաեւ կազմակերպիչ յանձնախումբի իւրաքանչիւր անդամին: Այս բացառիկ երեկոյթի յաջողութիւնը կը պարտինք շատերու նուիրումին ու անխոնջ աշխատանքին, որոնց կ'ըսենք. վարձքերնիդ կատար»:

Յայտագրի առաջին մասը սկսաւ Գրիգոր Ճանկէօգեանի երգեցողութեամբ որ բեմ եկաւ եկեղեցական շապիկ հագած, ձեռքէն վառուած մոմ, երգելու համար եկեղեցական շարականներ: Ան հերթականօրէն երգեց Կոմիտասի «Խորհուրդ Խորին», «Հրաշափառ» եւ «Թագաւոր Երկնաւոր» շարականները:

Ճանկէօգեանին յաջորդեց Նորա Սուրուզեան, որ նոյնպէս եկեղեցական շապիկ հագուած, ձեռքին վառուած մոմ, երգեց Մակար Եկմալեանի «Ամէն Հայր Սուրբ» եւ «Սուրբ, Սուրբ» շարականները:

Հոգեւոր երգ մը՝ «Ինչ Մեծ Ես Դուն» (հեղինակ՝ S.K. Hinc, թարգմանութիւն՝ Մ. Գաբրիէլեան) ներկայացուեցաւ զուգերգով, Գրիգոր Ճանկէօգեանի եւ Նորա Սուրուզեանի կողմէ:

Դասական եւ ժողովրդային երգերով հանդէս եկաւ նախ Գրիգոր Ճանկէօգեան երգելով «Մովի Երգը» (Ա. Մայիլեան) եւ «Քոյր Իմ Նազելի» (Դ. Ղազարեան): Իսկ Նորա Սուրուզեան երգեց Կոմիտասի «Չինար Ես» եւ «Գարուն Ա», Ճանկէօգեանի երգեցողութեան դաշնամուրով ընկերակցութեամբ Լարա Ֆրատրֆօնանի եւ երգեհոնով մասնակցութեամբ Տէյվիտ Մաքարթնիի, իսկ Նորա Սուրուզեանի երգեցողութեան դաշնամուրով ընկերակցութեամբ Լարա Ֆրատրֆօնանի:

Համբաւաւոր երգիչ Գրիգոր Ճանկէօգեան բեմ գալով, իր հաղորդական եւ քնարական ձայնով երգեց Շուփերթի «Serenade» եւ R. Siczynski-ի «Vienna City Of Dreams» երգերը, դաշնամուրով ընկերակցութեամբ նշանաւոր դաշնակահար Տէյվիտ Մաքարթնիի:

Տաղանդաւոր դաշնակահար Լարա Ֆրատրֆօնանի կողմէ Շոփէնի «Ballade No. 4 In F Minor Op. 52» երաժշտութենէն ետք, Նորա Սուրուզեան իր մեցո սոփրանօ թաւալին եւ առինքնող ձայնով երգեց «Noh Ho Colpa From I Domeneo» (Mozart) եւ «Ave Maria» (Bach - Gounod) երգերը, դաշնամուրով ընկերակցութեամբ Լարա Ֆրատրֆօնանի:

Գրիգոր Ճանկեօզեան իր հեզասահ, ինքնավստահ եւ զեղեցիկ ձայնով, իսկ Նորա Սուրուզեան երաժշտական գրաւիչ եւ հիւթեղ ձայնով, զուգերգեցին Դ. Ղազարեանի «Գետակի Վրայ» երգը եւ Ա. Տիգրանեանի Թամարի եւ Դաւիթի զուգերգը «Դաւիթ Բէկ» օփերայէն, մեծ յաջողութեամբ եւ բեմային արտայայտութեամբ եւ բծախնդրութեամբ:

15 վայրկեան դադարէ ետք, յայտագրի երկրորդ մասը սկսաւ 11 Սեպտեմբեր 2001 թուականին, Մ. Նահանգներու Նիւ Եորքի եւ Ուաշինկթընի երկնաբեր շէնքերու եւ փենթակոնի կեդրոնին վրայ եղած ահաբեկչական աղէտին զոհուած զոհերու յիշատակին, Նորա Սուրուզեանի կողմէ երգուած «Amazing Grace» երգով, որ հանդիսականներուն կողմէ ունկնդրուեցաւ յտընկայս, երգեհոնով ընկերակցութեամբ Տէյվիտ Մաքքարթնի: Ապա, Նորա Սուրուզեան, խոր ապրումով յաջորդաբար երգեց Կոմիտասի «Անտունի», Ե. Միրզոյեանի «Ասում Են Թէ» եւ Համբարձում Պէրպէրեանի «Անոր» երգերը, դաշնամուրով ընկերակցութեամբ Լարա Ֆատըքճեանի:

Գնահատուած դաշնակահարուհի Լարա Ֆատըքճեանի կողմէ Ա. Պապաջանեանի «Վաղարշապատի Պար»էն ետք, Գրիգոր Ճանկեօզեան երգեց Ալ. Հէքիմեանի «Հայոց Կանայք», Խ. Աւետիսեանի «Երբ Խանդում Ես», Ն. Գալէնտէրեանի «Ծովափին», Աշոտ Գուսանի «Հայրիկ» եւ Մ. Թոշիկեանի «Անի» (խօսք՝ Յ. Շիրազի): Դաշնամուրով եւ երգեհոնով ընկերակցութեամբ Լարա Ֆատըքճեանի եւ Տէյվիտ Մաքքարթնիի:

Երգահանդէսը փակուեցաւ Գրիգոր Ճանկեօզեանի եւ Նորա Սուրուզեանի կողմէ երգուած Ա. Սաթեանի «Կարօտի Երգ» եւ Ալ. Յարութիւնեանի «Հայրենիքիս Հետ» զուգերգով, դաշնամուրով եւ երգեհոնով ընկերակցութեամբ Լարա Ֆատըքճեանի եւ Տէյվիտ Մաքքարթնիի:

Ժողովուրդը, բոլոր երգերը գնահատեց ծափողջոյններով: Սակայն, «Հայրենիքիս Հետ» երգը կրկնութեան արժանացաւ ներկաներուն բոլուն ծափահարութիւններուն հետեւանքով:

Փակման խօսքով հանդէս եկաւ հանդիսավար պրն. Բաֆֆի Տուտագըլեան եւ Միջ-Յարանուանական Մարմնի անունով շնորհակարտեց նշանաւոր երգիչներ Գրիգոր Ճանկեօզեանը եւ Նորա Սուրուզեանը, ինչպէս նաեւ դաշնակահարներ Լարա Ֆատըքճեանը եւ Տէյվիտ Մաքքարթնին, որոնց այս առիթով, Միջ-Յարանուանական Մարմինը զեղեցիկ գաղափարը ունեցած էր յատուկ, զեղատիպ գնահատագիրներով պատուել:

Այսպէս, Գերյարգելի Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեան, դաշնակահար Տէյվիտ Մաքքարթնիին յանձնեց յատուկ գնահատագիրը, Վերապատուելի Եսայի Սարմազեան՝ դաշնակահար Լարա Ֆատըքճեանին, Գերապատիւ Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան՝ Նորա Սուրուզեանին եւ պրն. Յակոբ Ճանպազեան՝ Գրիգոր Ճանկեօզեանին:

Յայտագրին մասնակցող չորս արուեստագէտները արժանացան նաեւ ծաղկեփունջերու:

Այս առիթով, խօսք առաւ Միջ-Յարանուանական Մարմնի ատենապետ պրն. Ճանպազեան, եւ իր կարգին շնորհակալական խօսք ուղղեց արուեստագէտներուն, Կազմակերպիչ Յանձնախումբի անդամներուն, տիկին Աշխէն Ճանկեօզեանին, նուիրատուներուն եւ ձեռնարկը քաջալերող ներկայ ազգա-

յիններուն, որոնց բարոյական եւ նիւթական օգնութեան շնորհիւ կարելի եղաւ պատմական այս բացառիկ երգահանդէսը յաջողցնել, որուն հասոյթը պիտի յատկացուի Հայաստանի մէջ բարեսիրական նպատակի մը իրագործման:

Ձեռնարկէն ետք, պրն. Յակոբ Ճանպազեանի բնակարանին մէջ տեղի ունեցաւ յատուկ հիւրասիրութիւն, ձեռնարկի յաջողութեան մասնակից արւեստագէտներուն, կազմակերպիչներուն եւ նուիրատուներուն ի պատիւ:

«ՅՈՐԻՉՈՆ»
Յոկտեմբեր, 2001



Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Շաքէ Գոթոյեաններ
երգչուհի, երաժշտագէտ եւ յորինող Անահիտ Կուտուզեանի հետ
26 Մայիս 2006ին

Հ.Օ.Մ.Ի ԱՄԱՌՆԱՅԻՆ ԱՄԷՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆՂԷՍ

Ուրբաթ, 21 Օգոստոս 1987, երեկոյեան ժամը 7:30ին, Հայ Կեդրոնի սըրահին մէջ տեղի ունեցաւ Թորոնթոյի Հայ Օգնութեան Միութեան Ամառնային Ամէնօրեայ Վարժարանի 18րդ տարեշրջանի աւարտական հանդէսը, ներկայութեամբ 300է աւելի ծնողներու եւ գաղութի ղեկավար անձնաւորութիւններու:

Աշակերտականի շարք մը խմբերգներէ ետք (դաշնամուրի վրայ ընկերակցութեամբ երաժշտութեան ուսուցչուհիին՝ տիկ. Մարինէ Տէր Պօղոսեանի), վարժարանի տնօրէնուհին՝ տիկ. Տիանա Հանրմեան մանրամասն զեկուցում մը տուաւ, յայտարարելով, որ այս ամառ ունեցած են 102 աշակերտաշակերտուհիներ, (26ը՝ մանկապարտէզ եւ 76ը՝ Ա.-Ը. կարգեր): Ուսուցչական կազմի թիւը եղած է 12: Կազմակերպուած է մէկ ծնողական ժողով, ինչպէս նաեւ աշակերտներու ձեռային աշխատանքներու ցուցահանդէս մը, որ մեծ հետաքրքրութիւն ստեղծած է այցելուներուն մօտ: Ապա գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, որուն ընթացքին ելոյթ ունեցան բողբոջ, կոկոն եւ ծաղիկ դասարաններու աշակերտները (արտասանութիւն, երգ):

Խմբային արտասանութեամբ («Երեւանին») հանդէս եկան Բ. դասարանի աշակերտները, որմէ ետք բողբոջ եւ կոկոն դասարաններու աշակերտները կատարեցին մանկական խաղ մը՝ «պզտիկ քոյր»:

Ծաղիկ դասարանի աշակերտները ներկայացուցին «Ամրան առաւօտ»ը: Նախակրթարանի Զ., Է. եւ Ը. կարգերու աշակերտութեան հայկական պարը՝ «Տաւիղներու պար» եւ «Սուրբերու պար», իրենց տարազներով եւ պարային ներդաշնակութեամբ, արժանացան հանդիսականներուն ջերմ ծափողջոյններուն:

Այս անգամ Գ. կարգի աշակերտները բեմ գալով, խմբային արտասանութեամբ ներկայացուցին «Մասիսին մօտիկ» քերթուածը:

Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» մասնաճիւղի վարչութեան ատենապետուհի ընկհ. Հուրի Նաճարեան, խօսեցաւ Հ.Օ.Մ.ի առաքելութեան եւ հայեցի կրթութեան կարեւորութեան մասին:

Յաջող դերակատարութեամբ թատերգութիւն մը ներկայացուցին Ը. կարգի աշակերտները: Յակոբ Պարոնեանի «Քաղաքավարութեան Վնասներ»էն տեսարան մը՝ երգիծական միջնորոտով յագեցուց սրահը:

Յաջորդաբար երկու խմբային արտասանութիւններ տեղի ունեցան: Գ. եւ Ե. կարգերու աշակերտները՝ «Հայրենի Աղբիւր» քերթուածով, Բ., Զ. եւ Է. կարգերու աշակերտները՝ Սարմէնի «Հայրենի Տուն» քերթուածով:

Վերջապէս, Ա. կարգի աշակերտները, որ այնքան սքանչելի կըռոյթով պարեցին «Քեսապցիներու պար»ը:

Կատարուեցաւ մանկապարտէզի ծաղիկ դասարանի շրջանաւարտներուն վկայականաց բաշխումը:

Խօսք առաւ վարժարանի ուսումնական մարմնի ատենապետ Բժ. Կարպիս Մերճանեան, նշելով որ սոյն վարժարանը հիմնադրութեան թուականէն ի վեր տուած է 200է աւելի շրջանաւարտներ:

Ապա, բեմ հրաւիրուեցան վարժարանի 18 տարեշրջաններու տնօրէնները՝ Տիգրանուհի Արթինեան, Րաֆֆի Տէր Պօղոսեան, Միհրան Ճիգմէճեան, Գրիգոր Պաղտասարեան եւ Գրիգոր Հոթոյեան, որպէսզի նոր շրջանաւարտները անոնց ձեռքէն ստանան իրենց վկայականները:

Դպրոցի լաւագոյն միջինը ունեցող աշակերտը՝ Կարօ Աբրահամեան ստացաւ Ա. մրցանակը, Սիլվա Պէրպէրեան՝ Բ. մրցանակը: Տիպար աշակերտի մրցանակը խլեց Արաքսի Եղոյեան:

Հոս մեր գնահատանքը կ'ուզենք արձանագրել Բժ. Կարպիս Մերճանեանին, որ տարիներէ ի վեր, ժամանակ եւ միջոց կը գտնէ առողջապահական գիտելիքներու մասին դասախօսելու Ամառնային Վարժարանի է. եւ Ը. կարգերու աշակերտութեան: Ան նաեւ, ամէն տարի, իր միջոցներով մետաղէ մըրցանակներ պատրաստել կու տայ, մրցանակաւոր աշակերտին անունը փորագրուած եւ, աւարտական հանդէսին կը յանձնէ աշակերտներուն:

Առողջապահական գիտելիքներու առաջին մրցանակը շահեցաւ Ը. կարգէն Կարօ Աբրահամեան, իսկ երկրորդ մրցանակը՝ Անուշ Թաշճեան:

«Տիգրանուհի Արթինեան» մրցանակը, որ 1977էն ի վեր հաստատուած է վարժարանի առաջին տնօրէնուհի տիկ. Տիգրանուհի Արթինեանի կողմէ եւ կը տրուի աւարտական տիպար աշակերտին, այս տարի շնորհուեցաւ Կարօ Աբրահամեանին: Տասը շրջանաւարտ աշակերտներ վկայականներու բաշխումէն ետք ստացան Ուսումնական Մարմնի նուիրած հայերէն-անգլերէն բառարաններ եւ Հ.Օ.Մ.ի նուիրած Հայաստանի քարտէսները:

Խօսքով ու Պահպանիչով փակուեցաւ հանդէսը:

Շատ փափաքելի պիտի ըլլայ, որ ակամայ Ամէնօրեայ Վարժարանէն դուրս մնացած հայ աշակերտները գէթ կարենան օգտուել Ամառնային Վարժարանի հայաշուկնչ միջնորդութեն ու գան հաղորդուել Մեսրոպի աւանդով:

«ՅՈՐԻՉՈՆ»
21 Սեպտեմբեր 1987

**ՀԱՅ ԴՊՐՈՑԸ ՍԻՐՏՆ Է ՀԱՅՈՒՆ
Հ.Օ.Մ.Ի ԱՍԷՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍԸ**

Ուրբաթ, 25 Յունիս 1993, երեկոյեան ժամը 7:30ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Օ.Մ.Ի Պապայեան մանկապարտէզի, Գոլլոյեան նախակրթարանի եւ միջնակարգի ամալերջի հանդէսը, որուն ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Գերշ. Տ. Խաթակ Մ. Վրդ. Յակոբեան, դպրոցի բարերարներ, նուիրատուներ, միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, հրաւիրեալներ եւ 500է աւելի ծնողներ եւ ազգայիններ:

Հանդիսավար Պրն. Մուշեղ Գարագաշեանի բացման խօսքէն ետք, սրահ մուտք գործեցին միջնակարգի ծրագրասարանի աշակերտները, առաջնորդութեամբ Չահակիր Արշալոյս Գրաճեանի:

Ապա սրահ մուտք գործեցին նախակրթարանի աւարտական ճրգ կարգի աշակերտները: Ծրագրասարանի աշակերտ Արշալոյս Գրաճեան Չահր փոխանցեց ճրգ կարգի աշակերտ Գէորգ Մնացականեանին:

Իսկ մանկապարտէզի աւարտական ծաղիկ կարգի աշակերտներու մուտքին, ճրգ գրասարանի աշակերտ Գէորգ Մնացականեան Չահր փոխանցեց ծաղիկ գրասարանի աշակերտ Վարագ Պապեանին:

«Օ՛ր Գանատա» եւ «Մեր Հայրենիք» օրհներգներու ունկնդրութենէն ետք, մանկապարտէզէն շրջանաւարտ աշակերտները հանդէս եկան բարի գալուստի եւ անգլերէն երգերով, որոնց յաջորդեցին երկու արտասանութիւնները՝ «Մեսրոպ Մաշտոցին» եւ «Մայրենի Լեզու»:

Բոլոր երգերուն դաշնամուրով կ'ընկերակցէր Տիկ. Արաքսի Գասարճեան:

Տեղի ունեցաւ վկայականներու բաշխում: 39 աշակերտ-աշակերտուհիներ իրենց վկայականները ստացան տնօրէն Պրն. Մարգար Շարապխանեանի եւ մանկապարտիգպանուհի Տիկ. Մելինէ Ճիկերճեանի ձեռամբ:

Շրջանաւարտ աշակերտները երգեցին «Երգ Հրաժեշտ»ի եւ արտասանեցին «Արձակուրդը» ոտանաւորը:

Բեմ բարձրացան նախակրթարանի ճրգ կարգի շրջանաւարտ 29 աշակերտները՝ 18 մանչ եւ 11 աղջիկ:

Խոսքով Ասոյեանի «Դէպի Երկիր» բանաստեղծութեան խմբային արտասանութենէն ետք, անոնք իրենց վկայականները ստացան տնօրէն Պրն. Մարգար Շարապխանեանի եւ դաստիարակ-ուսուցչուհի Տիկ. Յասմիկ Պապեանի ձեռամբ:

Խօսք առաւ վարժարանի տնօրէնը եւ կարգ մը ծանօթութիւններ տրուաւ վարժարանի միամեայ գործունէութեան մասին:

1992-1993 տարեշրջանին վարժարանը ունեցած է 358 աշակերտ եւ 23 ուսուցիչ-ուսուցչուհի:

Վարժարանի պիւտճէն \$888,200.00 տուլար է, որուն \$786,658.00 տուլարը կը գոյանայ կրթաթոշակներէ, արձանագրութիւններէ, Հ.Օ.Մ.Ի Շրջանային եւ տեղական վարչութիւններու յատկացումներէ, վարժարանի հիմնադրամէն,

վարժարանի ծնողական յանձնախումբի կազմակերպած ձեռնարկներին, Հայ Կեդրոնի վարչութենին, Պապայեան հիմնարկութենին, Կիւլպէնկեան հաստատութենին, դաշնակցային կառավարութենին, Հայ Երեցներու Ընկերակցութենին եւ այլ յատկացումներին:

Պիւտճէի բացը՝ \$101,542.00 տուար, գրեթէ գոյացաւ դպրոցի տարեկան ճաշկերոյթին հանգանակուած գումարով, այլ ձեռնարկներով եւ նուիրատուութիւններով:

Այս առթիւ, տնօրէնը շնորհակալութիւններ յայտնեց վերոյիշեալ մարմիններուն, հաստատութիւններուն եւ կազմակերպութիւններուն, որոնք ամէն տարի իրենց կարելի միջոցներով կ'օժանդակեն վարժարանի պիւտճէի հաւասարակշռութեան: Ան կարգաց ցանկը դպրոցի մրցանակաւոր աշակերտներուն:

1992-1993 դպրոցական տարեշրջանին, քննութեանց մասնակցող (տարին երկու քննութիւն) 4րդ դասարանին սկսեալ հետեւեալ աշակերտները 90էն վեր ընդհանուր միջին ապահոված են՝ Ճանպարհեան Լոուի (ապահոված է դպրոցի բարձրագոյն միջինը՝ 98.6), Շիթիլեան Հիլտա, Մնացականեան Մեդեդի, Գրաճեան Արամ, Ոսկերիչեան Անի, Մնացականեան Յոլինէ, Էլլէնս Ալին, Սաքարեան Այտա, Գարագաշեան Նարէ, Պօղոսեան Պօղոս, Աթիքեան Հայկ, Մխսի-Արթինեան Յակոբ, Խաչերեան Նիրվա, Սրապեան Բաֆֆի, Սարգիսեան Բաֆֆի, Ապրաճեան Մարկոս:

5րդ դասարանի հետեւեալ հինգ աշակերտները 90էն վեր միջին հաւաքած են՝ Վազրիկ Շարապխանեան՝ 97.99 միջինով դասարանի բարձրագոյն միջինը, Դալար Պէյլէրեան, Նայիրի Մաճառեան, Ալեքսիս Աբգարեան եւ Սիւզի Սալլախեան:

6րդ դասարանի բարձրագոյն միջիններ՝ Մնացականեան Գէորգ, Սարգիսեան Յակոբ, Ղարիպեան Սեւակ, Ղազարեան Բաֆֆի, Պագոս Փաթրիք, Տէր Գալստեան Ջարէհ, Սալլախեան Արշօ, Կէտիկեան Լորի եւ Կէտիկեան Գարին:

7րդ դասարանի բարձրագոյն միջիններ՝ Սարգիսեան Լորիկ, Սալլախեան Վարդան, Մաթոսեան Հրանդ:

8րդ դասարանի բարձրագոյն միջիններ՝ Ճիկէրճեան Նաթալի եւ Սարօ Մկրտիչեան:

Շրջանաւարտ 6րդ դասարանին հայերէն լեզուի բարձրագոյն միջինը հաւաքած ըլլալով, Գէորգ Մնացականեան արժանացաւ Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» մասնաճիւղի մրցանակին, որ յանձնեց մասնաճիւղի փոխ-ատենապետուհի Մարալ Սեթեան:

Գծագրութեան արուեստի մրցանակը շահեցաւ Ժագ Միքայէլեան. իսկ երաժշտութեան մէջ յիշատակի արժանի՝ Գաթրին Մանուկեան:

Դպրոցի բարձրագոյն միջինը՝ 98.6 հաւաքած աշակերտուհին՝ Լոուի Ճանպարհեան արժանացաւ տնօրէնութեան մրցանակին:

Նախակրթարանի մրցանակաբաշխումէն ետք, բեմ եկան միջնակարգէն շրջանաւարտ 22 աշակերտները, 11 աղջիկ եւ 11 մանչ, որոնք իրենց վկայականները ստացան ուսումնական մարմնի ատենապետ Պրն. Յարութիւն Շիթիլեանի, տնօրէն Պրն. Մարգար Շարապխանեանի եւ դաստիարակ Պրն. Մուշեղ Գարագաշեանի ձեռամբ:

Հայկական Եռագոյնին նուիրուած խմբական արտասանութենէն ետք, հրաժեշտի խօսքերով հանդէս եկան Նաթալի Ճիկէրճեան (հայերէն), Սարօ Մը-կըրտիչեան (անգլերէն), Շողիկ Տէրտէրեան (ֆրանսերէն):

Ցրդ դասարանէն հայերէն լեզուի մէջ բարձրագոյն միջին ունեցած են երկու աշակերտուհիներ՝ Նաթալի Ճիկէրճեան եւ Շողիկ Տէրտէրեան, որոնք արժանացան Հ.Օ.Մ.ի մրցանակին: Իսկ հայոց պատմութեան Յարուսթիւն Սը-րապեան մրցանակին (\$600 տոլար) արժանացաւ Կարօ Սարգիսեան: Ծառայա-սէր մրցանակին արժանացաւ Նանոր Նիկոլեան: Տիպար աշակերտի՝ Թամար Ասատուրեան:

Խօսք առաւ վարժարանի ուսումնական մարմնի ատենապետ Պրն. Յարուսթիւն Շիթիլեան, որ շնորհաւորելէ ետք շրջանաւարտ աշակերտներն ու ա-նոնց ծնողները, աւելցուց--

«Վստահ ենք, որ եթէ մեր աշակերտները նոյն թափով եւ նոյն կարգա-պահութեամբ շարունակեն աշխատիլ, շատ աւելի բարձր վկայականերու պիտի արժանանան:

«Այս ամերուն վրայ հայկական դպրոց պահելը այդքան ալ դիւրին գործ է: Պետութեան եւ քաղաքապետութեան գործ է: Տարեկան \$800,000.00 տոլարէն աւելի պիւտճէով դպրոց պահելը կարելի պիտի չըլլար առանց հսկա-յական աշխատանքի եւ զոհաբերութեան:

«Հայ վարժարան, հայ կեդրոն եւ հայ ընտանիք եւ ուսուցիչ-ծնողք-ա-շակերտ գործակցութիւնը անհրաժեշտ է, որպէսզի մէկը միւսին գործը ամ-բողջացնէ: Իրարու հետ գործակցութեամբ պիտի ապահովենք այս վարժարա-նին եւ մեր աշակերտներուն ապագան:

«Այս գործակցութեան լաւագոյն ապացոյցը ունեցանք վերջերս: Որ-պէսզի կարենանք մեր գործերը լաւագոյնս ծրագրել կանուխ արձանագրու-թեան գրութիւնը որդեգրեցինք: Շնորհակալութիւն մեր ծնողներուն, որոնք փութաջանութեամբ եկան եւ արձանագրել տուին իրենց զաւակները եւ ներ-կային մեր աշակերտութեան 95 առ հարիւրը արդէն արձանագրուած է»:

Ապա, Պրն. Շիթիլեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէին, հայ կեդրոնի վարչութեան եւ տնօրէնութեան, Հ.Օ. Մ.ի Կեդրոնական, Շրջանային եւ տեղական վարչութիւններուն, հայ կեդրո-նին մէջ գործող բոլոր միութիւններուն եւ կազմակերպութիւններուն, Պապա-յեան հաստատութեան, Գալուստ Կիւլպէնկեան հաստատութեան, հիմնադրամի յանձնախումբին, դպրոցի ծնողական յանձնախումբին եւ Երեցներու Ընկե-րակցութեան, որոնց օժանդակութեան շնորհիւ կարելի կ'ըլլայ հայեցի դաստ-իարակութիւն ջամբել հայ մատղաշ սերունդին:

Փակման խօսքը կատարեց Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ հովիւ Գերշ. Տէր Խաժակ Ծ. Վրդ. Յակոբեան, որ իր խրատականը տալէ եւ զա-նոնք շնորհաւորելէ ետք, ի միջի այլոց ըսաւ--

«Դուք բոլորդ ալ մեր հոգիներուն մէջ արմատներ ունիք: Սակայն, ձեր արմատները հայրենի հողէն հեռու գտնուելով տկար կ'ըլլան: Հանճարեղ բա-նաստեղծ Յովհաննէս Թումանեան, ասկէ հարիւր տարի առաջ, անդրադարձած է հայ ժողովուրդի ցրուած վիճակին՝ աշխարհի չորս ծագերուն եւ անոր գո-յութեան պահպանութեան համար առաջարկած է ունենալ հոգեկան հայրենիք:

Ներկայիս ձեր հոգեկան հայրենիքը հայ դպրոցն է, որուն հողին վրայ դուք կը կոխէք եւ ձեր աւիչը կ'առնէք: Երբ մեծնաք, բարձրագոյն վկայականներու եւ պաշտօններու արժանանաք, երբեք մի դաւաճանէք ձեր երազներուն, որոնք կերտեցիք այս դպրոցի գրասեղաններուն հակած, հայ ուսուցիչ-ուսուցչուհիներուն անսահման զոհաբերութեամբ: Յիշեցէք ձեր անցեալը՝ գուրգուրալով ձեր հոգեկան հայրենիքին վրայ»:

Հանդէսը փակուեցաւ Հայր Սուրբին «Պահպանիչ»ով:

«ՀՈՐԻՉՈՆ»
1993



Ձախէն աջ՝
Գրիգոր Գոթոյեան, բանաստեղծ Մանուէլ Քեօտէյեան,
բանաստեղծ Արտեմ Յարութիւնեան, Ֆրանսայէն բանաստեղծ Ռուբէն Սելիք,
գրող, հրապարակագիր, դաստիարակ Մարգար Շարապխանեան
եւ գրագետ Յակոբ Խաչիկեան՝ 2004ին

Հ.Օ.Մ.Ի ԱՄԱՌՆԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Հակառակ միջնորոտային աղիտալի պայմաններուն, կայծակ, շանթ, տեղատարափ անձրեւ, հիւսիսային թորոնթոյի կարգ մը շրջաններու ելեկտր-րական հոսանքի խզումը, Ուրբաթ, 19 Օգոստոս, 2005, ժամը 7:30ին, ինչպէս յայտարարուած էր, տեղի ունեցաւ Հ.Օ.Մ.ի Ամառնային Ճամբարի 15-ամեակի աւարտական հանդէսը, Հայ Երիտասարդական Համալիրի «Համագային» թատերասրահին մէջ, որուն ներկայ գտնուեցաւ Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեան, Հայ Կեդրոնէն ներս գործող միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչները, հրաւիրեալներ եւ հոծ թիւով ծնողներ եւ ազգայիններ:

Հանդիսութիւնը սկսաւ Ճամբարի Միլ դասարանէն մինչեւ Թ. դասարաններու աշակերտներու բեմին վրայ շարուելով Գանատայի եւ Հայաստանի պետական օրհներգներու երգեցողութեամբ, ապա օրուան հանդիսավար եւ Ճամբարի տնօրէնուհի տիկին Սիլվա Փայլեան տեղեկացուց, թէ Հ.Օ.Մ.ի ճամբարը այս տարի ունեցած է յատուկ մաղթերգ, որուն բառերը գրած է Պրն. Գրիգոր Հոթոյեան եւ եղանակաւորած՝ Պրն. Գէորգ Յարութիւնեան, որ այսուհետեւ միշտ պիտի երգուի Ճամբարի առաւօտեան աղօթքէն ետք: Ծնոհիւ Ճամբարի երաժշտութեան ուսուցչուհի տիկին Նատա Նաւասարդեանի, աշակերտները երկու շաբթուան ընթացքին սորվեցան Մաղթերգը:

Մաղթերգի երգեցողութենէն ետք, բացման խօսքով հանդէս եկաւ տիկին Սիլվա Փայլեան, ան ի միջի այլոց ըսաւ.

«Հ.Օ.Մ.ի Ամառնային Ճամբարը այսօր կը լրացնէ իր 15րդ փայլուն տարեշրջանը, որ կը գուգադիպի Հայ Գրերու Գիւտին 1600-ամեակին, փոխանցուած մեզի Սուրբ Մեսրոպէ, Ս. Թարգմանիչներէ եւ դարերու ընթացքին Հայ եկեղեցականութեան եւ հայ մտաւորականութեան, ինչպէս նաեւ հայ դպրոցներու ճամբով, պահելով եւ զարգացնելով մեր ազգային լեզուն, գրականութիւնը եւ մշակոյթը:

«Հ.Օ.Մ.ի Ամառնային Վարժարանը ապա՝ Ճամբարը, անմասն չմնաց այս աշխատանքին մէջ, հարիւրաւոր աշակերտներ ոտք դրին այս յարկէն ներս, ուր վայելեցին հոգածութիւն, գուրգուրանք եւ դարձան ուշադրութեան առարկայ, շրջապատուեցան իրենց ապագայով մտահոգ անձերով, որոնք հետապնդեցին, շրջապատուեցան իրենց ապագայով մտահոգ անձերով, որոնք հետապնդեցին, քաջալերեցին, պատրաստելով եւ արմատացնելով հայ մշակոյթի, հայ լեզուի հանդէպ սէր եւ հետաքրքրութիւն, որովհետեւ միայն հայերէն լեզուով եւ կամ հայերէն բառերէն ծծելով այն ներկատարը, որ կենսանիւթն է հայ ապրելու պահանջին ու հաճոյքին: Մեր արմատներուն, մեր շրնորհներուն, մեր կարողութիւններուն տեղեակ ըլլալու համար, աւելի հարազատ եւ աւելի վստահելի տեղ գոյութիւն չունի, քան հայ դպրոցը, հայ ճամբարը:

«Այս տարի ճամբարը իր դռները բացաւ 4 Յուլիս 2005էն 128 աշա- կեր ներով, իսկ պաշտօնական բացումը կատարուեցաւ 12 Յուլիս 2005ին, եւ որով- հետեւ արձանագրութիւնները տեղի կ'ունենային շաբաթական դրութեամբ, շաբաթ առ շաբաթ թիւը բարձրնալով հասաւ 200ի:

«Այս տարուան մեր նորութիւնը եղաւ մանկամտուրի հաստատումը, ուր ունեցանք 17 մանուկներ՝ 2-3 տարեկանի միջեւ:

«Ճամբարի պատասխանատու անձնակազմի թիւն էր՝ 15, որոնց միա- ցած էին 17 կամաւորներ՝ մեծամասամբ Հ.Օ.Մ.ի Երկրորդական Վարժարանի աշակերտներէն:

«Բոլոր աշակերտները, Չորեքշաբթի օրերը հիւրասիրուեցան փիցցա- յով եւ զովացուցիչներով, շնորհիւ նուիրատուներուն: Հոս պարտք կը զգամ շնորհակալութիւն յայտնել բոլոր անոնց, որոնք բարոյապէս եւ նիւթապէս օգ- տակար հանդիսացան ճամբարին: Ծնորհակալութիւն նաեւ ընկեր Գրիգոր Հո- թոյեանին, իր գրած մաղթերգին եւ Պրն. Գէորգ Յարութիւնեանին՝ երաժըշ- տութեան յորինումին համար, մեր շնորհակալական խօսքը կ'երթայ նաեւ «Հայ Հորիզոն»ի հեռատեսիլի տնօրէն Պրն. Սուրէն Զէքիճեանին եւ նկարիչ Պրն. Ժագ Վարպետեանին, Երիտասարդական Կեդրոնի Տնօրէն Մարմնի եւ մանաւանդ սիրելի ծնողներուն, ձեր վստահութեան եւ քաջալերանքին համար:

«Այս առիթով կը շնորհաւորենք Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» Մասնաճիւղի վարչութիւնը, ճամբարի Յանձնախումբը, որոնք նպատակի իրագործման հա- մար ջանք բարձր բռնած վազեցին ու կը վազեն տակաւին»:

Յայտագիրը գործադրութեան դրուեցաւ Միլ դասարանի աշակերտնե- րուն կողմէ «Խնձոր կը ծախենք» արտասանութեամբ եւ «Զիքըն տանս» պա- րով,

Մանկապարտէզի աշակերտները արտասանեցին «Մայրենի լեզու» եւ «Պիտի Սորվիմ» ոտանաւորներ եւ երգեցին «Թիթեռներ» եւ «Զիւլուրներ» երգերը:

Մանկապարտէզի բաժնի բեմէն հեռանալէ ետք, Ա. եւ Բ. դասարաննե- րու աշակերտներ արտասանեցին «Սուրբ Մեսրոպ» քերթուածը եւ ներկայա- ցուցին «Կիկոսի Մահը» թատերգութիւնը որոնց յաջորդեց հայկական պար մը:

Գ. եւ Դ. դասարանի աշակերտները ներկայացան «Սուրբ Մեսրոպ» ար- տասանութեամբ, «Անբան Հուրին» թատերգութեամբ:

Ե., Զ., Է., Ը., Թ. դասարաններու աշակերտները արտասանեցին «Այբու- բեն Հայոց» քերթուածը եւ ներկայացուցին «Սուտասանը» թատերգութիւնը, ապա հայկական պարով հանդէս եկան, միացած ճամբարի կամաւորներով:

Ժ., Լ., Ծ. դասարաններու կողմէ ներկայացուած «Տէրն ու Մառան» թատերգութենէն ետք, տեղի ունեցաւ պատկերի ջուլցադրութիւն առնուած ճամբարի առօրեայ կեանքէն: Պատկերերի զը պատրաստուած էր Հ.Օ.Մ.ի Երկ- րորդական Վարժարանէն այս տարի շրջանաւարտ Չարլզ Մ. քլաուտի կողմէ:

Ճամբարի անձնակազմը հանդէս եկաւ ռուսական խանդավառ պարով: Բոլոր պարերը, երգերը, արտասանութիւնները եւ թատերգութիւնները ժողո- վուրդը ընդունեց բուռն ծափահարութիւններով:

Հանդիսութեան վերջաւորութեան ծամբարի տնօրէնուհին ներկայացուց ծամբարի անձնակազմը եւ կամաւորները, գնահատելով անոնց հիանալի աշխատանքը: Բոլորը գնահատուեցան մեխակներով եւ ծաղիկներով:

Փակման խօսքով հանդէս եկաւ Ս. Աստուածածին եկեղեցոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեան, որ իր խօսքով գնահատեց ծամբարի տնօրէնուհի տիկին Սիլվա Փայլեանի, անձնակազմի եւ կամաւորներու անձնուէր աշխատանքները, թելադրելով ծնողներուն, որպէսզի իրենց զաւակներ զրկեն Հ.Օ.Մ.ի ծամբար, ուր հայաշունչ եւ հոգածու մթնոլորտի մէջ իրենց զաւակներ կ'անցնեն ամառնային իրենց արձակուրդը, խաղալով, պտոյտներով, ինչպէս նաեւ ունենալով ազգային գիտելիքներ, ստանալով հայեցի դաստիարակութիւն:

Հանդիսութիւնը փակուեցաւ ներկաներու կողմէ երգուած «Տէրունական Աղօթքով» եւ Հայր Սուրբին պահպանիչով: Բոլոր ներկաները հիւրասիրուեցան ճոխ ուտելիքներով, անուշեղէններով, կարկանդակներով, պտուղներով եւ զովացուցիչներով:

«ՀՈՐԻՉՈՆ»
19 Օգոստոս 2005



Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Արծալկազիր Հրանդ Մաթեւոսեանի հետ 2000 թուականին

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՈՒԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.Ի ԹՈՐՈՆՆԹՕ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ**

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ ԿՈՒ ՏԱՅ ԻՐ ՊԱՏԳԱՄԸ
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ**

Երկուշաբթի, 23 Յուլիսի 1979, երեկոյեան ժամը 7էն սկսեալ, Թորոնթոյի նորաշէն Հայ Կեդրոն կը ժամանէին խումբ-խումբ թորոնթոհայեր:

Աննախընթաց եռուզեռ ու խանդավառութիւն, ժամը ծին՝ արդէն ժողովուրդը լեցուած էր ընդարձակ սրահը եւ յարակից բաժինները: Հազար հինգ հարիւրէ աւելի բազմութիւն մը, սրտատրոփ կը սպասէր իր հոգեւորապետին:

Ժամը 8:30ին ժամանեց մեր եկեղեցական պատմութեան մեծագոյն դէմքերէն՝ լուսամիտ եւ հանճարեղ, պայծառատես եւ հաշտարար Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

Հայ Կեդրոնի մուտքին, Մեծ Հիւրը դիմաւորուեցաւ ազգայիններու եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկառսներու եւ արենոյշներու կողմէ, ապա, առաջնորդուեցաւ հիւրասենեակ, ուր ընդունուեցան Հայ Կեդրոնի մէջ գործող միութիւններու ատենապետներն ու կարգ մը բարերար ազգայիններ:

Վեհափառ Հայրապետը, նորակառոյց Հայ Կեդրոնի սենեակները եւ բաժինները այցելելէ ետք, մուտք գործեց սրահ՝ ընկերակցութեամբ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի եւ Գանատայի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Եպիսկոպոս Աշճեանի՝ եւ ժողովուրդի ոտընկալս ծափողջոյններուն տակ առաջնորդուեցաւ պատույ սեղան:

Արդարեւ, Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոս Գարեգին Բ. Թորոնթո ժամանած էր Շաբաթ, 22 Յուլիսի 1979, երեկոյեան ժամը 7ին, եւ օրակայանին մէջ դիմաւորուած բոլոր միութիւններու ներկայացուցիչներուն կողմէ:

Իսկ Կիրակի, 23 Յուլիսին պատարագած Համիլթըն քաղաքին մէջ եւ քարոզած բոլոր շրջաններէն ժամանած հաւատացեալ ժողովուրդին: Պատարագին սպասարկած են Բերիոյ (Հալէպի) Թեմի Առաջնորդ Գեր. Տ. Սուրէն Ս. Եպսկ. Գաթարոյեան եւ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի եւ Գանատայի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Եպսկ. Աշճեան: Պատարագէն ետք, ի պատիւ Վեհափառ Հայրապետին տրուած է ճաշկերոյթ:

Այս անգամ թէյասեղան՝ ի պատիւ Վեհափառին՝ Հայ նոր Կեդրոնին մէջ:

Երգչախումբը՝ ղեկավարութեամբ տիկ. Արաքսի Գասարճեանի քառաձայն երգեց դանատական եւ հայկական քայլերգները:

Բացման խօսքը ըրաւ Հ.Յ.Դ. «Ս. Թէհլիրեան» Կոմիտէի ատենապետ ընկ. Վահէ Մարտիրոսեան եւ Հայ Կեդրոնի ու Թորոնթոյի հայութեան անուանով բարի դալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին:

Խօսք տրուեցաւ Օնթարիոյ Հայ Կաթողիկէ համայնքի պետ Գեր. Եղիա Վրդ. Գիրէջեանի, որ նոյնպէս Հայ Կաթողիկէ համայնքին անունով բարի գա-

լուստ մաղթեց եւ իր յարգանքի ու մեծարանքի խօսքն ըրաւ:

Հայ Աւետարանական համայնքի անունով խօսեցաւ Վեր. Աբրահամ Ճիզմէճեան, որ բարի դալուստի խօսքերէ ետք, յիշեց 21 տարիներ առաջ իր առաջին հանդիպումը Գարեգին Բ. Կաթողիկոսին, երբ տակաւին Ան վարդապետ էր եւ ուսուցչական պաշտօններ կը վարէր Պէյրուսի բարձրագոյն վարժարաններէն մի քանիին մէջ: «Եւ», ըսաւ Վերապատուելին, «այդ թուականին ես մարգարէացայ թէ այս վարդապետը մեր ապագայ կաթողիկոսն է»:

Հ.Յ.Դաշնակցութեան Գանատայի Կ. Կոմիտէի անունով խօսք առաւ ընկ. Զաւէն Սարգիսեան, դրուատելով Վեհափառ Հայրապետին արժանիքները եւ Անոր կատարած դերը Հայ նոր Կեդրոնի շինութեան աշխատանքներուն մէջ:

Վերջին խօսողը եղաւ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի եւ Գանատայի Առաջնորդ Գեր. Տ. Մեսրոպ Ս. Եպսկ. Աշճեան:

Սրբազան Հայրը իր խօսքին մէջ տուաւ կենսագրական արագ գիծեր Գարեգին Կաթողիկոսին եւ խօսեցաւ Անոր կատարած դերին եւ գործին Հայ Եկեղեցւոյ միութեան եւ պայծառութեան ի խնդիր:

Երգչախումբը կրկին հանդէս գալով երգեց «Կիլիկիա» եւ «Հայոց Աշխարհ» խմբերգները:

Այս պատմական պահուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսի նորաչէն Հայ կեդրոն այցելութեան իբրեւ յիշատակ, հանդիսավար ընկ. Վահէ Մարտիրոսեան, Վեհափառ Հայրապետին նուիրեց այն գեղեցիկ ոսկեզօծ մետալը, զոր պատրաստուած էր Հայ նոր Կեդրոնի բացման առիթով:

Նորին Սրբութիւնը նուէրը ուրախութեամբ ընդունելէ ետք ըսաւ.

«Այս գեղեցիկ յիշատակի նուէրը պիտի գետեղեմ Կաթողիկոսարանի գրասենյակին վրայ, որպէսզի ամէն անգամ երբ նայուածքս հոն յամենայ, յիշեմ Թորոնթոյի ազնիւ եւ ազգասէր հայութիւնը եւ Հայ Կեդրոնը»:

Վեհափառը կէս ժամնոց իր ճառով յուզումի եւ խանդավառութեան, ալեկոծման եւ խռովքի, լացի եւ խնդուքի, իրարօգնութեան եւ համերաշխութեան, քաջութեան եւ հպարտութեան, միութեան եւ համագործակցութեան, շինութեան եւ ծաղկման, պատմութեան եւ անցելալի ժառանգութեան պահանջներով միջնորդութեամբ մը ստեղծեց իր գերզգայուն բառերով եւ պատկերներով:

Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոս, իր ճառը վերջացուց հետեւեալ խօսքերով.

«Կար ու չկար Թորոնթոն...»

«... Եւ այս փոքրաթիւ հայ գաղութը իրագործեց հրաշքի համազօր այս հոյակապ Հայ նոր Կեդրոնի շինութիւնը, մեծ վարկ ապահովելով եւ յարգանք պարտադրելով Գանատայի պետական գործիչներուն, որոնք եկան եւ այս սրահէն իրենց զարմանքը եւ հիացումը յայտնեցին կատարուած մեծ գործին տես եւ դրուատեցին հայ ժողովուրդի շինարարական ոգին:

«Հայ ժողովուրդը իր չորս հազարամեայ պատմութեան մէջ երբեք չէ քանդած, շինած է միշտ, անընդհատ, իր հայրենիքի հողին վրայ թէ այլուր, ուր ճակատագրի բերումով կայք հաստատած է:

«Եւ, այսօր, աշխարհի ամբողջ տարածքին, ուր որ հայ գաղութ մը գոյութիւն ունի, Հայը շինած է եւ կը շարունակէ շինել Հայ Կեդրոններ, Հայ Ա-

կումբներ, Հայ Եկեղեցիներ, Հայ Գաղտնիներ եւ այլ հաստատութիւններ:

«Բայց չի բաւեր շինել այսպիսի գեղատեսիլ Հայ Կեդրոններ, պէտք է լեցուն ըլլայ ան հայութեամբ եւ մեղուի փեթակի մը նման եռանդ եւ խանդավառութիւն տիրէ հոն:

«Տառետը Վանայ Լիճին մէջ կրնայ ապրիլ միայն, իշխանաձուկը՝ Սեւանայ Լիճին մէջ, իսկ Հայը՝ Հայաստանի մէջ կամ Հայ Կեդրոններու մէջ, որոնցմէ հեռու մնացողը դատապարտուած է որպէս հայ ոչնչանալու եւ կորսուելու»:

Հայ Օգնութեան Միութեան անդամներուն կողմէ հայթայթուած այլազան կարկանդակներով եւ սուրճով հիւրասիրութիւն տեղի ունեցաւ:

Անդին, ժողովուրդը խուռներամ կը դիմէր Վեհափառ Հայրապետին աջահամբոյրի համար:

Ոսկերերան Գարեգին Բ. Աթորակից Կաթողիկոսին ի պատիւ տրուած այս հաւաքոյթը ժամը 11ին վերջ գտաւ, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»ով:

Թորոնթահայութեան սրտերուն մէջ երկար ատեն վառ պիտի մնայ Հայրապետական այս այցելութիւնը՝ իր գեղեցիկ յաճախանքով եւ յիշատակներով, մինչեւ Վեհափառին յաջորդ այցելութիւնը:

«ՅՈՐԻՉՈՆ»
13 Օգոստոս 1979

ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐ ՄԸ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Երկար տարիներ է ի վեր Թորոնթոյի հայ գաղութի կարեւոր մէկ հատուածը, զրկուած էր մնայուն հոգեւոր մատակարարութիւն ստանալէ, ի բացակայութեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութիւնը վայելող թեմական կեանքի եւ եկեղեցիի:

Սակայն, վերջին տասնամեակին, Կիլիկիան Աթոռի ենթակայ թեմերէն եկող հաւատացեալներու թիւին աճումին հետ, կենսական նկատուեցաւ եկեղեցական հոգեւոր կեանքի կազմակերպութիւնը:

Արեւելեան Մ. Նահանգներու եւ Գանատայի Թեմի Ազգային Վարչութիւնը, ընդառաջելով գաղութիս հաւատացեալ ժողովուրդի խնդրանքին՝ ընդունեցաւ Կիլիկիոյ Ս. Աթոռին ենթակայ թեմական կեանք հաստատել Թորոնթոյի մէջ:

Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Եպիսկոպոս Աշճեանի նշանակութեամբ կազմուած առժամեայ հոգաբարձութիւնը մեծապէս զնահատելի գործ կատարեց եւ կարճ ժամանակի ընթացքին կրցաւ կազմակերպել եւ առաջացնել եկեղեցական կեանք ստեղծելու բոլոր յարմարութիւնները:

Առժամեայ հոգաբարձութեան անդամներն են. ատենապետ՝ Զաւէն Սարգիսեան, ատենադպիր՝ Րաֆֆի Տէր Պօղոսեան, գանձապահ՝ Կարօ Փաշայեան, խորհրդականներ՝ Ժան Նահապետեան, Ժիրայր Յովհաննէսեան, Վիգէն Աճէմեան եւ Մանուէլ Շէհիրեան:

Առժամեայ հոգաբարձութիւնը, Առաջնորդ Սրբազան Հօր հետ խորհրդակցաբար, գաղութիս հոգեւոր հովիւ ընտրեց Կիլիկիան Թեմի երիտասարդ միաբաններէն Հոգշ. Տ. Խաթակ Վրդ. Յակոբեանը, որ կարող եւ պատրաստուած եկեղեցական մըն է:

Առժամեայ հոգաբարձութեան անդամ Աւագ Սարկաւագ Մանուէլ Շէհիրեանի ջանքերով եւ դպրապետութեամբ շուտով կազմուեցաւ դպրաց դասը՝ աւելի քան 25 անդամ-անդամուհիներով:

Եւ գաղութիս նորակազմ եկեղեցին՝ կոչուելով Հայաստանեայց Առաքելական Ս. Աստուածածնայ եկեղեցի, կեանքի կոչուեցաւ:

Հոգաբարձութիւնը, առժամապէս եկեղեցի մը վարձելով (Ս. Օգոստինոս, 1847 Պէյվիու փողոց), եկեղեցւոյ բացումը կատարեց, ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր:

10 Ապրիլ 1983, կէսօրէ ետք ժամը 1ին, հաւատացեալ ժողովուրդը խուռներամ լեցուած էր:

Օրուան պատարագիչն էր Առաջնորդ Սրբազան Հայրը, որ եկեղեցի մուտք գործեց զգեստաւորուած՝ առաջնորդութեամբ դպրաց դասին եւ ընկերակցութեամբ «Հրաշափառ» շարականի երգեցողութեան:

Սուրբ սեղանին կը սպասարկէր գաղութիս հովիւը՝ Հոգշ. Տ. Խաթակ Վրդ. Յակոբեան:

Հինգ հարիւրէ աւելի հաւատացեալ ժողովուրդը երկիւղածութեամբ հետեւեցաւ պատարագին, հաղորդուելով մեր պապերու սուրբ հաւատքին ջերմութեան եւ խորհուրդին:

«Հայր Մեր»էն առաջ, Առաջնորդ Սրբազան Հայրը խօսեցաւ քարոզ մը նոր Կիրակիի խորհուրդին նուիրուած, եւ գուգահեռ մը ընելով՝ յայտնեց թէ այս թուականը թորոնթոյի մեր գաղութին համար կը դառնայ նոր սկիզբի մը առաջին օրակը: «Շուքակ Կիրակի» է, ըսաւ ան:

Հոգեպարար եկեղեցական սնունդով տոգորուած՝ ժողովուրդը ցրուեցաւ, ժամը 5ին ներկայ գտնուելու համար Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի տարեկան ճաշկերոյթին:

ՎԱՐԺԱՐԱՆԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Հ.Օ.Մ.ի Գոլուէան նախակրթարանի եւ Պապայեան մանկապարտէզը, Յունուարէն սկսեալ արդէն տեղաւորուած են նոր շէնքին մէջ, որուն շինութիւնը իրագործուեցաւ ժողովուրդին անվերապահ մասնակցութեամբ եւ այն համոզումով, որ կը կառուցուի ոչ միայն դպրոց մը, այլ հայապահպանման բերդ մը:

Որպէսզի այս հաստատութիւնը անսասան մնայ, պէտք ունի նիւթական ապահով կռուաններու, որոնք առայժմ ժողովուրդի սրտաբուխ նուիրատուութիւններն են:

Այս տարեշրջանի նախահաշիւը կը նախատեսէ 50,000.00 տոլարի բաց մը՝ ընդհանուր 270,000.00 տոլարի գումարի մը վրայ: Աւելցնենք, որ այս գումարը կը բարձրանայ տարուէ տարի, որովհետեւ աշակերտներէ գանձուած գումարը կը կազմէ իւրաքանչիւր աշակերտի ծախսին մօտ երեք հինգերորդը:

Այս բացը գոցելու ակնկալութեամբ, ինչպէս անցեալին, այս տարի եւս դպրոցի Խնամակալ եւ Ուսումնական Մարմինները կազմակերպած էին ճաշկերոյթ մը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 10 Ապրիլ 1983, երեկոյեան ժամը 5ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ:

Մօտ 400 ծնողներ, բարերարներ եւ հայ դպրոցի գոյութեան սատարող հայրենակիցներ ներկայ գտնուեցան:

Ճաշի սպասարկութենէն ետք, օրուան հանդիսավարը՝ Ուսումնական Խորհուրդի ատենապետ ընկ. Անդրանիկ Արթինեան խօսք առաւ եւ բացատրեց դպրոցի ի նպաստ կազմակերպուած այս ճաշկերոյթին իմաստը: Ապա, ներկայացուց պատուոյ սեղանը, ուր տեղ գրաւած էին Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Եպիսկոպոս Աշճեան, գաղութիս Հովիւ Հոգշ. Տ. Խաթակ Վրդ. Յակոբեան, Հայ Աւետարանական համայնքի Հովիւ Վեր. Եսայի Սարմազեան, Հայ Կաթողիկէ համայնքի Հովիւ Գերշ. Տ. Եղիա Վրդ. Գիրէջեան, ընկ. Վրէժ-Արմէն Արթինեան, որ յատկապէս հրաւիրուած էր Մոնթրէալէն, որպէս գլխաւոր բանախօս, բարերար Տէր եւ Տիկին Գէորգ Գոլուէան եւ դպրոցի ժրջան տնօրէն ընկ. Մարգար Շարապխանեան:

Խօսք առին Հայր Եղիա Գիրէջեան եւ Վեր. Սարմազեան: Շնորհաւորեցին համայնքս եւ յայտնեցին իրենց գոհունակութիւնը նորակազմ Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ առթիւ, պատրաստակամութիւն ցուցաբերելով որպէս մէկ ժողովուրդի զաւակներ գործակցելու գաղութիս հովիւին հետ՝ ի փառս հայ ժողովուրդի գերագոյն շահերուն եւ միասնականութեան:

Օրուան գլխաւոր բանախօս ընկ. Վրէժ-Արմէն Արթինեան, խնամուած եւ իմաստալի բանախօսութեամբ մեծ տպաւորութիւն թողուց ներկաներուն վրայ: Ընկ. Արթինեան շեշտելէ ետք հայկական վարժարաններու կարեւորութիւնը Հայ Դատի հետապնդման համար, եւ թուելէ ետք մեր ակնկալութիւնները մեր վարժարաններէն, մղեց ներկաները ամէն կերպով զօրավիգ կանգնելու ազգային վարժարանին, քանի որ ան է գաղութի մը կեանքի ապահովութիւնը: «Տուն մի գնէք, ինքնաշարժ մի գնէք, ամէն զրկանք յանձն առէք, բայց ձեր զաւակները հայ դպրոցէն մի զրկէք», ըսաւ ան: Ապա, խրախուսեց կրթասէր հասարակութիւնը որ Թորոնթօ եւս չգոհանայ նախակրթարանով եւ անպայման իրականացնէ երկրորդական վարժարանի ծրագիրը:

Մեծ խանդավառուիւն ստեղծեց դպրոցական երգչախումբի մուտքը: Անոնք երգեցին «Տալուրիկ», «Երազ Սեւան» եւ «Սարգարապատ» երգերը, ղեկավարութեամբ դպրոցի երաժշտութեան ուսուցիչ վաստակաւոր խմբավար Էդիկ Յովսէփեանի, դաշնակի ընկերակցութեամբ Վանիկ Յովհաննէսեանի:

Կէս ժամուան մէջ, ներկայ բազմութիւնը նուիրեց 56,450.00 տոլար, գրել-անցնելով նախատեսուած յիսուն հազարը:

Վերջին խօսքը առաւ Առաջնորդ Սրբազան Հայրը եւ տուաւ իր պատգամը ներկաներուն:

Ան իր հրճուանքը եւ սրտագին գնահատանքը յայտնեց Թորոնթոյի հայ գաղութին, որ այսքան կարճ ժամանակուան ընթացքին շինեց հայ Կեդրոն, Հայ Դպրոց եւ հիմա ալ Հայ Եկեղեցի: Ապա, Սրբազանը աւելցուց. «Թորոնթոյի հայութեան գոհաբերութեան եւ գիտակցութեան օրինակը պէտք է վարակիչ դառնայ Սփիւռքի բոլոր գաղութներուն համար, որովհետեւ դո՛ւք տուիք ո՛չ թէ ձեր աւելցուքներէն, այլ ձեր առօրեայէն, զրկելով դուք ձեզ ձեր հաճոյքներէն եւ սնունդէն: Ես, ինչպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ., դպրոցի բացումին առթիւ զրկած իր պատգամին մէջ կ'ըսէր, ես վստահ եմ, դուք շուտով կը շինէք նաեւ ձեր սեփական եկեղեցիին շէնքը, որովհետեւ հայ ժողովուրդը չի սիրեր վարձու եկեղեցիներու մէջ պաշտել իր նախահայրերուն Աստուածը»:

Կիրակի, 10 Ապրիլ 1983ը պիտի մնայ Թորոնթոյի հայ գաղութի պատմութեան մէջ յիշատակելի օր մը, որովհետեւ մեր գոյութեան եւ ինքնագիտակցութեան գլխաւոր կռուաններէն մէկն ալ կեանք առաւ:

Կամքէ անկախ պատճառներով այս ամիսը վրայ հաստատուած ազատատենչ հայութիւնը, գնահատելի հեռատեսութեամբ ձեռնամուխ եղաւ ունենալու «փոքրիկ Հայաստան» մը, ուր հայ մանուկը սորվի հայ լեզուն, ուր դաստիարակուի հայկական ոգիով եւ աւանդութիւններով, սնանի հայ քրիստոնեայի յատուկ առաքիլութիւններով, ապա անդամակցելով Հայ Կեդրոնի մէջ գործող միութիւններուն ստանայ մարզական, մշակութային եւ զաղափարական կրթութիւն:

Ինքնապաշտպանութեան վերոյիշեալ գէնքերը անհրաժեշտ են այս համայնակուլ ափերուն վրայ տոկալու համար, մինչեւ որ կարելի ըլլայ տարասփիւռ հայ ժողովուրդը առաջնորդել գէպի իր պանենական հողերը:

**«ՅՈՐԻՉՈՆ»
9 Մայիս 1983**



**Սահմանային ուժերու գնդապետ սասունցի
Յովիկ Գէորգեանի հետ 2004ին**

ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՀՈՂՕՐՀՆԷՔԻ ՓԱՌԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԳԱՐԵԳԻՆ Բ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ

«Եկեղեցին մեզի համար մեր հարազատ տունն է, հաւատքի եւ հայրենական ապրումներու օճախը: Ինչպէս հայոց եկեղեցւոյ շարականները զայն կը բնութագրեն, «Աստուածատունկ դրախտ» է ան, այս ծով եւ յաճախ փոթորկոտ աշխարհին մէջ «տապան» մը՝ ամբողջեան եւ ապահովութեան:

«Զեր կառուցելիք եկեղեցին Մենք կը նկատենք նաեւ որպէս ճշմարտօրէն հասկցուած «արդար վրէժ»ի մեր արտայայտութիւնը: Որովհետեւ, հայութեան մասը նիւթող մեր թշմանիին սաղայէլեան՝ ծրագիրը ձախողած յայտարարելու ամենէն կենդանի, պերճախօս եւ համոզիչ փաստն է եկեղեցի մը կառուցելը: Քանի՛ քանի՛ հարիւրներով եկեղեցիներ քանդուեցան. բայց ահա, ինչպէս ձեր եղբայրները աշխարհի ուրիշ ցամաքամասերու վրայ եւ քաղաքներու մէջ տուին շօշափելի փաստը մեր եկեղեցիի եւ ազգի անխորտակելիութեան, դուք եւս կու գաք ձեր ձայնը միացնելու արդար բողոքի այն համանը՝ Լազին, զոր հայութիւնը ամբողջ աշխարհի մէջ այսօր կը տարածէ իր վերապրումի, վերածաղկումի սխրալի իրագործումներով: Ստեղծարան վրէժն է այս, քանդումին դիմաց կառուցումը կը դնէ իբրեւ պատասխան եւ կառուցումին մէջէն Աստուծոյ հոգիին եւ ազգի ոգիին յաղթանակը կը շեփորէ»:

(քաղուած 1986 Յունիս 6 թուակիր գիրէն, ուղղուած Թորոնթոյի հայութեան)

Կիրակի, 17 Օգոստոս 1986 պատմական օր մը մնալու սահմանուած է Թորոնթոյի հայութեան համար:

Կարելոր քայլ մը եւս առնուեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ անուանակոչութեան՝ Վերափոխումն Ս. Աստուածածնի տօնին առթիւ, Թորոնթոյի հայութեան առած յանդուգն ու պատուաբեր քայլերու եւ իրագործումներու շարքին: Կատարուեցաւ եկեղեցւոյ շէնքի հողօրհնէքը:

Շաբաթ օրուընէ արդէն, Հայ Կեդրոնի շրջափակին մէջ եկեղեցւոյ յատկացուած հողամասին վրայ լարուած էր հսկայ վրան մը եւ զետեղուած հարիւրաւոր աթոռներ:

Կիրակի առաւօտուն, Հ.Մ.Ը.Մ.ի սկառտներն ու արենոյձները կը հսկէին կարգապահութեան:

Ժամը 12:30ին սկսաւ եկեղեցական ժամերգութիւնը, որմէ ետք, թեմիս առաջնորդ Բարձր. Տէր Մեսրոպ Ս. Արք. Աշճեան, որպէս օրուան պատարագիչ զգեստաւորուելով, առաջնորդութեամբ դպրաց դասին, Հ.Մ.Ը.Մ.ի ըսկառտներուն եւ արենոյձներուն՝ հրաշափառով մոտք գործեց եկեղեցի: Մօտ 1200ի հասնող հաւատացեալներ՝ վրանին մէջէն եւ դուրսէն հետեւեցան Ս. պատարագի հոգեպարար արարողութիւններուն:

Պատարագիչ սրբազանին կը սպասարկէին եկեղեցւոյ հովիւ Գերպ. Տ. Խաթակ Ծ. Վրդ. Յակոբեան, Գէմպրիճի Ս. Նշան եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Վահան Ա. Քհնյ. Ղազարեան եւ Մանուէլ Ա. Սարկաւազ Շեհիրեան: Դպրաց դասը կը ղեկավարէր Վրէժ Մասոյեան, երգեհոնի ընկերակցութեամբ Ռիմա Մարտիրոսեանի:

Պատարագի ընթացքին, Սրբազան Հայրը խորիմաստ քարոզ մը խօսեցաւ, անդրադառնալով Մարիամ Աստուածածնի տօնին եւ մայրութեան խորհուրդին: Պատարագի վերջաւորութեան նախ կարդացուեցաւ աւանդական խաղողի օրհնութիւնը, ապա՝ եկեղեցւոյ հողի օրհնութիւնը:

Ներկայ ժողովուրդը յուզումնախառն զգացումներով հետեւեցաւ հողի օրհնութեան: Ս. Խորանի վայրին յատկացուած հողամասին վրայ, ժողովուրդի եկեղեցական եւ աշխարհական եօթ ներկայացուցիչներ բահով փորեցին հողը, որ ա՛լ աւելի սրբացաւ, երբ Հ.Օ.Մ.ի Գոլոյեան նախակրթարանի 7րդ եւ 8րդ դասարաններէն բերած հողը խառնուեցաւ եկեղեցւոյ հողին: Անոնք այդ հողերը եւ քարերը բերած էին Խոր Վիրապէն, Ս. Էջմիածնէն, Զուարթնոցէն, Հռիփսիմեաց տաճարէն, Գեղարդէն, Ծիծեռնակաբերդէն եւ Սարդարապատէն:

*

**

Կիրակի, 17 Օգոստոս 1986, երեկոյեան ժամը 5ին, 850է աւելի հայեր հաւաքուած էին Հայ Կեդրոնի շքեղ սրահին մէջ, սկսուած տօնախմբութիւնը ճաշկերոյթով շարունակելու, ապա՝ հանգանակութիւն կատարելու՝ իրականացնելու համար իրենց տարիներու երազը՝ Թորոնթոյի մեր համայնքը սեփական եկեղեցիով օժտելու համար: Պատուոյ սեղանին վրայ տեղ գրաւած էին առաջնորդ սրբազան հայրը, Հայր սուրբը, Հ.Յ.Դ. «Սողոմոն Թեհլիրեան» կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Աբգար Միրաքեան եւ տիկինը, Հոգաբարձութեան ատենապետ ընկ. Րաֆֆի Տէր Պօղոսեան եւ տիկինը, Շինութեան Յանձնախումբի ատենապետ ընկ. Յարութիւն Շիթիլեան եւ տիկինը եւ Շինութեան Յանձնախումբի փոխ-ատենապետ ընկ. Վազգէն Թերզեան եւ տիկինը:

Ճաշի սպասարկութենէն ետք, խօսք առաւ օրուան հանդիսավար ընկ. Յարութիւն Շիթիլեան եւ խօսեցաւ եկեղեցւոյ շինութեան աշխատանքներուն, ծախսերուն եւ ծրագիրներուն մասին: Ապա խօսք առաւ հոգաբարձութեան ատենապետը, անդրադառնալով եկեղեցւոյ կարեւորութեան՝ ազգային ինքնութեան եւ հայ նկարագրի պահպանման սրբազան գործին մէջ:

Հ.Յ.Դ. կոմիտէէն եւ Հայ Կեդրոնի ծիրէն ներս գործող կազմակերպութիւններուն անունով խօսք առնելով, ընկ. Աբգար Միրաքեան իր ուրախութիւնը եւ գոհունակութիւնը յայտնեց, որ Հայ Կեդրոնի համալիրը կ'ամբողջանայ Հայաստանեաց եկեղեցիով, որուն կարեւորութիւնը այնքան կը զգացուէր այս գաղութիւն մէջ:

Գերապատիւ Տ. Խաթակ Ծ. Վրդ. Յակոբեան գեղեցիկօրէն նկարագրեց հայ օճախին տեսիլքը, ուր բոլոր հարազատները, սրտակիցները քով-քովի կու գան եւ ձեռք-ձեռքի տալով իրենց հարազատները բարձրացնելու ու զօրացնելու կ'աշխատին: Այսօր 850 անձեր իրարու քով եկած են կերտելու համար հա-

յուն օճախը: Թորոնթոյի հայութիւնը իր տքնաջան աշխատանքով, իսկապէս անգնահատելի զոհաբերութեան օրինակով, կրցաւ իր տան երդիքը, պատերը ամրացնել, կազմակերպուել այդ տունին մէջ: Այսօր մենք այն յատուկ անկիւնը կ'ուզենք կերտել, ուրկէ տաքութիւնն է որ պիտի տարածուի մեր բոլոր տուներէն ներս:

Խօսք առաւ նաեւ Հ.Յ.Գ. կեդրոնական Կոմիտէի եւ գաղափարակից կազմակերպութիւններու վարչութիւններու կողմէ ընկ. Խաչիկ Յակոբեան, որ իր հաճոյքն ու բախտաւորութիւնը յայտնեց Թորոնթոյի հայութեան հետ բաժնելու վերջին տասնամեակի նուաճումներու մէկ նոր հանգրուանը, որ առաւել եւս պիտի նպաստէ մեր ժողովուրդի ազգային նկարագրի պահպանման:

Վերջին խօսողը եղաւ Մեսրոպ Արքեպիսկոպոս, դիտել տալով որ հայ ժողովուրդը, մասնաւորապէս Ամերիկայի ամերոն վրայ լծուած է դպրոցաշինութեան եւ եկեղեցաշինութեան սրբազան գործին՝ Վանգուվըրէն Թորոնթօ, Շիքակոյէն Վենեզուելա:

Սրբազանը իր խօսքը կեդրոնացուց հողի խորհուրդին վրայ, որմէ զուրկ են հայութեան հսկայ զանգուածները, տարածուած աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ:

Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Վահէ Գրիգորեան, երգելով «Սարգարապատ» երգը, եւ Համիլթընէն յատկապէս հրաւիրուած երգչուհի Վարսենիկ Փափագեան՝ «Հով Առէք» եւ «Օրօր» երգերը, դաշնամուրով ընկերակցութեամբ Արաքսի Գասարճեանի:

Ժողովուրդին խանդավառութիւնը գագաթնակէտին հասած էր: Բեմ եկաւ ընկ. Վազգէն Թերզեան եւ հանգանակութիւնը բացուած յայտարարեց:

Ժողովուրդը, մեծով-պզտիկով, հարուստ-աղքատով իր մասնակցութիւնը բերաւ եկեղեցիի շինութեան գործին, «քար մըն ալ ես դրի»ի հոգեբանութեամբ: Մէկ ժամ չանցած հանգանակուած գումարը հասաւ հինգ հարիւր մէկ հազար չորս հարիւր յիսուն տոլարի:

Շինարար ժողովուրդ...:

«ՅՈՐԻՉՈՆ»
8 Սեպտեմբեր 1986

**ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՀԻՄՆԱՐԿԷՔԸ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ
ԼՈՒՍԱԻՈՐ ՆՈՐ ԷՋ ՄԸ ԲԱՅԱԻ...**

Եկեղեցւոյ անուանակոչութեան՝ Վերափոխումն Ս. Աստուածածնի սօ-
նը, այս տարի, եռակի ոգեւորութիւն եւ խանդավառութիւն ստեղծեց Թորոն-
թոյի հայութեան լայն զանգուածներուն մէջ, որոնք ապրեցան յուզավարար
ու կենսանորոգ պահեր՝ ի ներկայութեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.
Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի:

Ամիսներ տեւող նախապատրաստական աշխատանքները յաջողու-
թեամբ պսակուեցան հիմնակէքի արարողութիւնները եւ շատ երկար ատեն
անջնջելի մնալու սահմանուած են Թորոնթոյի հայութեան յիշողութեան մէջ:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՆԱԽԱՏՕՆԱԿ

Շաբաթ, 15 Օգոստոս 1987, երեկոյեան ժամը 5ին, եկեղեցւոյ հողամա-
սին վրայ լարուած հսկայ վրանին ներքեւ տեղի ունեցաւ Սուրբ եւ անմահ
պատարագ՝ հովանաւորութեամբ Վեհափառ հայրապետին: Պատարագին էր
Բերիոյ թեմի առաջնորդ Բարձր. Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեան եւ պատարագին
կը մասնակցէին Բարձր. Տ. Սուրէն Ս. Արք. Գաթարոյեան եւ տեղւոյն հովիւը՝
Հոգչ. Տ. Խաթակ Մ. Վրդ. Յակոբեան: Հակառակ հեղձուցիչ տաքին, ներկայ էր
ծովածաւալ բազմութիւն մը:

Պատարագիչ Սուրէն Սրբազան խօսեցաւ խորիմաստ քարոզ մը՝ բնա-
բան ունենալով Ս. Աստուածածնի կեանքը, մայրութիւնը եւ սրբութիւնը:

Սրբազանի քարոզէն ետք, խօսք առաւ Վեհափառ հայրապետը, եւ, իր
հոգեբուխ ու սիրաթով պատգամը տուաւ ներկայ բարեպաշտ ժողովուրդին,
չեչտելով եկեղեցաշինութեան կարեւորութիւնը եւ հրաւիրելով Թորոնթոյի
հայութիւնը անոր մասնակցելու նիւթապէս եւ բարոյապէս:

Ապա, Հայ Կեդրոնի շրջափակին մէջ տեղի ունեցաւ նախատօնակ եւ
խրախճանք, մասնակցութեամբ խուռներամ հայորդիներու:

Երգիչներ ժիրայր Հոթոյեան եւ Վաչէ Ջաքարեան, ընկերակցու-
թեամբ հայկական նուագախումբին, մինչեւ գիշերուան ուշ ժամերը խանդա-
վառեցին ներկաները:

Խրախճանքի կէսերուն, Վեհափառ հայրապետը, ընկերակցութեամբ ե-
կեղեցական դասուն եւ հոգաբարձութեան անդամներուն, այցելեց խրախճան-
քով ոգեւորուած ժողովուրդին:

ԽԱՂՈՂՕՐ ՀՆՆՔ ԵՒ ՀԻՄՆԱՐԿՆՔ

Կիրակի, 16 Օգոստոս 1987, կէսօրէ ետք ժամը 1ին, Վեհափառը, ընկե-

րակցութեամբ Մեսրոպ եւ Սուրէն արքեպիսկոպոսներուն, Խաթակ Մ. վարդապետին, Գէմպրիճի Ս. Նշան եկեղեցւոյ հովիւ Տ. Վահան Ա. Քհնյ. Ղազարեանի, Վերապատուելի Աբրահամ Ճիզմէճեանի, Անգլիկան եկեղեցւոյ եպիսկոպոս Հենրի Հիլի, վարդապէտ Հիլի, Եթովպիական Ուղղափառ եկեղեցւոյ ներկայացուցիչին, դպրաց դասուն, եկեղեցւոյ կնքահայրերուն, Հ.Մ.Ը.Մ.ի սկսուածներու եւ արենոյններու պատուի կեցած շարքերուն ընդմէջէն հրաշափառով առաջնորդուեցան եկեղեցի եւ միւսոնով օծեց եկեղեցւոյ 16 սիւները եւ խորանը:

Հիմնարկէքի հոգեպարար արարողութենէն ետք տեղի ունեցան անդաստանի եւ խաղողօրհնէքի արարողութիւնները:

Գարեգին Կաթողիկոս, ազգային աւանդութիւններու պահպանման կապակցութեամբ տուաւ իր պատգամը:

Ապա, Վեհափառը անգլերէն լեզուով բարի գալուստ մաթեց քրիստոնեայ քոյր եկեղեցիներու ներկայացուցիչներուն, ընդգծելով քրիստոնեայ եկեղեցիներու սիրալիւր եղբայրական սերտակցութեան եւ փոխ-յարաբերութեան կարեւորութիւնը:

ՃԱՇԿԵՐՈՅԹ՝ Ի ՆՊԱՍՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Կէսօրէ ետք ժամը 5ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ հանդանակային ճաշկերոյթը: Սրահին մէջ ինչպէս կ'ըսեն «ասեղ ձգելու տեղ չըկար»: Բազմաթիւ հայրենակիցներ, տեղի չգոյութեան պատճառով տուն վերադարձան, ուրիշներ, ոտքի հետեւեցան յայտագրի գործադրութեան:

Ընթրիքի սպասարկութենէն ետք, բացման խօսքը կատարեց օրուան հանդիսավար, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ ընկ. Յակոբ Սեւակեան, որ իր բարի գալուստի խօսքէն ետք, ներկայացուց պատուոյ սեղանի անձնաւորութիւնները եւ հիւրերը, որոնց կարգին, բացի բարձրաստիճան եկեղեցականներէն, նշենք նաեւ ազգային բարերար տէր եւ տիկ. Վահագն եւ Յասմիկ Յովնանեանները, Նիւ Ճըրզիէն, եւ Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Խաչիկ Յակոբեան, Մոնթրէալէն:

Ներկաներուն մէջ մեծ թիւ մը կար ազգայիններու, եկած Պաֆըլոյէն, Նիւ Եորքէն, Նիակարա Ֆոլզէն, Սենթ-Գաթրինգէն, Համիլթընէն, Գէմպրիճէն, Մոնթրէալէն եւ Հալիֆաքսէն:

Ընկ. Սեւակեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին՝ որ քանի մը օրով յետձգեց իր Անթիլիաս վերադարձը, հովանաւորելու եւ մօտէն մասնակցելու համար հիմնարկէքի հանդիսութիւններուն, ինչպէս նաեւ Առաջնորդ Սրբազան հօր, որ միշտ պատրաստ եղած է թեւ ու թիկունք կանգնելու Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւին եւ հոգաբարձութեան:

Ժողովուրդը գոհունակութեամբ եւ գնահատանքով ընդունեց Տէր եւ Տիկին Վահագն եւ Յասմիկ Յովնանեաններու իշխանական նուիրատուութիւնը՝ 100 հազար տոլար՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ շինութեան գործին: Այս

յայտարարութենէն ետք , ընկ. հանդիսավարը հաղորդեց, թէ նորակառույց եկեղեցւոյ սրահը պիտի կոչուի «Յովնանեան սրահ»:

Խօսք տրուեցաւ պրն. Վահագն Յովնանեանի, որ, իւրապատուկ զըլարթախօսութեամբ, իր սրտի անկեղծ զգացումները փոխանցեց ներկայ ժողովուրդին:

Խօսք առին նաեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւը՝ Խաթակ Ծ. Վրդ. Յակոբեան, Հայ կեդրոնի ատենապէտ ընկ. Վազգէն Թերզեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կ.Կ.ի ներկայացուցիչ ընկ. Խաչիկ Յակոբեան, Առաջնորդ Սրբազանը եւ Վեհափառ Կաթողիկոսը:

Օրուան յայտագրին մաս կը կազմէր նաեւ տիկ. Մարիա Սէրարտարեան-Մանանեան, որ դաշնամուրի վրայ նուագեց Արամ Խաչատուրեանի «Վալս»ը եւ Բաբաջանեանի «Վաղարշապատի պար»ը:

Ժողովուրդին խանդավառութիւնը գագաթնակէտին հասած էր, եւ հասաւ նուիրաբերումի պահը:

Հանգանակութիւնը վարեց ընկ. Վազգէն Թէրզեան, եւ մէկ ժամ չանցած, արդէն գոյացած էր 620 հազար տոլարի պատկառելի գումար մը:

Թորոնթոյի հայութիւնը, անգամ մը եւս եկաւ աշխարհով մէկ յայտարարելու թէ պիտի ապրինք որպէս հայ, մեր կորսուած եւ քանդուած եկեղեցիներուն, վանքերուն եւ դպրոցներուն տեղ նորեր շինելով, քաջ գիտնալով որ անոնք ազգի մը գոյութեան գլխաւոր կռուաններն ու սիւներն են:

Փակման խօսքը ըրաւ ընկ. Յակոբ Սեւակեան, եւ շնորհակալութիւն յայտնեց հայ ժողովուրդին, իր կատարած մեծ գոհաբերութեան համար, Հ.Մ.Ը.Մ.ի սկառտներուն եւ արեւոյշներուն ու Հ.Յ.Դ.ի Երիտասարդական Միութեան անդամներուն, որոնք սիրալոյսով սպասարկեցին սեղաններուն, ընկհ. Մարի Մարտիրոսեանին, որ պատուոյ սեղանի եւ սեղաններու ծաղիկները նուիրած էր, ինչպէս նաեւ եկեղեցւոյ օժանդակ Կանանց Յանձնախումբի անդամներուն եւ բոլոր անոնց, որոնք սատարեցին ձեռնարկներու յաջողութեան:

Ճաշկերոյթը վերջ գտաւ ներկաներու կողմէ երգուած «Կիրիկիա» երգով:

Ժողովուրդը գոհ էր եւ խանդավառ ստացուած արդիւնքէն: Սրահէն մեկնեցան թեթեւցած սրտով, այն հաստատ համոզումով, որ յառաջիկայ տարի բարձրացած պիտի տեսնէ Հայաստանեայց Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրբազան շէնքը:

«ՅՈՐԻՉՈՆ»
7 Սեպտեմբեր 1987

ԵՐԱՆԱՇՆՈՐԿ ԶԱՐԵՎ ՍՔԱՆՉԵԼԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԸ ԵՐԲԵՔ ՊԻՏԻ ՉԹԱՌԱՄԻ

Մեծի Տանն Կիլիկիոյ Երանաշնորհ Տ.Տ. Զարեհ Ա. Սքանչելի Կաթողիկոսի վախճանման 25ամեակին առթիւ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի Ս. Կոնդակով 1988 Փետրուար 28էն սկսեալ, ոգեկոչական հանդիսութիւններ տեղի ունեցան եւ կ'ունենան Կիլիկեան թեմերու եկեղեցիներուն մէջ:

Թորոնթոյի Հայաստանեայց Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցին, Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի բարեջան Առաջնորդ բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի եւ Ազգային Վարչութեան թելադրութիւններուն համաձայն, լուսակերտ հայրապետին յիշատակը ոգեկոչեց պատշաճ հանդիսութիւններով:

Կիրակի, 17 Ապրիլ 1988ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պատարագեց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բազմաշնորհ եւ հաւատաւոր միաբաններէն Հոգեշնորհ Տ. Անուշաւան Մ. Վրդ. Դանիէլեան:

Հոծ թիւով հաւատացեալներ երկիւղածութեամբ հետեւեցան Սուրբ եւ Անմահ Պատարագին եւ յուզումնախառն ու արտասուլից աչքերով ունկնդրեցին Մեծանուն Հայրապետին պատմական քարոզը՝ «Տէր զի բացցին աչք մեր» բնաբանով: Յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան յատուկ պաշտօն կատարուեցաւ երջանկալիշատակ Վեհափառի հոգիին համար:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 6:30ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ ոգեկոչական հոգեպարար եւ տպաւորիչ հանդիսութիւն մը, որուն ներկայ գտնուեցան 500է աւելի հայորդիներ, որոնք եկած էին անգամ մը եւս հաղորդուելու մեր պատմութեան ամէնէն արի, ազատամիտ, երկայնամիտ, հաւատաւոր եւ բարի Կաթողիկոսին հոգիին հետ, ստանալու համար հոգեկան այն անունը, որուն պէտք ունի ամէն հայ, որուն սրտին մէջ տակաւին կը տըրորիէ Լուսաւորիչի հաւատքը եւ հայկական անպարտելի Ոգին:

Օրուան հանդիսավար Պրն. Գրիգոր Հոթոյեան, հրաւիրեց ժողովուրդը մէկ վայրկեան յոտընկալս յարգել յիշատակը երանաշնորհ Զարեհ Կաթողիկոսին եւ Արցախ-Ղարաբաղի ազատագրական ճանապարհին նահատակուած հայորդիներուն յիշատակը:

Պրն. Հոթոյեան իր բացման խօսքով անդրադարձաւ Զարեհ Վեհափառի կաթողիկոսութեան տարիներուն՝ մեր պատմութեան ամէնէն օգնաժամային անկիւնադարձային ժամանակաշրջանին, երբ այլազան ուժեր կը ծրագրէին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը վանահայրութեան վերածել եւ Սփիւռքի տարածքին Հայաստանեայց եկեղեցին գործիք դարձնել քաղաքական պղտոր հաշիւներու: Ապա, իր խօսքը համեմեց անձնական յիշատակներով՝ դրուատելով Վեհափառի Հալէպի Առաջնորդութեան շրջանին ցոյց տուած կորովի, յանդուգն ու պատմական արարքները:

Ներկաները գեղարուեստական կոկիկ յայտագրի գործադրութեան հետեւեցան օրուան պատշաճ բովանդակութեամբ պատրաստուած պրակին ընդմէջէն: Վեհափառի շնորհաբաշխ նկարի առընթեր կ'արժէ արձանագրել Պա-

րոյր Սեւակին հետեւեալ տողերը նուիրուած Կոմիտաս Վարդապետին վախճանման առթիւ.

Եւ քեզ ծնած մի ժողովուրդ՝
Հիմա դարձած քեզ զաւակ,
Հրաժեշտի խոր տրտմութեամբ
Միաժողով ու հաւաք,
Կքուած ցաւից հայրակորոյս,
Կիզուած վշտի խոր տապից՝
Գալիս է լուռ, գալիս հերթով,
Իր հոգի մէջ խոր տապի
Մասունքներիդ Սորազան տեսքն
Ի դէմքը քո,
Դէմքը Սո՛ւրբ...

Բեմ հրաւիրուեցաւ շնորհալի պատանի Սէրուժ Գրաճեան, որ դաշնամուրի վրայ նուագեց «Կիլիկիա», «Սոնատ Բէր Բիանօ Ֆորթ» (երաժշտ. Պօղոս Ճելալեան) եւ «էթիւտ Օթուս 1 թիւ 7» (երաժշտ. Շոփէն) նուագները:

Պր. Սարգիս Գէորգեան, Մուշեղ Իշխանի «Ուխտագնացութիւն» քերթուածով յաղթական մուտք գործեց ասմունքի արուեստի սրտառուչ բեմէն ներս, իր հնչեղ եւ հաղորդական ձայնով գեղեցկօրէն պատկերացնելով բանաստեղծի ուխտագնացութիւնը:

Օրուան բանախօսն էր պերճախօս Հոգեշնորհ Տ. Անուշաւան Մ. Վրդ. Դանիէլեան, որ սիրով ընդառաջելով Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւին եւ հոգաբարձութեան հրաւերին, Նիւ Եորքէն ժամանած էր Թորոնթօ:

Հայր Սուրբը, մօտ կէս ժամ տեւող իր սքանչելի ճառով, ներկայացուց Զարեհ Վեհափառի կեանքը, գործը, արժանիքները եւ հոգին, Անոր ծնունդէն մինչեւ անժամանակեայ վախճանը՝ կուռ եւ սրտայոյզ պատգամներով առըլցուն:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ Դպրաց Դասը, ղեկավարութեամբ դըպրապետ Պրն. Վարուժան Նիկոլեանի երգեց Վեհափառի շատ սիրած «Տէր Կեցո Դու զՀայս», «էջմիածին Ի Հօրէ», «Աստուածային Երկնային» շարականները եւ երգերը, իսկ Հ.Օ.Մ.ի Գոլորեան նախակրթարանի հինգերորդ կարգի աշակերտները երգեցին Վեհափառի սիրած երգը՝ «Կիլիկիա»ն:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ հոգեշնորհ Տ. Խաթակ Մ. Վրդ. Յակոբեանի խորիմաստ փակման խօսքէն ետք, ցուցադրուեցաւ Երանաշընորհ Հայրապետի Կաթողիկոսական կեանքէն կարգ մը դրուագներ, որոնք հիանալի ճարտարութեամբ ամփոփուած էին պատկերիզի վրայ՝ Թեմիս Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի բացատրողականով եւ Առաջնորդարանի նախաձեռնութեամբ:

Ժողովուրդիս կողմէ երգուած «Կիլիկիա» երգով վերջ գտաւ այս հոգեգմայլ հանդիսութիւնը:

Ներկայ ժողովուրդը հիւրասիրուեցաւ սուրճով եւ կարկանդակով՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ օժանդակ կանանց յանձնախումբի կողմէ:

Ներկաները, խումբ-խումբ կազմած, երկար ատեն կը խօսէին եւ կը վերլուծէին երանաշնորհ Հայրապետի արժանիքներուն մասին եւ անոր կաթո-

դիկոսութեան եօթը տարիներու ընթացքին տեղի ունեցած անբնական դէպքերը եւ կացութիւնը:

Ժողովուրդը ակամայ մեկնեցաւ սրահէն, վերանորոգուած հաւատքով եւ հաւատարմութեամբ դէպի Մեծի Տանն Կիլիկիոյ Պատմական Աթոռին եւ անոր այժմու գահակալին՝ Շնորհազարդ Գարեգին Բ. Կաթողիկոսին:

«ՅՈՐԻՉՈՆ»
1988

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ՇՈՒՏՈՎ ԿՐ ՄԿՄԻ

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հայկական ոճով շէնքին հիմնադրութիւնը տեղի ունեցաւ 17 Օգոստոս 1987, Ս. Աստուածածնայ տօնին առթիւ, բարձր նախագահութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Շրճնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի եւ մասնակցութեամբ Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի եւ Գանատայի Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի, Բերիոյ Թեմի (Սուրիա) Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Սուրէն Ս. Արք. Գաթարոյեանի, ինչպէս նաեւ հայ եւ քոյր եկեղեցիներէն կարգ մը հոգեւորականներու:

Հիմնարկէքին եւ պաշտօնական ճաշկերոյթին ներկայ գտնուող հազարէ աւելի ազգայիններ, հաւատալով հայ եկեղեցւոյ կարեւորութեան եւ անոր կատարած առաքելութեան, եզակի խանդավառութեամբ 600 հազարէ աւելի գումար մը գոյացաւ, մինչ այդ հանգանակուած գումարներուն հետ միասին, մէկ միլիոն երկու հարիւր հազար տոլարի բարձրացնելով եկեղեցւոյ շինութեան հիմնադրամը:

Հայ ժողովուրդը ամէնուրեք, եղած է դպրոցասէր եւ եկեղեցասէր, Մեր Եղեռնէն ետք, ցրուելով աշխարհով մէկ, կազմելով հայահոծ գաղութներ, դպրոցի կողքին անպայմանօրէն բարձրացուցած է Հայաստանեայց Եկեղեցւոյ Աստուածահաճոյ գմբէթը, քաջ գիտնալով, որ վերոյիշեալ գլխաւոր երկու հաստատութիւններու շնորհիւ միայն, կարելի պիտի ըլլայ սփիւռքի դժուարին պայմաններուն ներքեւ պահելու հայեցի նկարագիրը, լեզուն, հաւատքը, բարքերն ու աւանդութիւնները:

Շնորհիւ Հայաստանեայց եկեղեցւոյ եւ անոր անձնուէր հոգեւորականներուն, 301 թուականէն սկսեալ հայ ժողովուրդը կարողացած է գոյատեւել, դիմադրելով պասկական, սելճուկեան, մեմլուքեան, հռոմէական եւ արաբական, մանաւանդ թրքական աւերումներուն, բռնադրաւումներուն, յափշտակութիւններուն եւ տիրապետութեան:

Եկեղեցին այն վայրն է, ուր հայ բարեպաշտ ժողովուրդը անխափան կը հաղորդուի իր նախահայրերուն եւ սրբազան հայրապետներուն հոգիներուն հետ եւ կը ստանայ հոգեկան կենսանորոգ ոյժը՝ ապրելու եւ գոյատեւելու իբրեւ ազգ, անքակտելի կապերով կառչած մնալով իր արմատներուն եւ լուսաւորուելու Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աստուածապարգեւ կանթեղէն:

Բանաստեղծ ժագ Յակոբեան կ'ըսէ. «Եկեղեցի մը կանգնել կը նշանակէ սատանայի որջ մը խորտակել, թշնամիին մէկ բանակը ճգմել, թշնամի հող գրաւել, կը նշանակէ դժոխքի ուժերու շղթայագերծումին դէմ պարսպապատ նոր ճակատ մը պարգել»:

«Եկեղեցի մը բանալ կը նշանակէ, փարոս մը վառել, կը նշանակէ մեղքի խաւարը փարատել եւ արդարութեան արեւը ծագեցնել»:

Պիտի կանգնենք Հայաստանեայց եկեղեցին, պիտի բարձրացնենք անոր խաչափողփող գմբէթը Հայ Կեդրոնի եւ Հայ Դպրոցի կից, որպէսզի հայ

նորահաս սերունդը ճանչնայ իր ինքնութիւնը, իր կրօնքը եւ իր ծնողքը, գինւելով հայու ազնիւ առաքելութիւններով իր ծնողքին, ազգին եւ մարդկութեան:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հովիւր, Հոգաբարձութիւնն ու Շինութեան յանձնախումբը, վերջին ամիսներուն անդուլ աշխատանքով եւ յարատեւութեամբ կրցաւ գլուխ հանել շինուելիք եկեղեցւոյ յղացք-ծրագիրը, գըծագրութիւնները, հարթելով մասնագիտական եւ ճարտարապետական դժուարութիւններ, Աստուծոյ կամքով կը ծրագրուի շինութեան գործնական աշխատանքներուն ձեռնարկել Յուլիսի կէսերուն, այն հաստատ համոզումով եւ վստահութեամբ, որ հայ ժողովուրդը բարոյապէս եւ նիւթապէս օժանդակելու պատրաստ է նուիրական քայլին:

Բիւր երանելի այն հաւատացեալին, որ պիտի ուզէ քար մը դնել Հայաստանեայց Եկեղեցւոյ նիւթական կառոյցին մէջ՝ անսալով իր հայկական հոգիին Լուսաւորչեան Սրբազան Չայնին:

«ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԼՐԱՏՈՒ»
Մայիս 1988

ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ՏՈՒՆԸ ՄԿՍԱԻ ԿԱՌՈՒՑՈՒԻԼ

Եւ, ահաւասիկ, երկարատեւ նախագծումներէ, հաշուարկումներէ եւ լաւագոյնը կառուցանելու բանակցութիւններէ ետք, Մայիս սկիզբը, Յարպիրօ եւ Օտրոս շինարական հաստատութիւնիւ ձեռնամուխ եղաւ Հայաստանեայց Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցւոյ շէնքին հիմնարկէրքի աշխատանքներուն, արգելապատելով եկեղեցւոյ հողաշերտը՝ առաջքը առնելու հաւանական արկածներու:

Փորոզ արդիական գործիքներ, խլացնող աղմուկով, օրերով անհանգիստ դարձուցին հայ կեդրոնը շրջապատող գրասենակներու պաշտօնեաները, որոնք դժգոհանգով, սակայն ներողամտութեամբ համբերեցին, մինչեւ որ անախորժ ձայները դադրեցան եւ եկեղեցւոյ գետնայարկը պարպուեցաւ եւ երկաթապարտ կրողիւսով հիմերը սկսան հաստատուիլ:

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հայկական եւ արդիական ոճով շէնքին հիմնարկէրքի արարողութիւնը տեղի ունեցաւ 17 Օգոստոս 1987, Ս. Աստուածածնոյ տօնին առթիւ, բարձր նախագահութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի եւ մասնակցութեամբ Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի, Բերիոյ թեմի (Սուրիա) Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Սուրէն Ս. Արք. Գաթարոյեանի, ինչպէս նաեւ հայ այլ եկեղեցիներէն կարգ մը հոգեւորականներու:

Կիրակի, 21 Մայիս 1989 ին, Սուրբ եւ Անմահ պատարագ մատուցուեցաւ հայ կեդրոնի սրահին մէջ:

Պատարագէն ետք, եկեղեցւոյ հովիւ Գերապատիւ Տ. Խաթակ Մ. Վրդ. Յակոբեան, դպրաց դասի թափորով, առաջնորդուեցաւ շինութիւնը սկսած եկեղեցւոյ ներքնայարկի բացութիւնը:

Խուռներամ հաւատացեալ ժողովուրդը, հայ կեդրոնի պատուհաններէն եւ շինութեան թոյլատրուած յարմարութենէն հետեւեցան արդէն իսկ օրհնուած հիմնաքարերու եւ հիմնասնտուկի գետեղումին արարողութիւններուն եւ հոգեգմայլ շարականներու երգեցողութեան:

Եկեղեցւոյ բոլոր կնքահայրները, իրենց յատկացուած սիւներուն մարմարէ հիմնաքարը տեղաւորեցին որոշեալ տեղերը: Բարեպաշտ ժողովուրդի յուզավարար եւ խնկածաւալ մթնոլորտին մէջ:

Բիւր երանի այն հաւատացեալին, որ պիտի ուզէ քար մը դնել Հայաստանեայց եկեղեցւոյ նիւթական կառուցին մէջ՝ անսալով իր հայկական հոգիին եւ լուսաւորիչի սրբազան հաւատքի հայաշունչ ղօղանջին:

«ՅՈՐԻՉՈՆ»
1989

«ՄԵՆՔ ՊԻՏԻ ՇԻՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՐՊԷՄ ՅՈՒՇԱՐՁԱՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ»

Թորոնթոյի Հայաստանեայց Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցին, իր կազմութենէն ի վեր վեցերորդ տարին ըլլալով, պատշաճ հանդիսութեամբ կը տօնէ եկեղեցւոյ անուանակոչութեան՝ Վերափոխումն Ս. Աստուածածնի տօնը:

Կիրակի, 13 Օգոստոս 1989ին, ինչպէս անցնող տարիներուն, այս տարի եւս, եկեղեցւոյ Հոգաբարձութեան յատուկ կարգադրութեամբ, եկեղեցական արարողութիւններն ու հանդիսութիւնները տեղի ունեցան Հայ Կեդրոնի սրահին եւ շրջափակին մէջ, որոնց հովանաւորութիւնն ու հանդիսապետութիւնը ստանձնած էր Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեան:

Եկեղեցական արարողութիւնները սկսան կէսօրէ ետք ժամը 12:30ին: Ծովածաւալ բազմութիւն մը՝ ութը հարիւրէ աւելի հաւատացեալներ տեղ գըրաւած էին Հայ Կեդրոնի սրահին մէջ, որոնք օրինակելի երկիրդածութեամբ հետեւեցան 1700 տարիներէ եկող մեր սրբազան երգեցողութիւններուն եւ արարողութիւններուն:

Ժամը 1ին, Առաջնորդ Սրբազան հայրը, որպէս օրուան պատարագիչ եկեղեցի առաջնորդուեցաւ դպրաց դասին կողմէ երգուող «Հրաշափառ» շարականով եւ դպիրներու ու սարկաւազներու ընկերակցութեամբ:

«Հայր Մեր»էն առաջ, պատարագիչ Սրբազանը օրուան պատշաճ խորիմաստ քարոզ մը խօսեցաւ, ընդգծելով Տիրամօր՝ Մարիամ Աստուածածին նըկարագրին յատկութիւնները եւ անոր տեղը Հայ Եկեղեցւոյ եւ Հայ ազգին մէջ, որպէս հայուհիներու տօն:

Ս. Պատարագի աւարտումէն ետք, եկեղեցական թափօրը առաջնորդը՝ Լեցաւ Հայ Կեդրոնի շրջափակը, ուր հսկայ փսէներու մէջ դրուած խաղողները օրհնուեցան Կանոնային աղօթքներով եւ շարականներով:

Խաղողօրհնութեան իրենց մասնակցութիւնը բերին պատարագիչ Սըրբազան հայրը, եկեղեցւոյ հովիւ հոգեշնորհ Տ. Խաթակ Մ. Վրդ. Յակոբեան, բարեշնորհ Մանուէլ Ա. Սարկաւազ Շեհիրեան, սարկաւազներ եւ դպրաց դասը՝ ղեկավարութեամբ դպրապետ Վարուժան Նիկողեանի:

Կարգապահութեան կը հսկէին Հ.Մ.Ը.Մ.ի սկսողները ու արենոյչները:

Մեր ազգային աւանդութեան եւ սովորութեան համաձայն, Հայ Քրիստոնեայի մը արտօնուած չէ խաղողօրհնութենէն առաջ այդ հիանալի պտուղը ճաշակել: Ինչպէս մեր ուրիշ աւանդութիւնները, այս աւանդութիւնն ալ կը յարգուէին մեր հայրերուն կողմէ՝ երբ մեր հարազատ հողերուն վրայ էինք: Սակայն, Սփիւռքի տարածքին, կեանքի նոր պայմաններու եւ կլիմաներու պարտադրանքով մոռացութեան տրուած են մեր ազգային նկարագիրը կազմող աւանդութիւններ եւ սովորութիւններ:

Ազգային վերագարթնումի այս օրերուն, կ'արժէ խորհրդածել եւ գործնական քայլերու դիմել, մեր ազգային ականդութիւնները վերակենդանացնելու եւ փոխանցելու նորահաս սերունդներուն:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ Ի ՆՊԱՍՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

Կիրակի, 13 Օգոստոս 1989, կէսօրէ ետք ժամը 4:30ին, բազմահարիւր եկեղեցասէր եւ հաւատացեալ ժողովուրդ, հինգ հարիւրէն աւելի, ընդառաջած էին եկեղեցւոյ հրաւէրին, եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը ճաշկերոյթով տօնախմբելու համար:

Թեմիս Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի սեղանի օրհնութենէն ետք, օրուան հանդիսավար Պրն. Վազգէն Թերզեան, եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան, Շինութեան Յանձնախումբին եւ Հայ Կեդրոնին կողմէ բարի գալուստ մաղթեց ներկաներուն, ցանկանալով, որ ձեռնարկը յաջողութեամբ կ'ընթանայ եւ գոհունակութիւն կը պատճառէ բոլորին:

Ճաշի սպասարկութենէն ետք, հանդիսավար Պրն. Թերզեան ներկայացուց պատուոյ սեղանի պաշտօնական անձնաւորութիւնները, ապա, կարգացանունները եկեղեցւոյ հոգաբարձութեան, Ազգային Երեսփոխաններու, Շինութեան Կեդրոնական եւ Մասնագիտական Յանձնախումբերուն անդամներուն անունները, որոնց տարած տարիներու աշխատանքներուն եւ կազմած ծրագիրներուն շնորհիւ կարելի եղաւ եկեղեցւոյ շինութեան ձեռնարկել՝ խոր հաւատք եւ վստահութիւն ունենալով որ Հայ ժողովուրդը սրտի անքակտելի կապերով կապուած է իր եկեղեցիին եւ իր լաւագոյնը պիտի ընէ բարձրացնելու եւ աւարտելու համար իր հոգիին տունին հայաբոյր Գմբէթը եւ Հայադրոշմ Խորանը:

Պրն. Թերզեան իր բացման խօսքով անդրադարձաւ եկեղեցոյ անուանակոչութեան տօնին եւ կազմակերպուած ճաշկերոյթի նպատակին եւ աւելցուց. «Հայ Կեդրոնով, Հայ Դպրոցով կանգնած համալիր-կառույցը, ահաւասիկ կ'ամբողջանայ Հայ եկեղեցւոյ Աստուածահաճոյ շէնքով: Այս համալիրը, ամբողջի մը նման պիտի պահէ ու պահպանէ Թորոնթոյի Հայ գաղութը հայկական առողջ ու գիտակից միջնորդութիւն մէջ, դէմ դնելով հայութեան դիմագիծը աղարտող, հայութեան կեանքը մաշող օտար ազդեցութիւններու:

«Եկեղեցւոյ հիմերը գետեղուած են: Գետնայարկը շինուած է: Մօտ օրէն կը սկսին բարձրանալ պատերը, բարձրացնելով մեր ամէն մէկուն հոգեկան զգացումները: Բարձրացնելով Թորոնթոյի եւ Գանատայի հայութեան պատիւը՝ յաջա Աստուծոյ եւ Գանատացի ժողովուրդին: Բոլորս, ինչպէս նաեւ Գանատացի ժողովուրդը, շինութեան աւարտին, հիացումով պիտի տեսնեն հայկական ոճով, իւրայատուկ գեղեցկութեամբ կանգնած Հայաստանեայց Եկեղեցին:

«Մենք պիտի շինենք մեր եկեղեցին որպէս յուշարձան հայութեան, գիտնալով, որ մեր պատմութեան ամենաճգնաժամային օրերուն կը շինենք մեր եկեղեցին: Քաջ գիտնալով որ մենք առաջնահերթ պարտականութիւն ունինք մտածելու, զօրավիզ կանգնելու Ղարաբաղի մեր արիւնակից ժողովուրդը:

դին, օգնութեան ձեռք երկարելու Հայաստանի աղիտալի երկրաշարժի զոհե-
րուն եւ անպատասպար հայրենակիցներուն, Լիբանանի մեր հարազատներուն եւ
հոն ուր կարիքը կայ՝ Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ, որուն շղթային անխոր-
տակելի օղակը կը կազմենք մենք Գանատայի հայութիւնը, Թորոնթոյի հա-
յութիւնը եւ Հայ Կեդրոնի շուրջ հաւաքուած նուիրաբերող, զոհողութեան
բարձր ոգիի տէր ազգասէր հայութիւնը»:

Ապա, Պրն. Թերզեան, կարգաց եկեղեցւոյ կնքահայրերուն, բարերար-
ներուն եւ մասնաբաժիններու նուիրատուներուն անունները:

Բեմ հրաւիրուեցաւ հոգաբարձութեան ատենապետ Պրն. Կարօ Փաշա-
յեան, որ ի միջի այլոց ըսաւ.

«Հայ ժողովուրդը դարերու ընթացքին եղած է շինարար եւ տեսլա-
պաշտ ժողովուրդ մը: Այդ կը փաստեն Հայաստանի ամբողջ տարածքին գտնը-
ւող հազարաւոր վանքերն ու եկեղեցիները, տաճարներն ու խաչքարերը: Այդ
կը շարունակուի այս օրերուն ալ Սփիւռքի բոլոր հայահոծ գաղութներուն
մէջ, ուր իրարու ետեւէ կը բարձրանան հայութեան ինքնապաշտպանութեան
բերդերը՝ եկեղեցիներ, դպրոցներ, կեդրոններ:

«Քաղցր եւ հոգեզմայլ է տեսնել տեսիլքներու իրականացումը, վեցէ
աւելի տարիներ առաջ կազմուած Ս. Աստուածածին եկեղեցւոյ համայնքը,
տարիներ առաջ որոշեց ունենալ իր սեփական եկեղեցին: Այդ օրերուն երազ
թուացող գաղափարը, շնորհիւ պատասխանատու մարմիններու եւ հայ ժողո-
վուրդի շինարար ոգիին, անսահման զոհաբերութեան եւ խոր հաւատքին, եկե-
ղեցւոյ շինութիւնը արդէն շօշափելի իրականութիւն է եւ մենք կը հաւա-
տանք, որ մեր ժողովուրդը իր կարելին պիտի ընէ, ամբողջացնելու մեծա-
ծախս այս պատուաբեր շինութիւնը:

«Հայ ժողովուրդը իր գոյութեան ընթացքին միշտ ենթակայ եղած է
վայրագ եւ աշխահակալ պետութիւններու յարձակումներուն, հալածանքնե-
րուն եւ աւերումներուն: Պայքարած է, դիմադրած է, պատերազմած, իր ազ-
գային սրբութիւններուն եւ գոյութեան պահպանման համար, երբեմն հասած
է բնաջնջուելու սահմաններուն, սակայն, միշտ, կրցած է վերապրիլ շնորհիւ
Քրիստոնէական խոր հաւատքին, Հայաստանեայց եկեղեցւոյ հրաշածին զօ-
րութեան եւ Հայ մշակոյթի հանդէպ ունեցած պաշտամունքին:

«Այսօր, Սփիւռքի մէջ շատ աւելի պէտք ունինք փարելու մեր արմատ-
ներուն, մեր սրբութիւններուն, մեր աւանդութիւններուն եւ բարիքներուն,
որպէսզի կարենանք պահել հայկական մեր անեղծ նկարագիրն ու ինքնութիւ-
նը: Կ'ապրինք հայկուլ եւ հայաձոյլ միջավայրերու մէջ: Մեզմէ կը պահան-
ջուի նորանոր զոհողութիւններ պայքարելու համար մեր հոգին եւ միտքը ձե-
ւափոխող ուժերուն դէմ, որպէսզի մեր զաւակները, որոնք հասակ առած են
այս ամիսներուն վրայ, կարենան ճանչնալ իրենց կրօնը եւ ազգը»:

Ապա, խօսք տրուեցաւ եկեղեցւոյ հովիւ հոգեշնորհ Տ. Խաթակ Մ. Վրդ.
Յակոբեանին, որուն մտածումներէն մաս մը կ'ուզենք փոխանցել ընթերցող-
ներուն, որոնք առիթը չունեցան ներկայ գտնուելու այս հանդիսաւոր ճաշկե-
րոյթին.

«Դժուարին օրեր անցուցինք: Մեր ժողովուրդի կեանքը այնպիսի յե-
ղափոխութեան մը ենթարկուեցաւ, որ ասկէ մէկուկէս տարի առաջ բացարձա-

կապէս չէինք կրնար երեւակայել: Եւ այդ փոփոխութիւնները մեր ազգային կեանքին մէջ հսկայ կամուրջներ ստեղծեցին Սփիւռքէն մինչեւ Հայրենիք: Այսօր Հայաստանի հայը երէկուան հայը չէ եւ եթէ ըսենք, որ մենք հոս ըՍփիւռքի մէջ ասկէ քանի մը ամիսներ առաջուան հայն ենք, հիմնապէս կը սխալինք: Այսօր Նոր Հայ մըն է, նոր երիտասարդութիւն մըն է, նոր սերունդ մըն է, որ այս ամիսներու վրայ կը նայի ինքնիրեն, կը տեսնէ իր հայութիւնը եւ կ'ապրի այդ հայութիւնը:

«Մեր պաշտօնական ձեռնարկներուն ընթացքին յաճախ կը խօսինք թէ ինչպէ՞ս մեծ ծրագիրներ պէտք է մշակենք, որպէսզի կարենանք հայրենիքին օգտակար ըլլալ, մեր գաղութներուն օգտակար ըլլալ: Ես կը կարծեմ, որ մեծ գործերը կը սկսին պատիկ գործերով: Պատիկ ծրագիրներու իրագործումով: Մեր մեծ ծրագիրները հիմնուած են մեր յաջողութեան վրայ: Եթէ մենք այսօր իբրեւ գաղութ մենք զմեզ կարենանք ապահովել, պաշտպանել եւ կերտել մեր բերդերը, մենք այդ ձեւով նախ եւ առաջ ծառայած կ'ըլլանք մեր ազգին, հայրենիքին եւ հայ ժողովուրդի ապագային:

«Անհրաժեշտութիւն մըն է ասիկա, որքան որ կենսական եւ անհրաժեշտ է, որ մենք մտածենք մեծ ծրագիրներու մասին, նաեւ նոյնքան կենսական եւ նոյնքան անհրաժեշտ է, թերեւս աւելի անհրաժեշտ է, մեր տեղական կարիքներուն, մեր տեղական ցաւերուն եւ պէտքերուն մասին մտածել:

«Հայաստանէն եկող անձ մը, անցեալները կ'ըսէր թէ Հայաստանեայց եկեղեցին երկու հազար տարի այս ժողովուրդին իր ծառայութիւնը բերած է եւ անոր գոյապահպանման անմահկենսական ազդակներէն մէկը եղած է...

«Եթեանասուն տարի չկարենալ ըսելէ ետք այդ խօսքը, մարդը հպարտութեամբ եւ ուրախութեամբ կ'ըզէր այս կարծիքը մեզի հետ բաժնել: Եւ մենք այսօր եկած ենք մեր եկեղեցին շինելու, որպէսզի մենք ալ մեր հայրերուն նման, մեր հայրերուն շառաւիղով շարունակենք օղակել մեր պատմութիւնը՝ դարերուն հետ:

«Ես կ'ըզեմ իմ մտածումներս փակել մէջբերելով Յովհաննէս Թումանեանի «Լուսաւորչի Կանթեղը» հոյակապ բանաստեղծութեան վերջին համարը, ուր ան կ'ըսէ.

«Ան որ վառ յոյսերով կը նայի հայ ժողովուրդի ապագային, ան որ հաւատք ունի հայ ժողովուրդի ապագային, ան պիտի տեսնէ այդ վառուած կանթեղը, անմար Կանթեղը՝ Արագածի կատարին վառուած հայ ժողովուրդին Համար:

«Շատեր կասկածով պիտի նային մեր աշխատանքին, ուրիշներ պիտի դժգոհին, կարգ մը մարդիկ պիտի մտածեն թէ արդեօք իրենց նուիրած 500 կամ 50 հազար տոլարի նուիրատուութիւնը շատ է, քիչ է: Բայց բոլոր գործերուն ետին, մեր մտածողութեան ետին, եթէ կ'ապրի այդ վառ յոյսը, եթէ մեր հոգիներուն մէջ կը տրոփէ հայու սիրտը, եթէ հայու գոյապահպանումը մեր մտահոգութիւնն է, ուրեմն պիտի տանք այնքան, որքան կը հաւատանք, որ այդ տարով մենք կը կառուցանենք մեր ապագան»:

Որպէս գեղարուեստական բաժին, սքանչելի գաղափարը յղացուած էր հրաւիրելու Հ.Օ.Մ.ի Պապայեան Մանկապարտէզի աշակերտուհի հինգ տարեկան Քաթրին Մանուկեանը, որ ջութակով, դաշնամուրով ընկերակցութեամբ

իր մօր՝ տիկին Մարիքօ Մանուկեանի, հասուն ջուրկահարի մը ինքնավստահութեամբ եւ համարձակութեամբ նուագեց Սպենդարեանի «Քայլարմա»ն եւ Սայաթ Նովայի «Քամանչա»ն, արժանանալով ներկաներու խոր գնահատանքին եւ բուռն ծափաղջոյններուն:

Օրուան պատգամաբերն էր Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեան, որ միշտ նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կանգնած է Ս. Աստուածածին եկեղեցւոյ համայնքին եւ եկեղեցւոյ շինութեան աշխատանքներուն: Կու տանք Առաջնորդ Սրբազանի հոյակապ պատգամէն կարգ մը հատուածներ, որոնք կը շահագրգռեն ամբողջ հայութիւնը.

«Ուրբաթ, Օգոստոս 11ին, հայկական Նաւասարդն էր, հայկական Նոր Տարին: Հայոց թուականի 4482ի Նաւասարդ ամսուան երրորդ է եւ ուրեմն կ'ուզեմ յիշել այս վարկեանին, թէ մենք քանի յիշատակներ պահած ենք Վարդապառի եւ Աստուածածնի տօներուն մէջ: Վարդապառին իրարու վրայ ջուր սրսկելով եւ Աստուածածնին խաղող ընծայելով Աստուծոյ: Կը մտածեմ որ մենք այս օրերուն քիչ արժէք կու տանք մեր տօներուն եւ աւանդութիւններուն: Մինչդեռ տօները, աւանդութիւնները ազգի մը կենսագրութեան մաս կը կազմեն: Անոնք ազգի մը կեանքին մէկ հանգրուանին արտայայտութիւնն են եւ ազգ մը այնքան առողջ է այնքան արմատներով ամուր, որքան աւանդութիւններուն, տօներուն, տօնախմբութիւններուն հաւատարիմ է եւ զանոնք կը պահէ եւ կը պահպանէ ու սերունդէ սերունդ եւ դարէ դար կը փոխանցէ:

«Բայց, դժբախտաբար, մեր կեանքը այնպէս մը եղած է, որ մեր տառապանքի ճամբորդութեան ընթացքին շատ բան մոռցած ենք մեր տօներէն, աւանդութիւններէն եւ սովորութիւններէն: Եւ գուցէ առիթն է, որ մենք վերստին դառնանք մեր արմատներուն: Վերստին դառնանք մեր պատմութեան եւ ամէն առիթ օգտագործենք, որպէսզի ինքնահաստատում մը ընենք: Մենք զմեզ հաստատենք իբրեւ ժողովուրդ, իբրեւ ազգ: Ժողովուրդ մը, որ կրնայ հպարտանալ, որ 4482 տարուան կեանք ունի իր ետին: Ժողովուրդ մը, որուն թուականութիւնը, ծագման թուականութիւնը, կը սկսի հրաշալի կերպով մը՝ Հայկի յաղթանակովը Բելի վրայ: Այս աւանդութիւնն ալ մեզի կու գայ Վասպուրականէն, ուր տարածուած էր այս աւանդութիւնը, թէ Հայկ երբ յաղթեց Բելին, այդ օրունէ սկսաւ Հայոց թուականը, այսինքն Հայոց ծնունդը յաղթանակի վրայ հիմնուած ծնունդ է: Եւ մենք հպարտ պիտի ըլլանք, որ մեր ծնունդը Հռովմէացիներու նման գայլէն չէ, կամ թուրքերու նման գորշ գայլէն չէ, այլ՝ հայկական յաղթանակէն է, որ կը սկսի եւ ասիկա կու տայ նաեւ նկարագիր մեր ժողովուրդին, որ քաջութեամբ կը նայի եւ քաջութիւնը, յանդգնութիւնը եւ յաղթանակը կը նկատէ իր կեանքի ուղին: Ճիշդ է, երբեմն պարտութիւնն անգամ յաղթանակի կը վերածէ, արցունքն անգամ ուրախութեան կը վերածէ: Ժողովուրդ մը, որ յաղթանակով ինքզինքին կ'արժեւորէ, յաղթանակին մէջ կը գտնէ իր ծագումն ու ապագան:

«Պատմութիւնը կը պատմէ, թէ Հայկ նահապետ հրամայեց իր զինուորներուն, որ Նաւասարդին, Նոր Տարիի օրերուն, իրենց գէնքերով եւ զրահներով ուրախութիւն ընեն եւ հայերէն խօսին, իրենց գէնք-զրահով պատրաստ ըլլան անակնկալներ դիմադրուելու, հայերէն խօսին եւ ուրախ ըլլան: Եւ ասիկա, որպէսզի հին աստուածները ճանչնան, թէ այս յաղթականները հա-

յեր են: Աստուածներուն ճանչցնելու համար Հայկ կ'ուզէր, որ հայերը ուրախ ըլլան եւ հայերէն խօսին:

«Բայց այդ աստուածներուն գործը հիմա շատ դժուար է, որովհետեւ հայութիւնը այնքան ցրուած է քանի-քանի քաղաքակրթութիւններու, քանի-քանի լեզուներու Բաբելոնին մէջ, որ իսկապէս այդ շաստուածներուն գործը շատ դժուարացած է եւ միայն Տէր Աստուածը, Հայու Աստուածը կը ճանչնայ մեզ: Հիմա մեր կեանքը շատ դժուար է: Հայերէն խօսելու, հայութեամբ ապրելու, ուրախ ապրելու կեանքը դժուար է: Բայց Աստուածաշունչը վկայ, ձեզ մէջ ոչ ոք պիտի չկորսուի եւ Աստուած ձեզ մէկ մէկ կը ճանչնայ, ձեր անուններով կը ճանչնայ:

«Դուք գիտէք, թէ ես ինչո՞ւ եկած եմ: Դուք ինչո՞ւ եկած էք: Երբ Հայ Կեդրոնի մուտքէն անցանք, տեսանք, թէ հասակ առած է ձեր եկեղեցին՝ յառաջիկայ շաբաթներուն, շատ աւելի կերպարանք պիտի ստանայ ձեր տարիներու տեսիլքը: Վեց տարի առաջ կազմուեցաւ համայնքը եւ թերեւս քիչ մը ուշացաւ այս եկեղեցւոյ բարձրացումը: Բայց ի պատիւ ձեզ, ի պատիւ այս համայնքին ըսեմ, թէ կը հաւատամ, որ հիւսիսային Ամերիկայի մեր ճարտարապետական ներքին կառոյցով՝ իսկապէս գոհար մը պիտի ըլլայ, որովհետեւ ոչ միայն հիմնուած է հայկական ճարտարապետական աւանդութեան վայր, այլ այդ աւանդութիւնը զարգացուցած է եւ այսօրուան, ժամանակակից կառուցողային արուեստով եւ շինանիւթերով շատ աւելի թռիչք տուած է մեր հայրերուն մտածումին, որ ժամանակին էջմիածինը կերտած է, Հռիփսիմէն կերտած է եւ այսօր կը յաջողի կերտել Թորոնթոյի հորիզոնին վրայ Ս. Աստուածածին եկեղեցին: Եւ տարբեր չէր կրնար ըլլալ գաղութի մը համար, ուր ասկէ 11 տարիներ առաջ սկսաւ այս կեդրոնի շինարարութեան եւ մինչեւ հիմա այս Հայ Կեդրոնը անգերազանցելի մնացած է Հիւսիսային Ամերիկայի, Գանատայի եւ Մ. Նահանգներու մէջ իր կառոյցով, եւ գեղեցկութեամբ: Թէեւ այսօր քիչ մը նեղ կու գայ, թերեւս շատ նեղ, բայց իբրեւ ճարտարապետութիւն, իբրեւ յղացք, իբրեւ գեղեցկութիւն հիանալի կեդրոն մըն է, եւ, եկեղեցին չէր կրնար տարբեր ձեւով կառուցուիլ: Կը շնորհաւորեմ բոլոր անոնք, որոնք քիչ մը բծախնդրութեամբ, ծայրայեղ բծախնդրութեամբ հետամուտ եղան, որպէսզի գոհար եկեղեցի մը կառուցուի: Եւ մենք, իբրեւ հայ ժողովուրդ, հպարտութեամբ Գանատայի ժողովուրդին ըսենք, որ ասիկա է մեր արուեստը, ասիկա է մեր ճարտարապետութիւնը, ասիկա է մեր մշակոյթը: Մենք փողոցէն չենք եկած, մենք երէկուան ծնունդը չենք, այլ՝ 4500 տարուան անցեալ ունեցող, աւանդութիւն ունեցող, մշակոյթ ունեցող եւ տեսիլք ունեցող, դէպի ապագայ գացող ժողովուրդ ենք: Շնորհաւորութիւններ եւ շնորհակալութիւն բոլոր անոնց, որոնց վաստակը կայ այս եկեղեցիի շինութեան գործին մէջ»:

Սրբազանը հայրը իր խօսքին վերջաւորութեան յայտնեց թէ հայոց եկեղեցին կ'ապրի զարթօնքի եւ վերակազմութեան շրջան մը, մանաւանդ Հայաստանի եւ Արցախի մէջ, ուր սկսած են վերաբացուիլ նորանոր եկեղեցիներ եւ վանքեր: Եւ որպէս մեծ ուրախութիւն հայ ժողովուրդին, մինչեւ 1992 թրուականը, Երեւանի մէջ պիտի շինուի Սովետական Միութեան եւ Խորհրդային Հայաստանի պատմութեան 70 տարիներու ընթացքին առաջին հայկական եկեղեցին, 2500 հոգի պարփակող հսկայ եկեղեցի մը:

Աշնան, Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն պատուիրակութիւն մը պիտի մեկնի Էջմիածին, ուր երկու Կաթողիկոսութիւնները պիտի խորհրդակցին եւ որոշումներ պիտի առնեն 1915ի Մեծ Եղեռնի Նահատակները սրբացնելու եւ Հայաստանեայց եկեղեցոյ հիմնադրութեան 1700-ամեակը փառաւոր հանդիսութիւններով տօնախմբելու մասին:

Սրբազանին այս յայտարարութիւնները անհուն ցնծութեամբ եւ բուռն ծափահարութիւններով ընդունուեցան ժողովուրդին կողմէ:

Հասած էր հանգանակութեան պահը: Հանդիսավար Պրն. Վազգէն Թերզեան հերթականօրէն սկսաւ կարդալ նուիրատուութիւններու ցանկը եւ մէկ ժամուան ընթացքին գոյացաւ 182,243 տոլարի գումար մը:

Ճաշկերոյթը փակուեցաւ Սրբազան հօր «Պահպանիչ»ով եւ ժողովուրդին կողմէ երգուած «Կիլիկիա» երգով:

Երեք միլիոն շինարարական եւ այլ ծախս նախատեսուած եկեղեցիին, ցարդ, երեք հանգանակութիւններով մօտ 1,400,000 տոլար ապահովուած է, կը մնայ տակաւին 1,600,000 տոլար, որպէսզի մեր հոգիներուն տունը բարձրանայ եւ շինարարութիւնը ամբողջանայ առանց պարտքի, առանց մոլորհակի:

Այո, շինարարական աշխատանքները փութով յառաջանան եւ մինչեւ Նոր Տարի վերջ կը գտնէ եկեղեցաշինութեան աշխատանքները: Սակայն, մինչ այդ կը սկսի ամենէն մտահոգիչ գործը՝ նիւթական աղբիւրներու որոնման գործը, որպէսզի ամէն հայ՝ սրտի եւ խղճի հանդարտութեամբ կարենայ մտնել նորաշէն եկեղեցին եւ աղօթել առ Բարձրեալն Աստուած, ներկայացնելով իր խնդրանքներն ու մտահոգութիւնները:

Որպէս ճշմարիտ եւ իրաւ հայ քրիստոնեաներ, մենք պիտի ուզէինք աղօթքի կենալ, մեր սրտերը բանալ մեր պապերէն աւանդուած 1700 տարիներու պատմութիւն ունեցող եկեղեցիի մը խորանին առջեւ, երբ այդ եկեղեցին հսկայական գումարներ եւ տոկոսներ վճարելու պարտաւորութեան տակ է: Մեր պատմութեան ընթացքին չենք հանդիպած պարտքով շինուած եկեղեցիի մը շինութեան: Հայ ժողովուրդը միշտ առատաձեռնութեամբ տուած է հայ եկեղեցիին եւ հայ դպրոցին, իր հացէն իսկ խնայելով յաճախ: Փառք Աստուծոյ, այս ամբողջը վրայ, հացէն խնայելու հարց չկայ, Գանատահայ ժողովուրդը ինքզինքը գտած է եւ մեծամասնութեամբ կ'ապրին բարօր կեանք մը: Մտածենք մեր հոգիներուն փրկութեան մասին, մեր գոյութեան եւ ինքնուրոյնութեան պահպանման մասին, մեր զաւակներուն փոխանցելի բարոյական եւ մարդկային աւանդութիւններուն մասին, որոնք միշտ մեզ զատորոշած են ուրիշ ազգերէ եւ մեզ հասցուցած 21րդ դարուն՝ որպէս Շինարար, Քաղաքակիրթ, Մշակութասէր եւ Կրօնասէր ժողովուրդ:

Միրելի հայրենակից, ուրախ եւ տխուր առիթներով, մեզի անդարձ մեկնած սիրելիներուն յիշատակին առիթով, տուր Ս. Աստուածածին եկեղեցւոյ շինարարութեան քու լուծարք: Վստահ ըլլալով, որ քու տուածով կը նպաստես հայ ժողովուրդի գոյատեւման եւ Հայ Դատի լուծման:

«ՅՈՐԻՉՈՆ»
1989

ՀԱՆՂԻՍԱՒՈՐ ՕԾՈՒՄ
ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՉԵՌԱՄԲ՝ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ նորակառոյց շէնքին առթիւ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ., ընկերակցութեամբ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի եւ Գանատայի Առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեանի, գաւազանակիր Բաբգէն Վրդ. Չարեանի, Սմբատ Արք. Լափաճեանի, Մուշեղ Մ. Վրդ. Մարտիրոսեանի, ինչպէս նաեւ Ազգային Վարչութեան անդամներ՝ Դոկա. Ռուբիկ Խաչիկեանի եւ Պրն. Նազ Էմիլիքեանի, Թորոնթոյի միջազգային Փիրսըն օգակայանը ժամանեցին Ուրբաթ, 25 Մայիս 1990, առաւօտեան ժամը 9:40ին եւ ընդունուեցան մէկ օր առաջ ժամանած Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ Տաթեւ Արք. Սարգիսեանի, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հովիւ Խաթակ Մ. Վրդ. Յակոբեանի, Հոգաբարձութեան ներկայացուցիչներու, հայ կեդրոնի պատասխանատուներու եւ համայնքի կարգ մը անդամներուն կողմէ:

Օգակայանի պաշտօնական հիւրասենեակին մէջ, Վեհափառ Հայրապետին բարի գալուստի խօսք ուղղեց Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենապետ ընկ. Կարօ Փաշայեան: Այս առթիւ, Գարեգին Բ. Վեհափառ, խնդակցութեան իր սրտի խօսքը ուղղեց զինք դիմաւորող ազգայիններուն եւ եկեղեցականներուն:

Կաթողիկոսը եւ իր շքախումբը, Inn On The Park պանդոկին մէջ հանգըստանալէ ետք, պաշտօնական այցելութիւն մը տուին Օնթարիոյի Լէֆթընանդ Կալըրնըր Ն.Վ. Լինքըն Ալեքսանտրի, ընկերակցութեամբ Առաջնորդ Սրբազան Հայրերուն, Խաթակ Հայր Սուրբին, ընկերներ Կարօ Փաշայեանի, Վազգէն Թէրզեանի եւ Աբգար Միրաքեանի: Այցելութիւնը տեւեց կէս ժամէն աւելի: Խօսք առին Վեհափառ Հայրապետը եւ Ն.Վ. Լինքըն Ալեքսանտրը:

Ուրբաթ երեկոյեան ժամը 8:30ին, Inn On The Park պանդոկի սրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն եւ ճաշկերոյթ, Տէր եւ Տիկ. Արա Երեւանեաններու կողմէ, ուր հրաւիրուած էին շուրջ 130 պաշտօնական անձնաւորութիւններ եւ եկեղեցւոյ բարերարներ:

Հաւաքոյթը կազմակերպուած ըլլալով Գարեգին Բ. Հայրապետի Գահակալութեան 13րդ տարեդարձին առթիւ, խօսք առին Արա Երեւանեան եւ Մեսրոպ Արք. Աշճեան եւ իրենց սրտի խօսքը ըրին այս առթիւ:

Խօսք առաւ նաեւ Վեհափառ Հայրապետը եւ իր շնորհակալութիւնը յայտնեց ճաշկերոյթը կազմակերպող Տէր եւ Տիկ. Արա Երեւանեաններուն, ինչպէս նաեւ Մեսրոպ Սրբազանին, ապա, տուաւ իր պատգամը, շեշտելով հայ եկեղեցւոյ կատարած դերը հայ ժողովուրդի գոյութեան պայքարին մէջ, ինչպէս նաեւ մշակութային ճակատներու վրայ:

Ճաշկերոյթի վերջաւորութեան եղան սրտաբուխ նուիրատուութիւններ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ շինութեան հիմնադրամին, որոնց գումարը հասաւ 364,000 տոլարի: Խանդավառուած հոգեյոյզ միջնորդէն, Տէր եւ Տիկ.

Արա Երեւանեան ըրին հանգանակուած գումարին չափ նուիրատուութիւն մը՝ 364,000 տոլար, ընդհանուր գումարը բարձրացելով 728,000 տոլարի:

Շաբաթ, 26 Մայիս 1990, երեկոյեան ժամը 6:00ին, տեղի ունեցաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Դռնբացէքի եւ Օրհնութեան արարողութիւններ, հովանաւորութեամբ եւ մասնակցութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի, Ս. Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ Տաթեւ Արք. Սարգիսեանի, Մոնթեպելոյի (Գալիֆորնիա) Ս. Խաչ Մայր Տաճարի տեսուչ Սմբատ Արք. Լափաճեանի, Օրէնճ Գառնիթիի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ տեսուչ Մուշեղ Մ. Վրդ. Մարտիրոսեանի, Վեհափառին գաւազանակիր Բաբգէն Վրդ. Չարեանի, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հովիւ Խաթակ Մ. Վրդ. Յակոբեանի, Մոնթրէպլի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Հովիւ Հրանդ Քհնյ. Երէցեանի, Վահան Ա. Քհնյ. Ղազարեանի, ինչպէս նաեւ անգլիական եկեղեցւոյ ներկայացուցիչներ York Scarborough-ի Առաջնորդ Արթիւր Տ. Պրատն Եպիսկոպոսի եւ Հարըլա Վրդ. Նահապետեանի:

Վեհափառի շքախումբը, առաջնորդութեամբ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ դպրաց դասին, Հրաշափառով առաջնորդուեցաւ նորակառոյց եկեղեցի: Եկեղեցւոյ շրջափակին մէջ հազարէ աւելի հաւատացեալ ժողովուրդի ներկայութեամբ տեղի ունեցաւ հացի եւ աղի օրհնութիւն, ապա, Դռնբացէքի արարողութիւնները, որմէ ետք տեղի ունեցան եկեղեցիի օրհնութեան արարողութիւնները: Խօսք առաւ վեհափառ Հայրապետը եւ տուաւ իր պատգամը:

Եկեղեցական արարողութիւններու աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը, Ուրար կրելու պատիւը շնորհեց Ս. Աստուածածին Եկեղեցւոյ չորս դըպիրներուն, Տեարք Գարեգին Օտապաշեանին, Ժազ Դանոյեանին, Անդրանիկ Աշրգեանին եւ Վահէ Քէհեայեանին:

Ապա, տեղի ունեցաւ Վահագն եւ Յասմիկ Յովնանեան սրահին բացման արարողութիւնը, ներկայութեամբ բարերար ամուլին, Տէր եւ Տիկ. Արա Երեւանեաններուն, եկեղեցական դասուն, պաշտօնական մարմիններուն եւ մեծ թիւով հաւատացեալներու:

Թեմիս առաջնորդ Մեսրոպ Սրբազան խօսեցաւ Տէր եւ Տիկ. Վահագն Յովնանեաններու մասին, որոնք միշտ թիկունք կանգնած են հայ դպրոցին, հայ մշակոյթին եւ հայ եկեղեցիին, իրենց բարոյական եւ նիւթական օժանդակութիւնը կատարելով:

Խօսք առաւ Գարեգին Բ. Կաթողիկոս, եւ իր անձնական տպաւորութիւններն ու կարծիքը յայտնեց Յովնանեաններու ազգակերտ եւ յարատեւ գործին շուրջ, գնահատելով անոնց հայատրոփ ոգին:

Վահագն Յովնանեան խօսք առնելով, իր շնորհակալութիւնը յայտնեց իրենց ուղղուած խօսքերուն համար, ընդգծելով, որ ամէն մէկ հայ իր կարելին պէտք է ընէ հայ ազգային ամբողջները պահելու եւ պայծառացնելու համար:

Հայ կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ Աջահամբոյր: Վեհափառին Աջահամբոյրին մասնակցեցան հայ կեդրոնի մէջ գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու վարչութիւններն ու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ մեծ թիւով հաւատացեալ եւ բարեպաշտ ժողովուրդ:

Կիրակի, 27 Մայիս, կ.ա. ժամը 10:30ին, սկսաւ ժամերգութիւնը նորահաւուոյց Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ:

Պատմական արարողութիւններուն ներկայ գտնուելու եւ Վեհափառ Հայրապետին հետ ըլլալու համար, ստուար թիւով հայորդիներ Գանատայի եւ Մ. Նահանգներու զանազան գաղութներէն ժամանած էին Թորոնթօ:

Եկեղեցիի օժման եւ մատուցուող Ս. Պատարագին ներկայ եղան եւ իրենց մասնակցութիւնը բերին շուրջ 2,000 ազգայիններ, որոնք եկեղեցւոյ մէջ եւ եկեղեցւոյ ներքնասրահին եւ հայ կեդրոնին մէջ հաստատուած բարձրախօսներու եւ հեռատեսիլի գործիքներու շնորհիւ հետեւեցան կատարուող Սրբազան արարողութիւններուն եւ Ս. Պատարագին: Վեհափառ ամպհովանիով եւ եկեղեցական դասուն եւ դպիրներու առաջնորդութեամբ, Հրաշափառով մուտք գործեց եկեղեցի:

Ժամը 11:30ին սկսան եկեղեցիի օժման արարողութիւնները, Վեհափառ Հայրապետը օծեց եկեղեցւոյ վէմը, խորանը եւ չորս սիւները, իսկ Մեսրոպ, Տաթեւ եւ Սմբատ Սրբազանները հերթականօրէն օծեցին մնացեալ 12 սիւները:

Ս. Պատարագը մատուց Մեծի Տանն կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.: Հայ բարձրաստիճան եկեղեցականներէն զատ ներկայ էին Հայ Կաթողիկէ համայնքի Հովիւ Եղիա Վրդ. Գիրէջեան, Անգլիական Եկեղեցւոյ Միջ-Եկեղեցական Յարաբերութիւններու Գանատայի Վարիչ Հէնրի Հիլ, Ս. Օգոստինոս Եկեղեցւոյ Հովիւ Հայր Ճան Հիլ, Գանատայի Անգլիական Եկեղեցւոյ ներկայացուցիչ Թամըս Լիթըլ, Թորոնթոյի Առաջնորդի ներկայացուցիչ Հայր Պրայըն Պրիտօ եւ Անգլիական Եկեղեցւոյ ծառայող հայածին Հայր Հարըլտ Նահապետեան:

«Հայր Մեր»էն առաջ, Վեհափառ Հայրապետը ազգայնաշունչ քարոզմը խօսեցաւ, ապա, իր խօսքին վերջաւորութեան շնորհաւորեց թեմիս Առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեանը, ազգային վարչութեան անդամները, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հովիւ Նաթակ Մ. Վրդ. Յակոբեանը, հոգաբարձութիւնը, ազգային երեսփոխանները եւ համայնքի բոլոր անդամները, որոնց ժրջան աշխատանքներուն եւ անձնուէր զոհողութիւններուն շնորհիւ կարելի եղաւ իր աւարտին հասցնել Ս. Աստուածածին Եկեղեցւոյ շէնքին շինութիւնը: Ծնորհակալութիւն յայտնեց նաեւ Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Տաթեւ Արք. Սարգիսեանին եւ իրեն ընկերակցող եկեղեցականներուն՝ իրենց մասնակցութեան համար:

Ս. Պատարագի աւարտին, հայ կեդրոնի «Համազգային»ի գրադարանին սրահին մէջ ընդունելութիւն մը տեղի ունեցաւ, որուն ներկայ գտնուեցան պետական եւ ազգային անձնաւորութիւններ:

Հիւրասիրութենէն ետք, խօսք առաւ Գանատայի Կեդրոնական Կառավարութեան բնակարանային նախարար Ալան Բէտուէյ, որ Գանատայի կառավարութեան յատուկ խօսքը կարդաց եւ յանձնեց եկեղեցւոյ պատասխանատուներուն: Իսկ շրջանիս դաշնակցային երեսփոխան Պարպարա Կրին, կարգաց Վարչապետ Պրայըն Մըլրոնիի պատգամը: Օնթարիօ նահանգի առողջապահական նախարարուհի Էլիանոր Քափլան կարգաց Օնթարիոյի Վարչապետ Տէյվիտ Փիթըրսընի պատգամը: Նահանգային նախկին երեսփոխան Տէյվիտ

Ուժընը կարգաց Օնթարիոյի խորհրդարանի ընդդիմադիր կուսակցութեան պետ Պապ Բէյի խօսքը:

Ընդունելութեան ներկայ էին նաեւ դաշնակցային խորհրդարանի անդամ հայասէր Պիլ Աթուէյ, նախկին երեսփոխան հայասէր Մարկրիթ Քամպըլ, երեսփոխան Ֆրանք Րապըր, եկեղեցւոյ շէնքին ճարտարապետ Ռատ Ռապպի եւ տիկինը, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Վադարչ Էհրամճեան եւ այլ հիւրեր:

Խօսք առաւ նաեւ Վեհափառ Հայրապետը եւ իր շնորհակալութեան խօսքը ուղղեց Իրեն եւ հայ ժողովուրդին հանէպ արտայայտուած գնահատական խօսքերուն համար, շեշտելով գանատական ազատ հողին վրայ ապրող հայ ժողովուրդի երախտագիտական զգացումները:

Հանգանակային ճաշկերոյթը տեղի ունեցաւ Կիրակի, 27 Մայիս 1990, կ.ե. ժամը 5:00ին, հայ կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ եկեղեցական դասուն, քոյր եկեղեցիներու ներկայացուցիչներուն, ազգային եւ պաշտօնական մարմիններու ներկայացուցիչներուն, պետական անձնաւորութիւններու, որոնց կարգին Օնթարիօ նահանգի վարչապետ Տէյվիտ Փիթըրսըն եւ մօտ 800 ազգայիններու:

Անգլերէն լեզուով բացման խօսքը ըրաւ օրուան հանդիսավար ընկ. Վազգէն Թերզեան եւ հրաւիրեց Օնթարիոյի Վարչապետը խօսելու ներկայ ժողովուրդին:

Վարչապետի խօսքին անգլերէնով պատասխանեց Վեհափառ Հայրապետը:

Ապա, հանդիսավարը հրաւիրեց Վեհափառը, օրհնելու սեղանը:

Սեղանի օրհնութենէն ետք, ընկ. Թերզեան առաջարկեց գաւաթները լեցնել եւ խմել Վեհափառ Հօր կենացը:

Հանդիսավար ընկ. Թերզեան ծանօթացուց պատուոյ սեղանի անդամները: Բացման խօսքէն ետք խօսք առին հայ կեդրոնի կողմէ ընկ. Աբգար Միրաքեան, հոգաբարձութեան ատենապետ ընկ. Կարօ Փաշայեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հովիւ Խաթակ Մ. Վրդ. Յակոբեան, հեռագրով շնորհաւորութիւններ Մոնթրէալէն Միհրան Փափազեան Կոմիտէին կարգաց ընկ. Թերզեան, Անգլիական եկեղեցւոյ ներկայացուցիչը, Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի եւ Գանատայի Առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեան:

Ընկ. Յարութիւն Շիթիլեան կարգաց մեծարելի անձերու անունները, հանգուցեալ Անդրանիկ Արթինեան եւ պատուագիրը յանձնուեցաւ Տիկ. Նանիկ Արթինեանի Կիլիկիան Ասպետի շքանշանով, ապա հրաւիրեց Հայր Խաթակը պատուելու Թորոնթոյի այլ ազգայիններ, որոնց կարգին, Տիկ. Ազնիւ Սարգիսեանը, հրաւիրելով անոր գաւակը Գուրգէն Սարգիսեանը:

Վեհափառ Հայրապետը Տիկ. Ազնիւ Սարգիսեանը պատուեց Կիլիկիան Ասպետի շքանշանով:

Նախկին հալէպահայ Տէր եւ Տիկ. Սուրէն Հաճճար, Վեհափառ Հայրապետին կողմէ պատուուեցան Կիլիկիան Արծիւի քանդակով, ինչպէս նաեւ Գէորգ եւ Միմօ Արթինեանները, որոնք պատուուեցան Կիլիկիան Արծիւի զարդաքանդակով:

Խօսք տրուեցաւ նաեւ Գանատայի ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի հերթապահ ընկ. Վաղարշ Էհրամճեանին, որ յայտնեց իր շնորհաւորութիւնները նորակառոյց եկեղեցւոյ օծման առթիւ եւ շեշտեց հայ եկեղեցւոյ դերը հայապահպանման պայքարին մէջ:

Վեհափառը Արա Երեւանեանը պատուեց Կիլիկիան Իշխանի շքանշանով:

Վերջին խօսքը տրուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին, որ իր խօսքով հրաւիրեց ներկաները տալու գեղեցիկ սովորութեամբ նուիրատուութիւններ ընելու Ս. Աստուածածին Եկեղեցւոյ շինութեան հիմնադրամին:

Հանգանակութիւնը բացուած յայտարարուելով, ընկ. Վազգէն Թերզեան յայտարարեց, թէ Ուրբաթ, 25 Մայիսին Արա Երեւանեանի կողմէ կազմակերպուած հաւաքոյթին հաւաքուած է 374,000 տոլար եւ Տէր եւ Տիկ. Արա Երեւանեան նոիրած են 374,000 տոլար, ընդհանուր գումարը հասցնելով 748,000 տոլարի:

Իսկ ճաշկերոյթի ընթացքին, Տէր եւ Տիկ. Արա Երեւանեաններ խանդավառուած հաւաքոյթէն, իրենց նուէրը բարձրացուցին կէս միլիոն տոլարի:

Այսպիսով, հանգանակուած ընդհանուր գումարը հասաւ մէկ միլիոն հարիւր ինը հազար տոլարի (\$1,109,000.00): Նուիրատուութիւնները կը շարունակուին:

Հաւաքոյթը փակուեցաւ Վեհափառին Պահպանիչով, եւ ժողովուրդին կողմէ երգուած «Կիլիկիա» երգով:

«ՀԱՅՐԵՆԻՔ»
8 Յունիս 1990



Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. եւ Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Շաքէ Հոթոյեաններ

ՎԱՄՆՁԻ ՄՇԱԿԸ ԻՐ ՎԱՐՁՔԻՆ ԱՐԺԱՆԻ Է

Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հովիւ Տէր Խաժակ Մ. Վրդ. Յակոբեանի քահանայական ձեռնադրութեան 25-ամեակին առթիւ, յարգանքի ճաշկերոյթը եւ յոբելինական հանդիսութիւնը տեղի ունեցան Կիրակի, 4 Յունիս 1993, երեկոյեան ժամը 7:30ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ:

Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմէ կազմակերպուած մեծարանքի այս ձեռնարկը կը հովանաւորէր Մ. Նահանգներու Արեւելեան շրջանի եւ Գանատայի Թեմի Բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մեսրոպ Արք. Աշճեան:

Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ սեղանի օրհնութենէն ետք, տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն:

Օրուան հանդիսավար Գրիգոր Հոթոյեան, իր բացման խօսքին մէջ անդրադարձաւ յոբելեար Հայր Սուրբին քառորդ դարեայ ծառայութեան՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին եւ հայ մշակոյթին, որպէս արժանաւոր հոգեւոր մշակ:

Օրուան հանդիսավարը ներկայացուց պատուոյ սեղանի անդամներն ու հանդիսութեան ներկայ եկեղեցակաները, որոնց կարգին՝ Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Մեսրոպ Արք. Աշճեան, Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հովիւ Հոգչ. Տէր Աբէլ Վրդ. Օղլուգեան, հարաւային Օնթարիոյի Ս. Նշան Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հովիւ Արժ. Տ. Հրանդ Քհնյ. Երէցեան, Նիակարա Ֆոլզի (Մ. Նահանգներ) Հայց. Եկեղեցւոյ այցելու Հովիւ Արժ. Տ. Վահան Ա. Քհնյ. Ղազարեան, Հայ Կաթողիկէ համայնքի հոգեւոր Հովիւ Գեր. Եղիա Վրդ. Գիրէջեան եւ Հայ Աւետարանական համայնքի հոգեւոր Հովիւ Վեր. Եսայի Սարմազեան:

Թեմիս Ազգային Վարչութեան ներկայացուցիչ Պրն. Յակոբ Սեւակեան խօսք առնելով, անդրադարձաւ Հայր Սուրբի նկարագրին, կարողութեան եւ վարչազգիտութեան, զնահատելով անոր ամբասիր կեանքն ու բոլորանուէր ծառայութիւնը Թորոնթոյի հայութեան:

Խօսք առաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենապետ Պրն. Կարօ Փաշայեան, որ խօսեցաւ եկեղեցւոյ կազմութեան տասը տարիներու ընթացքին իրագործուած յաջողութիւններուն, մանաւանդ եկեղեցաշինութեան պատմական աշխատանքներուն, որոնց մէջ մեծ դեր ունեցած է Հայր Սուրբը, միշտ գործակցելով հոգաբարձութեան հետ եւ իր անձնական տեսակէտները ներկայացնելով շինութեան յանձնախումբին, որպէսզի կարելի ըլլայ հայկական ճարտարապետութեան հետքերով շինուի նորակառոյց եկեղեցին:

Պրն. Փաշայեան տուաւ Հայր Սուրբին կենսագրութեան ամփոփ գիծերը:

ՀԱՅՐ ԽԱՃԱԿ Ծ. ՎՐԴ. ՅԱԿՈԲԵԱՆ

Ծնած է 20 Յունիս, 1945-ին, Հիւսիսային Սուրիոյ Արաբ Բուևար գիւղին մէջ: Աւագանի անունով Սարգիս Յակոբեան: Նախնական կրթութեան համար կը

դրկուի Հալեպ: 1957-ին, ընտանիքին հետ կը փոխադրուի Պեյրուս եւ կը յաճախէ Ազգ. Թորգոմեան Վարժարան, որ կ'աւարտէ 1961ին: Նոյն թուականին կը մտնէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանքը: 1965ին, Մեծ Եղեռնի յիսնամեակին, կը ձեռնադրուի սարկաւազ՝ ձեռամբ Գարեգին Եպիսկ. Սարգիսեանի (այժմ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս):

Դպրեվանքի տարիներուն ստանձնած է զանազան պաշտօններ, ինչպէս գրադարանապետ, ուսուցիչ եւ վերակացու: 1971ին, որպէս առաջնորդական տեղապահ կը դրկուի Հիւս. Սուրիոյ Գամիշլի հայաշատ քաղաքը, որ կը վարէ ձեռըն-հասօրէն՝ աւելի քան ութ տարի:

Այդ տարիներուն կը պատրաստէ վարդապետական թեզը՝ Խորենացիի անունով մեզի հասած «Գիրք Պիտոյից» թարգմանութիւնը եւ ուսումնասիրութեան ներածութիւնը: 1979ի վերջաւորութեան, կրկին Դպրեվանք կը վերադառնայ եւ շարունակելով իր բարձրագոյն ուսումը, կը հետեւի Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական ճեմարանի դասընթացքներուն, միեւնոյն ատեն դասախօսի եւ վերակացուի պաշտօններ վարելով Դպրեվանքին մէջ: 1981ի ամրան, կը հրդարաւիրուի Նիւ Եորք, իբր մասնաւոր օգնական Բարձր. Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի՝ Առաջնորդ Մ. Նահանգներու Արեւելեան շրջանի եւ Գանատայի թեմին: 1983ի գարնան, իբր հոգեւոր հովիւ կը հրաւիրուի ծառայելու Թորոնթոյի նորակազմ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ եւ այդ պաշտօնը կը վարէ մինչեւ օրս, ամենայն ձեռըն-հասութեամբ:

Հայր Խաժակ, որպէս գնահատանք իր անձնուէր ծառայութեան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգաբարձութեան ինդրանքով եւ Մեսրոպ Արք. Աշճեանի ձեռամբ կը ստանայ ծայրագոյն վարդապետութեան աստիճան:

Խաժակ Ծ. Վրդ. Յակոբեան հրատարակած է երկու գիրքեր եւ գրած՝ բազմաթիւ յօդուածներ թերթերու եւ պարբերաթերթերու մէջ, որոնք կ'ընդգրկեն կրօնական, ազգային եւ մշակութային նիւթեր: Հրատարակելի երրորդ հատորը՝ «Աղօթագիրք» շուտով լոյս կը տեսնէ:

Գեղարուեստական յայտագրով, Եղիշէ Արք. Դուրեանի «Խաչը» քերթ-լածը արտասանեց Պրն. Մուշեղ Գարագաշեան, որմէ ետք ողջոյնի խօսքերով հանդէս եկան Աբէլ Վրդ. Ողլուզեան, Եղիա Վրդ. Գիրէջեան եւ Վեր. Եսայի Սարմազեան, որոնք շնորհաւորեցին Հայր Սուրբը, ընդգծելով անոր հետ իրենց ունեցած եղբայրական յարաբերութիւնները միջ-յարանուանական եւ միջ-եկեղեցական հանդիպումներու ու ձեռնարկներու կազմակերպման ընթացքին:

Հայր Խաժակի քահանայական ձեռնադրութեան 25-ամեակի առիթով շնորհաւորական հեռագիրներ եկած էին հետեւեալներէն.-

Գերշ. Տէր Յովնան Արք. Տէրտէրեան՝ Առաջնորդ Գանատայի էջմիածնական Թեմի, Մոնթրէալի Ս. Յակոբ Եկեղեցւոյ հովիւ Տ. Արմէն Քհնյ. Իշխանեան եւ հոգաբարձութիւն, Նիւ Եորքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հովիւ Տ. Մուշեղ Քհնյ. Գալուստեան եւ հոգաբարձութիւն, Տիթրոյիթի Ս. Սարգիս Եկեղեցւոյ հովիւ Կորիւն Քհնյ. Շրիգեան, Ֆիլատելֆիոյ Տաթեւացի լսարանի դասախօսներ Անուշաւան Ծ. Վրդ. Դանիէլեան, Շահէ Վրդ. Փանոսեան եւ Նարեկ Վրդ. Ալեմէզեան, Խորէն Քհնյ. Հապէշեան, Անդրանիկ Քհնյ. Պալճեան եւ Ներսէս Քհնյ. Մանուկեան, Թորոնթոյի Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» մասնաճիւղի վարչութիւն, Թորոնթոյի «Համազգային»ի վարչութիւն եւ բազմաթիւ ազգայիններ:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ դպրուհի Օրդ. Իզապէլ Պայրազտարեան, դաշնամուրով ընկերակցութեամբ դաշնակահար Սէրուժ Գրաճեանի, յաջորդաբար երգեց «Վարանիմք» (դաշնաւորում՝ Զարեհ Եպիսկոպոսի) եւ «Հաւուն, հաւուն» (դաշնաւորում՝ Ռուպերթ Աթաբեանի) շարականները:

Խօսք առաւ Առաջնորդ Սրբազան Հայրը, որ Դպրեվանքի մէջ ուսուցիչը եղած է Հայր Սուրբին, յիշեց երեսուն տարիներու ընթացքին Հայր Խաժակին հետ իր ունեցած կապերն ու յարաբերութիւնները Դպրեվանքի օրերէն մինչեւ ներկան եւ գնահատեց Հայր Սուրբին անձնուէր ծառայութիւնը Հայաստանեայց եկեղեցիին:

Այս առթիւ, Առաջնորդ Սրբազանը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի եւ իր կողմէ շնորհաւորեց Հայր Սուրբին քահանայական ձեռնադրութեան 25-ամեակը եւ զայն պատուեց լանջախաչով:

Հոգաբարձութեան ատենապետը հոգաբարձութեան անունով շնորհաւորելէ ետք Հայր Սուրբը, զայն պատուեց յատուկ յուշատախտակով մը եւ յուշանուէրով մը:

Խօսք առաւ Հայր Խաժակ եւ իր շնորհակալութիւնները յայտնեց Վեհափառ Կաթողիկոսին, Առաջնորդ Սրբազան Հօր, ներկայ հոգեւոր եղբայրներուն, հոգաբարձութեան անդամներուն, միութիւններուն, հեռագրով շնորհաւորողներուն եւ ներկայ ժողովուրդին, իրենց հանդէպ ցոյց տրուած ազնիւ ըզգացումներուն համար:

Ապա, հանդիսավարը, հոգաբարձութեան անունով շնորհակալութեան խօսքին մէջ յիշեց Տէր եւ Տիկին Մկրտիչ եւ Լաթիֆէ Սարգիսեանները, որոնք սիրով յանձն առին ծախսերը այս ձեռնարկին առիթով Հայր Սուրբին նուիրուած գրքոյկի հրատարակութեան:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ արժանաւոր դպրապետ-երաժշտագէտ Պրն. Վարուժան Նիկոլեան, ընկերակցութեամբ Սէրուժ Գրաճեանի, երգեց «Ետեւէս եկուր» (երաժշտ. Շահան Պէրպէրեանի) եւ «Գոչէր հրեշտակն» (երաժշտ. Էմիլ Աբգարի):

Իսկ «Կիլիկիա» երգը, առաջնորդութեամբ Վարուժան Նիկոլեանի, հանդիսականներու կողմէ երգուեցաւ, որմէ ետք յրբեւի՛նական այս սրտագրաւ հանդիսութիւնը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանի «Պահպանիչ»ով:

**«ՀՈՐԻՉՈՆ»
1993**

«ԵԿԱՅՔ ՇԻՆԵՅՈՒՑԻՔ ՉՍՈՒՐԲ ԽՈՐԱՆՆ ԼՈՒՍՈՅ»

Մերձաւոր Արեւելքի երկիրներուն մէջ ստեղծուած քաղաքական վերիվայրումներուն եւ տնտեսական տագնապներուն հետեւանքով, վերջին տասնամեակներուն մեծ թիւով հայ ընտանիքներ ստիպուեցան հեռանալ իրենց բնակած երկիրներէն (Լիբանան, Սուրիա, Եգիպտոս, Պարսկաստան, Թուրքիա, Յորդանան եւ Իրաք) եւ կայք հաստատել Եւրոպայի, Մ. Նահանգներու եւ Գանատայի մէջ:

Գանատայի գաղութը տարուէ-տարի աճեցաւ եւ այս օրերուն իր մէջ կը հաշուէ շուրջ 70 հազար հայութիւն, որոնք գլխաւորաբար հաստատուած են Քէյպէք եւ Օնթարիօ նահանգներուն մէջ:

Հայ երեք յարանուանութիւնները արդէն իսկ կազմակերպուած են եւ ունին իրենց սեփական եկեղեցիները եւ կազմակերպութիւնները: Թորոնթոյի մէջ վերջին 4-5 տարիներու ընթացքին Հայաստանեայց Առաքելական համայնքը օժտուեցաւ երկու նորակառոյց եկեղեցիներով՝ Ս. Երրորդութիւն եւ Ս. Աստուածածին: Այժմ Հայ Կաթողիկէ համայնքը ձեռնարկած է սեփական եկեղեցւոյ շինութեան:

1960-ական թուականներուն վերջաւորութեան Թորոնթոյի մէջ կային շուրջ 10-15 հայ Կաթողիկէ ընտանիքներ, որոնց հոգեւոր կարիքները պարբերաբար կը հոգար լուսահոգի Գերապայծառ Եղուարդ Մ. Վրդ. Գորտիքեան, որ մեծապէս օգտակար կը դառնայ համայնքին սկզբնական շրջանի կազմութեան աշխատանքներուն: Գաղութին աճումին հետ կենսական կարեւորութիւն կը ստանար նաեւ հայ Կաթողիկէ ընտանիքներու հոգեւոր եւ ազգային կարիքներուն հասնելու պահանջը:

1974ի սկիզբները համայնքը կ'օժտուի երիտասարդ հոգեւոր հովիտով, յանձինս Գերապատիւ Եղիա Վրդ. Գիրէջեանի՝ Չմմառեան Պատրիարքական ուխտէն, որ եռանդագին կը լծուէր կազմակերպական աշխատանքներու: Նորակազմ եկեղեցին կ'անուանուէր՝ «Թորոնթոյի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի»:

Համայնքը ներկայիս կը հաշուէ շուրջ 150 հայ Կաթողիկէ ընտանիքներ եւ հոգեւոր հովիտին կողքին ներդաշնակօրէն իրենց աշխատանքները կը տանին Մխական Խորհուրդը, Տիկնանց Միութիւնը, Դպրաց Դասը, Երիտասարդաց Միութիւնը եւ շաբաթօրեայ վարժարանը, որ ներկայիս կը հաշուէ շուրջ 130 աշակերտ-աշակերտուհիներ՝ մանկապարտէզ, նախակրթարան եւ միջնակարգ բաժիններով:

Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ համայնքը 1974 Ապրիլին կազմակերպուած ըլլալով, Գերապատիւ Եղիա Վրդ. Գիրէջեան իր առաջին պատարագը մատոյց Ս. Յարութեան Տօնին Կաթողիկէ Սուրբ Էտուարդ եկեղեցւոյ մէջ: Այդ թուականէն սկսեալ, ընտրուած բոլոր Մխական Խորհուրդները միշտ իրենց ժողովներուն օրակարգի գլխաւոր նիւթ ունեցած են սեփական եկեղեցի մը ունենալու գաղափարը:

Եւ վերջապէս, ծրագիրը իրագործուելով, 1988ին, 780 հազար տոլարով Նորթ Եորք քաղաքի լաւագոյն շրջանին մէջ կը գնուի շուրջ մէկուկէս էյքը տարածութեամբ հողաշերտ մը, որ պիտի պարփակէ եկեղեցի, ներքնասրահ, ժողովասրահներ եւ երիցատուն՝ երեք յարկանի:

Եկեղեցւոյ ամբողջ համալիրի շինութիւնը (հողաշերտի արժէքէն զատ) պիտի արժէ 1,450,000 տոլար, որուն շինութիւնը յանձնուած է Latka Construction ընկերութեան եւ վերջացած պիտի ըլլայ 1993 Յունիսին:

Հողաշերտին փոխարժէքը՝ 780,000 տոլար արդէն վճարուած է. իսկ շինութեան ծախսին՝ 1,450,000 տոլարին 1,300,000ը պատրաստ է դրամատան մէջ: Եկեղեցւոյ համալիրի շինութեան աւարտին կը մնայ 150 հազար տոլարի բաց մը, ինչպէս նաեւ եկեղեցւոյ կահաւորման եւ բարեգարդման ծախսերը, որոնք Ծխական Խորհուրդը կը յուսայ, որ պիտի գոյանայ մինչեւ օծման թրւականը՝ Կիրակի, 27 Յուլիս 1993ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Գիւտի նշխարուց տօնին առթիւ ձեռամբ Ամենապատիւ Տէր Յովհաննէս-Պետրոս Գասպարեան ԺԸ. Պատրիարք-Կաթողիկոսին:

Եկեղեցւոյ շինութիւնը արդէն իսկ բաւական յառաջացած է: Անկիւնաքարի օրհնութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 18 Հոկտեմբեր 1992ին, գլխաւորութեամբ Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Հայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդ Գերապայծառ Ներսէս Եպսկ. Սէթեանի:

Նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 5ին, Բրինա Պանդոկի սրահին մէջ տեղի ունեցաւ դրամահաւաք-ճաշկերոյթ՝ ներկայութեամբ հայ յարանուանութիւններու հոգեւոր հովիւներուն, եւ ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ հոծ թիւով հայորդիներու:

Այս առթիւ, եկեղեցւոյ հովիւ Գերապատիւ Եղիա Վրդ. Գիրէջեան իր խօսքին մէջ ի միջի այլոց ըսաւ.

«Երանի եկեղեցի շինողաց: Երկար տարիներու համբերատար, տքնաժամ եւ տենդագին աշխատանքներէ ետք, այսօր եկած է պահը տեսնելու մեր կեանքի երազի մարմնաւորումը: Այսօր դէպ երկինք կը բարձրացնենք Արարատանման դմբէթ մը, աղօթքը նոր օծախ մը, Աստուծոյ եկեղեցին եւ հայութեան տունը: Տալու համար Աստուծոյ եւ մեր ազգին մեր քրիստոնէական հաւատքի վկայութիւնը եւ մեր հայութեան ուխտի կտակը:

«Այս եկեղեցին եղաւ սկիզբէն իսկ մեր բոլորին կեանքի նպատակը, խթանիչ ուժը, որ մեզ միացուց, շողկապեց՝ առաջնորդելու համար դէպի այս յաղթական կառոյցը, այս հովանին եւ այս ովասիսը, ուրտեղ մենք եւ մեր ապագայ սերունդները կանգ պիտի առնեն, պիտի գօտեպնդուին ու Աստուծային, հոգեկան, ազգային, մարդկային արժէքներու իրենց ծարաւը պիտի յագեցնեն:

«Մեր յուզումնախառն ու երախտապարտ աղօթքի մրմունջները կը բարձրանան Ամենակալ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որոնց շնորհներով, օրհնութիւններով լիացած ու զօրացած արժանացանք այս հրաշքին, այս յուշարձանին, ուրտեղ մեր ուխտաւորի Հաւատքը պիտի խորանայ, մեր ազգային շունչը պիտի թարմանայ եւ մեր մարդկային առաքելութիւնները պիտի ծաղկանան:

«Երանի եկեղեցի շինոցաց»։ Ի պատիւ եկեղեցւոյ հովիւ Գեր. Եղիա Վրդ. Գիրէջեանի ու Մխական Խորհուրդներու հեռատես ու անձնուէր ջանքերուն, Թորոնթոյի Հայ Կաթողիկէ համայնքը շուտով կ'ունենայ իր սեփական եկեղեցին եւ համալիրը, ուր կարելի պիտի ըլլայ ազատօրէն կազմակերպել ազգային ու մշակութային այլազան ձեռնարկներ հայ նոր սերունդներուն փոխանցելով հայ ազգային ավանդութիւններ ու տոհմային սովորութիւնները։

«ՅՈՐԻՉՈՆ»
1993



Ձախէն աջ՝
Տնտեսագիտութեան դոկտ. փրոֆեսոր Թաթուլ Սանատրեան,
Գերաշնորհ Տէր Տաթև Ա. Արք. Սարգիսեան եւ Գրիգոր Հոթոյեան
Ա. Էջմիածին 1997ին:

ՀԱՒԱՏՔԻ ԲԵՐՂ ՄԸՆ ԱԼ ԲԱՐՁՐԱՑԱԻ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Կիրակի, 21 Նոյեմբեր 1993, կէսօրէ ետք ժամը 2ին, միջ-համայնքային շուրջ հազար ազգայիններու ներկայութեամբ տեղի ունեցաւ օժման սրբազան արարողութիւնները Թորոնթոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ նորակառոյց եկեղեցւոյ, ձեռամբ՝ Ամեն. Տ. Տ. Յովհաննէս Պետրոս ԺԼ. Գասպարեան Կաթողիկոս-Պատրիարքի Կաթողիկէ Հայոց:

Ամենապատիւ Հայրապետը իր շքախումբով Թորոնթօ ժամանեց Շաբաթ, 20 Նոյեմբեր 1993ին եւ դիմաւորուեցաւ եկեղեցւոյ հովիւ Գեր. Եղիա Վրդ. Գիրէջեանի եւ Մխական Խորհուրդի անդամներուն կողմէ:

Շաբաթ օր, կէսօրէ ետք ժամը 5ին, տեղի ունեցաւ նախատօնական եւ դռնբացէքի արարողութիւն, ինչպէս նաեւ եկեղեցւոյ սպասներու օրհնութիւն՝ Կաթողիկոս-Պատրիարքին կողմէ, մասնակցութեամբ Լիբանանի Զմմառու վանքէն Մեծաւոր Գեր. Տ. Գէորգ Մ. Վրդ. Խազումեանի, Տիթրոյիթի Հայ Կաթողիկէ Համայնքի Ժողովրդապետ Գեր. Տ. Յովսէս Թ. Մ. Վրդ. Գալայճեանի, Նիւ Ճըրզիի Ժողովրդապետ Գեր. Տ. Արմէն Վրդ. Կարապետեանի, Լիբանանէն Գեր. Տ. Գէորգ Վրդ. Ասատուրեանի, Մոնթրէալի Ժողովրդապետ Գեր. Տ. Գէորգ Վրդ. Զապարեանի, Մոնթրէալի Նարեկայ Վարժարանի տեսուչ՝ Գեր. Տ. Պօղոս Վրդ. Գազանճեանի, Թորոնթոյի Ժողովրդապետ Գեր. Տ. Եղիա Վրդ. Գիրէջեանի եւ Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Թեմին Առաջնորդ Արհիպատիւ Տ. Ներսէս Եպիսկոպոս Սէթեանի:

Դռնբացէքի եւ օրհնութեան արարողութիւններէն ետք, եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ աջահամբոյր եւ հերիսայով մատաղի հիւրասիրութիւն:

Կիրակի օր, Ամենապատիւ Հայրապետը նախ օժեց Ս. Խորանը եւ խորանի սրբանկարը՝ Ս. Գրիգոր Նարեկացիի Տիրամօր նկարը (գործ՝ Թորոնթո-հայ արուեստագետ պրն. Փանոս Թօսունեանի), ապա՝ եկեղեցւոյ 12 կնքահայրերու ներկայութեամբ եւ Յիսուսի 12 առաքելներուն անունով եկեղեցւոյ 12 սիւնները:

Օժման արարողութիւններէն ետք, մատուցուեցաւ սուրբ եւ անմահ Պատարագ: Պատարագին էր Կաթողիկոս-Պատրիարքը, մասնակցութեամբ Հայ Կաթողիկէ կղերականներու եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Գեր. Տ. Խաժակ Մ. Վրդ. Յակոբեանի, Ս. Երրորդութեան Հայոց Առաքելական եկեղեցւոյ հովիւ Հոգեշնորհ Տ. Աբէլ Վրդ. Օղլուգեանի, հարաւային Օնթարիոյի Ս. Նշան Հայոց Առաքելական եկեղեցւոյ հովիւ Արժանապատիւ Տ. Հրանդ Քհ. Երէցեանի եւ Արժ. Տ. Վահան Ա. Քհ. Ղազարեանի:

Դպրաց դասը երգեցողութիւնները կատարեց քառաձայն, ղեկավարուեց Թեմի ղարապետ պրն. Պարգեւ Տապաղեանի:

Պատարագի ընթացքին, Հայր Մերէն առաջ, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Մ. Նահանգներու եւ Գանատայի Հայ Կաթողիկէ Թեմի Առաջնորդ Արհիպատիւ Տ. Ներսէս Եպիսկ. Սէթեան եւ հրաւիրեց Ամենապատիւ Հայրապետը իր պատգամը տալու հաւատացեալ ժողովուրդին:

Կաթողիկոսը իր քարոզով անդրադարձաւ Թորոնթոնացու թեան անհուն գոհողութիւններուն եւ նուիրումին, որոնց արդիւնքով կատարուած է հրաշքը՝ բարձրացած հաւատքի բերդ մը եւս Թորոնթոնի մէջ: Այս առթիւ իր գնահատանքն ու շնորհակալութիւնները յայտնելով եկեղեցւոյ հովիւին, Մըխական Խորհուրդի եւ շինութեան յանձնախումբի անդամներուն, բարերարներուն եւ նուիրատուներուն:

Պատարագէն ետք տեղի ունեցաւ աջահամբոյր:

*

**

Նորակառոյց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ օծման առթիւ, Կիրակի, 21 Նոյեմբեր 1993, երեկոյեան ժամը 6-7 տեղի ունեցաւ քոթէճյլ-հիւրասիրութիւն եւ ժամը 7:30ին՝ պաշտօնական ճաշկերոյթ, «Բրենս» պանդոկին մէջ, որուն ներկայ գտնուեցան կղերականներ, եկեղեցիներու, միութիւններու եւ հաստատութիւններու ներկայացուցիչներ եւ 500է աւելի ազգայիններ:

Ճաշկերոյթին կը նախագահէր Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս-Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Տ.Տ. Յովհաննէս-Պետրոս ԺԸ. Գասպարեան:

Գանատական եւ հայկական պետական օրհներգներու ունկնդրութենէն ետք, սեղանի օրհնութիւնը կատարեց Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Թեմին Առաջնորդ Արհիպատիւ Տ. Ներսէս Եպսկ. Սէթեան, որուն յաջորդեց ճաշի սպասարկութիւն:

Ճաշի սպասարկութենէն ետք խօսք առաւ օրուան հանդիսավար եկեղեցւոյ արժանաւոր հովիւ Գեր. Տ. Եղիա Վրդ. Գիրէջեան եւ ներկայացուց պատուոյ սեղանի հիւրերը: Այսպէս ձախէն աջ՝ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ հովիւ Գեր. Տ. Խաթակ Մ. Վրդ. Յակոբեան, Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական եկեղեցւոյ հովիւ Հոգեշնորհ Տ. Աբէլ Վրդ. Օղլուգեան, Զմմառու վանքին Մեծաւոր եւ Կաթողիկոսի գաւազանակիր Գեր. Տ. Գէորդ Մ. Վրդ. Խազումեան, Մ. Նահանգներու եւ Գանատայի Հայ Կաթողիկէ Թեմին Առաջնորդ Արհիպատիւ Տ. Ներսէս Եպսկ. Սէթեան, Ն. Ամեն. Տ. Յովհաննէս-Պետրոս ԺԸ. Գասպարեան Կաթողիկոս-Պատրիարք, Գանատայի Դաշնակցային Խորհրդարանի նորընտիր անդամ Տիար Սարգիս Ասատուրեան եւ տիկինը եւ եկեղեցւոյ խորանին բարերար Տէր եւ Տիկին Ասատուր Քէրօղլուեան: Ապա, Հայր Սուրբը արտասանեց իր սրտի խօսքը՝ եկեղեցւոյ շինութեան առթիւ: Ան իր խօսքին մէջ ի միջի այլոց ըսաւ.

«Այսօր այգեբաց է, լուսաշող կենսայորդ եւ յուսաբեր: Առաւօտ լուսոյ տօն ծննդեան եկեղեցւոյս Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ ի Թորոնթօ, Գանատա, որ իր գաւիթով հայկական, ի խորանով լուռ ու լոյս պիտի դառնայ մի բերդ ու ամրոց հայ հաւատքի ու հայ լինելութեան:

«Սրբազան «խենդութենէ» ոգեւորուած ու վերացած, բարձրացուցինք մեր առաջին Հայրապետին տապանաքարը այս խորթ ու ցուրտ ափին՝ հեռու մեր Մայր Հայրենիքի հարազատ հողէն: Ան պիտի դառնայ ո՛չ միայն վկայու-

Թիւն հայու ուխտատեղի, հովանի եւ ովասիս, ուր մեր սերունդները պիտի յամենան, դարմանուին, գօտեպնդուին ու վերանորոգուին աստուածային, հոգեկան, ազգային եւ համամարդկային սրբութիւններով:

«Այս սրբատեղին պիտի դառնայ մի հանգրուան յամենարան, յոգնաբեկ գնացքով ընթացող հայ ուխտաւոր պանդուխտ հաւատացեալին եւ որու կաթողիկէն պիտի ղօղանջէ յարաժամ ու յամենայն ժամ հրաւէրը՝ մեր Առաջին Հայրապետի կտակի. հաւատարմութեամբ՝ Աստուծոյ, Հայրենիքի եւ Ընտանիքի:

«Այսօր, այս օտար ու աննշան անկիւնի մը վրայ կը թողունք հետքը՝ մեր ճանապարհին, վկայութիւնը մեր կրօնական հաւատամքին ու կտակ մը մեր ազգութեան, զոր կը յանձնենք որպէս մասունք մը սրբազան ապագայի պատմութեան խանդակաթ սիրով, երազուն աչքերով, դողդոջուն ձեռքերով, փոթորկայոյզ հոգիով»:

Վահան Թէքէեանի «Եկեղեցին Հայկական» բանաստեղծութիւնը ապրումով արտասանեց Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարանի աշակերտուհի Շարիս Զարիֆեան:

Խօսք առաւ եկեղեցւոյ Մխական Խորհուրդի ժրաջան ատենապետ պրն. Ժան Թեսիմէր, եւ իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց այն բոլոր բարերարներուն, նուիրատուներուն եւ ազգայիններուն, որոնց առատաձեռն նըւիրատուութեանց եւ անձնուէր ծառայութեան շնորհիւ կարելի դարձաւ երազ մը իրականացնել, բարձրացած տեսնել մեր գեղեցիկ տաճարը, մեր տունը:

Թորոնթոնի արուեստագէտ երգիչ-երգչուհիներ Սարգիս Գունտաքճեան, Անի Իմաստունեան եւ Անի Տապապողեան, դաշնամուրով ընկերակցութեամբ Մարիա Մանանեանի եռաձայն երգեցին «Գետակին Վրայ» երգը:

Խօսք առաւ Մ. Նահանգներու եւ Գանատայի Հայ Կաթողիկէ Թեմի Առաջնորդ Արհիպատիւ Տ. Ներսէս Եպսկ. Սէթեան, որ իր խօսքին մէջ շեշտեց սիրոյ եւ նուիրումի կարեւորութիւնը, որ Աստուծոյ զօրութիւնը կը նշանակէ եւ բանալի ամէն յաջողութեան, ապա աւելցուց. «Եկեղեցին զոր կառուցիք ա՛յնքան գոհողութիւններով, ձեր տունն է: Ամէնուս տունը: Անոր ամէն մէկ քարը կը կրէ ձեզմէ իւրաքանչիւրին անունը, հաւատքը եւ ձեր կեանքին հանգրուանները: Սփիւռքի հայութիւնը դարերէ ի վեր, գտած ու պահած է իր հաւատքը, ազգային ինքնութիւնն ու միասնականութիւնը հայ եկեղեցւոյ սրբազան կամարներուն ներքեւ»:

Աշակերտուհի Մարիա Հարմանտայեան արտասանեց Ժագ Յակոբեանի «Յաղթերգութիւն» բանաստեղծութիւնը, որմէ վերջ երգչուհի Անի Իմաստունեան երգեց «Երգիր Ինձ Համար» երգը, իսկ երգիչ Սարգիս Գունտաքճեան՝ «Անուշ» օփերայէն Մարոյի արիան:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական եկեղեցւոյ հոգիւ Հոգեշնորհ Տ. Աբէլ Վրդ. Օղլուգեան, որ այս առթիւ կարդաց Գանատայի էջմիածնական Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի շնորհաւորութեան գիրը եւ սրբազանին անունով եկեղեցւոյ հովիւ Գեր. Տ. Եղիա Վրդ. Գիրէջեանը պատուեց լանջախաչով:

Ապա, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ նաեւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ հովիւ Գերապատիւ Խաժակ Մ. Վրդ. Յակոբեան:

Երգչուհի Անի Իմաստունեան եւ Երգիչ Սարգիս Գունտաքճեան հանդէս եկան զուգերգով եւ երգեցին «Կենաց Խմենք» երգը, դաշնամուրով ընկերակցութեամբ Մարիա Մանանեանին:

Շինարարական Յանձնախումբի կողմէ խօսք առաւ տիկին Սոնա Շահինեան, որուն զեկոյցէն կը քաղենք հետեւեալները.

- 1984ին, հոգեւոր հովիւ Գեր. Եղիա Վրդ. Գիրէջեանի թելադրութեամբ եւ Թեմի Առաջնորդ Արհիապատիւ Ներսէս Եպսկ. Սէթեանի հաւանութեամբ նշանակուած է եօթը հոգինոց յանձնախումբ մը, որուն պաշտօն տրուած է Թորոնթոյի Հայ Կաթողիկէ համայնքը օժտել սեփական եկեղեցիով:
- 1985ին յանձնախումբը կ'առնէ իր առաջին գործնական քայլը ու Ֆինչ պողոտայի վրայ կը գնէ յարմար հողաշերտ մը՝ 185 հազար տոլար արժողութեամբ:
- 1988ին, այդ հողաշերտը եկեղեցիի շինութեան համար անբաւարար նը՝ կատուելով կը ծախուի մէկ միլիոն երկու հարիւր հազար տոլարի, եւ, այս գումարի մէկ մասով՝ 700 հազար տոլարով կը գնուի շատ աւելի ընդարձակ հողաշերտ մը՝ 100 Նորթտէյ Հողամասը:
- 18 Հոկտեմբեր 1992ին տեղի կ'ունենայ եկեղեցւոյ հիմնաքարի զետեղման եւ հողօրհնէքի արարողութիւնը: Նոյն օրը եկեկոյեան, «Բրինս» պանդոկին մէջ տեղի կ'ունենայ նուիրահաւաքի ճաշկերոյթ մը, ներկայութեամբ գաղութի համայնքային եւ միութենական ներկայացուցիչներուն: Այդ օր հանգանակուած գումարը կը հասնի 262 հազար տոլարի:
- Եկեղեցւոյ շինութեան ծախսերը եղած են 1,824,375 տոլար: Հողամասին վճարուած 700 հազար տոլար, կահ կարասիներուն՝ 54 հազար: Ընդհանուր գումար 2,578,375 տոլար: Նուիրատուութիւններէն եւ նախկին հողամասի վաճառքէն գոյացած՝ 2,178,375 տոլար:
- Ներկայիս եկեղեցին պարտական է 400 հազար տոլար:

Վերջին խօսքը տրուեցաւ Ամեն. Կաթողիկոս-Պատրիարքին, որ նախ իր հիացումը եւ գնահատանքը յայտնեց եկեղեցիի շինութեան օժանդակողներուն, եւ, գլխաւորաբար Մխական Խորհուրդի ատենապետ պրն. Ժան Թէսիմերին:

Առ ի գնահատանք պրն. Թէսիմերի եկեղեցաշինութեան ընթացքին ցոյց տուած անխոնջ աշխատանքին եւ զոհաբերութեան Սրբազան Պապին կողմէ զայն պատուեց Մեծն Գրիգոր Հայրապետի Ասպետ աստիճանով:

Իսկ եկեղեցւոյ հովիւ Գեր. Տ. Եղիա Վրդ. Գիրէջեանը պատուուեցաւ ծայրագոյն վարդապետի աստիճանով եւ մատանիով:

Ամեն. Կաթողիկոսը աւելցուց.

«Հիացում, գնահատանք եւ երախտապարտութիւն Թորոնթոյի հայութեան: Կեցցէք, որքան հպարտ եմ ձեզմով, որովհետեւ փոքրաթիւ համայնք մը ըլլալով հանդերձ ցոյց տուիք որակ եւ ազգային-կրօնական գիտակցութիւն եւ զոհաբերութիւն եւ բարձրացուցիչ հաւատքի այս սքանչելի կոթողը:

Հազար անգամ կեցցէք:

Հայկական եկեղեցին նախ պաշտամունքի վայր է: Մեր պատմութեան ընթացքին հայ եկեղեցին եղած է ազդակ մեր ազգային ինքնութեան: Այս եկեղեցին թափուր պէտք չէ մնայ եւ միշտ լեցուի հաւատացեալներով:

Եկեղեցի, մշակոյթ, լեզու: Այս է մեր ազգի փառապանծ ժառանգութիւնը: Պապենական այս անգնահատելի արժէքները պէտք չէ արժէքազրկուելին, մանաւանդ Սփիւռքի մէջ: Պէտք է պահենք այն արժէքները, զորս ժառանգած ենք մեր փառապանծ ազգի անցեալէն...

Հաւատարիմ մնանք մեր բարոյական արժէքներուն, հայ ընտանիքի միութեան եւ սրբութեան: Եթէ քայքայուի հայ ընտանիքը, կը քայքայուի համայնքը եւ ազգը:

Սփիւռքահայութիւնը իր աչքերը պէտք է սեւեռէ դէպի Մայր Հայրենիք: Գաղթական բոլոր ժողովուրդները իրենց աչքերը իրենց հայրենիքին սեւեռած են:

Մեր հայրենիքը տիրացած է անկախութեան: Պէտք է նպաստել Հայրենիքի վերելքին ամէն մարզերու մէջ: Այդ կը պահանջէ մեզմէ միասնականութիւն: Հնչած է ժամը Միասնականութեան եւ Միութեան:

Պէտք է որ մեր բոլոր ուժերը, մեր բոլոր կարողութիւնները տրամադրենք Հայրենիքի բարգաւաճումին, առանց նկատի առնելու դաւանական, կուսակցական եւ գաղափարական տարբերութիւնները:

Այս է մեր հայրենիքի կոչը: Այդ միութեան օրինակը պէտք է անմիջապէս ցոյց տալ, օգնելու համար հայ պետականութեան զօրացման եւ բարգաւաճումին»:

Նորին Ամենապատուութիւն Հայրապետի պատգամէն ետք խօսք առաւ եկեղեցւոյ հովիւ Գեր. Եղիա Վրդ. Գիրէջեան եւ յայտարարեց, թէ եկեղեցին տակաւին 400 հազար տոլար պարտքի տակ է: Պահարանին մէջ դրուած է 10 մուրհակ, հատը 40 հազար տոլար արժէքով: Հանգանակուած ամէն մէկ քառասուն հազար տոլարի մուրհակը պիտի այրէ Ն. Ամէն. Կաթողիկոսը:

Հանգանակութիւնը բացուած յայտարարելէ շուրջ մէկ ժամ ետք արդէն իսկ հանգանակուած գումարը հասաւ 220 հազար տոլարի:

Նոր փաստ մը եւս թորոնթոհայութեան ազգային առողջ գիտակցութեան, հաւատքին եւ գոհաբերութեան ոգիին:

Հանգանակային ճաշկերոյթը փակուեցաւ Ամեն. Հայրապետին Պահպանիչով՝ գիշերուան ժամը 1ին:

Նորին Ամեն. Տ.Տ. Յովհաննէս-Պետրոս ԺԸ. Գասպարեան Կաթողիկոս-Պատրիարքը եւ իր շքախումբը թորոնթոյէն մեկնեցան Երկուշաբթի, 22 Նոյեմբերին՝ քաղցր եւ անթառամ յիշատակներով եւ ազգային ու եկեղեցական գոհունակութեամբ:

«ՅՈՐԻՉՈՆ»
1993

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹԻՆՆ
ԹՈՐՈՆԹՈՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս, Չորեքշաբթի, 24 Յունուար 1996, կ.ե. ժամը 4ին, Թորոնթոյի Փիրսըն միջազգային օդակայան ժամանեց, ուր դիմաւորուեցաւ եկեղեցական եւ աշխարհական անձնաւորութիւններու եւ պաշտօնական մարմիններու ներկայացուցիչներուն կողմէ:

Օդակայանի հիւրասենեակին մէջ, Վեհափառ Հայրապետի ընդունելութեան ընթացքին, բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Գանատայի էջմիածնական Թեմի առաջնորդ Բարձր. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան:

Վեհափառ Հայրապետը շնորհակալութիւն յայտնեց Սրբազանի բարեմաղթութիւններուն, ապա օրհնեց աղ ու հացը, զորս իրեն ներկայացուցին Հ. Բ. Ը. Մ. Պ. Զարուկեան վարժարանի աշակերտները:

Այնուհետեւ, Վեհափառ Հայրապետը եւ իր շքախումբը առաջնորդուեցան դէպի պանդոկ:

Երեկոյեան ժամը 8:00ին, Վեհափառ Հայրապետը, առաջնորդութեամբ հայ եւ այլ եկեղեցիներու եկեղեցականներու ու դպիրներու, «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցի, ուր կանոնական աղօթքէն եւ եկեղեցական արարողութիւններէն ետք, սրտառուչ բարի գալուստի եւ մեծարանքի խօսք արտասանեց Առաջնորդ Յովնան Սրբազանը:

Խօսք տրուեցաւ Թորոնթոյի անկլիքան համայնքի Առաջնորդ՝ Գեր. Տ. Մայքըլ Պիրզ Սրբազանին, որ իր յարգանքն ու բարեմաղթութիւնները յայտնեց Վեհափառին, բարձր գնահատելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին անձն ու կարողութիւնները, յատկապէս եկեղեցական եւ միջ-եկեղեցական բնաւագառներու մէջ:

Վեհափառ Հայրապետը նախ հայերէնով, ապա, անգլերէնով խօսեցաւ Հիւսիսային Ամերիկայի հայութեան իր անդրանիկ այցելութեան շուրջ, ծանրանալով մէկ ազգ, մէկ հայրենիք եւ մէկ եկեղեցի գաղափարին վրայ, կոչ ուղղելով ժողովուրդին նեցուկ կանգնիլ Հայաստանի հզօրացման գործին եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ բարգաւաճումին:

Վեհափառին բարի գալուստ մաղթելու եկած եւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ դասերուն մէջ տեղ գրաւած էին Բարձր. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Խաթակ Արք. Պարսամեան, Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան Կիլիկեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Մեսրոպ Արք. Աշճեան, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ հովիւ Գերշ. Տ. Շահէ Մ. վրդ. Փանոսեան, Հայ Կաթողիկէ համայնքի հովիւ Գեր. Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան, Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւ Վեր. Եսայի Սարմազեան, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Նարեկ Քհնյ. Քէօթէլեան, Մոնթրէալէն՝ Արժ. Տ. Զարեհ Քհնյ. Զարգարեան, Համիլթընի Ս. Մարիամ եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Սարգիս Քհնյ. Կիւլեան,

ինչպէս նաեւ այլ քրիստոնեայ եկեղեցիներու պետերն ու ներկայացուցիչները:

«Հրաշափառ»ի եկեղեցական արարողութիւններու եւ Վեհափառ Հօր պատգամի աւարտին, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ «Մակարոս Արթինեան» սրահին մէջ, Վեհափառը հանդիպում մը ունեցաւ Թորոնթոյի, Միսիսսոկայի, Համիլթընի, Գէմպրիճի եւ Սէնթ Գաթրինզի ազգային եւ եկեղեցական կառույցներու եւ վարչութիւններուն հետ, ուր խօսեցաւ հայ ժողովուրդի ներկայ կացութեան, Հայաստանի, Արցախի եւ արտասահմանի մէջ, ներկաներուն տարով իր հայրապետական պատգամն ու օրհնութիւնները:

*

**

Վեհափառը, իր Թորոնթօ այցելութեան երկրորդ օրը, Հինգշաբթի, 25 Յունուարի առաւօտեան, հանդիպում ունեցաւ կառավարութեան ներկայացուցիչներուն հետ, իսկ կէսօրէ ետք՝ եկեղեցիներու գանատական խորհուրդի անդամներուն հետ:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7:30ին, Վեհափառը, եկեղեցականներու եւ դպիրներու թափօրով եւ «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցի, ուր ժողովուրդը արդէն իսկ լեցուցած էր դաւիթներն ու անցքերը, տեսնելու իր Վեհափառը եւ լսելու Անոր պատգամը:

Օրուան պատարագիչն էր Յովնան Արք. Տէրտէրեան, որ «Հայր Մեր»էն առաջ բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին, ապա, խորան հրաւիրեց յոյն ուղղափառ (օրթոտոքս) եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Ստեֆանոս Սըրբազանը:

Յոյն ուղղափառ եկեղեցւոյ առաջնորդ սրբազանը իր եւ իր համայնքին անունով բարի գալուստ մաղթեց Վեհափառին, ապա, անդրադարձաւ հայ ժողովուրդի պատմութեան, ողբերգութիւններուն, Մեծ Եղեռնին, ինչպէս նաեւ Հայաստանի անկախութեան եւ արտասահման ապրող հայերու տաքնապններուն ու հայ մնալու գոյապայքարին, հայ եւ յոյն ազգերու եւ եկեղեցիներու եղբայրակցութեան, իր հրճուանքն ու ուրախութիւնը յայտնելով Վեհափառի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրութեան առթիւ, գնահատելով Վեհին կարողութիւնները եւ իր դրական տպաւորութիւնը՝ 1983ին, Վանգուվըրի մէջ, Վեհափառի ատենապետութեամբ գումարուած միջ-եկեղեցական խորհուրդի ժողովներու ընթացքին:

Վեհափառ Հայրապետը, նախ հայերէն, ապա՝ անգլերէն լեզուներով շուրջ 45 վայրկեան խօսեցաւ կրօնաշունչ եւ ազգայնաշունչ քարոզ մը, ուր անդրադարձաւ մարդու կեանքին բաղկացուցիչ ազդակներուն եւ իմաստին՝ ազատութեան, եղբայրասիրութեան, ազգասիրութեան եւ որպէս մարդ պարելու կեանքի նպատակ ունենալու գաղափարին, կոչ ուղղելով զօրավիգ կանգնիլ դարերով անկախութիւն եւ ազատութիւն կորսնցնելէ ետք, հայ ժողովուրդի քաջ զաւակներուն կեանքին եւ արիւնին գնով ազատութիւն եւ անկախութիւն նուաճած Հայաստանի հզօրացումին եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ Սուրբ Էջ-

միաձնի լոյսով հայ ժողովուրդի զաւակներուն հոգիները լուսաւորելու աշխատանքին:

*

**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի Թորոնթօ այցելութեան երրորդ օրը՝ ուրբաթ, 26 Յունուար 1996, Վեհափառը եւ իր շքախումբը այցելեցին Հ.Բ.Ը.Մ.ի Զարուկեան եւ Ս. Խաչ Ազգային Վարժարանները, ուր դիմաւորուեցաւ դպրոցներու պատասխանատուներուն, ուսուցչական կազմին եւ աշակերտութեան կողմէ:

Գործադրուեցաւ աշակերտական զեղարուեստական յայտագիր՝ երգերով եւ արտասանութիւններով:

Վեհափառը մօտեցաւ աշակերտներուն եւ իր հայրական թելադրութիւններն ու պատգամը փոխանցեց անոնց:

«ՅՈՐԻՉՈՆ»
1996



Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա. Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ,
26 Յունուար 1996ին

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա.Ի
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ,
ՀԱՅ ԿԵՂՐՈՆ ԵՒ Հ.Օ.Մ.Ի ԱՄԷՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ**

Ուրբաթ, 26 Յունուար 1996, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Վեհափառ Հայրապետը եւ իր շքախումբը այցելեցին Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցի, Հայ Կեղրոն եւ Հ.Օ.Մ.Ի Ամէնօրեայ Վարժարան:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ մուտքին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ին ընդառաջեցին Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան շրջանի Կիլիկեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Մեսրոպ Արք. Աշճեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Գերշ. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան եւ Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէչլիբեան» Կոմիտէի հերթապահ ընկ. Յակոբ Ճանպարհ:

Վեհափառը եկեղեցւոյ մուտքին դիմաւորուեցաւ Հ.Օ.Մ.Ի Ամէնօրեայ վարժարանէն երկու աշակերտուհիներու կողմէ, որոնք ծաղկեփունջով պատուեցին Վեհափառ Հայրապետը: Ապա, Համազգայինի երկու պարմանուհիներ հայկական տարազներով, Վեհափառին մատուցանեցին աղ ու հացի ափսէն: Վեհափառը աղ ու հացի օրհնութիւնը կատարելէ ետք, իր շքախումբով անցաւ իրեն պատուի կեցած Հ.Մ.Ը.Մ.Ի սկառուներու եւ Հ.Յ.Դ. Գանատայի Երիտասարդական Միութեան «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղի անդամներուն մէջէն եւ դպիրներու կողմէ երգուած «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ եկեղեցւոյ դասը:

Վեհափառ Հայրապետի շքախումբին մաս կը կազմէին Բարձր. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Բարձր. Տ. Մեսրոպ Արք. Աշճեան, դաւազանակիր Արտակ Աբեղայ Տիգրանեան, Տ. Նարեկ Քհնյ. Քէօթէլեան, Տ. Զարեհ Քհնյ. Զարգարեան, Տ. Սարգիս Քհնյ. Կիւլեան եւ Տ. Շնորհք Քհնյ. Սուին:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ կատարուած կանոնական աղօթքէն ետք, Վեհափառը եւ իր շքախումբը առաջնորդուեցան հայ կեղրոնի սրահը, ուր արդէն իսկ հաւաքուած էին Հ.Օ.Մ.Ի Ամէնօրեայ Վարժարանի աշակերտները եւ բարեպաշտ ժողովուրդը, որոնց թիւը կը հասնէր շուրջ հազար հոգիի:

Սրահին մէջ, Վեհափառ Հօր բարի գալուստի խօսքով հանդէս եկան Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ հովիւ Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան, Տ. Յովնան Արք. Տէրտէրեան եւ Տ. Մեսրոպ Արք. Աշճեան:

Հ.Օ.Մ.Ի Ամէնօրեայ Վարժարանի, հայ կեղրոնի մէջ գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու անունով բարի գալուստի խօսք արտասանեց Թեմի Ազգային Վարչութեան անդամ Պրն. Յարութիւն Շիթիլեան:

Հ.Օ.Մ.Ի Գորլեան նախակրթարանի եւ միջնակարգի աշակերտները, դեկավարութեամբ Պրն. Վարուժան Նիկոլեանի, երգեցին «Հայրապետական Մաղթանք»ը եւ «Լեռներ Հայրենի» երգը, ապա հանդէս եկան Վահան Թէքէեանի «Եկեղեցին Հայկական» քերթուածի խմբային արտասանութեամբ:

Այս առթիւ, հայ կեղրոնի կողմէ գանատացի արուեստագէտ Պեն Հենրիի մէկ արձանիկը Վեհափառ Հայրապետին նուիրեց ընկ. Յակոբ Ճանպարհեան:

Խօսք առաւ Վեհափառ Հայրապետը, եւ, աւելի քան կէս ժամ, անդրադարձաւ հայ կեդրոնի, հայ դպրոցի եւ հայ եկեղեցիի ծրագիրներուն եւ շինութեան, յիշատակելով իր ներդրումը այս ամիսներուն վրայ, որպէս հայ գոյատեւելու երեք բերդերու կառուցումին: Ապա, իր անխառն զգացումները յայտնեց կապուած Թորոնթոյի հայ գաղութի կազմակերպման աշխատանքներուն: Վեհափառը անդրադարձաւ նաեւ իր եկեղեցական 44 տարիներու կեանքի ուղիին, եւ որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս, իր պատգամն ու օրհնութիւնը տուաւ աշակերտութեան եւ ժողովուրդին:

Վեհափառի մեկնումի պահուն, աշակերտները երգեցին «Էջմիածին ի հօրէ» շարականը եւ «Կիլիկիա» երգը:

Վեհափառը եւ իր շքախումբը մեկնումի ընթացքին անցան վարժարանի միջանցքէն, ուր ցուցադրուած էին աշակերտութեան ուսումնական աշխատանքներէն նմոյշներ:

Նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 6:00ին, Վեհափառ Հայրապետը հանդիպում մը ունեցաւ Թորոնթոյի հայ երիտասարդութեան հետ: Մեծ թիւով երիտասարդներ, շուրջ չորս 400 հոգի, եկած էին լսելու Վեհափառ Հօր պատգամը:

Եղան հարցումներ, որոնց սպառիչ կերպով պատասխանեց Վեհափառը:

Ուրբաթ, 26 Յունուարի երեկոյեան, ժամը 8:00ին, Հ.Բ.Ը.Մ.ի կեդրոնի Պապայեան սրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ, ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որուն ներկայ եղան շուրջ 500 ազգայիններ:

Գանատական եւ հայկական պետական օրհներգները եւ հայրապետական մաղթանքը երգեց երգչուհի Տիկ. Զարմինէ Երէցեան, դաշնամուրով ընկերակցութեամբ Տիկ. Արաքսի Գասարձեանի:

Ճաշկերոյթի պաշտօնական մասը սկսաւ Վեհափառ Հայրապետի բացման աղօթքով: Ապա, օրուան հանդիսավար Ժագ Ստեփանեան հանդէս եկաւ բացման խօսքով:

Ճաշի սպասարկութենէն ետք, ողջոյնի խօսքով հանդէս եկան թեմական խորհուրդի ատենապետ Թադևոս Յոբեան, Գանատայի մօտ Հայաստանի Դեսպան Գառնիկ Նանազուլեան, Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան շրջանի Կիլիկեան Թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ Արք. Աշճեան եւ Մ. Նահանգներու Արեւելեան շրջանի Էջմիածնական Թեմի Առաջնորդ Տ. Խաժակ Արք. Պարսամեան:

Գեղարուեստական յայտագրով հանդէս եկաւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ դպրաց դասը, ղեկավարութեամբ դպրապետ Յակոբ Սրկ. Ալթընեուքսիքի:

Մեսրոպ Սրբազանի փափաքով եւ առաջարկով, Յովնան Սրբազան երգեց «Հայրիկ, հայրիկ» երգը:

Խօսք առաւ Յովնան Արքեպիսկոպոս, որ իր սրտագին շնորհակալութիւնները յայտնեց Խաժակ եւ Մեսրոպ Սրբազաններուն, որոնք ընդառաջելով իր հրաւերին, ներկայ գտնուեցան Վեհափառ Հօր ի պատիւ ճաշկերոյթին եւ հետեւեցան անոր քայլերուն: Շնորհակալութիւն յայտեց նաեւ Վեհափառին, ընդունելութիւնը կազմակերպող յանձնախումբին եւ այս առթիւ, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եղած նուիրատուութիւններու անունները

կարդաց: Ապա, կրկին անգամ դրուատեց Վեհափառ Հօր յանդուգն, հայրենաշէն, եկեղեցաշէն եւ ազգաշէն քայլերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա., այս առթիւ «Ս. Ներսէս Շընորհալի» շքանշանով պատուեց աւելի քան 30 տարի եկեղեցւոյ ծառայած Պապայեան հիմնարկութեան ատենապետ Պրն. Հայկ Սեւեանը:

Վեհափառ Հայրապետը այնուհետեւ, աւելի քան 45 վայրկեան խօսեցաւ եւ իր հայրական պատգամը եւ օրհնութիւնը փոխանցեց ներկաներուն:

*

**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս, շաբաթ, 27 Յունուար 1996, առաւօտեան ժամը 9:30ին, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ հանդիպում ունեցաւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցի, Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ շաբաթօրեայ եւ Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարաններու աշակերտներուն եւ ուսուցչական կազմերուն հետ, գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր:

Վեհափառ Հայրապետը խօսք առնելով գնահատեց կիրակնօրեայ դպրոցի եւ շաբաթօրեայ վարժարաններու աշխատանքը եւ շնորհակց անոնց առաքելութիւնը: Վեհափառը թելադրեց բոլոր աշակերտներուն սիրել մայրենի լեզուն, Հայաստանը եւ հայ եկեղեցին: Վեհափառը ըսաւ, թէ ամէն երկիր բանակ կ'ունենայ իր երկրի սահմանները պաշտպանելու համար, ես ալ ունիմ 36 հոգինոց բանակ մը, որ կը պաշտպանէ հայու գոյութիւնը, այդ բանակը հայոց այրուբենն է: Թելադրեց այդ տառերով պաշտպանել եւ պատերազմիլ ձուլումի եւ այլասերումի թշնամիին դէմ:

Վեհափառը եւ իր շքախումբը, Շաբաթ 27 Յունուարի կէսօրին մեկնեցան Թորոնթոյէն, հովուապետական այցելութիւն տալու Մոնթրէալի հայութեան:

Այս առիթով, «Հորիզոն» շաբաթաթերթի անունով, Վեհափառ Հայրապետէն ինդրեցի պատգամ մը ուղղուած հայ ժողովուրդին:

Վեհափառը ըսաւ.-

«Անհունօրէն երջանիկ կը գգամ, երբ կը տեսնեմ մեր ժողովուրդին սիրալիր վերաբերումը Ամենայն Հայոց Կաթողիկոսի այս այցելութեան:

«Խորապէս ինքզինքս կը գգամ զօրացած մեր ժողովուրդի հետզհետէ աճող այն կամքովը, որով ինքզինքը կ'ուզէ արտայայտել այլեւս գործնապէս իբրեւ մէկ եկեղեցի, իբր մէկ հայրենիք եւ իբրեւ մէկ ազգ»:

«Ապրի այս ժողովուրդը, որ այսպէս գիտէ ուռճանալ, միութեան, զօրակցութեան փոխադարձ եղբայրութեան զգացումներով եւ Մայր Հայրենիքը՝ Ազատ ու Անկախ Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը այլեւս ձերբազատուած որեւէ մէկ տեսակ օտար ազդեցութենէ կը սպասէ իր այս ժողովուրդին եւ այդ ժողովուրդին ծառայելու մէջ կը տեսնէ իր գերագոյն փափաքը»:

«ՀՈՐԻԶՈՆ»
5 Փետրուար 1996

ՀԻՄՆԱՐԿԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻԻ

Կիրակի, 28 Յուլիս 1996, կէսօրէ ետք ժամը 2ին, 2600-14th Avenueի վրա գնուած երեք էյքընոց հողամասին վրայ տեղի ունեցաւ հիմարկէքի արարողութիւնը Թորոնթոյի Հայ Աւետարանական եկեղեցիին:

Այս առիթով հողամասին վրայ գետեղուած էր հսկայ վրան մը՝ ժողովուրդը պաշտպանելու համար տօթակէզ արեւէն, Գանատական եւ Հայկական դրօշներով ու եռագոյն փշիկներով զարդարուած էին վրանի մուտքերն ու հողամասի սահմանները:

Օրուան հանդիսավար Պրն. Տիգրան Գալայճեանի բարի գալուստի եւ բացման խօսքէն ետք գործադրուեցաւ կրօնաշունչ յայտագիր մը:

Եկեղեցւոյ հովիւ Վեր. Եսայի Սարմազեան եւ կոչ ուղղեց պաշտամունքի: Ներկաները երգեցին «Փառաբանութիւն առ Ս. Երրորդութիւն» երգը, որուն յաջորդեց փոխ ընթերցուած հովիւին եւ ժողովուրդին կողմէ:

Ժողովուրդը արտասանեց «Առաքելական Հանգանակը»:

Օրուան հանդիսավարը խօսք առնելով ներկայացուց օրուան հիւրերը, Թորոնթոյի Աւետարանական եկեղեցւոյ հիմնադիր հովիւ Վեր. Սոլօ Նիկողոսեան, Աւետարանական Միութեան Վարիչ Տնօրէն եւ Նախագահ Համաշխարհային Հայ Աւետարանական Խորհուրդի Վեր. Մովսէս Ճամպազեան, Հայ Եղբայրակցութեան քարոզիչ Յակոբ եղբայր Պայրազտարեան, Նազովրեցի եկեղեցւոյ քարոզիչ Յովհաննէս եղբ. Քէօշկէրեան, Գանատայի Դաշնակցային Խորհրդարանի անդամ Պրն. Սարգիս Ասատուրեան եւ Թորոնթոյի Քաղաքական, Մշակութային, Հայրենասիրական, Բարեգործական բոլոր Միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչները, Ամէնօրեայ եւ Շաբաթօրեայ Վարժարաններու ներկայացուցիչները:

«Եկեղեցին հիմնեալ է» կրօնական երգը երգուեցաւ ժողովուրդին կողմէ, որուն յաջորդեց ուղերձներու շարքը:

Առաջին խօսողն էր եկեղեցւոյ վարչութեան ատենապետ Պրն. Միհրան Ճիգմէճեան, որ իր սրտաբուխ ուղերձէն վերջ կարգաց այս առիթ ստացուած շնորհաւորական նամակները, որոնք ստացուած էին Մոթրէալի Աւետարանական Մայր եկեղեցւոյ հովիւ Վեր. Մհեր Խաչիկեանէ, Մոնթրէալի առաջին եկեղեցւոյ հովիւէն եւ Հիւսիսային Ամերիկայի Աւետարանական հովիւ Վեր. Քարլ Աւագեանէ:

Երկրորդ խօսողն էր Վեր. Սոլօ Նիկողոսեան, որ իր խօսքին մէջ անդրադարձաւ 1960ին հիմնուած եկեղեցւոյ հիմնադրութեան ժամանակաշրջանին եւ այսօրուան կացութեան, կ'անդրադառնամ, որ այն փոփոխութիւններուն, որոնք տեղի կ'ունենան մեր կեանքին ընթացքին: 1960ին փոքր համայնք մըն էինք, նախկին եկեղեցին բաւարար էր մեր պաշտամունքին, սակայն, տարիներու ընթացքին աճեցանք եւ աւելի մեծ ու զանազան յարմարութիւններով օժտուած եկեղեցիի մը պէտքը զգացուեցաւ: Ներկայ փոփոխութիւնները շատ արագ կ'ընթանային, կարելի է ըսել հինգ տարին անգամ մը ականատես կ'ըլլանք փոփոխութիւններու:

«Կարեւորը տեսիլքը ունենալն է: Պէտք է որդեգրել տեսիլքը յաջողե-
լու համար: Այն ազգը, որ տեսիլք չունի դատապարտուած է մահուան: Սա-
կայն, կ'ուզեմ ընդգծել, որ տեսիլքը առանց հաւատքի չիրականանար: Պէտք է
հաւատքով մօտենանք այս եկեղեցաշինութեան գործին եւ վստահ եմ մեր ժո-
ղովուրդը շուտով պիտի շինէ այս եկեղեցին»:

Խօսք տրուեցաւ վեր. Մովսէս Ճանպազեանին, որ ընդգծեց Հայաստան-
եայց Աւետարանական եկեղեցւոյ հիմնադրութեան թուականը՝ 1 Յունիս 1846-
ը, որ այս օրերուն, որպէս 150-ամեակ կը տօնուի Սփիււրքի եւ Հայաստանի
մէջ, եւ Յունիս 1ը յայտարարեց որպէս «Աւետարանական եկեղեցւոյ Օր»:

Թորոնթոյի Հայ Աւետարանական եկեղեցիին նոր շէնքին հիմնարկէքի
թուականը գուգադիպած ըլլալով Աւետարանական եկեղեցւոյ հիմնադրու-
թեան, բարեբաստիկ թուական մը նկատեց այս ձեռնարկը յուսալով, որ շու-
տով կը կանգնի պատուաբեր եկեղեցւոյ շէնքը՝ հայկական ոճով եւ շունջով:

Այս առթիւ ան կոչ ըրաւ ներկաներուն համախմբուել նորակարոյց ե-
կեղեցւոյ շուրջ՝ ի Փառս Տերոջ Փառքին:

Խօսք առաւ շինութեան յանձնախումբի ատենապետ պր. Հրայր Սա-
ղըրեան եւ անգլերէնով արտայայտուելով ի միջի այլոց ըսաւ.՝ 36 տարի ա-
ռաջ, 1960 Նոյեմբեր 6ին, մօտաւորապէս 14 Հայ ընտանիքներ հիմնեցին Թո-
րոնթոյի Հայ Աւետարանական եկեղեցին: Հազիւ 10-ամեակը բոլորած, եկեղե-
ցիի նոր եւ մեծ շէնք մը ունենալու անհրաժեշտութիւնը անխուսափելի նկատ-
ւեցաւ:

Եկեղեցիի հիմնադրութեան 25-ամեակին առիթով (1985), արդէն առա-
ջին քայլը առնուեցաւ հողաչերտ մը գնելով, սակայն միայն 35-ամեակին էր
որ նոր շէնք մը ունենալու մեր երազը սկսաւ իրականութիւնը դառնալ: Եւ հի-
մա, մենք կը հաւատանք, որ 1997ի գարնան, Աստուծոյ շնորհքով՝ մեր երկար
տարիներու երազը վերջնականապէս իրականացած պիտի ըլլայ եւ պիտի ու-
նենանք մեծ, գեղեցիկ եւ հայկական ոճով եկեղեցիի նոր շէնք մը:

Սակայն մեր գլխաւոր նպատակը նոր եւ հանգիստաւէտ եկեղեցի շէնք
մը ունենալ չէ, Ֆիզիքական կառոյց չէ, այլ՝ անոր հոգեւոր առաքելութիւնն է:

Հայ Աւետարանական եկեղեցին իւրայատուկ եկեղեցի մըն է: Աւետա-
րանականութիւնը անոր համայնքին բնոյթը ներկայացնէ առաջ, Սուրբ գրա-
յին հիման վրայ հաստատուած ըլլալը կը ներկայացնէ, Ա. դարու Առաքելա-
կան եկեղեցիին պէս: Աւետարանական ըլլալ չի նշանակեր որոշ յարանուանու-
թեան մը պատկանիլ միւս յարանուանութիւններու շարքին, այլ՝ Աւետարանի
վրայ հիմնուած ըլլալ եւ գանիկա ընդունիլ իբր եկեղեցիի եւ անձնական
կեանքի գերագոյն կունենամ, հեղինակութիւն եւ արժեքափ:

Յետոյ, անիկա Հայ եկեղեցի մըն է, որ ցոյց կուտայ իր ազգին բնոյթը:
Տեղական պայմաններն ու պահանջները նկատի առնելով հանդերձ, անոնք
պատճառ եւ արգելք ըլլալու չեն գիշերու կամ կորսնցնելու իր լեզուն, մշակոյթ-
թը եւ տոհմիկ ավանդութիւնները: Ահա ճիշտ ասոր համար է, որ որոշեցինք
այս եկեղեցին հայկական ոճով շինուած եկեղեցի մը ըլլայ, եւ մեր փափաքն է,
որ անիկա ըլլայ պաշտամունքի վայր, հոգեւոր, տոհմիկ եւ քաղաքացիական
դաստիարակութեան աճումի կեդրոն՝ նոր սերունդին եւ համայն Թորոնթոյի-
յութեան համար:

Այս առաքելութեան յաջողութեան համար պէտք ունինք Աստուծոյ Սուրբ Հոգիին զօրութեան, մեր ժողովուրդի գործակցութեան եւ Թորոնթօ Հայ Գաղութին մեր առաքելութիւնը գնահատող բարեկամներու աջակցութեան:

Խօսք առաւ նաեւ Գանատայի Դաշնակցային խորհրդարանի անդամ պր. Սարգիս Ասատուրեան, որ յաջողութիւն մաղթեց Հայ Աւետարանական եկեղեցիի շինութեան աշխատանքներուն եւ այս առթիւ մեծածաւալ Գանատական Դրօշ մը նուիրեց, որպէսզի ապագային գործածուի եկեղեցւոյ մուտքին:

Ժողովուրդին կողմէ երգուած «Եկեղեցին Ընդհանրական» երգէն ետք, եկեղեցիի հիմնարկէքին զետեղուելիք տուփին մէջ դրուեցան:

1.- Աստուածաշունջ Մատեանը՝ վեր. Եսայի Սարմազեանի ձեռամբ:

2.- Հայաստանէն՝ Խոր Վիրապէն բերուած բոլո մը հողը եւ եկեղեցւոյ 150-ամեակի հաղորդագրութիւնը: Ինչպէս նաեւ 150-ամեակի առթիւ Հայաստանի մէջ Օքսեր Ֆուրով պատրաստուած 150-ամեակի խորհրդանշանը, ձեռամբ վեր. Մովսէս Ճամպազեանի:

3.- Հին եկեղեցիէն տուփ մը հող, որպէսզի կամուրջի նոր եկեղեցիին հողին եւ դառնայ միացման կապ՝ պր. Գարեգին Սաղըրեանի ձեռամբ:

4.- Եկեղեցւոյ պարբերաթերթին՝ Գանատահայ մամուլի «Լրատու» թերթին վերջին թիւը՝ վեր. Սուլօ Նիկողոսեան կողմէ, որ եղած է այդ թերթի առաջին հրատարակիչը:

5.- Եկեղեցւոյ 25-ամեակին հրատարակած գիրքը՝ պր. Խաչիկ Պալապանեանի ձեռամբ:

6.- Եկեղեցւոյ 35-ամեակի գրքոյքը եւ եկեղեցւոյ բոլոր կազմակերպութիւններուն եւ պաշտօնեաներուն անուանացանկը՝ պր. Միհրան Ճիզմէճեանի ձեռամբ:

7.- Եկեղեցւոյ մէջ երգուած երգարանէն օրինակ մը, եկեղեցւոյ երգեր հոնահար տիկին Անահիտ Սիրակեանի ձեռամբ:

8.- Կիրակնօրեայ վարժարանի երգարանը՝ Օր. Ռուպի Շելինի ձեռամբ:

9.- Թորոնթոյի Սանտէյ Սթարի թիւը, ուր անդրադարձում կայ Ատլանթայի մէջ տեղի ունեցած 26րդ Ողբմպիական խաղերուն Հայաստանի մասնակցութեան եւ Ոսկի մետալ տիրացումին՝ օր. Արմին Ատուրեանի ձեռամբ:

10.- Գանատական մետաղեայ դրամներու շարք մը՝ եկեղեցւոյ գանձապահ պր. Յարութ Ատուրեանի ձեռամբ:

Այս առթիւ յայտարարուեցաւ, որ Ս. Աստուածածին Հայոց Առաքելական եկեղեցին խաչքար մը կը նուիրէ, որպէսզի զետեղուի հիմնարկէքի սընտուկին մէջ:

Մտուկը զետեղուեցաւ յատկապէս փորուած փոսին մէջ, շրջափակուած հանդիսականներով:

Փակման խօսքը կատարեց վեր. Սարմազեան եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն եւ բացուած յայտարարեց հանգանակութիւնը հրաւիրելով ներկաները, որպէսզի իրենց նուիրատուութիւններով զօրավիգ կանգնին, որպէս հայկական ոճով այս եկեղեցին եւ համալիրը շուտով իրականութիւն դառնայ,

Հանդիսութեան վերջաւորութեան ներկաները հիւրասիրուեցան թեթեւ ճաշով եւ անուշեղէներով:

**«ՀՈՐԻՉՈՆ»
1996**



Մարմարայի խմբագիր Ռոպեր Դատեճեանի հետ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ

Կազմակերպութեամբ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ, Չորեքշաբթի, 14 Հոկտեմբեր 1998, երեկոյեան ժամը Ցին, եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ տեղի ունեցաւ շահեկան դասախօսութիւն մը, որուն ներկայ գտնուեցան շուրջ 200 ազգայիններ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հոգչ. Տ. Շահէ Մ. Վրդ Փանոսեան, որ անդրադառնալէ ետք դասախօսական նիւթին՝ «Հայ Եկեղեցւոյ Առաքելութիւնը եւ Հայ Կինը», հրաւիրեց Գանատայի Առաջնորդական Փոխանորդ Գերշ. Տ. Խաթակ Եպիսկ. Յակոբեանը, որ Մոնթրէալէն յատկապէս հրաւիրուած էր այս նիւթին մասին խօսելու:

Սրբազան հայրը, իրեն յատուկ պերճախօսութեամբ եւ հաճոյախօսութեամբ մէկ ժամէ աւելի խօսեցաւ, գլխաւորաբար հետեւեալ ճշմարտութիւններու շուրջ:

Եկեղեցւոյ անդամ մը պէտք ունի կրօնական ուսուցումի, հոգեւոր սընունդի եւ հաւատքի, հաւաքական աղօթքի եւ եկեղեցւոյ ծառայութեան:

Շատեր չեն ուզեր հաւաքական աղօթքի եւ ժամերգութեան մաս կազմել, եւ կը նախընտրեն առանձին քալել, ենթակայ ըլլալով զանազան վտանգներու:

Եկեղեցին կը կազմէ խմբային հաւաքավայրի անդամները, որոնք օժտուած են սիրոյ եւ իրարօգնութեան առաքինութիւններով եւ կը սնանին եկեղեցւոյ սնունդով:

Մարդիկ կան, որոնք եկեղեցի յաճախելու համար հրաւերի կը սպասեն եկեղեցւոյ Հովիւէն կամ Հոգաբարձութեան անդամներէն: Նման պարագայի մը, անոնք չեն կրնար աստուածային սնունդով կշտանալ, քանի անօթութիւն չեն զգար: Եկեղեցի եկող ազգայիններ եկեղեցւոյ կարօտը եւ պէտքը զգալով պէտք է ներկայ գտնուին եկեղեցւոյ Պատարագին եւ սնանիլ անկէ, հոգեւոր սնունդով: Պէտք է քով-քովի գանք եւ եկեղեցի ըլլանք:

Մարդ արարածի Աստուծոյ հետ յարաբերութիւնը մեզի կը փոխանցըւի Աստուածաշունչի ընթերցումով, ուր Քրիստոս մեզի կը յայտնէ աստուածային ճշմարտութիւններ:

Հայաստանեայց եկեղեցին Առաքելական կը կոչուի, որովհետեւ Հայաստան ուղեւորուած առաքեալները՝ Թադէոս եւ Բարթողիմէոս մեզի սորվեցուցին Աստուծոյ ճշմարտութիւնը: Քրիստոնեայ մարդը կը նմանի լոյսի, որ կը վառի շրջապատը լուսաւորելու համար:

Մեր եկեղեցին կը կոչուի Հայաստանեայց: Քրիստոնեայ եկեղեցին աշխարհային է: Մեր եկեղեցին ինքզինքը առանձնացուցած է, որովհետեւ հայ ժողովուրդը ունի ինքնուրոյն տագնապներ, գոյապայքար եւ մարտնչում:

21րդ դարու սեմին ունեցանք Անկախ Հայաստան, կիսանկախ Արցախ եւ Սփիւռք: Անհրաժեշտութիւններ գոյութիւն ունին: Մենք կապրինք ըՍփիւռքի մէջ, Հայաստանի եւ Արցախի տագնապներով ապրելով հանդերձ,

պէտք է տազնապինք նաեւ Սփիւռքի մեր զաւակներուն սպառնացող ուժացումի եւ ձուլումի վտանգներով եւ այս կացութիւնը դիմագրաւելու կոչուած են հայ մայրերը:

Երբ կը նայինք հայ կնոջ դերին եւ առաքելութեան, Եղեռնէն առաջ հայրենի մեր քաղաքներուն եւ գիւղերուն մէջ, կամ, Եղեռնէն վերջ իսլամական երկիրներու մէջ, հայ կինը զօրաւոր ազդեցութիւն կրած է իր շրջապատէն, մանաւանդ իսլամական շրջապատէն: Անցեալին մենք ունեցած ենք նշանաւոր թագուհիներ՝ ինչպէս Եռասո Թագուհին, Փառանձեմ Թագուհին, հերոսամարտերու մասնակցած հայ կիներ եւ օրիորդներ՝ Վարդանանց պատերազմէն մինչեւ Ֆետայական շարժումները՝ Սօսի Մայրիկներ եւ Արցախեան դոյամարտին մասնակցած ժաննաներ: Տիկնայք Փափկասուն Հայոց Աշխարհի, հայրենասէր սերունդներ պատրաստեցին:

Հայ տիկիները մաս կազմեցին նաեւ հայ եկեղեցւոյ սպասարկութեան: Անոնցմէ շատեր վանական կեանքի նուիրուելով ծառայեցին Հայաստանեայց Եկեղեցիին, նոյնիսկ շարականներ կ'երգէին մինչեւ այսօր եկեղեցիին մէջ: Գտնուած են հայ կիներ, որոնք ծառայած են հայ մշակոյթին եւ կատարած բարերարութիւններ, ինչպէս Նորավանքի բարերար Օրֆելեան Իշխանուհին:

Այս բոլորը կը պատկանին անցեալին: Այսօր, կնոջական շարժումը յառաջ կը տարուի Հայ Օգնութեան Միութեան անդամուհիներուն կողմէ, որոնք 1910էն ի վեր, հայ կեանքի բոլոր մարզերուն մէջ կը ծառայեն եւ կը կատարեն իրենց ազգային պարտականութիւնը:

Եկեղեցիի պայծառութեան եւ զօրացման մեծապէս կը նպաստեն եկեղեցիի ծառայող սարկաւազները եւ դպիր-դպրուհիները: Շատ բան կախուած է անոնց երգեցողութենէն եւ ներդաշնակութենէն, որոնց շնորհիւ հաւատացեալ ժողովուրդը աւելի կը կապուի եկեղեցիին:

Եկեղեցւոյ դպրուհի ձեռնադրելը շատերուն խորթ կը թուի: Սակայն, ինչպէս նախապէս ըսի, Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան ընթացքին կը հանդիպինք եկեղեցիին ծառայող քոյրերու, դպրուհիներու եւ սարկաւագուհիներու:

Այսօր եւս, Էջմիածնի, Պոլսոյ եւ Անթիլիասի մէջ գոյութիւն ունին եկեղեցիին ծառայող կոյսեր, ինչպէս՝ Էջմիածնի մէջ Հռիփսիմեայց եւ Անթիլիասի մէջ Գայիանեայց կոյսերը:

Շատ կարեւոր է կրօնական դասախօսութիւններու կազմակերպումը, որպէսզի մեր ժողովուրդը սորվի եւ հասկնայ եկեղեցւոյ խորհուրդներուն իմաստը:

Մեր նոր սերունդի զաւակներուն կրօնական եւ բարոյական դաստիարակութեան համար կենսական է Կիրակնօրեայ դպրոցներու դերը, ուր զարգացած եւ գիտակից դաստիարակներ մեր զաւակներուն հոգիները կը կազապարեն եւ նկարագիր կը կերտեն:

Հայաստանեայց Եկեղեցիին պէտք ունի նաեւ կանացի ծառայողներու: Պատմութեան ընթացքին մենք տեղեկացած ենք Մեծն Ներսէս Հայրապետի ծառայութիւններուն, անոր բացած ծերանոցներուն, անկելանոցներուն, հիւանդանոցներուն, դպրոցներուն, եւ այլն, որոնց համար արդարօրէն «Մեծ» կոչուած է ան:

Ներկայիս, եկեղեցին իր կանանց օժանդակ անդամներով եւ միութիւններով կրնայ ծառայողական սպասարկութիւններ ստեղծել, օգտակար հանդիսանալու համար տկար, հիւանդ, անկարող եւ աղքատ հայորդիներուն:

Խաժակ Սրբազանի խորիմաստ դասախօսութենէն ետք, առիթ տրուեցաւ հարցումներ ուղղելու: Եղան հարցումներ, որոնց պատշաճօրէն պատասխանեց Սրբազանը:

Փակման խօսքը կատարեց եկեղեցւոյ Հովիւ Հոգշ. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան, որ իր շնորհակալութիւնները յայտնեց խաժակ Սրբազանին, ուսանելի եւ այժմէական դասախօսութեան համար:

Գնահատանքով արտայայտուեցաւ դասախօսութեան ներկայ գտնուող հաւատացեալ հոծ բազմութեան, որոնք հակառակ օրը շաբթուան մէջ ըլլալուն, եկած էին ունկնդրելու Սրբազանին հիանալի դասախօսութիւնը:

Դասախօսութենէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եկեղեցւոյ օժանդակ կանանց յանձնախումբին կողմէ:

«ՅՈՐԻՉՈՆ»
1998

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Մեծն Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա., Ընկերակցութեամբ Գանատայի թեմի Առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Ս. Եպիսկոպոս Յակոբեանի եւ գաւազանակիր Հոգեշնորհ Տ. Խորէն Վրդ. Տողրամաճեանի, Հինգշաբթի, 30 Հոկտեմբեր 1997, կէսօրէ ետք ժամը 4:30ին, ժամանեց Թորոնթոյի Միջազգային «Փիրսըն» օդակայանը, ուր VIP սրահին մէջ դիմաւորուեցաւ Մ. Նահանգներու Արեւելեան շրջանի եւ Գանատայի թեմին Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի, Մ. Նահանգներու Արեւմտեան թեմի նախկին առաջնորդ Գերաշնորհ Սմբատ Արք. Թապաղեանի, Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ հոգեշնորհ Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեանի, Քէմպրիճի Հայց. Առաքելական Ս. Նշան եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վարանդ Քհ. Պետրոսեանի, Հայոց Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերայրգելի Եղիա Մ. Վրդ. Գիրէջեանի, Հայ Աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վերապատուելի Եսայի Սարմազեանի, Գանատայի Դաշնակցային խորհրդարանի անդամ Պր. Սարգիս Ասատուրեանի, Օնթարիոյի խորհրդարանի անդամ Պր. Նազիմ Ատրիի, Ս. Աստուածածնի Հայց. Առաքելական եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամներու, Ազգային Երեսփոխաններու, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի, Հ.Յ.Դ. «Սողոմոն Թեհլիրեան» Կոմիտէի, Հայ Կեդրոնի մէջ գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներու, Հ.Մ.Ը.Մ.ի սկառուներու ինչպէս նաեւ Հ.Օ.Մ.ի Միսիսակայի «Առագաստ» մասնաճիւղի ներկայացուցիչներու կողմէ:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան, երեսփոխաններու եւ Հայ Կեդրոնի յարկէն ներս գործող միութիւններու եւ կազմակերպութիւններու կողմէ բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ հոգեշնորհ Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան:

Խօսք առաւ Գանատայի Դաշնակցային Խորհուրդի անդամ պրն. Սարգիս Ասատուրեան, եւ վարչապետին ու Գանատայի կառավարութեան կողմէ բարի գալուստ մաղթելէ ետք, իր խօսքին մէջ անդրադարձաւ Վեհափառ Հայրապետին Հալէպի մէջ իր հանդիպումին, եւ, իր այն խօսքին, որ Վեհափառը Ամերիկա եւ Գանատա իր հօտին այցելելով հանգիստ պիտի ընէ, ճիշտ հակառակը կը պատահի:

Պր. Սարգիս Ասատուրեան իր ուրախութիւնը յայտնեց, որ իր Գանատայի Դաշնակցային Խորհրդարանի անդամակցութեան շրջանին բախտ կ'ընենայ ընդունելու Մեծն Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը եւ յոյս յայտնեց, որ Երկուշաբթի 3 Նոյեմբերին Վեհափառին հետ կ'ըլլայ Օթթաուայի մէջ՝ Գանատայի ընդհ. կառավարչին, վարչապետին, արտաքին նախարարին եւ այլ բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ հանդիպումներու ընթացքին:

Խօսք առաւ նաեւ Օնթարիոյի խորհրդարանի անդամ պրն. Ճիմ Պրբառուն, որ Օնթարիոյի վարչապետի եւ կառավարութեան անունով բարի գալուստ մաղթեց Վեհափառին: Ան իր խօսքին մէջ գնահատանքով արտայայտը՝

լեցաւ Գանատահայութեան ցոյց տրուած օրինակելի օգտակարութեան Գանատայի տնտեսական եւ մշակութային կեանքին:

Վեհափառ Հայրապետը խօսք առնելով նախ հայերէն, ապա՝ սքանչելի անգլերէնով իր ջերմ շնորհակալութիւնը յայտնեց Մ. Նահանգներու Արեւելեան թեմի եւ Գանատայի Առաջնորդ Մեսրոպ Ա. Աշճեանի իրեն եղած հրաւիրին այցելելու Արեւելեան եւ Գանատայի թեմի իր հօտի զաւակներուն: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ Գանատայի Առաջնորդական փոխանորդ Գերաշընորհ Տ. Խաժակ Եպիսկ. Յակոբեանին, Ս. Աստուածածնի Հայց. Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Շահէ Մ. Վրդ. Փանոսեանին, Գանատայի Դաշնակցային Խորհրդարանի անդամ պրն. Սարգիս Ասատուրեանին, Օնթարիոյ կառավարութեան ներկայացուցիչ Ճիմ Պրատունին, Լիբանանի հիւպատոսին եւ Հայ Կեդրոնի մէջ գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն, իր հանդէպ ցոյց տրուած սիրալիր ընդունելութեան համար:

Վեհափառը գնահատեց Գանատայի կառավարութիւնը եւ ժողովուրդը, որոնք ապաստան տուին Հայոց Մեծ Եղեռնէն ետք այս ափերը հասած հայ ժողովուրդի խլիւղներուն, որոնք սկիզբը որպէս գաղթական հաստատուեցան հոս, ապա, որպէս լիիրաւ գանատացիներ իրենց ամբողջական ներդրումը ունեցան Գանատայի բարգաւաճման համար:

Իր խօսքը Լիբանանի հիւպատոսին ուղղելով, Վեհափառը ըսաւ, թէ ինք Լիբանանէն կու գայ, ուր կը գտնուի Մեծի Տանն Կիլիկիոյ Դարաւոր Աթոռը: Լիբանանը Հայաստանէն ետք, հայ ժողովուրդի երկրորդ հայրենիքն է, ուր հայ եկեղեցին եւ հայ մշակոյթը կը բարգաւաճի եւ ազատ կը գործէ, շնորհիւ Լիբանանի պետութեան եւ ժողովուրդի ազատասիրութեան եւ ժողովրդավարական սկզբունքներուն:

Վեհափառը իր գնահատանքը յայտնեց նաեւ այն գործակցութեան, որ գոյութիւն ունի Գանատայի, Հայաստանի եւ Լիբանանի միջեւ:

Վեհափառի խօսքէն ետք, ներկաները հերթով մօտեցան Վեհափառին եւ աջահամբոյրի ընթացքին ծանօթացուցին իրենք գիրենք:

Կատարուած հիւրասիրութենէն ետք, Վեհափառը եւ իր շքախումբը մոթորսիքով ոստիկանական ջոկատի մը առաջնորդութեամբ առաջնորդուեցաւ «Ռատիսըն» պանդոկ:

Երեկոյեան ժամը 7էն շատ առաջ, Հայ հաւատացեալ բազմութիւնը արդէն իսկ խոնուած էր Հայ Կեդրոն եւ Ս. Աստուածածին եկեղեցին:

Ժամը 7ին, Վեհափառը, ընկերակցութեամբ հոգեւոր հայրերու, ժամանեց Հայ Կեդրոնի համալիրը:

Համալիրի մուտքին, հայկական տարագով աղջիկ մը Վեհափառը դիմաւորեց ծաղկեփունջով: Ապա, կատարուեցաւ աղ ու հացի օրհնութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի սկառտական նուագախումբը Վեհափառը դիմաւորեց սկառտական նուագներով: Ապա, Վեհափառը, ամպհովանիի ներքեւ փոռած կարմիր գորգին վրայէն քալելով, եւ առաջնորդութեամբ Ս. Աստուածածնի եկեղեցւոյ մեծերու եւ կրտսերներու դպրաց դասերուն ու սարկաւազներուն հրաշափառով առաջնորդուեցաւ եկեղեցի, ուր կանոնական աղօթքէ եւ եկեղեցա-

կան արարողութիւններէ ետք, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր ելոյթ եւ աջահամբոյր:

Հայ Կեդրոնը եւ Ս. Աստուածածին եկեղեցին նեղ կուգար 1200է աւելի հայ հաւատացեալ ազգայիներու, որոնք եկած էին տեսնելու իրենց Հայրապետը եւ ոգեւորուելու անոր իմաստուն պատգամներով:

Հայ Կեդրոնի սրահին մէջ խօսք առաւ Գանատայի Առաջնորդական տեղապահ գերաշնորհ Տ. Խաթակ Եպիսկ. Յակոբեան, որ յանուն Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Առաջնորդ Բարձրոչնորհ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի, Ազգային Իշխանութեան, Կրօնական եւ Քաղաքական մարմիններուն, թեմի հաւատացեալ ժողովուրդին, մշակութային եւ բարեսիրական հաստատութիւններուն բարի գալուստ մաղթեց Վեհափառ հօր, ընդգծելով այն իրողութիւնը, որ Վեհափառը, 29 օրերու ընթացքին այցելելով թեմի բոլոր եկեղեցիները իր օրհնութիւնը բաշխեց հաւատացեալներուն եւ իր ազգասիրական, հայրենասիրական եւ եկեղեցասիրական իր պատգամներով անոնց հատարք զօրացուց դէպի ազգն ու եկեղեցին:

Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհագարդ Կաթողիկոսը խօսք առնելով խօսեցաւ իր ստացած տպաւորութիւններուն մասին, եւ, այն իրողութեան որուն ազանատես եղաւ ինք իր այցելութեան ընթացքին, տեսնելով աշխոյժ եւ հայաշունչ կեանքը, այս ափերուն վրայ, շնորհիւ Առաջնորդ հայրերուն, եկեղեցականներուն, ղեկավարներու եւ ժողովուրդի ընտրեալ դասակարգին:

Վեհափառը կոչ ըրաւ, որ հայ ժողովուրդի զաւակները ուր որ ըլլան կապուին իրենց հաւատքին, ազգային ավանդութիւններուն, միշտ հետապնդելով իրագործել ազգային երազները, անտեսելով լուսանցքային մանր-մունր հարցեր: Միշտ, միասնական ճիգերով գործել, ամէն ձեւով օգտակար ըլլալ Հայաստանի եւ Արցախի բարգաւաճումին եւ զօրացումին: Մանաւանդ, մասնակից պէտք է դառնանք Ղարաբաղի պայքարին, Ղարաբաղի ժողովուրդին: Սփիւռքը իր բոլոր կարելիութիւնները ի գործ պէտք է դնէ Հայաստանի եւ Ղարաբաղին, որպէսզի անոնք աւելի եւս զօրանան:

Ապա, տեղի ունեցաւ աջահամբոյր:

*

**

Ուրբաթ, 31 Հոկտեմբեր 1997, առաւօտեան ժամը 9ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ Մեսրոպ, Սմբատ եւ Խաթակ սրբազաններու, Շահէ Մ. Վարդապետի եւ գաւազանակիր Խորէն վարդապետի, ժամանեց Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարան, ուր դիմաւորուեցան Ամէնօրեայ Վարժարանի եւ Ս. Խաչ Ազգային Վարժարանի աշակերտներուն, Հ.Յ.Դ. Կ.Կ.ի եւ «Ս. Թեօփիլեան» Կոմիտէի, ինչպէս նաեւ հոծ թիւով ազգայիններու կողմէ:

Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղ գրաւեց Վեհափառը եւ իր շքախումբը, ուր աշակերտութեան կողմէ գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը:

Խօսք առաւ Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի տնօրէն պրն. Մարգար Շարապիսանեան, եւ Թորոնթոյի զոյգ Վարժարաններու՝ Հ.Օ.Մ.ի Պապայեան Մանկապարտէզի, Գոլոլեան Նախակրթարանի եւ Միջնակարգի եւ Ս. Խաչ Ազ-

գային Վարժարանի աշակերտութեան անունով բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին, որուն յաջորդեց վարժարանի Կրթական Մարմնի ատենապետ պրն. Յարութիւն Շիթիլեան, որ խօսք առնելով Հ.Օ.Մ.ի Ամենօրեայ Վարժարանի եւ Ս. Աստուածածնի եկեղեցւոյ հիմնադրութեան պատմականը ըրաւ, եւ ներկայիս 380 աշակերտներ ունցող վարժարանի ծրագիրները ընդգրծելով, շեշտեց կարեւորութիւնը հայեցի դաստիարակութեան:

Աշակերտութեան անունով ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Թամար Ներսէսեան:

Ս. Խաչ Ազգային Վարժարանի աշակերտները արտասանեցին Եղիշէ Չարենցի «Ես Իմ Անուշ Հայաստանի» քերթուածը:

Հ.Օ.Մ.ի Ամենօրեայ Վարժարանի աշակերտները, ղեկավարութեամբ պրն. Վարուժան Նիկոլեանի երգեցին Ժազ Յակոբեանի՝ «Միայն Մէկ Գիր» քերթուածը, որուն յաջորդեց «Դրոյի Յիշատակին» խմբերգի երգեցողութիւնը:

Հ.Օ.Մ.ի Ամենօրեայ Վարժարանի ծրագրաւորանի աշակերտները հանդէս եկան Վահան Թէքէեանի «Եկեղեցին Հայկական» քերթուածը խմբային արտասանութեամբ:

Հ.Օ.Մ.ի Գոլոլեան Վարժարանի աշակերտութեան կողմէ երգուած «Գետաշէն» խմբերգէն ետք, աշակերտները երգեցին «Ամէն Հայի Սրտից Բխած» հայրապետական մաղթերգը:

Խօսք առաւ Վեհափառ Հայրապետ եւ ըսաւ, թէ իր հովուապետական այցելութեան ամէնէն երջանիկ պահն է այս հաւաքոյթը այսքան մեծ թիւով հայ աշակերտներու մէջ գտնուելով, սիրտը կը լեցուի ուրախութեամբ:

Վեհափառը իր խօսքին մէջ շեշտեց հայ դպրոցին եւ եկեղեցիին կարեւորութիւնը, որովհետեւ, առանց հայ դպրոցին հայ կեանքը կը խամրի, առանց հայ եկեղեցիին հայ կեանքը կը ժանգոտի:

Հայ եկեղեցիէն հայ դպրոցէն ելած են Ս. Մեսրոպներ, Ս. Սահակներ, Ս. Ներսէս Ծնորհալիներ, Վարդան Մամիկոնեաններ: Ան յիշեց իր փոքրիկ տարիներուն սորված «Հայ եմ ես, հայ եմ ես, սարսափեցէք իմ ձեռքէս, Հայաստանը ազատող Քաջ Վարդանի թոռն եմ ես», եւ, խնդրեց աշակերտներէն սորվիլ սոյն ոտանաւորը եւ միշտ նմանիլ Վարդան Մամիկոնեանին, որ իր կեանքը զոհեց իր հայրենիքին եւ կրօնին համար:

Հայ կեանքին մէջ եկեղեցին եւ դպրոցը զիրար կը լրացնեն, այս երկու հաստատութիւններու մէջ կը կազմուի մարդակերտումը եւ հայակերտումը:

Վեհափառը գնահատեց Հայ դպրոց յաճախող աշակերտները եւ անոնց ծնողները, որոնք նիւթական մեծ զոհողութիւններու գնով իրենց զաւակները Հայ դպրոց կը ղրկեն, որպէսզի անոնք հայ մեծնան: Պէտք է բոլոր Հայ մանուկները հայկական դպրոց յաճախեն եւ հայեցի դաստիարակութիւն ստանան, որպէսզի անոնք մեծնան որպէս հայ քրիստոնեաներ:

«Ի Վեհ Բարձանց» Հայրապետական երգէն ետք, աշակերտական ընդունելութիւնը վերջ գտուաւ Վեհափառին կողմէ արտասանուած «Պահպանիչ»-ով եւ «Տէրունական Աղօթք»-ի արտասանութեամբ աշակերտներուն կողմէ:

*
**

Ուրբաթ, կէսօրէ առաջ ժամը 10ին, Վեհափառ Հայրապետը եւ իր շքախումբը այցելեցին Հայ Կեդրոնի Երէցներու Ընկերակցութեան անդամներուն, որոնք հաւաքուած էին Հայ Կեդրոնի «Յ. Մանուկեան» գրադարանի սրահին մէջ:

Խօսք առաւ ընկերակցութեան ատենապետուհի տիկին Ռազմուհի Շահինեան եւ իր բարի գալուստի խօսքէն ետք, հրաւիրեց Ս. Աստուածածնի Հայց. Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ հոգեշնորհ Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեանը, ծանօթացնելու Հայ Երէցներու Ընկերակցութիւնը:

Հայր Սուրբը գնահատանքով արտայայտուեցաւ Հայ Երէցներու Ընկերակցութեան տարած աշխատանքներուն եւ շինարար գործունէութեան, յատկապէս ի նպաստ Հայ եկեղեցւոյ եւ Հայ դպրոցին:

Վեհափառ Հայրապետը խօսք առնելով ըսաւ, թէ ինք երէց չի տեսներ սրահին մէջ: Տարիքը ծերութիւն չի նշանակեր: Կարելորդ դրական եւ օգտակար գործ կատարելն է: Դուք երիտասարդի կորովով կ'աշխատիք եւ միշտ դուք ձեզի երիտասարդ կը զգաք, կը մաղթեմ, որ միշտ երիտասարդական արիւնով շարունակէք ձեր առաքելութիւնը այս յարկին մէջ: Վեհափառը առաջարկեց ընկերակցութեան պատուոյ անդամ ըլլալ:

Վեհափառը, ապա, այցելեց Հայ Կեդրոնի շրջափակին մէջ գտնուող Եղեռնի յուշարձանին եւ ծաղկեպսակ զետեղեց հայ երէցի մը եւ երկու Հ.Օ.Մ.ի Ամենօրեայ Վարժարանի աշակերտներուն ձեռքով:

Վեհափառի եւ իրեն ընկերակցող եկեղեցականներու կողմէ արտասանուած աղօթքէն ետք, Վեհափառը եւ իր շքախումբը, առաջնորդութեամբ Հայ Կեդրոնի ղեկավարներուն, ծանօթացաւ Հայ Կեդրոնի բոլոր բաժնումներուն:

*
**

Ուրբաթ, 31 Հոկտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ իր շքախումբին, Միսիսոկայի մէջ այցելեց Անգլիքան եկեղեցւոյ Եպիսկոպոսաց ժողովին, ուր հանդիպում ունեցաւ Archbishop Michael Peersին հետ, իսկ կէսօրէ ետք ժամը 1:30ին՝ Թորոնթոյի քաղաքամէջ՝ Հռովմէական Կաթողիկէ առաջնորդարան եւ հանդիպում ունեցաւ Archbishop Ambrozikի հետ:

Վերոյիշեալ հանդիպումներու ընթացքին խօսակցութեան նիւթ դարձան Հայաստանեայց եկեղեցւոյ եւ Անգլիքան եւ Կաթողիկէ եկեղեցիներու յարաբերութիւնները, ինչպէս նաեւ Միջազգային Միջ-Եկեղեցական յարաբերութիւնները:

**ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՇԷՆՔԻՆ**

Ուրբաթ, կէսօրէ ետք ժամը 3:15ին, Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա., ընկերացութեամբ Մեսրոպ, Սմբատ, եւ Խաժակ Սրբազաններու, Շահէ Ծ. Վարդապետի եւ Վեհափառի գաւազանակիր Խորէն Վրդ. Տողրամաճեանի, պաշտօնական այցելութիւն մը տուաւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ նորակառոյց շէնքին, ուր դիմաւորուեցաւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ գերապատուելի Եսայի Սարմազեանի, շէնքի շինութեան յանձնախումբի անդամներուն եւ հոծ թիւով հաւատացեալներու:

Շէնքի շինութեան յանձնախումբի ատենապետ պրն. Մկրտիչ Ֆերմանեան, շինութեան վերաբերեալ տեղեկութիւններ եւ ծանօթութիւններ փոխանցեց Վեհափառ Հայրապետին: Եկեղեցւոյ եւ յարակից սրահներու կատարած այցելութիւններէ ետք, խմբուած ազգայիններու ներկայութեամբ, Վերապատուելի Եսայի Սարմազեան բարի գալուստի խօսք արտասանեց, մեծապէս գնահատելով Վեհափառ Հայրապետին եւ իր շքախումբին կողմէ տրուած այս այցելութիւնը, եւ Վեհափառ՝ որպէս Մայր Եկեղեցւոյ Կաթողիկոս՝ նորակառոյց եկեղեցւոյ բաշխած օրհնութիւնը աւելի պիտի սրբացնէ եկեղեցին, որպէս աղօթավայր: Ապա, Վերապատուելին անդրադարձաւ Հայ Աւետարանական եկեղեցւոյ եւ Հայաստանեայց Մայր Եկեղեցւոյ դրական գործակցութեան եւ մաղթեց, որ այդ յարաբերութիւնները ապագային աւելի կը սերտանան:

Վեհափառ Հայրապետը խօսք առնելով իր յատուկ ուրախութիւնը եւ շնորհակալութիւնը յայտնեց նորակառոյց եկեղեցի այցելելու իրեն եղած հրաւերին եւ Վերապատուելիի քաղցրութեամբ լեցուն խօսքերուն համար, յատկապէս երկու եկեղեցիներու միջեւ հաւատքի միասնականութեան համար: «Հաւատքը նոյնն է», ըսաւ Վեհափառը, «մենք նոյն ժողովուրդի գաւակներն ենք, Հայ Աւետարանական, Հայ Կաթողիկէ, Հայ Առաքելական, Հայ հաւատքն ու հայրենիքը ունեցող ժողովուրդի գաւակներն ենք»:

Վեհափառը գնահատեց Վեր. Սարմազեանի կարողութիւնները՝ անոր հետ գործակցած ըլլալով Լիբանանի մէջ, եւ, բախտաւոր նկատեց Հայ Աւետարանական համայնքը, նման փորձարու հովիւ մը ունենալուն համար:

Ապա, Վեհափառը Վերապատուելիին փոխանցեց խաչ մը եւ Անիի Մայր Տաճարէն բերուած քար մը: Առաջնորդ Մեսրոպ Սրբազան կարգաց հետեւեալ պաշտօնական գրութիւնը եւ յանձնեց Վերապատուելիին:

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ
ԵՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾՕՐՅՆԵԱԼ ԵՒ ՈՒՐԱԽ ԱՌԻԹՈՎ

Հայաստանեայց Առաքելական Մայր Եկեղեցւոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կողմէ՝ հաստատուած մեր քոյր եկեղեցւոյ հիմերուն մէջ, այս դոյզն յիշատակի հաչն ու Անիի մայր տաճարէն բերուած հայկական քարի բեկորը թող շաղախուի ձեր ճիգին եւ աղօթքներուն:

Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ
31 Յոկտեմբեր 1997, Թորոնթօ

Այս առիթով, Հայ Աւետարանական եկեղեցւոյ վարչութեան անունով Վերապատուելի Սարմազեան Վեհափառին նուիրեց յուշատախտակ մը՝ եկեղեցւոյ նկարով եւ Վեհափառի այցելութիւնը յիշատակող գրութեամբ:



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.
Սրբազնագոյն Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ

Ուրբաթ, 31 Հոկտեմբեր երեկոյեան ժամը 8ին, Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ «Յ. Յովնանեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ծանօթացումի հանդիպում՝ Վեհափառ Հայրապետի եւ Հայ Կեդրոնի յարկէն ներս գործող միութիւններու, կազմակերպութիւններու եւ յանձնախումբերու կազմերուն հետ, խօսք առաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ հոգեշնորհ Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, եւ, բացատրութիւններ տուաւ հաւաքոյթի նպատակին շուրջ:

Ապա, խօսք առաւ հոգաբարձութեան ատենապետ պրն. Էտի Ուրֆալեան եւ իր բարի գալուստի խօսքերէն ետք հրաւիրեց Հայ Կեդրոնի նախագահ պրն. Գրիգոր Շիթիլեանը, Վեհափառին ներկայացնելու համար Հայ Կեդրոնի յարկին ներս գործող միութիւններու եւ կազմակերպութիւններու անդամները:

Պրն. Շիթիլեան, հերթով հրաւիրեց միութիւններու եւ կազմակերպու-
թիւններու ատենապետներն ու պատասխանատուները՝ որպէսզի ներկայացնեն
իրենց վարչութիւններու եւ յանձնախումբերու անդամները:

Անդամներու ծանօթացումէն ետք խօսք առաւ Վեհափառ Հայրապետը
եւ իր գնահատանքը յայտնեց ստեղծուած դրական եւ սքանչելի երեւոյթին,
այդքան մեծ թիւով անձերու միութենական, կազմակերպական եւ այլ մար-
միներու մէջ կամաւոր ծառայութեան կոչուած անձերու ներկայութեան, ո-
րոնք իրենց գործը եւ հանգիստը զոհաբերելով կը ծառայեն ազգային այլա-
զան հաստատութիւններու եւ մարմիներու մէջ, իրենց նպաստը բերելով հա-
յապահապանման նուիրական գործին:

«Անձ մը արժէք չէ իր ունեցածով». աւելցուց Վեհափառը, «այլ՝ իր տը-
ւածով: Եթէ դրամ ունի եւ ազգին չիտար, այդ դրամը անարժէք է: Արժէքը
այն է, որ ինչ որ կու տաք ուրիշին՝ ձեր ճակատի քրտինքով շահած դրամը, ձեր
ժամանակը եւ ծառայութիւնը: Պէտք է տանք, ինչպէս Աւետարանը այրի կնոջ
իր ունեցած լուման նուիրաբերելը: Մենք ալ մեր ունեցածէն ազգի գանձանա-
կին մէջ եթէ չդնենք՝ ոչինչ ենք: Մենք գործող ձեռքերու պէտք ունինք եւ ո՛չ
թէ խօսողներու: Խօսքը կը թռչի, գործը կը մնայ: Որքան խօսողներու թիւը
պակասի, եւ գործողներու թիւը աւելնայ, մենք այնքան զօրաւոր կ'ըլլանք: Հա-
մախմբուինք, գործակցինք եւ միասնաբար առողջ պահենք գաղութի բոլոր
հաստատութիւնները: Իմ գնահատանքը ձեր բոլորի»:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿ

Ուրբաթ, 31 Հոկտեմբեր 1997, երեկոյեան ժամը 9:30ին, Հայ Կեդրոնի
սրահին մէջ տեղի ունեցաւ մշակութային երեկոյ, մասնակցութեամբ Համագ-
գայինի «Գոուսան», Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Սրբազան Համերգ» եւ
Հ.Օ.Մ.ի Ամենօրեայ Վարժարանի «Կռունկ» աշակերտական երգչախումբե-
րուն, ներկայութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ին, իր շքա-
խումբին եւ շուրջ 1200 հայորդիներու:

Համագգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Վարչու-
թեան ատենապետ Ժիրայր Փոլ-Փիթըր խօսք առնելով ամփոփ ծանօթութիւն-
ներ տուաւ «Գոուսան» երգչախումբի եւ անոր ղեկավար Էդիկ Յովսէփեանի
մասին: Ապա, երգչախումբի անդամները բեմ գալով, դաշնամուրի ընկերակ-
ցութեամբ Վանիկ Յովհաննէսեանի հերթականօրէն երգեցին «Կիլիկիա», «Ով
Հայոց Աստուած», «Կռունկներ» եւ «Մուսա Լեռ» երգերը:

Ապա, տաղանդաւոր երգիչ Գարեգին Օտապաշեան, դաշնամուրով ըն-
կերակցութեամբ Տոքթ. Արաքսի Ալթունեանի երգեց «Մայր Արաքսի Ափե-
րով» եւ «Արփա Սեւան» երգերը:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Սրբազան Համերգ» երգչախումբի յանձ-
նախումբի ատենապետուհի Ռիթա Նիկոլեան, բեմ գալով ներկայացուց երգ-
չախումբը եւ կարգ մը ծանօթութիւններ տուաւ անոր կազմութեան եւ գոր-
ծունէութեան շուրջ:

Երգչախումբը, ղեկավարութեամբ դպրապետ պրն. Վարուժան Նիկոլ-

եանի եւ դաշնամուրով ընկերակցութեամբ Յորէր Աղամանուկեանի եւ Հրաչ Շեհիրեանի երգեցին «Օրհներգ Հայրապետական», «Ի Քէն Հայցեմք», «Գութաներգ», «Հօյ Նար», «Պահապան Ամենայնի», եւ «Երջանկութեան աղբիւր» երգերն ու շարականներ:

Ապա, միջազգային մրցանակներու արժանացած շնորհալի երգչուհի Իգապէլ Պայրազտարեան (Ս.Աստուածածին եկեղեցւոյ դպրաց դասի փոխ դպրապետ), ընկերակցութեամբ Ժասմինա Վիւքիւրովիչի երգեց՝ «Յորժամ» շարականը եւ «Լուսաւորչի Կանթեղ» երգը:

Հ.Օ.Մ.ի Ամենօրեայ Վարժարանի «Կուռնկ» երգչախումբի մասին խօսեցաւ Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» մասնաճիւղի ատենապետուհի Արփի Աճէմեան, որ նախ անդրադարձաւ Հ.Օ.Մ.ի մշակութային եւ դպրոցասիրական առաքելութեան, եւ, վարժարանի կատարած դերին, գաղութի նոր սերունդին հայեցի դաստիարակութիւն եւ ուսում ջամբելով:

Վարժարանի 75 հոգինոց աշակերտական «Կուռնկ» երգչախումբը երգեց՝ «Որք Զարդարեցին», «Լեռներ Հայրենի», «Ախպերս ու Ես», «Սերովբէներ, Քերովբէներ» շարականներն ու երգերը:

Հոգեշնորհ Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան խօսք առնելով, հրաւիրեց Վեհափառ Հայրապետը իր պատգամը տալու երգչախումբի անդամներուն եւ ժողովուրդին:

Վեհափառը խօսք առնելով մեծապէս գնահատեց երեք խումբերու ղեկավարները, դաշնամուրով հետեւողները եւ երգչախումբերու անդամները, որոնք իրենց ելոյթով, երգուած շարականներու եւ երգերու սքանչելի մեկնաբանութեամբ խորապէս տպաւորեցին ներկաները:

Մշակութային ձեռնարկը փակուեցաւ ժողովուրդին կողմէ երգուած «Կիլիկիա» երգով:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՆԻԱԿԱՐԱ ՖՈԼԶԻ Ս. ՅԱԿՈԲ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Շաբաթ, 1 Նոյեմբեր 1997, առաւօտեան ժամը 9ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը եւ իր շքախումբը մեկնեցան դէպի Մ. Նահանգներու Նիակարա Ֆոլզ քաղաքի Ս. Յակոբ Հայց. Առաքելական եկեղեցի, ուր դիմաւորուեցան եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամներուն, ժողովուրդին եւ պետական անձնաւորութիւններու կողմէ:

Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ «Կանոնական Աղօթք»էն եւ եկեղեցական արարողութենէն ետք, Վեհափառ Հայրապետը իր հայրական պատգամը փոխանցեց ժողովուրդին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Շաբաթ, 1 Նոյեմբեր 1997, կէսօրէ ետք ժամը 5ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ, Վեհափառը, ընկերակցութեամբ իր շքա-

խումբին, հանդիպում ունեցաւ Թորոնթոնի երիտասարդութեան հետ:

Հարիւր-յիսունէ աւելի երիտասարդներ ընդառաջացած էին իրենց եղած հրաւերին:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հ.Յ.Գ. Գանատայի երիտասարդական Միութեան «Միմոն Ձաւարեան» մասնաճիւղի վարչութեանն Հրաչ Ճապրայեան, որ իր բացման խօսքէն ետք, հրաւիրեց Վեհափառը իր պատգամը տալու երիտասարդութեան:

Վեհափառը խօսք առնելով իր ուրախութիւնը յայտնեց, որ հանդիպում կ'ունենայ երիտասարդութեան հետ: Ան ըսաւ, թէ իր հովուապետական այցելութեան ընթացքին, Առաջնորդ Սրբազան Հօր կարգադրութեամբ հանդիպումներ ունեցած է երիտասարդութեան հետ եւ տեղեկացած զանոնք հետաքրքրող հարցերուն եւ մտահոգութիւններուն:

Խօսքը ուղղելով երիտասարդութեան հրաւիրեց զանոնք մասնակցիլ ազգային ու եկեղեցական գործունէութիւններու՝ մէկ ազգ եւ մէկ հայրենիք հասկացողութեամբ, որովհետեւ, «դուք, ո՛չ միայն ապագան էք, այլ՝ ներկան: Դուք մեր կեանքին անբաժան մասն էք: Ինչ կ'արժէ Հայ ըլլալ հեռու մեր կեանքէն: Անոնք որոնք հայկական կեանքէն հեռու կ'ապրին պէտք է վերադառնան իրենց արմատներուն: Զգոյշ պէտք է ըլլաք նորութիւններ բերելու մտադրութեամբ քանդելու մեր ավանդութիւնները, որոնք մեր պապերէն կու գան»:

Հանդիպման վերջաւորութեան երիտասարդ Կարօ Սարգիսեան Վեհափառին նուիրեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ ոսկեայ մանրանկարը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՄՔԵՐՈՒ ՀԵՏ

Շաբաթ, 1 Նոյեմբեր 1997, երեկոյեան ժամը 7ին, Վեհափառը հանդիպում մը ունեցաւ գանատական քաղաքական դէմքերու հետ, Հայ Կեդրոնի «Յ. Մանուկեան» գրադարանի սրահին մէջ,

Սոյն հանդիպումին ներկայ եղան Գանատայի Առեւտուրի նախարար Տէյվիտ Քոլոնէթ, Դաշնակցային Խորհրդարանի անդամներ Ճիմ Փիթըրսըն, Տէրէք Լի, Սարգիս Ասատուրեան, Էլիանոր Քափլան, Օնթարիոյ նահանգի խորհրդարանի անդամներ Կէրի Ֆիլիփս, Ճիմ Պրատուն, Օնթարիոյ Խորհրդարանի նախկին նախագահ Տէյվիտ Ժուրնըր, Լիբանանի պատուոյ հիւպատոս Նազեմ Քատրի, եւ այլ պաշտօնատարներ:

Խօսք առաւ օրուան հանդիսավար Մարիա Թիթիգեան եւ հրաւիրեց Տէյվիտ Քոլոնէթը իր սրտի խօսքը ըսելու այս առիթով, Պր. Քոլանէթ Վեհափառ հօր ուղղուած բարի գալուստի խօսքերէն ետք, գնահատելով արտայայտուեցաւ Գանատայի հայութեան մասին, որոնք իր թանկագին ներդրումը բերած են եւ կը բերեն Գանատայի բարգաւաճման համար:

Դաշնակցային խորհուրդի անդամ պրն. Սարգիս Ասատուրեան խօսք առնելով, իր, գանատական կառավարութեան անունով բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին եւ կարգաց Վարչապետ Ժան Քրեթիէնի բարի գալուստեան պատգամը:

Խօսք առաւ նաեւ Օնթարիոյի Խորհրդարանի անդամ Ճիմ Պրատն եւ Վեհափառին փոխանցեց Օնթարիոյի Վարչապետ Հարիսի ողջոյնները:

Վեհափառը խօսք առաւ եւ իր շնորհակալութիւնները յայտնեց իրեն հանդէպ ցոյց տրուած յարգանքէն եւ խօսք առնող պետական անձնաւորութիւններուն: «Սակայն», ըսաւ Վեհափառը, «Հայ Ժողովուրդը հոս եւ աշխարհի զանազան երկիրներուն մէջ իր քաղաքացիական պարտականութիւնները լաւապէս կը կատարէ եւ օգտակար կը հանդիսանայ այդ երկիրներու տնտեսութեան եւ բարգաւաճման»: Խօսքը ուղղելով յատկապէս Գանատայի կառավարութեան, Վեհափառը ըսաւ. «Հայ Ժողովուրդը իր կամքով չհեռացաւ իր հայրենիքէն: Այդ պատահեցաւ 1915ին, Հայ Ժողովուրդին դէմ Օսմանեան թուրքերու կողմէ գործադրուած ցեղասպանութեան հետեւանքով: Սկիզբը որպէս գաղթական եկած հայութիւնը այսօր դարձած է Գանատացի եւ իր լաւագոյնը կու տայ այս երկիրին հգորացման: Գանատան, որ աշխարհի ժողովրդավար, արդարադատ, խաղաղապահ, խաղաղասէր երկիրներէն մէկն է, պէտք է իր ազդեցութիւնը բանեցնէ եւ օգտակար հանդիսանայ Ղարաբաղի հարցի արդար լուծման, միեւնոյն ատեն նիւթապէս եւ բարոյապէս օգնելով Հայաստանի եւ Ղարաբաղի բարգաւաճման»:

Հանդիպման վերջաւորութեան տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Ի պատիւ Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհազարդ Կաթողիկոս Արամ Ա-ի կազմակերպուած ճաշկերոյթը տեղի ունեցաւ Շաբաթ, 1 Նոյեմբեր 1997, երեկոյեան ժամը 8ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ, որուն ներկայ գտնուեցան շուրջ 600 ազգայիններ:

Այս առթիւ սրահէն մուտք գործող ազգայիններուն տրուեցաւ Վեհափառ Հայրապետի Թորոնթօ այցելութեան առթիւ պատրաստուած գրքոյկը, ինչպէս նաեւ Վեհափառին Մ. Նահանգներու Արեւելեան Թեմին եւ Գանատայի հօտին հովուապետական այցելութեան առթիւ Առաջնորդարանի կողմէ հրատարակուած գրքոյկը:

Ժամը 8:15ին, վեհափառը եւ իր շքախումբը, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն ընդմէջէն յառաջանալով մուտք գործեցին Հայ Կեդրոնի սրահը:

Օրուան հանդիսավարը Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ պրն. Էտի Ուրֆալեանի հրաւերով, Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Արք. Աշճեան կատարեց ճաշի սեղանի օրհնութիւնը:

Ճաշի ընթացքին պրն. Վանիկ Յովհաննէսեան, դաշնամուրով նուագեց թեթեւ երաժշտութիւն:

Ճաշի սպասարկութիւնէն ետք, պրն. Ուրֆալեան հանդէս եկաւ բարի գալուստ խօսքով, ապա, ներկայացուց Պատուոյ Սեղանի անդամները:

Բարի գալուստն եւ խօսքով հանդէս եկաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ հոգեշնորհ Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, ապա, խօսք տրուեցաւ Գանատայի դաշնակցային խորհուրդի անդամ պրն. Սարգիս Ասատուրեան:

Հոչակաւոր երգչուհի Իզապէլ Պայրազտարեան երգեց երկու երգ:

Առաջնորդ Մեսրոպ Սրբազան խօսք առնելով, նախ ներկայացուց Վեհափառ Հայրապետը, տալով անոր կենսագրական ամփոփ գիծերը, ապա, հերթականօրէն բեմ հրաւիրեց պրն. Վարուժան Նիկոլեանը, Վեհափառը զայն պատուեց Ս. Գրիգոր Նարեկացիի «Մարիամ Ողբերգութեան» հատորով, պրն. Սարգար Շարապխանեանը՝ Ս. Մեսրոպ Մաշտոց Շքանշանով, Սարգիս Ասատուրեանը՝ Առաջնորդարանի Մետալով, եւ տիկին Լաթիֆէ Սարգիսեանը՝ «Կիլիկեան Իշխանուհի» շքանշանով:

Ապա Վեհափառը խօսք առնելով անդրադարձաւ իր կատարած հովուապետական այցելութիւններուն եւ իր հայրական պատգամ տալու ներկայ ժողովուրդին, մանաւանդ հրաւիրելով զանոնք մէկ ազգ, մէկ հայրենիք եւ մէկ եկեղեցի բնաբանով օգնել եւ նեցուկ կանգնիլ Հայաստանին եւ Ղարաբաղին:

Ճաշկերոյթի վերջաւորութեան, պրն. Յարութիւն Շիթիլեան, Հայ Կեդրոնի անունով Վեհափառին նուիրեց Հայ Կեդրոնի շրջափակին մէջ գտնուող Եղեռնի յուշարձանին Մանրանկարը, որ յղացուած եւ շինուած է հոչակաւոր քանդակագործ Արթօ Զագմազեանի կողմէ, որպէսզի Վեհափառը զայն դնէ իր աշխատասենեակին մէջ եւ միշտ յիշէ Թորոնթոյի Հայ Գաղութը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ

Կիրակի, 2 Նոյեմբեր 1997, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ժամերգութիւնը սկսաւ կէսօրէ առաջ ժամը 10:30ին:

Ժամը 11ին եկեղեցին ամբողջութեամբ լեցուած էր Հայ հաւատացեալներով: Հայ Կեդրոնի սրահին մէջ հաստատուած մեծ պաստառի վրայ եկեղեցիէն դուրս գտնուող ժողովուրդին առիթ տրուած էր հետեւելու ժամերգութիւն:

Վեհափառը, Սմբատ եւ Խաժակ Սրբազանները պատարագի զգեստներով, Շահէ Մ. Վարդապետի., Խորէն Վարդապետի, Վարանդ Քահանայի եւ Մեսրոպ Սրբազանի ընկերակցութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկառտներու պատուոյ կեցութեամբ մուտք գործեցին եկեղեցի, ուր տեղ գրաւած էին նաեւ այլադաւան եօթը համայնքներու եկեղեցականները:

Պատարագի ընթացքին կատարուեցան եկեղեցական նորաշէն մկրտարանի Զուարթնոց խորանի Օծումը: Վեհափառին կողմի փոխանցուած Միւռնոնով, Խաժակ Սրբազան օծեց Մկտարանը, իսկ Սմբատ Սրբազան՝ Զուարթնոց Խորանը:

«Հայր Մեր»էն առաջ Վեհափառ Հայրապետ խօսեցաւ լուսաւոր քարոզմը, բնաբան ընտրելով Յիսուսի «Ես եմ Լոյսը Աշխարհին» խօսքը:

Վեհափառը, իրենց յատուկ պերճախօսութեամբ եւ հոգետորական լեզուով, «Աստուած Լոյսի Աղբիւր է» բացատրութեամբ շեշտեց կարեւորութիւնը Լոյսին, որուն շաւիղէն քալեցին մեր նախահայրերը քրիստոնէութեան առաջին դարէն սկսեալ մինչեւ այսօր, Ս. Մեսրոպներու, Թարգմանիչներու, Նարեկացիներու, Շնորհալիներու եւ մեր բիւրաւոր լուսաւորիչներու գրիչով եւ կեանքով:

*«Լոյսը կը վանէ խաւարը կը լուսաւորէ խաւար մտքերը եւ սիրտերը».
ըսաւ Վեհափառը:*

Պատարագէն ետք, Վեհափառը, ամպհովանիով, դպիրներու կողմէ երգուած շարականներով եւ «Կիլիկիա» երգով, ապա, Հ.Մ.Ը.Մ.ի սկառուներու նուագախումբի նուագներով առաջնորդուեցաւ հանգստարան: Հոգաբարձուներու կողմէ արձակուած աղանիներ իրապէս տպաւորիչ էին: Ապա, Հայ Կեդրոնի գրադարանի սրահին մէջ Վեհափառը հանդիպում ունեցաւ Ս. Պատարագին ներկայ գտնուող օտար եկեղեցականներուն հետ:

Վեհափառ Հայրապետը եւ իր շքախումբը, կէսօրէ ետք ժամը 5:30ին մեկնեցաւ Քեմպրիճ, ուր տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ:

Վեհափառը Թորոնթոյէն դէպի Օթթաուա մեկնեցաւ Երկուշաբթի առաւօտ ժամը 8ին՝ օդային ճամբով, խոր եւ անջնջելի յիշատակներ թողելով Թորոնթոյի հայ ժողովուրդի սիրտերուն մէջ:

**«ՅՈՐԻՉՈՆ»
1997**

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Կազմակերպութեամբ Սուրբ Աստուածածին Հայաստանեայց եկեղեցւոյ, Հինգշաբթի, 17 Օգոստոս 2000, երեկոյեան ժամը 8ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ, ձօնուած Քրիստոնէութեան Հայաստանի պետական կրօնք հռչակման 1700-ամեակին, ներկայութեամբ հոծ թիւով ունկնդիրներու:

Օրուան դասախօսն էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան վարիչ տնօրէն բարձրաշնորհ Տէր Զարեհ Ս. Արքեպիսկոպոս Ազնաւորեան, «Աստուածաշունչ եւ Ժողովուրդ» նիւթով:

Բարի գալուստ եւ բացման խօսքով հանդէս եկաւ Ս. Աստուածածին հայոց Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ գերապատիւ Տէր Շահէ Մ. Վրդ. Փանոսեան եւ ներկայացուց դասախօս Սրբազան Հայրը, տալով անոր կենսագրութեան հակիրճ գիծերը, հետեւեալ ծանօթութիւններով.

«Զարեհ Սրբազան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կեդրոնական Կրօնական Ժողովի ատենապետն է ու վարիչ-տնօրէն Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի: Ան Դպրեմանքի Բարձրագոյն կարգերէն ներս կը դասախօսէ Ս. Գրոց Հին եւ Նոր Կտակարաններու ներածութեան եւ մեկնութեան նիւթերը: Ան նաեւ կը գլխաւորէ արգի հայերէնով Ս. Գրքի Թարգմանութեան աշխատանքները, որուն իբրեւ արդիւնք, արդէն իսկ Նոր Կտակարանի ամենաընտիր Թարգմանական աշխատանքը ամբողջացած է եւ Հին Կտակարանի Թարգմանութիւնն ալ մօտեցած իր աւարտին:

«Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ժամանակակից պատմութեան ընթացքին, յատկանշական անկիւնադարձ կը համարուի Սրբազան Հօր կողմէ գլխաւորած Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին ծաւալած հսկայական աշխատանքը: Արդարեւ, շնորհիւ Սրբազան Հօր հետեւողական ջանքերուն, Ս.Գիւրքը, հայ եկեղեցւոյ հաւատալիքներն ու մեր եկեղեցւոյ հայրերը ժողովուրդին աւելի մատչելի դարձնելու նախանձախնդրութենէն մղուած, Կաթողիկոսարանէն ներս ծաւալած է հսկայական հրատարակչական աշխատանք: Կանոնաւոր յաճախականութեամբ կազմակերպուած ցուցահանդէսներու, լսարանային, Ս. Գրքի սերտողութեան եւ դասախօսական ելոյթներու շնորհիւ, ինչպէս նաեւ աշխարհաբար լեզուով կատարուած եկեղեցական արարողութիւններու միջոցաւ, այսօր, մեր եկեղեցին դարձած է աւելի մատչելի ու սրտամօտիկ բոլորիս համար:

«Հայ եկեղեցականութեան մէջ Զարեհ Սրբազանը, նաեւ ամենահմուտ եւ բանիմաց երաժշտագէտներէն է: Հայ եկեղեցական կալուածէն ներս, ան հրատարակած է ու կը շարունակէ հրատարակել բազմաթիւ մշակումներ եւ յօրինումներ»:

Զարեհ Սրբազան Հայրը խօսք առնելով նախ իր շնորհակալութիւնը յայտնեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Շահէ Մ. Վրդ. Փանոսեանին, որ իրեն առիթ տրուեցաւ Աստուածաշունչի մասին խորհրդածութեան եւ դասախօսական երեկոյ ունենալու: Ապա, Սրբազանը ըսաւ. «Դասախօսութիւն կ'ըսենք, բայց հիմա անմիջականօրէն պիտի անդրադառնանք, իմ ըսելիքս

ընդհանուր ակնարկ մը նետելու փորձ մըն է մեր ամբողջ պատմութեան վրայ, տեսնելու ու մատնանշելու համար կարգ մը երեւոյթներ, որոնք Աստուածաշունչը եւ հայ մարդը իրարու դիմաց կը դրուին: Որովհետեւ Աստուածաշունչի մասին ամբողջական խօսք մը ընել անկարելի է: Դժուար պիտի ըլլայ մէկ երեկոյի ընթացքին: Անոր համար ամբողջ դասախօսական շարք մը տալ անհրաժեշտ է: Այս երեկոյ սակայն, պիտի մատնանշեմ կարգ մը երեւոյթներ, որոնք ես անհրաժեշտ կը նկատեմ, որոնք կրնան ձեզի համար հետաքրքրական ըլլալ: Պիտի փորձեմ ներկայացնել, անկէ ետք ապաւինելու համար ձեր հետաքրքրութեան: Որքան հարցումներ ունիք, ես սիրով պատրաստ եմ պատասխանելու, որքան որ կրնամ:

«Առաջին հերթին երբ Աստուածաշունչը եւ հայ մարդը կ'ըսեմ, անշուշտ տեղէ մը պիտի սկսիմ, Աստուածաշունչը հայ ժողովուրդին հետ, բայց նախաքրիստոնէական ժամանակին ալ կար, երբ նկատի ունենանք անոր այն երեսը որ կը կոչուի Հին Կտակարան: Գիտէք, որ մեր Տիրոջմով, Յիսուս Քրիստոսով սկսաւ Նոր Կտակարանի բաժինը, յետոյ այս երկուքը եկան ամբողջացնելու Քրիստոնէական Աստուածաշունչը, որ այսօր մեր ձեռքերուն մէջ ունինք»:

Սրբազան հայրը, իր դասախօսութեան ընթացքին անդրադարձաւ հետեւեալ նիւթերու մասին.

- Աստուածաշունչը կը բաղկանայ 56 գիրքերէ: 39 գիրքեր Հին Կտակարանին մէջ եւ 27 գիրքեր՝ Նոր Կտակարանին մէջ: Այս գիրքերը տարբեր բովանդակութիւն ունին, իսկական գիրքի ծաւալով գիրքեր են՝ որոնք ունին հին պատմական, բանաստեղծական, իմաստասիրական, եւեւայն: Այս 66 գիրքերէն զատ գոյութիւն ունին 11 ուրիշ գիրքեր, ոչ թէ Նոր Կտակարանին մէջ, Հին Կտակարանին մէջ, որոնք սովորական Աստուածաշունչական հրատարակութեան մէջ չէք գտներ այսօր, ինչպէս օրինակի համար Եզրաս անունով երկու գիրքեր կան, Մակաբայեցիներու պատմութիւնը ներկայացնող երեք առանձին գիրքեր, Իմաստութիւն Սողոմոնի կոչուած շատ հետաքրքրական գիրք մը կայ, Սիրակ կոչուած գիրք մը կայ, որմէ երբեմն մտածումներ կ'առնենք եւ մեր օրացոյցներու տակ ալ կ'անցնենք, եւ տակաւին քանի մը ուրիշ գիրքեր, ինչպէս Ողբ Երեմեայի, եւայլն: Այս 11 գիրքերը, որոնք գրաբար Աստուածաշունչին մէջ կան, այսօր աշխարհաբար միայն կը գտնէք արեւելահայ թարգմանութեամբ, վերջերս հրատարակուած Ս. Էջմիածնի մէջ:
- Քրիստոսով մեր ժողովուրդը ուղղակի կապի մէջ եկաւ Աստուածաշունչին: Բայց ինչպէս սկսաւ այդ կապը: Մենք գիտենք այսօր գրաւոր Աստուածաշունչի մասին: Բուն կապը Աստուածաշունչի եւ հայ ժողովուրդի մէջ եղաւ բերանացի:
- Պենտեկոստէի դրուագին մասին խօսելով Սրբազանը ըսաւ. «Այն օրը երբ Ս. Հոգին իջաւ վերնատուն, ուր 120է աւելի մարդիկ կային, ա-

ուաքեալներ, Աստուածամայրը եւ ուրիշ հետեւորդներ Քրիստոսի եւ այնտեղ սկսան քարոզութեան: Առաջին ոտքի ելլողը Պետրոս Առաքեալը եղաւ, որուն հետեւեցան միւս առաքեալները: Ղուկաս Աւետարանիչ, որ այդ գիրքին հեղինակն է, կը գրէ, թէ այնտեղ ներկայ էին բազմաթիւ ժողովուրդներ, որոնք տարբեր տարբեր լեզուներով կը խօսէին, Գործ Առաքելոց գիրքը կը յիշեցնէ, թէ տարբեր երկիրներէ մարդիկ եկած էին, Միջին Արեւելքէն, Կովկասէն, Եւորոպական Յամաքամասէն: Այդ երկիրներու անունները աշխարհագրական շարքով կ'ընթանան: Այսպէս Պարսկաստանէն, Փոքր Ասիայէն, Կապադովկեայէն եւ այլլըն, հոն Հայաստանի տեղ կը յիշուի Հրէաստան: Եկեղեցւոյ հին հայրապետներէն երկու հոգիներ, Կաթողիկ եկեղեցւոյ եւ Ափրիկեան եկեղեցւոյ պատկանող երկու նշանաւոր հայրապետներ Վերտուգիանոս եւ Օգոստինաս, կ'ըսեն, թէ թէեւ բնագիրին մէջ գրուած է Հրէաստան, սակայն՝ այդ պէտք է ըլլայ Հայաստան եւ սրբագրութիւն կ'առաջարկեն:

- Երկրորդ հանդիպում մը, բերանացի հանդիպում մը Աստուածաշունչի եւ հայ ժողովուրդին, շատ բնական է ենթադրել Առաքելալիներու քարոզչութեամբ եղաւ, երբ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքեալներ, ինչպէս նաեւ ուրիշ առաքեալներ անցան Հայաստանէն: Սակայն այս երկուքը հոն քարոզեցին, ոչ միայն իրենք անմիջականօրէն, այլեւ իրենց հետ եղող թարգմաններու միջոցով:
- Բերանացի ականդութեան յաջորդ հանգրուանը Ս. Գրիգոր Լուսաւորիչն է մեզի համար, որուն 1700-ամեակը մենք շուտով պիտի տօնենք: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կեսարիա էր: Այնտեղ դաստիարակութիւն ըստացաւ եւ Քրիստոնէական հաւատքը իր մէջ ամբարած Տրդատ Թագաւորին հետ միասին եկաւ Հայաստան աշխարհ, անոր յաղթանակներուն մասնակցեցաւ եւ Անահիտ Չաստուածուհիին յարգանք չընծայելով չարչարանքներու ենթարկուեցաւ եւ բանտարկուեցաւ: Երբ կը կարգանք մեր պատմիչները, յատկապէս Ագաթանգեղոսը, այդ պատմութիւնը կը ներկայանցնէ մեզի, կը տեսնենք, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ անգէն եւ անպատրաստ չեկաւ Հայաստան: Ան Կեսարիայէն իր հետ բերաւ իրեն շատ ծանօթ, հաւանաբար մտերիմ գործակից մարդիկ, որոնք Քարոզիչներ էին: Որոնց համար մեր պատմութիւնը կ'ըսէ, թէ անոնք Յունարէն եւ Ասորերէն գիտցող Հայեր էին, որոնք Աւետարանը ժողովուրդին հասկնալի լեզուով կը բացատրէին:
- Մեծն Ներսէս հայրապետի շրջանին, նոր դպրոցներ բացուեցան ուրկէ ելող սերունդները դաստիարակուեցան Աստուածաշունչի քարոզչութեան կատարողներու կողմէ, որոնք կոչուեցան վերծանողներ: Անոնք Աստուածաշունչը, Յունարէն եւ Ասորերէն, գրուածը ուղղակի Հայերէն կը կարգային, այնքան որ ընտելացած էին բնագրին:


- Հինգերորդ դարուն, Ս. Սահակ Կաթողիկոսէն եւ Ս. Մեսրոպ Մաշտոցէն սկսեալ մինչեւ աւագ աշակերտներէն ոմանք, յետագային Աստուածաշունչի թարգմանիչներ պիտի ըլլային: Ս. Մեսրոպի կենսագիրը՝ Կորիւն Սքանչելի կ'ըսէ, թէ հոն ուր որ վերածնողներ չըլլային, հոն Աստուածաշունչը անհասկնալի կը մնար:
- Աստուածաշունչի գրաւոր թարգմանութիւնը գիրերու գիւտէն ետք էր, որ եղաւ. 404 թուկանին, երբ Ս. Մեսրոպ հայերէն տառերը գտաւ, անմիջապէս սկսաւ թարգմանութեան աշխատանքներու լծեց վերածընողները: Անոնք նախ արագ թարգմանութիւն մը կատարեցին: Յետագային 30 տարիներ ետք, Ս. Սահակ Կաթողիկոս, Եգնիկ Կողբացիի հետ միասին եւ հաւանաբար ուրիշ թարգմանիչներու հետ միասին, ստոյգ բնագիրներու վրայ 432-436 թուկաններու միջեւ, մօտաւորապէս չորս տարուան ընթացքին, մեզի ընծայեցին գրաբար Աստուածաշունչը, որ կոչուեցաւ Թագուհի Թարգմանութեանց:
- Մեր եկեղեցւոյ մէջ Աստուածաշունչի ուսուցումը եղաւ յատկապէս եկեղեցական արարողութիւններու ընթացքին, ուր պատարագի ընթացքին կ'ընթերցուին Նոր Կտակարանէն եւ Հին Կտակարանէն գլուխներ:
- Ս. Մեսրոպ Մաշտոց գիրերու գիւտէն ետք, Վաղարշապատի մէջ բացաւ Վարդապետարան, ուր կը յաճախէին նշանաւոր անձերու զաւակներ: Այս Վարդապետարանները դպրոցներ էին, որոնց նմանը ապագային բացուեցան Հայաստանի բոլոր նահանգներու մէջ: Նախարարութիւններու ընտանիքներու մէջ յատուկ դաստիարակներ կ'ուսուցանէին Աստուածաշունչը:
- Մեր կարգ մը թագաւորներ ինչպէս Անիի վերջին թագաւորը Գագիկ Ապասեան խորացած էին Աստուաշնչական գիտելիքներու: Շատեր Աստուածաշունչի կարգ մը մասերը անգիր գիտէին:
- Աստուածաշունչի առաջին տպագրութիւնը տեղի ունեցաւ 1766էն ըսկըսեալ: Այնուհետեւ բազմաթիւ հրատարակութիւններ եղան Աստուածաշնչական ընկերութիւններու կողմէ, Ս. Էջմիածնի մէջ 1975ին հրատարակուեցաւ Վազգէն Կաթողիկոսի օրով: Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը հրատարակեց Նոր Կտակարան եւ ընթացքի մէջ է Հին Կտակարանի աշխարհաբար թարգմանութիւնը:
- Հայ ժողովուրդին կրօնական աւանդութիւններուն սպառնացող աղանդաւորներուն դէմ պայքարելու համար, մենք ալ մեր զաւակներուն պէտք է սորվեցնենք կրօնագիտութիւն, կատարենք Աստուածաշունչի սերտողութիւններ: 1700-ամեակը պէտք է առիթը ըլլայ հոգեւոր վե-

րակերտման, վերաթարմացման եւ մեր Քրիստոնէական արմատներուն փնտռութիւն՝ Աստուածաշունչին մէջ:

Սրբազան հօր սքանչելի եւ բովանդակալից դասախօսութենէն ետք, եղաւ բազմաթիւ հարցումներ, որոնց լայնօրէն բացատրեց եւ պատասխանեց Սրբազանը:

Դասախօսութենէն ետք, եկեղեցւոյ Յովնանեան սրահին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, ու Սրբազան հօր հետ շարունակուեցան կրօնական հարցերու շուրջ խորհրդակցութիւնները:

«ՅՈՐԻՉՈՆ»
2000



Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցին

«ՊԱՏԻՒՍ ԱՐԺԱՆԱՒՈՐԱՅ»

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կազմութեան եւ եկեղեցւոյ շինութեան առթիւ եւ այլ առիթներով, մեծագումար նւիրատուութիւններ եղած են, սակայն արդարացի զանազան պատճառներով, նուիրատուներուն անունները կարելի չէր եղած յստակ ցուցատախտակներով գետեղել եկեղեցւոյ մէջ: Վերջին քանի մը ամիսներու ընթացքին, եկեղեցւոյ հովիւ Գերապատիւ Տէր Շահէ Մ. Վրդ. Փանոսեանի, հոգաբարձութեան եւ Պր. Յակոբ Ճանպազեանի ջանքերով, բաւական դժուարին այս աշխատանքը ամբողջացած ըլլալով, եկեղեցւոյ հովիւն ու հոգաբարձութիւնը որոշում առած են կատարել նուիրատուութիւններու ցուցատախտակներու օրհնութիւն, որ տեղի ունեցաւ Կիրակի, 21 Հոկտեմբեր 2001, յաւարտ Ս. Պատարագի, ժողովըրդային լայն մասնակցութեամբ, եկեղեցւոյ գաւիթին մէջ, ուր գետեղուած էին ցուցատախտակները, նախագահութեամբ Գանատայի Առաջնորդական Փոխանորդ Գերաշնորհ Տէր Խաթակ Ս. Եպիսկոպոս Յակոբեանի եւ մասնակցութեամբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Շահէ Մ. Վրդ. Փանոսեանի եւ դպրաց դասի անդամներուն:

Ցուցատախտակներու հաստատման եւ օրհնութեան առթիւ, եկեղեցւոյ հովիւն ու հոգաբարձութիւնը որոշում առած էին ժողովրդային երկու ձեռնարկներով պատուել եկեղեցւոյ նիւթական եւ բարոյական օժանդակութիւն եւ նուիրատուութիւն կատարած ազգայինները, որոնցմէ առաջինը՝ եկեղեցւոյ նիւթաբարոյական լայն օժանդակութիւն կատարած ազգայիններու, տեղի ունեցաւ Շաբաթ, 20 Հոկտեմբեր 2001, երեկոյեան ժամը Տին, Հայ Կեդրոնի սրահին մէջ, նախագահութեամբ Գանատայի Առաջնորդական Փոխանորդ Գերաշնորհ Տէր Խաթակ Եպսկ. Յակոբեանի եւ ներկայութեամբ եկեղեցւոյ հովիւ Գերապատիւ Տէր Շահէ Մ. Վրդ. Փանոսեանի, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ընկ. Յակոբ Ճանպազեանի, Թորոնթոյի «Սողոմոն Թէչլիրեան» Կոմիտէի հերթապահ Ընկեր Վարուժան Պասթաճեանի, Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան շրջանի թեմի Ազգային Վարչութեան անդամ Ընկեր Յակոբ Թաշճեանի, Գանատայի Առաջնորդական փոխանորդութեան Գործադիր Խորհուրդի ներկայացուցիչ Ընկեր Երուանդ Շահինեանի, Հ.Օ.Մ.-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ, Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչ, ինչպէս նաեւ Հայ Կեդրոնի յարկին տակ գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն եւ 300 ազգայիններու:

Գանատայի եւ Հայաստանի պետական օրհներգներու ունկնդրութեան էտք, ճաշի սեղաններու օրհնութիւնը կատարեց Գերաշնորհ Տէր Խաթակ Եպսկ. Յակոբեան, ապա, տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն:

Ճաշկերոյթէն ետք խօսք առաւ օրուան հանդիսավար, հոգաբարձութեան Ատենապետ Ընկեր Ռաֆֆի Տէր Պողոսեան եւ իր բարի գալուստի խօսքերէն ետք, պատմականը ըրաւ Թորոնթոյի Հայ գաղութի կազմութեան, Հայ Կեդրոններու դնման եւ շինութեան, ինչպէս նաեւ Հայ դպրոցի եւ եկեղեցիի

չինութեան, շնորհիւ Թորոնթոյի հայ ժողովուրդի հաւատքին եւ նուիրումին, գոհաբերութեան եւ ներդրումին:

Ընկեր Տէր Պօղոսեան շեշտեց հոգաբարձութեան օրին առած որոշումը, աւելի լայն տարողութեամբ կատարել ճաշկերոյթ-հաւաքոյթը, սակայն նուիրատուներուն ցանկին նայելով յայտնի եղաւ, որ 1200 անուն գոյութիւն ունէին, ոմանք նիւթապէս մասնակցած էին աշխատանքներուն եւ անոնց կարգին շատ մը ուրիշներ, որոնք արժանի էին հրաւիրուելու: Այդ պատճառով անկարելի էր ընդունիլ 1200 գոյգեր: Նուիրատուները պատուելու աշխատանքը եւ ձեռնարկը, Հայաստանի Քրիստոնէացման 1700-ամեակին առթիւ կազմակերպելով, ձեռնարկը կը ստանայ բարոյական խոր իմաստ:

Հայ Կեդրոնի խօսքով հանդէս եկաւ «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէի հերթապահ Ընկեր Վարուժան Պասթաճեան, որ Հայ Կեդրոնին անունով շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսք արտասանեց եկեղեցւոյ շինութեան եւ բարեգարգման մասնակցող նուիրատուներուն: Ընկերը շեշտեց, այն իրականութիւնը, որ Հայ Կեդրոնի դպրոցի եւ եկեղեցւոյ շինութեան ընթացքին չէ վստահուած մեծ նուիրատուներու: Հայ ժողովուրդը փաստած է իր նւերաբերումը ազգային հաստատութիւններուն եւ ներկայիս, Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանը երկրորդական բաժնով օժտելու համար առաջին քայլը առնուած է արդէն եւ վարժարանը օժտուած է երկրորդականի Զրդ կարգով եւ տարուէ-տարի դասարան մը աւելցնելով ունենալ երկրորդական վարժարան եւ այդ նպատակով Հայ Կեդրոնի գնած նոր հողաշերտին վրայ երկրորդական վարժարանի շէնքի շինութիւնը կը նախատեսուի սկսիլ այս տարուան վերջաւորութեան եւ գործածութեան պատրաստ ընել 2002ի աշնան:

Խօսք առաւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, որ ի միջի այլոց ըսաւ. «Այս երեկոն վկայութիւնն է, որ այս գաղութը հաւաքաբար իր կարողութեան համաձայն, ազգային ծրագիրներու սահմաններու մէջ կարողացած է ձեռք բերել շատ բան: Ինչ կը վերաբերի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ այս հսկայ կառոյցը արդիւնքն է մեր հաւաքական քրտինքին, արդիւնքն է մեր հաւատքին եւ սպասումներուն: Վստահաբար, երբ եկեղեցւոյ հիմերը դըրլեցան եւ ամէն մարդ իր արդար լուծման փութացուց բաժին մը բերելով եկեղեցւոյ շինարարական ծրագրէն ներս, այդ օրերուն, խոստումներ եղան, թէ պատշաճօրէն այդ նուիրատուութեանց դիմաց, հովիւ եւ հոգաբարձութիւն պաշտօնական ծանուցում պիտի կատարեն: Պարզապէս պահը ուշացաւ եւ այդքան տարիներ ետք, պատշաճ նկատեցինք, որ այդ խոստումը նաեւ յարգուի, ինչպէս կիսատ մնացած կարգ մը այլ ծրագիրներ: Եւ այս երեկոյ հաւաքուած ենք, որպէսզի հոգաբարձութեան եւ հոգեւոր հովիւին անունով շնորհակալութիւն ըսենք ձեր բոլորին, որ վստահեցաք մեզի եւ ձեր եկեղեցւոյ նկատմամբ գտնուեցաք այնքան առատաձեռն:

«Աստուած վարձահատոյց ըլլայ ձեզի եւ ձեր հաւատքին եւ սպասումներուն: Նոր ծրագիրներ կան, որոնց համար բոլորս ալ վստահաբար կ'ըսենք պատրաստ ենք: Պատրաստ ենք մարտահրաւէրին, անոնք հաւաքական մեր ապագային համար, մեր ազգային ինքնութեան համար եւ մեր գոյութեան համար է որ կ'ըլլան մեր հաւաքական բոլոր աշխատանքները եւ կ'անդրադառն-

նանք, որ իբրեւ ժողովուրդ մենք, շինարար ժողովուրդ ենք, ուր ալ գտնուիք, ինչ երկնակամարին տակ ալ ապրինք: Այս երեկոն առիթ մըն է նաեւ ձեզի ըսելու, որ յաջորդ ծրագիրը եկեղեցւոյ պատուհանները քրիստոնէական յատուկ գունաւոր նկարներով օժտելն է: Այս խոստումը տակաւին չէ ամբողջացած եւ հոգաբարձութիւն եւ հովիւ կը մնան յանձնառու եւ ապաւինած ենք ձեզի»:

Հայր Սուրբին խօսքէն ետք, հոգաբարձութեան ատենապետը բեմ հրաւիրեց Գերապատիւ Տէր Շահէ Մ. Վրդ. Փանոսեանը եւ հոգաբարձութեան անունով անոր նուիրեց «Շուշի քաղաքէն տեսարան մը» իւղանկար մը, գործարուեստագէտ Յովիկ Գասպարեանի, առ ի գնահատանք եկեղեցւոյ բարեգարդման եւ մուրհակներու շրջեցման անոր անսահման նուիրաբերումին:

Խօսք առաւ նաեւ Գանատայի Առաջնորդական Փոխանորդ Գերաշնորհ Տէր Խաթակ Ս. Եպսկ. Յակոբեան եւ ըսաւ. «Այսօր, մեր հայու աւանդութեան համաձայն պատմութիւն կերտեցինք: Այդպէս ըրած են մեր հայրերը: Երբ կ'երթանք մեր չքնաղ հայրենիքի եկեղեցիները, հոն պատերուն վրայ կը գրանենք մեծաւորին եւ համեստին անունը, որ այդ եկեղեցւոյ կերտումին իր ներդրումը կատարած է եւ պատմութիւնը կը խօսի այդ անուններուն ընդմէջէն: Կ'ապրի պատմութիւնը այդ անուններուն ընդմէջէն: Այսօր, այս հեռաւոր ակերտուն վրայ, մենք մեր հայրերուն աւանդութեամբը դարձեալ պատմութիւն արձանագրեցինք եւ յաջորդ սերունդներ եւ նոյնիսկ եթէ օր մը, այնպիսի գեղեցիկ օր մը ըլլայ, որ բոլոր հայութիւնը եւ հայերնիքի հողին վրայ ամփոփուի, մարդիկ պիտի գան եւ ըսեն. հոստեղէն շինարար հայեր անցած են եւ իրենց անունը արձանագրած եւ այս հողին վրայ: Եւ այդ պատմութիւնը արձանագրելու իրականութեան մէջ, ամէն մէկս մասնակից դարձած ենք: Ես ձեզի շնորհակալութիւն պիտի չյայտնեմ, որովհետեւ, անհետեւութիւն է չընորհակալ եմ ըսելը, որովհետեւ, ինչպէս կրնանք շնորհակալութիւն յայտնել մենք մեզի, երբ մենք մեզի համար աշխատեցանք, մենք մեզի համար պայքարեցանք, մեր գոյապայքարի համար, մեր գոյութիւնը պաշտպանելու համար այս հայկական միջնաբերդը կանգնեցուցինք Գանատայի այս հողին վրայ: Միայն ու միայն մենք մեր հայութիւնը, մեր ինքնութիւնը, մեր հաւատքը պաշտպանելու համար մենք այս կռիւր մղեցինք: Ճիշդ է, որ մենք գէնքով չը կըռուեցանք, խելքով կըռուեցանք, գրպանով կըռուեցանք եւ հոգիով կըռուեցանք որպէսզի, նոյն նպատակին համար, մեր գոյութիւնը պաշտպանելու եւ մեր յաջորդ սերունդին գոյութիւնը պաշտպանելու համար: Մեր նախահայրերը ըսած են, արժանի մարդոց պատիւ տրուի: «Պատիւս արժանաւորաց»: Եւ այսօր, դուք բոլորդ ալ, մեր գաղութի համեստ հայէն, մինչեւ բարձր պարտականութիւններ եւ պարտաւորութիւններ իր ուսերուն վրայ առած մարդը ուրախութեամբ, հպարտութեամբ կրնայ կանգնիլ այս յարկին դիմաց: Այդ շէնքը ըլլայ Հայ Կեդրոնը, հայ վաժարանը թէ հայ եկեղեցին: Հայու գոյապայքարի երեք գերագոյն գէնքերը ասոնք են. Հայ Օճախը, Հայ Դպրոցը եւ Հայ Հաւատքի Տունը: Մեր ապագայ սերունդներու կերտումը: Մարդակերտումը, հայակերտումը կ'իրականանայ այս երեք օճախներուն մէջ: Վերջ ի վերջոյ կ'ուզեմ շեշտել, որ ամէնէն կարեւոր ազդակը մեր գոյատեւումին, մեր ինքնութեան պահպանումին՝ մեր ընտանիքներն են, մեր տուներն են: Պէտք չէ եր-

բեք պատասխանատուութենէ փախչինք եւ պատասխանատուութիւնը ուրիշին փոխանցենք եւ ըսենք, այս դպրոցն է որ մեր պատիկներուն հայերէն պիտի սորվեցնէ, եկեղեցին է, որ մեզ հաւատքի փոխանցումը կատարէ. Սխալ է: Առաջին ամէնէն կարեւոր եւ ամէնէն կենսական հաստատութիւնը ազգի մը գոյութեան մէջ հայ ընտանիքն է: Մեր տունն է: Հոն է, որ մատղաշ տարիքէն անոր երականներուն մէջ պիտի ներարկուի հայու իրականութիւնը, հայու դիմադրութիւնը, հայու հաւատքը եւ մեր կեանքէն օրինակով, մեր ապրելակերպովը, մեր գաղափարներովը, մեր վստահութիւնը, մեր հաւատքովն է, որ առաջին հերթին պիտի դաստիարակենք մեր յաջորդ սերունդը: Ուրիշ ձեւով կարելի չէ եւ այս կեդրոնը մեր մեծ օճախն է: Մեր մեծ տունն է: Հոս է, որ որպէս հայ ընտանիքի զաւակներ, իրարու քով պիտի գանք, իրարու հետ պիտի գործակցինք, իրարու հետ պիտի աշխատինք, մեր իտէալներու եւ երազներու իրականացման համար: Եւ նոյն ձեւով մեր վարժարանն է եւ նոյն ձեւով մեր եկեղեցին: Թէպէտ խօսուեցաւ յառաջիկայ ծրագրին մասին, կ'ուզեմ անդրադառնալ, թէ որքան կարեւոր է հայ երկրորդական վարժարան ունենալ: Մեր մատղաշ սերունդները, երբ այս տեղէն, ճիշդ դասարանէն դուրս կ'ելլեն, իբրեւ հաւաքական խմբաւորում կը ցրուին իրարմէ: Ամէն մէկը, մէկ վարժարան կ'երթայ, ամէն մէկը տարբեր միջավայրի մէջ կը մտնէ, ամէն մէկը տարբեր իրականութիւններու դիմաց կը գտնուի: Եւ այն տարիքին, երբ այդ պատանիին հոգեկան, մտաւոր եւ ազգային դիմագծութիւնն է, որ պիտի կաղապարուի: Ծիշդ այդ տարիքին անոնք կը հեռանան այս կեդրոնէն եւ մօտաւորապէս 10 տարի հեռու կը մնան մեր ազգային կեանքէն, մեր եկեղեցիէն, մեր շրջապատէն, մեր միութիւններէն: Այդ 10 տարին այդ երիտասարդին կեանքին մէջ հսկայական փոփոխութիւններ կը յառաջացնեն: Ատոր համար անհրաժեշտ է, որ մենք ունենանք երկրորդական վարժարանը, որպէսզի մեր գոյապայքարի այդ ամբողջ ակնթիւ ամուր դառնայ, ակնթիւ նպատակասլաց դառնայ, ակնթիւ օգտակար դառնայ մեր գալիք սերունդներու պաշտպանութեան համար: Սակայն. ո՛չ այս կեդրոնը իր պատերով մեր կեդրոնն է, ո՛չ դպրոցը իր քարերով դպրոց է եւ ո՛չ ալ եկեղեցիկ իր բարձր գմբէթով, իր բոլոր պատկերներով, եկեղեցի է, առանց ժողովուրդի: Դուք էք այս կեդրոնն ալ, եկեղեցին ալ: Եկեղեցին իր հաւատացեալներով, եկեղեցին լեցնող մարդոցմէ է, որ եկեղեցի կը դառնայ: Պարապ եկեղեցի մը ոչ մէկ նշանակութիւն կ'ունենայ, նոյնը՝ պարապ կեդրոնը: Դուք էք որ ձեր հաւատքով, ձեր համոզումներով, ձեր հայու իրականութեան հաւատարմութեամբը յաւերժական յանձնարարութեամբ, եկեղեցին եկեղեցի եւ կեդրոնը կեդրոն կը դարձնէ:

«Ծիշդ է մեծ գոհողութիւններով, մեծ ճիգերով, մեծ նուիրատուութիւններով կերտեցինք այս բոլորը, կերտեցինք, որ անոր պաղ պատերը մեզի նային, ոչ մէկ իմաստ կ'ունենայ ձեր գոհողութիւնը. կատարուած նուիրատուութիւնները, կատարուած աշխատանքները, կատարուած ճիգերը: Զեր ներկայութեամբ, է որ շունչ պիտի տաք այս պատերուն, ձեր ներկայութեամբ է, որ կեանք պարզեւէք կեդրոնին, եկեղեցիին, դպրոցին, որպէսզի անոր սիրտը շարունակէ բաբախել հայու զգացողութեամբ, հայու հաւատքով, հայու ապրումներով: Սակայն կը նայիմ, կը տեսնեմ հին բարեկամներ, սիրելի դէմքեր հոս են, բայց դժբախտաբար, նաեւ շատ սիրելի դէմքեր այսօր մեզի հետ չեն:

Եւ ժամանակին է, որ մենք այդ անունները այդ ցուցատախտակներու վրայ դըրնէինք, որպէսզի գոնէ հոգեկան ուրախութիւն պարգեւէինք բոլոր անոնց, որոնք իրենց մեծերուն, իրենց նախորդ սերունդներուն, իրենց ծնողներուն, իրենց սիրելիներուն յիշատակին այս նուիրատուութիւնները կատարեցին, անոնց յիշատակը անմահացնելու համար: Ես երբեք չեմ մոռնար սիրելի Անդրանիկ Արթինեանը: Երբ ես հոս եկայ եւ սկսայ աշխատիլ եւ սկսանք այս եկեղեցւոյ ծրագրին մասին խօսիլ, ըսաւ. Մենք հոս «խենթ»եր ենք, դուն ալ «խենթ» մը եկար աւելնալու մեր շարքերուն վրայ: Ինծի համար ատիկա միշտ ամենամեծ գովասանքը եղած է: Ամենամեծ շքանշանը եղած է, որ Թորոնթոյի այս գաղութին հետ ըլլամ նոյն ոգիով, նոյն սրտով եւ նոյն կամքով պայքարելու համար մեր գոյութեան եւ գոյապահպանման համար: Ի վերջոյ, այս օրւան նպատակը շնորհակալութիւն յայտնել է. պէտք է ձեզի շնորհակալութիւն յայտնեմ: Աշխատինք ապագայ սերունդներուն համար, որոնք պիտի գան շարունակելու մեր գործը»:

Սրբազանին հայաշունչ խօսքէն ետք, օրուան հանդիսավարը, Սրբազանին նուիրեց «Շուշիի տեսարան մը», իւղանկար մը եկեղեցւոյ հոգեւոր հովիւ եղած 11 տարիներուն իր կատարած եկեղեցաշէն եւ ազգակերտ գործունէութեան առ ի գնահատանք:

Այնուհետեւ տեղի ունեցաւ խրախճանք, DJ Յարութիւն Ղազէլեանի կողմէ ղեկավարուող նուագներով եւ երգերով:

Իսկ Կիրակի, 21 Հոկտեմբեր 2001, յաւարտ Ս. Պատարագի, անուններու ցուցատախտակներու օրհնութենէն ետք, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ յատուկ ճաշկերոյթ:

Սրբազանին ճաշի սեղաններու օրհնութենէն ետք տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն շուրջ 500 ներկաներուն:

Ճաշէն ետք խօսք առին հոգաբարձութեան ատենապետ ընկեր Ռաֆֆի Տէր Պօղոսեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան, որոնք շեշտեցին կարեւորութիւնը եկեղեցւոյ նիւթական եւ բարոյական օժանդակութիւն կատարած նուիրատուներուն անուններուն յատկապէս պատրաստուած ցուցատախտակներու վրայ ղետեղումը, ընդգծելով պահանջը նոր նուիրատուներու եկեղեցւոյ նստարաններուն, պատուհաններուն եւ այլ սրբատեղիներուն:

«ՅՈՐԻՉՈՆ»
2001

ԵՐԱՊ ԹԷ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Քանի մը տարիէ ի վեր կը լսէի Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դըպ-
րոցներու Համագումարներու մասին, սակայն, հնարաւորութիւն չէի ունեցած
ներկայ գտնուելու:

Այս տարի, որպէս Րազգայի Կիրակնօրեայ Դպրոցի տեսուչ եւ ներկա-
յացուցիչ, առիթը ունեցայ ներկայ գտնուելու, ինծի համար երազ թուացող
համագումարին:

Կրկնակի բախտաւորութիւն մը կը ներկայացնէր պատեհութիւնը,
որովհետեւ Դ. Խորհրդակցական Համագումարը նուիրուած էր Վարդանանց
Դիւցազնամարտի ԺԵ. տարեդարձին:

Սակայն, մինչեւ մեր Պէյրութ մեկնումի թուականը, տակաւին կասկա-
ծով կը մօտենայի երթալու գաղափարին՝ յայտնի սահմանային պատճառնե-
րով: Ի վերջոյ, բոլոր դժուարութիւնները հարթուեցան, շնորհիւ Կաթողիկո-
սարանի դիմումին՝ Սուրիական Կառավարութեան, հայ երեսփոխան Վսեմ.
Տիգրան Պէյ Չրաճեանի եւ Պրն. Գէորգ Ներսոյեանի: Այս վերջինէն առի դրա-
կան լուրը սրտի անհուն հրճուանքով, համոզուելով, որ ամէն բան իրականու-
թիւն է այլեւս:

Հինգշաբթի, 27 Սեպտեմբեր 1951, թուով 30 հոգի՝ ներկայացուցիչ եւ
ունկնդիր՝ Հայլպէն մեկնեցանք: Ճամբու ամբողջ տեւողութեան, անգերազան-
ցելի խանդավառութիւն մը կը տիրէր ինքնաշարժին մէջ: Շատեր կը պատ-
մէին անցեալի համագումարներու մասին՝ նորեկներուն: Յաճախ տեղի կ'ու-
նենային մեներգներ եւ խմբերգներ: Շարականներու ծիրը քակուած էր: Վա-
րար գետի մը նման կը հոսէին ձայնանիշերը եւ բառերը՝ օրհնեցութիւններ
բաշխելով խոպան դաշտերուն: Չմոռնամ ըսելու թէ՛ երկու անգամ պատարա-
գի երգեցողութիւնը տեղի ունեցաւ: Ունէինք քահանայ, դպիր եւ սարկաւազ:

Սահմանային կարգ մը դժուարութիւններէ վերջ, ժամը 4:30ին հա-
սանք Անթիլիասի վանքը: Մեզմէ առաջ արդէն եկած էին Լիբանանի կարգ մը
քաղաքներէն եւ գիւղերէն, բազմաթիւ ներկայացուցիչներ եւ ունկնդիրներ:

Անթիլիասի վանքը մօտէն չէի տեսած: Մեծ ազդեցութիւն գործեց
վրաս Վանքի կառուցուածքը. մանաւանդ շատ ուրախացայ՝ տեսնելով արդէն
բարձրացող մատենադարանի նոր շէնքը: Սրտանց երանի տուի այն պատուա-
կան հայերուն, որոնց նիւթական օգնութեամբ կարելի եղած էր Կիլիկիոյ Ա-
թոռը հաստատել Լիբանանի ծովեզերեայ գեղածիծաղ այս ափերուն:

Այցելելով Նահատակաց Յուշարձանը, ցասումով լի սարսուռ մը փո-
թորկեց մարմինս: Այսքան ոսկոր՝ Հայու ոսկոր: Առաջին անգամ ըլլալով կը
տեսնէի մարդկային կմախքի այսպիսի հաւաքածոյ մը: Մասնաւոր բծախընդ-
րութեամբ՝ ապակեայ պահարաններու մէջ տեղաւորուած են գանկե՛ր, սը-
րունքնե՛ր, թեւե՛ր...: Կեցած անոնց դիմաց, սրտառուչ աղօթք մը կը մըմնջեն
չրթներս՝ անոնց հոգիներուն համար: Տարագրութեան ամբողջ սարսափները
եւ գազանութիւնները, ժապաւէնի պէս կը տողանցեն աչքիս առջեւէն: Անօ-
թութենէ մեռնողնե՛ր, ջարդուողնե՛ր, առեւանգուողնե՛ր...: Ուրեմն, ասոնք ալ
մեզի պէս հայեր էին երբեմն...: Բարի քրիստոնեաներ...: Ի՛նչ անարգարու-

թիւն եւ վայրենութիւն: Ամբողջ ցեղ մը բնաջնջել...: Խորունկ վրէժ մը կը մխայ մէջը, սակայն, դուրս ելլելու կարելիութենէն զուրկ՝ կը մարի իր պատեանին մէջ: Յուշարձանէն դուրս կ'ելլեմ խոհուն ու մտածկոտ:

Յաջորդ օր, 28 Սեպտեմբերին սկսան համագումարի աշխատանքները: Նպատակս չէ համագումարի նկարագրականը ընել, քանի որ ընողներ կ'ըլլան: Սկսած էի աչքերուս չհաւատալ: Խումբ առ խումբ սրահը կը լեցնէին Կիրակնօրեայ մեծ ընտանիքի անդամները: Որքան ուսուցիչ եւ ուսուցչուհի՛...: Կը սքանչանայի այս տիպար հայ երիտասարդութեան կորովին եւ խանդավառութեան վրայ: Երիտասարդներ, որոնք ինչպէս ուրիշներ, կրնային իրենց ժամանակը յատկացնել վայելքի եւ հաճոյքի զեղի կեանքին մէջ, սակայն, մղուած մեր ազգային առաքինութիւններու յաւերժացման խանդէն, ընտրած էին իրենց գնահատելի ուղին: Ուղի մը՝ ուր կարելի է գտնել հաճոյք մը, որ տարբեր ու վեր ուրիշ հաճոյքներէ: Արդարեւ, կա՞յ հոգեկան աւելի մեծ գոհունակութիւն եւ բաւարարութիւն՝ ինչպէս ինծի համար՝ քան ուսուցիչ հայ նորաբողբոջ սերունդին կրօնասիրութիւնը, ազգասիրութիւնը եւ տիպար մարդ ըլլալու բոլոր յատկանիշերը: Ուսուցանել հայ ազգային եւ եկեղեցական պատմութիւնը, շարականները, սաղմոսները, մաղթանքները եւ աղօթքները: Եւ ուրեմն, հայ նոր սերունդը դաստիարակելով՝ պատրաստել մաքուր հայեր՝ կրօնաբարոյական եւ եկեղեցական գիտելիքներով, ներարկելով անոնց մէջ Քրիստոսի անարատ սէրը, որպէսզի վառ մնայ «Լուսաւորչի Կանթեղը»:

Համագումարը արդէն սկսած է: Շարականները, սաղմոսներ եւ դասախօսութիւններ իրարու կը յաջորդեն: Կ'ապրիմ երազներու աշխարհի մը մէջ: Վայրկեան մը կը մտածեմ, թէ արդեօք այս բոլորը իրական են: Հարիւրաւոր շրթներէ բարձրացող «Ով դու բարեկամ» Վարդանի երգը կու գայ վերջ տալու անուրջիս եւ փաստելու իրականութիւնը:

Վարդանանք...: «Հայր մեր՝ գՍուրբ Աւետարանն գիտեմք, եւ մայր՝ զԱռաքելական Եկեղեցի Կաթողիկէ»: Անուն մը եւ խօսքեր են ասոնք, որոնք մեզ 15 դար դէպի անցեալը կը տանին, հանդիսատես ըլլալու համար հայ ժողովուրդի մարտնչումներուն, ցաւերուն եւ յաղթանակին: 451 թուականին հայ ժողովուրդը լաւ գիտցած ըլլալով որ, եթէ կորսնցնէ իր հաւատքը, ապա ուրեմն, պիտի կորսուի եւ ոչնչանայ նաեւ ինք, ինչպէս կորսուեցան բազմաթիւ ազգեր, գէնք բարձրացուց զրադաշտական պարսիկին դէմ՝ վստահ ըլլալով որ, պարսիկը աւելի զօրաւոր էր: Անհաւասար կռիւ մը, ուր պիտի որոշուէր հայ ժողովուրդի «լինելու եւ չլինելու» ճակատագիրը: Եւ որոշուեցաւ: Մեռան պատերազմի դաշտին վրայ Վարդան եւ 1036 զինուորներ, որպէսզի ապրի՛ հայ ազգը, հայ եկեղեցին: Կ'ապրին այն ժողովուրդները, որոնք գիտեն գնահատել իրենց արժէքները եւ պահել իրենց աւանդութիւնները, սրբութիւնները. մանաւանդ՝ կը գոհուին անոնց պաշտպանութեան համար: Վարդանանք յիշատակը եւ օրինակը, այսօր աւելի քան երբեք մեր աչքին առջեւ պէտք է ունենանք, զինուորագրուելով նոր Վարդաններու դրօշին տակ՝ վառ եւ անսասան պահելու համար Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին՝ քսաներորդ դարու Յազկերտներու եւ մանաւանդ Վասակներու յարձակումներուն դէմ:

Համագումարի կարգադիր յանձնախումբը Շաբաթ օրուան ճաշը Այն Նէպի ընելու գեղեցիկ գաղափարը յղացած էր, որ անմոռանալի օր մը եղաւ

բուրբիս համար: Ճաշէն վերջ, ներկաներու ոգեւորութիւնը իր գագաթնակէտին հասած էր: Ամէն կողմ ուրախութիւն, երգեր, շարականներ, նուագ: Քանի մը ժամուան համար Լիբանանի այս հոյատեսիլ կիրճը հայկական կեանք կ'ապրէր: Հայկական երաժշտութիւնը կը թրթռար, ալիք-ալիք բարձրանալով փառահեղ լեռներու գագաթները՝ հասնելու համար Աստուծոյ պատուանդանին:

Երեք օրուան համագումարի աշխատանքները դադրեցան հրճուանքով եւ արդիւնաւոր, մանաւանդ նպաստելով Կիրակնօրեայի ուսուցիչներու անձնական ծանօթութեանց: Այսպիսի հաւաքոյթներ մեծապէս օգտակար կը հանդիսանան, սէր եւ բարեկամութիւն հաստատելով անոնց սրտերուն մէջ:

Երեքշաբթի առաւօտ վերադարձի ուղին մեզ առաջնորդեց Հալէպ: Սակայն սիրտս կը կրճէր բաժնուելու ցաւը, կարծես շատ թանկագին բան մը կորսընցուցած ըլլայի: Բայց վերջ ի վերջոյ պէտք էր հաշտուիլ նաեւ այդ գաղափարին հետ:

Հիանալի՛ երեք օրեր.:

Պատի՛ւ համագումարի կազմակերպիչներուն:

«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»
Կիրակնօրեայ Դպրոցներու Ամսաթերթ
1951

ԹԷՅԱՍԵՂԱՆ ՌԱԳԳԱՅԻ ՄԷՋ

Կիրակի, 11 Մարտ 1951ին, Կիրակնօրեայ դպրոցէն վերջ տեղի ունեցաւ թէյասեղան մը ի պատիւ Ռագգայի թաղականութեան եւ Կիրակնօրեայ Դպրոցի պաշտօնէութեան:

Պատրաստուած էր նաեւ կոկիկ յայտագիր մը որ անմիջապէս գործադրութեան դրուեցաւ:

Բացումը կատարուեցաւ Կիրակնօրեայ Դպրոցի մաղթերգով, զոր երգեց երգեցիկ խումբը:

Ապա տեղւոյս Կիրակնօրեայ դպրոցի տեսուչ՝ պրն. Գր. Հոթոյեան, իր բացման խօսքին մէջ բացատրեց Կիրակնօրեայ Դպրոցներու գոյութեան իմաստը եւ նպատակը: Ի միջի այլոց մէջբերումներ ըրաւ երջանկայիշատակ Սահակ Կաթողիկոսի Կիրակնօրեայ դպրոցներու հաստատման առիթով իր լոյս ընծայած կոնդակէն: Շնորհակալութիւն յայտնեց թաղականութեան, որ կը քաջալերէ Կիրակնօրեայ դպրոցի գործունէութիւնը եւ ճիգ չի խնայեր ի խնդիր անոր բարգաւաճումին՝ այս պզտիկ գիւղաքաղաքին մէջ:

Աչակերտ Յով. Տէմիրճեան արտասանեց Վահան Թէքէեանի «Եկեղեցին Հայկական» քերթուածը: Մեներգեց Արամ Պետրոսեան «Որ Անբաւելի» շարականը, արտասանեց Համազասպ Նաճարեան՝ Սիսակ Արապեանի «Կիրակնօրեայ Վարժարան»ը եւ Նուարդ Տէմիրճեան՝ Եղիշէ Արք.Դուրեանի «Ետեւէս Եկուր»ը: Երգեցիկ խումբը երգեց՝ «Նայեաց Սիրով» եւ «Նորահրաշ Պսակաւոր» շարականները:

Հիւրասիրութիւնը տեղի ունեցաւ ուրախ մթնոլորտի մը մէջ, ուր բոլորն ալ քաջալերական խօսքեր ուղղեցին Կիրակնօրեայ դպրոցի կազմակերպութեան եւ անոր գոհաբերուող պաշտօնէութեան:

Թաղական խորհուրդի անդամներու ուրախութիւնը իր գագաթնակէտին հասած է, ուր բոլորն ալ ըրին սրտաբուխ նուիրատուութիւններ՝ Կիրակնօրեայ դպրոցին համար՝ նուիրելով 36 Ս. Ոսկիի գումար մը:

Հոս տեղին է մատնանշել, որ Ռագգայի Կիրակնօրեայ դպրոցը քանի մը ամսուան մէջ արդէն կազմակերպուած մասնաճիւղ մը դարձած է: Ունի 8 պաշտօնեաներ, բոլորն ալ կամաւոր եւ մեծ եռանդով կ'աշխատին, որպէսզի այս օտար ամիերուն վրայ հայ ժողովուրդին տարագիր մանուկները գիտնան եւ հասկնան իրենց մայրենի եկեղեցին, անոր բոլոր գիտելիքները եւ քալեն անշեղ Աւետարանի ուղիով:

«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»
1951

ՎԵՅ ԴՊՐՈՅՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՀԱՒԱՔՈՅԹ

Այլևս սովորութիւն դարձած, Հալէպի վեց Կիրակնօրեայ Դպրոցներու Կիրակնօրեայ հաւաքոյթը տեղի ունեցաւ Կիրակի, 8 Մայիս 1955, առաւօտեան ժամը 5ին, Տավուտիէի մատրան շրջափակին մէջ:

Իրապէս հոգեպարար էր տեսնել Գարնան այս գեղեցիկ օդին, Հալէպի բոլոր թաղերէն դէպի հաւաքատեղի եւ անկէ Տավուտիէ փութացող աշակերտութեան երթը: Ամէն դասարան, իրենց ուսուցչին առաջնորդութեամբ, ինքնաշարժով կամ քալելով, շարականը իրենց շրթներուն, կը տողանցէին մինչեւ Տավուտիէ հասնող պողոտաներէն:

Հիւրաբար ներկայ էին Պէյրութի Ամանոս թաղի Կիրակնօրեայ Դպրոցի փոխ-տեսուչ եւ ՀԵԿԴՕՄի ատենապետ՝ պրն. Յակոբ Ալթունեան, իր մայրը, Տավուտիէի պատուակալ տեսչուհի տիկ. Էլիզա Մաթոսեան, որ այժմ, հիւանդանալէ վերջ, հանգիստի շրջան մը կը բոլորէ:

Հաւաքական Կիրակնօրեան սկսաւ «Հայր Մեր»ով:

Վեց դպրոցներու տեսուչները պաշտօններ ունէին, այսպէս՝ Գերմանիկի տեսուչ պրն. Ս. Համպոյեան կատարեց բացման խօսքը եւ մատնանշեց հաւաքական դպրոցի նպատակը:

Աշակերտութիւնը խօսեցաւ «Տէր եթէ գըրթունս իմ բանաս» աղօթքը:

Նոր գիւղի տեսուչ պրն. Լ. Պարմանուկեան բարոյալից պատմութիւն մը պատմեց, որ հետաքրքրութեամբ ունկնդրուեցաւ ներկաներուն կողմէ:

Պրն. Համպոյեանի առաջնորդութեամբ երգուեցաւ «Զարթիք փառք իմ» շարականը:

Օրուան ճաշու Աւետարանը կարդաց Սէպիլի տեսչուհի օրդ. Մ. Թերզեան, Յովհ. Է. 14-21:

Աւետարանի մեկնութիւնը կատարեց Տավուտիէի տեսչուհի տիկ. Մ. Փոլատեան: Նոյն դպրոցի երգեցողութեան առաջնորդ պրն. Գ. Թիւմթիւմեանի առաջնորդութեամբ երգուեցաւ «Զօրութիւն Ս.Խաչի» շարականը:

Օրուան տօնին (Երեւման Խաչ) շուրջ խօսեցաւ Շէյխ-Մագսուտի տեսուչ պրն. Ն. Ապուճեան: Երգուեցաւ «Թագաւորեաց Աստուած ի վերայ Հեթանոսաց» շարականը:

Հիւրերէն խօսք տրուեցաւ պրն. Յ. Ալթունեանի, որ իր ուրախութիւնը յայտնելէ վերջ պատմեց բարոյալից պատմութիւն մը: Խօսեցաւ նաեւ տիկ. Է. Մաթոսեան:

Կիրակնօրեայ Դպրոցներու նուիրատուներ եղան, պրն. Յ. Ալթունեան 30 Ս. Ոսկի, իւրաքանչիւր բաժնի 5 ոսկի:

5 Ս. Ոսկի պրն. Մկրտիչ Զաղապանեան (Սեպիլէն): 225 Ս. դհկն. Կեդրոն բաժնի 1954ի շրջանաւարտներ: 2-ական ոսկի տիկ. Լուսին Զէյթճեան եւ օրդ. Էօթէնի Խաչատուրեան (Կեդրոն բաժնէն): 1-ական ոսկի տիկ. Էլիզա Մաթոսեան եւ պրն. Ժան Պէրդուտեան (Տավուտիէէն): 50 դհկն. օրդ. Մարի Կրպոյեան (Տավուտիէէն):

Հալէպի վեց Կիրակնօրեայ Դպրոցներէն (բացի Սկսնակ բաժիններէ) ներկայ էին 750 աշակերտներ: Նուիրատուութեան մէջ առաջնութիւնը շահեցաւ Կեդրոն բաժինը:

Խօսք առաւ պրն. Գ. Ներսոյեան եւ շնորհակալութիւն յայտնեց տեղւոյն Թաղական Խորհուրդին, որ սիրով տրամադրեց եկեղեցւոյ շրջափակը, Տավուտիէի ուսուցչութեան, որ նստարանները եւ կարպետները շարելով եւ փռելով մեծ ծառայութիւն մատուցանեց, պրն. Ներսէս Ճէպէճեանին, որ բարձրախօսը բերաւ եւ զետեղեց, եւայլն:

Փակման խօսքը տրուեցաւ Տավուտիէի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Եղիշէ Քհնյ. Փանոսեանի, որ իր ուրախութիւնը յայտնեց, տեսնելով որ ամէն տարին ոյն օրը Հալէպի վեց Կիրակնօրեայ Դպրոցներու աշակերտներ գալով այս բարձունքը, զԱստուած կը փառաբանեն: Եւ այս հաւաքոյթը նմանցուց Յիսուսի Լերան քարոզին, ուր Յիսուս ամէն կողմէ եկած ժողովուրդին կը բացատրէր իր վարդապետութիւնը:

Պրն. Ներսոյեան յայտարարեց որ, ամէն դպրոցի մուտքէն 2 Ս. Ոսկի վար դրուելով՝ 12 Ս. Ոսկի կը յատկացուի Տավուտիէի Աղքատախնամին:

Հաւաքոյթը փակուեցաւ «Յամենայն ժամու» աղօթքով եւ Տէր Հօր պահպանիչով, ժամը 7:30ին:

«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»
1955

1954Ի ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐՈՒ Ի ՊԱՏԻՒ ՏՐՈՒԱԾ ՀԱԻԱՔՈՅԹ

1954 տարուան Կեդրոն բաժնի շրջանաւարտներուն ի պատիւ հաւաքոյթ մը տեղի ունեցաւ Կիրակի, 15 Մայիսի 1955, կէսօրէ վերջ ժամը 4:30ին, Կեդրոն բաժնի մէջ:

Ներկայ էին Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդը, տիկ. Էլիզա Մաթոսեան, տիկին Ջուարթ Ներսոյեան, ինչպէս նաեւ Արժ. Տ. Գարեգին Քհնյ. Քիրազեան:

Հաւաքոյթը սկսաւ «Տէրունական Աղօթք»ով: Բացման խօսքը կատարեց Կիրակնօրեայ Դպրոցներու քարտուղար եւ Կեդրոն բաժնի սիրելի տեսուչ՝ պրն. Գ. Ներսոյեան, եւ շեշտեց սա կէտը թէ՛ ինչ որ Կիրակնօրեայ Դպրոցներու մէջ կը սորվին, պէտք է կեանքի մէջ իրագործեն: Պէտք է նուիրեալները ըլլան այս գործին եւ կոտրեն անձնական ՅՍը:

«Ի Համբարեալ» շարականը երգուեցաւ պրն. Մարգիս Համպոյեանի առաջնորդութեամբ: Օրդ. Անահիտ Տէմիրճեան արտասանեց՝ Կոստան Ջարեանի «Մեր Հայրենիքը»: Օրդ. Մարի Խաչերեան եւ օրդ. Լիզա Գարամանուկեան գուգերգ մը ըրին «Իմ Խենդ Գարնան»:

Օրուան բանախօսուհին՝ Օրդ. Արաքսի Ճէպէճեան, նոյն դպրոցի սկզբնական շրջանաւարտներէն եւ Կիրակնօրեայ Դպրոցներու վաստակաւոր ուսուցչուհի, խօսք առնելով ըսաւ, ի միջի այլոց, «Կեանքիս ուրախ պահերէն մէկուն մէջ կ'ապրիմ այժմ, տեսնելով ձեզ: Կիրակնօրեան տուած է բազմաթիւ շրջանաւարտներ: Ես ալ անոնցմէ եմ: Կիրակնօրեան իբրեւ արթուն պահակ, ջանաց դաստիարակել ձեզ: Լոյսը ունենալ եւ լուսաւորել է մեր պարտքը»:

Հոս յարգելի օրիորդը անդրադարձաւ Յովսէփ Գեղեցիկի կեանքին եւ գործին, թէ ան գիտցաւ ներել եւ մնաց խոնարհ, ան մատնանչեց անկէ առնելիք դասը՝ յարգանք ունենալ մեծերուն հանդէպ: Օրինակ բերաւ Սանդուխտի, Հռիփսիմէի եւ ընկերներուն կեանքը եւ թելադրեց ունենալ կոչումի գիտակցութիւն: Ապա աւելցուց, «օգտագործել գիտնանք մեզի ներկայացող առիթները: Չխաբուիլ ամբօխէն: Մեր թելադրանքն է ձեզի յարգել մեծերը եւ ծառայել տկարներուն: Անշահախնդիր եղէք ձեզի վստահուած պարտականութիւններուն մէջ: Լրիւ կատարողները եղէք Աստուածաշնչական խօսքին: Ամէն բան ըրէք առանց տրտնջալու»:

Օրդ. Շաքէ Անտիլեան արտասանեց, իր գեղեցիկ առողջանութեամբ, Սիպիլի «Հայ Լեզուն»:

Օրդ. Անահիտ Պոզոյեան եւ օրդ. Լիզա Գարամանուկեան անակնկալներ եւ խաղեր ըրին, ստեղծելով ուրախ մթնոլորտ մը: Այս առթիւ ներկաները հիւրասիրուեցան պաղպաղակով եւ «կաթոյ»ով:

Երգուեցաւ «Նմանեալ Մովսէսի» շարականը: Խօսք տրուեցաւ շրջանաւարտ դասարանի դաստիարակ ուսուցչուհի տիկ. Աղանի Ֆրստրեզեանի, որ հմտալից պատգամներ եւ թելադրութիւններ ըրաւ շրջանաւարտներուն:

*Փակման խօսքը կատարեց խորհուրդի ատենապետ՝ Արժ. Տ. Կարապետ
ՔՀՆԿ. Նախանտեան: Հաւաքոյթը փակուեցաւ ժամը 6:30ին, «Յամենայն Ժա-
մու» մաղթանքով եւ Տէր Հօր պահպանիչով:*

**«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»
1955**



**Գրագէտ Յակոբ Խաչիկեանի հետ
Երեւան (Չայաստան) 2004ին**

**ՎԿԱՅԱԿԱՆԱՅ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԷՍ
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ
ԿԵԴՐՈՆ ԲԱԺՆԻՆ ՄԷՁ**

Կիրակի, Ապրիլ 22, 1956ին տեղի ունեցաւ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներու Հալէպի կեդրոն բաժնի շրջանաւարտներու վկայականաց բաշխման հանդէսը: Կը նախագահէր Կրօնական Դաստիարակութեան խորհուրդի ատենապետ Արժ. Տ. Կարապետ քհն. Նալպանտեան, որ իր բացման խօսքին մէջ բացատրեց Կիրակնօրեայ դպրոցներու նպատակը եւ կոչ ուղղեց ներկայ ծնողաց որպէսզի իրենց զաւակները զրկեն Կիրակնօրեայ դպրոց՝ ըստանալու համար կրօնաբարոյական դաստիարակութիւն:

Շրջանաւարտները սրահէն մուտք գործեցին կիրակնօրեայի մաղթերգով, ապա երգչախումբը երգեց «Հայր Մեր»ը: Տեղի ունեցաւ նուազ մը դաշնակով եւ ջութակով՝ օրդ. Ա. Ճէպէճեանի եւ պրն. Ե. Ճէպէճեանի կողմէ:

Վեհանոյշ Ապահունի արտասանեց «Եկեղեցիս Մայրենի» քերթուածը, երգչախումբը երգեց «Ով Յարկ Վսեմ»ը, Հ. Ե. Կ. Դպրոցներու դերը ազգային ներդաշնակութեան մէջ, խորագրուած շարադրութիւն մը կարդաց շրջանաւարտներէն Յակոբ Ճէպէճեան:

Նուազէ մը ետք շրջանաւարտներու կողմէ կատարուեցաւ խմբական արտասանութիւն մը՝ «Ոսկի Ուռնակը»:

Ապա կատարուեցաւ վկայականներու բաշխում՝ Արժ. Տ. Կարապետ քհնյ. Նալպանտեանի ձեռամբ, շրջանաւարտ 16 աշակերտներու, 14 կեդրոն բաժինէն, 1 Գերմանիկէն եւ 1 Ազգէզէն: Անոնք են՝ Աղաւնի Աւագեան, Արփինէ Գուլումճեան, Աշխէն Վարդանեան, Արմենուհի Փիլաւճեան, Էլիզ Թուլումճեան, Հոփսիմէ Պաղտասարեան, Մարի Պայրամեան, Մարի Տէօքմէճեան, Սրբուհի Տէմիրճեան, Վեհանոյշ Ապահունի, Մատթէոս Տէրտէրեան, Յակոբ Ճէպէճեան, Վարդան Եաղսրզեան, Յարութիւն Գասպարեան, Հոփսիմէ Սաւթճեան (Գերմանիկ), Սիրան Գրիգորեան (Ազգէզ):

Շրջանաւարտներու կողմէ հրաժեշտի խօսքը կարդաց Աղաւնի Աւագեան:

Խօսք առաւ դաստիարակ ուսուցչուհի տիկ. Ա. Ֆստըճեան եւ ըսաւ.

«Սիրելի շրջանաւարտներ,

«Երկար տարիներու ձեր աշխատանքն ու յոգնութիւնը դարձած է արդիւնաւոր. եւ դուք զձեզ կը զգաք վարձատրուած, երբ այժմ ունիք ձեր ձեռքերուն մէջ այդ վկայականները, որ տարիներու ձեր յարատեւ աշխատանքին կենդանի փաստն է: Տարիներ առաջ, երբ իբրեւ նորաբողոք ծիլեր մանկական դողդոջ քայլերով առաջնորդուեցաք այս նուիրական յարկէն ներս, եւ այսօր որպէս նորահաս երիտասարդ-երիտասարդուհիներ՝ հասակ առած, հրաժեշտ կու տաք Կիրակնօրեայ Դպրոցի ձեր ուսանողական շրջանին, վստահ եմ, բոլորը ալ կը գիտակցիք թէ ինչ մեծ զոհողութիւններու արդիւնք է ինչ ատոնք, եւ ինչքան անխնայ ջանքեր տրուած են ձեզ համար, ու տուած էք նաեւ դուք, մինչեւ որ բոլորէք այս երկար 10-12 տարիներու շրջանը, սկսնակէն մինչեւ երէց չորս բաժիններու մէջ, այս նուիրական յարկէն ներս:

«Արդ, ես եւ բոլոր պաշտօնակիցներս Կեդրոն բաժնի Կիրակնօրեայ Դպրոցի, կը սիրենք հաւատալ թէ պիտի արժեցնէք զայն ձեր անբասիր վարքով ու կենցաղով, ձեզի աւանդուած եւ բացատրուած քրիստոնէական փոքր ուսմունքները եւ աւետարանական պատգամները ձերը ընելով եւ կեանքի վերածելով զանոնք: Կը սիրենք յուսալ նաեւ թէ այս վկայականները պիտի ծառայեն իբրեւ յուշարար՝ ձեր մտքին մէջ տեւականօրէն արձագանգելու այս վերջին բայց մտերմիկ խօսքերը նաեւ, որուն իբրեւ բնաբան առած եմ մեր տիրոջ՝ սիրելի Փրկիչին սա իմաստալից մէկ խօսքը, «Բազում են կոչեցեալք, բայց սակաւք են ընտրեալք» այսինքն՝ շատ են քրիստոնեայ կոչուողներ, բայց շատ քիչ են անոնց ընտիրները:

«Հայոց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներուն վեհ նպատակն ըլլալով՝ կերտել մանկան մէջ քրիստոսատիպ նկարագիր մը, ան կը սորվեցնէ մանկան նմանիլ Քրիստոսի եւ հետեւիլ անոր: Շատեր հետեւած են Քրիստոսի եւ կոչուած են քրիստոնեաներ, բայց բոլորն ալ նմանա՞ծ են Անոր: Հոս է ահա էական հարցը, քրիստոնեայ ըսուի՞լը արժէք կը ներկայացնէ թէ քրիստոնեայ ըլլալը, քանի որ տարբեր բան է քրիստոնեայ ըսուիլ, ու տարբեր բան է քրիստոնեայ ըլլալ: Քրիստոսի նման ըլլալու համար անպայման պէտք է հաշտուելինք զոհուելու գաղափարին հետ: Անշուշտ դժուար է քիչ մը: Շատ սիրելի բան է մեզի համար մեր անձնականութիւնը, մեր զօրաւոր եսականութիւնը, եւ սակայն միեւնոյն ատեն մեր ամէնէն վտազաւոր թշնամին ալ է ան, որ կը հեռացնէ զմեզ Քրիստոսի նմանողութենէն: Որովհետեւ եսասէրը վտանգած է ինքզինքը, գերի ըլլալով իր «Ես»ին: Այնքան մթազնած է իր պայծառ գիտակցութիւնը, եւ այնքան նեղցած է իր մտքին հորիզոնը, որ չի կրնար դուրս նետուիլ իր սահմանափակ «Ես»էն եւ չի կրնար սավառնել հոգեկան բարձր եւ մաքուր ոլորտներու մէջ: Ան դժուարութիւններ կը քաշէ նոյնիսկ հաւատալու Աստուծոյ գոյութեան, քանի որ ինքն իր մէջ իր «Ես»ը կը պաշտէ արդէն:

«Սիրելիներ, Քրիստոսի նմանելու համար պէտք է զոհուի այդ «Ես»ը: Աւետարանի բացատրութեամբ՝ մարդ պէտք է կորսնցնէ իր անձը: Պէտք է ուրիշին տրամադրութեանը տակ դնէ իր ամենէն շատ սիրածը բանը՝ որ միտքը, ժամանակը, հանգիստը եւ հարստութիւնը: Յիսուս ըսաւ, «Եթէ կ'ուզէք ապրիլ, պէտք է կորսնցնէք ձեր անձը», մեր «Ես»ը կորսնցնելու համար առաջին պայմանն է տեսնել մեր վրայ մեր թերութիւնները եւ որոնել ուրիշներուն վրայ անոնց լաւ կողմերը, պէտք է հաւատանք թէ Աւետարանի դաստիարակութեամբ միայն կ'ելլենք մեր «Ես»էն դուրս, եւ կը տեսնենք թէ մեր «Ես»էն վեր ինչ գեղեցկութիւններ կան կեանքը ազնուացնող եւ գեղեցկացնող: Մարդ պէտք է մաքուր սէր ունենայ որոնելու այդ ճշմարտութիւնները եւ տոգորուելու անոնցմով: Առանց յոգնելու եւ առանց ձանձրանալու պէտք է մարդ յարատեւէ Աւետարանի դաստիարակութեան մէջ: Սակայն, պէտք է քաջ գիտնաք թէ չէք կրնար ձեռք բերել աղուոր բաներ առանց զոհողութեան եւ կամ շատ ատան պայմաններով: Պէտք է յարատեւ ջանք եւ աննկուն կամք՝ ձերը ընելու համար ռեւէ իտէալ մը կամ գաղափար մը: Եթէ կ'ուզէք զերծ մնալ «Ես»ին կապանքներէն, եթէ կ'ուզէք չիյնալ փորձութիւններու մէջ, եւ չհեռանալ Քրիստոսէն, եթէ կ'ուզէք նմանիլ Անոր, պէտք է զինուելք Անոր ոգիով: Ան, Աստուած մը ըլլալով հանդերձ, մարդացաւ: Մարդոց փրկութեան սիրոյն զոհուե-

ցաւ, եւ որքան տառապեցաւ ու յոգնեցաւ, գիշեր ցերեկ աշխատեցաւ որ ուղղուի մարդոց ընթացքը: Ան աղօթեց միշտ, եւ մենք Անոր աղօթքներովը, Անոր մահովը, եւ Անոր զոհողութեամբն է որ եղանք որդեգիրները մեր երկնաւոր Հօր:

«Կ'ապրինք այնպիսի ժամանակի մը մէջ, որ Աւետարանը եւ անոր բարոյական դասերը արմատախիլ ընելու ցանկացողներով, եւ մեր տոհմային հնաւանդ գեղեցիկ բարքերը եղծանել սպառնացող վտանգներով շրջապատուած ենք: Անտարբերութիւն, օտարամոլութիւն, տգիտութիւն, պճնասիրութիւն, արծաթասիրութիւն երեւելի եւ աւերիչ ազդակներ են ամէն կողմէ մեզ շրջապատած՝ որ խախտել կ'ուզեն մեր մէջէն ազնիւ նկարագիրը Հայ Քրիստոնեայի, եւ մաքուր, արի ոգին ու սուրբ հաւատքը մեր նախահայրերուն: Պէտք է զինուիմք Քրիստոսի ոգիով, պէտք է զոհել գիտնանք մեր «Ես»ը ընդհանուրին շահին եւ օգտին համար: Սա, շատ ալ դիւրին բան է, սակայն քաջարի եւ հաւատաւոր քրիստոնեայի կերպն է, որ կեանքի նեղութիւններն ու դժուարութիւնները ընդունի իբր մարտահրաւէր մը եւ ինչո՞ւ է, իբր օրհնութիւն մը իր խորքին մէջ, ու անոնց դէմ մարտնչելով դարբնէ իր կեանքը: Մարդկային կեանքի անբաժանելի մասն են նեղութիւնները, դժուարութիւնները եւ զրկանքները:

«Եթէ մարդ պատրաստ է քաջաբար ընդունելու եւ դիմագրաւելու զանոնք եւ յաղթահարելու անոնց, չի կրնար արժեւորել կեանքը: Կեանքին արժէքը իր պարունակութեան մէջն է: Իմաստուն գրող մը ըսած է. «Լաւագոյն կերպով լեցուած կեանքը, ոչ թէ այն է, որուն մէջ մարդս աւելի հաճոյք, դրամ, իշխանութիւն, պատիւ կամ համբաւ կը շահի, այլ այն՝ որուն մէջ մարդս աւելի մարդ կ'ըլլայ, եւ կը կատարէ մարդկային պարտականութեանց եւ օգտակար աշխատութեանց մեծագոյն գումարը»:

«Միբելիներ, աշխարհին վաղանցուկ հրապոյրներ թող չթակարդեն ձեր միտքերը, հեռացէք վատ գործերէ, ատեցէք չարութիւնը, սիրեցէք բարին ու արդարը: Մի ըլլաք անտարբերներ կարեւոր բաներու, եւ հոգեկան գերագոյն արժէքները գնահատելու մէջ: Հրաժարեցէք սնոտի բաներէ, որոնք պիտի հեռացնեն ձեզ Քրիստոսի սէրէն: Խնդրեցէք Աստուծոյ համբերութիւն, ոյժ եւ կարողութիւն՝ նմանելու Քրիստոսի, որ հասնիք հոգեւոր բարձրութեան մը: Եւ ուրախութեամբ կրեցէք տառապանքի եւ յոգնութեան քաղցր լուծը: Մի ընդունիք տառապանքը իբր լուծը: Մի ընդունիք տառապանքը իբր վիշտ, որ ձեզ տկարացնէ, այլ ընդունեցէք իբր վերելքի սանդուխ մը, որ պիտի տայ ձեզի վերելքի կեանքը:

«Այսօր Կարմիր Կիրակի է, եւ Հայց. Առաք. Ս. Եկեղեցին իր բեմէն պատգամեց մեզի Պետրոս Առաքեալի բերնով այսպէս՝ «Դուք ալ, երիտասարդներ, հնազանդ եղէք ծերերուն: Բոլորդ ալ իրարու հանդէպ ձեր վերաբերումին մէջ խոնարհութիւն հագէք, զի Աստուած հակառակ է ամբարտաւաններուն եւ շնորհք կու տայ խոնարհներուն: Խոնարհեցէք Աստուծոյ հօր ձեռքին տակ, որպէսզի Ան ալ ձեզ բարձրացնէ ժամանակին: Ձեր բոլոր մտահոգութիւնները ձգեցէք Անոր վրայ, զի Ան է որ կը հոգայ ձեզի համար: Արթուն կեցէք, հսկեցէք: Ձեր հակառակորդը՝ սատանան՝ մոռնող առիւծի մը նման ժուռ կու գայ ու կը փնտռէ թէ զո՞վ կ'լլէ: Դիմադրեցէք անոր՝ հաստատուն մնալով

հաւատքի մէջ, գիտնալով որ միեւնոյն չարչարանքներուն ենթակայ եղած են նաեւ ձեր եղբայրները՝ աշխարհի ամէն կողմերը: Բոլոր շնորհներու Աստուածը, որ կանչեց զինք քրիստոսի միջոցով իր յաւիտենական փառքին, փոքր ինչ չարչարուելէ վերջ՝ զձեզ պիտի ընէ կատարեալ, ամրապինդ, զօրաւոր ու հաստահմն»։ (Ա. Պետր. Ե. 5-10):

«Ուրեմն, սիրելի շրջանաւարտներ, յանձնեցէք ձեր անձերը Աստուծոյ. Ան է որ պիտի լուսաւորէ ձեր միտքերը, եւ զօրացնէ ձեր սիրտերը դիմակալելու համար դժուարութիւններու եւ յաղթելու համար չարին: Մի ըլլաք քրիստոնեայ կոչուողներ միայն, այլ եղէք անոնց ընտիրները: Ս. Պօղոս առաքեալի կորթացիներուն տուած հետեւեալ տողերը նոյնութեամբ կը յանձնեմ ձեր բոլորին ուշադրութեան, «Ուստի, սիրելի եղբայրներս, հաստատուն եղէք, անշարժ կեցէք, մեծ եռանդով աշխատեցէք տիրոջ գործին համար ամէն ատեն: Գիտցէք որ ձեր վաստակները չեն մնար անվարձ տիրոջ առջեւ»: (Ա. Կոր. ԺԵ. 58): Առաքեալը կը յորդորէ որ ըլլանք հաստատուն, այսինքն՝ ունենանք հիմ, խորութիւն եւ ծանրութիւն: Կենանք անշարժ, այսինքն՝ ոչ փոփոխական, ոչ յեղյեղուկ, այլ տէրը ըլլանք մեր կոչման, մեր խոստման: Աշխատինք եռանդով, այսինքն՝ հետաքրքրութեամբ եւ ոգեւորութեամբ, քանզի առանց եռանդի ոեւէ գործ կը դառնայ տաղտկալի, կը շեշտէ նաեւ որ ըլլանք յարատեւ տիրոջ գործին մէջ ամէն ատեն, եւ ոչ մասնաւոր ժամանակի մը համար միայն:

«Գիտենք թէ յարատեւութիւնը առաքելութիւն մըն է: Քրիստոսի նըմանելու եւ ընտիր քրիստոնեաներ ըլլալու համար, յարատեւութիւն պէտք է: Որեւէ գործի եւ նպատակի մէջ յաջողութեան գաղտնիքն է յարատեւութիւնը: Արդ, եթէ կեանքին արժէքները պիտի մշակուին եւ երեւան բերուին իրենց ատրոթութեան մէջ, պէտք է որ մեր «Ես»ականութիւնը զոհուի եւ ատոր տեղը բռնէ յարատեւութիւնը՝ Աւետարանի դաստիարակութեան մէջ: Սրբազան Առաքեալը իր վերոյիշեալ խօսքերը վերջացուցած էր հետեւեալ խոստումով՝ թէ Տիրոջ անունով եւ անոր սիրոյն եղած վաստակները պիտի չմնան անվարձ: Ուստի, Առաքեալին այս սքանչելի թելադրիչ պատուէրները՝ ըլլալ հաստատուն, անշարժ, խանդավառ եւ յարատեւ, թող քանդակուին ձեր մատաղ հոգիներուն վրայ եւ ուր որ ալ գտնուինք, ինչ որ ալ ընէք, ջանացէք ստեղծել ձեր շուրջը քրիստոնէական մաքուր միջոցառում մը: Նմանող եղէք Քրիստոսի՝ գործով, հոգիով, խորհուրդներով եւ զգացմամբ: Ջանացէք նաեւ նմանցնելու ձեր շուրջիները Քրիստոսին, ըլլալու համար ոչ թէ քրիստոնեայ կոչուողներ, այլ ընտիր քրիստոնեաներ, քանի որ Քրիստոսի նմանելով է միայն որ այս կեանքէն մեզի հետ պիտի տանինք այն կատարելութիւնը, զոր տուած ենք մեր հոգւոյն, եւ ուրիշ բան չպիտի թողունք երկրի վրայ, բայց եթէ՝ մեր գործած բարի գործերը»:

Հուսկ բանքը, ըստ սովորականի, վիճակուեցաւ Կիրակնօրեայ Դպրոցներու ընդհ. քարտուղար եւ կեդրոն բաժնի տեսուչ՝ Պրն. Գ. Ներսոյեանի, որ ապա տուաւ շրջանաւարտներու դասակարգը՝ Ա. Աղաւնի Աւագեան, Բ. Վեհանոյ Ապահունի եւ Յակոբ Ճէպէճեան, Գ. Աշխէն Վարդանեան, որոնք ստացան իրենց մրցանակները:

Պրն. Ներսոյեան շնորակալութիւն յայտնեց ներկաներուն, մասնաւորաբար Հայկազեան Վարժարանի Հոգաբարձութեան, Ս. Քառասնից Մանկանց

Եկեղեցւոյ Թաղականութեան, Կիլիկեան Վարժարանի Հոգաբարձութեան եւ Տնօրէնութեան, Կրթասիրաց Վարժարանի Հոգաբարձութեան եւ Տնօրէնութեան, որոնք իրենց դպրոցի սենեակները տրամադրելով օգտակար եղած են Կիրակնօրեայ Դպրոցին: Մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց նաեւ փոխ-Տեսուչ եւ վաստակաւոր ուսուցչուհի Տիկ. Ա. Ֆատրգճեանի, որ մօր մը գուր-գուրանքով դաստիարակեց շրջանաւարտները, եւ բոլոր ուսուցիչներուն:

Երգչախումբը երգեց «Ամէն Հայր Սուրբ» շարականը:

Հանդէսը վերջ գտաւ Տէր Կարապետ Հօր «Պահպանիչ»ով:

«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ »
Տեղեկատու Գայգ. Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու
Ապրիլ, Մայիս, Յունիս 1956
Անթիլիաս

ՎԻՃԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ

*ՀԵԿԴՕՄ*ի Գրական-Գեղարուեստական յանձնախումբի նախաձեռնութեամբ, տեղի ունեցաւ վիճաբանական ասուլիս մը՝ Կիրակի, Մայիս 6ին, Կեդրոն բաժնի մէջ: Ներկայ էին մօտ 200 ՀԵԿԴՕՄ ականներ եւ ուսուցիչ-ուսուցչուհիներ: Վիճաբանութեան նիւթ առնուած էր «Շարժապատկերի պէ՞տք է երթալ թէ ոչ»: Կը դատապարտէր՝ Օր. Վարդուհի Իսկէնտէրեան, իսկ կը պաշտպանէր՝ Պրն. Գրիգոր Հոթոյեան:

Դատական կազմը կը բաղկանար հետեւեալ անդամներէ. Արժ. Տ. Խորէն Քհնյ. Ներսէսեան, Տիկ. Աղաւնի Ֆստըգճեան, Տիկ. Մարի Փոլատեան, Օր. Անահիտ Պօզոյեան եւ Պրն. Երուանդ Ճէպէճեան:

Օրուան նախագահը՝ Պրն. Պերճ Էքմէքճեան, նիւթը ներկայացնելէ վերջ ներկաներուն, հրաւիրեց Օր. Վ. Իսկէնտէրեանը, որ դատապարտութիւնը կատարէ: Օր. Վարդուհի կէս ժամուան մէջ ներկայացուց շարժապատկերի վը՝ նասները՝ խնամքով պատրաստուած իր փաստարկութիւններով:

Ապա խօսեցաւ Պրն. Գրիգոր Հոթոյեան, դարձեալ կէս ժամուան մէջ պաշտպանելով իր թեզը:

Խօսք տրուեցաւ ներկաներուն, որոնք 15 վայրկեանի մէջ թեր կամ դեմ արտայայտութիւններ ունեցան նիւթին մասին: Կրկին հինգ վայրկեան ժամանակ տրուեցաւ իւրաքանչիւր վիճաբանողին, որ իր տեսակէտները պաշտպանեց:

Դատական կազմը առանձնացաւ, իր որոշումը առնելու համար, մինչ այդ երգուեցան կարգ մը շարականներ դաշնակի ընկերակցութեամբ Օր. Ա. Ճէպէճեանի:

Դատական կազմը շարժապատկերի կարգ մը օգտակարութիւնները թուելէ վերջ, անոր վնասները աւելի գտաւ, յայտարարելով, որ միջոցները նպատակը չեն արդարացներ:

Գովելի է Գրական յանձնախումբի այս ձեռնարկը, որ յաղթանակ մը արձանագրեց, եւ կը թելադրենք որ յաճախ կազմակերպուին նման ձեռնարկներ, օգտակար ըլլալու համար մեր շրջանակին:

Ասուլիսը վերջացաւ ժամը 6ին, Տէր Հօր «Պահպանիչ»ով եւ Տէրունական աղօթքով:

«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»
Տեղեկատու Հայց. Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու
Ապրիլ, Մայիս, Յունիս 1956
Անթիլիաս

ԿԱՂԱՆԴԻ ՀԱՆՐԱՊԵՏ

Ինչպէս ամէն տարի, ամանորի առթիւ աշակերտական հանդէս մը տեղի ունեցաւ Հայց. Եկեղեցւոյ կիրակին. դպրոցներու կեդրոն բաժնին մէջ, Կիրակի, 1956 Յունուարի 1ին, կէսօրէ վերջ ժամը 2ին:

Հանդէսը սկսաւ «Տէրունական Աղօթք»ով, զոր երգուեցաւ աշակերտութեան կողմէ: Ապա՝ կիրակնօրեայի մաղթերգը:

Բացման խօսքը կատարեց տեսուչ պրն. Գ. Ներսոյեան, որ շնորհաւորեց բոլորին կաղանդը եւ ըրաւ կարգ մը յորդորներ:

Սկսնակ բաժնէն աղօթք մը արտասանեց փոքրիկն Սօսի Գասապեան: Խումբը երգեց «Տեսէք Սուրբ Ծննդեան Ծառը» եւ «Խոր Մութին Մէջ Այս Գիշեր»ը:

Խմբային նուագ մը կատարուեցաւ՝ դաշնակ՝ օր. Արաքսի Ճէպէճեան եւ ջութակ՝ պրն. Ռուբէն Գիւլճանճեան:

Գեղեցիկ առողանութեամբ եւ ապրումով արտասանեց երէց դասարանէն Հերմինէ Սարգիսեան՝ Գրիգոր Վարդգէսի «Նոր Տարուան Սեմին» քերթը՝ Լածը:

Դաշնակի վրայ նուագեց Մէլրի Տէօքմէճեան, արտասանեց՝ Աղաւնի Աւագեան, ներկաները երգեցին «Խորհուրդ Մեծ» շարականը, դաշնակի վրայ նուագեց Արմենուհի Յարութիւնեան:

Մինչ կաղանդ պապան կու գար, ներկաները երգեցին «Կարծեմ Կու Գայ Կաղանդ Պապան»:

Այս տարի կեդրոն բաժնի վարչութիւնը որոշեց Ծնունդի պտոյտէն հաւաքուած նուիրատուութիւններէն յատկացնել կաղանդի նուէրներուն եւ ուրախացնել աշակերտութիւնը:

Աշակերտներուն տրուեցաւ մատիտ, տետրակ եւ նարինջ մը:

Կաղանդ Պապան՝ յանձինս պրն. Արշակ Գալէմքեարեանի՝ լաւապէս մարմնաւորուած էր որ իր յորդորները տուաւ աշակերտութեան եւ պահանջեց որ անոնք ալ իրեն շարական մը երգեն, երգուեցաւ «Նմանեալ Մովսէսի» շարականը:

Հանդէսը փակուեցաւ «Յամենայն Ժամու» աղօթքով:

«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»
1956

ՄՆՈՂԱԿԱՆ ՀԱՒԱՔՈՅԹ

Կեդրոն բաժնի վարչութիւնը ծնողական հաւաքոյթ մը կազմակերպեց, որուն նպատակն էր գլուխ-գլխի խօսակցութիւն մը ունենալ մեր աշակերտութեան ծնողներուն հետ, իրենց զաւակներուն կրօնական դաստիարակութեան խնդրին շուրջ, որ տեղի ունեցաւ Կիրակի, 20 Նոյեմբեր 1955, երեկոյեան ժամը 4:30ին:

Հաւաքոյթը սկսաւ «Տէրունական Աղօթք»ով: «Տէրը իմ հովիւս է» սաղմոսը արտասանեց փոքրիկն Նիկողոս Դանիէլեան: Հերմինէ Սարգիսեան արտասանեց Գրիգոր Վարդգէսի «Կիրակնօրեայ վարժարան»ը, Ներսէս Գարամանուկեան՝ «Ով մեծդ Աստուած» աղօթքը:

Դաշնակի վրայ նուագեց՝ օր. Արաքսի ձէպէճեան՝ «Րըբրօշտ՝ ամուր»ը, Ռիթա Սիւլահեան արտասանեց «Ով բարերար հայր» աղօթքը, փոքրիկն Գասապեան արտասանեց «Դատ արա ինձ Աստուած»ը, նուագ՝ «Անժէլիս», օր. Ա. ձէպէճեանէն: Արմենուհի Յարութիւնեան արտասանեց «Մօրս գերեզմանը», Մատլէն Զափարեան, «Մեր կիրակնօրեան»:

Երէց դասարանը արտասանեց Վահան Թէքէեանի «Եկեղեցին Հայկական»ը, կրկին երէց դասարանի կողմէ եղաւ խմբերգ մը՝ «Վարանիմք» մեղեդին:

Յայտագրի առաջին մասի աւարտումէն վերջ, բոլոր աշակերտները տուն դրկուեցան եւ սկսաւ գլուխ-գլխի խօսակցութիւնը: Գլխաւոր խօսողն էր պր. Գ. Ներսոյեան, որ ի միջի այլոց ըսաւ, հաւաքոյթին նպատակը բացատրելէ վերջ:

«Ներկայ օրերուն, հետզհետէ վտանգ կը սպառնայ մեր նկարագրին եւ բարքերուն վրայ: Մեր տուներէն ներս չեն տիրեր այն բարքերը, որոնք կը տիրէին ասկէ 50 տարի առաջ: Իմ հօրս մահուան 21 տարի կ'ընէ, եթէ ան այսօր մեր տունը գայ, բարքերու ահռելի տարբերութիւն մը պիտի տեսնէ: Դէպի լաւ չէ որ կ'ընթանանք, այլ՝ դէպի գէշը:

«Մենք մեր բոլոր միջոցները պէտք է գործադրենք, կարելի եղած չափով մեր հին բարքերուն վերադառնալու եւ հոգեւոր կրթութիւնը ամուր հիմերու վրայ դնելու համար: Այսօր հաւաքուած ենք հոս այդ միջոցներուն մասին խորհելու եւ գործադրելու համար»:

Ապա ծնողները խօսք առին, եւ իրենց կարծիքները յայտնեցին: Խօսք եղաւ նաեւ աշակերտներու սորվածներուն շուրջ եւ տան մէջ անոնց դերին մասին: Պրն. տեսուչը բաւական երկար խօսեցաւ նախապէս քանի մը տարի առաջ ծնողներու ուղղուած հարցումներուն եւ ստացուած արդիւնքներուն մասին:

Մնողներուն հետ խօսուեցաւ նաեւ, որ ինչպէս կարելի է գործակցիլ կիրակնօրեայ դպրոցին, վերի առաջադրութիւնները գործի վերածելու համար:

Հաւաքոյթը փակուեցաւ ժամը 7ին, «Յամենայն ժամու» աղօթքով:

«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»
1956

ԼՈՒՐԵՐ ՀԱԼԷՊԻ Հ.Ե.Կ. ԴՊՐՈՑՆԵՐԷՆ

ՈՂՋԵՐԹԻ ԵՐԵԿՈՅԹ

Կեդրոն բաժնի վաստակաւոր եւ ժրաջան ուսուցչուհիներէն՝ քարտուղար Օր. Անժէլ Շէհիրեան Սուտան մեկնումին առիթով, կեդրոն բաժնի վարչութիւնը երեկոյթով մը զինք պատուելու գեղեցիկ գաղափարը ունեցած էր, որ տեղի ունեցաւ Երկուշաբթի, 5 Նոյեմբեր 1955, երեկոյեան ժամը 7ին, օր. Վարդուհի Իսկէնտէրեանենց բնակարանը: Կեդրոն բաժնի գրեթէ բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիները փութացած էին իրենց ներկայութեամբ պատուել ամէնուն համար սիրելի քարտուղարուհին:

Երեկոյթը սկսաւ «Տէրունական Աղօթք»ով, զոր երգեցին ներկաները՝ յոտընկայս:

Բացման խօսքը կատարեց վարչութեան ատենապետ՝ պրն. Գրիգոր Հոթոյեան, որ վեր առաւ օր. Անժէլի արժանիքները եւ ցաւ յայտնեց անոր մեկնումին առթիւ: Մաղթեց որ, ան իր գացած տեղը շարունակէ իր այնքան սիրած կիրակնօրեայի գործը:

Ապա խօսք տրուեցաւ կրօն. դաստիարակութեան խորհուրդի ատենապետ՝ Արժ. Տ. Կարապետ Քհն. Նալպանտեանի, որ ի միջի այլոց ըսաւ. «Այս օրւան այս հաւաքոյթը կու գայ փաստել, որ այս յարկէն ներս աշխատանքի գնահատանք կայ: Թէեւ հոգեւոր աշխատանք կատարողները որեւէ գնահատանք չեն ակնկալեր, սակայն գնահատանք եւ ակնկալութիւնը մարդկային է: Մենք պէտք ունինք բարի տրամադրութիւններով օժտուած երիտասարդ-երիտասարդուհիներու, որոնք նուիրուելով այս սրբազան գործին՝ օգտակար ըլլան մեր նոր սերունդի կրօնաբարոյական կրթութեան: Խորհուրդս ուրախ է, որ օր. Անժէլի մեկնումին առիթով, պատ. վարչութիւնը այս հաւաքոյթը կազմակերպած է»: Ապա, Արժ. Տէր Հայրը իր շինիչ թելադրութիւնները ուղղեց օր. Շէհիրեանին:

Տեղի ունեցաւ մերթ ընդ մերթ խմբերգներ, մերերգներ, արտասանութիւններ եւ անակնկալներ՝ խանդավառ մթնոլորտ մը ստեղծելով:

Ներկաները հիւրասիրուեցան սուրճով, թերթանոյշով, պանանով, շագանակով, մանտարինով եւ լոխումով: Մատուցուած սուրճը եւ լոխումը սիրալոյսով տրամադրեցին տանուտէր օր. Իսկէնտէրեանենք, մնացեալը՝ վարչութիւնը:

Խօսք տրուեցաւ նաեւ օր. Անժէլ Շէհիրեանի, որ յուզումով եւ արցունքոտ աչքերով արտասանեց իր զգացումները եւ խօսեցաւ իր վերջին մնաք բարովը:

Վերջին խօսքը՝ կիրակնօրեայ դպրոցներու քարտուղար եւ կեդրոն բաժնի սիրելի տեսուչ՝ պրն. Գ. Ներսոյեանին էր, որ մեր կազմակերպութեան պաշտօնեաները նմանցուց կուսակցականներու եւ կազմակերպութիւնը կուսակցութեան մը: Եւ թելադրեց, որ պաշտօնեաները կուսակցականի մը նման հաւատքով եւ նուիրումով շողկապուած պայքարին չարին դէմ: Իր վերջին

յորդորները ուղղեց օր. Շէհիրեանին, գնահատեց անոր 10 տարուան ծառայութիւնը կեդրոն բաժնին մէջ եւ յաջողութիւն մաղթեց անոր:

Հաւաքոյթին ներկայ էր նաեւ, ՀԵԿԴՕՄի ընկերային յանձնախումբը, որուն կ'անդամակցէր օր. Շէհիրեան: Յանձնախումբի ներկայացուցիչը՝ պրն. Ներսէս ձէպէճեան, խօսք առաւ եւ օրուան պատշաճ արտայայտութիւններ ունեցաւ:

Հաւաքոյթը փակուեցաւ գիշերուան ժամը 10ին, «Յամենայն ժամու» աղօթքով:

«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»
Յունուար-Փետրուար-Մարտ 1956

ԱՄԱՆՈՐԵԱՆ ՀԱՒԱՔՈՅԹ

Հալէպի թեմին կրօնական դաստիարակութեան խորհուրդը, այս տարի, գեղեցիկ գաղափարը յղացած է բոլոր կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչները մեկտեղել տօնելու համար կաղանդը, որ տեղի ունեցաւ Երկուշաբթի, Յունուարի 3ի, երեկոյեան ժամը 7ին Ազգ. Մանկավարտէզի սրահը:

Ներկայ էին Կրօն. Դաստ. խորհուրդէն Արժ. Տ. Կարապետ Քհն. Նալպանտեան եւ տիկ. Լեւոնիկ Սեթեան:

Հաւաքոյթը սկսաւ «Տէրունական Աղօթք»ով, որ երգուեցաւ ներկաներուն կողմէ, ապա՝ կիրակնօրեայ մաղթերգը:

Բացման խօսքը կատարեց փոխ տեսուչ, աւագ դասարանի ուսուցչուհի եւ Կ. Դ. խորհուրդի ատենադպիր՝ տիկ. Աղաւնի Յըստըգճեան, որ բացատրեց կազմակերպուած հաւաքոյթին նպատակը:

Երգուեցաւ «Սորհուրդ Մեծ» շարականը, նուագի ընկերակցութեամբ օր. Արաքսի Ճէպէճեանի, արտասանեց օր. Մարի Խաչերեան՝ «Ամանորի Պարիկ», մեներգեց պրն. Սարգիս Համպոյեան՝ «Սիրտ իմ Սասանի» մեղեդին, արտասանեց պրն. Րաֆֆի Յովհաննէսեան՝ «Գործէ Մշակ»ը, դաշնակի վրայ նուագեց օր. Անահիտ Պոպոյեան:

Խօսք առաւ խորհուրդի ատենապետ՝ Արժ. Տ. Կարապետ Քհն. Նալպանտեան, որ ի միջի այլոց ըսաւ.

«Յանուն խորհուրդի կը շնորհաւորեմ ձեր Նոր Տարին եւ Ս. Ծնունդը: Մենք կը գնահատենք ուսուցչական կազմին աշխատանքը եւ զոհաբերութիւնը, այս գործը պէտք է, որովհետեւ ներկայ մեր բարքերը խաթարուած են, մեր հաւատքը զգալապէս պակասած է», մեր ներկայ կեանքին դրական եւ բացասական կողմերը թուելէ վերջ, տէր հայրը ուսուցիչներուն կարգ մը խրատականներ տուաւ, բացատրեց Կրօնական Դաստիարակութեան խորհուրդին պաշտօնը եւ դպրոցներուն հետ անոր ունեցած կապը եւ այլն:

Ներկաները հիւրասրուեցան թէյով, կարկանդակով եւ նարինջով, նոյն միջոցին նուագեցին օր. Ճէպէճեան դաշնակի վրայ եւ պրն. Գիւլհանէն՝ ջութակի:

Վերջին խօսքը տրուեցաւ պրն. Գէորգ Ներսոյեանին, որ խօսեցաւ ուսուցչական գինակցութեան վրայ, եւ աւելցուց որ, եթէ ուսուցիչները գիրար տեսնեն, եղբայր պէտք է տեսած ըլլան, իրարու հետ պէտք է շողախուրին առանց որեւէ հաշիւի, քրիստոնէական գաղափարական այս գործը լաւագոյնս յառաջ տանելու համար:

Պրն. Ներսոյեան յայտնեց նաեւ, որ կիրակնօրեայ դպրոցներու վարիչ-տնօրէն նշանակուած է Հոգչ. Տ. Բաբգէն Վրդ. Վարժապետեան, որ մինչեւ գատիկ Պէյրութ պիտի ըլլայ, ղեկավարելու համար այս ընդարձակ գործը, որ մէնուրեք պահանջ դարձած է:

Հաւաքոյթը փակուեցաւ Տէր Հօր «Պահպանիչ»ով:

«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»
1956
Յալէպ

ՎԱՐՂԱՆԱՆՅՐ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ ԿԵՂՐՈՆ ԲԱԺՆԻ ՄԷՋ

Կիրակի, Փետրուարի 12ին, Վարդանանց յիշատակին հանդէս մը տեղի ունեցաւ Կեղրոն բաժնի մէջ:

Հանդէսը սկսաւ Տէրունական աղօթքով: Բացման խօսքը կատարեց Կիրակնօրեայ Դպրոցներու Քարտուղար եւ Կեղրոնի բաժնի Տեսուչ՝ Պր. Գ. Ներսիսյեան, որ ներկայացուց Վարդանանց կրօնասիրութիւնը եւ թելադրեց ներկաներուն հետեւիլ Վարդանանց ուղիին:

Արմէնուհի Յարութիւնեան արտասանեց «Եւ Դուն Աւարայր»ը: Պրն. Սարգիս Համպոյեանի առաջնորդութեամբ երգչախումբը երգեց «Նորահրաշ Պսակաւոր»ը: Հէլէն Գասարճեան արտասանեց «Վարդան» քերթուածը: Խումբը երգեց «Իմ Հայրենեաց Հոգի Վարդան»ը: Պր. Ս. Համպոյեան երգեց «Լոեց Ամպերը», դաշնակի ընկերակցութեամբ Օր. Արաքսի ձէպէճեանի:

Օրուան բանախօսն էր Անթիլիասի ընթացաւարտներէն Պրն. Ասատուր Կիլգէլեան, որ իր խօսքին մէջ ներկայացուց Վարդանանց պատերազմի կարեւորութիւնը մեր ազգային դոյատեւման տեսակէտէն, անոր պատճառը եւ Ե. դարու Հայաստանի քաղաքական ու կրօնական կացութիւնը: Ան իր բանախօսութիւնը վերջացուց, արտասանելով Վ. Թէքէեանի «Խորհուրդ Վարդանանց» քերթուածը:

Երգչախումբը երգեց Ալիշանի «Բլբուլն Աւարայրի» երգը: Դաշնակի վրայ կտոր մը նուագեց Օր. Արաքսի ձէպէճեան:

Հանդէսի վերջաւորութեան, անուններու շնորհաւորութիւններ կատարեց տեսուչը եւ հանդէսը փակուեցաւ «Յամենայն Ժամու» աղօթքով:

«ՄԵՐ ԿԵԱՆՔԸ»
Տեղեկատու Հայց. Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու
Ապրիլ, Մայիս, Յունիս 1956
Անթիլիաս

ՏԱՐՕՆՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՀԱՒԱՔՈՅԹԸ

Կիրակի, 26 Փետրուարի 1950, Երեկոյեան ժամը 7:30ին, տեղի ունեցաւ Տարօն Տուրուբերանի Երիտասարդաց Միութեան անդրանիկ ձեռնարկը, թէ-յասեղան մը՝ անդամներուն համար, Հայ Երիտասարդաց Ակումբին մէջ, ներկայութեամբ հարիւրէ աւելի անդամներու:

Տեղին կը գտնեմ, նախ քան հաւաքոյթի նկարագրութիւնը, կարգ մը բացատրութիւններ տալ այս միութեան նպատակին շուրջ:

Միութիւնը իր գոյութիւնը կը պահէր մինչեւ Երկրորդ Համաշխարհային պատերազմ, եւ ունեցած է օգտակար գործունէութիւն մը իր գոյութեան ընթացքին: Սակայն, պատերազմը պատճառ դարձաւ, որ միութիւնը կազմալուծուի, եւ մնայ անուանական գոյութիւն մը միայն:

Այս միութիւնն է որ կը վերակենդանանայ Տարօնցի Երիտասարդներու փափաքով, եւ նոր աւիշ ստանալով երէց տարօնցիներէ:

Ի՞նչ է այս միութեան նպատակը:

Երբ հայ բազմութիւններ հարկադրուեցան լքել իրենց դարաւոր հայրենիքը եւ ապաստանիլ հիւրընկալ պետութեան սահմաններէն ներս, մեզ կը մտահոգէր մէկ հարց.

«Կարելի պիտի ըլլա՞յ այս բազմութիւնները հայ պահել: Իրենց հայրենի յիշատակներով, բարքերով, աւանդութիւններով, մէկ խօսքով՝ հայկական իր բոլոր արժանիքներով»:

Այս մտահոգութիւնը միշտ ի մտի ունենալով կը կազմուի այս միութիւնը, ուրիշ բազմութիւն միութիւններու հետ պայքար մղելու համար հասարակաց թշնամիին դէմ.՝ այլասերման վտանգին դէմ:

Ինչպէ՞ս կարելի է հայր հայ պահել: Տարօնցի հայր մանաւանդ, որ ունի ինքնուրոյն բարքեր եւ կենցաղ:

Այդ հարցումին պատասխանն է որ պիտի տայ միութիւնը՝ իր յառաջիկայ գործունէութեամբ, որ պիտի ըլլայ մօտաւորապէս հետեւեալը.՝

Նախ՝ ծանօթացնել բոլոր տարօնցի Երիտասարդները իրարու, սրտի խոր կապ հաստատելով անոնց միջեւ:

Մասնաւոր ծրագրով մեր նոր սերունդին սորվեցնել մեր տոհմիկ պարերը՝ որոնք այնքան գեղեցիկ եւ սրտայոյզ են, բոլոր հայ սրտերուն համար:

Վառ պահել անոնց սրտին մէջ Տարօն Աշխարհի ոգին, որով ներշնչուեցան ու գործեցին հայ յեղափոխութեան նուիրական դէմքերը, ծերունի Մակարէն մինչեւ Գէորգ Չաւուչ:

Կենդանի պահել Մասնոյ գաւառական բարբառը, որ պիտի նպաստէ նոր սերունդի հոգեկան դաստիարակութեան:

Սիրցնել Հայաստանեայց Եկեղեցին, հայ լեզուն, մանաւանդ հայ գրականութիւնը, կազմակերպելով դասախօսական շարքեր:

Ահա այս առաջադրութիւններով հրապարակ կու գայ Տարօն Տուրուբերան Երիտասարդաց Միութիւնը: Վերոյիշեալ նպատակներու առաջին կէտէն

է որ սկսան անոնք գործի, կազմակերպելով անդամական առաջին հանդիպումը, որպէսզի մեր երիտասարդները ծանօթանան իրարու:

Հանդէսին բացումը կատարեց միութեան ատենապետ Պրն. Մուշեղ Մուշեղեան, եւ հակիրճ բացատրութիւններ տուաւ միութեան կեանքին, նպատակներուն եւ իրագործելի ծրագիրներուն շուրջ:

Վարչութիւնը կոկիկ յայտագիր մը պատրաստած էր, որ գործադրութեան դրուեցաւ բացման խօսքէն վերջ:

Ապրումով արտասանեցին Պրն. Եղուարդ Բատոյեան, Սիւսանթոյին «Տարօնի Համար», եւ Պրն. Գրիգոր Հոթոյեան՝ «Ողջոյն Քեզ Տարօն» քերթըլածները: Մեներգեցին Պրն. Սարգիս Սարգիսեան՝ «Սասուն», Պրն. Գեղամ Ղազարեան՝ «Ես մի ծառ եմ ծիրանի», Պրն. Սեդրակ Խաչատուրեան «Իմ Հայրենիք ջան», եւ Պրն. Անդրանիկ Դաւիթեան՝ «Սիրոյ երգը»: Ապա տեղի ունեցան շարք մը անակնկալներ, որոնք զուարթ մթնոլորտ ստեղծեցին:

Մեր հայրենակիցներէն նշանաւոր փողահար Պրն. Յարութիւն Սարգիսեանի նուագին ընկերակցութեամբ, սկսան մեր տոհմիկ պարերը: Կովանտ, Եարխուշտէ, Փափուրէ, Կորանի՝ կը փոխուէին կարգով, ստեղծելով մեծ խանդավառութիւն բոլոր ներկաներուն մէջ, եւ, մեզ փոխադրելով մեր հայրենի երկնքին տակ: Շատեր կը զարմանային թէ այս երիտասարդները ե՞րբ եւ ի՞նչպէս սորված են այս սքանչելի պարերը, կարծես նոր եկած ըլլային Տարօնէն:

Տեղի ունեցաւ վիճակահանութիւն մը, որուն համար դրուած էին երեք նուէրներ: Ա) Տարօնի գեղեցիկ արծիւ մը՝ գծուած իւղաներկով: Բ) Կարօ Սասունիի «Գրական Գոհարներ» հատորը: Գ) Նոյնպէս Կարօ Սասունիի «Տարօնի Պատերազմը»:

Խօսք տրուեցաւ հիւրաբար քաղաքս գտնուող Եղուարդ Սարկաւազէլոյեանի, որ յայտնեց իր անկեղծ զգացումները՝ օրուան առիթով, եւ, կարգ մը օգտակար թելադրութիւններ ըրաւ Տարօնցի երիտասարդներուն, որպէսզի տէր կանգնին Հայ Եկեղեցիին եւ պայքարին այլասերման դէմ:

Երկրորդ խօսողն էր Պրն. Արտաշէս Յովհաննէսեան, որ նոյնպէս յայտնեց իր տպաւորութիւնները եւ թելադրանքները:

Ապա տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Վերջին խօսքը տրուեցաւ հայրենակցական միութեան ատենապետ Պրն. Մկրտիչ Մկրտիչեանի, որ յայտնեց իր ուրախութիւնը՝ այս միութեան կազմութեան համար, եւ յաջողութիւն մաղթեց մեր յառաջիկայ գործունէութեան համար:

Հաւաքոյթը պաշտօնապէս փակուեցաւ, սակայն տղաքը չէին ուզեր բաժնուիլ ստեղծուած տաք մթնոլորտէն, որոնք ժամը 12ին մեկնեցան ուրախ տրամադրութիւնով:

«ԱՐԵՒԵԼԸ»
1950
Յալէպ

ՄԵՐՈՒ ԱՂԲԻՒՐԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

Տարօն-Տուրուբերանի Երիտասարդաց Միութեան կազմակերպած «Սերոբ Աղբիւր» ներկայացումը, առաջին անգամ ներկայացուեցաւ Կիրակի, 3 Դեկտեմբեր 1950, առաւօտեան ժամը 9:30ին, սինեմա Տիւնիայի մէջ:

Ինչպէս ըսած էինք «Գէորգ Չառուչ» ներկայացումի ատեն, որ Տարօն-Տուրուբերանի Երիտասարդաց Միութիւնը շատ կենսական պահանջ մը կը լըրացնէ՝ մեզի ներկայացնելով պարբերաբար, դաշնակցական ղեկավար Ֆէտայիներու կեանքը: Ֆէտայիներ՝ որոնք իրենց կեանքը զոհած են մեր հայրենիքի փրկութեան, հայ ինչքի եւ պատուի պաշտպանութեան ի խնդիր:

Պէտք է ըսել որ ամէնամեծ գնահատանքի արժանի է թատերգութեան հեղինակ Արամ Երէցեան (այժմ Հմայեակ Քհնյ. Երէցեան), որ գրած է եւ կը գրէ այսպիսի յեղափոխական թատերգութիւններ:

Այսպիսի ներկայացումներ կը նպաստեն հայ ժողովուրդի ինքնաճանաչումին, եւ, պատճառ կը դառնան, որպէսզի ճանչնանք մեր արժէքները եւ հպարտանանք այսպիսի հերոսներ ունեցած ըլլալնուս: Հետեւինք անոնց ուղիին եւ վարակուինք անոնց խելայեղ հայրենասիրութեամբը:

Դժուար է արտայայտել հո՛ս, ինչ որ կը զգանք հո՛ն...: Կարծես քանի մը ժամուան համար Հայաստան՝ Սասունի լեռներուն վրայ՝ հայ Ֆէտայիներու քով ըլլայինք:

Ներկայացումը սկսելէն առաջ բացման խօսքը ըրաւ Տոքթ. Գարեգին Երէցեան, եւ, Սերոբ Աղբիւրի մասին քանի մը խօսք խօսելէ վերջ, թելադրեց հայ նոր սերունդին, որպէսզի հետեւին մեր աննման Ֆէտայիներու անշեղ ուղիին, եւ անոնց կեանքէն եւ ապրելակերպէն օրինակ առնեն:

Երկրորդ արարէն վերջ, խօսք տրուեցաւ թատերգութեան հեղինակ Հմայեակ Քհնյ. Երէցեանին, որ սքանչելի ճառ մը խօսեցաւ, ի միջի այլոց օրինակ բերաւ Խրիմեան Հայրիկի դէպի Պերլինի վեհաժողովը մեկնելը, եւ ձեռնունայն վերադառնալէն վերջ, անոր յայտարարութիւնը թէ, «հոն (վեհաժողովին մէջ) հերիսայի կաթսայ մը կար, եւ անոնք որ երկաթէ շերեփով եկած էին՝ առին իրենց բաժինը: Իսկ մենք գացած էինք թուղթէ շերեփներով: Երբ ուզեցինք առնել, թուղթը ծռելով հերիսան թափեցաւ»:

Սրահը բերնէ բերան լեցուած էր եւ կազմակերպողները ստիպուեցան դուրսէն աթոռներ բերել, սակայն, շատեր ոտքի մնացին: Այդ բազմութիւնները կը խայտային, երբ կը տեսնէին հայ Ֆէտայիները՝ իրենց զէնքերը ուսերնին: Այդ սարերու ասլանները, որոնց համար կեանքը իմաստ չունէր առանց ազատութեան, որոնք ուխտած էին հետեւեալ երկու խօսքերով - «Մահ կամ Ազատութիւն»: Ֆէտայիներ՝ որոնցմէ կը սոսկային քիւրտերն ու թուրքերը հաւասարապէս, եւ նոյնիսկ Սուլթան Համիտը...:

Ներկաներուն աչքերէն արցունքի կաթիլներ զսպուեցան, երբ զազան Խալիլը, դաւաճան Աւէի դաւադրութեամբ, գլխատեց դաշնակցական անմահ հերոս «Սերոբ Փաշա»ն:

Իրենց տեղին, մերթ ընդ մերթ երգուեցան յեղափոխական երգեր ինչ-

պէս «Նոյեմբեր ամսուն» եւայլն:

Մանաւանդ առինքնող էին Տարօնի տոհմիկ պարերը: Ֆէտայիները ուրախութեան եւ պարի մէջ էին (Բաբուրի, Կովընտ, Եարխուշտայ եւայլն) երբ լուր բերին, թէ իրենց խմբապետը՝ Սերոբ Փաշան սպաննուած է դաւադրութեամբ: Դադրեցաւ ամէն ուրախութիւն եւ բոլորը միաբերան, որոշեցին այդ աննման հերոսին վրէժը լուծել:

Թատերգութիւնը ընդհանուր առմամբ շատ յաջող ներկայացուեցաւ: Մանաւանդ տէքորները սքանչելի էին, պատրաստուած նկարիչ Աւոյի կողմէ: Գունաւոր լուսաւորումները աւելի մեծ փայլ տուին ներկայացման:

Ներկայացումի յուշարարն էր դերասանուհի Տիկ. Չափրաստ, որ սիրով տարաւ այդ դժուարին պարտականութիւնը, մեծ յաջողութեամբ:

Թէեւ մասնագէտ մը չենք թատերական քննադատութեանց, սակայն կ'ուզենք քանի մը խօսք ըսել դերակատարներու մասին, որոնցմէ շատեր սիրողներ էին:

Իր սիրալոյսով մասնակցութիւնը բերած էր ներկայացումին ծանօթ դերասան Աբովեան, ստանձնելով Խալիլի դերը:

Սերոբ Աղբիւրի դերին մէջ ձորձ Չափարեան շատ յաջող էր: Ան Մարութեանի սթիլտիոյին կը պատկանէր եւ լաւ ապագայ կը խոստանայ, մարմնական նմանութիւն ալ ունէր Սերոբ Աղբիւրին եւ լիովին արդարացուց իր վրայ դրուած յոյսերը:

Սօսէի դերին մէջ գտնուող օրիորդը բաւական յաջող էր եւ համարձակութիւն ունէր:

Մատնիչ Աւէի դերը կատարեց Լեւոն Տօնապետեան, որ արժեցուց իրեն վստահուած այդ դժուարին դերը: Լեւոն, մասնաւորաբար, այս սեռի դերերու մասնագէտ է: Կը կարծենք թէ պիտի սիրէ հայ թատրոնը եւ պիտի չզաւաճանէ անոր, որպէսզի օր մը հասնի իրական կոչումին:

Սպաղանցի Մակարի դերին մէջ Յակոբ Յակոբեան անդերազանցելի էր: Անիկա դերասանի ձիրք ունի եւ համարձակութիւն:

Անդրանիկի դերով՝ Նուպար Աւետիսեան, Գէորդ Չալուչի դերով՝ Աղաճան Եագուպեան, Սերոբի որդի Յակոբի դերով՝ Բիւզանդ Տօնապետեան, Զաքարի դերով՝ նկարիչ Շատոյեան, Մաթոյի դերով՝ Գաբրիէլ Գաբրիէլեան, Օմարի դերով՝ Մովսէս Միմոնեան, Ալիի դերով՝ Արմէն Յակոբեան եւայլն, բոլորը ալ իրենց կարելին ըրին, ներկայացումը յաջողութեամբ պսակելու համար:

Թատերգութիւնը կարելի է երկարել, Սերոբի կեանքէն կարգ մը դէպքեր աւելցնելով: Օրինակ, իր առաջին անգամ յեղափոխական դառնալու պարագան եւ պատճառները, եւայլն:

Մենք յաջողութիւն կը մաղթենք Տարօն-Տուրուբերանի Երիտասարդաց Միութեան, որպէսզի այսպիսի գեղեցիկ ձեռնարկներով մեզի ապրեցնէ մեր հայրենիքին մէջ, եւ, կատարէ այնպիսի մեծ գործ, որ գրքերու ընթերցումով կարելի չէ ստանալ:

«ԱԶԴԱԿ» Օրաթերթ
1951
Պէյրութ

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԹՐԻՓՈՒԽԻ ՄԷՋ

Փետրոսարեան փառապանծ ապստամբութեան 38րդ տարեդարձի տօնակատարութիւնը, ստուար բազմութեան մը ներկայութեան, տեղի ունեցաւ Կիրակի, 22 Փետրոսար 1959, կէսօրէ վերջ ժամը 3ին՝ «Նաւասարդ» Ակումբի սրահին մէջ:

Այս տօնակատարութեան նախագահելու հրաւիրուած էր՝ Փետրոսարեան Ապստամբութեան ղեկավար ղէմքերէն՝ ընկ. Կարօ Սասունի: Իսկ բանախօսելու՝ ընկ. Մինաս Թէօլէօլեան:

Օրուան նախագահը իր բացման խօսքին մէջ՝ ի միջի այլոց ըսաւ.

«Փետրոսարեան Ապստամբութիւնը պատմական իրադարձութիւն մըն է, Հայաստանի հողին վրայ՝ հայ ժողովուրդի գերագոյն մէկ ճիգով: Այդ տօնը կը պատկանի ամբողջ հայութեան, մանաւանդ նոր սերունդին:

«Այսօր, Փետրոսար 18ի գաղափարը վառ կը մնայ Սփիւռքի եւ Հայաստանի մէջ, Հայ ժողովուրդը հաւատարիմ կը մնայ իր անկախութեան գաղափարին»:

Հոս, օրուան նախագահը հպանցիկ պատմականը ըրաւ Փետրոսար 18ի նախորդող ղէպքերուն եւ մատնանշեց.—

«Հայաստանի խորհրդայնացումէն վերջ, բոլշեւիկները դժգոհութիւն իրենց խոստումը եւ վայրագօրէն ջարդեցին եւ բանտարկեցին հայ մտաւորականութիւնը եւ ղեկավարութիւնը: Կողոպտեցին հայ գիւղացիները եւ անջնջելի միջոցով ստեղծեցին՝ Հայաստանի մէջ:

«Ամբողջ ժողովուրդը մը ոտքի ելաւ՝ Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութեան տակ: Քանի որ մահը կայ, լաւ է պատուաւոր մեռնիլ, քան՝ անպատիւ ապրիլ: Այս հիմնական նպատակով հայկական դրօշը կրկին բարձրացաւ Հայաստանի խորհրդարանի շէնքին վրայ:

«Ինչ կ'ուզէր հայ ժողովուրդը: Անոնք գիտէին, թէ ապստամբութիւնը պարտութեամբ պիտի վերջանար. սակայն, ցոյց տուին, որ իրենք ալ հոգի ունին: Թէ երբե՛ք չեն մոռնար իրենց անկախութիւնը:

«Փետրոսար 18ով, հայ ժողովուրդը աւելի լաւ կ'ըմբռնէր թէ՛ ինչ է անկախութիւնը:

«Երբ հայ ժողովուրդը կը ճակատէր Սարդարապատ եւ Ղարաքիլիսայի ճակատներուն վրայ՝ չէր գիտեր թէ ինչ է անկախութիւնը, սեփական բանակը, դրօշակը: Բայց երկուքուկէս տարուան անկախութենէն վերջ, երբ ճաշակած էր այդ քաղցրութիւնները, չէր կրնար դիւրութեամբ հրաժարիլ անոնցմէ:

«Փետրոսար 18ի նախօրեակին, Դաշնակցականը, Սոցեալ Դեմոկրատը, Սոցեալ Յեղափոխականը եւ Ռամկավարը, բոլորը մէջ ճակատ կազմեցին՝ խորտակելու համար ստրկութեան շղթան: Համաձայն էր նաեւ՝ էջմիածնայ Կաթողիկոսը:

«Այս ապստամբութենէն վերջ, ես տեսայ հայ ժողովուրդը, որ Քաջազնունիի ղեկավարութեամբ արտասուալից աչքերով Հայկական. Եռագոյնը կը համբուրէր, որ կրկին հրապարակներուն վրայ կը ծածանէր»:

Նախագահի բացման խօսքին վերջ՝ Օր. Սօսի Բալեան ապրումով եւ գեղեցիկ առողանութեամբ արտասանեց Գրիգոր Վարդգէսի (Հոթոյեան) Փետրուար 18ին նուիրուած «Հոն» քերթուածը:

Իսկ Տիկ. Երանուհի Ուղուրլեան, իր գեղեցիկ ձայնով երգեց «Արագ»ը:

Ընկ. Սասունին հրաւիրեց օրուան բանախօսը, որ ամբողջ 45 վայրկեան խօսեցաւ Փետրուար 18ի հերոսական ապստամբութեան շուրջ՝ սրահի ստուար բազմութիւնը մագնիսացնելով: Կու տանք ընկ. Թէօլէօլեանի բանախօսութեան ամփոփումը:

«Օրուան նախագահը շատ հպանցիկ անցաւ Փետրուար 8ը ղեկավարող դէմքերու վրայէն, որովհետեւ Դաշնակցական մարդը անձի պաշտամունքին դէմ է: Ան այդպէս շարժեցաւ, քանի որ իր մասին խօսիլ պէտք պիտի ըլլար: Ան ապստամբութեան ղեկավար դէմքերէն մէկն է:

«Հայ նոր սերունդը ամբողջական գաղափար չունի Փետրուար 18ի մասին եւ զայն ներկայացնելու համար, հարկ է նաեւ ներկայացնել, ապստամբութիւնը կանխող դէմքերը: Նոր սերունդը, թերեւս, պարզ տօն մը կը կարծէ եւ չի կրնար կշռել անոր տարողութիւնը:

«Այսօր, հայ ժողովուրդը առանձին չէ որ կը տօնէ Փետրուարեան Ապստամբութիւնը, 200 միլիոն հաշուող Միացեալ Նահանգները հրապարակաւ կը յայտարարեն եւ կ'իւրացնեն այդ գաղափարը, հայ ժողովուրդի փառքի եւ հերոսութեան այդ թուականը: Անկախութեան գաղափարը եւ զայն պահպանելու գիտակցութիւնը:

«ՄԱԿի արխիւներուն մէջ արձանագրուած է հայ ժողովուրդի բռնկումը եւ ապստամբութիւնը բոլշեւիկեան բռնակալութեան դէմ: Հայ ժողովուրդը առաջինն է, որ ապստամբութեան դրօշ պարզած է սովետական իշխանութեան դէմ: Այս կէտն է, որ կ'ուզենք հոս մատնանշել»:

Յարգելի բանախօսը, հոս պատմականը ըրաւ Փետրուար 18ը կանխող դէպքերուն վրայ եւ շեշտեց Փետրուարեան Ապստամբութեան դրոշապատճառները: Ապա աւելցուց.

«Այսօր ժողովուրդի մէկ հատուածը կ'իտտած եւ կրաւորական բազմութիւն մը դարձած է: Անոնք սապէս կը մտածեն, եթէ կարելի չէ հօր եւ մեծ պետութեան մը դէմ պայքարելով կամ կռուելով անկախութիւն ձեռք բերել, պէտք է երթալ, ծունկի գալ եւ անոր ձեռքը համբուրել: Սակայն, մենք կ'ըսենք. հօրին ստրուկ չենք դառնար, եթէ այդ հոգեբանութիւնը տեղ գրաւած ըլլար մեր պապերուն մօտ, մենք այսօր ոչ Վարդանանց եւ ոչ Մայիս 28 ունեցած կ'ըլլայինք: Մեր բոլոր պարտութիւնները եւ զոհողութիւնները մենք յաղթանակ կը նկատենք եւ կը տօնենք այդ գիտակցութեամբ: Եւ այդ գիտակցութեամբ է, որ հայ ժողովուրդը Հայաստանի եւ սփիւռքի մէջ կ'ապրի եւ կը ստեղծագործէ, երբ բազմամիլիոն ժողովուրդներ քարտէսէն ջնջուած են: Այդ ոգին էր, որ կերտեց Մայիս 28ը եւ Փետրուար 18ը եւ պատրաստ է կերտելու նոր թուականներ: Հայաստանի մէջ, ամէն մէկ հայ, այդ ոգիով կ'ապրի: Իսկ եթէ հայ եռագոյնը այսօր չի փողփողիր, օր մը պիտի փողփողի կրկին:

«Անկախութեան ոգին չի մեռնիր հայ ժողովուրդի սրտին մէջ, նոյնիսկ եթէ ան ապրի ստրկութեան մէջ: 1937ի մտաւորականութեան աքսորը եւ ջարդը այդ կ'ապացուցանէ: Համայնավար բանաստեղծ Եղիշէ Չարենցի մէկ

քերթուածը կը հրատարակուէր Երեւանի մէջ, որ ունէր իր գաղտնիքը որ էր.
«Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ոյժի մէջն է»:

«Իսկ Ադասի Խանճեան, որ սպանուեցաւ Բերիայի կողմէ, օր մը, այդ
չրջանի Հայաստանի կրթական նախարար Դրաստամատ Սիմոնեանին կ'ըսէր.
«Մի օր կը գայ, որ այս իշխանութիւն կը տապալի, սակայն հայ ժողովուրդի
մէջ միակ ոյժը Հ. Յ. Դաշնակցութիւնն է, որ կրնայ ձեռք առնել իշխանութիւնը
եւ ղեկավարել երկիրը»:

Սիամանթոյի «Գաղափարին» քերթուածը արտասանեց Օր. Սեդա
Թերճանեանը, մեծապէս յուզելով ներկաները:

Տիկ. Երանուհի Ուղուրլեան երգեց «Տես Ինչ Վարար Ձուր Եկալ»:

Փակման խօսքը ըրաւ օրուան նախագահը եւ տօնակատարութիւնը
վերջ գտաւ «Մշակ Բանուոր»ով:

Տօնակատարութենէն վերջ, տեղի ունեցաւ ընտանեկան խրախճանք.
ստուար բազմութիւն մը փութացած էր գրաւելու սեղանները:

Տեղի ունեցան անակնկալներ, պարեր, երգ, արտասանութիւն եւ տեւեց
մինչեւ ժամը 12:

Շնորհաւորելի է հանդէսի եւ խրախճանքի կազմակերպութիւնը, որ
յիշատակելի պիտի մնայ:

«ԱԶԴԱԿ»
Ուրբաթ, 6 Մարտ 1959

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 67-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

«ՆՌԱՆ» ԳՈՅՆԸ ԺԱՊԱԻԿՆԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան կողմէ կազմակերպուեցաւ Սերգէյ Փարաճանովի (Սարգիս Փարաճանեան) «Նռան Գոյնը» ժապաւէնի ցուցադրութիւնը, Շաբաթ, 17 Ապրիլ 1982, երեկոյեան ժամը 8ին, «Օնթարիօ Սայէնս Սէնթըր»ի մէջ, մօտ 500 հանդիսատեսներու ներկայութեամբ:

Սերգէյ Փարաճանով կը համարուի Խորհրդային Միութեան մէջ վերացական ֆիլմերու ստեղծողը: Յատկապէս իր «Նռան Գոյնը» ժապաւէնով, առաջին անգամ ըլլալով ճանչցուած է Եւրոպայի մէջ, ուր յետագային կարեւորագրեցութիւն ձգած է շարժապատկերի արուեստին մէջ:

Փարաճանովի «Նռան Գոյնը» կը ցոլացնէ Հայ ժողովուրդի նկարագիրը եւ սովորոյթները: Օգտագործելով գերիրապաշտ պատկերներու համադրութիւնը, ան ներկայացուցած է Սայաթ Նովայի կեանքը, որպէս լաւագոյն օրինակ:

Ֆիլմի ցուցադրութենէն առաջ, Փարաճանովի արուեստին եւ արժէքին մասին հայերէն եւ անգլերէն լեզուներով խօսեցաւ Լոս Անճելըսէն յատկապէս ժամանած Տոքթ. Թալին Ոսկերիչեան-Սալիպեան:

Շարժանկարի ցուցադրութենէն ետք, խումբ մը համազգայնականներ եւ Տոքթ. Թալին Ոսկերիչեան, մտերիմ հաւաքոյթ մը ունեցան Հայ Կեդրոնին մէջ, ուր փորձուեցաւ վերլուծել Փարաճանովի անօրինակ տաղանդը:

ԳԱԼՈՒՍՏ ՊԱՊԵԱՆԻ «ՅԱԻԵՐԺԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ» ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի, 22 ապրիլ 1982, երեկոյեան ժամը 8ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական բացումը Գալուստ Պապեանի լուսանկարներու ցուցահանդէսին:

Հսկայ սրահի պատերուն վրայ խնամքով եւ ճաշակով ցուցադրուած էին Գալուստ Պապեանի մօտ 300 լուսանկարները:

Առաջին անգամ ըլլալով Հայ Կեդրոնէն ներս տեղի կ'ունենար լուսանկարներու ցուցադրութիւն, եւ 300է աւելի արուեստասէրներ ներկայ գտնուեցան, բացումին, անոնց կարգին՝ գանատական ֆիլմարուեստի ռահվիրաներէն՝ հայկական ծագումով Րոյ Թաշ, CKEY ռատիոկայանի թղթակիցը եւ այլ պաշտօնական հիւրեր:

Ընկ. Վրէժ-Արմէն Արթինեան, Մոնթրէալէն, շեշտեց թէ Գալուստի գլխաւոր առաքինութիւնն է որսալ մարդկային ապրումի պահերը:

Ներկաները հիւրասիրուեցան գինիով եւ պանրեղէններով:

Ցուցահանդէսը հանրութեան առջեւ բաց մնաց:

Ապրիլ 22-25 հազարաւոր հայ եւ օտար արուեստասէրներ եւ հայ հայրենասէրներ եկան դիտեցին Գալուստ Պապեանի երկու տարուան աշխատանքին արդիւնքը:

Գալուստ Պապեան, իր հայրենիք այցելութեան ընթացքին, նկարած է այնպիսի տեսարաններ եւ դէմքեր, որոնք իր հայեցողութեամբ ազգային գիտակցութեան, փառքի եւ վերածննդեան կը ծառայեն: Նկարած է իր կարելիութիւններու սահմաններուն մէջ, նկարներուն տալով լուսանկարչական արուեստի գեղեցկութիւն, հասկացողութիւն եւ տպաւորութիւն:

Բոլոր ներկաներն ալ կը միտին ըսել գլխաւորաբար մէկ բան. – Եղեռնի հրէշային ծրագրին ձախողութիւնը: Նաեւ կը ջանան սփիւռքահայութիւնը հայրենիքի շնչող իրականութեան հաղորդակից դարձնել:

Գալուստ Պապեանի լուսանկարները՝ «Յաւերժական Հայրենիք»ի երազով սնած հոգիի մը խանդաղատանքն ու երախտագիտական արտայայտութիւններն են:

Ան, այսօր, Ապրիլեան ոգեկոչումներու ընթացքին, սեւով ճերմակի վըրայ հայութեան եւ ամբողջ աշխարհին կը ցուցադրէ հայ ժողովուրդի վերածնունդը: Իր նկարած տխուր, տառապած, թուրքին եաթաղանէն ճողոպրած հայ մամիկը՝ գիրկին աշխոյժ եւ վրիժառու աչքերով հայ մանուկը՝ կ'ըսէ. – «Մեզ թաղել փորձեցիք, սակայն չյաջողեցաք, այդ մեղքին համար հաշիւ պիտի պահանջուի ձեզմէ»:

ԶՐՈՅՑ-ՎԻՃԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ

Այս ձեռնարկը կազմակերպուած էր յատկապէս երիտասարդութեան համար հետեւեալ խորագրով՝ «Ապրիլ 24 – երեք սերունդ ետք» եւ տեղի ունեցաւ Ուրբաթ, 23 ապրիլ 1982, երեկոյեան ժամը 8ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ 200է աւելի երիտասարդ-երիտասարդուհիներու:

Ասուլիս-հարցազրոյցի բնոյթ ունէր այս ձեռնարկը, առիթ տալով թորոնթոհայ երիտասարդութեան, որ արտայայտէ իր գաղափարներն ու զգացումները, օտար ափերու վրայ մեծցած եւ դաստիարակուած երիտասարդի տեսանկիւնէն:

Ձեռնարկի բացումը կատարեց ընկ. Լեւոն Հասըրճեան, որ խօսելէ ետք ձեռնարկի բնոյթին մասին, բեմ հրաւիրեց Ապրիլեան ոգեկոչումներու առիթով Մ. Նահանգներէն յատկապէս ժամանած ընկ. Մուրատ Թոփալեանը, որ պէսզի վարէ զրոյցը:

Ընկ. Թոփալեան իրական տուեալներով անդրադարձաւ հայ ժողովուրդի անցուցած ուղիին վրայ 1915 մինչեւ այս օրերը՝ շեշտելով սփիւռքահայ գանգուածներու քաղակականացման կարեւորութիւնը հասնելու համար մեր նպատակներու իրականացման եւ տէր դառնալու մեր իրաւունքներուն:

Ընկ. Թոփալեան, բացատրեց հայ երիտասարդութեան դերը եւ անոր կարեւորութիւնը, մղուող նահաւասար պայքարին մէջ:

Հաւաքոյթը այնուհետեւ շարունակուեցաւ զրոյցի ձեւով, եւ ընկ. Թոփալեան պատասխանեց եւ լուսաբանեց իրեն ուղղուած հարցումներուն եւ

հարցերուն:

Բաւական տաք վիճաբանութիւններ տեղի ունեցան, եւ բազմաթիւ երիտասարդներ տուին իրենց կարծիքները արծարծուած հարցերուն մասին:

Հաւաքոյթի պաշտօնական մասէն ետք, բաւական երկարատեւ երիտասարդութիւնը խանդավառութեամբ տակաւին կը խօսէր, բաժնուած զանազան խումբերու՝ զանազան հարցերու շուրջ:

Յաջող ձեռնակ մըն էր, որ կը միտէր հայ երիտասարդութեան մէջ հետաքրքրութիւն եւ հասկացողութիւն ստեղծել Հայ Դատի եւ անոր լուծման ճամբաներու որոնման ճիգերուն հանդէպ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Գանատայի մայրաքաղաք Օթթաուայի մէջ կայացած ցոյցէն ետք, որուն մասնակցեցան հայաբնակ բոլոր շրջաներէն 2500է աւելի հայեր, Թորոնթոյի մէջ տեղի ունեցաւ հրապարակային ժողովրդական ոգեկոչման հաւաքոյթը՝ Շաբաթ, 24 Ապրիլ 1982, երեկոյեան ժամը 7ին, 1000է աւելի հայորդիներու ներկայութեամբ:

Սոյն քաղաքական հաւաքին ներկայ գտնուեցան Դաշնակցային կառավարութեան ներկայացուցիչը՝ բնակութեան նախարար Պրն. Փօլ Գոզկիրով, Օնթարիոյի Խորհրդարանի անդամ եւ Ազատական կուսակցութեան ղեկավար Պրն. Տէյվիտ Փիթըրսըն, Օնթարիոյ Խորհրդարանի անդամ Պրն. Ճան Ուիլիէմզ եւ այլ պաշտօնատարներ:

Գանատական եւ հայկական քայլերգներու ունկնդրութենէն ետք, օրուան հանդիսավար ընկ. Վարդան Սամանճեան ըրաւ բացման խօսքը, ապա ներկայացուց պետական հիւրերը:

Օրուան կարգապահութեան կը հսկէին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները: Սրահին ձախ կողմը, առաջին շարքերուն վրայ նստած էին Հ.Յ.Դ. Գանատային Պատանեկան Միութեան անդամները եւ անոնց ետեւը՝ Եղեռնը տեսած տարեցնեքը, կուրծքերը զարդարուած ճերմակ մեխակներով:

Համազգայինի երգչախումբը, ղեկավարութեամբ Էդիկ Յովսէփեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Տիկ. Ռիմա Մարտիրոսեանի, երգեց երեք երգ՝ «Տալոսիկ», «Փռքի ճամբով» եւ «Սարդարապատ»:

Ապա, Մարտիկ Պազարեան ջութակով, Օր. Պերենձա՝ դաշնակով նըլազեցին երկու նուագ:

Իսկ, Մարտիկ Մնացականեան, խոր ապրումով եւ հարազատ առողանութեամբ արտասանեց Պարոյր Սեւակի «Ողբամ Մեռելոց»ը՝ խոր տպաւորութիւն թողելով հանդիսականներուն վրայ:

Օրուան հայերէնով բանախօսն էր ընկ. Մարգար Շարապխանեան, որ խորիմաստ եւ ազգայնաշունչ ճառ մը խօսեցաւ, ընդգծելով հայ ժողովուրդի եւ հայ երիտասարդութեան կամքը, ամէն գնով, բոլոր միջոցներու դիմելով լուծելու Հայ Դատը՝ տիրանալով բռնազրաւուած հայկական հողերուն:

Խօսք առաւ Նախարար Պրն. Փօլ Գոզկիրով, որ Դաշնակցային կառավարութեան եւ Վարչապետ Փիէռ Թրոտտոյի անունով տուաւ իր պատգամը, ապա,

օրրուան հանդիսավարին յանձնեց զեղեցիօրէն շրջանակուած Գանատայի Սահմանադրութեան Մարդկային Իրաւանց ուխտագիրը:

Պրն. Տէյվիտ Փիթըրսըն, իր կարգին խօսք առնելով շեղտեց Հայ Դատի լուծման կարեւորութիւնը եւ արդարութեան գործադրութիւնը: Ան յիշեց, թէ իր եղբօր՝ Դաշնակցային խորհրդարանի անդամ Ճիմ Փիթըրսընի ջանքերով Դաշնակցային խորհրդարանը անցուց ծանօթ բանաձեւը:

Ան խոստացաւ իր կարելիութիւններու սահմաններուն մէջ օգտակար հանդիսանալ հայ ժողովուրդին եւ անոր արդար Դատին:

Ապա, խօսք առաւ Պրն Ճոն Ուիլիքսըմ, որու ջանքերով Օնթարիոյ Խորհրդարանը 27 Մարտ 1980ին անցուցած էր թուրքը դատապարտող բանաձեւը:

Օրրուան երկրորդ բանախօսը՝ Մ. Նահանգներէն յատկապէս հրաւիրուած ընկ. Մուրատ Թոփալեան, անգլերէնով խօսեցաւ կուռ ճառ մը, դատապարտելով թուրքը եւ անոր թիկունք կանգնող բոլոր պետութիւնները:

Ընկ. Թոփալեանի ճառը ընդունուեցաւ որոտընդոստ ծափահարութիւններով:

Ներկայացուեցաւ նաեւ կարճ թատերախաղ մը «Արտաւազը», բեմադրութեամբ ընկերներ Սուրէն Զէքիճեանի եւ Մանուկ Գալայճեանի: Դերասաններն էին Մանուկ Գալայճեան՝ Արտաւազի դերով, Մանուկ Պետիրեան՝ Դարբինի դերով եւ Լուսին Այնէճեան՝ Անահիտ աստուածուհիի դերով:

Խորիմաստ թատերախաղ մը՝ ուր կ'արտացոլար հայ ժողովուրդի ազատութեան հանդէպ տածած սէրը եւ զգացումները:

Շնորհաւորելի է Թորոնթոյի Հայ Դատի յանձնախումբը՝ Ապրիլեան ուղեկոչումի ձեռնարկներու կազմակերպման առիթով:

«ՅՈՐԻՉՈՆ»
31 Մայիս 1982

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ Ի ՊԱՏԻ ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ՔՐԱԳԷՏՆԵՐՈՒ

Համազգային Հայ Մշակութային Միութիւնը, յարգելու եւ մեծարելու համար Թորոնթոյի Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի նորակառոյց շէնքի բացման հանդիսութեանց հրաւիրուած ամերիկահայ հայ մտաւորականներն ու գրագէտները, ընդունելութիւն մը կազմակերպած էր Շաբաթ, 6 Նոյեմբեր 1982, երեկոյեան ժամը 8:30ին, Հայ Կեդրոնին մէջ, որուն հրաւիրուած էին Հայ Կեդրոնէն ներս գործող միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներն ու Համազգայինի անդամները:

Ներկաները հիւրասիրուեցան գինիով, պանիրով եւ այլ աղանդերներով:

Օրուան հանդիսավար ընկ. Մարգար Շարապխանեան խօսք առնելով, նախ բարի գալուստ մաղթեց հայ մտաւորականներուն եւ գրագէտներուն, ապա, առանձին-առանձին ներկայացուց հիւրերը, ամփոփ տալով անոնց գրական գործունէութեան պատկերը:

Ընկ. Շարապխանեան հրաւիրեց ներկաները իրենց առաջին գաւաթը խմելու Թորոնթոյի մէջ բարձրացած Հայ դպրոցին կենացը, որ կոչուած է դառնալու հայրապահպանման գլխաւոր բերդը՝ համայնակուլ այս ամերիկայ:

Կարգով խօսք առին ընկ. Մինաս Թէօլէօլեան, տիկ. Գոհար Թէօլէօլեան, ընկ. Յակոբ Կարապէնց, ընկ. Ժիրայր Աթթարեան, ընկ. Վահէ Օշական եւ պրն. Հրանդ Սիմոնեան:

Խօսողները, ընդհանրապէս անդրադարձան հայ ժողովուրդի եւ հայ մշակոյթի ճակատագրին՝ մասնաւորապէս Սփիւռքի մէջ, ընդգծելով հայ դպրոցին վերապահուած նախախնամական դերին ազգապահպանման գոյամարտին մէջ:

Անոնք, յատուկ գովասանքով արտայայտուեցան Թորոնթոյի հայութեան ազգային վառ ոգիին, յանդուգն նախաձեռնութիւններուն եւ անսահման գոհաբերութեան:

Եղան կարգ մը հարցումներ, որոնց սիրով պատասխանեցին հայ մտաւորականները:

Ընդունելութեան պաշտօնական մասէն ետք, գործադրուեցաւ անպատրաստից գեղարուեստական յայտագիր մը:

Այսպէս, ընկերուհի Սոնա Յովհաննէսեան, արտասանեց Ռազմիկ Դաւոյեանէն երկու բանաստեղծութիւններ, ընկեր Մարտիկ Մնացականեան արտասանեց Պարոյր Սեւակէն, ընկ. Ռուբիկ Մնացականեան՝ Յովհաննէս Շիրազէն, ընկ. Պարգեւ Գիրէջեան՝ Հրաչ Քաջարեանցէն եւ ընկերուհի Ալիս Վարդանեան՝ Պարոյր Սեւակէն:

Ընկերուհի Արշօ Պոյաճեան, իր հաղորդիչ ձայնով երգեց Սայաթ Նովայէն քանի մը երգեր:

Տեղի ունեցան նաեւ խմբերգներ, մինչեւ գիշերուան ուշ ժամերը:

*Ներկաները չէին ուզեր հեռանալ: Խումբ-խումբ հալաքուած մեր մտա-
ւորականներուն շուրջ, կը խօսէին հայութեան եւ հայ մշակոյթի շուրջ:*

*Այդ գիշեր, Հայաստանէն հազարաւոր մղոն հեռու Գանատայի թորոն-
թօ քաղաքի Հայ Կեդրոնին մէջ, հայ մշակոյթի դիցուհին փառաբանուեցաւ,
զովացնելով հայ ոգիով եւ մշակոյթով սօթակէզ սրտերը...:*

«ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԼՐԱՏՈՒ»
Նոյեմբեր-Դեկտեմբեր 1982

ԱՐԹՕ ՉԱՔՄԱՔՃԵԱՆԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍՐ

Ապրիլեան Մեծ Եղեռնի ոգեկոչումներու որպէս առաջին ձեռնարկ, Համազգային Հայ Մշակութային Միութեան ցուցահանդէսի յանձնախումբը, սքանչելի գաղափարը յղացած էր ցուցադրելու միջազգային արժէքով համբաւաւոր արուեստագէտ քանդակագործ Արթօ Չաքմաքճեան գծագրութիւնները եւ քանդակները, Հայ Կեդրոնի Համազգայինի պատկերասրահին մէջ, Չորեքշաբթի, 25 Ապրիլէն մինչեւ Կիրակի, 29 Ապրիլ 1984:

Արթօ Չաքմաքճեանի գործերուն ցուցահանդէսը յատկապէս կազմակերպուած էր ոգեկոչումներու շաբթուան ընթացքին, որոշ առընչութիւն մը ունենալու համար Կիրակի 29 Մայիսին տեղի ունենալիք Ապրիլեան Եղեռնի նահատակներուն յուշարձանի բացման հանդիսութեանց:

Ինչպէս ծանօթ է հանրութեան, Հայ Կեդրոնի շրջափակին մէջ կոթողուած «Վերածնունդ» յուշարձանը գործն է նշանաւոր քանդակագործին:

Ցուցահանդէսի բացումը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 25 Ապրիլ 1984, երեկոյեան ժամը Տին՝ ստուար թիւով հայ եւ օտար արուեստագէտներու ներկայութեամբ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Համազգայինի ցուցահանդէսի յանձնախումբի ներկայացուցիչ ընկ. Գալուստ Պապեան, որ սրտագին ակնածանքով եւ գնահատական ճշմարիտ որակումներով ներկայացուց արուեստագէտ Արթօ Չաքմաքճեանը եւ անոր արուեստը:

Ներկաները հիւրասիրուեցան շամփանիայով, պանիրով եւ աղանդերներով: Ապա, ներկայ ժողովուրդը մեծ հիացումով դիտեց Արթոյի սքանչելի գործերը:

Ցուցահանդէսի հինգ օրերու ընթացքին, հարիւրաւոր հայ եւ օտար արուեստասէրներ այցելեցին Արթոյի գործերուն ցուցահանդէսը եւ իրենց տպաւորութիւնները արձանագրեցին Մատենին մէջ:

Ցուցահանդէս այցելողներու կարգին կ'ուզենք յիշել Գանատայի Պահպանողական կուսակցութեան պետ՝ Պրայըն Մուլրոնի եւ իր շքախումբը, երեսփոխաններ՝ դաշնակցային եւ նահանգային, Նորթ Եորքի քաղաքապետ Մէլ Լասման, պետական բարձրաստիճան պաշտօնատարներ եւ անձնաւորութիւններ, ինչպէս նաեւ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի եւ Գանատայի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Արք. Աչճեան:

Արթօ Չաքմաքճեան, այս խոնարհ, ազնիւ մեծ արուեստագէտը, Ուրբաթ, 27 Ապրիլ 1984, երեկոյեան ժամը Տին, հայ քանդակագործութեան շուրջ դասախօսութիւն մը տուաւ Համազգայինի լսարանի երեք դասարաններու աշակերտութեան, խօսելով հայ քանդակագործութեան եւ նշանաւոր հայ քանդակագործներուն մասին:

Դասախօսութենէն ետք տեղի ունեցաւ հարցազրոյց: Հարցումներ եղան հայ եւ միջազգային նկաչութեան եւ քանդակագործութեան մասին, որոնց խոր հասկացողութեամբ պատասխանեց արուեստագէտը:

«ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԼՐԱՏՈՒ»
Մայիս - Յունիս 1984

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՆԱԽՆՈՒԹԱՅ ՓԱՌԱՏՕՆ՝ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Միացեալ Նահանգներու Արեւելեան Շրջանի եւ Գանատայի Շրջանային Վարչութիւններու եւ կազմակերպութեամբ հիւրընկալ Թորոնթոյի մասնաճիւղին, Համազգային Հայ Մշակութային Համախմբումը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 6-10, 1983ի շաբաթավերջին՝ Թորոնթոյի Հայ Կեդրոնին մէջ, մասնակցութեամբ Նիւ Եորքի, Նիւ Ճըրզիի, Պոսթընի, Մոնթրէալի, Տիթթոյի, Գէմպրիի եւ Թորոնթոյի մասնաճիւղերուն:

Պատմական եւ աննախընթաց մշակութային այս համախմբումին հրաւիրուած էին շարք մը գրողներ եւ մտաւորականներ՝ Գանատայի եւ Միացեալ Նահանգներու զանազան շրջաններէն:

Ի պատիւ կազմակերպիչ յանձնախումբին, պէտք է ըսել, որ ամիսներէ ի վեր անոնց տարած ջանքերը, մշակութային համախմբումին տալու նոր նըպատակ եւ առաքելութիւն, կրցան իրապէս իրականացնել՝ շնորհիւ նոր գաղափարներու եւ գոհողութիւններու յղացման եւ Հայ Կեդրոնի ու միջավայրի առթաց յարմարութիւններուն եւ դիւրութիւններուն:

Համազգայինի ծրագր համախմբումը, որ արդարօրէն կարելի է կոչել Մշակութային Համախմբում եւ այս պարագային՝ փառատօն, նուիրուած Թարգմանչաց Տօնին, եկաւ փաստելու, որ Ամերիկաներու եւ Գանատայի հըսկայ ձուլարանին մէջ ինկած հայ տարագիր բազմութիւնները, թարգմանիչներու աւանդը որպէս վահան բարձր բռնած, կառչած կը մնան իրենց ինքնութեան ու տոհմային ժառանգութիւններուն, եւ, ամէն տեսակ գոհողութիւններ յանձն առնելով վառ կը պահեն հայ մշակոյթի ջահը:

Վերոյիշեալ գաղափարներու գործադրութեան ճամբուն վրայ, հոս կ'ուզենք տեղ տալ Մ. Նահանգներու Արեւելեան Շրջանի եւ Գանատայի Շրջանային Վարչութիւններու խօսքին, առնելով համախմբումին առիթով տրուած յայտագիրներու գրքոյկէն, «Մեր Հեռանկարը» խորագրով:

«Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի տարածքին, մշակութային եւ ընկերային փարոս մըն է որ կ'ուզենք ստեղծել»:

«Մեր նախորդներուն սկսած գործը, մշակութային համախմբումի մը գեղեցիկ գաղափարին իրագործումը, այս տարի քայլ մը աւելի կ'ուզենք առաջ տանիլ, քայլ մը աւելի մօտենալով մեր հեռանկարին»:

«Մեր երազն է, որ այս Մշակոյթի Շաբաթը դառնայ արտացոլումը այս ափերուն վրայ ստեղծագործող տաղանդին ու անոր պտուղին, հայ մշակոյթի զանազան մարգերուն մէջ՝ նկարչութիւն եւ կերպարուեստ, գիրք եւ գրականութիւն, գիրք ու հրատարակչութիւն, երգ եւ երաժշտութիւն, թատրոն եւ շարժապատկեր...»:

«Մեր նպատակն է, որ հոն վարձատրուի եւ պարգեւատրուի հայ արուեստագէտը: Հոն հայ մտաւորականը շիման մէջ մտնէ իր ժողովուրդին հետ ու այդ միջավայրին մէջ հայ հասարակութիւնը ծանօթանայ, գնահատէ եւ հըպարտանայ իր արժէքներով»:

Մշակութային ծրագրի համախմբումի կազմակերպիչները, ջանք չէին խընայած ճոխ եւ ալյազան յայտագիր մը ներկայացնելու համար:

ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հինգշաբթի, 6 Հոկտեմբեր 1983, երեկոյեան ժամը 8:00ին, Հայ Կեդրոնի Համազգայինի ցուցասրահին մէջ պաշտօնական բացումը տեղի ունեցաւ մոնթրէալաբնակ նկարիչ Պերճ Ա. Միսաքեանի իւղաներկ պաստառներու ցուցահանդէսը, հայ եւ օտար արուեստասէր ստուար բազմութեան մը ներկայութեամբ:

Ներկաները հիւրասիրուեցան գինիով եւ պանիրով:

Նկարիչ Պերճ Ա. Միսաքեանի ցուցահանդէսը բաց մնաց մինչեւ Երկուշաբթի, 10 Հոկտեմբերի երեկոյեան եւ բազմահարիւր այցելուներ եկան դիտելու եւ վայելելու հայ զգայուն արուեստագէտի գործերը:

Նկարիչ Միսաքեանի պաստառներուն մէջ, առաջին իսկ ակնարկով ակներեւ է արուեստագէտին անսահման սէրը եւ խանդաղատանքը բնութեան ու անոր գեղեցկութիւններուն հանդէպ: Անոր ընտրած տեսարանները յագեցաւ են ճոխ գոյներով, նուրբ գիծերով ու զգացումներով:

Հակառակ անոր, որ իր պատկերներուն մէջ գոյութիւն չունի ոչ մէկ շարժող տարր, բայց եւ այնպէս անոնք կեանքով ու արտայայտչականութեամբ կը յորդին: Անոր ոճը ընդհանրապէս տպաւորապաշտ էր եւ իր գործերը ուղադրութեամբ դիտելով կը զգաք շունչը տպաւորապաշտ արուեստագէտներու «Վան Կօ»ի եւ «Կոկէն»ի:

Կը յուսանք որ Պերճ Ա. Միսաքեանի անունը աւելի պիտի փայլի նկարչական երկնակամարին վրայ:

ԹԱՏՐՈՆ

Ուրբաթ, 7 Հոկտեմբեր 1983, երեկոյեան ժամը 8:30ին, Հայ Կեդրոնի Համազգայինի թատերասրահին մէջ տեղի ունեցան թատերական ներկայացումներ:

Մոնթրէալի թատերախումբը, բեմադրութեամբ ընկ. Վիգէն Թիւֆէնքեանի, ներկայացուց Մուշեղ Իշխանի «Ժամադրութիւն» թատերգութիւնը, իսկ Թորոնթոյի թատերախումբը, բեմադրութեամբ ընկ. Սուրէն Զէքիճեանի, ներկայացուց Անտոն Չեխովի «Արջ»ը եւ «Առաջարկութիւն» թատերգութիւնները:

Նոյն ձեռնարկը կրկնուեցաւ Կիրակի, 9 Հոկտեմբերին, նոյն սրահին մէջ:

Թատերախաղերը յաջողութեամբ ներկայացուեցան, երկու անգամին ալ լեցուն սրահներու մէջ, արժանանալով հանդիսականներու անկեղծ գնահատանքին:

ՇԱՐԺԱՆԿԱՐ

Քաջալերելու եւ գնահատելու համար հայ երիտասարդ բեմադրիչները, համախմբումին յայտագրին մէջ լայն տեղ տրուած էր անոնց գործերուն:

Այսպէս, Շաբաթ կէսօրուան ժամը 12:00-2:00, ցուցադրուեցաւ Թորոնթոյէն Ատոմ Էկոյեանի «Piip Show» եւ «Open House» (30 վ.) եւ Լոս Անճելըսէն Նիկոլ Պէգճեանի «Ա գեգլէ Գարմէն» (27 վ.) շարժանկարները:

Ֆիլմի ցուցադրութենէն առաջ, ընկ. Սուրէն Չէքիճեան կարգ մը ծանօթութիւններ տուաւ բեմադրիչներուն եւ անոնց գործին մասին:

Ապա, ցուցադրութենէն ետք, բեմ հրաւիրեց Ատոմ Էկոյեանը, որ Ֆիլմի առնչութեամբ իրեն ուղղուած հարցումներուն սիրով պատասխանեց:

Երկրորդ ցուցադրութիւնը տեղի ունեցաւ Երկուշաբթի, կէսօրէ առաջ ժամը 10:00-1:00:

Ներկայացուցան Նիւ Եորքէն ձոն Օհաննէսեանի «Egregious Torso» (22 վ.) ժապաւէնը, Լոս Անճելըսէն Արմէն Մինասեանի «Մարօ» (8 վ.) ժապաւէնը եւ Ատոմ Էկոյեանի «Howard in Particular»:

Արուեստագէտ ձոն Օհաննէսեան ներկայ էր ցուցադրութեան, որ լայն բացատրութիւն տուաւ իր պատրաստած ժապաւէնին համար:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՄՐՑՈՅԹ

Հայագիտական գիտելիքներու մրցոյթը, մասնակցութեամբ Նիւ Եորքի, Նիւ Ճըրզիի, Տիթրոյթի, Մոնթրէալի եւ Թորոնթոյի մասնաճիւղերու խումբերուն, տեղի ունեցաւ Շաբաթ, կէսօրէ ետք ժամը 5:00-7:00:

Հարցումները ներկայացուց Նիւ Եորքէն ընկ՝ Նորիկ Չուքովսկի, որ գնահատելի աշխատանք տարած էր հարցարանի պատրաստութեան մէջ:

Մրցումին առաջին հանդիսացաւ Համազգայինի Նիւ Եորքի խումբը, երկրորդ՝ Մոնթրէալի, երրորդ՝ Տիթրոյթի:

ՃԱՇԿԵՐՈՅԹ ԽՐԱԽՃԱՆՔ

Շաբաթ երեկոյեան, ժամը 8:00էն սկսեալ, Համազգայինի հարիւրաւոր անդամ-անդամուհիներ, ինչպէս նաեւ մշակութասէր ազգայիններ փութացած էին իրենց տեղը ապահովելու ճաշկերոյթ-խրախճանքին՝ Հայ Կեդրոնի գաւիթին մէջ:

Դաշնամուրի վրայ, Թորոնթոյէն Րէյմոնտ Լէյլէկեան նուագեց բազմաթիւ հայկական եղանակներ՝ իր յօրինումներէն եւ այլ հայ յօրինողներէն:

«Արաքս» նուագախումբը եւ երգիչ Յարութ Ձէնեան, հայկական երգերով եւ պարի եղանակներով մեծ խանդավառութիւն ստեղծեցին:

Խրախճանքը տեւեց մինչեւ ժամը 2:00, ներկաները ակամայ մեկնեցան, քանի որ ստիպուած էին առաւօտուն կանուխ արթննալ հետեւելու համար այլ ձեռնարկներու:

Ութերորդ համախմբումի ամենահետաքրքրական եւ դաստիարակիչ ձեռնարկներէն մէկն էր վիճաբանական ասուլիսը, որ տեղի ունեցաւ Կիրակի կէսօրէ առաջ ժամը 9:30-1:00:

Նիւթ՝ «Սփիւռքի հայկական շահերը ի՞նչ կը պահանջեն, – ընկերային եւ մշակութային մեկուսացո՞ւմ թէ՛ մերձեցում»:

Ինչո՞ւ այս նիւթին ընտրութիւնը: Կազմակերպողները կ'ըսեն.–

Միջին Արեւելքէն դէպի այս ասիերը գանգուածային գաղթը՝ դէպի Հիւսիսային Ամերիկա եւ Գանատա, այս գաղութները դրաւ նոր երկուութեան մը առջեւ: Մինչ Միջին Արեւելքի մէջ պայմաններու բերումով մեկուսացումըն էր, որ կը տիրապետէր մեր գաղութային կեանքէն ներս, Հիւսիսային Ամերիկայի մէջ հայ գաղութները դէմ յանդիման կը գտնուին նոր որոշումի մը կարեւորութեան առջեւ:

Միջին Արեւելքին կրօնական եւ այլ ազդակները գոյութիւն չունին այստեղ: Բայց ի՞նչ կը պահանջեն մեր ընդհանրական շահերը:

Մեր Գատը ո՞ր մօտեցումէն պիտի շահի եւ ո՞րն է, որ պէտք է քաջալերենք հոս կազմաւորուող սերունդներուն մէջ:

Լուծում չէ, որ կ'ակնկալենք այս սեմինարէն, այլ հարցին արծարծումը եւ պարզացումը, որպէսզի պատահականութեան չձգուի այս կենսական հարցը:

Ասուլիսին վարիչ-համադրողն էր Ժիրայր Ղարիպեան, որ նախ բացատրութիւններ տուաւ նիւթին շուրջ, ապա, ներկայացուց հակադիր թէզերը պաշտպանողները. ընկ. Զարեհ Սուրուզեան (Մոնթրէալէն), Ջատագով՝ մեկուսացման, ընկ. Արա Գաբրիէլեան (Նիւ Եորքէն), Ջատագով՝ մերձեցման:

Առաջին առիթով, անոնք ներկայացուցին իրենց թեզերը, ապա, անոնց առիթ տրուեցաւ հակադարձելու ներկայացուած կարծիքներուն:

Ասուլիսի Բ. բաժինին, ներկաները բաժնուեցան չորս խումբերու, որոնք առանձնանալով, խորհրդակցեցան հետեւեալ հարցերու շուրջ:

1.- Գրականութիւն, մամուլ եւ արուեստներ (ղեկավարութեամբ Յակոբ Կարապենցի, Գոննեքթիքըթէն):

2.- Նոր սերունդի դաստիարակութիւնը եւ ընտանիք (Եղուարդ Էլոյեան, Մոնթրէալէն):

3.- Տեղական քաղաքական կեանք (Վրէժ-Արմէն Արթինեան, Մոնթրէալէն):

5.- Ազգային ականդրութիւններ (Գէորգ Պաղճեան, Մոնթրէալէն):

Ապա, խումբերու ներկայացուցիչները բոլորին առջեւ ներկայացուցին չորս աշխատանոցներու եզրակացութիւնները, որմէ ետք առիթ տրուեցաւ, որ ներկաները խօսք առնեն. ընկ. Ղարիպեան, վերջաւորութեան սեմինարը բերաւ իր եզրայանգումին:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵԼՈՅԹ

Համախմբումի ձեռնարկներուն փառապսակը կազմեց զեղարուեստա-

կան ելույթը, որ տեղի ունեցաւ Կիրակի, երեկոյեան ժամը 5:00ին, Հայ Կեդրոնի ընդարձակ սրահին մէջ, ներկայութեամբ 600է աւելի հայորդիներու:

Օրուան հանդիսավարն էր Համազգային Հայ Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան անդամ ընկ. Մարգար Շարապխանեան, որ իր բացման խօսքով անդրադարձաւ Համազգայինի գործունէութեան առաքելութեան ու համախմբումներու նպատակներուն, ապա, բեմ հրաւիրեց Մ. Նահանգներու Արեւելեան Շրջանի Շրջանային Վարչութեան ատենապետ ընկ. Ժիրայր Ղարիպեանը:

Ընկ. Ղարիպեանը, գոյգ Շրջանային Վարչութիւններու անունով խօսք առնելով, նախ հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտընկայս լուռութեամբ յարգել Լիզպոնի մէջ ինքնակամ մարտիրոսութեամբ նահատակուած հինգ հայ հերոսներու յիշատակը:

Ապա, ի միջի այլոց ըսաւ.

«... Հայ մշակոյթը եւ Հայ Դատը շողախուած են իրարու հետ եւ այնքան ատեն, որ Հայ Դատը կը մնայ անլուծելի, Համազգայինը իր բոլոր գործունէութեամբ, բանիւ եւ գործով, զօրավիգ պիտի հանդիսանայ Հայ Դատի սրբազան գործին եւ անոր համար զինուորագրուած բոլոր մարտիկները վըստահ կրնան ըլլալ, որ ունին իրենց կողքին մշակոյթի պատրաստակամ զինակիրներ:

Հաւաքաբար, վերածենք Հայ Մշակոյթը իսկական ապրումի եւ ձեռք-ձեռքի տալով, փոխադարձ սիրով եւ յարգանքի անանձնական գոհաբերութեան վսեմ սկզբունքներով գօտեպնդուած, շարունակենք մեր այս աշխատանքը, որովհետեւ միայն լուրջ, բծախնդիր ու խորք ունեցող քայլերով է, որ պիտի յաջողինք կերտել վաւերականը ու նպաստել մեր ժողովուրդի ներկային ու վառ ապագային...»:

Գեղարուեստական յայտագիրը բացուեցաւ ելույթովը Մինսփոլիսէն (Մինիսոթա) յօրինող եւ ջութակահար Պրն. Հանրի Գրիգորեանի, որ դաշնակի ընկերակցութեամբ Տիկ. Պրենտայի, յաջորդաբար նուագեց «Աղօթքի երգ» (երաժշ. Հանրի Գրիգորեանի), «Ծիրանի Մառ», «Կաքաւիկ» (երաժշ. Կոմիտասի), «Կուռնիկ», «Օրօր» (երաժշ. Ալան Յովհաննէսի), «Պար» (երաժշ. Ա. Խաչատուրեանի), «Այիշայի պարը» («Գայիանէ» պալէէն, Ա. Խաչատուրեան), «Պար» (երաժշ. Ռուբիկ Գրիգորեանի), ինչպէս նաեւ չորս հայկական ժողովրդական եղանակներ՝ մշակում Հանրի Գրիգորեանի:

Մոնթրէալէն ընկ. Մեսրոպ Պէրէճիքեան, իր կիթառի ընկերակցութեամբ երգեց «Հայոց Կանայք» (խօսք՝ Ա. Սահակեանի, երաժշ. Ա. Հէքիմեանի), «Հաւատում եմ քեզ» (խօսք՝ Ա. Իսահակեանի):

Ապա, Մոնթրէալէն ընկ. Նորա Անտոնեան, մագնիսացուց ներկաները, երգելով «Կ'անձրեւէ տղաս» (երաժշ. Հ. Պէրպէրեանի), «Հայրենի կարօտ» (երաժշ. Ա. Պատմագրեանի), դաշնակի ընկերակցութեամբ Մոնթրէալէն ընկ. Բաֆֆի Թումայեանի:

Հիանալի էին Մոնթրէալէն ընկ. Կարօ Նշանեանի (պաս-պարիթոն) երգած «Հայաստան» (երաժշ. Կոմիտասի), «Այ Վարդ» (երաժշ. Ա. Սպենդիարեանի), «Վերջալոյս է» (երաժշ. Գ. Սրուանձտեանցի), «Ալվարդին երազը» (երաժշ. Բ. Կանաչեանի), «Հայաստանի կարմիր գինին» (երաժշ. Ա. Խաչատուրեանի),

դաշնակի ընկերակցութեամբ Մոնթրէալէն դարձեալ ընկ. Բաֆֆի Թուժայեանի:

Յայտագրին երկրորդ մասը յատկացուած էր Նիւ Ճըրզիի, Նիւ Եորքի եւ Թորոնթոյի երգչախումբերու ելոյթներուն:

Նիւ Ճըրզիի երգչախումբը, ղեկավարութեամբ խմբավար ընկ. Բաֆֆի Սվաճեանի քառաձայն երգեց «Զիգ տուր քաշի» (երաժշ. Կոմիտասի), «Արփա Սեւան» (երաժշ. Էդ. Յովհաննէսեանի), «Ով Հայոց Աշխարհ» (երաժշ. Մ. Եկմալեանի):

Իսկ Նիւ Եորքի երգչախումբը, ղեկավարութեամբ խմբավար ընկ. Վարդգէս Պապոզլեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ ընկ. Ալիս Փափագեանի, տուաւ կենդանի պատկերներ «Անոյշ» օփերայէն:

Թորոնթոյի երգչախումբը, իր հարիւրէ աւելի անդամ-անդամուհիներով եւ ղեկավարութեամբ խմբավար ընկ. Էդիկ Յովսէփեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Տիկ. Ռիմա Մարտիրոսեանի, երգեց «Փառքի ճամբով» (խօսք եւ երաժշ. Յ. Գասպարեանի), «Կ'ողբայ եայլի» (երաժշ. Ղ. Ղազարեանի), «Եարալէ» (երաժշ. Ա. Պատմագրեանի), «Նոր եմ նոր մածուն մերել» եւ «Շախկըր-Շուխկըր» (երաժշ. Կոմիտասի), «Վուշ-Վուշ» (երաժշ. Բ. Կանաչեանի): Թորոնթոյի երգչախումբը տեղի տալով ժողովուրդի անդադրում ծափերուն եւ խնդրանքին, յայտագրէն դուրս եւ ներկաներու մասնակցութեամբ երգեց սրտայոյզ եւ փառաւոր «Սարդարապատ» երգը:

Երգչախումբերու ելոյթներէն ետք, Համազգայինի զոյգ Շրջանային Վարչութիւններու ատենապետները բաշխեցին մրցանակները՝ հայագիտական մրցոյթին առաջին, երկրորդ եւ երրորդ հանդիսացող խումբերու պատասխանատուներուն:

Զոյգ Շրջանային Վարչութիւններու ատենապետները, հերթով ոսկի մետալներով պատուեցին չորս երգչախումբերու ղեկավարները՝ ընկ. Վարդգէս Պապոզլեան (Նիւ Եորք), ընկ. Բաֆֆի Սվաճեան (Նիւ Ճըրզի), ընկ. Պետրոս Շուժունեան (Մոնթրէալ) եւ ընկ. Էդիկ Յովսէփեանը (Թորոնթո):

Ճաշակով պատրաստուած այս մետալները ձեռակերտն են Համազգային Պոսթընի մասնաճիւղը անդամներէն վարպետ ոսկերիչ ընկ. Հրայր Զարգարեանի:

Հոգեգմայլ այս արարողութենէն ետք, Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ ընկ. Տոքթ. Օհան Թապաքեան, իր փակման խօսքով, չընորհակալութիւն յայտնեց ծրագրուած համախմբումի յաջողութեան նպաստողներուն եւ յատկապէս Թորոնթոյի հիւրընկալ մասնաճիւղին եւ կազմակերպիչ յանձնախումբին, անդրադարձաւ մեր սուրբ թարգմանիչներու հայակերտ գործին եւ անոնց գործը շարունակողներուն իր յարգանքի տուրքը տալէ ետք, իր խօսքը վերջացուց հետեւեալ գաղափարներով:

«Այժմ Հայրենիքէ հազարաւոր մղոններ հեռու ապրող հայութիւնը, տարբեր տեսակի օրհասական կացութիւն ու անստոյգ վիճակ մը ունի, այն տարբերութեամբ միայն, որ Սփիւռքի մէջ չենք վտանգուած իբրեւ անհատ, բայց վտանգուած ենք իբրեւ մշակոյթ ու ազգ: Ու մեր ժողովուրդը գիտակցելով այն ճշմարտութեան, թէ այս երկիրներուն մէջ հայ ապրելու ու գոյատեւելու իր անխորտակ կամքը, պայմանաւորուած է հայ մշակոյթով, հակառակ

միջավայրային մեծ խոչընդոտներու, իր մշակութային միութեանց միջոցաւ, կը փորձէ ընել իր լաւագոյնը՝ հայ մշակոյթի ջահը միշտ վառ պահելու իւրաքանչիւր հայու սրտին մէջ ու նոր սերունդը հաղորդակից դարձնելու իր ժողովուրդի հոգեմտաւոր գանձերուն:

«Այս առաջադրութեամբ է, որ Համազգայինը իբրեւ արտասահմանի գլխաւոր մշակութային միութիւն, իր մշակութային այլ գործունէութեանց առընթեր, ամէն տարի պիտի կազմակերպէ աւելի ծաւալու մշակութային համախմբումներ, որպէսզի մեր դարաւոր մշակոյթը միշտ ճառագայթէ Սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ»:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Գեղարուեստական ելոյթէն անմիջապէս ետք, տեղի ունեցաւ ընկերային հանդիպում-ճաշկերոյթ, մասնակցութեամբ հիւր մասնաճիւղերու անդամներուն եւ թորոնթոյի մշակութասէր շրջանակին:

Ճաշէն ետք, ընկ. Գալուստ Պապեանի թամատայութեամբ, գործադրուեցաւ անակնկալ եւ անպատրաստից յայտագիր մը, ուր եղան արտասանութիւններ, երգեր, խմբերգներ, նուագներ եւ խօսքեր:

Խօսք տրուեցաւ ներկայ եղող մտաւորականներէն Գէորգ Պաղճեանի (Վազգէն Այգունի), Յակոբ Կարապենցի, Լուսիկ Մելիքեանի (Նիւ Շորքէն) եւ Լեւոն Վարդանի (Պէյրութէն):

Տպաւորիչ էր Նիւ Շորքէն բանաստեղծուհի ընկհ. Թերեզ Ոսկերիչեանի ինքնագիր քերթուածին արտասանութիւնը, նուիրուած Լիզայոնի մէջ հայ ազատագրութեան խորանին զոհուած հինգ հայ հերոսներուն «Արեգակը եղաւ տաճար» վերնագրով:

ԳԻՐՔԻ ՎԱՃԱՌՔ

Համախմբումի ամբողջ տեւողութեան, Համազգայինի գրադարանի բաժնին մէջ ցուցադրուեցան եւ վաճառուեցան հայերէն եւ օտար լեզուով հայութեան մասին գրուած նոր հասած գիրքեր, ինչպէս նաեւ երիզներ եւ ձայնապրնակներ:

Ծանօթ գրագէտ Յ. Կարապենց, իր վերջին հատորէն՝ «Աղամի Գիրքը», որոչ թիւ մը նուիրած էր ՀՕՄԻ Ամէնօրեայ Վարժարանին եւ ծախուած գիրքերը սիրով կը մակագրէր:

Նոյնը ըրած էր նաեւ գրագիտուհի Լուսիկ Մելիքեան իր «Մի Աղջիկ ու Արեւ» գրքին առնչութեամբ, զայն նուիրելով Համազգայինին: Ներկայ էր նաեւ գրագէտ եւ թարգմանիչ անգլիագիր Արա Պալիոզեան, որուն գիրքերէն բազմաթիւ գնողներ եղան:

Համազգայինի ծրագրուած միջոցառումներէն, Շրջանային զոյգ Վարչութիւնները, անսալով իրենց կոչումին եւ առաքելութեան, գեղատիպ (Ոսկե-

տառ հրատարակչատուն, Նիւ Եորք) հատոր մը լոյս ընծայած էին՝ նուիրուած հայրենի բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեանի բանաստեղծութիւններուն:

Գիրքը լոյս տեսած է մեկենասութեամբ Մ. Նահանգներէն Վազգէն Գասապեանի, ի յիշատակ Ազնիւ Գասապեանի (Կիւրին՝ 1900, Պէյրութ՝ 1982):

Գրքին խմբագրութիւնը կատարած է, բծախնդրութեամբ եւ ճաշակով, Թորոնթոյէն ընկ՝ Սոնա Յովհաննէսեան:

Իսկ Դաւոյեանի լուսանկարները գործն էին Թորոնթոյէն արուեստագէտ լուսանկարիչ ընկ. Գալուստ Պապեանի:

Հրատարակիչները կը յայտնեն թէ ասկէ ետք ամէն տարի նման գիրք մը լոյս պիտի ընծայեն տարեկան համախմբումի առթիւ:

ՀՐԱԺԵՇՏ

Երկուշաբթի առաւօտ, հիւր մասնաճիւղերու անդամ-անդամուհիները հրաժեշտ առին Թորոնթոյի մասնաճիւղի պատասխանատուներէն եւ անդամներէն, վերադառնալու համար իրենց տուները, իրենց հետ տանելով վառ յիշատակներ, խոր բարեկամութիւններ եւ հոգեկան խոր ապրումներով յագեցած զգացումներ՝ 1984ին, Թարգմանչաց Տօնին առթիւ, Նիւ Եորքի մէջ տեղի ունենալիք Զրդ համախմբումին կրկին զիրար տեսնելու յոյսով եւ անխորտակ կամքով:

Վարձքերնիդ կատար՝ Համագգայինի սիրելի նուիրեալներ:

«ՅՈՐԻՉՈՆ»
7 Նոյեմբեր 1983

**ՀԱՄԱՋՊԱՅԻՆ
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
12ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԽՄԱԲՈՒՄԸ
ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ**

Կազմակերպութեամբ Միացեալ Նահանգներու Արեւելեան Շրջանի եւ Գանատայի գոյգ Շրջանային Վարչութիւններուն, Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան 12րդ Տարեկան Համախմբումը տեղի ունեցաւ Թորոնթոյի մէջ:

Ամբողջ շաբաթ մը, Թորոնթոյի հայութիւնը, ինչպէս նաեւ Գանատայի եւ Միացեալ Նահանգներու Համազգայինի մասնաճիւղերու անդամներն ու համակիրները առիթը ունեցան շնչելու հայ մշակոյթի հոգեպարար բուրումները՝ ներկայացուած այլազան ձեռնարկներու միջոցով ընդմէջէն:

Այս առիթով, գոյգ Շրջանային Վարչութիւններու Համազգայինի հեռանկարը պատկերացուցին հետեւեալ ձևով.-

Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի տարածքին մշակութային եւ ընկերային փարոս մըն է որ կ'ուզենք ստեղծել:

Մեր նախորդներուն սկսած գործը՝ մշակութային համախմբումի մը գեղեցիկ գաղափարին իրագործումը, այս տարի քայլ մը աւելի կ'ուզենք առաջ տանիլ, քայլ մը աւելի մօտենալով մեր հեռանկարին:

Վստահ ենք, եւ կը հաւատանք, որ մեր յաջորդները պիտի յաջողին ամէն տարի աւելի եւս մշակելով ծրագիրը, ամէն քայլափոխին աւելի ընդլայնելով համախմբումներու ծիրը, դեռ եւս ընդարձակելով անոր հորիզոններն ու ժամանակը՝ զայն վերածեն ամբողջ շաբաթուան մը տեւողութեամբ մշակութային փառատօնի մը, որ գազաթնակէտն ու առանցքը հանդիսանար Համազգայինի մասնաճիւղերուն տարեշրջանի տեւողութեան գործունէութեանց:

Մեր երազն է, որ այս Մշակոյթի Շաբաթը դառնայ արտացոլացումը այս ափերուն վրայ ստեղծագործող տաղանդին ու անոր պտուղին. հայ մշակոյթի զանազան մարզերուն մէջ, նկարչութիւն եւ կերպարուեստ, գիր եւ գրքահանութիւն, գիրք ու հրատարակչութիւն, երգ եւ երաժշտութիւն, թատրոն եւ շարժապատկեր:

Մեր նպատակն է, որ հոն վարձատրուի եւ պարգեւատրուի հայ արուեստագէտը. հոն հայ մտաւորականը շփման մէջ մտնէ իր ժողովուրդին հետ ու այդ միջավայրին մէջ հայ հասարակութիւնը ծանօթանայ, գնահատէ եւ հպարտանայ իր արժէքներով:

Մենք կը հաւատանք «Ուր կամք՝ հոն ճամբայ» կարգախօսին: Մեր մըշակոյթը արժանի է փառաբանութեան եւ Համազգայինի մասնաճիւղերուն չի պակսիր ո՛չ կամք, եւ ո՛չ ալ ճամբայ:

Թարգմանչաց տօնին առթիւ կատարուող մշակութային սոյն փառատօնի բացումը կատարուեցաւ Երեքշաբթի, 6 Հոկտեմբեր, 1987, երեկոյեան ժամը 8:30ին, Լոս Անճելըսէն յատկապէս հրաւիրուած նկարիչ Սմբատ Կիրեղեանի գործերուն ցուցադրութեամբ, ներկայութեամբ ստուար թիւով արուեստագէտներու:

Սոյն ցուցահանդէսը բաց մնաց համախմբումի ամբողջ տեւողութեան, իսկ Շաբաթ, 10 Հոկտեմբերին, բացումը կատարուեցաւ Թորոնթոյի արուեստագէտ նկարիչ Նուպար Սերոբեանի գործերուն:

Ուրբաթ, 9 Հոկտեմբեր, 1987, երեկոյեան ժամը 8:30ին, Սթիվըն Լիքոք Գոլէճիէյթի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ հիանալի ասմունքի երեկոյ մը, Սան Ֆրանսիսքոյէն յատկապէս հրաւիրուած արհեստավարժ ասմունքող եւ դերասան Մարի-Ռոզ Ապուսէֆեանի կողմէ, ուր դերասանուհիի հեղինակութեամբ տեղեկութիւններ տրուեցան Մատթէոս Զարիֆեանի եւ Կոստան Զարեանի մասին:

Նշանաւոր ասմունքողը հեզասահ կշռոյթով եւ ապրումով արտասանեց Մատթէոս Զարիֆեանի «Խենթը», դաշնամուրի ընկերակցութեամբ իր դասեր՝ Լուսինէ Ապուսէֆեանի:

Ապա, սքանչելի բեմադրութեամբ արտասանեց Կոստան Զարեանի «Տատրագոմի Հարսը» պոէմը, արժանանալով ունկնդիրներու անխառն գնահատանքին:

Շաբաթ, 10 Հոկտեմբեր, 1987, կէսօրէ ետք ժամը 2:00ին, տեղի ունեցաւ գիտազրոյց-սեմինար, Հայ Կեդրոնի Համազգայինի թատերասրահին մէջ, որուն մասնակցեցան Լոս անձելըսէն Փրոֆ. Աւետիս Սանճեան, Միացեալ Նահանգներու եւ Գանատայի հայկական ամէնօրեայ վարժարաններու տնօրէններ (Սան Ֆրանսիսքո, Էնսինօ, Հոլիվուտ, Կլէնտէյլ, Օրէնճ Գաունթի, Նիւ Եորք, Նիւ Ճըրզի, Մոնթրէալ եւ Թորոնթօ), նիւթ ունենալով՝ Հայ Դպրոցը եւ Հայերէն Լեզուի Ուսուցումը Հիւսիսային Ամերիկայի մէջ:

Օրուան զեկուցաբերն էր Փրոֆ. Աւետիս Սանճեան, պատասխանատու UCLA համալսարանի հայկական ամպիոնին:

Սոյն սեմինարին ներկայ եղան նաեւ հոծ թիւով ազգայիններ, որոնք իրենց հետաքրքրութիւնը գոհացուցին զեկուցաբերներուն ուղղած հարցումներով:

Կիրակի, 11 Հոկտեմբեր 1987, կէսօրէ առաջ ժամը 10:30ին, ընկ. Ռաֆֆի Յովհաննէսեան ներկայացուց «Արեւմտեան Հայաստան՝ այսօր», ցուցադրելով իր անձնական ուղեւորութեան ընթացքին նկարահանած սահիկները:

Կիրակի, 11 Հոկտեմբեր 1987, կէսօրէ ետք ժամը 2:30ին, Սթիվըն Լիքոք Գոլէճիէյթի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ գեղարուեստական ելոյթ, մասնակցութեամբ Պոսթընի, Նիւ Ճըրզիի, Մոնթրէալի, Նիւ Եորքի եւ Գէմպրիճի մասնաճիւղերուն:

Ելոյթի երկրորդ մասին մէջ, մեծարուեցան եւ Համազգայինի ոսկեայ շքանշանով պատուուեցան գրագիտուհի Ա. Արփինէ եւ 24 տարի առաջ Ամերիկայի մէջ հայկական առաջին ամէնօրեայ դպրոցի հիմնադիր Գաբրիէլ Ինճէճիքեան:

Ա. Արփինէի կեանքն ու գործը ներկայացուց գրագէտ Յ. Կարապենց, իսկ Գաբրիէլ Ինճէճիքեանի՝ ծանօթ մտաւորական եւ թատերագիր՝ ընկ. Հըրանդ Մարգարեան:

Սոյն օրը, երեկոյեան ժամը 8:00ին, նոյն սրահին մէջ, Մոնթրէալի Պետրոս Աղամեան թատերախումբը ներկայացուց Լեւոն Շանթի «Կայսրը»:


Շաբաթ գիշեր, մօտ ութը հարիւր հայորդիներու ներկայութեամբ, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ-խրախճանք, մասնակցութեամբ ժողովրդային երգիչ Ատիս Հարմանտեանի, որ տեւեց մինչեւ առաւօտեան ժամը երեք:

Համախմբումի ամբողջ տեւողութեան՝ ցուցադրուեցան եւ վաճառուեցան հայերէն եւ օտար լեզուներով նոր հասած գիրքեր, ինչպէս նաեւ երիզներ եւ ձայնապնակներ:

Վերոյիշեալ ձեռնարկները մշակութային խանդավառ եռուզեռ ստեղծեցին, հաճելի պատեհութիւնը ստեղծելով Համազգայինի անդամներուն եւ մշակութասէր հասարակութեան համար ընդհանրապէս: Գալով քով-քովի, նոր ծանօթութիւնները վերանորոգելով եւ միասնաբար ապրելով մշակութային ջերմ մթնոլորտի մը մէջ՝ Թարգմանչաց տօնին առթիւ, այսպիսով վառ պահելով հին աւանդութիւն մը՝ Մեսրոպի, Սահակի եւ իրենց գործակիցներու խընկելի յիշատակը ոգեկոչելու եւ հաստատելու նոր աւանդութիւն մը՝ Հայ Մշակոյթի Օրը տօնակատարելու:

Իսկ հայ արուեստագէտները, կրթական մշակները եւ գրագէտները ըզգացին, որ իրենցմով հետաքրքրուող միութիւն մը գոյութիւն ունի, որ գիտէ գնահատել եւ մեծարել իրենց անձերը եւ գործերը:

«ՆՈՐ ԿԵԱՆՔ»
29 Յոկտեմբեր 1987



Երեւանի մէջ գրական գործունէութեան 60-ամեակի ձեռնարկէն վերջ 2004ին

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ 16Դ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան 16րդ Մշակութային Համախմբումը տեղի ունեցաւ 9-14 Հոկտեմբերի շաբաթավերջին՝ Թորոնթոյի Հայ Կեդրոնի համալիրին մէջ:

Գանատայի Շրջանային Վարչութեան կողմէ կազմակերպուած Համազգային 16րդ Համախմբումին մասնակցեցան Քեմպրիճի, Մոնթրէալի եւ Թորոնթոյի մասնաճիւղերը:

Չորեքշաբթի, 9 Հոկտեմբեր 1991, երեկոյեան ժամը 8:30ին, Համազգայինի ցուցասրահին մէջ տեղի ունեցաւ բացումը Թորոնթոհայ հանրաժանօթ գեղանկարիչ Արթօ Եուզպաշեանի գործերուն (իւղաներկ, ջրաներկ), որուն ներկայ գտնուեցան հարիւրէ աւելի հայ եւ օտար արուեստասէրներ: Ապա, տեղի ունեցաւ հանդիպում արուեստագէտին հետ եւ հիւրասիրութիւն:

Յուցահանդէսը բաց մնաց հանրութեան մինչեւ համախմբումին աւարտը՝ 14 Հոկտեմբերին, եւ բազմահարիւր այցելուներուն հիացումին եւ գնահատանքին արժանացաւ:

Յուցահանդէսի աւրնութեւր, Համազգայինի «Յ. Մանուկեան» գրադարանի եւ գրադարանի յանձնախումբի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ գիրքերու ցուցադրութիւն եւ վաճառք:

Շաբաթ, 12 Հոկտեմբեր 1991, կէսօրէ ետք ժամը 3ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ տեղի ունեցաւ դասախօսութիւն՝ «Հայաստանի Ներկայ Մամուլը» նիւթին շուրջ:

Դասախօս ընկեր Մարգար Շարապխանեան ներկաներուն ցուցադրեց Հայաստանի ներկայ մամուլի երեսուն անուններ եւ թերթեր, տալով անոնց ուղղութիւն, հրատարակութեան թուականը եւ անցած ուղին՝ անունի փոփոխութիւններով, անդրադառնալով անոնց բովանդակութեան եւ խմբագրական կազմերուն:

Դասախօսութենէն ետք տեղի ունեցաւ հարցումներ, որոնց պատասխանեցին դասախօսը եւ հայրենի մտաւորական Աղուան Վարդանեան:

Շաբաթ, 12 Հոկտեմբեր 1991, կէսօրէ ետք ժամը 5ին, կրկին Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Կլոր Սեղան», «Հայր եւ Հայաստանը Անկախութենէն Ետք» նիւթին շուրջ:

Համադրող ընկերուհի էլիզ Շարապխանեանի ներածական խօսքէն ետք, հերթականօրէն խօսք առին ընկեր Վաչէ Բրուտեան՝ «Հայրենիք» օրաթերթի խմբագիր՝ Պոսթընէն, ընկեր Եգուարդ էլոյեան՝ ուսուցիչ՝ Մոնթրէալէն, ընկեր Ռազմիկ Փանոսեան՝ քաղաքական գիտութիւններու ուսանող՝ Քէմպրիճէն եւ ընկերուհի Հուրի Նաճարեան՝ Հ.Օ.Մ.ի Շրջանային Վարչութենէն՝ Թորոնթօ:

Մասնակցող մտաւորականները խորապէս ուսումնասիրուած գաղափարներով նիւթը ներկայացուցին, եւ, իրենց տրուած երկրորդ առիթով պատասխանեցին եւ հակաճառեցին արտայայտուած հակասող կարգ մը կարծիք:

ներու, հարիւրէ աւելի ունկնդիրներ ներկայ եղան այս կարեւոր հարցաքննութեան եւ շատեր իրենց տեսակէտները պարզեցին՝ վերլուծելով յայտնուած գաղափարները:

Շաբաթ, 12 Հոկտեմբեր, երեկոյեան ժամը 8:30էն սկսեալ, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ ընկերային խրախճանք եւ ճաշկերոյթ, որուն ներկայ գտնուեցան շուրջ 300 Համազգայնականներ եւ համակիրներ:

Երգիչ Յարութ Զէնեան եւ իր նուագախումբը՝ պարային, ժողովրդային եւ ազգային երգերով խանդավառ մթնոլորտ մը ստեղծեցին սրահին մէջ: Խրախճանքը տեւեց մինչեւ գեշերուան ուշ ժամերը:

Կիրակի, 13 Հոկտեմբեր 1991, առաւօտեան ժամը 10:30ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ շատ հետաքրքրական դասխօսական ասուլիս՝ «Մփիւռքի Նոր Դերը» նիւթին շուրջ որուն ներկայ գտնուեցան շուրջ 300 ազգայիններ:

Հանդիսավար ընկեր Զաւէն Սարգիսեան իր ներածական խօսքէն ետք, ներկայացուց մասնակցողները:

Պրն. Արբի Յովհաննէսեան՝ շարժարուեստի եւ թատրոնի բեմադրիչ՝ Փարիզէն, ընկեր Վահէ Օշական՝ գրագէտ՝ Սան Ֆրանսիսքոյէն, ընկեր Յարութիւն Պէրպէրեան՝ բանաստեղծ, ուսուցիչ՝ Մոթրէյալէն եւ ընկեր Ադուան Վարդանեան՝ բանաստեղծ եւ Հայաստանի Գրողների Միութեան քարտուղար՝ Երեւանէն:

Մասնակցողներու արտայայտութիւններէն ետք ներկաները հարցումներ ուղղեցին դասախօսներուն:

Վէճերով, յանդուգն գաղափարներով եւ արտայայտութիւններով լեցուն ասուլիս մը, ուր կը պատկերացուէր «Մփիւռքի Նոր Դերը»՝ յատկապէս Հայաստանի անկախութեանէն ետք:

Ասուլիսէն ետք, Համազգայինի գրադարանի սրահին մէջ տեղի ունեցաւ ընկերային հանդիպում եւ հարցազրոյց՝ մտաւորական եւ արուեստագէտ հիւրերուն հետ:

Հիւր գրագէտներ՝ Վեհանոյ թէքեան, Վահէ Օշական եւ Յարութիւն Պէրպէրեան մակագրեցին իրենց հեղինակութիւններէն գնուած գիրքերը:

Կիրակի, կէսօրէ ետք ժամը 6ին, Հայ Կեդրոնի սրահի մէջ տեղի ունեցաւ գեղարուեստական ելոյթ:

Հանդիսութեան Ա. մասը նուիրուած էր Մուշեղ Իշխանին, հանդիսավար ընկերուհի Սոնա Յովհաննէսեան իր սրտի խօսքը արտայայտելէ ետք բանաստեղծ-գրագէտ Մուշեղ Իշխանի յիշատակին, բեմ հրաւիրեց Նիւ Ճըրզիէն հրաւիրուած գրագէտ Վեհանոյ թէքեանը, բանախօսելու հանգուցեալ մեծ գրագէտին ստեղծագործութիւններուն շուրջ:

Բանախօսուհին 35 վայրկեան խօսելով, խոր հմտութեամբ ներկայացուց ընդհանրապէս բանաստեղծ Մ. Իշխանը:

Գեղարուեստական յայտագրին մէջ տեղ գտած էին Մ. Իշխանի իսկ ձայնով արտասանուած բանաստեղծութիւններ, ինչպէս նաեւ ընկեր Գալուստ Պապեանի, ընկեր Մուշեղ Գարագաշեանի եւ ընկերուհի Ալիս Գէորգեանի կողմէ արտասանուած Մ. Իշխանի քերթուածներէն փունջ մը:

Յայտագրի Բ. մասը յատկացուած էր Համագգայինի «Անի» պարախումբի ելույթին:

Պարախումբին դադարներուն, Թորոնթոյի Համագգայինի «Գուսան» երգչախումբի մենակատարներ՝ Հելէն Զօհրապեան, Ռիմա Ղարախանեան եւ Սիլվա Յարութիւնեան, իր մեներգներով ճոխացուցին պահը՝ դաշնամուրով ընկերակցութեամբ ընկեր Վանիկ Յովհաննէսեանի:

Յայտագրի վերջաւորութեան խօսք առաւ Գանատայի Շրջ. Վարչութեան ատենապետ ընկեր Լեւոն Եազճեան եւ շնորհակալութիւններ յայտնեց Համախմբումը կազմակերպող Թորոնթոյի Մասնաճիւղին եւ օժանդակ բոլոր յանձնախումբերուն:

Կիրակի գիշեր, ժամը 9ն սկսեալ, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ ողջերթի ճաշկերոյթ: Նուագի, պարերու եւ երգերու մթնոլորտը տեւեց մինչեւ գիշերուան ժամը 12:

Երկուշաբթի առաւօտ տեղի ունեցաւ հրաժեշտ եւ մեկնում, յառաջիկայ տարի կրկին հաւաքուելու խոստումով:

«ՀՈՐԻՉՈՆ»
9 Յոկտեմբեր 1991

ԳԻՆԵՉՕՆ ԱՐԺ. Տ. ԱՐՄԷՆ ՔԿՆՅ. ԻՇԽԱՆԵԱՆԻ «ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ» ԳԻՐՔԻՆ

Մոնթրէալի մէջ վերջերս հրատարակուած Արժ. Տ. Արմէն Ա. Քհնյ. Իշխանեանի «Երկու Աշխարհ» գիրքին գինեձօնը, կազմակերպուած Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ եւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան գրատարած յանձնախումբին, տեղի ունեցաւ Ուրբաթ, 13 Յունիս 2003ի երեկոյեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ: Այս գինեձօնին ներկայ էին Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Վեր. Եսայի Սարմազեան եւ շուրջ 150 գրասէր ազգայիններ:

Բացման խօսքով հանդէս եկաւ հանդիսավար Արշօ Զաքարեան, որ իր բարի գալուստի խօսքերէն ետք ներկայացուց Տէր Արմէնի «Երկու Աշխարհ» գիրքին վերլուծումները կատարողներ Գալուստ եւ Յասմիկ Պապեանները: Հանդիսավարը սա տողերով ներկայացուց Գալուստ եւ Յասմիկ Պապեանները:

«Յասմիկ Պապեան Հայ Օգնութեան Միութեան՝ Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի ուսուցչուհիներէն է: Պաշտօնավարած է Պէյրութ եւ Թորոնթօ, ընդամէնը 27 տարիներ, որպէս հայերէնի ուսուցչուհի, ծառայած է Հայ Վարժարաններու մէջ, դաստիարակելով եւ հայեցի կրթութիւն ջամբելով Հայ աշակերտներուն: Ան գիտէ հայոց պատմութիւնը կենդանացնել, հայերէնը սիրօցնել եւ հայերէնի պահը դարձնել հաճելի, հետաքրքրական եւ տպաւորիչ: Յասմիկ անդամ է Հ.Օ.Մ.ի եւ Համազգայինի մեծ ընտանիքներուն: Ան իր ներդրումը ունեցած է Համազգային գրական յանձնախումբի աշխատանքներուն, որպէս կազմակերպիչ, օրուան հանդիսավար, շնորհալի ասմունքող, վերլուծող, գիրք ներկայացնող, եւայլն:

«Գալուստ Պապեան, արժանաւոր ամուսինը Յասմիկին, արուեստագէտ լուսանկարիչ է ասպարէզով: Իր լուսանկարչական գործերը բազմաթիւ անգամներ ցուցադրուած են Գանատայի եւ Միացեալ Նահանգներու մէջ: Իսկ իր գունաւոր դիմանկարները մեծ գնահատանքի արժանացած են Գանատայի մշակութի հսկաներէն պալերինա Քարէն Քէնի, գրագէտ Մարկրէթ Աթոռուտի եւ Փիլմարուեստի իշխան Ադոմ Էկոյեանի կողմէ:

«Ան, 1997էն ի վեր, բեմադրիչ, թատերագիր եւ դերասան Հրանդ Ալեանաքի հետ արտադրած է երեք մեծ թատերգութիւններ»:

Այս խօսքերէն ետք, Գալուստ եւ Յասմիկ Պապեան ամուլը բեմ գալով, մանրագնին ուսումնասիրութեամբ եւ գրական փորձառու վերլուծումներով, փոխն ի փոխ ներկայացուցին Տէր Արմէնի «Երկու Աշխարհ» պատմուածքներու գիրքը:

Շուրջ կէս ժամ տեւող վերլուծումներէն պիտի ներկայացնենք կարգ մը հաստուածներ, Գալուստին եւ Յասմիկին կողմէ արտայայտուած:

Գալուստ. «Նոր լոյս ընծայուած հատոր մը, Մեսրոպի բարբառին հաւատարիմ զինուորագրեալի մը վկայութիւնը: Էջերու թղթատումը ունեզերուէ կը հասցնէ այն իւրայատուկ բոյրը, որ ունի նոր գիրքը, թաց մեղանը,

գինովցնող, արբեցնող գիրքի շունչը, որու կը հաւասարի միայն փոռնէն նոր դուրս եկած մարմնի սնուցման, գիրը-գիրքը՝ վասն դպրութեան անմահութեան»:

Յասմիկ. «Երկու աշխարհ», հեղինակ Տ. Արմէն Ա. Քհնյ. Իշխանեան, լոյս տեսած Մոնթրէալ, Գանատա, 2003ին: Հատորը ձօնուած է Տէր Հօր ծնողներուն՝ Գէորգ եւ Հռիփսիմէ Իշխանեաններուն, մեկենասութեամբ տրիկին Հուրի Հաքիմեանի, ի յիշատակ վաղամեռիկ ամուսնոյն՝ Ռազմիկ Հաքիմեանի: 320 էջերէ բաղկացած հատոր մը, հաւաքածոյ 59 գրութիւններու, որոնք լոյս տեսած են «Հայրենիք», «Ազդակ», «Ազատ Օր» օրաթերթերու, «Հորիզոն» շաբաթաթերթի, «Լրաքաղ»ի եւ «Լոյս»ի էջերուն մէջ՝ 1963էն 2002, 40 տարիներու վրայ երկարող ժամանակաշրջանին»:

Գալուստ. «Լայն բացէք ձեր մտքի կարկինը, լուսարձակը բարձր, քանի հեղինակի գրականութեան, ստեղծագործութեան ենթահողը կը պարփակէ քանի մը ցամաքամաս ու հազարաւոր մղոններու տարածք: Այո, անհուն է տարածքը ու տարբեր ցամաքամասեր, տարբեր ընկերային կառոյցներով, տարբեր ընկերային պայմաններով, բայց նոյն կեցուածքը, որ եղած է հեղինակին նկարագրին արժանիքը»:

Յասմիկ Պապեան այս առիթով տուաւ տէր Հօր ամփոփ կենսագրութիւնը, հետեւեալ բովանդակութեամբ.

Ծնած է 8 Նոյեմբերին 1930ին, Հալէպ:

Աւագանի անունով՝ Կարպիս, շատ կանուխէն (երկու ամսու մանուկ) կորսնցուցած է իր հայրը: Հասակ նետած է իր մօր՝ Հռիփսիմէի հսկողութեան տակ, որ ըլլալով հոգեւոր կեանքով ապրող կինի մը, զաւակն ալ դաստիարակած է նոյն միջոցովին մէջ:

Նախնական ուսումը ստացած է Հալէպի Հայ Աւետարանական Էմմանուէլ վարժարանին մէջ, իբրեւ սան Աքսիոն Քրեթիէն Ան Օրիան կազմակերպութեան:

1947ին, ընտանիքին հետ փոխադրուած է Լիբանան, ուր ան՝ իր ուսման ծարաւը գոհացնելու համար հետեւած է Հայր Յովհաննէս Մսրրլեանի Հայագիտական դասախօսութեանց:

1959ին եկած է Գանատա, իսկ 1961ին հաստատուած է Պոսթըն: Յաճախած է Աբրահամ Լինքըլն բարձրագոյն վարժարանը, ապա՝ Հարվըրտ համալսարանը, հետեւելով կրօնա-բարոյական եւ գրական ճիւղերուն, նիւթական օժանդակութեամբ՝ Տոքթ. Էլիզա Մելքոնի:

Պոսթընի մէջ ունեցած է հանրային-եկեղեցական բեղուն գործունէութիւն, պաշտօնավարած է «Հայրենիք» հաստատութեան մէջ: 11 Ապրիլ 1971ին, Ս. Զատիկի օրը, ձեռնադրուած է Աւագ Սարկաւազ, ձեռամբ՝ երջանկայիշատակ Տ. Հրանդ Արք. Խաչատուրեանի:

23 Մարտ 1974ին, քահանայ ձեռնադրուած է եւ նշանակուած է հովիւ Մոնթրէալի Ս. Յակոբ Հայց. Առաք. եկեղեցւոյ:

2001ին հանգստեան կոչուած է, սակայն կը շարունակէ, զանազան ձեւերով իր օժանդակութիւնը բերել եկեղեցւոյ աշխատանքներուն:

Այնուհետեւ, Գալուստ եւ Յասմիկ, իրենց վերլուծումներու առընթեր կարդացին շարք մը պատմուածքներէն հատուածներ, որոշ գաղափար եւ ճաշակ տալով ներկայ գրասէրներուն, Տէր Հօր գրականութեան շուրջ:

Խօսք տրուեցաւ Վեր. Եսայի Սարմազեանին, որ իր սրտի խօսքով, շընորհաւորեց Տէր Հօր գրականութիւնը, վկայակոչելով, գիրքի ընթերցումէն ետք իր ստացած հոգեյոյզ զգացումները:

Խօսք առաւ Տ. Արմէն, եւ իր խորին շնորհակալութիւնները յայտնեց Տ. Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեանին եւ Համազգայինին, որոնք կազմակերպեցին այս հոգեգրաւ գինեձօնը: Տէր Հօր գիրքին եւ գրականութեան շուրջ սրտի խօսքով հանդէս եկաւ երաժիշտ Յակոբ Մանուկեան:

Համազգայինի կողմէ Տէր Հօր յանձնուեցաւ յիշատակի նուէր մը՝ հայրենի գրագէտ Արշակի «Անպարտելին», «Յանցաւոր Սէր» եւ «Ճգնաւորը» վէպերը պարունակող հատորը, վարչութեան ատենապետ Պր. Յակոբ Չաքմազեանի ձեռամբ:

Խօսք առաւ նաեւ Հոգշ. Տ. Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեան, եւ իր գոհունակութիւնը յայտնեց ձեռնարկի յաջողութեան համար, գնահատելով Տէր Հօր գրական արժանիքները եւ գրելու աստուածատուր շնորհքը:

«ՅՈՐԻՉՈՆ» ԵՒ «ՍԱՐՄԱՐԱ»
2003

ԹՈՐՈՆԹՈՆԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԱՋՆԵՐԷՆ ՄԷԿՆ ԱԼ ԻՐԱԿԱՆԱՑԱԻ

ՆՈՐ ՓԵԹԱԿԸ

Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանը դռները բացաւ Սեպտեմբեր 4ին առաւօտեան ժամը 10ին, 80 աշակերտներով:

Վարժարանը ունի երեք դասարանով Հ.Օ.Մ.ի Պապայեան Մանկապարտէզի բաժինը: Մանկապարտիզականուհին է Տիկ. Շաքէ Տէյիրմենճեան:

Նախակրթարանը ունի երկու դասարան, աշակերտութեան կէսը կը փոխադրուի երկու պասերով:

Մանուկները իրենց կապոյտ տարագներով, փունջ փունջ ցրուած են դպրոցի մարգագետինն վրայ: Ընկերացող ծնողներու ալիքներուն մէջ ուրախութեան եւ գոհունակութեան ժպիտ:

Զանգը կը հնչէ: Պրն. Մարգար Շարապխանեան, դպրոցի տնօրէնը, բարի գալուստ կը մաղթէ աշակերտներուն: «Այս դպրոցը կու գաք հայերէն սորվելու, հայերէն խօսելու, հայոց պատմութիւնն ճանչնալու, գանատական ծրագրին կողքին»:

Հ.Օ.Մ.ի վարչութեան ատենապետուհի Տիկ. Շաքէ Ստեփանեան ուրախութեամբ ողջունեց դպրոցի առաջին օրը: «Ոչ մէկ ճիգ եւ գոհողութեան առջեւ կանգ պիտի առնենք որպէսզի այս վարժարանը իր առաքելութեան մէջ յաջողի»:

Հ.Յ.Դ. «Ս. Թեհլիրեան» կոմիտէի ատենապետ ընկեր Վիգէն Աճէմեան իր խօսքը ըսաւ. «1976 Մայիս 27ին, Անկախութեան տօնի մեր ձեռնարկին, յայտարարեցին մեր ժողովուրդին որ պիտի ունենանք արդիական նոր կեդրոնի շէնք եւ ձեռնարկենք կրթական գործին: Թուականէս երեք ամիս առաջ բացինք դռները այս կեդրոնին: Այսօր կը բանանք դռները մեր վարժարանին: Գալ տարեշրջանին կը ծրագրենք բանալ դռները դպրոցի յատուկ շէնքին: Նոյն հաւատքը, նոյն վճռակամութիւնը եւ նոյն գոհողութեան ոգին կ'առաջնորդեն մեզ մեր աշխատանքներու իրագործման ի խնդիր»:

Տիկ. Տիգրանուհի Արթինեան, Ամառնային Վարժարանի նախկին հիմնադիր տնօրէնուհին, յուզումով օրհնեց գործը եւ մանուկները:

Աշակերտները խմբով արտասանեցին «Տէրունական Աղօթք»ը, ապա առաջնորդուեցան իրենց դասարանները:

«ՀԱՅ ԿԵՂՐՈՆԻ ԼՐԱՏՈՒ»
Հոկտեմբեր 1979

**Հ.Օ.Մ.Ի ԱՄԷՆՈՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՇԷՆՔԻ
ԲԱՅՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՈ**

Հովանաւորութեամբ Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Եպիսկոպոս Աշճեանի, Կիրակի, 7 Նոյեմբեր 1982, կէսօրէ ետք ժամը 3ին, տեղի ունեցաւ բացման պաշտօնական հանդիսութիւն Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի նորակառոյց շէնքին:

Շաբաթներէ ի վեր, Հայ Կեդրոնը բացառիկ եռուզեռի մէջ էր: Շէնքի Շինութեան Կեդրոնական Ցանձնախումբը եւ ենթայանձնախումբեր բազմաթիւ ժողովներ կը գումարէին, յառաջացնելով տասնեակ մը յանձնախումբեր, որպէսզի այս պատմական օրը անմոռանալի մնայ Թորոնթոն հայութեան յիշողութեան մէջ:

Արդարեւ, այս բարեբաստիկ առիթով, Շինութեան Կեդրոնական Ցանձնախումբը աննախընթաց եւ տպաւորիչ գաղափարը յղացած էր հրաւիրելու հայ մտաւորականներ եւ գրագէտներ, որոնցմէ ներկայ էին՝ ընկ. Մինաս Թէօլէօլեան՝ որպէս գլխաւոր բանախօս, տիկ. Գոհար Թէօլէօլեան, ընկ. Վահէ Օշական, ընկ. Յակոբ Կարապենց, ընկ. Ժիրայր Աթթարեան եւ Հրանդ Սիմոնեան:

Վարիչ-բարտուղար պրն. Հրանդ Սիմոնեան, Հ.Օ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի Արփի Զարխուտեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կ.Կ.ի ներկայացուցիչ՝ Խաչիկ Յակոբեան, Հ.Օ.Մ.ի Շրջանային Վաչութեան ներկայացուցիչ՝ Մարի Մարտիրոսեան, Պապայեան հաստատութեան ատենապետ՝ պրն. Հայկ Սելեան եւ տիկինը, Հայց. Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հովիւը՝ Արժ. Տ. Յուսիկ Քհնյ. Նշանեան, Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւը՝ Վեր. Եսայի Մարմազեան եւ Ծխական Խորհուրդի ներկայացուցիչ՝ տէր եւ տիկ. Անթիպաս Լուսարարեան, Հայ Կաթողիկէ համայնքի հովիւ՝ Գերշ. Տ. Եղիա Վրդ. Գիրէջեան եւ Ծխական Խորհուրդի ներկայացուցիչ՝ տէր եւ տիկ. Գէորգ Երեմեան, Հ.Բ.Ը. Միութեան տեղական վարչութեան ատենապետ պրն. Պետրոս Զիլինկիրեան, Ս. Խաչ Ամէնօրեայ Վարժարանի Հոգատար Մարմի ներկայացուցիչ պրն. Կարօ Խապայեան, Ս. Խաչ Ամէնօրեայ Վարժարանի տնօրէնուհի տիկ. Հանըմեան, Շաբաթօրեայ Վարժարանի տնօրէնուհի տիկ. Արշալոյս Գանտահարեան, Հ.Օ.Մ.ի Ամառնային Ամէնօրեայ Վարժարանի տնօրէն պրն. Գրիգոր Պաղտասարեան, Օնթարիօ Խորհրդարանի նախկին երեսփոխան՝ հայասէր տիկ. Մարկրիթ Քամպըլ, Հայ Կեդրոնի մէջ գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչները, այլ պաշտօնական անձնաւորութիւններ, եւ մանաւանդ, հազարէ աւելի հայ դպրոցով խանդավառ հայորդիներ:

Կարգապահութեան կը հսկէին Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտները եւ արենոյշները, որոնցմէ ջոկատ մը պատուի կեցաւ Առաջնորդ Սրբազանին սրահի մուտքին:

Ժամանակէն շատ առաջ, բազմահարիւր հանդիսականներ, արդէն խըռնուած էին Հայ Կեդրոնի միջանցքներուն մէջ, անհամբեր սպասելով պաշտօնական բացումին:

Եւ որպէսզի դպրոցի շէնքին մէջ տեղաւորուած ժողովուրդը կարենար հետեւիլ բացումի արարողութեանց, բոլոր սրահներուն եւ դասարաններուն մէջ հաստատուած էին վիտիոններ: Ժողովուրդը պատկերասփիւռի վրայ կըրնար դիտել, իր գտնուած տեղէն, ուրիշ սրահներու մէջ տեղի ունեցող հանդիսութիւնները:

Այս գործը վստահուած էր Թորոնթոհայ արուեստագէտ-բեմադրիչ, շարժանկարիչ Սուրէն Զէքիճեանին:

Ժամը 3ին, Հայ Կեդրոնի կողմէ մուտքի դրան առջեւ հաւաքուած բազմութեան առջեւ խօսք առաւ «Մ. Թեհլիրեան» Կոմիտէի գործավար ընկ. Յարութիւն Շիթիլեան եւ հրաւիրեց Հ.Օ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի օրդ. Արփի Չարխուտեանը, կտրելու բացման ժապաւէնը:

Ժողովուրդը տեղաւորուելէ ետք նորակառոյց դպրոցի զանազան բաժինները, Ամէնօրեայ Վարժարանի աշակերտները ներս առաջնորդուեցան, շալկած պաստառներ՝ Պարոյր Սեւակի հետեւեալ տողերով. «Կանք պիտի լինենք եւ դեռ շատանանք»:

Սկսաւ օրհնութեան արարողութիւնը, հովանաւորութեամբ Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Եպիսկ. Աշճեանի եւ ընկերակցութեամբ Հայ Կաթողիկէ համայնքի հովիւ Գեր. Տ. Եղիա Վրդ. Գիրէջեանի:

Յուզիչ եւ առինքնող տեսարան: Ուրախութեան արցունքներ նշմարելի էին ամէնուրեք...:

Ապա, առաջին հերթին բացումը կատարուեցաւ դպրոցի անունը կրող ցուցատախտակին, բարեբար տէր եւ տիկ. Գէորգ Գոլոլեաններու, Պապայեան հաստատութեան ներկայացուցիչ պրն. Հայկ Սելեանի եւ Հ.Օ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի Արփի Չարխուտեանի կողմէ:

Դպրոցը այսուհետեւ կը կոչուի. «Հայ Օգնութեան Միութեան Վարժարան», «Գոլոլեան Նախակրթարան» եւ «Պապայեան Մանկապարտէզ»:

Այնուհետեւ դասարաններու նուիրատուներու կողմէ բացումը կատարուեցաւ դասարաններու մուտքին հաստատուած նշանատախտակներու:

Կու տանք դասարաններու նուիրատուներուն անունները, որոնք 25 հազարական տոլար նուիրելով մեծապէս օգնեցին շինութեան աշխատանքներուն:

- 1.- Հայ Կեդրոնի Երէցներու Ընկերակցութիւն
- 2.- Հայ Կրթական Հիմնարկութիւն (Լոս Անճելըս)
- 3.- Տէր եւ Տիկ. Է. Բարսեղեան
- 4.- Տէր եւ Տիկ Յովսէփ Դաւիթեան
- 5.- Տէր եւ Տիկ. Դաւիթ Դաւիթեան
- 6.- Տէր եւ Տիկ. Յակոբ Ճամպազեան
- 7.- Տէր եւ Տիկ. Մինաս Ոսկերիչեան
- 8.- Թիթիզեան եղբայրներ:

Իսկ ջուրի ծորակի նուիրատուն էր Տէր եւ Տիկ. Կարպիս Մելիքեան, իր վաղամեռ աղջկան՝ Ռիթայի յիշատակին:

Դպրոցի բոլոր բաժիններուն մէջ տեղ գրաւած ժողովուրդը հիւրասիրեցաւ առատ խմիչքով եւ աղանդերներով:

Ժամը 7ին, Հայ Կեդրոնի ընդարձակ սրահին մէջ, ինչպէս կ'ըսեն «ասեղ նետելու տեղ չկայ»:

Օրուան հանդիսավար ընկ. Անդրանիկ Արթինեան, ողջունեց Առաջնորդ Սրբազան Հօր եւ հրաւիրեալ հայ գրագէտներու մուտքը սրահ:

Ներկաները, յոտընկայս ծափահարութիւններով դիմաւորեցին թանկագին հիւրերը, որոնք զգալի փայլ մը կու տային հանդիսութեանց:

Սրբազան Հօր աղօթքէն ետք տեղի ունեցաւ ճաշկերոյթ:

Ճաշկերոյթէն անմիջապէս յետոյ, հանդիսավար ընկ. Արթինեան, իր բացման խօսքով բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ներկայացուց պատուոյ սեղանը, ուր տեղ գրաւած էին Առաջնորդ Սրբազան Հայրը, ընկ. Մինաս Թէօլօլեան, տէր եւ տիկ.Գէորգ Գոլուեան, Կ.Կ.ի գործավար ընկ. Խաչիկ Յակոբեան, Հ.Օ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի օրդ. Արփի Չարխուտեան, Պապայեան հաստատութեան ատենապետ պրն. Հայկ Սելեան եւ տիկինը, «Սողոմոն Թեհլիրեան» Կոմիտէի գործավար ընկ. Յարութիւն Շիթիլեան եւ տիկինը, Հ.Օ.Մ.ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ ընկհ. Մարի Մարտիրոսեան, Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» մասնաճիւղի ատենապետուհի ընկհ. Նանիկ Արթինեան եւ Հայ Կրթական Հիմնարկութեան (Լոս Անճելըս) վարիչ-քարտուղար պրն. Հրանդ Սիմոնեան:

Ընկ. Արթինեան աւելցուց.

«Այս ձեռնարկը մեր բոլորին համար հարսանիք է: Այս է մօտեցումը: Կարելի չէ հայ դպրոցի մասին խօսիլ, դպրոցի բացում կատարել, առանց նկատի առնելու, որ հայ գրչի մարդը մասնակից դառնայ հարսանիքին: Անոր համար հրաւիրեցինք ամերիկահայ կարգ մը մտաւորականներ եւ գրագէտներ»:

Ապա ներկայացուց ներկայ մտաւորականները եւ գրագէտները եւ այլ պաշտօնական հիւրերը:

Առաջին խօսողն էր «Մ. Թեհլիրեան» Կոմիտէի գործավար ընկ. Յարութիւն Շիթիլեան, որ նախ շնորհակալութիւններ յայտնեց Հայ Կեդրոնի մէջ գործող բոլոր միութիւններուն եւ կազմակերպութիւններուն, Շինութեան Յանձնախումբին եւ բոլոր ենթայանձնախումբերուն, բոլոր անդամներուն, որոնց կամաւոր աշխատանքին եւ գոհողութիւններուն շնորհիւ, կարելի եղաւ այս դժուար գործը իր աւարտին հասցնել:

Հանդիսավար ընկ. Արթինեան, հրապարակաւ շնորհակալութիւն յայտնեց Հ.Օ.Մ.ուհիներուն, որոնք պատրաստած էին օրուան բոլոր ճաշերը, ինչպէս նաեւ Հ.Յ.Գ. Գանատայի Երիտասարդաց Միութեան անդամ-անդամուհիներուն, որոնք սպասարկեցին:

Երկրորդ խօսողն էր Թորոնթոյի Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» մասնաճիւղի ատենապետուհի ընկհ. Նանիկ Արթինեան:

Հ.Օ.Մ.ի Շրջանային Վարչութեան կողմէ խօսեցաւ ընկերուհի Մարի Մարտիրոսեան, ապա, իր խօսքի վերջաւորութեան ներկայացուց Հ.Օ.Մ.ի

Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի ընկհ. Արփի Չարխուտեանը եւ հրաւիրեց զայն տալու իր խօսքը:

Ընկհ. Չարխուտեան շնորհակալութեամբ թորոնթոյի Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի շէնքի բացումը եւ Կեդրոնական Վարչութեան անունով խոստացաւ նիւթական եւ բարոյական միջոցներով նեցուկ հանդիսանալ անոր գոյատեւման եւ բարգաւաճումին:

Ապա, խօսք տրուեցաւ Հ.Յ.Դ. Գանատայի Կ.Կ.ի ներկայացուցիչ ընկ. Խաչիկ Յակոբեանին, որ անդրադարձաւ հայ դպրոցի կարեւորութեան մասին եւ Հ.Յ. Դաշնակցութեան նախաձեռնութիւններուն՝ դպրոցաշինութեան եւ հայապահպանման աշխատանքներուն մէջ:

Խօսք առաւ Պապայեան հաստատութեան ատենապետ պրն. Հայկ Սելեան եւ շնորհակալութեամբ թորոնթոյի Հայ դպրոցի շէնքին բացումին առթիւ:

Ան շեշտեց հայ դպրոցի կատարած կենսական գործը հայապահպանումին մէջ եւ խոստացաւ, ինչպէս միշտ, նիւթապէս եւ բարոյապէս օգնել, որպէսզի այդ գործը լաւագոյնս ծառայէ իր նպատակին:

Սոյն ձեռնարկին հրաւիրուած էին ազգային եւ աշուղական երգերու անգութեան երգիչ Լեւոն Գաթրճեան, որ բեմ հրաւիրուելով, ժողովուրդի խանդավառ ծափերով ընդունուեցաւ:

Գաթրճեան երգեց ազգային քանի մը երգ, ընկերակցութեամբ տեղական «Անոյշ» նուագախումբին, խօսողներու մինչեւ դադար մը ստեղծելով:

Հոս կ'ուզեմ շեշտել Լեւոն Գաթրճեանի եղանակաւորած մէկ երգը, Քամար-Գաթրճիպայի ազգաշունչ մէկ բանաստեղծութեան վրայ, ուր կ'ըսէ բանաստեղծը.

Եթէ քու փողէն շահ չկայ հայութեան,
Թքել եմ քու էլ փողիդ էլ վրան:

Օրուան յարմար երգ մը իրապէս, որ կոչուած էր գրգռելու ներկաներու ազգասիրական ոգին:

Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի բարձրագոյն երկու կարգերու աշակերտութեան մուտքը սրահ՝ թարմութիւն եւ ոգեւորութիւն ստեղծեց հանդիսականներու մէջ:

Աշակերտները բեմին վրայ շարուելով, երգեցին «Իմ Հայաստան», «Հայ Վարժարան» եւ «Մենք Մանուկներ Հայոց Ազգին» երգերը, ջութակի ընկերակցութեամբ եւ ղեկավարութեամբ Վարժարանի երգեցողութեան ուսուցիչ պրն. Էտիկ Յովսէփեանի: Ապա, արտասանեցին խմբային արտասանութիւն մը՝ «Սուրբ Հայրենիք»:

Օրուան հանդիսավար ընկ. Անդրանիկ Արթինեան խօսք առնելով, կարգ մը ծանօթութիւններ տուաւ Վարժարանի բարերար պրն. Գէորգ Գոլոլեանի հօր մասին, որուն անունով կը կոչուի նախակրթարանը՝ «Գոլոլեան Նախակրթարան», եւ հրաւիրեց պրն. Գէորգ Գոլոլեանը տալու համար իր պատգամը՝ այս պատմական հանդիսութեան:

Պրն. Գոլոլեանի պատգամէն ետք, խօսք տրուեցաւ Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Եպիսկ. Աչճեանին, տալու համար իր պատգամը:

Ինչպէս ծանօթ է, Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոս Գարեգին Բ. Ամերիկա իր Առաջնորդութեան շրջանին, մեծապէս օգտակար հանդիսացած էր Թորոնթոյի Հայ Կեդրոնի եւ դպրոցի շինութեան ծրագիրներու իրազոործման:

Այս բարեբաստիկ առիթով, Վեհափառ Տէրը, իր պատգամը ուղարկած էր Թորոնթոհայուութեան՝ վրաստիճանով:

Ժողովուրդը պատառին վրայ դիտելով եւ լսելով անխառն ուրախութիւն զգաց, որ իր հոգեւոր Տէրը մասնակից կը դառնայ տեղի ունեցող տօնախմբութիւններուն:

Վերջին խօսողն էր յայտնի մտաւորական, գրագէտ, հեղինակ ընկ. Մինաս Թէօլէօլեան, որ մօտ 25 վայրկեան տեւողութեամբ վերլուծեց Հայ կեանքը հայրենիքի եւ սփիւռքի մէջ, տալով գրական եւ բացասական երեսները մեր մաքառումին, գոյապայքարին եւ նպատակներուն:

Պատգամները եւ ճառերը վերջ գտան:

Հանդիսավար ընկ. Անդրանիկ Արթինեան կրկին խօսք առնելով, հանգանակութիւնը բացուած յայտարարեց, շեշտելով այն նպատակը, որ Շինութեան Յանձնախումբը այս պատկառելի գործը, արդիական եւ պատուաբեր Հայ դպրոցի շինութիւնը առանց պարտքի վերջացուցած կ'ըլլայ, եթէ երբեք, ներկայ ժողովուրդէն հանգանակուի 350 հազար տոլար:

Արդէն սեղաններու վրայ դրուած էին խոստումնաթուղթեր, որոնք լեցուելով սկսան հասնիլ ընդհանուր հաշուապահներուն, որոնք հաշուիչ մեքենաներու վրայ կը պահէին հաշուեկշիւը:

Մէկ ժամուան ընթացքին, ներկայ ազգասէր գումարը հասած էր 305 հազար տոլարի:

Հանգանակութենէն ետք, բեմ եկաւ կրկին երգիչ Լեւոն Գաթրճեան, եւ մինչեւ գիշերուան ուշ ատենները խանդավառ եւ հայաշունչ մթնոլորտ մը ըստեղծեց:

Ներկաները Կիրակի 8 Նոյեմբերին ապրեցան յիշատակելի եւ փառահեղ օր մը, որ երբեք պիտի չմոռցուի:

Նորակառոյց դպրոցը գրեթէ վերջացած է եւ շուտով պիտի ընդունի իր մնայուն բնակիչները՝ հայ մանուկները, որոնք օրհնուած այս շէնքին մէջ պիտի դաստիարակուին եւ կրթուին հայկական գիտելիքներով եւ ոգիով, ու պիտի լուսաւորուին Մեսրոպեան 36 տառերու ճառագայթներով:

Հանդիսութեան ներկայ ժողովուրդը աւելիով կատարեց իր պարտականութիւնը:

Մանաւանդ, զնահատելի եւ օրինակելի էին Հայ Կրթական Հիմնարկութեան (Լոս Անճելոս) եւ Մոթրէալի Հայ կարգ մը կազմակերպութիւններու եւ ազգայիններու մասնակցութիւնը՝ հանգանակութեան:

Այս կը նշանակէ եւ կը փաստէ այն իրականութիւնը, որ հայը, ուր որ ալ գտնուի, պէտք է գոլորտայ իր համրանքին վրայ եւ ամէն տեսակ զոհողութիւններով հայ նոր սերունդին տայ հայեցի դաստիարակութիւն:

Այս կը փաստէ, որ բոլոր գաղութներու յաջողութիւնները եւ ձախողութիւնները կ'ուրախացնեն եւ կը տխրեցնեն բոլոր հայերը անխտիր: Քանի որ բոլորս նոյն ազգի զաւակներն ենք եւ կը ծառայենք միեւնոյն նպատակին:

Իսկ շատեր կը բացակայէին բացման հանդիսութենէն՝ կամ քէ անկախ պատճառներով եւ չկրցան իրենց ազգային պարտականութիւնը կատարել՝ երջանկութիւնը տալու առաքինութեան, հայապահպանման բերդի շինութեան համար:

Անոնց համար կ'ըսենք, հանգանակութիւնը կը շարունակուի եւ իրենց ալ առիթ պիտի տրուի հանդարտեցնելու իրենց խիղճերը:

Դպրոցը առանց պարտքի վերջացած տեսնելու մեր ձգտումին մէջ, պէտք ունինք չմասնակցողներու մասնակցութեան:

Մեր անհուն վստահութիւն ունինք մեր ժողովուրդի գիտակցութեան եւ զոհաբերութեան ոգիին, որոնց փաստը տեսանք անցեալին, ներկայիս եւ պիտի տեսնենք ապագային...

«ՅԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԼՐԱՏՈՒ»
Նոյեմբեր-Դեկտեմբեր 1982

**Հ.Օ.Մ.Ի ԱՄԷՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՇԷՆՔԻ ԲԱՅՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՀԱՆՂԻՍՈՒԹԻՒՆԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ԽԱՆԴԱՎԱՌ
ՄԹՆՈԼՈՐՏԻ ՄԷՋ**

Հովանավորութեամբ Գանատայի եւ Արեւելեան Մ. Նահանգներու Կիւրիկեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Եպիսկոպոս Աշճեանի, Կիրակի, 7 Նոյեմբեր 1982, կէսօրէ ետք ժամը 3ին, տեղի ունեցաւ բացման պաշտօնական հանդիսութիւնը Հ.Օ.Մ.Ի Ամէնօրեայ Վարժարանի նորակառոյց շէնքին

Շաբաթներէ ի վեր, Հայ Կեդրոնը բացառիկ եռուզեռի մէջ էր: Շէնքի Շինութեան Կեդրոնական Յանձնախումբը եւ ենթայանձնախումբեր բազմաթիւ ժողովներ կը գումարէին, յառաջացնելու տասնեակ մը այլ յանձնախումբեր, որպէսզի այս պատմական օրը անմոռանալի մնայ թորոնթոհայութեան յիշողութեան մէջ:

Արդարեւ, այց բարեբաստիկ առիթով, Շինութեան Կեդրոնական Յանձնախումբը աննախընթաց եւ տպաւորիչ գաղափարը յղացած էր հրաւիրելու հայ մտաւորականներ եւ գրագէտներ:

Հրաւերին դրապէս ընդառաջեցին Տէր եւ Տիկին Մինաս Թէօլէօլեան, Վահէ Օշական, Յակոբ Կարապետ, Ժիրայր Աթթարեան, Արա Պալիոզեան եւ Կարօ Արմէնեան: Ծերունագարդ գրագէտ Արամ Հայկազ, հիւանդ ըլլալով, ուղարկած էր իր շնորհակարարութիւնները թորոնթոհայութեան, իր խորին շնորհակալութիւնները յայտելով Շինութեան Յանձնախումբին՝ իրեն հանդէպ յոյս տրուած այս բացառիկ պատուին համար:

Հրաւիրուած էին եւ ներկայ գտնուեցան նաեւ Հայ Կրթական Հիմնարկութեան (Լոս Անճելըս) Վարիչ-Քարտուղար Պրն. Հրանդ Միմոնեան, Հ.Օ.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի ընկհ. Արփի Չարխուտեան, Հ.Յ.Գ. Գանատայի Կ.Կ.ի ներկայացուցիչ ընկհ. Խաչիկ Յակոբեան, Հ.Օ.Մ.Ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ ընկհ. Մարի Մարտիրոսեան, Պապայեան Հաստատութեան ատենապետ Պրն. Հայկ Սելեան եւ տիկինը, Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Յուսիկ Քհնյ. Նշանեան, Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւ Վեր. Եսայի Սարմազեան եւ ծխական խորհուրդի ներկայացուցիչ Պրն. Անթիպաս Լուսարարեան, Հայ Կաթողիկէ համայնքի հովիւ Գերշ. Տ. Եղիա Վրդ. Գիրէջեան եւ ծխական խորհուրդի ներկայացուցիչ Պրն. Պետրոս Չիլիկիւրեան, Ս. Խաչ Ամէնօրեայ Վարժարանի հոգատար մարմնի ներկայացուցիչ Պրն. Կարօ Խապայեան եւ տնօրէնուհի Տիկ. Տիանա Հանըմեան, Շաբաթօրեայ Վարժարանի տնօրէնուհի Տիկ. Արշալոյս Գանտահարեան, Հ.Օ.Մ.Ի Ամառնային Վարժարանի տնօրէն Պրն. Գրիգոր Պաղտասարեան, Օնթարիոյ խորհրդարանի նախկին երեսփոխան, հայասէր Տիկ. Մարկրէթ Գամփպէլ, Հայ Կեդրոնի մէջ գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչները, այլ պաշտօնական անձնակազմութիւններ, եւ մանաւանդ հայ դպրոցով խանդավառ հազարէ աւելի հայորդիներ:

Կարգապահութեան կը հսկէին Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտները եւ արեւոյշները, որոնցմէ ջոկատ մը պատուի կեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր սրահ մուտքին:

Ժամանակէն շատ առաջ, բազմահարիւր հանդիսականներ, արդէն խըռնուած էին Հայ Կեդրոնի միջանցքներուն մէջ, անհամբեր սպասելով պաշտօնական բացումին:

Եւ, որպէսզի, դպրոցի շէնքին մէջ տեղաւորուած ժողովուրդը կարենար հետեւիլ բացումի արարողութեանց, բոլոր սրահներուն եւ դասարաններուն մէջ հաստատուած էին հեռատեսիլի պաստառներ:

ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Ժամը 3ին, Հայ Կեդրոնի կողմէ մուտքի դրան առջեւ հաւաքուած բազմութեան առջեւ խօսք առաւ «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէի գործավար ընկ. Յարութիւն Շիթիլեան եւ հրաւիրեց Հ.Օ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի ընկհ. Արփի Չարխուտեանը՝ կտրելու բացման ժապաւէնը:

Ժողովուրդը տեղաւորուելէ ետք նորակառոյց դպրոցի զանազան բաժինները, Ամէնօրեայ Վարժարանի աշակերտները ներս առաջնորդուեցան, շարժուած պաստառներ, Պարոյր Սեւակի հետեւեալ խօսքով. «Կանք, պիտի լինենք եւ դեռ շատանա՛նք»:

Սկսաւ օրհնութեան արարողութիւնը, հովանաւորութեամբ Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Եպիսկոպոս Աշճեանի եւ ընկերակցութեամբ Գերշ. Տ. Եղիա Վրդ. Գիրէջեանի:

Յուզիչ եւ առինքնող տեսարան: Ուրախութեան արցունքներ նշմարելի էին ամէնուրեք...:

Ընկ. Շիթիլեան հակիրճ պատմականը ըրաւ Ամէնօրեայ Վարժարանի գաղափարի ծագման եւ զարգացման, ապա տեղեկութիւններ տուաւ վարժարանի աշակերտութեան եւ շինութեան հանգանակութեան ներկայ վիճակի մասին: Ան յատկապէս վեր առաւ Հ.Օ.Մ.ի, Պապայեան Հաստատութեան եւ Տէր եւ Տիկին Գէորգ եւ Արմէնուհի Գոլոյեաններու նախախնամական դերը՝ այս սըրբազան ծրագրի իրագործման ի խնդիր:

«Հ.Օ.Մ.ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւնները Հայ Կեդրոնի եւ Վարժարանի շինութեան յատկացուցած են 100,000.00 ամերիկեան տոլար (50,000 առաջին հանգրուանին եւ 50,000 այս հանգրուանին):

«Աւելին՝ Հ.Օ.Մ.ի Վարժարաններու Խնամակալ Մարմինը Թորոնթոյի մէջ տարեկան կը գոյացնէ 50,000 տոլար վարժարանի պիւտճէի բացը գոցելու համար:

«Պապայեան Հաստատութիւնը այս ծրագրին յատկացուցած էր 200,000.00 տոլար: (100,000 տոլար շէնքին առաջին հանգրուանին եւ 100,000 տոլար այս երկրորդ հանգրուանին): Պապայեան Հաստատութիւնը տարեկան 5,000 նպաստով մը կը մասնակցի Պապայեան Մանկապարտէզի պիւտճէին:

«Դպրոցի եւ նոր շէնքի բացումը աւելի ծանր պատասխանատուութիւններ պիտի դնէ ե՛ւ Հ.Օ.Մ.ի ե՛ւ Պապայեան Հաստատութեան ուսերուն, սակայն վստահ եմ, որ անոնք հաւատարիմ իրենց կոչումին՝ պատրաստ պիտի ըլլան նորանոր զոհողութիւններու՝ այս վարժարանի վերելքին ի խնդիր:

«1979ի Յունիսին, երբ բացումը կը կատարէինք Հայ Կեդրոնի առաջին հանգրուանին՝ 450,000.00 տոլարի բաց մը ունէինք, Տէր եւ Տիկին Գէորգ եւ Արմէնուհի Գոլոլեանները 150,000.00ի նուիրատուութիւն մը ըրին ո՛չ թէ առաջին հանգրուանին համար, որ շինուած էր, այլ երկրորդ հանգրուանին համար, որ դպրոցը պիտի ըլլար: Այն ատեն ո՛չ ամէնօրեայ վարժարան ունէինք, ո՛չ աշակերտ, ո՛չ ուսուցիչ, ո՛չ տնօրէն:

«7,000 հայութիւն հաշուող Թորոնթոյի գաղութին համար Ամէնօրեայ վարժարանը ցնո՛րք, անիրականանալի երա՛ց մը կը թուէր ըլլար. Տէր եւ Տիկին Գոլոլեանները հաւատացին այդ երազին:

«Աւելի՛ն, Գէորգ Գոլոլեան շէնքի շինութեան յանձնախումբի այն անդամը եղաւ, որուն խորունկ հաւատքը ներշնչեց իր աշխատակիցները, որուն մանուկի խանդավառութիւնը վարակեց բոլորս եւ որուն գործնական միտքը եւ վառ երեւակայութիւնը անհնարինը դարձուց կարելի՛:

«Դպրոցի նոր շէնքի բացումը աւելի՛ ծանր պատասխանատուութիւններ պիտի դնէ նա՛եւ Գէորգ Գոլոլեանի ուսերուն՝ որ Հ.Օ.Մ.ի Խնամակալ Մարմնի եւ Պապայեան Հաստատութեան հետ պէտք է այս դպրոցի գոյութիւնը նիւթական ամուր կռուաններու վրայ գետեղելու մասին մտածեն»:

Ապա, առաջին հերթին բացումը կատարուեցաւ դպրոցի անունը կրող ցուցատախտակին, բարերարներ Տէր եւ Տիկին Գէորգ Գոլոլեաններու, Պապայեան Հաստատութեան ներկայացուցիչ Պրն. Հայկ Սելեանի եւ Հ.Օ.Մ.ի Կեդրոնական վարչութեան ատենապետուհի ընկհ. Արփի Չարխուտեանի կողմէ:

Դպրոցը այսուհետեւ կը կոչուի «Հայ Օգնութեան Միութեան վարժարան՝ Գոլոլեան Նախակրթարան եւ Պապայեան Մանկապարտէզ»:

Ապա դասարաններու նուիրատուները բացումը կատարեցին դասարաններու մուտքին հաստատուած նշանատախտակներուն:

Դպրոցի բոլոր բաժիններու մէջ տեղ գրաւած ժողովուրդը հիւրասիրեցաւ առատ խմիչքով եւ աղանդներով:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ-ՃԱՇԿԵՐՈՅԹ

Ժամը 7ին, Հայ Կեդրոնի ընդարձակ սրահին մէջ, ինչպէս կ'ըսեն «ասեղ նետելու տեղ չկար»:

Օրուան հանդիսավար ընկ. Անդրանիկ Արթինեան, ողջունեց առաջնորդ Սրբազան Հօր եւ հրաւիրեալ Հայ գրագէտներու մուտքը սրահ:

Ներկաները, յոտընկայս ծափահարութիւններով դիմաւորեցին թանկագին հիւրերը, որոնք զգալի փայլ մը կու տային հանդիսութեանց:

Սրբազան Հօր աղօթքէն ետք տեղի ունեցաւ ճաշկերոյթ:

Ճաշկերոյթէն անմիջապէս ետք, ընկ. Արթինեան, իր բացման խօսքով բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ներկայացուց օրուան հիւրերը:

Առաջին խօսողն էր «Սողոմոն Թէչլիրեան» Կոմիտէի գործավար ընկ. Յարութիւն Շիթիլեան, որ նախ շնորհակալութիւն յայտնեց Հայ Կեդրոնի մէջ գործող բոլոր միութիւններուն եւ կազմակերպութիւններուն, Շինութեան Յանձնախումբին եւ բոլոր ենթայանձնախումբերուն եւ բոլոր անդամներուն,

որոնց կամաւոր աշխատանքին եւ զոհողութիւններուն շնորհիւ, կարելի եղաւ այս դժուար գործը իր աւարտին հասցնել:

Ապա, աւելցուց.

«Այսօր, պատմական օր մըն է Թորոնթոյի մեր գաղութի պատմութեան մէջ: Այս գաղութի առաջին հայ դպրոցի շէնքը՝ երկար տարիներու մեր երազը՝ իրականութիւն կը դառնայ Հայ Կեդրոնի երկրորդ հանգրուանի շինութեամբ:

«Այսօր, պատմական օր մըն է նաեւ Հ.Յ.Գ. «Սողոմոն Թէֆլիբեան» Կոմիտէին համար, որ իրագործեց վեց տարիներ առաջ այս գաղութին տուած իր խոստումը՝ շինելու Հայ Կեդրոն մը եւ Հայ Դպրոց մը:

«1976ին, մեր առաջին հանգանակային ձեռնարկին՝ Գարեգին Վեհափառի ներկայութեան, մենք խոստացանք շինել Հայ Կեդրոն եւ Հայ Դպրոց: Ամառնային եւ Շաբաթօրեայ դպրոցներ ունէինք: Սակայն, ամէնօրեայ դպրոցը մեր գաղութի ուժերէն շատ վեր էր: Այս հսկայական ծրագրին ձեռնարկեցինք, ապաւինելով քու զոհողութեան անգերազանցելի ոգիիդ, Թորոնթոյի հայ ժողովուրդ, եւ այս խիզախ ծրագրի ամէն մէկ հանգրուանին դուն զքեզ գերազանցեցիր: Դուն գլեցիր ու անցար մեր ամէնէն լաւատես ակնկալութիւնները: Քու հոգիդ, սիրտդ լայն բանալով մեզի եւ առատօրէն տալով այս գործի յաջողութեան համար:

«Մեր մէջ կային այս գործին հաւատացողներ, կային թերահաւատներ, կային անհաւատներ: Քու զոհաբերութեան եւ նուիրումի պատրաստակամութիւնը դարձի բերաւ անհաւատները, ամէնցուց թերահաւատները, դօտեպնդեց հաւատացողները, բազմապատկեց մեր վճռակամութիւնը՝ ամբողջացնելու այս յանդուգն ծրագիրը:

«Այսօր, սիրելի հայ ժողովուրդ, շնորհիւ քու անհատնում զոհողութիւններուդ, վեց տարիներու այս ծրագիրը իր լրումին կը հասնի, բացումովը մեր լոյսի տաճարին՝ հայ դպրոց շէնքին:

«Ես վստահ եմ, որ այս վերջին հանգրուանին, դուն դարձեալ, լիովին պիտի իրականացնես մեր ակնկալութիւնները՝ դպրոցի շէնքը առանց պարտքի վերջացնելու, որպէսզի կարենանք տալու քեզի լաւագոյն վարժարանը, որուն իսկապէս արժանի ես»:

Հանդիսավար ընկ. Արթիւնեան, հրապարակաւ շնորհակալութիւն յայտնեց Հ.Օ.Մ. ունէիներուն, որոնք պատրաստած էին օրուան բոլոր ճաշերը, ինչպէս նաեւ Հ.Յ.Գ. Գանատայի Երիտասարդաց Միութեան անդամ-անդամուհիներուն, որոնք սպասարկեցին սեղաններուն:

Երկրորդ խօսողն էր Թորոնթոյի Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» Մասնաճիւղի ատենապետուհի ընկհ. Նանիկ Արթիւնեան, որ ըսաւ.

«Քսան տարի առաջ, երբ շատերս նոր հասանք այս շրջանը, գաղութը կազմուած էր հազիւ 150 ընտանիքներէ: Սկսանք տքնաջան աշխատանքի եւ հիմնեցինք Հ.Օ.Մ.ի Թորոնթոյի Մասնաճիւղը:

«Մեր առաջնահերթ մտահոգութիւնը եղաւ դպրոցական դրութիւնը: Գոյութիւն ունէր Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Շաբաթօրեայ Վարժարանը: Անյետաձգելի պահանջքը զգացինք հիմնաւորելու գաղութիս կրթական գործը:

«Թորոնթոյի Հայ Օգնութեան Միութիւնը, Հիւսիսային Ամերիկայի մէջ առաջինը եղաւ հիմնելու ամառնային ամէնօրեայ վարժարան, որ այս տարի իր 14րդ տարեշրջանը պիտի թեւակոխէ: Աշակերտութեան թիւը հասած է 250ի՝ 5-16 տարեկան:

«Այս Կեդրոնի Բացումէն երեք ամիս ետք, 1979 Սեպտեմբերին հիմնուեցաւ Հ.Օ.Մ.ի ամէնօրեայ Վարժարանը եւ տեղաւորուեցաւ շէնքի վարչական սենեակներուն մէջ: Այսօր, 210 աշակերտներ կը յաճախեն մեր վարժարանը:

«Այս տարի սկսած է նաեւ մեր կազմի երկու ընկերուհիներու նախաձեռնութեամբ հայերէնի դասընթացք «Սըր Ճոն ՄաքՏոնալտ» պետական վարժարանին մէջ, որուն արձանագրուեցան 100ի մօտ ուսանողներ եւ երէցներ:

«Հ.Օ.Մ.ի հովանաւորած այս երեք ձեռնարկները, միասնաբար, մօտ 500 հոգիի հայերէն եւ Հայոց Պատմութիւն կը դասաւանդեն:

«Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» Մասնաձիւղը, այս հանդիսաւոր պահուն, կը խոստանայ աշխատիլ ոգի ի բռին, այս երեք ձեռնարկներու յաջող ընթացքը ապահովելու համար»:

Երրորդ խօսողը եղաւ Հ.Օ.Մ.ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ ընկճ. Մարի Մարտիրոսեան, որ ըսաւ.

«Պատմութիւնը որքան ապրումով եւ հարազատութեամբ ներկայացուի նոյն ազդեցութիւնը չի գործեր, ինչ որ ժամանակակից դէպքերու անմիջական իրազդորդումը կ'ընէ: Պէտք է մասնակից կամ վկայ դարձած ըլլայ միութիւններու եւ կազմակերպութիւններու գործին, անձնական ճամբով, որպէսզի կարելի ըլլայ ճշդութեամբ կշռել իմաստը եւ արժէքը գործին:

«Այսօր, Թորոնթոյի Հայութիւնը ականատես վկան է այս պատմական օրւան: Վստահ ենք, ձեր հոգիները հրճուանքով լեցուած են եւ սրտի խոր գոհունակութեամբ պիտի վայելէք այս մշակոյթի օճախը եւ անոր արդիւնքը պիտի ստանաք սերունդներ հայօրէն թրծելով:

«Հայ Օգնութեան Միութիւնը, իր առաքելութեան ճամբով, միշտ նըպաստած եւ սատարած է հայապահպանման բոլոր միջոցներուն եւ պիտի շարունակէ սատարել մինչեւ այն օրը, որ վիճակուի մեզի ալ ուրիշները նման, ազատ եւ անկախ հայրենիքի սեփական հողին վրայ տեսնել մեր խորհրդանիշը եղող «Միրտ»ը՝ որպէս Հայաստանի Կարմիր Խաչ:

«Դանիէլ Վարուժանի խօսքով կը փակեմ խօսքս.

«Վաղը նետած ցորեններդ պիտի թափին, Օրհնութեան պէս թոռնիկներուդ գլխուն վրայ»:

Ապա, ան ներկայացուց Հ.Օ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի ընկճ. Արփի Չարխուտեանը, որ հայերէն եւ անգլերէն լեզուներով խօսեցաւ Հ.Օ.Մ.ի կատարած մարդասիրական եւ մշակութային աշխատանքներուն մասին:

Շնորհաւորեց Թորոնթոյի Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի շէնքի բացումը եւ Կեդրոնական Վարչութեան անունով խօսեցաւ նիւթական եւ բարոյական միջոցներով նեցուկ կանգնիլ անոր բարգաւաճման համար:

Ապա, հանդիսավար ընկ. Արթինեան, խօսք տուաւ Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Խաչիկ Յակոբեանին:

Ընկեր Յակոբեան, դրուատելէ ետք մեր ժողովուրդի եւ ընկերներուն զոհաբերութեան ոգին եւ աշխատանքը, ըսաւ:

«Հ.Յ. Դաշնակցութիւնը իր պատմութեան առաջին օրէն սկսեալ, քաջալերողն ու պաշտպանը հանդիսացած է հայ վարժարանին: Իր հիմնադիրները նաեւ ուսուցիչներ էին, որոնք իրենց անձին օրինակով կը նուիրուէին մեր ժողովուրդի զաւակներուն դաստիարակութեան գործին: Այսօր, 92 տարիներ ետք, Հ.Յ. Դաշնակցութիւնը կը հաւատայ, որ հայ վարժարանը մայր երակն է մեր ժողովուրդի յաւերժութեան համար մղուող պայքարին:

«Կը գիտակցինք, որ մասնաւորաբար այս ընդարձակ երկրի՝ Գանատայի մէջ, շատ աւելի դժուար է ստեղծել այն կռուանները, որոնցմով մենք պիտի կարենանք ապահովել մեր ժողովուրդի ազգային գոյութիւնը:

«Հ.Յ. Դաշնակցութիւնը իր առաքելութեամբ նուիրուած է նաեւ անաղարտ պահպանելու հայութեան ազգային արժէքներն ու իր ազատատենչ ոգին: Ասիկա մեզի համար կոչում մըն է եւ մենք պատրաստ պիտի ըլլանք ամէնուրեք, ամբողջական նուիրումով եւ հաւատքով մեր բոլոր ուժերը ի սպաս դնել մեր ժողովուրդի ծառայութեան, մինչեւ այն օրը, երբ իրականութիւն կը դառնայ մեր բոլորին երազը եւ մենք կը հաւաքուինք մեր ամբողջացած Ազատ եւ Անկախ Հայրենիքին մէջ»:

Խօսք առաւ Պապայեան Հաստատութեան ատենապետ Պրն. Հայկ Սելեան եւ շնորհաւորեց թորոնթոհայութիւնը հայ դպրոցի շէնքին բացումին առթիւ:

Ան շեշտեց հայ դպրոցի կատարած կենսական գործը հայապահպանումին մէջ եւ խոստացաւ, ինչպէս միշտ, նիւթապէս եւ բարոյապէս օգնել, որ պէսզի այդ գործը լաւագոյնս ծառայէ իր նպատակին:

*
* *

Սոյն ձեռնարկին հրաւիրուած էր ազգային եւ աշուղական երգերու անգուգական մեկնաբան Լեւոն Գաթրճեան, որ բեմ հրաւիրուելով, ժողովուրդի խանդավառ ծափողջոյններով ընդունուեցաւ:

Ան երգեց ազգային քանի մը երգ, ընկերակցութեամբ տեղական «Անուշ» նուագախումբին:

Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի բարձրագոյն երկու կարգերու աշակերտութեան մուտքը սրահ՝ թարմութիւն եւ ոգեւորութիւն ստեղծեց հանդիսականներու մէջ:

Աշակերտները բեմին վրայ շարուելով երգեցին «Իմ Հայաստան», «Հայ Վարժարան» եւ «Մենք Մանուկներ Հայոց Ազգին» երգերը, ջութակի ընկերակցութեամբ եւ ղեկավարութեամբ վարժարանի երգեցողութեան ուսուցիչ Պրն. Էդիկ Յովսէփեանի: Ապա, արտասանեցին խմբային արտասանութիւն մը՝ «Սուրբ Հայրենիք»:

Օրրուան հանդիսավար ընկ. Անդրանիկ Արթինեան խօսք առնելով, կարգ մը ծանօթութիւններ տուաւ վարժարանի բարերար Պրն. Գէորգ Գոլոլեանի հօր մասին, որուն անունով կը կոչուի նախակրթարանը՝ «Գոլոլեան Նախակրթարան», եւ հրաւիրեց Պրն. Գէորգ Գոլոլեանը տալու իր սրտի խօսքը այս պատմական հանդիսութեան առթիւ:

Ի միջի այլոց ըսաւ.

«Կարելի չէ հայ ըլլալ եւ չյուզուիլ այս իրականութեան առջեւ. իսկապէս արդեօք ճշմարտութի՞ւն է ունենալ այս շէնքը, ունենալ յարակից դպրոցը, 20 տարիներ ետք, երբ ձգեցինք մեր ապրած երկիրները, կազմակերպուած միութիւնները, կազմակերպուած եկեղեցիները, կազմակերպուած դպրոցները: Եւ, ահա, անգամ մը եւս Աստուծոյ շնորհքով կը վայելենք այսօր Թորոնթոյի մէջ մեր այս գեղեցիկ Կեդրոնը:

«Դուք, սիրելի բարեկամներ, ձեր կատարած գոհողութեամբ փաստեցիք, թէ ինչու կ'ուզէք պահել հայ ազգային վարժարան, որովհետեւ դուք ալ համոզուած էք, որ մեր գոյատեւումը կարելի կը դառնայ միայն հայ մշակոյթով: Ատոր համար, բոլորդ միաձայն, ձեռք-ձեռքի, ամէն տեսակ գոհողութիւն ընելու պատրաստակամութիւն յայտնեցիք:

«Պիտի ըսեմ, քաջութիւն ունիմ ըսելու, որ այսօր մենք ամէնադիւրին մասը վերջացուցինք: Շէնքը, քարերը շինել, իսկապէս ամէնադիւրին մասն է որ կը վերջացնենք: Դպրոց պահելն է ամէնադժուարը:

«Ինչպէս գիտէք, այս տարուան մեր դպրոցի պիւտճէն 250,000.00 տոլար է: Ուրեմն, այսուհետեւ, մեր ջանքերը պէտք է թափուին մէկ ուղղութեամբ, այն է ապահովել դպրոցի առօրեայ ծախսերը: Կարելի դարձնելու համար այս վերջինը, պայման է որ այս շէնքերը վերջացնենք առանց պարտքի:

«Բախտաւորութիւն է հայ ծնողքին համար իր զաւակը զրկել հայկական վարժարան, որովհետեւ հայկական վարժարաններու մէջ կայ նոյն ջերմ գուրգուրանքը, հոգածութիւնը եւ մակարդակի բարձրութիւնը:

«Ազգապահպանումը մենք կրնանք իրագործել միմիայն հայ դպրոցներու միջոցաւ, որովհետեւ հո՞ն է որ պիտի կարենանք դաստիարակել մեր սերունդները եւ սորվեցնել, թէ ի՞նչ կը նշանակէ կարգապահութիւն:

«Անկեղծօրէն ընդունելու ենք, որ կարգապահութիւնը կը պակսի մեզի: Եթէ կ'ուզենք օր մը մեր հայրենիքի ազատութիւնը ունենալ եւ յառաջացած մեծ ազգերու կարգին դասուիլ, նախապայման է որ կարգապահութիւն սորվինք: Եւ, հայ դպրոցը լաւագոյն տեղն է մեծցնելու մեր նոր սերունդները կարգապահութեամբ:

«Աւելի լաւ մատնանշելու համար, թէ ի՞նչ կ'ուզեմ ըսել կարգապահութիւն ըսելով, պիտի ուզէի առնել իբրեւ օրինակ հրեայ ժողովուրդը: Երկու հազար տարի առաւ հրեայ ժողովուրդին, որպէսզի իր ազատութիւնը գտնէ, եւ որպէսզի կարգապահութիւն սորվի, հրեայ ժողովուրդը երբ Արեւելեան Եւրոպաներէն գաղթեց Ամերիկաները, հրեայ հայրը իր զաւակին ձեռքէն բռնեց եւ ըսաւ. «Ձաւակս, ես կ'ուզեմ որ դուն լաւագոյնդ ըլլաս քու ասպարէզիդ մէջ, որովհետեւ միայն դուն ես որ պիտի կարենաս բռնել եւ փրկել քու ազգդ եւ ապահովել ժողովուրդիդ ազատութիւնը:

«Այս աշխարհը ոչինչով եկանք եւ ոչինչով պիտի երթանք: Շատ անգամ ոչինչ բաներու համար մենք շատ մեծ ծախսեր կ'ընենք: Այսօր, գիտնանք զանազանել շինիչը՝ ոչինչէն»:

«Ինչպէս շէնքի բացումին ըսի, անգամ մը եւս կ'ուզեմ յիշել հոս, որովհետեւ իսկապէս իրականութիւն է ասիկա, թէ Թորոնթոյի ժողովուրդը ինքզինք տէրը կը զգայ այս շէնքին: Այս շէնքերը մեր բոլորին ճակտի քրտինքով շինեցինք եւ ճիշդ ատոր համար է, որ սիրելի բարեկամներ, այս հոգին տարէք ձեր Ամերիկաները, Միջին Արեւելքները, Մոնթրէալները եւ այլուր եւ ըսէք, որ ժողովուրդն է միակամ, միահամուռ ջանքերով, անսահման նուիրաբերումով կը շինէ հայ դպրոցները»:

«Միւրեւի բարեկամներ, տալու առաքինութիւնը եւ հաճոյքը իրապէս նախանձեւի է: Իմ հայրս, ինչպէս ձեզմէ շատեր ճանչցած են որպէս Նուպարեան Վարժարանի Պրն. Վահան Գոլոլեան, որ ոչինչ ունէր տալու համար, եւ ինքզինք իսկապէս զրկուած զգացած է այդ բարիքէն: Անոր համար այսօր ես կը տրամիմ»:

«Տալու հաճոյքը զգալ եւ ապրիլ մեր կեանքին լաւագոյն պահն է, ի շահ հայ ազգի յաւերժութեան»:

*
* *

Պրն. Գոլոլեանի պատգամէն ետք, խօսք տրուեցաւ Գանատայի եւ Արեւելեան Մ. Նահանգներու Կիլիկիան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Եպիսկոպոս Աշճեանին:

«Դեռ երկու ամիս առաջ, Հայաստանէն «Գարուն» ամսագրին մէջ, որ ամէնէն աշխոյժ թերթերէն մէկն է, տպուած էր պատմուածք մը՝ «Վերջին Դասը» վերնագրով: Դէպքը կը պատահի 1870ին, երբ գերմանական զօրքեր կ'արշաւէին Ալզաս ու Լօրէն, զոր գրաւելով կ'արգելէին Ֆրանսերէն լեզուի ուսուցումը: Ֆրանսերէն լեզուի ուսուցիչը վերջին դասը կու տայ աշակերտներուն, որոնք հագուած կիրակնօրեայ հագուստներ, խոր յուզումով կը հետեւին դասին: «Գարուն»ի խմբագիրը կ'եզրակացնէ, կրկնելով պատանի աշակերտին խօսքը. «Հայրենիքը կը կորսուի, ո՛չ թէ անոր համար, երբ ան գրաւուած է օտարին կողմէ, այլ երբ կը կորսնցնես մայրենի լեզուդ»:

«Անոնք որ հնարաւորութիւն չեն ունեցած հայերէն լեզուն սորվելու, կը խորհին, որ լեզուն կարելոր չէ, երկրորդական է, երբ մանուկ մը չերթայ հայկական դպրոց, կրնայ չկորուիլ իր հայութենէն: Հետեւելով, կարելի չէ հայութիւն պահել: Ատիկա ժամանակաւոր հայկականութիւն ստեղծել է»:

«Հայ դպրոցը այն միջնորոտը կը ստեղծէ, ուր մնայուն ոգեկանութիւն կայ, ուր երախաները հայերէն կը խօսին, կը սորվին, հայ ոգիով կը մեծնան, իրենց տունները կ'երթան եւ իրենց ծնողներուն ալ հայերէն կը սորվեցնեն եւ այսպէս հայ դպրոցը իր իսկական իմաստը կը ստանայ, որովհետեւ հայկականութիւնը, ոգեկանութիւնը ամէնօրեայ իրականութիւն կ'ըլլայ»:

«Կ'ուզեմ, որ ամէն մէկ հայ ծնողք իր զաւակը հայ դպրոց տանի եւ հայ դպրոցին մէջ մեծնայ հայ երախան: Վստահ եմ, դուք հպարտ պէտք է ըլլաք»:

որ հայ աշակերտներ դուրս պիտի ելլեն այս դպրոցէն եւ երբ ձեր զաւակները հայ դպրոց երթան, ձեր երջանկութեան օրերը անխախտ կ'ըլլան»:

Ինչպէս ծանօթ է, Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոս Գարեգին Բ. Ամերիկա, իր Առաջնորդութեան շրջանին, մեծապէս օգտակար հանդիսացած էր Թորոնթոյի Հայ Կեդրոնի եւ Դպրոցի շինութեան ծրագիրներուն իրագործման աշխատանքներուն:

Այս բարեբաստիկ առիթով, Վեհափառը, իր պատգամը ուղարկած Թորոնթոհայուցութեան՝ վիտէօ ժապաւէնով մը: Ժողովուրդը պաստառին վրայ դիտելով եւ լսելով անխառն ուրախութիւն զգաց, որ իր Վեհափառը մասնակից կը դառնայ տեղի ունեցող տօնախմբութիւններուն:

Օրուան գլխաւոր բանախօս ընկ. Մինաս Թէօլէօլեան, որ հանրային եւ պատմական բնոյթ ունեցող ճառով մը պարզեց հայեցի դաստիարակութեան ոգեկերտիչ ուժը եւ Թորոնթոյի հայուցութեան վերջին տասնամեակի հաւաքական ճիգերը նկատեց գոյապահպանումի մեր պայքարին ամէնէն թելադրիչ օրինակներէն մէկը: Ատենախօսը շեշտեց յատկապէս, որ հայ վարժարաններու հիմնական առաքելութիւնը ուսման մակարդակէ մը աւելի ոգեկան կերտումի, դաստիարակութեան գործն է եւ թէ սփիւռքի կեանքի մէջ մեր առաջնահերթ նպատակը պէտք է դառնայ հայեցի վարժարաններու բաւարար ցանցի հաստատումը:

Հանդիսավար ընկ. Անդրանիկ Արթինեան կրկին խօսք առաւ եւ հանգանակութիւնը բացուած յայտարարեց, շեշտելով այն նպատակը, որ Շինութեան Յանձնախումբի այս պատկառելի գործը, եթէ յաջողութեամբ պսակուի, հայ դպրոցի շինութիւնը առանց պարտքի վերջացած կ'ըլլայ, եթէ ներկայ ժողովուրդէն հանգանակուի 350,000.00 տոլար:

Արդէն սեղաններու վրայ դրուած էին խոստումնաթուղթեր, որոնք լեցուելով սկսան հասնիլ ընդհանուր հաշուապահներուն, որոնք հաշուիչ մեքենաներու վրայ կը պահէին հաշուեկշիւրը:

Մէկ ժամուան ընթացքին, ներկա ազգասէր եւ համբուրելի ժողովուրդի նուիրատուութեան գումարը հասած էր 305,000.00 տոլարի:

Կեցցէ հայ ժողովուրդը...:

Հանգանակութենէն ետք բեմ ելաւ կրկին երգիչ Լեւոն Գաթրճեան, եւ մինչեւ ուշ գիշեր խանդավառ եւ հայաշունչ մթնոլորտ մը ստեղծեց:

Ներկաները, կիրակի 8 Նոյեմբերին ապրեցան յիշատակելի եւ փառահեղ օր մը, որ երբեք պիտի չմոռցուի:

Նորակառօյց դպրոցը գրեթէ վերջացած է եւ շուտով պիտի ընդունի իր մնայուն բնակիչները՝ հայ մանուկները, որոնք օրհնուած այս շէնքին մէջ պիտի դաստիարակուին եւ կրթուին հայկական գիտելիքներով եւ ոգիով, ու պիտի լուսաւորուին Մեսրոպեան 36 տառերու ճառագայթներով:

Հանդիսութեան ներկայ ժողովուրդը աւելիով կատարեց իր պարտականութիւնը:

Մանաւանդ, զնահատելի եւ օրինակելի էին Հայ Կրթական Հիմնարկութեան (Լոս Անճելըս) եւ Մոնթրէալի քոյր կազմակերպութիւններուն եւ ազգայիններուն մասնակցութիւնը հանգանակութեան:

Այս կը նշանակէ եւ կը փաստէ այն իրականութիւնը, որ հայը, ուր որ ալ գտնուի, պէտք է գուրգուրայ իր համրանքին վրայ եւ ամէն տեսակ զոհողութիւններով հայ նոր սերունդին տայ հայեցի դաստիարակութիւն:

Այս կը փաստէ, որ բոլոր գաղութներու յաջողութիւնները եւ ճախողութիւնները կ'ուրախացնեն եւ կը տխրեցնեն բոլոր հայերը անխտիր: Քանի որ բոլորս նոյն ազգի զաւակներն ենք եւ կը ծառայենք միեւնոյն նպատակին: Իսկ շատեր կը բացակայէին բացման հանդիսութենէն՝ կամ քէ անկախ պատճառներով եւ չկրցան իրենց ազգային պարտականութիւնը կատարել՝ «Քար մըն ալ ես դրի» հոգեբանութեամբ զգալու երջանկութիւնը տալու առաքելութեան, հայապահպանման բերդի շինութեան համար:

Անոնց համար կ'ըսենք, հանգանակութիւնը կը շարունակուի եւ իրենց ալ առիթ պիտի տրուի հանդարտեցնելու իրենց խիղճերը:

Դպրոցը առանց պարտքի վերջացած տեսնելու ձգտումին մէջ, պէտք ունինք բոլորին մասնակցութեան:

Մենք անհուն վստահութիւն ունինք մեր ժողովուրդի գիտակցութեան եւ զոհաբերութեան ոգիին վրայ, որոնց փաստը տեսանք անցեալին, ներկայիս եւ պիտի տեսնենք ապագային...:

«ՅՈՐԻՉՈՆ»
1982

ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐԸ ԱՅՅԵԼԵՑԻՆ Հ.Օ.Մ.Ի ԱՄԷՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Երկուշաբթի, 8 Նոյեմբեր 1982, առաւօտեան ժամը 9ին, Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի նորակառոյց շէնքի բացման հանդիսութեանց հրաւիրուած գրողները այցելեցին Վարժարան:

Շրջանակի մէջ հաւաքուած աշակերտութեան, հիւրերը ներկայացուց Վարժարանի տնօրէնը՝ պրն. Մարգար Շարապխանեան:

Աշակերտութեան խօսեցան պարոններ՝ Մինաս Թէօլէօլեան, Վահէ Օշական եւ Հրանդ Սիմոնեան (Գալիֆորնիոյ Հայ Կրթական Հիմնարկութեան վարիչ-քարտուղար):

Բոլորն ալ գովեստով խօսեցան Հայ Դպրոցի ունեցած կարեւորութեան մասին, աշակերտութեան թելադրելով ամուր կառչիլ Հայոց լեզուին եւ պատմութեան:

Աշակերտները խմբովին երգեցին ու արտասանեցին զանազան ազգային եւ դպրոցական երգեր ու հայաշունչ քերթուածներ: Ապա, երգեցողութեան ուսուցիչ պրն. Էդիկ Յովսէփեանի ջութակի ընկերակցութեամբ անոնք երգեցին «Մենք Մանուկներ Հայոց Ազգին» դպրոցական քայլերգը, ապա դասարան առ դասարան եւ իրենց ուսուցչուհիներու հսկողութեամբ մեկնեցան իրենց դասարանները:

Մտաւորական հիւրերը ապա այցելեցին դասարանները ու մօտէն հետեւեցան աշակերտութեան տարած աշխատանքներուն:

Հիւրերուն կ'ընկերանային Վարժարանի տնօրէնը եւ Կրթական Մարմնի ատենապետ պրն. Անդրանիկ Արթինեան:

Այցելող հիւրերն էին. Տիկ. Գոհար Թէօլէօլեան (Պոսթըն), պարոններ Մինաս Թէօլէօլեան (Պոսթըն), Յակոբ Կարապենց (Ուաշինկթըն), Վահէ Օշական (Ֆիլատելֆիա), Ժիրայր Աթթարեան (Նիւ Եորք), Հրանդ Սիմոնեան (Լոս Անճելըս): Խումբէն կը բացակայէր պրն. Արա Պալիօզեան (Քիչընըր, Օնթարիօ):

Հայ գրագէտները դպրոցէն ու քաղաքէս մեկնեցան նոյն օրը, ուրախ եւ խանդավառ, քաղցր յիշատակներով...

«ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԼՐԱՏՈՒ»
Նոյեմբեր-Դեկտեմբեր 1982

ՀԱՅ ԴՊՐՈՑԸ ԿԵԱՆՔՆ Է ՀԱՅՈՒՆ

Հայ Օգնութեան Միութեան Պապայեան Մանկապարտէզի եւ Գոլուեան Նախակրթարանի ու Միջնակարգի տարեկան հանգանակային ճաշկերոյթը տեղի ունեցաւ Կիրակի, 1 Մարտ 1998, կէսօրէ ետք ժամը 5ին, Հայ Կեդրոնի մէջ, որուն ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, Գանատայի Դաշնակցային Խորհրդարանի անդամ Տիար Սարգիս Ասատուրեան, դպրոցի բարերարներ, նուիրատուներ, Հայ Կեդրոնի մէջ գործող միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ շուրջ 400 ազգայիններ:

Ճաշկերոյթի պաշտօնական մասին սկսելէ առաջ, կէսօրէ ետք ժամը 5ին, Համազգայինի «Յ. Մանուկեան» Գրադարանին սրահին մէջ տեղի ունեցաւ աշակերտական ձեռագիր, գծագրութեան, նկարչական, լրագրական եւ արւեստի այլ գործերու ցուցահանդէսը:

Վարժարանի տնօրէն Պրն. Մարգար Շարապխանեան իր բացման խօսքով անդրադարձաւ ցուցահանդէսին ներկայացուած գործերուն նպատակին եւ նշանակութեան եւ դնահատումով արտայայտուեցաւ Վարժարանի արուեստի ուսուցչուհի տիկին Փարիս Մաղաքեանի ցուցաբերած անձնուէր հոգածութեան եւ աշխատանքին, դպրոցի աշակերտներուն փոխանցելով եւ սիրցնելով ձեռարուեստը:

Այնուհետեւ, ներկաները դիտեցին աշակերտներուն արուեստի գործերը եւ իրենց հիացումը արտայայտեցին ցուցադրուած գործերուն, որոնց կարգին աշակերտական նախաձեռնութեամբ թերթերու, պարբերաթերթերու հրատարակութեան, որոնց մէջ ներկայացուած էին ազգային, միջազգային, մարզական եւ այլ նիւթեր: Սքանչելի էր մանաւանդ շատերու կարգին Վարազ Պապեանի եւ Գառնիկ Հասըրճեանի պարբերաթերթերը:

Երեկոյեան ժամը 6ին, վարժարանի ուսուցչուհի տիկին Յուլիա Աղամանուկեանի կողմէ նուագուած Գանատական եւ Հայկական օրհնեղներէ ետք, օրւան հանդիսավար ընկեր Յակոբ Ճամպազեանի բեմ գալով հրաւիրեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեանը օրհնելու ճաշը:

Ճաշի սպասարկութեան ընթացքին, տաղանդաւոր դաշնակահար Պրն. Վանիկ Յովհաննէսեան, դաշնամուրով թեթեւ երաժշտութիւն նուագեց:

Հանդիսավար ընկեր Յակոբ Ճամպազեանի բարի գալուստի եւ բացման խօսքէն ետք, խօսք տրուեցաւ Թորոնթոյի Հ.Օ.Մ.ի «Թուրինա» Մասնաճիւղի ատենապետուհի ընկերուհի Արփի Աճէմեանին, որ իր շնորհաւորական խօսքերէն ետք շեշտեց Հ.Օ.Մ.ի առաքելութիւններէն հայ դպրոցներու գոյութեան եւ բարգաւաճման օժանդակելու ճիգը, որովհետեւ առանց Հայ Վարժարաններու եւ հայերէն լեզուի դասաւանդութեան Հայ կեանքը կը դալկանայ եւ կ'այլափոխուի:

Հ.Օ.Մ.ի Վարժարանէն շրջանաւարտներու անունով, հայերէն եւ անգլերէն խօսք առաւ ներկայիս համալսարանի ուսանող Յովիկ Թոգճեան եւ իր ստացած հայեցի դաստիարակութեան համար շնորհակալութիւն յայտնեց գա-

դուրսի ղեկավարութեան, ապա, շեշտեց կարեւորութիւնը հայկական երկրորդական վարժարանի, որպէսզի հայ նորահաս սերունդը մնայ հայկական առողջ մթնոլորտին մէջ, զարգացած հայու նկարագրով:

Վարժարանի Կրթական Մարմնի կողմէ հայերէն եւ անգլերէն լեզուներով խօսք առաւ ընկեր Յարութ Շիթիլեան եւ վարժարանի հիմնադրութեան 19րդ տարեդարձին առթիւ, շնորհակալութիւն յայտնեց վարժարանի բարեբարներու, նուիրատուներուն եւ ծնողներուն, որոնց անվերապահ աջակցութեան եւ զոհողութեան շնորհիւ կանգուն կը մնայ եւ կը բարգաւաճի հայ դպրոցը այս գաղութիւն մէջ: 85 աշակերտներով՝ 19 տարիներ առաջ Հ.Օ.Մ.ի այս վարժարանի այսօր կը հաշուէ 385 աշակերտ: Վարժարանէն շրջանաւարտ 225 աշակերտներ իրենց հայրութեամբ հպարտ կը շարունակեն իրենց ուսումը տեղական երկրորդական վարժարաններու եւ համալսարաններու մէջ:

Այս առիթով, վարժարանի Կրթական Մարմնի կողմէ, ընկեր Շիթիլեան յատուկ գնահատագիր յուշատախտակով պատուեց վարժարանի արուեստի ուսուցչուհի տիկին Փարիս Մաղաքեանը, վարժարանէն ներս իր տասնամեայ պաշտօնավարութեան առիթով:

Խօսք առաւ նաեւ վարժարանի 19 տարիներու տնօրէն ընկեր Մարգար Շարապիսանեան, եւ իր սրտի խօսքով անդրադարձաւ հայեցի դաստիարակութեան եւ կրթութեան կարեւորութեան, մանաւանդ այս գաղութներու մէջ:

Խօսք տրուեցաւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ հոգեշնորհ Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեանին, որ իր խօսքին մէջ անդրադարձաւ Թորոնթոհայ գաղութի հաւատքին, հայկական վարժարաններու կարեւորութեան, ապա շնորհաւորեց վարժարանի Ուսումնական Մարմինը, տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը եւ ծնողները, որոնց զոհաբերութեան շնորհիւ պայծառ եւ շէն վիճակի մէջ կը պահուի հայ դպրոցը:

Դպրոցի աշակերտական «Կռունկ» երգչախումբը, ղեկավարութեամբ փոխ տնօրէն եւ երաժշտութեան ուսուցիչ ընկեր Վարուժան Նիկոլեանի եւ դաշնամուրով ընկերակցութեամբ տիկին Յոլեր Աղամանուկեանի հերթականօրէն երգեց՝ «Հեռաւոր Հայրենիք», «Անուշ Հայրենիք», «Ղարաբաղին» եւ «Դպրոցական Քայլերդ» երգերը:

Պաշտօնական մասի աւարտին, օրուան պատշաճ խօսք առաւ օրուան հանդիսավար ընկեր Յակոբ Ճամպագեան, որ ի միջի այլոց ըսաւ.

«1979 թուականին, Հայ Կեդրոնի Փիզիքական կառոյցի աշխատանքներուն հետ միասին, հաւատարիմ Ս. Մեսրոպ Մաշտոցի տեսիլքին ու հայ վարժարանը ծաղկուն պահելու աւանդին, մեզ հիւրընկալող այս քաղաքին մէջ, յանդգնութիւնը ունեցանք ձեռնարկելու Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանին, միշտ վստահելով բարոյական եւ նիւթական զոհաբերութեան գիտակցութիւնը ունեցող Թորոնթոհայութեան:

Բոլորիս ճիգերով հասակ առած այս հաստատութիւնը, մեր վարժարանը, այսօր դարձած է բոլորիս համար հպարտութիւն պատճառող ազգապահպանման հզօր բերդ մը, վերածուած է ձուլարանի մը, վերածուած ոսկիէ շղթայի, որուն միջոցաւ այստեղ ծնունդ առած սերունդները կը կապուին մեր անցեալի պատմութեան եւ մշակոյթին, նաեւ կը դառնան տէրը մեր արդար դատին եւ անքակտելի մէկ օղակը անկախացած Հայաստանին ու Արցախին:

Հայ աշակերտը երբ կ'աւարտէ մեր վարժարանը, կը դառնայ ո՛չ միայն կըրթութեամբ եւ ուսումով զինուած պատանի, այլեւ մարդկային ըմբռնումներով, ազնուական գաղափարներով տոգորուած Հայ երիտասարդ:

Այսօր սրտի մեծ ուրախութեամբ պատիւը ունիմ նաեւ ժողովրդական այս ճաշկերոյթին մեր տարիներու երազը իրականութիւն դարձած աննախընթաց լուրը փոխանցելու ձեր բոլորին: Այս 50 Hallcrown Placeի հողաշերտը վերջնականապէս, այդ հողաշերտը յետ այսու սեփականութիւնն է Հայ Կեդրոնին եւ հետեւաբար սեփականութիւնը Հայ ժողովուրդին:

Անցնող շաբթուայ Փետրուար 23ին վերջնականապէս մեր սեփականութիւնը դարձած այս հողաշերտը պիտի տայ շունչ եւ արիւն ապագայի մեր ծրարագիրներուն, ճամբայ պիտի բանայ մեր վարժարանի ընդարձակումի կենսական ծրագիրներուն: Մեր աշակերտները, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներն ու մարզական խումբերը մարմնակրթանքի նոր կարելիութիւններով թափ ու եռանդ պիտի ստանան ու բարձրանան դէպի սէզ գագաթներ: Սիրելիներ, ինչպէս անցեալին, այսօր դարձեալ պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ հաւաքաբար պիտի լծուինք ապագայի աշխատանքներուն, յանուն մեր գաղութի զաւակներուն յանուն հայապահպանման անժամանցելի վեհ եւ սըրբազան գործին:

Վարժարանիս հիմնադրութեան առաջին օրերէն մինչեւ այսօր Հ.Յ. Դաշնակցութեան «Ս. Թէհլիրեան» Կոմիտէն, Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» Մասնաճիւղը եւ Վարժարանի կրթական մարմինները, իրենց ուսերուն վրայ վերցուցին ամբողջական պատասխանատուութիւնը մեր նոր սերունդի մտային, հոգեկան, ֆիզիքական, ազգային եւ քաղաքական դաստիարակութեան գործին ծանր բաժինը վստահելով նուիրեալ եւ ժրաջան մեր սիրելի ուսուցիչ-ուսուցչուհիներուն:

Այսօր մեր աշակերտները ազգային խմբերգներով սրտանց եւ բարձրաձայն յայտնեցին իրենց հայրենասիրական զգացումները: Հակառակ իրենց փոքր տարիքին, մեր դպրոցի քովէն անցնելով, մեր աշակերտները բնականօրէն ապրեցան Հայաստանի անկախութեան եւ Արցախի ազատագրական պայքարի 10-ամեակը, վառ պահելով մեր հերոսածին նահատակներու անմոռանալի յիշատակը:

Աւանդութիւն դարձած տարեկան այս ճաշկերոյթ-հանդիսութիւնը նաեւ կ'օգտագործուի որպէս հաշուետուութեան օր: Մեզի կը ներկայացուին նախորդ տարեշրջանի հաշիւները եւ կը ներկայացուի ընթացիկ տարուան նախահաշիւը:

Հաշուետուական ճշգրիտ պատկերը կը գտնէք սեղաններուն վրայ:

Անցնող 19 տարիներուն, մեր վարժարանի պիւտճէն 90 հազարէն բարձրացաւ 1 միլիոն տոլարի ու մեր աշակերտութեան թիւը ինչպէս ըսինք 75էն 385ի: Հակառակ մեր պիւճէական անհամեմատ յաւելումին, վարժարանիս կրթական Մարմիններու աջալուրջ հսկողութեան եւ հետեւողական աշխատանքներուն որպէս արդիւնք, մեր այսօրուայ բացը եղաւ 86 հազար տոլար:

Հանելուկ չէ: Մենք այս բացը միշտ ալ ունեցած ենք, բայց միշտ պատուով գոյացուցած ենք զայն տարեկան այս հանգանակային ձեռնարկով եւ զանազան նուիրատուութիւններով:

Այս ազատ եւ հիւրընկալ ասիերուն վրայ, եթէ կ'ուզենք մեր գոյութիւնը պահել ու պահպանել, եթէ կը փափաքինք մեր ազգային նկարագրիւրը եւ ինքնութիւնը պահել, այն ատեն, կառչած մնանք մեր սփիւռքեան կառոյցներուն եւ նորանոր զոհաբերութիւններով, նիւթական եւ բարոյական օժանդակութիւններով մասնակից ըլլանք սկսուած սրբազան աշխատանքը շարունակելու գործին:

Այսօրուան հաւաքոյթի յաջողութիւնը կ'ըլլայ ամբողջական միայն այն ատեն, երբ մեր բոլորին նիւթական մասնակցութիւնը ամբողջական է: Այսօր մենք այդ հաւատքով եւ ակնկալութեամբ դարձեալ կը դիմենք ձեր բոլորին, կը դիմենք մեր ամբողջ սրտովը, որպէսզի նախորդ տարիներու օրինակով, ուսումնական այս տարեշրջանը եւս փակենք պատիւով եւ առանց պարտքի:

Ինչպէս յիշեցինք, 1997-1998 տարեշրջանի մեր վարժարանի բացը 86 հազար տոլար է: Եկէք բոլորս, անգամ մը եւս տանք մեր առաւելագոյնը, տանք սրտանց եւ հաւատքով որպէսզի մեր զաւակները դաստիարակուին հայադրոշմ մթնոլորտի մէջ եւ մեծնան առողջ ու մաքուր նկարագրով, պատիւ բերելով իրենց ծնողներուն եւ ազգութեան:

Մենք, հաւատք եւ վստահութիւն ունինք Թորոնթոն հայութեան ազգային գիտակցութեան եւ գոհողութեան ոգիին վրայ: Վերջապէս, եթէ որպէս ազգ եւ որպէս Թորոնթոն հայ գաղութ պիտի ապրինք ու գոյատեւենք եւ Մեարոպաշունչ անմար ջահը փոխանցենք մեր նոր սերունդներուն, պիտի տանք բոլորս, պիտի տանք դպրոցակերտ այս հանգանակային արշաւին, պիտի տանք լիաբուռն, եւ վերջապէս պիտի տանք մեր առաւելագոյնը մեր թանկագին գաւակներուն հայաբոյր դաստիարակութիւն տուող լոյսի օճախին, Հայ Օգնութեան Միութեան Ամէնօրեայ Վարժարանին»:

Աշակերտ Խաժակ Պօղոսեանի կողմէ դաշնամուրով նուագուած կարգ մը հայկական երաժշտութենէն ետք, սեղաններու վրայ դրուած խոստումնաթուղթերը սկսան լեցուիլ նուիրատուութեամբ եւ շուրջ կէս ժամուան ընթացքին, Հայ դպրոցի առաքելութեան հաւատացող բարերարները, կազմակերպութիւնները, անհատներ եւ ծնողներ իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ հանգանակութեան գումարը հասցուցին 105 հազար տոլարի:

«ՅՈՐԻՉՈՆ»
1 Մարտ 1998

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻ
ԵՒ Հ.Օ.Մ.Ի ԱՄԷՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ**

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակին առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հիւս. Ամերիկա եւ Գանատա այցելութեան ընթացքին, Երեքշաբթի, 22 Մայիս 2001, կ.ա. ժամը 10:45ին, Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցի այցելեց, ուր ներկայ էին Հ.Օ.Մ.Ի Ամէնօրեայ վարժարանի աշակերտութիւնը:

Վեհափառը եւ իր շքախումբը Ս. Աստուածածին եկեղեցւոյ մուտքին դիմաւորուեցան ներկայ ժողովուրդին կողմէ: Հ.Օ.Մ.Ի վարժարանէն աշակերտուհի մը դիմաւորեց Վեհափառը ծաղկեփունջ մը նուիրելով անոր, ապա, տեղի ունեցաւ աղի եւ հացի օրհնութիւն վեհափառին կողմէ: Ս. Աստուածածին եկեղեցւոյ կրտսեր դպրաց դասի դպիրներուն կողմէ երգուած «Հրաշափառ» շարականով առաջնորդուեցաւ եկեղեցւոյ դասը:

Պատմական այս այցելութեան առիթով, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Գերշ. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան պատրաստած էր եկեղեցական արարողութիւններու եւ գեղարուեստական յայտագիր մը, որ գործադրութեան դրուեցաւ հերթականօրէն:

«Հրաշափառ» շարականէն ետք կատարուեցաւ ընթերցումը ՃԻԱ. Սաղմոսի, քարոզ, աղօթք, շարական:

Գեղարուեստական յայտագրի բացումը կատարեց օրուան հանդիսավար Շահէ Մ. Վրդ. Փանոսեան եւ իր ողջոյնի խօսքով ըսաւ.

«Վեհափառ Տէր,

«Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօրոյեանի, Գանատայի Առաջնորդական Փոխանորդ Գերշ. Տ. Խաթակ Եպիսկ. Յակոբեանի, թեմիս Ազգային Վարչութեան եւ Գանատայի գործադիր խորհուրդին անունով, ինչպէս նաեւ եկեղեցւոյ հոգաբարձութեան, ծխական մեր համայնքին ու Թորոնթոյի հայ կեդրոնի յարկին տակ գործող բոլոր միութիւններուն անունով, անհուն երջանկութեամբ կ'ողջունենք Ձերդ սրբութեան ներկայութիւնը Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցիէն ներս:

«Ուրախութեամբ կ'ողջունենք նաեւ ներկայութիւնը Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Բարձր. Վաչէ Արք. Յովսէփեանի, Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Խաթակ Արք. Պարսամեանի, Գանատայի Առաջնորդ Բարձր. Յովնան Արք. Տէրտէրեանի, Արարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ Գերշ. Նաւասարդ Եպիսկ. Կճոյեանի, Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերշ. Արարատ Վրդ. Գալթակճեանի, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Զարեհ Քհնյ. Զարգարեանի, Վանգուվըրի Ս. Վարդան եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Գեղարդ Քհնյ. Կարապետեանի, Միսիսոկայի Ս. Վարդան եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Կիւլեանի: Մեզի հետ են նաեւ Թորոնթոյի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեց-

ւոյ հոգեւոր հովիւ Գեր. Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան, Հայ Աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վեր. Եսայի Սարմազեան, Գէմպրիճի Ս. Նշան Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վարանդ ՔՏՆԿ. Պետրոսեան եւ Հայաստանի Հանրապետութեան Գանատայի Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Արա Պապեան:

«Անցնող 20 տարիներուն, հանգրուան առ հանգրուան կառուցուած այս համեստ համալիրը, իր եկեղեցիով, իր ամէնօրեայ վարժարանով, իր քաղաքական, բարեսիրական, մշակութային, մարզական, երիտասարդական պատանեկան եւ երեցներու միութիւններով, վկայութիւնն է մեր հաւաքական աշխատանքին եւ արդիւնքը՝ մեր զաւակներու արդար քրտինքին:

«Հայրենի հողէն հեռու, այս տունը մեր փոքրիկ Հայաստանն է: Այստեղ ամէն օր կ'աղօթենք եւ կը տքնինք, որպէսզի օտարութեան մէջ հասակ առնող սերունդներու հոգիներուն մէջ շարունակաբար հնչէ մեր ցեղին յաւերժացման հրաւէրը եւ մեր սրտերուն մէջ բերկրի Աստուծոյ սէրը, որպէսզի յուսոյ եւ հաւատքի առաջնորդութեամբ, դէպի բարին առաջնորդուին մեր գործերը: Այս բոլորը վեհափառ Տէր, մենք կը պահենք մեծ սիրով եւ նուիրումով եւ բարեբախտաբար, մեր աճող կարիքներուն համար, արդէն իսկ անբաւարար են այս համալիրին պատերը:

«Երախտապարտ ենք, Վեհափառ Տէր, որովհետեւ Հայաստանի մէջ քրքրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակին զուգարկապող հովապետական Ձեր անդրանիկ այցելութեան բազմազաւ ժամանակացոյցին մէջ, բաժին մը վերապահեցիք նաեւ Հայ Օգնութեան Միութեան Ամէնօրեայ Վարժարանին, որ գաղութային մեր գործունէութեան մէջ կը հանդիսանայ մեր սիրտը:

«Վստահ եղէք Վեհափառ Տէր, որ լսելէ ետք Ձերդ Սրբութեան պատգամը եւ ստանալէ ետք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հաւատքի ակունքներէն Ձեզի հետ բերած հայրական սէրն ու օրհնութիւնները, այս փոքրիկները եւ այստեղ հաւաքուած մեր ժողովուրդի զաւակները, պիտի ամրանան քրիստոսական իրենց հաւատքին մէջ, պիտի նորոգուին հայրենական թարմ շունչով եւ օտարացնող խաթարումներուն դիմաց զինուին հայաբոյր արժէքներու նոր տոկունութեամբ:

«Մեր համայնքի բոլոր զաւակներուն ու պաշտօնական մարմիններուն անունով, ցնծագին տրամադրութեամբ եւ երախտապարտ հոգիով, կրկին անգամ բարի գալուստ կը մաղթեմ Ձերդ Սրբութեան:

«Թող Աստուած արեւշատ օրեր եւ երկար ու բազմարդիւն գահակալութիւն շնորհէ Ձեզի, որպէսզի Ձերդ Սրբութեան մականին տակ, նոր փայլք եւ վերելք արձանագրեն Հայրենիքը եւ Հայց. Առաք. Ս. Եկեղեցին, եւ աշխարհով սփռուած մեր ժողովուրդի բոլոր զաւակները զրահուին նորոգ եղբայրութեամբ ու նոր սիրով:

«Այժմ, թոյլ տուէք, Վեհափառ Տէր, մատչելու Ձերդ Սրբութեան Ս. եւ Օրհնեալ Աջոյն եւ բոլոր ներկաներուն անունով ստանալու Ձեր հայրական օրհնութիւնը»:

Վարժարանի Կրթական Մարմնի խօսքով հանդէս եկաւ ատենապետ Պրն. Լեւոն Հասրճեան, որ իր բարի գալուստի խօսքէն ետք, պատմականը ը-

րաւ Հ.Օ.Մ-ի Ամէնօրեայ Վարժարանի հիմնադրութեան եւ անոր կատարած հայակերտ առաքելութեան: Ապագայ ծրագիրներու մասին խօսելով, կարեւորութեամբ շեշտեց վարժարանը երկրորդական կարգերով օժտելու իրականութիւնը, ընդգծելով վարժարանի հիմնական նպատակը, հայու ազնիւ նկարագրով եւ հայեցի դաստիարակութեամբ օժտել այս ամերուն վրայ ծնունդ առած հայ նոր սերունդները:

Վարժարանի Տրդ դասարանի աշակերտները արտասանեցին Յովհաննէս Թումանեանի «Լուսաւորչի Կանթեղը» քերթուածը:

Խօսք առաւ նաեւ վարժարանի տնօրէն Պրն. Րաֆֆի Տուտապլեան, ե՛լ աշակերտութեան, ե՛լ ուսուցչական կազմին անունով, սրտի անհուն ուրախութեամբ բարի գալուստ մաղթեց Վեհափառին եւ ամփոփ տեղեկութիւններ տրուաւ վարժարանի ներկայ կեանքին եւ ապագայ ծրագիրներուն շուրջ, եւ խնդրեց Վեհափառէն, որ իր օրհնութիւնը բաշխէ, քաջալերէ եւ զօրավիգ կանգնի վարժարանի ապագայ ծրագիրներու յաջողութեան:

Վարժարանի աշակերտական երգչախումբը, ղեկավարութեամբ երգի եւ երաժշտութեան ուսուցչուհի Տիկ. Նատա Նաւասարդեանի երգեց երկու երգ՝ «Հայրենիքիս հետ» եւ «Բարձրիկ Հայաստան» երգերը:

Աշակերտական ուղերձ կարդաց Տրդ կարգէն Անիթա Քէպապճեան:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Բարձր. Յովնան Արք. Տէրտէրեան:

Վեհափառը խօսք առնելով իր ուրախութիւնը յայտնեց, որ կը գտնուի հայ վարժարանի աշակերտներուն մէջ: Ան Ամերիկա եւ Գանատա իր հովուապետական այցելութեան մասին խօսելով, ըսաւ թէ Հայաստանի քրիստոնէութեան պետական կրօն ընդունման 1700-ամեակին առթիւ, ընդառաջելով Հիւս. Ամերիկայի Արեւմտեան, Արեւելեան եւ Գանատայի Թեմերու Առաջնորդներուն հրաւերով կը գտնուին այս ամերը եւ անդրադարձաւ հայ ազգի 301 թուականին, պետականօրէն քրիստոնէութիւնը ընդունելուն, ինչպէս նաեւ այդ թուականէն սկսեալ Հայաստան կատարուած պարսկական, թաթարական, մոնկոլական, արաբական եւ թրքական արշաւանքներուն մասին, որոնք կ'ուզէին ոչնչացնել հայ ժողովուրդը, բայց անոնք երբեք չյաջողեցան, որովհետեւ հայ ժողովուրդը ամբողջ սրտով կապուած էր քրիստոնէութեան եւ Ս. Էջմիածնին:

Վեհափառը կոչ ուղղեց որպէսզի Սփիւռքի հայութիւնը պահէ իր հայրենասիրութիւնը եւ քրիստոնէական գերազանց նկարագիրը, միշտ նկատի ունենալով Հայաստան, Էջմիածին եւ Սփիւռք փոխ-յարաբերութիւններու սերտացումը, որպէսզի ունենանք հզօր եւ բարգաւաճ հայրենիք:

Վեհափառը, իր հայրական պատգամը տուաւ աշակերտութեան, միշտ սիրել հայ լեզուն, հայ եկեղեցին եւ հայ հայրենիքը, եւ ամէն ձեւով զօրավիգ կանգնիլ Հայաստանին:

Այս առիթով, Վեհափառը, Գերշ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեանին փոխանցեց յիշատակի նուէր մը՝ Հայաստանի մէջ պատրաստուած, տախտակեայ փսէ մը, Ս. Էջմիածնի վանքի քանդակով:

Այնուհետեւ, դպիրները երգեցին «Էջմիածին» շարականը եւ «Օրհներգ Հայրապետական» երգը:

*Վեհափառի աղօթքէն ետք, դպիրները երգեցեն «Տէրունական Աղօթք»:
Հաւաքոյթը փակուեցաւ Վեհափառի «Պահպանիչ»ով:*

**«ՅՈՐԻՉՈՆ»
4 Յունիս 2001**



Այց՝ Սպարապետ Վազգէն Սարգիսեանի գերեզմանին

«ՊԱՅԾԱՌ ԱՐՇԱԼՈՅՄՆԵՐՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՈՎ»

Կիրակի, 4 Ապրիլ 2004, կէսօրէ ետք ժամը 2ին, Հայ Կեդրոնի հսկայ սրահը եւ Հայ Կեդրոնի միջանցքները կը յորդէին աւելի քան 2500 հայորդիներով, որոնք հակառակ ցրտաշունչ կլիմայական պայմաններուն, եկած էին ներկայ գտնուելու, Հայ Կեդրոնի ղեկավարութեան տարիներու ուսումնասիրութեան եւ աշխատանքներու արդիւնք, Հայ Երիտասարդական Կեդրոնի եւ Հ.Օ.Մ.ի Երկրորդական Վարժարանի հոյակապ եւ պատուաբեր շէնքերու բացման պաշտօնական հանդիսութեան:

Հայ Երիտասարդական Կեդրոնի բացման շքերթը սկսաւ Գանատայի Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Խաթակ Ս. Արք. Յակոբեանի, ազգային եւ միութենական մարմիններու ղեկավարներուն, Հ.Մ.Ը.Մ.ի սկստականներուն, մարզիկներուն, Հ.Օ.Մ.ի Գոլուեան Նախակրթարանի «Կուռնկ» երգչախումբի անդամներուն, ուսուցչական կազմերուն, վարժարանի տնօրէնութեան, Կրթական Մարմնին, միութիւններու վարչութիւններուն, եկեղեցականներուն, դպրաց դասի անդամներուն, պաշտօնական հիւրերու, բարերարներու, նուիրատուներու եւ 2500է աւելի ազգայիններու, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի սկստական նուագախումբին առաջնորդութեամբ քալեցին դէպի Հայ Երիտասարդական Կեդրոն:

Հայ Երիտասարդական Կեդրոնի մուտքին, Հ.Մ.Ը.Մ.ի սկստական նուագախումբին կողմէ նուագուած Գանատական եւ Հայկական օրհներգներէն ետք, տեղի ունեցաւ Գանատայի, Հայաստանի Հանրապետութեան, եւ Արցախի դրօշներու բարձրացման արարողութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկստականներուն կողմէ, ապա, կարմիր, կապոյտ, նարնջագոյն բաժանումով, հարիւրաւոր փուլերէն երկինք արձակուեցան:

Երիտասարդական Կեդրոնի դրան օրհնութիւնը կատարեց Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Խաթակ Ս. Արք. Յակոբեան, Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեան եւ Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Գերայարգելի Տէր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան:

Կեդրոնի գլխաւոր դրան ժապաւէնի հատումը կատարեցին Առաջնորդ Սրբազանը, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Ընկեր Յակոբ Տէր Խաչատուրեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի Հերթապահ Ընկ. Բժ. Վաղարշ Էհրամճեան, Հ.Օ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկերուհի Հուրի Նաճարեան, Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկեր Վրէժ-Արմէն Արթինեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Եղբ. Գառնիկ Մկրտտիչեան եւ Գանատայի մօտ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան յարգարժան Պր. Արա Պապեան:

Գաւիթի դրան ժապաւէնի հատումը կատարուեցաւ բարերար Տէր եւ Տիկին Յակոբ եւ Մովիկ եւ Մայր Ալիս Կէտիկեաններու կողմէ:

Գաւիթէն ներս տեղի ունեցած աղ ու հացի օրհնութենէն յետոյ, տեղի ունեցաւ մարգասրահի բացման ժապաւէնի հատումը, ձեռամբ բարերար Տէր եւ Տիկին Երուանդ եւ Նայիրի Շահինեաններու եւ իրենց զաւակներուն: Մար-

զասրահը կոչուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Երուանդ եւ Նայիրի Շահինեան Մարզասը-
րահ»:

Մարզասրահի բացման բեմ հրաւիրուեցան բարերար Երուանդ եւ Նա-
յիրի Շահինեանները, որոնք այս առիթով, իրենց կէս միլիոն տոլարի նուիր-
ատուութեան վրայ կ'աւելցնեն Մարզասրահի հիւսիսային պատին դիմաց
ծայրէ-ծայր զետեղուելիք նստարաններուն լրիւ ծախսերը:

Մարզասրահի մէջ սրտի խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական
Վարչութեան ատենապետ Եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ Լիբանանէն յատկա-
պէս եկած էր Երիտասարդական Կեդրոնի բացման ներկայ գտնուելու համար:

Հ.Օ.Մ.ի Երկրորդական Վարժարանի գլխաւոր դրան բացման ժապաւէ-
նի հատումը, ձեռամբ Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» Մասնաճիւղի ատենապետուհի Ըն-
կերուհի Լորա Մովլեանի: Ապա, տեղի ունեցաւ դասարաններու եւ այլ բա-
ժանմունքներու ժապաւէններու հատումը:

Գրադարանի դրան բացումը կատարեցին նուիրատուներ Տէր եւ Տիկին
Շանթ եւ Ալին Ղազարեաններ:

Տարրալուծարանի բացումը՝ նուիրատուներ՝ Տէր եւ Տիկին Լեւոն եւ
Տոքթ. Անի Հասրըճեաններ:

Տեսչարանի բաժանմունքի բացումը՝ նուիրատուներ՝ Տէր եւ Տիկին
Յարութիւն եւ Ալիա Շիթիլեաններու, Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Արփի Շիթիլ-
եաններու եւ Տէր եւ Տիկին Ներսէս եւ Ուէնտի Շիթիլեաններու կողմէ:

Բացման ժապաւէնները հատեցին հետեւեալ դասարաններուն՝ թիւ 114
դասարան, նուիրատու Հայ Կեդրոնի Երէջներու Ընկերակցութիւն:

Թիւ 201 դասարանի՝ նուիրատուներ՝ Տէր եւ Տիկին Աբրահամ եւ Մարի
Թաշճեաններ, Տէր եւ Տիկին Մովսէս եւ Անահիտ Թաշճեաններ, Տէր եւ Տիկին
Վահէ եւ Ալիա Թաշճեաններ:

Թիւ 204 դասարանի՝ նուիրատուներ՝ Տէր եւ Տիկին Զօհրայ եւ Տոքթ.
Նատիա Թաթիլեաններ:

Թիւ 113 դասարանի՝ նուիրատուներ՝ Տէր եւ Տիկին Վիգէն եւ Արփի Ա-
ճէմեաններ:

Թիւ 112 դասարանի՝ նուիրատու՝ Տիկին Մարի Պետրեան

Թիւ 111 դասարանի՝ նուիրատու՝ Տիկին Նուարդ Դաւիթեան

Թիւ 207 դասարանի՝ նուիրատուներ՝ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Ատ-
րիանա Միքայէլեաններ եւ Տէր եւ Տիկին Գէորգ եւ Ռաֆայէլ Նահապետեան-
ներ:

Թիւ 115 դասարանի՝ Արեւելեան Ամերիկայի Կ. Կոմիտէի հերթապահը
եւ Տէր եւ Տիկին Զօհրայ եւ Նոյեմի Թազեաններ:

Թիւ 205 դասարանի՝ նուիրատուներ՝ Տէր եւ Տիկին Յակոբ եւ Աննա
Գալստեաններ:

Այնուհետեւ ներկաները այցելեցին վարժարանի դասարաններն ու բա-
ժանմունքները, ուր ժողովուրդը հիւրասիրուեցաւ համադամ ուտելիքներով,
պտուղներով, անուշեղէններով, զովացուցիչներով եւ խմիչքներով:

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Թատերա-
սըրահի բացման ժապաւէնի հատումը կատարուեցաւ Համազգայինի Կեդրո-

նական Վարչութեան անդամ Ընկ. Վրէժ-Արմէն Արթիւնեանի եւ Հայաստանի վսեմաշուք դեսպան Պր. Արա Պապեանի կողմէ:

Այս առիթով օրուան հանդիսավար Ընկեր Յակոբ Ճանպազեան Հայ Կեդրոնի պատասխանատու մարմիններու անունով յատուկ շնորհակալական եւ գնահատական խօսք ուղղեց Տէր եւ Տիկին Սիմոն եւ Մարալ Հասըրճեաններուն, իրենց իշխանական նուիրատուութեան համար: Տէր եւ Տիկին Հասըրճեաններու փափաքով Թատերասրահը կոչուեցաւ Համագգայինի Թատերասրահ:

Թատերասրահի մէջ տեղի ունեցաւ գեղարուեստական եւ պաշտօնական յայտագիր:

Օրուան հանդիսավար Ընկեր Յակոբ Ճանպազեան, բարի գալուստի խանդավառ խօսքերէն վերջ, իր բացման խօսքով ըսաւ.

«Սրտի անհուն ցնծութեամբ հաւաքուած ենք այստեղ բոլորս միասնաբար բանալու հայապահպանման նոր միջնաբերդի դռները: Հաւաքուած ենք այստեղ դէպի լուսակերտ ապագայ մեր երթը ամրագրելու դարերու ճակատին եւ հայ դպրութեան ու հայ ոգիի նոր ամրոցի մը դարպասները բանալու՝ հայոց նորահաս սերունդներուն ի խնդիր: Եւ վերջապէս, հաւաքուած ենք այստեղ թորոնթոհայ պատմագրքին մէջ անջնջելի տառերով տեղադրելու Հայ Երիտասարդական Կեդրոնի վաւերական ներկայութիւնը:

«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէի եւ Հայ Կեդրոնէն ներս գործող բոլոր միութիւններու անունով եւ սրտի անհուն բերկրանքով բարի գալուստ կը մաղթեմ ձեր բոլորին ու կը շնորհաւորեմ հոյակերտ այս կառոյցի բացման հանդիսութիւնը: Այսօր, թորոնթոհայ գաղութը կրկին անգամ կը գտնուի պատմական անկիւնադարձի մը սեմին:

«Մեծ իրագործումի մը տօնակատարութիւնն է որ տեղի կ'ունենայ այս պահուն: Իրագործում մը, որուն կիզակէտը դարձեալ հայրենի երկնակամարէն հեռու ապրող հայ երիտասարդն է, որ անգամ մը եւս շունչ պիտի տայ այս պատերուն ու զայն պիտի վերածէ հայակերտումի անխորտակելի ամրոցի մը:

«Ի խորոց սրտէ եւ երախտագիտական ջերմ զգացումներով վարձքը կատար կ'ըսենք բոլոր անոնց, որոնք տիւ եւ գիշեր տքնեցան, որպէսզի իրականութիւն դառնայ մեսրոպաշունչ արդիական կրթական օճախ ունենալու մեր բոլորին երազը:

«Վարձքը կատար բոլոր անոնց, որոնք նիւթական ու բարոյական անսակարկ օժանդակութեամբ իրականութիւն դարձուցին հայ երիտասարդի մարմնական ու հոգեկան կրթութեան կեդրոն ունենալու մեր բոլորին տենջանքը:

«Վարձքը կատար բոլոր անոնց, որոնք գիտակցեցան, որ եթէ կ'ուզենք ազգային մեր նկարագիրը եւ ինքնութիւնը պահել ու կուրծք տալ մեր մշակոյթը կացինահարող ազդեցութիւններուն, եթէ կ'ուզենք որպէս թորոնթոհայ գաղութ գոյատեւել ու մեր լինելութեան ջահը բոցավառել Մեսրոպաշունչ ոգիով, ապա մեր թանկագին զաւակներուն պէտք է տանք լաւագոյն կառոյցները, որպէսզի անոնց մէջ ծաղկին ու ծաղկեցնեն մեր մշակոյթն ու գիրը, մեր միութենական ու կազմակերպական զանազան աշխատանքները...

«Իրականութիւնն է հիմա մեր երազը եւ այս երազի իրականացումը կը պարտինք ձեզի, սիրելի հայորդիներ, որ անսակարկ ու լիաբուռն տուիք ի խնդիր մեր ազգի գոյատեւման, վերելքին ու յառաջացման, տուիք ի խնդիր նորահաս սերունդներու հայակերտումին ու մազակերտումին:

«Մենք կը հաւատանք որ այս ամբողջը, այս փոքրիկ Հայաստանը, պիտի դառնայ մեր անշարժ խարիսխը՝ օտարացնող հոսանքներուն դէմ ու մենք բարձրաձակատ ու անխախտ հաւատքով պիտի քալենք՝ դէպի աղբիւրը լոյսին, պիտի քալենք՝ դէպի լուսապայծառ ապագայ...»

«Եւ այո այսօր, հպարտօրէն կրնանք ըսել, այս Կեդրոնը ամբողջ մը ըլլալէ անդին պիտի դառնայ հայրենիքէն հեռու հայապահպանումի անառիկ բերդ մը, որուն պատերէն ներս պիտի գան սերունդներ, պիտի գան աւելի հայանալու, պիտի գան աւելի զօրացած եւ ամրապինդ ոգիով պահանջատէրը հանդիսանան մեր արդար եւ սրբազան իրաւունքներուն: Շնորհակալութիւն»:

Հանդիսավարին հրաւէրով, հերթականօրէն խօսք առին Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» Մասնաճիւղի ատենապետուհի Ընկերուհի Լորա Մավլեան: Հ.Օ.Մ. Ամէնօրեայ Վարժարանի Կրթական Մարմնի ատենապետ Ընկեր Սահակ Սէթեան եւ Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէի հերթապահ Ընկեր Վարուժան Պասթաճեան:

Բեմ հրաւիրուեցաւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Դպրապետուհի Տիկին Այտա Աթիբեան, որ երգեց «Հայրենի Կարօտ» երգը, դաշնամուրով ընկերակցութեամբ Տիկին Թալին Գըլըպօզեանի:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Մարտարուեստի կրտսերներն ու երէցները մարտարուեստի զանազան ցուցադրութիւններով ներկայացան հանրութեան:

Սրտի խօսքով հանդէս եկան Համազգայինի Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկեր Վրէժ-Արմէն Արթիւնեան, Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկերուհի Հոլրի Նաճարեան եւ Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի հերթապահ Ընկեր Տոքթ. Վաղարշ Էհրամճեան:

Համազգայինի կրտսերներու եւ երէցներու պարախումբերը, ղեկավարութեամբ Տիկին Նունուշ Սոլաքեանի, «Տաւիղ» եւ «Կակաչներ» պարերը հեզաճկուն շարժումներով սքանչելիօրէն պարեցին:

Հ.Յ. Դաշնակցութեան Բիւրոյի անդամ Ընկեր Յակոբ Տէր Խաչատուրեանի զնահատական խօսքէն ետք, խօսք առաւ Գանատայի մօտ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Ն. Վ. Արա Պապեան, որ իր սրտի խօսքէն ետք, ընթերցեց Հայաստանի Արտաքին Գործոց Նախարար Վարդան Օսկանեանի հետեւեալ շնորհաւորագիրը.

23.03.2004թ.
24/03046

Սիրելի հայրենակիցներ,
Դայ դպրոցը կարեւորագույն նշանակութիւն ունի աշխարհասփյուռ մեր ժողովրդի հայեցի դաստիարակման եւ հայոց նորահաստատ պետականութեան շուրջ ազգային համախորհրդան գործում: Մեսրոպաշունչ հայ դպրոցն է, որ դարեր շարունակ իր ուսերին է կրել հայ ժողովրդի ինքնութեան պահպանման զգալի ծանրությունը, եղել գիտելիքի ու առաջադիմութեան մշտանորոգ աղբյուր: Այսօր էլ հայ դպրոցը նոր ուժ ու կորով է ավանդում իր աշակերտ-

Ների՞ն՝ դիմակայելու համար հայության առջև կանգնած դժվարին մարտահրավերները եւ պատրաստելու նոր առաքելության:

Ինձ համար, որպես Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի եւ սփյուռքի հայկական դպրոցի մեջ ուսումնառությունը սկսած հայի, հաճելի է մեր անկախ երկրի անունից շնորհավորել Ձեզ բոլորի՞՜ կանատայի Տորոնտո քաղաքում Հայ օգնության միության երկրորդական վարժարանի եւ մարզամշակութային համալիրի նորամուտի առիթով:

Ցանկանում եմ Ձեզ նորանոր հաջողություններ Ձեր կարեւոր, պատասխանատու եւ վեհ առաքելության մեջ:

Հարգանքով՝
Վարդան Օսկանեան

Բեմին վրայ շարունեցան Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի 120 հոգի-նոց «Կռունկ» երգչախումբի աշակերտները, որոնք ղեկավարութեամբ Տիկին Նատա Նաւասարդեանի հերթականօրէն երգեցին՝ «Դէպի Հայաստան», «Հոյ Նազան Իմ Եարը», «Հայաստան Իմ Սիրուն», եւ «Իմ Հայաստան» երգերը, արժանանալով ներկաներու բուռն ծափողջոյններուն: Երգչախումբը ընդառաջելով ներկաներու խնդրանքին երգեց նաեւ «Արմենիա» երգը:

Օրուան պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազան հայրը, ապա, կարդաց Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Վեհափառ Հայրապետին շնորհաւորական Սրբազան Կոնդակը:

Հանդիսութիւնը փակուեցաւ հանդիսավար Ընկեր Յակոբ Ճանպազեանի հետեւեալ փակման խօսքով՝

«Սիրելի հայորդիներ,

Նախքան մեր հանդիսութիւնը փակելը, պարտք կը զգամ Հայ Կեդրոնի անունով, նախ եւ առաջ շնորհակալութիւն յայտնելու Հայ Երիտասարդական Կեդրոնի շինարարական յանձնախումբին, ճարտարապետներուն ու շինարարներուն, Հայ Երիտասարդական Կեդրոնի Հանգանակիչ յանձնախումբին, Հայ Կեդրոնէն ներս գործող բոլոր միութիւններուն եւ կազմակերպութիւններուն:

«Շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսք կ'ուղղեմ բոլոր նըւիրատուներուն անխտիր, շնորհակալութիւն նաեւ այս ձեռնարկը կազմակերպող յանձնախումբին եւ բոլոր անոնց որոնք օժանդակեցին ձեռնարկի յաջողութեան: Եւ վերջապէս, շնորհակալութիւն ձեր բոլորին, որ ներկայ եղաք այստեղ, դառնալով հայակերտումի պատմական փառահեղ նոր երթին ապրող վկաներ:

«Բացուած են ահաւասիկ Հայ Երիտասարդական Կեդրոնի դռները մեր գաղութի նորահաս սերունդին առջեւ:

«Եկէ՛ք մեր երիտասարդներով, աշակերտներով, մեր բազմաճիւղ միութիւններու ճամբով կեանք եւ շունչ ներառենք այս պատերուն մէջ:

«Եկէ՛ք այս Կեդրոնը վերածենք հայապահպանման անխորտակելի միջ-նաբերդի մը:

«Եւ եկէ՛ք դարերէն եկող մեր հայ ինքնութիւնը միասնական ճիգերով դրոշմենք դէպի նոր հազարամեակներ գացող մեր գաւակներու գիտակցու-թեան ու հոգիին մէջ, մեր հայրենիքի եւ մեր ազգի գոյատեւման ի խնդիր:

«Ձեր բոլորին վարձքը կատար եւ բարի գիշեր...»

*«Մեր խնդրանքն է եթէ ունիք նուիրատուութեան լեցուած կտրոններ
հաճեցէք յանձնել զանոնք գաւիթին մէջ տեղադրուած սեղաններու պատաս-
խանատուներուն:*

«Շնորհակալութիւն եւ բարի գիշեր»:

**«ՅՈՐԻՉՈՆ»
2004**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՖԱԴԷՅ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ
ԹՈՐՈՆԹՕ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

Շաբաթ, 8 Օգոստոս 1981ը, Թորոնթոն հայու թեան համար պատմական եւ անջնջելի թուական մը հանդիսացաւ:

Արդարեւ, այդ օր, Թորոնթոն ժամանեցին Հայաստանի Նախարարներու Խորհուրդի Նախագահ Ֆադէյ Սարգիսեան եւ այլ պետական եւ պաշտօնական անձնաւորութիւններ, ստեղծելով հայրենասիրական եւ ազգային գիտակցութեան աննկարագրելի մթնոլորտ եւ սրտայորդ խանդավառութիւն:

Հայրենի հիւրերու Թորոնթոն այցելութիւնը առիթ ստեղծեց գնահատելի եւ ազգօգուտ միասնակամութեան մը, տեղւոյն համայնքային, կուսակցական եւ միութենական կազմակերպութիւններու միջեւ, որուն անջնջան պէտք ունի Հայ Ժողովուրդը, արտասահմանի մէջ պահելու եւ պահպանելու համար հայեցիութիւնը եւ իրագործելու հայութեան փափաքները, իղձերը եւ իտէալները:

Ի պատիւ Թորոնթոնի Հայ Գաղութին եւ անոր գիտակից ղեկավարութեան, արձանագրենք պատմութեան համար, թէ ինչպէս անցեալին, ներկայիս կրկին ստեղծուած է այդ ոգին, եւ, կը սիրենք յուսալ, որ ապագային եւս կը շարունակուի՝ ի շահ Հայ Ժողովուրդի գերագոյն շահերուն եւ նպատակներուն:

Իմանալով հայրենի հիւրերուն այցելութեան մասին, Թորոնթոնի Հ. Բ. Ը. Միութեան վարչութեան կողմէ հրաւէրներ գացին հայկական բոլոր հոսանքներու, համայնքներու, միութիւններու եւ կազմակերպութիւններու ղեկավարութեանց, որպէսզի մեր գաղութին արժանավայել ընդունելութիւն մը կազմակերպելու մտահոգութեամբ կազմուի Միացեալ Յանձնախումբ մը:

Թորոնթոնի 14 կազմակերպութիւններու ներկայացուցիչներու ժողովին կազմուեցաւ դիւան եւ գործադրելի յայտագիր:

Ուրախ ենք յայտարարելու եւ հպարտութիւն զգալու այն առողջ մտածումին եւ գործակցական ոգիին համար, որ ի յայտ եկաւ այդ Ժողովին եւ առնուած բոլոր որոշումները եղան միաձայնութեամբ:

Յայտնենք, որ հայրենի ներկայացուցիչները եկած էին Մոնթրէալ, ներկայ ըլլալու համար «Մարդը եւ Իր Աշխարհը» ցուցահանդէսին, որուն կը մասնակցի նաեւ Խորհրդային Միութիւն, եւ, մէկ յարկաբաժին յատկացուած է Հայաստանի արդիւնաբերութեան: Իսկ Հայաստանի Պետական պարի համոյթը, ամէն օր ելոյթ կ'ունենայ, բացի Երկուշաբթիէ, Հայ Մշակոյթը ծանօթացնելով եւ տարածելով Գանատայի մէջ:

Հայրենի ղեկավարները ինքնաշարժներով Թորոնթոն հասան կէսօրէ վերջ ժամը 2:15ին: Ընդունելութեան Յանձնախումբը դիմաւորեց զիրենք Հ. Բ. Ը. Մ. ի «Ալեք Մանուկեան» Մշակութային կեդրոնին մէջ:

Նորակառոյց շէնքի բոլոր բաժինները պտրտելէ վերջ, հիւրերը ճաշեցին: Ներկաներու բարի գալուստի խօսքերէն վերջ, խօսք առաւ Հայաստանի

Նախարարներու Խորհուրդի Նախագահ Ֆադէյ Սարգիսեան եւ խօսեցաւ Հայաստանի կեանքին եւ արձանագրած յաջողութիւններուն մասին:

Հայրենի հիւրերը, ժամը 4ի մօտ ճանապարհ ինկան դէպի Նիակարա Ֆոլս, դիտելու համար աշխարհի հրաշալիքներէն Նիակարայի ջրվէժը:

Միացեալ Յանձնախումբը կազմակերպած էր ընդունելութիւն՝ ի պատիւ Հայրենի ներկայացուցիչներուն եւ հիւրերուն, որուն հրաւիրուած էին միութիւններու եւ կազմակերպութիւններու անդամները՝ բոլոր հոսանքներէ, ինչպէս նաեւ մեծ թիւով հայրենակիցներ:

ժողովուրդը, ժամը 6էն սկսեալ արդէն սկսած էր հաւաքուիլ «Ալեք Մանուկեան» Մշակութային Կեդրոնը եւ ապա՝ սրահ, որ կամաց-կամաց նեղ կու գար: Ստիպուած, կարգադիր Յանձնախումբը նոր աթոռներ տեղաւորեց արդէն խճողուած սեղաններուն շուրջ, սակայն, կրկին շատեր դուրս մնացին:

Ժամը 8ին, ժամանեցին անհամբերութեամբ սպասուած հիւրերը, եւ ժողովուրդի ոտընկայս ծափողջոյններով դիմաւորուեցան եւ գրաւեցին իրենց յատկացուած տեղերը:

Օրուան հանդիսավարն էր Ընկ. Անդրանիկ Արթինեան, որ խօսք առնելով, նախ ներկայացուց պատուոյ սեղանին հիւրերը, այսպէս.

- 1.- Հայաստանի Նախարարներու Խորհուրդի նախագահը՝ Ֆադէյ Սարգիսեան:
- 2.- Հայաստանի Կենտկոմի քարտուղարը՝ Կարլէն Ղամպարեան:
- 3.- Հայաստանի Գրողներու Միութեան Քարտուղարը՝ Պերճ Զէյթունցեան:
- 4.- Հայաստանի Պետքնի նախագահին տեղակալը՝ Եուրի Խոճամբեան:
- 5.- Հայաստանի Առեւտրա-արդիւնաբերութեան Պալատի նախագահը՝ Յովակ Պատալեան:
- 6.- Մոնթրէալի ցուցահանդէսի տնօրէնի տեղակալը՝ Պարիս Շերպաքով:
- 7.- Սովետ. Միութեան Օթթաուայի Դեսպանատան Ա. Քարտուղարը՝ Թեմուրաս Ալասանիա:
- 8.- Հայ Առաքելական Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հովիւ Հոգեշնորհ Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Կիզիրեան:
- 9.- Հայ Առաքելական Ս. Խաչ Եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Յուսիկ Քհ. Նըշանեան:
- 10.- Հայ Աւետարանական համայնքի հոգեւոր հովիւ Վեր. Եսայի Սարմազեան:
- 11.- Հայ Կաթողիկէ համայնքի հոգեւոր հովիւ Գեր. Եղիս Վրդ. Գիրէջեան:

Ապա, Ընկ. Արթինեան, հրաւիրեց Վեր. Սարմազեանը օրհնելու համար սեղանը:

Ընդունելութեան Միացեալ Յանձնախումբը ներկաները հիւրասիրեց զանազան աղանդերներով եւ ընթրիքով:

Օրոտան հանդիսավարը, հրաւիրեց ներկաները գաւաթ բարձրացնելու եւ խմելու Հայաստանի, հայ ժողովուրդի եւ անոր ղեկավարներուն կենացը:

Ապա, Ընկ. Արթինեան բարի գալուստ մաղթեց հիւրերուն, եւ ի միջի ալոց ըսաւ.

«Դժուար է բացատրել հայ ժողովուրդի հայրենասիրութիւնը: Այսօր, Սփիւռքի մէջ, դժուարին պայմաններուն ներքեւ, հայ ժողովուրդը անկարելին կը փորձէ իր հայութիւնը, լեզուն եւ մշակոյթը պահելու:

«Այսօր ժամանակը եկած է միասնակամութեան եւ միացեալ ճիգի, մեր մտքի ալիքները եւ հայրենի ժողովուրդին ալիքները նոյն գծի վրայ են: Մեր երազները եւ իտէալները նոյնն են: Հայրենիքը մեր բոլորին կը պատկանի, որուն շուրջ պէտք է բոլորուինք եւ գուրգուրանք»:

Ընկ. Արթինեան իւրայատուկ հիւմորով եւ գուարթախօսութեամբ իր խօսքը վերջացուց:

Գործադրուեցաւ զեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որուն մասնակցութիւն բերին.

Տիկին Սօնա Յովհաննէսեան, ապրումով արտասանելով Յովհաննէս թումանեանի «Մարօ» պոէմը:

Տիկին Զարմինէ Երէցեան, մեներգելով Ալեմշահէն «Իղձը» եւ «Իմ Երգը», դաշնակի ընկերակցութեամբ Տիկ. Արաքսի Գասարճեանի:

Պրն. Մարտիկ Պազարեան, ջութակի վրայ նուագեց Ալպէնիչի ոճով «Շետրին» եւ Կոմիտասի «Կռունկ»ը, դաշնամուրի ընկերակցութեամբ Պրենտա Պարանկայի:

Մայեսթրօ Դաւիթ Վարժապետեան, մեներգելով՝ «Հայաստան»՝ Կոմիտասէն, «Փամբ Որոտան», «Բիանկինի»՝ մշակում՝ Կոմիտասի, դաշնակի ընկերակցութեամբ՝ Պրենտա Պարանկայի: Մեներգողները եւ Պր. Ղազարեան, ժողովուրդի բուռն փափաքին ընդառաջելով երգեցին եւ նուագեցին յաւելեալ կտորներ:

Խօսք առաւ Հայաստանի Նախարարներու Խորհուրդին նախագահ Ֆարէյ Սարգիսեան, որ նախ իր եւ իր շքախումբին կողմէ շնորհակալութիւններ յայտնեց Թորոնթոհայութեան, իրենց հանդէպ ցոյց տուած սրտայոյզ եւ խանդավառ ընդունելութեան համար, եւ, աւելցուց.

«Իրապէս մեծապէս տպաւորուած ենք ձեր ցոյց տուած անկեղծ եւ հարգատի վերաբերմունքէն եւ այս բոլորը մեզ կը յուզեն եւ ոգեւորութիւն կը պատճառեն»:

Ապա, յարգելի Վարչապետը խօսեցաւ Սովետական Հայաստանի կեանքին, հայ ժողովուրդի վերափոխութեան, արձանագրած յաջողութիւններուն մասին արտադրական, շինարարական եւ մշակոյթի բնագաւառներուն մէջ: Ան ըսաւ. «Հնդկաստանի Վարչապետուհին երբ Հայաստան այցելեց եւ հանդիպումներ ունեցանք հետը եւ հարց տուինք, թէ ի՞նչ է իր տպաւորութիւնը Հայաստանի մասին, ան պատասխանեց.— Ամէն ինչ կարելի է կեղծել, բայց կարելի չէ կեղծել մարդոց աչքերուն արտայայտութիւնը: Մենք ուրախութիւն եւ երջանկութիւն տեսանք Հայաստանի հայ ժողովուրդին աչքերուն մէջ»:

Վարչապետը խօսեցաւ նաեւ Հայաստանի մէջ կատարուած աշխատանքներուն մասին:

Ան, աւելցուց. «Սով. Հայաստանը իր 60 տարիներու ընթացքին, յետա- մը ընաց, աղքատ, թշուառ վիճակէն հասաւ ամենագարգացած երկիրներու շար- քին շինելով եւ արտադրելով ելեկտրակայաններ, նոյնիսկ աթոմական, հաշ- ւիչ մեքենաներ, ճշգրիտ սարքաւորումներ, ելեկտրական եւ ելեկտրոնիք զա- նազան գործիքներ: Կերտեցինք հայրենիք մը, որմէ չամչնաք երբեք, այլ՝ հը- պարտանաք»:

Յարգելի Վարչապետը իր խօսքը աւարտեց ըսելով.

«Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ կապեր կան, մեր ցանկութիւնն է, որ անոնք աւելի զարգանան եւ սերտանան ապագային: Այս հանդիպումը մեր վը- րայ հոգեպէս ազդեց, հասկնալի է թէ ինչո՞ւ: Կրկին շնորհակալութիւն մեզի համար եղած այս ընդունելութեանց համար»:

Վարչապետի խօսքէն վերջ բեմ եկաւ Տիկին Էլիզ Արթին եւ հայ գա- ղութիւն անունով նուիրեց էսքիմօ արձանիկ մը, որուն վրայ գրուած էր.

«Ի յիշատակ, Թորոնթոյի հայ գաղութին կողմէ, հայկական Ս.Ս.Հ.Ի Միխիստրներու Խորհուրդի Նախագահին, Թորոնթօ, Գանատա, 8 Օգոստոս 1981»:

Վարչապետը խոր գոհունակութեամբ ընդունեց նուէրը իր շնորհակա- լութիւնները յայտնելով:

Սրահին մէջ խանդավառութիւնը եւ յուզումը տեսանելի էր ամէն կողմ: Շատեր կու լային լռին...

«Դժուար է հասկնալ հայ ժողովուրդի հայրենասիրութեան չափը»:

Վերջաւորութեան բեմ եկաւ Համագգայինի Երգչախումբը, ղեկավա- րութեամբ Ընկ. Էտիկ Յովսէփեանի եւ դաշնամուրի ընկերակցութեամբ Տիկ. Ռիմա Մարտիրոսեանի, երգելով շարք մը երգեր, արժանանալով ներկաներու գնահատութեան եւ ծափողջոյններուն:

Հաւաքոյթը վերջ գտած էր, հիւրերը մեկնած՝ հանգստանալու, բայց ժողովուրդը կը յամենար տակաւին՝ կը խօսէին, կը վերլուծէին՝ ոգեւորուած:

Հիւրերը խանդավառուած իրենց հանդէպ ցոյց տրուած վերաբերմուն- քէն, եւ, ընդառաջելով իրենց եղած խնդրանքին, մասնաւոր կարգադրութիւն մը ըրին, թոյլ տալով, որ Հայաստանի Պետական պարի համոյթը, ի գին մեծ գոհողութիւններու, Թորոնթոյի մէջ ելոյթ ունենան, գոհացում տալու համար նաեւ Թորոնթոյի հայութեան փափաքին, Երկուշաբթի, 24 Օգոստոս 1981ին:

Միացեալ Յանձնախումբը պիտի շարունակէ իր աշխատանքները՝ մին- չեւ պարախումբի ելոյթը:

Մաղթելի է եւ ցանկալի, որ այս յանձնախումբը մնայ պաշտօնի վրայ նաեւ ելոյթէն վերջ, կազմակերպելու եւ յաջողցնելու համահայկական ուրիշ ձեռնարկներ, որոնք կը խօսին մէն մի հայուն սրտին հաւասարապէս եւ նոյն ուժգնութեամբ:

«ՅՈՐԻՉՈՆ»
1981

ՀԱՅ ԿԵՂԵՐՈՆԻ ԵՐԵՑՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿԳՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 4ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Հայ Կեղերոնի Երեցներու Ընկերակցութեան Հիմնադրութեան 4րդ տարեդարձին առթիւ, վարչութիւնը կազմակերպած էր ճաշկերոյթ մը, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 19 Փետրուար 1982 երեկոյեան ժամը 8:30ին, Հայ Կեղերոնի սրահին մէջ:

Սոյն ճաշկերոյթի հովանաւորութիւնը սիրով ստանձնած էին Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի նոր շէնքի շինութեան գլխաւոր բարերար տէր եւ տիկ. Գէորգ Գոլոլեան:

Ներկայ էին քոյր միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչները, այլ բարերարներ եւ մօտ 300ի մօտ հասնող անդամ-անդամուհիներ՝ իրենց ընտանեկան պարագաներով:

Ճաշի օրհնութիւնը կատարեց Հայ Կաթողիկէ համայնքին հոգեւոր հովիւ Գեր. Եղիա Վրդ. Գիրէջեան:

Ճաշը՝ հայկական հերիսա՝ պատրաստուած ընկերակցութեան ժրջան տիկիներուն կողմէ, Հ.Մ.Ը.Մ.ի արեւոյշներուն կողմէ գովելի կանոնաւորութեամբ սպասարկուեցաւ, միեւնոյն ատեն գինիով բաժակներ պարպուեցան երէցներու ընկերակցութեան կենացը:

Հանդիսավարն էր վարչութեան ատենապետ ընկ. Անդրանիկ Կէտիկեան, որ գործադրութեան դրաւ գեղարուեստական կողիկ յայտագիր մը:

Օր. Շաքէ Մուրատեան երգեց երկու երգ «Մաշիկ ունեմ» եւ «Անուշ Գարուն», դաշնակի ընկերակցութեամբ տիկ. Արաքսի Գասարճեանի: Օր. Մուրատեան գեղեցիկ ձայն ունի եւ կրնայ մեր հաւաքոյթները ճոխացնել իր սիրուն երգերով:

Գաղութիս վաւերական եւ սքանչելի արտասանող ընկերուհի տիկ. Սոնա Յովհաննէսեան, անգամ մը եւս վայելքի պահեր ստեղծեց, այս անգամ արտասանելով հայրենի շնորհալի եւ տաղանդաւոր բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեանէն երկու քերթուած՝ «Կարասիները եւ Թղուկները» եւ «Դրախտի Երկիր»ը:

Ապա խօսք առաւ օրուան բանախօս ընկ. Անդրանիկ Անդրէասեան, որ խօսեցաւ Հայ Երեցներու Ընկերակցութեան կարեւորութեան՝ հայապահպանման գործին մէջ, տալով իրական պատկերը Սփիւռքի հայ գաղութներու կացութեան, յատկապէս Հիւսիսային Ամերիկայի մէջ հաստատուած հայ զանգուլակներու պայքարին եւ դիմադրութեան՝ իրենց ինքնութիւնը պահելու եւ նոր սերունդին հայեցի կրթութիւն տալու աշխատանքներուն մէջ: Ապա, ընդգրծեց Հայ երէցներէն ակնկալուած օժանդակութիւնը՝ վերոյիշեալ մարզին մէջ:

Բանախօսութիւնէն վերջ, բեմ հրաւիրուեցաւ ընկ. Ժան Պապայեան, որ հարմոնիքայով նուագեց քանի մը հայկական խանդավառ եղանակներ:

իսկ ընկ. Պարգեւ Գիրէջեան, բամբ ձայնով, տպաւորիչ առողջանու-
թեամբ եւ խոր ապրումով արտասանեց Հրաչ Քաջարենցի «Միակ Արքան»
բանաստեղծութիւնը:

Վարչութեան խօսքը ըրաւ ընկ. Անդրանիկ Կէտիկեան, որուն տուած
տեղեկութիւններէն ի յայտ կու գայ հետեւեալ գեղեցիկ պատկերը.

- Ներկայ անդամ-անդամուհիներու թիւն է 140:
- Մասնակցած են Հայ Դատի աշխատանքներուն՝ ներկայ ըլլալով Ապրիլ 24ի ցոյցերուն Օթթաուա եւ Թորոնթօ, քալած առաջին գի-
ծին վրայ, որպէս վերապրողներ աշխարհի առաջին ցեղասպանու-
թենէն:
- Հայ Կեդրոնի մէջ ամէն տարի տեղի ունեցող «Կարաւան»ի աշխա-
տանքներուն մասնակցած են:
- Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ վարժարանին մէջ, առաջին տարին, հոգացած
է մէկ սանի թոշակը՝ 500 տոլար: Երկրորդ տարին՝ երկու սանի թո-
շակները՝ 1000 տոլար: Այս տարի կրկին կը պահէ երկու սան:
- Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի նոր շէնքի շինութեան խոստա-
ցած են 25 հազար տոլար, դասարանի մը շինութեան ծախսը:

Ընկ. Կէտիկեանի խօսքէն վերջ, բեմ հրաւիրուեցան «Սողոմոն Թեհլիր-
եան» Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յակոբ Ճամպազեան, որ օրուան պատշաճ
հոյակապ պատգամ մը տուաւ:

Ապա, խօսք առաւ բարերար պրն. Գէորգ Գոլոյեան, որ խօսելէ վերջ
հայ երէցներու կատարած օրինակելի եւ շինիչ աշխատանքներուն, նուիրատու-
ութեամբ մը ձեռնարկեց մոմավաճառութեան, տարեդարձի հսկայ քէյքին
վրայ վառելով մոմը, որմէ վերջ եղան բազմաթիւ նուիրատուութիւններ, ո-
րոնց գումարը հասաւ 4 հազար տոլարի:

Նուիրատուութենէն վերջ, վարչութեան ատենապետ ընկ. Անդրանիկ
Կէտիկեան, յայտարարեց, որ վարժարանի նոր շէնքին իրենց խոստումը 25
հազարէն կը բարձրացնեն 30 հազարի...:

Խանդավառ մթնոլորտի մէջ, ընկ. Կէտիկեան, 15 հազար տոլարի չէք
մը, որպէս իրենց խոստումի առաջին վճառումը՝ յանձնեց Կոմիտէի ներկայա-
ցուցիչ ընկ. Ճամպազեանին:

Պատիւ եւ յարգանք մեր գիտակից երէցներուն...:

Յայտագրի պաշտօնական մասէն վերջ, տեղի ունեցան անակնկալներ:
Ներկաներէն եղան մեներգողներ, նուագողներ եւ գուարթ անեքթոսներ պատ-
մողներ:

Խօսք առաւ Երէցներու Ընկերակցութեան հիմնադիրներէն պրն. Մա-
ղաքիա Պոյաճեան, որ յուզումով խօսեցաւ երէցներու գործունէութեան մա-
սին եւ հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտընկայս յարգել ընկերակցու-
թեան անդարձ մեկնած կարգ մը անդամներու յիշատակը:

Գովելի եւ յաջող ձեռնարկ մը արդարեւ, որ պատիւ կրնայ բերել որե-
ւէ կազմակերպութեան:

Կը շնորհաւորենք Հայ Երէցներու Ընկերակցութիւնը իր հիմնադրութեան 4րդ տարեդարձին առիթով, մաղթելով նորանոր յաջողութիւններ իրենց հայակերտ աշխատանքներուն մէջ:

**«ՅՈՐԻՉՈՆ»
1982**

**«ՅԱՅՐԵՆԻՔ»
18 Մարտ 1982**

ԱՊՐԻԼԵԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՅՈՒՄԸ

Կիրակի, 29 Ապրիլ 1984, երեկոյեան ժամը 5ին, տեղի ունեցաւ հայոց Մեծ Եղեռնի նահատակներուն յուշարձանի բացման պաշտօնական հանդիսութիւնները, ներկայութեամբ Գանատայի պետական դաշնակցային, նահագային, քաղաքապետական ներկայացուցիչներու եւ պաշտօնատերներու:

Հայ Կեդրոնի հսկայ սրահի մէջ տեղի ունեցաւ Ապրիլեան Եղեռնի 69րդ տարեդարձի ոգեկոչման հանդիսութիւնը:

Սրահին ձախին, յատուկ կարգադրութեամբ տեղ գրաւած էին Եղեռնէն վերապրողները, որոնց լամբակները կը զարդարէին ճերմակ մեխակներ:

Որոշեալ ժամուն, պետական եւ ազգային պատուոյ հիւրերը, կարգադիր յանձնախումբի առաջնորդութեամբ մուտք գործեցին սրահ, ուր բազմահագար ժողովուրդի որոտագին ծափող յոյներով ընդունուեցան անցնելով Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն եւ արենոյններուն պատիւ կեցած ջոկատներուն մէջէն:

Օրուան հանդիսավար ընկ. Լեւոն Հասրըճեան հայերէն եւ անգլերէն լեզուներով բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ներկայացուց պետական եւ կրօնական հիւրերը, ինչպէս նաեւ պատուոյ յանձնախումբի անդամները:

Հանդիսութեանց կը մասնակցէին նաեւ Ֆրանսայի, Յունաստանի, Լիբանանի եւ Փորթուկալի հիւպատոսները:

Համազգայինի երչախումբը, ղեկավարութեամբ վաստակաւոր խմբավար Էդիկ Յովսէփեանի, դաշնակի ընկերակցութեամբ Ռիմա Մարտիրոսեանի երգեց Գանատայի պետական հիմնը՝ «Օ՛ Գանատա»ն եւ հայկական «Յառաջ Նահատակ»ը:

Հերթով խօսք առին Նորթ Եորքի քաղաքապետ Մէլ Լաման, դաշնակցային խորհրդարանի անդամ՝ Ճիմ Փիթըրսըն, դաշնակցային խորհրդարանի անդամ Մէնքլէր Սթիվըն, Օնթարիոյ խորհրդարանի անդամ Ճոն Ուիլիմս, Օնթարիոյ Ազատական կուսակցութեան պետ եւ երեսփոխան Տէյվիս Փիթըրսըն, Օնթարիոյ խորհրդարանի անդամ Տոնալտ ՄքՏոնալտ, Հ.Յ.Դ. «Սողոմոն Թեհլիրեան» Կոմիտէի հերթապահ ընկ. Յակոբ Ճամպագեան, Ս.Դ.Հնչակեան կուսակցութեան Թորոնթոյի «Փարամագ» կոմիտէութեան հերթապահ Պարգեւ Դաւիթեան եւ համբաւաւոր լրագրող եւ ռատիոկայանի խօսնակ Փիթ ՄքԿարպի:

Բոլոր խօսողներն ալ անդրադարձան հայոց ցեղասպանութեան եւ հայ ժողովուրդի արդար պահանջներուն իրագործման շուրջ, դատապարտելով «Մարդու անմարդկայնութիւնը մարդուն հանդէպ»:

Հանդիսութեան առաջին մասը վերջ գտած ըլլալով, նախ պաշտօնական հիւրերը առաջնորդուեցան Հայ Կեդրոնի շրջափակը, ապա՝ ժողովուրդը, ներկայ ըլլալու համար Յուշարձանի բացման պաշտօնական հանդիսութեան:

Բեմ հրաւիրուեցաւ Յուշարձանի հեղինակը՝ համբաւաւոր արուեստագէտ քանդակագործ Արթօ Չաքմաքճեան, որ իր սրտի խորէն արձակուած բառերով շնորհաւորեց եւ զնահատեց հայոց Եղեռնի նահատակներուն յուշարձան կանգնելու գաղափար յղացող եւ գործագրող երիտասարդներուն ճիգը եւ Թո-

րոնթոնհայուլթիւնը՝ մասնաւորապէս:

Յուշարձանի բացումը կատարեց դաշնակցային կառավարութեան ներկայացուցիչ զբօսաշրջիկութեան եւ առեւտրական եւ արհեստակցական փոքր հաստատութիւններու նախարար վսեմ. Տէյվիտ Սմիթս, իր հետ ունենալով Եղեռնի վերապրողներէն ընկ. Արամ Թոքաճեանը եւ Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանէն աշակերտ մը եւ Ս. Խաչ Ամէնօրեայ Վարժարանէն աշակերտ մը:

Յուշարձանի երկու կողմերը տեղ գրաւած էին Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի եւ Ս. Խաչ Ամէնօրեայ Վարժարանի աշակերտները, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները:

Յուզիչ էր տեսարանը: Ներկայ ժողովուրդը կ'արտասուէր յիշելով հայ մէկուկէս միլիոն նահատակները, հպարտ էր, սակայն, հայ ժողովուրդի վերածնունդով:

Վսեմ. Տէյվիտ Սմիթս, խօսք առնելով Գանատայի կառավարութեան եւ Վարչապետ Թրիւտոյի անունով դատապարտեց ցեղասպանութիւնը եւ գրահաստեց հայ ժողովուրդի առաքինութիւնները եւ բերած նպաստը Գանատական հայրենիքին:

Յուշարձանի օրհնութիւնը կատարուեցան Հայց. Առաքելական Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ հոգչ. Տ. Խաթակ վրդ. Յակոբեանի, Հայ Կաթողիկէ համայնքին Գերպ. Եղիա վրդ. Գիրէջեանի եւ Հայ Աւետ. համայնքի հովիւ Վեր. Եսայի Սարմազեանի կողմէ, նախագահութեամբ Մ. Նահանգներու Արեւելեան թեմի եւ Գանատայի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի:

Յուշարձանի օրհնութենէն ետք խօսք առաւ Առաջնորդ Սրբազան Հայրը, եւ, ազգայնաշունչ զեղումով տուաւ իր պատգամը պատմական այս օրուան առթիւ: Վերջին խօսողն էր Հ.Յ.Գ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Խաչիկ Յակոբեան, որ խօսեցաւ հայ ազատագրական պայքարի հանգրուաններուն եւ հայ ժողովուրդի գերագոյն շահերէն մղուած ինքնապաշտպանութեան միջոցներուն մասին, հասնելու համար վերջնական նպատակին՝ մէկ ժողովուրդ մէկ հայրենիքի մէջ՝ ազատ եւ անկախ:

Օրուան հանդիսավար ընկ. Լեւոն Հասրճեան, իր փակման խօսքով, Հայ Կեդրոնի անունով շնորհակալութիւններ յայտնեց գանատացի եւ հայ պատուոյ յանձնախումբի անդամներուն, ճառախօսներուն, պետական դիւանագիտական հիւրերուն, որոնք իրենց ներկայութեամբ բաժնեկից եղան հայ ժողովուրդի ուրախութեան եւ ամենանուիրական զգացումներուն: Ապա, պահանջեց աշխարհի արդարամիտ եւ անշահախնդիր պետութիւններէն զօրավիգ կանգնելու հայ ժողովուրդի արդար դատի լուծման: Մինչ այդ, ներկաներու անունով ուխտեց հաւատարիմ մնալ հայ նահատակներու կտակին՝ անխորտակ կամ քով եւ աննահանջ պայքարով խաղաղութիւն պարգեւել անոնց տանջուած հոգիներուն:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Սարդարապատ» երգով, որ երգուեցաւ ամբողջ ժողովուրդին կողմէ:

«ՅՈՐԻՉՈՆ» եւ
«ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԼՐԱՏՈՒ»
Մայիս - Յունիս 1984

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԻԱԿԱՄՕՐԷՆ ՊԱՀԱՆՁԱՏԷՐ

Կազմակերպութեամբ Հայ Դատի Թորոնթոյի յանձնախումբին եւ մասնակցութեամբ Հայ Կեդրոնի բոլոր կազմակերպութիւններուն, Հայոց Մեծ Եղեռնի 73-ամեակին նուիրուած ոգեկոչական քաղաքական հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ, 22 Ապրիլ 1988, երեկոյեան ժամը 8:30ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ:

Բեմը զարդարուած էր Ղարաբաղի «Մենք ենք՝ մեր լեռները» արձանի նկարով:

Օրուան հանդիսավար ընկ. Լեւոն Հասրըճեան հրաւիրեց ժողովուրդը յոտընկայս մէկ վայրկեան լռութեամբ յարգելու յիշատակը հայ նահատակներու: Հ.Օ.Մ.ի Գորլեան նախակրթարանի բարձրագոյն կարգերու աշակերտական խումբը, ղեկավարութեամբ ընկ. Վարուժան Նիկոլեանի, երգեց «Օ՛ Գանատա»ն եւ «Յառաջ նահատակ»ը:

Ընկ. Հասրըճեան իր բացման խօսքով անդրադարձաւ Հայ Դատի լուծման համար կատարուող աշխատանքներուն՝ ընդգծելով մեծապետական պետութիւններու շահագիտական լռութիւնը, դատապարտելու եւ ընդունելու համար Թուրքիոյ կողմէ 1915ին գործուած հայ ժողովուրդի ցեղասպանութեան յանցանքը: Ընկեր հանդիսավարը խօսեցաւ նաեւ Խ. Միութենէն հայ ժողովուրդի պահանջին՝ Արցախ-Ղարաբաղը Խ. Հայաստանին վերամիացնելու համար Ղարաբաղի, Հայաստանի եւ Սփիւռքի ամբողջ տարածքին տեղի ունեցած համաժողովրդային ցոյցերուն, աւելցնելով, որ շնորհիւ հայ երիտասարդութեան անձնուէր զոհողութիւններուն, անպայմանօրէն պիտի ազատազրուին հայապատկան հողերը եւ պիտի ստեղծուի ամբողջական Հայաստան ամբողջական հայութեամբ:

Հ.Յ.Դ. Գանատայի Երիտասարդական Միութեան «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղի խօսքը փոխանցեց ընկ. Բաֆֆի Սեւակեան:

Խօսք տրուեցաւ Գանատայի Յառաջ. - Պահպանողական երեսփոխան պրն. Պիլ Աթուէլի, որ իր զօրակցութիւնը յայտնեց հայկական արդար դատին:

Այս առթիով սրտակցութեան գրութիւններ ղրկած էին Գանատայի վարչապետ Մըլրունին եւ Օնթարիոյի վարչապետ Փիթըրսընի անունով՝ բազմամշակութայնութեան եւ քաղաքացիութեան նախարար Ֆիլընզ:

Ընկ. Հասրըճեան կարգաց Թորոնթոյի հայ միջ-կուսակցական կոչը՝ Ապրիլեան Եղեռնի 73-ամեակին առթիւ:

Օրուան բանախօսն էր Հարվըրտ համալսարանի դասախօս դոկտ. Նորա Ներսէսեան:

Ցուցադրուեցաւ ժապաւէն մը, Ղարաբաղի վերջին եղելութիւններուն առնչութեամբ:

Հանդիսութեան երկրորդ բաժինը տեղի ունեցաւ Հայ Կեդրոնի շրջափակին մէջ գտնուող Եղեռնի յուշարկոթողին շուրջ, ուր օրուան հանդիսավարը ըսաւ օրուան պատշաճ խօսքը:

Վերապրող պրն. Անդրանիկ Տէրտէրեան եւ իր թոռնիկը՝ Շաղիկ Տէրտէրեան, ծաղկեպսակ մը գետեղեցին Եղեռնի յուշարձանին, հաւատարմութեան կապը պահելով հին եւ նորահաս սերունդներուն միջեւ:

Վեր. Եսայի Սարմազեանի աղօթքէն ետք, ներկայ ժողովուրդը մէկական մեխակ գետեղելով եւ աղօթելով, իր հաւատարմութեան ուխտը վերանորոգեց Ապրիլեան նահատակներու կտակին: Աշակերտական երգչախումբը կ'երգէր «Կիլիկիա», «Զարթիր լաօ» եւ այլ ազգային երգեր:

«ՅՈՐԻՉՈՆ» ԵՒ
«ՅԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԼՐԱՏՈՒ»
Մայիս 1988

ԴՈՎՏ. ԱՐԷԼ ԱՂԱՆԲԷԿԵԱՆ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՉ

Ուրբաթ, 13 Յուլիս 1990ին Թորոնթո ժամանեց Խորհրդային Միութեան նախարարաց խորհուրդի ազգային տնտեսութեան յանձնաժողովի տնօրէն եւ Խորհրդային Հայաստանի աղետեալ գօտիի վերականգնման յանձնախումբի նախագահ՝ Տոքթ. Աբէլ Աղանբէկեան եւ նոյն օրը դասախօսեց Եորք համալսարանի ուսանողութեան՝ Խորհրդային Միութիւն - Գանատա յարաբերութիւններուն շուրջ: Նոյն գիշեր, Թորոնթոյի հեռատեսիլի բոլոր կայանները անդրադարձան սոյն դասախօսութեան՝ ցոյց տալով կարգ մը տեսարաններ:

Դոկտ. Աղանբէկեան, ընառաջելով Գանատայի Հայ Առեւտրական Խորհուրդի Թորոնթոյի բաժնի հրաւերին, Շաբաթ, 14 Յուլիս 1990, երեկոյեան ժամը 7:30ին Հայ կեդրոն ժամանեց, ընկերակցութեամբ իր օգնականներէն դոկտ. Սերգէյ Գալէնձեանի, Երեւանի մէջ հիմնուող առեւտրական դպրոցի տնօրէն փրոֆ. Հրանդ Պօղոսեանի, Հայ կեդրոնի հովանաւորութեամբ Եորք համալսարանին մէջ ղեկավարութեան ուսմունքի (մէնէնթէնթ) հետեւող հայրենի 20 ուսանող ուսական խումբին, որոնց կազմին մէջ կը գտնուին չորս հայեր, մէկը՝ Երեւանէն, երեքը՝ Մոսկուայէն:

Գանատայի Հայ Առեւտրական Խորհուրդը, օգտուելով հայ տնտեսագէտին Թորոնթո ներկայութենէն, Հայ կեդրոնի ղեկավարութեան գործակցութեամբ կազմակերպած էր դասախօսական այս երեկոն, որպէսզի հայ առեւտրականներ եւ գործատէրեր տեղեակ ըլլան Հայաստանի կարիքներուն եւ ըստ այնմ որոշեն իրենց կարելիութիւնները ներմուծել Հայաստանի տնտեսութիւնը զարգացնելու համար:

Գասախօսութեան ներկայ էին Գանատայի դաշնակցային խորհրդարանի հայասէր անդամ Պիլ Աթթուէլ, Հայաստանի մէջ կառուցուող առեւտրական դպրոցի հովանաւորողներէն՝ Նիլ Եորքի «Ղեկավարութեան ուսմունքի հայկական կեդրոն»ի անդամներէն չորս հոգի, Հայ կեդրոնի մէջ գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչները եւ հայ գործատէրերէն եւ առեւտրականներէն շուրջ 100 հոգի:

Բացման խօսքով հանդէս եկաւ ԳՀԱԽի ատենապետ ընկ. Գրիգոր Շիթիլեան, որ իր գոհունակութիւնը եւ շնորհակալութիւնը յայտնեց համբաւաւոր հայ տնտեսագէտին:

Դոկտ. Աղանբէկեանը ներկայացուց Թորոնթոյի համալսարանի տնտեսագիտութեան պրոֆեսոր Վրէժ Սէֆէրեան, որ իր խօսքին մէջ անդրադարձաւ մեր նշանաւոր հայրենակիցին ակադեմական գործունէութեան՝ Խորհրդային Միութեան ազգային տնտեսութեան վերակառուցման ճանապարհին, ինչպէս նաեւ անոր կատարած հայրենանուէր աշխատանքներուն, յատկապէս երկրաշարժին հետեւանքով աղէտեալ շրջաններու կառուցման եւ Հայաստանի տնտեսական իրավիճակի բարելաման համար:

Ապա խօսք առաւ օրուան հիւրը՝ դոկտ. Աբէլ Աղանբէկեան, որ մօտաւորապէս մէկ ժամ տեւող դասախօսութեամբ անդրադարձաւ Խորհրդային

Միութեան տնտեսական կացութեան եւ մասնաւորելով իր խօսքը Հայաստանի կացութեան՝ թուեց հետեւեալները.

Եւրօ Համալսարանի մէջ դեկալարութեան ուսմունքի հետեւող ուսանողները նոր գիտութիւն պիտի բերեն Հայաստան՝ օգտակար հանդիսանալով ազատ շուկայումի կազմակերպման:

Հայաստան ունի բարձր մակարդակով կրթութիւն ստացած մասնագէտներ եւ գիտնականներ, որոնց կը պակսին գիտական սարքաւորումներ:

Շփումներ հաստատած են եւ համաձայնութիւններ կնքած բազմաթիւ համալսարաններու հետ գործակցութեան եւ փոխ-յարաբերութեան՝ Մ. Նահանգներու, Գանատայի եւ Եւրոպայի մաբողջ տարածքին:

Այսօր, Հայաստանի մէջ գոյութիւն ունի բնակարանի տագնապ, հետեւանք երկրաշարժի քանդումներուն եւ 300 հազար բռնագաղթողներուն՝ Աղբըրբեջանէն:

Ներկայ պայմաններուն ներքեւ յուսահատութիւն մը կը տիրապետէ Հայաստանի մէջ, թէ ինչ պիտի ըլլայ իրենց գաւակներուն ապագան:

Հայոց պատմութենէն տեղեակ ենք, ուր հայ ժողովուրդի իր բազմահազարամեայ պատմութեան ընթացքին, բազմաթիւ անգամներ ճգնաժամային շրջաններ ապրած է եւ ամէն անգամ մահուան դուռը չհասած, վերակենդանացած է, վերընձիւղած, հաւաքելով իր անկորնչելի ոյժերը եւ պապերէն ժառանգած անմահութեան ոգին, յաղթական դուրս եկած է գոյատեւման պայքարէն:

Հայաստանի ապագային համար աղէտեալ շրջանները ազատ գօտիի վերածումը կամուրջ մըն է, որ օտար հիմնարկութիւնները եւ շահագործական ընկերութիւնները պիտի մղէ Հայաստանի հետ առեւտրական կապեր հաստատելու:

Հայաստանի տնտեսական ինքնուրոյնութեան եւ ազատ շուկայումի լոյսին տակ, շատ կարեւոր է Երեւանի օդակայանը դարձնել միջազգային, եւ ուղղակի գիծ հաստատել Եւրոպայի եւ Ամերիկայի գլխաւոր քաղաքներուն հետ:

Մեծ յոյսեր կան, որ Հայաստանի նորընտիր խորհրդարանը որոշում կայացնէ, արտերկրի հայութեան Հայաստանի քաղաքացիութիւն տալու առընչութեամբ, ինչպէս ըրած են բազմաթիւ երկիրներ: Նման կարգադրութիւն մը առիթ կ'ընծայէ արտերկրի հայութեան Հայաստանի մէջ տուն գնել, կառուցել եւ գործ դարձնել:

Ինչպէս ըսի, Հայաստանի գլխաւոր հարցերէն մէկն է բնակարաններու տագնապը: Հայաստան չունի կառուցողական գործիքներ: Հում նիւթ գոյութիւն ունի:

Անկարելի է Ղարաբաղի հայութեան վրայ մշակութային ճնշում բանեցնել: Ազերիներու ծրագիրները ձախողելու դատապարտուած են:

Սննդամթերքի հարցը պէտք է լուծուի արտադրութեամբ: Պէտք է զօրացնել գիւղական արտադրութիւնը՝ քաջալերելով ընտանեկան ագարակներու գոյութիւնը եւ հողը գիւղացիին սեփականութիւնը դարձնելու ծրագիրները:

Հայաստանի գլխավոր հարցերէն մէկն է նաեւ աշխարհով մէկ տարած-
ւող AIDS սարսափելի հիւանդութիւնը: Այս մահացու հիւանդութեան դէմ
պայքարելու համար չունինք միանգամուտն պաշտպանական բուժօգնականներ,
դէմքերը ծածկող յատուկ դիմակներ, չկան յատուկ ձեռնոցներ, մէկ անգամ
գործածուող դեղատեսակներ: Պէտք է կազմակերպել վերոյիշեալ պիտոյքնե-
րու եւ դեղերու արտադրութիւնը՝ արտերկրի հայութեան նիւթական օգնու-
թեամբ եւ հայ բժիշկներու գործակցութեամբ:

Հայաստանի բնութեան եւ կենսոլորտի պահպանման եւ մաքրութեան
համար առնուեցան կարգ մը որոշումներ, այսպէս՝ փակուեցաւ հիւլէական ե-
լեկտրակայանը, Նայիրիտ քառաչուկի գործարանը, Ալավերդիի, Լենինականի
եւ Կիրովականի քիմիական գործարանները: Կենսոլորտը ապականած է գլխա-
ւորապէս Երեւանի եւ շրջակայքի գիւղերուն մէջ: Նայիրիտի պատճառած վը-
նասները հսկայական են: Թէեւ այդ գործարանը Հայաստանին 200 միլիոն
ուրբլի եկամուտ կը բերէր, սակայն, կը փճացնէր նորածին երեխաներու ա-
ռողջութիւնը: Հայաստանի ապագայ սերունդներու առողջութիւնը 200 միլի-
ոն ուրբլիով կարելի չէ գնել:

Հայաստանի տնտեսական զարգացումին համար պէտք է ստեղծել թե-
թեւ արդիւնաբերութեան ճիւղեր, էլեկտրոնիք կազմածներ, գոմփիլթրններ:
Պէտք է ստեղծել հնարաւորութիւններ, կազմակերպելու համար զբօսաշրջի-
կութիւնը, կառուցել նոր պանդոկներ, զօրացնել հանքային ջուրերու արտադ-
րութիւնը եւ արտասահման արտածել մեծ քանակութեամբ:

Հայաստանի երկրաշարժին երկրորդ տարեդարձին առիթով, Դեկտեմ-
բերին Հայաստանի մէջ պիտի գումարուի միջազգային գիտաժողով մը, ո-
րուն հրաւիրուած են հայկական բոլոր կազմակերպութիւնները Հայաստանէն
եւ Արտերկրէն՝ քննելու համար Հայաստանի կացութիւնը եւ կազմելու ծրա-
գիրներ, Հայաստանի տնտեսութեան կազմակերպման եւ բարգաւաճման հա-
մար:

Փարիզի մէջ կայացած առաջին գիտաժողովին, ինծի զանազան առա-
ջարկներ եղան, որոնց մէջ ամէնէն օգտակարը թուեցաւ ինծի փրոֆ. Վրէժ Սէ-
ֆէրեանի առաջարկը, Հայաստանէն ղեկավարութեան ուսմունքի դասըն-
թացքներուն հետեւող աշակերտներ Թորոնթոյի Եորք համալսարանը ղրկելու
համար: Այդ ծրագիրը իրագործուած է արդէն եւ ես իմ շնորհակալութիւննե-
րըս կը յայտնեմ փրոֆ. Սէֆէրեանին եւ Հայ կեդրոնի ղեկավարութեան: Նա-
եւ, շնորհակալութիւն ձեզի՝ Հայաստանի օգնութեան համար:

Դասախօսութենէն ետք, փրոֆ. Վրէժ Սէֆէրեան հրաւիրեց ներկաները
հարցումներ ուղղելու դասախօսին:

Եղան կարգ մը հարցումներ, որոնք կը վերաբերէին Հայաստանի կեն-
սոլորտին, կրկնակի քաղաքացիութեան, գործակցական ընկերութիւններու,
չահաբաժիններու, տուրքերու եւ այլ հարցերու մասին, որոնց բոլորին պա-
տասխանեց դասախօսը:

Խօսք առաւ նաեւ Նիւ Եորքէն A Business School For Armenia ծրագրի հո-
վանաւորողներէն «Ղեկավարութեան ուսմունքի հայկական կեդրոն»ի ներկա-
յացուցիչ Պրն. Մելիքեան, տալով մանրամասնութիւնները A Soviet - American
Joint Venture ծրագրի ծիրէն ներս Երեւանի մէջ շուտով բացուելիք առեւտրա-

կան վարժարանի նպատակներուն, ծրագիրներուն եւ դասաւանդութիւններուն մասին, յայտնելով, որ դպրոցի ուսուցչական կազմը պիտի բաղկանայ առաջժամ ամերիկացի մասնագէտ դասախօսներէ, իսկ աշակերտութիւնը՝ մէկ դասարան, երեք ամսուան եւ մէկ ամսուան դասընթացքներով պիտի ընդունուի 50% Հայաստանէն, 25% Խորհրդային Միութեան հանրապետութիւններէն, եւ 25%ը՝ արտերկրէն:

Հայ առեւտրական խորհուրդի անդամներէն Պրն. Արա Պոյաճեան խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց դոկտ. Աղանբէկեանին իր ներկայութեան եւ շահեկան դասախօսութեան համար:

Գասախօսութենէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որու ընթացքին բազմաթիւ հայ առեւտրականներ եւ գործատէրեր առանձին խօսակցութիւններ ունեցան դոկտ. Աղանբէկեանին հետ եւ մանրամասնութիւններ ուզեցին Հայաստանին օգտակար դառնալու միջոցներու եւ պահանջներու շուրջ:

Մօտենալով անուանի հայ տնտեսագէտին, խնդրեցի իր պատգամը՝ Գանատայի հանրութեան:

Ան նախ իր շնորհակալութիւնները յայտնեց Հայ կեդրոնի պատասխանատուներուն եւ հայ առեւտրական խորհուրդին, իրենց ցոյց տրուած հարազատի մօտեցումին համար, ապա, աւելցուց. «Կոչ կ'ուղղեմ հայկական համայնքին, որպէսզի ամէն մարդ իր կարելիութեան սահմաններուն մէջ օգտակար դառնայ Հայաստանին եւ իր բաժինը բերէ Հայաստանի տնտեսութեան բարգաւաճման եւ հզօրացման համար:

«Անհրաժեշտ են երկրագործական-չինարարական գործիքներ, Հայաստանի կենսոլորտի եւ բնութեան պաշտպանութեան սարքաւորումներ, AIDSի դէմ մաքառման դեղեր եւ բժշկական պիտոյքներ: Կը յուսամ, որ Դեկտեմբերին Հայաստանի մէջ կայանալիք միջազգային ժողովին Արտերկրի բոլոր կազմակերպութիւնները կը մասնակցին եւ իրենց ներդրումը կը դնեն Հայաստանի բարգաւաճման ծրագիրներու յաջողութեան»:

«ՅԱՅՐԵՆԻՔ»
Երեքշաբթի, Օգոստոս 7, 1990

ԷԼԵՆԱ ՊՈՆՆԸՐ ԵՒ ԴՈԿՏ. ՓՐՈՖԵՍՈՐ ԳԷՈՐԳ ԲԱՐՍԵՂՈՎ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ՄԷՋ

Կազմակերպութեամբ Թորոնթոյի Եորք Համալսարանի, 19-22 Փետրուար 1991ին, Եորք Համալսարանի սրահներուն մէջ տեղի ունեցաւ գիտաժողով, «Glasnost and the global village» թեմայով, որուն մասնակցեցան Գանատայէն, Մ. Նահանգներէն, Եւրոպայէն եւ Խորհրդային Միութենէն գիտնականներ եւ մասնագէտներ:

Չորս օրերու ընթացքին զեկուցումներ եւ ուսումնասիրութիւններ ներկայացուեցան եւ խորհրդակցութիւններ տեղի ունեցան հետեւեալ հարցերու շուրջ. քաղաքական, մշակութային, տնտեսական, բնութենապահպանման՝ Խորհրդային Միութեան հրապարակայնութեան եւ վերակառուցման քաղաքականութեան լոյսին տակ:

Սոյն գիտաժողովին իր աջակցութիւնն ու մասնակցութիւնը բերաւ Գանատայի Հայ Դատի Կեդրոնական Յանձնախումբը, որուն միջոցաւ հրաւիրուեցան Մոսկուայէն՝ Մարդկային Իրաւունքներու պաշտպանութեան անխոնջ անձնաւորութիւններէն Տիկին Էլենա Պոննըր՝ հանգուցեալ նշանաւոր գիտնական եւ խաղաղութեան Նոպէլեան մրցանակակիր հայասէր Անտրէ Սախարովի կինը եւ Դոկտ. Փրոֆեսոր Եուրի-Գէորգի Բարսեղով՝ հայ վաստակաւոր օրէնագէտը, որ ներկայիս կը պաշտօնավարէ Խորհրդային Միութեան «Տնտեսագիտութեան եւ Համաշխարհային Յարաբերութեան» հաստատութեան մէջ, ինչպէս նաեւ անդամ է ՄԱԿի Ընդհանուր Ժողովի կողմէ ընտրուած 35 օրէնագէտներէ բաղկացած մարմնին:

Նաեւ Գանատայի Հայ Դատի Յանձնախումբի կարգադրութեամբ գիտաժողովին ներկայացուեցան Ընկեր Հրայր Պալեանի «Ազգութիւններու տազնապը Խորհրդային Միութեան մէջ», Հայաստանէն՝ տնտեսագիտութեան թեկնածու Թաթուլ Մանասէրեանի «Հայաստանի տնտեսական վիճակը եւ արտադրական կարողութիւնը» եւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան «Առեւտուրի եւ Բարեկարգութեան Յանձնաժողով»ի անդամ Ռուբէն Ինճիքեանի «Ռուբլիի դրամափոխութիւնը համաշխարհային շուկային վրայ» ուսումնասիրութիւնները:

Գիտաժողովին պաշտօնական հրաւերով իր մասնակցութիւնը բերաւ Գանատայի Հայ Դատի Կեդրոնական Յանձնախումբի անդամ Ընկեր Արիս Պապիկեան եւ հանդիպումներ ունեցաւ մասնակցող գիտնականներուն հետ եւ անոնց փոխանցեց Արցախի ժողովուրդին արգար իրաւունքները բացատրող փաստաթուղթեր եւ տեղեկութիւններ:

Այս առիթով, Թորոնթոյի Հայ Դատի Յանձնախումբը եւ «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէն Չորեքշաբթի, 20 Փետրուար 1991, երեկոյեան ժամը 8:30ին, Հայ Կեդրոնին մէջ ճաշկերոյթով մը պատուեցին Էլենա Պոննըրը եւ Դոկտ. Փրոֆեսոր Եուրի-Գէորգ Բարսեղովը, ներկայութեամբ Հայ Կեդրոնի մէջ գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն: Քիչ մը ուշացումով հիւրասիրութեան իր մասնակցութիւնը բե-

րաւ նաեւ Հայաստանի Համալսարանի օգնական դասախօս Բագրատ Ատեւեան, որ մաս կը կազմէր Խորհրդային Միութենէն գիտաժողովին մասնակցող մասնագէտներու խումբին:

Ճաշկերոյթի բացումը կատարեց Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի հերթապահ Ընկեր Աբգար Միրազեան եւ իր բարի գալուստի խօսքերէն ետք, ներկայացուց հիւրերը:

Յաջորդաբար խօսք առին Տիկին Էլենա Պոննըր եւ Դոկտ. Փրոֆեսոր Եուրի-Գէորգ Բարսեղով եւ իրենց ուղղուած հարցումներուն պատասխանեցին:

Փրոֆ. Եուրի-Գէորգ Բարսեղով իր խօսքին մէջ իր շնորհակալութիւնները յայտնելէ ետք իրենց հանդէպ ցոյց տրուած յարգանքին եւ հիւրասիրութեան համար, ի միջի այլոց ըսաւ.

«Անկասկած մեր ժողովուրդին ապագան Հայաստանի մէջ է, բայց այդ ապագան չենք կրնար կերտել, առանց արտերկրի հայութեան զօրակցութեան եւ աջակցութեան: Արտերկրի հայութեան 75-ամեայ փորձառութիւնն ու համակցութիւնը իրենց բնական երկիրներու ժողովուրդներուն հետ կրնան ըստեղծել դրական եւ հայանպաստ կեցուածքներ՝ մեր ժողովուրդի արդար իրաւունքներու իրականացման:

«Ներկայիս, հայրենի ժողովուրդը քաղաքական դժուար պայմաններու մէջ կը գտնուի: Այս դժուարութիւնները յաղթահարելու միակ միջոցն է հայ ժողովուրդի միասնականութիւնը եւ կեդրոնացած աշխատանք՝ մէկ ուղղութեամբ: Մենք պէտք է գիտնանք ինչ են մեր պէտքերը, քաղաքական որեւէ մէկ պայմաններու ներքեւ: Եւ պէտք է կարողութիւնը ունենանք ճշգրտորէն վերլուծելու քաղաքական պայմանները»:

Անդրադառնալով ներկայ Հայաստանի քաղաքական կացութեան, Փրոֆ. Բարսեղով ըսաւ, թէ անորոշ եւ անապահով վիճակ մը գոյութիւն ունի Խորհրդային Միութիւնը եւ այդ հետեւանքով հաւանականութիւններ կան, որ համայնավար կուսակցութիւնը վերատիրանայ իշխանութեան: Սոյն մտահոգութեամբ, հայկական կուսակցութիւնները Հայաստանի մէջ պէտք է գործեն գաղտնիացումով:

Տիկին Էլենա Պոննըր խօսք առնելով, ինք ալ իր կարգին իր շնորհակալութիւնները յայտնեց Հայ Կեդրոնին եւ իր խօսքին մէջ ի միջի այլոց ըսաւ.

«Նկատի ունենալով Հայաստանի աշխարհագրական դիրքը, հայ ժողովուրդը պէտք է միացած գործէ, ապահովելու համար տնտեսական եւ քաղաքական օժանդակութիւն օտար երկիրներէ: Միեւնոյն ատեն Հայաստանի կառավարութիւնը պէտք է ջանք թափէ իր յարաբերութիւնները սերտացնելու եւ բարելաւելու խորհրդային եւ այլ հանրապետութիւններու հետ, որովհետեւ պաշտօնական մամուլն ու լրագրական այլ միջոցները կրցած են հակահայ հանրային կարծիք ստեղծել Խորհրդային Միութեան մէջ: Մինչեւ այսօր, Խորհրդային ժողովուրդները ճշգրիտ տեղեկութիւններ չունին, թէ ինչ պատահեցաւ Սումկայիթի եւ Պաքուի մէջ»:

Գալով Ղարաբաղի հարցին, Տիկին Պոննըր յիշեց, թէ Կորպաչովի քաղաքականութիւնը կը հետամտի քանդել հայ ժողովուրդի ընդդիմութիւնը եւ ներկայիս Ղարաբաղի հայ ժողովուրդին կը սպառնայ երկրորդ ցեղասպանու-

թիւն մը: Ղարաբաղի ժողովուրդը այսօր սովի մատնուած է, քարիւղի եւ այլ անհրաժեշտ ապրանքներ կը պակսին, յաւելեալ Կարմիր Բանակը գործակցելով Ատրպէյճանցիներուն հետ, Ղարաբաղի հայութիւնը տեղահանութեան ենթարկելու փորձեր կը կատարեն»:

Ճաշկերոյթը շարունակուեցաւ մինչեւ գիշերուան ուշ ժամերը մտերմիկ մթնոլորտի մէջ:

Գիտաժողովը շարունակուեցաւ մինչեւ Ուրբաթ երեկոյ: Տիկին Պոննըրը, գիտաժողովի ընթացքին եւ մամուլին հետ տեսակցութեանց միջոցին, յաճախ անդրադարձաւ Ղարաբաղի հարցին եւ իր տեսակէտները պարզեց անոնց՝ շեշտելով Ղարաբաղի հայ ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը: Նոյնպէս, Փրոֆ. Բարսեղով, իր զեկուցման ընթացքին անդրադարձաւ Ղարաբաղի իրաւական եւ պատմական հոլովոյթներուն, ընդգծելով անոր Սահմանադրական արդար իրաւունքներուն բռնաբարումը Ատրպէյճանի, Կարմիր Բանակի եւ Կեդրոնական Իշխանութեան կողմէ:

«ՀՈՐԻՉՈՆ»
1991

ՄԵՆԹ ԲԱԹՐԻՆՁԻ ՆՈՐ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Ծիծեռնակը բոյն կը շիճէ,
Բոյն կը շիճէ եւ կ'երգէ,
Ամէն մէկ շիւղ երբ փակցնէ,
Իր հին բոյնը կը յիշէ:

1890ական թուականներէն ի վեր, մեծ մասամբ Արեւմտահայաստանէն եւ Միջին Արեւելքէն եկած հայեր կը սկսին հաստատուիլ Գանատայի Սենթ Քաթրինզ քաղաքը: Անոնք կ'աշխատին որպէս գործարանի բանուոր, եւ, հետեւեալէ քանի կող տան իրենց հարազատներն ու ազգականները:

1906ին Սենթ Քաթրինզի մէջ, ուր համախումբ կ'ապրէին զգալի թիւով հայեր, նախ եւ առաջ կազմուած է Հ.Յ.Դաշնակցութեան «Անդրանիկ» կոմիտէութիւնը: Միւս բոլոր ազգային կազմակերպութիւնները, հայրենակցական միութիւններն ու հաստատութիւնները ստեղծուած են յետագային:

Հ.Յ. Դաշնակցութեան «Անդրանիկ» կոմիտէն, այդ ժամանակներէն մինչեւ օրս, ճանչցուած էր իբրեւ «Դաշնակ» Ակումբ, Օնթարիօ կառավարութենէն, իր առաջին ուխտագիրը ստացած է 1940ին:

1930ին բացուած «Դաշնակ» Ակումբը՝ Սենթ Քաթրինզի կեդրոնին մէջ, մինչեւ 1985, հաւաքավայրն ու տունն եղաւ քաղաքի ազատատենչ հայութեան եւ հովանաւորեց ազգային, քաղաքական եւ մշակութային աշխատանքներ:

Թուականէն վեց ամիս առաջ, նպաստաւոր պայմաններով զնուած մէկուկէս էքընոց հողին վրայ սկսան շինութեան աշխատանքները, որոնք լրումին հասան 11 Մայիս 1991ին: Շինութեան կեդրոնական Յանձնախումբի եւ ենթայանձնախումբերու տքնաջան ջանքերն ու զոհողութիւնները, հայ ժողովուրդի վայել եւ արդիական ամէն յարմարութիւններով օժտուած Հայ կեդրոն մը ունենալու, պսակուեցան յաջողութեամբ:

Նորակերտ Հայ կեդրոնը պատսպարանը պիտի ըլլայ:

Ա. Հ.Յ. Դաշնակցութեան «Անդրանիկ» կոմիտէի, որ սատարելով Հայ կեդրոնէն ներս գործող միութիւններուն գործունէութեան, կը ղեկավարէ, կը համադրէ եւ կ'ամբողջացնէ զայն:

Բ. «Հայ Օգնութեան Միութեան», որ կը տանի բարեսիրական գործունէութիւն, կ'օգնէ կարօտեալներուն, դիւրութիւններ կ'ընծայէ նորեկ ազգայիններուն, յարատեւօրէն կը մասնակցի գաղութի գործունէութեան զանազան առիթներով եւ կը ղեկավարէ շաբաթօրեայ վարժարանը:

Գ. Հ.Յ.Դ. Գանատայի Երիտասարդական Միութեան, ուր կը դաստիարակուին ու կը պատրաստուին պատանի եւ երիտասարդ սերունդները, ազգային, մարզական, մշակութային ու հրապարակային դասախօսութիւններով, ամուր հիմներու վրայ դնելու համար ազգային գիտակցութիւնը:

Դ. Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն (Հ.Մ.Ը.Մ.), գլխաւորաբար մարզական զանազան գործունէութեամբ եւ սկստական աշխոյժ շարժումով:

Ե. Հայ Երէջներու Ընկերակցութիւն, ուր հայ երէջները իրարու քով գալով եւ կազմակերպելով ներքին եւ արտաքին ձեռնարկներ, կը մնան պատ- նէշի վրայ եւ կը սատարեն Հայ Կեդրոնի տնտեսական կացութեան բարելաւ- ման:

156 Martindale Roadի վրայ կառուցուած Նոր Հայ Կեդրոնի հոյակապ այս շէնքին՝ «Փոքրիկ Հայաստանի» պաշտօնական բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 11 Մայիս 1991, կէսօրէ ետք ժամը 6ին, ներկայու- թեամբ պետական պաշտօնատարներու, ազգային պաշտօնական մարմիններու ներկայացուցիչներուն եւ 250 աւելի հայ ժողովուրդի ազատատենչ որդիներու ներկայութեան:

Հոս, ցաւ ի սիրտ կ'ուզենք նշել, որ հայ ժողովուրդի միասնականու- թեան անհրաժեշտութեան այս օրերուն, Սենթ Քաթրինզի էջմիածնական Թե- մի պատկանող հոգեւորականը եւ եկեղեցւոյ Միսական Խորհուրդը, մերժած է ներկայ գտնուիլ այս պատմական օրուան հանդիսութեան, արժանանալով ի- րենց իսկ ժողովուրդին արգահատանքին:

Անգլերէն եւ հայերէն լեզուներով խօսք առաւ «Անդրանիկ» Կոմիտէի հերթապահ Ընկեր Սեպուհ Թոքճեան, որ ի միջի այլոց ըսաւ.

«Ասկէ մօտաւորապէս 5 տարի առաջ, երբ մեր նախկին Ակումբը վա- ճառքի ենթարկեցինք, խոստացանք նոր կեդրոնով մը օժտել Սենթ Քաթրին- զի հայ գաղութը: Այսօր եկած ենք հպարտօրէն յայտարարելու, որ մեր խոս- տումին տէր կանգնած, նիւթական ծանր պարտաւորութիւններու մէջ մտնե- լով, այսօր, վերահաստատած ենք մեր խոստումը:

«Սենթ Քաթրինզի Հայ Կեդրոնի կառուցը իրականութիւն է այսօր: Երկրորդական Յանձնախումբը հպարտ է յայտարարելու, որ շինութեան աշխա- տանքները հասած են իրենց լրումին:

«Նորակառուց Հայ Կեդրոնը պիտի օգնէ պահպանելու եւ ծաղկեցնելու մեր լեզուն, մշակոյթը, պատմութիւնն ու ասանդութիւնները, նաեւ՝ անսահ- ման կարելիութիւններ պիտի ստեղծէ բազմամշակութային, Հայ Դատի հե- տապնդման ծրագիրներու եւ ձեռնարկներու արդիւնաւորման»:

Խօսք առաւ նաեւ Սենթ Քաթրինզի քաղաքապետ Պր. Ճօ Մքքաֆրի:

Հ.Մ.Ը.Մ.ի սկառտները, իրենց խմբապետներու ղեկավարութեամբ, գնահատելի կարգապահութեամբ շարքի կեցած մէջ ընդ մէջ պատուի կեցան եւ սկառտական ծափերով եւ բացազանչութիւններով երանգ տուին բացման հանդիսութեան:

Բացման կրօնական օրհնութիւնը կատարեցին Թորոնթոյի Ս. Աստուա- ծածին եկեղեցւոյ հովիւ հոգեշնորհ Տ. Խաժակ Մ. Վրդ. Յակոբեան, Քեմպրիճի Ս. Նշան եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Հրանդ Քհ. Երէցեան եւ Արժ. Տ. Վահան Ա. Քհ. Ղազարեան:

Սենթ Քաթրինզի քաղաքապետ Ճօ Մքքաֆրիի եւ Հ.Յ.Դ. Գանատայի Կ.Կ.ի հերթապահ Ընկեր Բժ. Վաղարշ Էհրամճեանի կողմէ բացման ժապաւէնի կտրուելէն ետք, ներկայ ժողովուրդը առաջնորդուեցաւ հանդիսասրահ:

Օրուան հանդիսավար Ընկեր Վազգէն Թերզեան հրաւիրեց Արժ. Տ. Հը- րանդ Քհ. Երէցեանը՝ օրհնելու սեղանը:

Ճաշի սպասարկութենէն ետք, Ընկեր Թերզեանի անդերէնն եւ հայերէն լեզուներով արտասանուած իր բացման խօսքով, ի միջի այլոց ըսաւ.

«Բոլորիս փափաքն ու ակնկալութիւնն է, որ այս Կեդրոնին մէջ առողջ փափախէ հայուն սիրտը, յամառօրէն հետապնդուին հայ ժողովուրդի նպատակները, մաքուր պահպանուին հայութեան նկարագիրն ու աւանդութիւնները, որպէսզի այս շէնքը դառնայ եւ մնայ հպարտութիւն ներշնչելով հայ նորահաս սերունդները ազգային ազատատենչ ոգին:

«Վստահ եմ այս պահուս մեզի հետ են հոգիները բոլոր անոնց, որոնք անդարձ մեկնած են այս աշխարհէն՝ Սենթ Քաթրինզի ճամբով: Պիտի յիշեմ գոնէ ոմանք, որովհետեւ այս անձերը ո՛չ միայն Սենթ Քաթրինզը շինեցին, այլեւ Գանատահայութեան կազմակերպութեան ամուր արմատներն եղան. Նշան Մնոյեան, Միհրան Աղազարեան, Մելիք Յակոբեան, Պալիկ Սարուխանեան, Յակոբ Մարգարեան, Սիմոն Միրաքեան, Հայրապետ Տէր Մանուէլեան, Յակոբ Մելքոնեան, իսկ մեր նուիրեալ կիներէն՝ Կիւլիզար Խասոյեան, Սաթենիկ Ղուկասեան, Սաթենիկ Մարգարեան, Զարուհի Տէրտէրեան, Շուշանիկ Միրաքեան, Լալազար Մարգարեան եւ բազմաթիւ ուրիշներ, որոնց հոգիները մեզի հետ են հիմա: Հպարտ եւ ուրախ են, որ իրենց գործը կը շարունակուի այսօր:

«Այսօր մեզի հետ է սիրտը նաեւ համայն հայութեան, արտասահմանի բոլոր շրջաններէն մինչեւ Ղարաբաղ ու Հայաստան, ուր մեր ժողովուրդը այս օրերուն կ'ապրի դժուարին պահեր եւ պէտք ունի ամէն մէկ հայու ու հայ կեդրոններու ամբողջական օժանդակութեան: Եւ այս պատճառով, մեր այս նորակերտ Կեդրոնը թող յուշարձան մը ըլլայ նուիրուած հայ ժողովուրդի պայքարելու եւ գոյատեւելու կամքին՝ ի փառս անոր պայծառ ապագային»:

Ապա, Ընկեր Թերզեան ներկաներուն ծանօթացուց պատուոյ սեղանի անձնաւորութիւններն ու պաշտօնական հիւրերը:

Խօսք առաւ Սենթ Քաթրինզի դաշնակցային խորհրդարանի անդամ Ռամ Հանսըն, իր շնորհաւորական խօսքերէն ետք կարդաց Օնթարիոյ Վարչապետ Պապ Րէյի շնորհաւորական գիրը եւ ընկեր Թերզեանին յանձնեց Նոյեմբեր 3, 1990ին պատրաստուած յուշատախտակ մը՝ կուսակցութեան 100-ամեակին առթիւ:

Օնթարիո Խորհրդարանի անդամ Ճիմ Պրատլիյ խօսք առնելով, իր շնորհաւորական խօսքերէն ետք, Հայ Կեդրոնին նուիրեց Օնթարիո Դրօշը:

Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութեան կողմէ խօսք առաւ Ընկերուհի Մարօ Ֆրունճեան, անդերէնն եւ հայերէն լեզուներով փոխանցեց Կեդրոնական Վարչութեան շնորհաւորութիւններն ու Հ.Օ.Մ.ի կողմէ 20 հազար ամերիկեան տոլարի խոստումէն վճարելի մնացած 10 հազար ամերիկեան տոլարի վճարագիրը յանձնեց Կոմիտէի հերթապահին:

Բոլորին կողմէ սիրուած հայասէր քաղաքապետ Ճօ Սքքոֆրի խօսք առնելով անդրադարձաւ Սենթ Քաթրինզի հայ ժողովուրդին բերած նպաստին Սենթ Քաթրինզի բարգաւաճման աշխատանքներուն, յիշեց «Դաշնակ» Ակումբի միջավայրը, ուր անցուցած էր իր մանկութիւնը հայ ընկերներով: Շնորհաւորեց հայ ժողովուրդը պատուաբեր Հայ Կեդրոնի շինութեան առթիւ, ապա, Սենթ Քաթրինզի Դրօշը նուիրեց Հայ Կեդրոնին:

Հ.Յ. Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի անունով խօսք առաւ Ընկեր Բժիշկ Վաղարշ Էհրամճեան, եւ, բոլոր ընկերներուն անունով շնորհաւորեց «Անդրանիկ» Կոմիտէութիւնը Հայ Կեդրոնի շինութեան առթիւ: Շնորհակալութիւն յայտնեց Դաշնակցային, Նահանգային եւ Քաղաքապետական կառավարութիւններուն, ինչպէս նաեւ Հայ Օգնութեան Միութեան Կեդրոնական Վարչութեան, գաղութի բոլոր կազմակերպութիւններուն եւ նուիրատու ազգայիններուն, որոնց նիւթական եւ բարոյական օժանդակութեան շնորհիւ կարելի եղաւ գլուխ հանել մեծածախս Հայ Կեդրոնի շինութիւնը:

Օնթարիօ նահանգի նախկին ազատական կառավարութեան նախարար եւ ներկայիս Օնթարիոյի Խորհրդարանի անդամ՝ Սենթ Քաթրինզէն, խօսք առնելով իր հրճուանքն ու ուրախութիւնը յայտնեց Հայ Կեդրոնի շինութեան առթիւ, ընդգծելով այն իրողութիւնը, որ բազմամշակութային Գանատայի տարածքին ապրող ազգերը իրաւունք ունին իրենց լեզուն եւ մշակոյթը վառ պահելու եւ նորակերտ Հայ Կեդրոնը մեծապէս պիտի նպաստէ այդ առաքելութեան ու ծրագիրներուն իրագործման:

Թեմիս Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի անունով խօսք առաւ Հոգեշնորհ Տ. Խաթակ Մ. Վրդ. Յակոբեան եւ Առաջնորդարանի կողմէ գնահատական յուշատախտակներ փոխանցեց շինութեան յանձնախումբի ժրջան ատենապետ Ընկեր Կարպիս Գաւազանճեանին, Ընկեր Ժան Աւետիսեանին՝ իր երկարամեայ վաստակին համար եւ Ընկեր Փոլ Սողոմոնեանին՝ Հայ Կեդրոնի շինութեան իր բերած անգնահատելի օժանդակութեան համար:

Վերջին խօսքը տրուեցաւ Շինութեան Յանձնախումբի ատենապետ Ընկեր Կարպիս Գաւազանճեան եւ ներկաներուն փոխանցեց Հայ Կեդրոնի շինութեան նիւթական պատկերը:

Տրուած զեկոյցէն ի յայտ եկաւ, որ Կեդրոնի շինութիւնը արժած է մէկ միլիոն տոլար՝ ներառեալ սարքաւորումներն ու կազմածները: Պետական եւ ազգային նպաստներէն, հանգանակուած գումարներէն գոյացած է 650 հազար տոլար: Վճարելի է 350 հազար տոլար:

Օրուան հանդիսավար Ընկեր Վազգէն Թերզեան կարգաց Մոնթրէալի «Միհրան Փափազեան» Կոմիտէ շնորհաւորական գիրը:

**Հ.Յ.Դ. «Անդրանիկ» Կոմիտէի
Սենթ Քաթրինզ, Օնթարիօ**

Սիրելի ընկերներ,

Հրճուանք եւ հպարտանքի օրն է այսօր Սենթ Քաթրինզի հայ գաղութին համար ընդհանրապէս եւ «Անդրանիկ» կոմիտէութեան ընկերներուն համար՝ յատկապէս:

Սոյն գրութեամբ կու գանք մասնակից դառնալու ձեր զգացումներուն, մաղթելով, որ նոր կեդրոնը առաւել եւս խթան հանդիսանայ ձեր գաղութի հայ կեանքէն ներս նորանոր նուաճումներ արձանագրելու, գաղութի կարողականութիւնը բազմապատկելու եւ զայն ի սպաս դնելու Հայ Դատի ծառայութեան նուիրական գործին:

Վերջին խօսքը տրուեցաւ Ընկեր Վահան Ալոյեանին, որմէ ետք, Ընկեր հանդիսավարը բացուած յայտարարեց ժողովրդային հանգանակութիւնը՝ թեթեւցնելու համար Հայ Կեդրոնի ուսերուն ծանրացած բեռը:

Մէկ ժամուան ընթացքին, ի պատիւ ներկայ ժողովուրդին ազգասէր եւ նուիրական ոգիին, նուիրատուութիւններու գումարը հասաւ 135 հազար տոլարի:

Նուիրատուութիւնները կը շարունակուին, մինչեւ որ կարելի ըլլայ այրել պարտամուրհակը:

Խանդավառ էր ներկայ ժողովուրդը, իրենց նորակառոյց տունը հպարտութեան զգացումներ կ'արթնցնէր հոգիներուն մէջ:

Երգիչ Յարութ Զէնեան եւ իր նուագախումբը իրենց ազգային, յեղափոխական եւ ժողովրդային երգերով եւ եղանակներով, մինչեւ գիշերուան ուշ ժամերը հայադրոշմ մ'թնոլորտ մը ստեղծեցին:

Պատմական օր մը, որ երկար ատեն յիշատակելի պիտի մնայ ներկաներուն կեանքին մէջ:

Վարճքերնիդ կատար, տղա՛ք...:

«ՅՈՐԻՉՈՆ»
1991

**1500 ԱԶԱՏԱՏԵՆՉ ՀԱՅՈՐՂԻՆԵՐ
ԱՆՆԿԱՐԱԳՐԵԼԻ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄԲ
ԴԻՄԱԽՈՐԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ
ՎԵՀԱԳՈՅՆ ԱՐՇԱԼՈՅՍԸ**

Շաբաթ, 21 Սեպտեմբեր 1991ին, Հայաստանի մէջ տեղի ունեցած հանրաքուէի դրական արդիւնքները կայծակի արագութեամբ հասան Թորոնթօ, ուրախութեան եւ երջանկութեան բոցավառ ալիքներով ողողելով ազատատենչ Թորոնթօհայուցեան հայրենաբորբ սիրտերը:

Հ.Յ. Գաշնակցութեան «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէի կարգադրութեամբ անմիջապէս կազմուեցան յանձնախումբեր, պատշաճօրէն տօնելու համար Հայաստանի ազատ անկախ պետականութեան ուղին հարթող ժողովուրդի կրանիթեայ կամքը:

Կիրակի, 22 Սեպտեմբեր, արդէն, դրօշազարդուած էին Հայ Կեդրոնի արտաքին եւ ներքին բոլոր բաժինները: Երեկոյեան, ժողովուրդը գունդագունդ կը շտապէր տեղեր ապահովել այս բացառիկ հաւաք-խրախճանքին:

Երեկոյեան ժամը 7:30ին, «ասեղ նետելու տեղ չկար» Հայ Կեդրոնի բոլոր բաժիններուն մէջ: Շուրջ 1500 ազատատենչ հայորդիներ խոնուած էին Հայ Կեդրոնի սրահին եւ անցքերուն մէջ:

«Սասուն» Նուագախումբը եւ երգիչ Յարութ Զէնեան սկսած էին մըթնոլորտը խանդավառել հայրենասիրական երգերով եւ պարերով:

Տօնախմբութեան պաշտօնական մասը սկսաւ Երիտասարդաց Միութեան ներկայացուցիչ ընկերուհի Սեւան Տէրտէրեանի բացման խօսքով:

Օրուան բանախօս ընկեր Յակոբ Ճամպագեան, իր հռետորական ճառով պանծացուց օրուան խորհուրդը՝ հայրենասիրական արցունքներ խլելով հայրենակարօտ աչքերէն:

Ներկաներ գիրար կը շնորհաւորէին տաք համբոյրներով: Երիտասարդներ հայկական պարերով եւ յեղափոխական երգերով կը թնդացնէին մթնոլորտը: Երէջներ՝ փառք կու տային Աստուծոյ, որ իրենց կենդանութեան բախտըն ունեցան տեսնելու իրենց կեանքին ամենաերջանիկ օրը: Ուրիշներ՝ գիրար կը շօշափէին փաստելու համար, թէ եղածը երազ է, թէ՛ իրականութիւն:

Երիտասարդներ եւ տարեցներ գիրար շալկած պարահարթակին վրայ, բարձր բռնած հայկական եռագոյնը եւ դաշնակցութեան դրօշները մշտաբորբօք խայտանքներով կը ցնծային: Հայաշունչ եւ ազգանուէր համանուագով մը գինովցած էին ներկաները:

Հայոց պատմութեան այս պատմական թուականը ողջունող խօսքով հանդէս եկան Հ.Յ.Դ. Գանատայի Երիտասարդական Միութեան, Հ.Յ.Դ. Գանատայի Պատանեկան Միութեան, Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէի ղեկավարները, Հ.Օ.Մ.ի, Համագգայինի ներկայացուցիչները եւ ուրիշներ:

Մթնոլորտը աւելի խանդավառեց, Գանատայի պետական պատուիրակութեան հետ որպէս դիտող Հայաստան գտնուող ընկեր Վազգէն Թերզեանի հեռաձայնային տեղեկութիւնները, զոր բարձրախօսով ձայնասփռուեցան ներկայ ժողովուրդին, ուր ընկերը մանրամասն տեղեկութիւններ կու տար

հանրաքուէի արդիւնքներուն շուրջ եւ քուէարկող ժողովուրդին անասան հաւատքին ու կամքին՝ նուաճելու եւ վերականգնելու Հայաստանի ազատ ու անկախ պետականութիւնը:

Ընկերը, այս առթիւ հայրենի ժողովուրդին խնդակցութիւնն ու շնորհատրութիւնները փոխանցեց Թորոնթոհայտնութեան, ինչպէս նաեւ իր անձնական ողջոյններն ու բարեմաղթութիւնները:

Հակառակ օրուան Կիրակի ըլլալուն, ներկայ ժողովուրդը չէր ուզեր բաժնուիլ աննկարագրելի միջնորոտէն: Հանդէս եկաւ նաեւ երգիչ Ստեփան Իսկէնտէրեան իր նոր երգերով, ինչպէս նաեւ արուեստագէտ եւ դասական երգիչ Գրիգոր Ճանկէօզեան՝ ընդառաջելով ներկայացուած խնդրանքներուն:

Տօնախմբութիւնը շարունակուեցաւ մինչեւ առաւօտեան ժամը 1: Ժողովուրդը տուն վերադարձաւ այն խոր հաւատքով եւ յոյսով, որ այլեւս իրականութիւն է դարձած տեսիլքը:

Ծագեց արեւ ազատութեան
Միերն ելաւ քարանձաւէն,
Հայաստանի անկախութեան
Ողջո՛յն, ողջո՛յն՝ սրտիս խորէն:

«ՀՈՐԻՉՈՆ»
1991

**ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՅԵԱԼԸ
ԵՒ ՆԵՐԿԱՅԻ ԴԵՐՈՂ՝ ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ
ՓՈԽ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

Կազմակերպութեամբ Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգաբարձութեան ու Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Վարչութեան, հիւրաբար Թորոնթո գտնուող Պարսկաստանի Իրանա-Հնդկաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Կորիւն Ս. Արք. Պապեան, Երեքշաբթի, 22 Սեպտեմբեր 1992, երեկոյեան ժամը 8:30ին, եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ, շուրջ 200 ազգայիններու հետ հանդիպում-գրոյցի մը ընթացքին խօսեցաւ «Իրանահայութեան պատմական անցեալին եւ ներկայի դերին՝ Իրան-Հայաստան փոխ ազգայիններու հետ հանդիպում-գրոյցի մը ընթացքին խօսեցաւ «Իրանահայութեան պատմական անցեալին եւ ներկայի դերին՝ Իրան-Հայաստան փոխ-յարաբերութեան մէջ», որուն շահեկանութեան համար կու տանք ամփոփումը:

Թիւր կարծիք կայ, որ պարսկահայ գաղութը կեանքի է կոչուել Շահ Աբասեան գաղթականութեամբ: Մեծաւ մասամբ թիւրիմացութիւն կայ, այն իմաստով որ, ամէն ինչ Շահ Աբասով սկսեց Պարսկաստանում: 2600 տարուայ անցեալ ունի պարսկահայ գաղութը: Մենք պատմական տեղեկութիւններ ունենք Փաւստոս Բիւզանդից սկսեալ, թէ ինչպէս Դ. դարում զանգուածային արտագաղթեր են տեղի ունեցել Հայաստանից դէպի Պարսկաստան: Որպէս գերի տարուած են շատեր, ստրկավաճառանոցների վրայ վաճառուած, ուրիշներ վաճառականական նպատակներով Պարսկաստան եկած են: Յետագային տեսնում ենք գաղութներ Պարսկաստանում: Ես իմ ուսումնասիրութեան մէջ մեծ հետաքրքրութեամբ կարդացած եմ Զեբիոս Եպիսկոպոս պատմիչի այն տեղեկութիւնը, որ է. դարում 610-ական թուականներին, Սմբատ Բագրատունի մեր յայտնի նախարարը, որ Պարսկաստանի Խոսրով արքայից-արքայի ժամանակ եղել է կրկանաց աշխարհի մէջ: Հոն մենք ունեցել ենք հայ մարզպան: Է. դարու առաջին տասնամեակներին եղել են հայկական գաղութներ, 11րդ եւ 12րդ դարերում եղել են զանգուածային ներկայութիւն: Սիւլէյմանիէ շրջանը, Սելճուքեան արշաւանքների շրջանին վանքեր են եղել, հայ եպիսկոպոսներ են եղել՝ 11րդ եւ 12րդ դարուն, նախքան Շահ Աբասեան մեծ գաղթականութիւնը: Իսկ հայ եպիսկոպոսները մասնակցել են մեր եկեղեցւոյ ընդհանուր ժողովներին:

Բայց, կազմաւորուած ձեւով հայկական գաղութների պատմութիւնը սկսում է Շահ Աբասեան գաղթականութեամբ, ձեզի ծանօթ թուրք-պարսկական մեծ պատերազմին որպէս արդիւնք: Երբ Շահ Աբաս իր հօրը վրէժը լուծելու համար հայկական բանակներով քալեց Թուրքիոյ վրայ: Անցաւ Արաքս գետը եւ մտաւ Զուղա, ուր երեք օր երեք գիշեր, անուանի վաճառական Խոճա Խաչիկի տան մէջ հիւրասիրուեց: Արաքս գետի ափին մինչեւ Խոճա Խաչիկի տունը փոռուած գորգերի վրայով ընդունուեց Շահ Աբաս: Այնտեղ խոճանների գլխաւորը Խաչիկը, հսկայ սկուտեղի վրայ ադամանդներ, գոհարեղէններ եւ

ոսկեղէններ շարուած ընծայ բերաւ Շահ Աբասին: Ապա, այլ նշանաւոր խոճաներ, հերթականօրէն իրենց վաճառականի կարողութիւններով իրենց մարգարիտները, ադամանդներն ու ոսկիները բերին եւ նուիրեցին Շահ Աբասին: Սակայն, իրենց այդ նուէրները մեր դժբախտութեան պատճառ հանդիսացան:

Շահ Աբասը տեսաւ, թէ ինչպիսի հարստութիւն կուտակուած է հին Ջուղայում եւ այս ոսկերիչ-արծաթագործ հնարամիտ արհեստաւորները եւ վաճառականները, միջազգային վաճառականութիւնը իրենց ձեռքին մէջ առել էին: Հենց այնտեղ որոշեց, որ այս թանկագին եւ սքանչելի ժողովուրդը չէր կարելի այստեղ թողնել: Յետագային, հսկայ բանակներով մինչեւ Երեւան հասաւ, գրաւեց Երեւանի բերդը, որ այն ժամանակ թուրքերի տիրապետութեան տակ էր: Ան գրաւեց Արեւմտեան Հայաստանի կարեւոր մէկ մասը ինչպէս նաեւ Արեւելեան Հայաստանը: Սակայն, Սուլթանը հսկայական բանակներով իր մէկ զօրավարը դրկեց Շահ Աբասի դէմ:

Շահ Աբաս նահանջեց եւ երբ Պարսկաստանի սահմաններին մօտենում էր. չուզեց այս մեծ աւարը, մարդկային իմաստուն հարստութիւնը թուրքերի ձեռքը թողնել: Իր ետեւը այրուած անդաստաններ թողնելով, արմատախիլ արեց ամբողջ Արեւելեան Հայաստանը եւ մասամբ Արեւմտեան Հայաստանը՝ մինչեւ Տարօնի աշխարհը, Բասէնը, եւ այլն: Չարմահալցիները գիտեն ասիկա, անոնց նախահայրերը եկել են Տարօնից եւ Բասէնից: Արարատեան աշխարհից եւ տարբեր շրջաններից 300-400 հազար ժողովուրդ նախիրի նման քշուեց դէպի Արաքս գետ, որոնցից 50-100 հազար խեղդամահ եղան: Մնացեալները անցան եւ հասան Թաւրիզ: Յետոյ, գարունը որ բացուեց, ամբողջ այդ ժողովուրդը բերուեց Սաֆարիների մայրաքաղաքը՝ Սպահան: Հին Ջուղայեցիներին հաստատեց քաղաքին մէջ, որպէսզի այնտեղ վաճառականութիւնը զարգացնեն:

Մի տարի յետոյ, Հայաստանի սարերից, բարձրաւանդակներից եկած ժողովուրդը, նախընտրեց աստիճանաբար գնալ եւ ապրել Պախթիարի եւ Չարմահալի սարերը:

Սկսում էր Նոր Ջուղայի պատմութիւնը: 17րդ դարը Սպահանի եւ Նոր Ջուղայի հայութեան ոսկեդարը կարելի է համարել: Շահ Աբաս հայերին տուեց վաճառականական բացառիկ իրաւունքներ: Արքայական հրովարտակով յայտարարեց, թէ նրանք դէպի Արեւելք եւ Արեւմուտք շարունակեն այդ վաճառականութիւնը եւ սահմանները անցնելիս տուրքէ գերծ կացուցանելով նրանց, երկու երեք տասնամեակի ընթացքին Սպահանի Չայանտրուտ գետի ափին հիմնուեց հայկական գիւղաքաղաքը՝ Նոր Ջուղան: Կառուցուեցին հայկական եկեղեցիներ եւ մի քանի տասնամեակի ընթացքին առասպելական հարստութիւն դիզուեց Նոր Ջուղայում: Հայ նշանաւոր վաճառականները ոչ միայն իրենց պալատները կառուցեցին Նոր Ջուղայում, այլեւ լցրին արքայական գանձարանը՝ անհուն եւ անսահման հարստութիւններով:

Սարհատեան եօթը եղբայրները Չահատրուտ գետի ափին ունէին չըքնաղագոյն պալատներից մէկը: Սարհատեան եղբայրների գլխաւորութեամբ եւ Նոր Ջուղայի յայտնի վաճառականների մասնակցութեամբ սարքուեց այն ադամանդակուռ գահը, որ Ջուղայեցի հայ վաճառականները 17րդ դարու վերջաւորութեան նուիրեցին ռուսոց Ալեքսիէս կայսեր, եւ դրա փոխարէն ստա-

ցան մենաշնորհը ամբողջ Ռուսաստանի տարածքով մետաքսը առանց մաքսի ներածելու:

Անոնք իմանում էին ինչ են անում: Եւ այնուհետեւ, փոքրիկ իշխանութիւններ հիմնեցին Ռուսաստանի մէջ: Հսկայական նահանգներ իրենց վանքերով պատկանում էին ջուղայեցիներուն: Այսօր այդ գահը գտնուում է Քրեմլինի զինուորական թանգարանում եւ ամէն անոնք, որոնք առիթն ունին հոն այցելելու, պիտի տեսնեն գահի վրայի արձանագրութիւնը. «Նուէր հայ ջուղայեցի վաճառականներից՝ ռուսաց կայսեր»:

Ջուղայեցի վաճառականները ունեցած են Առեւտուրի Պալատ, Վաճառականական դպրոց եւ դատարան: Ամբողջ Պարսկաստանի մետաքսի ներածումըն ու արտածումը իրենց ձեռքն եղել է, այն աստիճան, որ Անգլիոյ խորհրդարանը որոշել է East India Companyի կողմէ չորս հոգու Նոր Ջուղա ուղարկել, որպէսզի վաճառականական գաղտնիքներն ու արուեստը սորվին ջուղայեցիներին:

Նոր Ջուղայի մէջ կառուցուեցան փառաւոր եկեղեցիներ: Ս. Ամենափրկչական վանքը ունեցաւ իր աստուածաբանական ակադեմիան: Խաչատուր Վրդ. Կեսարացու ջանքերով հիմնուեց ոչ միայն Պարսկաստանի, այլեւ ամբողջ Միջին Արեւելքի՝ ներառեալ Օսմանեան Կայսրութիւնը՝ առաջին տպարանը, Ս. Ամենափրկչական վանքի շրջափակին մէջ: Վանականները իրենց ձեռքով կառուցեցին տպարանի գործիքը, կաղապարները, ձուլեցին տառերը: Տպարանը հիմնուեցաւ 1636 թուին եւ 1638 թուին Սաղմոսարանի առաջին գիրքը տպուեց:

Այդ բոլորը փառքի շրջան էին: Յետագային Աֆղանները յարձակեցին եւ աւերեցին ու թալանեցին Սպահանն ու Նոր Ջուղան, որի հետեւանքով գաղթականութիւններ տեղի ունեցան դէպի Մայրագոյն Արեւելք Ռուսաստան: Ռուսաստանի մէջ գտնուող յայտնի վաճառականներից Նոր Ջուղայի Լազարեան ընտանիքի միջոցաւ հիմնուեց Մոսկուայի Լազարեան ձեմարանը: Անոնք յայտնի գորավարներ տուին ռուսական բանակին: Հռչակաւոր գորավար Լազարովները, որոնք փառքի պսակներ ապահովեցին ռուսական կայսրութեան համար:

Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը՝ Վենետիկ եւ Սելը, Մուրատ եւ Ռաֆայէլ երկու նոր ջուղայեցի կաթոլիկացած փեսայի ու աներ նուիրատուութիւնն է:

Աֆղանիստանի մայրաքաղաք Քապուլի մէջ 1890-ական թուականներին գոյութիւն ունեցած է հայկական եկեղեցի, որ շինուած է Նատիր Շահի հետ ճանապարհ ինկած եւ Քապուլ հաստատուած հայ զինուորների կողմից: Առաջին անգամ Աստուածաշունչը չինարէնի թարգմանողը մի ջուղայեցի հայ է եղել:

Ներկայիս Նոր Ջուղայում 13 եկեղեցիներ գործում են: Փոքրիկ մէկ տարածքի վրայ կանգնած է Ամենափրկչական վանքը՝ իր տպարանով, թանգարանով, ձեռագրատունով եւ մատենադարանով:

Դուք գիտէք, որ Պարսկաստանը այժմ ունի երեք թեմեր: Պատմականօրէն Իրանա-Հնդկաստանի թեմը բացի Ատրպատականից, լրիւ Պարսկաստանը

Նոր Զուղայի Առաջնորդարանի կողմից էր կառավարվում, ինչպես նաև Հնդկաստանը եւ Մայրագոյն Արեւելքը:

Ներկայիս, 1946ից, Երկրորդ Համաշխարհային պատերազմից յետոյ, երբ ամբողջ գաւառի հայութիւնը Թեհրան կեդրոնացաւ, հաստատուեց Թեհրանի Առաջնորդարանը՝ 1960 թուից: Ունինք նաև Ատրպատականի թեմը, որի աթոռանիստը 70-80 տարիներ առաջ Ս. Թադէի վանքն էր, իսկ ներկայիս Թաւրիզը, ուր գտնուում է Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդարանը:

Ներկայիս երեք թեմեր եւ երեք առաջնորդութիւններ գոյութիւն ունին Պարսկաստանի մէջ՝ երեք թեմական առաջնորդներով:

Յեղափոխութիւն տեղի ունեցաւ Պարսկաստանի մէջ: Իսլամական վարչակարգը որոշ կենցաղային օրէնքներ պարտադրեց ժողովուրդին: Պարսկաստանի համար դժուար կացութիւն ստեղծեց Իրան-Իրաք պատերազմը: Ամբողջ ութը տարիներ երկու հզօր երկիրներ բախեցին իրար: Սահմանների վրայ միայն զինուորներն էին պատերազմում, սակայն երբ պատերազմը փոխադրուեցաւ քաղաքներ, ուղղակի օդային ուժակոծութիւնները սկսան, որոնց յաջորդեցին միջ-ցամաքային հրթիռներով ուժակոծութիւնները քաղաքներու վրայ, լուրջ տագնապներ յառաջացան երկրին մէջ:

Յեղափոխութենէն յետոյ, հայութեան մէջ բազմաթիւ դրական երեւոյթներ յառաջ եկան: Հայութիւնը դէպի իր արմատները վերադարձ կատարեց, քաղքենիական բարքերը վերացան: Եւրոպական, Արեւմտեան բարքեր, որոնք Շահի վարչակարգի ժամանակ արագ թափանցած էին հայ իրականութիւնից ներս, դրանք քիչ-քիչ արդէն յետ կոչուեցին:

Անշուշտ կրթական լուրջ դժուարութիւններ ունեցանք, սակայն ներկայիս կենսունակ գաղութ է իրանահայութիւնը: Թեհրանի մէջ մենք ունենք Մարգական Արարատ կազմակերպութիւնը, որի նմանը չունենք աշխարհի մէջ: Նման հաւաքավայր մը հայ համայնքի համար իրապէս պատուաբեր է իր փառաւոր Ֆութպոլի դաշտերով, լողաւազաններով, թենիսի դաշտերով, փակ սրահներով, որոնք տասը հազար հանդիսատես կրնան ընդունիլ:

Ունենք 35 դպրոցներ Թեհրանում, Միութենական կեանքը շատ ուժեղ է: Ամէն տարի ուխտագնացութիւն կազմակերպւում է դէպի Թադէի վանքը: Ունենք համահայկական մարզական խաղեր, որոնց կը մասնակցեն 2600 մարզիկ-մարզիկուհիներ՝ Իրանի տարբեր շրջաններից: Իսկապէս մարզական փառատօն, որ մի քիչ յիշեցնում է Հալէպի մէջ նախկինում տեղի ունեցող միջմասնաճիւղային մրցումները՝ մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն եւ մարզիկներուն:

Զուղայում, մենք արդէն հինգերորդ տարին է ունենք Գարնանային Մրցումներ: Ուրեմն, գարնան արձակուրդի օրերին մէկ շաբաթ ամբողջ Նովորուզի տօնական օրերին, իրանահայութեան զանազան գաղութներից գալիս են Նոր Զուղան դարձնելով հայաշունչ եւ հայատրոփ քաղաքի՝ մարզական խաղերով եւ մշակութային ձեռնարկներով: Այս բոլորը պատճառ եղաւ, որ մենք մեր թատերական խումբերը ունենանք, մեր երգչախումբերին աւելի կարելուութիւն տանք, եւ, ստեղծուի միութենական կենսունակութիւն:

1988-89 թուականներին Խորհրդային Միութիւնը սկսեց քայքայուել: Նոր հնարաւորութիւններ ստեղծուեցին Հայաստանի եւ Պարսկաստանի միջեւ

յարաբերութիւնները համար: Դուք գիտէք, նախկինում, Շահի շրջանին՝ այն կողմ կոմունիզմ էր, այս կողմ՝ ամերիկեան ազդեցութեան տակ գտնուող Պարսկաստանն էր: Ուղղակի յարաբերութիւններ՝ մշակութային, մարզական եւ քաղաքական չէին քաջալերուած: Շահի վարչակարգի օրով երկու գերութերն էին իրարու դէմ-դիմաց կանգնած:

Իրագործուեց մեր բոլորի երազը՝ անցնող 3-4 տարիները ընթացքում հանգրուանային ձեւով Հայաստանը եւս դուրս եկաւ Խորհրդային Միութեան այդ ստրկացուցիչ վարչակարգից եւ մինչեւ վերջնական անկախութեան յայտարարութիւնը, «Այո»ն, զոր տօնեցինք 21 Սեպտեմբերին, արդէն իրանահայութեան եւ Պարսկաստանի միջեւ սկսել էին կապեր հաստատուել: Օրինակի համար, 2-3 տարի առաջ Ասիական կոչուող ինչ որ հայկական մի ընկերութիւն կեանքի կոչուեց: Հայ դրամատէրեր, բաժնետէրեր քով-քովի եկան եւ Հայաստանի հետ վաճառականական կապեր ստեղծելու տեսակէտից, տնտեսական այս յարաբերութիւնները գծով ուսումնասիրական աշխատանք կատարեցին եւ առաջ գնացին:

Երբ Խորհրդային Միութիւնը իրապէս քայքայուեց, Պարսկաստանի կառավարութիւնն եւս յստակացրեց իր քաղաքականութիւնը եւ առիթ ստեղծուեց ուղղակի Հայաստանի հետ քաղաքական կապեր հաստատել:

Նախքան Հայաստանի վերջնական անկախացումը, արդէն իսկ մշակութային կապել ստեղծուել էին Պարսկաստանի եւ Հայաստանի միջեւ: Օրինակի համար, Երեւանի քաղաքապետը արդէն եկել է Պարսկաստան եւ Սպահան քաղաքն ու Երեւանը քոյր քաղաքներ էին յայտարարուած: Մշակութային կապերու կողքին, կրթական կապեր էին ստեղծուում: Երբ որ Հայաստան վերջնական կերպով անկախացաւ, առաջին աշխատանքն որ կատարուեց, հաստատուեց միջազգային հեռախօսի կապը Հայաստանի եւ Պարսկաստանի միջեւ: Այնուհետեւ օդային կամուրջը՝ Երեւան-Թեհրան ուղղակի օդային թռիչքները, որոնց յաջորդեց, որ տարիներից ի վեր խօսուում էր այդ մասին, հաստատուեց Մեղրի Արաքս գետի կամուրջը, որ Պարսկաստանը կը միացնէ Զանգեզուրին:

Բոլորս ալ գիտենք, թէ Հայաստանը այսօր ինչ ահաւոր շրջափակումի մէջ է, եւ, ատոր հետեւանքով Հայաստանի մէջ ստեղծուել է տնտեսական տագնապ: Ուժանիւթի եւ վառելանիւթի չզոյութեան հետեւանքով Հայաստան անցուցած է դժոխային երկու ձմեռներ: Լուծ են մեր բաւական յառաջացած ճարտարարուեստը: Այն միջոցները, որոնք Հայաստանի համար չէին, ամբողջ Խորհրդային Միութեան համար էին, ինչպէս Մեծամորի հիւլէական ելեկտրական կայանը, բազմաթիւ այլ ելեկտրական կայաններ:

Երկու-երեք մասնագիտական յանձնախումբեր Պարսկաստանից գործողուեցին Հայաստան՝ ուսումնասիրելու համար Հայաստանի ճարտարարուեստական կարողութիւնը եւ արձանագրած յառաջդիմութիւնները այլազան բնագաւառների մէջ, Պարսկաստանի հետ համագործակցութիւն անելու մըտադրութեամբ: Եւ այս ուսումնասիրութիւնների արդիւնքը պարսկական մամուլի մէջ լոյս տեսաւ եւ տեսանք, թէ ինչպիսի հնարաւորութիւններ Հայաստանի մէջ գոյութիւն ունեն Պարսկաստանի հետ համագործակցելու համար:

Բայց Հայաստանը գտնուում է տնտեսական եւ քաղաքական շրջափակումի մէջ: Եւ այս պայմանների հետեւանքով, միջազգային գերութերը, յատ-

կապէս Ամերիկայի գլխաւորութեամբ, Հայաստանի ղեկավարութիւնը հրում են դէպի Թուրքիայի գիրկը: Ուզում են բարի դրացիութիւն անել Թուրքիոյ հետ, որպէսզի հայկական ցեղասպանութիւնը եւ պահանջատիրութիւնը աստիճանաբար վերցուի: Նրանք ուզում էին, որ Հայաստան բարի դրացիութիւն ստեղծէ այն երկիրներին հետ, որոնք հովանաւորում են ՆԱԹՕ-ի եւ Արեւմուտեան ուժերի կողմից:

Հայաստանը բարեկամների պէտք ունի: Աջի եւ ձախի խնդիր գոյութիւն չունի: Պատերազմի ժամանակ էլ վաճառականութիւն են անում իրարու հետ պատերազմող ժողովուրդները:

Պարսկաստանը հետաքրքրուած է Միջազգային առեւտուրի նոր ուղիներ որոնելով: Պարսկաստան կ'ուզէ Թուրքիայի եւ Ամերիկայի ազդեցութեան գօտիներից դուրս գալ, որովհետեւ իր սնունդը մեծաւ մասամբ Եւրոպայից Թուրքիայի վրայից գալիս է: Հարիւրաւոր ծանր բեռնակառքեր ամէն օր Պազարկանից, որ Թուրքիոյ եւ Պարսկաստանի սահմանն է, կը մտնեն Պարսկաստան: Պարսկաստանը որոնում է նոր ճանապարհներ՝ Եւրոպայի հետ հաղորդակցելու համար: Միջազգային առեւտուր ընելու, եւ, յատկապէս իր ազգային հարստութիւնը՝ բնական կապը, որ վառւում է տներում, միջազգային շուկաներ հասցնելու համար:

Թեհրանում կատարուած ուսումնասիրութիւն մը ցոյց է տալիս, որ 800 քիլոմեթրով կարճանում է դէպի Եւրոպա Պարսկաստանը կապող միջազգային առեւտուրի ճանապարհը՝ եթէ դա Մեղրու վրայով Հայաստանի եւ Վրաստանի միջով եւ Սեւ Մովի գծով կատարուի Եւրոպայի հետ: Բաց մէկ դուռ է Հայաստանը Պարսկաստանի համար՝ միջազգային առեւտուր կատարելու համար: Պարսկաստան նաեւ հետաքրքրուած է կայուն վարչակարգեր ունենալու իր շրջապատին մէջ:

Մենք շատ լաւ գիտենք, որ բազմադարեան մրցակցութիւն գոյութիւն ունի Թուրքիոյ եւ Պարսկաստանի միջեւ: Դարեր շարունակ, 15րդ դարից ըսկըսեալ, 1450-ական թուականներից սկսեալ երկու հզօր կայսրութիւններ ինչպէս ատում են իրարու: Բայց եւ այնպէս հարկ է որ ապրեն իրարու հետ, վաճառականութիւն եւ առեւտուր պէտք է անեն իրարու հետ:

Գալով Հայաստանի, կացութիւնը ներկայիս շատ յուսահատական է: Բարեկամներ շատ քիչ ունենք Արեւմուտքի մէջ: Անգլիա էի գտնում մէկուկէս ամիս առաջ: Հայ Դատի Յանձնախումբը եւ Լէյտի Քարոլայլ Քոքս Անգըլիոյ արտաքին նախարարութիւն էին զնացել Արցախի խնդրով խօսելու: Երկու ժամ խօսելուց յետոյ, նա ասել է. «Ես գիտէի երկու ամիս առաջ այն ինչ որ նոր կարգացինք մամուլում: Պաքուի նաւթի արդիւնաբերութեան բոլոր սարքուածքների վերանորոգման, վերադասաւորման, վերակազմակերպման պայմանագրութիւնը British Petroleumի հետ Ատրպէյճան արդէն ստորագրած է: Դուք ինչ ունէք հայերը մեզի տալիք»: Արդէն Ամերիկա ներկայիս հետաքրքրուած է Թուրքիան ծառայեցնի, որպէսզի թրքական օրինակով, աշխարհիկ, ոչ-կրօնական, ոչ Իրանի Իսլամական Հանրապետութեան նկարագրով վարչակարգեր ստեղծի մինչեւ Կեդրոնական Ասիա: Ամերիկա նաեւ հետաքրքրուած է Թուրքիայի ճանապարհով թրքալեզու այդ ժողովուրդների մօտենալ:

Իսկ Թուրքիա, փանթուրանիզմի ծանօթ 100 տարի աւելի անցեալ ունեցող ծրագրով, որի գոհ գնաց Արեւմտեան Հայաստանի հայութիւնը: 75 տարուց աւելի քնելուց յետոյ, այդ ծրագիրը աւելի քան երբեք այս օրերին Թուրքիայի համար իրականութիւն է դարձել: Պէտք է Սիւնիքը, Ղափանը, Մեղրի շրջանը ամբողջութեամբ գրաւուի եւ Ատրպէյճանի միանայ, որպէսզի Ատրպէյճանը կապ ունենայ Թուրքիայի հետ եւ փանթուրանիզմի ծրագիրը եւ երազները իրականանան:

Այսպէս, Հայաստանը դրացի ունի նաեւ Վրաստանը, որ իր հերթին գիտէ, թէ Ախալքալաքը եւ այլ շրջանները Հայաստանին կը պատկանին: Այս օրերին վրացիները ազերիների չափ ճնշում են բանեցնում հայերի վրայ Վրաստանի մէջ, որոնք նախկին հայկական հողամասեր են: Իսկ վերջին տեղեկութիւնների համաձայն, երբ գրանցումներ են կատարուել, թէ ովքեր վրացի եւ ովքեր՝ հայ, շուրջ 30 հազար հայեր որպէս իրենց վրացի են գրանցել, որպէսզի սեփականատէր դառնան հողերու եւ կալուածներու:

Ինչպէս տեսնում էք, վրացիներին էլ շատ յոյս պէտք չէ ունենանք: Ուր պէտք է դնենք մեր յոյսը: Երկիր մը, որ քաղաքական պահանջատիրութիւն չունի: Հողային, սահմանային հարց չունի: Այդ Իրանն է, որ ունի քաղաքական իր հետաքրքրութիւնները եւ շահերը: Մենք եւս ունենք մեր շահերը: Իրանը մեծապէս հետաքրքրուած է Հայաստան մուտք գործելով:

Այսօր Հայաստանի մէջ 300 հազար հայեր կան, որոնք այս կամ այն ձեւով Իրանի հետ ազգականական կապակցութիւններ ունեցող հարազատներ ունեն: Վերջին 70 տարիների ընթացքում, բազմահազար իրանահայեր ներգաղթած կամ այցելած են Հայաստան: Հիմա մեծ հնարաւորութիւններ գոյութիւն ունեն Իրանի եւ Հայաստանի միջեւ տնտեսական կապեր ստեղծելու համար: Իրանը այն երկիրն է, որ ունի այն ամէնը, որ Հայաստան աւելի քան երբեք պէտք ունի: Այսինքն՝ նախ: Ուժանիւթի խնդիրը եթէ մենք կարողանանք լուծել, շատ բան ինքնին լուծուած կ'ըլլայ: Նախ մենք պէտք է Հայաստանի մէջ մեր տնտեսական հարցերը լուծենք: Ազատութիւնը շատ լաւ բան է: Անկախութիւնը շատ լաւ բան է: Բայց եւ այնպէս նախ ստամոքսները պէտք է լեցնել եւ պէտք է մանուկը տաքանայ: Պէտք է հիմնական հարցերը լուծուին Հայաստանի մէջ, եւ դրա նախապայմանը ուժանիւթի եւ վառելանիւթի հարցերն են: Եւ այս գծով է որ իրանահայութեան սքանչելի առիթը տրուած է: Սրբազան եւ պատմական առաքելութիւնը հիմա տրուած է իրանահայութեան: Շատ դժուար է ոսկիէ կամ ուրջ լինել Հայաստանի եւ Պարսկաստանի միջեւ: Երբ ներկայիս Իսլամական Հանրապետութիւնը մեծապէս քաջայերուած է թէ քաղաքական եւ թէ հոգեւոր ղեկավարութիւնը Պարսկաստանի, որ այդ կապերը սերտացնէ եւ այդ պարտականութիւնը հայ համայնքի ճիգերով իրականացւին: Մեծ աշխատանք կայ կատարելիք իրանահայութեան կողմից: Ասում են լաւ հարեւանը հարիւր ազամ աւելի կարեւոր է, քան թէ հեռու բնակող հարազատ եղբայրդ կամ ազգականդ: Մենք միասին ապրում ենք, հարեւաններ ենք: Մենք ամէնօրեայ դրկիցներ ենք, եւ ուրախութեամբ լսեցի վերջերս, որ Քաջարանի յայտնի պղինձի հանքերից հանուած հումքը արդէն մտել է Պարսկաստան: Եւ տակաւին, բազմաթիւ միացեալ ծրագիրներ՝ Պարսկաստանի եւ Հա-

յաստանի կառավարութիւնները միջեւ կարելի է մշակել եւ այդ ձեւով հաւասարապէս օգտուեն երկու երկիրներն էլ:

70 տարիներ երազեցինք Հայաստանի անկախութիւնը: Հիմա իրականացած է: Ժամանակը եկած է մեր նիւթական եւ բարոյական օգնութիւնը բերելու, որպէսզի կարողանանք իսկապէս Սփիւռք եւ Հայրենիք ձեռք-ձեռքի տուած աշխատել տնտեսապէս հզօր եւ քաղաքականապէս ազատ ու պայծառ ապագայով մեր հայրենիքը կերտենք:

«ՅՈՐԻՉՈՆ»
1992

«ԱՌՐԱԹԱՈՒՆԻ ՏՂԱՔ»Ը ԿԸ ՊԱՏՈՒՈՒԻՆ

Հայ Դատի Թորոնթոյի յանձնախումբը, 1985ին սկսեալ ձեռնարկած է տարեկան յատուկ ճաշկերոյթով եւ յուշանուէրով պատուելու ականաւոր Գանատացի մը: Այսպէս, 1985ին պատուուեցաւ ՄԱԿի Գանատայի դեսպան Սթիֆըն Լըուիս, 1986ին՝ նախարար եւ այժմ վարչապետ Ժան Գրեթիէն, 1987ին՝ Օնթարիոյի վարչապետ Ուիլիըմ Տէյվիս, 1988ին՝ Գանատայի ինքնաշարժներու բանուորներու արհմիութեան պետ Ռապըրթ Ուայթ, 1989ին՝ Գանատացի նշանաւոր գրող Մարկրիթ Աթոուտ, 1990ին՝ Օնթարիոյի կառավարիչ Լինքոլն Ալեքսանտր, 1991ին՝ հեռատեսիլի խօսնակ եւ քաղաքական լուրերու մեկնաբան Նոլթըն Նաշ, 1993ին՝ Գանատացի առաջին կին աստղանաւորդ դոկտ. Ռոպերթա Պոնտար:

1995ը Հայոց Մեծ Եղեռնի 80-ամեակը ըլլալով, Թորոնթոյի Հայ Դատի յանձնախումբը պատուեց Ճորճթաունի տղաքը (Georgetown Boys), որպէս ականաւոր Գանատացիներ, որոնք 1915ին, Թուրքիոյ կողմէ Հայ ժողովուրդի հանդէպ գործադրուած ցեղասպանութեան եւ աքսորի հետեւանքով որբացած են, ականատես ըլլալով իրենց ծնողներուն տառապանքին եւ սպանութեան ու իրենց կարգին ապրելով սարսափելի օրեր, անցնելով աքսորի մահաբոյր ճամբաներէ, ճաշակելով Սուրիոյ անապատներուն դառն ու արիւնածոր համը:

Ճորճթաունի տղաքը՝ հարիւրեակ մը հայ որբեր են, որոնք Թորոնթո փոխադրուեցան 1923ին: Յունաստանի Գորֆուի որբանոցի այս որբերէն 50 հոգի, 8-10 տարեկան, Թորոնթո բերուեցան Լեոն Պապայեանի գլխաւորութեամբ ու այլ հայերու եւ բարեսէր Գանատացիներու կողմէ կազմուած The Armenian Relief Associationի միջոցաւ: Բուն նախաձեռնողը եղած է դոկտ. Ուայնինկ, որ 1922ին, Լեոն Պապայեանի եւ այլ հայերու թելադրած է ստանձնել հայ որբերու հոգատարութիւնը եւ ան ընկերակցութեան կազմութենէն ետք, անձամբ Գանատա փոխադրած է որբերը եւ իր կարգին զբաղած է անոնց տեղաւորման աշխատանքներով եւ գանատական իշխանութեանց ու հասարակութեան մօտ կատարած անհրաժեշտ դիմումներով:

Այս 50 որբերը գետեղուեցան Թորոնթոյէն 35 մղոն հեռաւորութեան վրայ գտնուող Ճորճթաուն գիւղաքաղաքի ընդարձակ մէկ ագարակը, որ այդ ընկերակցութեան կողմէ գնուած էր 23 հազար տոլարի: Յետոյ, երկու անգամով, Թորոնթո փոխադրուեցան 50 որբեր եւս (նախ 40, ետքը՝ 10) եւ այսպէսով, որբերու թիւը բարձրացաւ հարիւրի:

Այս որբերը 3-4 տարի խնամուեցան յիշեալ ընկերութեան կողմէ, բարեսէր Գանատացիներու նուիրատուութիւններով: Ընկերակցութիւնը, սակայն, ձեռնթափ եղաւ 1926ի կէսերուն եւ որբերը յանձնեց United Church Social Work Departmentին, որուն փոխանցուեցաւ նաեւ ագարակին սեփականատիրութիւնը: Այս հաստատութիւնը որբերը խնամեց մէկուկէս տարի եւ ապա ցրուեց զանոնք, իսկ ագարակը սկսաւ գործել տեղական նպատակներու համար: Յետոյ, ժամանակի ընթացքին ագարակի 230 էյգըր տարածութեամբ հողամասին 180 էյգըրը մաս առ մաս ծախեց զանազաններու, իրեն պահելով 50 էյգըր տարածութիւն մը, ագարակի շէնքերով:

Երբեմնի 100 որբերէն այսօր հազիւ երկու տասնեակ մը կ'ապրին Գանատայի մէջ:

Թորոնթոյի Հայ Դատի յանձնախումբը Կիրակի, 18 Յունիս 1995, կէսօրէ ետք ժամը 5ին, քոքթեյլով, ժամը 6ին՝ ճաշակերոյթով եւ յատուկ յայտագրով, Հայ Կեդրոնին մէջ պատուեց Ճորճթաունի տղաքը՝ որպէս ահանաւոր Գանատացիներ, որոնք 1923էն ի վեր իրենց պարտկէշտ աշխատանքով եւ մասնագիտութեամբ օժանդակած են Գանատայի բարգաւաճումին եւ հզօրացման:

Որպէս «Ահանաւոր Գանատացիներ» Ճորճթաունի տղաքը պատուելով, Հայ Դատի Թորոնթոյի յանձնախումբը պատուած կ'ըլլայ նաեւ Մեծ Եղեռնին նահատակուած մէկուկէս միլիոնէ աւելի հայերը:

Եղեռնի 80-ամեակի առթով լաւագոյն նուէրը մեր անթաղ նահատակներուն եւ մահուընէ ճողոպրած անոնց որբ զաւակներուն, որոնք անհուն չարչարանքով եւ տարապանքով հասակ առին Գանատայի մէջ եւ օգտակար հանդիսացան Մերձաւոր Արեւելքէն այս ափերը ապաստանած հայերուն՝ իրենց փորձառութեամբ եւ տեղացիներուն մօտ անձնական ծանօթութիւններով:

1985էն ի վեր, որպէս «Ահանաւոր Գանատացի» մակդիրով պարգեւատրուած Գանատացի պետական եւ երեւելի անձնաւորութեանց շարքին, այս տարի, Հայ Դատի յանձնախումբի որոշումը՝ պատուելու Ճորճթաունի տղաքը որպէս «Ահանաւոր Գանատացիներ», իրապէս գնահատելի գաղափար մըն էր:

«ՀՈՐԻՉՈՆ»
26 Յունիս 1995

«ՔԵԼԷ ԼԱՕ, ՔԵԼԷ ԷՐԹԱՆՔ ՄՈՐ ԷՐԿԻՐ»

Կազմակերպութեամբ Թորոնթոյի Հայ Օգնութեան Միութեան «Ռուբինա» մասնաճիւղին, Տարօն-Տարուբերանի նուիրուած Տոհմիկ օրուան տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 21 Յունիս 1997, երեկոյեան ժամը 8:30ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ, որուն ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, Հայ Աւետարանական համայնքի հոգեւոր հովիւ Վեր. Եսայի Սարմազեան, Մ. Նահանգներէն, Մոնթրէլայէն, Սենթ Գաթրինգէն, Համիլթընէն եւ Գէմպրիձէն հայրենակիցներ եւ 350է աւելի տարօնցիներ եւ ազգայիններ:

Տոհմիկ օրուան նախագահութիւնը սիրով ստանձնած էին Տ. եւ Տ. Վահէ Թորմաքճեան:

Օրուան հանդիսավար ընկճ. Սիլվա Փայլեանի բարի գալուստի խօսքերէն ետք, բեմ հրաւիրուեցաւ Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, որ այս առիթով ընդգծեց կարեւորութիւնը տոհմիկ օրերու նուիրուած ձեռնարկներու, որպէսզի Հայրենիքէն հազարաւոր քիլոմետր հեռու այս ասիերուն վրայ ապրող հայերը եւ մտղաշ սերունդը հաղորդուին բնաշխարհի բարքերուն, աւանդութիւններուն եւ սովորութիւններուն, պայքարելու համար ուծացումի եւ ձուլումի զօրաւոր հովերուն դէմ:

Հայր սուրբին կողմէ ճաշի սեղաններու օրհնութենէն ետք տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն:

Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» մասնաճիւղի վարչութեան խօսքը փոխանցեց կազմակերպիչ յանձնախումբի ատենապետուհի ընկճ. Հուրի Նաճարեան, որ անդրադառնալէ ետք մասնաճիւղի նախաձեռնութեամբ կատարուող տոհմիկ օրուան, իր շնորհակալութիւնները յայտնեց ձեռնարկի յաջողութեան եւ կազմակերպման օժանդակող անհատներուն եւ յատկապէս նուիրատուներուն, քանի որ ձեռնարկը իր բարոյական եւ ազգային նպատակէն զատ կը հետապնդէր աջակցելու Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ Հայ կեդրոնի պարտքի շիջեցման:

Այս առիթով, Հ.Օ.Մ.ի վարչութիւնը գեղեցիկ գաղափարն ունեցած է յատուկ զնահատանքով պատուելու տոհմիկ օրերու կազմակերպութեան իր գծագրութիւններով եւ գեղանկարչական արուեստով օգնող գեղանկարիչ Յովհաննէս Սեդրակեանը: Ան շաբաթներով, անհատոյց, գծեց Ս. Մեսրոպի, Ս. Վարդանի, Արաբոյի, Սերոբ Աղբիւրի, Գէորգ Չառուչի, Ս. Կարապետ վանքի, Սօսէ մայրիկի, Սասունցի Դաւիթի, Տարօնի Արծիւի եւ այլ տեսարաններ:

Գնահատագիրը արուեստագէտին փոխանցեց Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» մասնաճիւղի ատենապետուհի ընկճ. Արփի Աճէմեան:

Օրուան նախագահ Վահէ Թորմաքճեան հանդիսութենէն բացակայ ըլլալով, զինք կը ներկայացնէր իր աղջիկը, տիկ. Սիլվա Աղամանուկեան, որ իր սրտի խօսքը արտայայտեց այս առիթով:

Սասնոյ բարբառով պատգամ մը կարդաց հօրով-մօրով սասունցի հայրենակից ընկ. Լեւոն Տօնապետեան, որուն յաջողեց տոհմիկ տարազներով ընկեր-ընկերուհիներուն, մէկական մոմ ձեռքերնին դէպի Ս. Կարապետի վանքը ուխտագնացութիւնը: Իրապէս գեղեցիկ եւ տպաւորիչ էր բեմը: Վերը ճակտին՝

Տարօնի Արծիւը, վարը, բեմին վրայ շինուած էր Տարօնի Առաքելոց վանքի դուռը, որ բացուելով, առաջին հերթին երեւան եկաւ Սասունցի Դաւիթը հեծած Զալալին, ձեռքին թուր կեծակին:

Սասունցի Դաւիթէն ետք, դրան մէջ երեւացին հայ Ֆետայիներ՝ Սերոբ Աղբիւր, Գէորգ Զաւուշ, Արաբօ, Սօսէ մայրիկ: Ապա, կրկին դուռը ներսի կողմէն դառնալով՝ երեւան եկաւ Ս. Կարապետ վանքը եւ ուխտաւորները: Իսկ բեմին երկու կողմերը կը գրաւէին Ս. Մեսրոպի եւ Ս. Վարդան Մամիկոնեանի նկարները:

Ծանօթ ասմունքող ընկհ. Թամար Տօնապետեան (սասունցի ծնողքէ սերած), տարօնական տարագով բեմ գալով արտասանեց Գէորգ էմինի «Սասունցիներու Պարը», երեք հատուածներով: Առաջին եւ երկրորդ հատուածներուն, ինչպէս նաեւ ասմունքի վերջաւորութեան, Համագգայինի էրբունի պարահումբէն 4 մանչ եւ 4 աղջիկ հանդէս եկան «Փափուռէ», «Կովընդ» եւ «Շարխուշտէ» պարերով:

Տարօն-Տարուբերանի Տոհմիկ օրուան կազմակերպիչ յանձնախումբը այս առիթով հրատարակած է 40 էջոց գրքոյկ մը, որուն մէջ տպագրուած էին Միամանթոյի «Տարօնի համար» քերթուածը, պատշաճ խօսքեր եւ պատգամներ Առաջնորդ Բարձր. Տ. Մեսրոպ Արք. Աշճեանէն, Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեանէն, Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիբեան» կոմիտէէն, Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» մասնաձեռնէն, Տարօնի քարտէսը, Ս. Կարապետ եւ Ս. Առաքելոց վանքերու, Ս. Առաքելոց վանքի դուռին, Ֆետայիներու եւ այլ նկարներ:

Պատմական ակնարկ Տարօնի՝ Սասունի քարտէսով, Տարօնի երկու ապրտամբուլթիւնները, Հռչակում Համաշխարհային Ա. պատերազմին, Սասնոյ հերոսամարտը, Տարօնի վանքերն ու սրբատեղիները, Մարաթուկի աւանդութիւնները, Տարօնցին, Սասնոյ Բուսակ, Տարօնի ժողովրդական բանահիւսութիւնը, բառարանը եւ այլ գլուխները, Տարօնի երգերով եւ այլ գրութիւններով ամփոփ գաղափար մը կը փոխանցեն տարօնցիի կամ ոեւէ հայուն՝ Տարօնի մասին:

Գրքոյկին մէջ տեղ գտած են նաեւ Թորոնթօ բնակող այն տարօնցիներուն անունները, որոնք ուզեցին իրենց անունները արձանագրուած տեսնել գրքոյկին մէջ, ինչպէս նաեւ «Ի յուշ» անուններու եւ շնորհակցող անուններու ցանկերը:

Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Աշճեան, Տարօն-Տարուբերանի Տոհմիկ օրուան յանձնախումբին ուղղուած իր պատգամին մէջ կը գրէ.

«Տարօրինակ զուգադիպութեամբ մը, մենք յունիսի առաջին շաբաթներուն պիտի ըլլանք պատմական Հայաստանի հողերուն վրայ, եւ թերեւս, հասնինք Տարօն աշխարհ, Մշոյ դաշտ, թերեւս կարենանք անցնիլ Մեղրագետէն եւ Արածանիէն, բարձրանալ Մշոյ Սուլթան Ս. Կարապետ, տեսնել Մարաթուկ սարը, Ծիրին կատար, քալել Առաքելոց վանքի աւերակներուն մէջէն եւ փնտռել Թարգմանչաց գերեզմանները: Տակաւին՝ երազ ունինք անցնիլ Սասնայ լեռներէն, տեսնել Կելեկուզանը, Սեմալը, քալել ու քալել հայոց լեռներուն վրայ, հայոց դաշտերէն ծաղիկ հաւաքել, խաչքարերու փշրանքներ հաւաքել եւ զգալ այն ուժը, որ մեր հայրենի հողը կրնայ տալ մեզի:

«Եւ ատոր համար սիրելիներ, յուզումով է, որ կը գրեմ այս գիրը, չը նորհաւորելու համար ձեզ ձեր մտածումին համար, որով մեր ժողովուրդի գաւակներուն եւ յատկապէս նոր սերունդին համար կ'ուզէք ցոյց տալ եւ ապրեցնել Երկիրը, հայոց աշխարհը, հայոց հողը: Կ'ուզէք որ յատուկ կերպով գնահատուին տարօնի մէջ ծնած հայրենակիցները: Կ'ուզէք որ Տարօնի տոհմիկ երգերը հնչեն այնտեղ, Տարօնէն բերուած մասունքներ ցուցադրուին, ի մի գան Թորոնթոյի հայրենասէր հայուժիւնը հաղորդուի Տարօնի շունչով, Տարօնականութեամբ պիտի ըսէք եւ ինչն՞ ոչ, որովհետեւ Տարօնի աշխարհը Հայաստանի սիրտն է եւ դէպի Տարօն ուղղուած ամէն նայուածք, մեր մէջ կը ծնեցնէ սրբազնութեան զգացում, երկրին համար մեռնելու աննահանջ կամք եւ կը մղէ մեզ մեր ներքին կեանքը կաղապարելու Մամիկոնեանց պատկերով:

«Որքան ճշմարիտ է ան, որ առիթով մը պատգամած էր. "մեր ժողովուրդը, որ կորցրել է հող եւ հայրենասէր մնալու իր հաւատքը: որ աշխարհում այլեւս ելք, կեանքում հացից զատ այլ նպատակ չի տեսնում այսօր, փըրկուել կարող է միայն ճշմարիտ վերանորոգութեան ճամբով. դա Մամիկոնեանների նմանուելու ճամբան է - տարօնականութիւնը -»...

Թող որ Տարօնի տոհմիկ որը ըլլայ թուականը մեր նոր վերածնութեան եւ սկիզբ դէպի մեր վերադարձը մեր հողերուն՝ մեր արեան կանչին ունկընդիր»:

Օրուան երգիչ սասունցի Արթիւր Աբգարեան եւ Արմենիա նուագախումբը բացառիկ յաջողութեամբ, տնդուունայով ճոխացուցին խրախճանքի մասը:

Արթիւրի կողմէ երգուած «Ծագէ արշալոյս» եւ այլ տարօնական երգերը գնահատանքով ընդունուեցան ներկաներէն: Իսկ պարային երգերը եւ եղանակները երիտասարդութիւնը, ինչու չէ նաեւ երէցները միշտ պահեցին պարահարթակին վրայ մինչեւ առաւօտեան ժամը 3:00:

Տեղի ունեցաւ նաեւ վիճակահանութիւն: Վիճակահանութեան տոմսերուն հետ ծախուեցան նաեւ Տարօն Արծիւով եւ Սասունցի Դաւիթի նկարներով տպագրուած գաւաթներ: Մեծ թիւով բախտաւորներ արժանացան արժէքաւոր նուէրներու:

Տարօն-Տարուբերանի տոհմիկ օրուան տօնակատարութիւնը մեծ յաջողութեամբ պսակուեցաւ: Ներկաները մեծ գնահատանքով արտայայտուեցան մուտքին եղած մանանայով եւ խմիչքով եղած հիւրասիրութեան, յատկապէս պատրաստուած Տարօնի արծիւով կրծքանշաններու մուտք գործող ազգայիններու լամբակներուն դրուելը, ինչպէս նաեւ յիշատակի գրքոյկներու բաշխումը:

Ձեռնարկը իր որակով եւ կազմակերպութեամբ երկար ատեն պիտի մնայ ներկաներուն յիշողութեան պաստառին վրայ:

«ՅՈՐԻՉՈՆ»
11 Օգոստոս 1997

**ԱՐՎԻԱՊԱՏԻՒ ՏԷՐ ՄԱՆՈՒԷԼ ԵՊՄԿ. ՊԱԹԱԳԵԱՆԻ
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

**ՀԻՄՆԱՐԿԷՔ՝
ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻ**

Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Կաթողիկէ Հայոց նորընտիր Առաջնորդ Արհիպապօսի Տէր Մանուէլ Եպիսկոպոս Պաթագեանի հովուական-առաքելական Թորոնթօ անդրանիկ այցելութեան առթիւ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւն ու հոգաբարձութիւնը, պաշտօնական ճաշկերոյթ մը կազմակերպած էին, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 7 Ապրիլ 2001, երեկոյեան ժամը 8ին, եկեղեցւոյ «Քէօրօղլեան» սրահին մէջ:

Նորընտիր Առաջնորդը ծնած է 1929ին, Յունաստան: 1939ին, ընտանիքին հետ փոխադրուած է Լիբանան, ուր յաճախած է Զմմառու դարաւոր վանքի ուսումնարանը, ստանալով կրօնաւորի դաստիարակութիւն: Աւարտելէ ետք Հռոմի Լեւոնեան վարժարանի աստուածաբանական ուսման դասընթացքը, կուսակրօն եկեղեցական ձեռնադրուած է 1954ին: Երկու տարիներ եղած է Պուրճ Համմուտի Ս. Փրկիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ ժողովրդապետ: Վարած է Զմմառու վանքի միաբանութեան ընդհանուր մեծաւորի պաշտօնը, ինչպէս նաեւ եղած է Փարիզի Ս. Խաչ եկեղեցւոյ ժողովրդապետ:

Հինգ տարիներ վարած է Հռոմի Լեւոնեան Ժառանգաւորաց վարժարանի մեծաւորութիւնը: Եպիսկոպոս ձեռնադրուելէ ետք նշանակուած է Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան ընդհանուր փոխանորդ: Այդ պաշտօնը վարած է բժախնդրութեամբ մինչեւ Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Կաթողիկէ Հայոց Առաջնորդական պաշտօնի կոչուելը:

Այս առիթով գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր: Առաջնորդ Գերայաջծառին եւ եկեղեցական դասուն ճաշասրահ պաշտօնական մուտքէն ետք, տիկին Վերա Վեզիրեանի կողմէ դաշնամուրով նուագուեցաւ Գանատայի եւ Հայաստանի պետական օրհներգները:

Արհիպապօսի Տէր Մանուէլ Եպսկ. Պաթագեանի կողմէ ճաշի սեղաններու օրհներգենէն ետք, տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն:

Այնուհետեւ բարի գալստեան եւ բացման խօսքով հանդէս եկաւ օրուան հանդիսավար Գերյարգելի Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան եւ իր բարի գալստեան խօսքերով ողջունեց Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Կաթողիկէ Հայոց նորընտիր առաջնորդ Արհիպապօսի Տէր Մանուէլ Եպսկ. Պաթագեանի հովուական առաքելական այցելութեան Թորոնթոյի Հայ Կաթողիկէ Համայնքին յատկապէս, եւ Թորոնթոյի հոգեւորական ընդհանրապէս, օգտակար հանդիսանալով գաղութի միջ-համայնքային գործակցութեան զարգացման:

Գերյարգելի հանդիսավարը շնորհակալական խօսք ուղղեց եկեղեցական բարձրաստիճան հիւրերուն, որոնց կարգին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Գանատայի էջմիածնական Թեմի Առաջնորդ Գերայնորճ Տ. Յովնան Ս. Արք. Տէրտէրեանի եւ Գանատայի Կիլիկեան Թեմի Առաջնորդա-

կան Փոխանորդ Գերաշնորհ Տ. Խաթակ Ս. Եպսկ. Յակոբեանի, որոնց ներկայությամբ կանոնական սոյն ճաշկերոյթին, տարբեր հանգամանք եւ կշիռ կը զգենու:

Ապա, գերյարգելի վարդապետը ներկայացուց եկեղեցական հիւրերը, հետեւեալ կարգով, որոնք տեղ գրաւած էին սրահին մէջ:

Վերապատուելի Յովհաննէս Սարմազեան՝ հոգեւոր հովիւ Գէմպրիճի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ, Արժ. Տէր Վարանդ Քհ. Պետրոսեան՝ հոգեւոր հովիւ Ս. Նշան Հայց. Առաքելական Գէմպրիճի եկեղեցւոյ, Արժ. Տէր Սարգիս Ա. Քհ. Կիւլեան՝ հոգեւոր հովիւ Հայց. Առաքելական Միսիսոկայի Ս. Վարդան եկեղեցւոյ, Վերապատուելի Եսայի Սարմազեան՝ հոգեւոր հովիւ Թորոնթոյի Հայ Աւետարանական եկեղեցւոյ, Արժ. Տ. Զարեհ Քհ. Զարգարեան՝ հոգեւոր հովիւ Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական եկեղեցւոյ, Գերյարգելի Պողոս Վրդ. Գազանճեան՝ Մոնթրէալի Նարեկ Վարժարանի տնօրէն, եւ Գերապատիւ Տէր Շահէ Ծ. Վարդապետ Փանոսեան՝ հոգեւոր հովիւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ: Իսկ Պատույ Բեմին վրայ տեղ գրաւած էին՝ Արհիպատիւ Տէր Մանուէլ Եպսկ. Պաթագեան, Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեան եւ Գերաշնորհ Տէր Խաթակ Ս. Եպսկ. Յակոբեան:

Նախալի Մ. քլաուտ, Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի ծրր դասարանէն անցեալ տարեշրջանի շրջանաւարտ, բեմ գալով, սահուն առողջանութեամբ, խոր ապրումով եւ սքանչելի արտայայտութեամբ արտասանեց Վահագն Դաւրթեանի «Հաւատում եմ Քեզ» բանաստեղծութիւնը, արժանանալով ներկաներու գնահատական ծափողոյններուն:

Հերթականօրէն ողջոյնի խօսք արտասանեցին Գերաշնորհ Տէր Խաթակ Ս. Եպսկ. Յակոբեան եւ Գերաշնորհ Տ. Յովնան Ս. Արք. Տէրտէրեան Սրբազանները, ինչպէս նաեւ Վերապատուելի Եսայի Սարմազեան, որոնք իրենց բարի գալուստի խօսքերէն ետք, յատկապէս ընդգծեցին Թորոնթոյի մէջ միջ-համայնքային գործակցութեան ոգին, իրենց գնահատական արտայայտութիւնը յայտնելով Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ ժրջան հովիւ Գերյարգելի Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեանի կատարած եւ ամբողջացուցած եկեղեցական բարեգարգումները ու անոր եկեղեցական եւ ազգային ոգին, անհուն նուիրումով ծառայած ըլլալով համայնքային եւ ազգային նախաձեռնութիւններուն:

Հանդիսավար վարդապետը կարգաց Գանատայի Դաշնակցային Խորհրդարանի անգամ տիար Սարգիս Ասատուրեանի ողջոյնի խօսքը, նկատի ունենալով անոր քաղաքէն բացակայութիւնը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ երգչախումբը, ղեկավարութեամբ պրն. Եսայի Սարգիսեանի եւ դաշնամուրով ընկերակցութեամբ տիկին Վերա Վէզիրեանի բեմ գալով երգեց «Մեծասցուցէ Անձն Իմ Տէր», «Զինչ Տաց Տրիտուր Տեառն» շարականները եւ «Ազգ Իմ Փառապանծ» երգը:

Գերյարգելի Հայր Գիրէջեան խօսք առնելով կարգ մը ծանօթութիւններ տուաւ Հայաստանի պետականօրէն քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակին նուիրուած եւ Հայոց Մեծ Եղեռնի ճշգրտարարներին առթիւ, եկեղեցւոյ շրջափակին մէջ գետեղուելիք յուշակոթողի մասին, եւ, յուշակոթողի

յղացքին հեղինակին, 1700-ամեակի Միջ-համաճարային Մարմնի ատենապետ պրն. Յակոբ Ճանպագեանի կենսագրութեան եւ արուեստին մասին խօսելէ ետք, հրաւիրեց զայն, ներկայացնելու յուշակոթողի յղացքը եւ իմաստը:

Պրն. Ճանպագեան յուշակոթողի մանրակերտը ցոյց տալէ ետք, տուաւ հետեւեալ բացատրութիւնները.

«Յուշակոթողը կը բաղկանայ երկու խորհրդանշաններէ՝ խաչքար եւ արծիւ: Խաչքարը ունեցած է ուրոյն տեղ հայ եկեղեցական ճարտարապետութեան եւ արուեստի բնագաւառներուն մէջ: Եղած է քրիստոնէական կրօնի խորհրդանշիչ: Հայոց քրիստոնէացման առաջին տարիներէն խաչքարեր կանգնեցուցած են որպէս շիրմաքար: Այդ իսկ պատճառով, մտածողութեանս մէջ տեղ գտաւ խաչքարը, որպէս հայոց անցեալէն եկող մշակութային արուեստ եւ քրիստոնէական հաւատքի արտայայտիչ, ինչպէս նաեւ հայոց քրիստոնէացման 1700-ամեակին առիթով, խաչքարը յարմարագոյն եւ լաւագոյն համարիչ արտայայտութիւնը դարձաւ արուեստի այս աշխատութեան մէջ, մեր մէկուկէս միլիոն անշիրիմ նահատակներու որպէս յարգանքի կոթող:

Իսկ արծիւը եղած է խորհրդանշանը վեհութեան, խիզախութեան եւ պահպանի եւ օգտագործուած է հայոց թագաւորութիւններու, իշխանութիւններու, տոհմերու եւ հայոց եկեղեցիներուն կողմէ: Այս աշխատութեան մէջ արծիւը վերապրումի եւ քրիստոնէական հաւատքի պահպանի խորհրդանշան է»:

Պրն. Յակոբ Ճանպագեան, Թորոնթոյի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Յուշակոթողի յանձնախումբին անունով կոչ ուղղեց ներկաներուն, մէկուկէս միլիոն անշիրիմ նահատակներուն յիշատակին եւ հայոց քրիստոնէացման 1700-ամեակին առիթով կանգնուող այս յուշակոթողի ծախսերուն մասնակից ըլլան, որովհետեւ յուշակոթողը կ'իմաստաւորուի իւրաքանչիւր հայ անհատի նիւթական եւ բարոյական մասնակցութեամբ, այն հաստատ համոզումով, որ ան կը հանդիսանայ երիտասարդութեան կեանքին մէջ ամէնօրեայ ներկայութիւն եւ անոր շուքին տակ հասակ նետող պատանիներուն եւ երիտասարդներուն համար կը դառնայ վերապրելու, գոյատեւելու եւ քրիստոնէական հաւատքին կառչած մնալու ներշնչման աղբիւր:

Երգչախումբը երգեց Գրիգոր Փիտէճեանի «Տէր Զօր» երգը:

Բեմ հրաւիրուեցաւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան եւ Խաթակ Սրբազանին փոխանցեց Տէր Զօրէն բերուած նահատակ հայ մանուկներու աճիւնէն բուռ մը, որ յատկապէս պատրաստուած մետաղեայ տուփով, Խաթակ Սրբազան յանձնեց Գերապայծառ Պաթագեանին, որպէսզի գետեղուի Յուշակոթողի հողին մէջ:

Վաստակաւոր եւ շնորհալի երգիչներ Սարգիս Գունտաքճեան եւ Գրիգոր Ճանկէօգեան, դաշնամուրով ընկերակցութեամբ Օր. Հիլտա Գանտահարեանի ելոյթներ ունեցան:

Սարգիս Գունտաքճեան երգեց «Հայաստան» երգը, Գրիգոր Ճանկէօգեան՝ Դաւիթ Բէկ օփերայէն «Գուսանի Երգը», ապա, հանդէս եկան զուգբեզով, երգելով Աշոտ Սաթեանի «Արարատեան Հովիւի Երգը»:

Օր. Հիլտա Գանտահարեան դաշնամուրով նուագեց «Քանի Վուր Զան Իմ» երգի եղանակը:

Այս առիթով, Գերյարգելի Հայր Եղիա, եկեղեցւոյ հոգաբարձութեան անունով շնորհակալութիւն յայտնեց օրուան ճաշը պատրաստող Տէր եւ Տիկին Մարտիկ եւ Սեւան էմիրզեաններուն, ինչպէս նաեւ Թաշճեան եղբայրներուն, ձեռնարկներու տպագրական բոլոր գործերը անհատոյց պատրաստած ըլլալնուն համար եւ պրն. Փիթըր Տէմիրճեանին՝ պատշաճ նուագներով միջնորդող յագեցուցած ըլլալուն համար:

Գերյարգելի վարդապետը, իր եւ եկեղեցւոյ հոգաբարձութեան անունով Հոռմի մէջ տպագրուած, Հայաստանի քրիստոնէացման 1700-ամեակին նուիրուած երեք դրօշմաթուղթեր պարունակող շրջանակներ որպէս յուշանք՝ էջր յանձնեց Գերաշնորհ Տ. Յովնան Ս. Արք. Տէրտէրեանին, Գերաշնորհ Տէր Խաթակ Ս. Եպսկ. Յակոբեանին եւ պրն. Յակոբ Ճանպագեանին:

Յուշանուէրներու յանձնումէն ետք, պրն. Մանուէլ Գիրէջեան, Առաջնորդ Սրբազանի առաջին պատարագէն իր կողմէ առնուած նկարներու ալպոմը, իսկ եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ պրն. Ժան Թեսիմէր Առաջնորդ Սրբազանին նուիրեց ոսկեգօծ խաչ մը:

Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի նորընտիր առաջնորդ Արհիպպատիկ Տէր Մանուէլ Եպսկ. Պաթագեանը, ի պատիւ տեղի ունեցող պաշտօնական ճաշկերոյթը փակուեցաւ Առաջնորդ Սրբազանին հայրական պատգամով, պահպանիչով եւ ժողովուրդին կողմէ երգուած «Տէրունական Աղօթք»ով:

*
**

Կիրակի, 8 Ապրիլ 2001ին, Ծաղկագարդի տօնին առթիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ պատարագեց Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Կաթողիկէ Հայոց նորընտիր Առաջնորդ Արհիպպատիկ Տէր Մանուէլ Ս. Եպսկ. Պաթագեան:

Առաջնորդ Սրբազանը Պատարագի ընթացքին իր արտասանած քարոզով իր հիացումն ու գնահատանքը յայտնեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերյարգելի Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեանին, որ եկեղեցւոյ իր գործակիցներով, վերջին 20 տարիներու ընթացքին կրցաւ հաստատել Հայ Կաթողիկէ համայնքի եկեղեցին եւ անհուն նուիրումով եւ հաւատքով իր աւարտին հասցնել շինութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շէնքն ու համալիրը՝ սրբազան «Խենթ»ի մը համարձակութեամբ եւ յանդգնութեամբ, միեւնոյն ատեն եղբայրական յարաբերութիւն եւ գործակցութիւն ստեղծելով Հայ Եկեղեցական յարանուանականութիւններու հետ:

Պատարագէն ետք, ժողովուրդը հետեւելով եկեղեցականներու Թափօրին ուղղուեցաւ դէպի եկեղեցւոյ շրջափակին մէջ յուշակոթողի գետեղման վայրը, ուր տեղի ունեցաւ հիմնարկէքի յատուկ արարողութիւն եւ անդատան:

Պրն. Ժան Աբրահամեան խօսք առնելով ներկաներուն բացատրութիւններ տուաւ Յուշակոթողի հողին տակ գետեղուելիք իրերու մասին: Յատուկ

տուփի մը մէջ գետեղուած էին Հայաստանէն ափ մը հող, Հայաստանի հանրապետութեան դրօշն ու գինանշանը, Տէր Զօրէն բերուած նահատակ հայ մանուկներու աճիւնէն մաս մը, Առաջնորդ Սրբազան Հօր խօսքը, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ խորհրդանշանը, քար մըն ալ ես դրի արձանագրութեամբ եկեղեցւոյ շինութեան առթիւ հրատարակուած Մետալ մը, վարդարան մը, Քըրիստոսի ծննդեան 2000-ամեակի յուշանուէր մը եւ տեղական «SUN» (Սան) թերթին Ապրիլի թիւին մէջ, Հայոց Եղեռնին նուիրուած Մայքըլ Քորընի յօդուածը:

Հիմնարկէքի արարողութիւնը վերջ գտաւ երգչախումբին կողմէ երգուած «Տէր Զօր» երգով եւ գանատական եւ հայկական պետական օրհներգներով:

«ՅՈՐԻՉՈՆ»
2001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱՆԱՑՄԱՆ 10ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան Գանատայի Դեսպանատան եւ կազմակերպութեամբ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական, Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական եկեղեցիներու, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Հայ Օգնութեան Միութեան, Պոլսահայ Միութեան, Մարաշի Հայրենակցական Միութեան, Թորոնթոնի Ակումբի, Գանատայի Հայ Գործարարներու Միութեան եւ Զօրեան Հիմնարկի ներկայացուցիչներէն կազմուած կազմակերպիչ յանձնախումբին, Հայաստանի անկախութեան 10-ամեակի ժողովրդային տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 6 Հոկտեմբեր 2001, երեկոյեան ժամը 7ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ, որուն ներկայ գտնուեցան Հայաստանի Հանրապետութեան Գանատայի լիազօր եւ արտակարգ դեսպան Վսեմաշուք Արա Պապեան, Հայաստանի Հանրապետութեան Գանատայի առաջին դեսպան Վսեմաշուք Գառնիկ Նանակիւլեան եւ իր տիկինը, Արցախի Խորհրդարանի Նախագահ Վսեմաշուք Օլէգ Եսայեան, Արցախի Պաշտպանութեան փոխ նախարար Զօրավար Սամուէլ Կարապետեան, Հիւսիսային Ամբերիկայի Արցախի լիազօր ներկայացուցիչ Վսեմաշուք Վարդան Բարսեղեան, Հայց. Առաքելական եկեղեցւոյ Գանատայի Առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տէր Խաթակ Ս. Եպսկ. Յակոբեան, Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերայատիւ Տէր Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Զարեհ Քհն. Զարգարեան, Միսիսոկայի եւ Համիլթընի Հայց. Առաքելական եկեղեցիներու հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Սարգիս Ա. Քհն. Կիւլեան, Քեմպրիճի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վարանդ Քհն. Պետրոսեան, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերայարգելի Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէշեան, Անկլիքան եկեղեցական Արժ. Տ. Հարըլտ Քհն. Նահապետեան, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ ներկայացուցիչ պրն. Տիգրան Գալայճեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամներ Յակոբ Ճանպազեան եւ Վրէժ Գասամանեան, տօնակատարութեան մասնակցող բոլոր եկեղեցիներու, կազմակերպութիւններու եւ միութիւններու պաշտօնական մարմիններու ներկայացուցիչներ եւ շուրջ 650 ազգայիններու: Դժբախտաբար տեղի չգոյութեան պատճառով, բազմաթիւ հայրենակիցներ չկրցան վայելել այս պատմական եւ հպարտառիթ տօնախումբութիւնը:

Հայրենի պատուիրակութիւնը Թորոնթօ ժամանեց Հինգշաբթի, 4 Հոկտեմբեր 2001, կէսօրէ ետք ժամը 4ին: Հայ Կեդրոնի կից «Ռատիսըն» պանդոկին մէջ հանգստանալէ ետք, պատուիրակութեան անդամները այցելեցին Հայ Կեդրոն, ուր դիմաւորուեցան Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամներ Յակոբ Ճանպազեանի եւ Վրէժ Գասամանեանի, Հ.Յ.Դ. «Սողոմոն

Թէ՛հիւրեան» կոմիտէի հերթապահ Վարուժան Պասթաճեանի եւ այլ ընկերներու կողմէ:

Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէ՛հիւրեան» կոմիտէն, ի պատիւ հայրենի հիւրերուն, ճաշկերոյթ կազմակերպած էր Հայ Կեդրոնի ճաշարանին մէջ, որուն ներկայ գտնուեցան Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան եւ Հայ Կեդրոնի յարկին տակ գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Բացման խօսքով հանդէս եկաւ «Ս. Թէ՛հիւրեան» կոմիտէի հերթապահ Վարուժան Պասթաճեան եւ բարի գալուստի խօսք ուղղեց Արցախի Խորհրդարանի նախագահ Վսեմաշուք Օլէք Եսայեանի, Արցախի պաշտպանութեան փոխ նախարար զօրավար Սամուէլ Կարապետեանին, Հիւսիսային Ամերիկայի Արցախի ներկայացուցիչ Վսեմաշուք Վարդան Բարսեղեանին եւ Հայաստանի Հանրապետութեան Գանատայի լիազօր եւ արտակարգ դեսպան Վսեմաշուք Արա Պապեանին, շնորհակալութիւն յայտնելով հիւրերուն, Կոմիտէին հրաւերին ընդառաջելով ներկայ եղան այս ճաշկերոյթին: Ապա, ծանօթացուց հայրենի հիւրերը ներկաներուն եւ միութիւնները՝ հիւրերուն:

Գերապատիւ Շահէ Ծ. Վրդ. Փանոսեանի ճաշի սեղանի օրհնութենէն ետք, տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն: Այնուհետեւ, հերթականօրէն խօսք առին դեսպան Արա Պապեան, Արցախի Խորհրդարանի նախագահ Օլէք Եսայեան, Արցախի պաշտպանութեան փոխ նախարար Զօրավար Սամուէլ Կարապետեան, որոնք ընդհանրապէս անդրադարձան Հայաստանի եւ Արցախի տնտեսական, քաղաքական, զինուորական կացութեան եւ ապագայի ծրագիրներուն մասին, յատկապէս գնահատելով Թորոնթոն հայութեան եւ Հայ Օգնութեան Միութեան նիւթական եւ բարոյական օժանդակութիւնները Հայաստանի եւ Արցախի շինարարական եւ առողջապահական եւ մանկավարժական կալուածներուն մէջ:

Ճաշկերոյթի ընթացքին բազմաթիւ ընկերներ խօսք առին եւ արտայայտեցին իրենց ազգային զգացումները հայրենիքի հանդէպ սփիւռքահայութեան պարտաւորութիւններուն հանդէպ, որպէսզի միացեալ ճիգերով հայրենիքը զօրանայ եւ բարգաւաճի:

Եղան կարգ մը հարցումներ, որոնց պատասխանեցին մեր յարգելի հիւրերը:

*

**

Ուրբաթ, 5 Հոկտեմբեր 2001, առաւօտեան ժամը 9ին, հայրենի հիւրերը այցելեցին Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարան, եւ ներկայ եղան Հայ Կեդրոնի սրահին մէջ հաւաքուած նախակրթարանի, միջնակարգի եւ երկրորդականի 9րդ դասարանի աշակերտներու առաւօտեան միացեալ աղօթքի հաւաքոյթին:

Հայրենի հիւրերը իրենց պաշտօններով ծանօթացուց կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ Վազգէն Թերզեան: Խօսք առաւ Արցախի Խորհրդարանի նախագահ Վսեմաշուք Օլէք Եսայեան՝ հայերէն եւ Հայաստանի դեսպան Վսեմաշուք Արա Պապեան որոնք իրենց խօսքին մէջ անդրադարձան Հա-

յաստանի եւ Սփիւռքի փոխյարաբերութեան եւ իրարօգնութեան, ընդգծելով չայ դպրոցի կարեւորութիւնը մանաւանդ Սփիւռքի մէջ:

Այս առթիւ Վսեմաշուք Օլէգ Եսայեան վարժարանին նուիրեց Արցախի մէջ գործածուող գեղատիպ Աբբենարան մը եւ Արցախի Տատիկի եւ Պապիկի յուշանուէրը:

Աչակերտները, դեկավարութեամբ վարժարանի երաժշտութեան ուսուցչուհի տիկին Նատա Նաւասարդեանի երգեցին «Հայոց Լեզուն Մեսրոպ Մաշտոց» եւ «Հայաստան Աշխարհ Կանգուն» երգերը:

Հայրենի հիւրերը, Կամակերպիչ Միացեալ Յանձնախումբի առաջնորդութեամբ այցելեցին Թորոնթոյի տեսարժան վայրերը ապա, կէսօրէ ետք ժամը 2ին այցելեցին Հ.Բ.Ը. Միութեան «Զարուկեան» վարժարանը, ուր դիմաւորութեան տնօրէնուհի օր. Յասմիկ Քիւրտեանի եւ վարժարանի պատասխանատուներուն կողմէ:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ տնօրէնուհին: Աչակերտները հանդէս եկան պատշաճ մշակութային յայտագրով: Խօսք առին Վսեմաշուք Օլէգ Եսայեան եւ Հայաստանի դեսպանը: Պրն. Եսայեան վարժարանին նուիրեց Արցախի Աբբենարանէն օրինակ մը եւ Տատիկ եւ Պապիկ յուշանուէր մը:

Նոյն ձեւի այցելութիւն մը տեղի ունեցաւ Ս. Խաչ Ազգային Վարժարանի աչակերտութեան: Անոնց ալ տրուեցաւ Աբբենարան եւ «Տատիկ Պապիկ» յուշանուէր:

Հայրենի հիւրերը այցելեցին նաեւ հայկական համահայկական հիմնադրամի կեդրոնը, ուր դիմաւորութեան տեսնապետ պրն. Մկրտիչ Մկրտիչեանի, Մարմնի այլ անդամներուն եւ քարտուղարուհի տիկ. Աշխէն Ճանկէօգեանի կողմէ:

Ուրբաթ, 5 Հոկտեմբեր 2001, երեկոյեան ժամը 8ին, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան վերի սրահին մէջ տեղի ունեցաւ յատուկ հաւաքոյթ, մասնակցութեամբ Թորոնթոյի բոլոր եկեղեցիներու, կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներուն:

Օրուան հանդիսավար պրն. Վահան Մուրատեան, Հայաստանի Անկախութեան 10րդ տարեդարձի Միացեալ Յանձնախումբի անունով բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ըսաւ. «Հոս հրաւիրած ենք եւ մեր յօժարակամ ներկայութեամբ այս բացառիկ միասնակամութեամբ հանդիպելու, ծանօթանալու Հայաստանի արժանաւոր ներկայացուցիչներուն: Որպէս գանատահայ, բախտաւոր ենք գոյգ հայրենիքներով մէկը ծնունդով մեզի պարգեւուած, իսկ միւսը մեր ազատ կամքի ընտրութեամբ: Ինչպէս Յուլիս 1ին, մեր ուրախութիւնը կը յայտնենք Գանատայի անկախութեամբ, նոյնպէս ալ Սեպտեմբեր 21ի տօնակատարութիւններով Սփիւռքահայերը, պատմական իրականութիւն դարձած հայրենիքին հանդէպ արտայայտենք յատուկ գուրգուրանք եւ միասնակամութեան ոգիով հայրենիքի օրը»:

Այնուհետեւ, պրն. Մուրատեան ներկայացուց հայրենի հիւրերը եւ յիշեց ներկայութիւնը Գանատայի Խորհրդարանի անդամ պրն. Սարգիս Ասատուրեանը:

Խօսք առաւ Հայաստանի Հանրապետութեան Գանատայի դեսպան Վսեմաշուք Արա Պապեան, որ խօսեցաւ Հայաստանի եւ Արցախի հանրապետու-

թիւններուն 10-ամեակին, կոչ ուղղելով հայ ժողովուրդին, որպէսզի իրենց նայուածքները ուղղեն մայր հայրենիք, որովհետեւ, ըսաւ ան, Հայաստանն է որ հնարաւորութիւն պիտի տայ իրականութիւն դարձնելու մեր յոյսերու ցանկութիւնները: Սփիւռքը ինքզինք շատ աւելի զօրաւոր կը զգայ եթէ Հայաստանը ըլլայ զօրաւոր եւ բարգաւաճ երկիր: Զօրացնելով հայրենիքը, Սփիւռքը կը զօրացնէ նաեւ իրեն: Հիմա եկէք այս 10-ամեակը, որպէս շրջադարձային կէտ օգտագործենք մեր գիտակցութեան մէջ, ըլլալով աւելի միահամուր եւ աւելի գործնական:

Հերթականօրէն խօսք առին նաեւ Արցախի Խորհրդարանի նախագահ Վսեմաշուք Օլէգ Եսայեան, Զօրավար Սամուէլ Կարապետեան, Արցախի Ուաշինկթընի ներկայացուցիչ Վսեմաշուք Վարդան Բարսեղեան, Միացեալ Յանձնախումբի ատենապետ Վազգէն Թերզեան եւ Գանատայի Դաշնակցային Խորհրդարանի անդամ պրն. Սարգիս Ասատուրեան:

Այնուհետեւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Ներկաները հիւրասիրուեցան հայկական գինիներով, քոնիակով եւ աղանդերներով:

*

**

Շաբաթ, 6 Հոկտեմբեր 2001, կէսօրէ առաջ ժամը 10էն սկսեալ, հայրենի հիւրերը, առաջնորդութեամբ կազմակերպիչ յանձնախումբի անդամներուն, այցելեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցին, ուր դիմաւորուեցան եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերյարգելի Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիւրջեանի եւ եկեղեցւոյ պատասխանատուներուն կողմէ:

Հայրենի հիւրերը հիւրասիրուեցան եկեղեցւոյ հիւրասենեակին մէջ, ուր մտերիմ խօսակցութիւններ ունեցաւ եկեղեցւոյ անդամներուն եւ հովիւին հետ: Տեղի ունեցաւ նուէրներու փոխանակութիւն:

Հայ Կաթողիկէ եկեղեցիէն ետք, հայրենի հիւրերը այցելեցին Հայ Աւետարանական եկեղեցի, ուր դիմաւորուեցան եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վերապատուելի Եսայի Սարմազեանի եւ եկեղեցւոյ վարչութեան անդամներուն կողմէ:

Յարգելի հիւրերը առաջնորդուեցան եկեղեցւոյ զանազան բաժինները եւ զնահատեցին կատարուած աշխատանքները: Երկուստեք տեղի ունեցան նուէրներու փոխանակութիւն:

Ապա, հայրենի հիւրերը այցելեցին Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական եկեղեցի, ուր դիմաւորուեցան եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Զարեհ Քհն. Զարգարեանի եւ եկեղեցւոյ ծխական խորհուրդի անդամներուն կողմէ:

Եկեղեցւոյ յարակից բաժինները այցելելէ ետք, տեղի ունեցաւ նուէրներու փոխանակութիւն:

Հայրենի հիւրերուն Թորոնթոյի եկեղեցիներու այցելութիւնը վերջ գտաւ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ այցելութեամբ, ուր դիմաւորուեցան եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Շահէ Ծ. Վրդ. Փանոսեանի եւ եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամներուն կողմէ: Մտերիմ

խօսակցութիւններէ ետք, տեղի ունեցաւ յիշատակի նուէրներու փոխանակում:

*

**

Հայաստանի անկախութեան 10-ամեակի գլխաւոր հանդիսութիւնը սկսաւ 6 Հոկտեմբեր 2001, Երեկոյեան ժամը 7ին՝ քոքթէյլով՝ Հայ Կեդրոնի Համազգայինի «Յ. Մանուկեան» գրադարանի սրահին մէջ, ներկայութեամբ հայրենի հիւրերուն եւ պաշտօնական անձնաւորութիւններու:

Երեկոյեան ժամը 8ին, հայրենի եւ պաշտօնական հիւրերը, առաջնորդութեամբ սկառտներու կողմէ շալկուած Գանատական, Հայաստանի եւ Արցախի դրօշներով մուտք գործեցին սրահ: Իսկ ժողովուրդը սրահ մուտք գործած էին դիմաւորուելով հայկական տարազով տիկիներով, որոնք հայկական խմիչքներով հիւրասիրեցին զանոնք:

Հանդիսութիւնը սկսաւ տիկին Զարմինէ Երէցեանի կողմէ երգուած Գանատայի եւ Հայաստանի պետական օրհներգներով, դաշնամուրով ընկերակցութեամբ օր. Լիզա Գանտահարեանի:

Բացման խօսքով հանդէս եկաւ կազմակերպիչ միացեալ յանձնախումբի ատենապետ, օրուան հանդիսավար Վազգէն Թերզեան, որ ի միջի այլոց ըսաւ.

«10 տարիներ առաջ պատիւը ինծի վիճակուած էր որ Հայաստանէն հեռաձայնով աւետեմ լուրը՝ այնքան տենչացած եւ ազգովին անձկութեամբ ըսպասուած մեր հայրենիքի անկախութեան հռչակումին, այս նոյն սրահին մէջ, խուռներամ լեցուած հազարէ աւելի բազմութեան Հայ Կեդրոնի այս սրահին մէջ:

«Այդ օր չեմ գիտեր ինչ զգացին իմ բարեկամներն ու ընկերները այստեղ, երբ ես հեռաձայնով կը խօսէի իրենց, սակայն հաստատ կը յիշեմ, որ ես իմ ամբողջ էութեամբս կը զգայի Թորոնթոյէն մինչեւ Երեւան ելեկտրակառնացած միջոցով, պատմական պահի խորհրդաւորութիւնը եւ անկէ բխած անկաշկանդ եւ շունչ կտրող ուրախութիւնը: Եւ ինչպէս չզգացի, երբ անձամբ իմ աչքերովս տեսած էի ժողովուրդի գրեթէ միաձայնութեամբ «Այո՛» անկախութեան՝ քուէարկութիւնը, հայ մամիկներու եւ պապիկներու արցունքը, ժողովուրդի բոլոր խաւերու անսահման ուրախութեան Հայաստանի քաղաքներու եւ գիւղերու ամէն մէկ թաղին մէջ եւ հրապարակներուն վրայ պատրաստուած խնձոյքի եւ մատաղի սեղանները, նուագը, պարը, երգերը... Մէկ խօսքով, չորս միլիոն ժողովուրդ, չորս միլիոն հայերու ինքնաբերական ցնծութիւնը շարունակելու իրենց կեանքերը հայրենի երկրին իրենց տանը մէջ, սակայն այս անգամ, Ազատ, Անկախ Հայաստան, «Մեր Հայրենիք» օրհներգով, իր գինանշանով, իր եռագոյն դրօշով, իր ազգային տենչերու հայելի հռչակագրով:

«10 տարիներ ետք, կրկին բախտի բերմամբ ինծի է վիճակուած պատիւը այս տարեդարձի տօնակատարութեան բացման խօսքը ընելու, որպէս կազմակերպիչ միացեալ յանձնախումբի նախագահը: Եւ այս անգամ, նոյն հոգե-

կան ապրումներով, հպարտութեամբ եւ ցնծութեամբ՝ սակայն տարբեր պայմաններու մէջ:

«Ազատ ու Անկախ Հայաստանը արդէն 10 տարեկան է, հակառակ իր բոլոր դժուարութիւններուն՝ երկրաշարժ, պատերազմ, շրջափակում, տնտեսական տաղանապ, եւայլն, ան նաեւ արձանագրած է յստակ բարելաւումներ, պետական մեքենայի աշխատանքին, օրէնսդրական, դրամատանային, ներքին թէ արտաքին քաղաքական փոքր եւ միջին մակարդակի տնտեսութեան ստեղծման, բանակի զօրացման եւ արդիականացման եւ այլ մարզերէ ներս:

«Անոնք որոնք առիթը կ'ունենան տարուէ-տարի այցելելու մեր հայրենիքը, կը տեսնեն անոր կազմաւորումը եւ այդ ճամբով եղած փոփոխութիւնները եւ եթէ քննական ակնարկ մը նետենք, կը հաստատենք, որ անոր ընթացքը մեր ազգի ապագայի երազներու իրականացման ճիշդ ճամբուն մէջն է: Արագացնելու եւ ամրապնդելու համար այդ ընթացքը, մեր հայրենիքը պէտք ունի ամէն մէկ հայու՝ Հայաստան թէ Սփիւռք, հետաքրքրութեան, մասնակցութեան, գուրգուրանքին եւ ի վերջոյ հաւատքին ու յանձնառութեան, որ մենք որպէս մէկ եւ անբաժան ժողովուրդի զաւակներ, որ երկրի մէջ ալ ըլլանք, որ եկեղեցի յաճախենք, որ կազմակերպութեան եւ միութեան անդամակցինք, քաղաքական եւ ընկերային ինչ ուղղութիւններու հետեւինք, չենք կրնար իրարու հետ որեւէ տարակարծութիւն ունենալ, երբ հարցը Հայաստանի զօրակցին է, անոր թիկունք կանգնելն է, անոր ազատութիւնն եւ անկախութիւնը ապահովագրելն է եւ այդ ճամբով շարունակել տենչալն ու աշխատելն է Միացեալ Հայրենիք Միացեալ Հայութիւն իրականութեան»:

Պրն. Վազգէն Թերզեանի կողմէ պատուոյ սեղանի ներկայացումէն ետք խօսք առաւ Գանատայի Առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Խաթակ Ս. Եպսկ. Յակոբեան, որ ի միջի այլոց ըսաւ.

«1988ի Արցախեան ազատագրական շարժումները դարձան անկիւնադարձային հայութեան համար: Այդ շարժումէն ետք նոյն հայը չեղանք: Նոր հայը ծնաւ:

«10 տարիներ անցած են Հայաստանի եւ Արցախի անկախութեան հռչակման թուականէն: Եթէ այդ հռչակութեանէն դիտենք նորագոյն պատմութեան հոլովոյթը, մեզի առիթ կը տրուի վերստին ապրելու մեր հայու պատկանելիութեան իմաստը եւ խորհուրդը եւ վերանորոգ շունչով 1700-ամեակի բերած վերանորոգող շունչով նոր 10-ամեակի համար զինուելու եւ պատրաստուելու:

«Հայրենիք եւ ժողովուրդ, այդ ըլլայ հայրենիքի մէջ բնակող թէ հայրենիքէն դուրս, օտար երկիրներու տակ բնակող, իրարու հանդէպ ունին ակընկալութիւններ եւ պատասխանատուութիւններ:

«Մենք այսօր, իբրեւ Սփիւռքահայ կ'ուզենք վերստին ապրիլ այն ներշնչանքը, որ մեզի բերաւ Արցախեան շարժումը եւ Հայաստանի անկախութեան հռչակումը...»

«Մեր զաւակներուն մէջ հայրենիք ունենալու եւ հայրենիքով հպարտ զգալու զգացումը անփոխարինելու եւ տարբեր զգացում մըն է, որ մեր զաւակներուն գլուխները բարձր կը պահէ այս օտար ափերուն վրայ, որ մեզմէ իւրաքանչիւրին մեր գոյապայքարի իրականութեան մէջ կու տայ քաջութիւն»

ներ, յոյսը եւ վստահութիւնը, որ մենք պիտի կարենանք Սփիւռքեան պայմաններու բոլոր դժուարութիւններու մէջէն իբր հայ ապրիլ եւ կատարել մեր պարտաւորութիւնները հայրենիքին հանդէպ:

«Հայրենիքը կու տայ մեզի այդ հպարտութիւնը եւ որքան զօրանայ, այնքան աւելի հպարտանալու առիթ կ'ունենաք: Հայրենիքի հզօրացման համար մենք պէտք է դնենք Հայաստանի բարգաւաճման: Ինչպէս այս շէնքը շինեցինք եւ ըսինք «Քար մըն ալ ես դրի», հայրենիքի վերաշինութեան համար ալ քար մըն ալ մենք դրինք ըսելու հպարտութիւնը պէտք է ունենանք»:

Այնուհետեւ Սրբազան հայրը յանուն Գանատայի եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդութեան, Ազգային Վարչութեան, Գանատայի Առաջնորդութեան փոխանորդութեան եւ յարակից մարմիններու անունով շնորհակարտեց Հայաստանի անկախութեան 10րդ տարեդարձը, ապա, օրհնեց ճաշի սեղանները:

Ճաշի սպասարկութեան ընթացքին, պատանի Խաժակ Տէր Պօղոսեան դաշնամուրով նուագեց հայկական մեղմ երաժշտութիւն:

Ճաշէն ետք սրտի խօսքով հանդէս եկաւ Հայաստանի Հանրապետութեան Գանատայի դեսպան Վսեմաշուք Արա Պապեան, որուն յաջորդեց, Հիւսիսային Ամերիկայի մէջ, Արցախի լիազօր ներկայացուցիչ Վսեմաշուք Վարդան Կարապետեան:

Հայաստանի մէջ քրիստոնէութեան հաստատման 1700-ամեակին եւ Արցախեան բանակի տողանցքին նուիրուած պատկերիզի մը ցուցադրութենէն ետք, հանդիսավար պրն. Թերզեան ներկայացուց Արցախի պաշտպանութեան փոխ նախարար եւ Արցախի յատուկ նշանակութեան հարուածային գունդի հրամանատար զօրավար Սամուէլ Կարապետեանի կենսագրութեան ամփոփ գիծերը, հրաւիրելով իր խօսքը փոխանցելու ազատատենչ հայութեան:

Խօսք տրուեցաւ նաեւ Հայաստանի Հանրապետութեան Գանատայի առաջին լիազօր եւ արտակարգ դեսպան Վսեմաշուք Գառնիկ Նանակիւլեանին:

Օրուան պատգամաբերն էր Արցախի Խորհրդարանի նախագահ Վսեմաշուք Օլէգ Եսայեան, որ իր խօսքին մէջ անդրադարձաւ Հայաստանի անկախութեան եւ Արցախի ազատագրական պայքարի մասին, թուելով անկախութեան 10 տարիներու անցած ճանապարհը, կոչ ուղղելով զօրավիզ կանգնիլ Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու բարգաւաճման եւ հզօրացման:

Վսեմաշուք պրն. Եսայեան իր խօսքին վերջաւորութեան շնորհակարտեց Հայաստանի եւ Արցախի անկախութեան 10րդ տարեդարձը:

Վսեմաշուք դեսպան պրն. Արա Պապեան կրկին խօսք առնելով իր շնորհակալութիւնները յայտնեց տասնամեակը կազմակերպող միացեալ յանձնախումբի անդամներուն եւ յատկապէս անոր ղեկավար պրն. Վազգէն Թերզեանին:

Այս առիթով, պրն. դեսպանը Ղարաբաղի Տատիկի եւ Պապիկի յուշարձանով պատրաստուած մետալը յանձնեց պրն. Վազգէն Թերզեանին եւ Հայաստանի անցագիրը (բասբորթ) պրն. Տիրան Թերզեանին, որ հիւանդութեան պատճառով հիւանդանոց գտնուելով, յանձնուեցաւ պրն. Վազգէն Թերզեանին:

Արցախի խորհրդարանի նախագահը կրկին բեմ գալով, Ղարաբաղի մէջ Ղարաբաղեան Տատիկ եւ Պապիկով պատրաստուած գորգը յանձնեց Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի հերթապահ Վարուժան Պասթաճեանին:

Իսկ կազմակերպիչ միացեալ յանձնախումբը, անդամներ Սալբի Ղազարեանի եւ Սիւզան Նաճարեանի ձեռամբ հայրենի հիւրերուն յանձնեց յատուկ յուշանուէրներ:

**«ՅՈՐԻՉՈՆ»
Յոկտեմբեր 2001**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ
ՅԻՇԱՏԱԿԸ ՅԱԻԵՐԺԱՅՆՈՂ ՅՈՒՇԱԿՈԹՈՂ ՄԸ ԵՒՍ
ԲԱՐՁՐԱՑԱԻ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ**

Կիրակի, 28 Ապրիլ 2002, կէսօրէ առաջ ժամը 11ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, հանդիսաւոր Առաջնորդական Սուրբ պատարագ, Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Կաթողիկէ Հայոց Բարեջան Առաջնորդ Արհիպատիւ Տէր Մանուէլ Եպիսկոպոս Պաթագեանի կողմէ, իսկ պատարագէն ետք, պաշտօնական բացում Հայկական Յեղասպանութեան նահատակներուն յիշատակը յաւերժացնող Յուշակոթողին:

Պատարագին ներկայ գտնուեցան պաշտօնական անձնաւորութիւններ, Թորոնթոհայ եկեղեցիներու, կուսակցութիւններու, միութիւններու, հաստատութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, հոծ թիւով ազգայիններ եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները, որոնք եկեղեցւոյ մէջ եւ Յուշակոթողի շրջակայքը հսկեցին կարգապահութեան:

Պատարագի ընթացքին, Արհիպատիւ Տէր Մանուէլ Ս. Եպիսկ. Պաթագեան խօսեցաւ հայաշունչ եւ սրտառուչ քարոզ մը, հետեւեալ խորհրդածութիւններով.-

Նահատակներու յիշատակը յարգելը քաղաքակիրթ ժողովուրդներու յատուկ է: Հայերուն համար նուիրական պարտականութիւն է այդ, հաւատարմութեան ուխտ՝ զոր կը կատարեն ամէն տարի, ոգեկոչելով զոհաբերումը իրենց հայրերուն:

Թանկագին է մահը, երբ կ'առաջնորդէ անմահութեան: Մեր նահատակները, իրենց արեան հեղումով, անմահութեան արժանացան, երկնքի մէջ, բայց նաեւ իրենց զաւակներու յիշատակին մէջ:

Անգնահատելի է անոնց զոհաբերումը, ուստի եւ մեր մեծարանքին արժանի, որովհետեւ կը յիշեցնէ մեզի թէ:

ա. Բարձր տեսլականով օժտուած ժողովուրդ մըն ենք, գիտենք զանազանէլ անցաւորն ու յաւերժականը եւ այդ համոզումով ալ կ'ուզենք ապրիլ:

բ. Հակառակ մեր թերութիւններուն ու տկարութիւններուն, կառչած կը մնանք արժէքներու, որ սերտօրէն ձուլուած են հոգեկան, բարոյական ու ազգային բնաշխարհին հետ:

գ. Չենք վախցած եւ չենք վախնար ճակատիլ մեզմէ աւելի հզօր ազգերու հետ, երբ վտանգուած կը տեսնենք ինչ որ ամէնէն աւելի թանկ է մեզի համար, մեր ազգային ու կրօնական ինքնութիւնը: Այդ է իմաստը վկայութեան, զոր տուին մեզի Վարդանանք եւ Ապրիլ 24ի մարտիրոսները եւ ուխտած ենք հաւատարիմ մնալ անոր:

Այսօրուայ ոգեկոչումը կը յիշեցնէ մեզի անգամ մը եւս, թէ վերջ չէ գտած մեր պայքարը: Չկայ այսօր Ֆիզիքական Չարդի սպառնալիք, կայ աւելի ծանր ու մտահոգիչը, որովհետեւ աւելի թաքուն ու նենգ. հոգեկան Չարդի վրտանգը:

Երեւակայութեան պտուղ չէ այս, բիրտ իրականութիւն է, եւ յատուկ կերպով կը սպառնայ մեր երիտասարդ սերունդին: Հմայուած զիրենք հիւրըն-

կալող ու շրջապատող ժողովուրդներու նուաճումներէն, մեր երիտասարդները ենթակայ են ահարկու փորձութեան, նոյնանալ անոնց հետ, օրինակել անոնց մտածելակերպն ու սովորութիւնները, ծածկել իրենց ինքնութիւնը, սուզուիլ ու ձուլուիլ անանուն զանգուածին մէջ: Այս ափերուն վրայ ցաւով կը լսենք յաճախ. «Մենք ծագումով Հայ ենք» կամ՝ «Մեր ծնողքը Հայ են, բայց մենք Ամերիկացի կամ Գանատացի»: Բացայայտ է որ այս երեւոյթը, ուշ կամ կանուխ, անդարմանելի կորուստի կը տանի, որովհետեւ մեր երիտասարդութիւնն է որ պիտի վերցնէ ջահը զոր վառած են մեր հայրերը, եւ առանց իրենց մեր ազգային ապագան վտանգուած է:

Մեր ճակատագիրը ուզած է որ ըլլանք ցիրուցան աստանդաւան ժողովուրդ: Այս մեր ցաւն է, բայց կրնայ նաեւ հարստացումի պատճառ ըլլալ, եթէ գիտնանք իմաստօրէն շահագործել զայն: Մէկ Հայրենիքի փոխարէն, որու կառչած ենք մեր ամբողջ էութեամբ եւ որու հօրացումը մեր գոյատեւումի պայմանն է, ստեղծած ենք բազմաթիւ հայրենիքներ, այդ գաղութները ուր կազմաւորուած ու կենսունակ հասարակութիւններ կազմած ենք: Պարտաւոր ենք պահպանել զանոնք օգտուելով հանդերձ մեզի ընձեռուած առաւելութիւններէն, ոգի ի բռին պայքարիլ անեղծ ու առողջ պահելու համար մեզ յատկանշող արժէքները, մեր լեզուն, մեր մշակոյթը, մեր հաւատքն ու մեր պատմութիւնը:



Հայոց Մեծ Եղեռնի նուիրուած Յուշակոթողը (յղացք՝ պրն. Յակոբ Ճանապետանի)
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ շրջափակին մէջ

Այս է իմաստը եւ նպատակը այսօրուայ ոգեկոչումին մեծարանք եւ հաւատարմութեան ուխտ: Չգոհանալ զգացական արտայայտութիւններով ու ցոյցերով, կամ ք եւ առաջադրութիւն ունենալ վերակենդանացնելու կտակը, զոր իրենց արեամբ գրած ու հաղորդած են մեզի նահատակները:

Բոլոր ժողովուրդները պայքար մը ունին մղելիք, իրենց յատուկ նպատակներով: Մերինը գոյատեւումի պայքար է: Կը փորձուինք հարց տալու, պատրաստ ենք այդ պայքարը մղելու, ո՛չ ճառերով ու հանդէսներով միայն, այլ մանաւանդ կեանքի վկայութեամբ, որպէսզի մեր յաջորդները չմեղադրեն մեզ թուլութեան եւ ձեւակերպային ազգասիրութեան յանցանքով:

Այսօր խանդավառութեամբ կը կատարենք բացումը Նահատակներուն նուիրուած Խաչքար-Յուշակոթողին այս եկեղեցւոյ շրջափակէն ներս, որ կու գայ աւելնալու աշխարհի չորս ծագերուն կանգնած յուշակոթողներուն: Իր գեղարուեստական ակներեւ արժէքէն անդին, ան կոչուած է ըլլալու խօսուն արտայայտութիւնը մեր վճռակամութեան չմոռնալու մեր նահատակ ժողովուրդի մը գաւակներն ենք եւ կ'ուզենք արար աշխարհին իմացնել թէ արգար իրաւունքներ ունինք, որ պէտք է ճանչցուին եւ հատուցում գտնեն: Այսպէսով միայն կրնանք արդարացնել այս օրուան մեծարանքի արարքը:

Մեր բարձր գնահատանքն ու երեխտագիտութիւնը կ'երթայ այս պահուստ այս ձեռնարկը յղացողներուն եւ իրագործողներուն, եւ առաջին դժի վըրայ այս համայնքի ժրջան ու անխոնջ հովիւին Գերշ. Հ. Եղիա Մ. Վրդ. Գիրէջեանին: Այս կոթողը կու գայ պսակելու անոր վաստակն ու բազմաթիւ իրագործումները, սկսեալ Ս. Գրիգոր Լուսաւորչին ձօնուած այս հոյակապ տաճարէն եւ համանուն շաբաթօրեայ Վարժարանէն, որ բազմահարիւր պատանիներու եւ երիտասարդներու հոգեւոր ու ազգային դաստիարակութեան օրրանը դարձած է: Կ'արօթենք որ Տէրը վարձահատոյց ըլլայ անոր եւ բազմապատկէ անոր կորովն ու նուիրումի հոգին, մեր ժողովուրդին մէջ յաւերժացնելու համար փառումը իր հաւատքի եւ ազգային գիտակցութեան:

Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, Հայոց Մեծ Եղեռնին նահատակուած մէկուկէս միլիոն հայերու հոգիներուն համար, մասնակցութեամբ Սրբազան Հօր Գերյարգելի Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեանի եւ Հայր Պողոս Վրդ. Գազանճեանի:

Պատարագի վերջաւորութեան, թափօրը հետեւեալ կարգով ուղուեցաւ դէպի յուշակոթողի վայրը:

Հայկական եւ Գանատական դրօշակներ, ծաղկեպսակ կրողներ, խաչակիրներ, խորանի սպասաւորներ, սարկաւազ-Աւետարանակիր, հիւր կղերականներ, Արհիպատիւ Պատարագիչ Սրբազան Առաջնորդ, Հայաստանի Հանրապետութեան Վսեմաշուք դեսպան Պրն. Արա Պապեան, Գանատայի Դաշնակցային Խորհրդարանի անդամ Տիար Սարգիս Ասատուրեան եւ տիկինը, դպրաց դաս-երգչախումբ, Թորոնթոյի Հայ հասարակութեան, եկեղեցիներու, կեդրոններու, միութիւններու, կուսակցութիւններու, դպրոցներու, ակումբներու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ հաւատացեալ ժողովուրդ:

Կիրակի, 28 Ապրիլին, ամբողջ օրը իջնող տեղատարափ անձրեւը, վըստահաբար մեր նահատակներուն յիշատակը յարգելով կեցաւ, առիթ տալով,

որպէսզի եկեղեցական դասն ու հաւատացեալ ժողովուրդը կարենայ կատարել եւ հետեւել Յուշակոթողի քողագերծման պաշտօնական արարողութեան:

Յուշարձանի շուրջ հոգեւոր դասի եւ ժողովուրդին կողմէ արտասանուած «Տէրունական Աղօթք»էն ետք, Արհիպատիւ Տէր Մանուէլ Եպիսկոպոս Պաթագեան եւ Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք դեսպան Պրն. Արա Պապեան միասնաբար քողագերծեցին յուշարձանը:

Եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ Վարժարանի կողմէ ծաղկեպսակներ գետեղեցին հոգաբարձութեան երկու անդամներ եւ երկու աշակերտներ:

Գերյարգելի Հայր Եղիա հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յօտընկայս լուծեամբ յարգելու Ապրիլեան Նահատակներու յիշատակը:

Այնուհետեւ կատարուեցաւ Յուշարձանի օրհնութեան եւ անդաստան արարողութիւն: Գանատական եւ հայկական պետական օրհներգներու երգեցողութենէն ետք, ներկայ ժողովուրդը հերթով մէկական մեխակ գետեղեցին յուշակոթողին առջեւ:

Յուշակոթողի օրհնութենէն ետք, ներկայ ժողովուրդը, 400է աւելի, հաւաքուեցան եկեղեցւոյ «Քէօրօղլեան» սրահին մէջ, ուր գործադրուեցաւ պատշաճ յայտագիր եւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Բացման խօսքով հանդէս եկաւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերյարգելի Տէր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան, որ ի միջի այլոց ըսաւ. «Հայութիւնը այսօր, Մայր Հայրենիքէն մինչեւ Սփիւռքեան գաղութները, կը ծիածանուի, կը շողկապուի նոյն երազներով, յոյսերով ու պահանջներով, միեւնոյն ատեն ջերմերանդօրէն, իր էութեան խորագոյն զգացողութեամբ կ'աղօթէ եւ կ'ուխտէ հաւատարիմ մնալ իր նահատակներուն յիշատակին:

Սփիւռքեան այս յուշարձանը բարձրացուցինք երեք նպատակներով: Առաջին՝ Ուխտի մեր մնայուն տուրքը տալու Ապրիլեան Նահատակներուն, երկրորդ՝ Հայ թէ օտար ապագայի սերունդներուն յարածամ պատգամ հայութեան յաւերժութեան, երրորդ՝ Հայ Ազգի արդար իրաւունքներուն եւ դատին անժամանցելի պահանջատիրութեան:

Այս բարեպատեհ առիթէն կ'օգտուիմ, իմ ու թորոնթոյի մեր համայնքին անունով մեր յարգանքի, սիրոյ եւ եղբայրութեան, երախտագիտութեան ու գնահատանքի զգացումներ յայտնելու ձեզի ու ձեր ներկայացուցած եկեղեցւոյն, կեդրոնին, կուսակցութեան, միութեան, յանձնախումբին, դպրոցին, ակումբին առանց որ երկարանանք՝ իւրաքանչիւր անձ կամ անձերը յիշելու իրենց անունով եւ իրենց ներկայացուցչական հանգամանքով: Յատկապէս պարտք կը համարենք մեր երախտապարտութիւնն ու գնահատանքը յայտնելու թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ի սկստական կազմին ու անոնց ղեկավարութեան, որոնք սիրայօժար ընդառաջեցին մեր խնդրանքին այս օրուան հանդիսութեանց կարգապահութիւնը ապահովելու համար:

Խօսքս կը փակեմ հետեւեալ մտքով:

Ապրիլեան Եղեռնի այս յիշատակումով, միացած եւ եղբայրացած, եկած ենք որպէս մէկ ժողովուրդ եւ մէկ ազգ այս ուխտատեղին, որ դարձած է երկրորդ Տէր Զօր մը՝ սրբացած ու հայացած 1915ի Եղեռնի նահատակուած մանուկներու սրբազան աճիւններով որոնք մեզի յանձնուեցան Գանատայի Ա-

ուսնորդական Փոխանորդութենէն ու Սուրբ Աստուածածին Հայաստանեաց Առաքելական Եկեղեցիէն եւ որոնք, երկիւղած ջերմեռանդութեամբ զետեղւեցան յուշարձանի հիմերուն մէջ: Այս մէկտեղումով այս միջնորդումով այսօր, Հայաստանը՝ Վսեմաշուք Դեսպանով, Սփիւռքը մեզմով կը ներդաշնակուին, կը շաղախուին միութեան, գործակցութեան ծիածանով՝ դալու արժանագոյն պարտքի՝ միասնական գերագոյն տուրքը ընծայելու Ապրիլեան Եղեռնի մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշակտակին»:

Յայտնի երգիչ Պրն. Սարգիս Գունտաքճեան, իր սքանչելի ձայնով երգեց «Հանգչեցէք դուք անդոր» երգը, որուն յաջորդեց օր. Սիլվա Մարտիրոսեանը, ասմունքելով Յովհաննէս Շիրազի «Տանդէական»էն նախերգանքը:

Յատուկ պատգամով հանդէս եկաւ երկարամեայ ուսուցիչ տնօրէն Պրն. Գագիկ Վարդանեան, որ իր խօսքը վերջացուց հետեւեալ գաղափարներով, «Ողբամ Մեռելոց, Բեկանեմ Շանթեր, Կոչեմ Ապրողաց»...

Ապրողաց կոչեմ, ուր մեր եղեռնագործ ազգակիցներն էին, որ տանջանք ցնորքէն ազատուելու անվերջանալի եւ ապարդիւն ճիգերով սփռուեցան աշխարհով մէկ՝ ուղեկորոյս եւ անհանգրուան ճամբաներու պէս: Եւ այդ խայտարակ թուականներէն սկսեալ հայոց աշխարհագրական քարտէզը սահման չունեցաւ: Ինչո՞ւ կատարուեցաւ այս բոլորը: Ինչո՞ւ կարողացաւ քաղաքակիրթ Արեւմուտքը այդ յանցանքը գործել, ինչպէս չխելագարուեցաւ ան այդ սպանդանոցէն, այդքան արիւնէն... ինչպէ՞ս...: Այս հոգեմաշ ու անպատասխան հարցերէն տառապող, կանա՛չ-կապոյտ ու կորած աշխարհի՝ «էրգրի» կարօտը իր հոգում անթեղուած, «Մանկութիւն չունեցող» Մարդկանց այս սերունդն էր սակայն, ուր դարձաւ Սփիւռքի եւ անոնց ապրած կեանքը սովորական իմաստով կեանք ալ չէր, այլ՝ ցաւի, կարօտախտի ասք էր եւ երգ, «Ձարթի՛ր, Լաօ» երգի պէս առնական եւ խաչքարի պէս քնքուշ ու ազնիւ...:

«Այսօր մենք ալ մասնակիցն ու զինուորն ենք շարունակուող այդ գոյապայքարի, անոնցմէ՛ են այս հոյակերտ նմուշի Այնճարցի հեղինակն ու այս եկեղեցւոյ հոգեւոր հովիւը եւ ձե՛ր, բոլորին Աստուածահաճոյ եւ օգուտ համագործակցութիւնն էր, որ իրականութիւն դարձուց այս յուշակոթողը, որ թերեւս, հոգու յանձնարարութիւն ու մխիթարանք, մեզի համար, բայց մեր զաւակներու ու գալիք սերունդներու համար ներկայ ու անցեալը արժէքաւորելու, ապագային անխորտակ վստահութեամբ նայելու ուղեցոյցն ու փարօսը պիտի դառնայ:

Պատմական դաժան իրականութիւն է ստիպել արուեստագէտի երեւակայութիւնը համադրել երկու սիմպոլները՝ մեր հաւատքի, ստեղծագործ աշխատանքի, նաեւ անմահութեան խորհրդանիշ՝ խաչքար եւ վեհութեան, սլացքի ու ուժի մարմնացումը՝ Արծիւը: Բայց սովորական արծիւ չէ այս արծիւը: Երկրի արծիւներէն է ան, Մարութայ Սարէ՞ն, Արջգլորէ՞ն, Մշոյ գետի բարափներէ՞ն թէ՛ Մուսա Լեռէն թռցուց, գերութենէն ազատեց ու Աստուծոյ տրուած օրհնութեանը ապաւինեց այս շիրմաքար խաչքարը, որ Մուշ Իշխանի բառերով արտայայտուած՝

Վիթխարի գերեզման է հայուն համապարփակ սրտի մը պէս սիրազեղ հիմա այստեղ, անոնց հանգիստը պանդուխտ, օծուն է միշտ խունկի բոյր օրհնաբեր, հաւատքի ուժով զօրանալու եւ զօրութեամբ հաւատքը ուժեղացնելու

փրկարար գաղափարը կը յաւերժացնէ այս յուշակոթողը: Մեր պատմութեանը տէր կանգնելու, բայց մեր յիշողութիւն մեզի թշնամի չգարձնելու պատգամը ունի անիկայ: Վէրքեր կան, չեն սպիանար... Բայց կը ստիպեն մարմինը անընդհատ կոփումներով մարզել ու զօրացնել աւելի, քան առաջ էր: Ապրիլ 24ը ազգի այդ վէրքը պիտի դառնայ, այս է անոր խորհուրդը:

Խօսքս կ'ուզեմ աւարտել Յովհաննէս Շիրազի քառատողով, որ հաւասարապէս Եղեռնի զոհերուն ալ կը վերաբերի..

Հայոց վշտի գլխով դարը լուռ անցաւ,
Արծաճն հագիւ ծայրը պատեց, խոյացաւ,
Ներք, սակայն, որ այսքան շատ ուշացաւ,
Նոր ենք զարթունւմ, հողն է մի բուռ, սիրելիք...:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Հայաստանի Հանրապետութեան Վսեմաշուք Դեսպան՝ Պրն. Արա Պապեան եւ ըսաւ.

«Մենք բոլորս այսօր հաւաքուել ենք Թորոնթոյի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցու գեղեցիկ շրջափակի մէջ, մէկ անգամ եւս մեր յարգանքի տուրքը մատուցելու Հայոց Յեղասպանութեան զոհերի յիշատակին: Այս հոյակերտ յուշարձանը քարեղէն մարմնացումն է մեր խորը վշտի եւ մեր անոնց յիշողութեան, բայց միեւնոյն ժամանակ եւ, թերեւս առաւելաբար, սա հայ ժողովրդի անկոտրում կամքի դրսեւորումն ու մեր աննահանջ երթի հաստատուն քայլերից մէկն է:

«Այսօր բացառիկ օր է Թորոնթոյի Հայ Կաթողիկէ համայնքի համար: Այսօր բացառիկ օր է բոլորիս համար՝ ողջ Գանատահայութեան համար, բոլոր հայերի համար: Հայ ժողովուրդը Մեծ Եղեռնի ազգակործան ու դաժան օրերին միասնական եղաւ իր ճակատագրով: Հայ ժողովուրդը միասնական պէտք է լինի վերապրումի, վերաշինութեան, պայքարի ու նուաճումների օրերին:

«Այսօր մենք շատ բան ունենք յիշելու, շատ բան ունենք մորմոքելու: Սակայն յիշողութեան ցաւին տրուելով խլուածը ետ չես բերի, կորցրածը չես վերագտնի: Ամէնօրեայ, միասնական ու հաւաքական պայքարի կարգախօսը պիտի լինի մեր ազգային գոյութեան միակ ու վաւերական սկզբունքը:

«Հայ ժողովրդի միասնական պայքարի, նուիրումի ու ինքնագոհումի արդիւնքն է այսօրուայ նորանկախ Հայաստանը՝ Մեծ Եղեռնի զոհերի համար կանգուն ամենամեծ, ամենացանկալի եւ կենսահաստատ կոթողը:

«Ես ուզում եմ հաւատալ, որ մեր անմեղ նահատակների հոգիներն այսօր, Թորոնթոյի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցու բակից մինչեւ հայրենի Արագած լեռ, որի երկինքում յաւերժօրէն կախուած է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի անմար կանթեղը, մեզ հետ են: Մեզ հետ են իրենց օրհնութիւններով ու բարեմաղթութեան մրմունջներով: Ես վստահ եմ, որ այդ օրհնութիւններ առաջին հերթին ուղղուած են նրանց, ում նիւթական ու բարոյական զոհողութիւններով, հետեւողական ու տեւական աշխատանքի շնորհիւ, այսօր այստեղ վեր է խոյանում այս նրբագեղ, բայց միեւնոյն ժամանակ առնական յուշարձանը:

«Այն ժողովուրդը, որը չի մոռանում հայրենի նահատակներին, չի ուրանում նրանց ուխտը, մի օր վստահաբար հասնելու է իր աննինջ երազների

իրականացման հանգրուանին, իր բոլոր արդար ձգտումների կենսագործմանը»:

Եկեղեցւոյ երգչախումբը ղեկավարութեամբ Պրն. Եսայի Սարգիսեանի եւ դաշնամուրով ընկերակցութեամբ տիկին Վերա Վէզիրեանի երգեց Գէորգ Էմինի «Տէր Զօր» քերթուածը:

Խօսք առաւ Պրն. Կիրօ Շահինեան, եկեղեցւոյ վարչութեան եւ յուշակոթողի յանձնախումբին անունով անգլերէն լեզուով շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, Յուշակոթողի յղացքը յղացող Պրն. Յակոբ Ծանապեանին, յուշակոթողի փորագրութիւնները կատարող ընկերութեան մասնագէտ Պրն. Wes Kurzydloին, եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերյարգելի Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեանին եւ բոլոր անոնց, որոնք նիւթապէս եւ բարոյապէս օժանդակեցին Յուշակոթողի շինութեան աշխատանքներուն:

Խօսք առաւ Հայր Եղիա Մ. Վարդապետ, եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կողմէ գնահատանքի մետալ մը՝ «Քար մըն ալ ես դրի» մականգրութեամբ փոխանցեց յուշակոթողի փորագրիչ Պրն. Kurzdloին:

Ապա, ըսաւ. «Այս պահուն, պարտք եւ պատիւ կը համարեմ յայտնելու, թէ այս խիզախ ծրագրի մտայղացումի, անոր գործադրումի, շինարարութեան, յամառ, բծախնդիր եւ հետեւողական պատասխանատուութեամբ եւ այս բոլորէն վեր հայ լինելութեան ու հաւատքի անխոնջ նուիրեալ արուեստագէտն է Տիար Յակոբ Ծամպապեան:

– Չունիմ խօսք յայտնելու իրեն ու իմ ջերմագոյն գնահատանքն ու երախտագիտութիւնը:

– Չունիմ արդար վարձատրութիւն տալու իրեն՝ այս մտայղացումին ու արուեստին բացառիկ գործին համար:

– Այս ծրագրի իրականութեան, իր արժանի բաժինը ունի նաեւ արուեստագէտին տիկինը՝ Ժուլիէթ Ծամպապեան, իր բարեացակամ հասկացողութեան եւ համբերութեան համար:

– Աւելի արժանաւոր կերպով կատարելու համար այս պարտականութիւնը բեմ կը հրաւիրեմ մեր Առաջնորդ Սրբազան Հայրը ու նաեւ արուեստագէտ ամուլը՝ Տէր եւ Տիկին Յակոբ եւ Ժուլիէթ Ծամպապեանը:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր գնահատանքի խօսքերը հոգեւոր հովիւ Գերյարգելի Տէր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան եւ Տէր եւ Տիկին Յակոբ Ծանապեաններուն ուղղելէ ետք, Պրն. Յակոբ Ծամպապեանը պատուեց Հայաստանի Քրիստոնէութեան 1700-ամեակի նուիրուած, Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան հրատարակած ոսկեայ մետալով եւ Կաթողիկէ Տիեզերական քահանայապետին Օրհնագիրը, գեղեցկօրէն շրջանակի մէջ անցած:

Շնորհակալութեան խօսքով հանդէս եկաւ Պրն. Ծամպապեան :

«Մեր 1.5 միլիոն անշիրիմ նահատակներուն հանդէպ իմ ունեցած զգացումներս, արտայայտիչ կը հանդիսանայ, այսօր, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ շրջափակին մէջ մեր կանգնած յուշակոթողը, որ կրանիթեայ իր կառուցուածքով ամէնօրեայ ներկայութիւն եւ ներշնչումի աղբիւր պիտի հանդիսանայ նորօրեայ սերունդին ու կրանիթեայ կամքով արդարութեան պահանջատէր հանդիսանայ քաղաքակիրթ աշխարհին:

«Նախ եւ առաջ կը շնորհաւորեմ Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Գերջարգելի Տէր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեանը, Հոգաբարձական կազմը եւ յուշակոթողին շինութեան յանձնախումբի անդամները, անոնք նախաձեռնեցին եւ իրագործեցին Եղեռնի Յուշակոթողի շինութեան ծրագիրը:

«Սրտանց շնորհակալութիւն կը յայտնեմ իմ աշխատանքս գնահատող Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի ոսկի Մետալին եւ Տիեզերական քահանայապետին ուղարկած օրհնագիրին համար: Այս գնահատագիրները ինծի համար պիտի դառնան ծառայասերութիւն նոր ցուցանիչ, շարունակելու համար Աստուծոյ ինծի պարգեւած շնորհները ի սպաս դնելու Հայ Ժողովուրդին եւ համամարդկութեան»:

Այնուհետեւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ հանգանակութիւն ի նպաստ յուշակոթողի շինութեան ծախսերուն:

Իրապէս շնորհաւորելի է եկեղեցոյ Հովիւ Գերջարգելի Հայր Եղիա Մ. Վրդ.-ի ջանքերը, յուշակոթողի հողօրհնէքի թուականէն ի վեր հետեւելով շինութեան հանգրուաններուն, կարողացաւ պատուաբեր ձեռնարկ մը յաջողցնել եւ մանաւանդ յուշակոթողի օրհնութեան ձեռնարկը ամենայն մանրամասնութեամբ ուսումնասիրուած յայտագրով եւ կարգապահութեամբ իրագործել:

Վարձքդ կատար վարդապետ:

«ՅՈՐԻՉՈՆ»
2002

ՊԱՏԻՒՍ ԱՐԺԱՆԱՒՈՐԱՅ

Շաբաթ, 25 Յունուար 2003, Երեկոյեան ժամը 8ին, Westin Prince պանդոկի սրահին մէջ տեղի ունեցաւ Թորոնթոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Գերյարգելի Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեանի քահանայական ձեռնադրութեան եւ հովուական առաքելութեան 40-ամեակը, որուն ներկայ գտնուեցան շուրջ 400 եկեղեցական, եւ պաշտօնական անձնաւորութիւններ եւ ազգայիններ:

Օրուայ հանդիսավարներն էին Մովիկ Խէյր-Այանեան (հայերէնով) եւ Կիրո Շահինեան (անգլերէնով), որոնց բարի գալուստի եւ բացման խօսքերէն ետք, տեղի ունեցաւ պատուոյ սեղանի ներկայացում, հետեւեալ կարգով. Հայր Անտոն Վրդ. Սարոյեան, Տիթրոյիտի Սուրբ Վարդան Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ, Հայր Ռաֆայէլ Վրդ. Անտոնեան, Պոսթընի Սուրբ Խաչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ եւ Դիւանապետ Առաջնորդարանի, Հայր Գէորգ Թ. Մ. Վրդ. Եղիայեան, Պատրիարքական Փոխանորդ Զմմառու Արդի Միաբանութեան, Արհիպատիւ Մանուէլ Եպսկ. Պաթագեան, Առաջնորդ Մ. Նահանգներու եւ Գանատայի Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ, Հայր Պօղոս Վրդ. Գազանձեան, տնօրէն Մոնթրէալի «Նարեկ» վարժարանի եւ Գերյարգելի Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան, Հոգեւոր Հովիւ Թորոնթոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ:

Արհիպատիւ Մանուէլ Եպսկ. Պաթագեանի կողմէ ճաշի սեղաններու օրհնութենէ ետք, տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն:

Ճաշի սպասարկութենէ ետք, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Պոսթընի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հայր Ռաֆայէլ Վրդ. Անտոնեանը:

Ողջոյնի խօսքով խօսք առաւ նաեւ յատկապէս Լիբանանէն ժամանած, Գերյարգելի Հայր Գէորգ Թ. Մ. Վրդ. Եղիայեան, Պատրիարքական Փոխանորդ Զմմառու «Արծիւ» Միաբանութեան:

Հանդիսավարները, Պատուոյ Սեղանի եկեղեցականներու ներկայացումէն եւ երկու ողջոյնի խօսքերէն ետք յայտարարեցին ներկայութիւնը հիւր եկեղեցականներու եւ պաշտօնական անձնաւորութիւններու. որոնց կարգին Սուրբ Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հոգեւոր Հայր Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեան, Ս. Երրորդութեան Հայոց Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժանապատիւ Տէր Զարեհ Քհ. Զարգարեան, Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հիմիլթընի Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Սարգիս Ա. Քհ. Կիւլոյեան: Անքլիկան եկեղեցիէն Արժ. Տ. Հարոլտ Քհ. Նահապետեան, Թորոնթոյի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Վեր. Եսայի Սարմազեան, Գէմպրիճի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Վեր. Յովհաննէս Սարմազեան, Գանատայի Դաշնակցային Խորհրդարանի անդամ Պր. Սարգիս Ասատուրեան:

Մանթիլ եւ տաղանդաւոր երաժշտագէտ, յորինող եւ երգչուհի Անահիտ Կուտսուզեան հիանալիօրէն երգեց «Կռունկ» երգը եւ «Տէր Քեզ Եմ Գալիս» մեղեդին, դաշնամուրով ընկերակցութեամբ Վերա Վեգիրեանի:

Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ նախկին Հոգեւոր Հովիւ Գերապատիւ Տէր Շահէ Մ. Վրդ. Փանոսեանի խօսքը կարգաց եկեղեցւոյ ներկայ Հովիւ Հոգեշնորհ Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեան եւ այս առթիւ յոբելեարին փոխանցեց իր սրտի խօսքը:

Շաղիկ Պետիրեան, դաշնամուրով նուագեց *The Summit Breeze*ը:

Սրտի խօսքով հանդէս եկաւ Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Զարեհ Մ. Վրդ. Զարգարեան, որուն յաջորդեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Շաթաբօրեայ Վարժարանի աշակերտուհի Անուշ Զիլինկիրեանի կողմէ արտասանուած Դ. Վարուժանի «Սերմնացանը» քերթուածը:

Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Վեր. Եսայի Սարմազեանի ողջոյնի խօսքէն վերջ, Ժանէթ Աբրահամեան կարգաց իր գրած երգիծական յուշեր յոբելեարի առօրեայէն:

Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ երգչախումբը, ղեկավարութեամբ Եսայի Սարգիսեանի եւ դաշնամուրով ընկերակցութեամբ Վերա Վեգիլեանի երգեց «Մեծացուցէ» եւ «Ընտրեալ» շարականները:

Պետական երեսփոխան Պր. Սարգիս Ասատուրեանի սրտի խօսքէն ետք, խօսք առաւ յոբելեարին եղբօր որդին Անթուան Գիրէջեանը, իսկ համայնքի խօսքը փոխանցեց դպրապետ Եսայի Սարգիսեան:


Մարալ Շահինեան եւ Մովսէս Հապթեան հանդէս եկան զուգերգով, երգելով «Զինչ Տաս Տրիտուր» մեղեդին:

Խօսք առաւ Առաջնորդ Արհիպպատիւ Մանուէլ Պաթազեան եւ իր խօսքէն ետք, Հայր Սուրբին փոխանցեց Սրբազան Պապին օրհնութեան գիրը եւ Զմմառու Արծիւ Իրաբանութեան կողմէ ոսկեգօծ խաչ մը, ինչպէս նաեւ Հայաստանէն բերուած Քրիստոսի պայծառակերպութիւնը խորհրդանշող պատառ մը:

Այս առթիւ, կազմակերպիչ յանձնախումբը հրատարակած էր 40-ամեակը խորհրդանշող գրքոյկ մը, ուր տեղ գտած էին Սրբազան Պապէն, Ներսէս-Պետրոս ԺԹ. Կաթողիկոս-Պատրիարք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Հայոցէն, Congregatio Pro Ecclesiis Orientali Busի Կարտինալ Daoudէն, Մանուէլ Եպսկ. Պաթազեանէն, Գանատայի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Խաժակ Ս. Եպսկ. Յակոբեանէն, Գանատահայոց էջմիածնական Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Յովնան Արք. Տէրտէրեանէն, Զմմառու Արծիւեան Իրաբանութեան Պատրիարքական Փոխանորդ Հայր Գէորգ Թ. Մ. Վրդ. Եղիայեանէն, Մոնթրէալի Տիրամայր Նարեկ Եկեղեցւոյ ժողովրդապետ Հայր Գէորգ Մ. Վրդ. Զապարեանէն, Թորոնթոյի Միջ-Յարանական Մարմնի ատենապետ Յակոբ Ճանպարհեանէն, Արժ. Տ. Սարգիս Ա. Քհ. Կիւլեանէն, Գանատայի Վարչապետ Ժան Քրէթիէնէն, Գանատական ժառանգութեան նախարար Շէյլա Քափսէն, Օնթարիօ վարչապետ էրնի Իվսէն, Թորոնթոյի քաղաքապետ Մէլ Լասթմանէն եւ Պետական երեսփոխան Սարգիս Ասատուրեանէն:

Ողջոյնի խօսքեր եկած էին նաեւ Մոնթրէալի Ս. Յակոբ Հայց. Մայր Եկեղեցւոյ նախկին Հովիւ Արժանապատիւ Տէր Արմէն Ա. Քհ. Իշխանեանէն եւ երէցկիւնէն, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Թորոնթոյի

մասնաճիւղի գործադիր վարչութեանն, Լոս Անճելըս լոյս տեսնող «Նոր Հայաստան» թերթի պատասխանատուներ՝ Վահան Զանսրգեանէն, Անթուան Գարամանլեանէն, եւ Ալպէո Մինասեանէն, Փարիզի Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Հովիւ Հայր Արմենակ Պետրոսեանէն եւ հոգաբարձութեանն, Լոս Անճելըսի Թագուհի Մարտիրոսաց Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հայր Անտոն Վրդ. Փանոսեանէն, Նիւ Ճըրզիի Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հայր Գէորգ Վրդ. Գալուստեանէն, եւ բազմաթիւ այլ անհատ ազգայիններէ եւ բարեկամներէ:



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ
Գերյարգելի Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրտչեան եւ
Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Շաքէ Դոթոյեաններ

Շնորհակալական եւ սրտի խօսքով հանդէս եկաւ Յոբելեար Գերյարգելի Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրտչեան, որ ի միջի այլոց ըսաւ.-

«Ամէն քահանայ ընտրուած է մարդոց մէջէն միջնորդելու համար ի նպաստ մարդոց, իրենց յարաբերութիւններուն մէջ Աստուծոյ հետ: Ոչ ոք կրնայ այս պատիւը իրեն տալ, այլ տրուած է մի միայն անոր որ Աստուծմէ կանչուած եւ ընտրուած է»:

«Սուրբ Պօղոսի այս խօսքերը եբրայեցիներուն գրուած նամակէն որպէս բնաբան այս պահուս իմ առաջնահերթ միտքս կ'երթայ Ամենակալ Աստուծոյ, որ 40 տարիներուն, ինչպէս քայլ առ քայլ հետեւեցաւ եւ առաջնորդեց Մովսէսն ու Ահարոնը Սինայի անապատէն մինչեւ խոստացուած երկիրը: Նոյնպէս ալ խորապէս համոզուած կը մնամ, թէ նոյն Տէր Աստուածը՝ իմ քահանայական կեանքի իւրաքանչիւր օրուան համար ինծի ընկեր դարձուց երկրնքի այն աստղը, որով երեք մոգ իշխանները հաւատարիմ մնացին իրենց կոչումին, առաքելութեան ու ճանապարհին»:

«Անմիջապէս ի խորոց սրտի բխած իմ շնորհակալութիւնս կը փափաքիմ յայտնել այս երեկոն, այս հանդիսութիւնը, գնահատանքի այս ճաշկերոյթըն ու յայտագիրը յղացող, բծախնդրօրէն պատրաստող ու գործադրող յանձնախումբին:

«Շնորհակալութիւնս կ'երթայ նաեւ այս երեկոյեան հանդիսութեան իրենց թանկագին բաժինը բերող եկեղեցւոյ Տիկնանց Միութեան, Դպրաց Դասին, անոր ղեկավարին ու դաշնամուրով ընկերակցողին, եւ, բոլոր անոնց, որոնք մեներգով, խմբերգով, անհատական ելոյթով, ողջոյնի խօսքերով, արտասանութեամբ, նուագով մասնակցութիւն բերին գեղարուեստական յայտագրին:

«Ջերմագին եւ յատուկ երախտագիտութիւնս կը յայտնեմ իմ քահանայական Միւռոնի օծակից մեր ներկայ առաջնորդներուն, կղերական դասի ներկայ հովիւներուն եւ վերջապէս ձեզի, սիրելիներ, որ այս երեկոյ միացաք, մէկտեղուեցաք ու եկաք ձեր ազնիւ երախտանքն ու գնահատանքը յայտնելու իմ անձէս անդին հայ կղերականին, հայ եկեղեցականին, հայ կրօնականին ու անոր սքեմին, կոչումին, նուիրումին եւ անոր հայ հաւատքի ու հայ լինելութեան խորանէն իր ընծայաբերած կեանքին ու աննահանջ սպասարկութեան: Ու առ այդ, պատիւ ձեզի եւ ձեր գիտակցական ու ազնուական կեցուածքին:

«Կը վստահեցնեմ ձեզ, թէ այսօրուան այս գնահատական, շնորհաւորական ու մաղթողական արտայայտութիւնները իմ անձէս անդին կ'ընծայեմ ու կը նուիրեմ հայ հարազատ կղերականին՝ անխտիր, խոնարհ թէ բարձրաստիճան, ծանօթ թէ անծանօթ, հեռաւոր թէ մեռձաւոր եւ բոլոր իմ միաբանակից եղբայրակիցներուն, որոնց ամէնուն հետ կը բաժնեմ նոյն քահանայութիւնը, նոյն օծումը, նոյն սպասարկութիւնը հայ եկեղեցւոյ եւ նոյն ծառայութիւնը Հայ Ազգին:

«Քառասուն տարիներու ճանապարհի մը պատմականը ու անոր ընթացքին քահանայական հովուական կեանքի մը ելեւէջները, անցողարձեքը, անոր արեւոտ կամ անձրեւոտ օրերը, պայծառ օրերը, մութ գիշերները, անոր ընթացքին, առանձնութեան, յուսախաբութեան, անհիմն ու անարդար զըրպարութիւններու մղձաւանջը, ինչպէս նաեւ Մխիթարեան օրհնեալ, երկնառատ պահերը՝ արագաբար վրձինելն ու հպանցիկ ակնարկով քանի մը վայրկեաններու մէջ բաւարարելն ու պարփակելը անկարելի է:

«Իմ անձին ու քահանայական ծառայութեան մասին առաւելագոյն չափով, պիտի ըսեմ, շուրջօրէն խօսուեցաւ այս երեկոյեան հանդիսութեան: Սակայն եւ այնպէս, պէտք է անձնապէս ըսեմ, թէ քառասուն տարիներ առաջ, ճշգրիտ 25 Դեկտեմբեր 1962ին, երբ կուսակրօն քահանայ կը ձեռնադրուէի, կեանքիս ուղղութեան երկու բեւեռները ընտրեցի իմ հայ քրիստոնեայ Միւռոնը ու իմ ազգի արիւնը: Եւ այդ թուականին, այս երկու բեւեռներուն միայն ուխտեցի եւ ամբողջական նուիրում եւ ամբողջական հաւատարմութիւն եւ ամբողջական ծառայութիւն եւ այս մէկը, ուր որ ըլլայի, ինչ որ ալ ընէի:

«Պատմագիր Եղիշէի խօսքերը քառասուն տարիներու ճանապարհին, մրճահարեցին իմ խիղճն ու հոգին, սա կրկնելով, թէ այս հաւատքէն, այս միւռոնէն եւ արիւնէն, այսինքն՝ Աստուծոյ եւ հայութեան խորանէն ո՛չ մէկ բան կրնայ հեռացնել կամ բաժնել զիս, ո՛չ աշխարհը իր սնութեամբ եւ ո՛չ օտարու-

թիւնը իր խորթ հրապոյրով: Այս համոզումներս հիմնուեցան, խորացան եւ ամրապնդուեցան տարիներու ընդմէջէն, Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի կեանքին վերջին խօսքերով:–

«Գացէք աշխարհ, Ս. Հոգին ձեր վրայ պիտի իջնէ, զօրութիւն պիտի առնէք ու դուք ինծի վկաներ պիտի ըլլաք մինչեւ աշխարհին ծայրերը»:

«Խօսքս կը փակեմ ձեզ թողելով այս երեկոյեան, նոյն այդ յիշատակի խօսքերով, զորս ես որպէս բնաբան ընտրած էի իմ քահանայական կուսակրօն ձեռնադրութեան՝ «Մատիք առ Տէր եւ առէք զլոյս: Մօտեցէք, եկէք Քրիստոսի եւ առէք անոր լոյսը, կեանքը եւ ճամբան՝ եկէք, այսօր եւ միշտ, յաւիտեանս յաւիտենից Ամէն»:

Գերյարգելի Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեանի շնորհակալական եւ սըրտի խօսքերէն ետք, բեմ բարձրացաւ եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ պրն. Ժան Թեսէմէր, եւ հոգաբարձութեան կողմէ յորելեարին նուիրեց Հայաստան երթողարձի տոմս մը:

Մեծարանքի պատմական այս ճաշկերոյթը փակուեցաւ եկեղեցւոյ երգչախումբին կողմէ երգուած Տէրունական աղօթքով:

«ՅՈՐԻՉՈՆ»
2003

ԶՕՐԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՂԱՔԷԿԵԱՆ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Հայաստանի պաշտպանութեան փոխ նախարար ընկեր Զօրավար Արթուր Աղաբէկեան թորոնթօ ժամանեց եկուշաբթի, 24 Մարտ 2003, երեկոյեան ժամը 6:30ին եւ դիմաւորուեցաւ Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի եւ Հ.Յ.Դ. Գանատայի Երիտասարդական Միութեան ներկայացուցիչներուն կողմէ:

Զօրավար Աղաբէկեան, երեքշաբթի, 25 Մարտ 2003, առաւօտեան ժամը 9:00ին, առաջնորդութեամբ Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ ընկեր Յակոբ Ճանպազեանի, ներկայ եղաւ Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի առաւօտեան աղօթքի հաւաքոյթին:

Վարժարանի տնօրէն՝ ընկեր Ռաֆֆի Տուտազլեան աշակերտութեան ներկայացուց հայ մեծարժէք հիւրը, եւ հրաւիրեց զայն խօսելու աշակերտութեան:

Հայաստանի պաշտպանութեան փոխ նախարարը խօսք առնելով, իր հիացումը յայտնեց Գանատայի այս ասիւրուն վրայ կառուցուած հայ դպրոցի գոյութեան եւ մեծ թիւով հայ աշակերտներուն տրուած հայեցի դաստիարակութեան, որոնք հայ դպրոցի շնորհիւ կը ծանօթանան հայերէն լեզուին, գրականութեան եւ մշակոյթին:

Հայ մեծանուն հիւրը կարգ մը տեղեկութիւններ տուաւ Հայաստանի, հայկական բանակի եւ Հայաստանի հայ աշակերտութեան մասին, կոչ ուղղելով աշակերտութեան, որպէսզի, երբ 18 տարեկան ըլլան, մաս կազմեն Հայաստանի հայկական բանակին, պաշտպանելու համար Հայրենիքը, այլազան թըշնամիներէն:

Այնուհետեւ, յարգելի հիւրը, առաջնորդութեամբ վարժարանի տնօրէն ընկեր Տուտազլեանի, այցելեց վարժարանի 7րդ, 8րդ եւ 9րդ դասարանները, ներկայ եղաւ իրենց դասերուն եւ իր պատգամը տուաւ աշակերտութեան:

Զօրավար Աղաբէկեան այցելեց նաեւ Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի, ապա, հանդիպում մը ունեցաւ եկեղեցւոյ հոգեւոր Հովիւ՝ Հոգեշնորհ Տէր Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեանի հետ:

Հայրենի մեծարգոյ հիւրը ներկայ գտնուեցաւ Հայ Կեդրոնի Երէցներու Ընկերակցութեան հաւաքոյթին եւ խօսք առնելով խանդավառեց հայ տարեցները հայրենաշունչ եւ ազգակերտ իր խօսքերով:

Զօրավարին, Հայաստանի օժանդակութեան յանձնախումբին հետ իր ունեցած հանդիպումին, խօսակցութեան նիւթ դարձաւ յանձնախումբին կողմէ Հայաստան ուղարկուած զանազան օժանդակութիւններուն եւ ապագայ ծրարագիրներու մասին, որոնց անմիջական պէտքը կը զգացուի Հայաստանի պետական եւ կրթական հաստատութիւնները:

Զօրավար Աղաբէկեան, ընկերակցութեամբ ընկեր Յակոբ Ճանպազեանի, Երեքշաբթի, 25 Մարտի կէսօրէ ետք ժամը 3:00ին, այցելեց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Եկեղեցի եւ հանդիպում ունեցաւ եկեղեցւոյ հոգեւոր Հովիւ Գերյարգելի Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէջանի հետ, իսկ երեկոյեան ժամը 9:30ին, հանդիպում ունեցաւ Հ.Յ.Դ.Գ.Ե.Մ.եան «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղի վարչութեան եւ Հ.Յ.Դ.Գ.Ե.Մ.եան Կեդրոնական Վարչութեան հետ:

Չորեքշաբթի, 26 Մարտ 2003, առաւօտեան ժամը 9:30ին, Զօրավար Աղաբէկեան, ընկերակցութեամբ ընկեր Յակոբ Ճանպազեանի, այցելեց Ս. Խաչ Ազգային Ամէնօրեայ եւ Հ.Բ.Ը.Մ.ի «Ջարուկեան» Ամէնօրեայ Վարժարանները եւ հանդիպում ունեցաւ վարժարանի պատասխանատուներուն եւ տնօրէնուհիներ՝ Տիկին Տիանա Հանրմեանի եւ Օր. Յասմիկ Քիւրտեանի հետ:

Աշակերտները հիւրին ի պատիւ արտասանեցին հայրենասիրական բանաստեղծութիւններ եւ երգեր:

Զօրավար ընկեր Արթուր Աղաբէկեան, Երեքշաբթի, 25 Մարտ 2003, կէսօրէ ետք ժամը 2:00ին, անցելեց Քէմպրիճի Հայ Կեդրոն եւ դիմաւորուեցաւ Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ ընկեր Վրէժ Գասամանեանի եւ տեղական կոմիտէի անդամներուն կողմէն: Նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Զօրավարը, ընկերակցութեամբ ընկերներ Յակոբ Ճանպազեանի, Վրէժ Գասամանեանի եւ Կարօ Փոստաճեանի պաշտօնական այցելութիւն մը տուին Ուաթըրլուի ոստիկանապետ Չիֆ Օֆ Փոլիս Լէրի Կրավէլի եւ Տէբիւթի Չիֆ Պրայըն Քոնինկհամի, Մայք Մունի եւ հայազգի էնսփէթթէօր Մաթ Թորիկեանի հետ:

Խօսակցութեան նիւթ դարձաւ Գանատայի ոստիկանութեան օժանդակութեան կարելիութիւնները Հայաստանի ոստիկանութեան՝ մասնագիտական եւ նիւթական միջոցներով:

Հինգշաբթի, 27 Մարտ 2003, առաւօտեանն ժամը 9:30ին, Զօրավար Աղաբէկեան, ընկերակցութեամբ ընկեր Յակոբ Ճանպազեանի մեկնեցաւ Նիակարա Ֆոլզ եւ վերադարձին այցելեցին Սէնթ Քաթրինզի եւ Համիլթընի հայ կեդրոնները, ուր դիմաւորուեցան տեղւոյն ղեկավար ընկերներու կողմէ:

Զօրավարը մեծապէս գնահատեց փոքրաթիւ հայ դաղութներու հայապահպանման ճիգերը, ի տես հոյակերտ հայ կեդրոններու, որոնց շնորհիւ տեղւոյն հայութիւնը առիթը կ'ունենայ յիշատակելու իր տօները եւ պահելու տոհմիկ բարքերը:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 9ին, Արցախի ազատագրական շարժման 15-ամեակի յուշ երեկոն տեղի ունեցաւ Թորոնթոյի Հայ Կեդրոնի սրահին մէջ, ուր խօսք առաւ Զօրավար Աղաբէկեան, որպէս օրուան պատգամախօս:

Հայրենի նշանաւոր զօրավարը Թորոնթոյէն Մոնթրէալ մեկնեցաւ Ուրբաթ առաւօտեան ժամը 7ին:

«ՀՈՐԻՉՈՆ»
2003

**ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ
15-ԱՄԵԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ
ԵՒ ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ**

Կազմակերպութեամբ Հ.Յ.Դ. Գանատայի Երիտասարդական Միութեան Թորոնթոյի «Միմոն Զաւարեան Մասնաճիւղին», Հինգշաբթի, 17 Մարտ 2003, երեկոյեան ժամը 9ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ Արցախի ազատագրական շարժման 15-ամեակին նուիրուած ժողովրդական ասուլիս եւ յուշ երեկոյ, որուն ներկայ գտնուեցան շուրջ 300 ազգայիններ:

Բացման խօսքով հանդէս եկաւ օրուան հանդիսավար ընկերուհի Թինա Պապօշեան եւ Հ.Յ.Դ. Գանատայի Երիտասարդական Միութեան եւ Թորոնթոյի «Միմոն Զաւարեան» Մասնաճիւղի բոլոր անդամ-անդամուհիներուն անունով բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ յատուկ շնորհակալութիւն օրուան բանախօսին, Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան Փոխ Նախարար Զօրավար ընկեր Արթուր Աղաբէկեանին, որ սիրով ընդառաջեց Հ.Յ.Դ. Գանատայի Երիտասարդական Միութեան Կեդրոնական Վարչութեան հրակէրին, որպէս բանախօս ներկայ գտնուելու Թորոնթոյի եւ Մոնթրէալի ժողովրդային հաւաքներուն:

Ընկերուհի հանդիսավարը ըսաւ. «Արցախեան շարժման 15-ամեակին առթիւ, աշխարհով ցրուած հայութիւնը՝ Սփիւռքի եւ Հայաստանի մէջ, անգամ մը եւս եկաւ փաստելու, որ հայ ժողովուրդը անզիջող է իր պահանջատիրութեան մէջ եւ յարատեւ պայքարով կ'արձանագրէ փայլուն յաղթանակներ:

Մեծ հաւատքով եւ ոգիով տոգորուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան երիտասարդական շարքերը ամէնուրեք կը դիմեն դէպի ապագայ, օրինակուելով Արցախի յաղթանակներէն կը ձգտին իրականացնել եւ ձեռք բերել Հայ Յեղափոխական Դաշնակցութեան երկար տարիներու երազը՝ ազատ, անկախ եւ միացեալ հայրենիքը կերտելու, հայապատկան հողերը ազատագրելով մեր դարաւոր թշնամիին ճիրաններէն»:

Հանդիսավար ընկերուհի Թինա Պապօշեան, հակիրճ տողերով ներկայացուց օրուան բանախօս Գեներալ-Մայօր Արթուր Աղաբէկեանը:

«Արմատներով արցախցի՝ Արթուր Աղաբէկեան, ծնած է 1963 Նոյեմբեր 24ին, Արցախի Հազարութի շրջանի մեծ Թաղլա գիւղը: Միջնակարգը աւարտելէ յետոյ, Արթուր կ'ուսանի Երեւանի Պոլիտեխնիկական Ինստիտուտին մէջ եւ 1986ին կ'աւարտէ, ստանալով ելեկտրական-ինժինէրի որակաւորում եւ Լէյտինանտի զինուորական կոչում: 1988 Օգոստոսին, երիտասարդ արցախորդին կը տեղափոխուի Ստեփանակերտ եւ մինչեւ 1991 թուականը կ'աշխատի քոնտասաթէնթի գործարանին մէջ, որպէս արտադրամասի պետ: Յետոյ, ընտանիքի, հայրենի հողի եւ ինքնապաշտպանութեան թելադրանքով, ինչպէս հազարաւոր արցախորդիք, ինժինէր Արթուր Աղաբէկեան զէնք կը վերցնէ եւ «մէկ ազգ, մէկ հայրենիք» նշանաբանով դուրս կու գայ ազերի թուրքին դէմ: Հազարութի ինքնապաշտպանութեան առաջին ջոկատներու կազմակերպիչներէն եւ մարտի տանողներէն է ան: Նիկոլ Դումանի, Վանայ Իշխանի, Նժդեհի եւ Դրոյի

ուխտի սուրբ յետնորդ եւ մերօրեայ քաջարի Փէտայապետ: Արցախի եւ Հայաստանի անկախացումէն յետոյ, երբ կը ստեղծուի հայոց բանակը, Ա. Աղաբէկեանը կը դառնայ կամաւոր զինուոր եւ 1992 Սեպտեմբերին զէնքը ձեռքին կը կռուի անոնց դէմ, որոնք կրակ կը ցանէին Արցախին, որպէսզի արիւն հընձեն: 1992 Մարտ ամիսէն մինչեւ Յունիս ամիսը, ան անկախացած Արցախի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդի առաջին Նախագահ Արթուր Մկրտիչեանէ յետոյ, Գէորգի Պետրոսեանի խորհրդականն էր: Մի քանի ամիս անց, 10/10/1992, Արթուր Աղաբէկեանը արդէն Լեռնային Ղարաբաղի Հազարութի առաջին պաշտպանական շրջանի հրամանատարն էր: 1993 Մայիսին ան դարձաւ Լ.Ղ.Հ. պաշտպանական բանակի օպերաթոր բաժնի 4րդ բանմունքի ղեկավարման կէտերու պետ: Վիրաւորուելէ եւ ապաքինուելէ յետոյ, քաջարի արցախորդին մարտադաշտը չլքեց եւ 1994 Յունուար 25ին ընդունեց Լ.Ղ.Հ. պաշտպանական բանակի առաջին պաշտպանական շրջանի հրամանատարի պատասխանատու պաշտօնը:

«Այն ճակատներու վրայ ուր կը գտնուէր Արթուր Աղաբէկեան, ան միշտ կը գտնուէր առաջին գիծի վրայ եւ ահ ու սարսափ էր թուրքի համար: Ան անվրէպ կը կրակէր, շուտ կը կողմնորոշուէր, հոգատար էր ամէն մէկ զինուորի եւ ամէն մէկ փամփուշտի համար: 1992 Հոկտեմբերին, ան արդէն Կապիտանն է: Հաշուի առնելով Արթուր Աղաբէկեանի անբասիր նուիրումն ու ներդրումը Լ.Ղ. Հանրապետութեան զինուորական հզօրացման գործին, Լ.Ղ.Հ. ինքնապաշտպանութեան պետական կոմիտէն, երիտասարդ սպային վաղաժամ կէտ շնորհեց Մայօր կոչում՝ 9/11/92ին, իսկ երկու տարի անց՝ փոխ-գնդապետի եւ 1996ին՝ Գնդապետի կոչում:

«Արցախի մարտնչումներու ընթացքին, անուն հանած զինուորականը, երբ 25 Յունիս 1997ին տեղափոխուեցաւ հայկական զինուժի N16396 զօրամասի (1ին բանակային կորպուս), որպէս հրամանատարի տեղակալ: Որոշ ժամանակ Գորիսի շրջանին մէջ ծառայելէ ետք, գնդապետ Ա. Աղաբէկեան կը տեղափոխուի Կապան: Ան N54122 զինամասի հրամանատարի պաշտօնէն զորագրուելով աշխատանքի կ'անցնի Երեւանի մէջ, որպէս Հայաստանի Հանրապետութեան ծրագրերու վարչութեան պետ: Ու թէեւ խաղաղ էր աշխատանքը, գրասենեկային, բայց եւ այնպէս, այն չյուզեց «մարտական խաչի առաջին աստիճանի (Լ.Ղ.Հ. 1996) Լ. Մարտական խաչի երկրորդ աստիճանի (Հայաստանի Հանրապետութեան 1966) շքանշանակներ եւ «Մարշալ Բաղրամեանի անվան» մետալակիր: Նկատի ունենալով Արթուր Աղաբէկեանի Լ.Ղ.Հ. բանակաշինութեան ու ինքնապաշտպանութեան բերած ակնառու ծառայութիւնները, Հայաստանի Նախագահը 21 Մարտ 2000ին, գայն նշանակեց Հ. Հանրապետութեան պաշտպանութեան Նախարարի տեղակալ, իսկ մի քանի ամիս անց (02/09/2000) ան արժանացաւ գեներալ-Մայօրի զինուորական բարձր եւ պարտաւորեցնող կոչման»:

«Զօրավար Արթուր Աղաբէկեան, 2002ին, Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան Նախարարի հրամանագրով, կ'արժանանայ «Զօրավար Դրաստամատ Կանայեան» պատուանշանին»:

Այնուհետեւ, ցուցադրուեցաւ Արցախեան պատերազմի սխրագործութիւնները եւ կռիւները պատկերացնող պատկերիզ մը:

Բեմ հրաւիրուեցաւ Հայաստանի Պաշտպանութեան տեղակալ Գենե-
րալ-Մայոր Արթուր Աղաբէկեան եւ նախ իր հրճուանքը եւ ուրախութիւնը
յայտնեց, Թորոնթոյի մէջ երեք օրերու ընթացքին այցելելով կրթական օ-
ճախները եւ հայ կեդրոնները, ուր հայ նոր սերունդը առիթը կ'ունենայ ստա-
նալու հայեցի կրթութիւն եւ դաստիարակութիւն:

Խօսելով Արցախի ազատագրական պայքարի 15-ամեակին մասին, ըն-
կեր զօրավարը ըսաւ, թէ 15 տարի ժամանակական մեծ թիւ չէ: Ան ըսաւ, թէ
Արցախեան ազատագրական շարժումը սկսաւ 1920ին Մոսկուայի մէջ որոշ-
ւած Լեւոնային եւ Դաշտային Արցախը Ազրպէյճանի իշխանութեան ենթարկե-
լու հրամանագրէն ետք: Այդ պայքարը շարունակուեցաւ, 1967ին կրկին Մոս-
կուա դիմուեցաւ, որպէսզի Արցախը միանայ Հայաստանին: Նամակը կամ դի-
մումը ստորագրող 17 մտաւորականներ արտաքսուեցան Արցախէն, վերա-
դառնալու իրաւունք չունենալով:

1988 Փետրուարին, Արցախի, Հայաստանի եւ Սփիւռքի հայութիւնը
ոտքի ելաւ, Ղարաբաղի Հայաստանի միացումը պահանջելով: Սակայն պա-
տասխանը եղաւ Սովետային սպանութիւնները:

1988-1991, Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի հայութիւնը, ականա-
տես եղաւ տիրահոշակ ուսու գինուորականներու օգնութիւնը Ազրպէյճանա-
կան օմօնականներուն, որոնք ամայացուցին Շահումեանի եւ Գետաշէնի շըր-
ջանները հայ բնակչութենէն:

Այնուհետեւ կազմուեցան հայկական կամաւորական գունդեր, պաշտ-
պանելու համար Արցախի գոյութիւնը:

Խորհրդային Միութեան փլուզումով, պայքարի նոր շրջան ստեղծուե-
ցաւ Ազերական բանակին եւ Արցախեան կամաւորական ուժերու միջեւ:

Այնուհետեւ կազմուեցաւ Արցախեան բանակը եւ թիւով 18 պաշտպա-
նական շրջաններ, որոնք օրհասական կռիւներ մղեցին ազրպէյճանական բա-
նակներուն եւ օդանաւերուն դէմ:

Սփիւռքի քաղաքական եւ նիւթական օժանդակութիւններ մեծապէս
նպաստեցին Արցախեան պատերազմի յաջողութեան:

Արցախեան բանակը ազատագրեց Շուշին, Քէլբաչարը եւ Դաշտային
Ղարաբաղէն մասեր, որոնք կենսական են Արցախին եւ Հայաստանի անվտան-
գութեան համար:

1994ին հաստատուած գինադադարը կը շարունակուին: Հայ ժողովուր-
դը պատրաստ պէտք է ըլլայ միշտ պաշտպանելու իր հայրենիքը եւ ազատու-
թիւնը:

Ազրպէյճան եթէ վստահ ըլլայ, որ իր ուժերով պիտի կարենայ ընկճել
Ղարաբաղը, չի տատամսիր անմիջապէս գործադրելու իր ծրագիրը, ամայաց-
նելու նաեւ Արցախը:

Արցախի գոյութեան սպառնալիքներ կան յատկապէս Թուրքիայէն եւ
Ազրպէյճանէն: Մենք կրնանք մեր նուաճումները պաշտպանել մեր հաւաքա-
կան ուժերով, այն գիտակցութեամբ, որ ամէն հայ գինուոր է Հայաստանի եւ
Արցախի:

Բովանդակալից եւ տպաւորիչ բանախօսութենէն ետք, առիթ տրուե-
ցաւ հարցումներու:

Եղան բազմաթիվ հարցումներ, որոնք կը շօշափէին Արցախի անվտանգութիւնը:

Արցախի եւ ազատագրուած հողերը հայ բնակչութեամբ զօրացնելու, Արցախի հարցը խաղաղութեամբ լուծելու հնարաւորութիւններու մասին, եւլայլն:

Ընկեր զօրավարը սպառիչ կերպով եւ խոր հասկացողութեամբ պատասխանեց բոլոր հարցումներուն:

**«ՀՈՐԻՉՈՆ»
2003**



Գրիգոր Զոթոյեան Երեւանի մէջ նկարուած Զայաստանի Ազգային պաշտպանութեան փոխ-նախարար Գեներալ-լաֆթնատ Արթուր Աղաբէկեանի եւ բանաստեղծ, պատմաբան, հրապարակագիր, հրատարակիչ Սասուն Գրիգորեանի հետ:

Ե.

ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՎԱՀԱԳՆ ԴԱԽԻԹԵԱՆԻ ՀԵՏ

Հայրենի ականաւոր բանաստեղծ Վահագն Դաւթեանի եւ երգչուհի Աննա Նշանեանի թորոնթօ այցելութենէն օգտուելով, Համազգային Մշակութային Միութեան վարչութիւնը գեղեցիկ գաղափարը ունեցած էր զանոնք պատուելու ընկերային հաւաքոյթով մը, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 21 Հոկտեմբեր 1977ի, երեկոյեան ժամը 9:30ին, Հայ Կեդրոնին սրահին մէջ:

Խմիչքով եւ ընթրիքով համեմուած այս հաւաքոյթին ներկայ գտնուեցան հոծ թիւով ընկերներ եւ ընկերուհիներ:

Երգչուհի Աննա Նշանեան կը բացակայէր, կամ քէ անկախ պատճառներով:

Բացման խօսքը ըրաւ Համազգային Մշակութային Միութեան Շրջանային Վարչութեան անդամ ընկ. Մարգար Շարապխանեան:

Բարի գալուստ մաղթելէ վերջ Հայրենի տաղանդաւոր բանաստեղծին, ներկայացուց զայն, տալով կենսագրական հակիրճ գիծեր եւ անդրադառնալով անոր գրական գործերուն:

Ապա, խօսք առաւ բանաստեղծը եւ իր սրտագին շնորհակալութիւնները յայտնեց Համազգայինի Վարչութեան՝ իրեն ի պատիւ տրուած այս հաւաքոյթին համար: Ողջունեց ներկաները եւ տուաւ հայրենաշունչ իր պատգամը:

Ներկաներուն կողմէ եղան կարգ մը հարցումներ, որոնք կը շօշափէին ազգային, գրական, արուեստի եւ այժմէական հարցեր, որոնց սիրով պատասխանեց հայրենի բանաստեղծը:

Ընկերուհի տիկ. Ալիս Վարդանեան ապրումով արտասանեց Վահագն Դաւթեանին անտիպ մէկ պոէմէն հատուած մը, զոր բանաստեղծը գրած է դէպի հայ ժողովուրդի սպանդանոցը՝ Տէր-Ձօր կատարուած իր այցելութեան տպաւորութեան տակ. իրապէս յաջող եւ ապրող գործ մըն է, որ կու գայ տալու հայ ժողովուրդի մահերգութիւնը՝ տպաւորիչ պատկերներով:

Արտասանեցին ընկ. Գալուստ Պապեան եւ ընկերուհի տիկ. Սօնա Յովհաննէսեան: Իսկ ընկերուհի օր. Արշալոյս Պոյաճեան երգեց Սայաթ-Նովայի «Թամամ Աշխարհ»ը:

Խօսեցաւ նաեւ Համազգայինի Շրջ. Վարչութեան ատենադպիր ընկ. Վրէժ-Արմէն Արթինեան, որ ողջունելէ վերջ հայրենի հիւրը, ներկաներուն պարզեց Շրջ. Վարչութեան ծրագիրները, որոնք կ'ընդգրկեն սոյն տարեշրջանին իրագործելի գրական, թատերական եւ արուեստի այլ մարզեր:

Հաւաքոյթի վերջաւորութեան, Համազգայինի Վարչութեան անունով՝ փոխ-ատենապետ ընկ. Մանուէլ Շեհիրեան գեղեցիկ եւ արժէքաւոր գրիչ մը նուիրեց բանաստեղծ Դաւթեանին, մաղթելով որ այդ գրիչը ծառայէ ճոխացնելու հայ գրականութիւնը՝ մնայուն եւ արժէքաւոր գործերով:

Գիշերուան ժամը 12ին, հայրենի բանաստեղծը ակամայ բաժնուեցաւ այս տաք եւ հայաշունչ մթնոլորտէն, յաջորդ առաւօտ ճամբորդելու հարկադրանքին տակ գտնուելով:

Շնորհակալութիւն Համազգայինի Վարչութեան, նման շնորհաւորելի ձեռնարկին համար, մաղթելով որ այսպիսի առիթներ յաճախ ստեղծուին:

*Իբրև «Հայերենի»-ի Թորոնթոյի թղթակից, օգտուելով Վահագն Դա-
ւրթեանի ի պատիւ տրուած այս հաւաքոյթէն, իրեն ներկայացուցի գրաւոր
կարգ մը հարցումներ, որոնց պատասխանեց հրապարակաւ.*

Կու տանք հարցումները եւ պատասխանները.—

3. Ձեր շրջապատյորը ե՞րբ սկսաւ, ե՞րբ վերջ կը գտնէ եւ ո՞ր գաղութները կ'ընդգրկէ:

Պ. Մենք ժամանեցինք, ես եւ Աննա Նշանեանը, Յոկտ.ի 17ին, Մոնթրէալ, եւ հանդիպումներ ունեցայ այդտեղի հայութեան հետ: Եկանք այստեղ եւ պիտի գնանք Ուինիբէք, այդտեղից Վանքուվըր, Վանքուվըրից՝ Սան Ֆրանսիսքօ, Շիքակօ, Նիւ Եորք: Նիւ Եորքից պիտի վերադառնանք Յայաստան:

3. Ի՞նչ են ձեր տպաւորութիւնները՝ ձեր այցելած գաղութներէն:

Պ. Ես, ուրեմն, երկու անգամ Ֆրանսայում եմ եղել, Ամերիկայում, Լիբանանում չեմ եղել դժբախտաբար: Որպէս հայ գաղութ, իմ վրայ շատ մեծ տպաւորութիւն է թողել Սիրիայի հայ գաղութը: Ուղղակի ես հիացած էի այն տեղի այն ջանքերի վրայ, որ նրանք ի գործ են դնում հայապահպանման համար: Ես այցելեցի մի շարք դպրոցներ եւ այն տպաւորութիւնը ստացայ որ, դրանք պետականութիւն ունեցող ժողովուրդի դպրոցներ են:

Իսկ միւս, Ֆրանսայի եւ Ամերիկայի հայ գաղթօջախներում, այնտեղ էլ ամէն ինչ արւում է հայապահման համար, բայց չգիտեմ թէ անոնք որքան արդիւնաւետ կարող են լինել, նկատի առած տեղական պայմանները:

3. Հայապահպանման համար ի՞նչ միջոցներ կ'առաջարկէք:

Պ. Այդ միջոցները շատ են: Այդ դեղատոմսը տալը մի քիչ դժուար է, բայց, ահա, այն ինչ որ դուք անում էք, այն ինչ որ գաղթօջախներում արւում է, այն ինչ որ հայրենիքն է անում՝ եթէ այդ բոլոր ջանքերը գումարուեն եւ ստեղծուի միասնութիւն հայկական բոլոր կազմակերպութիւնների միջեւ, այդ միասնութիւնը մեծապէս կարող է նպաստել հայապահպանման գործին: Եւ կապը հայրենիքին հետ որքան սերտանայ՝ Սփիւռքը աւելի ապահով եւ ամուր կարող է զգալ ինքզինք:

3. Արտասահմանի հայութեան հետ մշակութային կապի կոմիտէն ի՞նչ միջոցներ ունի, մանաւանդ Ամերիկայի եւ Եւրոպայի հայ գաղութներուն օժանդակելու համար:

Պ. Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէն, նախ երկու տըրպազիր օրկաններ ունի.- «Հայրենիքի Ձայն» եւ «Սովետական Հայաստան» ամսագիրը: Դրանք ուղարկում են 15 հազար օրինակով «Հայրենիքի Ձայն» սփիւռքի անդամների, կազմակերպութիւնների, դպրոցների, եւ, եթէ հազար օրինակով «Սովետական Հայաստան» ամսագիր: Մեծ քանակութեամբ գրականութիւն ենք ուղարկում դպրոցներին, գրադարաններին, իսկ ամենակարեւոր բանը՝ որ հայրենիքը անում է, Սփիւռքի դպրոցներին հայերէն լեզուի դասագիրքեր ուղարկելով, որոնք տպագրուել են արեւմտահայերէնով, սկսած այբբենարանից, մինչեւ բարձրագոյն կարգերի աշակերտների համար: Այդ դասագրքերը կազմել են արեւմտահայերէնի բաւականին գիտակ մանկավարժներ: Այս դասագրքերը գնելով բարելաւում են, եւ լաւ ընդունելութիւն ունեն դպրոցներում:

Յաճախակի՝ Սփիւռքահայութեան հետ կապի կոմիտէն արտիստական խումբեր է ուղարկում Սփիւռքի գաղութներին նրանց պահանջողներին համաձայն: Եւ իըրաւիրում ենք, արտասահմանից հրաւիրում ենք Սփիւռքի գործիչներին, մշակութային գործիչներին, խմբագիրներին, եւայլն: Իսկ լաւագոյն գործերից մէկն է, որ ամէն տարի Սփիւռքահայ դպրոցների ուսուցիչներն են, թուով երեսուն, արդէն 12-13 տարի է, անընդհատ գալիս են, ամէն տարի երեսուն ուսուցիչ գալիս է մէկ ամիս ժամանակով, այնպէս շատ նշանաւոր մեր մանկավարժները, մեր փրօֆեսորները, նրանց համար

դասախօսություններ են կարդում և նրանք պատրաստում են Հայաստանում, ըՍ֊փիւռքի դպրոցներում աւելի լաւ կազմակերպեն մանուկների հայեցի դաստիարակութիւնը:

Զրաւիրում ենք նաեւ ամէն ամառ երախաներին, տարբեր երկրներից դպրոցական երախաներ են գալիս, հարիւր հոգիէ, այս տարի հարիւր յիսուն հոգի եկան, հարիւր հոգի միայն Լիբանանից երախաներ եկան, մէկ ամիս հանգստացան Հայաստանի Պիոներական ճամբարներին: Պար սորվեցին, հանգստացան, լեզու սորվեցին, հայկական երգել սորվեցին, բարեկամութիւն հաստատեցին Հայաստանի երախաների հետ, նամակագրութիւն ստեղծեցին անոնց հետ, այնպէս որ հայրենիքի պատկերը, հայրենիքի տպաւորութիւնները նրանց սրտում պահուում է եւ այդ այցելութիւնից յետոյ բաւական վառ մնում:

3. Ի՞նչպէս կը տեսնէք հայ գրականութեան ապագան՝ Սփիւռքի մէջ:

Պ. Այս հարցին պատասխանելից առաջ եղիշէ Չարենցէն մի տող պիտի ասեմ. «Երգը երկրից է աճում, եւ ո՛չ թէ խօսքերից եւ բառերում»: Այստեղ Չարենցը ուզում է ասել, որ հայրենի հողին վրայ է արուեստը, բանաստեղծութիւնը, գրականութիւնը եւ մշակութիւնը աճում եւ զարգանում:

Սփիւռքը, թրքահայ գրականութիւնը, իր կազմաւորման սկզբնական շրջանում, բաւականին նշանակելի գործեր տուել է: Մենք շատ բարձր ենք գնահատում Համաստեղին, բարձր ենք գնահատում Շահան Շահնուրին, Չաւեն Լ. Սիւրմէլեանին «Լոյս Չուարթը»: Այսպէս բազմաթիւ գիրքեր, որոնք ստեղծուել են Սփիւռքում: Բայց, այս վերջինները իմ անձնական կարծիքով, ստեղծուել են հայրենի հողից տարածած աւիշով:

Ի հարկէ, նոր սերունդի մէջ էլ կան տաղանդաւոր մարդիկ: Ես, մոռցայ յիշատակել Մուշեղ Իշխանի, Եղուարդ Պոյաճեանի, Ն. Սարաֆեանի, Չիրբոնի, եւ այլ հեղինակների անունները:

Զիմա էլ հանդէս են գալիս, արժէքներ: Մի քանի տարի առաջ Լիբանանում հրատարակուեցան Վեհանոյշ Թեքեանի բանաստեղծութիւնները: Տաղանդներ կան ամէնուր. բայց պակսում է գրական մթնոլորտը: Գրական մթնոլորտ պէտք է, որպէսզի անոնք կազմուեն եւ զարգանան:

Այնպէս որ Սփիւռքահայ գրականութեան ապագայի նկատմամբ, առանձնապէս լաւատես չեմ:

3. Հայ գրականութեան անդաստանին մէջ մնայուն գանձեր ունիք, եւ, հայ արդի բանաստեղծներու լաւագոյններու շարքին կը պատկանիք. ո՞րն է ձեր լաւագոյն գործը:

Պ. Լաւագոյն գործը՝ իմ կարծիքով, ա՛յն է, որ պիտի գրեմ:

3. Արտասահմանի հայ մամուլը կը դատապարտէ Հայաստանէն սկսած արտագաղթը, որ բաւական լայն տարողութիւն ստացած է: Այս հարցին մասին ի՞նչ կը մտածեն Հայաստանի ղեկավարութիւնն եւ մտաւորականութիւնը: Ի՞նչպէս կարելի է այս աղէտին առաջը առնել:

Պ. Ասեմ, որ սա շատ մեծ ծաւալ չունի: Մինչեւ հիմա Հայաստանից դուրս եկածները յիսուն հազար չեն: Հայաստանում չի երեւում: Յիսուն հազար էլ չկայ, արձանագրուածների հետ միասին, որոնք դեռ դուրս չեն ելեր: Դա Հայաստանի բնակչութեան համար չնչին թիւ մըն է: Ուզում եմ ասել, որ Հայաստանի քանակի վրայ չի ազդում, բայց նրանց դուրս գալով՝ Հայաստանի բնակչութեան որակը բարելաւում է:

Եթէ այս հոգեբանութեամբ դուրս գալիս են, պէտք է ասեմ, որ դուրս եկողները այն մարդիկը չեն՝ որ այդտեղ տնտեսական նեղութիւններ ունեն: Այդ մարդիկ հոգեբանական նեղութիւններ ունեն: Այսինքն, նրանք հարստանալու այսպիսի մի հոգեբանութիւն ունեն, այս հոգեբանութիւնն է նրանց տանում: Իսկ այն մարդիկ, որոնք այնտեղ շատ համեստ ապրում են, եւ, կ'ուզեն հայ մնալ, անոնք երբեք դուրս չեն գար: Այնպէս որ այդ իմաստով ասում եմ, որ որակը բարելաւուում է: Ես շատ տեղերում եմ

հանդիպել, իսկապես դժգոհ են, ուզում են Նոյնիսկ վերադառնալ: Վերադարձողներ ալ կան: Այս հարցը իսկ որ բրոպլեմ չի Հայաստանի համար: Մանաւանդ, մենք Հայաստանէն դուրս, կէս միլիոնից աւել հայութիւն ունենք Վրաստանում, կէս միլիոնից աւել Ատրպէյճանում հայութիւն ունենք. երբ որ Նրանք դուրս են գալիս, սրանք գալիս են տեղերը գրաւելու:

Հ. Ի՞նչ գաղափար ունիք Համազգային Մշակութային Միութեան մասին:

Պ. Բոլոր Մշակութային Միութիւնների մասին բարձր գաղափար ունիմ: Այս Մշակութային կազմակերպութիւնները, որոնք Հայ Մշակոյթի կրակը վառ են պահում, Նրանք օգտակար գործ են կատարում:

«ՀԱՅՐԵՆԻՔ»
16 Նոյեմբեր 1977

ՎԻՃԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ ԿԱՐԵԼԻ՞ Է ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹ ՍՏԵՂԾԵԼ ՍՓԻՌՈՔԻ ՄԷՁ

Մշակույթը կազմուած է հինգ գլխաւոր տարրերէ. Տնտեսութիւն, բարք, պետութիւն, կրօն եւ արուեստ:

Ապրելով սփիւռքեան պայմաններուն մէջ, մենք զրկուած ենք ասոնց՝ մէկ երկուքէն՝ տնտեսութիւն եւ պետութիւն:

Կրօնը. Հայ ժողովուրդը բաժնուած է երեք գլխաւոր համայնքներու՝ Հայ Առաքելական, Հայ Աւետարանական եւ Հայ Կաթողիկէ: Այս եկեղեցիները, գաղութէ գաղութ, աւելի կամ նուազ կենսունակութեամբ կը կատարեն իրենց պարտականութիւնները, բայց ընդհանրապէս՝ ո՛չ լրիւ գիտակցութեամբ եւ յաջողութեամբ:

Ընթացք. Կ'ապրինք օտար միջավայրերու մէջ, եւ, ամէնուրեք մեր բարքերը վտանգուած են: Կամայ եւ ակամայ կ'ենթարկուինք,՝ մանաւանդ երիտասարդութիւնը,՝ մեր ապրած երկիրներու ժողովուրդներուն բարքերուն եւ կը տուժենք ազգովին:

Արուեստը. Արուեստը իր մէջ կը պարունակէ գլխաւոր հետեւեալ տարրերը. Գրականութիւն, Երաժշտութիւն, Նկարչութիւն եւ Ճարտարապետութիւն:

Ա. ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայ Գրականութիւնը իր բոլոր ճիւղերով՝ վէպ, պատմուածք, բանաստեղծութիւն, թատերգութիւն, երգիծական եւ մամուլ:

Մինչեւ 1915 թուականը, հայ արդի գրականութիւնը՝ Արեւմտահայ եւ Արեւելահայ ծաղկեցան գլխաւորաբար Պոլսոյ եւ Թիֆլիսի մէջ, ուր կ'ապրէին մեծ թիւով հայեր:

Պետականութիւն չունենալով հանդերձ, այդ երկու քաղաքներու մէջ մեր գրականութիւնը վառ մնաց եւ զարգացաւ: Որովհետեւ հոն կային ազգային դպրոցական ցանցեր, որոնցմէ դուրս կու գային հայ մշակույթով տոգորուած անձեր:

Յետագային, Մեծ Եղեռնէն վերջ, Արեւելահայ գրականութիւնը փոխադրուեցաւ Երեւան, որ ծաղկեցաւ հոն, ստեղծուած ըլլալով՝ Հայ Պետականութիւնը:

Իսկ Արեւմտահայ գրականութեան գործիչներէն վերապրողներ ապաստան գտան Մերձաւոր Արեւելեան երկիրներ գլխաւորաբար, ապա՝ Ֆրանսա եւ Մ. Նահանգներ:

Հայկական հոծ զանգուածներ հաստատուած ըլլալով Սուրիա, Լիբանան եւ Եգիպտոս, կրցան հայ մշակույթը պահել եւ ստեղծագործել մինչեւ 1950 թուականները:

Սուբրիան եւ Եգիպտոսը, այդ թուականներէ վերջ, հետզհետէ կորսըն-
ցուցին իրենց առոյգութիւնը՝ հոն ստեղծուած քաղաքական եւ ուսումնական
պայմաններու փոփոխումով:

Մնաց Լիբանանը, Պէյրութ, որ կը գլխաւորէր Հայ Մշակոյթը վառ
պահելու աշխատանքը ամբողջ Սփիւռքի մէջ, բայց վերջին տարիներու քա-
ղաքացիական կռիւներու հետեւանքով, դանդաղում մը՝ չըսելու համար սառե-
ցում մը յառաջ եկաւ, որ իր անդրադարձը ունեցաւ Հայ Մշակոյթի վրայ,
պատճառ դառնալով Մշակոյթի բազմաթիւ գործիչներու հեռացումին այդ
քաղաքէն:

Պարսկաստանի կացութիւնը նախքին աշխուժութիւնը չունի, բայց
երկրի յատուկ պայմաններուն հետեւանքով եւ հայ դպրոցական հաստատու-
թիւններու գոյութեամբ, կարելի կ'ըլլայ պահել Հայ Մշակոյթը:

Ֆրանսայի 250 հազար հայութիւնը, դժբախտաբար գրկուած է հայ
դպրոցներէ (Մուրատ-Ռափայէլեանը միակն է), եւ, ժողովուրդը հետզհետէ կը
կորսնցնէ հայերէն լեզուն: Դժուար է մտածել Հայ Մշակոյթի մասին:

Թէեւ Ֆրանսայի մէջ ապրած եւ ստեղծագործած են մեր նշանաւոր գը-
րողներէն շատեր ինչպէս Ա. Ահարոնեան, Շահան Շահնուր, Շաւարշ Նարդու-
նի, Նիկողոս Սարաֆեան, Բիւզանդ Թոփալեան, Շաւարշ Միսաքեան, Նշան Պէ-
շիկթաշլեան, Վազգէն Շուշանեան, Զարեհ Որբունի, Բալուլեան, Աթմաճեան,
եւայլն:

Բայց, այսօր, հոն ապրող գրագէտներուն գործերը կարգացող գրեթէ
չկայ:

Հարաւային Ամերիկա. Մատի վրայ համըռուղ մշակոյթի գործիչներ
կ'ապրին, կը ստեղծագործեն, կանգուն պահելով դպրոցական եւ մշակոյթի
կարգ մը հաստատութիւններ: Սակայն, անբաւարար աշխատանք՝ ապագան ա-
պահովելու համար:

Մ. Նահանգներ - Գանատա. Կէս միլիոնէ աւելի կը հաշուուի հայու-
թեան թիւը այս երկու ընդարձակ երկիրներու մէջ:

Գանատան կարելի է նկատել նոր գաղութ իր 30-35 հազար հայ բնակ-
չութեամբ, գրեթէ բոլորն ալ եկած Մերձ. Արեւելեան երկիրներէ: Այս գաղու-
թը սկսած է դպրոցաշինութեան աշխատանքի եւ կարելիութեան սահմաններուն
մէջ հայ մշակոյթի կեդրոններ ստեղծելու ծրագիրներու գործադրութեան:

Մ. Նահանգներ, որ աւելի հին գաղութ է, գոյութիւն ունին հայ մամուլ
եւ արուեստի այլ գործիչներ:

Հայ դպրոցաշինութեան արշաւ մը սկսած է, թէեւ ուշ, բայց գովելի
նախանձախնդրութեամբ:

Բ. ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Սփիւռքի հայ գաղութներէն ոմանց մէջ ունինք անհատ գործիչներ, ո-
րոնք կը ստեղծագործեն տակաւին, բայց ո՛չ ապրող գործեր արտադրելով:

Նոր ալիք մը «էսթրատային» կոչուող, ճազի եւ աղմուկի մթնոլորտի մէջ, կը ճգմեն մեր ուղեղները: Բողոքի ձայներ կը լսուին մինչեւ Հայաստանէն, որուն անդրադարձած է հայրենի բանաստեղծ Սիլվա Կապուտիկեան, ինչպէս նաեւ Ս. Կիրակոսեան «Ազգակ» օրաթերթին մէջ, Պէյրուսթ:

Կարգ մը քաղաքներու մէջ երգչախումբեր գոյութիւն ունին թէեւ, սակայն, անոնց ելոյթները շատ հազուադէպ է: Հազիւ տարին մէջ անգամ:

Նուագախումբեր շատ կան, բայց բոլորն ալ կը գործեն միջինէն վար աստիճանի վրայ, յաճախ արատաւորելով հայ երաժշտութիւնը:

Ունինք նշանաւոր կարգ մը յորինողներ եւ երգիչներ, բայց անոնց մեծամասնութիւնը օտար լեզուով եւ օտար միջավայրով կը գործեն:

Գ. ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

Սփիւռքի տարածքին ունինք նշանաւոր նկարիչներ, որոնցմէ երկուքին կ'ուզեմ անդրադառնալ:

Առաջինը Գառգուն, որ վերջերս մաս կազմեց Ֆրանսական Ակադեմիային, որպէս իրաւ հայ արուեստագէտ՝ Միջազգային առումով, պատիւ կը բերէ պատկանած ժողովուրդին:

Երկրորդը՝ կրկին Ֆրանսահայ Շ. Յարութիւնեան (Շարթ), մաքուր հայ մը, որ ժամանակին յայտարարած է.

«Հայ ըլլալս երբեք չեմ ծածկած, եւ, այսօր, աւելի պէտք չունիմ ծածկելու: Ընդհակառակն, տարիներու ընթացքին արժանիքի պէս բանի մը վերածուած է մէջս, որ եթէ այսօր անհետանար, այն ատեն իսկապէս դժբախտ կ'ըլլայի: Յաճախ մտածած եմ, թէ շատերու դժբախտութիւնը աղկէ կը սկսի: Արուեստի այլասերումը կը սկսի հո՛ն՝ երբ այլեւս մարդիկ չեն կրնար տեսնել, զգալ, ու ըմբռնել ինչպէս պէտք է, ինչպէս է՛ն: Կարելի չէ աւանդութիւն մը ժխտել: Այո՛, եթէ հայութեան մը ու սերունդի մը կապուած չըլլաս՝ այն ատեն ընկեցիկ մըն ես, քան թէ արուեստագէտ մը: Ես ընկեցիկ արուեստագէտ մը ըլլալ պիտի չուզէի: Եթէ ժառանգութեան մը, աւանդութեան մը կապուած չըլլաս՝ բան մըն ալ չես. եւ եթէ բան մը չես ներկայացներ՝ բան մըն ալ չես կրնար ըլլալ»:

Դ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Հայկական ճարտարապետութիւնը, այսօր, պատմականօրէն միայն գոյութիւն ունի՝ Սփիւռքի մէջ: Երբեմն ուրիշներ կ'ընդօրինակէին մեզ, հիմա մենք կ'ընդօրինակենք ուրիշները:

Խօսելով հայ մշակոյթի մասին ընդհանրապէս կը սիրենք շեշտել, թէ մշակոյթը ազգապահպանման ու ազգերու գոյութեան ամենազլխաւոր հիմքը, խարխիւն է: Մասնաւորապէս փոքրիկ ու թոյլ ժողովուրդներու, որոնց կարգին մանաւանդ մեզի համար, որ փոքրիկ ու ազատ ըլլալով հանդերձ, մեր ժո-

դովուրդի կարեւոր մէկ մասով զաղթական ենք, տարագիր՝ աշխարհի չորս ծագերուն տարադնուած եւ ենթակայ՝ ուժացման բոլոր հողմերուն ու փոթորիկներուն:

Այո՛, մշակոյթ ունեցող եւ մշակոյթի ընդունակ ազգերը չեն մեռնիր, անմահ են:

Նէյման գերմանացի պատմաբանը կը գրէ. «Եթէ հայերը բոլոր այն փոթորիկներուն մէջ, որ Ե. դարէն սկսած դղրդեցուցին ամբողջ Ասիան եւ մանաւանդ Հայաստանը, կրցան որպէս անկախ քրիստոնեայ ազգ մնալ, պատճառը, գլխաւորապէս ազգային լեզուի տառերու գիւտին տալու է, որով կարելի եղաւ սեփական գրականութիւն ունենալ եւ առանձին հոգեւոր կազմակերպութիւն պահպանել»:

Աշխարհի մէջ կան 2796 լեզուներ, որոնց մէջ հայերէնը 5000 տարիներէ ի վեր կը հոսի Մեծասքանչ Վեհութեամբ, որպէս լեզու մշակոյթի, լեզու քաղաքակրթութեան, լեզու պետական, սեփական այբուբենով օժտուած, յատկանիշներ, որոնք այս 2796 լեզուներէն շատ քիչերուն շնորհուած են:

Մշակոյթը, ինքը, գոյատեւման ամենահզօր կերպն է: Մշակոյթ կրնան ստեղծել կեանքը սիրող եւ անմահութեան հաւատացող ազգեր: Ուստի մեր ժողովուրդը կը ստեղծագործէ այնքան ատեն որ ապրելու եւ տեւելու կամքը հըրօր է իր մէջ:

Կեդրոնանալով Մ. Նահանգներու եւ Գանատայի հայկական գօտիններուն վրայ, հրճուալից է հաստատել որ մեծամասնօրէն սփիւռքեան այլ գաղութներէն եկւոր երիտասարդներու նկատելի զանգուած մը, Համազգային Մշակութային Միութիւններու մէջ ու շուրջ խմբուած, սկսած է մտածել, ծրարագրել ու գործել՝ մշակոյթի բոլոր մարզերուն մէջ: Երազ հիւսել, բայց նաեւ միջոցներ նախատեսել ու լծուիլ գործնական աշխատանքի՝ ուղի հարթելու համար շարժումի մը, որով կարելի պիտի ըլլայ ամայացող ածուները փրկել անապատ դառնալու ճակատագրէն: Միւս կողմէ շօշափելի ներկայութիւն դառնալ մտքի ու գրի ճակատներու վրայ, յիշեցնելու համար հեւասպառ վազքի մէջ ապրողներուն՝ թէ ընտանեկան իրենց երգիքներուն քովն ի վեր նաեւ լոյսի կեդրոններ պէտք է ունենալ: Եթէ կ'ուզեն իբրեւ հայութիւն ապրիլ: Պէտք է հետաքրքրուին նաեւ մշակութային եւ իմացական արժէքներուն, ճանչնայ ինքզինք ու կարենայ շաղախ դառնալ անոնց համար՝ որ պիտի գան...

Վերջին ութ-տասը տարիներուն բան մը «չարժած» է արդէն՝ ամերիկահայ եւ գանատահայ կեանքին մէջ: «Համազգային»ի ծնունդը իսկ փաստ է այն մասին, որ կը խլրտինք: Յաջորդական արտագաղթերու հետեւանքով Միջին Արեւելքէն դէպի այս ափերը ապաստան փնտռող երէց թէ կրտսեր սերունդներուն մօտ, սկզբնական շրջանի հասկնալի շուարումէն եւ խարխափումէն վերջ:

Մշակութային արժէքներու ճանաչման եւ տարածման գործին նուիրուած միութիւններ առանձին պէտք չէ ձգուին իրենց ճիգերուն եւ աշխատանքներուն մէջ:

Համազգայինի նման միութիւններ, մշակութային սերմնացանութեան իրենց առաքելութեան լրիւ կրնան ծառայել ա՛յն ատեն միայն՝ երբ

տնտեսական բաւարար միջոցներ ունենան Մ. Նահանգներու եւ Գանատայի նման տարածուն գօտիներու մէջ իրենց ծրագիրները իրականացնելու համար:

Սքանչելի եւ գնահատելի է Գանատայի Համագլխի նախաձեռնութիւնը, հայ արուեստագէտներու գործերը (գիրք, ալպոմ, եւայլն) սպառելու գործին մէջ:

Բայց, թատերախումբի մը, երգչախումբի մը, պարախումբի մը կամ անհատ որեւէ արժէքի շրջապտոյտը նահանգէ-նահանգ եւ քաղաքէ-քաղաք՝ կը կարօտի հազարներու: Մշակութային որեւէ համագումար՝ նիւթական անյաղթահարելի դժուարութիւններ կը ստեղծէ: Հրատարակչական պատահական նախաձեռնութիւններ կամ գեղարուեստական որեւէ գործի հրատարակում՝ կը պարտադրեն տնտեսական արտակարգ զոհողութիւններ:

Ամէն մարդ գիտէ, որ գրականութիւնը արուեստներուն ամէնէն ամբողջականն է, ամէնէն մարդկայինը եւ ինչո՞ւ չէ, ամէնէն կատարելալը: Ինչո՞ւ ուրեմն հայ գրագէտին չտալ իր արժանի տեղը կամ առնուազն այն տեղը՝ որ կը տրուի պատահական առաջին երգիչին, առաջին երաժիշտին կամ առաջին նկարիչին:

Չի բաւեր բեմերէն պոռալ «Ունինք մշակոյթ, ունինք լեզու, ունինք գրականութիւն» եւ հանդուրժել հայ գրագէտներու տառապանքին, մինչ անդին պատահական երգիչներ, թմբկահարներու օժանդակութեամբ իրենց ժողովրդային եւ էսթրատային երգերով կը քնացնեն ամբոխները:

Ծանօթ բանաստեղծ եւ նկարիչ Մկրտիչ Հաճեան կը գրէ «Հայրենիք» օրաթերթին մէջ.

«Սփիւռքի հայութիւնը իր ճամբան գտած է արդէն վերջնականապէս եւ իր կապերը խզած բոլորովին (չեմ կարծեր որ կապ ունեցած ըլլայ երբեւիցէ...) սա՛ հայ մշակոյթ, հայ գեղարուեստ կամ հայ իմացական գործունէութիւն կոչուած անպէտ բաներէն: Անշուշտ պէտք չէ ենթադրել որ խաւարամիտ յետամնացներէ բաղկացած է Սփիւռքահայութիւնը: Շեշտուած հայկական գործունէութեանց հանդէպ ցոյց տրուած արհամարհանքը կամ անտարբերութիւնն է: Իսկ եթէ սփիւռքահայ քանի մը հոգի տակաւին հայ մշակոյթ եւ հայ գեղարուեստ ստեղծել կը ճգնին, անոնց այդ մասնայատկութիւնը մէկուկէս միլիոն անտարբերներուն մեղքերը չի թեթեւցներ:

«Բայց չէք տեսներ իրականութիւն.

«Սփիւռքի գալիք սերունդը ո՛չ ի վիճակի պիտի ըլլայ մեր գրածը կարդալու եւ ո՛չ ալ որեւէ փափաք պիտի ունենայ այսօր իսկ արհամարհուած բանով մը շահագրգռուելու: (Չմոռնանք որ մեր գրածը միայն մենք կը կարդանք արդէն: Այս մենքը հազիւ թէ մէկ տասըհազարերորդն է Սփիւռքահայութեան թիւին):»

Հաճեանի կարծիքը ունեցած է նաեւ տասնեակ տարիներ առաջ անմահ բանաստեղծ Վահան Թէքէեան, որ Հայ Լեզուին նուիրուած իր քերթուածներէն մէկուն մէջ, ան վախ կը յայտնէ, որ «հարիւր տարի ետք, կրնայ... զինք հասկցող չունենալ, որովհետեւ օրէ օր կը պակսին ո՛չ միայն հայերէն կարգացողներ, այլեւ ինչ որ շատ աւելի եղբրական է – հայերէնով խօսողներ...»:

Անմահանուն քերթողը մտահոգ է որ Մայրենիքը պիտի որբանայ հե-
տըզհետէ իր վաստակը պիտի դատապարտուի «անկիւն մը պառկելու», եւ հա-
յերէնը պիտի դառնայ լքեալ գոյք:

Ափսոսանքի ինքնայատուկ իր ձեւով՝ որ ամէնէն անհատական ապրու-
մ ին անգամ անանձնական ու ազգային ծաւալ կու տայ, բանաստեղծը կը գրէ.

Լեզու՝ որով գրեցի, երկրի երեսը քիչե՛ր
Կը կարդային գայն արդէն, ու պակսեցան անոնք ալ...
Հարիւր տարի վերջ միայն, իր այս ծելով, այս սխալ
Կամ ճիշդ ծելով ու հնչմամբ՝ լեզուն անոյշ, գոր խօսեր:

Էին անոյշ տղաքներ, գուցէ խօսող չունենա՛յ...
Եւ քերթուածները, որոնց մէն մի բառին ու վանկին
Վրայ ես սիրտ հատցուցի, գուցէ անկիւն մը պառկին
Առանց որ մէկը դնէ իրենց բուն շեշտն անոնց վրայ...

Տէ՛ր, ցաւ մա՛լ այս է հիմա, ցաւերէն ետք անհամար...

Թէեւ Թէքէեանի գրութենէն հարիւր տարի անցած չէ, որպէսզի կարե-
նանք հատատել կամ ժխտել բանաստեղծի ենթագրութիւնները, բայց մինչեւ
այսօր, Սփիւռքի ամբողջ տարածքին, պայքար կը մղուի գոնէ եղածը պահե-
լու:

Այլասերման եւ ձուլումի վտանգը այնքան հրատապ եւ մտահոգիչ
ներկայութիւն մըն է, որ իւրաքանչիւր հայ իր խղճին եւ ամբողջ ազգին առ-
ջեւ պատասխանատու կը մնայ հանրային եւ ազգային ընթացքին համար: Նա-
հանջե՞լ, անձնատուր ըլլա՞լ, թէ հնարաւոր բոլոր միջոցներով պայքարել, որ-
պէսզի հարիւր տարի վերջ Սփիւռքի մէջ գտնուին մեծ թիւով հայեր, որոնք
կարգան Թէքէեանը եւ ուրիշ հեղինակներ...:

Թէեւ հայ պատանին Սփիւռքի մէջ, իբրեւ հա՛լ ուսանող, դատապար-
տուած է յաղթահարելու դժուարութիւններ, որոնք յատուկ են միայն իրեն:
Իբրեւ հայ ուսանող պարտաւորուած է իւրացնել նախ տեղական երկրի ու-
սումնական պահանջները, ապա՝ սեփական մշակոյթի ժառանգը: Հայեցի
դաստիարակութեան տագնապը սխալ պիտի ըլլար փաթթել դպրոցի եւ ուսու-
ցիչներու վզին: Ճիշդ է թէ հայերէն նիւթերու կարող եւ շունչ ունեցող ուսու-
ցիչներ կը պակսին հետզհետէ: Ժամանակին գիտական եւ ուսողութեան ուսու-
ցիչներու տագնապ մը կար, մինչ հայերէնի (լեզու-գրականութիւն) հմուտ ու-
սուցիչներու առատութիւնը: Այժմ պատկերը փոխուած է: Ուսողութեան եւ
գիտութեան դասատուներու մեծ թիւ մը ունինք, իսկ հայերէն դասաւանդող
մասնագէտ ուսուցիչներու պակասը անել կացութեան կը մատնէ մեր թերթե-
րը, ազգային կեանքը եւ առհասարակ հայ մշակոյթի զարգացման գործը: Չի
բաւեր աւազել եւ ողբ կարդալ: Անհրաժեշտ է այս երեւոյթին դէմ ուժեղ կեր-
պով հակազդել, ինչ գինով ալ ըլլայ, որպէսզի սերունդի հոգիին եւ մտքին
մէջ խոր արմատներ նետէ հայ մշակոյթի սէրն ու գիտութիւնը:

Այս կենսական նպատակին համար արժէ կատարել նիւթական եւ բարո-
յական ամէն գոհողութիւն:

Ի՞նչպէս եւ ինչո՞ւ:

Պէտք է ամրացնել հայ ժողովուրդի մէջ հայ մշակոյթը, որպէսզի ան կարենայ ապրիլ իբր ուրոյն ազգ: Իսկ այդ բանը մենք կրնանք կատարել հայ վարժարանով եւ հայ գիրքով, այսինքն դաստիարակութեամբ եւ գրականութեամբ:

Վտանգուած չենք իբր անհատ, բայց վտանգուած ենք իբր ազգ: Այս կացութիւնը մեզ պէտք է թելադրէ դաստիարակութեան իւրայատուկ եղանակ, ուրոյն ծրագիր: Ուրիշ ազգերու դպրոցական սիսթեմը չի կրնար գոհացնել մեզ, որովհետեւ մենք կը գտնուինք այլ պայմաններու մէջ: Մեր վիճակը բացառիկ է եւ ուրոյն, դաստիարակութեան մեր սիսթեմն ալ պէտք է ըլլայ բացառիկ եւ յատուկ:

Մենք պէտք է պատրաստենք մոլեռանդ հայեր, մոլեռանդ հայութիւն, որպէսզի կարենանք պահպանել մեր սեփական կերպարանքը, մեր ինքնուրոյնութիւնը:

Երիտասարդութիւնը պէտք է դաստիարակել եւ վարակել այս մոլեռանդ ոգիով: Պարզ գրագիտութիւնն անբաւարար է մեր ներկայ իրականութեան համար: Պէտք է հիմնել երկրորդական վարժարաններ, ուր երիտասարդութեան միտքն ու նկարագիրը կազմուին ազգայնապէս: Այնտեղ կ'իւրացուի, կը հետապնդուի եւ կը մշակուի հայ ոգին ու մշակոյթը:

Պէտք է տարածենք հայ մշակոյթը:

Հայ մշակոյթը կը տարածուի եթէ հրատարակուած գիրքերը սպառին: Այդ սպառողները (երբ չունինք Հայ Հրատարակչական Մարմին) կրնան հայ միութիւններ ըլլան, որոնք հեղինակէն գնելով որոշ թիւով հատորներ, սպառեն իրենց շրջաններուն մէջ:

Ազգային իշխանութիւններ, կուսակցութիւններ, բարեգործական, մարզական եւ մտաւոր մշակութային միութիւններ պէտք է զօրաշարժի ենթարկեն իրենց կարելիութիւնները, քանի ուշ չէ, չենթարկուելու համար Լեհաստանի, Թրասիլվանիոյ եւ հայ հին գաղութներու ճակատագրին:

Գլխաւոր բալասան՝ Հայ Նոր Դպրոցներու Հաստատում:

5 Մարտ 1978
Թորոնթօ

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝
Հ.Օ.Մ.Ի ՊԱՊԱՅԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԵՒ
ԱՄԷՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆ՝
ԸՆԿԵՐ ՄԱՐԳԱՐ ՇԱՐԱՊԻԱՆԵԱՆԻ ՀԵՏ**

«Լրատու»-ի անունով՝ «Հորիզոն»-ի թղթակիցը, Հ.Օ.Մ.Ի Պապայեան մանկապարտէզի եւ Հ.Օ.Մ.Ի Ամէնօրեայ վարժարանի տնօրէն՝ ընկեր Մարգար Շարապխանեանի հետ ունեցաւ տեսակցութիւն մը:

Ստորեւ կը ներկայացնենք հարցազրոյցը ամբողջութեամբ, վստահ ըլլալով որ անիկա կը հետաքրքրէ մեր Թորոնթոյի գաղութը:

3. Ընկեր Շարապխանեան, ձեր վարժարանին անունը ի՞նչ է:

Պ. Վարժարանը կը կոչուի Հ.Օ.Մ.Ի Պապայեան մանկապարտէզ եւ Հ.Օ.Մ.Ի Ամէնօրեայ վարժարան: Սակայն որոշում առնուած է պատկան մարմիններու կողմէ, 1980-81 տարեշրջանէն սկսեալ նախակրթարանը կոչել Գոլուեան վարժարան, երբ Հայ Կեդրոնին կից վարժարանի նոր շէնքը աւարտի յառաջիկայ տարուան Սեպտեմբերին: Ներկայ տարեշրջանի աշակերտութիւնն ալ պիտի փոխադրուի հոն, գալ տարեշրջանին:

3. Աշակերտութեան առջեւ վարժարանը իր դռները ե՞րբ բացաւ:

Պ. Աշակերտութեան առջեւ վարժարանը իր դռները բացաւ Սեպտեմբեր 4ին: Այս բացումը պաշտօնական բնոյթ չէր կրեր, սակայն իբրեւ դասաւանդութեան առաջին օր, ներկայ էին հետեւեալ կազմակերպութեանց վարչական ներկայացուցիչները՝ Հ.Օ.Մ.Ի «Ռուբինա» մասնաճիւղի, Համագգայիսի եւ Հ.Ս.Ը.Մ.Ի Թորոնթոյի մասնաճիւղերու, Հ.Ե.Դ. «Ա. Չաւարեան» Ուխտի, «Ս. Թեւլիրեան» կոմիտեութեան, Ամառնային Ամէնօրեայ վարժարանի Հոգատար եւ Ուսումնական մարմիններու, ինչպէս նաեւ՝ Կրթական Մարմնի անդամները:

Կը նախատեսուի Հոկտեմբերի կիսուն կատարուելիք պաշտօնական բացման հանդիսութեան իրաւիբել գաղութիս բոլոր միութիւններու ու կազմակերպութեանց վարչութեանց եւ համայնքներու ներկայացուցիչները:

3. Ո՞րքան է աշակերտութեան թիւը, ուսուցչական կազմի թիւը, քանի՞ դասարաններ գոյութիւն ունին ներկայիս, եւ ինչ են դասաւանդուած նիւթերը:

Պ. Հակառակ մեր ակնկալութիւններուն, աշակերտութեան թիւը Սեպտեմբերի չորսին կը հաշուէր 85. Կը նախատեսենք որ այս բարձրանայ 100ի յառաջիկայ Ամանորին, որովհետեւ կարգ մը ծնողներ կապ պահած են մեզի հետ, տեղեկացնելով թէ իրենց զաւակները Նոր Տարիէն ետք պիտի ուղարկեն դպրոց:

Ուսուցչական կազմը (ներառեալ տնօրէնը) կը հաշուէ երեք՝ հայերէնի եւ երկու՝ անգլերէնի դասատուներ: Այս վերջիններէն մէկը կը դասաւանդէ նաեւ Ֆրանսերէն լեզու նախակրթարանի Բ. կարգին: Մեր ուսուցիչները վկայեալ մանկավարժներ են, իսկ անգլերէնի երկու դասատուները՝ համալսարանաւարտներ:

Ունինք երեք մանկապարտէզի եւ երկու նախակրթարանի կարգեր, յառաջիկայ իւրաքանչիւր նոր տարեշրջանին դասարան մը եւս աւելցնելու նախատեսութեամբ. այսպէսով՝ 1983-84ին վարժարանը պիտի տայ իր առաջին նախակրթարանաւարտ հունձքը:

Վարժարանէս ներս կը դասաւանդուին հետեւեալ նիւթերը. հայերէնով՝ լեզու, ազգային պատմութիւն, կրօնագիտութիւն եւ ընդհանուր գիտելիքներ մշակութային պատմութենէն (տալու համար մեր մշակութային հարստութեան արժէքը) եւ երգեցողութիւն: Ընկերային նիւթերը եւ մարմնամարզ: Տեղին է հոս յիշել, որ վարժարանէս

ներս նախապատուութիւն կը տրուի Օլթարիօ Նահանգի Կրթական Նախարարութեան յայտագրի գործադրութեան, եւ դպրոցը ենթակայ է պետական քննութեանց: Տնօրէնութիւնը հանդիպում մը ունեցաւ Կրթական Նախարարութեան ներկայացուցիչներուն հետ, որոնք տարուած ընթացքին հերթաբար վարժարան պիտի ուղարկեն իրենց քննիչները, մեր երեխաներու ուսումնական կարողութիւնը դատելու համար:

3. Այս քաղաքի ընդարձակ տարածութիւնը նկատի առած, աշակերտներու փոխադրամիջոցը դժուարութիւններ կը ստեղծէ՞:

Պ. Պէտք է ըսել որ գլխաւոր դժուարութիւններէն մէկը փոխադրութիւնն է: Այս դժուարութեան պատճառը գաղութի անդամներուն ցրուած բնակութիւնն է. ուստի մեր աշակերտներու թիւի կէսին համար ունինք ինքնաշարժի սպասարկութիւն, վըստահուած ընկերութեան մը, իսկ մնացեալ կէսին փոպադրութիւնը կը կատարեն ծընողները, իրենց անձնական միջոցներով:

Ինչ կը վերաբերի այն աշակերտներու ծնողներուն, որոնք առաւօտուն կանուխ կ'երթան իրենց զբաղումին, հաստատուած է մասնաւոր դրութիւն մը մեր ժամանակացոյցին մէջ, հետեւեալ մանրամասնութեամբ.

Դպրոցը բաց է առաւօտեան ժամը 7 ու կէսէն մինչեւ երեկոյեան ժամը 6: Դասաւանդութիւնները կը կատարուին առաւօտեան ժամը 9էն մինչեւ կէսօրէ ետք՝ 4: ժամը 12էն 1՝ ճաշի դադար եւ զբօսանք: Իսկ մնացեալ ժամերուն՝ առաւօտեան 7 ու կէսէն 8 ու կէս եւ երեկոյեան 4էն 6, աշակերտները (երբ զիրենք փոխադրողները ծընողներն են) կը մնան հերթապահ հսկիչներու հսկողութեան տակ: Այս ժամանակամիջոցին երախաներ կը զբաղին սերտողութեամբ, խաղերով եւ կամ հեռատեսիլէն մանկական յատուկ յայտագիրներ դիտելով: Երեկոյեան ժամը 6ին վարժարանը կը փակէ իր դռները:

3. Գաղութի հայութիւնը իր նիւթական եւ բարոյական մասնակցութիւնը բերա՞ւ: Դպրոցը, ներկայիս, կը գտնուի՞ դժուարութիւններու առջեւ եւ ի՞նչ միջոց կը կիրարկուի այդ դժուարութիւնները (եթէ կան) հերթելու համար:

Պ. Դպրոցի տարեկան պիւտճէն 100,000 տոլար է, որուն 40,000ը միայն պիտի գոյանայ ծնողներու վճարած կրթաթոշակներէն, ինչ որ բաց կը ձգէ 60,000 տոլար: Այս պիտճէին գլխաւոր մասը երթելէկի կը յատկացուի:

Բարոյական թէ նիւթական իրենց աջակցութիւնը բերին ծնողները լայն չափով, Կրթական Մարմնի եւ Տնօրէնութեան զոհողութիւններուն միացնելու իրենց բաժինն ալ: Վստահ ենք որ այս ոգին նոյն թափով կը շարունակուի այսուհետեւ եւս:

Գաղութին ընծայած օժանդակութեան գծով, մասնաւոր ձեռնարկ մը կազմակերպուած չէ տակաւին, սակայն, վստահ ենք որ արդիւնքը պիտի ըլլայ բաւական յատկանշական եւ գաղութը իր անսակար ու սիրայօժար մասնակցութիւնը պիտի բերէ:

3. Ծատ անձնական հարցում մը. ի՞նչ են պատճառները, որ դպրոցի Տնօրէնութիւնը ստանձնեցիք, հրաժարելով Թորոնթօ Ինիվերսիթիի գրադարանի փիլիսոփայական բաժնի գրադարանապետի ձեր պաշտօնէն:

Պ. Տնօրէնի պաշտօնին կոչուեցայ եւ զայն ստանձնեցի, որովհետեւ նախ՝ ուսուցչութիւնը սրտիս մօտիկ ասպարեզ է, անկէ աւելի նուիրական կոչում չեմ կրնար երեւակայել կեանքիս մէջ. կը հաւատամ այս օտար ամերիկացի աշակերտներուն, առանց որուն մեր տարած աշխատանքները դժուարութիւններու կրնան հանդիպիլ, թէ՛ ազգային եւ թէ՛ քաղաքական մեր բոլոր հետապնդումներն ու վազվըտուքը կրնան օր մը պղպշակներու վերածուիլ: Հայ դպրոցին մէջ է որ երախան կը ըստանայ ազգային տոհմիկ դաստիարակութիւն (պետական յայտագրի կողքին), վառ կը մնայ իր մէջ ազգային ոգին եւ կը դաստիարակուի համապատասխան մեր տուած կրթութեան:

3. Ծնողներու վերաբերումը ի՞նչ է ընդհանուր առմամբ. գո՞հ են ձեր ջամբած ուսումէն, երթեւեկի սպասարկութենէն, աշակերտին դպրոցէն ներս կատարած աշխատանքներէն: Եղա՞ն արդեօք ծնողներ, որոնք դժգոհութիւն յայտնեցին որեւէ պատճառով:

Պ. Այս բոլորին մասին արտայայտուիլ կանուխ է տակաւին, որովհետեւ դըպրոցը հազիւ շաբթուան մը կեանք ունի:

3. Ի՞նչ ծրագիրներ կան ապագային համար:

Պ. Յառաջիկայ տարեշրջանին, Հայ Կեդրոնին կից, յատուկ հողաշերտին վըրայ, պատրաստ պիտի ըլլայ վարժարանի նոր շէնքը, արդիական ամէն յարմարութիւններով օժտուած: Պէտք է հոս յիշեմ որ սոյն շինութիւնը անմիջապէս սկսելու քաջալերանքը կը պարտինք ՏԵՐ եւ ՏԻԿ. Գեորգ Գոլովեանին, որոնք 150,000 տոլարի իշխանական նուիրատութեամբ առիթը ընծայեցին գործի անցնելու:

Տակաւին կանուխ է, սակայն անձնապէս կը կարծեմ որ մեր ապագայի ծրագիրներուն մէջ պէտք է առնենք նաեւ երկրորդական վարժարան մը, որովհետեւ 12-18 տարիքի միջեւ է որ հայ պատանին կը թրծուի ազգային ոգիով ու կը կրթուի համապատասխան մեր աստիճաններուն, գաւառական ընդհանուր մթնոլորտին մէջ:

Սօտակայ քաղաքներէն, ինչպէս՝ Համիլթըն եւ Զեմպրիճ, շատ մը ծնողներ առաջարկներ եկած են մեզի, որ դպրոցէն ներս հաստատուի հնգօրեայ գիշերօթիկի դրութիւն մը, իսկ շաբաթավերջին աշակերտները ազատ ըլլան իրենց ծնողներուն մօտ անցնելու երկու օր: Եթէ այս պարագան կարելի ըլլայ, անձնապէս պիտի ջանամ յաջողցնել յետագային:

Իսկ մեր ապագայի ծրագիրներու յաջողութիւնը միշտ կախեալ է հասութեան ձեռնարկներու եկամուտէն:

3. Յաւելեալ այլ բացատրութիւններ ունի՞ք «Հորիզոն»ին տակիք:

Պ. Երբ վարժարաններու դրութիւնը կանոնաւորուի Գանատայի զանազան քաղաքներուն մէջ, մասնաւորաբար Թորոնթօ եւ Մոնրեալ, պատկան մարմիններուն պիտի առաջարկեմ, անձնապէս, որ գանատական մեր հայ դպրոցներու ցանցը առնչուի մէկ Ուսումնական Մարմնի հակակշռին տակ (անշուշտ կը գիտակցինք որ պետական ծրագիրները կը տարբերին Օնթարիօ եւ Զեպէք նահանգներու մէջ, սակայն այդ մէկն ալ կանոնաւորելու համար, կրնանք նոյնանման, միօրինակ ծրագիր մը պատրաստել, համադրելով երկու նահանգներու ծրագիրները), որովհետեւ մեր այսօրուան երեխաները, ապագային մեր միութիւններու ու կազմակերպութիւններու եւ անոնց մարմիններու անդամներ պիտի դառնան: Հոս է որ կը ճշդորոշուի եւ կը յատկանշուի միակ Ուսումնական Մարմնի մը գոյութեան պահանջը:

Ուսուցիչներու յատուկ մանկավարժական նիւթերով սեմինարներ եւս անհրաժեշտ են, որոնք կարելի է կատարել Մոնրեալի եւ Թորոնթօյի մէջ, եւ կամ երկուքին միջեւ հեռաւորութեան մը:

Նկատելով որ ուսուցչանոցներ եւ անոնցմէ վկայեալ մասնագետներ չունինք, կրնանք այդ սեմինարներուն իբրեւ դասախօսներ հրաւիրել հանրածանօթ դաստիարակներ եւ մանկավարժներ:

Այս սեմինարներու ընթացքին ուսուցիչներու միջեւ մօտիկութիւն մը կը ստեղծուի եւ կը զարգանան փոխ-յարաբերութիւնները, տարբեր քաղաքներու մանկավարժներուն միջեւ:

**«ՀՈՐԻԶՈՆ» ԵՎ «ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԼՐԱՏՈՒ»
Հոկտեմբեր 1979**

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԹՈՐՈՆԹՈՅԻ Հ.Օ.Մ.Ի ԱՄԷՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇԷՆՔԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԸՆԿ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԻԹԻԼԵԱՆԻ ՀԵՏ

3. Ուրախությամբ կ'իմանանք, որ մօտ օրեն Թորոնթոյի Հայ Կեդրոնի կողքին պիտի շինուի Հ.Օ.Մ.Ի Ամենօրեայ Վարժարանի եւ «Պապայեան» Մանկապարտեզի նոր շէնքը:

Կ'ուզեի՞ք կարգ մը մանրամասնութիւններ տալ այս ուղղությամբ՝ առ ի գիտութիւն եւ գոհունակութիւն հայ դպրոցով հետաքրքիր ու խանդավառ մեր հայրենակիցներուն:

Պ. Վարժարանի շէնքի ծրագիրը նոր չէ: 1977ին, երբ յայտարարուեցաւ Հայ Նոր Կեդրոնի շինութեան ծրագիրը, օրուան Հ.Յ.Դ. «Սողոմոն Թեւլիբեան» Կոմիտէն հրապարակ իջաւ Հայ Նոր Կեդրոնի եւ Հայ Ամենօրեայ Վարժարանի շինութեան ծրագրով, որովհետեւ անհրաժեշտութիւն էր Հայ Կեդրոնի կողքին տեսնել Հայ Վարժարանը, Թորոնթոյի հայ նոր սերունդներու հայեցի կրթութեան եւ գաղութի հայկական դիմագիծի անվթար պահպանումին համար:

1977-1978ի շինութեան մեր ծրագիրներուն մէջ, Հայ Վարժարանին համար հողաշերտ մը պահած էինք եւ գայն կոչած՝ Հայ Կեդրոնի շինութեան Բ. Փուլ: Ա. Փուլն էր՝ Հայ Կեդրոնի այժմու շէնքին շինութիւնը:

Կը ծրագրուէր Բ. Փուլի աշխատանքներուն ձեռնարկել յաջորդ 5-10 տարիներու ընթացքին:

1979 Յունիսին բացումը կատարուեցաւ Հայ Կեդրոնի նորակառոյց շէնքին: Նոյն տարուան Յունիսին, յայտարարուեցաւ բացումը Հ.Օ.Մ.Ի Ամենօրեայ Վարժարանին եւ «Պապայեան» Մանկապարտեզին, նպատակ ունենալով սկսիլ Մանկապարտեզի երկու եւ Նախակրթարանի մէկ դասարանով եւ յաջորդ հինգ տարիներուն, տարեկան մէկ դասարան անելցնելով, ունենալ լրիւ Մանկապարտեզ եւ Նախակրթարան, մինչեւ 2. կարգ:

Բայց... մեր ժողովուրդի ընդունելութիւնը այնքա՛ն մեծ եղաւ եւ պահանջը այնքա՛ն զօրաւոր, որ ստիպուեցանք առաջին իսկ տարին սկսիլ Մանկապարտեզի երեք եւ Նախակրթարանի երկու դասարաններով եւ 80 աշակերտներով:

Այս Սեպտեմբերին, Վարժարանը իր երրորդ տարեշրջանը սկսաւ 160 աշակերտներով՝ Մանկապարտեզի երեք եւ Նախակրթարանի չորս կարգերով: Դասարանի համար կը գործածուին ո՛չ միայն շէնքի Մանկապարտեզի բաժինը, այլ, նաեւ՝ Հայ Կեդրոնի ժողովասենեակները եւ սրահները, որոնք ժամանակաւորապէս վերածուած են դասարաններու:

Հայ վարժարանի նկատմամբ մեր ժողովուրդին հետաքրքրութիւնը եւ ակնկալութիւնները, աշակերտութեան թիւի անսպասելի այս աճը, ինչպէս նաեւ Հայ Կեդրոնի մէջ տեղի անձկութեան հարցը, մեզի կը պարտադրեն անմիջապէս սկսիլ դպրոցի նոր շէնքին շինութեան աշխատանքներուն, որպէսզի ամենաուշ մինչեւ յառաջիկայ Սեպտեմբեր, 1982-1983 տարեշրջանը սկսուի Վարժարանի ընդարձակ եւ արդիական յարմարութիւններով օժտուած նոր շէնքին մէջ:

Եւ այն ատեն, երանելի այդ օրուընէ վերջ, Հայ Կեդրոնի մէջ գործող բոլոր միութիւնները եւ կազմակերպութիւնները, պիտի կարենան գործածել իրենց ժողովասենեակներն ու սրահները եւ ընդարձակել իրենց գործունեութեան դաշտը:

Վարժարանի նոր շէնքը իր կարգին պիտի ունենայ սրահներ, որոնք տրամադրելի պիտի ըլլան Հայ Կեդրոնի աշխատանքներուն:

3. Կրնայի՞ք որոշ գաղափար մը տալ, նոր շէնքի չափին եւ բաժանումներուն մասին:

Պ. Վարժարանի շէնքը պիտի կառուցուի ներկայ Կեդրոնին Արեւմտեան կողմը եւ միացած պիտի ըլլայ Հայ Կեդրոնի շէնքին՝ գլխաւոր անցքով մը:

Շենքը պիտի ունենայ 20,600 քառակուսի ոտք տարածություն՝ երկու յարկի վրայ՝ չորս մակարդակով (Split level):

Պիտի շինուին Մանկապարտեզի երեք դասարաններ եւ Նախակրթարանի՝ վեց: Ամեն դասարան յարմարություններ պիտի ունենայ 35 աշակերտներ ընդունելու, ընդամենը՝ 305 աշակերտ:

Առաջին յարկին վրայ պիտի ըլլան նաեւ տեսչարանն ու ուսուցչարանը:

Ներքնայարկին վրայ պիտի ունենանք նաեւ 2,200 քառակուսի ոտք տարածութեամբ սրահ մը՝ այլազան գործածութեան համար. աշակերտական հաւաքոյթներ, հանդէսներ, եւ այլն:

Նոյն յարկին վրայ պիտի ունենանք նաեւ սկաուտական սենեակ մը եւ մթերանոցներ:

Շենքը իր ընդհանուր գիծերուն մէջ, պիտի ամբողջացնէ ներկայ շէնքը: Ծրագրուած է նոյն ոճով եւ կարելիութեան սահմաններուն մէջ շինել նոյնատեսակ շինանիւթերով: Ծարտարապետը, դարձեա՛լ, «Փէյճ Էստ Սթիլ» ընկերութիւնն է:

3. Ըստ երեւոյթին, բաւական հսկայ շէնք մը կը շինուի: Որքա՞ն ծախս կը նախատեսէք այս հիանալի ծրագիրը իրագործելու համար:

Պ. Նախատեսուած ծախսն է մօտաւորապէս 900 հազարէն մէկ միլիոն տոլար: Ծճգրիտ գինը կարելի պիտի ըլլայ սահմանել յառաջիկայ երկու ամիսներու ընթացքին՝ երբ շինութիւնը կը դնենք նուազարդի (tendering), հրաւիրելով քաղաքիս գաւազան շինարարական ընկերութիւնները:

3. Ի՞նչպէս կը խորհիք գոյացնել այս պատկառելի գումարը:

Պ. Զաւանաբար կը յիշէք, 1979ի Յունիսին երբ բացումը կը կատարուէր ներկայ Զայ Կեդրոնին, Տէր եւ Տիկին Գեորգ Գոլոլեանները 150 հազար տոլարի իշխանական նուիրատուութեամբ, բացումը կը կատարէին Զայ Կեդրոնի կողքին շինուելիք վարժարանի շէնքի հանգանակութեան:

Այն ատեն, ո՛չ դպրոց ունէինք, ո՛չ աշակերտութիւն, ո՛չ տնօրէն եւ ո՛չ ալ ուսուցչական կազմ:

Երեք տարի առաջ, նման նուիրատուութիւն մը ընելու համար, Տէր եւ Տիկին Գոլոլեանները պետք է ունեցած ըլլային Տեսի՛լք, Զաւա՛տք եւ Վստահութիւն՝ Թորոնթոյի մէջ հայ վարժարան մը ունենալու կարելիութեան մասին, նաեւ համոզում՝ մեր գաղութի վճռակամութեան. հայ ապրելու եւ հայ մնալու այս համայնակուլ ափերուն վրայ:

Նոյն տարին, Օլթարիոյի բարեխնամ կառավարութենէն հաւաստիք ստացանք, թէ կառավարութիւնը 250 հազար տոլարի նպաստ մը պիտի բերէ Զայ Կեդրոնի շինութեան Բ. Փուլին:

Ուրախ ենք նաեւ յայտարարելու, թէ Թորոնթոյի «Լեւոն-Փերուզ Պապայեան» հաստատութիւնը, մեր դիմումին ընդառաջելով, 1981 Յունիսին մեզի տեղեկացուց, որ 100 հազար տոլարի նպաստով կը խոստանայ մասնակցիլ շինութեան ծախսերուն:

Մէկ միլիոն տոլարի կէսը՝ 500 հազար տոլար ապահոված ենք արդէն այս ձեւով:

Դիմումներ կատարած ենք եւ կը յուսանք նիւթական օժանդակութիւն ստանալ նաե՛ւ Բ.Օ.Մ.ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններէն, Զայ Կրթական Զիմնարկութենէն, Կիւլպէնկեան հաստատութենէն եւ այլ ազգային եւ բարեգործական հաստատութիւններէն: Ասոնցմէ շատեր, շօշափելի գումարներով մասնակցած էին Զայ Կեդրոնի Ա. Փուլի շինութեան ծախսերուն:

Կ'ուզենք յիշել նաեւ Զայ Կեդրոնի Երեցներու Ընկերակցութեան խոստումը՝ վարժարանիս մէջ դասարանի մը շինութեան ծախսերը հոգալու՝ 25 հազար տոլարով: Դասարանը պիտի կրէ Զայ Կեդրոնի Երեցներու Ընկերակցութեան անունով նշատախտակ մը:

Կը յուսանք, որ այս օրինակը վարակիչ պիտի դառնայ եւ այլ միութիւններ եւ անհատ ազգայիներ պիտի ուզեն յաւերժացնել իրենց կամ իրենց սիրելիներուն անունն ու յիշատակը՝ դասարանի մը կամ սրահի մը շինութեան ծախսերը հոգալով:

Կը յիշէք անշուշտ, Հայ Կեդրոնի Հիմնարկէքին ունեցանք կնքահայրեր, որոնք 10 հազար տոլարի նուիրատուութեամբ, հովանաւորեցին Հիմնարկէքի արարողութեան: Կը հաւատանք, որ այս անգամ ալ պիտի գտնուին տալու առաքինութեամբ օժտուած ունեւոր, ազնիւ եւ ազգասէր հայորդիներ, որոնք անսալով ցեղին կանչին, պիտի հովանաւորեն վարժարանի շինութեան Հիմնարկէքը:

Վերջապէս, ամէնէն կարելոր աղբիւրը՝ հայ ժողովուրդը, որ միշտ անսակարկ իր սիրտն ու քսակը լայն բացած է Հայ Դպրոցին համար, տալով իր կարողութենէն անէլին, որպէսզի Ս. Մեսրոպի վառած փարոսը անմար մնայ յաւիտեան եւ լուսաւորէ Սփիւռքի ահաւոր ովկիանոսին մէջ նաւարկող հայ զանգուածները:

Հայ վարժարանը մեր բոլոր զաւակներուն համար պիտի շինուի եւ վստահ ենք, որ ամէն հայ անհատ, մասնաւոր թրոնթոյի մեր սիրելի ժողովուրդը, իր սրտաբոլխ նուիրատուութեամբ, իր մասնակցութիւնը պիտի բերէ այս նուիրական գործին:

Ընդհանուր հանգանակութիւնը այժմ բացուած է:

Այն ազգայիները, որոնք կը փափաքին մասնակցիլ այս սրբազան գործին, իրենց նուիրատուութիւնները կրնան ուղարկել հետեւեալ հասցէին.

Armenian Community Centre
A.C.C. Building Fund
45 Hallcrown Place
Willowdale, Ontario
M2J 4Y4, Canada
Tel. (416) 491-2900

Հ. Ե՞րբ տեղի պիտի ունենայ Հիմնարկէքը եւ Ե՞րբ կը խորհիք շինութիւնները կը վերջանան:

Պ. Հիմնարկէքի հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, 15 Նոյեմբեր 1981ին:

Մեր ժողովուրդը տեղեակ պիտի պահենք մանրամասնութիւններուն՝ մասնաւոր շրջաբերականով:

Կը յուսանք շինութեան աշխատանքները վերջացած տեսնել յառաջիկայ Սեպտեմբերին սկիզբը եւ նոր շէնքին մէջ սկսիլ Հ.Օ.Մ.ի Ամենօրեայ Վարժարանի եւ «Պապայեան» Մանկապարտեզի 1982-1983 տարեշրջանը:

**«ՀՈՐԻՉՈՆ»
1981**

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷԼԵԱՆԻ ՀԵՏ

Ամերիկահայ ծանօթ մտաւորական եւ համալսարանի դասախօս Խաչիկ Թէօլէօլեան հրաւիրուած էր խօսելու Թորոնթոյի Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի տարեկան ճաշկերոյթին: Օգտուելով այս բացառիկ առիթէն, մեր աշխատակիցը՝ ընկ. Գրիգոր Հոթոյեան հարցազրոյց մը ունեցած է հետը, հայ դպրոցի եւ հայ կեանքի այժմէական հարցերու շուրջ:

Խաչիկ Թէօլէօլեան ծնած է Հալէպ եւ մինչեւ 16 տարեկան ապրած է Միջին Արեւելքի զանազան հայաշատ կեդրոններուն մէջ: Ձաւակն է Մինաս եւ Գոհար Թէօլէօլեաններու, մեծցած՝ հայ մամուլի եւ հայ դպրոցի մթնոլորտին մէջ, «մեթոտի հոտով» ինչպէս կը սիրէ ըսել ինք: 1960էն ի վեր հաստատուած է Միացեալ Նահանգներ: Յաճախած է Հարվըրտ եւ Պրատն համալսարանները, ուրկէ 1975ին ստացած է իր դոկտորայի վկայականը՝ բաղդատական գրականութեան ճիւղին մէջ:

Ներկայիս ան ամերիկեան գրականութեան եւ գրական տեսութեան փրոֆեսոր է Գանէքթիքսթի Ուէզլէյն համալսարանին մէջ, ուր կը վարէ նաեւ վարչական պաշտօն՝ գրական հետազոտութեանց նուիրուած համալսարանական հիմնարկի մը մէջ: 1984ի առաջին եռամսեային ամերիկեան եւ հայ գրականութեան այցելու դասախօսն էր նաեւ Միչիկընի համալսարանի Ալեք Մանուկեան Հայագիտական ամպլոնին:

Խաչիկ Թէօլէօլեան, ականդեմական բնոյթ ունեցող գրութիւններէ անդին, թղթակից եւ աշխատակից է սփիւռքահայ մամուլին: Հեղինակն է նաեւ «Սփիւռքի Մէջ» հատորին (Փարիզ, 1980):

3. Սիրելի Խաչիկ, քանի մը օր է Թորոնթօ կը գտնուիք, անշուշտ այցելեցիք Յայ Կեդրոն եւ Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի Գոլուեան Նախակրթարանը եւ Պապայեան մանկապարտէզը: Ինչպէ՞ս գտաք տարուած աշխատանքները՝ հայապահպանման գծով:

Պ. Նախ ըսեմ, որ եօթը տարի է ի վեր Թորոնթօ չեի եկած: Գիտէի, հետեւելով հայ մամուլին, թէ ինչ նուաճումներ արձանագրած է Թորոնթոյի մեր հայ գաղութը, կառուցային, ինչպէս նաեւ այլ մարզերու մէջ, սակայն, իսկապէս գրեթէ անհաւատալի է այն ինչ որ կատարուած է եօթը տարուան ընթացքին:

Նախ՝ իբրեւ ստեղծուած շէնք ու կառոյց եւ երկրորդ՝ իբրեւ եռուզեռ, աշխուժութիւն եւ մանաւանդ իբրեւ դպրոց: Դպրոցի մասին ակնի մէկին կրնամ բան մը ըսել, որովհետեւ ո՛չ միայն Յայ Կեդրոնի շէնքը պտղտեցայ, այլ նաեւ այցելեցի գանազան դասարաններ, եւ ի վերջոյ, մէկ դասարանի մէջ գոնէ՝ հինգերորդ դասարան, բաւական հարցաքննեցի աշակերտները: Բերանս բաց մնաց կրնամ ըսել, ժողովրդական արտայայտութիւնը գործածելով, այդ մանուկներու գիտցածները տեսնելով: Կը կարծեմ որ գաղութ մը, որ այսչափ կարճ ժամանակի մը մէջ, ի գին անհուն գոհողութիւններու, կրցած է սման իրականութիւն գոհողութիւններու, կրցած է սման իրականութիւն ստեղծել, վստահ եմ շատ լաւ փուլի մէջ մտած է եւ ես վարդագոյն ակնոցներով կրնամ դիտել այս գաղութին մօտ ապագան:

3. Տարուած աշխատանքները բաւարար՞ են հայ նորահաս սերունդի հայեցի դաստիարակութեան, կրթութեան եւ ինքնուրոյնութեան ճանաչման:

Պ. Սփիւռքեան իրականութեան մէջ երբեք կարելի չէ բաւարար նկատել կատարուածը, անշուշտ եթէ որոշ մօտեցումով մը դիտենք հարցը: Օրինակի համար երբ

մարդիկ կը հարցնեն հոս կամ ուրիշ որեւէ տեղ, թէ բաւարար է կատարուածը հայ լեզուն պահելու համար, եւ անմիջապէս կը պատասխանեմ. համայնք մը, հաւաքականութիւն մը չի կրնար միևնաձայն, իր աշխատանքով, իր ճիգերով լեզուն պահպանել: Եթէ օրինակի համար հայ ընտանիքը պետք եղածը չընէ, հայ դպրոցը չի կրնար, որքան ալ նուիրուած ըլլան ուսուցիչները, որքան ալ արդիական ըլլան իր յարմարութիւնները, չի կրնար ընել այն, ինչ որ կ'իյնայ ընտանիքին: Երբ ունինք անձեր, որոնք, երեկոյեան ժամը 4 -5ին հեռատեսիլը կը բանան եւ կ'արտօնեն իրենց պզտիկներուն, որ մինչեւ ժամը 10 -11 հեռատեսիլի առջեւ նստին, կարելի չէ արգելք հանդիսանալ հայ լեզուի աղաւաղումին կամ կորուստին:

Ուրեմն, ես կը կարծեմ, որ որոշ հարցերու մէջ գոնէ հաւաքական իրականութիւնը եւ կազմակերպութիւնները չեն կրնար ընել այն՝ ինչ որ պետք է: Ինծի այնպէս թուեցաւ, ինչպէս ըսի այս կարճ, սակայն շատ տպաւորիչ անձնական փորձառութեան, որ դպրոցը առայժմ կ'ընէ այն, ինչ որ պետք է ընէ: Օրինակի համար Յայոց Պատմութեան դասը շատ լաւ տրուած է եւ աշակերտները շատ լաւ սորված են զայն, սակայն, զիս կը մտահոգէ ո՛չ միայն Թորոնթոյի, այլ՝ ամբողջ Հիւսիսային Ամերիկայի մէջ գոյութիւն ունեցող սա իրականութիւնը, որ Յայոց Պատմութիւնը կը շարունակուի դասաւանդուիլ շատ դասական ձեւերով: Եւ եթէ այսօր, վաղը կայ տակաւին երիտասարդ նորահաս սերունդ մը, որ այս դասական ձեւերով կ'ոգտորուի, իմ վախս, իմ մըտահոգութիւնս այն է, որ շատ մօտ ապագային, պիտի չկարենանք այլեւս այդ ձեւով սերունդ պատրաստել:

Ասիկա, սակայն, Թորոնթոյի գաղութին գործը չէ, փափաքելին այն է, որ գոյացուի բոլոր քաղաքական հոսանքներէ բաղկացած ուսուցչական ժողով մը, ուր ներկայ ըլլան նաեւ ակադեմիական մասնագետներ Յայոց Պատմութեան, ինչպէս փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան եւ փրոֆ. Ռոնալտ Գրիգոր Սիւնի եւ անոնք խորհրդակցին, թէ ինչպէ՞ս եւ ինչպիսի նոր գիրքերով կարելի է դասաւանդել մեր պատմութիւնը:

Եւ ես կը կարծեմ, որ չի բաւեր միայն դպրոց կառուցել, պետք է դպրոցի ուսուցիչներ պատրաստել, պետք է դպրոցի դասագիրքեր պատրաստել: Եւ անոնք աշխատանքներ են, որոնք պետք է ըլլան համագաղութային տարողութեամբ ճիգերով:

Անկէ դուրս, թէ կը տարուի՞ն պետք եղած աշխատանքները, կ'ուզեմ ըսել, որ ես միշտ տեսած եմ ցրուածութեան վտանգը, որովհետեւ, մենք միշտ փորձած ենք կեանքի զանազան գործելադաշտերուն մէջ հայ ժողովուրդին հայթայթել կառոյց մը, կազմակերպութիւն մը. ուր որ գացած ենք, հիմնած ենք ոչ միայն կուսակցութիւն, ակումբ, դպրոց, եկեղեցի, մարզական կազմակերպութիւն, մշակութային եւ այլ կազմակերպութիւններ: Ո՛չ ոք կրնայ քննադատել այս մօտեցումը հարցին: Բայց երբ աղբիւրները սահմանափակ են, նուիրուած մարդուժը թիւով փոքր է եւ երբ դրամագլուխը ալ ի վերջոյ սահմանափակ՝ որչափ որ ալ սրտաբուխ նուերներ ընէ ժողովուրդը, ես կը մտահոգուիմ քիչ մը, որ տարածուելու, ցրուելու վտանգը կայ: Եւ երբ ամէն բան ընելով, ամէնն ալ լաւ չենք ըներ, միևնուայն, երբ քիչ փորձեցինք սկզբնական շրջանին՝ կրնայինք աւելի լաւը ընել:

Չեմ ուզեր ըսել, թէ ես տեսայ Թորոնթոյի մէջ որեւէ մէկ փաստ, սակայն տարածուելու եւ ցրուելու վտանգը իսկապէս միշտ ներկայ է եւ պետք է աջալուրջ հսկել, որ մեր ամենէն նուիրուած ընկերները եւ ընկերուհիները չարաչար չգործածենք, մինչեւ որ յոգնին եւ լքեն այն ճամբան, այն պարտականութիւնները, որոնք իրենք այնքան պատրաստակամօրէն ընդունուած են:

3. Ամերիկայի հայաշատ կեդրոններու մէջ, վերջին 20 տարիներու ընթացքին հիմնուեցան բազմաթիւ հայկական դպրոցներ: Նկատի առնելով տեղական պայմանները ու նիւթական դժուարութիւնները, անոնց գոյութիւնը եւ առաքելութիւնը որչափօ՞վ հաստատ հիմքերու վրայ կառուցուած է:

Պ. Փաստօրէն ձեր հարցումին վերջին մասին պատասխանը դրական է: Ահաւասիկ, վերջին 19 տարիներու ընթացքին հիմնուած են մօտ 15 դպրոց եւ որքան գիտեմ, չէ եղած ոչ մէկ դպրոց, որ առաջին քանի մը տարիները տոկալէ ետք, պետք եղած է փակել նիւթական պատճառներով:

Ես չեմ ստորագնահատեր այն հսկայ դժուարությունները, այն հսկայ խոչընդոտները, որ նիւթականը կը դնէ մեր առջեւ: Սակայն, այնքան ատեն որ Ամերիկայի տնտեսությունը գահավեժ անկումի չ'ենթարկուիր, այնքան ատեն, որ Գանատայի տնտեսությունը վերիվայրոյ լաւ վիճակի մէջ է, անշուշտ անցեալ մի քանի տարիներուն Գանատայի եւ Ամերիկայի տնտեսությունը բաւական գէշ օրեր անցուց, եթէ վիճակը լաւանայ եւ հիմնականապէս մնայ, ես կը կարծեմ որ հայկական գաղութներու ունեւոր եւ բարեկեցիկ դասակարգը կրնայ պահել հայ դպրոցները եւ կրնայ նոյնիսկ նորեր ստեղծել:

Անշուշտ պէտք է հարց տալ, եւ ես այս հարցումին պատասխանը չեմ գիտեր, թէ ի՞նչպէս Թորոնթոյի պէս փոքր գաղութ մը կրնայ այս հոյակապ դպրոցը շինել, մինչ անելի մեծ գաղութներ որոշ շրջաններու մէջ, որոնք չեն ուզեր դպրոց ստեղծել, կամ ստեղծելէ ետք՝ մէկ հարուստի ազնուութեան պատճառով կրնան պահել իրենց դպրոցը: Անկեղծօրէն արտայայտուելով ըսեմ, որ դրամ հանգանակելու գանազան մօտեցումները եւ ձեւերը չեն ուսումնասիրած եւ կը մտածեմ, որ լաւ կ'ըլլար եթէ հասկըցուէր սա մէկ սկզբունքը. թէեւ դպրոցի մը սկիզբը կախում ունի մէկ կամ երկու ունեւոր անձերու ազնուութենէն կամ մէկ կամ երկու Յ.Օ.Մ.ի նման կազմակերպություններու պատրաստակամութենէն՝ որոշ դրամագլուխ մը տրամադրելու, չի կրնար շիտակ ըլլալ դպրոց մը պահել շարունակաբար մեծահարուստներու նուիրատուութիւններով: Եթէ դպրոցը իսկապէս անձերու, ընտանիքներու եւ հաւաքականութիւններու պէտքերուն կը ծառայէ, եւ եթէ այս հաւաքականութիւնը ի վերջոյ այլեւ թիթեղեայ տուններու մէջ չէ որ կ'ապրի, այլ՝ բարեկեցիկ վիճակի մէջ կ'ապրի, պէտք է կարենալ պահել իր դպրոցը: Եթէ չպահէ, ես գոնէ համաձայն եմ վերահատուութեան: Այսինքն, հինգ-վեց տարի ի գին ամէն զոհողութեանց դպրոց մը կը պահուի եւ կը տեսնուի, որ այդ գաղութին մէջ չկայ պատրաստակամութիւնը այդ դպրոցին շուրջ համախմբուելու, պէտք է ամէն ինչ փորձել եւ եթէ ձախողինք, պէտք է գոցել դպրոցը:

Բարեբախտաբար, երբեք պէտք չէ եղած՝ գոնէ մինչեւ հիմա՝ նման բան մը ընել եւ ասիկա շատ դրական երեւոյթ է: Ես կը մտահոգուիմ ամենէն անելի ուրիշ բաներով: Օրինակ, գիտե՛ք, որ այս բոլոր դպրոցները, որոնք կը հիմնուին, հիմնուած են շնորհիւ Մերձաւոր Արեւելքէն եկած հայութեան համար: Պատճառ մը, զոր ես կ'ուզեմ յիշեցնել միջին-արեւելահայ հայրենակիցներու սա է, որ կարելի եղաւ Ամերիկայի մէջ հիմնել հայկական դպրոց 1960ական թուականներէն ետք, նախ որովհետեւ հայութեան ընդհանուր տնտեսական մակարդակը բարձրացած էր. երկրորդ՝ ո՛չ թէ փոքր թիւով հայ կու գար Միջին Արեւելքէն, այլ՝ զանգուածային եւ մէկ անգամէն եկող բազմութիւններ ունեցանք, որոնք զգալի դարձուցին ազգային իշխանութիւններուն՝ հայ դպրոցի պէտքը: Երրորդ՝ եւ ասիկա շատ կարեւոր է, ես յաճախ նշմարած եմ, որ միջին-արեւելեան հայ բարեկամներ կ'ըսեն ինծի պոռոտախօսութեամբ. նայեցե՛ք, ամերիկացի հայեր 40-50 տարիներ բան մը չկրցան ընել, մե՛նք ըրինք:

Ասիկա երկու բան կ'անտեսէ: Նախ կ'անտեսէ այն իրականութիւնը, որ այն համեստ սերունդը որ երկրէն հոս եկած էր, տարիներով դրամ հաւաքեց, երբ իր տընտեսութիւնը լաւ չէր, եւ այդ դրամը Մերձաւոր Արեւելք դրկեց, որպէսզի հոն կերտուին դպրոցներ, եկեղեցիներ, եւ այլն, եւ երբեք պէտք չէ ապերախտ ըլլալ եւ մոռնալ ասիկա: Եւ երկրորդ չմոռնալ նաեւ, որ այդ օրերուն Ամերիկան տեղական դպրոցական ցանցը այնքան լաւ էր, որ չէր կրնար նոր դպրոց հիմնելը առաջնահերթութիւն ունենալ:

Մինչդեռ հիմա, հայութեան թիւը, որակը, տնտեսական վիճակը կը բարելաւուի, իսկ ամերիկեան դպրոցներու մակարդակը ահռելի անկումի մէջ է: Ես կրնամ ըսել ասիկա իբրեւ ուսուցիչ, որ ի վերջոյ այդ երկրորդական վարժարաններէն շրջանաւարտ եղողներուն ուսուցիչն էմ: Եւ փորձառութիւնս կ'ըսէ, թէ որքան անկում կայ, մանաւանդ վերջին տասնամեակի ընթացքին: Այս բոլոր ազգակներն են, որ միասին կարելի ըրին հայ դպրոցներու կերտումը եւ պէտք չէ երբեք այս վերլուծումը մոռնալ: Վերջապէս ես կ'ուզեմ շեշտել այն ինչ որ արդէն ըսի, որ դպրոցը միայն շէնք եւ կառոյց չէ, դպրոցը միայն աշակերտ չէ: Դպրոցը ուսուցիչ եւ ուսուցիչներու հայթայթուած միջոցներն են: Չիս մտահոգողը ամենէն անելի այս դրական երեւոյթին մէջ այն է, որ

հայ ուսուցիչները տեւականաբար իրարու հետ չեն, չեն կրնար հաւաքուիլ, նստիլ, խորհրդակցիլ, թէ ի՞նչ կ'ընեն: Ասիկա մասամբ մեզ բոլորիս ծանօթ քաղաքական բաժանումներու հարցն է, մասամբ ալ տնտեսական եւ կազմակերպական հարց է: Այսինքն՝ չէ մտածուած լրջօրէն ամէն տարի քով-քովի բերել, ըսենք տարի մը հայերէնի, տարի մը Հայոց Պատմութեան, տարի մը պարի, երգի ուսուցիչները, որ անոնք կարենան իրենց փորձառութիւնը իրարու հետ բաժնել: Եւ ասիկա կը նկատեմ կեսական, առաջնահերթ գործ մը, որ պէտք է կատարուի շուտով:

3. Հայկական դպրոցները ուսումնական տարուան վերջաւորութեան պիտոճեական զգալի բաց մը կ'ունենան, ինչպէս նշմարեցինք Թորոնթոյի պարագային, ամբողջ տարուան ընթացքին զանազան ձեռնարկներով եւ ճաշկերոյթի հանգանակութեամբ կը փորձեն այդ բացը զոցել: Չէ՞ք կարծեր, որ դպրոցական համահայկական հիմնադրամի մը ստեղծումով, ազգային վերին մարմնի մը հսկողութեամբ, կարելի պիտի ըլլայ այդ բացերը զոցել, փոխանակ ամէն տարի ժողովուրդին դիմելու ու հանգանակութիւններ կատարելու:

Պ. Անշուշտ մօտեցումը շատ տրամաբանական է, սակայն, ինչպէս յաճախ կը պատահի, հայ ազգի մէջ տրամաբանականը եւ կարելին լոյն բանը չեն: Նախ, անշուշտ, մէկէ աւելի ազգային իշխանութիւններ կան, քաղաքական բաժանումներ կան, այլ հարցեր կան, եւ, պէտք է ըսել, որ բոլորովին անտեսուած չէ ասիկա:

Շատեր, մանաւանդ ամերիկահայեր, յաճախ ըսած են. «Նայեցէք, շրջաններ կան, ուր գոյութիւն ունի երկու երեք հազար հայութիւն, դպրոց չեն կրնար բանալ եւ եթէ ուզենք անոնցմէ ալ հանգանակութիւն ընել, մօտակայ հարիւր-հազարոց գաղութի մը դպրոցին համար, չեն ուզեր իրենց մասնակցութիւնը բերել, ըսելով որ մենք եկեղեցի չունինք, մենք քահանայ չունինք, մենք պէտքեր չունինք»: Ասիկա տեղայնապաշտութեան մէկ փաստը ըլլալով հանդերձ, ձեռով մը արդարանալի է:

Սակայն հոս աւելցնեմ, որ կան մի քանի բաւական կեդրոնացած կազմակերպութիւններ, օրինակի համար 1950-ական թուականներէն ի վեր Գալիֆորնիոյ մէջ գործող Հայ Կրթ. Հիմնարկութիւնը, որ ունի դրամագլուխ մը եւ անկէ որոշ գումարներ տրամադրած է Գալիֆորնիոյ հայ դպրոցներու, ինչպէս նաեւ Թորոնթոյի դպրոցին շէնքի շինութեան:

Իմ ըսելիքս հետեւեալն է. ես հակառակ եմ կիրարկուող ձեւերուն, թերեւս անոր համար, որ գործով ակադեմական եմ եւ մտաւորական, ուր դրամահաւաքը կը զատուի մտաւոր աշխատանքէն: Սա ըսել կ'ուզեմ. ես համալսարանի դասախօս եմ եւ միաժամանակ, որոշ վարչական գործերու մէջ մխրճուած: Նշանակուած եմ, յաճախ մի քանի տարիներ, անդամ այն յանձնախումբին, որ կը բաղկանայ թէ դպրոցի հոգաբարձուներու մէկ մասէն, թէ դպրոցի ուսուցիչներու մէկ մասէն: Հոգաբարձուները, քանի որ համալսարանը մեծահարուստներու համալսարան մըն է, միլիոնատերեր են կամ հսկայ կազմակերպութիւններու գլխաւոր վարիչները, որոնք եթէ իրենք միլիոնատեր չեն, բազմաթիւ միլիոնատերեր կը ճանչնան: Անշուշտ նպատակը պարզ է՝ կազմել շրջանակ մը մարդոց, որոնք հարուստներու հետ խօսիլ գիտեն: Սակայն, միաժամանակ, ամոռն մտածելակերպով մը հարուստները չեն զատուած ուսուցիչներէն, որոնք այդ դրամը ծախսելու, գործածելու մասին հմտութիւն ունին: Շատ մեծահարուստներ կան, ազնիւ մարդիկ, որոնք հարիւր հազարի չէքեր կը գրեն, առանց գիտնալու եւ հասկնալու, թէ ինչ ըսել է կրթական հաստատութեան մէջ աշխատիլը, վարելը, ամէնօրեայ գործի մէջ մխրճուիլը:

Եւ, ուրեմն, կան որոշ տեսակի ամերիկացիներ, որոնք համոզուած են, որ եթէ կ'ուզես դրամ հաւաքել դպրոցի մը համար, հարուստի մը մօտ միայն հարուստ մը չես դրկեր, այլ միշտ կը դրկես երկու երեք հոգիոց պատուիրակութիւն մը, ուր դպրոցի բոլոր ծալքերէն հասկցողներ կան: Մէկը որ կրնայ ուսման կարեւորութեան մասին խօսիլ, ուրիշ մը, որ կրնայ այս կամ այն տեսակի ուսման բերելիք նպաստին մասին խօսիլ: Օրինակի համար, ըսենք թէ փոխանակ հայ հարուստի մը մօտ երկու այլ հարուստներ կամ երկու այլ գլխարկը ձեռքերնին խնդարկուներ դրկելու, կը դրկուին

այդ երկուքը եւ ուսուցիչ մը, որ կրնայ խօսիլ Հայոց Պատմութեան մէջ կատարուած ճիգերուն մասին կամ ուսումնական ճիգերուն մասին:

Թերեւս այս բոլորը միամիտ կը թուի ձեզի: Որովհետեւ մենք կը հաւատանք, որ հայ մեծահարուստները զոնէ դրամէ գատ ուրիշ բանով չեն հետաքրքուիր: Սակայն, ձեռով մը ասիկա յոռետեսութիւն մըն է, որ կ'ենթադրէ, որ հայ հարուստը 300 տարիէ ի վեր չէ փոխուած եւ կարելի չէ զինք ընդունուած մօտեցումներով համոզել:

Չեմ գիտեր, որովհետեւ, փորձառութիւն չունիմ, սակայն, կը հաւատամ, որ ինչպէս ըսիք, հիմնադրամ մը շատ բան կրնայ փոխել, սակայն, ոչ հիմնադրամ մը, որ նկատի չ'առնէր տեղական զանազան պայմաններ:

3. Կրնա՞ք թուել այն կռուանները, որոնք կը նպաստեն Սփիւռքի հայութեան գոյատեւումին: Գիտէ՞ք դպրոցի, եկեղեցիի, հայ մամուլի եւ մշակոյթի ունեցած կենսական դերին մասին: Սակայն, անոնց կողքին, կա՞ն ուրիշներ, որոնք կրնան նպաստել վերոյիշեալ առաջադրութեան:

Պ. Նախ պէտք է ըսել, որ Սփիւռքի զանազան շրջաններու մէջ տեղական պայմանները այնքան տարբեր են, գաղութներու նկարագիրները այնքան տեսակաւոր, որ կարելի չէ ընդհանուր ճշմարտութիւն մը թուիլ այս հարցին եւութեան շուրջ: Եթէ ձեր ըսածը սահմանենք, օրինակի համար, Հիւսիսային Ամերիկայի, Նորէն կարելի չէ ընդհանուր ճշմարտութիւն մը ըսել, այն իմաստով որ ես անշուշտ կը հաւատամ, որ որոշ կառոյցներ աւելի բան կը բերեն հայապահպանումին, քան թէ ուրիշներ, սակայն, չեն կրնար ըսել, ամէն տեղ, եթէ ըսենք օրինակի համար Ամերիկայի Գոնէքթիքը՝ Նահանգի Հարթֆըլտ քաղաքին մէջ կը բնակիս, ուր երկու հազար հայութիւն կայ, չես կրնար ըսել, որ Նոյն կազմակերպութիւնները անկար են Նոյնքան ազդու ընելու, ինչ կրնայ ընել Լոս Անճելըսի 125 հազարէ աւելի հայութիւնը: Այլ խօսքով, եթէ ինծի մնար որոշումը, ես պիտի ըսէի, որ Հարթֆըլտի հայութեան համար կենսական է եկեղեցին: Մինչդէռ, Լոս Անճելըսի գաղութը չի պահանջեր եկեղեցական աշխատանքներ՝ որքան դպրոցական աշխատանքներ: Կարելի չէ առաքելութիւնը եւ կազմակերպութիւնը գովել, դրուատել կամ երկրորդական նկատել, առանց նկատի առնելու տեղոյն պայմանները:

Որքան իմ անձնական նախընտրութիւններու մասին խօսիմ, սակայն, չեմ կարծեր որ կարելոր են անոնք: Պէտք է ըսել, որ եթէ հայ ժողովուրդին մէջ եկեղեցին հսկայ դեր խաղացած է, պատճառը այն է, որ հազար հինգ հարիւր տարիներէ ի վեր, եթէ կ'ուզէք այս ձեռով նկարագրել, մեր միակ կեդրոնացած դիւանակալութիւն ունեցող, համազգեստաւոր պաշտօնեայ ունեցող կառոյցը՝ հայ եկեղեցին եղած է: Այսինքն, եղած է գրեթէ պետութիւն: Եւ այդ օրուրէն կարելի չէ երբեք անտեսել եկեղեցւոյ հսկայ կարելորութիւնը, մանաւանդ այն շրջաններու մէջ, ուր ուրիշ մեծ կառոյցներ չըկան, այսինքն՝ փոքր քաղաքներու ոչ խտացեալ շրջաններուն մէջ:

Ատոր համար էր, որ կենսական են եկեղեցին ալ, դպրոցն ալ, մշակութային, մարզական եւ այլ միութիւններն ալ: Ես անձնապէս կը հաւատամ, որ մանաւանդ ըսփիւռքեան պայմաններուն տակ, կենսական է առոյգ մամուլը: Թերեւս ասիկա կու գայ ընտանեկան պատճառներէ, թերեւս ես հայ թերթերու տպարաններու մէլանին հոտը քթիս մէջ մեծցած եմ եւ մինչեւ այսօր ալ իմ կեանքիս ամենամեծ հաճոյքներէն մէկն է թերթը երբ նոր քաղաք մը կ'այցելեմ, առաջին գործս ոչ թէ եկեղեցի կամ դպրոց երթալն է, այլ՝ հայկական մամուլի տպարան: Ուրեմն, այս անձնական ազդակներէն մղուած կը հաւատամ, որ որքան ցրուած ըլլայ ժողովուրդը, այնքան կենսական են հաղորդակցութեան միջոցները եւ հայ մամուլը: Օրինակի համար, ես եօթը տարիէ ի վեր Թորոնթօ չի եկած, սակայն շատ բան գիտի Թորոնթոյի մասին, գալէս առաջ, շնորհիւ հայ մամուլին: Ես կը կարծեմ, որ մեր տկարութիւններէն մէկը իբրեւ համայնք, այն է որ պէտք եղածին չափ պատրաստակամ հայերէն գրել գիտցող թղթակիցներ չունի մեր մամուլը: Ես գիտեմ, թէ ինչ է հայ խմբագրին քաշած տառապանքը: Աչքովս տեսած եմ եւ կը կարծեմ, որ եթէ ինծի ըսուէր, թէ որը պիտի նախընտրէի, նոր կուսակցական գործի՞ մը, թէ՞ իսկապէս լաւ թղթակից մը, պիտի ըսէի. լաւ թղթակից մը նոյնքան բան կրնայ ընել հայութեան, որքան ազգային գործիչ մը:

3. Հայ մամուլի եւ թղթակիցներու մասին խօսեցանք: Կը փափաքէինք ունենալ ձեր կարծիքը Սփիւռքի հայ մամուլի մասին՝ ընդհանրապէս եւ Հ.Յ.Դ. Գանատայի պաշտօնաթերթ «Հորիզոն» շաբաթաթերթի մասին՝ յատկապէս:

Պ. Նախ պէտք է ըսել, որ հայ մամուլի վիճակը որքան ալ գէշ երեւի, զարմանալիօրէն լաւ է՝ եթէ բաղդատուի ուրիշ սփիւռք ունեցող համայնքներու մամուլին հետ: Ես զանազան խօսակցութիւններ ունեցած եմ յոյն, հրեայ, հունգար, խրուաթ, հայիթցի եւ այլ ժողովուրդներու մամուլի ներկայացուցիչներուն հետ: Երբ անոնք կը տեսնեն, թէ իմ գրասեղանիս վրայ բազմաթիւ թերթեր կան, որոնք տպուած են միայն արեւմտեան Սփիւռքի մէջ, ի միջի այլոց չհաշուելով Լիբանանը, Հարաւային Ամերիկան, Եւայլն, բերաննին բաց կը մնայ: Ամբողջ Ամերիկայի մէջ, ուր երեք քառորդ միլիոնէն աւելի հունգարախօս կայ, մէկ օրաթերթ չեն կրնար պահել: Ամբողջ Ամերիկայի մէջ, ուր կես միլիոնէ աւելի եուկոսլաւ կայ, չկրցան պահել իրենց օրաթերթը: Ես կը կարծեմ, թէ Գանատայի մէջ եւս նոյն դժուարութիւնները ունին անոնք: Ես ուրեմն, ամենէն առաջ կ'ուզեմ ըսել, որ որքան ալ խոցելի կէտեր ունենայ մեր մամուլը, եւ անշուշտ, բոլորդ ալ գիտէք որ ունի, չմոռնանք որ մեր մամուլը իսկապէս հրաշք մըն է բաղդատմամբ ուրիշ ժողովուրդներու մամուլին:

Երկրորդ, ես համաձայն չեմ շատերուն, ի միջի այլոց հօրս, որ ինչպէս գիտէք, հայ թերթի խմբագիր եղած է ամբողջ կեանքին ընթացքին, երբ հայ մամուլը կը քննադատեր, ամէն բանէ առաջ լեզուն կը քննադատեր: Կասկած չկայ, որ մամուլի լեզուն չէ այն՝ ինչ որ էր, ըսենք 30 կամ 40 տարիներ առաջ՝ Միջին Արեւելքի մէջ: Կասկած չկայ, որ հայ թերթը ունի խմբագիրներ, որոնք պէտք եղած հայերէնը չեն գիտեր: Կասկած չկայ, նոյնիսկ որ ձեռով մը ողբալի է այս լեզուական կացութիւնը, սակայն, ես կը կարծեմ, թէ հայ մամուլի մէջ հայ լեզուին պահպան կեցողները անցեալին եւ ներկային, սըխալ մը կը գործեն, երբ լեզուի կատարելութիւնը կը նկատեն ամենակարեւոր կէտը կամ գիծը թղթակցութեան մը կամ աշխատակիցի մը գրութեան: Եւ երբեմն կը պատահի, որ կ'ըսեն. ես չեմ կրնար սրբագրել, քան որ շատ սխալ ունի եւ ուրեմն չեմ հըրատարակեր:

Ես պիտի նախընտրէի, որ մանաւանդ ժողովուրդէն եկած ձայները հրատարակուին նոյնիսկ իրենց կէս-կատար հայերէնով, որովհետեւ հայ մամուլը ամէն բանէ առաջ պէտք է ըլլայ ոչ միայն կուսակցութեան մը կամ կազմակերպութեան մը արտայայտութեան բեմը, այլ ժողովուրդի ձայներու բեմը: Յաճախ լսած եմ մեր կուսակցութեան թերթերուն մէջ, ժողովուրդը բնաւ նամակ չի գրեր, սակայն, կը տեսնէք որ անկախ նախաձեռնութեամբ հրատարակուող թերթերուն մէջ շատ մը նամակներ լոյս կը տեսնեն: Ինչո՞ւ համար, որովհետեւ, անոնք պատրաստ են հրատարակելու քիչ մը ավելի-ցիւղ կարծիքներ, քիչ մը գէշ հայերէնով գրուած կարծիքներ՝ միայն տարրական սխալները շտկելով, որովհետեւ անոնք կը հաւատան, որ ինքնին դրական բան մըն է թերթի մէջ ժողովուրդի ձայնին ներկայութիւնը, նոյնիսկ եթէ այդ ձայնը մաքուր հայերէնով եւ իմաստալից կարծիքներով լեզուն ձայն մը չէ: Եւ արդէն մենք պէտք է ընդունինք, որ գրական հայերէնի եւ խօսակցական հայերէնի միջեւ գտնուող հոկայ տարբերութիւնը կը դժուարացնէ ժողովուրդի ինքնարտայայտութիւնը մեր մամուլին մէջ: Ատիկա ընդունելով, այսուամենայնիւ, պէտք է շարունակենք դիւրագագաց ըլլալ լեզուի հարցերու հանդէպ եւ ընդունիլ այդ դժուարութիւնը:

Անկէ անդին ես կը հաւատամ, որ Սփիւռքի հայ մամուլը պէտք է պատրաստուի ապագային համար: Որքան ալ հիմնենք դպրոցներ, որքան ալ աշխատինք հայ լեզուն առողջ պահել, գիտենք որ ամէն սերունդի մէջ պիտի շատնայ թիւը անոնց, որոնք զգացումով հայ են, սակայն հայերէն չեն գիտեր: Եւ, նոյնիսկ, եթէ հայախօս են, հայերէն գրել-կարդալ չեն գիտեր:

Ասիկա միայն արեւմտեան երեւոյթ մը չէ, այլ՝ Միջին Արեւելքի մէջ ալ կայ արդէն սերունդ մը, որ հայախօս է, սակայն, տասը տող կանոնաւոր հայերէն չի կրնար գրել՝ հասկնալի պատճառներով: Ուրեմն, պէտք է պատրաստել եւ պատրաստուիլ օտար լեզուով հայերէն թերթեր հրատարակելու: Ամենէն լաւ ձեւը ասիկա ընելու, արդէն հայերէն լեզուով հրատարակուող թերթերու մէջ քանի մը էջ տրամադրելն է: Սակայն այս իրագործելու համար պէտք է խմբագիր պատրաստել: Դուրսէն եկող խմբա-

գիրներու դժուարութիւնը այն է որ չեն կրնար կանոնաւոր անգլերէն գրել: Խղճալի են ներկայիս հրատարակուող հայ թերթերու անգլերէնի բաժինները: Ես անգլերէն լեզուի եւ գրականութեան ուսուցիչ մը ըլլալով շատ գէշ կը զգամ, երբ օտար մը մեր թերթերը կը թղթատէ: Հայերէն բաժինով հպարտ եմ, սակայն, անոնք հայկական բաժինէն բան չեն հասկնար, իսկ անգլերէն բաժինը խղճալի է իր լեզուական կառոյցով՝ օրինակի համար:

Գալով «Հորիզոն» շաբաթաթերթին, անկեղծ դրական երեւոյթ մըն է զանազան պատճառներով: Նախ, որովհետեւ այս թերթը վճարովի եւ ամբողջական ժամանակով խմբագիր չունի եւ հակառակ անոր «Հորիզոն»ը ոչ միայն լաւ թերթ մըն է, այլ՝ կը գերազանցէ մասնագիտացած շատ մը թերթեր, որոնք ունին երկու կամ երեք ամբողջական ժամանակով պաշտօնէսներ: Կը գերազանցէ իր հայերէնի մաքրութեամբ, իր էջադրութեամբ, որ շատ կարելոր է երկրի մը մէջ, ուր ոճը ամէն ինչ է: Եւ հաւասար է միւս թերթերուն իր նիւթերով:

Ես միշտ մտահոգութիւն մը ունիմ, որ անկեղծօրէն կ'ուզեմ արտայայտել: Մըտահոգութիւնս այն է, որ Դաշնակցութեան թերթերը ուր որ ալ լոյս տեսնեն, իրենց պարունակութեամբ քիչ մը շատ սահմանափակ են, որովհետեւ կը զգուշանան որոշ, քիչ մը ժողովրդական եւ գեհիկ նիւթերու էջ բանալու: Ես կը յուսամ, որ «Հորիզոն»ի նման բարձր որակով թերթ մը, քաջութիւնը կ'ունենայ որոշ արկածախնդրութիւններ ընելու, որոշ փորձերով դէպի ժողովուրդ բացուելու իր նիւթերով:

Միաժամանակ եւ վերջապէս ըսեմ, որ թերթը պարտականութիւն ունի ո՛չ միայն լուրեր տալու, այլ նաեւ լուրեր ստեղծելու: Լուրը միայն աշխարհի մէջ պատահածը չէ, այլ՝ մարդոց սրտին ու մտքին մէջ պատահածը: Եւ ես պիտի նախընտրէի, որ թերթ մը, թերթի մը խմբագրութիւնը նախաձեռնութիւնը ունենար ստեղծելու առիթներ, ու մարդոց սրտի եւ մտքի արտայայտութիւնը ինքնին նիւթ ստեղծէր թերթին համար: Այս հարցին մէջ շատ-շատ գովելի է «Հորիզոն»ի խմբագրութիւնը, որուն «Կլոր Սեղան»ները իսկապէս կը ստեղծեն առիթ մը, ուր զանազան հայ անձեր կ'արտայայտուին: Միայն, կը կարծեմ, որ պետք չէ սահմանափակ անձերու հարցնել, իրենց կարծիքները ունենալ, այլ՝ պետք է դիմել նաեւ այնպիսի անձերու, որոնք գրաւոր չեն կըրնար արտայայտուիլ: Անոնց հետ պետք է խօսիլ, անոնց ըսածները ձայնագրել, հայերէնի վերածել եւ անպայման արտայայտել անոնց կարծիքներն ալ:

3. Իբր ակադեմական եւ հայ մտաւորական, ի՞նչ է այն նպաստը, զոր դուք կը կարծէք որ կրնաք բերել սփիւռքահայ կեանքին եւ ի՞նչ կ'ընեն ուրիշ ակադեմականներ այս ուղղութեամբ:

Պ. Այս հարցում մըն է, որ տարբեր պատասխաններ ունի տարբեր ակադեմականներու համար: Իմ հարցս հետեւեալն է. ես գրականութեան մասնագետ եմ եւ ուրեմն յաճախ կը պատահի, որ ինձմէ ակնկալուածը գրականութեան կալուածին բան մը բերելն է: Հետեւեալ ձեւերով: Շատեր ինձի ըսած են. դուն մէկն ես այն փոքր թիւով հայ մտաւորականներէն, որոնք թէ լաւ աշխարհաբար գիտեն, թէ լաւ անգլերէն: Ինչո՞ւ համար մեր գրականութիւնը անգլերէնի թարգմանելով չես զբաղիր: Եւ ես կը մըտածեմ, որ եթէ զբաղէի, թերեւս կրնայի օգտակար ըլլալ հայութեան՝ որոշ չափով: Սակայն, այդ գործը լաւ ընելը շատ ժամանակ կը պահանջէ, այսինքն ես լրջօրէն իմ ազատ ժամանակս՝ գործես դուրս՝ պիտի տրամադրէի թարգմանութեան, եւ, ուրեմն, չկարենայի ընել այն շատ մը բաները, զորս կ'ընեմ, հաճոյքով կ'ընեմ որովհետեւ ես կը հաւատամ որ անոնք նոյնքան կարելոր են, այսինքն՝ մամլոյ թղթակցութիւններս եւ աշխատակցութիւններս: Մեր ժողովուրդը յաճախ չի հասկնար, թէ որքան տկար է գոյութիւն ունեցող թարգմանութիւններու մեծամասնութիւնը՝ մի քանի յարգելի բացառութիւններով, եւ կը զարմանանք, որ օտարը մեր գործը չի յարգեր՝ երբ օտարին կը ներկայացնենք անխնամ թարգմանութիւնները: Ուրեմն, եթէ ես պիտի կարենայի թարգմանութեամբ որոշ բան մը տալ հայ կեանքին, չեմ ըներ ատիկա, որովհետեւ ժամանակի եւ դրամի կարօտող գործ մըն է այդ:

3. Հայա Արա Պալեօգեանի թարգմանութիւնները, յատկապէս Կոստան Չարեանի գործերէն:

Պ. Արա Պալեօգեան համեմատաբար լաւերէն է այս ուղղութեամբ: Ուել մէկը չկայ, որ զիս գոհացնող գործ մը տուած է: Սակայն, կան անձեր, ի միջի այլոց Արա Պալեօգեան, որոնք կրցած են յաջողութիւն գտնել: Մի՛ մոռնաք, որ Արա Պալեօգեան իր յաճախակի գրելով, մեծ ազգեցութիւն ունի իր ընթերցողներուն վրայ: Բազմաթիւ ամերիկահայեր կան, որոնք բառ մը հայերէն չեն գիտեր եւ որոնց եթէ հարցնես, թէ ո՞վ է հայ մամուլի ամենէն գործօն անձը, կ'ըսեն առանց տատամսումի՝ Արա Պալեօգեան, որովհետեւ անոր գրութիւնները կ'երեւին բազմաթիւ թերթերու մէջ, որովհետեւ ժողովրդական են, երբեմն շատ ժողովրդական, սակայն Պալեօգեանը ինք ունի սա առաւելութիւնը, որ մտաւորական լաւ պատրաստութիւն ունի եւ կը փորձէ հասնիլ ժողովուրդի բոլոր հատուածներուն: Եւ եթէ երբեք իր գրութիւնները երբեմն անձնապէս ինծի դիւր չգան, սակայն, ընդհանրապէս ես շատ կը գնահատեմ այն աշխատանքը, զոր ան կը տանի, սակայն չմոռնանք որ ան ամբողջական ժամանակով տրամադրուած է իր գրական աշխատանքին, մինչդէռ ես ամբողջական ժամանակով ակադեմական եմ եւ ուրիշ աշխատանքներ ունիմ:

Ատկէ անդին կը կարծեմ, որ ես անձնապէս եւթակայ եմ այն վտանգին որուն եւթակայ եմ շատ մը հայեր, ակադեմական կամ ոչ: Այսինքն, մէկ կողմէ փափաքը կայ հայութեան մէջ մտնելու, հայութեան մէջ ընելու այն ինչ որ կարելի է, սակայն, միաժամանակ ես պարտականութիւն մը ունիմ՝ յաջողելու ի՛մ գործիս մէջ, որովհետեւ, որքան յաջող ըլլամ իմ գործիս մէջ, որքան բարձրանամ, այնքան աւելի մեծ կրնայ ըլլալ այն նպաստը, որ ես օր մը կրնամ բերել հայութեան: Եւ այս պարագային ես եւ այլ մըտաւորականներ տեսակ մը սխալ գործած ենք: Փոխանակ մեր ասպարեզներուն մէջ նախ լրջօրէն յաջողելու եւ վերջը հայութեան գալու, բաժնած ենք մեր աշխատանքը եւ մեր ժամանակը հայութեան համար տրուած գործերու եւ մասնագիտական գործերու միջեւ: Ես այս վայրկեանիս գոնէ, քանի այս տարի քառասուն տարեկան կ'ըլլամ, կը մտածեմ մէկ-երկու տարի քիչ մը հեռանալ հայութենէն, ո՛չ թէ հայութիւնը ձգելու նպատակով, այլ որովհետեւ առաջադրութիւններ կան ամերիկեան հաստատութիւններու կողմէ, որոնք եթէ կարենամ իրականացնել, շատ աւելի ազդեցիկ անձ մը կը դառնամ ամերիկեան իրականութեան մէջ եւ անկէ ետք հայութեան բերելիք նպաստս ալ աւելի վարկ կրնայ ունենալ:

Անկէ անդին կ'ուզեմ շեշտել, որ շատ դրական եւ շատ կարեւոր երեւոյթ մըն է հայկական ակադեմական նոր ամպիոններու հիմնումը ամերիկեան համալսարաններու մէջ՝ վերջին 15 տարիներու ընթացքին: Չմոռնանք, որ եղած են մութ շրջաններ Հայոց պատմութեան մէջ, ուր հայ ժողովուրդը մտաւորականութիւն չէ ունեցած, բացի այն քանի մը վարդապետներէն, որոնք վանք-համալսարաններու մէջ տարած են հայ մշակոյթի աշխատանքը: Եղած են դարեր, ուր միակ գրել-կարդալ գիտցողները եղած են վանականներ՝ վանական համալսարաններու մէջ: Եւ եթէ անոնք չըլլային, հայ մշակոյթի շարունակականութիւնը կը խզուէր պարզապէս: ԺԱ. դարէն մինչեւ ԺԸ. դար, մօտ եօթը հարիւր տարիներ վանքերը եղած են կենսական ազդակ, Գլաձորի եւ Տաթեւի նման վանքերը՝ հայ մշակոյթի վերապրումին համար:

Այսօր, ձեւով մը կը մտնենք, ըսինք ոչ նոյնքան ժխտական ձեւով, մութ դարերու մէջ: Այսինքն, գիտենք որ Ամերիկայի մէջ սերունդ առ սերունդ շատ մը հայեր պիտի մոռնան հայ մատենագրութիւնը, հայ գրականութիւնը, հայոց պատմութեան աւելի բարդ եւ ոչ թէ առասպելական կամ ժողովրդական ծալքերը: Հեռաւոր ապագային, երբ պետք պիտի ըլլայ ուսուցանել ամբողջ ժողովուրդի մը՝ հայ լեզուն, հայ գրականութիւնը, հայ պատմութիւնը, եթէ պահուած չըլլան այդ գանձերը, եթէ շարունակած չըլլան նորանոր ուսումնասիրութիւններ, հսկայ պարապի մը առջեւ պիտի գըտնենք մենք զվեզ: Առաջին այն գործը, որ կ'ընեն Ամերիկայի հայ գրականութեան եւ պատմութեան ամպիոնները, տեսակ մը նոր վանք, նոր վանք-համալսարան կը գոյացնեն: Հոն կան անձեր, որոնք վճարուած են, ինչպէս ձեւով մը վճարուած էին կամ խնամուած էին մեր վանականները, որոնց միակ գործը այդ մշակոյթը ուսումնասիրել է, եւ, ասիկա հսկայ կարեւորութիւն ունի:

Երկրորդ, թերեւս ըստնք անլի հրատապ կարեւորութիւն ունին այս ամպիոնները: Իրենց գոյութիւնը կ'օրինականացնէ հայութեան դատը:

Ինչպէ՞ս, հետեւեալ ձեւով.

Իրականութեան մը գոյութիւն ունենալը զայն չ'օրինականացներ ամերիկեան աշխարհի մէջ: Այսինքն, կրնայ ըլլալ, որ միշտ Յայ Դատ մը գոյութիւն ունեցած ըլլայ, սակայն, այնքան ատեն, որ հայութեան պատմութիւնը, մշակոյթը, ընկերաբանութիւնը, եւայլն, չեն ուսումնասիրուած համալսարանի մը մէջ, ամերիկացիի մը ընդհանուր դիրքը հետեւեալն է. եթէ կարելոր ըլլայ՝ համալսարանին մէջ կ'ուսումնասիրեն զայն: Կրնայ շատ տարօրինակ թուիլ ասիկա, միջին-արեւելեան հայուն, սակայն, շատ պարզ է, երբ որ օրինակի համար քաղաքի մը մէջ ահաբեկչութիւն մը կը պատահի, ամերիկացի թղթակիցին առաջին բնագոյն է հեռաձայնով կապուիլ մօտակայ համալսարանի խնդրոյ առարկայ ազգութեան պատմութեան մասնագետին հետ եւ տեսակցութիւն մը ունենալ անոր հետ:

Մասամբ պատճառը այն է, կ'ենթադրեմ, որ ամերիկացին կամ գանատացին ուրիշ ժողովուրդներու պատմութիւնը չի գիտեր: Իրը չի գիտեր, ուր մնաց ուրիշներու: Գաղափար չունի եւ պէտք ունի հեղինակութիւններու: Իսկ հեղինակութեան մը օրինականացումը Ամերիկայի մէջ կը պատահի համալսարանի մէջ ամպիոն մը ունենալով: Եթէ համալսարանի մէջ մէկը կայ, որ հայ գրականութիւն կ'ուսանի, կրնայ ըլլալ, որ դուն ոչինչ գիտես հայ գրականութեան մասին եւ ոչինչ ալ գիտնալ կ'ուզես, սակայն, արդէն կրաւորական ձեւով կ'ընդունիս որ երեւի կարելոր է, որովհետեւ համալսարանին մէջ կ'ուսանին այդ նիւթը:

Ուրեմն, ամէն բանէ առաջ, համալսարանական այս ամպիոններուն գոյութիւնը կենսական դեր կը խաղայ մեր իրականութեան մէջ այսօր, մեր դատին բերելով որոշ օրինական վիճակ մը: Ատկէ անդին, անշուշտ կան գանազան այն դրական բաները, օրինակ՝ դասախօսութիւնները, ժողովուրդին ծանօթացումները, օտար դէմքերու հետ շփումները, որոնք կը կատարեն գանազան փրօֆեսորներ՝ այլազան ձեւերով: Սակայն, չեմ ուզեր որ կորսուի այն հիմնականը, որ առաջինն է:

3. Վերջերս շատ կը խօսուի Յայաստանի մէջ 1985ին կայանալիք մշակութային փառատօնին մասին, մասնակցութեամբ արտասահմանի գաղութներէն այսպէս կոչուած «հայրենասեր եւ յառաջդիմական» գործիչներու եւ կազմակերպութիւններու: Ի՞նչ է ձեր կարծիքը այս մասին:

Պ. Մօտեն ծանօթ չեմ ծրագրուածին, սակայն, կ'ենթադրեմ, որ ունի իր ժըխտական եւ դրական երեւոյթները: Ժխտականը, բացասականը ծանօթ է, գիտենք, որ իսկապէս Սփիւռքի բոլոր շրջանակներու ներկայացուցիչ մտաւորականները եւ առաջնորդները չէ, որ պիտի հրաւիրուին, այլ՝ մարդիկ, որոնցմէ կ'ակնկալուի որոշ, չըսենք հնազանդութիւն մը, այլ՝ համակերպում մը արտայայտուելիք գաղափարներուն, որոնք նախորոշ են:

Ես բոլորովին համաձայն չեմ անոնց, որոնք գիտնալով այս իրականութիւնը, բոլորովին կը դատապարտեն կազմակերպուող փառատօնները: Գիտենք կեղծիքի խաղացած դերը այս իրականութեան մէջ եւ այդ կեղծիքը այսպանելով քիչ մը շատ կ'անտեսեն այն առաւելութիւնները, որ Յայաստանի ազգայնասեր, ազգային մտաւորականութիւնը կը տեսնէ նման փառատօններու մէջ:

Պարզ է, անոնք շատ լաւ գիտեն, թէ չեն կրնար դաշնակցական հատուածի մտաւորականները հրաւիրել որպէսզի գան հոն եւ այդ բեմէն խօսին: Սակայն, անոնք գիտեն նաեւ, որ ոչ միայն սփիւռքահայութեան, այլ չմոռնալ ասիկա, Յայաստանի հայութեան եւ Յայաստանի մտաւորականութեան համար կենսական է զգալը, որ ազատ աշխարհի հայ մտաւորականութեան հետ կապ մը ունին: Մենք կը ստորագնահատենք ասիկա, պարզապէս չենք հասկնար, որ ոչ միայն մենք պապակը կամ ծարաւը ունինք Յայաստանի հետ կապ մը ունենալու, այլ՝ Յայաստանի գիտակից մտաւորականութիւնը հոգին կու տայ, որ կապ մը ունենայ սփիւռքի հետ: Եւ տեսակ մը բարոյական կորովի աջակցութիւն մը կը բերուի Յայաստանի մտաւորականութեան, երբ ամիթը կը տրուի իրենց արտասահմանի հետ խօսելու:

Հայաստանի մէջ բարեբախտաբար կան մի քանի անձեր պատասխանատու դիրքերու վրայ, որոնք ունին քաղաքական հմտութիւնը հասկնալու, որ արգելքները, պատնէշները մէկ օրէն միւսը չէ որ կը թոյլանան, այլ ընդհանրապէս ըսենք ամբողջատիրական կարգերու տակ, քար առ քար, աղիւս առ աղիւս կը քանդուին: Կրնայ ըլլալ որ առաջին երեք-չորս փառատօներու, անցեալին՝ համագումարներուն հրաւիրուած են ամենէն հլու-հնազանդ անձերը: Տարիներու ընթացքին ես նշմարած եմ որ այս մը-շակութային ակադեմական, եւայլն հաւաքներուն, երթալով սկսած են հրաւիրուիլ անձեր, որոնք եթէ հորհրդային Միութեան քաղաքական կարգերուն հակառակորդները չեն, անոր ամենամօտ համակիրներն ալ չեն:

Ես կը կարծեմ, որ որոշ թերթեր ընդհանրապէս սխալ մը կը գործեն արագօրէն դատապարտելով նման ձեռնարկներ Հայաստանի կողմէ, ո՛չ թէ որովհետեւ նըշմարուած սխալները եւ կեղծիքները չկան, անշուշտ որ կան, այլ՝ որովհետեւ պէտք է հասկնան որ ամբողջատիրական կարգերու մէջ կարելի չէ առանց կեղծիքի որեւէ մէկ բան ընել: Եւ հարցը այն է, որ տարիներու ընթացքին բան մը կը փոխուի՞ թէ ո՛չ: Ես կը հաւատամ, որ կը փոխուի եւ կատարուածը ընդհանրապէս դրական երեւոյթի մը կամ հոլովոյթի մը մաս կրնայ կազմել, եւ ատոր համար ես պիտի ուզեի, որ այդչափ ալ ըսենք եւ խստօրէն չքննադատենք նման իրականութիւններ:

«ՀՈՐԻՉՈՆ»
25 Յունիս 1984

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԸՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ ԿՐ ՊԱՏԱՄԻԱՆԷ ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑԻ ՀԱՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ

3. Կ'ուզեի՞ք մանրամասնություններ տալ Ս. Էջմիածին կատարած ձեր վերջին այցելության նպատակին եւ արդիւնքներուն մասին:

Պ. Մենք Ս. Էջմիածին այցելեցինք հրաւերովը Նորին Ս. Օծուրին Ս.Տ. Վազգէն Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Յայոց, մեր մասնակցութիւնը բերելու աշխատանքներուն «կանոնադրութեան յանձնախումբին», որ նշանակուած էր Ամենայն Յայոց Յայրապետին կողմէ, վերանայումի ենթարկելու համար «Յայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Սահմանադրութեան նախագիծը»: Յանձնախումբի անդամներն էին մեր գլխաւորութեամբ, Գեր. Տ. Տիրան Արք. Ներսոյեան, Ամերիկայէն, Գեր. Տ. Սիոն Արք. Մանուկեան, միաբան Ս. Երուսաղէմի եւ ատենապետ Գերագոյն Յոգեւոր Խորհուրդի, Գեր. Տ. Ներսէ Եպս. Ժոզապալեան, դիւանապետ Մայր Աթոռի եւ Յոգչ. Տ. Մեսրոպ Ծ. Վրդ. Գրիգորեան, Յայրապետական պատուիրակ կեդրոնական Եւրոպայի եւ հոգեւոր հովիւ Յայոց Վիեննայի: Մեր կարծիքով մեր վերաքննութեան յանձնուած այս «նախագիծը» պետք է կազմէ մէկ գլուխը միայն, հաւանաբար Առաջին գլուխը, վերակազմուելիք «Յայոց Եկեղեցւոյ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԻՆ»: անոր համար մենք զայն վերակոչեցինք «Յայաստանեայց Եկեղեցւոյ Վարչական-Նուիրապետական Կառոյցը»: Երկու շաբաթներու յարատեւ եւ ամենօրեայ նիստերով յաջողեցանք վերանայումի ենթարկել մեզի յանձնուած գործը կարեւոր բարեփոխութիւններ կատարելով անոր մէջ: Պատրաստեցինք 10 ենթաբաժանումներով 86 յօդուածներ բաղկացեալ կանոնական գործ մը, զոր յանձնեցինք Վեհափառ Յայրապետին: Մեր կարծիքով սակայն անհրաժեշտ է այս գործը անգամ մը եւս վերաքննութեան ենթարկել, զոր ծրագրած ենք կատարել յառաջիկայ ամառ, դնելու համար զայն կարելի լաւագոյն ձեւին մէջ, եւ ապա յանձնելու զայն եպիսկոպոսական ժողովի վերջնական տնօրինութեան:

3. Արդիօք ի՞նչ է պատճառը, որ Եկեղեցական կարգ մը հարցերու մասին 84-ի Սեպտեմբերի Ս. Էջմիածնի մէջ գումարուելիք եպիսկոպոսական ժողովը յետաձգուեցաւ 1985ին:

Պ. 1984ին գումարելի եպիսկոպոսական ժողովը 1985ին կամ մինչեւ իսկ 1986ին յետաձգման միակ պատճառը վերոյիշեալ կանոնադրութեան պատրաստ չըլլալն էր, քանի որ եպիսկոպոսական ժողովի օրակարգին գլխաւոր նիւթը պիտի կազմէր այս կանոնադրութիւնը, զոր վերջնական ձեւի դնելը եւ վաւերացնելը եպիսկոպոսական ժողովին իրաւասութեան մէջ կ'իյնայ:

3. Ներկայիս ի՞նչ վիճակ կը ներկայացնեն Պոլսոյ եւ գաւառներու հայութիւնը: Կարելի՞ է տեղեկություններ տալ անոնց թիւին, եկեղեցական, մշակութային, կրթական կառոյցներուն եւ կեանքի մասին:

Պ. Ստոյգ ոչ մէկ մարդահամարական տուեալ գոյութիւն ունի թե՛ Իսթամպուլի եւ թե՛ գաւառներու հայութեան մասին: Բայց երկուքն ալ զգալիօրէն նուազած են արտագաղթով: Ենթադրաբար կը կարծուի որ Իսթամպուլի մէջ դեռ կը մնայ 34-40 հազար հայութիւն, իսկ գաւառներու մէջ՝ 10-15 հազար հայութիւն: Առ հասարակ ինքնաբաւ, մինչեւ իսկ բարեկեցիկ են: Ունինք սակայն ըստ բաւականին աղքատ ընտանիքներ, որոնց թիւը տակաւին կ'աւելնայ երկրին մէջ տիրող դրամի արժեզրկումին հետեւանքով: Պատրիարքարանը, «Ճինիշեան կտակի» յանձնախումբը եւ թաղային աղքատախնամներ կը ջանան մասամբ բարուրել անոնց նիւթական վիճակը: Առանց չափազանցելու կարելի է ըսել, որ իսթապուլահայութիւնը, իր թիւին համեմատութեամբ, շատ աւելի լայն չափով իր նիւթական օժանդակութիւնը կը բերէ իր կրօնական, կրթական, բարեփոխական եւ այլ կազմակերպութեանց, քան որեւէ ուրիշ համայնք: Օ-

ժանդակությունները կ'ըլլան «Սիրոյ կամ Մատաղի սեղաններու» ընթացքին եւ յուղարկաւորութեանց առիթով: Այս ժողովորդային եւ ինքնաբուխ նուիրատուութեանց տարեկան գումարը կը յանգի շուրջ 250 միլիոն թրք. լիրայի, այսինքն մօտաւորապէս 600,000 ամերիկեան տոլարի: Սակայն յիշել պէտք է, որ միայն Ս. Փրկիչ հիւանդանոցի տարեկան բիւճէն հաւասար է այդ գումարին:

Թիւրքիոյ մէջ կեանքի բոլոր ասպարէզներուն մէջ հայեր կան՝ առետրականներ, բժիշկներ, իրաւաբաններ, ճարտարապետներ, ճարտարագետներ, գործարանատէրներ, մեծ խանութներու տէրեր, փոքր խանութպաններ, ոսկերիչներ, արհեստաւորներ, գործարաններու մէջ աշխատողներ, եւլն.:

Համալսարաններ բաց են ինչպէս բոլոր քաղաքացիներուն՝ այնպէս ալ հայերու առջեւ. ունինք մինչեւ իսկ պրոֆեսորներ, դոցենտներ եւ դասախօսներ համալսարաններու մէջ: Ոչ մէկ արգելք կամ դժուարութիւն կայ հայերու համար՝ անձնական գործ բանալու կամ հետեւելու բարձրագոյն ուսմանց եւ ազատ ասպարէզներուն:

Իսթամպուլի մէջ ունինք 33 լուսաւորչական, 10-12 հայ կաթօլիկ եւ 2 հայ բողոքական եկեղեցիներ, որոնց մէջ անարգել կը կատարուին մեր պաշտամունքները. կը հնչեն մեր եկեղեցիներու զանգակները առտու եւ իրիկուն պաշտամունքի ժամերուն եւ բոլոր յուղարկաւորութեանց ընթացքին: Գրեթէ բոլոր եկեղեցիները ունին իրենց գերեզմանատուները, որոնցմէ նշանաւոր են Շիշլիի բարեգարդ գերեզմանոցը եւ Պալքըքի կրկնակի գերեզմանատուները: Մեծ եկեղեցիներ ունին իրենց դպրաց դասերը, որոնք բազմաձայն կ'երգեն Ս. Պատարագը: Հոգեւորականութեան թիւն է 35, որոնցմէ մէկը միայն եպիսկոպոս է, երեքը վարդապետ եւ մնացեալը ամուսնացեալ քահանայք, որոնցմէ 3ը կը պաշտօնավարեն գաւառները, ուր ունինք 6 գործօն եկեղեցիներ եւ թաղային խորհուրդներ:

3. Կարելի՞ է մանրամասնութիւններ տալ Պոլսոյ հայկական վարժարաններու կրթական ծրագիրներու մասին:

Պ. Իսթամպուլի մէջ ունինք ներկայիս 23 վարժարաններ, քիչ պակաս քան 5000 աշակերտութեամբ: Անոնցմէ 5ը բարձրագոյն վարժարաններ են միջնակարգի բաժիններով: 4ը միջնակարգ՝ նախակրթարանի բաժիններով. մնացեալք՝ նախակրթարաններ են մանկապարտեզի բաժիններով: Դժուարութիւն ունինք նախակրթարաններու համար ուսուցիչ գտնելու. որովհետեւ կրթական օրէնքով բոլոր ուսուցիչները վկայուած պէտք է ըլլան պետական ուսուցչանոցներէն. ներկայիս դժբախտաբար ուսուցչանոց չկայ Իսթամպուլի մէջ. իսկ հայ ծնողներ դժուարահաճ են ուսուցչութեան թեկնածու իրենց երիտասարդ աղջիկները քաղաքէ դուրս գտնուող ուսուցչանոցներ ղրկելու: Այս մարզի մէջ ալ բարեբախտաբար սկզբնաւորութիւն մը ունեցանք անցեալ ու այս տարի, երբ երեք թեկնածուներ ղրկուեցան Էտիրնէի ուսուցչանոցը, ուր անոնք միասնաբար կարող են ապրիլ:

Ներկայիս մեր վարժարաններու գլխաւոր դժուարութիւնը իրենց տարեկան բիւճէն հաւասարակշռելու հարցն է: Ծախքերը անհամեմատօրէն բարձրացած են տիրող դրամական արժեզրկման հետեւանքով: Բաց աստի պարտաւորուած ենք տակաւ առ տակաւ բարձրացնել ուսուցչաց ամսականները՝ հաւասարեցնելու համար զանոնք պետական վարժարաններու ուսուցչաց ամսաթոշակներուն, միաժամանակ ապահովելու համար անոնց ինքնաբաւ ապրուստի կարելիութիւն, որուն արդարօրէն արժանի են: Մեր թաղային խորհուրդները գերմարդկային ճիգեր կը թափեն իրենց վարժարաններու ուռած բիւճէնները ծայրը ծայրին բերելու համար: Անոնց օժանդակելու եւ անոնց բեռը մասամբ մը գէթ թեթեւցնելու նպատակով է, որ այս տարի եւս հարկադրուեցանք շրջագայութեան ելլել Գանատայի եւ Միացեալ Նահանգաց կարգ մը հայաշատ քաղաքները, ապահովելու համար անոնց մէջ բնակող հայ ժողովորդի նուերները՝ այս շատ կարեւոր ու կենսական կրթական գործի համար: Միջին հաշուով աշակերտի մը տարեկան կրթաթոշակը 100 տոլար է, զոր ամէն ծնողը չի կրնար վճարել. ըրով ամէն վարժարան ունի բազմաթիւ ճրիվարժ ուսանողներ: Իսկ մեր գիշերօթիկ վարժարանները բոլորովին ձրի են, եւ աշակերտ գլուխ տարեկան ծախքն է

600 տողար: Մեր նպատակն է նուիրահաւաքութիւններով կազմել դրամագլուխ մը, եւ անոր տարեկան եկամուտը յատկացնել մեր կրթական գործին:

Ամերիկայի մէջ մեր նպատակին համար կատարելի նուիրատուութիւնները կը հաւաքուին տեղական եկեղեցիներու միջոցաւ եւ կը դրկուին իրենց համապատասխան առաջնորդարանները – Նիւ Եորք, Լոս Անճելըս եւ Մոնթրէալ: Այս կրթական նըպատակին նպաստել փափաքողներ իրենց նուէրները կրնան տալ տեղական եկեղեցիներուն, փոխան ընկալագրի, կամ դրկել Առաջնորդարաններուն՝ Holy Cross Fund անունին: Փափաքողներ կարող են մինչեւ իսկ Իսթամպուլ դրկել իրենց նուէրները, միշտ փոխգիրով-չէքով, Հայոց Պատրիարքարանի անունի եւ հասցէին. Ermeni patrikligi, Kumkapi, Istanbul.

Մեր վարժարաններու մէջ թրքերէն լեզուի կողքին լրիւ կ'ուսուցուի հայերէն լեզուն: Բացի պետութեան կողմէ կանխորոշուած 4 դասանիւթերէ, մնացեալ բոլոր դասերը հայերէն լեզուով դասաւանդելու իրաւունք ունին մեր ուսուցիչները: Մեր բարձրագոյն վարժարանները – «լիսե»ները – աւարտող աշակերտներ լիազօրուած են մասնակցելու համալսարանական քննութեանց: Ուրախ ենք հաստատել, որ այդ քննութեանց մէջ յաջողողներուն թիւը զգալիօրէն բարձր է: Օրինակ, անցեալ երկու տարիներու ընթացքին Կեդրոնական Վարժարանէն շրջանաւարտ 10 -12 աշակերտներէն 8 -10 հոգի յաջողած էին համալսարանական քննութեանց մէջ:

3. Կարելի՞ է իմանալ Մանուէլ վրդ. Երկաթեանի հարցին եւ վիճակին մասին:

Պ. Երկաթեան վրդ. դժբախտաբար շատ անբախտ դուրս եկաւ իր դատավարութիւններէն: Նախ իր աշակերտներէն մէկուն կողմէ անհիմն վերագրումի մը զոհ եղաւ, զոր հերքելու համար Երուսաղէմի Իսրայէլեան իշխանութիւններէն կարգ մը պետական ու պաշտօնական հաստատագրեր բերել հարկ տեսնուեցաւ, ինչ որ պատճառ հանդիսացաւ իր դատի երկարածման: Երկրորդ՝ Փարիզի մէջ հայ ահաբեկիչներ երբ թրքական հիւապատոսարանը գրաւեցին, իրենց պահանջներէն մէկն ալ եղաւ Երկաթեան վարդապետի ազատ արձակումը, ինչ որ բնականօրէն պատճառ դարձաւ որ իր հարցը անելի խորունկ եւ անելի երկայն քննութիւններու ենթարկուի, որ մի գուցէ ինք ալ «ասալայական» ըլլայ: Այս պարագան իր կացութիւնը անելի վատթարացուց: Երրորդ՝ երբ իր դատավարութիւնը կը կատարուէր՝ պատահեցաւ Եուկոսլաւիոյ ծանօթ ծանրակշիռ դէպքը, որուն ընթացքին թուրք դիւանագետ մը սպանուեցաւ եւ ուրիշ մը ծանրօրէն վիրաւորուեցաւ: Երկաթեան վարդապետին փաստուած միակ յանցանքն էր, որ, թրքահպատակ ըլլալով հանդերձ, մասնակցած էր Երուսաղէմի մէջ հակաթուրք ցոյցի մը, որուն համար թերեւս քանի մը տարուան բանտարկութեան դատապարտուէր. սակայն վերոյիշեալ եւ այլ պարագաներ դժբախտաբար ուղղակի կամ անուղղակի ծանրացուցին իր պարագան եւ դատապարտուեցաւ տասնըջորս տարուան ծանր բանտարկութեան, առանել՝ չորս տարի քսոյրի Անատոլիոյ գիւղաքաղաքներէն մէկը, ուր թէեւ արձակ՝ բայց օրինական հսկողութեան ներքեւ պիտի ապրի: Երկաթեան վրդ. վերջերս Իսթամպուլէն փոխադրուած էր Չանաքքալէի բանտը, ուր կը մնար մինչեւ մեր Իսթամպուլէն մեկնումը Սեպտ. 10ին: Պատրիարքարանս բացի նիւթական օժանդակութենէ ոչինչ կրնայ ընել իր վիճակը անելի բարելաւելու կամ թեթեւցնելու:

3. Ի՞նչ է ձեր տպաւորութիւնը Մոնթրէալի եւ Թորոնթոյի հայ գաղութներէն:

Պ. Գանատայի հայութիւնը զգալիօրէն աճած գտանք մեր այս վերջին այցելութեամբ: Այս աճումը ինքնին անհրաժեշտ կը դարձնէր անոր անշատ թեմ մը կազմելու պահանջքը, ինչ որ արդէն իսկ պաշտօնապէս իրականացաւ այս օրերուն, երբ ընտրուեցաւ անոր առաջին Առաջնորդը: Մենք սրտագինս կը շնորհաորենք թե՛ ընտրողները եւ թե՛ ընտրեալը, մաղթելով որ սիրով, համերաշխութեամբ եւ համագործակցութեամբ վարեն այս թեմը յօգուտ ամենքին:

Մոնթրէալ դժբախտաբար կարճ մնալու հարկադրանքին ներքեւ գտնուեցանք: Այլապէս մեր նախնական ծրագիրն էր Հոկտ. 7ի Կիրակին Մոնթրէալի հայոց եկեղեցին պատարագել եւ գաղութին հաղորդել Ամենայն Հայոց Հայրապետին օրհնու-

թիւները եւ տալ մեր պատգամը, ինչ որ հազիւ թէ հնարաւոր եղաւ մեր ժամանումի յաջորդ երեկոյին՝ առ հասարակ Իսթամպուլցիներէ բաղկացեալ փոքր խումբի մը դիմաց, որոնք թէւ ըրին իրենց առաւելագոյնը մեր նպատակին օժանդակելու, որուն համար մեր գնահատանքը եւ գոհունակութիւնը կը յայտնենք, այսուհանդերձ մեր ակնկալութիւնը չիրականացաւ Մոթրեալէն, եւ զրկուեցանք ժողովրդային աւելի լայն խաւերու հետ շփում ունենալու կարելիութենէն: Կը յուսանք թէ հովիւը եւ վարչութիւնը, որոնց կամքէն անկախաբար տեղի ունեցան այս երկուստեք զրկանքները, մօտալուտ ընտրութեանց պատճառով, կը շարունակեն իրենց յարմար դատած եղանակով, սկսուած այս նուիրահաւաքը, որպէսզի անոնք որ առիթը չունեցան իրենց սրտաբուխ նուերները ընծայաբերելու այս կրթական ու նուիրական նպատակին, կարենան գոհացնել իրենց եւ մեր փափաքները, հասցնելու համար հաւաքուած նուիրատուութիւնը ցանկալի գումարի մը:

Իսկ Թորոնթօ աւելի երկար մնալու առիթ ունեցանք: Կիրակի օրուան Ս. Պատարագին ժողովրդային յոգնախումբ ներկայութիւնը եւ փոքր եկեղեցիէն դուրս յորդող կամ ներքեւի սրահին մէջ տեղ գրաւող բազմութիւնը փաստը կու տար իր եկեղեցասիրութեան եւ հաւատքի ջերմութեան, ինչպէս նաեւ Յայց. եկեղեցիի նուիրապետական Աթոռներէն մէկուն հանդէպ իր հոգածութեան եւ յարգանքին: Մենք այստեղ առիթ ունեցանք շփման մէջ գալու մեծ կամ փոքր ժողովրդային խմբակներու հետ, եւ իրագել դարձանք լուծումի կարօտ կարելոր խնդիրներու, որոնք այս կամ այն պատճառներով ծնունդ առած են համայնքին մէջ: Այցելեցինք տեղույս հայ վարժարաններէն մէկը եւ ուրախացանք լսելով անոնց աղօթքները, երգերը եւ արտասանութիւնները հայերէն լեզուով: Հաղորդեցինք անոնց Ամենայն Յայոց Հայրապետի հայրական օրհնութիւնները եւ սերը: Իմանալով, որ ուրիշ հայ վարժարան մը եւս կայ նոյն շրջանակին մէջ, ուզեցինք նաեւ անոր ալ այցելութիւն տալ: Սակայն տնօրէնին բացակայութիւնը, լուրջ պատճառով մը, արգելք եղաւ մեր եւ անոնց փափաքին իրականացման:

Մեր առաքելութեան նպատակը աւելի յաջողութեամբ պսակուեցաւ այս քաղաքին մէջ: Եթէ սակայն հանրութեան հետ մեր այս դէմ յանդիման գալը յաջողէր անմիջապէս Ս. Պատարագին եւ տեղի ունենար եկեղեցւոյ սրահին մէջ, շատ աւելի արդիւնաւոր պիտի ըլլար, քան ինչ որ եղաւ՝ եղաւ Յ. Բ. Ը. Միութեան կեդրոնի վերանաւան մէջ, ուր զուրկ մնացինք մինչեւ իսկ բարձրախօսի սովորական դիրութենէն մեր խօսքը ամենքին լսելի դարձնելու համար: Ամեն պարագային մենք հրապարակաւ մեր գոհունակութիւնը եւ շնորհակալութիւնը կը յայտնենք բոլոր ներկաներուն, որոնք նոյն երեկոյին հաւաքուեցան Բարեգործականի կեդրոնի սրահին մէջ եւ նկատի առած իրենց թիւը գերազանցեցին մեր ակնկալութիւնները, գոյացնելով գոհացուցիչ գումար մը մեր կրթական նպատակին: Աստուած վարձահատոյց ըլլայ բոլորին:

3. Յատուկ ըսելիք մը ունի՞ք մեր հասարակութեան

Պ. Նախ Գանատայի հայութեան: Ամենէն առաջ մեր շնորհակալիքը կը յայտնենք բոլոր այն համայնքային կազմակերպութեանց, որոնք սիրայօժար ընդունեցին մեզի եւ ուզեցին օգտակար ըլլալ մեզի: Նորընտիր Առաջնորդին, Մոնթրեալի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցիի հովիւին եւ Ծխական խորհուրդին, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հովիւին եւ Ծխական խորհուրդին, բոլոր այն համայնքային կազմակերպութեանց, որոնք իրենց ներկայացուցիչներուն միջոցաւ մեզի բարի գալուստ եւ յաջողութիւն մաղթեցին մեր առաքելութեան մէջ:

Նոր թեմ մը կազմուեցաւ Գանատայի մէջ՝ իր հետ բերելով նոր պատասխանատուութիւններ թե՛ թեմական վարչութեանց եւ թե՛ թեմին կազմիչ տարրերուն, ծուխերուն համար: Թեմը միջին օղակն է, որ նախ ծուխերը իրենց կը միացնէ եւ ապա՝ իր կարգին կը միանայ եկեղեցիի բարձրագոյն իշխանութեան, իրագործելով այսպէս եկեղեցիի միութիւնը: Հայց. եկեղեցիի ըմբռնումով ոչ անկախ ծուխ գոյութիւն կրնայ ունենալ եւ ոչ ալ՝ անկախ թեմ: Անկախը նոյնիսկ Յայաստանեայց Առաքելական եկեղեցին է, որուն ամբողջութեան մէջ թեմը եւ ծուխը իրենց յատուկ տեղերը գրաւելով հաղորդ կը դառնան եկեղեցիի միութեան եւ այն աստուածատուր շնորհներուն որ

տրուած է եկեղեցիին նոյնիսկ անոր աստուածային հիմնադիր Յիսուս Զրիստոսն է և անոր մէջ բնակող եւ գործող Ա. Յոգիէն:

Ինչպէս ակնարկեցինք հինէն եկած լուծումի կարօտ խնդիրներ կան համայնքին մէջ: Երբ նոր Առաջնորդ ընտրուած՝ ու նոր վարչութիւն կազմուած է, մենք այն համոզումը եւ յոյսն ունինք թէ հին հարցեր նոր ակնոցներով պիտի քննուին, նոր լոյսերու տակ վերանկատառութեան պիտի ենթարկուին եւ նոր լուծումներ պիտի գտնուեն եւ ասիկա յօգուտ ամենքին, թէ՛ վարչութեանց եւ թէ՛ թեմի կազմիչ տարերուն: Գուրգուրանքով մօտենալ անհատական կամ հաւաքական ոյժի բոլոր աղբիւրներուն օգտագործելու համար զանոնք թեմի բարիքին ու զօրացման համար:

Նկատեցինք որ Թորոնթոյի պէս հազիւ 10 հազար հայ բնակչութիւն ունեցող քաղաքի մը մէջ երկու վարժարաններ գոյութիւն ունին, ան ալ իրարու այնքան մօտիկ...: Ամէն գնահատանքի ազնիւ հոգիներ ի գործ կը դնեն, հայ վարժարան մը հաստատելու համար, այդ ալ ամենքին ծանօթ դժուար պայմաններու ներքեւ. խակայն որքա՞ն անելի շինարար ու արդիւնաւոր պիտի ըլլային այդ ճիգերը եթէ միասնական ոգիով ի գործ դրուէին անոնք, ու գէթ կրթական մարզի մէջ միասնականութիւն ստեղծէինք. աս լաւագոյն դասը պիտի ըլլար մեր մատաղ սերունդին, թէ ամենքս ալ մէկ եւ նոյն ժողովուրդի զաւակնէն ենք եւ ոչ թէ այս ու այն հատուածներու խլեակներ: Կ'երեւի մեր ժողովուրդը անելի վարժ է փոքր գործեր եւ փոքր ծրագիրներ ի գլուխ հանելու, քան թէ անելի լայն ծրագիրներ ի գլուխ հանելու, քան թէ անելի լայն ծրագիրներ յղանալու եւ անելի մեծ հաւաքական ու համայնքային ձեռնարկներ յաջողցնելու: Եւ ասիկա է թերեւս պատճառնէն գլխաւորը մեր պզտիկ մնալուն:

Մեր վերջին խօսքը կ'ուղղուի համայն հայ հասարակութեան: Մենք կ'ենթադրենք որ ներկայ ժամանակներու մարդկային ընկերութեան գլխաւոր պատուհասներէն մէկն է ահաբեկչութիւնը: Միջազգային այդ ահաբեկչութեան մաս կազմած է նաեւ հայ ժողովուրդի անունով գործող ահաբեկչութիւն մը: Ինչ ալ ըլլան հետապնդուած նպատակները, մենք կը բաժնենք այն տեսակետը, թէ ոչ մէկ ազնուական ու արդար դատ իր իրագործումը գտած է ահաբեկչութեամբ: Այսպէս եղած է իրականութիւնը պատմութեան մէջ, այսպէս է իրականութիւնը ներկայիս, եւ այսպէս պիտի ըլլայ նաեւ ապագային: Բոլոր կրօնական, բարոյական, իմաստասիրական եւ ընկերային բարձր դրութիւնները կը դատապարտեն ոճիրը, այսինքն անմեղ մարդու մը սպանութիւնը հոգ չէ, թէ ինչ նպատակով ըլլայ այդ: Մենք գմեզ սահմանափակելով մեր կրօնական ըմբռնումներուն մէջ յիշենք քանի մը պատգամներ որոնք կը դատապարտեն սպանութիւնը. «Մի՛ սպաններ» կ'ըսէ Աստուած Տասնաբանեայի համամարդկային պատուիրաններուն մէջ: «Որ սուր անո՞ր, սուրով անկցի» կ'ըսէ խաղաղութեան Իշխանը, Յիսուս Զրիստոս. «Բարկութիւն մարդոյ՝ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ» կը պատգամէ Առաքեալներէն մէկը:

Հայ ժողովուրդը առհասարակ խաղաղասեր եղած է գրեթէ ամբողջ իր պատմութեան ընթացքին. կրնայ ըլլալ որ մասամբ մը տուժած իսկ ըլլայ այս պատճառով. սակայն պատերազմասեր կաղնիներ արմատախիլ եղած են պատմութեան մէջ. բայց հայ «եղեգնիկը» կրկին իր գլուխը բարձր պահած է փոթորիկը անցնելէն յետոյ: Անելին. ոչ ոքի անեծքին կամ դատապարտութեան չէ ենթարկուած իբրեւ վանդալ կամ մարդասպան: Ընդհակառակը իր խաղաղասիրութեամբ իր մեծութեան եւ մարդկային առողջ ու ազնիւ զգացումներու տէր եղած ըլլալուն ապացոյցը տուած է. ստեղծագործութեան մեծագոյն հրաշքին, մարդկային թանկագին կեանքին հանդէպ իր ունեցած յարգանքը յայտնած է:

«ՀՈՐԻՉՈՆ»
1984

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԵՐԱՑԻՇՏ-ԽՄԲԱՎԱՐ ԱԼՖՐԵՏ ՄԱՐԴՈՅԵԱՆԻ ՀԵՏ

Ալֆրեա Մարդոյեան ծանօթ անունն է եղած Իրանի մէջ: Ծնած է Թաւրիզ, երաժշտական ուսումը ստացած է նախ Թեհրան, ապա, կառավարութեան կրթաթոշակով՝ Վիեննայի Բարձրագոյն երաժշտական ակադեմիայի մէջ: Փայլուն շրջանաւարտ, ղեկավարած է Վիեննայի սիմֆոնիկ նուագախումբը՝ Պեթհովենի հեղինակութիւնները ներկայացնելով: Ապա 9 տարի հանդիսացած է Թեհրանի սիմֆոնիկ նուագախումբի փոխ-խմբավար, տալով տասնեակ համերգներ տեղւոյն օպերայի թատրոնին մէջ: 1972էն սկսեալ իրեն վստահուած է Իրանի պետական երգչախումբի ընդհանուր ղեկավարի եւ վարիչի պաշտօնը: Տուած է 17 համերգներ որոնց ներկայ եղած են Իրանի պետական հիւրերը՝ թագաւորներ, նախագահներ, եւայլն: Առ այդ արժանացած է 5 բարձրաստիճան շքանշաններու: Միեւնոյն ժամանակ ստանձնած է Իրանի հեռատեսիլի երաժշտական ընդհանուր հսկիչի եւ պետական համալսարանի երաժշտութեան դասախօսի պաշտօնները: Մարտոյեան գործօն եղած է նաեւ հայ կեանքէն ներս, որպէս երգչախումբի ղեկավար, մինչեւ 1979, երբ փոխադրուած է Լոս Անճելըս:

3. Ձեր Մ. Նահանգներ հաստատուելէն ի վեր, երաժշտական ի՞նչպիսի գործունեութիւն ունեցած էք՝ ազգային եւ անձնական կալուածներու վրայ:

Պ. Երբ հաստատուեցիք Լոս Անճելըս, նկատեցիք, որ հոն գոյութիւն ունէին բազմաթիւ երգչախումբեր, բայց նախկին իրանաբնակները տակաւին չունէին որեւէ երգչախումբ: Կարիքը զգացուեց կազմել խումբ մը, եւ զիս հրաւիրեցին ղեկավարելու զայն:

Իրանահայ Միութեան երգչախումբը այդ թուականից գոյութիւն ունի եւ տարեկան 2-3 համերգներով հանդէս կու գայ հանրութեան:

3. Ձեր երգչախումբը քանի՞ անդամներ կը բաղկանայ:

Պ. Դարցումին շիտակ պատասխանելու համար ըսեմ, որ կարելի է 200 անդամներ ունենալ, սակայն միայն 50 հոգի երգեն:

3. Ուրեմն, կը զատեք երաժշտական հասկացողութիւն եւ գեղեցիկ ձայն ունեցողները:

Պ. Անշուշտ, պէտք է գատուին: Այսինքն՝ ո՛չ թէ գատուին, իսկապէս երգիչներ պէտք է երգեն: Այսինքն՝ որակն է կարեւոր, ո՛չ թէ քանակը: Նախավերջի մեր համերգին մասնակցողները շուրջ 90 հոգի էին: Նախկինները աւելի քիչ էին: Մեր վերջին համերգին տուեցիք հայերէն եւ միջազգային բոլոր երգերը իրենց բուն լեզուով, այսինքն՝ չինարէն, ճոփոներէն, ռուսերէն, իտալերէն եւայլն: Այդ դժուարութեան բերումով մի քանի երգիչներ պակասեցին, որովհետեւ, դժուար էր այդ բառերը սովորել:

3. Ապագայի ի՞նչ ծրագիրներ ունիք եւ ի՞նչ արդիւնք կը սպասեք ձեր աշխատանքներէն:

Պ. Ինչպէս ասացի, մենք՝ այսինքն ես եւ իմ նմանները պարտականութիւն ունինք, սուրբ եւ սրբազան պարտականութիւն: Մ.Ն.ու այս հսկայ մեր գաղութները վճարուած են եւ դատապարտուած ձուլուելու, առ այդ բոլորս սոսկում ենք: Պայքարում ենք համայնակույ այդ հոսանքին դէմ ազգային եւ մշակութային այլազան գէւքերով: Մենք գործում ենք երգչախումբերով, որոնք ձուլման գլխաւոր պատնէշներից

են: Պետք է քաջալերենք, հրապուրենք մեր երիտասարդ տարրերին, որպեսզի մաս կազմեն երգչախումբերին: Ո՛չ միայն իրենք սովորեն, այլ՝ մեր երգը հնչեցնենք բոլոր սրահներում եւ ամբողջ մեր նոր սերունդի ականջներուն մէջ, որպեսզի կարողանանք մեր մշակոյթը պահել-պահպանել, տարածել եւ փոխանցել:

3. Ինչպե՞ս կարելի է այդ երիտասարդները բերել-հրապուրել, որպեսզի երգչախումբերուն անդամակցին եւ երգեն: Եթէ անտարբերներ կան, ի՞նչ կարելի է ընել անոնց համար:

Պ. Անտարբերներո՞ւն, ոչի՞նչ կարելի է անել: Միայն մենք, որքան կարելի է բազմաթիւ համերգներ տանք, այսինքն՝ երգչախումբի փորձերը եւ երգչախումբի գոյութիւնը պահենք: Այս կը նշանակէ մշակութային գոյութիւն: Այնպիսի բաներ դասաւորել, որ կամուրջ լինի. այս ամերիկեան ուժեղ երաժշտութիւնը, մտած է երիտասարդութեան արիւնին մէջ: Մենք, մեր մշակութային հաստատութիւններով, ասենք *փիլիսոփայ*ներով հետաքրքիր հաւաքոյթներով բերենք զանոնք: Օրինակ, տարիներ առաջ, Լոս Անճելոսում երբ *դիսկո* էին տալիս, հարիւր տոկոսով միայն ամերիկեան միւզիքով էին պարում: Հիմա, այդ *դիսկո*ները, այսինքն հայկական կազմակերպուածները, կէսի չափ հայկական շուրջպարեր են պարում, եւ գնալով կապուում են հայ երաժշտութեան: Ես մարդիկ եմ ճանաչում, երբ հայ երաժշտութեան անուն կու տայինք, կը փախչէինք: Հիմա, անոնք գալիս են եւ ասում. Ի՞նչ եղաւ հայկական երաժշտութիւնը, ես պիտի պարեմ: Լոս Անճելոսում երբ խնճոյք է լինում եւ այդ խնճոյքին երիտասարդներ էլ մասնակցում են, անկարելի է, որ խնճոյքի մէկ երրորդէն մինչեւ կէսը հայկական երաժշտութեամբ պարեր չըլլան:

Ահա այսպիսով կարելի է մեր երիտասարդներին գրաւել եւ հայ երաժշտութիւնը սիրցնել:

3. Ձեր կարծիքով Սփիւռքի մէջ հայ մշակոյթը աւելի զարգացնելու եւ տարածելու հնարաւորութիւններ կա՞ն:

Պ. Անշուշտ հնարաւորութիւններ կան, կրնան ըլլալ: Օրինակ՝ խմբավար մը առանձինն ոչինչ չի կարող ընել: Մէկ ձեռքը ձայն չի հաներ: Ուրեմն, խմբավարը օգնութեան պետք ունի: Թիկունք կանգնեն, ոգէտորեն, իրեն շուրջ հաւաքեն երգչախումբեր: Որովհետեւ, ինչքան ալ ոյժ ունենայ, շատ դժուար կը լինի որ ինք կարողանայ անել ամէն բան: Գիտեմ, որ շատ դժուար է այս բոլորը, համբերութիւն է ուզում, բայց կարելի է յաղթել բոլոր դժուարութիւններին: Փաստը ցոյց է տուել, որ հայ երաժշտութիւնը շատ լաւ կարելի է պահել, տարածել: Հաստատութիւնները պետք է օգնեն այս գործին:

3. Երկու շաբաթ է մօտաւորապէս, Թորոնթօ կը գտնուիք, ձեր բարեկամներուն այցելութեան եկած ըլլալով: Կրցա՞ք գաղափար մը կազմել Թորոնթօյի մեր գաղութին մասին ընդհանրապէս եւ Հայ Կեդրոնի գործունեութեան մասին մասնաւորապէս:

Պ. Նախքան էստեղ այցելութեան գալը, Թորոնթօյի հայութեան գովքը մեր ականջին էլ հասեր էր: Բայց մի առած կայ կ'ըսեն. «Էն ինչ որ աչքով տեսնես եւ ինչ որ ականջովդ լսես, տարբերութիւն ունին»: Այսինքն, տարբերութիւնը տասնապատիկ եղաւ, երբ ես եկայ էստեղ եւ աչքերովս տեսայ կատարուող աշխատանքները:

Ես կը հաւատամ, կը փափաքիմ, որ Սփիւռքի բոլոր գաղութները օրինակուեն Թորոնթօյից: Գան, Նայեն, թէ ինչպէս կարելի է ձեռք-ձեռքի տալ, մտերմութիւն ստեղծել մէկ գաղափարի համար, մէկ նպատակով՝ հային հայ պահել, հայ երաժշտութիւնը, հայ մշակոյթը վառ պահել: Կարելոր չէ, թէ ով որտեղ ծնած է, արեւելահայերէն խօսում է թէ՛ արեւմտահայերէն: Հիւսիսային Ամերիկա, Հարաւային Ամերիկա, Մերձաւոր Արեւելք, այդ կարելոր չէ, միայն տեսնում եմ որ բոլորը մէկ յարկի տակ հաւաքած, մէկ նպատակով, մէկ ընտանիքի պէս գործում են: Ես այնքան ուրախացած եմ, այնքան ոգէտորուած, որ յոյս ունեմ որ այս իրականութիւնը թերթերով ամէն տեղ արձանագրուի, որ մարդիկ իմանան, որ կարելի է միասնաբար աշխատել:

3. Ծանօթ էք Թորոնթոյի Համագգայինի երգչախումբին զոր կը ղեկավարէ կարող երաժիշտ-խմբավար Էդիկ Յովսէփեանը:

Պ. Անշուշտ, մեծապէս գնահատելի է կատարուող աշխատանքը եւ գնահատելի՝ երգչախումբի անդամներուն սուփրուածութիւնը: Ես Էդիկ Յովսէփեանին մանկութիւնից կը ճանաչեմ: Որպէս մտերիմ եւ ընկեր, արդէն ես իր աշխատանքը գիտեմ, իր զոհաբերութեան շատ լաւ ծանօթ եմ: Առանց համերգներուն եւ փորձերուն ներկայ ըլլալու, գիտեմ որ ինչ կարողութեան տէր մարդ է: Ես շատ ուրախ եմ, որ թորոնթոյի գաղութը Էդիկի պէս մի անձնաւորութիւն ունի իր մէջ:

3. Ներկայիս Լոս Անճելըսի մէջ ի՞նչ պաշտօններ կը վարէք:

Պ. Երգի եւ երաժշտութեան ուսուցիչ եմ Ֆերահեան վարժարանին մէջ: Կազմած եմ դպրոցական երգչախումբեր՝ մանուկներու եւ պատանիներու յատուկ: Կը ջանամ իմ ունեցած փորձառութիւնս մանուկներուն փոխանցել եւ հայ երգն ու երաժշտութիւնը սիրցնել: Հոն ես յայտարարած եմ՝ թէ ով որ երաժշտական հետաքրքրութիւն ունի, ես պատրաստ եմ իրեն օգնելու: Թէեւ ուսանողութեան մեծ մասը Ամերիկա ծնած մանուկներ են եւ հայերէնի դժուարութիւն ունին, բայց եւ այնպէս սովորում են եւ շատ-շատ լաւատես եմ նոր ապագային նկատմամբ:

**«ՀՈՐԻՉՈՆ»
9 Սեպտեմբեր 1985**

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԿՈՐԻՒՆ ԵՊԻՄԿ. ՊԱՊԵԱՆԻ ՀԵՏ

Օգտուելով Գեր. Տ. Կորիւն Ս. Եպիսկոպոս Պապեանի թորոնթօ կեցութենէն, հարցազրոյց մը ունեցանք իր հետ՝ զանազան հարցերու շուրջ:

Կորիւն Սրբազան ծնած է Պէյրութ 1941ին, Պուրճ Համուտի հայաշատ Արաբած թաղամասը: Յաճախած է տեղւոյն այդ օրերու «Լուսինեան» եւ այժմու «Աքսոր Գասարճեան» վարժարանը: Միջնակարգ ուսումը ստացած է Պէյրութի «Նշան Փալանճեան» ճեմարանը: Այնուհետեւ, 1957ին ընդունուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը եւ կուսակրօն հոգեւորական ձեռնադրուած 1961ին, ձեռամբ Երջանկայիշատակ Տ. Զարեհ Ա. կաթողիկոսի: Տարի մը Դպրեվանքի մէջ ուսուցչութիւն ընելէ յետոյ, ուղարկուած է Գամիշլի (Սուրիա), որպէս հայերէն նիւթերու ուսուցիչ, ապա, 1963ին, ըստանձնած է հիւսիսային Սուրիոյ (Ճեզիրէ) հայոց առաջնորդական փոխանորդի պաշտօնը, միաժամանակ շարունակելով դասաւանդել տեղւոյն միջնակարգ վարժարանին մէջ:

1966-1967 ուսումնական տարեշրջանին հրաժարելով իր պաշտօնէն, Երանաշնորհ Խորէն Ա. Կաթողիկոսի կարգադրութեամբ մեկնած է Անգլիոյ Օքսֆորտ համալսարանը, հետեւելով աստուածաբանական եւ արեւելագիտական ուսմանց, ստանալով իր դոկտորայի տիտղոսը, մասնագիտանալով ընդհանուր եկեղեցւոյ պատմութեան, հայագիտական եւ քրիստոնէական նիւթերու շուրջ:

Այնուհետեւ վերադառնալով Կաթողիկոսարան, դասաւանդած է Դպրեվանքի մէջ, միաժամանակ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի նշանակումով վարած է Վեհափառ Հայրապետի բարձր հովանաւորութիւնը վայելող «Հայ եկեղեցւոյ հոգեւոր եւ մշակութային ժառանգութեան դասընթացք»ի վարիչի պաշտօնը:

1978ին հրաւիրուած է Պարսկաստան, նախ որպէս առաջնորդական տեղապահ եւ ապա՝ ընտրուած Իրանա-Հնդկաստանի հայոց պատմական թեմի առաջնորդ եւ այս հանգամանքով մինչեւ օրս կը շարունակէ ծառայել Նոր Զուղայի եւ հարաւային իրանահայութեան մեր եկեղեցւոյ գաւազներուն:

*

**

3. Սրբազան Հայր, նախ Ձեզի բարի գալուստ կը մաղթենք, ապա՝ սրտազին շնորհակալութիւններ՝ Ձեր հարաւային Օսթարիո տասնըփինգ օրուան կեցութեան ընթացքին հոգեկան եւ ազգային սրտապնդիչ խռովք ու յոյզ արթնցուցիք մեր ժողովուրդին մէջ:

Գիտենք, որ Սփիւռքի շատ կարեւոր եւ պատմական մեկ գաղութի՝ Իրաւա-Յնդկաստանի թեմի առաջնորդն էք եւ կ'անցնիք բազմաթիւ դժուարին պայմաններու մէջէն: Կ'ուզեիք գիտնալ, թէ ի՞նչ առիթով թորոնթօ կը գտնուիք:

Պ. Եկած եմ այցելելու ընտանեկան պարագաներու եւ ինչու չէ, նաեւ մօտիկից ծանօթանալու Թորոնթոյի հայ գաղութի կրօնական, կրթական եւ մշակութային կեանքին:

3. Կրնա՞ք որոշ տեղեկութիւններ տալ Իրանա-Յնդկաստանի թեմի պատմութեան շուրջ:

Պ. Նման մէկ հարցազրոյցի նեղ սահմաններում գրեթէ անկարելի է ամբողջական մէկ գաղափար տալ Իրանա-Յնդկաստանի հայոց թեմի պատմութեան շուրջ: Զանի որ խօսքը վերաբերում է հայկական մէկ գաղութի, որի արմատները գտնուում են մեր ժողովուրդի նախաքրիստոնէական պատմութեան վաղ ժամանակներում: Այսուհանդերձ, համառօտ ասենք, որ հայեր եղել են Իրանում տակաւին Դարեհի, Կիրոս Մեծի եւ նրանց յաջորդների օրով, որպէս զինուորներ, բանակի հրամանատարներ եւ զինուորական կառավարիչներ՝ աւելի քան 2500 տարի առաջ:

Իրանահայութեան մասին խօսելիս, անշուշտ պիտի առանձնացնել Ատրպատականը, որ պատմական Հայաստանի մաս կազմած լինելու իր հանգամանքով, անցնող երկու հազար տարիների ընթացքում, ունեցել է տարբեր իշխանութիւնների ներքոյ ապրող հայութիւն:

Այնտեղ են Սուրբ Թադէոս Առաքեալի եւ Սուրբ Ստեփանոս Նախավկայի պատմական վանքերը, Խոյն ու Սալմաստը, Հեր եւ Չարեւանի գաւառները: Տղմուտ գետն ու Աւարայրի դաշտը: Իսկ առհասարակ, Իրանի տարբեր վայրերում, տարբեր ժամանակաշրջանում բնակուող հայութեան մասին, մեր մատենագիրներն ու պատմիչները ունեն հարուստ վկայութիւններ: Օրինակ, դեռեւս Դ. դարում, ըստ ժամանակակից պատմիչ Փաւստոս Բիւզանդի, հարիւր-հազարների հասնող հայութիւն բռնագաղթի է ենթարկուել Հայաստանի տարբեր քաղաքներից եւ աւաններից ու բերուել Պարսկաստան: Անշուշտ պատմիչի կողմից տրուած թիւերը կարող են չափազանցըւած լինել, սակայն, պատմական իրողութիւնը մնում է ամէն կասկածից վեր:

Ինչպէս գիտէք, 451 թուի Վարդանանց ապստամբութիւնից յետոյ, բարձրաստիճան հայ հոգեւորականներն ու նախարարները, արքայութեւ Էին Պարսկաստանի խորերը, ներկայիս ծանօթ Խուզիստանի շրջանը: Այնուհետեւ, յաջորդող դարերի ընթացքում եւ յատկապէս ԺԲ.-ԺԵ. դարերում, բազմաթիւ անգամներ մեծ թիւով հայեր դարձեալ բերուել են Պարսկաստան եւ ծախուել ստրկավաճառութեան շուկաներում: Նոյն թուրին, արշաւանքների եւ պատերազմների հետեւանքով, շատեր նաեւ ազատ կերպով եկել են եւ հաստատուել յատկապէս վաճառաշահ քաղաքներում, ուր գոյացել են հայկական գաղութներ, որոնք ունեցել են իրենց եկեղեցիներն ու վանքերը, կազմակերպուած թեմերով եւ եպիսկոպոսներով:

Հպանցիկ անդրադարձանք այս խնդիրներին, որովհետեւ, առհասարակ Իրանի հայկական գաղութների մասին արտայայտողների մտքերի մէջ այն թիւր կարծիքն է տիրում, որ պարսկահայ գաղութի պատմութիւնը սկիզբ է առնում Շահ-Աբբասեան բռնագաղթով՝ 1604-5 թիւին:

3. Կարելի՞ է բացատրել, թե ի՞նչ հանգամանքներու եւ պայմաններու բերումով Ձեր թեմը կը կոչուի Իրանա-Յնդկաստանի թեմ:

Պ. 1605 թուից շուրջ 300 հազար հայեր բռնի գաղթեցուելով Հայաստանի իրենց բնակավայրերից բերուեցին Սպահան: Ջուղայի արհեստաւոր եւ վաճառական հայերը հաստատուեցին Չայանտրոտ գետի ափին եւ այդ նորակառոյց աւանը կոչեցին Նոր Ջուղա:

Շահ Աբբասի կողմից ընծայուած դիւրութիւնների շնորհիւ, նրանք կազմակերպեցին իրենց կրօնական եւ կրթական կեանքը, իր առաջնորդանիստ Սուրբ Ամենափրկիչ վանքով եւ շքեղ եկեղեցիներով: Հայ վաճառականներ, որոնք դեռեւս հին Ջուղայից ճամբորդում էին Եւրոպայի, Միջին եւ Օսթրալիոյ Արեւելքի վաճառաշահ քաղաքները, Շահ Աբբասի կողմից տրուած յատուկ արտօնագրերով վերսկսան իրենց վաճառականական գործունեութիւնները եւ կարճ ժամանակաշրջանում դիգեցին մեծ հարստութիւն, միաժամանակ լցնելով արքայական գանձանակները:

Հակառակ պարբերաբար տեղի ունեցող կրօնական հալածանքներին, 17րդ դարը կարելի է համարել Նոր Ջուղայի ծաղկման եւ բարգաւաճման ոսկեդարը: Նախ, խաղաղ պայմանների մէջ մեծ թիւով հայ վաճառականներ մեկնեցին ու հաստատուեցին Յնդկաստանում: Յետագային, 18րդ դարի կեսերից սկսեալ, երբ հալածանքներն ու կողոպուտը, անբուժութիւններն ու սպանող անպակաս էին դարձել Նոր Ջուղայի գլխից, հայեր՝ զանգուածային ձեւով, թողնելով իրենց տներն ու այգիները, հաստատուեցին Յնդկաստանի եւ Ճայրագոյն Արեւելքի արեւի հեռաւոր շրջանները, առանց սակայն մոռնալու իրենց ծննդավայրը՝ Նոր Ջուղան եւ միշտ, այդ երկիրներից նրանք նիւթական ու բարոյական օժանդակութիւններով օգնում էին իրենց դժբախտ հարազատներին եւ տեղւոյն եկեղեցիներին:

Այս նորահաստատ գաղութներում, նրանք կառուցեցին նոր եկեղեցիներ եւ դարեր շարունակ Ս. Ամենափրկչեան վանքից ուղարկուեցին քահանայ հայրեր՝ նրանց հոգեւոր կարիքները հոգալու համար: Ահա թէ ինչպէս կազմուեց Իրանա-Յնդկաստանի պատմական թեմը:

3. Որքա՞ն է թիւը հայութեան եւ ո՞ր քաղաքներու եւ շրջաններու մէջ հաստատուած են անոնք:

Պ. Իրանա-Յնդկաստանի թեմի թե՛ աշխարհագրական սահմանները եւ թե՛ ժողովրդի թիւը մեծ փոփոխութիւնների են ենթարկուել դարերի ընթացքին եւ յատկապէս քսաներորդ դարի սկզբից: Ինչպէս գիտեք, Իրանում ներկայիս կան երեք առանձին թեմեր՝ Ատրպատականի, Թեհրանի եւ Իրանա-Յնդկաստանի: Վերջինի ներկայ սահմաններն են Սպահանի եւ հարաւային Իրանի հետեւեալ շրջանները. Նոր Ջուղա՝ տասը հազար հայութեամբ, Շահինշահը՝ 2500, Փերիայի հայկական գիւղեր՝ 1000, Շիրազ՝ 400, Ահուազ՝ 1000: Ունինք նաեւ այլ փոքր շրջաններ Խուզիստանում, օրինակ՝ Մեսշետ Սիւլէյման, Աղաջարի, Բանդար Մահտաշ, որտեղ անցեալում ապրել են հոծ թիւով հայեր եւ հոն ներկայիս, տեղափոխութեան հետեւանքով մնացել են սակաւաթիւ ընտանիքներ:

Անշուշտ վերոյիշեալ թիւերը տալիս են մօտաւոր պատկերը վերոյիշեալ գաղութներին:

Յատկանշելի է, որ մինչեւ 1978 թուականը, Խուզիստանում ապրում էին մօտ եօթ հազար, գլխաւորաբար Ապատան, Ահուազ եւ Խորամշահ քաղաքներում: Եւ ինչպէս ծանօթ է ձեզ, երբ 1979 թուին սկսուեց Իրաքի կողմից Իրանի ժողովուրդին պարտադրուած պատերազմը եւ քարուքանդ եղան սահմանամերձ շէն քաղաքները, մեր համայնքի զաւակները եւս պարտաւորուած եղան թողնել տուն ու տեղ, տասնամեակների ընթացքին իրենց ստեղծած տնտեսական ապահովութիւնը եւ մի անգամ եւլըս գաղթականի ցուպը ձեռք առած փոխադրուել Սպահան, Թեհրան կամ այլուր:

Մենք, տարուան ընթացքին, զանազան առիթներով այցելում ենք Խուզեստանի պատերազմական ճակատի առաջին դիրքերի մօտիկ մեր այս գաղութների բեկորներին եւ անձամբ ստուգում ենք, որ կանգնում են եւ ապահով ձեռքերի մէջ հայկական դպրոցներն ու եկեղեցիները:

3. Ազգային, մշակութային եւ կրթական կեանքը ի՞նչ վիճակի մէջ են այս օրերուն:

Պ. Իրանահայ գաղութները առհասարակ, հնուց ի վեր ունեցել են իրենց մշակութային, կրթական եւ մարզական միութիւններն ու հաստատութիւնները: Դեռեւս դարի սկիզբից եղել են կանաչի բարեսիրական եւ մշակութային գործօն միութիւններ, որոնք մեծ դեր են խաղացել իրանահայ կեանքի տարբեր բնակավայրերում:

Մասնաւորելով մեր խօսքը մեր թեմին, ինչպէս անցեալում, ներկայիս նաեւ գործօն են այնտեղ գրական, մշակութային, բարեսիրական եւ մարզական միութիւններ: Ինչպէս գիտեք, 1960 թուից, Իրանի երեք թեմերը մաս են կազմում Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ բոլորն ալ ունեն իրենց ազգային եւ եկեղեցական մարմինները՝ համախմբուած մեր առաջնորդարաններուն շուրջ:

Երկրի յեղափոխությունից յետոյ, հայ համայնքը եւս կրեց մի շարք ցնցումներ եւ թօթափեց իր վրայից քաղքենիացման նշանները: Աւելի պարզ խօսելով, առհասարակ իրանահայությունը մի վերադարձ կատարեց իր արմատներին եւ աւելի ամուր կառչեց իր ազգային, կրօնական եւ մշակութային արժեքներին ու ամանդություններին: Օրինակի համար, անցնող 6-7 տարիների ընթացքին բազմապատկուեց թիւը թատերախմբերի, երգչախմբերի, միութենական ձեռնարկների եւ հանդիսությունների: Հայ գիրքն ու գրականութիւնը, որոնք համեմատաբար լքուած վիճակում էին, նոր հետաքրքրությունների լոյսի տակ ծաղկման աննախընթաց շրջան մը ապրեցին եւ շարունակուեցն են ապրել: Լոկ մի գաղափար տալու համար, յայտնենք, որ արդէն վերահրատարակուել են շուրջ յիսուն անուն գրքեր՝ հայրենիքի եւ սփիւռքի տաղանդաւոր գրողների ստեղծագործություններից:

Անշուշտ այս բոլորի առընթեր, ինչպէս ձեզ ծանօթ է, ունենք կրթական ճակատի վրայ մեր հայոց դպրոցների վերաբերեալ լուրջ դժուարություններ՝ հայերէն լեզուի եւ կրօնի ուսուցման կապակցութեամբ: Իրանահայ երեք թեմակալ առաջնորդներն ու պատկան ազգային մարմինները համագործակցութեամբ Իրանի Իսլամական Խորհրդարանի հայ երկու անդամներին (երեսփոխան), յարատեւ ջանքեր են թափում եւ գրեթէ ամենօրեայ բանակցություններ են յառաջ տարուում պետական մարմինների հետ, կրթական այս հարցերին մի բարուք լուծում գտնելու նպատակով:

3. Կրնա՞ք որոշ տեղեկություններ տալ Ս. Ամենափրկչեան վանքի անցեալին եւ ներկային մասին:

Պ. Մեր թեմի պատմական անցեալի մասին խօսելիս, արդէն անդրադարձանք, որ Ս. Ամենափրկչեան վանքը հաստատուել է 1605 թուին, երբ Շահ Աբբաս, իր մայրաքաղաքը ծաղկեցնելու եւ երկրի տնտեսութեան զարկ տալու նպատակաւ, Հին Ջուղայի հայերին բերեց եւ բնակեցրեց Սպահանում:

Ուրեմն, Նոր Ջուղա գաղթած հայերէն առաջին գործերից մին եղաւ հիմնել իրենց հոգեւոր կենտրոնը՝ Ս. Ամենափրկչեան վանքը եւ կառուցանել նմանը այն եկեղեցիներին, որոնք թողել էին իրենց ետին՝ Արաքսի միւս ափին:

Այս բոլորի մասին դուք մանրամասն տեղեկություններ կը գտնեք Յարութիւն քիչ. Յովնանեանի Նոր Ջուղայի պատմութեան գոյգ հատորներում: Այստեղ միայն յիշենք, որ գաղթական հայութիւնը առաջին հերթին կառուցել է համեմատաբար աւելի համեստ մէկ եկեղեցի եւ հիմնել վանական կեանք՝ իր թեմակալ առաջնորդով ու միաբաններով:

Յետագային, Դաւիթ Եպիսկոպոսի օրով, ժողովրդային նուիրատուութեամբ եւ Նոր Ջուղայի հարուստ հայ վաճառականների բարերարութեամբ կառուցուել է աւելի շքեղ մէկ եկեղեցի վանքում՝ կողքին ունենալով իր վանական խուցերը, ձեռագրատունն ու հոգեւոր դպրեվանքը:

17րդ դարի կեսին, արդէն վանքը գտնուում էր իր փառքի գագաթնակետին: 1630-ական թուականներից, հաջատուր վարդապետ Կեսարացու ջանքերով հիմնուել էր տպարանը եւ տպուել հայերէն առաջին գիրքը՝ Սաղմոսարանը:

Յատկանշելի է, որ ո՛չ թէ միայն Պարսկաստանում, այլ ամբողջ Միջին Արեւելքում, սա եղել է առաջին տպարանը: Դրա կողքին, Հայաստանից բերուած ձեռագիրները պահուել են ինամքով եւ նոր թափով արտագրուել են նոր ձեռագիրներ եւ ծաղկել է վանքում մանրանկարչութեան արուեստը:

18րդ եւ 19րդ դարերի ընթացքին, երբ աւազակաբարոյ շահերի եւ խաների կողմից բազմաթիւ անգամներ թալանի եւ կողոպուտի է ենթարկուել Նոր Ջուղան, Ս. Ամենափրկչեան վանքն ու Նոր Ջուղայի 24 եկեղեցիները զերծ չեն մնացել կատարած աներուածություններից եւ կողոպուտից:

Հակառակ այն իրողութեան, որ շատ բաներ կորստեան են մատնուել այդ դաժան օրերին, սակայն, այսօր էլ, մեր վանքում կը մնան տպարանն ու ձեռագրատունը, Ս. Ներսէս Շնորհալի մատենադարանը եւ թանգարանը, որտեղ պահպանուել են մեր թեմի շուրջ 400 տարիների հոգեւոր եւ մշակութային անփոխարինելի գանձերը: Այ-

սօր էլ, տպարանից լոյս են տեսնում կրօնական, գրական եւ այլ բովանդակութեամբ գրքեր:

Կանքը ունի արդէն հազարի հասնող հին ու նոր թանկարժէք ձեռագիրներ: Իսկ մեր Մատենադարանը հաշուում է բազմաթիւ լեզուներով անլի քան քսան հազար հնատիպ եւ նորատիպ հատորներ եւ հայկական մամուլի ճոխ եւ հազուագիւտ հաւաքածոներ:

Իսկ վանքի թանգարանը, որ նախքան յեղափոխութիւն ընդունում էր տարեկան շուրջ 80 հազար այցելուներ, այսօր եւս բաց է զբօսաշրջիկների առաջ, որպէս միակ գործող թանգարանը Սպահան նահանգում: Որքան որ յիշում եմ, 1984 տարւան ընթացքին, շուրջ 40 հազար այցելուներ ենք ունեցել՝ աշխարհի բոլոր կողմերից: Անշուշտ այս այցելուների մեծամասնութիւնը պարսիկ մեր եղբայրներն են, որոնք մեծ գնահատանքով արտայայտուում են հայ ժողովուրդի հոգեւոր եւ մշակութային պատմական այս կենտրոնի մասին:

3. Ձեր Թորոնթօ կեցութեան ընթացքին ի՞նչ տպաւորութիւն ստացաք Թորոնթոյի հայ գաղութէն՝ ընդհանրապէս եւ Հայ Կեդրոնէն եւ Հ.Օ.Մ.ի Ամենօրեայ վարժարանէն՝ յատկապէս:

Պ. Թէեւ առաջին այցելութիւնս է Թորոնթօ, սակայն տարիներէ ի վեր, «Հորիզոն» շաբաթաթերթի միջոցաւ հետեւել եմ առհասարակ գանատահայ կեանքի զարգացման փուլերին եւ ի մասնաւորի Մոնթրէալի եւ Թորոնթոյի Հայ Կեդրոնների շուրջ կատարուող կազմակերպչական եւ հայապահպանման ճիգերին: Այն ինչ որ տեսայ անցնող մի քանի օրերի ընթացքին, մեծապէս տպաւորեց ինձ:

Գնահատանքի յատուկ խօսք ունեմ այն բոլոր զոհաբերուող ազգայիններին, որոնք այսքան կարճ ժամանակաշրջանում, յաջողուել են համայնքի գոյատեւման, նոր սերունդի դաստիարակութեան եւ միաժամանակ հայ ժողովուրդի ընդհանրական նպատակների իրագործման աշխատանքները առողջ հիմքով վրայ դնել: Հանդիպեցի Միջին Արեւելքի մեր հայահոծ գաղութներից վերջին մի քանի տասնամեակների ընթացքին Թորոնթոյում նոր բոյն հաստատած պատուական հայորդիների, որոնք վճռել են հաւատարիմ մնալ իրենց ազգային դիմագիծի պահպանման եւ գաղափարական առաքելութեան:

Ուրախութեամբ հաստատեցի մէկ երեւոյթ, որ կարող է նախանձելի օրինակ դառնալ Եւրոպայի, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի նոր կազմաւորում ստացող գաղութներին: Դա, տեղայնական զգացումներից վեր կանգնած լինելու ողջմտութիւնն է: Հայ Կենտրոնում ես տեսայ բազմաթիւ քոյր միութիւնների անդամ-անդամուհիներ, ղեկավար դիրքերում գտնուող ազգային գործիչներ, որոնք իրենց ետին ունենալով հանդերձ Միջին Արեւելքի հայաշատ գաղութների 40-50 տարիների փորձառութիւնն ու ենթահողը, այսպէս իրարու հետ գործում են ամենայն համերաշխութեամբ եւ հասկացողութեամբ:

Իսկ իմ ուրախութիւնը իր գագաթնակետին հասաւ, երբ Երեքշաբթի, 3 Սեպտեմբերի առաւօտեան ներկայ գտնուեցի Թորոնթոյի Հ.Օ.Մ.ի Պապայեան մանկապարտեզի եւ Գոլուեան նախակրթարանի վերամուտի հանդիսութեան:

Իրապէս շնորհաւորելի է այս գաղութը, որ արդէն իր տարիների յարատեւ ճիգերը արդիւնաւորելով, 1985-1986 տարեշրջանը սկսում է 300 երկսեռ աշակերտներով՝ մանկապարտեզից մինչեւ ութերորդ դասարան: Եւ մտածել, որ այս ամենօրեայ վարժարանը սկսել է միայն եօթ տարիներ առաջ եւ այսօր արդէն ամբողջացրել է մինչեւ միջնակարգի ութերորդ դասարանի նախատեսած ծրագիրը:

3. Կիրակի, 1 Սեպտեմբերին, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ համայնքը ուրախութիւն ունեցաւ վայելու Ձեր ներկայութիւնը ու քարոզը՝ Սուրբ Պատարագի ընթացքին:

Ի՞նչ են ձեր տպաւորութիւնները մեր եկեղեցական եւ հոգեւոր կեանքէն եւ ի՞նչ են ձեր թելադրութիւնները:

Պ. Նախ ինձ համար մեծ ուրախութիւն էր տեսնել Թորոնթոյում իմ միաբանակից եղբայրներից Յոզեֆի Ս. Կաթակ Ծ. Վրդ. Յակոբեանին, որ արդէն ասելի քան երկու տարի է ինչ հովուում է Ս. Աստուածածին եկեղեցւոյ համայնքը, իրեն աջակից ունենալով յանձնառու եւ նուիրեալ անդամներից բաղկացած հոգաբարձական մի կազմ, որոնց անվերապահ եւ հետեւողական ճիգերուն շնորհիւ նորակազմ համայնքը արդէն արձանագրել է կարելոր նուաճումներ՝ կազմակերպչական եւ եկեղեցական մարզերու մէջ: Ուրախութեամբ տեղեկացայ, որ Յայ Կեդրոնի եւ Ամենօրեայ դպրոցի ծրագիրների իրագործումից յետոյ, արդէն նախաձեռնուել է Յայ եկեղեցւոյ սեփական շէնքի կառուցման աշխատանքներին, ամբողջացնելու համար Յայ Կեդրոնի այն համալիրը, զոր ծրագրուել էր ամբողջացնելու համար:

Լիայոյս ենք, որ ինչպէս անցեալում, նաեւ ներկայիս, հայ ժողովուրդի զաւակների միահամուռ ջանքերով կ'իրականանայ նաեւ մեր բոլորի սրտին այնքան մօտիկ եկեղեցաշինութեան կենսական եւ անյետաձգելի ծրագիրը:

Յ. Կ'ուզէի՞ք տալ ձեր պատգամը Փանատայի հայութեան:

Պ. Շարունակեցէ՛ք առանց ընկրկելու հայապահպանման այն գործը, որ արդէն սքանչելի կերպով սկսուել է այս գաղութում: Մեկտեղեցէ՛ք ձեր ոյժերը հայ ժողովուրդի անկատար տենչերի իրագործման ճանապարհին թափուող ճիգերի շուրջ: Ամուր կամչած մնացէ՛ք մեր լուսապսակ նահատակների, մարտիրոսների եւ հերոսների մեզ փոխանցած սրբազան աստիճաններին: Պահենք ու զօրացնենք հայակերտման, մեր գոյութեան մշտնջենաւորման ազգային յենակները՝ հայ հոգու պաշտպան Յայաստանեայց եկեղեցին, Ս. Մեսրոպի լուսաճակատ հայ դպրոցը, մեր միութիւններն ու կազմակերպութիւնները:

Նաեւ, լուրջ ծրագրումով ջանանք փոխանցել երիտասարդ սերունդին, թէկուզ բազմաչարչար, սակայն, «Բազում գործ արութեան» կատարելու ընդունակութիւն ունեցող, ստեղծագործ եւ հանճարեղ մի ժողովուրդի ժառանգորդներն եղած լինելու հոգեկան արդար հպարտութիւնը:

Անհրաժեշտ է շեշտել երիտասարդութեան, որ մեր գաղութային ճիգերը ինքնանպատակ եւ ինքնավախճան չեն, այլ՝ այդ բոլորը ձգտում են հասնել համահայկական այն նպատակներին.

- Ազատագրում մեզանից բռնազրաւուած հայրենական հողերի,
- Մեկտեղում համայն հայութեան իր սեփական հայրենիքում,
- Ամբողջական Յայաստան, ամբողջական հայութեամբ:

**«ՅՈՐԻՉՈՆ»
7 Յոկտեմբեր 1985**

ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐԶ

*Վերջերս, հայ մամուլի մէջ, հայ ճարտարապետներուն ուղղուած մըր-
ցոյթի հրաւէր մը լոյս տեսաւ, որով կը ծանուցուի, թէ ծրագրուած է Թորոն-
թոյի Հայ Կեդրոնի շէջափակին մէջ, Հայաստանեայց Առաքելական Ս. Աստ-
ուածածին եկեղեցւոյ շէնքը բարձրացնել:*

*Բնականաբար, Թորոնթոյի մեր գաղութին համար, որ մօտ չորս տա-
րիներէ ի վեր, վարձու եկեղեցիի մը մէջ կը կատարէ իր ժամերգութիւնները,
մեծապէս խանդավառիչ իրադարձութիւն մըն է այս:*

*Շինութեան ծրագրին եւ ընդհանրապէս Թորոնթոյի Ս. Աստուածածին
եկեղեցւոյ մասին յաւելեալ ծանօթութիւններ ստանալու համար, հանդիպում
մը ունեցանք եկեղեցւոյ հովիւ Հոգշ. Տ. Խաթակ Մ. Վրդ. Յակոբեանի եւ Շի-
նութեան Յանձնախումբի ատենապետ ընկ. Յարութիւն Շիթիլեանի հետ, ո-
րոնք սիրալոյսով պատասխանեցին մեր հարցումներուն:*

**Յ. Պիտի խնդրէիք, որ ամփոփ գիծերու մէջ ներկայացնէք Թորոնթոյի Հայց.
Առաք. Ս. Աստուածածին եկեղեցւոյ անցած ուղին:**

Պ. Թորոնթոյի մէջ Կիլիկեան Թեմի Հայաստանեայց Առաքելական եկեղեցի մը
հիմնելու կարիքը երկար ատենէ ի վեր զգացուած էր: 1976ին, երբ նոր Հայ Կեդրոնի
ծրագիրը կը յայտարարուէր մեր ժողովուրդին, այդ ծրագիրը կ'ընդգրկէր Հայ Կեդրո-
նը, Ամէսօրեայ Վարժարանը եւ եկեղեցին, որոնք պիտի իրագործուէին իրարայաջորդ
փուլերով:

Ինչպէս ծանօթ է, Կեդրոնի առաջին փուլի շինութիւնը աւարտեցաւ 1979ին եւ
Ամէսօրեայ Վարժարանի շէնքը բարձրացաւ 1982ին:

1983ին, գաղութի փափաքին ընդառաջելով, Գանատայի եւ Մ. Նահանգներու
արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեան եւ Ազգային Վարչու-
թիւնը հաւանութիւն տուին կազմելու Թորոնթոյի Հայց. Առաք. Ս. Աստուածածին եկե-
ղեցին, որու կազմութեան առաջին իսկ օրէն, Թորոնթոյի հայ ժողովուրդը մեծ խան-
դավառութեամբ փարեցաւ իր եկեղեցիին, եւ, օրէ օր, ականատես կ'ըլլանք անոր ա-
նումին եւ վերելքին:

Յ. Ինչո՞ւ եւ ի՞նչպէս ծրագրուեցաւ եկեղեցւոյ շինարարութիւնը:

Պ. Հիմնադրութեան առաջին օրէն իսկ, մեր կրօնական արարողութիւններուն
համար վարձեցինք տեղոյս անգլիքան Ս. Օգոստինոս եկեղեցին, որուն հոգաբար-
ձութիւնը ազնիւ գտնուեցաւ մեզի հետ բաժնետէլու եկեղեցւոյ յարմարութիւնները:

Սակայն, նկատի ունենալով մեր օրէ օր աճող պահանջները եւ հայկական ե-
կեղեցւոյ իւրայատուկ մթնոլորտի պակասը, սկիզբէն իսկ կարգադրութիւնը ժամանա-
կաւոր բնոյթ միայն կրնար ունենալ եւ անհրաժեշտ էր մտածել մեր ուրոյն եկեղեցի
կառուցանելու մասին:

Կիրակի, 24 Մարտ 1985ին տեղի ունեցած եկեղեցւոյս անդամական ընդհա-
նոր ժողովը որոշում կը կայացնէր կազմելու յանձնախումբ մը, քննարկելու համար ե-
կեղեցւոյս շինութեան կարելիութիւնները:

Յանձնախումբի ատենապետութիւնը ստանձնեց ընկ. Անդրանիկ Արթիւնեան,
որուն վաղաժամ մահէն ետք հոգաբարձութիւնը վերակազմեց յանձնախումբը, որ այ-
ժմ կը բաղկանայ հետեւեալ անդամներէն.

Շիրիլեան Յարութին՝ ատենապետ, Թերզեան Վազգեն՝ փոխ-ատենապետ, Տեր Պողոսեան Րաֆֆի՝ ատենադպիր, Արթինեան Յակոբ, Բաշայեան Կարո, Թիրթիգեան Մանաս, Յովսէփեան Վահիկ, Սարգիսեան Չաւեն, Սեւակեան Յակոբ:

3. Յարդ, շինութեան կապակցութեամբ ի՞նչ քայլեր առնուած են:

Պ. Յանձնախումբը ժրաջանօրէն գործի լծուած է: Արդէն իսկ մամուլով հրատարակած է մրցոյթի հրաւեր մը հայ ճարտարապետներուն ուղղուած, ներկայացնելու հայկական ոճով եկեղեցիի մը շինութեան ծրագիր-յղացք մը (Concept Design): Մրցոյթին համար յատկացուած է 8000 տոլար, որմէ Ա. մրցանակին՝ 5000, Բ.ին՝ 2000 եւ Գ.ին՝ 1000:

3. Ո՞ր ծրագրուած է բարձրացնել նորակառոյց եկեղեցին:

Պ. Ան պիտի բարձրանայ Թորոնթոյի Հայ Կեդրոնի շրջափակին մէջ, Կեդրոնի կից հողաշերտի մը վրայ: Հայ Կեդրոնը կը գտնուի Նորթ Եորքի մէջ, ուր արդէն հայկական հոծ բնակչութիւն մը հաստատուած է:

3. Ժամանակացոյց մը հաստատա՞ծ էք ձեր աշխատանքներուն համար:

Պ. Մեր աշխատանքները պիտի տարուին երկու գլխաւոր ուղղութիւններով: Նախ՝ շինութեան ծրագրի վերջնականացումը եւ շինութեան աշխատանքներու ձեռնարկումը: Ապա՝ դրամահաւաքը, քանի որ ինչպէս ամէն հայկական հաւաքական շինարարական աշխատանք, եկեղեցւոյ շինութեան իրագործումին համար եւս պէտք ունինք նիւթական աչքառու գումարներու:

Ըստ մեր յայտարարութեան, շինութեան յղացքները մեզի պէտք է հասած ըլլան մինչեւ Յունիս 30:

Մրցոյթի մեր հրաւերին պատասխանած եւ մասնակցութեան պայմաններու թղթածրարը ստացած են 12 հայ ճարտարապետներ՝ Թորոնթոյէն, Մոնթրէալէն, Օթթաուայէն, Նիւ Եորքէն, Լոս Անճելըսէն, Ֆիլատելֆիայէն եւ Փարիզէն:

Շինարարական լաւագոյն յղացքի ընտրութիւնէն ետք, կը նախատեսենք, որ ճարտարապետական աշխատանքները աւարտին մինչեւ Դեկտեմբեր 1986:

Կիրակի, 17 Օգոստոս 1986ին, եկեղեցւոյ անուանակոչութեան՝ Վերափոխումըն Ս. Աստուածածնի տօնին, պիտի կատարենք հողօրհնեցի արարողութիւն, ձեռամբ թմիս առաջնորդ Բարձր՝ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի: Այս առիթով պիտի կատարուի մեր առաջին ժողովրդային հանգանակութիւնը:

Կը նախատեսենք, որ շինութեան աշխատանքները սկսին 1987ին գարնան, երբ պիտի կատարուի եկեղեցւոյս հիմնարկէքը եւ աւարտին 1987ի Դեկտեմբերին: Աստուծոյ օգնութեամբ եւ մեր սիրելի եւ հաւատացեալ ժողովուրդի բոլորանուէր աջակցութեամբ, կը յուսանք եկեղեցւոյս օծումը կատարել 1988ի Ս. Ծննդեան տօնին:

3. Ըստ ձեր նախասիրութեան, ի՞նչ տարողութիւն պիտի ունենայ նորակառոյց եկեղեցին:

Պ. Նկատի ունենալով հողի տարածութիւնը եւ մեր ներկայ պահանջները, կը ծրագրենք 450 հոգինոց եկեղեցիի մը շինութիւնը:

Կը ծրագրենք, որ շէնքը ունենայ ներքնայարկ մը, ուր պիտի ամփոփուին եկեղեցւոյ գրասենեակները եւ այլ յարմարութիւններ:

3. Ի՞նչ միջոցներ կը նախատեսէք անհրաժեշտ գումարները գոյացնելու կապակցութեամբ:

Պ. Յարդ, զանազան առիթներով, կարգ մը անհատ նուիրատուներ սրտաբուխ կերպով գոյացուցած են փոքր գումար մը, որ կորիզը կը հանդիմանայ ապագային հանգանակուելիք գումարներու:

Հայ Կեդրոնի առաջին երկու փուլերու շինութեան ընթացքին, ինչպէս գիտէք, Օնթարիոյի կառավարութեան մեծագումար օժանդակութիւնը մեծապէս նպաստեց

մեր ծրագիրներու իրագործումին, սակայն, այդ իրագործումները չէին յաջողեր առանց մեր ժողովուրդի գիտակցական եւ անսակարկ զոհաբերումին:

Անցեալի մեր փորձառութիւնը ցոյց կու տայ, թէ ամէն անգամ, երբ կարիքը ունեցած ենք եւ դիմած Թորոնթոյի մեր գիտակից ժողովուրդին, ան պատասխանած է մեր կոչին՝ իր խումներամ ներկայութեամբ եւ անսակարկ ու ամբողջանուէր մասնակցութեամբ:

Եւ, զարմանալիօրէն, ամէն անգամ ալ, ան գլած եւ անցած է մեր բոլոր՝ ակընկալութիւնները:

Այս անգամ, վստահ ենք, որ հաւատացեալ եւ աւանդապաշտ մեր ժողովուրդը, անհուն նուիրումով եւ զոհաբերութեամբ դարձեալ պիտի փաստէ իր գիտակցութիւնը եւ պիտի բարձրացնէ Թորոնթոյի հայութեան վայել, վեհաշուք Հայաստանեայց եկեղեցւոյ գմբէթը, ի փառս հայ ժողովուրդի եւ հայ հոգիի յաւերժութեան:

«ՅՈՐԻՉՈՆ»
2 Յունիս 1986

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱՅՐ ԼԵՒՈՆ ՎՐԴ. ԶԷՔԻՆԱՆԻ ՀԵՏ

Անցնող Ապրիլին Գանատա կը գտնուէր Վենետիկի Մխիթարեան միաբաններէն Հ. Լեւոն վրդ. Զէքիեան, Համազգային Հայ Մշակութային Միութեան հրաւերով, մասնակցելու համար Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի 100-ամեակի տօնակատարութեանց:

Այդ առթիւ իր հետ հարցազրոյց մը ունեցաւ մեր աշխատակիցը:

Յ. Սիրելի վարդապետ, հայ մամուլի էջերէն տեղեկացած ենք ձեր կատարած հայագիտական գործունեութեան մասին, յատկապէս Ս. Ղազարի եւ Վենետիկի համալսարանական շրջանակներուն մէջ: Կը փափաքէիք կարգ մը մանրամասնութիւններ իմանալ այդ մասին:

Պ. Հայագիտական ասպարեզին մէջ գլխաւորապէս ջանացած եմ աշխատիլ երկու ուղղութեամբ: Առաջին գիտական ուսումնասիրութիւններու կամ պրպտումներու ճամբով, երկրորդ՝ մասնակցելով գիտաժողովներու:

1978 թուականին, առաջին անգամ, Վենետիկի համալսարանի հովանաւորութեամբ կազմակերպեցինք գիտաժողով մը «Հայաստան Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ» բնակիւթով, որուն մասնակցեցան շուրջ 30 գիտնականներ, մեծ մասամբ Իտալիայէն:

Յաջորդ տարին ուրիշ գիտաժողով մը տեղի ունեցաւ «Հայաստանը կովկասեան մշակոյթներու ծիրին մէջ» բնակիւթով, որ նոյնպէս բաւական մեծ հետաքրքրութիւն յառաջացուց եւ որուն մասնակցեցան նաեւ հայրենի գիտնականներ:

Յետոյ, 1984ի գարնան կազմակերպեցինք Հայաստանի եւ Ասորիքի միջեւ գրական եւ մշակութային կապերու յատկացուած գիտաժողով մը, մասնագիտական հանգամանքով, որ իր տեսակին մէջ երկրորդը հանդիսացաւ, յետ 1980ին Պոմպարթըն Օքսի, Ամերիկայի մէջ կատարուած առաջին նման գիտաժողովին:

Մասնակցած եմ 1981ի Միլանի մէջ, «Հայ արուեստի երկրորդ միջազգային գիտաժողովին», որ բաւական նշելի յաջողութիւն մը արձանագրեց:

Հուսկ այս օրերուն նուիրուած եմ կազմակերպելու՝ իբր տեղական համակարգիչ՝ Վենետիկի համալսարանի հովանաւորութեամբ եւ զանազան մշակութային եւ գիտական կեդրոններու գործակցութեամբ, անշուշտ առաջին հերթին Հայաստանի Գիտութիւններու ակադեմիային՝ «Հայ արուեստի հինգերորդ միջազգային գիտաժողովը», որ տեղի պիտի ունենայ 1988ի Յուլիսի սկիզբները:

Ուրիշ աշխատանք մը, որ սրտիս շատ մօտիկ եղած է՝ հայ լեզուի եւ մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացքներու կազմակերպութիւնն է: 1984-1985 թուականներուն ստանձնած եմ այդ դասընթացքներու ղեկավարի պաշտօնը՝ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանին մէջ: 1986ին կարելի եղաւ նման խտացեալ դասընթացք մը ընդունիլ տալ իբրեւ Վենետիկի համալսարանի պաշտօնական ծրագիր:

Դասընթացքը պիտի կրկնուի այս տարի եւս՝ ամառը: Անցեալ տարի մասնակցեցան 34 հոգիներ, երկու երրորդը՝ հայ եւ մէկ երրորդը՝ ոչ-հայ համեմատութեամբ: Մասնակիցները՝ համալսարանական ուսանողներ, նոյնիսկ դասախօսներ, մեծ հետաքրքրութիւն ցոյց տուին: Այս ամառուան համար նախատեսուած է 12 դասախօսներէ բաղկացած անձնակազմ մը:

Դասախօսութիւններուն առընթեր տեղի պիտի ունենան նաեւ զանազան բաւախօսութիւններ եւ գիտազրոյցներ:

Յ. Իսկ գիտական ի՞նչ ուսումնասիրութիւններ ունիք:

Պ. Գիտական աշխատասիրութիւններու ուղղութեամբ կրնամ յիշել գլխաւոր

րապես քանի մը բնագաւառները, որոնց վրայ աւելի մօտէն աշխատած եմ, օրինակի համար Արեւմուտքի հայ գաղութները, յատկապէս Իտալիոյ հայութիւնը, որ միջին դարու ընթացքին Արեւմուտքի ամենէն յայտնի գաղութներէն եղած է բայց, դժբախտաբար, յետոյ բոլորովին կորսուած: Բնականաբար նման գաղութներու ուսումնասիրութիւնը ո՛չ միայն պատմագիտական հետաքրքրութիւն կը ներկայացնէ, այլ, նաեւ կրնայ մեզի նիւթ հայթայթել սփիւռքային կամ գաղութային լուսաբանութեան համար, որպէսզի կարենանք դասեր քաղել մեր անցեալի գաղութներու պատմութենէն՝ դիմագրաւելու համար սփիւռքահայի ներկայ դրութեան մեր առջեւ դրած զանազան հարցերը, յատկապէս ազգային գոյատեւումի տեսանկիւնէն:

Չբաղած եմ Ս. Ներսէս Շնորհալիով, արդի հայ գրականութենէն քանի մը ուսումնասիրութիւններ ունիմ Պետրոս Դուրեանի եւ Դանիէլ Վարուժանի մասին եւ ուրիշ զանազան նիւթերու շուրջ:

3. Նոյնպէս ծանօթ է մեզի, որ վերջերս մասնակցեցաք Երեւանի մէջ գումարած «Միջնադարեան հայ գրականութեան միջազգային գիտաժողովին»: Կրնայի՞ք մեզի փոխանցել ձեր տպաւորութիւնները եւ կարծիքը այս կարելոր ձեռնարկին մասին:

Պ. Այս ձեռնարկը իր տեսակին մէջ առաջինն էր: Հայ արուեստին նուիրուած ժողովներէն առաջինը տեղի ունեցաւ Իտալիոյ մէջ 1975ին: Հայաստանի Գիտութիւններու ակադեմիան կազմակերպեց 1978ի արուեստի գիտաժողովը, ապա՝ 1982ի հայերէնագիտական կամ լեզուագիտական գիտաժողովը, որուն առաջին նախաձեռնութիւնն ալ եկած էր Ամերիկայէն, յատկապէս փրոֆ. Ճոն Կրեփինի կողմէ, որ 1979 թըւականին Ֆիլատելֆիոյ մէջ կազմակերպեց առաջին հայերէնագիտական գիտաժողովը: Ուրեմն, 1986ի այս միջնադարեան գրականութեան գիտաժողովը նոր բնագաւառ մը կը բանար, մանաւանդ նկատի ունենալով, որ գրականութիւնը կ'ըմբռնուէր լայն առումով, ընդգրկելով նաեւ պատմութիւնը, այսինքն՝ պատմական աղբիւրները:

Այսպիսով կը կարծեմ, թէ նախադրեալները կը դրուին կամ դրուած կ'ըլլան գուցէ լայն իմաստով հայագիտական ընդհանուր գիտաժողովներու համար, ինչպէս տեղի կ'ունենան օրինակի համար բիւզանդագիտական կամ այլ մշակոյթներու վերաբերեալ գիտաժողովները, ընդգրկելով այդ մշակոյթներու գրեթէ բոլոր գլխաւոր երեւոյթները՝ մտածութիւն եւ մտածողութեան պատմութիւն, ներառեալ իմաստասիրութիւնը, աստուածաբանութիւնը, բնական գիտութիւնները եւ ինչպէս այդ ժամանակ կը մշակուէր՝ պատմութիւնը, գրականութիւնը, գեղարուեստը, ընկերային եւ տնտեսական երեւոյթները, քաղաքական հաստատութիւններու յեղաշրջումները, եւ այլն:

Բաղձալի է որ, բնականաբար, հայագիտական նման գիտաժողով մըն ալ յառաջիկայ տարիներուն տեղի ունենայ: Հետեւաբար, կը կարծեմ, թէ շատ բնական ձեռնարկ մը եղաւ եւ բաւականաչափ լաւ կերպով կազմակերպուած էր: Կը մասնակցէին միջնադարեան հայ գրականութեան մարզին մէջ շատ անուանի անուններ, ըլլան Հայրենիքէն, ըլլան արտասահմանէն: Կարդացուեցան իմաստալից եւ կուռ գեկոյցներ, արժեքաւոր ներդրումներ՝ մեր միջնադարեան գրականութեան վերաբերեալ: Հետեւաբար, կը կարծեմ, թէ ընդհանուր առմամբ, շատ հետաքրքրական եւ դրական ձեռնարկ մը հանդիսացաւ այս, գրականութեան, հայ միջնադարեան գրականութեան առաջին գիտաժողովը:

3. Գիտաժողովի ընթացքին խօսած էք հայ մեծ պատմագիր Մովսէս Խորենացիի մասին: Ի՞նչ էր ձեր մերձեցումը այս կարելոր նիւթին շուրջ:

Պ. Մովսէս Խորենացի, վերջին տարիներու ընթացքին յատկապէս, մասնաւոր ուշադրութեան առարկայ եղաւ նաեւ օտար գիտնականներու եւ հայագետներու կողմէ: Խորենացիի հանդէպ հետաքրքրութիւնը անցեալ դարէն կը սկսի եւ բաւական վեճի նիւթ ընծայած է բանասէրներու պրպտումներուն, որով գլխաւորապէս զբաղած են այդ պատմութեան երկին քննարկման թուականով: Շատեր կարծիք յայտնած են, թէ ան չի կրնար գետեղուիլ հինգերորդ դարուն մէջ, եւ արտայայտուած են զանազան

տեսակետներ. որոնք Խորենացիի պատմութեան թուականը կը տեղափոխէին եօթներորդէն մինչեւ իններորդ դար: Այս կարծիքներու զանազանութեան մէջ իրենց տեղը ունեցած են նաեւ ըլլայ օտար, ըլլայ հայ գիտնականներ եւ բանասերներ: Յիշենք օրինակ Յակոբ Մանանդեանը, մեր մեծագոյն բանասերներէն մին, որ Խորենացիի գրութեան թուականը կը տանէր մինչեւ իններորդ դար:

Վերջապէս, դարձեալ այս հարցը արծարծուեցաւ եւ գլխաւորապէս ամերիկեան գիտական շրջանակներու մէջ կարծիք յայտնուեցաւ, թէ Խորենացիի գրութեան թուականը պէտք է անպայման եօթներորդ դարուն գետեղել, այսինքն ուրիշ խօսքով, չի կրնար եօթներորդ դարէն առաջ եղած ըլլալ:

Բայց ցուցաբերուեցաւ ուրիշ այնպիսի մերձեցում մը Խորենացիի նկատմամբ, որ ես որոշ չափով ժամանակավրէպ պիտի նկատեի: Այսինքն, այսօր ոչ ոք չի կրնար մերձենալ անցեալի պատմագիրներուն, Նոյնիսկ լատին եւ յոյն դասական պատմագիրներուն, անոնցմէ պահանջելով գիտական կամ հնախօսական ճշտութիւն կամ ճշգրտութիւն մը, որուն կրնանք հասնիլ մենք մերօրեայ ներկայ միջոցներով: Յետեւաբար, հեղինակները նախ եւ առաջ պէտք է նկատուին ո՛չ այնքան իրենց տեղեկութիւններուն կամ իրենց կատարած համադրութիւններուն ճշգրտութիւններու տեսակետէն, որքան որպէս վկայութիւններ իրենց ժամանակի պատմական մերձեցումներուն եւ պատմական գիտութեան:

Այս թիրիմացութեան կամ այս որոշ չափով ժամանակավրէպ մերձեցումի արդիւնքը այն եղաւ, որ Խորենացիին ոմանք նկատեցին Նոյնիսկ պաշտօնապէս նենգափոխողը պատմութեան. այնպիսի գրող մը, որ կարծես նպատակ ունենար համակարգեալ կերպով, մեթոդիկ կերպով խաբել ընթերցողը:

Կը կարծեմ թէ ասիկա չափազանցութիւն մըն է: Եւ այս տեսակետը թերեւս նկատի կ'առնէ այն պարագան, որ Խորենացիին նաեւ մեծ տեսաբան մըն է: Տեսաբան մը յատկապէս հայ պատմական յեղաշրջումի եւ հայ ինքնութեան: Եւ զուցէ այս նկատողութիւնն ալ իր որոշ ազդեցութիւնը ունի եւ կրնայ ունեցած ըլլալ Խորենացիի նըկատմամբ ինչ-ինչ ժամանակավրէպ, այսինքն ինչ-ինչ չափազանց խստապահանջ եւ կամ զուցէ գեր-քննադատական մերձեցումներու մէջ:

Իմ զեկոյցս կը ջանար վերլուծում մը կատարել Խորենացիի մէջ երեւան եկող ազգային գաղափարախօսութեան՝ անշուշտ առանց կատարելու դարձեալ ժամանակավրէպումներ, նկատելով ազգայինը եւ ինքնութիւնը տուեալ ժամանակաշրջանի պատմական եւ մշակութային իրողութեան մէջ, բայց ջանալով որ յայտնի կերպով Խորենացիի պատմութենէն դուրս գայ հայ ինքնութեան մտահոգութիւն մը, հայ ինքնութեան սահմանումը բնորոշելու մտահոգութիւն մը, որ բացայայտ է: Եւ ինչ որ անելի յատկանշական է, ըստ իս, այս ինքնութեան սահմանի մտահոգութիւնը կը ձերբազատուի կամ անկախ արժէք մը կը յայտնուի միջնադարեան գաղափարախօսութեան խորապէս քրիստոնէական արժէքներով թրծուած ընթանումներէն:

Խորենացի ցոյց կու տայ հետաքրքրութիւն մը, որ դուրս կ'ելլէ զուտ քրիստոնէական արժէքներու եւ չափանիշներու ոլորտէն եւ հոս է, կը նկատեմ, իր ազգային խոր իմացումը: Եւ ասիկա կը կարծեմ, թէ սերտօրէն կը շաղկապուի Մեսրոպ Մաշտոցի գիւտին հետ: Այն է որ Մեսրոպ Մաշտոցի գիւտն ալ ունենալով հանդերձ խորապէս կրօնական ներշնչում մը: Գիտենք, որ Ս. Մեսրոպ շատ մտահոգ էր իր գիւտը, այսինքն հայ գիրերը սորվեցնելու յունահայ բաժնին մէջ, ուր որեւէ վտանգ չկար քրիստոնէութեան սպառնացող, բայց կար արդէն վտանգը հայ ինքնութեան սպառնացող:

Խորենացիով ունինք իսկապէս ազգային գաղափարախօսութեան մը առաջին մեծ բանաձեւումը պատմական հարթակի վրայ: Եւ այս էր այն մերձեցումը, զոր շանացի այդ զեկոյցի ընթացքին բացայայտել:

3. Կ'ըսէիք թէ յառաջիկայ տարի, 1988ի Յունիսին, Վենետիկի մէջ տեղի պիտի ունենայ հայ արուեստի միջազգային հինգերորդ գիտաժողովը: Կրնայի՞ք յաւելեալ տեղեկութիւններ տալ այս մասին:

Պ. Արդէն սկսած ենք կատարել նախապատրաստական աշխատանքները: Այսինքն՝ նախ եւ առաջ երաշխաւորել իտալական տեղական իշխանութիւններու՝

քաղաքապետարանային, գաւառապետային, ինչպէս նաեւ նահանգապետային իշխանութիւններու հովանաւորութիւնները: Երկրորդ՝ ապահովել նաեւ, ըստ կարելւոյն, իտալական տեղական հանրային հաստատութիւններու կողմէ նպաստներ եւ օժանդակութիւններ՝ այս գիտաժողովի կազմակերպութեան համար: Եւ այս ուղղութեամբ արդէն ստացած ենք առաջին պատասխանները:

Երկրորդ ուղղութիւնը, որով կը տանինք մեր նախապատրաստական աշխատանքները՝ ապահովելն է նաեւ հայ հանրային հաստատութիւններու մասնակցութիւնը այս ձեռնարկին:

Հանդիպումը իբր հիմնական բնակիւթ հաւանօրէն ունենայ «Հայաստան քաղաքակրթութիւններու խաչմերուկին վրայ» նիւթը, որ անշուշտ որոշ չափով պիտի ուղղէ նաեւ կատարուելիք զեկոյցներուն բովանդակութիւնը: Կը նախատեսենք շուրջ քսան հոգինոց պատուիրակութիւն մը Հայաստանի Գիտութիւններու ակադեմիայէն, յատկապէս արուեստի հիմնարկէն՝ հինգէն տաս մասնակցողներ:

Ասոնցմէ դուրս, կը նախատեսուի 25էն 30ի միջեւ մասնակցութիւն մը սփիւռքահայ եւ օտար գիտնականներու, հետեւաբար ընդհանուր առմամբ ըլլան շուրջ յիսուն զեկոյցներ:

Գիտաժողովը պիտի ունենայ չորս օրերու վրայ բաժնուած նիստեր կամ նըստաշրջաններ: Տեղի պիտի ունենան նաեւ Վենետիկի եւ շուրջը գտնուող տեսարժան վայրերու այցելութիւններ, համերգներ եւ զեղարուեստական ելոյթներ: Կը յուսամ, մանաւանդ, թէ գիտաժողովի գործերը կարենանք ամփոփել հատորի մը մէջ, ինչպէս եղած էր Իտալիոյ մէջ կայացած երկու գիտաժողովներու պարագային:

3. Այս օրերուն, Սփիւռքի գանազան հայաշատ գաղութներուն մէջ կը տօնուի Վենետիկի Մուրատ-Ռափայելեան վարժարանի հիմնադրութեան 150-ամեակը: Հանրածանօթ է այս վարժարանի ցարդ կատարած պատմական դերը հայ լեզուի եւ մշակոյթի ուսուցման եւ տարածման աշխատանքներուն մէջ: Մերձաւոր ապագային ի՞նչ դեր կը նախատեսէք, որ այս վարժարանը կատարէ:

Պ. Մերձաւոր ապագային համար կը կարծեմ թէ վարժարանը ունի կատարելիք կարելորդ դեր մը կամ կրնայ ունենալ կատարելիք կարելորդ դեր մը, միշտ մեկնելով ընտրանի մը պատրաստելու իր նախնական ներշնչումէն: Սփիւռքահայ կեանքի ներկայ հանգրուանին, Մուրատ-Ռափայելեանին առաւելաբար կրնայ վիճակուիլ Ֆրանսայէն դուրս, Եւրոպայի, յատկապէս արեւմտեան Եւրոպայի գանազան երկիրներուն մէջ վերջին տասնամեակներուն հետզհետէ բազմացող հայ գաղութներուն հայակըրթութիւնը: Մենք այսօր ունինք Իտալիոյ մէջ շուրջ 2500 հոգինոց գաղութ մը, որուն բաւական մեծ մասը վերջին տասնամեակի ընթացքին գաղթած է Մերձաւոր Արեւելքէն, յատկապէս Լիբանանէն, քանի մը ընտանիքներ՝ Պոլիսէն: Զիչեր՝ Պարսկաստանէն: Ունինք նաեւ 4-5 հազար միաւորի հասնող գաղութ մը Չուիցերիոյ մէջ ու Նոյնքան ալ՝ Աւստրիոյ մէջ: Գերմանիոյ մէջ ու Նոյնքան ալ՝ Աւստրիոյ մէջ: Գերմանիոյ մէջ ունինք մինչեւ 20 հազարի հասնող գաղութ մը: Հոլանտայի մէջ՝ Նոյնպէս 4-5 հազար: Շուէտի մէջ Նոր կը կազմաւորուի գաղութ մը: Անգլիոյ մէջ 12 հազար կը գնահատուի հայերու թիւը: Հետեւաբար, կրնանք ըսել, թէ Ֆրանսայէն դուրս, Իտալիայէն մինչեւ Շուէտի տարածքը, կ'ապրի մօտաւորապէս 50 հազար եւ գուցէ աւելի հայեր:

Արդ, այս հայերը, այս գաղութները, բոլորովին զուրկ են հայկական կանոնաւոր վարժարաններէ՝ գոնէ այս պահուս: Եւ կը խորհիմ, թէ Մուրատ-Ռափայելեանը Եւրոպայի սրտին վրայ, իր դարաւոր աւանդութեամբ, անշուշտ ջանալով յարմարցնել իր աւանդական կառոյցները ներկայ կարիքներուն եւ յատկապէս սփիւռքային բազմատարր եւ բազմակողմանի կացութեան, կրնայ կատարել պատմական, գուցէ նաեւ վճռական դեր մը՝ փրկելու համար այդ գաղութները ճուլումի մը վտանգէն, որու հետքերը արդէն կը նշմարուին գաղթողներու առաջին սերունդին վրայ, մանաւանդ այն խաւերուն ու շերտերուն մէջ, որոնք եկած են այս երկիրները առանց ունենալու հայերէն լեզուի ընտանեկան մակարդակի վրայ տիրապետումը եւ իրենց զաւակները արդէն լրիւ իւրացուցած են տեղական լեզուն, նաեւ գուցէ մասամբ, կորսնցուցած իրենց

կապերը ազգային իրենց ինքնութեան ինչպես նաեւ գաղութային կազմակերպութիւններուն հետ:

3. Վարդապետ, որպէս հայ ուսուցիչ եւ հայ մշակոյթի ծառայող հոգեւորական, ինչպէ՞ս կը գնահատէք հիւսիսային Ամերիկայի եւ Քանատայի մէջ հայ լեզուի եւ հայ ինքնութեան պահպանման համար կատարուած աշխատանքները:

Պ. Երկու անգամ գտնուած եմ Հիւսիսային Ամերիկա՝ 1970 եւ 1980 թուականներուն՝ ամսուան մը տեւողութեամբ: Թէեւ այդ շրջաններուն շատ կարճ կայք մը ունեցած եմ նաեւ Քանատայի մէջ, բայց կրնամ ըսել, որ ներկայի այցելութեամբս աւելի մօտէն կը ծանօթանամ այս գաղութին, թէեւ բնականաբար մօտէն հետեւած եմ ձեր մամուլին:

Իմ կարծիքով, վերջին քսան տարուան ընթացքին, այս երկիրներու մէջ իսկապէս մեծ կենսունակութիւն մը, մեծ աշխուժութիւն մը կը նշմարուի: Անշուշտ ասոր մէջ կը կարծեմ, թէ շատ մեծ դեր ունեցան Միչիկն Արեւելքէն գաղթող տարրերը: Բայց ինչ որ ալ ըլլայ, այսօր ստեղծուած են կամ կը սկսին ստեղծուիլ կառոյցներ, որոնք պիտի պահպանուին եւ զարգացուին յարմարուելով նաեւ ժամանակի նոր պահանջներուն, որովհետեւ, այս բոլոր երկիրները, ճարտարարուեստականացած աշխարհի, յատկապէս այսօր, ինչպէս ծանօթ է, յարատւօրէն շրջափոխութեան մը մէջ կը գտնուին եւ հետեւաբար միշտ կրնան նոր հարցեր, նոր դժուարութիւններ, նոր պայմաններ եւ գոյապայմաններ ներկայացնել, որոնց պէտք է համապատասխանեն մեր ճիգերը՝ բաւական աշխոյժ կերպով եւ մտային-կառուցային բաւականաչափ ճկունութեամբ:

Կը խորհիմ, թէ եթէ այս ստեղծուած եւ տակաւին ստեղծուող կառոյցները կարենանք զարգացնել եւ ժամանակի մասամբ յարափոփոխ պայմաններու համաձայն յարմարցնել օրուան պահանջներուն, ասով նաեւ մեր գաղութներուն ներքին ուժակաւորութեան, իրաւունք կ'ունենանք յուսադրիչ, նոյնիսկ բաւականաչափ յուսադրիչ երեւոյթներ տեսնել: Ես անձնապէս պիտի ուզէի, առանց չափազանցեալ լաւատեսութեան, բայց յոյսով նայիլ այս գաղութներու անմիջական ապագային: Այս անշուշտ կը հասկնամ ազգապահպանման տեսակետ:

3. Ի՞նչ եղան ձեր տպաւորութիւնները Քանատայի երկու երեք գաղութները ձեր այս այցելութենէն:

Պ. Ըսեմ թէ այս առաջին անգամն է, որ այսքան մօտ շփում կ'ունենամ Քանատայի քանի մը գլխաւոր գաղութներու հետ: Նախապէս Քանատա գտնուած եմ շատ կարճ ժամանակի մը համար 1980 թուականին, երբ հարկ կար հայ ճարտարապետական ցուցահանդէսը Ամերիկա եւ Քանատա փոխադրել: Այս անգամ աւելի առիթ ունեցայ մօտէն ծանօթանալու տեղւոյն կեանքին:


Եթէ ըսեմ որ տպաւորութիւններս շատ դրական են, ասիկա պարզապէս պատշաճութեան կամ քաղաքավարութեան բանաձեւ մը չէ: Դրական են, որովհետեւ այս գաղութին մէջ ես տեսայ ուժեղ կենսունակութիւն մը: Նոր գաղութ մը ըլլալով, բընականաբար՝ կայ հայերէն լեզուի առօրեայ գործածութիւնը՝ իբր կենցաղային լեզու, հետեւաբար հայերէնը այս գաղութի մայրենի լեզուն է եւ կան երաշխիքներ դպրոցական ու կրթական կազմակերպութեան հարթակներուն վրայ, թէ այս կացութիւնը կարենայ շարունակուիլ ու գոյատեւել: Տեսայ նոյնիսկ հոս ծնած նոր սերունդ մը ամբողջ, ոչ թէ մէկ-երկու մանուկներ, որոնք անթերի եւ անսայթաք հայերէն կը խօսին:

Տեղեկացայ նաեւ որոշ չափով այլ ուղղութիւններով կատարուած աշխատանքներուն՝ ազգային կազմակերպութեան եւ հայ ժողովուրդի տեսլականներու, նըւիրական ձգտումներու ուղղութեամբ, այս բոլորը մեծապէս խրախուսիչ եւ դրական երեւոյթներ են:

Բնականաբար, այս գաղութն ալ, ինչպէս ուրիշ գաղութները, ունի իր հոգերը, ունի իր որոշ ներքին հարցերը եւ դժուարութիւնները, որոնք սակայն, երբ կայ փոխադարձ յարգանքը եւ նաեւ տրամասութիւնը շիւարար, ոչ միայն կրնան չունենալ ժըխտական արդիւնք մը, այլեւ ընդհակառակն կրնան նպաստել նորագոյն կենսունակութեան մը: Այս ուղղութեամբ ալ յուսալիք եմ եւ լաւատես:

Կը փափաքիմ այս առիթով շեշտել նաեւ վայելած հիւրասիրութիւնս, ցոյց տրուած եւ գտած ջերմ միջավայրս ու մթնոլորտս, որոնք անշուշտ կը բխին մեր հայկական ջերմութենէն: Ուրախ եմ որ մեր բնաշխարհէն շատ հեռու այս ափերուն վրայ, նաեւ երկրորդ սերունդն ալ կը պահէ տակաւին բնիկ ավանդութիւնները, բնիկ ջերմութիւնը եւ ինչ որ սփոփարար եւ յուսադրիչ երեւոյթ է, կան կառոյցներ, որոնք մեծ չափով կամ մեծ մասամբ կրնան երաշխաւորել այս ոգիին, ազգային բնիկ ոգիին եւ ավանդութիւններուն, մեր ինքնութեան գոյատեւումը: Յետեւաբար, ինծի համար, այս տեսանկիւնէն ալ սփոփարար այցելութիւն մը եղաւ եւ կը փափաքիմ օգտուելով այս առիթէն, իմ ջերմ ու շատ անկեղծ շնորհակալութիւններս յայտնելու զիս հրաւիրողներուն եւ թէ ձեռնարկը կազմակերպողներուն, յատկապէս «Յամազգային»ի վարչութիւններուն եւ բոլոր ժրաջան անդամներուն:

«ՀՈՐԻՉՈՆ»
29 Յունիս 1987



**Չախէն աջ՝
Գրիգոր Հոթոյեան, արուեստագէտ նկարիչ-քանդակագործ
Յակոբ ճանապազեան, Հոլանտայէն գեղանկարիչ Գրիգոր Սոմճեան
եւ արուեստագէտ նկարիչ Գալուստ Պապեան**

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ՄՈՄՃԵԱՆ ՀԵՏ

3. Սիրելի Գրիգոր, լսաց էինք Երուսալայի մէջ քու ունեցած յաջողութիւններուն մասին, սակայն քեզ տեսնելու եւ գործերդ վայելելու առիթ չէինք ունեցած: Հիմա որ այդ առիթը տրուեցաւ մեզի, կը տեսնենք որ նկարներդ իրապէս ցոյց կու տան արւեստագետի ակնբախ կոչումը: Սակայն, ինչ որ զիս զարմացուց, ազգային հզօր ոգիդ եւ հայերէնդ՝ մաքուր ու զուլալ: Կ'ուզէինք տեղեկանալ, որ հայկական զգացումներդ եւ հայերէնագիտութիւնդ ուրկէ՞ կու գան:

Պ. Վստահաբար իմ Երուսաղէմէն ըլլալս շատ կարելոր ձեւով ազդած է իմ ապագայի արուեստիս զարգացման: Մանաւանդ, երբ մաքուր միտքով, հազիւ 14 տարեկան, ընդունուեցայ Երուսաղէմի հայոց պատրիարքութեան դպրեվանքը եւ մինչեւ 17 տարեկան, երեք տարի, հայեցի եւ կրօնական կրթութիւն տրուեցաւ ինծի: Հոն կը շնչէինք հայկական մաքուր երաժշտութիւնը՝ ամէն առաւօտ եկեղեցի երթալով: Իսկ դպրեվանքին մէջ մեզի կը դասաւանդուէր հայ մշակոյթը, գրականութիւնը եւ մեր արւեստի պատմութիւնը ընդհանրապէս:

Այս բոլորը հիմնական աւիշ մը եղան ինծի համար, եւ ժամանակի ընթացքին կամաց-կամաց, ինչպէս իր արմատէն զօրացած ծառ մը, այդ աւիշը բարձրացաւ մէջըս: Արդէն մանկութենէն նկարչութեան հանդէպ որոշ հետաքրքրութիւն եւ սեր կը տածէի: Իսկ դպրեվանքին մէջ, ինծի առիթ տրուեցաւ գործնական քայլեր առնելու: Երբ տօնական օրերու առթիւ զծագրութեան պէտք զգացուէր՝ ինծի կը դիմէին:

3. Նախակրթութիւնդ ո՞ր ստացած ես:

Պ. Նախակրթութիւնս ստացած եմ Պէյրութի Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վարժարանին մէջ, որ մեր շրջանի ամենամօտիկ դպրոցն էր: Յետոյ, Երուսաղէմ գացի: Վերադարձայ Պէյրութ եւ յաճախեցի Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարան՝ զօրացնելու համար որոշ նիւթեր, ինչպէս արաբերէն, թուաբանութիւն, հաշակալութիւն:

Երկրորդականը աւարտելէ ետք մտայ Լիբանանեան համալսարանի արուեստի բաժինը, եւ տիրացայ ներքին ճարտարապետութեան վկայականին: Կ'ուզէի կարենալ օգնել իօրս, որուն ուսերուն ծանրացած էր բազմանդամ ընտանիքի մը ապրուստի հոգը:

Հինգ տարի համալսարան յաճախեցի: Միշտ դպրոցի առաջինն էի, միակ հայը ըլլալով: Ամէն տարի համալսարանի տնօրէնութիւնը նուէրներով կը գնահատէր իմ կարողութիւնս: Արժանացայ նաեւ երեք տարուան կրթաթոշակի, արտասահման մեկնելու եւ մասնագիտանալու նկարչական արուեստին մէջ:

3. Արտասահման մեկնելով ո՞ր ուսանեցար:

Պ. Նախ Իտալիա գացի եւ յաճախեցի «Ինիվերսիթա Էնթերնասիոնալէ տելլէ Արթէ»՝ Ֆլորանսի մէջ:

Անկէ ետք անցայ Փարիզ՝ երկու տարի:

Երբ Ֆլորանս էի, Միքէլ Անճելոյի, ՏանՎինչիի եւ ուրիշներու գործերը խորապէս ուսումնասիրեցի: Ֆլորանսի թանգարանները երկրորդ տունս եղան:

3. Զանդակագործութիւն փորձած ես:

Պ. Այո՛, փորձած եմ: Վերջերս Հոլանտայի մէջ քանդակ մը պատրաստեցի, անշուշտ պատուէրով, չորս մեթր բարձրութեամբ քանդակ մըն է:

3. Փարիզի մէջ ո՞ր արուեստի դպրոցները յաճախեցիր:

Պ. Երկու տարի ուսանեցայ արուեստի գանազան դպրոցներուն մէջ, ամէն մէկ դպրոցին մէջ մասնագիտութիւն մը կար, որ կ'ուզէի ձեռք ձգել:

3. Երբեք տարուան կրթաթոշակի աւարտումէն ետք ո՞ր գացիր:

Պ. Երբ կը պատրաստուէի Լիբանան վերադառնալու՝ դասաւանդելու համար Լիբանանեան համալսարանին մէջ, 1975ին, արդէն քաղաքացիական կռիւները սկըսած էին Լիբանանի մէջ եւ համալսարանը թիրախ դարձած էր ահաւոր յարձակումներու:

Մնացի Փարիզ: Որպէսզի ապրուստս ապահովեմ, անմիջապէս ճարտարապետներու մօտ իմ մասնագիտութեան համաձայն գործ գտայ: Միայն չորս օր կ'աշխատէի եւ ուրբաթ, շաբաթ եւ կիրակի օրերը կը յատկացնէի նկարչութեան:

3. Կ'ըսեն թէ Փարիզը մշակոյթի կեդրոն է, ի՞նչ բան մղեց քեզ որ Զոլանտա հաստատուեցար:

Պ. Նախ ըսեմ, որ Ֆլորանս եղած շրջանիս Զոլանտա այցելած էի եւ շատ տըպաւորուած: Երկրորդ, բախտի բերմամբ ծանօթացած ըլլալով հոլանտացի կնոջ, այդ դիւրացուց Զոլանտա հաստատուելու իմ մտադրութիւնս: Զոս կ'ուզեմ ընդգծել, թէ հոլանացի կինս արդէն հայացած է, հայերէն կը խօսի եւ կը գրէ եւ մինչեւ իսկ գաւակներուս հայերէն դաս կու տայ:

Ուրեմն, իմ Զոլանտա հաստատուելուս գլխաւոր պատճառը այն էր, որ զըզւած էի Փարիզէն եւ տեղ մը հասած էր, որ չէի կրնար երկու գործ միեւնոյն ատեն ընել: Կ'ուզէի միայն նկարչութեամբ զբաղիլ:

3. Փարիզի մէջ չէի՞ր կրնար:

Պ. Չէի ուզեր, որովհետեւ կ'ուզէի ետ դառնալ բնութեան: Բնութեան մէջ կ'ուզէի ինքզինքս գտնել: Երբ առաջին անգամ Զոլանտա գացի, մեծապէս տպաւորուեցայ: Արդէն երբ որ սահմանը կ'անցնիս, կը զգաս: Բնութիւնը ամբողջութեամբ կը փոխուի: Կը սկսի կանաչնալ, հորիզոնը կը տեսնես, գրեթէ լեռ չկայ: Տափակ երկիր մըն է եւ խաղաղութիւն կը զգաս: Առողջ երկիր է եւ այդ կարելոր է ինձի համար: Ուրեմն, հոն իրապէս ինքզինքս գտնելու կարելիութիւնը ընծայուեցաւ: Ասիկա 1979ին է, ճիշտ տասը տարի առաջ:

3. Ինչպէ՞ս սկսար նկարչութեան եւ ինչպէ՞ս նշանաւոր անուն դարձար Զոլանտայի նման երկրի մը մէջ, ուր կ'ըսուի թէ մրցակցութիւնները շատ զօրաւոր են եւ քըննադատութիւնը շատ խիստ:

Պ. Առաջին ցուցահանդէսով, որուն պատրաստութիւնը տեսեց մէկ տարի: Ցուցահանդէսին ներկայացուցի իւղաներկով եւ ջրաներկով նկարներ, ներշնչուած բնութենէն: Մարդը բնութեան մէջ շարքով:

Անշուշտ քննադատները մեկնաբանելով գործերս ըսին. այդ մարդը դուն ես: Այդ առանձնութիւնը քու աշխարհն է եւ ինքզինքդ հոս առանձին կը զգաս: Բնականաբար այդ ձեւով չէի մտածած: Բնականօրէն եղած էր ատիկա: Ինձի համար առանձնութիւնը ոչ թէ մարդու մը առանձին ըլլալն է, այլ ընդհանրապէս մարդը: Երբ ինքն իր մէջ ամփոփուած է, միշտ առանձին է եւ միեւնոյն ատեն չէ, նայած թէ ինչպէս կը տեսնես:

1980ին, առաջին ցուցահանդէսին խնձորի պատկերը ներկայացուցի. իբրեւ աշխարհի խորհրդանիշ, կլոր ձեւը՝ ներդաշնակութիւն, իսկ խնձորը ամբողջութեամբ բնութենէն տարր մը, որ ամէն օր կը տեսնենք, կ'ուտենք, բայց իր գեղեցկութիւնը չենք վայելեր: Չենք անդրադառնար, որ ան մաս կը կազմէ մեր բնութեան՝ երկրագունդին: Ուզեցի որ մարդիկ զգան այս ամէնը:

3. Այսինքն զգան որ իրենք աշխարհի մը մէջ կ'ապրին եւ այդ աշխարհը իսկապէս գեղեցիկ է:

Պ. Այո, ճիշտ այդպէս: Չգան աշխարհի գեղեցկութիւնը եւ հոգ տանին այդ գեղեցկութիւնը անաղարտ պահելու: Եւ այդպէս ալ գրուած էր թերթին մէջ, որ մարդիկ կարդան եւ անդրադառնան: Ես նոյնիսկ խնձորներ քանդակեցի եւ դրի տուփերու մէջ: Մարդիկ կու գային կը դիտէին, կը կարդային բացատրութիւններս. «Խնձորներուն

նայեցեք, առաջին ակնարկով բոլորն ալ իրար կը նմանին, սակայն, ոչ մէկը միւսին նման չէ: Ինչպէս մարդիկ, բոլորը իրարու կը նմանին, մարդ են, սակայն, խորքին մէջ ամեն անհատ առանձին է»:

Այս փիլիսոփայութեամբ սկսայ, իրականութիւնը եւ երազը, այս երկու գաղափարները ուզեցի մարդոց փոխանցել ուրիշ գործերով եւս: Չոր օրինակ սոխ մը առած էի: Գիտէք թէ սոխը եթէ մնայ ծիւ կ'արձակէ, կը մեծնայ եւ ուրիշ ձեւեր կ'առնէ: Այդպէս կը գծէի, հետաքրքրական գտայ, որ յաջորդ օր սոխը նախկինը չէր: Ուրիշ ծիւ տուած էր, աւելի երկարած էր երկրորդ, երրորդ օրը նկատեցի որ ուրիշ ծիւ մը եւս տրւած է եւ բաւական մնացած: Մէկ ամիս ետք այդ ծիւերը չորցան: Սոխը սկսաւ պզտիկնալ, տեսակ մը եղաւ: Ճիշտ մարդուն պէս: Ինչպէս մեծցաւ, գեղեցկացաւ եւ ետ պըզտիկցաւ, ծերացաւ, մաշկը փոխուեցաւ: Ես այդ սոխը պահած եմ տակաւին եւ ցուցահանդէսին ալ ներկայացուցի: Եւ այդ նկարները գծեցի բոլոր արարներով, փիլիսոփայութիւն մը, որ կը նմանի մարդու կեանքին:

3. Երբ առաջին ցուցահանդէսով որոշ յաջողութիւն արձանագրեցիր, պաստառներդ գնողներ եղա՞ն:

Պ. Այո, շատ գնողներ եղան, մամուլի մէջ եւս գրուեցաւ: Իսկ Յունաստանէն պրն. Նուպար Եսայեան, խումբ մը հայերով այցելեց ցուցահանդէս եւ «Ազատ Օր»-ին մէջ գնահատական յօդուած մը գրեց:

Այդ ցուցահանդէսէն ետք արդէն յաջողութեան դռները բացուեցան: Մէկ տարի ետք հրաւեր ստացայ թանգարանի մը մէջ ցուցահանդէսի մը մասնակցելու: Ասիկա շատ արագ եղաւ: Չէի սպասեր: Երբ թանգարանի տնօրէնը արուեստաբան մը դրկած էր քովս, որ գործերս տեսնէ, իրապէս զարմացայ:

Ցուցահանդէսին վայրը ընդարձակ թանգարան մըն էր: Ամեն տարի Լայտընի շրջանէն երեք նշանաւոր նկարիչներու գործերը կը ներկայացուէին: Լայտընը նշանաւոր գեղանկարիչ Ռամպրանի ծննդավայրն է:

Ուրեմն, այս իմ առաջին մեծ ցուցահանդէսը եղաւ: Մեծ ծաւալով պաստառներ ցուցադրած էի: Բնաբանը՝ մարդը բնութեան մէջ:

Դիտողները կը զգային որ մարդը կը տեսնէր իր շրջապատը: Խնձորի հարցը վերջացած էր արդէն: Ուրեմն, հոն մարդը եւ բնութիւնն էին: Երբ ցուցահանդէսը վերջացաւ, արդէն ցուցասրահներէն սկսան հրաւերներ գալ: Մասնաւորապէս Ամսթերտամէն:

Ես կ'ապրիմ Ամսթերտամէն 35 քմ. հեռու գտնուող Վալպրուիէ գիւղաքաղաքին մէջ, Լայտընէն տասը քմ. հեռու: Շատ խաղաղ բնակավայր մըն է: Մօտերը լիճ մըն ալ կայ, բաւական մեծ լիճ մըն է: Աշխատանքէն ետք, հեծիկով եւ երբեմն քալելով լիճին շրջանը կ'ընեմ եւ յագեցած բնութեան գեղեցկութիւններով՝ տուն կը վերադառնամ:

3. Ուրեմն Ամսթերտամի մէջ ալ յաջողութիւն ունեցար...

Պ. Արդէն, 1983ին, երբ ցուցասրահները սկսան ցուցադրել գործերս, իմ մասին ընդարձակ յօդուածներ սկսան գրուիլ արուեստի թերթերուն մէջ, յատկապէս «Թըր-ուա»-ի:

3. Հայ ըլլալդ կը յիշէի՞ն յօդուածներուն մէջ:

Պ. Անշուշտ, միշտ կը յիշէին եւ կը գրէին. «Նկարիչ մը որ կը փնտռէ ներդաշնակութիւն», աւելցնելով հայ ծագումը, Լիբանան ծնած ըլլալս եւ լայն ծանօթութիւններ հայութեան անցեալին, պատմութեան եւ մշակոյթին շուրջ:

Յաջորդ տարի, երբ ուրիշ ցուցասրահի մը մէջ աւելի մեծ ցուցահանդէս մը ունեցայ, ուրիշ արուեստի քննադատ մը, որ «Ետուին» պարբերաթերթին խմբագիրն է միեւնոյն ատեն, երկու էջ գրեց իմ մասին՝ գունաւոր նկարներով:

Երբ նման յօդուած մը լոյս կը տեսնէ լաւագոյն պարբերաթերթին մէջ, մասնաւոր գովեստով, բոլոր թանգարանները եւ արուեստաբանները կ'ընդունին որ եւթական որակի բարձր մակարդակով նկարիչ մըն է:

3. Քու հասկացողութեամբ, կիրարկած արուեստդ գեղանկարիչական ո՞ր դպրոցին կը պատկանի:

Պ. Ընդհանրապէս, իմ գործերուս շուրջ արտայայտուող արուեստի քննադատները զիս չկրցան որեւէ դպրոցի կապել: Հաւանաբար, ըսին, վերջին երկու-երեք տարիներու ընթացքին հռչակ ստացած իտալացի, գերմանացի, եւ այլ արուեստագետներու կարգին կրնաք դասել, իբրեւ նոր Էքսպրեսիոնիսթ: Այս բառը կը նշանակէ արտայայտչականներ, ոչ թէ իրականութիւնը ընդօրինակողներ, այլ՝ արտայայտել ինչ որ կը զգաս եւ մէջդ է: Չոր օրինակ փոխանակ կրակ մը վառելու, այդ զգացումը իր ձեւով կ'արտայայտէ:

3. Ի՞նչ են մերձաւոր ապագայի ծրագիրներդ:

Պ. Հիմա կը պատրաստուիմ իմ յաջորդ ցուցահանդէսին: Պատրաստութիւնը, հաւանաբար 18 ամիս խլէ: Ցուցահանդէսը պիտի կազմակերպուի երկու թանգարաններու կողմէ, առանձին-առանձին, հաւանաբար իրերայաջորդ կերպով: Սակայն, նոյն գործերով պիտի չներկայանամ երկու ցուցահանդէսներուն: Անոնցմէ մէկը շատ մեծ ցուցահանդէս մըն է եւ կը ծրագրեմ մեծ պաստառներ ցուցադրել հոն: Կ'ուզեմ նոր գործերս ցոյց տալ, որոնք արդէն գծագրուած են ուղեղիս մէջ:

3. Քանատա գալով ստեղծագործական նոր գաղափարներ յղացա՞ր:

Պ. Վստահ եմ այդ որոշ ազդեցութիւն պիտի ունենայ: Մտքիս մէջ շատ զօրաւոր է տարիներով փնտռած ճամբաս: Հոս կ'ուզեմ ընդգծել, թէ նկարիչ մը որոշ փիլիսոփայութիւն մը պետք է ունենայ: Եթէ այդ փիլիսոփայութիւնը զգացած դրոշմով կըրցաւ պատկերացնել, յաջողութեան ճամբան գտած է այլեւս:

3. Ի՞նչ խորք եւ խորհուրդ կը պարունակէ քու փիլիսոփայութիւնդ:

Պ. Նոյնն է, մարդը եւ բնութիւնը, այն իմաստով որ երբ բնութիւն կ'ըսեմ, ամէն բան կը պարունակէ: Իրականութիւնը այս պարագային, գալիք գործերուս մէջ երկուութիւն (տիւալիթէ) մը կայ, իրականութիւնը եւ երազը: Այս երկուութիւնը պիտի փորձեմ: Արդէն ունիմ կարգ մը գործեր այդ գաղափարով գծուած:

Կը ծրագրեմ այս երկուութիւնը արուեստի միջոցաւ տալ, ի՞նչ է իրականութիւնը, ի՞նչ է երազը, կամ արուեստը ըսենք, որով արուեստը ուրիշ բան է: Իրականութիւնը չենք կրնար ընդօրինակել: Ծառ մը ներկայացնել ինչպէս որ է՝ շատ իմաստ չունի, թէւ լուսանկարչութեամբ կրնաս այդ պատկերը տալ: Ինչ որ դուն կրնաս զգալ, ամէն մարդ կը զգայ: Այդ ծառը դիտելով եթէ կրնաս զգացումդ պաստառի վրայ դնել՝ նորութիւն մը բերած կ'ըլլաս: Նոր զգացում մը կու տաս դիտողին: Աղիկայ հետաքրքրական է:

Իրականութիւնը չես կրնար ընդօրինակել, որովհետեւ իրականութիւնը գեղեցիկ է: Երբեք իրականութեան գեղեցկութիւնը չես կրնար ընդօրինակել իրապաշտօրէն, այդ է իմաստը: Անշուշտ ժամանակին կ'ընէին, ուրիշ ճար չկար: Միայն նկարիչը կրնար պատկեր մը ձեւով մը արտատպել՝ որպէս պատկեր:

3. Ըստ երեւոյթին, մշակած արուեստիդ գաղափարը համաշխարհին նիւթեր կը պարունակէ եւ ամէն ազգի մարդու համար ընդունելի եւ հասկնալի: Սակայն, ցուցահանդէսիդ ներկայացուած նկարներուն կարգին հայկական զգացումներդ արտայայտող շարքի մը հանդիպեցանք, որ մեծ ընդունելութիւն գտաւ ցուցահանդէսիդ ներկայ եղող հայրենակիցներուդ կողմէ: Որչափ ժամանակ է ի վեր կը մշակես մեզի համար շատ սիրելի այս թեման:

Պ. Ասկէ մէկուկէս տարի առաջ անմահ Կոմիտասին նուիրուած ցուցահանդէս մը ունեցայ մեր գիւղաքաղաքի թանգարանին մէջ: Թաղապետը բացումը կատարեց: Բոլոր այցելողները շատ սիրեցին ցուցադրուած նկարները:

Բացումէն ետք, ներկաներէն խնդրեցի որ պահ մը լռութեամբ մտիկ ընեն Կոմիտասի «Կռունկ» երգը՝ երգուած Լուսինէ Չազարեանի կողմէ: Մարդիկ ուղղակի փը-

շաքաղուած էին: Զանի մը հոգի ինծի մօտեցան եւ ըսին. «Այս ինչ երաժշտութիւն է: Կոմիտասի երաժշտութիւնը»:

Ես այդ նկարները գծած եմ Կոմիտասի երաժշտութենէն ազդուած: Այս առթիւ հոլանտացի մը Կոմիտասի նուիրուած նկարներու շարքէն հինգ նկար գնեց:

**3. Նոյն նկարներէն երկրորդ մը գծա՞ծ ես արդեօք: Դոս ցուցադրուածները ա-
սոնց օրինակներն են:**

Պ. Ո՛չ: Նոյնը չեն: Գաղափարը անշուշտ ետ կու գայ գործերուն մէջ, նոյն գա-
ղափարը կրնայ կրկնուիլ, բայց բոլորովին ուրիշ ձեւով: Ես երաժշտութիւնը կը գոր-
ծածեմ որպէս ներշնչման աղբիւր, բայց Կոմիտասի երաժշտութիւնը տարբեր է, սըր-
տիս շատ կը խօսի, քանի հայկական իւրայատուկ երաժշտութիւնն է:

Ուրեմն, ես ալ որպէս հայ արուեստագէտ ուզեցի այդ խողովակով, ներշնչման
իբրեւ աղբիւր արտադրել կոմիտասեան պաստառներու շարքը:

3. Ապագայ ծրագիրներուդ մէջ հայկական ինչպիսի՞ ծրագիրներ կան:

Պ. Դայկական ծրագիր ըսելով, մասնաւորաբար խաչքարը զիս շատ հրապու-
րած է 1982էն ի վեր: Արդէն շարք մը ունիմ հայկական խաչքարերու, հայաստանեայց
եկեղեցւոյ: Ինչպէս որ տեսաք, հայկական եկեղեցւոյ գմբէթը պատկերացնող նկարը
նոր գործ մըն է: Այդ նկարը կ'ըսէ. մարդիկ փորձեցին հայկական եկեղեցին փլցնել,
ծռել՝ (ինչպէս որ նկարին մէջ կ'երեւի, գմբէթը քիչ մը ծուռ ըրած եմ) բայց երբեք՝ տա-
պալել: Կը ծռի, բայց միշտ ետ կը շտկուի:

**3. Կրկին դառնանք ապագայ ծրագիրներուդ: Դայաստան այցելա՞ծ ես արդ-
եօք:**

Պ. Ծրագիրներուս մէջ կայ նման այցելութիւն մը, սակայն առայժմ հոս այն-
քա՛ն զբաղած եմ, որ անմիջապէս չեմ կրնար գործադրել փափաքս: Դայաստանէն
կարգ մը պատասխանատու մարդիկ երբ Դոլանտա եկած էին, ըսին որ անպայման
Դայաստան այցելեմ եւ հոն ցուցահանդէս մը կազմակերպուի: Ըսի, լաւ, այդ՝ ապա-
գայի ծրագիր է, բայց ներկայիս իմ նպատակս ուրիշ բան է: Դուք հոն գացեք, խօսե-
ցեք, որպէսզի կարելի ըլլայ Դոլանտայի մէջ Դայաստանի նշանաւոր գեղանկարիչնե-
րու գործերով ցուցահանդէս մը կազմակերպել, որպէսզի հոլանտացի ժողովուրդը
ծանօթանայ հայկական արուեստին: Ես իմ կարելի օգնութիւնս բերելու պատրաստ
եմ, քանի որ մօտէն ծանօթ եմ թանգարաններու եւ ցուցասրահներու պատասխանա-
տուններուն:

3. Ի՞նչ է տպաւորութիւնդ Գանատայէն:

Պ. Թորոնթոյի եւ Սոնթրէալի ցուցադրած նկարներս ունեցան խանդավառու-
թեամբ ու հետաքրքրութեամբ դիտուեցան Գանատայի հայութեան եւ այցելող կարգ
մը օտարներուն կողմէ: Ամէն պարագայի, իմ խորին շնորհակալութիւններս կը յայտ-
նեմ «Դամազգային»ին, որ կարելի դարձուց զոյգ ցուցահանդէսներու կազմակերպու-
մը: Ընորհակալ եմ եւ երեսխտապարտ՝ ինծի հանդէպ ցոյց տրուած յարգանքին, հո-
գածութեան եւ գուրգուրանքին համար, որուն պատիւը անպայմանօրէն կ'երթայ հայ
մշակոյթին եւ արուեստին, որուն ծառայութեան կոչուած ենք բոլորս:

**«ԴՈՐԻՉՈՆ»
26 Յունիս 1989**

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ ԷԼԵՆԱ ՊՈՆՆԸՐԻ ՀԵՏ

19-22 Փետրուար 1991ին, Թորոնթոյի Եորք Համալսարանի կողմէ կազմակերպուած Խորհրդային Միութեան նուիրուած գիտաժողովին, Հայ Դատի Կեդրոնական Յանձնախումբին հրաւէրով մասնակցեցաւ նաեւ Խորհրդային Հանրային գործիչ Էլենա Պոննըր (հանգուցեալ նշանաւոր գիտնական ալլախոհ Անտրէ Սախարովի այրին), որուն հետ հետեւեալ հարցազրոյցն ունեցան Հայ Դատի Կեդրոնական Յանձնախումբի անդամ ընկեր Արիս Պապիկեան եւ Թորոնթոյի մեր թղթակիցը՝ ընկեր Գրիգոր Հոթոյեան:

Հ. 20 Փետրուար 1988ին Արցախի հարցը ժողովրդային պռոթկումով վերածուել էտք, Տոքթ. Անտրէ Սախարովի եւ ձեր ղեկավարութեամբ, Խորհրդային հինգ գիտնականներէ բաղկացած յանձնախումբ մը, Կեդրոնական կառավարութեան յանձնարարութեամբ այցելել Ղարաբաղ, Հայաստան եւ Ատրպէյճան, ուսումնասիրելու ստեղծուած կացութիւնը եւ արդար լուծման համար տեղեկագիր մը պատրաստելու եւ ներկայացնելու պատկան իշխանութեան: Կրնա՞ք հակիրճ ձեռով կարգ մը տեղեկութիւններ տալ ձեր ուսումնասիրութեան արդիւնքին եւ յանձնարարութեան շուրջ:

Պ. 1988ը Դեկտեմբերի սկիզբը, հինգ հոգիէ բաղկացած յանձնախումբով մը այցելեցինք այդ շրջանները, յուսալով որ խաղաղ, համերաշխ եւ արդար լուծում մը կրնանք գտնել: Մեր ծրագիրն այն էր, որ հանրաքուէ կատարուի շրջանի քաղաքներուն եւ գիւղերուն մէջ եւ բնակչութիւնը իր ազատ կամքն արտայայտէ՝ համաձայն Խորհրդային Միութեան սահմանադրութեան:

Մեր այցելութեան ընթացքին դժբախտաբար հանդիպեցանք Ատրպէյճանական իշխանութիւններու սուր եւ ամբարտաւան հակադրութեան եւ սպառնալիքներուն: Գալով հայերուն, անոնք թէեւ գոհ չէին իրավիճակէն եւ մեր ծրագրէն, բայց քաղաքավար եւ ազնիւ վերաբերմունք ցոյց տուին մեզի:

Մեր առաքելութիւնը ձախողեցաւ, որովհետեւ Կեդրոնական կառավարութիւնը լրջօրէն չհետեւեցան յանձնախումբի աշխատանքներուն եւ թելադրանքներուն, որովհետեւ ան չէր ուզեր Ղարաբաղի հարցին խաղաղ ու արդար լուծում մը գտնել:

Հ. Ակառի ունենալով, որ նոր ժամանեցիք Խորհրդային Միութենէն, նոր տեղեկութիւններ ունի՞ք Արցախի ժողովուրդին ներկայ վիճակէն եւ անոր պարտադրուած պայմաններէն:

Պ. Արժանաւոր աղբիւրներու համաձայն, հարցը տակաւին լուծում չէ գտած եւ շատ լարուած կացութիւն մը կը տիրէ հոն, որովհետեւ բանակը յստակօրէն հակահայ քաղաքականութիւն մը որդեգրած է եւ Ատրպէյճանցիներու ի նպաստ դիրք որդեգրած: Բանակը իր հրահանգները կը ստանայ Մոսկուայի կողմէ նշանակուած Ատրպէյճանի համայնավար կուսակցութեան Բ. քարտուղար Փոլիանիչքոյէն: Անշուշտ, ան իր կարգին, Ատրպէյճանցիներու հետ գործակցաբար ծրագրած են տեղւոյն հայութիւնը սովի մատնել եւ իրենց մարդկային իրաւունքները բռնաբարել, ստիպելու անոնց, որ լքեն իրենց հայրենի օճախը եւ հեռանան կամ ուժի միջոցաւ տեղահանուի ենթարկեն եւ այս ձեռով Ղարաբաղի հարցը լուծել իրենց հասկացողութեամբ, ինչպէս որ այդ ձեռով լուծեցին հայկական Նախիջեւանի հարցը: Ինչպէս գիտեք, այսօր, փաստօրէն Նախիջեւանի մէջ հայութիւն գոյութիւն չունի:

Կարմիր Բանակը Արցախ չզննաց արիւնահոսութիւնը կեցնելու, այլ՝ Ատրպէյճանցիներուն օգնելու: Արցախի հայութիւնը այսօր, քսաներորդ դարու հայկական Բ. ցեղասպանութեան սեմին կը գտնուի եւ դժբախտաբար, քաղաքակիրթ Արեւմուտքը

անտարբեր է եւ ինքզինք կը ձեւացնէ, թէ անտեղեակ է կատարած դաւադրութիւններէն:

3. Արտայայտուեցաք, որ Արցախի հայութիւնը նոր ցեղասպանութեան մը վերջնական տակ կը գտնուի: Որքանով լուրջ է այս մտահոգութիւնը եւ ի՞նչ միջոցներու պէտք է դիմենք, առաջին առնելու համար նման ծրագրի մը գործադրութեան:

Պ. Ես կը կարծեմ, որ հանրութիւնը, մամուլը եւ միջազգային գաւազան կազմակերպութիւններ յաճախի հանդիպումներով, ելոյթներով եւ հրապարակային ասուլիսներով պէտք է միջազգային հանրային կարծիքը տեղեակ պահեն Արցախի մէջ պատահածներէն, որպէսզի մարդիկ սթափին եւ գործնական քայլերու դիմեն, առաջին առնելու համար նման անմարդկային եւ բարբարոսական արարքի մը: Պէտք է Արցախի ժողովուրդին օգնել տնտեսական եւ նիւթական միջոցներով, որպէսզի յաջափարտ իրեն պարտադրուած պաշարումը եւ դուրս գայ սովի ենթարկուելու վտանգէն:

Կը հասկնամ, որ բաւական ծանր ու դժուար է նման օգնութիւն հասցնելը, որովհետեւ Ատրպէյճանցիները արգելք կը հանդիսանան, մինչեւ իսկ Խորհրդային Միութեան երեսփոխաններուն Արցախ մուտքը արգիլելով: Չեմ գիտեր, թէ ի՞նչպէս կարելի է այդ օգնութիւնը հասցնել: Պէտք է փորձել ամեն միջոց, ինչպէս Միջազգային Կարմիր Խաչը եւ Միջազգային այլ կազմակերպութիւնները: Պէտք է բախել ամեն դուռ, փրկելու համար Արցախի հայութիւնը ցեղասպանութեան վտանգէն:

3. Ինչպէս գիտեք, Կորպաչովի կողմէ յայտարարուած հրապարակայնութեան եւ վերակառուցման քաղաքականութեան հետեւանքով Արցախի հարցը վերարժանուեցաւ Արցախի Խորհրդարանի պատմական որոշումով: Դ՞այ ժողովուրդը Արցախի եւ Դայաստանի մէջ զօրակցական ցոյցերով աջակցեցան Կորպաչովի քաղաքականութեան, այն յոյսով, որ Կորպաչով պիտի ուզէ 70 տարիներու Արցախի ժողովուրդին պարտադրուած անարդարութիւնը եւ մարդկային իրաւունքներու բռնաբարումը սղոթագրել, բայց, դժբախտաբար, հայ ժողովուրդի յոյսերը ի դերեւ ելան: Արդեօք ի՞նչ են հիմնական պատճառները Կորպաչովի կողմէ կիրարկուած այս հակահայ քաղաքականութեան:

Պ. Ես կը կարծեմ, որ Կորպաչով բացարձակապէս հրապարակայնութեան եւ վերակառուցման անձ չէ եղած: Միապետական վարչակարգը որ գոյութիւն ունէր իրմէ առաջ, մինչեւ հիմա կը մնայ անփոփոխ: Իր յայտարարած լոզունգները իրականութեան չեն համապատասխաներ: Սկիզբը, Խորհրդային ժողովուրդները հաւատացին իրեն: Ազատութեան եւ Ինքնորոշման ժողովրդային շարժումը Խորհրդային Միութեան մէջ սկսաւ երեւանէն: Երեւանի առաջին ցոյցերը կազմակերպուեցան Կորպաչովի անունով եւ անոր յայտարարած գոյգ քաղաքականութեան որպէս զօրակցութիւն: Դայաստան ուզեց առաջին վերափոխուած հանրապետութիւնը ըլլալ եւ օգնել Կորպաչովին՝ իր այս քաղաքականութիւնը յաջողցնելու համար: Դժբախտաբար, Կորպաչով, առաջին օրէն իսկ զօրաւորին կամ ուժին կողմը բռնեց, կողմնորոշուեցաւ դէպի Ատրպէյճանցիները եւ ոչ թէ՛ ճշմարտութեան եւ արդարութեան կողմը:

3. Արդեօք կը կարծեք, թէ բանթուրանիզմը եւ թրքախօս հանրապետութիւններու միացման վտանգը պատճառներէն մէկն է Արցախի հարցին արդար լուծում մը գտնելու Կորպաչովի խափանարարութեան:

Պ. Իմ կարծիքով, Կորպաչով մտահոգուած չէ բանթուրանիզմով: Իրեն համար Ատրպէյճանը անելի կշիռ ունի եւ կարելոր է ներքին Խորհրդային քաղաքականութեան եւ կուսակցութեան շահերը նկատի ունենալով:

3. Խորհրդային Միութեան մտաւորականները եւ արդարադատ պետական գործիչները ի՞նչ ձեւով կը փորձեն Արցախի ժողովուրդին օգնել եւ Արցախի ողբալի կացութիւնը հանրութեան ներկայացնել:

Պ. Անվարան կրնամ յայտարարել, թե շատ քիչեր են, որ գործնական ձեռով օգտակարություն կ'ունենան ի նպաստ Արցախի ժողովուրդի արդար պահանջատիրություն: Խորհրդային Միության Մտաւորականութեան մեծամասնութիւնը տեղեակ չէ Արցախի պատմութենէն եւ իրադարձութիւններէն: Իսկ ուրիշ խումբ մը, որ տեղեակ է, բայց չուզէր խօսիլ կամ արտայայտուիլ այս հարցին շուրջ, որովհետեւ, իրենց կարծիքով Արցախի հարցը բարդ եւ սուր հարց է: Ուրեմն, պէտք է քարոզչական աշխատանք տանիլ, ո՛չ թէ միայն մտաւորականութեան, այլ՝ Խորհրդային հանրային կարծիքին եւս փոխանցել Արցախի պատմական, իրաւական եւ այժմեական իրողութիւնները: Մինչեւ այսօր, Խորհրդային Միության Մտաւորականութեան մեծամասնութիւնը եւ ժողովուրդները տեղեակ չեն, թէ ի՞նչ պատահեցաւ Սումկայիթի, Պաքուի եւ այլ շրջաններու մէջ: Այս ծրագիրը յաջողցնելու համար պէտք է որ հայաստէր խորհրդային, միջազգային եւ հայ մտաւորականութիւնը իրարու հետ գործակցին:

3. Գայլով Զայաստանի կառավարութեան եւ արտերկրի հայութեան, ի՞նչ միջոցներով պէտք է դիմեն նախ ապահովելու Արցախահայութեան ֆիզիքական ապահովութիւնն ու գոյատեւումը, ապա, արդար լուծում մը գտնելու՝ Խորհրդային Միութեան սահմանադրութեան լոյսին տակ:

Պ. Իսկապէս չեմ գիտեր, թէ ներկայ Զայաստանի կառավարութիւնը ի՞նչ կըրնայ ընել, որովհետեւ, Զայաստան դժուարին վիճակի մէջ է ներկայիս: Իսկ արտերկրի հայութիւնը պէտք է իրենց ապրած երկիրներու պայմաններն ու միջոցները օգտագործեն, մասնաւոր ազատ խօսքի իրաւունքը, որպէսզի Արցախի հարցը Միջազգայնայ եւ համայն աշխարհի մտահոգութեան առարկան դառնայ, նամանաւոր՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան: Արցախի հարցը բաւական խրթին է, համահաւասար այն բոլոր տազնապնետուն, որոնք գոյութիւն ունին ներկայիս աշխարհի գանազան շրջաններու մէջ: Ես կը հաւատամ, որ արտերկրի հայութիւնը պարտաւոր է եւ ի վիճակի է Արցախի հարցը միջազգային մակարդակի հասցնելու: Արցախի հարցը պէտք է ըլլայ ձեր առաջնահերթ խնդիրը, որովհետեւ Արցախը չի կրնար երկար ըսպասել:

3. Ձեր հայեցողութեամբ ի՞նչպէս կը տեսնէք Արցախի հարցին արդար լուծումը:

Պ. Իմ կարծիքով նախ պէտք է կատարել ինքնորոշման հանրաքուէ եւ իրաւունքը տալ Արցախի ժողովուրդին, որ իրենք որոշեն իրենց ճակատագիրը: Կորպաչոյով վերջերս Փարիզի մէջ ստորագրեց Եւրոպայի երկիրներու միջեւ գործակցութեան եւ ապահովութեան դաշինքը, ուր ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքը առաջնահերթ տեղ կը գրաւէ: Նոյն պահուն, երբ Կորպաչոյով վերոյիշեալ դաշինքը կը ստորագրէր, իր բանակը Արցախի մէջ Ատրպէյճանցիներու հետ գործակցաբար Արցախահայութիւնը ոչնչացնելու հետամտ էին:

1990ի Օգոստոսին, Շուէտի մայրաքաղաք Օսլոյի մէջ Նոպէլեան հաստատութեան կազմակերպութեամբ եւ հրեաներու ողջակիզումէն վերապրող եւ Նոպէլեան մրցանակաւոր Էլի Ուայզելի նախագահութեամբ խորհրդաժողով մը տեղի ունեցաւ: Այդ խորհրդաժողովին գրաւոր դիմում կատարեցի, որ ՄԱԿի հովանաւորութեամբ յանձնախումբ մը կազմուի Արցախի հարցով զբաղելու համար, որոնք պէտք է Արցախ այցելեն եւ մօտէն հետեւին հոն կատարուող խժժութիւններուն եւ առաջքն առնեն ուժի միջոցաւ հայութեան տեղահանումի փորձերուն:

Նոյն առաջադրութիւնը ներկայացուցած եմ նաեւ Ամստերտամի մէջ Glasnost եւ Perestroika քննող խորհրդաժողովին, ՄԱԿի ընդհանուր քարտուղար Փերեզ Տի Քուէարին, Անգլիոյ, Յնդկաստանի եւ Սպանիոյ կառավարութիւններուն:

Կը հաւատամ, որ նոյնանման քննիչ յանձնախումբի մը կազմութիւնը Արցախի ժողովուրդին համար միակ ապահով եւ օգտակար միջոցն է:

Այս առիթով կոչ կ'ուղղեմ գանատահայութեան եւ Գանատայի հանրային կարծիքին եւ հասարակութեան, որ աջակցին եւ զօրավիգ կանգնին Արցախի հայութեան:

Յ. Նկատի առնելով Հայաստանի Հանրապետութեան քաղաքական կացութիւնը եւ նոր կառավարութեան անկախութեան Գործընթացի հռչակագիրը, բաղդատութեան ի՞նչ եզր կը գտնէք Պալթեան երկիրներու հռչակած անկախութեան յայտարարութեան միջեւ:

Պ. Ի հարկէ, Հայաստանի մէջ գոյութիւն ունի նախագգուշութիւն՝ անկախութեան անմիջական եւ լման գաղափարին շուրջ, ի մտի ունենալով Հայաստանի աշխարհագրական դիրքը: Շատ դժուար է գուշակել, թէ ո՞ր մէկն է ճիշդ որոշումը: Անշուշտ բացարձակ անկախութիւնը աւելի բաղձալի պիտի ըլլար, սակայն, Հայաստան հորհրդային Միութեան 15 հանրապետութիւններէն ամենէն տկար կացութեան եւ դիրքի մէջ կը գտնուի:

Միջազգային պետութիւնները պետք է լաւապէս հասկնան Հայաստանի դժուարին այս կացութիւնը եւ իրենց կարելի միջոցներով քաղաքական եւ տնտեսական աջակցութիւն կատարեն:

Սիրելի՛ էլենա Պոննըր, հայ ժողովուրդը մեծապէս կը զնահատէ ձեզ եւ ձեր հանգուցեալ արդարասէր ամուսնոյն գիտնական Անտրէ Սախարովի կատարած հայանպաստ քաղաքական եւ քարոզչական աշխատանքները՝ ի նպաստ հայ ժողովուրդի արդար պահանջներուն եւ Արցախի ժողովուրդին պահանջատիրական շարժման:

Այս առթիւ ընդունեցէք մեր խորին շնորհակալութիւնները: Վստահ ենք, որ այսուհետեւ եւս ձեր կարելին պիտի ընէք Արցախի հարցը արդարօրէն լուծուած տեսնելու համար:

**«ՀՈՐԻՉՈՆ»
1991**

ՄՏԵՐԻՄ ՉՐՈՅՑ՝ ԵՐԱԺԻՇՏ-ԽՄԲԱՎԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԷՔԻՃԵԱՆԻ ՀԵՏ

Կազմակերպութեամբ Թորոնթոյի Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան վարչութեան, Երեքշաբթի, 24 Սեպտեմբեր 1996, երեկոյեան ժամը 8:30ին, Հայ Կեդրոնի Համազգային «Յ. Մանուկեան» գրադարանին մէջ տեղի ունեցաւ մտերիմ գրոյց. հիւրաբար քաղաքս գտնուող Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբի գեղարուեստական ղեկավար, տաղանդաւոր երաժիշտ-խմբավար Յովհաննէս Չէքիճեանի հետ, որուն ներկայ գտնուեցան հոծ թիւով համազգայինականներ եւ ազգայիններ:

Հայրենի խմբավարը ներկայացուց ընկեր Մարգար Շարապխանեան, տալով անոր կենսագրական ամփոփ գիծերը, անդրադառնալով անոր երաժշտական եւ խմբավարական գործունէութեան՝ Պոլիսէն մինչեւ Հայաստան, վրկայակոչելով իր անձնական հանդիպումներն ու յարաբերութիւնները Հայրենիքի եւ Թորոնթոյի մէջ համբաւաւոր արուեստագէտին հետ:

Խօսք առաւ Յովհաննէս Չէքիճեան եւ Պոլսոյ մէջ իր կատարած խմբավարական աշխատանքներու մասին հակիրճ ծանօթութիւն տալէ ետք, լայնօրէն անդրադարձաւ իր Հայաստան ներգաղթելու թուականէն՝ 1961էն ի վեր, 35 տարիներու իր եւ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբի գործունէութեան, առօրեային, անդամներու ընտրութեան անոնց որակին, շրջագայութիւններուն, եւ Հայաստանի անկախութենէն ետք, 1991էն ի վեր, Հայաստանի ընդհանրապէս մշակութային կեանքին եւ այս պարագային երգչախումբի դիմակալած դժուարութիւններուն, որոնք պատճառ կը դառնան որ մշակութային կեանքը տուժէ եւ արուեստագէտները ապրուստի դժուարութիւն ունենան:

Պրն. Չէքիճեան խօսեցաւ արտասահման կատարած շրջագայութիւններուն եւ 95 անդամներէ բաղկացեալ պետական երգչախումբի ելոյթներուն եւրոպական քաղաքներուն մէջ՝ հազարաւոր ոչ-հայ ունկընդիրներու առջեւ, ծանօթացնելով եւ տարածելով հայ երգն ու երաժշտութիւնը, յատկապէս Կոմիտասի ստեղծագործութիւնները՝ օտարներուն:

Ան ըսաւ, թէ Հայաստանի պետական երգչախումբը արտասահմանի մէջ հայ ազգը կը ներկայացնէր եւ հայու հոգին կը սաւառնէր ելոյթի ընթացքին հանդիսասրահին մէջ: Եւ ամէն անգամ, համերգներու ընթացքին, օտար երաժիշտներու, յատկապէս Կոմիտասի երգերն ու երաժշտութիւնը մեծապէս տպաւորած է ունկընդիրները, որոնք երկար ծափողջոյններով իրենց գնահատանքը յայտնած են:

Ան խօսեցաւ իր Թորոնթօ այցելութեան մասին: Հայաստանի Մշակութային նախարարութեան յանձնարարութեամբ, հայ ժողովուրդի քրիստոնէութիւնը պետականօրէն ընդունման 1700-ամեակին առթիւ, պետական երգչախումբի կատարմամբ Եկմալեան պատարագը արձանագրուած է Հայաստանի սթիւտիոյի մէջ եւ այդ պատարագը Թորոնթոյի մէջ CDով կը պատրաստուի շուրջ 6000 օրինակ, որոնք պիտի ծախուին Հայաստանի մէջ, հատը՝ 20

ամերիկեան տուլար: CDի վրայ արձանագրուած պիտի ըլլայ Եկմարեան պատարագը: 9 վայրկեանի տեւողութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ի պատգամէն ետք, պատարագը կը սկսի «Խորհուրդ Խորին» շարականով մինչեւ վերջ: Պատարագիչն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբաններէն Հոգշ. Տ. Գրիգոր Վրդ. Չիֆթեան:

Պրն. Չէքիճեանի խօսքէն ետք եղաւ հարցումներ, որոնց լայնօրէն պատասխանեց հայրենի հիւրը, հետեւեալ նիւթերու շուրջ:

- Այսպէս, Հայաստանի պետական սկզբնական երգչախումբը հրատարակած է 32 ձայնապնակ:

- Պրն. Չէքիճեան կը ծրագրէ ապագային Կոմիտասեան պատարագով ձայնապնակ կամ CD պատրաստել: Կոմիտասեան պատարագը կ'երգուի միայն արական ձայնով՝ Ա. Թէնոր, Բ. Թէնոր, պարիթոն եւ պաս:

- Հայաստանի կառավարութիւնը կը քաջալերէ երգչախումբի գործունէութիւնը:

- Հայկական պատարագը որեւէ արհեստավարժ խումբ չէ երգած: Առաջինը՝ Հայաստանի պետական երգչախումբը կ'ըլլայ:

- Պրն. Չէքիճեան ունի 32 երաժշտական յօրինումներ, պոեմ, սինֆոնիկ նուագախումբի համար երաժշտութիւն, ձօն, «մէկիկ-մէկիկ», արանժամաններ, եւայլն:

Հարցումներու աւարտին, Մարգար Շարապխանեան շնորհակալութիւն յայտնեց հայրենի նշանաւոր հիւրին այս հանդիպումին համար: Ապա, Համագգայինի վարչութեան ատենապետուհի ընկհ. Սօսի Թաշճեան բեմ գալով, պրն. Չէքիճեանին նուիրեց Պէյրութ տպուած «Շիրակ» երգարանը:

«ՅՈՐԻՉՈՆ»
21 Յոկտեմբեր 1996



Երաժշտ-խմբավար Յովհաննէս Չէքիճեան եւ Գրիգոր Յոթոյեան

ՊԱՐԻ ՀՐԱԽԷՐՔ՝ ՈՐՊԷՍ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՏԻԿԻՆ ԱՐՈՒՄԵԱԿ ՍԱՀԱԿԵԱՆԻ ՀԵՏ

3. Համազգայի Հայ Կրթական և Մշակութային Միության Գանատայի Շրջանային Վարչութեան և Թորոնթոյի «Գլաձոր» Մասնաճիւղի հրաւերով որպէս պարուսոյց չորս ամիս է, որ կը գտնուիք Թորոնթօ: Որպէս Հայրենիքէն եկած արուեստագետ, պատշաճ է, որ ձեզ ներկայացնենք հանրութեան: Կ'ուզէի՞ք հակիրճ ձեռով ներկայացնել ձեր կենսագրութիւնը:

Պ. Եթէ կենսագրականս որոշակի խնդիրների շրջանակով չառնչուէր Սփիւռքի հետ, կարծեմ թէ որեւէ հետաքրքրութիւն չպիտի ներկայացնէր: Համազգայինի հրաւերքն արդէն խնդիր է փաստում: Խնդիրների մէջ է, որ որեւէ պարզ կենսագրական դառնում է իմաստալից, սովորականը՝ անսովոր: Հանրակրթական տասնամեայ դըպրոցին յաջորդած համալսարանական մասնագիտացումս բանասիրութիւնն է (philology), հայոց լեզուի և գրականութեան մասնաճիւղով: Գիտական երեքամեայ յատուկ մասնագիտացումս բանահիւսութիւնն է (folklore): Երեսունչորս տարի է, Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Հնագիտութեան և Ազգագրութեան հիմնարկումի գիտական աշխատող եմ, գիտական թեզս, որ պաշտպանել եմ 1971ին, «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպն է, հրատարակուած հինգ գրքեր, հարիւրաւոր յօդւածներ, զեկուցումներ հանրապետական, նախկին միութենական և միջազգային գիտաժողովներում, անտիպ աշխատութիւններ: Զսանհինգ տարի է, Բանահիւսութեան առարկան եմ դասաւանդում Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցում, ինչպէս նաեւ Երեւանի յատուկ հայագիտական թեքում ունեցող դպրոցների բարձր դասարաններում: Եւ կենսագրականիս ամենաերջանիկ ու ամենաշերմ էջը՝ երեք զաւակների մայր եմ:

3. Դուք ցիշեցիք, թէ որպէս պարուսոյց ո՞ր դպրոցը յաճախած էք և ո՞ր խումբերը ղեկավարած էք:

Պ. Սա հենց այն կարեւորագոյն խնդիրն է, որ ինձ հետաքրքրում է առաջին հերթին Ե՛ւ որպէս բանագետ-մասնագետ, Ե՛ւ որպէս պարզ արուեստասէր անհատ: Ծնուել և մինչեւ տասնվեց տարեկանս ապրել եմ գիւղում, ինչը համարում եմ մեծ բարեբախտութիւն: Անհատի ձեւաւորման համար առաջին անհրաժեշտութիւն է՝ մանուկ տարիքում շփուելու բնութեան հետ, ապրելու մարդկային հաղորդակցական մըտերմիկ, ջերմ մթնոլորտում և տեղեկատուական ներփակ միջավայրում:

Ահա և բացենք հենց այսօրուան և ոչ միայն իմ կենսագրականին առնչուող խնդիրների դաշտը: Առաջին. չգիտես ով և ինչու որոշել էր, որ այս համատարած կրթութեան դարում գիւղին երաժշտական կամ պարարուեստի դպրոց պետք չէր, այսպէս էր նաեւ իմ մանկութեան տարիներին: Այսօր գիւղերում էլ կան երաժշտական կրթութիւն ստանալու այս կամ այն հնարաւորութիւններ, բայց ինչ-որ բանից արդէն շատ ենք ուշացել: Նախ՝ մի երկու սերունդ չստացաւ այդ կրթութիւնը, ինչպէս ես, որ ապագայ մասնագիտութեամբ պիտի անմիջականօրէն կապուած լինէի հենց երգի և պարի հետ: Եւ, ամենակարեւորը, ժողովրդի տոհմիկ մշակութային արժեքները, այդ թուում և մասնաւորապէս երգն ու պարն իրենց ակունքային մտածողութեան համակարգում ստեղծուած, փոխանցում և գոյատեւում են հենց գիւղում: Կոմիտասից հարիւր տարի յետոյ կարծեմ ւելորդ է, որ որեւէ մասնագետ ինքը փորձի ապացուցել այս ճշմարտութիւնը: Եւ ահա, ոչ միայն Կոմիտասից հարիւր տարի յետոյ, այլև օրէցօր է դարձել տոհմիկ ավանդների կորստեան խնդիրը: Ես մինչեւ 16 տարեկան արդէն գիտէի մեր գիւղում երգուող ու պարուող բազմաթիւ երգեր ու պարեր, մանաւանդ հորըս կողքին ապրելով, որ քնում էր երգով, արթնանում էր պարելու համար: Մասնագիտութեան բերումով որպէս բանահաւաք շրջել եմ ոչ միայն Հայաստանի բոլոր գիւղերը, այլև Հայաստանից դուրս, և 34 տարուայ ընթացքին հաւաքել եմ մեծաքանակ նիւթ հայոց փառահեղ ժառանգութիւնից՝ դիւցազնավէպից մինչեւ փոքրիկ պարերգ:

Այսօր այդ նոյն նիւթը նոյն որակի եւ քանակի մէջ չեմ կարող գտնել: Ուրեմն՝ ընդամենը մեզ նախորդող սերունդը պահել էր դարերի կուտակումը, մենք կորցնում ենք ամեն եզր մեր նախորդի հետ, կորցնում ենք ամեն պահ: 20րդ դարի քաղաքակրթական ընթացքն այդպիսինն էր եւ է. ամենուր անխնայ սրբում է հնագոյն, բանաւոր փոխանցուող անաց արժէքներն ու ավանդները, դարաւոր ապրելակերպի, ազգային իւրայատուկ ծագումնաբանական գաղտնագրերի, անգամ ազգային տեսակի, պատկանելութեան պարտադիր պայմանները եւ դրանց պահպանման գիտակցման գրեթէ բոլոր դաշտերը: Այս խնդիրը կայ որեւէ ազգի պարագային, մեր աշխարհասփիւռ ազգի դէպքում սա չի կարող չդառնալ ոչ միայն ազգապահպան թիւ առաջին խնդիր, այլեւ ներքին ամէնօրեայ տագնապ: Մանաւանդ որ քաղաքակրթական այս արշաւը որքան անկասելի, սկսել է թուալ նոյնքան բնական՝ որպէս ըստ ամենայնի եւ անկասկածելի առաջընթաց: Այս ետ չնայող առաջընթացի համեմատ անշուշտ դարաւոր կոչուող ժառանգութիւնն իր հետ բերում է անցած-գացածի, հին-հնացածի, միայն պատմական, գիտական, թանգարանային արժէքի մտայնութիւն: Բոլորովին անտեղեակ եւ անքննախոյզ հայեացք է, եթէ մէկը մտածի, թէ Յայաստանում ապրող հայի համար չկայ ժառանգորդական փոխանցման ընդհատման, պապենական ավանդների պահպանման խնդիր՝ որպէս ազգապահպան առաջնային օղակ: Ընդհակառակը, հենց Յայաստանի վրայ է ընկնում ամենամեծ պատասխանատուութիւնը, որովհետեւ մշակութային որեւէ տեղաշարժ իր անմիջական եւ վայրկեանական արձագանգն է գըտնում Սփիւռքում: Այս իմաստով իմ մասնագիտական, որպէս անհատ ձեւաւորման կամ գործնական խնդիրները Սփիւռքում ճիշտ նոյնն են, ինչ Յայաստանում: Եւ առաւել եւս Սփիւռքում է, որ ես համոզուում եմ, թէ հայոց անցեալի անանց արժէքների փոխանցման խնդիրը ո՛չ միայն մասնագիտական-հետազօտական է, այլ հե՛նց այն է, ինչը կոչւում է ազգապահպան՝ որպէս ամէնօրեայ գործունեութիւն եւ հոգու պարտք նախնեաց առջեւ: Առաջին հայեացքից Յայաստանում հայապահպան խնդիր չկայ, եւ տոհմիկ որեւէ օղակի պահպանում արտասուք չի դրուած որպէս առաջնային միջոց սպիտակ ջարդի դէմ: Եկէք ինձ հարցրէք՝ աննկատ մասնագետիս, եթէ մեծամեծ հայորդիների տագնապը սպիտակ ջարդի հանդէպ չափազանցութիւն պիտի համարենք անխոհեմաբար: Իսկ Սփիւռքը ո՛չ միայն այս ամենակուլ ընթացքի ճիշդ կենտրոնում է, ո՛չ միայն հայրենակարօտ է, այլեւ հայրենիքակարօտ: Եւ ահա իմ մասնագիտական թիւ առաջին խնդիրը, որը ինձ անգամ շեղեց միայն գիտութեամբ զբաղուելու նախանշուած ուղուց: Այսինքն՝ կարելի՞ է, հնարաւոր է արդեօք ե՛ւ Յայաստանում, ե՛ւ օտար միջավայրում ապրող Սփիւռքում այս տոհմիկ ավանդականը, այս շքեղ ժառանգութիւնը պահել, դէմ յանդիման կանգնելով քաղաքակրթական ընթացքին, պահել ոչ միայն որպէս անցեալի մասին գիտելիք ու ազգային հպարտութիւն, այլեւ ամէնօրեայ կենդանի բաբախուն միջավայր, հոգեւոր պահանջ, յստակ ձեւաւորուած ինքնապահպան գիտակցութիւն, առօրեայ աննկատ ապրելակերպ, հոգու կենսունակութիւն ու դիմացկունութիւն անխոցելի պատուար օտար ազդեցութիւնների դէմ, որոնք իւրաքանչիւր սերնդափոխութեան հետ դառնում են առաւել անկասելի: Կարելի՞ է այս ամենը փոխանցել հենց այսօր, երբ կարծում է կապերն անցեալի հետ փրթուած եւ խիստ ուշացած: Այո՛, ամենայն դիւրութեամբ ե՛ւ Սփիւռքում, ե՛ւ Յայաստանում, ուր կարծում է, թէ փոխանցումն արելի բնական ընթացքի մէջ է: Ծիշտ հակառակը, ըՍփիւռքում արելի դիւրութեամբ, նկատի առնելով ուժացման ամէնօրեայ վտանգը, որ քանի խորանում, այնքան սրում է ազգապահպան բոլոր խնդիրները: Իմ դպրոցը ժողովրդի «Տես ու ուս» դպրոցն է, ուր դարերով ամեն ինչ փոխանցում էր ականջով եւ աչքով, իմ հաւատը անանց արժէքների հանդէպ, իմ ինքավստահ, ինքնահաստատ նկարագիրն էլ այդ դպրոցում է դարբնուել, ինձ այսօրուայ բանագետ-ազգագրագետ, գիտնական-մասնագետ ձեւաւորողն էլ իմ հայրենական գիւղն է եղել եւ իմ հայրական տունը, իմ ողջ կենսագրականն էլ հայոց երգ ու պարից անբաժան պահողը՝ ե՛ւ որպէս կրող, ե՛ւ որպէս քաջագիտակ, դարձեալ այս դպրոցն է: Եւ ես բացարձակապէս չեմ խեղդում երաժշտական ու պարային որեւէ միջավայրում կամ որեւէ պակասից. գիտեմ հարիւրաւոր երգեր, տասնեակ ու տասնեակ պարեր Պատմական Յայաստանի գրեթէ բոլոր գաւառներից: Այսինքն՝ այնտեղ, ուր պահպանում է ավանդ ե՛ւ որպէս

պատրաստի ժառանգություն, ե՛լ որպէս ստեղծագործական նորանոր թռիչքների հող եւ ազդակ, չի կարող լինել շնչահեղծություն եւ ձուլման վտանգ: Նախ ակունքից, արժէքի գիտելիք-ճանաչողությունից կտրուելու, ապա եւ իբր ժամանակին համընթաց երեւալու պատրանքի հետեւանք է ներկայիս երգային-պարային միջավայրի այն խեղդող հեղձուկը, ոգեղեն հոգեւորի պահանջը, որ բոլորն են զգում, պարտադիր չէ մասնագետ լինելու հոգու պահանջ կամ հոգու դաստիարակություն զգալու համար: Հայաստանում ժողովրդական երգ անուան տակ հրամցուող երաժշտական միջավայրից ե՛լ որպէս մասնագետ, ե՛լ որպէս արուեստասեր անհատ՝ շնչահեղձ, 1981ին, հենց Երեւանի երաժշտանոցում եւ հենց դասական երգեցողութեան բաժնի մի քանի ուսանողների միջոցով, յատկապէս Նրանց, որ ունէին գիւղական ծագում, ասել է անանդի զգացողություն, կազմեցի տոհմիկ երգի մի ինքնագործ խումբ մը «Նարոյ» անունով եւ տեւական հաղորդաշարերով դուրս եկայ գրոյցի ժողովրդի հետ հենց իր ժառանգութեան շուրջ Հայաստանի պետական ձայնասփիւռով եւ հեռատեսիլով: Ե՛ս չէի ասում, ունկնդիր ու ակնդիր անանդակարօտ հայն էր ասում, որ կարծես երաժշտական միջավայրը դարձաւ թափանցիկ, շնչելը դարձաւ հիւրին, ասես առաւօտեան զով հով էր փչում գեղջկական սիրերգից ու պարերգից: Կոմիտասեան ժառանգութեան մէջ էլ այս երգատեսակներն են կազմում առիժի բաժինը: Ինչո՞ւ պետք է հազար, հարիւր տարի առաջ ստեղծուած սիրերգը սիրոյ յոյզի, ասելիքի, պատկերաւոր մտածողութեան ինձ հարազատ թրթիռ չունենայ իր մէջ. տեխնիկական զարգացման առաջընթացի հետ սիրոյ խոստովանութիւն զգացումն էլ իր նկարագիրը փոխել է անճանաչելի, անընդունելի կամ անհաղորդակից լինելու աստիճան: Կարո՞ղ է որեւէ մէկն էլնի ապացուցելու, որ մեր պապերը մեզանից պակաս արուեստասեր, արուեստաստեղծ, նրբահոգի ու նրբաճաշակ էին: Նայե՛ք հայուհու հագած հագուստին, կապած գոգնոցին, կրած արդուզարդին, ոսկեճեռիկ ասեղնագործութեանը, զուսագացողութեանը, որ այսօր դարձեալ են միայն թանգարանային նմուշներ, նայե՛ք ճարտարապետութեանը, որ աշխարհամբաւ է: Կան մարդկային մտքի նուաճումներ, տիեզերախոյլ գիտելիքներ, հոգեւոր արժէքներ ու պահանջներ, որոնք ո՛չ այսօրն է ծնում, ո՛չ վաղը հընացնում: Մտքի ու հոգու թռիչքի նոյն համակարգում է հայոց երգն ու պարը: Այս գիտելիքն արդէօք չի՞ պակսում մեզ՝ այսօրն է ծնում, ո՛չ վաղը հնացնում: Մտքի ու հոգու թռիչքի նոյն համակարգում է հայոց երգն ու պարը: Այս գիտելիքն արդէօք չի՞ պակսում մեզ՝ այսօրուայ ամենիմացներիս, արդէօք հաղորդակից ենք մեր նախնեաց մտքի ու հոգու թռիչքին, թրթիռին, նրբերանգների ներկապակին: Այս ամէնը արդէօք անցեալ է միայն: Դիտենք այսօրը՝ որպէս սրա հետեւանք երկրորդ խնդիր, որ իր ողջ հասակով ծառացած է մեր առջեւ: Ենթադրենք, մեր առօրեայ ապրելակերպի բեռն առանց այդ էլ ծանր է, եւ մենք այլեւս ուժ չունենք նաեւ ազգապահպան խնդիրներով մտահոգուելու: Կամ քաղաքակրթական այս ընթացքն իր վրայ է վերցրնել շատ ու շատ հոգսեր, ինքն է որոնում ու գտնում ապագայ ընթացքի ուղիները, եւ մենք գոհ ենք, անգամ շլացած այս ընթացքով: Բայց հոգեւոր սննդի խնդիրը, որպէս դարձեալ ամէնօրեայ պահանջ, կարո՞ղ է վերանալ: Հոգեւոր սննդի բացառիկ անհրաժեշտ տեսակը երգն ու պարն է. մարդն ամէն օր ուզում է լսել երգ եւ գոնէ ամիսը մէկ պարել: Ո՞ւր է այդ լաւ երգը, եւ ի՞նչ պիտի պարի ինքը: Ուրեմն՝ ազգային երգատեսակըն ու պարատեսակը ո՛չ թէ մեզանից դուրս ազգապահպան խնդիր է, այլ մեր իսկ հոգեւոր պահանջը: Երգիչն ուզում է երգել լաւ երգ. ո՞ւր է այդ լաւ երգը: Կամ պետք է այդ լաւ երգն արդէն յօրինուած լինի ինչ որ ժամանակ, հասած լինի մեզ, կամ որեւէ երգահան այսօր պիտի յօրինի այդ լաւ, շատ լաւ երգը. միջին կամ ցածր որակի երգն այսօր պիտի չդիմանայ բարձր ճաշակի պահանջին կամ երգային հզօր շուկայի մըրցակցութեանը: Այսօրուայ մեր երգամիջավայրը, կարծում եմ, շատ համարձակ շըրջանցում է այս երկու պայմանը: Եթէ համարձակ, ուրեմն միջավայրը դատարկ է գտել, կամ բացարձակ անգիտակ է ազգային արուեստին սպառնացող վտանգին: Իմ կարծիքով, սպիտակ ջարդը ոչ թէ օտարից ազդուելը կամ օտարին ենթարկուելն է, այլ ազգային արուեստի պարսպ կամ լճացած միջավայրը: Եթէ արուեստաւոր ոգին խեղդուի ազգային անօդ, հեղձուկ միջավայրում, կը գնայ այնտեղ, ուր օդ կայ, փոյթ չէ, թէ օտար: Երգի ու պարի պակասից էլ մենք կարող ենք մեզանից հեռացող սե-

րունդ կորսնցնել: Ասել է՝ առաջին հերթին մենք պետք է յստակ գիտենանք. լաւ երգ, պար ունեցե՞լ ենք, որ նաեւ այսօր երգենք վայելքով եւ հպարտութեամբ, թէ մենք դրա ժառանգորդն ենք: Ուրեմն՝ այս գիտելիքն այսօրուայ հրամայականն է եւ ոչ պարտադիր յարգանքի տուրք մեզ նախորդածների երգաստեղծ ու պարաստեղծ արուեստին: Ժամանակից երգահանը ի՞նչ հողի վրայ պիտի ստեղծի շատ լաւ երգ. իր ստեղծագործական հոգում ակունքային, հայեցի հող կա՞յ, թե՞ պետք է յօրինի իր չգիտցած գիտելիքի հիմքի վրայ, չտարբերելով անգամ՝ ո՞րն է հայոցը, որը ոչ հայոցը: Այս պարագային ամենադիւրին ճանապարհը ընդհանուր եւ խառնածին երաժշտական միջավայրն է, որն այս հաղորդակցական հզօր դարում նախ մեզանից դուրս է, ապա եւ շատ զօրաւոր է. որքան զօրաւոր, նոյնքան գայթակղիչ է, որովհետեւ ստեղծում է այն պատրանքը, թէ յօրինում եւ խիստ ժամանակակից երգ՝ այսօրուայ չափանիշներով: Կորցնելով ազգային գիտելիքը, կորցնում եւ նաեւ ազգային զգացողութիւնը: Բայց չի վերանում երգի ու պարի պահանջը, պահանջը մղում է որպէս հոգեւոր սնունդ ընդունել այն, ինչ հրամցւում է: Հոգեւոր պահանջով պայմանաւորուած յաջորդ խնդիրը, ամենափոքրիկ հաւաքն անգամ առիթ եւ հնարաւորութիւն է ստեղծում, որ մենք մեզ զգանք բեմ-պարահրապարակում: Երգն ու պարն այսօր դարձել է միայն բեմական սեփականութիւն, միայն յատուկ մասնագիտացում ունեցող արհեստավարժ անհատների գործ: Բայց եւ չեմ ծնուել մտայի հանդիսատես, եւ ի՞նքս պիտի ապրեմ այդ երգի եփն իմ սրտում, եւ ի՞նքս պիտի ենթարկուեմ պարի ինքնամոռաց սլացքին, որքան էլ առաջընթացը շուրջօրեայ համերգահանդէս կազմակերպի իմ տանը: Երանի՛ իմ պապերին, նրանց տան մեծ սրահը ուզած պահի կարող էր դառնալ երգասրահ ու պարատուն, որ ուզած առիթ նրանց բեմելն էր: Բեմը վարձու կամ վճարովի սրահ չէ միայն. բեմը տուն է, ի վերջոյ, հոգու եւ հոգեւոր տուն, տունն էլ բեմ է, քո անհատականութեան բեմելն է ամէն մէկ պահը: Ազգապահպանութեան խնդիրը միայն բարձր գիտակցականութեան, մանաւանդ միայն գաղափարականի խնդիր չէ: Պահպանի՛ր ինքդ քեզ քո մէջ, եւ կը պահպանուի ազգը, կայացի՛ր ինքդ քո ծագումնաբանական արեան կանչով, եւ կկայանայ ազգը: Եւ մէջտեղից կը վերանայ ամենացաւալի խնդիրը որեւէ ազգի, մանաւանդ մեր ազգի պարագային. դո՛ւ եւ պահում ազգը, այդ բեռից անխուսափելիօրէն յոգնելու պայմանով, թե՞ ազգայինն է պահում քեզ որպէս լեցուն, մտաւոր, հոգեւոր հարուստ ներաշխարհով անհատ, որ ոչ ինքն է իր վրայ բեռ դառնում, ոչ միջավայրին յոգնեցնում՝ ազգին ի խնդիր նրա նուիրումը չարաշահելով: Հընարաւոր է, որ այս գիտակցութեամբ, հոգեբանութեամբ, հաւատքով ու հաւատամքով ապրելը նշանակում է լինել հնացած, պապերի կառչած, ոչ ժամանակակից մարդ: Ի վերջոյ, ինքդ քեզ, քեզ ժառանգուած ձեւի մէջ յայտնաբերելը եւ այդպէս ապրելը արդեօ՞ք վայելք չէ: Անհատականութիւնը ձեւաւորող, ինքն իր հետ հաշտ ապրելու մեծագոյն հնաւորութիւններ ստեղծող երեւոյթ է ազգային կոչուածը: Եթէ պայմաններն այնպիսին են եղել, որ այս ձեւաւորման բնականոն ընթացքն ընդհատուել է, ազգայինի ժառանգորդական փոխանցումը մարդուս բնական կենսագրականը չի կազմել ինչպէս իմ դէպքում, մեծ դժբախտութիւն եւ անդառնալիօրէն կորցրած կապի բացակայութիւն չէ: Ահա եկել է մէկը եւ պատրաստ է փոխանցելու ողջ կեանքի ընթացքին կուտակածը կամ մի մասը, այն եւս՝ մէկ քանի ամսուայ ընթացքում: Ահա եւ միւս խնդիրը. Հայաստանում թերեւս շատ աւելի շատ, Սփիւռքում շատ աւելի քիչ եւ հնարաւորութիւնները, որ ուզած մէկը ուզած սերնդից ստանայ երաժշտական, երգեցողական կամ պարային կրթութիւն եւ բեմ ելի՛ մարելու արուեստի այս երեք ձեւերի բնատուր պահանջը: Նուազել, նշանակում է օգտուել ինքնաարտայայտման գեղեցկագոյն միջոցից. երգել, նշանակում է ասել իր ամենանուրբ եւ խորքային ասելիքն աշխարհին. պարել, նշանակում է ինքնամոռաց ըմբռնել մարմնի, շարժման սլացք ու վայելք: Զանի՞սն են կոչուած այս երջանկութիւնն ապրելու որպէս մասնագիտութիւն, աստուածապարգէ շնորհ: Ով ընդգծուած տաղանդ, շնորհ եւ մասնագիտական հնարաւորութիւն չունի նուազի, երգի, պարի մէջ ինքնահաստատուելու, ուրեմն չերգի՞, չպարի՞, չնուազի՞: Ահա եւ եւ, որ առանց բեմի եւ ոչ բեմի համար լիուլի ապրեցի ինքս երգելու, ինքս պարելու վայելքը, կարծում եմ, մեծ մեղք գործած կլինէի, եթէ այդ վայելքը չկիսեի կամ այսուհետ չկիսի բոլոր-բոլորի հետ, շուրջպար չմտնենք միասին:

Նաեւ այս զգացողութիւնը եւ նաեւ մասնագիտական խնդիրներս էին, որ ինձ մղեցին հաւաքելու եւ հիմնելու ժողովրդական տոհմիկ երգի, ապա նաեւ պարի մի ինքնագործ խումբ, «Նարոյ»ը թեպէտ ինքնագործ, բայց Յայաստանում ունի մեծ ճանաչում ու համարում: Ե՛ւ «Նարոյ»ի պարագային, եւ այստեղ, ներկայ պարախմբերիս մասնակիցներին նախ ուզում եմ ներշնչել, որ սա հերթական ձեռնարկ չէ, ազգապահպան ծրագրուած գործ չէ, պարամարզանք եւ պարուսուցում չէ բեմական մի քանի ելոյթի համար: Մոռացե՛ք այս խնդիրները: Մենք հաւաքուում ենք մի երկու ժամ միասին լինելու, պարային, պարերգային, պարեղանակային վայելք ապրելու, պարը մեր մէջ յայտնաբերելու, մեզ պարի մէջ գտնելու եւ արուեստի հաճոյք-հանգստի մէջ մարելու մեր առօրեայ-կեանքային հոգս ու յոգնութիւն: Ինձ համար գերագոյն հաճոյք է զգալ եւ մտածել, որ ես ընդամենը մի կամուրջ եմ, որի վրայով իրար ձեռք են մեկնում տարբեր սերունդներ՝ պապ-պապերի-պապեր եւ այսօրուայ սերունդը: Այստեղ միայն, որպէս պատասխանատուութիւն, ես յիշում եմ, որ ես պապենական ժառանգութեան պարզ կրող չեմ միայն, այլ գիտակ մասնագետ, հնագոյնից մինչեւ այսօրուայ շեշտերին տեղեակ, տարբեր ժամանակները իրար կողքի բերող, դարերի եւ մեր օրերի մէջ կապը պահող (այդ կապն առանց ինձ էլ կայ) մասնագետ, այսինքն յուսալի, փաստուած կամուրջ: Եթէ ուզում էք քալել այդ կամուրջով եւ ձեզ չի թուում, որ գնում էք ետ, ժամանակին հակառակ, քայլէ՛նք միասին: Եթէ չէք ուզում՝ քայլէ՛ք ներկայի հետ դեպի ապագայ առանց անցեալի: Սա ձեզ չի թուայ անբնական, բայց եթէ ձեզ ինչ-որ անբացատրելի մի բան խանգարի, հոգում ստեղծի անյարմարաւետութեան զգացում, ուրեմն դա անցեալն է, ձեր ժառանգորդական անցեալը, որ անխօս խանգարում է ձեզ ապրել միայն այսօրով կամ մօտիկ ապագայով: Ինձ համար անցեալից կտրուելը ամենաանբնական ճեղքուածքն է ժամանակի ընթացք կոչուած հասկացութեան մէջ, ինձ համար չկայ անցեալի հետ կորած ժառանգութիւն, լռած յուշարձան: Անցեալն իմ մէջ է նախքան իմ գիտական վերլուծականը, եւ այդ զգացողութիւնն իմ գիտական վերլուծականի միակ նախադրեալն է, ելակետը, յաջողութեան նախապայմանը: Երգն իմ մէջ է, պարն իմ մէջ է, եւ ես այդ երգ ու պարի մէջ եմ. համազարամեայ է այդ երգը, պարը, թէ հենց երէկ է յօրինուել, բուն ժողովրդական է, թէ ժամանակակից, դասական է, թէ որեւէ այլ տեսակ, ինձ համար միեւնոյնն է: Միակ պայմանը, որ լինի մաքուր, անխառն արուեստ, յատկապէս, երբ խօսքը ֆոլկլորին է վերաբերում եւ ուզած ժողովրդի: Եթէ այդպիսի արուեստ է, ինձ համար որեւէ նշանակութիւն չունի, թէ ինչ լեզուով է երգը, ինչ ազգի պար է, սիրում եմ անկանխակալ սիրով: Ահա եւ յաջորդ խնդիրը. ես ունեմ իմ ազգային զարգացած զգացողութիւն, գիտելիքների յստակ պաշար, ազգային իմ տեսակի մասին հաստատուն գաղափար, եւ որեւէ այլ տեսակ ոչ միայն ինձ օտար ու խորթ չէ, այլեւ որեւէ վտանգ չի ներկայացնում, թէ որեւէ այլազգային առաւել զօրաւոր երեւոյթ կարող է ինձ հեռացնել իմ ազգայինից: Որեւէ ազգ ինձ համար մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում որպէս առանձին եւ հայերից տարբեր տեսակ, որպէս ազգային տեսակի մասին իմ պատկերացումը, գիտելիք-ճանաչողութիւնը, իմ զգացական աշխարհը հարստացնող երեւոյթ: Տարբերութիւնը ա՛յս դեպքում կարելի է ընկալել որպէս մարդկային ցեղի շքեղ հարստութիւն: Ահա եւ յաջորդ եւ ամենավտանգաւոր խնդիրը, որ ծառացած է մեր առջեւ: Մենք՝ հայերս, կարող ենք նման լինել ոչ միայն ինքներս մեզ, այլեւ աշխարհին, լինել համահունչ ու համաքայլ ներկայ ժամանակին, աշխարհի քաղաքակրթական ընթացքին: Երբեւէ ետ չենք մնացել եւ պետք չէ վախենալ, որ եթէ մեր պապենական ազգայինին փարած մընանք, ետ կը մնանք աշխարհի քաղաքակրթական վերելքից: Քայլերը այնքան բնական է, որքան ծնուելը, եթէ մեր քայլուածքը ծագումնաբանօրէն նման է մեր պապի քայլուածքին, դա չի նշանակում, որ մենք չենք քայլում կամ անընդհատ սայթաքում ենք: Նախ որ մենք հնագոյն քաղաքակրթութեան ազգ ենք եւ նոր չպիտի որոնենք մեր քայլուածքի ուղին եւ քայլաոճը: Երկրորդ՝ այս հնագոյնի հիմքի վրայ է, որ մենք հեշտութեամբ մեզ գտնում ենք համաշխարհային ցանկացած մշակութային երեւոյթին մէջ, հեշտութեամբ կայանում՝ լինի լեզու, դասական երաժշտարուեստ, պարարուեստ, գիտութիւն, տեխնիկա: Բայց եթէ մենք մեզ (եւ նաեւ օտարները) համարում ենք հնագոյն եւ առանձնայատուկ քաղաքակրթութիւն ստեղծած ազգ, ուրեմն ամէն ին-

չում, յատկապես լեզուա-մշակութային դաշտում մենք պետք է շարունակաբար ներկայանանք մեր առանձնայատուկ տարբերությամբ նաեւ, որպեսզի աշխարհի հետ լինելով հանդերձ, ոչ միայն անցեալով փաստենք, այլեւ այսօրով հաստատենք մեր տարբեր ազգ լինելու դիմագիծը: Սա ազգային տեսակի կարգած օրէնքն է. մեր ցանկութիւնը չէ, եւ օրէնքը դաժան է. չփաստեցիր՝ կծուլուես մի այլ գօրաւոր տեսակի: Տարբերութիւն ամէն ինչում՝ հայերէն մէկ տարբեր հնչիւնի արտաբերումից մինչեւ հայոց եկեղեցու ճարտարապետական տարբեր կառոյց: Տեսակի տարբերակման մէջ չկայ կարելոր եւ անկարելոր օղակ: Ինչո՞ւ Սփիւռքի ուզած գաղթօճախում անապամանօրէն հայոց եկեղեցին իր ճարտարապետական կառոյցով պիտի անապամանօրէն տարբերուի մեծաքաղաք կառուցապատ համալիրի մէջ, իսկ հայկական երգը եւ պարը չպիտի տարբերուի, ինչ երաժշտական միջավայրում էլ գտնուելու լինի համայնքը: Ինչո՞ւ հայոց հոգու ամենանուրբ, ամենաանթարգման տարածքը լցուի խառնածին, որեւէ ազգի չպատկանող, որեւէ իմաստ ու նկարագիր չներկայացնող, անարուեստ, մեզ մեզնից հեռացնող-հիասթափեցնող «ոգեղէնով»: Այն նոյն իմաստը, տիեզերական ու ոգեղէն գիտելիքը, որ մեր ճարտարապետ պապերը դրել են որպէս կառոյցի հիմնաքար ու զարդագօտի, նոյն իմաստն են դրել եւ չէին կարող չղնել երգի եւ պարի մէջ: Մենք կարող ենք այսօր ինքնէքս փաստել, որ «ճարտարապետութիւնը քարացած երաժշտութիւն է», թէ՛ Սահակ Պարթեւից մինչեւ Նարեկացի ու Քուչակ մեզ դեռ մի երկու հազարամեակ էլ բաւական է՝ փաստելու համար մեր տարբերութիւնը այլ ազգերից: Համազգայինի հրաւերքն ընդունեցի որպէս բացառիկ երջանիկ բարեպատեհութիւն, որ տեսնէի, համոզուէի, թէ կրթամշակութային, սերունդները հայեցի մեծացնելու կարելոր նախապայման է դիտուում պարը, մանաւանդ տոհմիկ պարը: Այստեղ այսպէս մտածել են առանց ինձ, ինձ հրաւիրելիս եւ ինձանից յետոյ էլ, այս շղթայի մէջ ես մի փոքրիկ օղակ եմ միայն: Իմ ուրախութիւնը դառնում է ամենօրեայ կենդանի թրթռ, ապրելու շարունակական ինքնահաստատման ձեւ, երբ Հայ Կենտրոնի փորձասարահները ամէն իրիկուն դառնում են պարատուն, պարը մեզ դարձնում է անբաժան, պարը մոռացել է տալիս առօրեայ, պարը մեզ վերադարձնում է մեր արմատերին: Կարող ես լինել ուզած մասնագետ, կապ չունենայ արուեստի որեւէ ձեւի հետ, բայց ապրել արուեստալեցուն երեկոներ. օրդ կարող է անցնել քո ձեռքով ծրագրւած, թէ քո կամքին հակառակ, բայց երեկոները կայ մի անկիւն, որ քոն է, քեզ նմաններին հաւաքում է քո շուրջ: Կարող ես չկայանալ այն գործի մէջ, որ ստիպուած անում ես ի ինդիր օրուայ, բայց երեկոները տրուես մի սիրած վայելքի, որտեղ ոչ միայն ինքդ ես կայանում, այլեւ իր հիմքում դառնում է ազգապահպան մեծաշահ գործ: Այսինքն՝ ինքնութիւն-անհատականութիւն, անհատ-ազգութիւն ինդրի մէջ չկայ մեծ ու փոքր, կարելոր եւ անկարելոր դաշտ, ընթացք, պայման: Այս իմաստով անշուշտ Հայաստանում ծնուած, ապրած լինելը առանձնաշնորհեալ ոգեղէնութիւնը՝ որպէս անհատականութիւն սնող եւ միակ բնածին ակունք: Եթէ ոգեղէնը ներարկում է օրօրոցից, ինչպէս իմ պարագային, ես դառնում եմ ազգայինի, տոհմիկի կրող, եւ իմ միջոցով փաստուում ու գոյատեւում է ազգայինը: Սա համաժամանակեայ ընթացք է. ազգայինով կայանում է անհատականութիւն, անհատով փաստուում է ազգ եւ ազգային: Եթէ այս օրէնքըն այսչափ գօրաւոր ուժ չունենար, հայ ազգի գոյատեւման առեղծուածը կը վերագրէինք միայն ճակատագրին. այո՛, մեր անպետութիւն, անթագաւոր, անիրաւունք, անազատ, խաւարի թագաւորութեան մէջ, դաժանագոյն բռնապետութեան պայմաններում մեր պապերը պահել են իրենց ինքնութիւնը, իրենց հայրենի բարբառը, անուշ խօսք եւ գրոյցը, երգ ու պարը, գրուցելու, երգել-պարելու, կատակելու-խնդալու ցանկութիւնն ու ուժը եւ պահել են ազգը: Մենք ոչ միայն պարտք ենք մեր պապերին, այլեւ նրանցից պետք է հարցնենք, իմանանք կենսական այն գօրաւոր ակունքի տեղն ու գաղտնիքը, որ դարեր հոսեց յաջորդող սերնդի երակներում որպէս ազգային աւիշ: Այսօր մեզ ի՞նչ է եղել, որ կորցնենք կամ կորսուենք՝ ազատ, ժողովրդավար երկիր ու օրէնք, բարեկեցիկ վիճակ եւ անընդհատ ծնվող սերունդ: Միայն պետք է երջանկանալ այն գիտակցութիւնից, որ ծագումնաբանութիւնը չէն ընտրում, այն տրուում է, տրուում է ճիշդ այնպէս, ինչպէս ուր էլ, երբ էլ ծնուես, աչք ու յօնքով, քիթ ու բերանով նման ես

լինում քո պատերիս եւ ոչ այն միջավայրին, որտեղ ծնուել ես: Ծագումնաբանական արեան եւ հոգեւոր ժառանգականութեան անշրջելի փաստի համեմատ Սփիւռքն ինձ համար եւ առաջին հերթին սփիւռքահայի համար ընդամենը աշխարհագրական հասկացութիւն է: Եթէ այն դառնում է կլանող միջավայր, ուրեմն մենք ինքներս ենք թողնում ոգեղէն մարտադաշտը ազատ եւ անտէր: Հայակորով, հայաշունչ, հայաոգի երգից ու պարից մինչեւ հայրենապաշտպան մարտադաշտ մէկ քայլ է. հայորդին գնում է զոհուելու, որ ոչ միայն իր Մայր Հայրենիքը, իր մայրը, իր զաւակը չզոհուի, գերի չէրթայ, այլեւ իր պապենական, իր արեան մէջ նստած երգը չռի, պարը չշարժանայ: Եթէ մոռնանք անգամ, որ Սասունցի Դաւիթն իր օրհասական կռիւը գնալիս հնչեցնել տուեց իր հօր՝ Միտրի, ռազմի փողը, մեզ մեր մօտակայ ժամանակը կը ստիպի, որ մենք ոգու եւ ռազմի մարտադաշտ ելնենք Սերոբ, Գեորգ, Անդրանիկ, Մուրադ, Նժդեհ անունները մեր երգաշուրթերին: Ոգեղէնի միասնականութեան զինուորագրեալները ունեն ամենօրեայ մարտադաշտ, նաեւ՝ ամէն պահի յաղթանակի վայելք: Այստեղ ամէն ինչ անբաժան է եւ անբաժանելի: Գերագոյն երազանքս եղել է եւ է՝ վերցնել ժողովրդից եւ վերադարձնել ժողովրդին ոչ միայն մեր անցեալի ժառանգութեան գիտական վերլուծականը, այլեւ եւ առաջին հերթին՝ որպէս այսօրուայ կենդանի զարկէրակ, ցեղային արեան հոսք, ստեղծագործական վայելք եւ ակունքային վերելք-թռիչքի նախապայման: Իմ մարտադաշտն էլ սա՛ է, սա իմ գերագոյն նպատակ անկախութիւնն է, որ ամենուր ուզում եմ տեսնել հաստատուած եւ կանգուն: Անկախ եւ ազա՛տ այլ, մեզ անյարիր արուեստների ճշումից, անկախ հզօր ու անկասելի թուացող օտարարուեստ անհարկի միջամտութիւնից, անկախ այն ճշումածութիւն-թերարժեքութիւն-կասկածից, որ թերեւս հայոց ստեղծածը պակաս կենսունակ, պակաս արուեստաւոր ու կարեւոր է, քան մեզ այսօր խեղդող որեւէ այլ արուեստի ճշում: Սա էլ իմ անկախութեան մարտադաշտն է:

3. Այս ամէն խնդիրներու դիտանկիւնէն ի՞նչ են Ձեր տպաւորութիւնները Ձեր դասընթացներուն հետեւող խումբերէն եւ ընդհանրապէս թորոնթոյահայ համայնքէն:

Պ. Եթէ իմ խնդիրները որեւէ հող չգտնէին այստեղ, ես չէի խօսի դրանց մասին այսչափ մանրամասնօրէն եւ մանաւանդ ներշնչանքով: Իմ ներշնչանքի աղբիւրն ինձանից դուրս է եւ այստեղ անշուշտ բխում է ձեզանից: Իմ պարախմբերն իմ բանակն է, ես ունեմ ճից մինչեւ 36 տարեկան զինուորներ, որ պահապան հրեշտակի նման հիմա կանգնած են եւ պիտի կանգնած մնան տոհմիկ պարի, պարեղանակի ու պարերգի թիկունքին: Երբ առաջին օրը պիտի սկսէի փորձերը, ինձ նրբանկատօրէն եւ կեսկատակ զգուշացրին, թէ այստեղի պատիկները եւ երիտասարդները մի քիչ «շփացած» են, թերեւս աւելի դժուար լինի, քան Հայաստանի պարագային: Ես եւս կեսկատակ պատասխանեցի, թէ ես էլ պակաս «շփացած» չեմ Սփիւռքի գուրգուրոտ ու ջերմ վերաբերմունքից, որ ունեն իմ բերած պապենական ժառանգութեան հանդէպ: Առաջին օրուանից մեր շփումը որեւէ տարիքի հետ եղել է հաղորդակցական արուեստ, վայելք, ջերմութիւն, յարգանք, գուրգուրանք միմիեանց նկատմամբ: Այսօր ես դժուարանում եմ պատկերացնել, որ պիտի բաժանուեմ նրանցից. փափաք է դարձել ինձ համար, որ բոլորն իմ զաւակներս լինէին, առաւօտեան իմ տանից լինէին, առաւօտեան իմ տանից ելնէին, երեկոյեան իմ տուն վերադառնային: Աւելի լաւ է պատիկներս բերանով բացատրուեմ, գնում եմ 6-10 տարեկան պատիկներս փորձին: Ի դէպ, դասերից յետոյ է, յոգնած են եւ սոված: Հեռից պատիկներս վազում են ընդամաջ եւ խցկում գիրկս: Մի օր Քարանս վազեց, փաթաթուեց, սրտիկն ուժգին բաբախում էր. «Ինչո՞ւ է թպրտում սրտիկդ, վազեցի՞ր» հարցնում եմ: «Ո՛չ, քեզի՛ կարօտցայ»: Կարօտդ ըլլայի, պատիկ հայուհի՛ս. ես իմ կարօտն եմ փաստում առ քո պապ ու տատեր, եւ դու կարօտում ես ի՞նձ, ուրեմն եւ պապենական երգին ու պարի՞ն, եւ մենք միասին պիտի կարօտենք այսուհետ: Տեսնում եմ, յոգնած են, ուզում եմ փոքր ինչ ընդմիջում անել, դարձեալ ամենապատիկս՝ Կատյաս, որ արդէն ծնուել է երգել-պարելու բացառիկ շնորհով, բողոքում է. «Ինչո՞ւ բրեյկ»: Եթէ անգամ անգլերէն բառ է օգտագործում, ի՞նչ նեղութիւն ունեմ ես այս օտար բառից. նա մէկ վայրկեան չի ուզում կտրուել հա-

յոց երգից ու պարից: Նոյն կարօտը իմ պատանիների եւ երիտասարդների աչքի մէջ է, որ սկզբում ամաչելով թաքցնում էին, այսօր ամեն երկու բառից մէկը կատակ է, ջերմ խօսք եւ հայեացքի զգվանք: Ողջ Կանադան ինձ նուիրէին, երջանկութեան այս հզօր զգացումը չէի ունենայ: Չորս ամիս է, բոլորովին մոռացել եմ՝ քանի՞ տարեկան եմ, ի՞նչ գիտնական... չկա՛: Մենք բոլորս պարի ու երգի ձեւի մէջ բերում ենք մեր միասիրտ, միաբարբախ միասնութեան ապացոյցը: Մենք բոլորս եւ ամեն մէկս որեւէ հաւանականութիւն չունի եւ առանձնայատուկ շնորհի չունենալու համար որեւէ բողոք չունի Աստուծոյ դէմ՝ իր տուածի եւ չտուածի դիմաց: Թէպէտ շնորհալիները շատ-շատ են: 10-ամեայ Ալինայիցս զգուշանում եմ, որ յանկարծ մտքով տարուած չշփոթեմ երգի բառերը կամ պարաքայլերը: Երեք տասնեակից աւել պարեղանակներ այսօր արդէն ինձանից լաւ են երգում: Եւ հենց այստեղ աւարտում է իմ կենսագրականը եւ սկսում է նրանցը: Սա էլ հենց ժողովրդի «Տես ու ուս» դպրոցի վիթխարի ուժի անկերջանալի կենսագրականն է:

Ինչ վերաբերում է համայնքին, նախ ասեմ իմ հաւատամքը. ես տեսնում եմ այն, ինչ ուզում եմ տեսնել, եւ չեմ տեսնում այն, ինչ չեմ ուզում տեսնել: Ուրեմն եւ՛ ես դեռ չեմ տեսնել մէկ հայ, որ միւս հային նման չլինի. մեր նմանութիւնն էլ հենց մեր միասնականութիւնն է: Երրորդ անգամն է, բարեպատեհ առիթը ունեմ ի մօտ շփուելու Սփիւռքի հետ. հինգ ամսով՝ Լոս Անջելեսի, 1996ին, մէկ ամսով՝ Յալէպի, 1997ին, եւ չորս ամիս է, ձեր մէջ եմ, վայելում եմ ձեր բարեկիրթ, հայավարի հարազատ մտերմութիւնը: Դաշտը, ուր տեղի է ունենում Սփիւռքի եւ իմ հանդիպումը, հոգեւոր մշակութայինն է. եւ յուսամ, ոչ միայն հասկցայ, այլեւ մաշկովս զգացի, թէ հոգեւոր մշակութային ինչ շնչով է շնչում Սփիւռքը, ինչ օդի պակաս ունի: Եւ ահա միւս առաջնագոյն խնդիրը, որ բոլորովին էլ յաւուր պատշաճի սիրոյ խոստովանութիւն չէ. հոգեւոր մշակութայինի, ոգեղէնի հողի վրայ չկա՛ սփիւռքահայ այս կամ այն համայնքի տարբերութիւն, չկա՛ սփիւռքահայ եւ Յայաստանահայ տարբերագատում, եթէ անգամ արեւելահայ եւ արեւմտահայ մշակոյթն ինչ-ինչ հիմքերով տարբեր ընթացք է ունենում: Կայ հա՛յ եւ հայութի՛ւն, հայավարի՛ նկարագիր, հայեցի ոգի՛ եւ հայոց անթերջուած կըրակ, որ անպարան կանթեղի նման կախուած է ե՛ւ Յայաստանի բաժին երկնքում, ե՛ւ Սփիւռքի: Նորից շեշտեմ՝ Սփիւռքի համար աւելի, որովհետեւ Սփիւռքը ոչ միայն հայրենակարօտ է, այլեւ հայրենիքակարօտ: Ոգեղէնն է նաեւ, որ նոյնացնում է մեր տարբեր կենսագրականները: Նախնեաց ծագումով մշեցի եմ: Եթէ պապերս 1915ին գաղթէին ոչ թէ Յայաստան, այլ ասենք՝ Յալէպ, այնտեղից էլ Կանադա, ես կարող էի լինել ճիշդ նոյն սփիւռքահայը, ինչ Դուք այսօր: Որպէս տարօնցի-համերկրացի շա՛տ մեծ է մեր տարբերութիւնը: Մեր զրոյցը մենք կարող ենք շարունակել Մշոյ եւ Սասնոյ բարբառով, յիշել մեր պապեանական սովորոյթները, հենց հիմա եփել մեր իւրայատուկ ճաշատեսակները, յետոյ ելնել եւ պարել մեր «Գորանին», «Մայրամեն» եւ «Եարխուշտան»: Յայաստանի շատ ու շատ բնակավայրեր՝ ե՛ւ խոշոր քաղաքները, ե՛ւ գիւղերը, ներկայացնում են ճիշդ նոյն պատկերը, ինչը կազմում է Սփիւռքի ներքին եուրթիւնը: Այսինքն՝ նոյն տեղում, նոյն կեանքով ապրում են Պատմական Յայաստանի տարբեր գաւառներից հայեր, եւ ամեն բնակավայր դառնում է Պատմական Յայաստանի փոքրիկ մանրակերտը: Այս գաւառները կենսունակութեան անկասելի ուժով պահում են իրենց երբեմնի բնիկ նկարագիրը: Իմ ծննդավայր գիւղը ճիշդ այդպիսի մի շքեղ մանրակերտ է՝ Ծիրակ, Մուշ, Բուլանուխ, Վանանդ, Բասեն, Ռշտունիք գաւառախառնուրդով: Այստեղ մի շատ գեղեցիկ աւանդոյթ ունեք, նշում էք որեւէ գաւառի տոհմիկ օր: Անման աւանդոյթ է: Իմ երագանքները որովհետեւ մէկ օրուայ մէջ չեն տեղաւորում, պիտի երագէի, որ ամեն հայի համար ամեն օր լինէր իր նախնեաց ծննդավայր գաւառի տոհմիկ օր: Դա բոլորովին էլ հեքիաթային երագանք չէ. ինձ համար ամեն Աստուծոյ օրը Մշոյ տոհմիկ օր է՝ հայելու մէջ իմ նշածն աչքերը, դէպի ներքեւ ձգվող դէմքը տեսնելուց սկսած մինչեւ իմ հոգում երեք չլռող բարբառ, երգ, պար, առակ, առած ու սասցվածք, մինչեւ իմ մեծ մօր գեհէն տեսած աչքերի հայեացք: Յեռուից էլ որ Ձեզ տեսնում եմ, ինձ համար անբաժան միասնութեան գաղափար լինելուց առաջ նախ անդարմանելի զգացողութիւն է, եւ ամեն անգամ համոզում եմ, որ Յայաստանից եկել եմ Յայաստան եւ միասին գնալու ենք մեր Երկրին Աւետյաց: Այս իմաստով Յա-

մագգայինի գործունեությունը պիտի երազի տեսնել առաւել ընդլայն, առաւել հզօր, որովհետեւ ոգեղէն միասնութեան կամրջաշիւարար վարպետը եւ մշակն է Համագգային Միութիւնը:

Երախտապարտ եմ հնարաւորութեանը, որ իմ հոգուն այսչափ հարազատ թեմաներով կարող եմ գրուցել ոչ միայն Ձեզ հետ, այլեւ ընթերցողիս: Ամէն ինչի համար եմ շնորհակալ, ձեր մէջ գտնուելու համար երջանիկ եմ:

3. Դուք Թորոնթոյի մէջ ներկայ գտնուեցաք զանազան խրախճանքներու եւ դիտեցիք բեմահարթակը լեցնող երիտասարդութեան պարերը: Ընկալեալ պարատեսակը որքանով հայկական է: Ի՞նչ միջոցներ պետք է կիրարկվեն, որպէսզի ժողովուրդը սորվի հայկական պարեր պարել:

Պ. Ո՛չ միայն Թորոնթոյում. պարահանդեսային երեւոյթը, որ արդէն հաստատուն աւանդոյթ է Սփիւռքում, կարծում եմ, ամէնուր նոյն կերպարանքի մէջ է: Պարահանդեսը նոյնպէս ինձ երեւում է մարտադաշտ, ուր ե՛ւ յաղթանակներ են արձանագրւում, ե՛ւ պարտութիւններ: Մեծ յաղթանակ է, երբ մեծաքանակ հայեր հաւաքւում են քով քովի եւ ուրախանում համատեղ, համախումբ: Սա շատ նման է մեր պապերի հոգեբանութեանն ու վարքագծին. մէկ պատառ հացը ուտել միասին, մտնել շուրջպար, պարել թեւ-թեւի: Տխուր տարբերութիւնն այս հաճոյքի վճարովի բնոյթն է, այսինքն՝ տոմսակը: Շատ լաւ հասկանում եմ նաեւ սրա նիւթական ուղղութեան միտումը եւ նպատակը: Բայց կարծեմ, երբ մարդն հեռանում է պարահանդեսից հոգու դատարկութեան զգացումով, յիշում է նաեւ գրպանի դատարկուելու անիմաստութիւնը: Ինձ հիացմունք պատճառելու աստիճան զարմացում է յատկապէս երիտասարդութեան հոծ մասնակցութիւնը պարահանդեսներին, նրանց անընդհատ պարելու, հենց պարի համար պարահանդես գալու բուռն ցանկութիւնը եւ գործուն մասնակցութիւնը: Այս իմաստով ավիտում եմ, որ Հայաստանում պարահանդեսային աւանդոյթ չկայ: Մանաւանդ որ պարից գրեթէ դուրս չեն գալիս միջին, միջինից բարձր կարիքի կանայք, իսկ երբ մեծահասակ տղամարդիկ են ելնում պարելու, հոգիս լիանում է, եւ թւում է, ո՛չ մի կորուստ չենք ունեցալ, ո՛չ մէկ նահանջ մեր բացառիկ կենսասիրութիւնից եւ կենսունակութիւնից: Ինչ վերաբերում է երգուող երգերին եւ պարուող պարերին, սա հենց այն մարտադաշտն է, ուր ամէն երգի եւ պարի հետ մենք գրանցում ենք մեր անփառունակ պարտութիւնը մեր պապերի առջեւ: Ամէն անգամ յիշում են մեր մեծերի մէկ ասացումը. «Շէն անուն վեր աւեր քաղաքին», այսինքն՝ այս աւերակ, այս փլատակ երգարուեստ-պարարուեստի վրայ յամառօրէն եւ անարժանապատիւ թողտըլութեամբ պահում ենք հայոց անունը: Երգ ու երգաոճ, որ երգողների կարծիքով բուն հայկական է, ըստ էութեան հակացուցում է որեւէ լսելիքի, չեմ ասում հոգու ընկալման: Մեր մտքին, հոգուն, նուրական զգացումներին, մեր յիշողութեան դատին ուղղուած արկեր են կոկորդի թանձր գեղգեղանքը, բառ-ասելիքի անիմաստ, խղճուկ դատարկութիւնը, երգատողերի շինծու, բռնազբօս սօսնձելը իբր բանաստեղծական պատկեր, զանազան միջոցներով օրեցօր սաստկացող ձայնաաղմուկը, եւ պարահըրապարակից վերադառնում են յոգնութեան այնպիսի զգացումով, կարծես պատերազմի դաշտից են գալիս: Այստեղ ո՞ւմ դեմ ենք ելել մարտի. մանաւանդ որ պարահանդես կազմակերպելու համար մարդկային ահագին ջանք ու միջոց է վատնուում: Ամէն տեղ զարմանալի յամառութեամբ նոյն երկու պարն են պարում. մէկը, եթէ չեմ սխալւում, յունական պարաքայքի վրայ է հիմնուած, միւսը՝ արաբական: Իմ համոզւածութիւնը բոլորովին անհիմն չէ, եթէ ասեմ, որ Սփիւռքում դեռ ահագին նիւթ կայ տոհմիկ ժառանգութիւնից. ե՛ւ հարբերո՞ւ երգնկա կայ, ե՛ւ Մուշ ու Սասուն, ե՛ւ Բալու եւ Սեբաստիա, ե՛ւ Ուրֆա ու Տիգրանակերտ, ե՛ւ Մուսա Լեռ ու Վասպուրական: Իմ պարախմբերի երիտասարդները հիանալի պարում են ե՛ւ «Ղափկի», ե՛ւ «Հալա-հալա Նինայէ», որ յայտնի է անճարգիների պար անուան տակ, գիտեն մի քանի տարբերակ «Թամզարա»: Բայց հենց այդ պարեղանակների տակ էլ նրանք պարում են ո՛չ բուն պարը, այլ նորից ու կրկին՝ յունական պարաքայքով հայկական ինչ-որ խառնածին տարբերակ: Ինչո՞ւ գաւառների ճաշատեսակները ամենայն խստապահանջ քիմքով պահում են, իսկ պարը զուրկ է արուեստի որեւէ քիմքից եւ զգացողութիւնից: Լինում

են պահեր, երբ կանգնում եմ զարմանալի եւ իրարամերժ իրականութեան առջեւ. պարախմբերի հետ իմ առաջին հանդիպմանը բացատրեցի, որ իմ բերած պարերը տարբեր են բեմականացուած այն պարերից, որ սովոր էք տեսնել Հայաստանի պետական պարախմբերի պարա-ելոյթներին կամ որեւէ մասնագետ պարուսոյց կարող է այստեղ նոյնպէս ձեզ սովորեցնել բեմադրուած պարերը՝ որպէս հայոց միակ եւ ընդունելի պարակեանք: Սկզբում նրբօրէն թաքցուած զարմանք կար, թէ ինչ է նշանակում միանգամից հրաժարուել Հայաստանից Սփիւռք մուտք գործող բեմականացուած պարերից եւ բեմ հանել պապենական-տոհմիկ պարերը, որոնք թուում են միօրինակ, թուում են ոչ բեմական, մէկ ողջ համերգային ծրագիրն անկասկած պիտի թուայ ձանձրալի: Որեւէ մէկին պարզապէս թոյլ չեմ տայ մտածի անգամ, որ մեր նախնիք դարերով պարել են նոյն պարերը եւ դարերով ձանձրացել, չեմ ասում, որ դրանք իրենց հիմքում կարող են լինել միօրինակ, առաւել եւս՝ ձանձրալի: Ես ուշի-ուշով հետեւում եմ աշխարհի բոլոր ժողովուրդների եւ երգին, եւ պարին: Թող ամէն ազգ հաստատ ու յաւերժ մնայ իր ստեղծածով, որովհետեւ նաեւ ինձ համար է ստեղծել, բայց ես հայոց որեւէ պար չեմ կարող դնել այլոց պարի կողքին՝ թերադասելու պայմանով. ես պարզապէս անմիտ պետք է լինեմ, եթէ այդ իրաւունքն ինձ վերապահեմ, ճիշդ այն անմտութեամբ, եթէ ես որեւէ ճարտարապետութիւն, գորգարուեստ, արծաթագործութիւն, ասեղնագործութիւն, մանրանկարչութիւն գերադաս համարեմ հայոց թողած ժառանգութիւնից: Եթէ կրկնուող է պարաքայքը եւ պարաշարժումը, ուրեմն ճիշդ այն նոյն գիտելիքի հիմքի վրայ, ինչ յաւերժաբար կրկնուող է տիեզերքի շարժումը, կրկնուող ու անկրկնելի՝ ճիշդ ինչպէս յաւերժութեան խորհրդանիշը: Սա երկար զրոյց է, եւ ուզած զրոյցի միակ պայմանը հաւասար զրուցակիցն է: Բերեմ ամենապարզ փաստակը. եթէ դուն, սիրելի՛ր իմ հայրողի, կարող ես 5-6 ժամ անընդհատ պարել երկու պարատեսակ եւ պարել ողջ կեանքիդ ընթացքին, քեզ պետք է ձանձրացնի՞ 20, 30, 50 պարատեսակը՞, այն եւս՝ քո բուն տոհմիկը: Այդ եւս իրաւունք ունեմ ձանձրանալու, երբ, գիտենալով հարիւրաւոր երգեր ու տասնեակներով պարեր, 5-6 ժամ մարմինս, հոգիս ընդարմանում է, աչք ու ականջս ապստամբում: Եթէ միասին գիտենանք եւ միասին ձանձրանանք, միասին զգանք մեր պապերից մէկ քայլ, տաս քայլ առաջ անցնելու պահանջ, անցնելը միասին, միասին փայլեցնենք մեզ ժառանգուած ոսկին, եթէ այն կարող էր ժամանակի քամուց խամրել, միասին հղկենք ու բազմանիստ դարձնենք այն ադամանդը, որ միայն հայոց հողին ընդերքում էր պահուում, եւ այսպէս դուրս գանք արուեստի համաշխարհային շուկայ: Առայժմ ես հասայ իմ գերագոյն նպատակին. պարողներիցս որեւէ մէկն անմաս չմնաց տոհմիկ պարի վայելքից, բոլորս միասին սպասում ենք Յուլիս 5ի մեր բեմելին որպէս վայելք, որ պիտի կիսենք հանդիսականի հետ: Բոլորս գիտենք, որ այս պարերը միայն մէկ ելոյթի համար չէին, դրանք մենք արդէն պարում ենք պարահանդեսներին, մանաւանդ որ երկու երաժիշտ, երաժշտանոց աւարտած երիտասարդներ մշտապէս իրենց կողքին պիտի լինեն եւ ինչեցնեն երեք տասնեակից աւել հնամենի պարեղանակներ: Ոչ թէ չեմ նախընտրել, այլ երբեւէ չեմ պատկերացրել, թէ ինչպէս կարելի է պարել բեմի խորքից ինչո՞ղ պատրաստի մեղեդիների տակ, որովհետեւ նուագածուն մշտապէս եղել է պարի կեդրոնական դէմքը, պարը կազմակերպողն ու ներշնչողը, երաժշտական խենթացնող միջավայր ստեղծողը: Ի գուր չէ, որ ժողովուրդն ասում է. «Հարսը հարսանիքի ժամանակ մոռցաւ փեսացուն, սիրեց զուռնաչուն»: Երաժիշտ տղաների համար մեծ յայտնագործութիւն էր, մանաւանդ որ նրանք էլ ռուսահայ էին եւ դարձեալ բռնի հեռացուած տոհմիկ ժառանգութիւնից, ինձ համար մեծ վայելք՝ այս ամէնը փոխանցել երիտասարդ սերնդին, թողնել որպէս պապենական թանկագին ընծայ եւ պատգամ նաեւ: Բեմականացուած պարերի մեծագոյն պակասն այն է, որ դրանք ստեղծուեցին, վերածեւուեցին, վերակարուեցին՝ բաւարարելու համար երկու պահանջ. բեմի պահանջ, որ չգիտես ինչու այդչափ տարբեր պիտի լինի հանդիսականի հոգեւոր պահանջից, եւ պարային մասնագիտական պահանջ, այսինքն պար, որ եթէ պարարուեստի ուսումնարան աւարտած չլինես, չես կարող պարել: Իսկ պարարուեստի ուսումնարանները ի սկզբանէ եւ հիմա էլ առաջին հերթին հիմնուած են դասական բալետային պարատեսակի վրայ, որը շատ հեռու է որեւէ ժողովրդական պարատեսակից: Այս

երկու պատճառով բեմի համար ստեղծուած պարերի մեծագոյն մասը, եթէ ոչ ամբողջութեամբ, բեմից չիջան, չմտան որեւէ հայի ձեռքի ու ոտքի մէջ՝ որպէս պարելու ցանկութիւն կամ հմտութիւն, ուրեմն եւ չմտան որեւէ հայի տուն, հարսանեաց հանդէս կամ պարահանդէս ո՛չ Հայաստանում, ո՛չ էլ Սփիւռքում, եթէ անգամ ուսուցանուեցին ինքնագործ մակարդակում: Իսկ տոհմիկ պարերը այսօր նոյնպէս տես ու ուս ձեւի մէջ արագօրէն փոխանցուում են ե՛ւ փոքրին, ե՛ւ մեծին: Ինձ համար նախնական, չճշտըւած վերաբերմունքային որեւէ արգելք արգելք չէ. հաստատ գիտեմ մէկ բան՝ այն, ինչը չի ներարկուում բնականոն, չենք կարող ունենալ, այն, ինչը չենք սովորում, չենք կարող գիտնալ: Առնուազն անգիտակ միամտութիւն կը լինի, եթէ յուսահատուեմ, թէ հայն անտեղեակ է իր հազարամեակների ժառանգութեանը, առնուազն դաժանութիւն կը լինի, եթէ հենց սկզբից աւելին պահանջեմ հայ այն մանուկից, ում ականջին անսովոր ու խորթ է հայկական պարեղանակն ու պարային կշռոյթը: Միակ միջոցը սա է՝ տո՛ւր, տո՛ւր, տո՛ւր ներշնչանքով, խոնարհում յարգանքով ե՛ւ պապի առջեւ, ե՛ւ պզտիկի առջեւ, տո՛ւր ազգային արժանապատիւ հպարտութեամբ, տո՛ւր, յետո՛յ պահանջիր. եթէ տուողը լիանայ իր տուածով, վերցնողը կը լիանայ տասնապատիկ: Հարկաւոր է ներքին հաղորդակցութեամբ, բնականոն փոխանցումով միջավայր՝ լինի ընտանիք, դպրոց, Հայ Կենտրոն, որեւէ ձեռնարկ, եւ ժառանգութեան կրողները կը ծնունեն սերնդէ-սերունդ: Եթէ միջավայրը չկայ, թոյլ է, հեղձուկ, որեւէ մէկը իրաւունք չունի մեղադրելու որեւէ սերնդի, եթէ հեռանայ ազգայինից եւ երթայ դէպի օտարը, լինի Հայաստանում, լինի Սփիւռքում: Այս աւանդակիր միջավայրը պահելը ամենօրեայ մարտադաշտ է առանց հերոսացման եւ շքանշանների. բայց եթէ մէկ օր զէնքերդ վայր դրիր, օտար ազդեցութիւնն ինքը կը գայ, տանտիրոջ իրաւունքով կը բազմի մեր սեփական յարկի տակ, հայրենական դաշտում բանակ կը զարկի եւ կը սպառնայ «քարը քաղել, աւազ մաղել, հայրենիի ոգեղենը վարել, բոստան ցանել...»: Մտրա Մելիքի բերանով ասուած այս սպառնալիքից մինչեւ այսօրուայ քաղաքակրթական անկէր՝ նոյն կոտորածն է: Մեր դատը մենք ինքներս պիտի անենք զոնէ այն ասպարեզատեանում, որտեղ դատն էլ, դատարանն էլ մեր ձեռքն է: 50-70 տարին մէկ աւագահատիկ է պատմութեան ընթացք որպէս. այն, ինչը պահպանուել է հազարամեակներով, որպէս ազգային մտածողութեան կուռ ու շքեղ համակարգ, չի կարող կորչել 100 տարուայ ընթացքին: Եթէ հայոց ճարտարապետութիւնից մէկ սիւն եւ մէկ խոյակ էլ մնայ, հայոց պայծառատես միտքը ծագումնաբանական յիշողութեան զօրաւոր մղումով կը վերակերտի ճարտարապետական ողջ կառոյցը, ինչպէս վերականգնեց Չըւարթնոցը: Եթէ հեռացել ենք, վերադառնանք ինքներս մեզ, ապրենք ազատ, անկեղծ, անմիջական, պարզ, անհոգ՝ եղած հոգսերը էլ աւելի չծանրացնելու իմաստով, ապրենք առանց վախի, որ մեր սերունդը մեզանից հեռանում է, ապրենք մեզ հասանելի, արեան ձայնի, ծագումնաբանական յիշողութեան ուժն իր մէջ պահած արուեստի մէջ: Ապրենք եւ չվերլուծենք, չքննարկեն, չվիճենք, չծրագրենք, թէ այսօր ինչպէս ապրեցինք, վաղն ինչպէս ենք ապրելու: Եւ կեանքը մեզ նոյն անկեղծութեամբ վայելքի համեմատ իմ այս խնդիրներն ու մտորումները մէկ տոկոսի արժէք չունեն: Պարզապէս, զրուցելու, կիսուելու պահանջը նոյնպէս զօրաւոր է, եւ մեր հաղորդակցական արուեստի պակասը ամենամեծ նահանջն է մեր մեծերի իրար հետ զրուցելու, հաղորդակցուելու արուեստից: Սերունդների մէջ շա՛տ ու շատ կամուրջներ այրուում են հենց միմեանց հետ չհաղորդակցուելու կամ սխալ հաղորդակցուելու պատճառով: Ասելիքիս մէջ եղած դաժանութիւնն ընդունէք որպէս հոգուս ցաւ:

1997
Թորոնթօ

**«ՈՒԺԵՂ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝
ԵԶԻՏԻ ԱԶԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱԳԱՆ Է»**

**Հարցազրոյց Հայաստանի «Էզդիխանա» հասարակական-
քաղաքական կազմակերպութեան նախագահ
պատմաբան Սիաբանդ Բաքոյեանի հետ**

«Հորիզոն»ի Թորոնթոյի թղթակից ընկ. Գրիգոր Հոթոյեան, որ Հոկտեմբերին Հայաստան կը գտնուէր, հետեւեալ հարցազրոյցը ունեցած է Հայաստանի Հանրապետութեան «Էզդիխանա» հասարակական-քաղաքական կազմակերպութեան նախագահ պատմաբան Սիաբանդ Բաքոյեանի հետ:

Յ. Պրն. Բաքոյեան, ուրախ եմ, որ պատիւը կ' ունենամ Հայաստանի մէջ հաղիպելու եզիտիներու դեկավարներէն մէկուն հետ: Շատ լսած եմ Հայաստանի եզիտիներու մասին, անոնց հայ ժողովուրդի հետ ունեցած բարեկամութեան, մանաւանդ 1918ին, Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի ճակատամարտերուն ձեր ժողովուրդի մասնակցութիւնը՝ թուրք բանակներուն յառաջխաղացումը կեցնելու եւ միշտ հայ ժողովուրդին հետ ըլլալու ձեր քաղաքականութիւնը մեծապէս գնահատած է հայ ժողովուրդի կողմէ:

Քիչ առաջ խօսեցանք եւ ինծի ցոյց տուիք «Էզդիխանա» հասարակական-քաղաքական կազմակերպութեան կանոնագրութիւնը, զոր վաւերացուած է եւ գրանցուած Հայաստանի հանրապետութեան Արդարադատութեան նախարարութեան որոշմամբ՝ 27 Յունիս 1997-ին:

Պրն. Բաքոյեան, կրնայի՞ք մեզի կարգ մը տեղեկութիւններ տալ այս կազմակերպութեան մասին:

Պ. Հայաստանի Հանրապետութեան «Էզդիխանա» հասարակական-քաղաքական կազմակերպութիւնը, կամաւոր հիմունքներով միաւորուած, Հայաստանի Հանրապետութեան ընտրական տարիք ունեցող քաղաքացիների միաւորում է, որի նպատակն է՝ ծառայել հայ եւ եզիտի ժողովուրդների դարաւոր բարեկամութեան ամրապնդման, ժողովրդավարական Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ հոգեւոր հզօրացման:

Ունի իր ծրագիրն ու կանոնագրութիւնը, ընտրութիւնների միջոցով գործնականօրէն մասնակցում է Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան մարմինների կազմաւորման, դրանց գործունէութեան, ինչպէս նաեւ հանրապետութեան հասարակական-քաղաքական, ընկերային-տնտեսական եւ մշակութային կեանքին: Կազմակերպութիւնը գործում է ՀՀ Սահմանադրութեանը, գործող օրէնսդրութեան եւ մեր կանոնադրութեան համապատասխան:

Կազմակերպութիւնը համագործակցում է պետական իշխանութեան մարմինների, հասարակական-քաղաքական ու կրօնական, ինչպէս նաեւ միջազգային կազմակերպութիւնների հետ:

Յ. Կազմակերպութիւնը ի՞նչ նպատակներ կը հետապնդէ:

Պ. Կազմակերպութեան ծրագրային գլխաւոր նպատակն է՝ համակողմանօրէն աջակցել ազգութեամբ եզիտի ՀՀ քաղաքացիներին, որպէսզի նրանք դառնան Հայաստանում ծաւալուող ժողովրդական գործընթացների ակտիւ մասնակիցները, կազմաւորուող ժողովրդական, իրաւական եւ սոցիալական պետութեան լիարժէք քաղաքացիները: Կազմակերպութեան ռազմավարական նպատակն է՝ «Ուժեղ եւ ժողովրդական Հայաստանը՝ եզիտի ազգի քաղաքական ապագան է»:

Կազմակերպութեան գործունէութեան հիմնական խնդիրներն են.

ա.- Ակտիօրեն պաշտպանել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանադրական իրաւունքներն ու ազատութիւնները:

բ.- Նպաստել հայ-եզիտի եղբայրական կապերի ամրապնդմանն ու զարգացմանը:

գ.- Կապեր ստեղծել Անկախ պետութիւնների հասարակապետութեան երկրներում գործող եզիտիական համայնքների եւ նրանց մշակութային կազմակերպութիւնների հետ:

Յ. Ինչպէս ըսի, եզիտիական ազգի մասին գաղափար ունինք, սակայն անոնք շատ հպանցիկ են: Պատմականօրէն հայ եւ եզիտի ժողովուրդները ճակատագրակից են, սերտ եւ բարեկամական գործակցութեամբ ապրած են եւ կ'ապրին ներկայիս Հայաստանի մէջ, սակայն, դժբախտաբար Սփիւռքի հայութիւնը շատ քիչ տեղեկութիւն ունի եզիտիներու ազգութեան եւ մանաւանդ կրօնքին մասին: Կրնայի՞ք որոշ տեղեկութիւններ տալ՝ ովքեր են եզիտիները:

Պ. Ինչպէս մարդ անկարող է ապրել առանց յիշողութեան, այնպէս էլ հասարակութիւնը առանց յիշողութեան չի կարող գոյատեւել: Որեւէ հասարակութեան յիշողութիւնը մշակութային զանազան արժեքների միջոցով փոխանցուում է սերնդէ սերունդ: Մշակութային արժեք ասելով հասկանում ենք այն գործողութիւնները, որոնք անհատից սեռուելով, դառնում են հասարակութեան սեփականութիւն: Անհատի կողմից տարբեր ձեւերով դրսեւորուած մտաւոր արժեքները հասարակական ոլորտում գնալով հարստանում եւ երանգաւորում են եւ հասարակական յիշողութեան մէջ ըզբաղեցնում են այն տեղը, որին արժանի են: Անհատն իր գիտակցութիւնը հարստացնում է այն չափով, ինչ չափով ընդունակ է իւրացնել հասարակական յիշողութիւնը: Հարուստ պաշարներ ունեցող մարդու ստեղծագործական ունակութիւնները եւ ուժն էլ նոյն աստիճանի հարուստ կը լինի: Որեւէ հասարակութեան մէջ ստեղծագործող ոյժի ընդունակութիւնների տեր մարդկանց թիւն ինչքան շատ լինի, այնքան մեծ կը լինի երաշխիքը, որ տուեալ հասարակութիւնը կը կարողանայ պահպանել եւ հարստացնել իրեն յատուկ արժեքները եւ գոյատեւելի երկրի երեսին:

Հասարակութիւնը ունի բանաւոր յուշեր, այսինքն՝ հեքիաթներ, որոնք մեր հայերը ձմրան ամիսներին լսել են մեր պապերից: Գոյատեւելու համար մղուած պատերազմները, բազմաճառի համար երիտասարդներին ամուսնացնելիս, կազմակերպուող հարսանեաց հանդեսները, մահուան պատճառած սուգը, թշնամու հասցրած վնասները, եւայլն: Սակայն, այս բոլորից դուրս գոյութիւն ունի մի շատ կարեւոր արժեք, դա այս պահին մեր կատարած գործողութիւնն է: Դուք գրում էք, ես կարդում եմ:

Այդ գիրն է, անհատի ամենախրոխտ զենքը: Գիրերից բաղկացած գիրքերը, ամեն տեսակի գրաւոր փաստաթուղթը հասարակութեան համար ամենաթանկ գանձ է: Մի խօսքով, գրաւոր յիշողութեան ընդհանուր անուանումը կը լինէր Պատմութիւն:

Մարդը մի այնպիսի էակ է, որ կարողանում է քայլել ժամանակին համընթաց, մեկնաբանել երկիրն ու տիեզերքը: Եւ, որ ամենակարեւորն է, նա արարչագործ էակ է: Իւրաքանչիւր մարդ, իր դրական եւ բացասական կողմերով, հասարակութեան մէջ զբաղեցնում է իր տեղը: Կան եւ կը լինեն լաւ եւ վատ անհատներ, դերակատարներ, որոնք իրենց կնիքն են թողել պատմութեան անթիւ էջերի վրայ:

Յ. Եզիտի ժողովուրդը արդե՞օք ունեցած է սեփական գիր-գրականութիւն:

Պ. Չնայած մենք՝ եզիտիներս, ունեցել ենք մեր գիրն ու գրականութիւնը, բայց դարերի ընթացքում դրանք մոռացուել են հիմնովին եւ ոչ մի բան չի հասել մեզի: Այս խօսքերիս վառ ապացոյցն է չեխ գրող Չ. Լռուկոտկայի «Գրի Չարագացումը» գիրքն է: Որոշ հին ազգերի տառատեսակների կողքին, գիրքի վերջին սիւնակում ցոյց է տըրւած եզիտիների տառատեսակները:

Տեսնելով այս տառերը, մենք մէկ անգամ եւս համոզուում ենք, որ եզիտիները հին ազգ են եւ ունեցել են պետականութիւն, որը կոչուել է «Միդիա» կամ «Մրիդիա»:

Մեկը կարող է հարց տալ, հապա ո՞ր կորաւ եւ ի՞նչ եղաւ այդ պետութիւնը: Ես հարցին հարցով կը պատասխանեմ. իսկ ի՞նչ եղաւ Ատորեստանը:

Մահմետականները, այրելով տուն ու տեղ, կոտորելով մեր ժողովուրդին, նաեւ բնաջնջում էին մեր մշակոյթը, խարոյկների մէջ նետում մեր ազգին պատկանող եւ ազգութիւնը հաստատող ամեն մի գրական եւ մշակութային արժէք:

Քանի-քանի ժողովմ»ուրդներ ծնուել են, ապրել եւ պատմութեան էջերում առաւել կամ նուազ յիշատակներ թողնելով, պատմութեան թատերաբեմից անդարձ հեռանալով՝ մոռացել են: Ապրում են այն ժողովուրդները, որոնք ունեցել են իրենց գոյապահպանական հիմնական ուժը, կարողացել են գուրգուրալ եւ հիմնուել իրենց ազգապահպանական հիմնական ուժի վրայ:

3. Կ'ուզէի՞ք կարգ մը ծանօթութիւններ տալ եգիտիական կրօնի մասին:

Պ. Մերձաւոր Արեւելքի պատմութեան խճանկարում իր ուրոյն տեղն ունի եգիտի ժողովուրդը: Ինչո՞ւմն է գաղտնիքը: Մի պարզ պատճառում: Մեր ժողովուրդը իմացել է պահել ու պահպանել իր ազգային-հոգեւոր մշակոյթը: Իսկ եգիտիական հոգեւոր գանձարանում ո՛չ միայն եգիտիական քաղցրահնչիւն լեզուն է եւ հարուստ բանարուեստը, ո՛չ միայն հնամենի բարքերն ու սովորութիւնները, փորձութիւններով եւ մանաւանդ եգիտիական էապէս ազգային կրօնը, հաւատալիքները, պաշտամունքը, ծեսերն ու արարողութիւնները: Այո՛, մեր ժողովուրդի ազգապահպանման հիմնասիւներից մեկը եղել է կրօնը, որը ոչ միայն դաւանանք է, այլ նաեւ աշխարհահայեացք, աշխարհըմբռնման հիմք, նաեւ հոգեբանութիւն եւ կենցաղ:

3. Ձեր ազգային պատմութիւնը, ինչպէս կ'ըսեք հազարաւոր տարիներէ կուգայ, ինչպէ՞ս հասած է ձեզի: Գրութեամբ, թէ բերանացի:

Պ. Եգիտի ազգի պատմութիւնից գոնէ մի չնչին մաս փրկելու համար իմաստուն մարդիկ մեր պատմութիւնը սերտեցին անգիր: Մերնդից-սերունդ փոխանցուած այդ իմաստուն մարդկանց գիտելիքները փոխանցուեցին մեզի: Մեր օրերում բազմաթիւ աշխարհիկ եւ հոգեւորական եգիտիներ լաւ գիտեն մեր պատմութիւնը: Մենք այն անպայման գրի կ'առնենք եւ կը թողնենք մեր յետնորդներին: Մենք պետք է հնարաւոր դարձնենք մեր երեխաների համար ժամանակակից կրթութեան ամենաբարձր մակարդակը: Մենք չեն կարող այլեւս մեզ թող տալ որպէսզի մնանք լքուած, քաղաքակրթութեան փողոցի եզրին, մոռացութեան փուլու մէջ ընկած:

Աշխարհի բոլոր ազգերի ու ժողովուրդների նման մենք եգիտիները, նոյնպէս ունենք մեր ազգային առանձնայատկութիւններն ու սովորութիւնները: Պատմական հաւաստի տուեալներով, մենք հին արիական ծագում ունեցող ժողովուրդ ենք: Մենք պաշտում ենք Արեւը (Շամօ), պաշտում ենք ո՛չ որպէս կրակի գունդ կամ ջերմութեան աղբիւր, այլ որպէս կեանքի եւ լոյսի աղբիւր, առանց որի ոչինչ գոյութիւն չի ունենայ աշխարհի երեսին:

3. Ձեր կրօնական հաւատալիքներու կարգին, ունի՞ք մարգարէներ:

Պ. Այլ կրօնների նման մենք էլ ունենք բազմաթիւ մարգարէներ եւ հրեշտակներ: Մեր գլխաւոր մարգարէն Շրխադինն է, հրեշտակապետը՝ Մալաքի Տաուսը, դաւանանքը՝ Շարֆատինը, իսկ մեր առաջնորդը Եգիտի (ինչ ընդունուած է հայ անուան համար հիմք համարել Յայկին): Մենք միաստուածներ ենք, բազմաստուածութիւնը մեզ մօտ բացառուում է:

3. Քանի՞ դասակարգերու բաժնուած է եգիտի ազգը:

Պ. Եգիտիները բաժանուում են երեք հիմնական խմբերի: Շէյխեր, Փիրեր եւ Մրիդներ:

Շէյխերն ու Փիրերը եգիտիներու հոգեւորականներն են, որոնք չեն ընտրուում, այլ ստանում են ժառանգականօրէն: Շէյխի երեխան շէյխ է, փերինը՝ փրի, Մրիդինը՝ Մրիդ: Այս երեք հիմնական խմբերից Մրիդները մեծամասնութիւն են կազմում: Շէյխերը իրենց կարգին բաժանուում են երեք հիմնական խումբերի.

1. Շէյխէ Շէյխուբաքրալ
 2. Շէյխէ Շիխըսնա եւ
 3. Շէյխա Շամաս:
- Փիրերը նոյնպէս բաժանուում են երեք հիմնական խմբերի.
1. Փիրէ Զագմամանա
 2. Փիրէ Օմար Խալա
 3. Փիրէ Իսեմբեայ:

3. Ձեր Շէյխերը կրնա՞ն ամուսնանալ:

Պ. Վերոյիշեալ շէյխերի խմբերը ամուսնական կապերի մէջ միմեանց հետ չեն կապուիր: Իւրաքանչիւր խմբի շէյխը պէտք է ամուսնանայ իր խմբի ներկայացուցիչի հետ: Փիրերը նոյնպէս ամուսնանում են իրենց խմբի ներկայացուցիչի հետ:

Մրիդները նոյնպէս ամուսնական կապ չունեն շէյխերի ու փիրերի հետ: Շէյխերն ու փիրերը ինչպէս միմեանց հետ, այնպէս էլ մրիդների հետ ամուսնական կապ չունեն, ինչպէս նաեւ այլազգիների հետ ամուսնանալու իրաւունք չունեն: Այս բոլորը արած է եւ արւում է եզիտիութիւնը պահպանելու համար, այլ կերպ ուժացումը անխուսափելի էր եւ հիմա ոչ մի եզիտի գոյութիւն չէր ունենայ:

Եզիտիները բաժանուում են տարբեր համայնքների: Իւրաքանչիւր համայնք կոչւում է ճանաչւում է իր համայնքի նախնու անունով: Իւրաքանչիւր համայնք, ինչպէս մրիդները, այնպէս էլ շէյխերն ու փիրերը ունեն իրենց հոգեւորականը (շէյխ եւ փեր): Սրանք մասնակցում են իրենց համայնքի բոլոր արարողութիւններին, կնունքներին, նշանդրեքներին, հարսանիքներին, թաղման, անցկացնում ազգային եւ կրօնական բոլոր ծիսակատարութիւնները:

3. Ինչպէ՞ս կ'ընտրուին:

Պ. Եզիտիների մօտ ընտրովի է միայն հոգեւոր առաջնորդը (միրը) գտնուում է Իրաքի հանրապետութեան հիւսիսային մասում՝ Սինջարում բնակուող եզիտիների մօտ, որտեղ եւ գտնւում են մեր ազգի սրբավայրերը, սուրբ տաճարները, սուրբ աղբիւրները եւ սուրբ գերեզմանները: Ամենազխաւոր տաճարը Շարֆադիկի տաճարն է: Միրը՝ Շէյխէ Խեյուբաքրաների խմբից է: Նրան իրաւունք է վերապահուած հսկել եւ ղեկավարել ազգի բոլոր անելիքները, դատապարտել իւրաքանչիւրին վատ արարքի համար, մինչեւ անգամ եզիտիութիւնից վտարել անուղղելի եզիտին:

Ազգային այսպիսի բարդ, միեւնոյն ժամանակ իւրաքանչիւր եզիտու համար պարզունակ կազմ, չկայ ոչ մի ուրիշ ժողովուրդի մօտ: Եզիտիները աշխարհում այս բացառիկ ժողովուրդն են, որ շուրջ 3000 տարուց աւելի պահպանել են իրենց հաւատքը:

3. Ձեր կրօնը ինչպիսի՞ հիմունքներու եւ սկզբունքներու վրայ հիմնուած է:

Պ. Եզիտիների կրօնը շատ մարդասիրական է: Եթէ իւրաքանչիւր եզիտի պահի եւ հետեւի նրա բոլոր հիմունքները, ես համոզուած եմ, որ նա չարութիւն չի պատճառի ոչ մէկին եւ չարութեան չի հանդիպի: Եզիտիների կրօնը երբեք թշնամութիւն չի սերմանում այլադաւանների նկատմամբ եւ չի անտեսում ուրիշ կրօնները, այլ ընդունում է, որ իւրաքանչիւր կրօն ունի իր առանձնայատկութիւնները, որ իւրաքանչիւր կրօնին դաւանող անձը պէտք է բարձր դիրքերի վրայ պահի իր հաւատը եւ նուիրածութիւնը իր սրբերին, քանզի հաւատքն է, որ մարդու ետ է պահում չարագործութիւններից: Եզիտիների կրօնը մեղք է համարում սուտ խօսելը, բանբասանքը, զրպարտութիւնը, վաշխառութիւնը, բազմակնութիւնը, ազգի ուրացումը, եւայլն:

3. Անշուշտ Զայաստանի եզիտի համայնքը ունի իր հոգեւոր առաջնորդը, կըրնա՞ք անոր մասին խօսիլ:

Պ. Սիրով, Զայաստանի եզիտիներու հոգեւոր առաջնորդն է Շէյխ Զասան Զասանեան, որ միեւնոյն ատեն անդամ է «Եզիխանա» հասարակական եւ քաղաքական կազմակերպութեան քաղաքական խորհրդին: Յարգելի անձնաւորութիւն մըն է, որ

կ'ուզե ամեն ձեռով սերտացնել հայ-եզիտի եղբայրակցութիւնը: Ան շուտով հանդիպում մը պիտի ունենայ Ամենայն Յայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ին հետ, անոր առաջարկելու ազգովին մասնակցիլ հայ ժողովուրդի քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակի հանդիսութիւններին:

3. Կ'ըսուի թէ, եզիտիները ազգութեամբ քիւրտ են, իսկ եզիտիութիւնը հաւատամբ է: Ի՞նչ է ձեր կարծիքը այս հարցին շուրջ:

Պ. Ես շատ լաւ գիտեմ, թէ մենք եզիտիները ինչ են դաւանում եւ ում ենք պաշտում: Չարմանալին այն է, որ որոշ քրտեր ջանք չեն խնայում համոզելու մեզ, որ իբր մեր դաւանանքն ու կրօնը եզիտիութիւնն է, իսկ ազգութիւնը՝ քիւրտ: Ասիկա իրապէս ծիծաղելի եւ զարմանալի է:

Մահմետականութիւնը մասնատեց եզիտիներին եւ շատերն ընդունելով մահմետականութիւնը, միացան քրտերին: Այսօր շատ քրտեր չեն հերքում, որ նրանց կրօնը եղել է եզիտի կրօնը:

Եզիտիները պատմութեան ընթացքին հալածուել են մահմետական ժողովուրդների՝ յատկապէս քիւրտերի եւ թիւրքերի կողմից: 16-17 դարերից սկսած Օսմանական կայսրութեան մէջ մահմետական բարձր հոգեւորականութեան ներկայացուցիչները եզիտիների դէմ պարբերաբար հրապարակում էին ֆետուաներ՝ ըստ մահմետական շարիաթի:

3. Կրօնափոխութեան պատճառները հաւատքի, թէ հալածանքներէն խուսափելու համար եղած են:

Պ. Քիչ չեն դեպքերը, երբ եզիտիները հալածանքներից խուսափելու համար հարկադրուած են եղել ընդունել մահմետականութիւնը: Նման երեւոյթով է պայմանաւորուած այն հանգամանքը, որ մի քանի եզիտիական ցեղական միաւորումներ իրենց կազմում ընդգրկում են նաեւ մահմետականներ: Այս ամենի հետեւանքով նուազել է եզիտիների թուաքանակը եւ նրանց տարածման շրջանակները թշնամաբար տրամադրուած հարեւանների մշտական հալածանքները եւ կրօնական հետապնդումները նպաստել են եզիտիների մեկուսացմանը եւ կղզիացմանը մահմետական շրջապատից եւ հակառակ դրան՝ ծնել մեր հակուածութիւնը դէպի քրիստոնէաները, յատկապէս հայերը:

12րդ դարի սկզբին սկսուեց եզիտիների կոտորածը այլադաւանների կողմից: Չդիմանալով թշնամիների հալածանքներին, եզիտիները դիմեցին փախուստի զանազան երկիրներ, ինչպէս նաեւ Արեւմտեան Յայաստան: Եզիտիները լինելով լաւ յարաբերութիւնների մէջ հայերի հետ, ընդունուեցին հայերի կողմից եղբայրաբար: Եւ այդ օրուանից մեր ճակատագրերը նոյնացան:

Չէ՞ որ Օսմանեան կայսրութիւնում թուրքերն անխնայ կոտորում էին ոչ միայն «անհաւատ» հայերին, այլ նաեւ «անհաւատ» եզիտիներին, որոնց «մեղքը» ծանրաւում էր երկրորդ «մեղք»ով, նրանք բարեկամ էին հայերին, դարաւոր հարեւան ու հարազատ եւ տեսապէս ու ըստ ամենայնի օգնում էին հայերին:

Չէ՞ որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եաթաղանն իջաւ նաեւ եզիտիների վզին եւ մի՞թէ փոքրաթիւ է այն եզիտի ընտանիքների թիւը, որոնց աւագները ընկել են սուլթանի օսմանցի գաւակների եւ նրանց կազմակատարների բարբարոսական եաթաղանից:

Մարդկային բանականութեան ծաղը չէ՞ր միթէ «անհաւատ» հռչակել պարկեշտ եւ հեզաբարոյ հային, աստուածավարի քրիստոնէային, ու նրա հետ նոյնքան պարկեշտ ու հեզաբարոյ եզիտուն, հոգեւոր բարձր առաքինութիւնների տեր արեւորդի եզիտուն:

3. Ներկայ Յայաստանի սահմաններուն մէջ ապրող եզիտիները ո՞ր երկիրներէ գալով ապաստան գտան:

Պ. 1915 թուականին, երբ թուրքի եաթաղանը բարձրացաւ հայի գլխին, անոնք չխնայեցին նաեւ եզիտիներին: Եւ հրից ու սրից մազապուրծ հայն ու եզիտին

միասին ճաշակեցին տեղահանութեան դառնութիւնները եւ ապաստան որոնեցին Արեւելեան Յայաստանում, որ անոնք նոր օճախ հիմնեցին կողք-կողքի:

Եւ այսօր, նախնեաց օրինակով, նրանք Յայաստանի Յանրապետութիւնում մասնակցում են միմեանց ուրախութիւններին, կիսում միմեանց կորուստն վիշտը:

Յ. Եզիտիական եւ քրտական լեզուները հասկնալի՞ են երկու ազգերէ եւ որքանո՞վ նմանութիւն ունի:

Պ. Ոմանք ասում են, թէ քրտական եւ եզիտական լեզուները նոյնն են, իրար լաւ հասկանում են: Այո, սակայն միայն իսլամութիւնը ընդունած եզիտիները եւ մենք՝ եզիտիներս իրար հասկանում ենք եւ ո՛չ թէ բոլոր քրտերը: Եւ ընդհանրապէս սա սըխալ տեսակէտ է, իրար լաւ են հասկանում ռուսները, բելոռուսները, ուկրաւացիները, իրար լաւ են հասկանում պարսիկները, աֆղանները, տաճիկները եւ պարսկալեզու ուրիշ ժողովուրդներ: Բայց դրանք տարբեր ժողովուրդներ են, չնայած վերը նշուած ազգերի դաւանանքը, մշակոյթը եւ ազգային շատ սովորութիւններ նոյնն են: Տարբեր ժողովուրդներ են նաեւ քրտերն ու եզիտիները:

Ըստ եզիտների կրօնի հիմնադրոյթի՝ եզիտի դառնալ կարելի չէ, եզիտի պէտք է ծնուել: Մենք եզիտի ծնած ենք, եզիտի ենք, այլ ազգ դառնալ չենք ուզում: Մենք ունենք պատմական տուեալներ, սուրբ գրքեր, ժողովրդական երգեր, բանաստեղծութիւններ, ունենք մեր առանձնայատուկ դաւանանքը, որոնք մեզի սովորեցնում են թէ ովքեր ենք մենք:

Շնորհակալ ենք պրն. Ս. Բաքոյեան այս հարցազրոյցին համար: Վստահ ենք, մեր սիրելի ընթերցողները ձեր տուած պատասխաններէն մեկնելով որոշ գաղափար ունեցան եզիտի ժողովուրդին եւ անոր կրօնին մասին, ինչպէս նաեւ հայ ժողովուրդին հետ ունեցած եղբայրական զգացումներուն շուրջ, որոնք կը յուսանք, որ աւելի կը սերտանան, ի շահ երկու ազգերու բարգաւաճումին եւ հզօրացման:

**«ՅՈՐԻՉՈՆ»
9 Մարտ 1998**

ՏԻՆՁԵՐԱՒԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Ի Ն Ձ Է Ն Շ Ա Ն Ա Կ Ո Ւ Մ Ե Ջ Տ - Ի .
Ե Ի Ո Վ Ք Ե Ր Ե Ն Ն Ր Ա Ն Ք**

ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆԵԱՆ

1.- Հայ Արիական ֆաղափարքային տարաբաժանումներէն ԱՐԱՄԱՍՏ-Աստույ պաշտամունքը նաեւ բաժնուեցաւ Հայ-Արիական ժողովրդի մէջ, ստանալով ԱՋՏ, ԱՇՏ, ԵՋՏ, ԱՋՏԱ, ԵՋՏԱ, իմաստակառոյցային բարբառատեսակները:

2.- Հայ-Արիական բառակառոյցներից իմանում ենք իրենց բառակառոյցամաստածները, որը մեզանից է անցել օտարացման, ինչպէս ուսերէնում պահուած, ԶՎԵՋՏԱ-աստղ, ԶԱՐ-ԶԱՌԹԱ-տառուտ, ԶԱ-անդին, Զանց: ԶՎ-ԵՋՏԱ, ԵՋՏի:

3.- Քրիստոնէութեան ներխուժումը Հայաստան, արեւապաշտ հայոց բռնի ուժով քրիստոնէացուցին (տես Ազգաբանագիտութիւն): Իսկ ԱՐԱՄԱՍՏ-ի ԱՋՏի-ԵՋՏի-արիական հայ զանգուածը հեռացաւ քրիստոնէութիւնից և հաւատարիմ մնալով ԱՐԵՒԻՆ-ԵՋՏ-ի-իւն- երկնային զօրութեանը և նրա հնագոյն սովորութիւններին, որոնք ժառանգել է Արամաստից, ԱՋՏի-ց- ԵՋՏի-ից ՆԱՐԻ-ց ԱՆԱՀԻՏ-ից:



4.- Քրիստոնէութիւնը ոչ միայն արեւապաշտներին մեկուսացուց, այլ նաեւ ինքը իր մէջ բաժանուեց, Հայ-Առաքելական, Հայ-Կաթողիկ, Հայ-Աւետարանական և այլ հատուածներու: Բաժանելով հայ ժողովուրդը:

5.- ԵՋՏի- նշանակում է [Յ]-երկնային, [Զ] զօրութիւնը [Տ] անսահման, [Ի]- իսկզբանէ: Սա վերագրում էր Արեւին, որպէս երկնային զօրութիւն:

6.- ԵՋՏի-ների լեզուաբարբառը նախկինում եղած է ԱՐԱՄԱՍՏի Հայ-Արիական լեզուաբարբառը: Սակայն ենթարկուելով պատմական տրոհումների, ԵՋՏի-ների լեզուն, ինչպէս հայոց շատ լեզուաբարբառներ հեռացել են մայր լեզուից: Օրինակ- Ռոստովի, Ղրիմի, Սասնոյ, Այնճարի, Ֆրանսահայի, Քրփահայի բարբառները հասել են ունայնացումի և լրիւ նոր լեզուածնի:

7.- Հայաստանում բնակուող ԵՋՏի-արեւապաշտ ժողովուրդը և Հայաստանի հայ ժողովուրդը չգիտի իր արիական ծագումի մասին: Պարզապէս ժամանակի և տարածութեան մէջ է թաղանթած նրանց մէկ լեզուածին լինելու գաղտնիքը:

8.- Հայաստանաբնակ ԵՋՏի-ները եթէ խօսում և գրում են հայերէն... դա իրենց հնագոյն մայրենի լեզուն է, որին հաղորդում են ի փառս ԱՐԱՄԱՍՏի, ԱՐԱՄԵՋՏի, ԱՋՏի, ԵՋՏի, արեւապաշտ իմաստասիրական մտքին: ԵՋՏԱ-երկնային Զօրութիւն, անսահման Արեւ-ի տակ մենք մօտեմանք մեր Արիական հնագոյն լեզուին:

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԵՐՈՒՆ՝ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼ ՄԵԿ ՑՈՒՑԱԿՈՎ

ԵՐԵՒԱՆ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»: «Եզդիխանա» կուսակցութեան նախագահ Սիաբանդ Բաքոյեանը առաջարկել է Հայաստանում բնակուող այլ ազգային փոքրամասնութիւնների ներկայացնող համայնքային կազմակերպութիւնների ներկայացուցիչների՝ առաջիկայ ԱԺ-ի ընտրութիւններում ներկայացնել մէկ համամասնական ցուցակ՝ հենց սկզբից յայտարարելով, որ ինքը պատրաստ է իր ղեկավարած կուսակցութեան անունից ներկայացրած ցուցակում լինել չորրորդը կամ հինգերորդը:

Սիաբանդ Բաքոյեանն ասում է, որ Հայաստանի Հանրապետութիւնում անցկացուած ԱԺ երեք ընտրութիւնները ցոյց են տուել, որ ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչները ոչ մի հնարաւորութիւն չունեն ընտրուել ԱԺ պատգամաւոր եւ մասնակցել Հայաստանի հասարակական-քաղաքական կեանքին: «Եղել են կուսակցութիւններ, որոնք իրենց համամասնական ցուցակում ընդգրկել են ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչ, սակայն ոչ անցողիկ տեղերում, ընդամէնը նպատակ ունենալով օգտագործել այդ համայնքի ձայները: Իսկ մեծամասնական ընտրակարգով առաջադրուածները պարտուել են, քանի որ չկայ ընտրատարածք, որտեղ որեւէ ազգային փոքրամասնութիւն մեծամասնութիւն կազմի: Եղել են նաեւ կուսակցութիւններ, որոնք նախընտրական շրջանում խոստացել են զբաղուել ազգային փոքրամասնութիւնների խնդիրներով, սակայն ընտրուելուց լետոյ մոռացել են թէ՛ փոքրամասնութիւններին, թէ՛ իրենց տուած խոստումները»,-մեզ հետ զրոյցի ժամանակ ասում է Սիաբանդ Բաքոյեանը:

Պարոն Բաքոյեանն ասում է, որ իրենք դիմել են կառավարութեանը, ԱԺ-ին՝ ընտրական օրէնսգրքում փոփոխութիւններ կատարել, օրէնքով քվոտա նախատեսելով փոքրամասնութիւնների համար, սակայն իրենց միշտ պատասխանել են, որ Հայաստանի Հանրապետութեան իւրաքանչիւր քաղաքացի ընտրութիւններին մասնակցում է ընդհանուր սկզբունքներով: «Ստացւում է, որ Ազգային փոքրամասնութիւնները զրկուած են երկրի քաղաքական կեանքին լիարժէք մասնակցելու հնարաւորութիւնից»,-բողոքում է պարոն Բաքոյեանը: Ընդհանուր ցուցակով հանդէս գալու իր առաջարկը պարոն Բաքոյեանը ներկայացրել է ռուսական, հրեական, յունական, եզդիական, ասորական, քրդական, ուկրաինական, բելառուսական եւ Հայաստանում բնակուող միւս համայնքների ներկայացուցիչներին: Ըստ մեր զրուցակցի, իր առաջարկը դրական արձագանք է ունեցել բոլոր համայնքների ներկայացուցիչների մօտ, եւ ինքը լուրջ յոյսեր ունի կարծելու, որ այն յաջողութեամբ կ'իրականանայ:

«Ի վերջոյ, եթէ այլ երկրների խորհրդարաններում կան հայազգի պատգամաւորներ, որոնք նպաստում են իրենց երկրների եւ Հայաստանի յարաբերութիւնների մերձեցմանը, ինչո՞ւ Հայաստանի խորհրդարանի յոյն, հրեայ, ռուս կամ վրացի պատգամաւորները չպետք է նպաստեն Հայաստանի եւ իրենց ազգային պետութիւնների յարաբերութիւնների բարելամանն ու ջերմացմանը»,-ասում է Սիաբանդ Բաքոյեանը:

ОБЩЕСТВЕННО-
ПОЛИТИЧЕСКАЯ
ОРГАНИЗАЦИЯ
«ЭЗДИХАНА» АРМЕНИИ



REPUBLIC OF ARMENIA
«YEZDIKHANA»
SOCIO-POLITICAL
ORGANIZATION

№ 0/27

«27» մայիսի 1998 թ.

**Հարգարժան «Հորիզոն» Թորոնթոյի թղթակից
պարոն Գրիգոր Հաթոյան.**

Ստացա «Հորիզոն» թերթի Ձեր ուղարկած համարը, որտեղ
տպագրած էր մեր հարցազրույցը: Այն Հայաստանում մեծ արձագանք
է գտել և նույնիսկ ձայննասփռվել է եզդիների համար տրվող ուղի
հաղորդումներում: Հայտնելով մեր խորհին երախտագիտությունը
տեղյակ եմ պահում Ձեզ, որ այն իր ուրույն դերը ունեցավ հայ և եզդի
ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդման համար:

Պատրաստ եմք մշտապես աջակցել Ձեզ հետաքրքրող հարցերին
պատասխանելու և մեր համագործակցությունը շարունակելու:

Հարգանքներով՝

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԲԱՔՈՅԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑՑ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼ ՀԱՄԱԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԵՏ

3. Սիրելի Զամբիկ, թեև հանրությունը տեղեակ է ձեր բանտարկության պատճառներուն եւ տեղի ունեցած դատավարություններու մասին, սակայն, ներկայիս նոր սերունդը տեղեակ չէ եղելություններուն, կ'ուզէի՞ր ամփոփ գիծերու մէջ նկարագրել քու ձերբակալութեան տուն տուող պատճառներուն մասին:

Պ. Նախ իմ խորին շնորհակալութիւնները կը յայտնեմ ձեզի, որ ինծի առիթը կու տաք «Չորիզոն» շաբաթաթերթի միջոցաւ խօսելու իմ սիրած ազգիս զաւակներուն հետ: Բանտարկութեանս ամբողջ շրջանին, առաջին անգամ ըլլալ հարցազրոյց կ'ունենամ հայ մամուլին հետ:

Ճիշդ էք, ներկայիս նոր սերունդը մօտաւորապէս տեղեակ չէ ոչ միայն իմ, այլ նաեւ, Գանատայի մէջ բանտարկուած երեք անձնուէր հայորդիներուն մասին:

Նոր սերունդը շատ տարբեր է երկու տասնեակ տարիներ առաջ ապրող սերունդէն, այսինքն՝ իմ սերունդէն: Բայց այդ չի նշանակեր, թէ նոր սերունդի մեղքն է այդ: Քսան տարի առաջ մենք կ'երազէինք ու կը պայքարէինք Անկախ Զայաստանի համար: Նոր սերունդը այսօր կ'ապրի Անկախ Զայաստանի գոյութեամբ: Ամենայն ազատութեամբ օդանաւ նստելով կրնայ աչքով տեսնել մեր երազած Զայաստանը:

20-25 տարիներ առաջ, կարծես թէ ուրիշ դար մըն էր: Կարծես, թէ հարիւր տարի անցած է 70-ական թուականներէն:

Կեանքի մէջ, յաճախ, ստիպուած կ'ընենք բաներ, կ'առնենք քայլեր մեր կեանքին մէջ, զորս չենք ուզեր, բայց այլ ելք գոյութիւն չունի: Պարոյր Սեւակի խօսքերը հոս կ'արժէ օրինակ բերել. «Երբ չի լինում ելք ու ճառ, խենթերն գտնում են հնար»: Մեր սերունդը, մոմ վառելէ, աղօթելէ, աղաչելէ յոգնած եւ զգուած էր: Մեր ազգը մորթուած էր, ամէն գետնի վրայ անարգուած, կորսնցուցած էր հարստութիւնը, հողը, տունը, հայրենիքը եւ 50-60 տարի աշխարհը, բոլոր պետութիւնները մնացին անտարբեր մեր կորուստներուն եւ դատին հանդէպ: Անոնք, այսինքն, ՄԱԿը, հրեաներու ջարդէն ետք, երկու հազար տարի պետութիւն չունեցող ազգին ձեռք երկարելով, ծնունդ տուաւ Իսրայէլի պետութեան, ամէն գետնի վրայ օգնեց անոնց, իսկ Գերմանիան խոստովանեցաւ իր մեղքը ու տարեկան քանի հարիւր միլիոն տոլար հատուցում տուաւ եւ կը շարունակէ տալ մինչեւ օրս:

Բայց հայու համար բանը բոլորովին տարբեր էր:

Զայ ժողովուրդը անոնց համար որեւէ շահ չենք ներկայացներ: Ուրեմն, հայութիւնը դէմ եղած բոլոր անմարդկային հալածանքները, ջարդերը, անոր պատմական հայրենիքի կորուստը, անոր ճակատագիրը՝ ոչինչ կը ներկայացնեն գերպետութիւններուն: Անոնք անցեալի տխուր երեւոյթներ եւ դէպքեր են իրենց համար եւ միայն այդքան:

Դանակը ոսկորին հասած էր: Տեղ մը կը հասնի, որ մարդ կամ ազգ մը, երբ կը տեսնէ, թէ աղօթքը, աղաչանքը, բողոքի ցոյցերը եւ նման բաներ արդիւնք մը չեն տար, ստիպուած՝ այլ ուղղութիւն մը կ'որոշեցնեն:

Զեմ գիտեր, թէ աշխարհի վրայ քանի պետութիւն կայ, որ խաղաղ միջոցներով անկախութիւն ձեռք բերած է: Մօտաւորապէս բոլոր պետութիւնները, ստիպուած զենքի ուժին դիմած են անկախութեան տիրանալու համար: Երկու հարիւր տարի առաջ, ամերիկացիները զենքի դիմեցին անգլիացիներուն դէմ, Մեքսիքոն՝ Սպանիոյ դէմ, եւայլն: Մեր օրերուն ալ ոչինչ չէ փոխուած: Երկու հարիւր տարի առաջ անգլիացին ամերիկացիին «Տեռորիստ» կը կոչէր, քսան տարի առաջ ալ «Տեռորիստ» բառը հայու հասցէին ուղղուած էր:

50-60 տարի, ոչ ոք հայ ազգի մասին չէր խօսեր: Մենք, հայերս, խեղճ, աղքատ, անտեր եւ ձայն չունեցող ազգ մը էին: Մեր վրայ մտածող չկար: Նոյնիսկ մեր մեծ հայրերը կ'ըսէին, թէ «թուրքը հայուն հող չի տար»: Մենք պետք է սրբագրէինք այդ սխալը: Պետք է փաստէինք, թէ մենք գիտենք գոհուիլ, թէ մենք լալկան եւ տկար

ազգ մը չենք, մենք մուրացկաններ չենք, այլ՝ բոլորին յստակ կ'ըսենք, թէ մենք կանք, այդ հողերը մերն են եւ մենք անպայման պիտի տիրանանք այդ հողերուն:

Հայ գինեալ պայքարը ծնունդ առաւ, քանի այլ ելք չկար: Հայուն ստիպեցին գէլքի դիմել: Եւ մեր սերունդը, մեր լաւագոյն տղաները լուռ չմնացին, անտարբեր չըմընացին, ամէն զոհողութիւն նկատի առնելով, անոնք զոհեցին իրենց կեանքը Լիզպոնի մէջ կամ բազմաթիւ բանտերու մէջ արդարութեան եւ հայրենիքի սիրոյն իրենց կեանքը մաշեցնելու դատապարտուեցան: Կը հաւատամ, որ մեր սերունդը չի զոջար իր ընտրած ճամբուն համար: Հայրենի հողը զոհողութեամբ եւ պայքարով կ'ազատագրուի:

3. Վերջերս, Համբիկ Սասունեանի պաշտպան յանձնախումբը դատական իշխանութիւններուն դիմեց, որպէսզի քու դատավճիռէդ վերցուի «մասնայատուկ պայման»ը, ներումի իրաւունք ունենալու համար, Ձեր կարծիքով ինչո՞ւ մերժուեցաւ կատարուած դիմումը:

Պ. Մենք, իմ դատի աւարտէն ի վեր, այսինքն 14 տարի առաջ, նախապէս երկու տարի ալ բանտ մնացած էի, դատավարութեան սկսելէն առաջ, շարունակ կը դիմենք դատարաններուն, որ մասնայատուկ պայմանը ջնջեն, այսինքն՝ «ցմահ»ը զիջին, որ եթէ ընեն, այդ մեծ առաւելութիւն մը պիտի ըլլայ ինծի համար: «Ցմահ» կը նշանակէ բանտարկութիւն մինչեւ մահ: Եթէ վերցնեն, իմ բնատարկութիւնը կը վերածուի 25 տարիի, որ կը նշանակէ, թէ 25 տարի բանտարկութենէ ետք կրնան զիս ազատ արձակել՝ եթէ ուզեն: Եւ, տակաւին, կրնայ պատահիլ, որ այդ 25 տարիէն 12 տարի աւարտելէ ետք, կարելիութիւնը ունին ազատ արձակելու որեւէ ժամանակ: Ես արդէն 17 տարի բանտն եմ: Մենք այժմ ունինք երկու այլ դատարաններ, որոնց կրնանք դիմել, որպէսզի մասնայատուկ պայմանը ջնջեն: Եթէ այդ դատարանները մերժեն մեր դիմումները, մեզի կը մնայ Գերագոյն Դատարան դիմել, եթէ հոն ալ մերժուինք, մեր գործը կը վերջանայ դատարաններուն հետ եւ կը մնայ միայն Աստուածային միջամտութիւն:

3. Ձեր բանտարկութեան 16 տարիներուն ընթացքին, յուսահատական պահեր ունեցա՞ծ էք.

Պ. Յուսահատական պահեր չեմ ունեցած: Ունեցած եմ տխուր պահեր, մաւանդ Հայաստանի մէջ պատահած ահռելի երկրաշարժը զիս բաւական յուզեց, ինչպէս նաեւ Արցախի ազատագրական պատերազմին մարտակերտը շրջանը եւ Արցախը մօտաւորապէս կորսնցնելու վտանգին լուրերը ստանալով, շատ ծանր օրեր եւ շաբաթներ ապրեցայ: Իմ անձիս համար շատ չեմ մտածեր: Արդէն իսկ կեանքիս կէտը բանտի մէջ անցուցի: Կը ցաւիմ ընտանիքիս համար, կը ցաւիմ անոնց համար, որ կը սիրեն զիս, քանի իմ պայմանները անոնց աւելի կը տանջէ՝ քան զիս: Ես աչքիս ամէն բան առած եմ: Եթէ բան մը չունիս, բան մը չես կորսնցներ:

3. Ամերիկեան արդարադատութեան վրայ ի՞նչ կարծիք ունիք: Կը հաւատա՞ք անոր արդարադատութեան:

Պ. Ամերիկայի արդարադատութեան միայն յիմարները կը հաւատան: Այս երկիրը միայն դրամ կը ճանչնայ, կը ճանչնայ միայն իր շահերը: 14 տարիէ ի վեր կը մերժեն նոր դատ բանալ կամ բանտարկութեան ժամանակաշրջանը նուազեցնել, ո՛չ թէ իրաւական պատճառներով, այլ՝ քաղաքական: Եթէ վաղը թուրքը Ամերիկայի աչքէն իյնայ եւ Հայաստանը ՆԱԹՕ-ի անդամ դառնայ, ես երկու շաբաթէն ազատ կ'արձակուիմ: Արդարութիւնը ի՞նչ է Ամերիկեան գաղափար չունի: Կը հաւատամ, որ կառավարութիւնը ամէն ճնշում կը դնէ դատարանին վրայ, որ զիս դատարան չվերադարձնեն: Բայց հարցը միայն Ամերիկեան չէ: Նոյնը կրնանք ըսել Փանատայի մասին: Երեք երիտասարդներ իրենց կեանքը կը մաշեցնեն երազներու ետեւ, եւ, եթէ հայ գաղութը չընէ իր առաւելագոյնը այդ տղաքը օր մը առաջ բանտէն ազատելու, Փանատայի կառավարութիւնը մի քանի տասնեակ տարիներ եւս զանոնք ազատ արձակելու մասին չմտածեր:

3. Բանտին մեջ դուք ձեզ զբաղ կը պահե՞ք: Եթե այո՛, ուսանելո՞վ, կարդալո՞վ, թե աշխատելով:

Պ. Բանտին մեջ կը զբաղիմ գրել-կարդալով: Մանաւանդ նամակներ գրելով: Խուցիս մեջ ունիմ հեռատեսիլ, հայերէն ձայներհոգներ եւ գիրքեր: Գալիֆորնիոյ մեջ օրէ օր, բանտի պայմանները անելի կը խստանան: Շատ մը բաները կը զրկեն մեզ: Ես ցմահ բանտարկութեան դատապարտուած ըլլալուս պատճառաւ, ինծի արտօնած են միայն 2-3 տեսակ գործեր ընել, բոլորն ալ մաքրութեան վերաբերեալ գործեր: Ես ալ, անկեղծ ըսած, շատ չեմ հետաքրքրուած կեանքի գեղեցիկ բաներով: Իմ փափաքս է Զայաստան հասնիլ եւ փոքր գիւղի մեջ փոքր տուն մը ունենալ: Կը նախընտրեմ այդպիսի կեանք մը:

3. Զայաստանի վերանկախացումէն ի վեր, դուն քեզի ի՞նչպէս կը զգաս:

Պ. Զայաստանի անկախութիւնը նոր կեանք մը տուաւ ինծի, մեր սերունդին: Յաճախ կը մտածեմ, թէ աշխարհը ի՞նչպէս էր 1982ին եւ ուր հասաւ հիմա: Ոչ թէ մէկ, այլ՝ երկու անկախ պետութիւն ունինք այսօր: Շարունակ ես ինծի կ'ըսեմ, թէ ան ինչ որ մեր մեծ հայրերը 600 տարի կ'ուզէին, մենք կ'ապրինք այսօր: Մենք ենք այդ բացառիկ եւ բախտաւոր սերունդը, որ պիտի բուժէ Զայաստանի վերքը: Մենք անմոռանալի պիտի դառնանք ապագայ սերունդներուն, քանի մեր գործը կ'էս պիտի չմնայ: Կը յուսամ, եթէ շատ մը հայեր այցելեն Զայաստան, տեսնեն եւ զգան Զայաստանը: Այդ երազ մը չէ, կենդանի իրականութիւն է: Զայաստանը մեզի պէտք ունի, պէտք ունի մեր աջակցութեան եւ ներկայութեան: Կը հաւատամ, որ 2-4 տարիներու ընթացքին, հազարաւոր, տասնեակ հազարաւոր հայեր պիտի սկսին ներգաղթել Զայաստան, մանաւանդ Միջին Արեւելքէն: Այլեւս պարտադրուած չենք օտարութեան մեջ ապրելու: Չոհուեցանք, որ այդ որոշումը ամենելու կարելիութիւնը ունենանք:

3. Կը հետեւի՞ս Զայաստանի վերանկախացումէն ի վեր հոն տեղի ունեցող անցումներուն: Ի՞նչ է կարծիքդ:

Պ. Կը ստանամ բազմաթիւ թերթեր եւ պարբերաթերթեր, որոնց միջոցաւ Զայաստանի իրադարձութիւններուն մօտէն ծանօթ եմ:

Անկախ Զայաստանը վերակենդանացուց մեր ազգը: հակառակ անոր, որ մեր հողերուն միայն 15 տոկոսն է անկախ միայն: Զոն է միայն, որ մեր ժողովուրդը կրնայ հանգիստ ապրիլ եւ ստեղծագործել՝ առանց մտահոգուելու սպիտակ ջարդի եւ հալածանքներու մասին:

Անկախ Զայաստանի գոյութիւնը պատմական առիթ մըն է, որպէսզի մենք կարողանանք Զայաստանը դարձնել շրջանի ամենէն զարգացած ու հզօր երկիրը: Ես կը հաւատամ, որ միասնական գործակցութեամբ եւ ճիգերով, Զայաստան, Արցախ եւ Սփիւռք, պիտի հասնինք մեր յաւերժական նպատակին եւ փառքին՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Զայաստանի կերտումին:

3. Ի՞նչ կը մտածես Զայաստանի նախագահ Ռոպերթ Զոչարեանի ազգային եւ միջազգային քաղաքականութեան մասին:

Պ. Զայաստանի ազգընտիր նախագահ Զոչարեանը մարդկային խղճի եւ շքանորիքի տէր մարդ է: Ան անձուեր, ժողովուրդի վիճակը բարելաւելու միջոցները ըմբռնող եւ որոնող ղեկավար մըն է: Ես խորապէս տպաւորուած եմ նախագահով եւ քանի մը անգամ նոյնիսկ գրած եմ, թէ «Մեր ազգի փրկիչը եկաւ, ա՛լ աղօթելու պէտք չունինք»: Զոչարեանը, նախորդ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի նման ազգային գաղափարաբանութիւնը հալածող եւ ազգային շահերուն դէմ աշխատող մէկը չէ: Զ.Յ.Դաշնակցութեան դէմ պայքարելով չէ զբաղած: Ես բոլոր սրտովս կ'ատէի Տէր Պետրոսեան կոչեցեալը, քանի որ ան պայքարեցաւ հայութեան ամենէն նուիրական շահերուն դէմ եւ ապագային քաղաքականութեամբ Զայաստանը 7-8 տարի ետ պահեց, առիթ տալով հարիւրաւոր միլիոն տղարներու ազգային հարստութեան կողոպուտներու եւ հարիւր հազարաւոր հայորդիներու Զայաստանէն արտագաղթելուն:

Կը խորհիմ, թե նախագահ Քոչարեանի ազգային եւ միջազգային ճիշտ քաղաքականութեամբ կը սրբագրուի նախորդին սխալները, կը բուժուին կոտտացող վերքերը եւ ազգովին կը բռնենք յաջողութեան եւ յառաջդիմութեան ուղին: Իսկ Արցախի հարցով նախագահի քաղաքականութիւնը գնահատելի է եւ ես կը հաւատամ, որ Զայաստան երբեք պիտի չհամաձայնի եւ պիտի չընդունի Արցախը Ատրպէյճանի կազմին մէջ ինչ-ինչ ինքնավարութեամբ կամ վարչաձեւով պահելու գաղափարին: Արցախը կա՛մ կը մնայ Անկախ հանրապետութիւն՝ ազատագրուած հողամասերով միասին, կա՛մ կը միանայ Զայաստանին: Եւ վերջ...:

3. Ի՞նչ կը մտածես Արցախի յաղթական ինքնապաշտպանութեան մարտընջումներէն ետք, Արցախի անկախութեան եւ ազատագրուած հայկական հողերու պահպանման մասին:

Պ. Արցախի յաղթանակը կենդանի օրինակ մըն է, թէ հայ ազգը կրնայ իր վերքերը բուժել: Ան միայն պէտք ունի կարող ղեկավարութեան եւ զէնքի:

Արցախը պատերազմեցաւ իրմէ 7-8 անգամ աւելի թիւ ունեցող թշնամիի մը դէմ, որոնք զինուած էին արդիական հզօր զէնքերով: Մենք անդրադարձանք, թէ գրիչը սուրէն հզօր չէ: Չգացինք, որ գրելով եւ աղօթքով իրաւունքներդ չես կրնար պաշտպանել: Վերջապէս անդրադարձանք, որ մենք ալ կռուիլ գիտենք, յաղթել գիտենք:

Արցախը եւ անոր շուրջ ազատագրուած հայկական հողերը, որոնք պատմականօրէն Արցախի մաս կազմած են, ամէն գնով պէտք է պահել՝ գոնէ մեծ մասամբ: Այդ հողերը հայկական են եւ ռազմական կարելոր կէտեր են, ո՛չ միայն Արցախի համար, այլեւ Լեռնային Զայաստանի համար:

Կը հաւատամ, որ Արցախը պատրաստ է ինքզինք պաշտպանելու: Թշնամին յաճախ կը խօսի պատերազմի մասին: Եթէ նման ծրագիր մը ուզեն իրականացնել, այդ պարագային, վստահ եմ, հայկական բանակները ո՛չ միայն պիտի կարողանան պաշտպանել ներկայ սահմանները, այլեւ հակայարձակողականի անցնելով ազատագրեն Շահումեանի եւ Գանձակի շրջանները եւ հասնին մինչեւ Կուր գետ:

3. Ի՞նչ կարծիք ունիս հայ ներկայ երիտասարդութեան մասին: Կ'ուզե՞իր պատգամդ փոխանցել անոնց:

Պ. Ներկայ սերունդի մասին երկար կարելի է խօսիլ: Կրնամ տխուր եւ ուրախ կէտերու վրայ խորանալու: Տխուր կամ ցաւալի կէտը ան է, որ ներկայ սերունդը ըՍ֊փիւռքի մէջ 80 առ հարիւր անտարբեր է: Անոնք չեն ըմբռներ Զայ ազգի ըմբռներ հայ ազգի փառքը, հայ դատը եւ ազգային հասկացողութիւնները: Անոնց մեծ մասը հագլիլ, շքուիլ եւ կեանքը վայելելը աւելի գրաւիչ կը գտնէ, քան մաս կազմել ազգային մրտահոգութիւններու եւ պարտաւորութիւններու: Իսկ Զայաստանի մէջ, երիտասարդութեան մէկ երրորդը մօտաւորապէս, Զայաստանի եւ Արցախի բանակներուն կը ծառայեն՝ պատրաստ պաշտպանելու հայրենիք եւ պատիւ:

Կը խորհիմ, որ յառաջիկայ 2-3 տարիներու ընթացքին, լուրջ աշխատանք պէտք է տանիլ, Սփիւռքի մէջ ծնած մեծցած հայ պատանիներն ու երիտասարդները, մանաւանդ անտարբերները, ճրիաբար Զայաստան այցելելու եւ շրջան մը հոն մնալու եւ Զայաստանի հողէն, ջուրէն եւ սրբութիւններէն հաղորդուելու, որպէսզի անոնք ըզգան հայրենասիրութիւնը եւ իրենց մէջ արթնայ հայրենիքին եւ ազգին ծառայելու ոգին:

Մեր Սերունդի գործը կարելոր է: Մենք շատ բան ունինք փաստելիք: Պատմական առիթ մը ունինք մեր նորահաս սերունդներուն ցոյց տալու, փաստելու, թէ մենք հասարակ սերունդ մը չենք, մենք ըմբռնած ենք մեր գործը, եւ մեր առաւելագոյնը տրւած մեր երկիրը զարգացնելու, հարստացնելու, հզօր բանակ կազմելու եւ Զայաստանի պատմական հողերը ազատագրելու:

Նոր սերունդը իր պարտականութիւնները կը կատարէ, եթէ մենք միասնաբար աշխատինք: Մեր կարելին պիտի ընենք մեր ազգին փառքը վերակենսողանացնելով, Զայաստանը բարգաւաճ եւ հզօր պետութիւն մը դարձնելով, ուր բոլորս, մեր զաւակները, հանգիստ ու ապահով կեանք ապրինք, ստեղծագործելով առանց թուրք եւ ա-

զերի սուրին եւ հալածակքին զոհ դառնալու: Յամոզուած եմ, որ հայը իր արժանի տեղը կը գրաւէ Միջազգային Պատմութեան մէջ:

Սիրելի Համբիկ, «Հորիզոն» շաբաթաթերթին եւ իմ կողմէ քեզի սըրտագին շնորհակալութիւններ կը յայտնեմ եւ սրտանց կը մաղթեմ որ շուտով արգարութիւնը յաղթէ Ամերիկայի մէջ եւ դուն ազատ ապրելու իրաւունքիդ վերատիրանաս:

1999
Աստիպ



Զօրավար Դրոյի աճիւնը Ապարան թաղումի արարողութեան

**ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԵՒ Հ.Օ.Մ.Ի ԱՄԷՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ
20-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ,
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

3. Ընկ. Սիեր Առաքելեան, որպես 3.Յ.Դ. «Սողոմոն Թեփրեան» կոմիտեի հերթապահ, կրնալի՞ք մեզի կարգ մը տեղեկություններ փոխանցել Հայ Կեդրոնի շինարարական աշխատանքներու մասին: Ե՞րբ սկսան եւ նիւթական ինչպիսի՞ աղբիւրներ գոյութիւն ունենի:

Պ. Թորոնթոյի Տիւփոն փողոցի վրայ գտնուող Հայ Կեդրոնի պատերը սկսած էին նեղ գալ արագ ուճացող Թորոնթոյի գաղութի զաւակներուն: Ուրեմն, նոր Հայ Կեդրոնի շէնքի մը կառուցումը անհրաժեշտութիւն դարձած էր հայապահպանման աշխատանքները աւելի ամուր հիմերու վրայ դնելով՝ շարունակելու ազգային նուիրական գործունեութիւնը, վստահելով մեր գաղութի անդամներուն նիւթական եւ բարոյական աջակցութեան, կարելոր բաժին մըն ալ ստանալով Օնթարիոյի կառավարութենէն:

Յիշեցնենք նաեւ, որ հին Հայ Կեդրոնի շէնքի վաճառման գումարը պիտի դառնար նորակառոյց Հայ Կեդրոնի հիմնադրամը, սկսելու համար շինարարական աշխատանքները:

3. Հ.Օ.Մ.Ի Ամէնօրեայ Վարժարանը, երբ 1979 ուսումնական տարեշրջանին իր դռները բացաւ, ի՞նչ առաքելութիւն կը նպատակադրէր:

Պ. Կրթական եւ Մշակութային աշխատանքները դարձած էին կիզակէտ եւ առաջնահերթութիւն հայապահպանման գործի յաջողութեան համար: Գաղութին մէջ գոյութիւն ունեցող շաբաթօրեայ եւ ամառնային վարժարանները չէին բաւարարէր այս քաղաքին մէջ ծնած եւ հասակ առնող հայ մանուկին, պատանիին եւ երիտասարդին հայեցի դաստիարակութեան ամբողջական կարիքները: Եւ ահա, 1979ի ուսումնական տարեշրջանին Հ.Օ.Մ.Ի Ամէնօրեայ Վարժարանը կը բանար իր դռները հայ աշակերտութեան՝ ազգային, հայեցի կրթութիւն եւ բարձր մակարդակի ուսում ջամբելու համար:

3. Կրնա՞ք կարգ մը մանրամասնութիւններ տալ Հայ Կեդրոնի կառուցման եւ ապագային գործադրուած շինարարական ծրագիրներու մասին:

Պ. Նախ կ'ուզեմ ընդգծել այն իրականութիւնը, որ Հայ Կեդրոնի յարկին տակ գործող միութիւններու եւ կազմակերպութիւններու, ինչպէս նաեւ անհատ ազգայիններու, հայ ժողովուրդի, բարոյական եւ նիւթական մասնակցութիւնը ու գործակցութիւնը յաջողութեան գլխաւոր ազդակը հանդիսացաւ Հայ Կեդրոնի շինութիւնը աւարտելու եւ 1979ին պաշտօնական հանդիսութեամբ բացումը կատարելու նորակառոյց շէնքին, Թորոնթոյի հայութեան ներկայ եւ ապագայ սերունդներու համար, որպէս փոքր Հայաստան:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան «Սողոմոն Թեփրեան» կոմիտեի եւ կոմիտեութեան տարիներու երազը սկսած էր ծրագրային փուլէն անցնիլ գործնական աշխատանքներ՝ հանգրուանային նուաճումներով: Առաջինը՝ Հայ Կեդրոնը 1979ին, երկրորդը՝ դպրոցաշինութիւնը 1983ին եւ երրորդը՝ եկեղեցաշինութիւնը 1990ին, զըմբէթաւորուելով հայակերտ Միջնաբերդը լուսաւորչաշունչ տաճարով:

20 տարիներու ընթացքին կարելի եղաւ շինարարական աշխատանքներէն անկախ թափ տալ կազմակերպական գործունեութեանց եւ կարելոր յաջողութիւններ ձեռք բերել Հայ Դատի ծանօթացման եւ քաղաքականացման անժամանցելի աշխատանքներուն մէջ:

3. Ընկ. Յարութիւն Շիթիլեան, որպէս Հ.Օ.Մ.Ի Ամէնօրեայ Վարժարանի Կըրթական Մարմնի երկարամեայ ատենապետ կրնա՞ք մեզի որոշ գաղափար մը տալ

Թորոնթոյի գաղութի հայեցի դաստիարակութեան համար տարուած աշխատանքներուն մասին՝ Նախքան Բ.Օ.Մ.ի Ամէսօրեայ Վարժարանի հիմնադրութիւնը, թուելով այդ շրջանին գոյութիւն ունեցող հայկական կրթական հաստատութիւնները:

Պ. Բայկական կրթական հաստատութիւնները 1979էն առաջ, Թորոնթոյի մէջ նոր հաստատուող կամ հոն ծնող եւ մեծցող հայ մանուկներու հայեցի կրթութեան գործը մեր ծնողներուն եւ կազմակերպութիւններուն գլխաւոր մտահոգութիւնը եղած է:

Ս. Երրորդութիւն Բայց. Առաքելական եկեղեցւոյ հովանաւորութեամբ գործող շաբաթօրեայ վարժարանին առընթեր, 1970ին, Բ.Յ.Ղ. «Սողոմոն Թէլիքեան» կոմիտէի Նախաձեռնութեամբ կը բացուի Բ.Օ.Մ.ի Ամառնային Ամէսօրեայ Վարժարանը, ամառուան երկու ամիսներու տեւողութեամբ հայեցի կրթութիւն ջամբելու համար Թորոնթոյի հայ գաղութի երեխաներուն:

Այս վարժարանը, որ ուներ Մանկապարտեզի եւ Նախակրթարանի բաժիններ եւ որուն տնօրէնութիւնը կը վարէր Տիկ. Տիգրանուհի Արթինեան, բացառիկ յաջողութիւն գտաւ մեր գաղութին մէջ: Անոր աշակերտութեան թիւը շուտով բարձրացաւ 50էն 300 աշակերտ:

Ամառնային վարժարանի բացառիկ յաջողութիւնը եւ փորձառութիւնը, Նաեւ Նիւթապէտ Ինքնաբուխ ըլլալու փաստը, վստահութիւն ներշնչեց «Սողոմոն Թէլիքեան» կոմիտէին եւ Բ.Օ.Մ.ի «Ռուբինա» մասնաճիւղին, 1979ի Սեպտեմբերին, նորաշէն Բայ Կեդրոնի մէջ սկսելու Բ.Օ.Մ.ի Ամէսօրեայ Վարժարանը - Պապայեան Մանկապարտեզի եւ Գոլուեան Նախակրթարանը:

Մինչ այդ, 1978ին, իր դռները կը բանար Ս. Խաչ Ազգային Ամէսօրեայ Վարժարանը՝ նորակազմ Ս. Խաչ Բայց. Առաքելական եկեղեցւոյ կողքին:

Այս ձեւով, Թորոնթոյի հայ գաղութը կ'ունենար երկու ամէսօրեայ հայ վարժարան, Ամառնային Ամէսօրեայ վարժարան եւ շաբաթօրեայ վարժարան, ապա, տարիներ յետոյ իր դռները կը բանար Բայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շաբաթօրեայ վարժարանը:

Գ. Մեզի կրնա՞ք կարգ մը մանրամասնութիւններ փոխանցել Բ.Օ.Մ.ի Ամէսօրեայ Վարժարանի հիմնադրութիւնը արդարացնող պատճառներուն մասին:

Պ. Մերձաւոր Արեւելքի հայկական գաղութներէն նոր գաղթած մեր ժողովուրդի գաւակներուն համար, որոնցմէ շատեր Սուրիոյ, Լիբանանի, Իրաքի, Եգիպտոսի, Պարսկաստանի եւ այլ գաղութներու մէջ յաճախած էին հայկական վարժարան, անոնց համար անհրաժեշտ էր հայեցի կրթութիւնը:

Նաեւ, Ամառնային Վարժարանի գտած բացառիկ յաջողութիւնը գրաւականը կու տար, որ հայեցի կրթութեան հետեւելու պատրաստ աշակերտութիւն գոյութիւն ունի մեր գաղութին մէջ եւ ծնողները յանձնառու են անհրաժեշտ գոհողութիւններ ըստանձնելու, իրենց գաւակներուն հայեցի կրթութեան համար:

Տարիներէ ի վեր, Բ.Օ.Մ.ի «Ռուբինա» մասնաճիւղը կը ծրագրէր, Տիւփոն փողոցի վրայ գտնուող Բայ Կեդրոնի մէջ հաստատել Մանկամտուր-Մանկապարտեզ մը: 1978ի Սեպտեմբերին աշակերտները պատրաստ էին, սակայն, այդ կեդրոնին կը պակսէր անհրաժեշտ յարմարութիւնները Մանկամտուր-Մանկապարտեզի արտօնագիր ստանալու համար:

1979ին, երբ նորաշէն Բայ Կեդրոնը իր դռները կը բանար, պահանջը արդէն գոյութիւն ուներ. Տէր եւ Տիկ. Գեորգ եւ Արմէնուհի Գոլուեաններու 150 հազարի խոստումը Ամէսօրեայ Վարժարանի մը շինութեան համար հանդիսացաւ յաւելեալ խթան, հայ վարժարանը հայ նոր կեդրոնին մէջ բանալու:

Շէնքին մէջ արդէն բաժին մը կար, Մանկամտուր-Մանկապարտեզի լման յարմարութիւններով:

Գ. Բ.Օ.Մ.ի Ամէսօրեայ Վարժարանը 1979ին երբ իր դռները բացաւ, ունեի՞ք դպրոցական շէնքի յարմարութիւնները, ընդունելու դիմող բոլոր հայ աշակերտները:

Պ. 1979ի Սեպտեմբերին, երբ Հ.Օ.Մ.ի Ամբիօրեայ Վարժարանը իր դռները կը բանար, անհրաժեշտ եղաւ կարգ մը փոփոխութիւններ կատարել, որպէսզի Մանկապարտեզի 3 եւ Նախակրթարանի երկու դասարանները կարելի ըլլար բաւեցնել Նոր կեդրոնին մէջ: Դպրոցական տարին սկսաւ 65 աշակերտներով, սակայն մինչեւ տարեվերջ, աշակերտութեան թիւը բարձրացած էր արդէն 90ի:

Մեր ծրագիրն էր տարին մէկ դասարան աւելցնելով վարժարանը բարձրացնել մինչեւ 6րդ եւ պահանջել հարկին մինչեւ 8րդ դասարան:

Անհրաժեշտ էր նաեւ անմիջապէս սկսիլ վարժարանի Նոր շէնքի ծրագրումի աշխատանքներուն: Դպրոցի շինութեան ծրագրումը շարունակուեցաւ իբրեւ Հայ Կեդրոնի շինութեան երկրորդ փուլի աշխատանք:

Դպրոցի շէնքի շինութեան աշխատանքները սկսան 1982ի գարնան եւ մեր աշակերտութիւնը կեդրոնէն փոխադրուեցաւ դպրոցի Նոր շէնքը 1982ի Նոյեմբեր-Դեկտեմբեր ամիսներուն:

Մինչ այդ ամէն տարի մէկ դասարանի յաւելումով, վարժարանը հասած էր 5րդ դասարանի եւ աշակերտութեան թիւը բազմապատկուած էր:

Աշակերտութեան բազմացումով, Հայ Կեդրոնի բոլոր մասերը գրաւուեցան վարժարանի գործածութեան համար: Գրադարանի սրահը բաժնուեցաւ երկու դասարաններու:

3. Կ'ուզէ՞ք մեզի ըսել, թէ յետագային ինչպէ՞ս ծրագրուեցաւ վարժարանի շէնքի շինութիւնը:

Պ. Հայ Կեդրոնի շինութեան աշխատանքներուն առիթով կազմուած էր շէնքի շինութեան կեդրոնական մարմին մը, որ շինութեան ծրագրումի եւ հսկողութեան կողքին կը տանէր հանգանակային աշխատանք: «Page & Steel» ճարտարապետական ընկերութիւնը եւ իրենց ճարտարագիտական խումբը պատրաստեցին գծագրութիւնները եւ շինութեան Նուագուրդի եւ արտօնագրի թղթածրարը եւ 1982ի գարնան սկըսան շինութեան աշխատանքները:

1982ի աշնան տեղի ունեցաւ վարժարանի պաշտօնական բացում, դասարաններու Նուիրատուներու անունով տախտակներու գետեղում եւ ապա՝ հանգանակային ճաշկերոյթ, Նախագահութեամբ Գանատայի եւ Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի:

Վարժարանի բացումը, վարժարանի աշակերտներու ծնողներու եւ մեր ժողովուրդի զանգուածային մասնակցութեամբ իր գագաթնակէտին կը հասցնէր Հայ Կեդրոնի շինութեամբ սկսած ժողովրդային խանդավառութիւնը: Առանց այդ զանգուածային մասնակցութեան եւ խանդավառութեան, կարելի պիտի չըլլար իրագործել վարժարանի շէնքի շինութիւնը, կեդրոնի շինութեան միայն երեք տարի ետք:

3. Անցնող 20 տարիներու ընթացքին, վարժարանը ինչպիսի՞ նուաճումներ ունեցաւ կրթական եւ մանաւանդ հայեցի դաստիարակութեան ծրագիրներու յաջողութեան մէջ:

Պ. Ընդունելութիւնը, որ այս վարժարանը գտաւ մեր գաղութին մէջ իր առաջին իսկ օրէն, գլեց-անցաւ մեր բոլոր ակնկալութիւնները:

Կը ծրագրէինք վարժարանը սկսիլ 40-50 աշակերտներով, սակայն, առաջին տարին իսկ ունեցանք 90 աշակերտ:

Մեր աշակերտներուն թիւը բարձրացաւ 300, իր բացումէն 7րդ տարուան աւարտին եւ այսօր մեր վարժարանը կը յաճախէն 385 աշակերտներ:

Անցեալ 20 տարիներուն վարժարանէն շրջանաւարտ եղած են ավելի քան 250 աշակերտներ, որոնք երկրորդական եւ համալսարանական իրենց ուսումը կը շարունակեն գանատական եւ ամերիկեան վարժարաններուն մէջ, փայլուն արդիւնքներու հասնելով եւ պատիւ բերելով իրենց վարժարանին, իրենց ընտանիքին եւ հայ ժողովուրդին:

Մեր աշակերտները իրենց գանատական կրթութեան կողքին կը ստանան հայեցի դաստիարակութիւն, քաջածանօթ են իրենց լեզուին, պատմութեան եւ մշա-

կյոթին եւ մեր շրջանաւարտներէն շատեր անդամական, վարչական եւ ղեկավար դիրքեր ստանձնած եւ մեր միութիւններու եւ կազմակերպութիւններու մէջ:

Սակայն, անցեալի դափնիներու վրայ կարելի չէ հանգչիլ: Անհրաժեշտ է շարունակել, զարգացնել եւ յառաջացնել այս վարժարանի իրագործումները՝ կրթական եւ հայեցի դաստիարակութեան մարզերէն ներս:

3. Ընկեր Լեւոն Զասըրճեան, դուք, որ այս տարեշրջանին ստանձնեցիք Զ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի Կրթական Մարմնի ատենապետութիւնը, կ'ուզէիք, որ պատասխանէք հետեւեալ հարցումին: Նկատի ունենալով հայ վարժարան յաճախող աշակերտութեան աճը եւ հայ երկրորդական վարժարանի մը գոյութեան կարելիութիւնները, վարժարանի կրթական եւ պատկան մարմինները ի՞նչ ծրագիրներ ունին իրագործելու համար նման կենսական պահանջ մը իրագործելու համար:

Պ. Առաջին օրէն իսկ գոյութիւն ունէր այն համոզումը, որ մի դպրոցը կատարեալ պիտի չըլլայ առանց երկրորդական կարգերու: Դպրոցի բացումէն չորս տարի ետք ամբողջացան նախակրթարանի վեց դասարանները:

Շատ չանցած, հիմնուեցան Միջնակարգի եօթներորդ եւ ութերորդ կարգերը: Զիմա, որ Մանկապարտէզը, Նախակրթարանը եւ Միջնակարգը իրականութիւն են, բնական յաջորդ քայլը երկրորդականի հաստատումն է: Սկզբունքով որոշումը առնուած է: Երկրորդական կարգերը պէտք է սկսին անյապաղ: Սակայն, գիտակից ենք այս նախաձեռնութեան լրջութեան եւ ծանրութեան: Նոյնքան կարելոր է աւելցնել մեր դասարաններու սահմանափակ թիւը եւ մեր դպրոցը մատչելի դարձնել աւելի մեծ թիւով հայ ուսանողներու:

Թէ որքա՞ն արագ պիտի աւելնան ներկայ դասարանները եւ իրականանան երկրորդական կարգերը, այդ կախեալ է միայն մեր եւ մեր ծնողներու վճարկանութենէն:

3. Զայ Օգնութեան Միութեան Ամէնօրեայ Վարժարանը այս տարի թեւակոխած ըլլալով 20րդ տարեշրջանը, ինչպիսի՞ ձեռնարկներ կը ծրագրէք, տօնախմբելու կրթական այս հաստատութեան 20-ամեայ վաստակը:

Պ. 1999ը մեր վարժարանի 20րդ տարեշրջանը ըլլալէ անդին, 20-ամեակն է նաեւ Զայ Կեդրոնի պաշտօնական բացման: Մեր դպրոցի 20-ամեայ գործունէութեան վաստակի տօնակատարութեան հետ զուգահեռ, պէտք է յստակացնել այն տեսլականը, որ պիտի առաջնորդէ մեր դպրոցը եւ այս համալիրը յաջորդ տասնամեակին, ճշդելով այն ուղին, որ պիտի առաջնորդէ մեզ մեր նպատակին:

20-ամեակի պաշտօնական տօնակատարութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, 16 Մայիս 1999ին, Զայ Կեդրոնի սրահին մէջ: Ծրագրուած է յատուկ ձեռնարկ մը նուիրուած մեր օտար հիւրերուն, կառավարական պաշտօնատարներու, կրթական նախարարութեան եւ տեղական կրթական խորհուրդներու ներկայացուցիչներուն, որ տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 14 Մայիս 1999ին:

Վերոյիշեալ երկու պաշտօնական ձեռնարկներէն անդին, կ'ակնկալենք որ 20-ամեակի տօնական մթնոլորտը երեւոյթ մնայ մեր դպրոցին եւ Զայ Կեդրոնէն ներս այս տարուան ընթացքին: Կ'ակնկալենք, որ Զ.Օ.Մ.ի վարժարանը, Զայ Կեդրոնի տնօրէնութիւնը եւ այս համալիրին մէջ գործող քոյր միութիւնները իրենց արդէն իսկ ծրագրուած ձեռնարկներուն պիտի տան պատշաճ 20-ամեակի տարագ, եւ այս ձեւով մասնակցին եւ հարստացնեն 20-ամեակի տօնակատարութեան մթնոլորտը:

3. Որպէս Թորոնթոյի Զայ Օգնութեան Միութեան «Ռուբինա» Մասնաճիւղի վարչութեան ատենապետուհի, կ'ուզէք մեզի տեղեկացնել, թէ Զ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի 20-ամեակը նոր յանձնառութիւններու կը մղէ ձեզ եւ ինչպիսի՞ ծրագիրներ ունիք վարժարանը երկրորդականի վերածելու համար:

Պ. Զայ Օգնութեան Միութեան անունը կրող մեր վարժարանը եղած է միշտ մեր մասնաճիւղին առաջնահերթ մտահոգութիւնը, հայ նոր սերունդը այս գաղութին մէջ հայ պահելու մտահոգութեամբ:

Միշտ ներկայութիւն եղած ենք տարեշրջաններու բացման արարողութիւններէն մինչեւ ամառվերջի հանդէսները երկարող բոլոր ձեռնարկներուն, խրախուսելով եւ քաջալերելով տարուած նուիրեալ եւ ազգանուէր աշխատանքը:

Հաստատած ենք Հ.Օ.Մ.ի մրցանակներ ճող եւ ճող դասարաններու հայերէն լեզուի բարձրագոյն միջին ապահովող աշակերտներուն:

Իր սկզբնական օրերէն մասնաճիւղս իր կարելութեան ամառվագոյն չափով նիւթապէս օժանդակած է դպրոցի կարիքներուն, իսկ վերջին հինգ տարիներուն, իր նիւթական նպաստը հասցուցած է տարեկան 20 հազար տոլարի:

Եւ այսօր, կրկին անգամ մասնաճիւղս ապագայի տեսլականով, հաւատալով հայ դպրոցի ամառվութեան եւ գաղութէս ներս երկրորդական վարժարանի մը անհրաժեշտութեան, 150 հազար տոլար նուիրեց նոր հողաշերտի գնման, հաւատալով, որ հայ դպրոցը հնոցն է հայ աշակերտտի դաստիարակութեան, միշտ պիտի մնանք մեր դպրոցի կողքին, ինչ որ ալ ըլլան անոր ապագայի կարիքները:

«ՀՈՐԻՉՈՆ»
1999

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅՑ.
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ
ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՇՈՒՐԶ**

Հարցումներ Տիկ. Նայիրի Շահինեանին

Յ. Տիկին Նայիրի Շահինեան, դուք, որ Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ եւ Հայ Կեդրոնի Հանգանակիչ Մարմնի ատենապետուհին եք՝ մարմնի կազմութեան առաջին օրէն, կրնա՞ք Հանգանակիչ Մարմնի հնգամեայ աշխատանքներու ընդհանուր արժեւորումը կատարել:

Պ. 1996 Նոյեմբերին սկսանք հանգանակային աշխատանքներու եւ կազմուեցաւ Հանգանակիչ Մարմինը, նպատակ ունենալով որ 1,560,000 տոլարի պարտքը հիւսն տարուան ծրագրով գերոյի վերածէ:

Այս գործը վերջին չորս տարիներու ընթացքին բաւական յաջող անցաւ եւ ներկայիս Ս. Աստուածածին Եկեղեցւոյ եւ Հայ Կեդրոնի շինութենէն մնացած պարտքը իջած է 390,000 տոլարի:

Մեր աշխատանքին յաջողութիւնը կը պարտինք մեր բոլոր միութիւններուն եւ կազմակերպութիւններուն, որոնք իրենց նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը բերին, ինչպէս նաեւ մեր գաղութի սքանչելի ժողովուրդին, որ միշտ քաջալերեց եւ նեցուկ կանգնեցաւ մեր ճիգերուն, թեթեւցնելով Ս. Աստուածածին Եկեղեցւոյ եւ Հայ Կեդրոնի ուսերուն բեռցուած ծանր բեռը, թեթեւցնելով տոկոսային մեր վճառումներուն քանակը:

Յ. Արդէն իսկ հանրութեան ծանօթ է, որ Հանգանակիչ Մարմնի ծրագրած հանգանակային վերջին ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ 13 Յոկտեմբեր 2000 թուականին, բարձր հովանաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, ինչպիսի ծրագիրներ մշակած եք առաւելագոյն արդիւնքի հասնելու համար:

Պ. Հայ ժողովուրդի քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունման 1700-ամեակի առիթով, Հանգանակիչ Մարմնի տարեկան ճաշկերոյթը պիտի վայելէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.ի բարձր հովանաւորութիւնը: Որպէս 5րդ տարուան ձեռնարկ, սոյն ճաշկերոյթին տեղի պիտի ունենայ գեղարուեստական յայտագիր, Վեհափառ Հայրապետի պատգամ եւ հանգանակութիւն:

Դրամահաւաքի յանձնախումբը սկսած է դժուարին աշխատանքի, մօտենալով մեր ազգայիններուն, ապահովելու համար անոնց նիւթական առաւելագոյն նուիրատուութիւնները:

Յ. Հասնելու համար Հանգանակիչ Մարմնի ակնկալած արդիւնքին, ինչպիսի պատգամ կ'ուզէիք ուղղել մեր գաղութին:

Պ. Կ'ուզէիք նախ շնորհակալութիւն յայտնել բոլոր միութիւններուն, կազմակերպութիւններուն եւ ազգայիններուն, որոնց անսակարկ նուիրատուութիւններով, քաջալերանքով եւ զոհաբերութեամբ կարելի եղաւ մեր պարտքը նուազագոյնի իջեցնել եւ վստահ ենք, որ 13 Յոկտեմբերի ճաշկերոյթին մեր ժողովուրդին պիտի ներկայանանք մեր վերջին խնդրանքով՝ շիջումի հասցնենք եկեղեցւոյ եւ Հայ Կեդրոնի մնացած պարտքը:

Հարցումներ Ընկեր Ռաֆֆի Տէր Պօղոսեանին

Յ. Որպէս Ատենապետ Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ Հոգաբարձութեան, մաս կը կազմէք Հանգանակիչ Մարմնին, ի՞նչ աշխատանք կը տարուի, եկե՛

դեցույ շրջանակին մեջ, շիջումի հասցնելու համար եկեղեցույ եւ Հայ Կեդրոնի շինարարական օրերէն մնացած պարտքը:

Պ. Եկեղեցույ եւ Հայ Կեդրոնի շինարարական օրերէն մնացած աւելի քան 1,650,000 տոլարի պարտքը երբեք կարելի պիտի չըլլար իջեցնել ներկայի 400,000 տոլարի գումարին, եթէ ասկէ 4 տարիներ առաջ Հայ Կեդրոնի եւ Եկեղեցույ պատասխանատու մարմինները հաւատքը եւ տեսիլքը չունենային միասնաբար լծուելու նիւթական միջոցներու փնտռանքին, նուազեցնելու եւ զիջեցնելու համար դրամատան պարտքը, որն այնքան ծանր կը կշռէր մեր առօրեային վրայ: Այս պարտքը բոլորիս պարտքն էր եւ ի պատիւ Հայ Կեդրոնի յարկին տակ գործող միութեանց եւ կազմակերպութիւններու վարչութեանց եւ անդամներուն, նաեւ Եկեղեցույ հոգաբարձութեանց, հոգեւոր հովիւին եւ համայնքին, կարելի եղաւ այսօրուան վիճակին հասցնել զայն: Վերջին ճիգ մըն է, որ կ'ընենք այս պարտքը գոցելու, սակայն լաւատեղեակ Թորոնթոյի սքանչելի այս գաղութին, վստահ ենք, որ տակաւին պիտի ծնին նոր մտայնողացումներ, նոր ծրագիրներ, տարբեր հանգրուանի մը տանելով մեր գաղութի ծաղկումը:

Անդրադառնալով ձեր հարցումին Եկեղեցույ շրջանակը որպէս կարելոր մէկ մասնիկը հանգանակային աշխատանքներուն, խանդավառութեամբ լծուած է աշխատանքի: Մեր ուրախութիւնը բազմապատկուած է, քանզի արժանաւոր մեր Հովուապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Վեհափառի Զրիստոնէութեան Պետական Կրօնի հռչակման 1700-ամեակի առիթով՝ գաղութիս այցելութիւնը կը համընկնի հանգանակային մեր տարեկան աշխատանքի կարելորագոյն ձեռնարկին: Մեզի համար հաճոյք եւ պատիւ է Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը այս աշխատանքին: Կը վստահեցնենք մեր համայնքի եւ Թորոնթոյի Եկեղեցասեր մեր ժողովուրդին, որ ինչպէս միշտ այս անգամին եւս պատուով պիտի ընդամաքէ մեր կոչին:

Հ. Եկեղեցին իր այլազան մարմիններով, վստահաբար գործի լծուած է, մինչեւ 13 Հոկտեմբերին կազմակերպուած Հանգանակային ճաշկերոյթը, ժողովուրդին լայն զանգուածներուն մէջ աշխատանք կատարելու ժողովրդային խանդավառութիւն ստեղծելու համար: Կրնա՞ք մեզի այդ ուղղութեամբ կարգ մը բացատրութիւններ տալ:

Պ. Ինչպէս նախապէս արտայայտուեցայ իմ խօսքին մէջ Եկեղեցին մէկ մասնիկն է հանգանակային լայնածաւալ աշխատանքին, սակայն կարելի է ըսել կարելորագոյնը: Եկեղեցույ զանազան յանձնախումբեր արդէն իսկ լծուած են աշխատանքի նախ իրենց անդամական, ապա համայնքային շրջանակներուն մէջ: Մեր կարելորագոյն նպատակն է ապահովել մեծ թիւով ազգայիններու ներկայութիւնը հանգանակային ճաշկերոյթին: Փորձած ենք մուտքը ընել մատչելի աւելի չծանրաբեռելով նուիրատուներուն: Ամեն մի հայրենակից կը յուսանք, որ Եկեղեցույ եւ Հայ Կեդրոնի պարտքը շիջելու տրամադրութեամբ եւ խանդավառութեամբ է, որ ներկայ պիտի ըլլայ Հոկտեմբեր 13ի հանդիսութեան:

Այս նպատակով կազմած ենք հանգանակային ենթայանձնախումբ մը, որ Եկեղեցույ անդամացանկը վերանայելով, պիտի ճշդէ անցնող քանի մը տարիներուն մեր համայնքի մասնակցութեան պատկերը հանգանակութեանց: Վստահելով բոլոր մեր հայրենակիցներու զոհողութեան, նորէն պիտի փորձենք մօտենալ իրենց առանց խտրութեան, ի մասնաւորի անոնց, որոնք տակաւին առիթը չեն ունեցած իրենց նուիրատուութիւնը կատարելու ազգօգուտ այս ծրագրին:

Գործը եւ արդիւնքը ինքնին խանդավառութիւն կը ստեղծէ: Մեր նպատակն է բացատրել փաստացի այն իրականութիւնը, որ ասկէ միայն 4 տարիներ առաջ ունեինք 1,650,000 տոլարի պարտք մը, զոր այսօր իջած է 400,000 տոլարի: Ինչպէս կարելի է բացատրել այս «երագը», եթէ ոչ այն արդիւնքն է ծրագրուած աշխատանքի եւ մեր հայանուէր գաղութի զոհողութեանց: Կը հաւատանք, որ Ս. Աստուածածին Եկեղեցին եւ Հայ Կեդրոնին տալով, կ'ապահովենք բազում սերունդներու հայեցի եւ քրիստոնէական դաստիարակութիւնը, եւ այս խոր հաւատքով է, որ լծուած ենք գործի:

Հարցումներ Ընկեր ՄՀեր Առաքելեանին

3. Ընկեր Առաքելեան, վերջին երեք տարիներուն որպէս «Սողոմոն Թեխիրեան» Կոմիտէի հերթապահ, մօտէն հետաքրքրուած եւ դեկավար դեր ունեցած էք, Եկեղեցոյ եւ Հայ Կեդրոնի Հանգանակիչ Մարմնի աշխատանքներուն, ինչպիսի՞ պարտականութիւններ ունիք կատարելիք 13 Հոկտեմբերին կատարուելիք Հանգանակային Ճաշկերոյթին յաջողութեան համար:

Պ. Բ.Յ.Դ. «Սողոմոն Թեխիրեան» Կոմիտէի կողմէ նշանակուած հանգանակիչ մարմին մը ծնունդ առաւ 1994 Նոյեմբերին, հնգամեայ ծրագրով Սուրբ Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցոյ եւ Հայ Կեդրոնի շինարարական օրերէն մնացած պարտքը փակելու նպատակով: Մարմինը բաղկացած էր Հայ Կեդրոնի յարկին տակ գործող միութիւններու ատենապետներով: Հոս կարելի է շնորհակալութիւն յայտնել անցնող հինգ տարուան հանգանակիչ մարմնի բոլոր անդամ-անդամուհիներուն, որոնք ծրագրեցին եւ յաջողեցան 1,560,000 տոլարին պարտքը նուազեցնել 397,000 տոլարի: Անկարելի պիտի ըլլար նուիրական այս ծրագիրը իրագործել առանց մեր գաղութի ազգայիններուն բոլորանուէր մասնակցութեամբը եւ անվերապահ աջակցութեամբը:

Վերակազմեալ 2000-2001 թուականի հանգանակիչ մարմինը ունեցաւ իր անդրանիկ ժողովը եւ գլխաւոր օրակարգ նկատեց պարտամուրհակը վերջնականապէս այրելու ծրագիրը: Ուրախ եմ ըսելու թէ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հովանաւորութեամբ ծրագրուեցաւ կազմակերպել հանգանակային ճաշկերոյթ մը, որուն ընթացքին կարելի պիտի ըլլար ծրագրուած աշխատանքը իրագործել եւ վերջնականապէս դուրս գալ դրամատուներուն բարձր տոկոսներ վճարելու իրավիճակէն: Ըսեմ թէ, նախքան հանգանակային ճաշկերոյթը, մօտեցած ենք մեր գաղութի ազգայիններուն անգամ մը եւս ապահովելու իրենց նիւթական աջակցութիւնը որը պիտի դիրացներ հանգանակային ճաշկերոյթի ծրագիրը:

Իրատես ըլլալով հանդերձ, անկարելի պիտի ըլլայ ճաշկերոյթ-հանգանակութեամբ ամբողջապէս փակել հնգամեայ ծրագրին վերջին հանգրուանի պարտքը: Մարմինս ծրագրած է նախորդ տարիներու նման ունենալ այլեայլ ձեռնարկներ, որոնք պիտի ապահովեն յաւելեալ գումարներ գոյացնելու ի դիմաց մնացեալ պարտքին:

3. Շինարարական պարտքի փակումը ինչպիսի՞ առիթ է մեր գաղութին համար:

Պ. Շինարարական պարտքի փակումը անկասկած աննախնթաց եւ ուրախ առիթ մը պիտի ըլլայ Թորոնթոյի գաղութին համար, բառին բուն եւ բովանդակ իմաստով: Նոր ծրագիրներու մեկնակետ մը պէտք է ըլլայ այս հանգրուանը: Հայրապետականման եւ ազգապահպանման միջնաբերդը հզօրացնելու նորանոր ծրագիրներ անպակաս են մեր առօրեայէն: Մեր երազները իրականացնելու եւ աւելիով օժանդակելու, Թորոնթօ հաստատուած մեր ազգի գաւակներուն, ծրագրած ենք մեր ճիգերը կեդրոնացնել մերօրեայ երիտասարդութեան վրայ, ընդարձակել մեր կրթօճախը, աւելի ամուր հիմերու վրայ պահելու հայ լեզուն եւ մշակոյթը օտարացնող այս ափերուն վրայ: Ստեղծել երիտասարդութիւնը հետաքրքրող եւ համախմբող ընթարձակ միջավայր մը, եւ վերջապէս որպէս հեռակայ ծրագիր մշակել տարեցներու պատասպարանի մը մեր նոր հողաշերտին վրայ:

Ես կը հաւատամ այս հանգրուանին մեր բոլորին ճիգերը պէտք է լարել հայրապահպանման եւ ազգապահպանման նուիրական գործին, եւ այս բոլորը կը յաջողին միայն երբ բոլորս միասնաբար ձեռք ձեռքի հայօրէն գործենք ի շահ մեր ժողովուրդին եւ հայրենիքին:

**«ՀՈՐԻՉՈՆ»
2001**

**ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
ԴԱՍԽԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՓՈԽ-ՎԱՐԻՉ՝
ՀՈԳՇ. Տ. ՄԱՇՏՈՑ ՎՐԴ. ԶՕՊԱՆԵԱՆԻ ՀԵՏ**

*Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել մեր ընթերցասէրներուն եւ ողջու-
նել ներկայութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէա-
կան Դաստիարակութեան Բաժանմունքի Փոխ-Վարիչ՝ Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ.
Զօպանեանի Գանատայի մեր թեմէն ներս:*

3. Բարի եկած էք Յայր Սուրբ:

Պ. Բարի տեսանք:

3. Յայր Սուրբ կարելի է ըսել թէ ի՞նչ առաքելութեամբ այստեղ կը գտնուիք:

Պ. Նախ թոյլ տուէք, առաջին հերթին, իմ որդիական անկեղծ ու ջերմ զգա-
ցումներս, երախտագիտութիւնս եւ շնորհակալութիւնս յայտնելու Մեծի Տանն Կիլիկ-
իոյ Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետին, իր հայրական հոգա-
ծութեան ու գուրգուրանքին, որ կը տածէ, կը ցուցաբերէ հանդէպ Զրիստոնէական
Դաստիարակութեան գրասենեակին ու մանաւանդ անոր աշխատանքներուն:

Երկրորդ, շնորհակալութիւն Գանատայի Յայոց Թեմի Կաթողիկոսական Փո-
խանորդ՝ Գերշ. Տ. Խաժակ Եպս. Յակոբեանին, որուն հրաւերովը այստեղ կը գտնը-
ւիմ:

Երրորդ, եւ ի վերջոյ, շնորհակալական խօսք ձեզի այս գեղեցիկ առիթին հա-
մար, որուն ճամբով նաեւ հաղորդ կը դարձնէք մեր հաւատացեալ ժողովուրդը:

Ես յատուկ առաքելութեամբ մը այստեղ կը գտնուիմ, ժամանակաւոր, կատա-
րելու համար աշխատանքներ կապուած Զրիստոնէական Դաստիարակութեան եւ Կի-
րակնօրեայ Դպրոցներու, ինչպէս նաեւ այցելութիւններ տալու եւ պատարագելու
տարբեր շրջաններու մէջ. ինչպէս՝ Մոնթրեալի, Թորոնթոյի եւ Զամպրիճի:

**3. Յայր Սուրբ նկատի առած Զրիստոնէական Դաստիարակութիւնն ու անոր
կարեւորութիւնը, կարելի է նախ մեզի որոշ տեղեկութիւն տաք Մեծի Տանն Կիլիկիոյ
Կաթողիկոսութեան Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին ու անոր
աշխատանքներուն մասին:**

Պ. Նախ ըսեմ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Զրիստոնէական
Դաստիարակութեան Բաժանմունքը որպէս պաշտօնական գրասենեակ ու աշխա-
տանք սկսած է 1978ին, Վարիչ ունենալով Գերշ. Տ. Չարեհ Արք. Ազնաւորեանը, մին-
չեւ այսօր: Սա չի նշանակեր որ չենք ունեցած կամ չենք կատարած այսպիսի աշխա-
տանքներ, բայց որպէս Բաժանմունք իր աշխատանքներուն սկսած է այդ թուակա-
նին:

Առ այդ, սկզբնական շրջանին գրասենեակի աշխատանքները եղած են տա-
րեկան դրութեամբ, դասախօսական շարքեր կազմակերպել Եկեղեցւոյ ու Յայ մշակոյ-
թի պատմութեան եւ այլ նիւթերու: Յետագային, սակայն, աշխատանքները սկսան ա-
ւելի լայն ծաւալ եւ տարողութիւն ստանալ: Եւ այսօր գրասենեակի աշխատանքները
կ'ընդգրկեն հետեւեալ բնագաւառները.

1. Կիրակնօրեայ Դպրոցներ
2. Աստուածաշունչի Սերտողութիւններ
3. Դասախօսական շարքեր (ընկերային, ընտանեկան, բարոյական եւ այլ տե-
սակի նիւթեր)

4. Թեմերու այցելութիւն, այնտեղ կազմակերպելու համար այս տիպի աշխատանքներ
5. Հոգեւոր ու մշակութային ձեռնարկներ կազմակերպել, ինչպէս համերգներ
6. Հրատարակչական աշխատանքներ
7. Զայնտրիզներու եւ տեսաերիզներու պատրաստութիւն

Այս խօսքով ամեն տեսակի ձեւեր որոնել Քրիստոնեական Դաստիարակութիւնը հասցնելու եւ փոխանցելու մեր հաւատացեալ ժողովուրդի բոլոր խաւերուն՝ ընտանիք, երիտասարդ եւ պատանի: Օրինակ, Կաթողիկոսարանէն ներս ունինք Աստուածաշունչի սերտողութիւն տիկիններուն, ինչպէս նաեւ երիտասարդներուն: Ունինք Կիրակնօրեայ Դպրոցներու ուսուցիչներու պատրաստութեան մանկավարժական յատուկ դասընթացք, յատուկ սեմինարներ թեմերէ եկած ուսուցիչներու: Կիրակնօրեայ Դպրոցներու համար գունագարդ գրքոյկներու, Աստուածաշնչական հատուածներով գունաւոր նկարներու պատրաստութիւն, եւ այլ տեսակի աշխատանքներ: Նաեւ գրասենեակը եւ փորձէ եւ աշխատանքի վրայ օգտագործելու արդի միջոցները, օրինակ՝ computer, chatting, շատ անելի մօտ ըլլալու եւ հոգեւոր ու քրիստոնեական դաստիարակութեան կարիքներուն հասցնելու մեր նոր սերունդին:

3. Հայր Սուրբ Նկատի առած այօրուան առազընթաց ժամանակաշրջանն ու աշխարհը, ու մանաւանդ անոր զարգացումը, ինչպէս կարելի է դիմագրաւել հարցեր, յատկապէս կապուած բարոյական խնդիրներու, որոնք ամենօրեայ նիւթ են մեզի համար: Եւ կամ ինչպէս կարելի է փոխանցել Քրիստոնեական Դաստիարակութիւն, հոգեւոր կրթութիւն մեր նոր սերունդին, երբ ամեն օր մեր նոր սերունդը շրջապատուած է ու տակաւին կը շրջապատուի նորութիւններով:

Պ. Որպէս պատասխան, նախ եւ կ'ուզեմ ըսել, որ եթէ երբեք մենք կը խօսինք կամ պիտի խօսինք դաստիարակութեան մասին, այդ դաստիարակութիւնը պետք է սկսի տունէն: Ինչո՞ւ տունէն: Որովհետեւ տունը այն առաջին դպրոցն է մանուկին իր ֆիզիքական ու մտային զարգացման: Տունին մէջն է, որ մանուկը կ'ունենայ իր առաջին ուսուցիչը՝ հայրն ու մայրը: Նաեւ նոյն այդ դպրոցը պետք է ըլլայ իր հոգեւոր աճման ու զարգացման վայրը: Որովհետեւ նախ պետք է գիտնանք, որ այդ երեխան միայն ֆիզիք, միայն միտք, միս ու ոսկոր չէ, այլ նաեւ հոգեւոր, հոգեկան ներաշխարհ մը ունի, որուն տէր պետք է ըլլայ նախ ծնողը ինք: Երկրորդ, գիտնականներ կ'ըսեն թէ մանուկը կամ անելի ճիշդ մանուկին միտքը կը նմանի ճերմակ գրատախտակի, Tabula Rasa, որուն վրայ ինչ որ արձանագրենք այդ է որ կը մնայ: Հետեւաբար եթէ լաւ բաներ գրեցինք, լաւ բաներ դուրս կու գան: Այս բոլորը նկատի առած, ուրեմն, մեծ դեր ունին ծնողները իրենք այդ դաստիարակութեան մէջ:

Երկրորդ, սակայն, տունը ինքնին բաւարար չէ: Այնպէս ինչպէս յաւելեալ զարգացման համար մեր զաւակները դպրոց կ'ուղարկենք, նոյնպէս ալ հոգեւոր զարգացման եւ քրիստոնեական դաստիարակութեան համար տունը բաւարար չէ, այլ ունինք Կիրակնօրեայ դպրոցներ, որոնք կը փորձեն իրենց կարողութեանը համաձայն տալ քրիստոնեական կրթութիւն: Այդ իմաստով տարբեր շրջաններու մէջ ունինք Կիրակնօրեայ դպրոցներ, որոնք իրենց ծառայութիւնը կ'ընեն այդ ուղղութեամբ:

Եւ ի վերջոյ, այս երկուքը կ'ամբողջանան եկեղեցիով, երբ եկեղեցին կու գայ լրացնելու այդ դաստիարակութիւնը:

Եթէ երբեք յստակ է մեր մտքերուն մէջ այն կալուածները ուր կարելի է մանուկին քրիստոնեական կրթութիւն փոխանցել, ապա ինչպէս կարելի է այդ մէկը ընել այսօրուան պայմաններուն տակ: Նախ, ժամանակաշրջանը լաւ պետք է ճանչնանք: Մանուկին հոգեբանութիւնը լաւ հասկնանք: Ժամանակին հետ քայլ պահենք միշտ ընտրելով լաւը, գեղեցիկը եւ դաստիարակիչը: Որովհետեւ յաճախ կը կարծենք որ ամեն ինչ լաւ է, եւ կամ ամեն ինչ գէշ է: Բայց այդպէս չէ: Պէտք է ամեն ինչ մաղէ անցընենք: Յաճախ կրնանք երեւոյթներու հանդիպիլ, որոնք արտաքինապէս կրնան գեղեցիկ թուիլ բայց այդպէս չեն: Հետեւաբար անելի զգոյշ եւ արթուն պետք է ըլլանք: Այսօրուան աշխարհը մեզի կը ներկայացնէ, կը հրամցնէ այնպիսի բաներ, որոնք խոր-

քին մէջ փոխանակ մարդս զարգացնելու դէպի անդունդ կը տանին: Ուրեմն չկարծենք որ ամէն ինչ օգտակար կրնան ըլլալ, այնպէս ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «*Ամէն ինչ արտօնուած է ինձի, բայց ամէն ինչ օգտակար չէ*»:

Գալով փոխանցման ձեւին եւ կերպին, նախ պէտք է մենք լաւ գիտնանք մեր փոխանցելիքը եւ յետոյ ըստ այնմ փոխանցենք համաձայն մեր միջավայրի պայմաններուն եւ կարիքներուն: Այնպէս ինչպէս Քրիոստոս իր ժամանակի մարդոց կը խօսէր իրենց ծանօթ օրինակներով, առակներով: Նոյնպէս ալ մենք պահելով հանդերձ խորքը, բովանդակութիւնը, իսկութիւնը քրիստոնէական դաստիարակութեան կրնանք օգտագործել արդի մեթոտներ: Հետեւաբար, նախապայմանը մեր գիտնալն է:

3. Հայր Սուրբ որպէս վերջին հարցում, ինչ կարելի է փոխանցել մեր Պանախայութեան:

Պ. Նախ անգամ մը եւս կ'ուզեմ իմ շնորհակալութիւնս յայտնել եւ մաղթել առողջութիւն եւ յաջողութիւն ձեր բոլորին, եւ ըսել ամուր պահեցէք այն կտակը որ սերունդէ-սերունդ կը փոխանցուի: Եւ եթէ երբեք կ'ուզենք լաւ եւ առողջ ընկերութիւն մը ունենալ, պէտք է եւ անհրաժեշտ է լաւ ու առողջ ընտանիք, ու մանաւանդ հայ ընտանիք ունենալ: Հռոմէացի պատմիչը կ'ըսէ «*Եթէ երբեք Հռոմի կայսրութիւնը փլաւ, որովհետեւ Հռոմի ընտանիքը քայքայուեցաւ*»: Հետեւաբար, մեր կարելին ընենք որպէսզի կարենանք հայ ընտանիքը ու մանաւանդ հայ նոր սերունդը ամուր եւ առողջ պահել: Շնորհակալութիւն եւ յաջողութիւն ձեզի:

**«ՀՈՐԻՉՈՆ»
2002**

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԿԻՊՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ ՏԷՐ
ՎԱՐՈՒԺԱՆ Ս. ԱՐՔ. ՀԵՐԿԵԼԵԱՆԻ ՀԵՏ**

3. Սրբազան Յայր, «Յորիզոն» շաբաթաթերթին անունով բարի գալուստ կը մաղթեմ ձեզի Թորոնթո եւ կը փափաքիմ կարգ մը ծանօթութիւններ ստանալ ձեր եւ Կիպրոսի հայ գաղութին մասին: Կը հաճի՞ք ամփոփ տեղեկութիւններ տալ ձեր կենսագրութեան շուրջ:

Պ. Ծանօթանալու համար պարզապէս ըսեմ, որ Մուսա Լեռնցիի զաւակ եմ եւ անդամ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 1967Էն ի վեր:

Անցնող 35 տարիներու ընթացքին երկար ատեն վարած եմ ուսուցչական պաշտօններ Դպրեվանքի, Լիբանանի եւ Կիպրոսի Ազգային վարժարաններու մէջ: Կարճ շրջան մը եղած եմ Յոգեւոր Յովի Սելանիկի եւ Յիւսիսային Յունաստանի Յաստանեայց եկեղեցիներուն:

Ուրջ տարի վարած եմ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնաթերթ «Յասկ» ամսագրի խմբագրութիւնը: Անձնական նախաձեռնութեամբ կը հրատարակեմ «Գառնի» ուսանողական գրական մատենաշարը՝ 1986Էն ի վեր: Վերջին հատորը (թիւ 36) լոյս տեսաւ անցեալ ամիս:

1993Էն ի վեր կը հրատարակեմ «Արծիւ» գրական, մշակութային, կրօնական եւ ընկերային շաբաթաթերթը: Նախապէս երկշաբաթօրեայ դրութեամբ, վերջին տարիներուն, գործի բերմամբ ամսական դրութեամբ կը հրատարակուի:

1997Էն ի վեր կը վարեմ Կիպրոսի Յայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդի պաշտօնը:

3. Ձեր Գանատա այցելութիւնը ի՞նչ նպատակով եղած է:

Պ. Գանատայի Յայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Ս. Արք. Յակոբեանի տնօրինութեամբ եւ հրաւերով այս օրերուն կը գտնուիմ Գանատա, մասնաւորաբար, վերացման Ս. Խաչի տօնին առիթով Մուսա Լեռան 88րդ տարեդարձի եւ Յայաստանի վերանկախացման 12րդ տարեդարձի տօներուն մասնակցելու եւ պատարագելու համար:

Այս այցելութիւնը առիթ կը հանդիսանայ նաեւ, որ մօտէն ծանօթանամ Գանատայի Յայոց Թեմին եւ հոն կատարուած եւ կատարուելիք աշխատանքներուն: Այս առիթով կ'ուզեմ իմ ջերմ շնորհակալութիւններս յայտնել հոգեւոր եղբօրս՝ Խաժակ Սրբազանին եւ Գանատայի Յայոց Ազգային Իշխանութեան եւ փոխանցել իմ լաւագոյն բարեմաղթութիւններս:

3. «Արծիւ» շաբաթաթերթի հրատարակութիւնը ի՞նչպէս յղացաք:

Պ. 1992ին, պետական արտօնագիր ապահովելէ ետք, այցելեցի Յայաստան եւ երկու տասնեակ մը գրողներու եւ մտաւորականներու հետ հանդիպումներ ունեցայ եւ պարզեցի միտքս: Սփիւռք-Յայաստան մտաւորականներու կայքի մը վերածելու «Արծիւ»ը: Խանդավառութիւնը մեծ էր եւ Յրանդ Մաթեւոսեանի, Պերճ Չէյթունցեանի, Յովհաննէս Գրիգորեանի, Մ. Մնացականեանի, Յենրիկ Իգիթեանի, Արեւշատ Աւագեանի աշխատակցութեամբ ճամբայ ելանք: Այլ նպատակ մըն ալ ունէինք թափ տալ նոր գրողներու եւ մտաւորականներու ստեղծագործութիւններուն եւ վերջապէս անկաշկանդ կերպով անդրադառնալու համահայկական մտահոգութիւններուն:

Լիբանանի մէջ «Արծիւ»ի շուրջ հաւաքուած մտաւորականներ սիրողաբար կ'աշխատակցին: Փոքր պատուագին կը վճարուի հայրենի գրողներուն: Մեր կարելոր մտահոգութիւններէն մէկն է քաջալերել սկսնակ գրողները: Թերթին տպաքանակն է 750 եւ կը բաժնուի հայկական հաստատութիւններու, ինչպէս նաեւ բաժանորդներու... Թերթը իր ծախսերը մեծ մասամբ կը հոգայ բարեկամներու եւ սիրողներու նուիրատուութիւններով, որոնց, այս առիթով կը յայտնենք մեր շնորհակալութիւնները:

3. Կ'ուզէիք պատմական եւ այժմեական կարգ մը տեղեկութիւններ փոխանցել Կիպրոսի հայ գաղութին մասին:

Պ. Կիպրահայ գաղութի արմատները կ'երկարին մինչեւ 10-11րդ դար: Կան հայկական անունով գիւղեր, ինչպէս Արմէնօխորի (հայկական գիւղ), որոնց մէջ այսօր կարելի չէ հայկական հետքեր գտնել: Ամէնէն հին արձանագրութիւնը որ մեզի հասած է, կը յիշատակէ, որ 1179ին երկու առաջնորդական աթոռներ գոյութիւն ունեցած են Կիպրոսի մէջ, մէկը ֆամակուսթա քաղաքին մէջ, որ 16րդ դարուն խափանուած է, իսկ միւրը՝ Նիկոսիա, որ մինչեւ այսօր կը գործէ: Յիշատակարի մը մէջ կը կարդանք, ոպ Ներսէս Լամբրոնացի ատեն մը հաստատուած է Կիպրոս:

Առաջնորդարանի արխիւներուն մէջ ունինք հրամանագիրներ եւ Կոնդակներ Սիսէն, Պոլսէն եւ Երուսաղէմէն 16, 17 եւ 18րդ դարերէն մնացած: Նոյնպէս ունինք 18րդ դարէն սկսեալ եկեղեցական սպասներ:

Կեդրոնանալով գաղութի վերջին հարիւրամեակին վրայ, ըսեմ, որ հայեր կեդրոնացած են.

1. Նիկոսիա, ուր համախմբուած էին Ս. Աստուածածին եկեղեցւոյ շուրջ, ուր թաղ մը ամբողջ կը կոչուէր Էրմէնի Մեհելէսի (հայկական թաղ), ուր ունէին Մանկապարտեզ, Նախակրթարան, ակումբ, առաջնորդարան, տպարան, որոնք 1963ի թուրք-յոյն բախումներու հետեւանքով բռնագրաւուեցան թուրքերու կողմէ, իսկ հայութիւնը ցրուեցաւ յունական բաժնին մէջ: 1980-ական թրւականներուն կառուցուեցաւ Ս. Աստուածածին նոր եկեղեցին, Ազգային Նարեկ վարժարանը եւ առաջնորդարանը: Զաղաքին մէջ կ'ապրին շուրջ 550 ընտանիք:
2. Լաւնաքա, ուր ունինք Ս. Ստեփանոս եկեղեցին, կառուցուած Ատանայի ջարդերուն զոհ գացած հայորդիներու յիշատակին 1910ին: Ունինք նաեւ Ազգային Նարեկ վարժարանը: Լաւնաքայի մէջ կ'ապրին շուրջ 150 ընտանիք:
3. Լիմասոլ, որ յարաբերաբար նոր գաղութ է: Ունի Ս. Գեորգ եկեղեցին՝ կառուցուած 1938ին, որուն կողքին կը գործէ Ազգային վարժարանը: Լիմասոլ կ'ապրի շուրջ 100 ընտանիք:
4. Մինչեւ 1974 (թրքական ներխուժում) փոքր թիւով հայեր կ'ապրէին Ֆամակուսթա:
5. Նոյնպէս, մինչեւ 1974, դարձեալ փոքր թիւով հայեր կ'ապրէին Ս. Մակարայ վանքին մէջ եւ շուրջը:

Ս. Մակարայ վանքը կ'ենթադրուի, որ հայերու սեփականութիւն դարձած է 10րդ դարէն սկսեալ: Ո՛չ հայկական ոճով մենաստան մըն է: Յետզհետէ ընդարձակուած է վանքի կալուածը եւ անգլիական տիրապետութեան շրջանին արդէն ուներ 10 հազար տէնիւմ հողամաս որոնց վրայ կային 10-15 հազար ձիթենիի եւ եղջերենի ծառեր, որ կոկիկ հասոյթ մը կ'ապահովէր վանքին: Վանքին մշակութային գանձերը կը կազմէին 60 ձեռագիրներ, որոնք այսօր կը պահուին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թանգարանին մէջ: Վանքը որպէս ամառանոց ծառայած է Կիլիկիոյ Կաթողիկոսներուն, երբ Կիլիկեան Աթոռը հաստատուեցաւ Լիբանան: Նոյնպէս որպէս ամառանոց ծառայած է Կիպրահայութեան վանքը եղած է ուխտատեղի, Մայիսի առաջին Կիրակին վերապահուած է Մակարայ Վանքի տօնակատարութեան: 1974էն ի վեր ենթարկուած է հետեւողական քանդումի թուրքերուն կողմէ: Այսօր գրեթէ անվերականգնելի վիճակի մէջ է:

Կիպրոսի գաղութը որպէս թեմ կազմուիլ սկսած է 20րդ դարու սկիզբները, մասնաւորաբար Մեծ Եղեռնէն ետք, երբ ջարդերէն ազատուած հայեր հաստատած են Կիպրոսի կանոնագրութիւնը: Կազմուած է եւ վաւերացուած 1947ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Ա. Յովսէփեանի կողմէ: Թեմը պատմականօրէն կը պատկանի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ երբեմն՝ Կ. Պոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքութիւններու ինամքին տակ մնացած է:

Ըստ կանոնագրութեան, թեմը ունի օրէնսդիր եւ գործադիր ժողովներ (թեմական ժողով), ընտրովի եւ վարչական ժողով, թեմականի կողմէ նշանակուած չորս տարուան ժամանակամիջոցով:

Այժմ թեմին մեջ կը գործեն Ս. Աստուածածին եկեղեցին՝ Նիկոսիա, եւ Լառնաքայի եւ Լիմասոլի եկեղեցիներ եւ Ազգ. Նարեկ վարժարանը՝ երեք քաղաքներու եկեղեցիներուն կից 180 աշակերտներով: Նիկոսիոյ մեջ կը գործէ Բ.Բ.Մ.ի Մելգոնեան Երկրորդական Վարժարանը, որ այսօր ունի 250 ուսանող:

Գաղութին մեջ կը գործեն Զայ Երիտասարդաց Միութիւնը (ՅԵՄ) իր ակումբով, որուն մեջ կը գործէ Բ.Յ.Դ. Կոմիտէն, Բ.Օ.Մ.ը, Զամազգայինի «Օշական» մասնաճիւղը, Բ.Մ.Մ.ը: Զոն կը հրատարակուի «Արձագանգ» ամսագիրը: Այս միութիւնը մասնաճիւղեր ունի Լիմասոլի եւ Լառնաքայի մեջ:

Բ.Բ.Մ.ը Նիկոսիոյ մեջ ունի իր կեդրոնը եւ մասնաճիւղերը՝ Լառնաքայի եւ Լիմասոլի մեջ: Կը հրատարակէ «Ազատ Ձայն» ամսագիրը: Գոյութիւն ունի նաեւ համայնավարներու խմբակ մը՝ Ստեփան Շահումեան անունով: Ազգային Առաջնորդարանը ունի իր ամսօրեայ լրագրերը՝ «Գեղարդ» անունով:

Առաջնորդարանի հովանիին տակ կը գործեն Կիրակնօրեայ վարժարաններ՝ երեք քաղաքներու մեջ եւ քրիստոնէական դատարարակութեան խորհուրդ:

1960էն ի վեր գաղութը ունի պետական ներկայացուցիչ, որ կապու է պետութեան եւ համայնքին միջեւ:

Գ. Ձեր Գանատահայ գաղութին այցելութեան լոյսին տակ, կը հաճի՞ք ձեր հայրական պատգամը փոխանցել Գանատահայութեան:

Պ. Նախ կ'ուզեմ իմ շնորհակալութիւնս յայտնել Գանատայի Զայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տէր Խաժակ Ս. Արք. Յակոբեանին, որու հըրաւերով կը գտնուիմ Գանատա: Նոյնպէս՝ Ազգային Իշխանութեան եւ հոգեւորական դասուն Գանատահայութեան մաղթելով պտղաբեր աշխատանք եւ յաջողութիւն:

«Յորիզոն» շաբաթաթերթին կը մաղթեմ, որ իր առողջ եւ դաստիարակիչ յօդուածներով ուղեցոյց եւ փարոս հանդիսանայ իր ընթերցողներուն եւ մեր ժողովուրդին, մասնաւորաբար մեր նոր սերունդին:

**«ՅՈՐԻԶՈՆ»
2003**

Զ.

ԱՌԻԹՆԵՐՈՎ
ԽՕՍՈՒԱԾՆԵՐ

**ԽՕՍՈՒԱԾ՝
ՌԱԳԳԱՅԻ ՆՈՒՊԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՄԻՆ
ՏՆՕՐԷՆ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԿՈՂՄԷ**

*Պատուարժան Թաղական Խորհուրդ եւ Հոգաբարձութիւն,
Սիրելի ներկաներ,*

«Լսէ՛ որդիս ուր որ լինես, այս երկնի վրայ ուր որ գնաս, քո մօրն անգամ մտքից հանես, քո մայր լեզուն չմոռանաս»:

Ըսած է իր որդւոյն ուղղուած քերթուածի մը մէջ, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեան:

«Գիր սիրէ, դալամ սիրէ, տափթար սիրէ», ըսած է արեւելահայ գրականութեան հիմնադիր, հռչակաւոր Խաչատուր Աբովեան:

Մեր լեզուն կը կազմէ հիմնաքարը մեր ազգին: Այն ազգը որ լեզու եւ գրականութիւն չունի, դատապարտուած է ոչնչանալու: Առանց լեզուի եւ մշակոյթի ազգ չըլլար: Մեր հայրենիքէն տարագրուելէն վերջ, սա օտար արեւմտեան վրայ, մենք մեր լեզուի պահպանումին աւելի պէտքը կը զգանք քան Հայաստանի մէջ, ուր պետութիւնը ամէն ձեւով տէր է եւ պահպան մեր լեզուին: Իսկ հոս, արտասահմանի մէջ, այլազան ազգերու հետ միասին ապրելով, մենք ստիպուած ենք նահանջելու մեր ազգային ավանդութիւններու բոլոր կալուածներուն մէջ, եւ որպէսզի կարենանք դիմագրաւել ամէն դժուարութիւն եւ ամէն յարձակում որ կոչուած է կեղծելու մեր ազգային դիմագիծը, մեր բոլոր ջանքերը պիտի ըլլան կանգուն պահել մեր ազգային դպրոցները: Նայեցէք հորիզոնէն անդին, Եւրոպական ցամաքամասերուն վրայ, Ամերիկա, Ֆրանսա, Եւրոպա, ազգային դպրոցներու չգոյութեան պատճառով, յիսուն տարի վերջ մէկ հատիկ մարդ պիտի չկարենանք գտնել, որ ըսեր թէ «ես հայ եմ»: Պարկերը յուսահատեցուցիչ է, նոյնիսկ ներկայիս: Նոր սերունդէն անոնք հայերէն գիտեն, որոնք մասնաւոր դասեր առած են: Եւ սկսած է այլասերումը: Շատեր կ'ըսեն, «իմ հայրս հայ է»: Ինչպէս կը տեսնէք այլասերումը կը սկսի նախ եւ առաջ լեզուէն:

Որպէսզի հայ ապագայ պատմագէտներ «վա՛յ» չկարդան մեր վրայ, ոյժ տանք մեր դպրոցներուն, ամէն ճիգ չխնայենք, որպէսզի անոնք ծառայեն ճշմարիտ իրենց նպատակին: Եւ այս ամէնը համախոհ, միաձայնութեամբ եւ իրար հասկացողութեամբ, հեռու մեզմէ կարգ մը գցուց հաշիւներ, որպէսզի հայ նոր սերունդը առնէ հայեցի դաստիարակութիւն:

Բայց չմոռնանք ըսելու որ, դպրոցին հետ աւրնթեր, նոյնքան եւ աւելի մեծ դեր ունի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին: Ան է որ, իր մեծ կոչումը արդարացուցած է, դարերէ ի վեր:

Հայապահպանման ամենամեծ ազդակներէն մէկն է: Մեր եկեղեցիին արժէքը գիտնալու համար յիշենք մի միայն Լեհաստանի մեր գաղութիւն մասին: Լեհաստանի գաղութը շատ բարգաւաճ էր, ընդհանրապէս բոլորն ալ կազմուած էին Անի քաղաքի բնակչութեամբ: Սակայն Եպիսկոպոսի մը միջոցաւ

անոնք կաթողիկ դարձան եւ այսօր անոնց հետքն իսկ չէ մնացեր Լեհաստանի մէջ, որպէս հայ:

Պէտք է սիրենք մեր եկեղեցին, որ ամէնահին եկեղեցիներէն մէկն է: Ոյժ տանք անոր որ մնայ անսասան, ամէն տեսակ քամիներէ: Այս տեսակէտով մեծ դեր կը կատարեն Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցները: Անոնք, մանուկներու հոգիին մէջ կը դրոշմեն նախ Աստուծոյ վախը, առանց այդ վախին, մարդ կրնայ ամենամեծ ոճիրները գործել: Կը սիրցնէ Հայ եկեղեցին: Հայ եկեղեցւոյ ժողովուրդ կը պատրաստէ: Նկատելով որ հայ սերունդը աւելի հաճոյք կը գգայ Փոլսպոլի խաղէն, սինեմայէն եւ զանազան պտոյտներէ, քան եկեղեցիէն: Կիրակնօրեայ դպրոցը այս անորոշութեան մէջ կը յայտնուի եւ լուսաւոր աստղի մը պէս, ցոյց տալու համար ճշմարիտ ճամբան: Մեր եկեղեցին է որ մեզի հայ պահպանէ եւ ոչ թէ ուրի որեւէ միջոց:

Խօսքը փակելէ առաջ շնորհակալութիւն կը յայտնեմ յարգելի ներկաներուն, որոնք գալով տեսան իրենց զաւակներուն յառաջդիմութիւնները:

Շնորհակալութեան խօսք ունիմ թաղականութեան եւ հոգաբարձութեան յարգելի անդամներուն, որոնք անխոնջ կերպով աշխատեցան այս դըպրոցի յառաջդիմութեան համար: Շնորհակալութիւն՝ պաշտօնակիցներուս, որոնց հետ շատ սիրով անցուցինք ամբողջ տարին, շնորհակալութիւն Րազգայի բոլոր ժողովուրդին եւ անոնք որոնք հարազատի մը խնամքը տուին ինձի համար օտար այս գիւղաքաղաքին մէջ:

25 Յունիս 1951
Ռազգա

ԽՕՍՈՒԱԾ՝
ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԻՋ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉԱԿԱՆ
ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԿՈՂՄԷ

Սիրելի Ազատատենչ Հայորդիներ,

Թորոնթոյի հայ երեք համայնքներու նախաձեռնութեամբ կազմակերպուած Մեծ Եղեռնի 70-ամեակի Ոգեկոչման հանդիսութեան ընթացքին, գեղարուեստական յայտագրով, պատգամներով եւ կրօնական արարողութեամբ յիշատակեցինք մեր երկու միլիոն նահատակներուն խնկելի յիշատակը:

Այժմ եկած ենք հոս, Հայաստանի բոլոր շրջաններէն սկսեալ մինչեւ արաբական անապատները՝ յատկապէս Տէր Զօրի, Մեսքենէի եւ Րաս-իլ-էյնի շրջաններու մէջ անթաղ եւ անշիրիմ մահացած մեր երկու միլիոն նահատակներուն յիշատակին բարձրացած այս խորիմաստ յուշակոթողին առջեւ, անոր փարոսային ցոլքով լուսաւորուելու պայծառ խորհուրդով հաղորդուելու եւ անժամանցելի կտակով ոգեւորուելու համար:

Եկած ենք ազգովին վերանորոգելու մեր ազգային ուխտը, թէ՛ մարդկային կարելի բոլոր միջոցներով պիտի պայքարինք, յաղթահարելով մեր բոլոր տեսակի թշնամիները, վերատիրանալու համար մեր պապենական հողերուն եւ իրագործելու հայ ժողովուրդի սրբազան նպատակները՝

Ամբողջական Հայաստան,

Ամբողջական Հայութեամբ,

Միացեալ եւ Ազատ Հայաստանի Սահմաններուն մէջ:

*

**

Սեզ ԷՆ զլխից են զարկել, բայց նորէն
Հայերն ապրել են, ապրում են, կ'ապրեն:

Հազար դարեր են զարկել, բայց նորէն
Հայերն ապրել են, ապրում են, կ'ապրեն:

Եղեռնազարկ էլ եղանք, բայց նորէն
Հայերն ապրել են, ապրում են, կ'ապրեն:

Անմահ Շիրազի բառերով, դարերով հայ ժողովուրդը գլխից վարնըլած է, եղեռնազարկ ալ եղած, կորսնցուցած իր եօթը հազար տարիներու պատմութիւն ունեցող իր հայրենիքին մեծ մասը, սակայն, աստուածային տրնորէնութեամբ թէ հայու եզակի հրաշագործ կամքով եւ կորովով «Հայերն ապրել են, ապրում են, կ'ապրին»:

Այլապէս ի՞նչպէս բացատրել գերեզմանուած, թուրք ջարդարար Թալ- աաթ փաշայի բնաջնջած ազգը, Եղեռնէն հագիւ երեք տարի վերջ, փիւնիկի նման մոխիրներէն յարութիւն առնելով եւ իր քաջամարտիկ հերոսներու վե- րապրելու անխորտակելի կամքով՝ Սարդարապատի, Բաշաբարանի եւ Ղարա- քիլիսայի ճակատագրական ճակատամարտներուն, խորտակելով հայ ժողո- վուրդը պատմութեան անցնելու թուրքին վճիռը, յաղթեցինք թշնամիին եւ վեց դարերու ստրկութեան շղթաները բզկտելով հիմնեց Հայաստանի Հանրա- պետութիւնը:

70 տարիներ անցած են արդէն Եղերական այն սեւ թուականէն, որ մեր պատմութեան մէջ արձանագրուած է 24 Ապրիլ 1915 թուականով:

50 տարի, սգահանդէսներ կազմակերպեցինք, լացինք, հոգեհանգիստ- եան պաշտօններ կատարեցինք՝ աղօթեցինք՝ մեր անմեղ նահատակներուն յի- շատակին եւ հոգիներուն համար:

Ո՛չ մէկ տեղ, աշխարհի երեսին, մեծ եւ փոքր ոչ մէկ պետութիւն չհե- տաքրքրուեցաւ Հայ ժողովուրդով:

Խաղաղ միջոցներով մեր իրաւունքները պահանջեցինք, մեզ մտիկ ե- դող չեղաւ:

Եղեռնը յիսունամեակէն ետք, Հայաստանի եւ Սփիւռքի հայութիւնը որոշեց քսաներորդ դարու վայել դիրք եւ ուղղի որդեգրել:

Եւ, այսօր, աշխարհ մօտէն հետաքրքրութիւն ցոյց կու տայ Հայ Դա- տին առընչութեամբ՝ շնորհիւ «Նորիմեան Հայրիկ»ի թուղթէ շերեփի պատմու- թեան դասին:

Ինչպէս աշխարհի բոլոր ծագերուն, ուր հայ գաղութ եւ կեանք գոյու- թիւն ունի, այս օրերուն կ'ոգեկոչուի Հայոց Մեծ Եղեռնը 2 միլիոն նահատակ- ներուն յիշատակը, նոյնպէս, Թորոնթոյի մէջ Հայ երեք Յարանուանութիւն- ներու հովիւներէն եւ ներկայացուցիչներէն կազմուած յանձնախումբը, կազ- մակերպելով 70-ամեակի կրօնական Ոգեկոչումի այս հանդիսութիւնը մէկ բան կ'ուզէ շեշտել եւ ընդգծել աշխարհին.

Հայ ժողովուրդը ամբողջութեամբ միասնակամ է եւ պահանջատէր իր արդար իրաւունքներուն:

Միասնակամութեամբ, առանց դաւանանքի եւ գաղափարի խտրու- թեան, միասնական պայքարի կարգախօսով կը ներկայանայ աշխարհին՝ ցե- դասպան Թուրքիոյ ցեղապաշտական քաղաքականութեան դէմ ծառանալու եւ մեր երկու միլիոն անմեղ նահատակներու արեան բաց հաշիւը պահանջելու ու բռնագրաւուած հայկական հողերու ազատագրութեան համար՝ անտեղիտալի եւ վճռական կամքով:

Հայութիւնը որոշած է ապրիլ եւ պայքարիլ կարմիր եւ ճերմակ ջար- դերուն դէմ պաշտպանուած Մեսրոպակերտ զրահներով եւ արիացած Քրիստո- նէական մեծ սկզբունքներով:

Ինչպէս 301 թուականին պետականօրէն ընդունելով Քրիստոնէութիւ- նը՝ առաջինը աշխարհին մէջ, հաւատալով Քրիստոսի Յարութեան, երէկ, այ- սօր եւ յաւիտեան կը հաւատայ Հայ ժողովուրդի դիւցազնական ոգիի յարու- թեան, ունկնդիր անմահ Եղիշէի Մեծ պատգամին՝ «Մահ իմացական անմահու- թիւն է» գաղափարին:

*Եւ մեր նահատակները 1915ին իմացեալ մահով յաղթեցինք թշնամիին
եւ անմահացած մեր հոգիներուն մէջ, որպէսզի մենք ապրինք որպէս հայ եւ
որպէս հայ քրիստոնեայ:*

*Եւ անոնց կրանիթեայ կամքին եւ անսահման հայրենասիրութեան շը-
նորհիւ, մենք վճռաբար կը յայտարարենք.-*

Զանգեր Ղօղանջէք

Մենք չինկանք, դեռ կանք...

Ողջո՛յն եւ եւ յարգանք անոնց խնկելի յիշատակին:

24 Ապրիլ 1985

ԽՕՍՈՒԱԾ՝
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՄԱՆ
ՀԱՆՂԻՍՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ
ԿՈՂՄԷ

*Վեհափառ Տէր,
Առաջնորդ Սրբազան Հայրեր,
Գերապատիւ, Հոգեշնորհ, Արժանապատիւ եւ Վերապատուելի Հոգեւոր
Հայրեր,
Սիրելի եւ Հաւատացեալ ժողովուրդ,*

*Աստուծոյ ողորմութեամբ, ձեր օթանդակութեամբ եւ Վեհափառ Հօր
հովանաւորութեամբ, այսօր, հոգեկան խոր գոհունակութեամբ ականատես ե-
ղանք, մեր տարիներու փայփայած երազին՝ Թորոնթոյի հայութեան համար
ազգապահպանման նոր բերդի մը՝ Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքե-
լական Եկեղեցւոյ սեփական շէնքին աւարտին, որուն երկնամերձ գմբէթներէն
Հայոց հաւատքին լոյսը պիտի ճաճանչէ եւ պիտի լուսաւորէ հայրենակարօտ
սրտերը: Եւ փառք կու տանք Աստուծոյ, այս պատմական եւ նուիրական օր-
ւան առթիւ մեր մէջ գտնուեցաւ եւ իր ձեռամբ օժեց եւ սրբացուց մեր եկե-
ղեցւոյ շէնքը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Նորին Սուրբ
Օծովիւն Տէր Տէր Գարեգին Բ., մասնակցութեամբ Գանատայի եւ Մ. Նա-
հանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Տաթեւ Ս. Արք.
Սարգիսեանի եւ հոգեւոր հայրերու:*

*Այս օրերուն, հայ ժողովուրդը կ'ապրի ճգնաժամային, սակայն, ազգա-
յին եւ կրօնական զարթօնքի շրջան մը: Հայաստանեայց եկեղեցին, շնորհիւ
մեր երկու կաթողիկոսներու՝ Վազգէն Ա.ի եւ Գարեգին Բ.ի ազգապաշտ խոր
գիտակցութեան եւ Մէկ Ազգ, Մէկ Հայրենիք եւ Մէկ Եկեղեցի ըմբռնումին,
կ'անցնէ միասնականութեան, վերակառուցման եւ հզօրացման շրջան մը: ԸՄ-
փոփիչ եւ խրախուսելի է Մայր Հայրենիքին մէջ ստեղծուած կրօնական ազա-
տութեան շնորհիւ վանքերու եւ եկեղեցիներու վերաբացումը, առիթ ստեղծե-
լով Հայաստանեայց եկեղեցիին ստանձնելու իր պատմական առաքելութիւնը՝
հայ ժողովուրդի ազգային, կրօնական եւ մշակութային կեանքին մէջ:*

*Իսկ արտերկրի մէջ, Արեւմտեան Հայաստանի մէջ մեր դարաւոր թըշ-
նամիին՝ թուրքին կողմէ քանդուած եւ աւերուած վանքերու եւ եկեղեցիներու
փոխարէն, նորանոր եկեղեցիներ եւ վանքեր կը շինուին, որպէս առհաւատաչ-
եայ մեր յաւիտենական գոյութեան՝ որպէս ազգ եւ եկեղեցի: Ասիկա յաղթու-
թիւն մըն է, յաղթանակ մըն է մեր թշնամիին ծրագիրներուն դէմ, որ կ'երա-
զէր հայութիւնը ամբողջութեամբ բնաջնջուած տեսնել:*

*Թորոնթոյի հայրենասէր եւ եկեղեցասէր հայութիւնը իր արդար բա-
ժինը ունի այդ յաղթանակին մէջ, վերջին տարիներուն կառուցանելով նորա-
նոր եկեղեցիներ, կեդրոններ եւ դպրոցներ՝ ապահովելու համար այս ամիսներուն
վրայ հաստուած հայ զանգուածներու որպէս հայ քրիստոնեայ գոյատեւումը:*

Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հոգաբարձութեան անունով բարի գալուստ կը մաղթեմ Վեհափառ Հայրապետին, Սրբազան Հայրերուն, եկեղեցանուէր հիւրերուն եւ կը վստահեցնենք որ մեր կարելին պիտի ընենք եկեղեցւոյ շէնք շինութիւնն ու կահաւորումը լաւագոյն ձեւով աւարտին հասցնելու՝ համաձայն Հայաստանեայց եկեղեցւոյ ականդութիւններուն եւ նիւթական պարտաւորութիւնները թեթեւցնել, շնորհիւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Ազգային Առաջնորդարանի եւ հայ ժողովուրդի առողջ գիտակցութեան եւ անկասկած նուիրաբերութեան ոգիին:

Այս պաշտօնական առիթով, պարտք կը զգամ մեր սրտագին շնորհակալութիւնները ու գնահատանքը յայտնել Առաջնորդ Սրբազան Հօր, Առաջնորդարանի պատկան մարմիններուն, եկեղեցւոյ հովիւ Հոգեշնորհ Տ. Խաժակ Ծ. Վրդ. Յակոբեանին, Հոգաբարձութեան դադրած եւ գործող անդամներուն, շինութեան յանձնախումբի բոլոր անդամներուն, յատկապէս Տիար Զաւէն Սարգիսեանին եւ Յարութիւն Շիթիլեանին, Դպրաց Դասին եւ դպրապետին Տիար Վարուժան Նիկոլեանին, Կանանց Յանձնախումբին եւ բոլոր այլ յարակից յանձնախումբերուն, Հայ Կեդրոնի պատասխանատուներուն, բարերարներուն, նուիրատուներուն եւ բոլոր անոնց, որոնք իրենց ժամանակը, մասնագիտութիւնը, նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը չխնայեցին, եկեղեցւոյ շինութեան աշխատանքները հեզասահ լրումին հասցնելու համար, ի փառս Հայ ժողովուրդին եւ Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցւոյ:

ԽՕՍՈՒԱԾ՝
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ԾՆՆԴԵԱՆ
ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻՆ ԿՈՂՄԷ

*Հոգեչնորհ Հայր Սուրբ,
Յարգելի Հաւատացեալ Ժողովուրդ,*

*Քրիստոս Ծնաւ եւ Յատնեցաւ
Օրհնեալ է Յարուժիւն Քրիստոսի*

Քրիստոսի Ծննդեան տօնը ամէն քրիստոնեայի համար ճշմարիտ ուրախութեան եւ ցնծութեան օրն է:

Ուստի, այս տօնական օրերուն յաճախ կրկնենք եւ ըմբռնենք մեր Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի հետեւեալ խօսքերը.

**Սէրդ սիրով խոնարհեցար,
Սեր փրկութեան համար մարմնացար:**

*
**

Սակայն երբ ամբողջ աշխարհի մէջ ցնծութեան ալիքներով եւ փառաւոր շուքով կը տօնակատարուի Աստուածայայտնութիւնը կամ Քրիստոսի Ս. Ծնունդը, հայ հաւատացեալի մտքին մէջ դարձեալ կը ցցուի միեւնոյն հարցումը. «Ինչո՞ւ Հայաստանեայց Եկեղեցին Յունուար Ծին կը տօնէ, մինչ միւս եկեղեցիները՝ Դեկտեմբեր 25ին»:

Շատեր կը խորհին թէ՛ դաւանական տարբերութեանց արդիւնք է եղածը: Անմիջապէս ըսենք՝ բացարցակապէս ո՛չ: Ուրիշներ կը հարցնեն, թէ ո՞րն է ճիշդը: Դարձեալ պատասխանենք, թէ ճիշդ եւ սխալ հարց գոյութիւն չունի, այլ՝ երկու թուականներն ալ ունին իրենց տրամաբանական եւ արդարացուցիչ պատճառաբանութիւնները: Հետեւաբար, պիտի չփորձեմ մէկը պաշտպանել միւսին դէմ, այլ՝ պարզապէս ցոյց պիտի տամ, զոյգ թուականներուն տուն տուող պարագաներն ու դրդապատճառները:

Աւետարաններու մէջ, Յիսուսի Ծննդեան թուականի մասին ճշգրիտ եւ ստոյգ տեղեկութիւններ գոյութիւն չունին: Հետեւաբար, փաստացի տուեալներու հիմամբ կարելի չէ ապացուցանել ո՛չ Դեկտեմբեր 25ի ճշգրտութիւնը եւ ո՛չ ալ՝ Յունուար Ծի: Սակայն, Դ. դարէն մնացած եւ մեզի հասած եկեղեցական հայրերու թուղթերէն եւ ճառերէն յստակօրէն կ'երեւայ, թէ՛ Բ. դարու կէսէն սկսեալ Աստուածայայտնութեան տօնը կը կատարուէր Յունուար Ծին: Նոյն օրը կը կատարուէր նաեւ Յիսուսի Մկրտութիւնը, Մոզերու երկրպագութիւնը, Կանայի հարսանիքը եւ Յիսուսի Ծննդեան հետ կապ ունեցող այլ դէպքեր:

Բազմաթիւ են փաստերը, որոնք ցոյց կու տան, թէ մինջեւ Դ. դարը բոլոր քրիստոնեաները, առանց բացառութեան, Յիսուսի Մնունդն ու մկրտութիւնը կը տօնակատարէին Յունուար 6ին: Թէ ինչո՞ւ Յունուար 6ը ընտրած էին, այդ մասին տրամաբանական բացատրութիւն մը կու տայ Ս. Ներսէս Շընորհալի Հայրապետը, ըսելով. «Յիսուսի Մննդեան եւ Մկրտութեան տօնը, հինէն կը տօնուէր Յունուար 6ին, ամէն տեղ միասնաբար: Մենք այդ թուականը անփոփոխ պահած ու պահպանած ենք Ս. Լուսաւորիչէն, որը Ղուկաս Աւետարանիչի Վկայութեան հետեւելով կ'ըսէ, թէ՛ Չաքարիա քահանան (Յովհաննէս Մկրտիչի Հայրը) իր պաշտօնակատարութենէն յետոյ, տուն վերադառնալով յղացուց իր կիներ՝ Եղիսաբէթը, որուն յղութենէն ուղիղ վեց ամիս ետք տեղի ունեցաւ Ս. Կոյսի Աւետումը: Արդ Չաքարիան հրէական «Քառութեան տօն»ի օրը՝ Թշրինի 10ին, այսինքն՝ Սեպտեմբեր 27ին մտաւ տաճար եւ 12 օր շարունակ հոն մնաց եւ պաշտամունք կատարեց (5 օր քառութեան եւ 7 օր՝ տաղաւարահարաց տօնի): Ապա, Թշրինի 22ին կամ՝ Հոկտեմբեր 9-10ին տուն գնաց եւ յղացուց Եղիսաբէթը: Ասկից մեկնելով Ս. Կոյսի Աւետման ճիշդ օրը կ'իյնայ Ապրիլին, իսկ Մնունդը՝ ինն ամիս ետք, այսինքն՝ ճիշդ Յունուար 6ին»:

Յիսուս մկրտուեցաւ իր 30 տարիքը լրացուցած օրը, ըստ աւետարանիչին, հետեւաբար ճիշդ իր ծննդեան երեսուներորդ տարեդարձի օրը՝ Յունուար 6ին:

Այսպէս, ուրեմն, մինչեւ չորրորդ դար, բոլոր քրիստոնեաները Քրիստոսի Մնունդն ու Մկրտութիւնը կը տօնէին միանաբար Յունուար 6ին, երբ յանկարծ Լատին եկեղեցին որոշեց Դեկտեմբեր 25ին տօնել Ս. Մնունդը, իսկ մկրտութեան թուականը պահեց անփոփոխ՝ Յունուար 6ին:

Ինչո՞ւ:

Այս որոշումը ունէր իր տրամաբանական եւ օգտակար պատճառը: Հըռոմի մէջ, Դեկտեմբերին տեղի կ'ունենար Հեթանոսական շրջանէ մնացած «Միթրա» անունով Արեւի եւ Լոյսի աստուծոյ հանդիսաւոր տօնակատարութիւնը, որուն չէր կարողացած արգելք հանդիսանալ Հըռոմի եկեղեցին:

Ժողովուրդը մեծ խանդավառութեամբ կը տօնէր «Անյաղթ Միթրա Արեւ աստուծոյ ծնունդը»: Վատիկան այժմեան տեղը Միթրայի յիշատակին նըւիրուած Մեհեան էր, որ Ս. Պետրոսի նշանաւոր տաճարի կառուցումէն ետք ալ, մարդոց յարգանքի, հետաքրքրութեան եւ պաշտամունքի առարկայ մնաց: Որպէսզի Դեկտեմբեր 26ին կատարուող այս հեթանոս տօնախմբութեան վերջ տրուի, Հըռոմի եկեղեցւոյ հայրերը, որոշեցին ճիշդ նոյն թուականին տօնակատարել Յիսուսի Մնունդը, որպէս իմանալի արեգակի ծննդեան տօնախմբութիւն, հեթանոս Միթրա արեւի փոխարէն: 451 թուականի Քաղկեդոնի ժողովին, սոյն որոշումը ստացաւ պաշտօնական բնոյթ եւ այնուհետեւ աստիճանաբար մոռցուեցաւ Միթրան:

Քիչ ժամանակ ետք, Արեւելքի մէջ եւս՝ հինգերորդ դարուն, Դեկտեմբեր 25ը նախընտրուեցաւ եւ ընդունուեցաւ, որպէս Յիսուսի ծննդեան թուական:

Ուրիշ կարեւոր պատճառ մը եւս կայ Ս. Մննդեան թուականի փոփոխութեան համար: Պաղեստինի մէջ, տեղացիներու եւ ուխտաւորներու մասնակցութեամբ, Յունուար 6ի միջնադին կը տօնակատարէր Ս. Մնունդը Բեթ-

դեհէմի մէջ, ապա, նոյն օրը, հաւատացեալներու թափօրը կ'ուղղուէր դէպի Յորդանան գետ, ուր կը տօնակատարէր Յիսուսի Մկրտութիւնը:

Ձմեռուան եղանակներուն չափազանց դժուար էր Բեթղեհէմէն դէպի Յորդանան գետ այս տեղափոխութիւնը՝ նախնական փոփառական միջոցներով: Այս պարագան ալ մեծապէս նպաստեց որ արեւելեան բոլոր եկեղեցիները ընդունին Դեկտեմբեր 25ին կատարել Ս. Մննդեան տօնը եւ Յունուար 6ին՝ Մըկրտութիւնը:

Հայ եկեղեցին, որպէս հնագոյն եկեղեցի, պահած է հնագոյն թուակա-նը՝ Յունուար 6ը եւ Յիսուսի Մնունդն ու Մկրտութիւնը կը տօնակատարէ միասնաբար:

5 Յունուար 1986

ԽՕՍՈՒԱԾ՝
ՀՆՉԱԿԵԱՆ 20 ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ
72ԲԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԿՈՂՄԷ

*Հոգեչնորհ, Արժանապատիւ, Գերապատիւ Վերապատուելի,
Հոգեւոր Հայրեր, Սիրելի Հայրենակիցներ,*

*Հայ դիւցազներգակ բանաստեղծ Սիւմանթօ կը պատկերացնէ ազա-
տամարտիկներու մահը.*

Ու ձեր մարմիններով, ո՛վ Ահաւորներ, ո՛վ ճշմարիտներ, ո՛վ Գերագոյն Եղբայրներ,
Ձեր մարմինները օդին մէջ առկախ եւ ձեր մեծաբաց աչքերը հայրենի աստղերուն,
Օրերով եւ գիշերներով, երկու սիւներուն մէջտեղ քինայոյ՞ ճօճեցա՞ն եւ ճօճեց՞ան...
Եւ վերջին խօսքերը անտառի նման ուռճացան.
Կեցցեն ընթոսները եւ կեցցէ Պայաստան...:

*Մահը՝ մեռնողին վախճանն է. նահատակութիւնը՝ պսակ մը մահկանա-
ցուի շիրիմին կամ փոսին վրայ: Սակայն, մեռնողներու եւ նահատակներու ա-
նանձնական նպատակներուն հանդէպ ապրողներու հաւատքն ու յանձնառու-
թեան ոգին, զանոնք անմահութեան կը սահմանէ:*

*1915, Յունիս 15ին, Կոստանդնուպոլսոյ Սուլթան Պայագլիտի հրապա-
րակին վրայ խրոխտօրէն եւ քաջաբար թուրք դահիճներու երեսին կեցցէ Հա-
յաստան գոռալով եւ*

Ամէն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ' մեռնի,
Բայց երանի որ իւր ազգին
Ազատութեան կը զոհուի...

*երգելով մահը դիմագրաւող Հնչակեան քսան հերոսներու նահատակութիւնը,
անոնց համար վախճան մը չէր, այլ՝ փառապսակ մը անոնց անունին, փաստ,
որ 74 տարիներէ ի վեր անհուն սիրով եւ երկիւղածութեամբ կ'ողբկոչենք ա-
նոնց անթառամ յիշատակը:*

*Մեր դարաւոր թշնամին՝ թուրքը, ուզեց բնաջնջել մեր արմատները:
Ուզեց խափանել բոլոր այն երակները, որոնց մէջէն հայ արիւնը կը հոսէր՝
լոյս սփռելու համար Հայաստան կոչուող աշխարհին: Ուզեց ցամքեցնել այն
արիւնը, որ հազար անգամ հազար փոթորիկներու մէջէն դուրս ժայթքած էր
հերոսներու բազուկէն՝ ժայռերու վրայ քանդակելու համար փառքը հայրենի-
քին ու հայրենապաշտ գաղափարին՝ ստեղծագործ քաջութեան եւ հերոսներու
անմահութեան:*

*Քսան կախաղաններու վրայ իրենց հոգին աւանդած անձնագոհ եւ գա-
ղափարապաշտ հայորդիները իրենց երկրային կեանքին նպատակ ընտրած
էին պաշտպանել հայ ժողովուրդի ինքնութիւնն ու պատիւը եւ Հնչակեան Կու-
սակցութեան դրօշին ներքեւ իրականացնելու Ազատ, Անկախ եւ Ընկերվարա-*

կան Հայաստանի կերտումը, լաւապէս իւրացուցած ըլլալով բանաստեղծի հետեւեալ խօսքը.

Ես մինչ ի մահ կախադան՝
Մինչեւ անարգ մահու սիւն,
Պիտի գորշամ պիտի կրկնեմ,
Անդադար՝ Ազատութիւն:

Իրենց հայրենիքին ազատութեան ճանապարհին նահատակուած հերոսներու գործը իրենց մահով չդադրեցաւ: Հազարներ եկան սուրբ գործը շարունակելու եւ կու գան տակաւին:

Հարիւր տարի հայ ժողովուրդին ծառայութեան նուիրուած Հնչակեան մարտիկներ եւ գաղափարապաշտ սերունդներ, իրենց ազգային պարտականութեան գիտակցութենէն մղուած դիւցազնական եւ արի գործեր կատարեցին եւ արժանացած հայ ժողովուրդի սիրոյն եւ յարգանքին:

Այսօր եւս, հայ երիտասարդ եւ գաղափարապաշտ սերունդները, թրծը՝ լելով հայ ազգին երեք կուսակցութիւններու՝ Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հայրենապաշտ հնոցին մէջ, ոտքի են կրկին բարձրածայն յայտարարելու համար իրենց խօսքը՝ կեանքի եւ կեանքի պայքարին, վերականգնումի եւ հայութեան արդար դատին, ազգային պահանջ արտայայտելու ցեղային կոչումին, մինչեւ որ աշխարհ ու աշխահի մեծերը ընթացք տան արդարութեան ճայնին, արդա՛ր հատուցումին: Մինչեւ որ գաղթականութեան խաւարին յաջորդէ փրկութեան Արշալոյսը՝ միացեալ հայութեամբ ու միաւորուած հայրենիքի մէջ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան «Սողոմոն Թէհլիրեան» Կոմիտէութեան ընկերներուս անունով, խունկով եւ ոգեղինացած երկիւղածութեամբ կը խոնարհիմ Հնչակեան Քսան Հերոսներու անթառամ յիշատակին առջեւ, եւ կ'ողջունեմ Հնչակեան Կուսակցութեան հարիւրամեակը, մաղթելով նոր հարիւրամեակներ ի ծառայութիւն հայ ժողովուրդին ու Հայաստանին:

Քանզի մեր ուղիներն ու իտէալները նոյնն են եւ մեր նպատակն ու կամքը տկարութիւն չեն ճանչնար:

ԽՕՍՈՒԱԾ՝
ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ՋԱՐԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ
25ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ ԱՌԹԻԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԿՈՂՄԷ

Կը հրաւիրեմ ձեզ, մէկ վայրկեան յոտընկայս յարգել յիշատակը Երա-
նաշնորհ Ջարեհ Սքանչելի Կաթողիկոսին անթառամ յիշատակը:

Հոգեշնորհ Հայր Սուրբեր,
Յարգելի Հայրենակիցներ,

Արդէն 25 տարիներ անցած են այն տխուր օրէն, երբ Մեծի Տանն Կի-
լիկիոյ Կաթողիկոսութիւնը դժբախտութիւնը ունեցած կորսնցնելու մեր
պատմութեան ամէնէն արի, ազատամիտ, երկարամիտ, հաւատաւոր եւ բարի
կաթողիկոսներէն մէկը, որ արդարօրէն հայ ժողովուրդին կողմէ կոչուեցաւ
Ջարեհ Սքանչելի Կաթողիկոս:

Կաթողիկոսութեան Աթոռ բարձրացաւ մեր պատմութեան ամէնէն
ճգնաժամային եւ անկիւնադարձային ժամանակաշրջանի մը մէջ, երբ այլա-
զան ուժեր կը ծրագրէին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը վանա-
հայրութեան մը վերածել եւ Սփիւռքի տարածքին Հայաստանեայց Եկեղեցին
գործիք դարձնել իրենց քաղաքական հաշիւներուն:

Ջարեհ Վեհափառի եօթնամեայ Կաթողիկոսութեան նոր դարաշրջան
մը բացաւ դարձակէտային որոշադրել զօրութեամբ Կիլիկիոյ Կաթողիկոսու-
թեան դարուս պատմութեան մէջ:

Ինչ որ ըսաւ Ջարեհ Կաթողիկոս՝ եղաւ միայն բարիք եւ օրհնութիւն
Հայաստանեայց Եկեղեցւոյ, հայ ժողովուրդին եւ անոնց ընդմէջէն՝ Աստուծոյ
եւ Մարդկութեան:

Կաթողիկոսանալէ առաջ, Բերիոյ Թեմի Առաջնորդութեան 16 տարի-
ներու ընթացքին, Հալէպի Թեմը զարմանալի վերակենդանացում մը ունե-
ցաւ՝ տնտեսական, կրթական, եւ մշակութային մարզերու մէջ:

Սուրիոյ անկախութեան պայքարի օրերուն, Ջարեհ Առաջնորդի մէջ
երեւան եկաւ իմաստուն քաղաքակազէտը, երբ երկիրը արիւնալի բախումնե-
րու մէջ մտած էր հոգատար պետութեան դէմ: Եւ լաւ ըմբռնելով օրուան պա-
հանջքը՝ հայ ժողովուրդին կամքը միացուց ի նպաստ բնիկ Սուրիացիներու
ազատագրական պայքարներուն: Անոր այս ուղիղ ընթացքը մեծապէս գնա-
հատուեցաւ Սուրիոյ պետական իշխանութեանց կողմէ եւ որպէս գնահատան-
քի արտայայտութիւն պարգեւատրուեցաւ «Սուրիական Արժանեաց Առաջին
Կարգի Շքանշանով» Հանրապետութեան Նախագահ Շիւքրի Քուաթլիի կող-
մէ:

Մշակութային եւ հայեցի կրթութեան մարզերուն մէջ անգնահատելի
է Ջարեհ Առաջնորդի դերը: Արդարօրէն իր խիզախութեան, յանդգնութեան
եւ անդուլ ճիգերուն կը պարտինք Սուրիոյ Հայկական Դպրոցներու հայերէն

դասապահներու արտօնութիւնը եւ մանաւանդ Հալէպի Քարէն Եփփէ Ճեմարանի հիմնումը եւ անոր հողային տարածութեան սեփականութեան փոխանցումը հայ ժողովուրդին:

Որպէս Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Կեդրոն բաժնի տեսուչ եւ Բերիոյ Թեմի Կրօնա-բարոյական դաստիարակութեան խորհուրդի անդամ, յաճախ մտերիմ յարաբերութիւն ունեցած եմ Հալէպի Առաջնորդ Ջարեհ Եպիսկոպոսին հետ եւ մեծապէս տպաւորուած իր մեծ հոգիէն, հրմայքէն եւ անհուն բարութենէն:

Ամբողջ կեանքիս ընթացքին միշտ երախտապարտութեան զգացած եմ իրեն հանդէպ, քսանամեայ երիտասարդի մը մէջ տեսած ըլլալով կարգ մը արժանիքներ՝ Րազգայի Ազգային Վարժարանի տնօրէնի պաշտօնը վստահած ըլլալուն համար:

Իր ծնողքին, եղբայրներուն եւ քոյրերուն հետ իմ ունեցած անկեղծ բարեկամութիւնը առիթներ ստեղծեցին, որպէսզի ես կարենամ լաւապէս ճանչնալ Փայասլեան ընտանիքը եւ անոր արժանաւոր զաւակը՝ Ջարեհ Վեհափառը, որ օր մը, ինձի ալ անակնկալ ընելով առաջարկեց զիս քահանայ ձեռնադրել Ամերիկայի համար:

Երբեք պիտի չմոռնամ 1951ին Րազգայի Հայ գաղութին տուած եւ պաշտօնական այցելութիւնը՝ ի խնդիր այդ գաղութի հայկական կեանքին բարգաւաճման եւ միասնակամութեան: Յատկապէս իր տուած հայկական յորդորները Րազգայի Թաղականութեան Ատենապետ Պրն. Յակոբ Սարգիսեանի բնակարանին մէջ՝ ճաշի սեղանին շուրջ:

Երջանկայիչատակ Ջարեհ Սքանչելի Կաթողիկոսին անունը ոսկիէ տառերով արձանադրուած պիտի մնայ հայոց պատմութեան եւ յիշատակը անթառամ՝ ազատատենչ Հայ ժողովուրդի զաւակներուն հոգիներուն մէջ:

- Առաքելատիպ մեծ հոգեւորականէն մեզի պիտի մնան՝
- Իր անձին անմար ճառագոյթը մեր հոգիներուն մէջ:
 - Իր կեանքին լուսատեսիլ դրուագները մեր յիշողութեան մէջ:
 - Իր գործին անջնջելի վկայութիւնները մեր պատմութեան մէջ:

17 Ապրիլ 1988

ԽՕՍՈՒԱԾ՝
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԿՈՂՄԷ

*Գերապատիւ Հայր Սուրբ,
Յարգելի Հայրենակիցներ,*

**Այսօր Տօն է Ս. ԾՆՆԴԵԱՆ, ԱԼԵՏԻՍ,
ՏԵԱՂՈՆ ՄԵՐՈՅ ԵՎ ՅԱՅՄՈՒՄԵԱՆ, ԱԼԵՏԻՍ:**

«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ Անոր՝ չկորսուի, այլ՝ ընդունի յաւիտեանակամ կեանքը»:

Յովհաննու Աւետարանի Գ.Գլուխ 16րդ համար

1988 տարիներ առաջ Բեթղեհէմի անշուք մսուրի մը մէջ ծնած Մանուկը՝ «Նոր Արքան»՝ որ Աստուծոյ որդին էր, մարդկութեան համար մարմնացաւ եւ աշխարհ եկաւ, հեթանոսական բարքերու՝ զեղխութեան, մոլորութեան եւ անբարոյութեան մէջ՝ գազանային ու կենդանական բնազդներով տուայտող մարդկութիւնը փրկելու եւ զանոնք Աստուածային լոյսով եւ սիրով վերափոխելով դարձնելու աստուածորդիներ:

Յիսուս աշխարհ եկաւ մարդոց հոգիներուն մէջէն վանելու սատանայական ոռոգայթները եւ հիմնելու սիրոյ թագաւորութիւնը, որուն վրայ հիմնուեցաւ քրիստոնեայ եկեղեցին եւ անկէ արձակուած լուսաւորութիւնը իր այլազան ճաճանչումներով մարդկային սիրտը ազնուացուց եւ մարդկայնացուց:

Օրհներգ Սիրոյ վերնագրով Պօղոս Առաքեալ Կարնթացուց ուղղուած իր առաջին թուղթին ԺԳ. գլխուն մէջ կ'ըսէ.

«Եթէ խօսիմ մարդոց եւ հրեշտակներուն լեզուները, բայց սէր չունենամ, կը նմանիմ պղինձի մը, որ կը հնչէ, կամ ծնծղաներու, որ կը զօղանջեն:

«Եւ եթէ մարգարէութիւն ընելու շնորհ ունենամ ու հասկնամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտութիւնը եւ եթէ ունենամ ամբողջ հաւատքը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու, բայց սէր չունենամ՝ ոչինչ եմ:

«Սէրը համբերող է, քաղցր է, սէրը չի նախանձիր, չի գոռոզանան, չի հպարտանար, չի յանդգներ, իրենը չի փնտռեր, չի գրգռուիր, չար բան չի խորհիր, անիրաւութեան վրայ չուրախանար, այլ՝ կ'ուրախանայ ճշմարտութեան վրայ, ամէն բանի կը դիմանայ, ամէն բանի կը հաւատայ, անմիջապէս կը յուսայ, ամէն բանի կը համբերէ: Սէրը երբեք չի սպառիր»:

Աստուածայայտնութեան հրաշքով հիմնուած սիրոյ թագաւորութիւնը, այս օրերուն, կը մղէ մեզ խորհրդածելու մեր կեանքին ուղղութեան շուրջ, փնտռելու եւ գտնելու այն պատճառները, որոնք սէրը կը վանեն մեր սրտե-

րէն, որոնք մեզ կը հեռացնեն քրիստոնէական ազնիւ հաւատքէն եւ ազգային տոհմիկ աւանդութիւններէն եւ ժառանգութիւններէն:

Աստուածահաճոյ մեր պարտականութիւնները կատարենք սիրով: Այն խոր հաւատքով, որ կը սատարենք մեր ազգային ինքնուրոյնութեան պահպանման: Որպէսզի շարունակենք մեր երթը պատմութեան քառուղիներուն վրայէն՝ որպէս թանկարժէք մշակոյթի տէր ազգ մը, որ արդար հպարտանքով կը կրէ 301 թուականին պետականօրէն քրիստոնէութիւնը ընդունած առաջին ազգը ըլլալու պատիւը:

Տօնական այս սրտալոյզ օրերուն, կոչ կ'ուղղենք մեր ազնիւ ժողովուրդին, որպէս մէկ ազգի եւ եկեղեցիի զաւակներ:

Մեր կարելիութեան սահմաններուն մէջ, օգնութեան հասնիլ Լիբանանի Հայ Դպրոցներուն եւ ուսումնատենջ հայ մատղաշ սերունդին, որպէսզի չըզրկուին ուսումէ եւ հայեցի դաստիարակութենէ՝ աչքի առաջ ունենալով հոն տիրող տնտեսական անտանելի պայմանները:

Նոյնպէս, ազգային շունչով եւ տալու առաքինութեամբ տոգորուած, օր առաջ շինենք մեր հոգեւոր տունը: Սրտաբուխ նուիրատուութիւններով ըստեղծենք նիւթական բաւարար կարելիութիւններ, 1988ի վերջաւորութեան բարձրացած տեսնելու Ս. Աստուածածին եկեղեցւոյ հայադրոշմ դմբէթը՝ ամբողջացնելու համար Թորոնթոյի հայապահպանման բերդի շինութիւնը՝ Հայ Կեդրոնի Համալիրը:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ Կանանց Յանձնախումբին անունով կը շնորհաւորեմ ձեզ Ամանորի եւ Ս. Մննդեան տօներուն առիթով եւ կը մաղթեմ քաջառողջութիւն եւ երազներու իրականացում:

Քրիստոս Մնաւ եւ Յայտնեցաւ,

Օրհնեալ է Յարութիւն Քրիստոսի

6 Յունուար 1988

ԽՕՍՈՒԱԾ՝
ՀՆՉԱԿԵԱՆ 20 ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ
ՁԵՌՆԱՐԿԻՆ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԿՈՂՄԷ

*Հոգեւոր Հայրեր,
Սիրելի Հայրենակիցներ,*

Ազատութի՛ւն, գոռացի,
Թող որոտայ իմ գլխին
ճայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դաւ դնէ թշնամին,

Ես միմչ ի մահ կախաղան՝
Միմչեւ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ պիտի կրկնեմ,
Անդադար՝ Ազատութի՛ւն:

Մահը՝ մեռնողին վախճանն է. նահատակութիւնը՝ պսակ մը մահկանացուի շիրիմին կամ փոսին վրայ: Սակայն, մեռնողներու եւ նահատակներու անանձնական նպատակներուն հանդէպ ապրողներու հաւատքն ու յանձնառութեան ոգին, զանոնք անմահութեան կը սահմանէ:

1915, Յունիս 15ին, Կոստանդնու Պոլսոյ Սուլթան Պայազիտի հրապարակին վրայ խրոխտօրէն եւ քաջաբար թուրք դահիճներու երեսին կեցցէ Հայաստան եւ Ազատութեան գոռալով մահը դիմադրաւող Հնչակեան քսան հերոսներու նահատակութիւնը անոնց համար վախճան մը չէր, այլ՝ փառապսակ մը անոնց անունին, փաստ, որ 74 տարիներէ ի վեր անհուն սիրով եւ երկիրդածութեամբ կ'ոգեկոչենք անոնց անթաւամ յիշատակը:

Հնչակեան անձնագոհ քսան հերոսներու նպատակը սուրբ էր, որ կը ձգտէր հայ ժողովուրդի Ֆիզիքական գոյութեան պահպանման եւ ազգային ազատութեան: Եւ, վստահօրէն եթէ անոնք յաջողէին գործադրել իրենց ծրագիրները հայ ժողովուրդը հաւանաբար չենթարկուէր Մեծ Եղեռնի սարսափներուն եւ տեսնէր ամբողջական հայաստանի Ազատութեան Արեւը:

Իրենց հայրենիքին ազատութեան ճանապարհին նահատակուած հերոսներու գործը իրենց մահով չդադրեցաւ: Հազարներ եկան սուրբ գործը շարունակելու եւ կու գան տակաւին:

Հազարնե՛ր, հազարնե՛ր, հայ Փետայիներ՝ ծնած հայ ժողովուրդի նահապետ Հայկի ազատասէր ոգիէն, տուին իրենց անձը, իրենց կեանքը, իրենց հոգին՝ բոլոր ճակատներու վրայ, բոլոր մարզերու մէջ, դաւադիր բանտերու մէջ, կախաղաններու ու մարտական դիրքերու վրայ: Իրենց երակներու ազնւազոյն արիւնով եւ իրենց ճակատներուն արդարագոյն քրտիքով ոռոգեցին հայրենի հողը՝ ազատութեան հունձքը ծնեցնելու համար անոնց ծոցէն: Անոնք իրենց գործով եւ կեանքով մեծ գաղափարի հիմնադիրները եղան:

Հայ մեծ բանաստեղծ Աւետիս Իսահակեան հայ ժողովուրդի տեսած նախճիրներուն ակնարկելով ըսած է.

«Դո՛ւ, Հայ Ժողովուրդ, մե՛ծ ամուր Ժողովուրդ, ինչե՛ր տեսար... Աշխարհք ամէն վրադ թափուեցին, մարդ չմնաց, որ չխոցէր քեզ, ատամ չմնաց, որ չկրծէր քեզ եւ դարչապատ, որ չկոխէր քեզ...: Բայց դու մնացիր Մեծ ու անսասան: Աշխարհ լինէր քո տեղը՝ կը փլուէր, Ովկիան լինէր՝ կը ցամաքէր, երկիրք լինէր՝ կը մարէր իր արեւներով եւ աստղերով»:

Մեր թշնամիները ուզեցին սպաննել Հայաստանը, ուզեցին խողխողել Ժողովուրդ մը, ուզեցին թաղել դամբանի մը մէջ՝ որուն քարը երբեք չվերցուէր: Եւ, ահա, յաւիտենական արդարութիւնը կեանքի ջահը ի ձեռին, կը ներկայանայ դամբարանին դրան առջեւ եւ կ'աղաղակէ, ինչպէս երբեմն Յիսուս. «Ղազարո՛ս՝ դուրս ելի՛ր»: Եւ քարը կը գլորի, Հայաստան ոտքի կը կանգնի, կը մերկանայ արիւնոտ պատանքէն: Հայաստան կ'ապրի, Հայաստան յարութիւն առած է, շնորհիւ Սարգարապատի, Ղարաքիլիսայի եւ Բաշապարանը օրհնասական ճակատամարտներու յաղթութեան եւ վեց դարերու ստրկութեանէն ետք Հայ պետականութեան հաստատման 28 Մայիս 1918ին:

1965ին սկսած Հայ Ժողովուրդի ինքնագիտակցութեան եւ պահանջատիրութեան շարժումը:

1988ը Փետրուարէն յանգեցաւ համաժողովրդական ընդվզումներու եւ ազգային քաղաքական վերագարթօնքի սրտապնդիչ արտայայտութիւններու մանաւանդ Հայաստանի անբաժանելի մասը եղող Արցախը Մայր Հայրենիքին վերամիացնելու ճիգերուն, որ բախեցաւ ազերի թուրքերու ընդդիմութեան, որոնք չվարանեցան Սովետական ցեղասպանութիւնը սարքելու եւ իրենց վայրագ բնագոյնները կրկին ցուցաբերելու «Եղբայրական Դաշինքով» ապրող երկրի մը մէջ:

1988 Դեկտեմբեր 7ի ահաւոր երկրաշարժը նոր հարուած մը տուաւ Հայ ազատագրական շարժումին:

Սակայն, Հայ Ժողովուրդը որոշած է չյուսահատիլ, չերկնչիլ եւ ապրիլ:

Հայ Ժողովուրդը ամէնուրեք ոտք է կրկին, եւ, նոյնիսկ ապագայինացած հայեր վերադարձած են իրենց արմատներուն, տէր կանգնելու համար Հայ Դատին եւ Հայ Ժողովուրդի արդար իրաւունքներուն, եւ եօթը հազար տարուան հայրենիքին:

Ուրախալի եւ խրախուսիչ են Խորհրդային Հայաստանի Կառավարութեան առած որոշումները Ապրիլ 24ը պետականօրէն նշելու, ինչպէս նաեւ 1918թ. Մայիս 28ը ճանչնալու հայկական պետականութեան վերականգնման օր եւ հայկական եռագոյն դրօշը (կարմիր, կապոյտ, նարնջագոյն), համարելու հայկական ազգային խորհրդանիշը:

Այս որոշումները կու գան ամրապնդելու Հայրենիք-Մփիւռք գործակցութիւնը եւ կը հարթեն Հայ Ժողովուրդի բոլոր հարուածներուն Միասնականութեան ճանապարհը:

Հայ Ժողովուրդը բարեկամ չունի: Մեծապետական պետութիւնները մղուած իրենց շահերէն միշտ դարպասած են եւ կը դարպասեն մեր թշնամիներուն: Մենք մեր ուժերուն պէտք է վստահինք մեր իրաւունքներուն հասնելու համար:

Հնչակեան ծանօթ ղեկավար Ստեփան Սապահ-Գիւլեան կ'ըսէ.

«Ասացինք առաջին իսկ օրից, կրկնում ենք եւ այսօր: Մենք քաղաքա-
կան Մուրացկանութիւնը մեր կողմ պիտի թողնենք, նախ մեր ազգային ուժե-
րըն է որ պիտի կռենք, կոփենք, կազմակերպենք եւ առաջ քաշենք:

«Յոյսերնիս ամէն բանէ առաջ, բացառապէս մեր վրայ պիտի դնենք:
Այդ ոգիով, այդ ուղղութեամբ է, որ մօտենանք մեր հրկիզող ցաւերէն, այդ
մտքով է, որ պիտի ջանանք դարմանել մեր վէրքերը եւ մեզ գօտեպնդել՝ քա-
լելու»:

Հայ ժողովուրդի ազգային հիմնանպատակի ճամբուն վրայ կը գտնու-
ւին քանի մը կարեւոր հանգրուաններ: Այդ հանգրուաններէն մէկն է Հայաս-
տանը ըստ ամենայնի զօրացնելու անյետաձգելի գործը՝ որ այսօր պէտք է նը-
կատենք մեր առաջնահերթ պարտականութիւնը ու պարտաւորութիւնը: Գի-
տական ճարտարարուեստական, բարձր արհեստագիտութեան, տնտեսական,
բժշկագիտական եւ այլ մարզերու մէջ Հայաստանի մակարդակի բարձրացու-
մըն ու արդիականացումը՝ հիմնական դեր պիտի ունենան անոր վարկը Խոր-
հրդային Միութեան մէջ բարձրացնելու գծով:

Ուստի հանգրուանային այս նպատակակէտերը նուաճելու համար ան-
նըման Ակնունքի «Դէպի Երկիր» խորիմաստ նշանաբանը մեր ճիգերուն ա-
ռանցքը դարձնելով, մենք ի գործ պէտք է դնենք մեր բոլոր կարելիութիւննե-
րը:

Մեր աչքին լոյսին պէս պէտք է գուրգուանք մեր հայրենիքին եւ հայ-
րենաբնակ ժողովուրդին համրանքին վրայ: Որովհետեւ, առանց զօրաւոր Հա-
յաստանի հայկական դատը չլուծուիր:

Մէկ հայրենիք, մէկ Դրօշ, մէկ Դատ, մէկ Լեզու, մէկ Գիր, մէկ Եկեղե-
ցի:

Ահա մեր փրկութեան կռուանները, որոնք ոչ կռուախնձոր կրնան ըլ-
լալ, ո՛չ ալ սակարկութեան առարկայ: Կը մնայ, որ քայլ առ քայլ մօտենանք
միազգութեան իտէալին ու ազգովին լծուինք մեր սեփական հողին վրայ հա-
մատեղ եւ զերիշխան ապրելու մեր դարաւոր երազի իրականացման, որուն
համար իրենց կեանքը զոհեցին քսան կախաղանի մարտիկներն ու աննման
հայդուկները:

Այս առթիւ կ'արժէ յիշել անմահ Եղիշէ Չարենցի պատգամը.

«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ
է»:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան «Սողոմոն Թէհլիրեան» Կոմի-
տէութեան ընկերներուս անունով, խունկով եւ ոգեղինացած երկիւղածու-
թեամբ կը խոնարհիմ Հնչակեան Քսան Հերոսներու անթառամ յիշատակին
առջեւ:

Որովհետեւ մեր ուղիներն ու իտէալները նոյնն են եւ մեր կամքը տկա-
րութիւն չի ճանչնար: Փառք եւ պատիւ հայ հերոսներուն:

Կեցցէ՛ Հայ ժողովուրդը:

17 Յունիս 1989
Թորոնթօ

**ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝
«ՆՈՒԻՐՈՒՄ» ՀԱՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՀԱՆՂԷՍԻՆ
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԿՈՂՄԷ**

**Գերապատիւ Հայր Սուրբ,
Յարգելի ներկաներ,**

Նախ կ'ուզեմ իմ սրտագին շնորհակալութիւններս յայտնել Թորոնթոյի Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան «Գլաձոր» Մասնաճիւղի վարչութեան եւ գրադարանի յանձնախումբին, հայ գիրքի եւ գրականութեան նուիրուած այս ձեռնարկի կազմակերպումին համար:

Յատուկ շնորհակալութիւն նաեւ օրուան հանդիսավար ընկեր Սագօ Ղազարեանին, գիրքը ներկայացնող ընկերուհի Անահիտ Պապայեանին եւ ծանօթ երաժշտագէտ, յօրինող եւ երգչուհի Անահիտ Կուտսուզեանին, որ իր երգով («Հրաժեշտ Կու տաս» խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի եւ երաժշտ. Անահիտ Կուտսուզեանի) ճոխացուց միջնորդար:

Այս առիթով, կ'ուզեմ անդրադառնալ Սփիւռքի, եւ նաեւ Հայաստանի մէջ, հայ գիրքի հրատարակութեան եւ տարածման դժուարութիւններուն:

Սովետական շրջանին, Հայաստանի մէջ հայ գրական գիրքը կը տըպուէր տասնեակ հազարներով եւ կը սպառէր, հեղինակին ապահովելով ապրուստով եւ արժէքաւորումով:

Այսօր Հայաստանի մէջ, պետական հովանաւորութիւն գոյութիւն չունի եւ գիրքերը կը հրատարակուին հեղինակին նիւթական միջոցներով կամ մեկենասներու օգնութեամբ, առաւելագոյն հազար օրինակով:

Իսկ Սփիւռքի մէջ, պատկերը նոյնն է: Հայ հեղինակը, իր սեփական միջոցներով եւ մեկենասներու օգնութեամբ գիրք կը հրատարակէ առաւելագոյնը 1000 օրինակով, սակայն, գիրքը տարածելու միջոցներու չգոյութեան հետեւանքով, այդ գիրքերուն մեծամասնութիւնը կը մնայ դարակներու մէջ:

Բարեբախտաբար, մենք հոս, Գանատայի մէջ, ունինք Համազգայինի գրատարած յանձնախումբերը, որոնք ամէն ճիգ ի գործ կը դնեն, սպառելու համար հրատարակուող հայերէն գիրքերը:

Սակայն, դժբախտաբար, Սփիւռքի մէջ, ընդհանրապէս, եւ, Գանատայի մէջ ալ հայերէն գիրքով եւ գրականութիւնով հետաքրքրուողներուն թիւը կը պակսի տարուէ տարի, հայ նոր սերունդի հայերէն լեզուի անգիտութեան հետեւանքով, որ մեզ կը մղէ մտանտանջուելու հայ մամուլով եւ հայ գրականութիւնով հետաքրքրուողներու նահանջին եւ հայերէնով կարթացողներու տարուէ տարի նուազումին:

Իմ կարծիքով, հայ գրականութիւնը եւ մամուլը պահելու եւ զարգացնելու գլխաւոր ազդակները հայ դպրոցը եւ հայ մամուլն են:

Հայ դպրոցներէն (երկրորդական) շրջանաւարտ հայ երիտասարդութիւնը միայն հայերէն կարդալու եւ գրելու կարողութիւնը կրնան ունենալ: Իսկ հայերէն լեզուի որոշ իմացականութիւն ունեցող ազգասէր երիտասարդ-

ներ, որոնք հայկական երկրորդական վարժարան յաճախելու առիթ չեն ունեցած, կրնան հայ մամուլին հետեւելով իրենց հայերէնը զօրացնել եւ ինքնազարգացումով նոյնիսկ գրող դառնալ: Նման օրինակներ շատ են:

Մտահոգուելով, այս ասիերուն վրայ, հայ գրականութեան, հայ մամուլի, հայ մշակոյթի յարատեւման եւ զարգացման, հայ դպրոցներու կողքին, մեծ դեր կրնան վերցնել հայ մշակութային միութիւնները կազմակերպելով մշակութային ձեռնարկներ, ինչպէս արտասանական մրցումներ, երգչախումբ, թատրոն, պարախումբ, հայերէնի դասընթացքներ, եւայլն:

Ահա, այսպիսի առաքելութեան նուիրուած է համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւնը:

«Նուիրում» գիրքիս հրատարակութեան առթիւ իմ ստացած նամակներէն միայն երկուքին պիտի անդրադառնամ, որոնք կու գան ձայնակցելու իմ մտահոգութիւններուս:

Մանօթ գրագէտ Ժիրար Աթթարեան կը գրէ.-

«... Կը շնորհաւորեմ ու խնդակցութիւնս կը յայտնեմ սոյն հատորին լոյս ընծայման առիթով: Ներկայի Սփիւռքեան մեր պայմաններուն մէջ հայերէն գիրքի մը լոյս աշխարհ գալը հրաշքի համազօր իրագործում է ու մանաւանդ պատկառանք ազդող, մեր հրաշագեղ արեւմտահայերէնի գոյատեւումը ապահովելու կոչուած մէկ նոր նուաճում»:

Իսկ երկրորդ նամակը աւելի ընդարձակ՝ գրած է նշանաւոր երաժշտագէտ, երգահան, մտաւորական-գրագէտ Գրիգոր Փիտէճեան (ծանօթ «Տէր Զօր» երգի հեղինակը):

«... Յիրաւի ուրախալի երեւոյթ է: Որովհետեւ, բազմագոյն ու բազմալեզու տիեզերքին վրայ տարածուած Սփիւռքացած հայուն համար իր մայրենի լեզուն, գիրն ու գրականութիւնը պահելու, ծաղկեցնելու եւ զարգացնելու մաքառումին մէջ իւրաքանչիւր որակաւոր իմաստալից ու օգտակար հրատարակութիւն յաղթանակ մըն է: Զեր «Նուիրում» գիրքը այդպիսին է:

«Մեր սերունդը, Հայոց Մեծ Եղեռնը յաջորդող նոր սերունդը, ապրեցանք գրկանքով, աղքատութիւնով, մանկութիւն չունենալով, սակայն ապրեցանք հայաշունչ մթնոլորտի մէջ, Հայաստան ծնած եւ մեծցած հայ մեծերու (կուսակցական գործիչ, գրագէտ, բանաստեղծ, ուսուցիչ) եւ մշակոյթի այլազան ասպարէզներու ծառայող հայ արուեստագէտներու եւ յեղափոխականներու շունչին տակ, որոնք մեզի սորվեցուցին մեր ազգն ու հայրենիքը, հայ եկեղեցին եւ հայ գրականութիւնը, որոնց հետեւելով դպրոցական նստարաններուն վրայ սկսանք բանաստեղծութիւն եւ պատմութիւն գրել:

«Ապրուստով աղքատ էինք: Մօրս կողմէ կարուած պայուսակով եւ տոպրակով դպրոց կ'երթայինք, գրպանս շատ շատ չամիչ կ'ըլլար, տուն կը վերադառնայինք, ուտելու համար ի՛նչ...»

«Ինչպէս հոգար 5 զաւակներու տէր հայրս, իր տան ապրուստը, երբ արտեր չունէր, Սասնոյ Ապաղանք գիւղէն հրաշքով Հալէպ ապաստանած, որ տասնեակ մը պարզ արհեստներ փորձելով եւ չյաջողելով, տան ապրուստին մեծ մասը մեր ուսերուն վրայ ձգած էր:

«Այսպէս որ, ինչպէս կ'ըսէ Աղբալեան, գէնքը չձգեց որ գրագէտ դառնամ, գրականութիւնը չձգեց, որ զինուոր դառնամ»:

«Նոյնը իմ պարագային, ապրուստը, որուն հացը շահիլը չձգեց, որ ուսուցիչ մնամ, լիաժամ գրագէտ դառնամ, իսկ գրականութեան սէրս եւ մամուլը չձգեցին, որ արհեստի ճամբով եւ զանազան ճարպիկութիւններով հարըստանամ»:

«Մակայն, հայ նշանաւոր գրագէտներու անմիջական շունչին եւ հոգածութեան տակ կազմուելով, կրցայ կաթիլ մը մեղր դնել հայ գրականութեան փեթակին: Այդ գրագէտները, Աստուած հոգիները լուսաւոր պահէ՝ Անդրանիկ Մառուկեան, Մինաս Թէօլէօլեան, Արմէն Անուշ, Եղուարդ Պոյաճեան, Յակոբ Օշական, Շաւարշ Միսաքեան, Կարօ Փոլատեան, Կարօ Գէորգեան, Կարօ Սասունի, Կարապետ Իւլիպէյեան, Եղուարդ Տասնապետեան, Նափոլէօն Հազրոյեան, Օննիկ Սարգիսեան, Մ. Իշխան, եւայլն»:

Երաժշտագէտ Փիրէճեան կը գրէ.-

«Սրտի անհուն գոհունակութեամբ կարդացի եւ մեծ հաճոյքով երգեցի ձեր «Նուիրում» հատորին նիւթերու հարուստ բովանդակութեամբ բանաստեղծութիւններ ու երգերը, որպէս ձեր զգայուն եւ տաղանդաշատ բանաստեղծի հոգւոյ ճառագայթումներու»:

«Որպէս երաժիշտ ըսեմ, որ չեմ հանդիպած հայ բանաստեղծի մը, որուն գործերը այս համեմատութեամբ եղանակաւորուած եւ երգի վերածուած ըլլան: Մեծապէս բախտաւոր եւ շնորհաւորելի է»:

«Այսու հաճեցէք ընդունիլ կրկին անգամ շնորհակալութեանս հետ սըրտագին շնորհաւորանքներս հայ գրականութեան անդաստանը ծաղկեցնող այս բանաստեղծութեանց վարդափունջին համար»:

«Սիրելի գրասէրներ, մեր բոլոր միջոցներով եւ կարողութիւններով նեցուկ կենանք հայ գրողներուն եւ գրադարաններուն, որպէսզի հայ գիրքը եւ գրականութիւնը միշտ առոյգ մնան եւ հայ մամուլով եւ գրականութիւնով հոգեկան սնունդ ստացողներուն թիւը տարուէ տարի աւելնայ: Որպէսզի հայ հայրերը եւ մայրերը ի տես հայերէն գիրքով չհետաքրքրուող իրենց զաւակներուն նայելով, ցաւ ի սիրտ չմտածեն իրենց տան մէջ տասնեակ տարիներու ընթացքին կազմուած գրադարանի գիրքերուն ճակատագիրը անորոշ ըլլալով, չմտածեն զանոնք հանրային գրադարաններու նուիրելու մասին»:

Պօսքս պիտի փակեմ, մեր ամուսնութեան 50-ամեակին առիթով կնոջս նուիրուած սրտի խօսքիս ընթերցումով:

**ԱՐՏԱՄԱՆՈՒԱԾ՝
ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ Ա.
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԿՈՂՄԷ**

Սիրելի Հայ Գրողներ եւ Հայրենակիցներ,

Մէկ ազգ, մէկ հայրենիք, մէկ եկեղեցի, մէկ լեզու եւ մէկ մշակոյթ.

Վերանշեալ լողունքներ եւ գաղափարներ որդեգրած Հայաստանի Գրողներու Միութիւնը, Մշակոյթի Նախարարութեան կողքին գործելով, գնահատելի, անկիւնադարձային եւ պատմական գաղափարը ունեցած է Հայաստան եւ արտասահման ապրող Հայ գրողները հրաւիրել, կազմակերպելով Հայ Գրողներու Համահայկական Առաջին Խորհրդաժողով, որուն աշխատանքներու մասնակցելու պատիւը ունիմ, Գանատայի Հայ գրողներու պատուիրակութեան կազմին հետ:

Հինգ օրերու ընթացքին առիթը պիտի ունենանք ծանօթանալու Հայ գրողներու անձամբ եւ վայելելու գեղարուեստական խնամեալ յայտագիր՝ դասախօսութիւններով, այցելութիւններով եւ մշակութային հանդիսութիւններով, ապրելով հայաշունչ եւ ազգակերտ մթնոլորտներու մէջ:

Գանատայի Հայ ժողովուրդին եւ Հայ գրողներու անունով կ'ողջունեմ Հայաստանի Հայ Գրողներու Միութեան վարչութիւնը, նման գնահատելի կազմակերպութեամբ խորհրդաժողով մը կազմակերպելով, ընթացք կու տայ Հայ գրողներու դժուարութիւնները հարթելու, եւ խորհրդաժողովին եղած առաջարկներուն եւ թելադրութիւններուն քննութեամբ, յստակ եզրակացութիւններու յանգելով, օգտակար դառնալով Հայ գրականութեան զարգացման եւ տարածման:

Մենք կը հաւատանք, որ Հայ գրողը կը ներկայացնէ Հայ ժողովուրդի բաբախող սիրտը եւ այդ սիրտը իր առողջութեամբ գործելով ազատ եւ անկախ հայրենիքի պայմաններուն ներքեւ, կենսական առաքելութիւնը ունի, իր բոլոր կարողութիւններով եւ իր ձայնի սաստկութեամբ, թիկունք կանգնելու Հայ պետականութեան հզօրացման եւ Հայ ժողովուրդի կեանքին բարգաւաճման:

Նորանոր յաջողութիւններ Գրողներու Միութեան եւ ձեր հայրենասիրական քայլերուն:

**2002
Երեւան**

**ԶԱՐԵՎ Ս. ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆԻ
ՎԱԽՃԱՆՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԹԻԻ
ԽՕՍՈՒԱԾ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ ԿՈՂՄԷ**

Հոգեչնորհ Հայր Սուրբ,

Յարգելի սգակիր հաւատացեալներ,

Պօղոս Առաքեալ, Թեսաղոնիկեցիներուն գրուած առաջին նամակին մէջ կը գրէ. Դ. գլուխ 13 համար. «Եղբայրներ, կ'ուզենք որ մեռածներուն մասին ճշմարտութիւնը գիտնանք, որպէսզի չտրտմիք ուրիշներուն պէս, որոնք որեւէ յոյս չունին: Որովհետեւ, թէ կը հաւատանք, թէ Յիսուս մեռաւ եւ յարութիւն առաւ, նոյնպէս ալ կը հաւատանք, թէ Աստուած Յիսուսի ձեռքով եւ անոր հետ կեանքի պիտի բերէ անոնք, որ անոր հաւատացին եւ մեռան»:

Մեսրոպ եւ Սահակ սրբազաններու վախճանումէն ետք, Ուրբաթ, 30 Ապրիլ 2004 թուականին, երկրային կեանքէն ընդմիշտ հրաժեշտ առած Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան երէց միաբաններէն, Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովի ատենապետ եւ Քրիստոնէական Դաստիարակութեան բաժնի վարիչ-տնօրէն, երջանկայիշատակ Զարեհ Ս. Արք. Ազնաւորեանի քառասունքին առթիւ կատարուած հոգեհանգստեան արարողութիւնը եւ անոր յիշատակին Պօղոս Առաքեալի պատգամը՝ «Եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ եւ յարութիւն առաւ նոյնպէս ալ կը հաւատանք, թէ Աստուած Յիսուսի ձեռքով եւ անոր հետ կեանքի պիտի բերէ անոնք, որ անոր հաւատացին եւ մեռան»:

Զարեհ Սրբազանի պարագային, ան ո՛չ միայն Յիսուսի յարութեան կը հաւատար, այլեւ իր հաւատքով եւ իր կեանքով օրինակ դարձաւ հաւատացեալներուն հետեւելով Պօղոս Առաքեալին Տիմիթէոսի գրած առաջին նամակին, ուր կ'ըսուէր. «Հաւատացեալներուն օրինակ եղիր խօսքովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւատքովդ եւ մաքուր կենցաղովդ» (Ա. Մատթէոս Դ. գլուխ 12 համար):

Զարեհ Սրբազան, իր հոգեւորականի 38 տարիներու ընթացքին, որպէս հմուտ Աստուածաբան, ծիսագէտ, կանոնագէտ, երաժիշտ, յօրինող, Ս. Գրքի թարգմանիչ, մեկնաբան, բանիմաց քարոզիչ, ճարտար հռետոր ու ամբասիր հոգեւորական, օրինակ դարձաւ միաբանակից եկեղեցականներուն եւ յատկապէս հաւատացեալ ժողովուրդին, որպէս արեղայ, վարդապետ, եպիսկոպոս, արքեպիսկոս, որպէս Կիպրոսի թեմին Առաջնորդ, եւ իր վարած բազմաթիւ պաշտօններու պաշտօնավարութեան ընթացքին:

Զարեհ Սրբազան, որպէս յարութեան հաւատացող հոգեւորական, վըստահօրէն չէ մեռած, ան, այլ կը ննջէ, եւ կը հաւատանք, թէ Աստուած Յիսուսի ձեռքով եւ անոր հետ, կեանքի պիտի բերէ զայն:

Երջանկայիշատակ Սրբազանին կատարած գործերը եւ վարած պաշտօնները, Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան ժամանակակից պատմութեան ընթացքին յատկանշական անկիւնադարձ կը համարուի Սրբազան հօր գլխաւորած Կաթողիկոսականի Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքին ստեղծման, որուն աշխատանքները պաշտօնապէս սկսած են 1978ին,

վարիչ-տնօրէն ունենալով **Զարեհ Ս. Արք. Ազնաւորեանը**, արդարեւ, շնորհիւ **Սրբազան Հօր հետեւողական ջանքերուն, Ս. Գրիգորը**, Հայ եկեղեցւոյ հաւատալիքներուն ու մեր եկեղեցւոյ հայրերը ժողովուրդին աւելի մատչելի դարձնելու նախանձախնդրութենէն մղուած **Կաթողիկոսարանէն** ներս ծաւալած է հըսկայական հրատարակչական աշխատանք: Կանոնաւոր յաճախականութեամբ կազմակերպուած ցուցահանդէսներու, լսարանային, **Ս. Գրքի սերտողութեան** եւ դասախօսական ելոյթներու շնորհիւ, ինչպէս նաեւ աշխահաբար լեզուով կատարուած եկեղեցական արարողութիւններու միջոցաւ, այսօր մեր եկեղեցին դարձած է աւելի մատչելի ու սրտմօտիկ բոլորիս համար: Հայ եկեղեցականութեան մէջ **Զարեհ Սրբազան** նաեւ ամենահմուտ եւ բանիմաց երաժշտագէտներէն է: Հայ եկեղեցական կալուածէն ներս, ան հրատարակած է բազմաթիւ մշակումներ եւ յօրինումներ:

Իր հոգեւորական ու մտաւորական հմտութիւնը ան ստացած էր **Անթիլիասի Դպրեվանքին** մէջ, ապա, **Եւրոպայի** մէջ, զայն լիովին փոխանցեց մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին: Թէեւ իր ծրագրած գործերը կիսատ մնացին, որոնց ամբողջացումը իր մտահոգութեան գլխաւոր առարկան էր:

Այո, իր կեանքին տեւողութիւնը **Աստուածային կարգադրութեամբ** սահմանուած էր 52 տարի, եւ **Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Կաթողիկոսի** եւ իր միաբանակից եղբայրներու եւ բժշկական ջանքերը անկարող եղան երկարաձգելու անոր կեանքը: Կեանք մը, տեւողութիւն մը, որ հաւանաբար, դիւրութեամբ կարելի է համեմատել 80-90 տարիներու, նկատի ունենալով անոր կատարած գործերը, ամբողջացուցած մտաւորական եւ այլ աշխատանքները, հեւ ի հեւ աշխատանքով իրագործեց: Ո՛վ գիտէ՞ր թերեւս կը զգար իրեն տրուած ժամանակի կարճութիւնը, զարմանալիօրէն, նմանուելով իր անուանակից **Զարեհ Վեհափառին** կեանքին:

Այո, յարգելի հաւատացեալներ, **Զարեհ Սրբազան 40 օրեր առաջ հեռացաւ** մեզմէ, սակայն, անոր հեռացումը մի միայն մարմնական եղաւ: Անոր հոգին մեզի հետ է եւ միշտ պիտի մնայ մեզի հետ, որովհետեւ մենք միշտ պիտի յիշենք զինք, մանաւանդ իր օրինակելի կեանքը՝ ուսումնասիրելով իր հրատարակած գիրքերը, թարգմանութիւնները, յօրինումները եւ իր ամբասիր կեանքը:

Զարեհ Սրբազանի հետ մեր կապերը կու գան կնոջս կողմէ ազգականական կապերով: Իր քրոջ **Ասողիկին Թորոնթօ** հարս գալով, յաճախ **Թորոնթօ** կ'այցելէր: Իր այցելութիւնները առիթ կ'ընծայէին, որ Պատարագ մատուցանէր եւ իր խորիմաստ քարոզներով եւ պատգամներով ոգեւորէ ժողովուրդը, ինչպէս նաեւ դասախօսութիւններ կը կազմակերպէինք եւ որպէս հայրաբան իր գիտութիւնէն կ'օգտուէինք:

Իր ընկերային եւ մարդկային բնաւորութիւնը զինք փնտռել կու տայ միշտ: Հեզ, խոնարհ, մաքրամաքուր կեանքով ապրող երիտասարդ հոգեւորական, սիրելի էր մեր բոլորին եւ ամէն **Թորոնթօ** այցելութեան, իրեն հետ ըլլալու պատեհութիւններ կը ստեղծուէին այցելութիւններով՝ իր քրոջ տան կամ մեր տունը:

Սակայն իր վերջընթեր գալը **Թորոնթօ**, ցաւալի առիթով էր: Մահացած էր քոյրը՝ **Ասողիկը**, որ իր գեղեցիկ եւ թաւշային ձայնով, **Թորոնթոյի**

«Գուսան» երգչախումբի անդամներէն էր: Իր ունեցած ցաւը, մանաւանդ մայրըն ալ կորսնցնելէ ետք խոր ըլլալով հանդերձ, երբեք ցոյց չէր տար եւ առանձնաբար կը տառապէր:

Այսօր, մենք կը ցաւինք իր անժամանակեայ կորուստին համար, սակայն կը մխիթարուինք, որովհետեւ Զարեհները չեն մեռնիր, անոնք կ'ապրին մեր սրտերուն մէջ իրենց կեանքով եւ գործով:

Անոնք անմահ են...

Խուենկ եւ աղօթք եւ լոյս մշտնջենական իր բարի հոգիին:

6 Յունիս 2004



Ղարաբաղի ճամբուն վրայ

ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝
«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»
ՀԱՏՈՐԻՆ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՄԻՆ, ԳԻՐՔԻ ՀԵՂԻՆԱԿԷՆ

*Գերապատիւ Տէր Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեան,
Գերայարգելի Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէճեան,
Վերապատուելի Եսայի Սարմազեան եւ
Արժ. Տ. Կոմիտաս Քհն. Փանոսեան
Սիրելի Գրասեր Ազգայիններ,*

Պր. Ճանապարհի կարգացած կենսագրական ծանօթութիւնները բաւական լայն տեղեկութիւններ տուին, իմ ծնած օրէն մինչեւ ներկայ թուականը կեանքիս ելեւէջներուն եւ գրական գործունէութեանս մասին:

Հոս կ'ուզեմ աւելցնել հետեւեալը.

Թէեւ դպրոցական գրասեղաններէն կը սկսի «այսպէս ասած» գրական աշխատանքներս, սակայն անոնք, սկսնակ գրողի մը գրիչէն արտադրուած ըստ տեղծագործութիւններ էին եւ մնացին տետրակներուս մէջ:

Ապագային, մոտաք գործելով մամուլի գրաշարական աշխատանքներուն եւ շրջապատուելով հայ շնորհալի եւ հանրածանօթ գրողներու, ինչպէս Անդրանիկ Ծառուկեանի, Մինաս Թէօլէօլեանի, Եղուարդ Պոյաճեանի, Արմէն Անոյշի, Եղուարդ Տասնապետեանի եւ այլ գրողներէ, անոնց շունչին տակ, գրելու փափաքս զօրացաւ, եւ, ինծի նման գրականութիւնը սիրող ընկերներու մտերմութիւնը վայելելով՝ ինչպէս Լեւոն Վարդանի, Գէորգ Աճէմեանի, Ա. Երազենցի, Մանուկ Նաճարեանի, որոնց հետ մինչեւ ուշ գիշերներ հայ գրականութեան մասին կը խօսէինք եւ կը խորհրդածէինք:

Գրաշարութեան ասպարէզը, միեւնոյն ատեն ուսուցչական ասպարէզը ինծի առիթ եւ հնարաւորութիւն ընծայեցին, զօրացնելու հայերէն լեզուի իմ մացականութիւնս:

Այդ բոլորին հանդերձ, օրուան հաց ապահովելու համար աշխատանքս, թոյլ չէր տար, որ բոլորովին նուիրուէի գրական աշխատանքներու, արտադրելով այնքան, որքան ժամանակս կը ներէր:

1947ին սկսեալ գրուած բանաստեղծութիւնները հրատարակելու նիւթական միջոցներու չգոյութեան պատճառով, անոնք մնացին անտիպ, մինչեւ 1987, եւ «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծութիւններու հատորը կարելի եղաւ հրատարակել վաղամեռիկ ընկերոջս՝ Կարօ Փաշայեանի քաջալերութեամբ, իր վարած «Պարոն» տպարանին մէջ:

Իսկ «Նուիրում» երգերու եւ բանաստեղծութիւններու հատորը կարելի եղաւ հրատարակել իմ սիրելի դուստրիս եւ թոռնիկներուս մեկենասութեամբ:

Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ «Շողակաթ» ամսագրի հրատարակութիւնը առիթ ընծայեց, որ բարոյալից պատմութիւններ, նախապէս գրուած կամ նոր գրուած, հրատարակուին «Շողակաթ»ին մէջ:

Եկեղեցւոյ արժանաւոր հոգեւոր հովիւ Գերապատիւ Տէր Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեան, գնահատելով հրատարակուած պատմուածքները, խոստացաւ գիրքով հրատարակել, որպէս առաջին մատենաշար Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին, եւ ահաւասիկ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորը, նուիրուած Հայոց Մեծ Եղեռնի 90-ամեակին կը ներկայացուի ձեզի:

Իմ գրական աշխատանքներս շարունակելու եւ որոշ չափով մասնակցութիւնս բերելու հայ գրականութեան ընդհանուր կեանքին կարելի եղաւ, իմ սիրելի կնոջս՝ Շաքէին բարոյական օժանդակութեան եւ հոգածութեան շնորհիւ, մեր ամուսնացած թուականէն 18 Յունուար 1953էն սկսեալ, որուն համար կը գնահատեմ իր զոհաբերութիւնը եւ շնորհակալութիւն կը յայտնեմ իրեն:

Այս առիթով, իմ սրտագին շնորհակալութիւններս կը յայտնեմ մեր սիրելի Հայր Սուրբին, խոնարհ, ազնիւ, նուիրեալ եւ զոհաբերուող եկեղեցականին՝ Գերապատիւ Տ. Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեանին, որուն քաջալերութեամբ եւ խմբագրութեամբ լոյս տեսաւ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորը:

Շնորհակալութիւն նաեւ եկեղեցւոյ հոգաբարձրութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդին, որոնք աջակցեցան հատորիս հրատարակման եւ այս շնորհահանդէս-գինեձօնին կազմակերպման:

Շնորհակալութիւն հատորիս հրատարակման բոլոր օժանդակողներուն եւ այս օրուան յայտագրին բոլոր մասնակցողներուն:

Զեր բոլորին վարձքը կատար...:

5 Մայիս 2005
Գրիգոր Գոթոյեան



Շնորհահանդէս-Գինեձօնէն տեսարան մը

Է.

ՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՈՎ
ԻՐ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՀՈՒՆ ՍԷՐԸ
ՅԱՅՏՆԵՑ ԸՆԿ. ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐԹԻՆԵԱՆԻՆ**

Անդրանիկ Արթինեան ոչ եւս է...

Անակնկալ էր հարուածը եւ անհաւատալի՝ մահը, որ վրայ հասաւ 6 Յունուարին:

Ընկեր Անդրանիկ Արթինեանի մահուան արձագանգեցին տեղական ձայնասփիւռի կայանները եւ մամուլը, տալով անոր կենսագրութիւնը եւ դրուատելով իր ձեռներէցութիւնը:

Յաւակցական հեռագիրներ ուղարկած էին Օնթարիոյի վարչապետը, նախարարներ, երեսփոխաններ, պետական պաշտօնատարներ, ինչպէս նաեւ՝ Հ. Յ. Դաշնակցութեան Մոնթրէալի, Վանգուվըրի, Գէմպրիճի, Համիլթընի, Սենթ Գաթրինգի եւ Ամերիկայի Մ. Նահանգներու մարմինները, ընկերներ ու քոյր միութիւններ:

Ընկեր Անդրանիկ Արթինեանի տան կարգը Հ.Յ.Դ. «Սողոմոն Թեհլիրեան» կոմիտէի կարգադրութեամբ, տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 8 Յունուար 1986 երեկոյեան ժամը 7-9 Հայ Կեդրոնի սրահին մէջ, ուր այս տխուր առիթով հաստատուած էին Ս. Աստուածածին եկեղեցւոյ վէմն ու խորանը:

Հայ Կեդրոնը կը յորդէր հազար հինգ հարիւր հասնող բազմութեամբ:

Խորանին չորս բոլորը զարդարուած էր տասնեակներով ծաղկեպսակներով՝ դրկուած հայ միութիւններու, կազմակերպութիւններու, հաստատութիւններու, ինչպէս նաեւ՝ հայ եւ օտար բարեկամներու կողմէ:

Ընկ. Անդրանիկ Արթինեանի տան կարգին ներկայ էին Գանատայի բոլոր շրջաններէն Հ.Յ.Դ. մարմիններու ներկայացուցիչներ, բազմաթիւ ընկերներ, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութիւնը, Համազգայինի շրջանային վարչութիւնը, յարակից միութիւններու վարչութիւններն ու անդամ-անդամուհիները, Բարեգործականի, Թէքէեան մշակութային միութեան, Ռամկավար Ազատական կուսակցութեան, Հնչակեան կուսակցութեան եւ այլ միութիւններու ներկայացուցիչները: Մէկ խօսքով՝ ամբողջ Թորոնթոյի հայութիւնը իր բոլոր հատուածներով:

Իրենց վերջին յարգանքը մատուցանելու եկած էին նաեւ նախկին դաշնակցային երեսփոխան Ժիմ Փիթըրսըն, Օնթարիոյի նախկին ընդհանուր դատախազ Ժան Ուիլիամզը, Օնթարիո խորհրդարանի նախկին անդամ տիկին Մարկրիթ Քամպըլ, CKEY ռատիոկայանի պատասխանատու խօսնակ Փիթըր Մքհարվի եւ բազմաթիւ այլ պաշտօնատարներ:

Ժամը ծին սկսաւ տան կարգի արարողութիւնը, նախագահութեամբ Ս. Աստուածածին Հայց. եկեղեցւոյ հովիւ հոգշ. Տ. Խաթակ Մ. Վրդ. Յակոբեանի եւ մասնակցութեամբ Հայ Աւետարանական համայնքին հովիւ Վեր. Եսայի Սարմազեանի, Հայ Կաթողիկէ համայնքի հովիւ Գեր. Հ. Եղիա Վրդ. Գիրէջեանի, Վեր. Աբրահամ Ճիզմէճեանի եւ Արժ. Տ. Զաւէն Քհն. Փօլատեանի:

Արարողութեան կ'երգէր Ս. Աստուածածին եկեղեցւոյ դպրաց դասը, դաշնամուրի ընկերակցութեամբ տիկ. Արաքսի Գասարճեանի: «Ի վերին Երու-

սաղէմ» շարականը երգեց Մոնթրէպլէն յատկապէս ժամանած, ընկեր Անդրա-
նիկ Արթինեանի մտերիմ բարեկամը՝ Կարօ Նշանեան:

Արարողութենէն ետք, առաջին խօսողը եղաւ Եսայի Սարմազեան, որ
իր միտիթարական խօսքերէն եւ ընկ. Արթինեանի նկարագրի յատկանիշնե-
րուն թուումէն ետք, իր դամբանականը աւարտեց այսպէս.

«Անդրանիկ Արթինեան կը մեռնի⁶, դժբախտաբար այո՛, բարեբախտա-
բար՝ ո՛չ, որովհետեւ իր յիշատակը անթառամ պիտի մնայ մեր հոգիներուն
մէջ»:

Յանուն «Թեհլիրեան» կոմիտէութեան, Հայ Կեդրոնի տնօրէնութեան
եւ բոլոր միութիւններուն, խօսք առաւ ընկ. Լեւոն Հասրըճեան, եւ ընդգծեց
ընկ. Անդրանիկ Արթինեանին անչափանդիր եւ անձնուէր կեանքը Թորոնթո-
յի հայ գաղութի կազմութեան առաջին օրերէն մինչեւ իր անակնկալ մահը,
միշտ մնալով ազգային եւ մշակութային բոլոր պատնէշներու յառաջապահ
դիրքերուն վրայ՝ տեսլապաշտ խոյանքով եւ անխորտակելի կամքով:

Հոգչ. Տ. Խաթակ Մ. Վրդ. Յակոբեան, որ շատ մօտէն գործակցած էր
ընկ. Անդրանիկ Արթինեանին, յատկապէս վերջին ամիսներուն, երբ հանգուց-
եալը իր ուսերուն առաւ ազգապահպանման նոր խարիսխի մը՝ այս անգամ Ս.
Աստուածածին եկեղեցւոյ շինութեան յանձնախումբի ատենապետութիւնը,
նկարագրեց ընկ. Արթինեանի անհուն սէրը հանդէպ իր ազգին, հայրենիքին
եւ եկեղեցիին:

Խօսքերուն վերջաւորութեան, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները եւ արենոյշնե-
րը մեռելաքայլերու վշտահար կշռոյթով մօտեցաւ ընկ. Անդրանիկ Արթինեա-
նի Եռագոյն դրօշով ծածկուած դագաղին եւ իրենց վերջին յարգանքը մատու-
ցին, հանգուցեալին նուիրելով սկաուտական փողկապը:

Սրտայոյզ տպաւորութիւն գործեցին եւ դառնահեծ արցունքներ առ-
թեցին Հ.Օ.Մ.ի Գոլոլեան նախակրթարանի բարձրագոյն դասարաններու ա-
շակերտները, որոնք մօտենալով դագաղին, իրենց յարգանքը արտայայտեցին
իրենց հայեցի դաստիարակութեան համար անձնագոհ զինուորին, մէկական
մեխակ նուիրելով անոր յոգնատանջ սրտին:

Ընկ. Արթինեանի յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը տեղի
ունեցաւ 9 Յունուարին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, հովանաւորու-
թեամբ Գանատայի եւ Մ. Նահանգներու արեւելեան թեմի առաջնորդ Բարձր.
Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի: Արարողութեան կը մասնակցէին Հոգչ. Տ. Խա-
թակ Մ. Վրդ. Յակոբեան, Գէմպրիճի Հայց. Առաք. Ս. Նշան եկեղեցւոյ հովիւ
Արժ. Տ. Վահան Ա. Քհն. Ղազարեան եւ Հայ Կաթողիկէ համայնքի հովիւ Գեր-
եղիա Վրդ. Գիրէջեան:

Կէսօրուան ժամը 12ին, հանգուցեալ ընկերոջ Եռագոյնով ծածկուած
դագաղը, իր գաղափարակից ընկերներու կողմէ բերուեցաւ Ս. Աստուածածին
եկեղեցի:

Հակառակ գործի օր ըլլալուն, շուրջ հինգ հարիւր սգակիրներ՝ ընկեր-
ներ եւ բարեկամներ ներկայ եղան թաղման արարողութեան:

Նոյն օրը փակ էին Հ.Օ.Մ.ի Գոլոլեան նախակրթարան - Պապայեան
մանկապարտէզի դռները:

Յուզարկաւորութեան արարողութենէն ետք, խօսք առաւ Առաջնորդ Սրբազան Հայրը, որ իր խօսքին մէջ ի միջի այլոց ըսաւ.

«Ան ո՛չ միայն Թորոնթոյի, Գանատայի կամ Ամերիկայի հայեցի շը- նորհներով օժտուած ղեկավար մըն էր, այլ Սփիւռքի ամենաընտիր զաւակնե- րէն մէկը, իր հաւատքով, իր տեսիլքով, իր գործնականութեամբ՝ իր ընտանի- քին եւ հաւաքականութեան մէջ»:

Սրբազան Հայրը, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ-ի, Գանատայի եւ Մ. նահանգներու Արեւելեան թեմի Ազգ. Իշխանութեան եւ հոգեւորական դասուն, իր ցաւակցութիւնները յայտնեց հանգուցեալի հարա- զատներուն, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան, իր գաղափարի ընկերներուն եւ Թորոնթոյի հայութեան՝ ընկ. Արթինեանի անժամանակ մաս- ւան առթիւ:

Առաջնորդ Սրբազանի խօսքէն ետք, խօսք առաւ եղբ. Վարուժան Սե- րոբեան եւ յանուն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան, Գանատայի եւ Մ. նահանգներու Շրջանային վարչութիւններուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի անդամ-անդամուհիներուն, ի միջի այլոց ըսաւ.

«Եղբայր Անդրանիկ Արթինեանը ճանչցայ որպէս խմբապետ: Որպէս ազգային կեանքի սեւ եւ ծանր աշխատանքներուն նուիրուած անհատ: Անիկա իր կեանքի ամբողջ տեւողութեան ընթացքին եղաւ գաղափարապաշտ ղեկա- վար մը: Գործը թռիչք կու տար իրեն: Խօսքէն աւելի գործով կը փաստէր իր ներկայութիւնը»:

Ապա, ընկ. Անդրանիկ Արթինեանի դազաղը փոխադրուեցաւ Նորթ Եորքի գերեզմանատունը, ուր թաղմանական արարողութենէն ետք, յանուն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ընկերական կազմին, դամբանական խօ- սեցաւ ընկ. Վազգէն Թերզեան եւ ըսաւ ի միջի այլոց.

Ամենայն տեղ մահը մի է
Մարդ մի անգամ պիտ մեռնի

Մենք բոլորս կ'երգէինք եւ գիտէինք ասիկա, Անդրանիկ, բայց երանի որ իր ազգին համար մարդ քեզի պէս մեռնի, որովհետեւ ամէն ցաւի մէջ մը- խիթարութիւն մը կայ, ամէն ցաւի մէջ տարբեր տեսակի մնաս բարով եւ եր- թաս բարով մը կայ»:

Ընկերներու կողմէ երգուած «Վէրքերով լի» երգով ընկ. Արթինեանի անշունչ մարմինը հանգչեցաւ գանատական հիւրընկալ ցուրտ հողին մէջ, օր մը իր վերջնական հանգիստը գտնելու երազով Արարատի փէշերուն:

Երթաս բարով սիրելի ընկեր Անդրանիկ, քու յիշատակդ միշտ անթա- ռամ պիտի մնայ մեր սրտերուն մէջ, քանի կ'ապրինք ու կանք:

«ՅՈՐԻՉՈՆ»
27 Յունուար 1986

ԴՈՒՆ ԷԼ, ԼԱՕ՝
(Միմոն Միմոնեանի մահուան քառասունցին առիթով)

Դուռն էլ, Լաօ՝, Օվէի տղայ Սիմոն, աճապարեցիր հեռանալ այս աշխարհէն, երթալ միանալու համար լեռնականներու հերոսածին փաղանգին, որոնց վերջալոյսը երգեցիր քու գլուխ գործոց՝ «Լեռնականերու Վերջալոյսը» գիրքով:

Կեանքդ ամբողջ եղաւ նուիրում եւ զոհաբերութիւն՝ ի խնդիր Հայ մը՝ շակոյթի ծառայութեան եւ տարածման, որպէս ուսուցիչ, խմբագիր, պատմաբան, հրատարակիչ եւ գրող, որպէս Քրիստոս պաշտելով միայն Մեսրոպ Մաշտոցը՝ անհուն երկիւղածութեամբ ու հաւատքով:

Սակայն, հոգի՛դ, մնաց մաքուր՝ Անտոքի, Մովսարի, Գրգուռի եւ Մարաթուկի ձիւներուն պէս, ամուր՝ Սասնոյ կրանիթեայ ապառաժներուն պէս, զօրեղ՝ Սասնոյ Պաթմանայ գետակին պէս: Եւ ո՛չ մէկ հողմ ու փոթորիկ կրցաւ ընկճել հոգիիդ մէջ խայտացող սլացքը՝ հայրենասիրութեան ճանապարհներուն վրայ:

Այսպէս, Սիմոն աղբէր, անակնկալօրէն, առանց մնաս բարովի, հեռացար մեզմէ անդարձօրէն, հեգնելով 1983ին, Ամերիկայի մէջ տեղի ունեցած Յոբելեանիդ առթիւ եղած առողջութեան եւ արեւշատութեան մաղթանքները:

Ա՛խ, սիրտդ, սասունցիի ազնիւ եւ վճիտ սիրտդ չդիմացաւ...: Ինչպէ՛ս դիմանար, ծովերով հոգ եւ սրտմաշուք՝ կեանքի անբնական պայմաններուն ներքեւ: Ի՛նչ քարէ սիրտ պէտք է ունենար Սիմոնեանի պէս անձ մը, որպէսզի կարենար արիւն հասցնել մտքին եւ մատներուն, Ս. Մեսրոպի ջահը անմար պահելու համար, հայ ազգին եւ հայ մշակոյթին՝ օրը 24 ժամ ծառայելու համար:

Սիրելի՛ հայրենակից Սիմոն, ամէն մարդ գիտէ, թէ օր մը պիտի մեկնի այս աշխարհէն, բայց շատ քիչեր կան, որոնք իրենց կարողութենէն աւելին տալով, գիշերը ցերեկին խառնելով, անմահական գործեր արտադրելով եւ անմահութիւնը իրենց կենդանութեան ժառանգելով կ'երթան, աչքերնին ետին չպահելով:

Դուռն հայ մշակոյթի բոլոր կարուածներուն մէջ դրիր մնայուն քար մը, որոնց որակը եւ տեսակը բարձրօրէն գնահատուած է հայ ժողովուրդին կողմէ: Գիտէիր, որ պիտի մեկնիս, անոր համար կ'աճապարէիր անաւարտ գործերուդ ամբողջացումին: «Գերեզման տարուելիք բաներ» տակաւին շա՛տ ունէիր, որոնք պէտք է թուղթին յանձնուէին:

Սատանան, որոգայթը լարեց քանի մը անգամ: Փորձեց հարուածել սրտէդ՝ քանի մը անգամ: Սակայն, դուռն, ինչպէս Սասունցի Դաւիթ Մսրայ Մելիքին դիմաց կուռի պահին, միշտ յաղթական դուրս եկար, գոռալով՝ «կենդանի եմ»...:

Բայց այս անգամ չկրցար ազատիլ, խոր կսկիծով պատելով մեր սրտերը:

Լեռնականները գրեթէ մեծամասնութեամբ գացին: Մարդ չմնաց Հայաստանի սիրտէն՝ Սասունէն: Անոնց հոգիները անհուն կարօտով կը սաւառնին իրենց պաշտելի բարձունքներուն վրայ:

Կարգը եկաւ անոնց որդիներուն: Սասունը չտեսած, բայց իրենց երակներուն մէջ կրող սասունցիներուն, որոնց աւագագոյնն էր Սիմոն Սիմոնեան, որուն պատիւը եւ բախտը վիճակուեցաւ Հալպայ քաղաքին մէջ Սասնոյ Հայրենակցական Միութեան վարչութեան ատենադպիր ըլլալը, ապրիլ ու գործել աղամանդի նման փայլուն հոգիով փռապան եւ ջաղացպան սասունցիներուն հետ, ուսումնասիրել անոնց հոգին եւ գրել գրական գոհարներ:

Սակայն, ինչպէս գրած է Սիմոն Սիմոնեան իր «Լեռնականներու վերջալոյսը» գրքին «Երեք Օրակարգ» պատմուածքին մէջ, նկարագրելով Հայրենակցական Միութեան վարչական մէկ ժողովը, ուր կ'ըսէ.

«Բոլորն ալ անգրագէտ ծերեր էին: Միակ գրել-կարդալ գիտցողը ես էի եւ Տալուորիկցի Խարզոն: Երանի՛ թէ երկուքս ալ գիտցած չըլլայինք Մեսրոպ կոչուած վհուկին կախարդական այս նշանները: Հագա՛ր երանի: Դիւրին երանի մը չէ ասիկա: Սպասեցէք:

Փոխանակ բազմաթիւ օրակարգերով զբաղելու, Տալուորիկցի Խարզոն, ինձմէ ետք գրել-կարդալ գիտցող միակ վարչականը, երեւելի սուրբ Փէտայի Գալէի ազգականը, «խօսք կ'ուզեմ» ըսաւ եւ բացաւ իր բերանը՝ շատ թթուած դէմքով մը.

– Մե՛ծ սխալ մը գործեր է Օվէ-տղան...

Օվէ տղան ես էի:

Սարսափով նայեցայ Փէտայի Գալէի ազգականին սատանայական դէմքին:

Ի՛նչ մեծ յանցանք գործած կրնայի ըլլալ... չէի գիտեր:

Ապա, տալուորիկցի Խարզոն դարձաւ ինձի եւ որոտաց.

– Դնի չե՞ս ամ չնար, մըքի քու մասխարա՞ն ենք:

– Խեր է, Խարզո՛յ,– հարցուց կողուկլու Մակարը:

Խարզոն ոտքի ելաւ եւ գոռաց.

– Մըքի գրուելիք մարդիկ չընք: Մըքի արո՛ւն տեսեր իք...

Այդ օրերուն գրեր էի առաջին գրութիւններս սասունցիներուն վրայ եւ Խարզոն կարդացած էր զանոնք...

Ալեւոր ատենապետը՝ Կողուկլու Մակարը, քիչ ետք յուզումէն դողացող ձայնով հարցուց.

– Ճի՞շդ է, Օվէ՛ տղայ...

Չուրացայ: Յատենի ժողովոյ ըսի՝

– Գրեցի...

– Օվէի-տղայ,– հարցուց Շեփէն,– օրէնքո՞վ գրեցիր...:

– Օրէնքո՞վ,– ըսի:– Մարդ ի՛նչ կը գրէ իր «հօրեղբայրներուն» մասին...:

*

**

Սիրելի՛ հայրենակից, Օվէի տղայ Սիմոն,

Տալուրիկի Սպաղանք գիւղացի Խարզոն, քեզմէ ետք միակ գրել-կարդալ գիտցող վարչականը, որ Սուրբ Կարապետի Վանքը ստացած է իր ուսումը եւ դեռ պատանի, ուսուցչութիւն ալ ըրած Սասնոյ գիւղերուն մէջ, հայրս էր, որ 25 տարիներ առաջ մեկնեցաւ այս աշխարհէն, միանալու համար իր հօրեղբորորդիներուն՝ Ֆէտայիներ Գալէին եւ Յակէին, ինչպէս նաեւ իր ազգականին ու կնքահայրին՝ Դիւցազն Սպաղանաց Մակարին: Արիւն թափած Ֆէտայիներու սերունդէն անձ մը՝ որպիսին էր հայրս, այդ օրերուն, ի՞նչպէս պիտի գնահատէր քու գրական հանճարդ: Անոր միակ սկզբունքը՝ հայ ազատագրական պայքարն էր, «Միայն գէնքով կայ հայոց փրկութիւն» բնաբանով: Ան իր հայրենասէրի միամտութեամբ կը կարծէր, որ «թուղթէ շերեփ» կը պատրաստես...:

Բայց ես, այդ առաքինագարդ լեռնականներու որդիներուն երկրորդ սերունդին պատկանող սասունցի արիւնակից մը, կը ճշդեմ՝

Վարձքդ կատար, Օվէի-տղայ Սիմոն, այդ գրութիւններով լոյս աշխարհ սփռեցիր սասունցի լեռնականի անշահախնդիր հայրենասիրութիւնը, խրոխտ ոգին, ազնիւ սիրտը եւ հայ գրականութեան գանձարանը հարստացուցիր գրական գոհարներով:

Գրեցիր՝ «Օրէնքով», անմահացար եւ անհատ սասունցիներ անմահացուցիր՝ «օրէնքով»:

Քու հայեցողութեամբ եւ փափաքով ուղղութիւն տուիր մտաւորական կեանքիս, 1946ի սկիզբը զիս գործի ընդունելով, Հալէպի Ուսուցչական Միութեան «Սեւան» տպարանէն ներս, որ ինծի համար եղաւ թէ՛ ապրուստի միջոց, թէ՛ երկրորդական դպրոց, մինչեւ Պէյրութ փոխադրուիլը:

Այսպէս, եղար առաջին վարպետս, արհեստի եւ գրականութեան ասպարէզներուն մէջ:

Խունկ եւ աղօթք շիրիմիդ՝ սիրելի Վարպետ, մահուանդ քառասունքին առթիւ:

Հանգի՛ստ վաստակաբեկ ոսկորներուդ, մինչեւ այն օրը, երբ ազատութեան արեգակը ծագի Սասնոյ լեռներուն վրայ եւ ածիւններդ հանգչին հօրդ՝ Օվէի ծննդավայր Սասնոյ Կերման գիւղի սարալանջին...:

«ՅԱՅՐԵՆԻՔ»
Զորեքշաբթի, 7 Մայիս 1986

**ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
(Յուշեր եւ Ապրումներ)**

Տարի մը առաջ, 20 Մայիս 1989ին, սրտի խոր կսկիծով տեղեկացայ, Փարիզի մէջ պատահած անժամանակեայ եւ դառնադէտ մահը սիրելի վարպետիս՝ Անդրանիկ Մառուկեանին: Ամբողջ տարի մը չարչարուեցայ, կարդացի իր մահուան առթիւ «Յառաջ»ի եւ «Նոր Կեանք»ի մէջ հրատարակուած յօդուածները, սակայն, չհաշտուելով կատարուած իրականութեան հետ, չկրցայ գըրել եւ արտայայտուել այն անկեղծ զգացումները եւ անմոռանալի յիշատակները, որոնք անեղծ մնացած են մտքիս պաստառին վրայ այն քաղցր ու յուզիչ օրերէն, երբ ես՝ որպէս գրաչար «Արեւելք» օրաթերթի, ապա՝ «Նայիրի» տպարանի եւ «Նայիրի» ամսագրի, զինք ունենալով որպէս գործակից եւ գործատէր, սակայն, որպէս մշակոյթի ծառայող գործատէր՝ ընկերական եւ եղբայրական զգացումներով թաթալուէն:

Թէեւ մեր գործակցութիւնը վերջ գտաւ 1949 թուականին, ինծի համար անակնկալ իր որոշումին հետեւանքով Պէյրութ փոխադրուելով, աւելի հայաշատ ու քաղաքականապէս ազատ քաղաք մը, ուր պիտի հաստատէր Հալէպի «Նայիրի» տպարանէն աւելի արդիական տպարան մը եւ «Նայիրի» ամսագրի փոխարէն պիտի հրատարակէր «Նայիրի» շաբաթաթերթը, որուն Հալէպ հասնող թիւերուն կը սպասէինք անհամբեր եւ կը լափէինք արժէքաւոր եւ ազգադրոշմ գրութիւնները:

1949էն մինչեւ այսօր, իրմէ եւ իր բարեհամբոյր մօրմէն՝ տիկին Երանիկէն մնացած քաղցրաբոյր յիշատակները անջնջելի մնացած են հոգիիս խորը եւ աւելցած, այդ թուականէն ետք մեր ունեցած հանդիպումներով:

Անդրանիկ Մառուկեանը ճանչցած եմ մանկութենէս, երբ ինք Ջաւարեան Վարժարանի ուսուցիչ էր, իսկ ես՝ Ազգային Սահակեան Վարժարանի աշակերտ: Երկու դպրոցները միեւնոյն թաղամասին վրայ գտնուելով, յաճախ առիթը կ'ունենայինք զինք տեսնելու: Սակայն, տարիներ ետք, երբ անդամագրուեցայ Հալէպի Նոր Գիւղի շրջանի Հ.Յ.Դ. «Ջաւարեան Պատանեկան Միութեան» եւ որոշ շրջանէ մը ետք մաս կազմելով «Ջաւարեան» գրադարանի անձնակազմին եւ միութեան վարչութեան, բախտը ունեցայ վայելելու զինք՝ որպէս միութեան վարիչ եւ ունկնդրելու իր խորիմաստ դասախօսութիւններն ու ճառերը:

Շուրջ երեք տարի Ազատ Ֆրանսայի Արեւելեան Բանակին ծառայելէ ետք, որպէս ենթասպայ, 1 Մարտ 1946ին, թնդանօթածիզ զօրամասի բարձր հրամանատարութիւնը ընդունեց հրաժարականս, պատճառաբանելով որ չեմ ուզեր Ֆրանսա մեկնիլ, Պէյրութէն վերադարձայ ծննդավայրս՝ Հալէպ, իրականութեան մէջ անսալով եւ տեղի տալով հօրս թախանձանքներուն, սասունցի լեռնականի մը մոլեռանդ հայրենասիրութեան թելադրանքներուն, որպէսզի շուտով Հայաստան ներգաղթենք:

Ընտանիքիս եւ հայրենիքիս հանդէպ ունեցած պաշտամունքս եւ սէրս ստիպեցին հրաժարելու փայլուն ապագայի ծրագիրներէս եւ կեանքիս ուղին

փոխելով, գտած ըլլալ կարծեցի հայրենիքին ծառայելու ճակատագրական առիթը: Սակայն, այդ օրերու ողբերգութիւններուն եւ խայտառակութիւններուն տեղեակ եղողները շատ լաւ կը յիշեն, թէ ինչպիսի՛ ծախուած մարդիկ կազմակերպեցին հայրենադարձութիւնը, եւ ինչպիսի՛ պայմաններով ինչպիսի՛ մարդիկ ընդունեցին եւ արժանացան «Դրախտային Կարմիր Քարթին», քեզի տրուած թիւին եւ մաս կազմել իրարայաջորդ կարաւաններուն: Գացողները գացին եւ արժանացան ստալինեան դրախտի վայելքին, իսկ մնացողները, տուն-տեղ ծախողները, չոր տախտակի վրայ մնալով, քաւեցին իրենց հայրենասիրութեան «մեղքերը»:

1946-1947 թուականներուն կազմակերպուած ներգաղթի շուրջ հոս, այս պահուստ անդրադառնալը իմաստէ պիտի մերկանար, եթէ երբեք, Անդրանիկ Մառուկեան, որ բոլոր հայրենասէր հայերու նման արձանագրուած էր Հայաստան ներգաղթելու, վերոյիշեալ պատկերին մաս կազմած չըլլար:

Իր դիմումին ընդառաջելով (հաւանաբար յետին մտածումով), Հալէպի ներգաղթի կոմիտէի «փարթամ» անդամները, զինք կը հրաւիրեն իրենց կեդրոնատեղին, խորհրդակցութեան համար: Իրեն պաշտօնապէս կ'իմացուի, թէ այդ տարին (1946) կարելիութիւն չկայ իր դիմումը ընդունելու, խոստանալով յաջորդ տարին (1947) անպայման կարգադրութիւն մը ընել:

Մառուկեան տպարան եկաւ «Աստուծո՛վ է լիւծ», ջղայնացած, կծու բառեր գործածելով պատմեց եղելութիւնը այսպէս.—

«Երբ դիմումս չընդունեցին, ես իրենց հարց դրի, ըսելով. «Գիտէք, մինչեւ յառաջիկայ տարի ես պիտի ապրիմ եւ ապրուստի մասին մտածեմ: Դերձակը իր արհեստով կ'ապրի, կօշկակարը եւ ատաղձագործը՝ նոյնպէս: Ես գրող եմ, գրելով կ'ապրիմ: Ինչպէս անցեալին, յառաջիկային ալ «Արեւելք»ի մէջ յօդուածներ պիտի գրեմ, ամսագիր պիտի հրատարակեմ: Գրութիւններովս կրնամ գնահատել կարգ մը երեւոյթներ, կրնամ քննադատել ապօրինութիւններ: Կրնամ Խորհրդային Միութիւնը նոյնիսկ քննադատել՝ միշտ գերադասելով հայ ժողովուրդի գերագոյն շահերը: Արդե՞՞ք իմ առօրեայ արտայայտութիւններս, կուսակցական կեանքս, գրած յօդուածներս պիտի չվնասեն ինձի արդելք հանդիսանալով իմ Հայաստան ներգաղթելու փափաքիս իրականացման:

«Ինձի պատասխանեցին.—

«Դո՛ւն երբեք հոգ մի ըներ, շարունակէ գրել ինչ որ կամենաս: Շարունակէ աշխատանքդ մինչեւ որ քեզի պաշտօնապէս տեղեկացնենք մեկնումի թուականդ: Գալ տարի անպայման կ'երթաս...»:

Ապա, Մառուկեանի մտերիմներուն՝ Նշան Թիւլսիւզեանի, Կարապետ Աղճայեանի, Յարութիւն Պազարպաշեանի, ինչպէս նաեւ մեր զարմացական եւ առեղծուածային նայուածքներէն խթանուած, օգի մէջ կախուած մարդու հոգեբանութենէն դուրս ելլելով աւելցուց.—

«Եղբայր, ես կը զարմանամ այս մարդոց դատողութեան եւ վարուելակերպին: Սուտերով եւ կեղծիքներով շպարուած, իրենց պաշտօնը կը շահագործեն մարդիկ խաբելով եւ օրօրելով: Յիսուս, որ Աստուծոյ Որդին էր, մարդոց մեղքերուն թողութիւն կու տար, սակայն, ո՛չ մէկ անգամ, ոեւէ մէկուն չըսաւ. կը ներեմ մեղքերդ, զնա՛ կրկին մեղանչէ, եկուր նորէն կը ներեմ քեզի: Այս

մարդիկը Յիսուսին աւելի բարեսիրտ եւ ներողամիտ են, կամ ալ՝ Սատանային աւելի Սատանայ»:

Եւ, այնուհետեւ, «Արեւելք»ի առաջին էջերուն աջ կողմի սիւնակը, շըրջանակի մէջ եւ «Օրը-Օրին» խորագրով եւ Պիծակ ստորագրութեամբ, Մառուկեան քողագերծեց հայրենադարձութիւնը իրենց սեփական մութ հաշիւներուն ծառայեցնող այդ սողուններու սանձարձակ ապօրինութիւններն ու խարդախութիւնները:

«Արեւելք»ի սիւնակներէն լուսարձակուած իր գրութիւններէն, պատմականօրէն անմոռանալի մնալու սահմանուած է «Զգուանքով» խմբագրակաշնը, ուր Մառուկեանի խայթող եւ խարազանող գրիչը, անզուպ կատաղութեամբ եւ երգիծաբանութեամբ կը մերկացնէր Հայաստան ներգաղթելու որպէս պայման Դաշնակցութենէն եւ Հ.Մ.Ը.Մ.էն հրաժարիլ պարտադրող ապագային «Ներգաղթի Կոմիտէին» գազրելի արարքներն ու ողորմելի դաւադրութիւնները, օրինակ բերելով «Եփրատ» օրաթերթին մէջ հրատարակուած կարգ մը հրաժարականներ, որոնք ստորագրուած են տարիներ առաջ երկրային կեանքէն հեռացած դաշնակցականներու եւ Հ.Մ.Ը.Մ.ականներու կողմէ:

*

**

1946ին, ես 19-ամեայ երիտասարդ մը, որ դպրոցը աւարտելէ ետք շըրջորհով եւ շահաբեր մասնագիտութիւն մը սորվելու առիթը բանակին մէջ անցուցած ըլլալով, յատկապէս անձնաթուղթիս մէջ երկու տարի մեծ արձանագրուած (մահացած Գրիգոր եղբօրս ծննդեան թուականով) տարիքիս բերմամբ, պատանեկութենէս սորված դերձակութիւնը փորձեցի, սակայն, նկարագրիս ներհակ գտնելով հեռացայ: Ի՞նչ կրնայի ընել՝ ապրելու համար: Հօրս թելադրութեամբ եւ ընկերակցութեամբ մօտեցանք մեր սիրելի հայրենակից Սիմոն Սիմոնեանին, որ այդ շրջանին կը վարէր Հայկական Ուսուցչական Միութեան «Սեւան» տպարանը, որպէսզի առիթ տայ գիր ու գրականութիւն սիրող տղու մը, որպէսզի գրաշարութիւն սորվի:

Մոլեռանց սասունցի Սիմոնեան, որ հօրս հետ երկար ատեն վարչական եղած էր Սասնոյ Հայրենակցական Միութեան, «աչաց վրայ» ըսելով զիս գործի առաւ: Քանի մը ամիսներու ընթացքին սորվեցայ քասային գիրերուն տեղերը եւ «քոմբաս» բռնելով սկսայ շարել Մեսրոպեան Գիրերը, զնահատելի յառաջդիմութեամբ:

Այդ օրերուն, «Նայիրի» տպարանէն լոյս տեսաւ «Արեւելք» օրաթերթը: Դիմեցի եւ ընդունուեցայ, բախտն ու առիթը ունենալով հայ մամուլին ծառայելու եւ ծանօթանալու ու մտերմանալու Անդրանիկ Մառուկեանին, Մինաս Թէօթօլեանին, Օննիկ Մելիքսէթեանին, Միհրան Հերարտեանին, Արմէն Անոյշին, Գէորգ Աճէմեանին (դպրապետ) եւ թերթի բոլոր աշխատակիցներուն եւ անձնակազմին:

«Նայիրի» տպարանը հաստատուած էր «Հոգետուն»ին մէջ, Երուսաղէմի Պատրիարքութեան պատկանող կալուած մը, որ ժամանակին կը գործածուէր Կիլիկիայէն եւ Արեւմտեան Հայաստանէն Երուսաղէմ ուխտի գացող հայ

կարաւաններուն որպէս օթեւան: Հոգետան բակին մէջտեղը գոյութիւն ունէր ջրհոր մը, բնակիչներուն կարիքներուն համար: Ունէր երկու դուռ, որ գիշերները կը գոցուէր: Դուռին մէկը կը գտնուէր Թիլել պողոտայի վրայ, իսկ միւսը՝ Սալիպէ թաղամասին:

Հոգետան կառուցուածքը երկու յարկանի էր, շրջանակուած խոշոր բակին բոլորտիքը: Երկրորդ յարկին վրայ գոյութիւն ունէին հայ չքաւոր ընտանիքներէ վարձուած սենեակներ, տանըմարքացի նշանաւոր հայասէր միսիոնար Միս Քարէն Եփփէի գործակից Պրն. Քաչիկի հայ մայրերու գործ հայթայթող ասեղնագործ աշխատցուածքներու գրասենեակը, զոր կը վարէր Սուրիոյ գաղութի ղեկավար դէմքերէն Յարութիւն Չագըրեան, իր ամբողջ կեանքը հայ ժողովուրդին նուիրած ուրֆացի այդ մեծ հայը, որուն կեանքը վերջ գտաւ Սուրիոյ մէջ գէնքերու հարցով Դաշնակցական ղեկավարներու կարգին իր ալ ձերբակալութեան եւ իր վրայ գործադրուած խժոժութիւններուն հետեւանքով, բանտէն ելլելէն շրջան մը ետք շիջեցաւ, սուգի մատնելով Ծառուկեանը եւ ամբողջ հալչպահայութիւնը: Երկրորդ յարկին վրայ կը գտնուէր նաեւ «Տիգրիս» գրադարանը եւ «Արեւելք»ի գրաշարանոցը, ուր շարուած յօդուածները վար պէտք է իջեցնէինք՝ էջադրուելու եւ տպագրուելու համար:

Այդ թուականին Հալչպի մէջ գոյութիւն չունէին արդիական տպարաններ: Նոյնիսկ արաբական թերթերը կը շարուէին կապարէ գիրերով եւ կը տպուէին նախնական, ժամական 1000-2000 օրինակ տպող մեքենաներով: Ներկայիս, այս ափերուն վրայ ականատես ըլլալով տպագրական արդիական սարքերուն, մեր գրաշարութիւնը, էջադրումն ու տպագրութիւնը բեռնակրութեան պէս բանի մը միայն կրնամ նմանցնել: Սակայն, այդ շրջանին, մեր բոլորին սրտերուն մէջ գոյութիւն ունէր հայ մշակոյթին եւ հայ մամուլին ծառայելու ջերմեռանդ նուիրումը եւ մենք, օրինական ժամերէն շատ աւելի ժամանակ տրամադրելով, չնչին աշխատավարձով, հոգեկան մեծ գոհունակութիւն կը զգայինք, մեկնելով այն գիտակցութենէն, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պաշտօնաթերթին հրատարակութեան միջոցաւ կը ծառայէինք հայ մշակոյթին ու հայ ժողովուրդին:

Հոգետան հսկայ բակին վարի յարկին վրայ գոյութիւն ունէր հայկական փուռ մը, որ կը ծառայէր շրջանի բնակչութեան: Փուռին սեփականատէրերն էին հայաբոյր սասունցի քեռի Յակոն եւ իր ազգականը քեռի Սեդրակ: Ազատ ժամերուս կը սիրէի «ժղլիլ» սասունցի հայրենակիցներուս հետ, որոնք ինծի կը պատմէին Սասունէն եւ Ֆէտայիներու քաջագործութիւններէն: Իսկ քեռի Սեդրակ, ցոյց տալով ոտքի սպին, կը պատմէր Հայաստանի Հանրապետութեան շրջանին խմբապետ Մուշեղի վաշտին հետ Հայաստանը հայացնելու համար մղուած կռիւներէն:

Առաջին յարկի վրայ էր նաեւ Փարիզ հաստատուած նախկին հալչպահայ բանաստեղծ Բիւզանդ Թոփալեանի հիմնած «Արաքս» տպարանը, որ անուներ պահելով հանդերձ արաբ տպագրողի մը սեփականութիւնը դարձած էր: Տպարան «Արաքս»ի ճիշդ քովը հաստատուած էր «Նայիրի» տպարանը:

Անդրանիկ Մառուկեան, իր մէկ տպաւորիչ պատմուածքին նիւթ դարձնուցած էր հոգետան կեանքը՝ «Հոգետան Ասորին» վերնագրով, որուն ընթերցումը զիս տարաւ պտտցնելու հոգետան աշխարհին մէջ:

«Արեւելք» օրաթերթի հրատարակութիւնները այլ տեղ փոխադրել է եւ խմբագրատունը Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը հաստատել է տք, Մառուկեան զիս պահեց իր մօտ, տալով ինծի պատիւը շարելու «Նայիրի» ամսագիրն ու այլ հրատարակութիւններ:

Ամէնօրեայ մեր աշխատանքներուն առնթեր, օր մըն ալ նկատեցինք տպարանի կից, հոգետան թիլէլի մուտքին վրայ գտնուող բակին վարձուորներէն պարպուելը եւ անկէ ետք ձեռնարկուած նորոգութիւնները: Գաղտնիքը շրջան մը ետք լուծուեցաւ, երբ տպարանին եւ նորոգուող բնակարանին միջեւ դուռ մը շինուեցաւ:

Մառուկեան եւ իր համեստ առաքինի եւ անձնուէր մայրը՝ տիկին Երանիկ, երանելի եւ իսկական հայուհի մը, փոխադրուած էին իրենց նոր բնակարանը, որուն անցքէն կ'երթեւեկէր Մառուկեան, իսկ մայրը, ամէն օր բուրումնաւէտ հայկական սուրճով եւ քաղցր ժպիտով կը պատուէր մեզ:

Իր գրականութեան գլուխ գործոցը՝ «Թուղթ առ Երեւան» երկը մինչ այդ քանի մը տպագրութիւններու արժանացած էր, լոյս տեսած էր նաեւ Յակոբ Օշականի «Վկայութիւն մը» հատորը «Թուղթ առ Երեւան»ին հետ, սակայն, կրկին պահանջը կը զգացուէր նոր հրատարակութեան: Բախտը ունեցայ շարելու «Թուղթ առ Երեւան»ի Տրդ հրատարակութիւնը, ինչպէս նաեւ գրական գոհար՝ «Մանկութիւն Չունեցող Մարդիկ»ը, որուն ձեռագիրները ժամէ ժամ, տան մէջ բանտարկուած հեղինակը, իր մօրը՝ տիկին Երանիկին միջոցաւ կը հասցնէր ինծի՝ լոյս տեսնելու համար «Նայիրի» ամսագրի այդ ամսուան թիւին մէջ:

Յակոբ Օշականի ձեռագիրը տեսնողները կրնան վկայել, թէ ճանճի տատիկներով գրուած իր գրութիւնները շարելու համար, գրաշարը զօրաւոր աչք եւ փորձառութիւն ունեցած պէտք է ըլլայ: Տառապանք է Օշականի ձեռագիրը կարդալ եւ շարել: Ես բախտը ունեցայ Օշականի վերջին ձեռագիրը շարելու:

Հայ գրականութեան գագաթներէն Յակոբ Օշական Հալէպ եկած էր իր յոբելեանին առթիւ: Ան Հալէպ գտնուած միջոցին ամէն օր կ'այցելէր տպարան «Նայիրի» եւ հանդիպումներ կ'ունենար Մառուկեանին հետ: Մեծապէս տպաւորուեցայ Օշականէն, մանաւանդ անոր հագուածքէն՝ բաց օձիքով, փափախը գլխուն, իր գրած պատմուածքներուն տիպարներուն օրինակով:

Բերած էր գրութիւն մը, իր էջերով 10-12 էջ, հրատարակելու համար «Նայիրի» ամսագրին մէջ: Ձեռագիրը ձեռքս բռնած կ'ուսումնասիրէի: Ըսի.՝ Այս ձեռագիրը կարդալու համար խոշորացոյցի պէտք կայ: Շարեցի...:

Յաջորդ օր Օշական եկաւ, տուի շարուածքին առաջին փորձը, սրբագրեց, անունս հարցուց եւ ըսաւ.՝

«Տղաս, գիտեմ Օշականի ձեռագիրը դժուար է շարել, ամէն գրաշարի գործ չէ, սակայն դուն նուազագոյն սխալներով շարած ես: Գնահատելի է»:

Օշական չտեսաւ իր վերջին յօդուածին հրատարակութիւնը: Յաջորդ առաւօտ գոյժը տարածուած էր: Իջեւանած ըլլալով Գրիգոր Երէցեանի բնա-

կարանը, հոն ալ մահացաւ: Ոչ եւս էր հայ մեծ գրագէտ եւ քննադատ Յակոբ Օ-
շական, Անդրանիկ Մառուկեանին ամէնէն մօտ գրագէտը:

Որպէս բանաստեղծ, գրագէտ, քննադատ, հրապարակագիր, հրապարա-
կախօս եւ խմբագիր Անդրանիկ Մառուկեան, իր դրոշմը եւ ոճը դրաւ հայ գը-
րականութեան բոլոր ճիւղերուն վրայ: «Ուխտ Արարատին» քերթուածը,
«Թուղթ առ Երեւան»ը կամ «Մանկութիւն Չունեցող Մարդիկ» հատորները՝ ա-
ռանձին-առանձին, պիտի բաւէին զինք անմահներու շարքին դասելու...:

Իմ սրտի խօսքէս դուրս կը մնան Անդրանիկ Մառուկեանի անձնական
կեանքը, թերութիւնները, գաղափարական արեւելումներն եւ մարդկային
հասկացողութիւնները: Ժամանակները կ'անցնին, շատ բաներ սերունդներու
հետ կը փոխուին, կանգուն կը մնայ միայն գրագէտի մը արտադրած գրակա-
նութիւնը, որ իր արժէքով եւ որակով կրնայ երկար ճամբորդութիւններու
դիմանալ եւ աւելի արժէքաւորուիլ:

Շատ քիչ մտաւորականներ եւ գրագէտներ ճանչցած եմ, որոնք ունե-
ցած ըլլան շնորհալի գրագէտի եւ ճարտասան հրապարակախօսի համբաւ: Մա-
ռուկեան աստուածատուր այդ երկու շնորհներէն աւելին ունէր:

Սիրելի եւ անմոռանալի վարպետի հետ մեր գործակցութիւնը կարճ
տեւեց, հազիւ երեք տարի: Իր Պէյրութ մեկնումին առիթով «Նայիրի» տպա-
րանը ծախեց ելեկտրական ընկերութեան պաշտօնեայ վաշխառու հայու մը,
իսկ տունը փոխանցեց այդ շրջանին Հալէպի Առաջնորդ, ապա՝ Մեծի Տանն Կի-
լիկիոյ Կաթողիկոս Երանաշնորհ Ջարեհ Ա. Փայասլեանի ծնողքին: Երեք տար-
ւան աշխատանքիս հատուցումը գանձած էի մեկնող վարպետէս: Ալ գործ չու-
նէի, Մառուկեանի «Նայիրի» տպարանին մէջ: Հեռացայ, նուիրուելու համար
ուսուցչական ասպարէզի:

Իրմէ փոխանցուած բազմաթիւ յիշատակներ անեղծ կը մնան եւ յա-
ճախ մտածումներուս եւ խորհրդածութիւններուս առարկայ կը դառնան: Գի-
տէր, որ յաճախ «Արեւելք»ի մէջ գանազան ստորագրութիւններով յօդուած-
ներ կը գրեմ, սակայն, երբ իմացաւ եւ կարդաց Գրիգոր Վարդգէս ստորագ-
րութեամբ «Արեւելք»ի մէջ հրատարակուած առաջին քերթուածս, ուրախա-
ցաւ, գնահատեց, քաջալերեց եւ աւելցուց. —

«Գրիգոր, գիտես, քերթուածդ կարդացի, քիչ մը աշուղական շունչ կար
վրան»:

Յաճախ մտածած եմ քերթուածներուս աշուղական «շունչ»ին մասին
Մառուկեանի բնորոշումին, բայց չեմ կրցած եզրակացութեան յանգիլ, քանի
ուրիշներէ նման վկայութիւն չեմ լսած:

Անդրանիկ Մառուկեանը վերջին անգամ տեսայ Հալէպի մէջ: Գանատա
գալէս քանի մը ամիս առաջ: Հալէպի մէջ կը տօնուէր իր յոբելեանը: Անկարե-
լի է, որ ներկայ չգտնուէի: Կիրակի, 24 Նոյեմբեր 1974ին, Սերքլ Կաթողիկի
սրահը բերնէ բերան լեցուն է: կը խօսուի իր մասին: Խօսք կ'առնէ յոբելեարը:
Ձեռնարկէն ետք կը մօտենամ, կը շնորհաւորեմ զինք: Կ'առնէ ձեռքս խանդա-
ղատանքով իր ափերուն մէջ եւ կ'ըսէ. —

«Կ'ուզեմ որ միշտ գրես: Երանի անոր որ միշտ հայերէն կը գրէ»:

Անկէ յետոյ, միշտ կը հետեւէի իր գրականութեան եւ վերջին տարինե-
րուն անհամբերութեամբ կը կարդայի «Նոր Կեանք»ի էջերէն իր հրատարա-

կած սքանչելի գրողթիւնները եւ իր վերջին գործը՝ Ռուբէն Սեւակի կեանքին նուիրուած:

Հազար ափսոս, պէտք է ապրէր եւ տեսնէր այսօրուան Հայաստանն ու Հայ ժողովուրդի վերածնունդը: Հայկական միասնականութիւնը: Հայ գրականութիւնը տակաւին շատ սպասելիքներ ունէր իրմէ, սակայն աւա՛ղ, Փարիզի այլամերժ մթնոլորտը մաշեցուց իր ջիղերը եւ իր հայու այդ սեւ աչքերը փակեց՝ հեռու իր սիրած Հայաստանէն եւ Լիբանանէն:

**«ՆՈՐ ԿԵԱՆՔ»
22 Մայիս 1990
Լոս Անճելոս**

ԴՈՒՆ ԱԼ «ԱԶԳԱՊԵՏ»

Թորոնթոյի Հայ Կեդրոնը եւ յատկապէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան «Սողոմոն Թեհլիրեան» Կոմիտէութիւնն ու Հայ Երէցներու Ընկերակցութիւնը անակնկալ դժբախտութիւնն ունեցան կորսնցնելու ազգասէր հայ մը, հաւատաւոր կուսակցական մը եւ անձնուէր ղեկավար մը՝ բոլորին կողմէ սիրուած եւ յարգուած խոնարհ ընկեր մը՝ Անդրանիկ Կէտիկեանը, որուն անժամանակեայ մահը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 10 Յուլիս 1990, երեկոյեան ժամը 7ին, սրտի կաթուածի մը հետեւանքով, խոր վշտով եւ յուզումով պարուրելով իր հարազատներուն, զինք ճանչցող ընկերներուն, բարեկամներուն եւ գործակիցներուն հոգիները:

«Հորիզոն»ի սուղ էջերը հնարաւորութիւն չեն տար արդարօրէն եւ լայնօրէն անդրադառնալու ողբացեալ մեր ընկերոջ հանրային կեանքին, կուսակցական վաստակին եւ կատարած ազգակերտ գործունէութեան:

Սակայն, «Պատի՛ւ Արժանաւորաց» կարգախօսէն մեկնելով պարտք կը համարենք ամփոփ գիծերով ներկայացնել իր կեանքի ուղին, տեսիլքներն ու պատկառելի վաստակը:

Ընկեր Անդրանիկ Կէտիկեան ծնած է Այնթապ, 8 Փետրուար 1914ին: 1915ին, հազիւ մէկ տարեկան, իր գերդաստանի բոլոր անդամներուն հետ կը ճաշակէ տարագրութեան սարսափներն ու տառապանքները՝ Այնթապէն մինչեւ արաբական անապատները: 1918ին, Համաշխարհային Բ. Պատերազմի վերջաւորութեան, գերդաստանի վերապրողներուն հետ կը վերադառնայ Այնթապ եւ կը մնայ մինչեւ Կիլիկիոյ պարպումը Յրանսական երկդիմի եւ շահամուլ քաղաքականութեան հետեւանքով ու կը հաստատուի Հալէպ:

1923ին, Հալէպի մէջ կ'աշակերտէ Կիլիկեան Գաղթականաց Վարժարանը, ապա՝ տարի մը ետք՝ Այնթապի նորաբաց Կրթասիրաց Երկսեռ Վարժարանը, ուրկէ շրջանաւարտ կ'ըլլայ 1930ին: 1931ին, կ'անդամագրուի վարժարանի շրջանաւարտից միութեան եւ չորս տարի մաս կը կազմէ միութեան թատերական յանձնախումբին:

Իր ուսումը շարունակելու տենչանքով, 1930ին, կ'ընդունուի Մեծի Տանըն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի նորաբաց ընծայարանը, սակայն, հօրը ընդդիմութեան բախելով, կը հրաժարի այդ գաղափարէն եւ կը դառնայ սափրիչ, իր սեփական խանութը բանալով Հալէպի հայաշատ կեդրոնի՝ Նոր Գիւղի մէջ եւ ամբողջ 25 տարի կը ծառայէ շրջանի հայութեան մինչեւ քաղաքական պայմաններու հետեւանքով Պէյրութ փոխադրուելը:

1928ին, կ'անդամակցի Հալէպի Ճիտէյտիէ թաղամասին մէջ Հ.Յ. Դաշնակցութեան նորաբաց ակումբին մէջ գործող «Քրիստափոր» Պատանեկան Միութեան եւ 1950ին, կ'անցնի Դաշնակցութեան շարքերը:

1947ին կ'ընտրուի Նոր Գիւղի Զաւարեան Կոմիտէի անդամ: 1955-58 կը վարէ կոմիտէութեան գանձապահի պաշտօնը:

1961ին, Հալէպի մէջ կարգ մը կուսակցականներու ձերբակալութեան շրջանին եւ ընկեր Սահակ Նալպանտեանի բանտային շարչարանքով նահատա-

կուլթեան առթիւ, տխուր վկան կ'ըլլայ քանի մը ընկերներով անոր դիակը Դամասկոսէն Հալէպ փոխադրելով եւ նոյն գիշերն իսկ գաղտնի ոստիկանութեան հսկողութեամբ գիշերանց թաղելու հայոց գերեզմանատունը եւ սգալու անոր հերոսական մահը:

Հալածանքի այդ շրջանին պատահեցաւ նաեւ Հայլէպի Նոր Գիւղի շրջանի Սուրիահայ Օգնութեան Խաչի դարմանատունէն Այնթապէն բերուած եւ հոն պահուած ինքնապաշտպանութեան զէնքերու թաքստոցին յայտնաբերումը: Այս զէպքին լոյսին տակ, որպէս կոմիտէի անդամ, ընկեր Կէտիկեան պատասխանատուութեան կանչուելու վտանգը զգալով կ'որոշէ Լիբանան ապաստանիլ, սակայն, հազիւ Հոմա քաղաքը հասած, ինքնաշարժերու կայանին մէջ կը ձերբակալուի եւ կը փոխադրուի Հալէպ՝ գաղտնի ոստիկանութեան գետնայարկը, հոն կը գտնէ արդէն իսկ ձերբակալուած ընկերներ՝ ներկայիս հանգուցեալ Տոքթ. Յակոբ Գասապեանը, Տոքթ. Գասպար Գասպարեանը եւ ուրիշներ:

Ամբողջ շաբաթ մը մասնակից կը դառնայ ընկերներու խիզախութեամբ յագեցած տառապանքներուն եւ Ֆիզիքական անմարդկային չարչարանքներուն: Շաբաթ մը ետք, պետական փոփոխութեան հետեւանքով ազատ կ'արձակուին: Բանտէն ելլելէ քանի մը օր ետք, ընկեր Կէտիկեան ընտանեօք կը փոխադրուի Պէյրութ:

1968ին կը հաստատուի Թորոնթօ եւ իր առաջին գործը կ'ըլլայ մասնակցիլ ազգային կեանքին եւ շարունակել իր ընդմիջուած ազգային եւ կուսակցական գործունէութիւնները:

1971 Դեկտեմբեր 12ին, դժբախտ արկածի մը հետեւանքով կը կորսնցնէ ապագայ խոստացող իր շնորհալի անդրանիկ գաւակը՝ Ներսէսը, որուն կսկիծը երբեք իրմէ չհեռացաւ եւ ցաւը կրեց մինչեւ իր անժամանակեայ մահը:

Թորոնթոյի մէջ եւս մաս կազմեց «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէին եւ ստանձնեց գանձապահի պաշտօնը: Մասնակցեցաւ շրջանային ժողովներու:

1972-1985 , կատարեալ բժախնդրութեամբ եւ հետեւողականութեամբ վարեց «Ազգակ Շաբաթօրեակ-Դրօշակ»-ի եւ «Բագին» ամսագրի Գանատայի ներկայացուցչութիւնը:

1978ին, Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի նախաձեռնութեամբ հիմնուեցաւ Հայ Կեդրոնի Երէցներու Ընկերակցութիւնը եւ ընկեր Կէտիկեան, 11 տարիներ անընդմէջ ձեռնահասօրէն վարեց ընկերակցութեան վարչութեան ատենապետի պաշտօնը:

1982ին, Հ.Յ.Դ.աշնակցութեան շարքերուն մէջ իր 50-ամեայ վաստակին համար, յատուկ հանդիսութեան մը ընթացքին, «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէն զինք պատուեց դաշնակցութեան ոսկեայ զինանշանով:

1987ին, Գանատայի անկախութեան 120րդ տարեդարձին, իր հանրային բարեօրէն ծառայութեան առ ի գնահատանք, պետութեան կողմէ պատուուեցաւ Canada Birthday Achievement Awardով:

1990ին, Հայ Կեդրոնի Երէցներու Ընկերակցութեան վարչութիւնը, իր 11-ամեայ անձնուէր ծառայութեան համար զինք պատուեց ընկերակցութեան ոսկեայ խորհրդանշանով:

Ընկեր Անդրանիկ Կէտիկեանի թաղման կարգը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 12 Յուլիս 1990, երեկոյեան ժամը Տին «Քէյն» մեռելատան մէջ, ներկայութեամբ հոծ թիւով հարազատներու, ազգականներու, ընկերներու, ընկերուհիներու, գործակիցներու եւ բարեկամներու: Տան կարգի կրօնական արարողութենէն ետք, խօսք առաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ հոգեշնորհ Տ. Խաթակ Մ. Վրդ. Յակոբեան եւ աւետարանական պատշաճ բնաբանով ներկայացուց հանգուցեալ ընկերոջ ազգային, կրօնական եւ հանրային գործունէութիւնը՝ վեր առնելով անոր մարդկային եւ ազգային բարեմասնութիւնները:

Թաղման տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ 13 Յուլիս 1990, կէսօրէ առաջ ժամը 11ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ յուղարկաւորութեան երկար թափօրը, հանգուցեալ ընկերոջ եռագոյնով ծածկը՝ Լաճ դազաղը հասցուց Նորթ Եորքի գերեզմանատունը, ու Հ.Յ. Դաշնակցութեան Գանատայի Կեդրոնական Կոմիտէի, «Ս. Թէհլիրեան» Կոմիտէութեան, ինչպէս նաեւ Հայ Կեդրոնէն ներս գործող միութիւններու եւ կազմակերպութիւններու անունով խօսք առաւ ընկեր Յակոբ Ճանպազեան, որ ի միջի այլոց ըսաւ.

«Դժուար է նման պարագաներուն միութեամբական խօսքեր փնտռել, մանաւանդ երբ մեզմէ առյաւէտ կը բաժնուին դաղափարակից, հայրենասէր եւ ազգապահպանման համար պայքարող ու զոհուող ընկերներ, որոնք իրենց բոլոր կարողութիւնները ի սպաս դրած են ի շահ մեր կազմակերպութեան եւ հայ ժողովուրդին:

«Այսօր Հայ Կեդրոնի Երէցներու Ընկերակցութիւնն ալ կ'ողբայ կորուստը իր հիմնադիր անդամներէն եւ տասնըմէկ տարիներու նուիրեալ ատենապետին: Ան միշտ պատնէշի վրայ էր եւ իրեն վստահուած բոլոր պարտակալութիւնները կատարեց անսակարկ նուիրումով եւ զոհաբերութեամբ:

«Միբելի ընկեր, կը բաժնուիս մեզմէ առյաւէտ, սակայն վստահ եղիր որ քու դաղափարակից ընկերներդ պիտի չվարանին շարունակել այն սրբազան գործը, որ շարունակ մտքիդ եւ մտածումներուդ մէջ էր եւ անոնց մտահոգութիւնները ցաւ ու տառապանք կը պատճառէին հոգիիդ: Հոն քու ունեցած իտէալներդ ու իղձերդ կը դառնան իրականութիւն»:

Ապա, ընկերներուն կողմէ երգուած «Վերքերով Լի» յեղափոխական երգին ստեղծած թախիծի կշռոյթով հողին յանձնուեցաւ մեր թանկագին ընկերոջ անշունչ մարմինը:

Թաղումէն ետք, հանգուցեալ ընկերոջ յիշատակը յարգող շուրջ 150 հայորդիներ ներկայ եղան Հայ Երէցներու Ընկերակցութեան կողմէ տրուած հոգեճաշին, ուր խօսք առաւ հանգուցեալին որդիներէն Յակոբ Կէտիկեան եւ կարգաց «Անդրանիկ եւ Ալիս Կէտիկեան», բարերական Փոնտի մը հաստատումին հաղորդագրութիւնը, զոր կը հրատարակենք առանձին:

Սիբելի ընկեր Կէտիկեան, սիբելի «ազգապետ», քեզ միշտ կոչած եմ «ազգապետ», սակայն, դուն խոնարհութեամբ մերժած ես այդ տիտղոսը: Սակայն ես կրկին կը կոչեմ քեզ «ազգապետ», որովհետեւ դուն Ս. Թէհլիրեան Կոմիտէութեան ամէնէն վաստակաւոր ընկերներէն մէկն էիր, ուղղամիտ եւ պարտաճանաչ եւ ամբողջ 58 տարիներ, որպէս կարգապահ, հաւատարիմ եւ

անձնագրո՛ւ կուսակցական ծառայեցիր հայ ժողովուրդին՝ Հ.Յ. Դաշնակցու-
թեան ճամբով:

«Ազգապետ», որովհետեւ, գլխաւորութեամբ քու ջանքերով եւ հետա-
պընդումներով հիմնուեցաւ Հայ Կեդրոնի Երէջներու Ընկերակցութիւնը եւ
11 տարիներ վայելելով վարչութեան ատենապետի պատասխանատու պաշտօնը,
ընկերակցութիւնը հասցուցիր այսօրուան բարգաւաճ վիճակին՝ 145 անդամ-
անդամուհիներով, որոնք միշտ պատրաստ եղած են իրենց նիւթական եւ բա-
րոյական օժանդակութիւնը բերելու Հայ Կեդրոնի բոլոր ծրագիրներուն իրա-
կանացման եւ հայ դպրոցի գոյատեւման եւ եկեղեցաշինութեան:

Հալէպէն ի վեր ճանչցած եմ քեզ, միշտ գործունեայ, միշտ պատնէշի
վրայ, պատրաստ ժամանակը, հանգիստը եւ կարողութիւնդ տրամադրելու
հանրային եւ կուսակցական պարտականութիւններու:

Ընտանիքէդ աւելի մտահոգուած էիր հայրենական, ազգային, կուսակ-
ցական, միութենական եւ եկեղեցական հարցերով: Շաբաթը քանի մը անգամ
կը հեռաձայնէիր կամ անձամբ կ'այցելէիր, կարծիքներու փոխանակութիւն
ունենալու ձեռնարկներու առընչութեամբ, խօսակցութիւններուդ մեծամաս-
նութիւնը ազգով կը սկսէր եւ հայրենիքով կը վերջանար:

Տարիքի բերմամբ հրաժարեցար «Դրօշակ»ի եւ «Բագին»ի ներկայա-
ցուցչութիւններէն եւ այդ պարտականութիւնը փոխանցեցիր ինծի եւ տակա-
ւին կը ծրագրէիր ազգապետութիւնն ալ փոխանցել, որուն ես երբեք արժանի
չեմ եղած:

Կեանքը իր ճամբով եւ մահը իր կեանքով կ'ըսուի: Հաւանաբար ճիշտ է:
Սակայն մահն ալ յարմար ժամանակին պէտք է գայ:

Ընկեր Կէտիկեանի արժանաւոր եւ բազմաշնոր գաւազները՝ Արմէն,
Յակոբ եւ Անի, ինչպէս նաեւ անոնց տիկիները եւ ամուսինը, իրենց ծնողքին
ամուսնութեան 50րդ տարեդարձին առթիւ կազմակերպած էին մեծ անակըն-
կալ մը: Ամիսներ առաջ պատրաստութիւններու ձեռնարկած էին, հրաւիրա-
գիրներ դրկած մեծ թիւով հրաւիրեալներու, որ տեղի պիտի ունենար Շաբաթ,
14 Յուլիս 1990ին: Ամէն մարդ անհամբերութեամբ կը սպասէր այդ երջանիկ
օրուան: Սակայն, Ուրբաթը Շաբաթէն առաջ եկաւ եւ միայն չորս օր առաջ,
յոբէլեարը մեկնեցաւ այս աշխարհէն: Միշտ կ'աճապարէր: Իր բոլոր գործերը
աճապարանքով կը վերջացնէր: Աճապարանքը հաւանաբար օգտակար է եւ տը-
րամաբանական հանրային եւ անձնական գործերուն մէջ, բայց, մահանալու ա-
ճապարելը սխալ էր, որովհետեւ չկրցաւ հաշուել, որ անգին բազմահարիւր
հարազատներ եւ բարեկամներ հոգեկան ինչպէս վիշտով պիտի պատրուրուէին
այս անտեղի աճապարանքին պատճառով:

Սիրելի՛ ազգապետ, այլեւս իրականութիւն է, արդէն իսկ մեկնեցար,
երկրաւոր կեանքէն հեռացար՝ միանալու համար ննջեցեալ քու հարազատնե-
րուն եւ գաղափարակից ընկերներուն: Վստահ եմ, հոն ալ հանգիստ պիտի չը-
նըստիս, պիտի մնաս խռովայոյզ՝ երբ վատ լուրեր ստանաս Հայաստանէն, Ղա-
րաբաղէն եւ ազգային կեանքէն, սակայն պիտի ուրախանաս եւ հրճուիս տես-
նելով, որ սկսած գործերդ շարունակողներ կան, նոր նուաճումներ կ'արձա-
նագրուին հայկական ճակատի վրայ, սակայն, մէկ բան կ'ուզեմ որ քեզի հա-

մար յստակ ըլլայ. քու անունդ եւ յիշատակդ մշտակենդան եւ անթառամ պիտի մնայ մեր բոլորին սրտերուն մէջ:

Լոյս մշտնջենի ազգիդ եւ եկեղեցիիդ համար տոգորած քու բարի եւ աստուածահաճոյ հոգիիդ, իմ սիրելի՛, շատ սիրելի եւ թանկագին ընկեր Անդրանիկ:

«ՅՈՐԻՉՈՆ»
1990

ԶՈՒԱՐԹ ՇԷՀԻՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ համայնքը եւ Հայ Օգնութեան Միութեան «Ռուբինա» մասնաճիւղը կորսնցուցին իրենց ամէնէն նուիրեալ եւ հաւատաւոր անդամներէն տիկին Զուարթ Շէհրեանը Կիրակի, 25 Սեպտեմբեր 1994, կէսօրէ առաջ ժամը 11:30ին, Թորոնթոյի Սանիպրուք հիւանդանոցին մէջ, խոր սուգի մատնելով իր ընտանիքի անդամները, ազգականները, միութենական ընկերուհիները եւ բարեկամները:

Տան կարգը տեղի ունեցաւ Զորեքշաբթի, 28 Սեպտեմբեր 1994, երեկոյեան ժամը 7-9, Համֆրի մեռելատան մէջ: Կրօնական արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Գեր. Տ. Խաթակ Ծ. Վրդ. Յակոբեան, Արժ. Տ. Վահան Ա. Քհն. Ղազարեան, Մոնթրէալի Ս. Յակոբ Հայց. Առաք. եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Արմէն Ա. Քհն. Իշխանեան եւ Հարաւային Օնթարիոյի Ս. Նշան Հայց. Առաք. եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Հրանդ Քհն. Երէցեան:

Հանգուցեալի կենսագրութիւնը հայերէն եւ անգլերէն լեզուներով կարդաց տիկին Նուարդ Պետրոսեան, իսկ Խաթակ Ծ. Վրդ. Յակոբեան քրիստոնէական հասկացողութեամբ մեկնաբանեց մահուան իրականութիւնը, անդրադառնալով տիկին Շէհրեանի միութենական, ազգային եւ եկեղեցասիրական գործունէութեան, մեծապէս գնահատելով անոր անսակարկ զոհաբերութիւնները:

Յուզարկաւորութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 29 Սեպտեմբեր 1994, կէսօրուան ժամը 12ին, Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ, մասնակցութեամբ վերոյիշեալ եկեղեցականներուն, Վեր. Եսայի Սարմազեանին եւ եկեղեցւոյ դպրաց դասին:

Այս առթիւ, Հայր Խաթակ կարդաց Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան թեմի Բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի ցաւակցական գրութիւնը:

Եկեղեցական արարողութենէն ետք, յուզարկաւորներու հոծ բազմութիւնը բազմաթիւ ինքնաշարժներով ուղղուեցաւ Եորք գերեզմանատուն, ուր տեղի ունեցաւ թաղմանական կարգը, որմէ ետք, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ կանանց յանձնախումբին կողմէ հոգեճաշ տրուեցաւ եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ:

Սրտի խօսքով հանդէս եկաւ Մոնթրէալի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Արմէն Ա. Քհն. Իշխանեան, որ իր խօսքին մէջ անդրադարձաւ հանգուցեալի արժանիքներուն եւ յատկապէս իրեն հանդէպ ցոյց տուած անոր հոգածութեան եւ վերաբերմունքին, անցող քսանէ աւելի տարիներու ընթացքին:

Հանգուցեալ Զուարթ Շէհրեան ծնած է Հալէպ 1938ին, վաստակաւոր դաշնակցական Գէորգ եւ Մարի Պարսումեան ընտանիքին մէջ: Հայեցի կրթութիւնն ու դաստիարակութիւնը ստացած է Հալէպի Ազգ. Հայկազեան Վարժարանի եւ Քարէն Եփփէ ձեմարանին մէջ, իսկ ազգային եւ կրօնաբարոյական ուսումը ստացած է Հայաստանեայց եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներու

Հալիսի կեդրոն բաժնին մէջ, որուն 12 տարեշրջանները բոլորելէ ետք, 1955ին շրջանաւարտ եղած է եւ արժանացած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին կողմէ ստորագրուած վկայականին:

1964ին, բախտը կ'ունենայ ամուսնանալու նախապէս Հալիսին եւ Թորոնթօ հաստատուած Բարեշ. Մանուէլ Ա. Սարկաւազ Շէհիրեանի հետ եւ կը բախտաւորուին երկու մանչ զաւակներով՝ Վարդան եւ Հրաչ:

Թորոնթօ հաստատուելէ ետք կը հետեւի հաշուապահական դասընթացքներու եւ կը վկայուելէ ետք կը լծուի աշխատանքի, որ կը տաւէ մինչեւ իր երկրորդ զաւակին ծնունդը:

Հանգուցեալ Զուարթ, իր ընտանեկան պարտականութիւններուն առնթեր, միշտ ժամանակ կը ստեղծէ ծառայելու Հայ Օգնութեան Միութեան Թորոնթոյի մասնաճիւղին, որպէս վարչական եւ ժրջան անդամ, եւ մանկութենէն ստացած իր հայեցի դաստիարակութենէն ձայնին ունկընդիր՝ միշտ օգնած եւ օժանդակած է Թորոնթօ հաստատուող հայ ընտանիքներուն:

Տարիներով, իր ամուսնոյն հետ միասին, իրենց մասնակցութիւնը բերած են Մ. Նահանգներու Նիակարա Ֆոլզ քաղաքի Ս. Յակոբ եկեղեցւոյ ժամերգութիւններուն եւ պատարագներուն, անտեսելով Գանատական ցուրտի եւ ձմրան արհաւիրքները:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ կազմութեան առաջին օրէն՝ 10 Ապրիլ 1983ին մինչեւ իր ունեցած անիծեալ հիւանդութեան վատթարացումը, ան հաւատարմօրէն ծառայեց եկեղեցիին, տասը տարիներ առանձին պատրաստելով եկեղեցւոյ մասը պսակներու առթիւ եկեղեցին ծաղիկները, նիւթական որոշ եկամուտ մը ապահովելով եկեղեցւոյ:

Զուարթ Շէհիրեանի եկեղեցասիրութիւնը չափ ու սահման չունէր: Ան զարմանալիօրէն ժամանակ կը գտնէր կարելու եկեղեցւոյ դպիր-դպրուհիներուն շապիկները, նուիրելով զանոնք եկեղեցւոյ: Անոր կարելու արուեստին եւ ճաշակին արդիւնքն են Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւին, թեմիս Առաջնորդին, Գեմպրիճի Ս. Նշան եկեղեցւոյ հովիւին եւ այլ եկեղեցականներու պատարագի զգեստները:

Արժէ յիշել նաեւ, Շէհիրեան ընտանիքի բազմաթիւ նուիրատուութիւններու շարքին, Կիպրոսէն յատկապէս ապսպրուած Ս. Աստուածածին եկեղեցւոյ Կաթողիկէն՝ Առաջնորդ Սրբազանի, Վեհափառ Կաթողիկոսի եւ բարձրաստիճան հիւր եկեղեցականներու կողմէ գործածելի նստատեղին:

Հանգուցեալ Զուարթ Շէհիրեանը ճանչցած եմ երբ ան կ'աշակերտէր Հալիսի Հայց. Առաք. Եկեղեցւոյ կիրակնօրեայ վարժարանը, որուն տեսչութիւնը կը վարէի այդ օրերուն: Կարգապահ, յարատեւող եւ պարկեշտ աշակերտուհի մըն էր, արժանացած իր ուսուցչուհիներուն ջերմ գնահատանքին:

1975ին, իմ կարգիս Թորոնթօ հաստատուելով, կրկին ականատես եղայ Զուարթին անխոնջ գործունէութեան՝ ազգային եւ եկեղեցական ասպարէզներուն մէջ: Հինէն ի վեր, իր եղբայրներուն՝ Արթուրին եւ Ռուբէնին հետ իմ ունեցած բարեկամութիւնը շարունակուեցաւ Զուարթին միջոցաւ եւ Շէհիրեաններու անկեղծ մտերմութեամբ:

Զուարթին հիւրասիրութիւնը չափ ու սահման չէր ճանչնար: Միշտ ճաշի հրաւերներ ունէր: Որպէս ականդապաշտ Հայ ընտանիք իր սեղանէն հիւրե-

րը անպակաս էին: Այդ պատիւը մեր ընտանիքը նաեւ արժանացած է միշտ-նոյնիսկ իր հիւանդութեան ծանր ու տառապագին շրջաններուն:

Անխիղճ հիւանդութիւնը իրեն այցելեց 1989 Յունուարին: Ան ամբողջ հինգ տարիներ անխախտ ու զօրաւոր հաւատքով պայքարեցաւ անողոք հիւանդութեան դէմ: Քանիցս յաղթեց, ճակատամարտներ չահեցաւ, բայց ի վերջոյ, պատերազմը կորսնցուց: Գիտական ներկայ բոլոր միջոցները անկարող եղան փրկել զայն քաղցկեղի ահռելի ժիրաններէն եւ ան ի վերջոյ մեկնեցաւ այս աշխարհէն, քաղցր ու անոյշ անուն մը ձգելով զինք ճանչցողներուն սրբտին մէջ:

Հակառակ իր հիւանդագին վիճակին, բախտը ունեցաւ տեսնելու իր անդրանիկ զաւկին՝ Վարդանի Ս. Պսակը: Այդ օրը մեծապէս ուրախ էր: Պարեց իր սիրելի ամուսնոյն հետ, երգեց եւ հրճուեցաւ փառք տալով Աստուծոյ, որ արժանացաւ այդ ուրախ օրուան:

Իսկ վերջին օրերուն, հիւանդանոցէն յատուկ արտօնութեամբ, քանի մը ժամուան համար դուրս գալով, ներկայ եղաւ իր կրտսեր որդւոյն՝ Հրաչին կողմէ կազմակերպուած եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովանաւորութիւնը վայելող երիտասարդ արուեստագէտներու երաժշտական ելոյթին: Ան հիւանդակառքին վրայ նստած, յուզումէն կու լար, տեսնելով իր զաւկին յաջողութիւնը, որպէս ջութակահար, դաշնակահար եւ յօրինող...:

Սիրելի՛ Զուարթ, այս աշխարհէն մարմնապէս բաժանումիդ քառասունքին առթիւ ի խորոց սրտէ արձակուած խօսքերս ընդունէ որպէս ընտանիքիս եւ իմ կողմէ քեզի հանդէպ մեր ունեցած անկեղծ սիրոյ արտայայտութիւն: Կ'ուզենք քեզի յայտնել, որ երբեք, երբեք պիտի չմոռնանք քեզ եւ յիշատակդ անթառամ պիտի մնայ մեր սրտերուն մէջ:

Հանգիստ յոգնաբեկ ոսկորներուդ: Լոյս մշտնջենի տառապած հոգիիդ:

«ՀՈՐԻՉՈՆ»
1994

Ի ՅՈՒՇ ՀԱՆՁԻՍՑ՝ ԱՐԺ. Կ. ՎԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ՂԱԶԱՐԵԱՆԻ

Ուրբաթ, 3 Մարտ 1995ի առաւօտեան Հայ Կեդրոն մուտքս դիմաւորուեցաւ ցաւալի բօթով մը, «Ոչ եւս է Տէր Վահան Ա. ՔՀՆՅ. Ղազարեան»: Ան իր երկրաւոր կեանքէն հրաժեշտ առած է Հինգշաբթի կէս գիշերէն ետք ժամը 2ին, Նորթ Եորք հիւանդանոցին մէջ, ուր կը մնար իր անցուցած վերջին տագնապին հետեւանքով:

Տէր Վահան վերջին մէկ-երկու տարիներու ընթացքին կը տառապէր ներքին կարգ մը հիւանդութիւններէ, սակայն, քաջաբար կը դիմադրէր այդ բոլոր անհանգստութիւններուն, դեղերու օգնութեամբ մնալով միշտ պատնէշի վրայ, իր ծառայութիւնը բերելով Հայաստանեայց եկեղեցիի բոլոր զաւակներուն՝ որպէս հաւատաւոր եւ խոհուն եկեղեցական: Խոնարհ, համեստ եւ ազնիւ բնաւորութեամբ սիրուած էր զինք ճանչցող բոլոր հաւատացեալներէն՝ Հայաստանեայց եկեղեցիին իր 45 տարուան ծառայութեան ընթացքին: Իր վախճանումով Հայաստանեայց եկեղեցին կը կորսնցնէ հաւատաւոր եւ վաստակաւոր եկեղեցական մը, որուն յիշատակը միշտ անթառամ պիտի մնայ մեր սրտերուն մէջ:

Հանգուցեալ Տէր Հօր տան կարգը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 7 Մարտ 1995, երեկոյեան ժամը 8ին, Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ դասը առաջնորդուեցաւ: Ծուրջ 400 հաւատացեալներ սրտի անհուն յուզումով հետեւեցան Ս. Աստուածածնի եկեղեցւոյ հովիւ Գեր. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեանի, Հարաւային Օնթարիոյի Ս. Նշան եկեղեցւոյ եւ Լաւալի Ս. Գէորգ եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Հրանդ քհնյ. Երէջեանի, Հայ Կաթողիկէ համայնքի հոգեւոր հովիւ Գերյարգելի Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեանի եւ Հայ Աւետարանական համայնքի հոգեւոր հովիւ Վեր. Եսայի Սարմազեանի կողմէ կատարուող տան կարգի արարողութեան:

Այս առթիւ խօսք առաւ Գեր. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան, որ խօսեցաւ հանգուցեալ Տէր Վահանին երկրաւոր կեանքին եւ հաւատաւոր նուիրումին Հայաստանեայց եկեղեցւոյ ծառայութեան գործին:

Տէր Վահանին վերջին օժումը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 8 Մարտ 1995ին, Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ, որուն ներկայ գտնուեցան մեծ թիւով բարեպաշտ ազգայիններ, իրենց վերջին յարգանքը մատուցանելու մեզմէ Ֆիզիքապէս հեռացող անձնուէր եկեղեցականին, որ հակառակ հանգստեան կոչուած ըլլալուն եւ առողջական տկար վիճակին, միշտ պատրաստ էր մեկնելու մինչեւ Նիակարա Ֆուլզ (Մ.Ն.), այդտեղի բուռ մը հայութեան հոգեւոր սնունդ ջամբելու համար, ինչպէս նաեւ Թորոնթոյի մէջ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւին բացակայութեան պատարագելու եւ խորհուրդներ կատարելու:

Օրուան պատարագիչն էր Պոսթընէն յատկապէս ժամանած Տ. Թորգոմ Ա. քհնյ. Յակոբեան: Տէր Հօր օժման արարողութեան նախագահեց Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ բարձր. Տ. Տաթեւ Արք. Սարգիսեան եւ մասնակցութեամբ Գեր. Տ. Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան, Արժ. Տ. Հրանդ քհնյ. Ե-

րէցեանի եւ Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Շնորհք քհնյ. Տէօվլէթեանի:

Պատարագի ընթացքին Սրբազան հայրը Ս. Միւռնոսով օծեց վախճանեալ Տէր Հօր ճակատը եւ ձեռքերը՝ երգուած շարականներու հոգեպարար միջնորդութիւն մէջ:

Այս առիթով Սրբազանը խօսք առնելով խօսեցաւ եկեղեցականութեան ծառայութեան նուիրուած Տէր Վահան քահանային երկարաւոր կեանքի ընթացքին բարի պատերազմը յաջողապէս մղած ըլլալու իրականութեան եւ աւստր հոգիին երկնային արքայութեան արժանանալու:

Պատարագի վերջաւորութեան, բոլոր եկեղեցականներն ու ներկայ ժողովուրդը կարգով համբուրեցին Տէր Հօր ճակատը ու աջը՝ որպէս վերջին հրաժեշտ եւ յարգանքի արտայայտութիւն:

Տէր Հօր դագաղը գոցուելէ ետք, յուղարկաւորները ուղուեցան Եորք գերեզմանոցը, ուր եկեղեցական արարողութիւններով հողին յանձնուեցաւ վաստակաբեկ Տէր հայրը՝ իր սրտին պէս սպիտակ գիշերը իջած ձիւնին մաքրութիւնով:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Կանանց օժանդակ յանձնախումբին կողմէ պատրաստուած հոգեճաշին ներկայ եղան շուրջ 200 ազգայիններ:

Սրբազանի կողմէ սեղանի օրհնութենէն ետք տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն, որմէ ետք խօսք առաւ Գեր. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան եւ շնորհակալութիւն յայտնեց եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Կանանց յանձնախումբին, Հայ Կեդրոնին, Տաթեւ Սրբազանին եւ բոլոր եկեղեցականներուն, իրենց ներկայութեան համար: Ապա, կարդաց Տէր Վահանին կենսագրականը:

Արժանապատիւ Տէր Վահան Ա. Քահանայ Ղազարեան, աւագանի անունով Մկրտիչ՝ ծնած է Մալաթիա, Թուրքիա, 1922 Ապրիլ 5ին եւ մկրտուած՝ Խարբերդ, ձեռամբ Տէր Նշան քահանայ Մարգարեանի:

Տակաւին մանուկ, Քեմալական Թուրքիոյ վերջին Հայաստան խժուրժութիւններուն հետեւանքով ծնողքը կը փոխադրուի Հալէպ եւ շատ չանցած՝ ձէզիրէի Արաբ-Բունար Հայակերտ գիւղաքաղաքը, ուր տեղւոյն Ազգային Խորհրդի երկուստեք վարժարանին մէջ կը ստանայ իր նախնական կրթութիւնը:

Փոքր տարիքին կոչում կը գգայ եկեղեցականութեան: Պատանի Մկրտտիչ եկեղեցական բոլոր արարողութիւններն ու ծիսակատարութիւնները կը սորվի ուղղակի իր հօրմէն, ծանօթանալով նաեւ Հայկական ձայնագրութեան՝ որուն հմուտ էր իր հայրը:

1943-1949 կը ծառայէ տեղւոյն Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

1943ին կ'ամուսնանայ Մարի Յակոբեանի հետ եւ կը բախտաւորուին երեք շնորհալի գաւակներով՝ Յարութիւն, Քրիստինէ, եւ Վարդուհի:

1951ին որպէս ուսանող կ'ընդունուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանքի քահանայ կը ձեռնադրուի վերատեսուչ Գեր. Տ. Դերենիկ Եպիսկոպոս Փօլատեանի կողմէ, նոյն տարուան Յունիսի 24ին:

Նորընծայ Տէր Վահան Ղազարեան տարի մը եւս կը շարունակէ քահանայից դասարանի մասնաւոր դասընթացքը, միաժամանակ քահանայագործելով Կաթողիկոսարանի տրամադրութեան ներքեւ:

1952ին կը նշանակուի հոգեւոր հովիւ Պէյրուլի Քարմ-էլ-Չէյթուն Հայաշէն թաղամասին եւ 30 երկար տարիներ կը ծառայէ շրջանին՝ ձեռնհասօրէն մատակարարելով տեղւոյն ազգային ու եկեղեցական կարիքները շրջանի պատուարժան թաղական խորհուրդի հետ համախորհուրդ:

1952-1961 որպէս կրօնի դասատու Հայաշէն Ազգային Թորգոմեան երկսեռ վարժարանի, բարձրագոյն կարգերուն կը դասաւանդէ կրօնագիտութիւն:

Լիբանանահայոց օրուան Առաջնորդ՝ Տ. Տաճատ Արքեպիսկոպոս խընդրանքին վրայ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Խորէն Ա. Վեհափառ Կաթողիկոսը, գնահատելով Տէր Վահանի ազգային եկեղեցական գործունէութիւնը, կը շնորհէ անոր լանջախաչ կրելու իրաւունք, 12 Դեկտեմբեր 1964ին:

Ան Հայաշէնի հայոց իր ծառայութիւնը կը շարունակէ մինչեւ 1979 թուի աւարտը:

Այս միջոցին, դարձեալ, Գերշ. Տ. Տաճատ Արք. Ուրֆալեանի խնդրանքով եւ հաստատումով, Լիբանանահայոց նորընտիր Առաջնորդ Գեր. Տ. Արամ Արք. Քէշիշեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի սրբատառ կոնդակով, Սեպտեմբեր 2, 1978ին իրեն կը շնորհուի Աւագ քահանայութեան տիտղոս եւ նոյն առիթով ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք:

1980 Մարտին, Արամ սրբազանի կարգադրութեամբ, Հայաշէն թաղամասի ծառայութեան կը փոխադրուի Ճիւնիի Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ ծառայութեան՝ դառնալով հոգեւոր հովիւր Ճիւնիի, Ճիւնիի եւ Անթիլիասի հայութեան:

1982ի ամրան, երբ Լիբանանի կացութեան պատճառով իր ընտանիքը ցիրուցան դարձած էր, ան կը պարտաւորուի թողուլ Լիբանանը եւ իր ազատ ծառայութիւնները կը բերէ Արեւելեան Ամերիկայի թեմին, հոն ուր կարիքը կը զգացուէր:

1988ի սկզբնաւորութեան, ան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի կողմէ կը նշանակուի Գանատայի Գէմպրիճ քաղաքի եւ Հարաւային Օնթարիոյի նորակազմ Ս. Նշան եկեղեցւոյ հոգեւոր հովիւր, ուր նուիրումով կը ծառայէ մինչեւ 1989ի վախճանը, շուրջ ութը տարի, երբ նկատի ունենալով իր վատթարացող առողջութիւնը, ան կը խնդրէ հանգստեան կոչուիլ հովուական ծառայութեան ամէնօրեայ պարտաւորութիւններէն:

Առաջնորդ Սրբազան հայրը, ընդառաջելով սոյն փափաքին, զինք ազատ կը կացուցանէ այդ պարտականութէն ու զինք կը նշանակէ Նիակարա Փոլզ շրջանի հայութեան այցելու հովուութեան պաշտօնին՝ զոր վարեց սիրով եւ նուիրումով՝ ի հեճուկս իր վատ առողջութեան եւ տկարացող ուժերուն, մինչեւ իր վախճանման նախորդող քանի մը շաբաթները, երբ հիւժեալ առողջութեամբ, պարտաւորուեցաւ փոխադրուիլ հիւանդանոց:

Նոյն այս ժամանակաշրջանին, ան իր ազատ բոլոր ժամերուն սիրով օգտակար հանդիսացաւ նաեւ Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ կիրակնօրեայ արարողութեանց, հոգեւոր կարիքներուն եւ յատկապէս ծերանոցի հայ բնակիչներուն ամսական այցելութիւններով եւ Ս. Պատարագի մատուցմամբ:

Արժանապատիւ եւ բարի հովիւր իր երկաւոր կեանքին վերջին շաբաթները, հիւժած սրտով անցուց Նորթ Եորք հիւանդանոցին մէջ, բժիշկներ-

րու եւ յիսուն տարիներու իր նուիրեալ կողակիցին խնամքներուն ենթակայ:
Խորհուրդ մարդկան կամք Աստուծոյ...:
Հակառակ բոլոր ճիգերուն եւ խնամքներուն, Տէրը զայն իր հանգըստեանը կոչեց 1995 Մարտ 3ի լուսաբացին:
Բոլորս կը սգանք իր կորուստը:
Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:
Խաղաղութիւնը եւ յաւիտենական լոյս իր հոգիին:

*
* *

Հոգեճաշի ընթացքին Հայր Սուրբը, Տէր Հօր հարազատներուն փոխանցեց Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհազարդ Կաթողիկոս Գարեգին Բ.ի, Մ. Նահանգներուն Արեւելեան թեմի եւ Գանատայի առաջնորդ բարձր. Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի, երկու թեմերու ազգային վարչութիւններու, եկեղեցիներու հոգեւոր հովիւներու ցաւակցութիւնները, ինչպէս նաեւ Գանատայի էջմիածնական թեմի առաջնորդ Բարձր. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի ցաւակցութիւնը:

Այս առթիւ խօսք առին Բարձր. Տ. Տաթեւ Արք. Սարգիսեան, Արժ. Տ. Թորգոմ Ա. քհնյ. Յակոբեան, Արժ. Տ. Հրանդ քհնյ. Երէցեան եւ Պրն. Աբգար Միրաքեան, որոնք խօսեցան վախճանեալ Տէր Հօր հետ իրենց ունեցած յարաբերութիւններուն, յիշատակներուն եւ յուշերուն, միշտ գնահատելով հանգուցեալ Տէր Հօր մարդկային եւ ազգային հոգեւորական արժէքները:

Խօսք առաւ Գեր. Տ. Խաժակ Ծ. Վրդ. Յակոբեան եւ Տէր Հօր հարազատներուն անունով շնորհակալութիւն յայտնեց Տաթեւ Սրբազանին, Տէր Թորգոմին, Տէր Հրանդին, Տէր Շնորհքին, Գեր. Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեանին, վեր. Եսայի Սարմազեանին, որոնք սիրով եկան եւ իրենց մասնակցութիւնը բերին իրենց սիրելի օժման եւ թաղման արարողութիւններուն:

Հայր սուրբը շնորհակալութիւն յայտնեց նաեւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբաժնութեան, դպրաց դասին եւ կանանց յանձնախումբին, որոնք ազնուաբար բարեհաճեցան հոգեճաշ կազմակերպել սիրելի Տէր Հօր յիշատակին, շնորհակալութիւն յայտնեց նաեւ բոլոր ներկաներուն, որոնք իրենց ներկայութեամբ վշտակից դարձան իրենց կորուստին:

Հոգեճաշը փակուեցաւ սրբազան հօր աղօթքով:

«ՅՈՐԻՉՈՆ»
17 Ապրիլ 1995

**Ի ՅՈՒՇ
ԴԱՐ ՄԸ ՆՈՒԻՐՈՒՄ
ՅՈՎԱՄԷՓ ՕՆԱՆԵԱՆԻ (ԱՇՈՒՂ ՅՈՎՆԱՆԻ) ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Վերջին մէկ տարին քալելու անկարողութեան մատնուելով, հիւանդանոցի եւ ծերանոցի մէջ պատասպարուելէ ետք, Երկուշաբթի, 28 Օգոստոս 1995, առաւօտեան, «Կրէյս» հիւանդանոցին մէջ, երկրաւոր կեանքէն բաժնուեցաւ հարիւրամեայ Յովսէփ Օնանեան, երթալ միանալու համար իր սիրեցեալ կնոջ Ազնէսին:

Աշուղ Յովնանի, տարիներ առաջ իր կնոջ գերեզմանաքարին վրայ արդէն իսկ գրել տուած էր կնոջ ծննդեան եւ մահուան թուականները, իրենց նրկարները, իր ծննդեան թուականը՝ 1895 եւ բաց ձգած մահուան թուականը, քաջ գիտնալով, որ այդ հեռու չէ, սակայն, Աստուծոյ տնօրինութիւնը ո՞վ գիտէ: Ան տասնեակ մը տարիներ եւս առողջ ու կայտառ ապրեցաւ, իր սազը եւ աշուղական տաղանդը ի սպաս դնելով Թորոնթոնի բոլոր կազմակերպութիւններու ձեռնարկներուն, եթէ հրաւիրուէր իր խօսքը ըսելու:

Աշուղ Յովնանի կնոջ եւ իր գերեզմանաքարին վրայ գրել տուած էր հետեւեալ երկու քառեակները՝ իր ստեղծագործութիւններէն.

Այս տեղ ամէնիմ, միայն ցնջարան,
Ո՛չ խոհանոց ունի, ո՛չ լուացարան,
Երկրի հզօր արքան եւ իր սեւ ծառան,
Սի վերմակի տակ պիտի քնանան:

Եթէ արքայութիւն չկայ,
Պէտք է ստեղծել նրան:
Ա՛խ Ազնէս ճան, քեզպէսները
Գնան հոն հանգստանան:

Հանգուցեալ Աշուղի թաղման կարգը տեղի ունեցաւ Ուրբաթ, 2 Սեպտեմբեր 1995, երեկոյեան ժամը 7-9, Kane մեռելատան մէջ, նեկայութեամբ հոծ թիւով ազգայիններու եւ բարեկամներու, ինչպէս նաեւ հայ երեք համայնքներու հովիւներու:

Կրօնական արարողութիւններէ եւ թաղման կարգէն ետք, խօսք առաւ Հայ Աւետարանական համայնքի հոգեւոր հովիւ Վեր. Եսայի Սարմազեան, խօսելով հանգուցեալի կեանքին եւ նկարագրին մասին, իսկ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գեր. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան խօսեցաւ երկրային կեանքին յաջորդող անխուսափելի մահուան զաղափարին, ընդգծելով ապրուած կեանքին կարեւորութիւնը՝ ընտանեկան, ազգային եւ մարդկային իմաստուն ու ստեղծագործ կեանք մը ապրած ըլլալու իրականութիւն մը աւանդ ձգելով իր ազգականներուն եւ հարազատներուն:

Խօսք առաւ նաեւ հանգուցեալի երկարամեայ սերտ բարեկամ Վարդան Վարդանեան: Պատմեց Աշուղի կեանքին յիշարժան եւ բնորոշիչ դէպքեր եւ պատահարներ, անոր հայրենասէր, ազգասէր ու եկեղեցասէր զգացումներուն

եւ իրենց անցուցած ջերմութիւնով բարախուն ու կենսապարգեւ օրերուն մասին:

Հայրենաբորբ եւ տեսլապաշտ դար մը կեանքին վերջ դնող թաղմանական եկեղեցական կարգը տեղի ունեցաւ Շաբաթ, 2 Սեպտ. 1995, առաւօտեան ժամը 10:30ին, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, մասնակցութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գեր. Եղիա Մ. Վրդ. Գիրէջեանի, Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գեր. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեանի եւ Հայ Աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վեր. Եսայի Սարմազեանի:

Եկեղեցական արարողութենէն ետք խօսք առաւ Գեր. Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան, որ իր զգացումները եւ ցաւակցութիւնները յայտնելէ ետք հանգուցեալի պարագաներուն, մանաւանդ Յրանսայէն այս տխուր առիթով ժամանած հանգուցեալի եղբօր զաւակներուն, տուաւ հանգուցեալի կենսագրութեան ամփոփ գիծերը:

Աւագանի անունով Յովսէփ Օնանեան, ծնած է 15 Հոկտեմբեր 1896ին, Պաթում նահանգի Արտանոյշ գիւղաքաղաքը: Որդին է Յովհաննէսի եւ Աննիկի (ծնեալ Մատոյեան), բազմանդամ ընտանիքի մը չորրորդ զաւակը, իր նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի ծխական դպրոցին մէջ, աշակերտելով Մկրտիչ Քիւրքճեանի եւ Յովսէփ Ռստակեանի: Հազիւ հասած պատանեկան տարիքին, ստիպուած կ'ըլլայ իր երէց եղբայրներուն հետ անցնիլ իրենց հօր վաճառականական գործին:

Առաջին Համաշխարհային պատերազմին (1914-18) երբ թուրքերը կը գրաւեն Արտանոյշ գիւղաքաղաքը ոռուսերուն ձեռքէն, ամբողջ քաղաքը կ'ենթարկեն ջարդի եւ եաթաղանի 17 Դեկտեմբեր 1914ին, միայն տասը տարեկանէն վար փոքրերը խնայելով: Այս ջարդէն Օնանեան բազմանդամ ընտանիքէն հրաչքով կը վերապրին երկու քոյր եւ երեք եղբայր: Այս եաթաղանին կը նահատակուի նաեւ Օնանեան ընտանիքի հօրեղբայրը՝ Աշուղ Կոմիտաս, որուն այրին իր նահատակ ամուսինին քամանչան պատանի Յովսէփին յանձնելով՝ կը մաղթէ որ ան շարունակէ նուագել զայն:

1915 Յունուար 6ի Հայկական Ս. Մննդեան տօնը նոր աշխուժութիւն կը բերէ ոռուսերուն՝ կրկին Արտանոյշ գիւղաքաղաքը գրաւելով:

Իրենց թաքստոցներուն մէջ վերապրող այր մարդիկ դուրս գալով, կեանքը կրկին կը սկսի իր բնականոն ընթացքը առնել մինչեւ 1917 ցարական կայսրութեան անկումը:

1915ի աշնան, կը գինուորագրուի ոռուսական բանակին, մասնակցելով Պիթլիս, Կրկուր սարին տակ, Վանայ ծովի ափերուն, Ախլաթ գիւղի, Շամիրամ գիւղի եւ Մուշի դաշտերու կռիւներուն:

1918ի սկիզբը, կը վերադառնայ իր ծննդավայր Արտանոյշ: Շնորհիւ իր քամանչային կը հրաւիրուի աշուղական երգերով ու նուագով, ուրախ կամ տխուր առիթներու իր մասնակցութիւնը բերել:

Այս շրջանին, երիտասարդ տաղասաց աշուղին մօտ կը զգացուի տաղանդը նուագածութեան առընթեր բանահիւսութիւններ օտար աշուղներուն հետ, ինչպէս ինք կ'երգէ:

Եղեռն ինձ աշուղ շինեց, Ես հատակաց ծորը գացի,
Սպաննուած հորս չոր արիւնը, աղի արցունքով լուացի.
Բոլորտիքս այլազգ էին, թուրք ու թաթար, լազ, վրացի.
Օրը այնպէս կը պահանջէր, նրանց լեզուով երգ երգեցի:

Այդ երգերը կ'երգէր ան թրքերէնով բերանացի, մինչեւ իր արեւմըտեան Եւրոպա՝ Փարիզ, ապա Գանատա՝ Թորոնթօ հաստատուելը, երբ սկսաւ միայն ծննդավայրի բարբառով՝ արեւելեան հայերէնով երգել եւ գրի առնել զանոնք:

1919ին, երբ դաշնակից զօրքերը կը հեռանան Կովկասէն, Հայերը դարձեալ կը մնան Քեմալական լուծին տակ առանձին: Կրկին ջարդ, բանտ եւ եաթաղան: Արտանոյշ կը պարպուի իր բնակիչներէն...:

1922ին, եթէ թուրքերը Իզմիրը յոյն բնակչութենէն պարպելով, իրենց ուրախութեան մէջ գինովցած, յիսուն հոգինոց բանտարկեալներուն մէջէն դուրս կը բերեն Աշուղ Յովնանը՝ իրենց համար նուագելու, անդին քառասուն ինը բանտարկեալները կը ջարդեն: Այսպէս Աշուղ Յովնան կրկին վերապրելով հաւանական եաթաղանէն, իր այրի քրոջ Անուշի եւ անոր չորս զաւակներուն հետ կու գայ Արտուին, ուր արդէն տասնհինգ հազար ազատած էին, եւ հոն կը հաստատուի: Այս միջոցին Խորհրդային հիւպատոսին այցելութիւնը կը միջնորդուի, տասնհինգ հազար հայութիւնը տեղափոխելով Պաթում եւ անկէ Ռուսաստան եւ Հայաստան:

1928ին, Խարքովի մէջ կ'ամուսնանայ իրենց քաղաքացի օրիորդ Ագնէս Ասատուրեանի հետ, ուր կը մնայ մինչեւ 1943 թուականը:

Երկրորդ Համաշխարհային պատերազմին (1939-45), Լեհաստանի վրայով կ'անցնին արեւմտեան Եւրոպա եւ կը հաստատուին Փարիզ, ուր վերստին կը միանան տարիներ առաջ արդէն Փարիզ հաստատուած իրենց եղբօր՝ Սեդրակ Դաւիթեան-Օնանեանի ընտանիքին:

1953 թուականին, տիկին Ագնէսը եղբօր՝ Սեդրակ Ասատուրեանի հրաւէրով, ինը տարի Փարիզ բնակելէ ետք, իրենց վերջնական բնակութիւնը կը հաստատեն Գանատայի Թորոնթօ քաղաքը, ուր արդէն փոքր Հայ գաղութ մը սկսած էր իր ծիւղերը արձակել, առաջին եկեղեցիին դռները բանալով:

Գանատա մշտական բնակութիւն հաստատելէ ետք, դարձեալ ամէն երկու տարին անգամ մը Փարիզ կը վերադառնան եղբօր Սեդրակի եւ եղբօրորդիներուն՝ Ռուբէնի եւ Յովհաննէսի ընտանիքներուն այցելութեան:

Թորոնթոյի մէջ իբր ապրուստ արեւելեան հին գորգերու նորագութեամբ կը զբաղի, միւս կողմէ իր կեանքի առաջին ընկերը՝ քամանչան ձեռքը, ամէն առիթի հանդէս կու գայ գաղութին ձեռնարկներու գեղարուեստական յայտագիրներուն իր մասնակցութեամբ: Ժողովրդային այս գնահատութենէն քաջալերուած, խումբ մը երիտասարդներով եւ իր տիկնոջ Ագնէսի հետ կը կազմակերպեն գաղութին անդրանիկ հայկական երգի եւ պարի համոյթը (1959-1960), ինք՝ իր քամանչայով, տիկինը հայկական պարի ցուցմունքներով, նոր եռանդ, նոր աշխուժութիւն կը բերեն երիտասարդական շարքերուն մէջ:

Երգի եւ պարի խումբը դուրս գալով ազգային շրջանակէն, միջազգային շրջանակներուն՝ ինչպէս քաղաքապետարան, համալսարան, անհատ Գանա-

տական միութիւններ, Հայկական ժողովրդային արուեստը կը ծանօթացնէ:

Մասնաւոր հրաւերներով, իր մասնակցութիւնը բերած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու Ուաշթըրթաուն, Սայթ Նովայի ծննդեան 250-ամեակի, ինչպէս նաեւ Ֆրեզնօ, Սասունցի Դաւիթի նուիրուած հանդիսութիւններուն, քառեակ-նոտանաւորներով:

Առաջին անգամ Մայր Հայրենիք՝ Խորհրդային Հայաստան այցելած է 1967ին, իր տիկնոջ հետ:

Յետագային կրկնակի այցելութիւններով 1970, 1971 եւ 1975ին, թարմացուցած է իր յիշողութիւնները, անցեալի յուշերով եւ ապագայի յոյսերով նոտանաւորներ յորինելով նուիրուած Երեւան-էրեբունիի, Սարգարապատ եւ Վերածնունդ Հայրենիք:

Հաւատարիմ իր աշուղական ժառանգութեան, իր քառեակներու ժողովածուն այնպիսի անձնական եւ հասարակական դերով ունի, որոնց մէջ՝ ունկընդորդը պիտի գտնէ ապրուած կեանքի մը փիլիսոփայութեան պատկերները:

Թաղման կարգէն ետք, յուղարկաւորութեան թափօրը ուղղուեցաւ դէպի Եորք գերեզմանատուն, ուր հողին յանձնուեցաւ Թորոնթոհայկութեան սիրելի Աշուղը:

Թաղումէն ետք, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեճաշ: Ճաշի սպասարկութենէն, կրօնական աղօթքներէն ետք, հանգուցեալի հարազատներուն անունով խօսք առաւ ընկեր Աբգար Միրաքեան, որ Աշուղի երկարամեայ բարեկամն ու մտերիմը եղած է եւ անոր հիւանդութեան եւ անկարութեան շրջանին, սնուցիչը, եւ ըսաւ, թէ հանգուցեալ Աշուղի ունեցած եւ կտակած գումարը իր եղբօր զաւակները 50,000 տոլարի բարձրացնելով որոշած են ստեղծել կրթական Ֆոնտ մը, ի յիշատակ հանգուցեալին, հսկողութեամբ Թորոնթոյի Հայ Կեդրոնին, որուն տոկոսը պիտի յատկացուի Հայ Համալսարանականներու կրթաթոշակին: Ան, շնորհակալութեան խօսք ըրաւ ներկաներուն եւ գնահատեց հանգուցեալի եղբօր զաւակներուն որդիական սէրը՝ հանդէպ իրենց հօրեղբօր, միշտ տէր կանգնելով անոր եւ իրենց օգնութիւնը չզլանալով:

Խօսք առաւ Հ.Յ.Դ. Սողոմոն Թէհլիրեան կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Ռաֆֆի Տէր Պողոսեան, որ գնահատեց Աշուղի եւ իր հանգուցեալ կնոջ Ագնէսի վաստակը եւ ներդրումը Թորոնթոյի Հայ գաղութի կազմաւորման մէջ, երբ գաղութին մէջ երիտասարդական գեղարուեստական խումբեր կը կազմէին եւ ելոյթներ կու տային: Ան գնահատեց նաեւ Աշուղի բանաստեղծական կարողութիւնը եւ հայրենասիրական ոգին, որ լաւապէս արտացոլուած էր «Աշուղն է խօսում» էդիկ Յովսէփեանի կողմէ երաժշտաւորուած բանաստեղծութեան մէջ, ուր Աշուղը կոչ կ'ընէ հայ ժողովուրդին թեւ եւ թիկունք կանգնելու Հայ Դատին, Ղարաբաղին եւ Միացեալ Հայաստանի տեսլականին: Ապա, արտասանեց այդ բանաստեղծութիւնը:

Աշուղի ազգականներէն մէկը կարգաց Աշուղի թրքերէնով գրած բանաստեղծութիւնը, թարգմանելով գայն հայերէնի: Հոս աւելցնենք, որ Աշուղ բազմաթիւ բանաստեղծութիւններ գրած է թրքերէն լեզուով, որովհետեւ լաւապէս կը տիրապետէր այդ լեզուին, ինչպէս Սայթ Նովան:

Ներկաներէն շատեր խօսք առին եւ իրենց ունեցած հաճելի եւ սրտա-
միտ յիշատակները պատմեցին մարմնով կամ տարիքով ծերացած բայց հոգի-
ով միշտ երիտասարդ Աշուղին ընկերային, մարդկային եւ հայրենասիրական
իւրայատկութիւններէն:

Հանգուցեալ Յովսէփ Օնանեան, իր բազմամեայ բեղուն կեանքին ըն-
թացքին իրապէս դարձած էր բոլորին Աշուղ Հայրիկը՝ իր հայրական սիրով:
Ան ներկայութիւն էր բոլոր ձեռնարկներուն, իր քամանչայով եւ բանաստեղ-
ծութիւններով:

Հակառակ կաթողիկէ ծնողքէ սրած ըլլալուն, Աշուղ Յովնանի երբեք
խտրութիւն չունէր հայ եկեղեցիներուն տուած իր հերթական այցելութիւն-
ներուն ընթացքին: Կ'աղօթէր Չերմեռանդութեամբ եւ հայու բարեպաշտու-
թեամբ, իր լուման ձգելով եկեղեցիի գանձանակին:

Յաւերժական խաղաղութիւն եւ լոյս մշտնջենաւոր անոր տառապած
հոգիին:

«ՅՈՐԻՉՈՆ»
23 Գոկտեմբեր 1995

**ՄՐՏԱԳԻՆ ՆԱՄԱԿ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԹԱՆԿԱԳԻՆ
ՔԵՆԵԿԱԼԻՄ՝
ԸՆԿԵՐ ՄԱՐԳԻՍ ԿՈՆՃԵԱՆԻՆ**

Սիրելի՛ քենեկալ,

Օրին, 14 Հոկտեմբեր 1994 թվականի նամակդ ստացանք, որուն անհամբեր կը սպասէինք:

Ինչպէս միշտ, այս անգամ եւս հիացումով կարդացինք գրական սքանչելի ոճով, անթերի հայերէնով եւ բանաստեղծական պատկերներով աւելցուն նամակդ, ուր ազգային, հայրենական եւ ազգականական լուրերու վերջաւորութեան մեզի կը տեղեկացնէիր ձեր ամուսնութեան 50րդ տարեդարձի սոնակատարութիւնը, ղրկելով նաեւ կարգ մը նկարներ՝ ձեր ոսկեայ տարեդարձը պատկերացնող:

Կը գրէիր, թէ դուն եւ Մելինէն (քենիս) ամուսնացած էք 8 Հոկտեմբեր 1944, Հալէպի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ՝ ձեռամբ օրուան առաջնորդ Գեր. Տ. Զարեհ Եպսկ. Փայտալեանի (այագայ Զարեհ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ), Արժ. Տ. Նշան Ա. Քհ. Մարգարեանի, Արժ. Տ. Կորիւն Քհ. Աղաճանեանի եւ Արժ. Տ. Ներսէս Քհ. Պապայեանի:

Ուրեմն, սիրելի քենեկալ, ձեր բարեբաստիկ ամուսնութեան տարեդարձը շնորհաւորելու եւ քու նամակիդ պատշաճօրէն պատասխանելու եւ Լիբանան մեկնող մը փնտռելու ընթացքը քիչ մը երկար տեւեց, Նոր Տարին եւ Ս. Ծնունդը վրայ հասաւ եւ յանկարծ... անսպասելի եւ աներեւակայելի տըխրաթախիծ բօթդ հասաւ մեզի, կողմնակի ուղիներով, կտրելով Միջերկրականեան Թրիփոլի քաղաքէն մինչեւ Թորոնթօ տարածութիւնը՝ դառնաշունչ վիշտով եւ ցաւով տաղելով մեր սրտերը:

Գիտեմ, վերջին քանի մը տարիները կեանքդ նոր ընթացք ունեցաւ: 4 Օգոստոս 1993 նամակովդ կը գրէիր. «Այսօր, կը սկսիմ կեանքիս նոր կարգ ու սարքին կամ դասաւորման մէկ նոր շրջանը: Դէպքերու եւ ժամանակի պարտադրանքին համակերպելով, կամայակամայ, փակեցի եւ ամուսնալուծուեցայ քառասուն հաճելի տարիներու գործընկերոջս, խաղընկերոջս, մտերիմիս, տարտիմանիս եւ բոլոր բարիքներու եւ լաւ բաներու հարազատիս, խոստովանահօրս, ապահարգանի թղթածրարը: Վերջակէտ դրի կեանքի ապահովութիւն պարզեւող խանութիս գործառնութեան: Ի տես այս կացութեան եւ իմ յոգնածութիւնս եւ չկարենալ նախկին կարողութեամբ սիրալիր աշխատանքս, որոշեցի, հանգստեան կոչուելու եւ ահա առաջին օրը»:

Գոցեցիր 40 տարիներ արաբ եւ հայ յաճախորդներու, Պէյրութ-Համա-Հալէպ ճամբորդներու սնունդ հայթայթող խանութդ, ըստ քու բացատրութեամբ առողջական պատճառներով, այն խանութը, ուր 1958-1959 տարիներուն, մեր Թրիփոլի հաստատուած օրերուն, ամէն օր գործէ վերադարձին եւ շաբաթավերջերուն իրարու կը հանդիպէինք, ուր մեր խօսակցութիւններուն եւ խորհրդակցութիւններուն ներկայ կ'ըլլային նաեւ այլ ընկերներ: Դուն որպէս Թրիփոլիի հայութեան նահապետներէն մէկը, ես՝ որպէս կոմիտէի ան-

դամ, բազմաթիւ ազգային եւ քաղաքական հարցեր կը լուծէինք, յաճախ ուրմբակոծումներու աղմուկին եւ սարսափին ունկնդիր: Այդ օրերու Լիբանանի հանրապետութեան նախագահ Շամունի դէմ սկսուած յեղափոխութեան շրջանին:

Սիրելի՛ քենեկալ, ինչպէս կրնամ մոռնալ քու հարազատի վերաբերմունքը այդ տխուր եւ ցաւատանջ օրերուն՝ իմ ընտանիքիս հանդէպ: Քու կապերուդ եւ հնարամտութեանդ հետեւանքով այդ սարսափազդու օրերը դարձուցիր հաճելի եւ տանելի՝ ապահով մթնոլորտի մէջ:

1975ին, մեր Գանատա մեկնումի ճանապարհին, մեր ընտանիքներուն համրուած օրերու հանդիպումը եւ ապա, բաժանումը, ուրախ եւ տխուր յիշատակներ ձգեց մեր մտքի պաստառներուն վրայ, որոնք երբեմն տխուր եւ երբեմն ուրախ բովանդակութեամբ նամակներով, հոգեպէս մեզ իրար կապեցին, ստեղծելով անխորտակելի եղբայրական զգացումներ:

Շուրջ 45 տարիներու մեր ազգականական կապը, որպէս քենեկալ, օրէ օր աւելի սերտացաւ, նկատի ունենալով մեր գաղափարական, ընկերական եւ գրական հասկացողութիւններու մօտիկութիւնը, որոնք արտայայտելու եւ նրկարագրելու համար հատոր կարելի է լեցնել:

Հակառակ մեր բաժանումին, քու նամակներով միշտ քաջալերեցիր իմ ազգային, կրթական եւ գրական աշխատանքներս: Կը յիշեմ քու նամակներուդ մէկուն մէջ հետեւեալ միտքը. «Շարունակէ ծառայել ու ծաւալիլ, քեզի վիճակուած ու բեռցուած պէսպիսի պարտականութեանց, լեռնակոյտ ամբողջութեանց դժուարութիւնները անգոսնելով, մնացիր պատնէշի վրայ, այդ աւետարանած է մեր մեծ, ամենայն հայոց բանաստեղծը՝ «Մարդուն գործն է միշտ անմահ»:

Նաեւ կը գրէիր, հիւանդութեանց մասին: Բոլորս ալ, կամայ-ակամայ բաժնեկից ենք: Բայց երանի անոր որ կը ճակատի քաջութեամբ եւ լուրջութեամբ, կը տառապի, բայց կը շարունակէ հայրենանուէր գործը: Կ'արժէ յիշել հերոսները գրչի, որոնք դալամը ի ձեռին չիջեցան՝ Լ. Շանթ, Վ. Նաւասարդեան, Ս. Վրացեան, Ն. Աղբալեան եւ բազում ուրիշներ:

Նամակներուդ մէջ յաճախ կ'անդրադառնայիր մահուան մասին, Գաբրիէլ հրեշտակին մասին, անշուշտ անոնց միշտ երես դարձնելով:

17 Յունիս 1989 թուակիր նամակով կը գրէիր. «Ունայնութիւն ունայնութեանց: Ամէն ինչ ունայն է» ըսած է Պետրոս առաքեալ:

«Աստուծոյ պատուիրակ Գաբրիէլ մարդաքաղ հրեշտակը, մահուան գերանդին ուսին, նշանախեց ըրած է մեր ճան ճիկարներուն դիրքերը, պաշարած է ամբողջ մեր ամրոցը: Անխոնջ կը հնձէ, առանց սեռի, տարիքի խտրութեան: Կ'ուզէ լեցնել ունայնութեան անյատակ փոսը: Կորնչելի՛ մարմին, միս եւ ոսկոր կռտակելով: Բայց ունայնութեան փոսը չի լեցուիր, ան լոկ հասցէ մըն է ձեւական, սովորական եւ ծանօթ մեր հասկացողութեամբ գերեզման անուանեալ:

«Գաբրիէլ հրեշտակապետը, ի պաշտօնէ գիտակից իր պարտականութեան եւ քաջատեղեակ փոսի ունայնութեան, լիիրաւ իմաստին, կը կատարէ հրահանգուած անախորժ պարտականութիւնը: Գերանդիակիրին դիմադրել կարելի չէ, ինչպէս ըսած է այլ պատկերացումով՝ Օմար Խայամ. «Մահուան

քաշած նետին հանդէպ ամէն վահան անօգուտ է»: Ինծի համար մեծ հարցական մը, արդեօ՞ք Գաբրիէլին քով նախասիրութիւն եւ նախապատուութիւն կայ: Բայց ո՞ւր չէ եղած՝ մեղայ ամենայն մեղաց: Հոգէառ հրեշտակապետը, որ վախճանի բանբերն է եւ Անչափելիին ու Տիեզերականին աշխարհային գործակալը: Մարդ էակին վերջին կայանը փոսն է, մահուան ժամադրավայրը եւ վերջակէտը, ուր անպայման պիտի հասնինք վաղ կամ ուշ: Վազք, արտօրանք, փախուստ, չկամութիւն, վարանք, մէկ եւ նոյն ձեւով, նոյն պատկերով կ'աւարտի, լեցնել փորձելով ունայնութեան փոսը, որ շօշափելի ձեւական դուռն է հանդերձեակին: Այդ ցուրտ ու անկուշտ հողը ցարդ չէ մերժած ոեւէ եկուոր:

«Սիրելիներ, Գերանդին հասաւ նաեւ մեր շատ սիրելի աներոջ՝ Վարդան Տէրտէրեանին: Այն ազգասէր, իրաւ ու քաջ հայր ու հայ, աւանդապահ ազնիւ ու գորովագութ եւ ծառայասէր ծերունիին: Բնաւ չտառապեցաւ, համաձայն իր առօրեայ աղօթքներուն, ոչ ոքի բեռ չեղաւ, վայրկեաններու հարց: Ժգնաժամը եկաւ ու անդարձ տարաւ: Արդար մարդու երանելի մահ: Յիշատակըն արդարներու օրհնեալ թող ըլլայ»:

Այդպէս, սիրելի քենեկալ, 1989 Յունիս 17ի նամակով կը գոված էր մեր սիրելի եւ յարգելի աներոջ մահը, մահուան մասին փիլիսոփայական վերլուծումներ եւ կարծիքներ յայտնելով: Եւ, ո՛վ արարչութիւն, այն արտայայտութիւնները գորս ուղղած էիր մեր աներոջ, որպէս ազգասէր հայ, ընտանիքի հայր եւ բազմաթիւ առաքիլութիւններով օժտուած անձ, որ երբեք չտառապեցաւ եւ բեռ չեղաւ իր շրջապատին եւ յանկարծ, առանց նախապէս իմաց տալու մեկնեցաւ: Սակայն, սիրելիս, քու մեկնումդ անժամանակեայ էր: Դեռ բազմաթիւ յանձնառութիւններ ունէիր ընտանիքիդ, հարազատներուդ եւ ազգիդ հանդէպ: Հո՛ն է մեր ցաւը, որուն հետ անկարելի է հաշտուիլ:

*
**

Քենեկալս, ընկեր Սարգիս Կոնճեան ծնած է 1921, Օգոստոսին, Արաբկիրի շրջանի Մաշկերտ գիւղը՝ Շապին Գարահիսարցի հօրմէ եւ Մաշկերտցի մօրմէ: Հայրը Փրանսական բանակի «Լէժոն Էթրանժէր» բաժնին զինուոր ըլլալուն համար, մօրը հետ կը հաստատուի Հալէպ: Նախնական եւ երկրորդական ուսումը կը ստանայ Հալէպի Հայ Աւետարանական Էմմանուէլ Ուսումնասիրաց եւ Յիսուսեան հայրերու վարժարանները:

Որպէս Փրանսահպատակ կը զինուորագրուի Փրանսական բանակին եւ որպէս «բրովէթէ» (զինուորական ոստիկան) սերժանտ կը ծառայէ Տէր Զօրի մէջ: 8 Հոկտեմբեր 1944ին, կ'ամուսնանայ իր հօր հայրենակից պրն. Վարդան Տէրտէրեանի աղջկան Մելինէին հետ: Սուրիական յեղափոխութենէն քանի մը ամիս առաջ, 1945ի սկիզբները կը փոխադրուի Թրիփոլի: 1945 Մայիսին սկըսած Սուրիական ապստամբութեան հետեւանքով Տէր Զօրի Փրանսական բանակի Փրանսական զինուորները կը ջարդուին, իսկ Սարգիս բախտի բերմամբ կ'ազատի ստոյգ մահէ, Թրիփոլի փոխադրուած ըլլալով:

Թրիփոլի հաստատուելով պաշտօնի կը կոչուի տեղւոյն Նուպարեան վարժարանը եւ որպէս աւագ ուսուցիչ Հայոց Պատմութեան եւ Ֆրանսերէն լեզու կը դասաւանդէ նախակրթարանի վերի դասարաններուն:

Տարիներով հայ մատղաշ սերունդի դաստիարակութեան ծառայելէ ետք, ի վերջոյ կ'որոշէ անձնական գործի ձեռնարկել եւ կ'ունենայ իր խանութիւնը:

Ընկ. Սարգիս Կոնճեան պատանի տարիքէն անդամակցած է Հ.Յ.Դ. պատանեկան շարքերը եւ Հ.Մ.Ը.Մ.ին: Ապա, որպէս կուսակցական, Թրիփոլի մէջ պատասխանատու պաշտօններ վարած է՝ ազգին շահը միշտ գերադասելով սեփական շահերէն:

Երբեք կարելի չէ մոռնալ այն կենսական ծառայութիւնը, որուն յանձն առած էր ան, անտեսելով ամէն վտանգ, Սուրիոյ մէջ փնտռուող դաշնակցական ընկերներու ապահով Լիբանանի սահմանը անցնելով:

Ան ունէր գրական շնորհք եւ գրելու տաղանդ: Յաճախ իրմէ յօդուածներ լոյս կը տեսնէին «Ազդակ» օրաթերթի եւ «Մարգիկ» ամսաթերթի մէջ:

Մառախապէս, նախանաձախնդիր ազգային եւ մշակութային մեր արժէքներուն, տարածիչը հայ գիրքին ու մամուլին: Իր տունը վերածած էր մեծ գրադարանի մը, արժէքաւոր գիրքերով յորդուն: Մոլի ընթերցող մըն էր, ինչ որ առիթ ստեղծած էր զարգացնելու իր ընդհանուր թէ՛ ազգային գիտելիքները, միշտ տէր կանգնելով հայոց չլուծուած դատին:

Ընկեր Սարգիս Կոնճեան սրտի կաթուածի հետեւանքով անակնկալօրէն կը մահանայ Երեքշաբթի, 28 Փետրուար 1995, կէսօրէ ետք ժամը 1ին: Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 1 Մարտ կէսօրէ ետք ժամը 3ին, Թրիփոլի Ս. Հոգեգալստեան Եկեղեցւոյ մէջ:

Սարգիս Կոնճեանի մահով, հայ գիրքը եւ հայ թերթը կը կորսնցնեն հաւատարիմ ընթերցող մը, Թրիփոլի գաղութը անձնուէր հայորդի մը, նըւիրեալ ընկեր մը, իսկ հայ մշակոյթը երկրպագու մը...

Իր մահուան քառասունքին առթիւ, «Ազդակ» օրաթերթին մէջ «Նըւիրեալը» խորագրով «Սգակիր Բարեկամ մը» ի միջի այլոց կը գրէ:

«Սիրելի Սարգիս, եղար իսկական մարդը առաջին հերթին, բառին ամբողջական ու լիիրաւ իմաստով: Մարդը՝ որուն փնտռուածքը ունէիր կեանքիդ ամբողջ ընթացքին, մարդը իր իսկական մարդու կերպարին մէջ տեսնելու: Երբ տեսար մարդոց մէջ իսկական այդ մարդու գիծերը՝ փորձեցիր արժեւորել զայն ու արժեւորեցիր: Մարդոց ողջութեան թէ՛ յետ մահու գիտցար գնահատել արժէքները մարդոց ու երբեմն, քանի մը ժամուան համար Թրիփոլիէն Պէյրութ եկար այցելելու հիւանդ բարեկամի մը կամ հոգեհանգիստի մը ներկայ գտնուելու, յարգելու համար իրաւ մարդու եւ իրաւ հայու մեր յիշատակը:

«Հայութեան ապրումը քեզի համար եղաւ կրակէ շապիկէ աւելի բան մը, այն աստիճան, որ հայութեան ու Հայաստանի գոհասեղանին վրայ նահատակուած մեր հերոսներու շիրիմներուն ուխտի ղրկեցիր գաւակներդ, գաղափարի դաստիարակութեան համար պարտք դրիր գաւակներուդ վզին՝ անպայման ծնրադիր ուխտի երթալ գաղափարի հերոս նահատակներու յուշարձան»

ներուն, այսպիսով եղար գաղափարականով, հայութեամբ օծուն սերունդ պատրաստող հայր ու ղեկավար:

«Եղար ու հաւատացիր հայ եկեղեցւոյ հոգեւոր ու ազգային դաստիարակութեան: Հոգեկան անսահման ապրումներով հայ եկեղեցին ու հայ եկեղեցականը սիրեցիր, անոնց մէջ տեսնելով հայ ժողովուրդի անցեալը ու անցեալէն եկող պատգամը: Հայ եկեղեցւոյ շարականը, աղօթքը, մոմը, խունկը ապրումներու եւ զգացումներու աշխարհ մը եղան քեզի համար, եւ անոնք վերացուցին քու հոգիդ դէպի վեր, դէպի անհունը:

«Եղար օրէնքի, կարգ ու կանոնի մարդը: Խստապահանջ մարդը ամէնուրեք, անհատական, ընտանեկան, միութենական թէ կուսակցական կեանքիդ մէջ: Խստապահանջ երբեմն այն աստիճան, որ ակամայ վշտացուցիր, որովհետեւ այդ կը պահանջէր օրէնքը, կարգը, կանոնը, հաւաքականութեան շահը: Այս խստապահանջ դաստիարակութիւնը փոխանցեցիր գաւակներուդ:

«Եղար գործիչ, գրիչի եւ գրականութեան մարդը: Գիրքը ամենահաւատարիմ բարեկամը նկատեցիր եւ գիրքերու աշխարհը տարբեր աշխարհ մը ապրումի, ոգեղէն ներշնչումի աղբիւր: Գիրքը սիրեցիր պաշտամունքի հասնելու աստիճան: Գիրքի ընթերցումը պարզ ժամանցի համար չէր, այլ վերլուծական քննական մօտեցումով, փնտռողական ոգիով մտապաշարի հարստացում:

«Եղար նուիրեալ ու անաչառ ոգիով միութենականն ու կուսակցականը եւ ղեկավարը միաժամանակ: Ուխտեալ գինուոր հաւատարիմ նախնիքներու արիութեան գործերու կտական ժառանգին հաւատարիմ: Չշփոթեցիր անձրեւը Միութեան եւ Կուսակցութեան հետ: Ուխտապահ մը՝ մեր նուիրական սըրբութիւններուն:

«Եղար վերջապէս հայ տան մը, հայ օճախի մը իսկական ու նուիրեալ հայրը: Հայր, որուն հովանիին տակ աճեցան եւ մեծցան վերոյիշեալ նկարագրի գիծերդ ունեցող, նոյնացող իւրացնող առաքիլի աղջիկներդ: Հայր, որ կտակ ժառանգեց իր աղջիկներուն ազգին, հայրենիքին ծառայութեան ոգին»:

*

* *

Սիրելի՛ քենեկալ Սարգիս, երկրաւոր կեանքէն հեռանալէդ տարի մը վերջ, հազիւ կարողացայ վիշտս խեղդել, գրիչ շարժելու կարողութիւն ունենալ քու յիշատակիդ քանի մը խօսք արտասանելու, մնացեալ բոլոր զգացումներն ու գեղումները մէջս պահելով:

Տարելիցիդ առթիւ, իմ եւ ընտանիքիս բոլոր անդամներուն կողմէ մեր խորագգած ցաւակցութիւնները կը յայտնենք սիրելի կողակիցիդ՝ Մելինէին, երէց աղջկանդ՝ Յասմիկին եւ ընտանիքին, Շողիկին եւ Թալինին, ինչպէս նաեւ Կոնճեան, Միքայէլեան, Յակոբեան եւ Տէրտէրեան ընտանիքներուն:

Յիշատակդ անթառամ պիտի մնայ յաւիտեան:

ԿԱՂՆԻ ՄԸՆ ԱԼ ՏԱՊԱԼԵՑԱԻ

Չորեքշաբթի, 10 Յուլիս 1996ը տխուր օր մը հանդիսացաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերուն, Հայ Դատի զինուորագրեալներու փաղանգին եւ ազատատենչ հայորդիներուն համար, ընկեր Արամ Այվազեանի անակնկալ եւ դառնաշունչ մահով:

Բօթը ցաւով դիմաւորուեցաւ հանգուցեալը ճանչցող ընկերներու եւ բարեկամներու կողմէ:

Ընկեր Արամ Այվազեանի տան կարգը տեղի ունեցաւ Կիրակի, 14 Յուլիս 1996, երեկոյեան ժամը 7-9 Kane մեռելատան մէջ, ներկայութեամբ դաշնակցական ընկերներու, հարազատներու, ազգականներու, բարեկամներու, ինչպէս նաեւ իր յիշատակը յարգող ոչ-հայ սգակիրներու:

Եկեղեցական արարողութիւնները կատարուեցան Վեր. Եսայի Սարմազեանի եւ Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցոյ հովիւ Գերշ. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեանի կողմէ:

Այս առթիւ, Վեր. Սարմազեան խօսք առնելով, հանգուցեալի կեսագրական գիծերը տալէ ետք անդրադարձաւ անոր կեանքին եւ գործին:

Խօսք առաւ նաեւ ընկեր Այվազեանի կուսակցական երկարամեայ գործակից ընկեր Վազգէն Թերզեան:

Գանատայի պատմագիր եւ հեղինակ տիկին Մաշա խօսք առնելով սըր՝ տառուչ արտայայտութիւններով պատմեց ընկեր Այվազեանի հետ իր բարեկամութեան մասին, որ ստեղծուած էր անակնկալ հանդիպումով մը, Հայ Դատի եւ Հայոց Եղեռնի շուրջ իրենց միջեւ կատարուած խօսակցութիւններու ընդմէջէն:

Տիկին Մաշա ըսաւ, թէ մինչեւ ընկեր Այվազեանի իր ծանօթութիւնը տեղեակ չէ եղած Հայոց Եղեռնէն, սակայն, ընկեր Այվազեանի իրեն փոխանցած գիրքերուն շնորհիւ ուսումնասիրած է Թուրքիոյ կողմէ գործադրուած հայաջինջ քաղաքականութեան պատմութիւնն ու ցեղասպանութեան արարքը եւ շուտով պիտի հրատարակէ Հայոց ցեղասպանութեան մասին իր գրած գիրքը:

Ընկեր Արամ Այվազեանի դազաղը ծածկուած էր հայկական եռագոյնով եւ Հ.Յ. Դաշնակցութեան դրօշով: Հանգուցեալի թոռները հերթականօրէն խօսք առին եւ իրենց սրտի խօսքը արտասանեցին իրենց մեծ հօր յիշատակին:

Ընկեր Արամ Այվազեանի թաղման կարգը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 15 Յուլիս 1996, կէսօրին, Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ, ներկայութեամբ հոծ թիւով սգակիրներու:

Եկեղեցական արարողութիւնները կատարուեցան Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան թեմի առաջնորդ Բարձր. Տ. Մեսրոպ Արք. Աշճեանի նախագահութեամբ եւ մասնակցութեամբ, Գերապատիւ Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեանի, Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ հովիւ Արժ. Տ. Նարեկ Քհն. Քէօթէլեանի, Գէմպրիճի Ս. Նշան Եկեղեցոյ հովիւ Արժ. Տ. Վարանդ Քհն. Պետրոսեանի, Հայ Կաթողիկէ համայնքի հովիւ Գերյարգելի Տ. Եղիա Մ. Վրդ. Գիրէջեանի եւ Հայ Աւետարանական համայնքի հովիւ Վեր. Եսայի Սարմազեանի:

Յուղարկաւորութենէն առաջ, եկեղեցւոյ մէջ խօսք առաւ Առաջնորդ սրբազան հայրը եւ իր սրտի խօսքը փոխանցելէ ետք, իր եւ Ազգային Վարչութեան ցաւակցութիւնները յայտնեց ընկեր Այվազեանի ընտանեկան պարագաներուն եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան:

Եկեղեցւոյ մէջ կատարուած թաղմանական արարողութիւններէն ետք, յուղարկաւորներու թափօրը շարժեցաւ դէպի Եորք գերեզմանատուն, ուր կատարուեցաւ թաղման կարգը, որմէ ետք, յանուն Հ.Յ. Դաշնակցութեան «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէութեան ընկերներուն դամբանական խօսեցաւ ընկեր Յակոբ Ճանպազեան:

Ընկեր Ճանպազեանի դամբանակէն ետք, ընկերները երգեցին «Վէրքերով լի» յեղափոխական երգը, ապա, դազաղը ծածկող եռագոյն դրօշակը յանձնուեցաւ տիկին Աղաւնիին:

Թաղման կարգէն ետք, սգաւոր հասարակութիւնը հաւաքուեցաւ Հայ Կեդրոն, ուր, հանգուցեալի յիշատակին տեղի ունեցաւ սուրճի եւ այլազան ուտելիքներով հաւաքոյթի մը, որուն ներկայ գտնուեցան Հ.Յ.Դ. Բիւրոյի շրջանի ներկայացուցիչ ընկ. Վիգէն Յովսէփեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. ԲԺ. Վաղարշ Էհրամճեան, Գանատայի դաշնակցային խորհրդարանի անդամ Սարգիս Ասատուրեան, հանգուցեալի հարազատները, կուսակցական ընկերներ եւ բարեկամներ:

Այստեղ, խօսք առաւ ընկ. Վաղարշ Էհրամճեան: Խօսք առաւ նաեւ հանգուցեալի հին բարեկամներէն Վարդան Վարդանեան եւ ընկեր Այվազեանի հետ տարիներ առաջ իր բարեկամնութեան եւ գործակցութեան յուշերը պատմեց, ընդգծելով անոր ուղղամտութիւնը, ազգասիրութիւնը եւ հայրենասիրութիւնն ու ընկերասիրութիւնը: Հանգուցեալի որդին՝ պրոֆ. Վարուժան Այվազեան խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց պաշտօնական մարմիններուն եւ ներկաներուն, իրենց հօր մահուն առթիւ իրենց սուգին մասնակից դառնալուն համար:

Այս առթիւ, Սարգիսեան եղբայրներ, որպէս գնահատանք եւ երախտագիտութիւն ընկեր Արամ Այվազեանի Հայ Դատին ծառայութեան եւ նուիրումին, Զօրեան հաստատութեան միջոցաւ հաստատեցին «Արամ Այվազեան» մրցանակ մը (5000 տոլար), որ ամէն տարի պիտի տրուի Հայ Դատին նպաստող գիրքի մը հեղինակին:

*

**

Ընկեր Արամ Այվազեանը ճանչցայ տարիներ առաջ, 1965ին, Հայկ պի մէջ, երբ ան Shell Oil ընկերութեան Սուրիոյ ներկայացուցիչի հանգամանքով այցելեց Հայկ պի Էլ Շարք գարեջուրի ընկերութեան գործարանի տնօրէնին: Այդ օրերուն, որպէս ընկերութեան ելեկտրական բաժնի պատասխանատու եւ գործարանի գործաւորներուն արհեստակցական միութեան նախագահ տնօրէնին մօտ գտնուելով իրարու ծանօթացանք, բարեկամական սերտ զգացումներով:

Կրկին իրար հանդիպեցանք Թորոնթոյի մէջ 1975ին եւ մինչեւ իր անակնկալ մահը մնացինք որպէս սերտ եւ սրտակիր ընկերներ:

Ընկեր Այվազեան, որպէս երէց եւ վաստակաւոր ընկեր, գիտէր գնահատել եւ քաջալերել դրական աշխատանք տանող բոլոր ընկերները: Խոնարհ էր, ընկերասէր եւ միշտ լաւատես: Վերջին անգամ Թորոնթո եկած էր 24 Ապրիլի առիթով, թէ՛ լսելու իր անդրանիկ զաւկին՝ Հ.Յ.Դ. Մ. Նահանգներու Արեւելեան շրջանի Կեդրոնական կոմիտէի հերթապահ ընկեր Վազգէն Այվազեանի բանախօսութիւնը Հայոց Եղեռնի ճշմարտութիւնը տարելիցին առթիւ եւ մասնակցելու իր տիկնոջ տիկին Աղաւնիին հետ տեղի ունեցող քաղաքական հանդիսութեան:

Հանդիսութեան աւարտին, Հայ Կեդրոնի Եղեռնի յուշարձանին առջեւ կատարուող եկեղեցական արարողութենէն ետք, Հայ Կեդրոնին մէջ գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու անունով որպէս վերապորոզ Հայ ընկեր Արամ Այվազեան՝ մատղաշ սերունդի ներկայացուցիչ Վահան Աճէմեանի հետ ծաղկեպսակ զետեղեց յուշարձանին Հայոց Մեծ Եղեռնին նահատակուած 1.5 միլիոն նահատակներու յիշատակին:

Եւ ինձի համար անյայտ նախազգացումով, այդ օր, Եղեռնի քաղաքական հանդիսութենէն առաջ, Հայ Կեդրոնի Համագգայինի գրադարանի սրահին մէջ հաւաքուած պաշտօնական հիւրերուն ընդունելութեան եւ ծանօթացումի առիթով, փափաք յայտնեցի ընկեր Արամ Այվազեանի, որպէսզի միատեղ նկար մը ունենանք:

Նկարուեցանք: Իր վերջին նկարն է հաւանաբար... նկարուած՝ Կիրակի, 21 Ապրիլ 1996ին...

Յիշատակը անթառամ պիտի մնայ մեր հոգիներուն մէջ, սիրելի ընկեր Արամ Այվազեան, քանի որ դուն ճառագայթ մըն էիր եւ լուսաւորեցիր ընկերներդ եւ հարազատներդ եւ որպէս Հայ Դատի գինուորագրեալ ղեկավար քու պարտականութիւններդ աւելիով կատարեցիր: Դուն կ'ապրիս եւ պիտի ապրիս յաւիտեան, որովհետեւ ճառագայթը չի թաղուիր...:

Յարգանք եւ ակնածանք քու կեանքիդ ու գործիդ, սիրելի եւ խնկելի ընկեր Արամ ...:

«ՅՈՐԻՉՈՆ»
20 Օգոստոս 1996

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ազնուածին, հայրենասէր եւ կրօնասէր հայորդի Կարապետ Սարգիսեան, յետ երկարատեւ հիւանդութեան, երկրաւոր կեանքէն բաժնուեցաւ Շաբաթ, 11 Հոկտեմբերի առաւօտեան ժամը 3:00ին: Ծնած էր 10 Մարտ 1912ին, Ուրֆա:

Հանգուցեալին տան կարգը կատարուեցաւ Երեքշաբթի, 14 Հոկտ. 1997, երեկոյեան ժամը 8:00ին, Փօլ Օքոնսոր մեռելատան մէջ, ուր խօսք առին Հայ հոգեւոր եղբայրակցութենէն պատուելի Գրիգոր Կարապետեան եւ հանգուցեալին աղջիկը՝ տիկին Շուշիկ Պէրպէրեան: Եկեղեցւոյ թաղմանական կարգը տեղի ունեցաւ Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ, Չորեքշաբթի, 15 Հոկտեմբերին, կէսօրուան ժամը 12:00ին, թոռնիկներուն կողմէ դէպի մեռելակառք փոխադրուող դագաղը, յուղարկաւորներու հոծ բազմութեան մը հետեւողականութեամբ տարուեցաւ Նորթ Եորքի գերեզմանոցը, ուր կատարուեցաւ թաղմանական արարողութիւնը Հոգչ. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեանի կողմէ:

Հանգուցեալ Կարապետ Սարգիսեան մանկութիւնն ու պատանեկութիւնը անցուցած է Հալէպի մէջ: Իր նախնական ուսումը ստացած է Հալէպի Հայկազեան նախակրթարանին մէջ, միեւնոյն տարիներուն իր մասնակցութիւնը բերած է Հալէպի Քառասուն Մանկանց եկեղեցւոյ դպրաց դասին եւ աւելի վերջ, նշանաւոր երաժշտագէտ-խմբավար Բարսեղ Կանաչեանի երգչախումբին:

Քսան տարեկանին հաստատուած է Լիբանան, աշխատելով Շէլ ընկերութեան մէջ, միեւնոյն ատեն շարունակելով իր ուսումը, աւարտած է Ֆրանսական Համալսարանի ատամնաբուժական ճիւղը:

Որպէս ատամնաբույժ իր մասնագիտութեան կողքին ան ծառայած է Լիբանանի զանազան Ազգային Վարժարաններու եւ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարաններու մէջ, որպէս ուսուցիչ:

1944ին ամուսնացած է Սաթենիկ Տէր Պալեանի հետ եւ ունեցած է հինգ զաւակներ՝ Աշխէն, Սարգիս, Շուշիկ, Գրիգոր եւ Մէյրի, որոնք բոլորն ալ կըրթուելով հայկական եւ քրիստոնէական դաստիարակութեամբ, ամուսնանալէ առաջ եւ վերջ, իրենց ներդրումը եւ ծառայութիւնը կը բերեն հայկական կազմակերպութիւններու եւ միութիւններու առաքելութեան եւ ձեռնարկներուն:

Պրն. Կարապետ Սարգիսեան, 45 տարեկանին, իր մասնագիտական աշխատանքի ընթացքին արկածով կորսնցուցած ըլլալով իր տեսողութիւնը, որպէս աչազուրկ հետեւած է Լիբանանի հայկական կուրանոցի դասընթացքներուն եւ սորվելով աչազուրկներու գիրերը եւ գրականութեան հետեւելով ան շարունակած է իր կեանքը, իր զաւակներուն եւ նուիրեալ կնոջ Սաթենիկի օգնութեամբ:

Որպէս տիպար եւ հաւատացեալ քրիստոնեայ, Աստուածաշունչի ամէն մէկ գլուխը եւ համարը ուսումնասիրած ըլլալով, իր կեանքը օրինակելի դարձուց իր շրջանակին: Իր այցելուները, վարդապետ, քահանայ, քարոզիչ,

պատուելի կամ պարզ քրիստոնեայ անձնաւորութիւն, կ'օգտուէին իր վերլուծումներէն եւ ոգեւորուած կը հեռանային իրմէ:

1976 Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետեւանքով ընտանեօք գաղթեց Գանատա եւ հաստատուեցաւ Թորոնթօ, ուր կ'ապրէր ընտանեկան եւ կրօնական խաղաղ միջոցառումներով: Սակայն, 1993ին կաթողաճահար եղաւ: Զրկուեցաւ կարգալու եւ ծնկաչոք աղօթելու հոգեկան բաւարարութենէն, մընաց անշարժ իր անկողնին մէջ:

Պրն. Սարգիսեան սկզբունքի տէր մարդ էր: Ունէր ուղիղ մտածելու կերպ եւ իր կեանքին ընթացքին միշտ արդարութիւնը հետապնդած էր: Հայրենասէր եւ ազգասէր մարդ մը, որ իր միտքն ու զգացումները գրիչով ալ արտայայտած է: Իր բանաստեղծական գրութիւնները, որոնք հաւաքուած եւ գրուած են իր կնոջ կողմէ, ընդհանրապէս երկարաշունչ ազգային, հայրենասկան եւ կրօնական են, որոնցմէ փունջ մը օրին յանձնած էր ինծի՝ հետեւեալ վերնագիրներով, «Հայ Լեզուն» (12 համար), «Հայ Պահէ Զիս» (10 համար), «Սրուակ Մը Հող Հայրենիքէն» (20 համար), «Սրուակ Մը Հող Սփիւռքէն» (21 համար), «Ով Բարեկամ» (8 համար):

Քառեակ մը « Հայ Պահէ Զիս» քերթուածէն.

Ազատութիւն աստուածային, գերազանց մեծ պարգեւ,
Օտար երկիր ծնող հայուն սարսափելի անդունդ է,
Հայ հայուն հետ անխտիր, սէր շղթայով կաշկանդէ,
Հայ հայուն հետ միաբան, երկնային վարքով քալէ:

Երկրորդ քառեակ մը, «Սրուակ մը հող Սփիւռքէն» քերթուածէն.

Զեզ տրուեցաւ բարգաւաճիլ, զարգանալ,
Բայց հայ լեզուն ու գիրերը չմոռնալ,
Զայն կարդալով հայ ըլլալդ լաւ ճանչնալ,
Հին հայերուդ պատմութիւնով արբենալ:

Արցախը իր սրտին մէջ մեծ տեղ գրաւած էր եւ մտահոգ էր անոր ապագայով: Արցախը իր երազներուն առանցքն էր: Արցախի ազատագրական պատերազմի թէժ օրերուն, շաբաթը քանի մը անգամ կը հեռաձայնէր եւ նորութիւններ կ'ուզէր ճակատներու կացութենէն: Խորապէս կը տխրէր կորսուած հողատարածքներու եւ նահատակուած հերոսներու մասին իրեն տրուած տեղեկութիւններէս: Իսկ կ'ուրախանար, հայ հերոսներու արիութիւններով եւ յաղթանակներով: Կը խնդրէր իրեն հանգիպիլ եւ մտերմաբար խօսակցիլ ազգային հարցերու մասին:

Հանգիպումներու ընթացքին կը պատմէր գիշերը, քնացած պահուն, զինք արթնցնող ոգիներու մասին: Յաճախ, իր հաւատացեալի օրհնութիւնը կը բաշխէր մեզի, ձայներիզի վրայ արձանագրած էր կրօնական եւ ազգային վերլուծումները եւ հաւատալիքները փոխանցելով մեզի: Աչազուրկ ըլլալով հանդերձ, զգայարանքի նուրբ գիտակցութեամբ ձայներիզները ճշգրտօրէն կը տեղաւորէր եւ կ'աշխատցնէր գործիքը:

Զինք արթնցնող ոգին, 1987ին իրեն Աստուծոյ խօսքը հայերէնով կը պատգամէ, ըսելով, որ Աստուած հայերուն արդար իրաւունքները պիտի տայ,

հերթականօրէն, հայկական բոլոր հողերը պիտի վերագառնան հայութեան: Առաջին հողը, զոր պիտի միանայ Հայաստանի Ղարաբաղը պիտի ըլլայ:

1988ին եւ 1989ին, նոյն ոգին կրկին կ'արտասանէ, ինչպէս «Արիմոթա», «Բերիլոնա», «Պարբելոնա», «Ֆորթալեզա», «Տարիլ» եւ այլն, որոնք հայկական հողերու եւ քաղաքներու աղաւաղուած անուններն են:

Ինք այդ թուականներուն, իրեն երեւցող ոգիէն խրախուսուած, կը հաւատար, որ Ղարաբաղը պիտի ազատագրուի Ադրբեջանական լուծէն: Եւ, ժամանակը փաստեց, որ պրն. Կարապետ Սարգիսեանի երեւցող ոգին ճշմարիտ էր, մարգարէացած էր Ղարաբաղի ազատագրումը եւ անկախութիւնը:

Հոս կ'ուզեմ հպարտանքով արձանագրել, որ հանգուցեալի որդիներէն Սարգիսի զաւակը Կէրին, աւարտած է Հ.Օ.Մ.ի ամենօրեայ վարժարանը, դպրոցական տարիքէն կը գրէ անգլերէն բանաստեղծութիւններ, իսկ Գրիգորի որդին Կարապետ Սարգիսեանը, կը գրէ հայերէն շատ յաջող բանաստեղծութիւններ, երկուքն ալ իրենց մեծ հօրմէն ժառանգած են բանաստեղծական տաղանդը:

Պրն. Կարապետ Սարգիսեանի փափաքով, հայրենիքէն բերուած սըր՝ Լակ մը հող դրուեցաւ իր դագաղին մէջ:

Հանգիստ վաստակաբեկ մարմնիդ յարգեզի հայորդի:

«ՅՈՐԻՉՈՆ»
1997

**ՏԵՐԵՒԱԹԱԾ
ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ԱԶՆՈՒԱԿԱՆ ՀԱՅՐԸ
ՅԱԿՈՒ ՄԱՐԳԻՍԵԱՆ ՈՉ ԵՒՄ Է**

Երկարատեւ հիւանդութենէ ետք, Հինգշաբթի, 5 Մարտ 1998ին, երկրաւոր կեանքէն հրաժեշտ առնելով իր յաւիտենական հանգիստին եւ սիրելիներուն միացաւ գաղութի նահապետներէն մէկը, ազգասէր ազնուական եւ խոնարհ հայ՝ Յակոբ Սարգիսեան, հոգեկան ծանր ցաւ պատճառելով իր ընտանեկան պարագաներուն, ազգականներուն եւ բարեկամներուն:

Տան կարգը տեղի ունեցաւ Կիրակի, 8 Մարտ 1998, երեկոյեան ժամը 8:00ին, Jerrett մեռելատան մէջ:

Տան կարգի եկեղեցական արարողութիւնները կատարեց Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան:

Արարողութեան աւարտին, ընտանիքին անունով խօսք առաւ հանգուցեալի փեսան Պրն. Մկրտիչ Ֆերմանեան, արտայայտելով իր եւ Սարգիսեանի ընտանիքի սրտի խօսքը, շնորհակալութիւն յայտնելով իրենց վիշտին վշտակից դարձող ներկաներուն, տալէ ետք հանգուցեալի կենսագրութեան ամփոփ գիծերը:

Հանգուցեալ Յակոբ Սարգիսեան ծնած է Ուրֆա 1909 թուականին, բազմանդամ ընտանիքի վերջին զաւակն էր:

Հայրը, մայրը, քոյրերն ու եղբայրներէն երեքը զոհ դարձած են 1915ի Եղեռնին: Աւելի ուշ, դժբախտութիւնը կ'ունենայ կորսնցնելու իր երէց եղբայրը՝ Եղիան եւ անցեալ տարի՝ Մկրտիչ եղբայրը:

Յեղասպանութիւնը գաղթական հանած էր զինք: Հազիւ 5-6 տարեկան, Ուրֆայէն աքսորուելով դէպի Սուրիոյ անապատները, կը մնայ անտէր եւ անօգնական: Բախտի բերմամբ, կ'որդեգրուի արաբ ազնիւ ընտանիքի մը՝ Սուլթաններու կողմէ եւ կը մեծնայ անոնց խնամատարութեամբ:

Բախտաւոր օր մը, Մկրտիչ եղբօր փնտռութենէն շնորհիւ կը միանայ իր եղբօր եւ կը վերադառնայ իր ազգին: Կ'ամուսնանայ օրդ. Մարի Զապունեանի հետ եւ կը բախտաւորուին 5 զաւակներով՝ Լուսին, Զաւէն, Վարուժան, Զօհրայ, եւ Ժիւլիէթ, ինչպէս նաեւ եօթը թոռներով:

Իր արաբ եղբայրները միշտ կը պատմէին եւ կը խօսէին իր մասին անկեղծ սիրով եւ գնահատականքով, ընդգծելով իր աշխատասիրութիւնը, պարկեշտութիւնը եւ առատաձեռնութիւնը:

Պրն. Մկրտիչ Ֆերմանեանի խօսքէն ետք, խօսք առաւ Հոգշ. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, որ այս առթիւ խօսեցաւ կրօնաշունչ քարոզ մը՝ մխիթարելով հանգուցեալի հարազատները:

Հանգուցեալը անհուն սիրով կապուած է իր ընտանիքին: Եղած է շատ բծախնդիր իր զաւակներուն նկատմամբ: Իր գլխաւոր մտահոգութիւնը եղած է իր զաւակներուն տալ բարձրագոյն ուսում, ինչ որ ինք չէր ունեցած՝ ճակատագրի բերումով:

Հանգուցեալ Յակոբ Սարգիսեան եկեղեցւոյ կարգը կատարուեցաւ Երկուշաբթի, 9 Մարտ 1998, կէսօրուան ժամը 12:00ին, Ս. Աստուածածին Հայոց Առաք. եկեղեցւոյ մէջ: Ապա, յուղարկաւորներու թափօրը ուղղուեցաւ դէպի Նորթ Եորքի «Եորք» գերեզմանատունը, ուր կատարուեցաւ թաղման կարգը:

Թաղումէն ետք, Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեճաշ, ուր պրն. Մկրտիչ Ֆերմանեանի շնորհակալութեան խօսքէն ետք, խօսք տըրուեցաւ Հայ Աւետարանական համայնքի հոգեւոր հովիւ Վեր. Եսայի Սարմազեանին, որ անդրադառնալէ ետք կեանքի եւ մահուան իմաստին ըսաւ. «Ան որ իր ծնողքը կը կորսնցնէ՝ անցեալը կորսնցուցած կ'ըլլայ, ան որ իր կողակիցը կը կորսնցնէ, ներկան կորսնցուցած կ'ըլլայ, ան որ զաւակը կը կորսնցնէ, ապագան կորսնցուցած կ'ըլլայ»:

*

**

Հանգուցեալ Յակոբ Սարգիսեանը ճանչցայ 1950ին, Սուրիա, Հալէպէն շուրջ 200 քմ. հիւսիս-արեւելք գտնուող պատմական Ռազգա գիւղաքաղաքին մէջ, ուր զրկուած էի Բերիոյ Թեմի Առաջնորդ Ջարէհ Սրբազանի եւ Ուսումնական Խորհուրդի կողմէ, ստանձնելով տեղւոյն ազգային վարժարանի տնօրէնութիւնը:

Հասնելով Ռազգա, առաջին գործս եղաւ ներկայանալ թաղական խորհուրդի ատենապետ պրն. Յակոբ Սարգիսեանին, իր վաճառատան մէջ, որ կը գտնուէր այդ օրերուն գիւղաքաղաքի գլխաւոր պողոտային վրայ:

Սիրալիր ընդունելութենէ ետք, խօսակցութեան նիւթ դարձաւ վարժարանի տնտեսական եւ ուսումնական վիճակը, ապա իր առաջնորդութեամբ ինծի ցոյց տրուեցաւ այն սենեակը, ուր պիտի ապրէի դպրոցական ամբողջ շրջանին՝ 9 ամիս, վայելելով ո՛չ միայն թաղականութեան ատենապետին, այլեւ բոլոր անդամներուն եւ ժողովուրդին սէրն ու յարգանքը:

Երբեք չեմ կրնար մոռնալ այն հիւրասիրութիւնն ու ճաշկերոյթը, զոր Սարգիսեան ընտանիքը ցոյց տուին եւ կազմակերպեցին Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Ջարէհ Ս. Եպիսկոպոս Փայասլեանին եւ իրենց ընկերացող պատուիրակութեան, որոնք պաշտօնական այցելութեամբ Ռազգա ժամանած էին ծանօթանալու Հայ գաղութին, դպրոցին եւ եկեղեցիին:

Շարժական եկեղեցին կը հաստատուէր դպրոցի սրահին մէջ, երբ Տէր Զօրէն Ռազգա կը ժամանէր Արժ. Տ. Եղիշէ քհնյ. Տողրամածեանը կամ այլ եկեղեցական մը:

Սարգիսեան ամուլը նման պաշտօնական ճաշկերոյթ մը կազմակերպեցին նաեւ, երբ Ռազգայի մինչեւ Ե. կարգ ունեցող վարժարանի կողքին հիմը դրուեցաւ կիրակնօրեայ վարժարանի. որուն հիմնակէքին ներկայ ըլլալու համար Հալէպէն Ռազգա ժամանեց կիրակնօրեայ դպրոցներու վարիչ քարտուղար պրն. Գէորգ Ներսոյեան, որուն ներկայ գտնուեցան Ռազգայի թաղականութեան անդամները, դպրոցի եւ կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմերն ու ազգայիները:

Հանգուցեալ Յակոբ Սարգիսեան եւ տիկինը՝ Մարին, միշտ իրենց քըսակը եւ ժամանակը կը տրամադրէին Ռազգա ժամանող բոլոր հիւրերուն եւ կ'օժանդակէն ազգային կառույցներու բարգաւաճման եւ զօրացման:

Յաճախ հանդիպումներ կ'ունենայի հանգուցեալին հետ: Մեր խօսակցութեան ընդհանրապէս նիւթ կը դառնայ ազգային եւ գաղափարական հարցեր: Ինք Դաշնակցութեան համակիր ըլլալով միշտ տարակարծութիւններ կ'ունենար թաղականութեան այլ անդամներուն հետ, որոնք կրնամ ըսել հակադաշնակցական չէին, որովհետեւ Բարեգործականի մաս կը կազմէին:

Իր գաղափարական հակառակորդները յաճախ քմծիծաղով եւ ծաղրանքով կ'արտայայտուէին հանգուցեալին անցեալին, երբ ան Եղեռնի տառապանքները եւ չարչարանքները ցմրուր ճաշակելէ, իր ծնողքն ու հարազատները կորսնցնելէ ետք, տակաւին մանուկ հասակին կ'որդեգրուէ Արաբ Պետեւի Յեղախումբի մը՝ Սուլթաններուն կողմէ եւ կը կոչուի Ահմատ Սուլթան, սակայն, իր եղբօր Մկրտիչին եւ ցեղին ձայնին անսալով կը միանայ իր արմատներուն, կը դառնայ հայութեան գիրկը եւ հայու յատուկ աշխատասիրութեամբ կ'ունենայ իր սեփական վաճառատունը, ինչպէս նաեւ կը զբաղի բամպակի մշակումով, գնելով ջուրի բոմբ-մոթոններ եւ իր արաբ եղբայրներուն հետ զարգացնելով բամպակի արտադրութիւնը եւ որակը Եփրատի շրջանին մէջ:

Հոս կ'ուզեմ ընդգծել այն զոհաբերութիւնը եւ սէրը, զորս ցոյց տուած են նախկին Ահմատ Սուլթանին Արաբ «եղբայրները», երբ 1945ին, Ֆրանսական հոգատարութեան դէմ Սուրիոյ մէջ սկսուած ապստամբութեան շրջանին, Ռազգայի մէջ կատարուած թալանի եւ կողոպուտի դէպքին, Սուլթան ընտանիքին պատկանող արաբ եղբայրները անմիջապէս կը հասնին Ռազգա եւ իրենց կեանքով կը պաշտպանեն իրենց հայացած եղբօր կալուածներն ու տունը:

Երկար կարելի է գրել հանգուցեալ Յակոբ Սարգիսեանի կեանքին եւ ազգակերտ գործունէութեան մասին:

Ռազգայէն Հալէպ փոխադրուելէ, ապա, Գանատա հաստատուելէ ետք, կրկին բախտը ունեցայ հանդիպելու հանգուցեալին: Մեր ամէն հանդիպումին կը խօսէինք Ռազգայի կեանքէն եւ հոն թողած իր բամպակի բոմբ-մոթոններու ճակատագրին մասին:

Ազգային եւ միութենական կեանքին մէջ տասնեակ տարիներ վաստակ ունեցող Յակոբ Սարգիսեան թորոնթօ գալով հանգիստ չէր կրնար մնալ: Ան, քանի մը երէցներով հիմը դրին Հայ Կեդրոնի Երէցներու ընկերակցութեան, որուն յաջորդական վարչութիւններուն մաս կազմեց հանգուցեալը, մինչեւ իր առողջութեան խանգարումը:

Մնաւ արհաւիրքի թուականներուն, ապրեցաւ ցաւով, տառապանքով, սակայն մնաց միշտ անձնուէր եւ մաքրամաքուր հայ, իր գաւակներուն եւ ազգականներուն փոխանցելով հայրենասիրութեան եւ ազգասիրութեան ոգին:

Լո՛յս մշտնջենական իր բարի եւ խոնարհ հոգիին...:

«ՅՈՐԻՉՈՆ»
20 Ապրիլ 1998

ՈՉ ԵՒՍ Է ԸՆԿԵՐ ԿԱՐՈ ՓԱՇԱՅԵԱՆ

Անսպասելի եւ սրտայոյզ գոյժը, Շաբաթ առաւօտ կանուխ, Կրէյս հիւանդանոցէն հաղորդուեցաւ եւ կայծակի արագութեամբ տարածուեցաւ Թորոնթոյի հայ գաղութի անդամներուն. «Ընկեր Կարօ Փաշայեան ոչ եւս է»:

Արդարեւ, ընկերը, Ուրբաթ, 27 Յուլիս 2001, կէսօրէ ետք, սրտի նոր կաթուածի հետեւանքով Կրէյս հիւանդանոց փոխադրուելով, յաճնուած է բըժիշկներու յատուկ խնամքին, սակայն, բժշկական ամէն կարելիութիւն ի գործ դնելէ ետք, անկարող եղած են փրկել ընկեր Կարօյի կեանքը, եւ ան, իր դիմադրողական բոլոր կարողութիւնները սպառելէ ետք, աշխարհիկ կեանքէն հեռացած է Շաբաթ, 28 Յուլիս 2001, առաւօտեան ժամը 3:30ին, խոր սուգի մասնելով իր ընտանիքի անդամները, ազգականները, ընկերները եւ բարեկամները:

Հանգուցեալ ընկերոջ թաղման կարգը տեղի ունեցաւ նախագահութեամբ Գանատայի առաջնորդական փոխանորդ Գերշ. Տ. Խաթակ Եպիսկ. Յակոբեանի:

Տան կարգը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 30 Յուլիս 2001, երեկոյեան ժամը 8:00ին, Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Խաթակ Եպիսկ. Յակոբեանի եւ մասնակցութեամբ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գեր. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեանի, Մոնթրէալի Ս. Յակոբ Հայց. Առաք. Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Արմէն Ա. Քհն. Իշխանեանի, Լաւալի Ս. Գէորգ Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Հրայր Քհն. Նիկոլեանի, Թորոնթոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Զարեհ Քհն. Զարգարեանի եւ ներկայութեամբ հոծ թիւով սգակիրներու:

Տան կարգի կրօնական արարողութիւններու ընթացքին, Գերշ. Խաթակ Եպիսկ. Յակոբեան, որպէս բնաբան ունենալով Յայտնութիւն Յովհաննու 14 գլուխ, 13 հատուածը, որ կ'ըսէր. «Այսուհետեւ երանելի են այն մեռելները, որոնք Տիրոջմով կը ննջեն: Այո՛ կ'ըսէ հոգին, որ իրենց աշխատութենէն հանգչին ու իրենց գործերը իրենց ետեւէն կ'երթան»:

Սրբազանը զարգացնելով սոյն բնաբանի իմաստը, շեշտը դրաւ երկրաւոր կեանքէն հեռացողներուն ննջեցեալ ըլլալուն, որովհետեւ, մենք կը հաւատանք, որ Յիսուսի երկրորդ գալուն, բարի գործ կատարած քրիստոնեաները մեռելներէն յարուցիւն պիտի առնեն, ինչպէս մեր Տէրը Յիսուս Յարութիւն առաւ գերեզմանէն: Ամէն անհատ, իր ծննդեան թուականէն կը քալէ դէպի մարդկութեան, ազգին, հայրենիքին եւ յիշատակելի գործեր կատարած են, անոնք երբեք պիտի չմեռնին եւ անոնց յիշատակը անթառամ պիտի մնայ:

Հանգուցեալ Կարօ Փաշայեան, ազգային, կուսակցական, միութենական եւ կրօնական գործունէութեամբ անմահներու դասին մէջ կ'ապրի, հակառակ իր Ֆիզիքական ներկայութեան վերջ դրուելուն:

Ընկեր Կարօ Փաշայեանի եկեղեցւոյ կարգը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 31 Յուլիս 2001, առաւօտեան ժամը 11:00ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Գերշ. Խաթակ Եպիսկ. Յակոբեանի եւ մասնակցու-

Թեամբ Գեր. Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեանի, Տ. Արմէն Ա. Քհն. Իշխանեանի, Տ. Հրայր Քհն. Նիկոլեանի, Գէմպրիճի Ս. Նշան եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վարանդ Քհն. Պետրոսեանի, Թորոնթոյի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գեր. Եղիա Մ. Վրդ. Գիրէջեանի եւ Թորոնթոյի Հայ Աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վեր. Եսայի Սարմազեանի եւ ներկայութեամբ՝ հոծ թիւով ազգականներու, ընկերներու եւ բարեկամներու:

Արդարօրէն կարելի է ըսել համահայկական եւ միջ-յարանուանական թաղում, որովհետեւ հանգուցեալը, սիրուած էր բոլորէն, իր բարի վարմունքով եւ գործակցութեամբ բոլորին հետ:

Եկեղեցւոյ կարգի արարողութիւններէն ետք Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան կարգաց Հայաստանի Հանրապետութեան դեսպան Արա Պապեանի ցաւակցական գրուած թիւնը, ուր կը յիշուէր հանգուցեալ ընկերոջ Հայ Առեւտրական Ընկերակցութեան անդամի հանգամանքով օգտակարութիւնը Հայաստանի Հանրապետութեան բարգաւաճման:

Կարգացուցեալ նաեւ Գանատայի եւ Մ. Նահանգներու Արեւելեան թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօրոյեանի, Գերշ. Խաժակ Եպիսկ. Յակոբեանի ուղղած ցաւակցական գրուած թիւնը, որ կարգաց Տ. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան. —

«Խոր վիշտով լսեցինք Թորոնթոյի մեր ժրաջան ազգայիններէն՝ Կարօ Փաշայեանի մահուան գոյժը: Անակնկալ այս գոյժը վստահ ենք որ ցնցեց նաեւ մեր գաղութի գաւակները, որոնք միշտ տեսած են զինք ազգային եկեղեցական կեանքի բոլոր կազմակերպութեանց մէջ:

«Ճանչցանք զինք եւ մտերմացանք իրեն հետ, քանի իր մէջ կը կրէր ազնիւ Հայու եւ հաւատաւոր քրիստոնեայի մը ոգին: Բարեհամբոյր իր բնաւորութեամբ, աշխատասէր եւ ծառայասէր իր պատրաստակամութեամբ, հաւատացեալ եւ եկեղեցանուէր իր հոգիով օրինակելի տիպար մըն էր Թորոնթոյի մեր գաղութի գաւակներուն համար՝ իր պատանութենէն մինչեւ իր վաղաժամ մահը ներկայ ըլլալով մեր կազմակերպութեանց մէջ, համեստ պաշտօնէն ըսկըսեալ մինչեւ պատասխանատու դիրքերուն վրայ:

«Այս պահուն, երբ հաւատքի աչքերով մեր աչքերուն դիմաց կը գծագրուի իր դէմքը, լեցուն ծառայութեամբ եւ համեստութեամբ, որ Թորոնթոյի մեր եկեղեցին եւ ազգային կազմակերպութիւնները ունեցան: Հ.Մ.Ը.Մ.էն մինչեւ Հայ Յեղափոխական դաշնակցութեան շարքերը, հոգաբարձութենէն մինչեւ ազգային երեսփոխանական ժողովին իր մասնակցութիւնն ու շինիչ դերակատարութիւնը լաւագոյն վկայութիւնն են իր նուիրեալ կեանքին:

«Այս տխուր առիթով յանուն Հիւսիսային Ամերիկայի արեւելեան շրջանի եւ Գանատայի թեմի Երեսփոխանական ժողովին, հոգեւորականաց դասուն, ազգային կրօնական եւ վարչական ժողովներուն եւ անձնապէս մեր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնենք իր տիկնոջ՝ Զարուհիին, դստեր՝ Սօսիին, որոնց անմիջական կեանքէն եւ օճախէն բաժնուցեալ հոգածու ամուսին մը եւ գուրգուրոտ հայր մը: Թող Աստուած երկնային լոյսերուն մէջ խաղաղութեամբ հանգչեցնէ սիրելի Կարոյին հոգին, տայ իր հարազատներուն եւ Թորոնթոյի հայ համայնքի ժողովական եւ հաւատացեալ գաւակներուն Սուրբ Հոգիի մխիթարութիւն եւ հաւատքի տոկունութիւն:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Եկեղեցական արարողութիւններէն ետք, յուղարկաւորութեան թափօրը ուղղուեցաւ Եորք գերեզմանատուն, ուր թաղմանական արարողութիւններէն ետք, հանգուցեալ ընկերոջ մարմինը յանձնուեցաւ իր ծննդավայրէն, իր հօրենական ծննդավայրէն հեռու, Գանատական հողին, ընկերներու կողմէ երգուած «Վէրքերով լի» երգով:

Հանգուցեալ ընկերոջ կեանքը եւ կուսակցական վաստակը դամբանականով ընդգծեց Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի հերթապահ ընկ. Վարուժան Պասթաճեան: Կոմիտէի երկու ընկերներ, ընկերոջ ծածկող Հ.Յ. Դաշնակցութեան դրօշը ծալլելով փոխանցեցին հանգուցեալի այրիին՝ տիկին Զարուհի Փաշայեանին:

Թաղմանական արարողութիւններէն ետք, ընկերներ եւ բարեկամներ ներկայ եղան ընկերոջ հոգիին հանգստեան հոգեճաշին, Հայ Կեդրոնի սրահին մէջ:

Խաժակ Սրբազանի կողմէ ճաշի սեղաններու օրհնութենէն ետք սպասարկուեցաւ ճաշը, որմէ ետք խօսք առաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ ընկ. Բաֆֆի Տէր Պօղոսեան, որ սրտի խօսքով անդրադարձաւ ընկեր Կարոյի ծառայութիւններուն եւ նուիրուած աշխատանքներուն՝ ազգային եւ եկեղեցական ասպարէզներուն մէջ, ապա, կարդաց ընկերոջ ամփոփ կենսագրականը.

Կարօ Փաշայեան ծնած է 3 Սեպտեմբեր 1940ին, Տիգրանակերտ:

Հօր կողմէ Մշեցի եւ մօր կողմէ Սղերտցի, Տիգրան եւ Թագուհի Փաշայեաններու չորս մանչ զաւակներուն կրտսերն էր:

9 տարեկանին՝ 1949ին, հեռանալով Տիգրանակերտի Հայկական մթնոլորտէն, ընտանեօք կը հաստատուին Պաղտատ (Իրաք):

Ան իր նախնական կրթութիւնը կը ստանայ Տիգրանակերտի Թրքական վարժարանին մէջ, ուր միայն թրքերէն կը դասաւանդուէր: Պաղտատ հաստատուելէ ետք կը յաճախէ Հայկական նախակրթարան եւ կը սորվի հայերէն գրել, կարդալ եւ խօսիլ: Նախակրթարանը աւարտելէ ետք կը յաճախէ Պաղտատի երկրորդական վարժարան եւ աւարտելէ ետք իր ուսումը, կը մեկնի Անգլիա, ուր կը հետեւի նկարչական արուեստի դասընթացներուն: Վերադառնալով Պաղտատ, կը բանայ նկարչական իր սեփական արհեստանոցը:

Կարօ Փաշայեան Պաղտատի մէջ, փոքր տարիքէն սկսեալ, որպէս դպիր, ապա, որպէս սարկաւազ ծառայած է Պաղտատի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ:

Պաղտատի մէջ անդամակցած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Երիտասարդաց միութեան եւ 18 տարեկանին անցած է Հ.Յ.Դ. շարքերը:

1969ին, հաստատուած է Գանատա, որպէս մասնագէտ լուսանկարիչ, նախ որպէս պաշտօնեայ աշխատած է լուսանկարչական ընկերութեան մը մէջ, ապա, 1980ին, բացած իր սեփական լուսանկարչատունը:

Յատուկ սէր եւ հետաքրքրութիւն ունենալով Հայ գիրի եւ գրականութեան, Թորոնթոյի մէջ հետեւեցաւ տպագրական արհեստի յատուկ դասընթացներուն եւ բացաւ իր սեփական տպարանը՝ նախ «Երեւան», ապա «Պարոն»:

Կարոն, 14 Յուլիս 1974ին, Թորոնթոյի մէջ ամուսնացաւ օրդ. Զարուհի Ներսէսեանի հետ եւ բախտաւորութեան Սօսի անունով աղջիկ գաւակով մը, որուն տուին հայեցի դաստիարակութիւն Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանին մէջ, որուն ծրգ կարգը աւարտելէ ետք, աւարտեց նաեւ երկրորդական վարժարան եւ հետեւելով համալսարանական կրթութեան, ստացաւ պատշաճ վկայական պատիւ բերելով իր ծնողքին:

Կարոն իր գիտակցական կեանքին ընթացքին եղած է ազգասէր, հայրենասէր եւ եկեղեցասէր, Պաղտատի մէջ իր վարած ազգային պաշտօններէն ետք, Գանատա հաստատուելով շարունակեց մաս կազմել Թորոնթոյի ազգային կեանքին: Հիմնադիր անդամներէն մէկը եղած է Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ին, վարելով նաեւ ատենապետի պաշտօն: Անդամակցած է Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային միութեան՝ վարելով պատասխանատու պաշտօններ:

Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ կազմութեան առաջին օրերէն մաս կազմած է հոգաբարձութեան եւ շուրջ 12 տարիներ ծառայած եկեղեցւոյ, որպէս հոգաբարձու եւ հոգաբարձութեան ատենապետ: Ան մեծ դեր ունեցաւ եկեղեցւոյ շինութեան սկզբնական շինարարական եւ հանգանակային աշխատանքներուն մէջ:

Ան ներկայիս, որպէս Ազգային երեսփոխան Ս. Աստուածածին եկեղեցւոյ կողմէ մաս կը կազմէ Գանատայի եւ Միացեալ Նահանգներու արեւելեան թեմի ազգային երեսփոխանական ժողովին:

Վերջին քանի մը շաբաթներու ընթացքին կը գանգատէր սրտի անկանոնութենէ եւ ցաւէ, որուն հետեւանքով երկու անգամ հիւանդանոց փոխադրուեցաւ ունենալով սրտի զօրաւոր կաթուած: Բժշկական արդիական բոլոր միջոցները չկրցան բուժել անոր վիրաւոր սիրտը եւ ան հեռացաւ երկրաւոր կեանքէն Շաբաթ, 28 Յուլիս 2001, առաւօտեան ժամը 3:30ին, Կրէյս հիւանդանոցին մէջ:

Հոգեճաշի ընթացքին խօսք առին հանգուցեալի սրտակից ընկերները: Ընկեր Գրիգոր Հոթոյեան կարգաց ողբացեալ ընկերոջ նուիրուած քերթուած մը: Ընկ. Վազգէն Թերզեան մատնանչեց ընկեր Կարոյին անձնական կեանքէն յիշատակներ եւ ընդգծեց նկարագրին մարդկային եւ ընկերային գիծերը:

Խօսք առաւ Գեր. Շահէ Մ. Վրդ. Փանոսեան, որ իր սրտի խօսքով անդրադարձաւ ընկերոջ եկեղեցւոյ ծառայութեան, եկեղեցւոյ հիմնադրութեան 1983էն մինչեւ մեր օրերը՝ վարելով հոգաբարձութեան ատենապետի եւ այլ պաշտօններ:

Խօսք առաւ նաեւ ընկ. Ժիրայր Յովհաննէսեան եւ յիշեց ընկ. Կարոյին վերջին օրերու հանդիպումները, վերջաւորութեան կարգաց հանգուցեալ ընկերոջ նուիրուած քերթուած մը:

Ընկ. Կարոյի ընտանիքին անունով խօսք առին հանգուցեալի եղբօր՝ Տիգրանին գաւակներէն Արա եւ Շանթ, որոնք իրենց շնորհակալութիւնները յայտնեցին իրենց սիրելի հօրեղբօր յիշատակը յարգող եւ թաղման արարողութիւններուն ներկայ գտնուող եկեղեցականներուն եւ ժողովուրդին:

*
**

Ընկ. Կարօ, քու մահուան անարին մօտենալով, Շաբաթ առաւօտեան ժամը 6:00ին, ընկեր Յակոբ Ճանպաղեանին հետ, եւ, այնուհետեւ, իմ առանձնութեանս ընթացքին, աչքիս առջեւէն ժապաւէնի նման անցաւ մեր եղբայրական ընկերութեան զանազան դրուագները, պատկերներն ու յիշատակելի պահերը: Երբեք չեմ մոռնար, 1975ին, Թորոնթօ հաստատուելէ մէկ-երկու ամիս ետք, Տիւփոնի Հայ Կեդրոնին մէջ Կուսակցական ժողովէ մը դուրս գալով, Աւրին Թոտի պասի կանգառը կեցած էի թեթեւ անձրեւի մը հովանաւորութեամբ, սպասելով պասի գալուն: Բազմաթիւ ընկերներ անցան, սակայն, դուն, սիրելի Կարօ, կեցար, անուես ալ չէիր գիտեր, զիս հասցուցիր մեր տունը, քու «Վոլքս Վալըն» պզտիկ ինքնաշարժովդ, փաստելով մարդկային նկարագիրդ եւ ընկերասիրութիւնդ եւ ծառայութեան ոգիդ:

Այնուհետեւ, մեր բարեկամութիւնը սերտացաւ եւ դարձաւ նաեւ ընկերական: Մնայուն ներկայութիւն էի քու նկարչական խանութին մէջ, ինչպէս նաեւ «Երեւան» կամ «Պարոն» տպարանիդ մէջ:

Կը յիշե՞ս, բանաստեղծութեան գրքիս հրատարակութեան ընթացքին դժուարութիւնս լուծեցիր երկու խօսքով. «Կը տպենք, հաշիւը ապագային ձգեցի՞ր»: Քու ընկերասիրութեան եւ գրականութեան սիրով կարելի եղաւ լոյս ընծայել «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծութիւններու հատորը:

Քու ազգասիրական, հայրենասիրական, եկեղեցասիրական գործերը կարելի չէ ամբողջութեամբ յիշել հոս: Սակայն կը յիշեմ, որքան կը տառապէիր Իրաքահայ այն ընտանիքներուն համար, որոնք Յորդանան ապաստանած, կը տառապէին անստուգութեան ճիրաններուն մէջ: Յատուկ յանձնախումբ կազմելով, կառավարական միջոցներու դիմելով կրցար բազմաթիւ ընտանիքներ հասցնել Գանատա:

Եկեղեցասիրութիւնդ սահման չունէր: Ս. Աստուածածին եկեղեցւոյ հիմնադրութեան թուականէն՝ 1983էն 2001, միշտ պաշտօնի վրայ էիր, անդամակցելով հոգաբարձութեան եւ վերջին երկու տարիներ նաեւ երեսփոխանական ժողովին:

Կը յիշե՞ս, 2001 Մայիսին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի Ս. Աստուածածին եկեղեցւոյ տուած այցելութեան ընթացքին, Գեր. Շահէ Վրդ. Փանոսեանի կարգադրութեամբ ես եւ դուն Կաթողիկոսը դիմաւորեցինք աղ ու հացով:

Երկարամեայ մեր կեանքը աւելի սերտացաւ երբ տարիքի բերմամբ աւելի ժամանակ ունեցանք զիրար վայելելու, սակայն վերջին քանի մը ամիսները եկան մեր ընկերական քաղցր կեանքը թունաւորելու: Սրտի կաթուածով հիւանդանոց փոխադրուելիդ մեզ դրաւ դժուարին կացութեան դիմաց: Հիւանդանոց կ'այցելէինք միմիայն քու անձնական փափաքով եւ կարօտով, որովհետեւ «յատուկ հոգածութեան» բաժինը կը գտնուէիր եւ հոն կարելի չէ ընտանիքի անդամներէն զատ անձերու այցելութիւնը: Ես եւ Յովհաննէսը կ'այցելէինք քեզի եւ միշտ քեզ կը գտնէինք ապաքինուելու յոյսով եւ հաւատքով: Բոլորս ալ մահուան մասին մտածելու պէտք երբեք չունեցանք:

Սակայն չար բախտը մեզ դաւաճանեց,
Կեանքիդ անիւր դէպի մահ փոխեց,

Երկրաւոր կեանքէն ցաւով հեռացար,
Սիրելի Կարօ, սրտագին եղբայր:

Բայց վստահ եղիր, մենք քեզ չենք մոռնար,
Քու յիշատակդ կը պահենք անմար,
Մեր սրտերուն մէջ որպէս տենդավառ
Կանթեղ մը փայլուն, որ կը վառի յար:

Մշտնջենի լոյս քու տառապած հոգիին:
Խունկ եւ աղօթք քու անթառամ յիշատակին:

«ՀՈՐԻՉՈՆ»
20 Օգոստոս 2001



Ձախէն աջ՝
Կարօ Փաշայեան, գեղանկարիչ Բիւզանդ Կոճամալեան,
Գրիգոր Հոթոյեան եւ Անդրանիկ Արթինեան

ԱԶԳԱՅԻՆ ԹԱՂՈՒՄ ԸՆԿԵՐ ԳՈՒՐԳԷՆ ՄԱԿԱՐԵԱՆԻՆ

Ուրբաթ, 26 Սեպտեմբեր 2003, առաւօտեան ժամը 9:00ին, Քենպըր-Փորտ գիւղաքաղաքի իր տան մէջ, մահկանացուն կնքեց Ճորճթաունի որբերէն վերջին մոհիկան ընկ. Գուրգէն (Գըրք) Մակարեան:

Հանգուցեալ ընկերոջ տան կարգը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 29 Սեպտեմբերի երեկոյեան ժամը 7:00-9:00, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Կաթողիկոսական փոխանորդ Գանատայի Հայոց Ազգային Առաջնորդութեան Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի, մասնակցութեամբ Կիպրահայ Թեմի Կաթողիկոսական փոխանորդ Գերշ. Վարուժան Արք. Հերկելեանի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերշ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի, Գէմպրիճի Ս. Նշան Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արթ. Տ. Կոմիտաս Քէն. Փանոսեանի:

Եկեղեցական արարողութիւններու ընթացքին, անգլերէն լեզուով խօսք առաւ Բաֆֆի Սարգիսեան եւ հայերէնով՝ ընկ. Յակոբ Ճանպազեան, որոնք թուեցին ընկ. Մակարեանի կեանքին կարեւոր հանգրուանները եւ ազգային գործունէութիւնները:

Աւետարանական պատշաճ բնաբանով, մահացած ընկերոջ մասին խօսեցաւ Գերշ. Վարուժան Արք. Հերկելեան:

Ընկ. Գուրգէն Մակարեանի թաղման կարգը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2003, կ.ա. ժամը 11:00ին, նախագահութեամբ Գերշ. Խաժակ Արք. Յակոբեանի եւ մասնակցութեամբ Գերշ. Վարուժան Արք. Հերկելեանի, Հոգշ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի, Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արթ. Տ. Զարեհ Քէն. Զարգարեանի եւ Թորոնթոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ կաթողիկէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերշ. Եղիա Ծ. Վրդ. Գիրէշեանի:

Երկու օրերու ընթացքին, հանգուցեալ ընկերոջ դագաղը ծածկուած էր Հ.Յ. Դաշնակցութեան դրօշով:

Թաղման կարգի ընթացքին խօսք առին Գերշ. Խաժակ Արք. Յակոբեան, որ ընդգծեց ընկ. Մակարեանի ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնը եւ եկեղեցասիրութիւնը, իր կեանքով, նիւթական եւ բարոյական նուիրուածութեամբ օրինակ դարձաւ Հայ մատղաշ սերունդին:

Ննջեցեալ ընկերոջ թաղումը տեղի ունեցաւ Նորթ Եորքի Եորք գերեզմանատան հայկական 25րդ շրջանին մէջ:

Դամբանական խօսեցաւ Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի հերթապահ ընկ. Վարուժան Պասթաճեան եւ հանգուցեալ ընկերոջ բարեմասնութիւնները թուելէ ետք, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական կոմիտէի, Հ.Յ.Դ. «Ս. Թէհլիրեան» կոմիտէի եւ Հայ Կեդրոնի յարկին տակ գործող բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու անունով ցաւակցութիւն յայտնեց հանգուցեալի այրիին, ընկերներուն եւ բարեկամներուն:

Վեստակաւոր ընկերոջ մարմինը հողին յանձնուեցաւ ընկերներու կողմէ երգուած «Վերքերով Լի» երգով:

*
**

Ընկ. Գուրգէն Մակարեան ծնած է 1914ին, Կիւրիւն: Մանկապարտէզ գացած է Գոնիա: Զարդերէն ճողոպրած է հրաշքով եւ մեծ մօր եւ երկու քոյրերուն հետ անցած է Մերսին, այնտեղէն՝ 1922ին, Յունաստան, Գորֆուի մէկ գաղթականը: 1923ին մաս կազմած է այն առաջին 50 որբերուն, որոնք ընտրուած են հազարաւորներու մէջէն ու բերուած Թորոնթոյի Արեւմուտքը ծրարած փոքր աւանը՝ Ճորճթաուն, ուր իրենց համար յատուկ ազարակ մը գընւած է: Քանի մը տարի մարզուելէ ետք, անոնք ղրկուած են շրջակայ ազարակները՝ որպէս օգնական ձեռք:

Ազարակը պատկանած է «Գանատայի Հայկական Օգնութեան Ընկերակցութեան», որ ինչ-ինչ պատճառներով, շատ չանցած ցրուած են բոլոր որբերը, կալուածն ալ յանձնուած է Գանատայի Եունայթըտ Չըրչին:

Ազարակներու մէջ աշխատելով հանդերձ, Գուրգէն կրցած է ուսանիլ մինչեւ ծրգ կարգ:

Մայրը՝ Շուշանիկ, մահացած է Կրետէի մէջ, քանի մը տարի ետք ալ Մելինէ քոյրը, ծննդաբերութենէ մը ետք: Գուրգէն, 1929ին, յաջողած է Գանատա բերել միւս քոյրը՝ Արաքսին, իսկ 1939ին՝ մեծ մայրը: Քոյրը կնութեան ուզած են Պոսթընէն, ինք ալ պահ մը առանց գիտնալու ապօրինի կերպով հոն մնալէ ետք, ուր կօշկակարի խանութ մը բացած էր, մատուցելով, ստիպուած, Գանատացի աղջկան մը հետ ամուսնանալով, 1937ին, վերադարձած է Թորոնթօ եւ մտած է հազուստ մաքրող հաստատութեան մը մէջ ու շրջանաւարտ եղած է քառասուն տարի ետք:

Ընկ. Գուրգէն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը մտած է 1933ին, Զօրավար Նժդէհի ցեղակրօն շարժումին արձանագրուելուով: 1937ին, Թորոնթօ հաստատուելով կը սկսի կուսակցական գործունէութեան, Դաշնակցական 12 ընկերներու գործակցութեամբ, ընկերներ Գափսուզեանի եւ Միսաք Սէֆէրեանի տուներուն մէջ:

1956ին, Կոմիտէի ատենապետ կ'ընտրուի: Այդ տարի, ընկեր Եղիշ Քոթիկեանի հետ կ'որոշեն Հայաստանի անկախութեան թուականը՝ Մայիս 28ը տօնել հրապարակային՝ առաջին անգամ ըլլալով Գանատայի մէջ: Հոն կը ծանօթանայ Միսիգ Մարկըրիթ Գեմպըլին, որ այն ատեն փաստաբան էր, որ յետագային որպէս երեսփոխան եւ նախարար մեծ օգտակարութիւն ունեցաւ Հայ գաղութին:

Ընկ. Գուրգէն, իր անձնական հմայքը եւ ծանօթութիւնները ի գործ դնելով, ընկերներու համագործակցութեամբ 34,000 տոլարի գնելով եւ 30,000 տոլար ծախսելով, կարելի կ'ըլլայ 18 Տիւփոն փողոցի Հայ Կեդրոնը գնել:

Այնուհետեւ, ընկ. Մակարեան իր անձնական ծանօթութիւններով, այդ օրերու վարչապետ Տիֆընպէյթի եւ այլ բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ մեծապէս օգտակար եղած է Հայ ժողովուրդին:

Ընկ. Մակարեան, նկատելով, որ ինք ամուսնական կեանքի ընթացքին հայր ըլլալու բախտին չէր արժանացած, Հ.Յ.Դ. «Ս.Թէհլիրեան» կոմիտէի հետ խորհրդակցաբար որոշած է իր բնակած տունը կտակել Հայ Կեդրոնին եւ Հայ

դպրոցին, դպրոցի բոլոր աշակերտները նկատելով իր զաւակները: Այդ բոլորով հանդերձ, ան միշտ ներկայ էր Հայ Կեդրոնի բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու ձեռնարկներուն եւ իր նիւթական օգնութիւնը չէր խնայեր երբեք:

Ան, 70 տարիներուն իր կուսակցական վաստակով, մեծ դեր ունեցած է գաղութի կուսակցական եւ ազգային կեանքի կազմակերպման աշխատանքներուն մէջ եւ մանաւանդ Գանատական պետական մակարդակի իր ծանօթութիւններուն շնորհիւ սատարած է Հայ Դատի աշխատանքներուն եւ ծանօթացման:

Ընկ. Մակարեան, իր բնական Քենպըլֆորտ գիւղաքաղաքէն յաճախ կու գար Թորոնթօ, ներկայ ըլլալու համար Դաշնակցութեան կամ դպրոցի ձեռնարկներուն, եւ եթէ երբեք բանաւոր պատճառով չկարենար գալ, իր յաջորդ գալուն, իր սրտագին նուիրատութիւնը իմ միջոցաւ կը փոխանցէ ձեռնարկը կազմակերպող կազմակերպութեան:

Թորոնթօ այցելութիւններուն ընթացքին, զինք սիրայօժար կը հիւրընկալէին իրենց տուններուն մէջ, ներկայիս Գալիֆորնիա փոխադրուած ընկ. Սասունեան եւ Սարգիս Սարգիսեան եւ իր եղբայրը՝ Գրիգոր Սարգիսեան:

Ընկ. Գուրգէն, տարիներ առաջ ինծի տուաւ օրինակ մը, Վրէժ-Արմէնի «Հայրենիք» օրաթերթի 16 Փետրուար 1980 թիւին մէջ հրատարակուած «Երեւանի Քաղաքապետին Հետ Հանդիպում» յօդուածին, ուր Վրէժ-Արմէն հարցազրոյց կ'ունենայ ընկ. Մակարեանի հետ, մտածելով, որ ապագային կ'օգտագործենք զայն:

Հանգուցեալ ընկերը, այդ օրերուն Թորոնթոյի մէջ բազմամշակութային տօնախմբութեան առթիւ կազմակերպուած «Կարաւան» ձեռնարկի կարգին, Հայ Կեդրոնը կը մասնակցէր «Երեւան» անունով եւ ընկերը հայկական այդ ցուցահանդէս խրախճանքին, քաղաքապետի պաշտօնը վարած էր, հագնելով քաղաքապետական տպաւորիչ հագուստը:

Ընկեր Մակարեանի հետ ճամբորդելու բախտը ունեցած եմ բազմաթիւ անգամներ: Ամէնէն աւելի յիշատակելի եւ անմոռանալի կը մնայ 27 Մայիս 2000ին, Զօրավար Դրոյի աճիւններու փոխադրութեան առթիւ, միւնտոյն օդանաւով Զօրավար Դրոյի աճիւններուն հետ մեր ճամբորդութիւնը դէպի Հայաստան, ուր Անի Փլագա պանդոկին մէջ երկու շաբաթ միեւնոյն սենեակը բաժնեցինք եւ զիրար վայելեցինք Դրոյի աճիւններու թաղման առիթով կատարուող հանդիսութիւններու եւ զանազան պտոյտներու ընթացքին: Հակառակ իր 86 տարեկանի կեանքին, ընկերը, կենսուրախ էր եւ զմայլած հայրենիքի գեղեցկութեամբ: Իր փափաքն էր, իր խօսքով՝ «Մեռնելէ Առաջ» անգամ մըն ալ այցելել Հայաստանի անցագիր ունենալէ ետք: Սակայն, աւաղ, չիրականացաւ իր փափաքը:

Սիրելի Գուրգէն, քու անձնուէր կեանքով, որպէս կուսակցական ընկեր եւ իրաւ Հայ, օրինակ դարձար Հայ նոր սերունդի զաւակներուն, որպէսզի անոնք ալ հետեւին քու հաւատաւոր ազգայինի կեանքին՝ մաքրամաքուր հայրենասիրութեամբ եւ հայկերտ նկարագրով:

«ՅՈՐԻՉՈՆ»
20 Յոկտեմբեր 2003

ՎԱԽՃԱՆՄԱՆ Ա. ՏԱՐԵԼԻՑ ՀՈԳԵԼՈՅՍ ՏԷՐ ՎԱՐԱՆԴ ՔԱՀԱՆԱՅ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Արդէն իսկ տարի մը անցած է սրտաճմլիկ այն օրէն, այն սեւ օրէն, երբ Հոգեւոյ Տէր Վարանդ ՔՀն. Պետրոսեանի վախճանման բօթը, կայծակի արագութեամբ Քէմպրիճէն կը հասնէր Թորոնթօ, տխրութեան եւ ափսոսանքի ըզգացումներով յուզելով մեր սրտերը:

Մեր բոլորին սիրելի Տէր Հայրը, բարի եւ մարդամօտ հովիւը, որ իր հօտին ամէն տեսակ դժուարութիւններուն օգտակար դառնալու եւ օգնելու պատրաստ էր ամէն ժամ, այդ ճամբուն վրայ, առանց գիտնալու եւ գիտակցելու, որ ինքն ալ օգնութեան եւ օժանդակութեան պէտք ունի, սրտի անակնկալ կաթուածի հետեւանքով, քանի մը ժամուան պայքարէ ետք, հազիւ հիւանդանոց հասած, իր տառապակոծ հոգին կ'աւանդէր, 25 Մայիս 2002ին, Քէմպրիճի մէջ, որուն Ս. Նշան Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւի պաշտօն կը վարէր 1995էն ի վեր, անհուն ցաւ եւ տխրութիւն առթելով հարաւային Օնթարիոյի հայ գաղութներու անդամներուն հոգիներուն մէջ:

Տէր Վարանդ ՔՀն. Պետրոսեան, աւագանի անունով Արմէն, ծնած է Հալէպ, 4 Փետրուար 1946ին: Նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի Կրթա-սիրաց Վարժարանին մէջ:

1962ին փոխադրուած է Պէյրութ (Լիբանան) եւ աւելի քան 25 տարիներ որպէս գրաշար եւ էջադրող ծառայած է Լիբանանի Հ.Յ. Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի պաշտօնաթերթ «Ազդակ» օրաթերթին, եւ որպէս հաւատաւոր եւ խղճամիտ պաշտօնեայ, Լիբանանի քաղաքացիական կռիւներուն, իր կեանքն իսկ վտագելով, անցած է վտանգաւոր ճամբաներէն եւ ապահոված թերթի հրատարակութիւնը:

4 Յունիս 1972ին, ամուսնացած է օրդ. Սոնա Յարութիւնեանի հետ եւ ունեցած է երկու զաւակներ՝ Ռուբէն եւ Յարութ:

Մանկութենէն իր մէջ տեղ գտած կրօնական զգացումները եւ Հայաստանեայց եկեղեցւոյ հանդէպ հաւատացեալի իր սէրը, զինք մղած է հրաժարելու գրաշարական աշխատանքէն եւ 1990-93 հետեւելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քահանայից Դասարանի դասընթացներուն, որուն ընթացքը աւարտելով, 21 Նոյեմբեր 1993ին, ձեռնադրուած է քահանայ, ձեռամբ՝ Լիբանանի Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տէր Արամ Ս. Արք. Քէշիշեանի (Այժմ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) վերակոչուելով Տէր Վարանդ Քահանայ:

Տէր Վարանդ, քահանայական կոչում ստանալով, իր կեանքի ուղղութիւնները եւ առօրեան որոշապէս փոխուեցան, նոր պարտականութիւններ, հովուական եւ քահանայական ասպարէզի գործունէութեան ընթացքին ստեղծած դժուարութիւնները, արգելք չեղան, որ ան շարունակէ յաճախել «Ազդակ» օրաթերթի տպարանը, իր փորձառութենէն ուղղութիւն տալու եւ օժանդակելու գրաշարական աշխատանքներուն, առանց դոյզն ակնկալութեան, հայ մամուլին օգտակար դառնալու եւ ծառայելու բարձր ու ազնիւ գիտակցութենէն տարուելով:

Գանատայի Թեմին պատկանող Քէմպրիճ քաղաքի Ս. Նշան Հայց. Առաքելական եկեղեցւոյ ծառայող քահանային այս պաշտօնի կոչուելուն հետեւանքով, առիթ ստեղծուեցաւ Տէր Վարանդ Քահանային, որ Մ. Նահանգներու Արեւելեան Թեմի եւ Գանատայի Առաջնորդութեան կողմէ իրեն եղած հրաւերին, 1995ին ստանձնելու Ս. Նշան եկեղեցւոյ հոգեւոր հովիւի պաշտօնը:

Տէր Հայրը, մեծ եռանդով ընդունեց հովիւի պաշտօնը, եւ իր բարեհոգի ազնիւ եւ խոնարհ բնաւորութեամբ սիրուեցաւ հարաւային Օնթարիոյի գաղութներու անդամներէն:

Ան, իր պաշտօնի ստանձման առաջին օրէն, ձեռնարկեց եկեղեցւոյ բարեգարգման աշխատանքներուն, վերակազմելով եկեղեցւոյ զանազան մարմինները եւ յանձնախումբերը, միշտ առիթ տալով, որ Քէմպրիճէն դուրս գտնուող հայ գաղութներն ալ կապուին Ս. Նշան եկեղեցւոյ եւ նոյնիսկ կարգ մը ազգայիններ մաս կազմեն հոգաբարձութիւններուն:

Տէր Հայրը, իր հովուութեան շրջանին, միշտ օգտակար դարձաւ իր հօտի կարիքներուն: Մեծ ձեռնհասութեամբ ամէն տարի, հոգաբարձութեան օժանդակութեամբ կազմակերպեց Ս. Խաչի տօնը, ընդունելով Գանատայի եւ Մ. Նահանգներու զանազան գաղութներէ ուխտի եկող ազգայինները:

Հոգելոյս Տէր Վարանդ Քհն. Պետրոսեանը ճանչցայ 1995ին ամառը, ընկեր Յակոբ Ճանպաղեանի բնակարանին մէջ կազմակերպուած ծանօթացման ճաշկերոյթին ընթացքին:

Անշուշտ այդ օր, ներկաները հերթով խօսք առին, եւ, իրենց բարեմաղթութիւնները կատարեցին Տէր Հօր, մաղթելով յաջողութիւն իր դժուարին, բայց Աստուածահաճոյ պարտականութիւններուն:

Եղան անակնկալներ եւ գործադրուեցաւ յանպատրաստից յայտագիր մը, երգերով, արտասանութիւններով եւ ճառերով:

Տէր Հայրը խօսք առնելով, յուզումով եւ երախտագիտական զգացումներով արտայայտուեցաւ իրեն հանդէպ ցոյց տրուած յարգանքի եւ հոգածութեան համար, շնորհակալութիւն յայտնելով նախ Ճանպաղեան ընտանիքին, որ ի պատիւ իրեն կազմակերպած էր ճաշկերոյթ-հաւաքոյթը, ինչպէս նաեւ բոլոր խօսողներուն, որոնք որպէս հարազատ եւ եղբայր խոստացան զօրավիգ կանգնիլ իր գործունէութեան:

Անշուշտ, խոստում ընողները կատարեցին իրենց խոստումները եւ պիտի շարունակէին մինչեւ խոր ծերութիւն, եթէ երբեք, Տէր Հօր զգայուն սիրտը իրեն չդաւաճանէր:

Ճաշկերոյթի ընթացքին, Տէր Հօր հետ խօսելու առանձին առիթ ունեցայ, խօսակցութեան ընթացքին ինծի ըսաւ, թէ ես իր քրոջ հետ գրաշարութիւն ըրած եմ Հալէպի մէջ, եւ, որպէս օժանդակ գրաշար աշխատած իր մօրեղբօր տպարան «Ոսկետառ»ին մէջ, աւելցնելով, որ ինք ալ հօր կողմէ Սասունցի է, ինչպէս ես: Ուրեմն հայրենակիցներ:

Հայրենակցական այդ կապը ամուր մնաց մեր միջեւ մինչեւ իր անժամանակեայ վախճանումը: Երբեք չէի կրնար մերժել կամ ընթացք չտալ ինծի եղած թղթակցական իր առաջարկներուն: Թէեւ կը տրտնջայի, սակայն հայ եկեղեցւոյ ծառայելու եւ անոր Սասունցի հոգեւոր հովիւի արիւնի կանչին չզի-

մանալով կը կատարէի Ս. Խաչի տօնին առթիւ կատարուած ձեռնարկին թըղ-
թակցութիւնը եւ այլ թղթակցութիւններ:

Տէր Հայրը, իր գեղեցիկ ձայնով, տպաւորիչ եւ խորիմաստ քարոզնե-
րով սիրուած էր իր ժողովուրդէն, եւ, որպէս հոգեւոր հովիւ, իր հանգիստը
չփնտռելու գնով, կը հասնէր իր հօտի կարիքներուն, երբ հարկը ստացուէր,
յաճախ Հայր Սուրբին բացակայութեան ընթացքին:

1997ին, Մ. Նահանգներու Արեւելեան Թեմին եւ Գանատայի իր շնոր-
հած հովուապետական անդրանիկ այցելութեան ընթացքին, Մեծի Տանն Կի-
լիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետ, գնահատելով Տէր Հօր
ծառայութիւնը, անոր կը շնորհէ լանջախաչ կրելու արտօնութիւն:

Լոյս մ'չտնջենի իր տառապած հոգիին եւ խունկ, մոմ եւ աղօթք իր ան-
թառամ յիշատակին:

«ԵԿԵՂԵՑԻ»
2003



Ջորավար Դրոյի աճիւններուն տուն դարձը

Ը.

ԵՐԳԵՐ

ԵՐԲ ՉԱՅՆԴ ԼՍԵՑԻ

Խօսք՝ Գրիգոր Չոթոյեանի
Երաժշտ.՝ Անահիտ Կուտսուզեանի

2 { Երբ քաղցրահնչիւն ձայնդ լսեցի,
Անհաւատալի թուեցաւ ինձի,
Սիրտս թրթռաց բեկրանքով առլի
Եւ սիրակարօտ յոյզով անձկալի:

2 { Պահ մը տարուեցայ անուշ անուրջով,
Անցած օրերու յիշատակներով,
Չոգիս արթնցաւ անթեղուած սիրով,
Խնամքով պահուած քաղցր յուշերով:

2 { Ճակատագրի տժգոյն քմայքով,
Մենք բաժնուեցանք իրարմէ ցաւով,
Որուն հետքերը կը մնան յաւէտ,
Անյոյս ըղձանքի երազներով խենթ:

2 { Այո՛, սիրելիս, չեմ մոռնար ես քեզ,
Մեր համբոյրները՝ թաքուն, հրակէզ,
Աչքերէդ ցայտող սէրդ մեղրածոր
Եւ գգուանքներդ՝ քնքոյշ, սիրածոր:

2 { Չեռու ենք հիմա, չենք տեսներ իրար,
Բայց կապուինք իրար խօսքով կենարար,
Մեր երազները ապրում կարծելով,
Մեր սիրոյն կեանք տանք անհուն կարօտով:

ՄՈՒՐԲ ԽԱՉԻ ՃԱՄԲՈՎ

Խօսք՝ Գրիգոր Չոթոյեանի
Երաժշտ.՝ Սարգիս Դամպոյեանի

Խաչի խորհուրդով եւ հաւատամքով,
Մարդկային սիրտը սիրով ծովացաւ,
Սիրտէ-սիրտ կապը լոյսով զօրացաւ,
Խաչէդ արձակուող ճառագայթներով:

Ազնիւ հայ ազգը դարերով անձայն,
Իր խաչը շալկած իր սուրբ հաւատքով,
Յիսուսի խաչին կառչած մնալով,
Կը քալէ անվերջ Յիսուսի նման:

Փրկարար Յիսուս, սիրոյ բուրաստան,
Քու խաչելութեան տառապանքներով
Եւ խաչին վրայ թափած արիւնով,
Սուրբ խաչը դարձաւ հաւատքի խորան:

Moderato

Կեանքի լոյս շի սուս լուսե շէն խո բան
Լուսու ճոյդի դի փրկիչ ճարտ կու թեան
Մա հա պարտեքու իւր չո զը դա ճան
Մա հը քր կէ քիւր կամ քով ան սա սան:

ՄԱՂԹԵՐԳ Հ.Օ.Մ.Ի ԱՄԱՌՆԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻՆ

Խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի
Երաժշտ.՝ Գեորգ Յարութիւնեանի

Մենք աշակերտներ Հ.Օ.Մ.ի ճամբարին,
Եօթը շաբաթներ սրտով կաթոգին,
Կու գանք վայելելու հայ միջավայրին,
Բոյրը հայաշունչ եւ Մեսրոպածին:

Մենք աշակերտներ Հ.Օ.Մ.ի ճամբարին,
Կու գանք սորվելու կամքով ջերմագին,
Աշակերտական նոր գիտելիքներ,
Եւ հայ տոհմային երգեր ու պարեր:

Կը սիրենք սորվիլ Հայոց Պատմութիւն,
Հայ կրօնական վսեմ կրթութիւն,
Ծանօթանալով մեր նախնիքներուն,
Յաղթանակ կերտած հայ հերոսներուն:

Կը սիրենք նաեւ խաղեր մարզական,
Լողալ, պտոյտներ՝ վայրեր տեսարժան,
Գնահատելով Հ.Օ.Մ.ը կենարար,
Որ կը պահէ յար ճամբարը պայծառ:

Կրկներգ Կը սիրենք քաղցր լեզուն հայկական,
Մեր չքնաղ լեզուն՝ պարծանք հայութեան,
Որ պահենք ընդմիշտ հայկական ոգին,
Նեցուկ կանգնելով Մայր Հայաստանին:

Վերջ Որ պահենք ընդմիշտ հայկական ոգին,
Նեցուկ կանգնելով Մայր Հայաստանին:

ՄԱՂԹԵՐԳ Հ.Օ.Մ.Ի ԱՄԱՌՆԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻՆ

Խօսք՝ Գրիգոր Չոբոյեանի

Երաժշտ.՝ Գեորգ Յարութիւնեանի

The musical score consists of five staves of music in 2/4 time, marked "March Tempo". The notation includes various rhythmic values such as eighth and sixteenth notes, and rests. The first staff begins with a treble clef and a common time signature. The second staff continues the melody. The third staff is labeled "Chorus" and features a more complex rhythmic pattern. The fourth staff is labeled "End-Coda" and includes a first ending bracket. The fifth staff concludes the piece with a double bar line.

ՔԵԶ ՀՐԵՇՏԱԿ ԿԱՐԾԵՑԻ

Խօսք՝ Գրիգոր Յոթոյեանի
Երաժշտ. Անահիտ Կուտսուզեանի

2 { Քեզ հրեշտակ կարծեցի,
Եւ սիրեցի խոր սիրով,
Շատ գիշերներ լուսցուցի,
Քեզ տեսնելու կարօտով:

Սիրելով քեզ իմ աղուոր,
Կեանքս դարձաւ ծաղկաբոյր,
Երազներով մեղրածոր,
Սէրս ցայտեց զերթ աղբիւր:

Սիրոյդ հելքին անձնատուր,
Գինովցայ ես խենթ սիրով,
Տենչանքներով սիրաբոյր,
Օրերս անցան ըղձանքով:

2 { Սակայն, աւա՛ղ, խաբուեցայ,
Յաւատալով քու սիրոյն,
Արցունքներուդ բիւրեղեայ,
Տարփոտ սիրտիդ զարկերուն:

Աններելի գնացքով,
Դուն հեռացար անվրդով,
Մոռցած խոստում ու գորով
Եւ ապրումներ հոգեթով:

Տարիները լուռ անցան,
Չանիծեցի քեզ երբեք,
Յիշատակներ դալկացան,
Սէրս մնաց յուսաբեկ:

ՔԵԶ ՀՐԵՇՏԱԿ ԿԱՐԾԵՑԻ

Խօսք՝ Գրիգոր Չոբոյեանի

Երաժշտ.՝ Անահիտ Կուտսուզեանի

Քեզ հը-րեշ-տակար-ձեռնի, եւ սի-րեցի խոր սի-րով, զար գի-ղեր-նեղ լաւ-յա-ցի
Ինչ պէտք ձեռ-նա կա-րօ-տում:
Ար-րե-շով ինչ ի՞նչ աղ-ու-որ, կեանքս յար ջաւ ձալ-կա-րոյր, եւ-րաւ-նե-րով յեղ-րա-նոր,
Ար-րա ջաւ-տեց զերթալ-բեր: Ար-րոյր հե-փիւնեց-աւ-րոյր գի-ւոր-յալ եւ խնայ-սի-րով,
Կեանքս ձեռ-նով սի-րա-րոյր օ-րերս աւելցնեց-իմ-իով:

ԻՆՉ ԸՆԵՄ

Խօսք՝ Գրիգոր Չոթոյեանի
Երաժշտ.՝ Անահիտ Կուտսուզեանի

- Ամէն անգամ որ կը նային պատկերիդ,
Չին օրերու յիշատակներ կ'արթնան.
2 { Վերյիշելով քաղցրութիւնը գգուանքիդ,
Կը պաշարուին զգացումով յուզական:
- Երբ հարցուցի ինչո՞ւ կ'երթաս, մնացիր,
Զիս մի՛ ձգեր այսպէս մի՞նակ տելական,
2 { Դուն գաղտնօրէն սիրտդ բացիր ու լացիր,
Խոստանալով վերադառնալ անպայման:
- Բայց դուն գացիր, անվերադարձ գնացքով,
Տարիները թաւալեցան անձկագին,
2 { Կեանքս դարձաւ մելամաղձոտ ու խռով,
Չին օրերու երազանքով հեշտագին:
- Կորսնցուցի քեզ թանկագին սիրուհիս,
Քեզ գրկելու եւ սիրելու կարօտ եմ,
2 { Արցունքներս թէեւ չորցան սիրելիս,
Սակայն սէրս միշտ կը կոտտայ, ի՞նչ ընեն:
- Ո՞ւր մնացիր համբոյրներդ մեղրաթոյր,
Չպումներդ ներզգայուն ա՛լ չկան,
2 { Մոռցուեցան ապրումներդ սիրաբոյր,
Յիշատակդ սակայն կ'ապրի յաւիտեան:

ԻՆՉ ԸՆԵՄ

Խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի

Երաժշտ.՝ Անահիտ Կուտսուլեանի

Մ - յեւ ան-գան, որ կը նա-ջի՛ս պա-ր-կե՛ - ըրո՞ց հին օ-րե՛ - բու յի-շա-րակ-նէր կար-
չէր-յի-ղե-լով ժաղ-ցում-բիւ-նը գրգ-ուն-բիւ-նը պա-շար-նիս՛ էլ-գա-ցու-ծով յու-լա-կան
չէր-յի-ղե-լով ժաղ-ցում-բիւ-նը գրգ-ուն-բիւ-նը պա-շար-նիս՛ էլ-գա-ցու-ծով յու-լա-կան

ԾՆՈՒՆԴԻ ԳԻՇԵՐ

Խօսք՝ Գրիգոր Հոթոյեանի
Երաժշտ.՝ Գ. Յարութիւնեանի

Ծնունդի գիշեր, հոգեզմայլ գիշեր,
Հովիւներ արթուն եւ հրեշտակներ,
Ուրախ երգերու հնչիւններով վառ,
Կուտան աւետիս համայն մարդկութեան,
Ծնած էր սիրոյ Արքան օրհնաբան,
Մարդոց մեղքերը քաւելու համար:

Ծնած էր Արքան՝ Աստուծոյ որդին,
Լուսաւորելու սրտերը մթին,
Մարդկային ազնիւ զգացումներով
Եւ աստուածահաճոյ ապրելակերպով
Օժտելու համար անխիղճ եւ անգութ
Կեանք վարող մարդոց կենցաղը անփոյթ:

Բեթղէիմ քաղաքի մսուրը անշուք,
Լոյսով օժտուեցաւ Աստուծոյ կամքով,
Լուսաւոր աստղ մը առաջնորդ դարձաւ
Երեք մոգերուն, որոնք հաւատքով,
Երկիւղածութեամբ ու նուէրներով,
Երկրպագեցին ծնած Արքային:

Յիսուս Մանուկի ծնունդը խոնարհ,
Աւետիս տալով մենք կը տօնենք յար,
Որպէս մարդացեալ Աստուած կենարար,
Որ Աստուածային սիրոյ խորհրդով,
Եւ սուրբ Մարիամի մայրական ուխտով,
Դարձաւ մարդկութեան խիղճը իր կեանքով:

Այս գիշեր տօն է՝ Սիրոյ Բուրաստան:
Կը տօնենք հպարտ, սիրով դիւթական,
Մեր սուրբ հայրերու շարականներով
Եւ հայրենաւանդ խոր աղօթքներով,
Տալով աւետիս ամբողջ հայութեան,
Որ ծնաւ Արքան՝ Փրկիչ մարդկութեան:

ԾՆՈՒՆԴԻ ԳԻՇԵՐ

Խօսք՝ Գրիգոր Զոթոյեանի

Երաժշտ.՝ Գ. Յարուբիւնեանի

Մ - նուն - դի գի - - - - 2եր հո - գեզ - մայլ գի - 2եր
 Մ - նուն - դի գի - 2եր հո - գեզ - մայլ գի - 2եր
 - 2եր հո - գեզ - մայլ գի - 2եր
 - 2եր հո - գեզ - մայլ գի - 2եր

Հո - վիւ - ներ ար - բուն եւ - հրեշ - տակ → ներ Ուր - ախ եր - գե - բու հն -
 Հո - վիւ - ներ ար - բուն եւ - հրեշ - տակ → ներ Ուր - ախ եր - գե - բու հն -
 Հո - վիւ - ներ ար - բուն եւ - հրեշ - տակ → ներ Ուր -
 Հո - վիւ - ներ ար - բուն եւ - հրեշ - տակ → ներ Ուր -

- շիւ - ներ - ով վառ կու - տան ա - լե - տիս հա - - մայն մարդ - կու - բան
 - - - - - վառ կու - տան ա - լե - տիս հա - - - - - բան
 - - - - - վառ կու - - - - - բան
 - - - - - վառ - - - - - բան

Մ - նաձ էր սի - րոյ Ար - քան օր - հնա - - քա - - - - ն
 Մ - նաձ էր սի - րոյ Ար - քան օր - հնա - - քա - - - - ն
 Մ - էր սի - Ար - քան օր - հնա - - քա - - - - ն
 Մ - Ար - քան օր - քա - - - - ն

Մար - դոց մեղ - քե - րը քա - լե - - լու հա - - մար,
 Մար - դոց մեղ - քե - րը քա - լե - - լու հա - - մար,
 Մար - - - մեղ - քե - քա - լե - - լու հա - - մար,
 Մար - քա - լե - - լու հա - - մար

ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒ

Խօսք՝ Գրիգոր Չոթոյեանի
Երաժշտ.՝ Յակոբ Մանուկեանի

Կու գամ այսօր հպարտօրէն քու փառքերը գովերգելու,
Պաշտամունքով տարփողելու սուրբ գիրքերդ Մեսրոպածին,
Երկրի վրայ տարտղնուած հնադարեան հայոց ազգին
Սերունդները իրար զօդող, մեր մայրենիք չքնա՛ղ լեզու:

Ձմայլելի երաժշտութեամբ մեղեդի մ'ես դուն վարարուն,
Մեր հնամեայ տաճարներէն վեր բարձրացող աղօթքի սիւն,
Մեր եռանդուն շինականի ու հովիւի շրթունքներուն
Յաւերժօրէն թրթռացող, անմահական երգերու տուն:

Անդնդախոր մեր ծորերէն հոսող ահեղ գետի նման
Կը սուրաս յար վազքով անսանձ դէպի պայծառ մեր ապագան,
Ու բարձրաբերձ Արարատի վրայ հանգչող որպէս տապան
Դուն կը մնաս անխոցելի, անաղա՛րտ ու յաւերժական:

Երկրագունդի չորս ծագերուն սփռուած հայ բեկորներուն,
Ճանապարհը կորսնցուցած զաւակներուն փարո՛ւ ես դուն,
Սուրբ Սահակէ եւ Մեսրոպէ փոխանցուած սերունդներուն,
Չասած մեզի նոր աւիշով, լուսապայծառ մայր սիրասուն:

Դարե՛ր-դարե՛ր վահան եղար Չայաստանը ամայացնող,
Կործանարար խուժաններուն վատթարագոյն գռռիին դէմ,
Դարե՛ր-դարե՛ր, որպէս արեւ մշակոյթի պայծառադէմ,
Ճաճանչներդ տարածեցիր այլ երկիրներ մութ ու միրհող:

Ինչքա՛ն երգեմ գրչովս տկար գեղեցկութիւնդ անմահական,
Կարծես երբեք չեմ գովերգած՝ սրտիս խորէն ու ջերմագին,
Կը խոնարհիմ ես գլխահակ արմենական մեծ հանճարին,
Որ ստեղծեց լեզուն այս վեհ որպէս ամրոց հայրենական:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Խօսք՝ Գրիգոր Չոբոյեանի

Երաժշտ.՝ Յակոբ Մանուկեանի

Adagio

Soprano
Alto
Tenor
Bass

Հա - յոց Լե - գու,
Հա - յոց Լե - գու,
Հա - յոց Լե - գու,
Կու - գամ այ - սոր, հը - պար - սո -

S
A
T
B

քու փառ - քե - ըրր գո - վեր - գե - լու
քու փառ - քե - ըրր գո - վեր - գե - լու գո -
քու փառ - քե - ըրր գո - վեր - գե - լու
րեն քու փառ - քե - ըրր գո - վեր - գե - լու

S
A
T
B

հը - պար - սո - ըն եր - գե - լու Հա - յոց Լե - գու,
վեր - - - գե - լու Հա - յոց Հա - յոց Լե - գու,
փառ - քե - ըրր գո - վեր - գե - լու Հա - յոց Հա - յոց Լե - գու,
Հա - յոց Լե - գու,

13 **1** *Andante*

S *դաշ-տա-մուն - քով* *զի - թե-րըդ Մես-րո - պա-ծին*

A *dolce* *զի - թե-րըդ Մես-րո - պա-ծին*

T *dolce* *տար-փո-ղե - լու Մես-րո - պա -*

B

16 **2**

S *հա-յոց ազ-գին երկ - թի վրայ: սե-րունդե-րը զո-ղող մե-ղե-*

A *հա-յոց ազ-գին եր-կրին վը - թայ տարտըղնուած:*

T *ծին հա-յոց ազ-գին տար - տըղ - նը - ուած:*

B *հա - յոց ազ-գին երկ - թի վրայ: մե - ղե-*

19

S *դի մես դուն, մե - ղե - դի մես դուն, շուր*

A *սե-րունդ - նե - ըր զո - ղող մե - ղե - դի մես դուն, հո - վի - լի*

T *դուն, մե - ղե - դի հո - վի - լի*

B *դի մե ղե դի մե ղե*

S
- - թե-րու՛ն յա - ւեր - ժօ - ռէ՛ն քըր-թող՛ն, ան - մա - հա -

A
շուր - թե-րու՛ն յա - ւեր - ժօ - ռէ՛ն քըր-թող՛ն, ան - մա - հա -

T
շուր - թե-րու՛ն յա - ւեր - ժօ - ռէ՛ն քըր-թող՛ն, ան - մա - հա -

B
հո - վի - ՚ի շուր - թե-րու՛ն յա - ւեր - ժօ - ռէ՛ն քըր-թող՛ն,

23
S
կան եր - գի ա - դօթ - քի օրհ - նեալ սիւն: *dim* *p*

A
կան եր - գի ա - դօթ - քի օրհ - նեալ սիւն: *dim* *p*

T
կան եր - գի ա - դօթ - քի օրհ - նեալ սիւն: *dim* *p*

B
ան - - - մա - հա - կան եր - գի օրհ - նեալ սիւն:

25 **3** *Andantino cantabile e dolce*

S
-

A
Որ-բան՝եր-գեմ գըր-չովս տը-կար

T
mp Որ-բան եր-գեմ գըր-չովս տը-կար գե-ղեցկու-թիւնդ անմախ-

B
mp րր քան րն րն կու

7
28

S
կարծես երբեք չեմ գո-վեր - գած չեմ գո-վեր

A
գե-ղեց-կու-թիւնդ ան-մա-հա-կան, գո - վեր - գած սրբ -

T
կան, չեմ գո - վեր - գած սրբ -

B
թիւնդ եր - բեք չեմ գո - վեր - գած սրբ -

4

31

S
գած սրբ-տիս խո-րէն ար-ժա-նա-բար: Մեր հը-նա-մեայ տա-ճար-նե -

A
տիս խո-րէն ար - ժա-նա-բար: Մեր հը-նա-մեայ տա-ճար-նե -

T
տիս խո-րէն ար - ժա-նա-բար:

B
տիս խո-րէն ար - ժա-նա-բար: տա - - - - -

34

S
րէն, *cresc* վեր բար-ձրա-ցող ա - դօթ - քի

A
րէն, տա-ճար - նե - րէն, բար-ձրա-ցող ա - դօթ - քի

T
Մեր հը - նա - մեայ տա - ճար - նե - րէն, ա - դօթ - քի

B
ճար - - - նե - րէն, բար - - - ձրա - ցող

36 5

S սիւն, քու ճա - նա - պարհոյ յա - վէտ
A սիւն, քու ճա - նա - պարհոյ կոր-սըն-ցու-ցած զա - վակ - նե -
T սիւն, քու ճա - նա - պարհոյ յա - վէտ
B վեր բար-ձրա-ցող քու ճա - նա - պարհոյ կոր-սըն-ցու-ցած զա - վակ - նե -

ff

38 5 *molto cresc*

S լու-սա-պայ-ծառ փա-րոս ես դուն ու բար-ձրա-բերձ Ա - րա - րա -
A լու-սա-պայ-ծառ փա-րոս ես դուն ու բար-ձրա-բերձ Ա - րա - րա -
T լու-սա-պայ-ծառ փա-րոս ես դուն ու բար-ձրա-բերձ Ա - րա - րա -
B լու-սա-պայ-ծառ փա-րոս ես դուն ու բար-ձրա-բերձ Ա - րա - րա -

mf

41 **fff Grandioso**

S տի վր - րայ հանգ - չող որ - պէս տա - պան դու կը - մը - նաս
A տի վր - րայ հանգ - չող որ - պէս տա - պան դու կը - մը - նաս
T տի վր - րայ հանգ - չող որ - պէս տա - պան դու կը - մը - նաս
B տի վր - րայ հանգ - չող որ - պէս տա - պան դու կը - մը - նաս

44

ան - խո - ցե - լի լու - սա - պայ - ծառ մայր սի - րա - սուն:

ան - խո - ցե - լի լու - սա - պայ - ծառ մայր սի - րա - սուն:

ան - խո - ցե - լի լու - սա - պայ - ծառ մայր սի - րա - սուն:

ան - խո - ցե - լի լու - սա - պայ - ծառ մայր սի - րա - սուն:

47 **6** Adagio religioso *misterio*

S *pp* կը-խո-նար-հիմ, ես գըլ-խա - հակ

A *pp* կը-խո-նար-հիմ, խո-նար-հիմ, գըլ - խա

T *pp* կը-խո-նար-հիմ, ես գըլ-խա - հակ

B *pp* կը-խո-նար-հիմ, գըլ - խա-հակ

51 **7** poco animato *molto*

S *p* ար-մե-նա - կան 'ըն՝ մի հան - ծա - ռին որ ըս-տեղ-

A *mf* հակ հան - ծա - ռին որ ըս-տեղ-

T *mf* ար-մե-նա-կան հան - ծա - ռին որ ըս-տեղ-

B *mf* ար-մե-նա-կան հան - ծա - ռին որ ըս-տեղ-

29 **victorioso**

S *dbg* **ff** լե՛ զու՛ն այս վե՛հ որ - պէս ամ -

A *dbg* լե՛ - **ff** զու՛ն այս վե՛հ որ - պէս ամ -

T *dbg* լե՛ - **ff** զու՛ն այս վե՛հ ամ - - -

B *dbg* լե՛ - - - զու՛ն այս վե՛հ ամ - - -

30

S *րոց.* հայ - րե - նա - կան իմ մայ - րե -

A *րոց.* հայ - րե - նա - կան իմ մայ - րե -

T *րոց.* ամ - րոց. հայ - րե - նա - կան իմ մայ - րե -

B *րոց.* ամ - րոց. հայ - րե - նա - կան իմ մայ - րե - նի հա -

38 **rit.**

S *նի* հա - յոց լե՛ - - - զու՛ն: **fff**

A *նի* լե՛ - - - - զու՛ն: **fff**

T *նի* հա - յոց լե՛ - - - զու՛ն: **fff**

B *յոց* լե՛ - - - - զու՛ն: **fff**

Թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԻՇԱՏԱԿԴ ՍԻՐԵԼԻՍ

Յիշատակդ սիրելիս,
Պահած եմ ես սրտիս մեջ,
Ինչպե՞ս մոռնամ քեզ հոգիս,
Քեզ կը փնտռեմ ես անվերջ:

Յիշատակդ իմ անգին,
Մնացած է անթառամ,
Հին երազներ տարփագին,
Քեզ յիշելով կ'արթննամ:

Երբ կը յիշեմ անցեալի,
Մեր օրերը քաղցրահամ,
Քաղցր յոյզեր ըղձալի,
Յոյսի աղբիւր կը դառնամ:

Ես քեզ երբեք չեմ մոռցած,
Քեզ կը յիշեմ կարօտով,
Սիրոյս բոցը սիրաբաղձ,
Դեռ կը վառի անվրդով:



ԶԱՐԵՆՆԵՐ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆԻՆ

Հայ եկեղեցայ անցնուէր ծառայ, նուիրեալ իշխան,
Աստուածային սուրբ շնորհքով օծուած Ջարեհ Սրբազան,
Սրտանց կը ցաւինք քու անակնկալ մեկնումիդ առթիւ,
Ո՛վ մաքրամաքուր հոգեւոր կեանքի փարոս լուսավառ:

Դուն նուիրումով ծառայեցիր յար կամքով անասան,
Հայ եկեղեցւոյ մշակութային ծով ժառանգութեան,
Մեր նոր սերունդը մօտեցնելով մեր արմատներուն
Եւ լոյս սփռելով մութին մէջ քալող կորստեալներուն:

Որպէս ժառանգորդ թարգմանիչներուն հինգերորդ դարի,
Դուն թարգմանեցիր Աստուածաշունչը աշխարհաբարի,
Հայ երաժշտութեան հնամեայ հանքէն լոյս աշխարհ բերիր,
Հոգեւոր երգեր, սուրբ շարականներ, տաղեր սիրալիր:

Տանջուած սրտով, բայց խաղաղութեամբ մեզմէ հեռացար,
Մնաք բարովի, ողջագուրուելու առիթ չգտար,
Պայծառ աչքերդ մթազնած լոյսով իսպառ գոցուեցաւ,
Աստուծոյ շունչով պատգամներ տալու հելքդ վերջ գտաւ:

Կեանքդ նուիրած բիր տեսիլքներդ կիսատ մնացին,
Ծրագիրներդ Աստուածահաճոյ ու երազային,
Ծաղկեփունջ դարձած թօշնեցան յանկարծ հովերէն վայրագ,
Յօրինուած տաղեր մնացին տխուր եւ անարձագանգ:

Յիսուսի խօսքին ընդառաջելով որպէս յոգնած անձ,
Գացիր հանգչելու երկրաւոր կեանքին հրաժեշտ տուած,
Առանց տեսնելու վեհ արշալոյսը կեանքիդ ու գործիդ,
Եւ լոյս չտեսած յօրինումներուդ կշռոյթը վճիտ:

Բայց մենք վստահ ենք, որ գործդ անմահ անպայմանօրէն,
Կը շարունակուի Կիլիկեան ուխտի միաբաններէն
Եւ քու անունը կը մնայ ընդմիշտ՝ որպէս ռահվիրայ,
Հայ եկեղեցւոյ եւ երաժշտութեան նուիրեալ ծառայ:

ՄԱՂԹԵՐԳ ԿԻԼԻԿԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ

Մենք սաներ ենք դպրեվանքին Կիլիկեան,
Ուխտած ենք միշտ ծառայելու հայութեան,
Լուսաւորչի սուրբ հաւատքով անսասան,
Օրհներգուած մենք կը քալենք անխափան:

Չայաստանեայց եկեղեցւոյ սրբալոյս,
Կրօնական խորհուրդներով զօրացած,
Քաղցրահնչիւն շարականներ անթեղած,
Մենք կը քալենք դէպի սրտեր սիրայոյզ:

Երանելի վեհափառներ վեհապանծ,
Ոռոգեցին մեր սրտերը աղօթքով,
Որ միշտ քալենք Լուսաւորեալ գնացքով,
Նուաճելու մեր երազը յաղթապանծ:

Կեցցեն յաւէտ հայրապետներ տեսլական,
Որոնք բացին փակ դռները այս Սուրբ Տան,
Որ պատրաստեն առաքեալներ հայկական,
Քրիստոսի խաչը շալկած անվարան:



ԵՐԲ ՉԱՅՆԴ ԼՍԵՑԻ

Երբ քաղցրահնչիւն ծայնդ լսեցի,
Անհաւատալի թուեցաւ ինձի,
Սիրտս թրթռաց բերկրանքով առլի
Եւ սիրակարօտ յոյզով անձկալի:

Պահ մը տարուեցայ անուշ անուրջով,
Անցած օրերու յիշատակներով,
Չոգիս արթնցաւ անթեղուած սիրով,
Խնամքով պահուած քաղցր յուշերով:

Ճակատագրի տժգոյն քնայքով,
Մենք բաժնուեցանք իրարմէ ցաւով,
Որուն հետքերը կը մնան յաւէտ,
Անյոյս ըղձանքի երազներով խենթ:

Այո՛, սիրելիս, չեմ մոռնար ես քեզ,
Մեր համբոյրները՝ թաքուն, հրակէզ,
Աչքերէդ ցայտող սէրդ մեղրածոր,
Եւ զգուանքներդ քնքոյշ, սիրածոր:

Չեռու ենք հիմա, չենք տեսներ իրար,
Բայց կապուինք իրար խօսքով կենարար,
Մեր երազները ապրուն կարծելով,
Մեր սիրոյն կեանք տանք անհուն կարօտով:



ՄԻՐԵԼԻ ՍԱՐԻԿ ՊԱՊԵԱՆԻՆ

Յաջողութեամբ, ուրախութեամբ անսահման,
Միջնակարգը ակարտեցիր Սարիկ ջան,
Յրեշտի խօսքերովդ յուզական,
Բաժնուեցար վարժարանէն հայկական:

Վարժարանը, որ քեզ եղաւ երկրորդ մայր,
Ուր ստացար ազգային շունչ կենարար,
Տարուէ-տարի սնանեցար, ապրեցար,
Սուրբ Մեսրոպի աւիշովը տենդավառ:

Ուր որ երթաս լոյս անցեալդ մի՛ մոռնար,
Հայ ըլլալու վսեմ փառքը մի՛ մոռնար,
Հպարտութեամբ քալէ երբեք մի՛ վախնար,
Եւ աղօթէ խոր հաւատքով անդադար:

Քեզ կը մաղթենք յաջողութիւն նորանոր,
Ճանքադ ըլլայ շքեղ երթով փառաւոր,
Երազներդ անբողջութեամբ մարմնանան,
Պիտի բերես ծնողներուդ, հայութեան:



ՎԱՐԱԳ ՊԱՊԵԱՆԻՆ

Գիտե՞ս դու՞ն Վարագ առիւծի Կորիւն,
Ժառանգած հզօր կամք ու քաջութիւն,
Մեծցած ես մարմնով եւ մտքով թաքուն,
Գեղադէմ տեսքով, խելքով իմաստուն:

Դարձած ես արդէն ինը տարեկան,
Անցած սահմանը անհոգ մանկութեան,
Մեծցի՛ր ու դարձի՛ր ծառայ դպրութեան,
Չայաբոյր սիրով՝ բարբառով հայկական:

Չայազարմ որդի, ծնունդ նայիրեան,
Սիրէ, միշտ սիրէ՝ կամքով յարաժամ,
Որպէս գոյութեան յոյսի ծիածան,
Մեսրոպեան լեզուն՝ կեանքի բալասան:

Քեզի կը մաղթենք երջանիկ օրեր,
Առողջ ու կայտառ՝ կեանքով անստուեր,
Մեծնաս ու դառնաս զինուոր անձնուեր,
Չայոց բանակին՝ քաջ ու աներեր:

19 Նոյեմբեր 1996
Թորոնթօ



ԹՈՌՆԻԿԻՄ՝ ՄՏԵՓԱՆ-ԱՐՄԷՆԻՆ

Մեր բուլորին սիրելի առիւծասիրտ Ստեփան,
Տարիներ շատ անցան եւ եղար վեց տարեկան,
Խելացութեամբ կը փայլիս, սակայն չար ես աննման
Բայց մենք քեզ միշտ կը սիրենք քաղցր թռռնիկ սիրական:

Տարեդարձդ ծննդեան շնորհաւոր թող ըլլայ,
Կեանքիդ ուղին օրհնաբեր բախտդ դուրին մօտենայ,
Դպրոցական օրերդ ընդմիշտ դառնան հեզասահ,
Լուսաւորուիս հայ լեզուով, մտքով լոյսով ծովանայ:

Եղբօրդ հետ ամէն օր պէտք է ըլլաս բարեկամ,
Յարգէք, սիրէք իրարու անկեղծութեամբ քաղցրահամ,
Դառնաք նեցուկ իրարու որպէս եղբայր հարազատ,
Ընդմիշտ տուած ձեռք-ձեռքի, ինչպէս Մասիս-Արարատ:

Վեց տարեկան ըլլալով միտքով, մարմնով դուն մեծցար,
Ա՛լ մանկական խաղերով չես զբաղիր անդադար,
Դպրոցական դասերով պիտ զարգանաս օրէ-օր,
Ուրախութիւն բերելով մեր բուլորին մեղրածոր:

1997



ՄԻՐԵԼԻ ՎԱՐԱԳ ՊԱՊԵԱՆ

Ամենակարող Աստուածոյ կամքով,
Տասը տարեկան եղար Վարագ ջան,
Չրաժեշտ տուած կեանքին մանկական,
Մեծցած ես արդէն մարմնով ու միտքով:

Գիտե՞ս դու Վարագ թէ ինչու համար
Վարագա լեռը, վանքը լուսափառ,
Սասնոյ լեռները՝ Անտոք, Ծովասար,
Կը մնան գերուած ու անմխիթար:

Չայոց աշխահի խորհրդանշան,
Արարատ լեռը՝ արծան վեհութեան.
Անխորտակելի ոգին հայութեան.
Ինչո՞ւ կը մնայ տխուր, անդարման:

Որպէս քիչ սիրող հայազարմ պապիկ,
Տարեդարձիդ այս պատմական օրով,
Իմ կողմէ տրուած այս հարցումներով
Քիչ մը մտածես՝ օրերուն գալիք:

Միացեալ ուժով, ուխտով անասան,
Կը լուծուի արդար դատը հայկական
Ազատագրէ Կարս ու Արտահան,
Կարին ու Սասուն, Աղթամար ու Վան:

1997



ՄԻՐԵԼԻ՝ ԿԱՐՕ ՓԱՇԱՅԵԱՆԻՆ

Վաթսուն տարեկան եղար ազգապետ,
Կեանքը քեզ տուաւ օրեր քաղցրաւէտ,
Անուշիկ տիկին, գեղեցիկ աղջիկ,
Որպէսզի ապրիս ընդմիշտ երջանիկ:

Տիգրանակերտէն եկար դուն Պաղտատ,
Դարձար հայախօս՝ ուշիմ եւ հպարտ,
Ուսումդ առած երկրէն հեռացար,
Եւ վերջ ի վերջոյ Գանատա հասար:

Յեղափոխական ոգին հայկական,
Առաջնորդեց քեզ եւ Դաշնակցութեան
Գաղափարներով սնած ու թրծուած,
Դեկավար դարձար բոլորէն սիրուած:

Զինուած ոգիով յեղափոխական,
Դուն պայքարեցար շունչով վահագնեան,
Հայու ինքնութեան մարտիկ-պահապան
Եւ արժէքներուն՝ ժառանգ սրբազան:

Ոգին հայկական՝ վեհ քաջակորով,
Սուրբ Կարապետի վանքի խորհուրդով
Սնած ու մեծած Մշեցի հօրմէդ,
Դուն ժառանգելով դարձար ազգապետ:

Եւ կրօնական հաւատքով պայծառ,
Խոր նուիրումով սարկաւազ դարձար,
Անհուն եռանդով լուռ ծառայեցիր
Ս. եկեղեցւոյ՝ հոգւով անձանձիր:

Մենք ընտանիքով քեզ շատ կը սիրենք,
Առողջութեանդ համար կ'աղօթենք.
Բարեկամներով կեանքդ վայելես,
Ապրիս անվրդով փառքով լուսերես:

26 Օգոստոս 2000

ՄԻՐԵԼԻ ԱՐԻԱՆԷ ՂԱԶԱՐԵԱՆԻՆ

Երկու Սեպտեմբեր երկու հազար մէկ,
Այս թուականը չենք մոռնար երբեք,
Դատրիկ մը քաղցրիկ Արիանէ անուն,
Հայ եկեղեցւոյ ծէսով իմաստուն,
Հայ Սուրբ միւռնոնով մկրտուեցաւ
Հայութեան թիւը մէկով աւելցաւ:
Հայութեան փառքով, նախնեաց հաւատքով,
Հայ եկեղեցւոյ երկնային ուժով,
Ղազարեան տոհմը փառաւորուեցաւ,
Մեսրոպեան լոյսով լուսաւորուեցաւ:

Ուրախ ենք այսօր բարեկամներով,
Այս մկրտութեան վարար խորհուրդով,
Սիրով յագեցած զգացումներով,
Ղազարեաններուն աչքը լուսելով,
Մեր մաղթանքները կ'ուղղենք սրտագին,
Արիանէ կոչուած քրիստոնեային.
Հայութեան լոյսով օծուած հոգեւին,
Մեծնայ եւ ապրի փառքով ազգային,
Պատիւ բերելով իր ընտանիքին,
Եւ արդար պարծանք իր Հայրենիքին:

2 Սեպտեմբեր 2001



ԵՒ ԲԱԶԷՆ ԾՆԱԻ

Ազատ ապրելու կամքով անասան,
Շատ դարեր առաջ աշխարհին Սասնայ,
Ղազարեան տոհմը դարձաւ գաղթական
Եւ հասաւ չքնաղ երկիր Կիլիկիա:

Կայք հաստատելով քաղաք Պէրէճիք,
Ուր կեանքը հեշտ էր հայութեամբ օժուն,
Խաղաղ ապրելով Եփրատին մօտիկ,
Ուրախ ու զուարթ կեանքով իմաստուն:

Եւ եղաւ Եղեռն, ցեղասպանութիւն,
Հայոց արեւը մթնցաւ նորէն,
Ղազարեան տոհմը որպէս փրկութիւն,
Հեռացան երկրէն՝ խոյս տալով ջարդէն:

Հասան ճարապուս, քաղաք Սուրիական,
Նոր տուն հիմնեցին նահապետական,
Ապա լքելով եկան Լիբանան,
Երկիր ցանկալի, ամրոց հայութեան:

Ծայր տուաւ կռիւ խորքով անոպայ,
Ղազարեան տոհմէն Ղազար Ղազարեան,
Իր զաւակներով եկան Գանատա,
Ազատ ապրելու ապաստան գտան:

Ղազարեան երեք եղբայրներ կարգով,
Անուսնացան եւ գործի տէր դարձան,
Զաւակներ ծնան Աստուծոյ կամքով,
Քաղցրիկ աղջիկներ եւ մանչ մը՝ Իշխան:

Եւ ծնաւ Բազէն տեսքով գեղեցիկ,
Իշխան եղբօր հետ դառնալու պահակ,
Ղազարեան տոհմի կեանքին ընթացիկ,
Այս ցուրտ օրերու հողմերէն վայրագ:

Շանթ եւ Ալին ծնողքէն սերած ,
Հիասքանչ Բազէն մկրտուեցաւ,
Հայոց Միւռնի ցուքով սրբազան,
Հայ քրիստոնեայ որդի մը դարձաւ:

Այս սուրբ առիթով մեր սրտէն բխած,
Անկեղծ մաղթանքներ՝ հօր Բազէին,
Որպէսզի մեծնայ դառնայ փառապանծ,
Պատիւ բերելով իր ընտանիքին:

1 Դեկտեմբեր 2002

ԿՆՈՋՍ՝ ՇԱՔԷԻՆ
Մեր Ամունութեան 50-ամեակին Առթիւ

Սիրելի Շաքէ իմ կեանքի ընկեր,
Աստուածոյ կողմէ ղրկուած պարգեւ,
Որ դառնաս կեանքս տաքցնող արեւ,
Քաղցր ջերմութեամբ՝ ցերեկ եւ գիշեր:

Մեր ամուսնութեան առաջին օրէն,
Ձեռք-ձեռքի տուած դանդաղ քայլերով,
Կազմեցինք բոյն մը հայկական բոյրով,
Բերուած Սասունի խրոխտ լեռներէն:

Այդ փոքրիկ բոյնը ուռճացաւ շուտով,
Անդրանիկ, Անի, զաւակներ ծնան,
Դարձանք ընտանիք նահապետական,
Ճանապարհ ինկած Մեսրոպեան լոյսով:

Յիսուն տարիներ եկան ու անցան,
Կեանքի առլցուն ելեւէջներով,
Սակայն հոգիէդ բխած աղօթքով,
Մեր տունը դարձաւ Սիրոյ Բուրաստան:

Ազգականներով, բարեկամներով,
Կը տօնենք ուրախ Ոսկեայ Յոբելեան,
Փառք տալով կեանքին մեր ամուսնական,
Կ'ապրինք Աստուծոյ տուած պարգեւով:

18 Յունուար 2003
Թորոնթօ

ՆՈՐԱՊՍԱԿ ՌԱՖՖԻ ԵՒ ԼԱՐԱ ՏՈՒՏԱԳԼԵԱՆԻՆ

Տիրոջ օրհնութեամբ միացաք իրար,
Հայոց նարօտով ամուր կապուեցաք,
Եւ սուրբ պսակով ընտանիք դարձաք,
Անհուն բերկրանքով եւ սիրով անմար:

Կազմեցիք բոյր մը նահապետական,
Հայկական ընտիր շաղախով շինուած,
Որպէսզի ապրիք ձեռք-ձեռքի բռնած՝
Հասնելու համար կեանքի քաղցրութեան:

Ձեր ամուսնութեամբ մենք ուրախացանք,
Մեր աղօթքներով ձեր կազմած բոյնին
Գեղազարդ տեսքին, հայաբոյր խորքին,
Երջանիկ կեանքին մասնակից դարձանք:

Ապրեցէք սիրով, զիրար յարգելով,
Եղէք միշտ ներող՝ հեզութեամբ զեղուն,
Վայլեցէք կեանքը սիրով վարարուն,
Տժգոյն օրերը ընդմիշտ մոռնալով:

Ամուսնութիւնը ձեր բարեբաստիկ,
Եւ ճանապարհը սիրով լիցքաւոր,
Ի խորաց սրտէ կ'ողջունենք այսօր,
Մաղթելով ձեզի օրեր երջանիկ:

12 Յուլիս 2003
Թորոնթօ

ՔԱՉ ՀՈՎԻԻՆ

Հայ եկեղեցւոյ անձնուէր ծառայ,
Պայծառ հոգիով հոգեւորական,
Հովիւ մշտարթուն, սրտով բիրեղեայ,
Գերապատիւ Տէր Շահէ Փանոսեան:

Հաւատքով զինուած դուն ճմբայ ելար,
Լուսաւորելու հոգիներ մթին,
Սուրբ մկրտութեան խորհուրդով անմար,
Պայծառացուցիր Հայ եկեղեցին:

Անձնական կեանքով, զոհաբերութեամբ,
Որպէս քաջ հովիւ աշխատանք տարիր,
Եւ քսանամեայ լուռ ծառայութեամբ,
Այս ցուրտ ափերուն ջերմութիւն բերիր:

Հիմա կը մեկնիս, դէպի նոր աշխարհ
Շալկած մեծ վաստակ հոգեւորական,
Օրհնուած քայլերով կերտելու համար,
Ամրակուռ բերդեր եկեղեցական:

Ի պատիւ քեզի ողջերթներէ վերջ,
Ճամբադ բացուեցաւ դէպի Մայրավանք,
Միտքդ չարչարող մտածումներ գէջ
Մեզի կը տանին անկրկնելի կեանք:

Սրտիդ մէջ յուզում՝ անցեալէն եկող,
Պատկերներ կը տողանցեն յար,
Թորոնթոյի մէջ ութ տարուան շէնշող
Կեանքդ ու գործդ կը մնայ միշտ վառ:

Մենք ալ մեր կարգին սրտով կաթոզին,
Մեզ ճամբու դրինք տամուկ աչքերով,
Մաղթելով քեզի օրհներգ երկնային,
Հեզասահ ճամբայ, եռանդ ու կորով:

«ԵԿԵՂԵՑԻ»
2003

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Ողջո՛յն Սուրբ Մարիամ, Մայր Աստուածածին,
Մայրութեան կոչուած ընտրեալ գոհար,
Աստուծոյ կամքով, հրաշքով պայծառ,
Կեանք պարգեւեցիր փրկիչ Յիսուսին:

Երկինքէն փայլող աստղ մը բացառիկ,
Երեք մոգերը հասցուց Բեթլեհէմ,
Որոնք նուէրով, աղօթքով վսեմ,
Լուռ խոնարհեցան արքային մանկիկ:

Պատսպարելով Աստուծոյ որդին,
Անշուք մսուրը լուսաւորուեցաւ,
Հրեշտակներու երգով տրուեցաւ,
Մեծ աւետիսը ամբողջ աշխարհին:

Աստուածածին մայր, տաճար սրբութեան,
Աստուածային լոյս, բարութեան պարտեզ,
Արեւ շողշողուն՝ անաղարտ, ու վէս,
Կարկաչին աղբիւր, ծաղիկ անթառամ:

Աստուծոյ որդին ծնած ըլլալով,
Փառաւորուեցար անկեղծ յարգանքով
Քու ժողովուրդէդ, որոնք անվրդով
Կ'ապրէին հպարտ Յիսուսի խօսքով:

Եւ պատահեցաւ ինչ որ գրուած էր,
Քու որդիդ անմեղ՝ մարդկութեան փրկիչ,
Նախանձող մարդիկ ի խաչ հանեցին,
Որոնց մեղքերը ան միշտ կը ներեր:


Ձաւկիդ կորուստին ի՞նչպէս դիմացար,
Վիշտդ դառնագին ի՞նչպէս կրեցիր,
Ո՛վ Աստուածամայր Մարիամ սգակիր,
Մութ գերեզմանէն երբ բաժնուեցար:

Սակայն Աստուածներ չեն մեռնիր երբեք,
Աստուծոյ որդին, Յիսուս խաչեցեալ,
Երեք օր յետոյ եղաւ յարուցեալ,
Մխիթարելով մօրը վշտաբեկ:

Տասնրհինգ տարի յետ խաչելութեան,
Սուրբ Աստուածածին, Քրիստոսի մայր,
Աստուծոյ կանքով վերափոխուեցար,
Արժանանալով զաւկիդ միացման:

Ո՛վ Սուրբ Մարիամ, կ'աղաչենք քեզի,
Որ բարեխօսես զաւկիդ Յիսուսի,
Որ պարգեւէ մեզ նոր հաւատք յոյսի,
Նոր սիրոյ աղբիւր՝ որ հասնի մեզի:

**«ՇՈՂԱԿԱԹ» ԵՆ «ԼՈՅՍ»
Սեպտեմբեր-Յոկտեմբեր 2004**



ՄԻՐԵԼԻ ՎԱՐՂԱՆ ՓԻԼԱԻՃԵԱՆԻՆ

Ութը տարիներ անցան ու գացին արագ քայլերով,
Եւ արդէն եղար ինը տարեկան Աստուծոյ կամքով,
Չորրորդ դասարան կը հասնիս շուտով խաղաղ գնացքով,
Որպէս աշակերտ ուշիմ եւ կայտառ, պայծառ հոգիով:

Քու հայրդ, մայրդ հարազատներդ քեզ շատ կը սիրեն,
Եւ կը գուրգուրան որպէսզի ըլլաս պարտկեշտ հայ տղայ,
Նկարագրով վեհ, ուսումով բարձր, խելքով հայաշէն,
Պատիւ բերելով ազգիդ, ծնողքիդ՝ վարքով բիւրեղեայ:

Գիտե՞ս դուն Վարդան, նախահայրերէդ Վարդանը կարմիր,
Չզօր զօրավար հայոց բանակին՝ արի, մարտնչող,
Ինչպէս դէմ դրաւ պարսիկ զօրքերուն հաւատքով անգիր
Որոնք կու գային ջնջելու հայոց երկիրը շէնչող:

Այսու սրտագին կը շնորհաւորենք
Քու տարեդարձդ անհուն մաղթանքով,
Որ մեծնաս առողջ պայծառ եռանդով,
Զօրացած հայու հզօր ոգիով:

Կը մաղթենք քեզի երջանիկ օրեր,
Կեանք մը հեզասահ եւ արգասաբեր,
Ապրէ անվրդով արեւով անմար,
Շրթներուդ վրայ մեսրոպեան բառեր:

Սիրէ՛ ազգդ, եկեղեցին հայկական,
Մեսրոպակերտ հայոց լեզուն սրբազան,
Որքա՛ն մեծնաս հռչակներու տիրանաս,
Երբեք-երբեք հայութիւնդ չմոռնաս:



ԾՆՈՒՆԴԻ ԳԻՇԵՐ

Ծնունդի գիշեր, հոգեզմայլ գիշեր,
Հովիւներ արթուն եւ հրեշտակներ,
Ուրախ երգերու հնչիւններով վառ,
Կուտան աւետիս համայն մարդկութեան,
Ծնած էր սիրոյ Արքան օրհնաբան,
Մարդոց մեղքերը քաւելու համար:

Ծնած էր Արքան՝ Աստուծոյ որդին,
Լուսաւորելու սրտերը մթին,
Մարդկային ազնիւ զգացումներով
Եւ աստուածահաճոյ ապրելակերպով
Օժտելու համար անխիղճ եւ անգութ
Կեանք վարող մարդոց կենցաղը անփոյթ:

Բեթղեհէն քաղաքի մսուրը անշուք,
Լոյսով օծուեցաւ Աստուծոյ կամքով,
Լուսաւոր աստղ մը առաջնորդ դարձաւ
Երեք մոգերուն, որոնք հաւատքով,
Երկիւղածութեամբ ու նուէրներով,
Երկրպագեցին ծնած Արքային:

Յիսուս Մանուկի ծնունդը խոնարհ,
Աւետիս տալով մենք կը տօնենք յար,
Որպէս մարդացեալ Աստուած կենարար,
Որ Աստուածային սիրոյ խորհրդով,
Եւ սուրբ Մարիամի մայրական ուխտով,
Դարձաւ մարդկութեան խիղճը իր կեանքով:

Այս գիշեր տօն է՝ Սիրոյ Բուրաստան:
Կը տօնենք հպարտ, սիրով դիւթական,
Մեր սուրբ հայրերու շարականներով
Եւ հայրենաւանդ խոր աղօթքներով,
Տալով աւետիս ամբողջ հայութեան,
Որ ծնաւ Արքան՝ Փրկիչ մարդկութեան:

«ՇՈՂԱԿԱԹ» ԵՎ «ԼՈՅՍ»
Յունուար-Փետրուար 2005

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՃԱՄԲՈՎ

Կեանքի լոյս Յիսուս, լուսեղէն խորան,
Աստուծոյ որդի, փրկիչ մարդկութեան,
Մահապարտներու խաչովը դաժան,
Մահը գրկեցիր, կամքով անասան:

Քու խաչելութեամբ խաչը փայտեղէն,
Պաշտելի դարձաւ Աստուծոյ կամքով՝
Մարդիկ մարդացան խաչիդ հմայքով,
Լուսաւորուելով ջահով հոգեղէն:

Քու խաչելութեամբ խաչը օրհնաբեր,
Փառքդ հիւսելու նշխար մը դարձաւ,
Ծնար, ապրեցար եւ կեանքդ եղաւ,
Մարդկութեան մեղքի քաւութեան նուէր:

Քու խաչելութեամբ Յիսուս մարդասէր,
Սրբացած խաչը դարձաւ կենարար,
Խաչիդ պարծանքը դարձաւ յուշարար,
Քու Աստուածային խօսքերուդ անմեռ:

Քու խաչելութեամբ լուսատու Յիսուս,
Մարդկութեան կեանքը լուսաւորուեցաւ,
Հաւատքով խաչը սիրով օծուեցաւ,
Սրտերը պատեց ճառագայթող լոյս:

Փրկարար Յիսուս, սիրոյ բուրաստան,
Քու խաչելութեան տառապանքներով
Եւ խաչին վրայ թափած արիւնով,
Սուրբ խաչը դարձաւ հաւատքի խորան:

Խաչի խորհուրդով եւ հաւատամքով,
Մարդկային սիրտը սիրով ծովացաւ,
Սիրտէ-սիրտ կապը լոյսով զօրացաւ,
Խաչէդ արձակուող ճառագայթներով:

Ազնիւ հայ ազգը դարերով անձայն,
Իր խաչը շալկած իր սուրբ հաւատքով,
Յիսուսի խաչին կառչած մնալով,
Կը քալէ անվերջ Յիսուսի նման:

«ՇՈՂԱԿԱԹ» ԵՎ «ԼՈՅՍ»
Մարտ-Ապրիլ 2005

ՄԻՐԵԼԻ ՄԱՐԳԱՐ ԵՒ ԷԼԻՋ ՇԱՐԱՊԻԱՆԵԱՆ

Երեսուն տարին անցաւ վարարուն,
Յիշատակելի օրերով յորդուն,
Ապրեցաք ուախ՝ սիրով անսահման,
Կազմելով բոյր մը նահապետական:

Շարապխանեան տան բուրրով արգասիք,
Լոյս աշխարհ եկած Յովիկ ու Ռազմիկ,
Տարիներ անցան քաղցր ու լեղի,
Էլիզ եւ Մարգար մնացին արի:

Կեանքի խորհուրդը լաւապէս սերտած,
Ձեր շնորհները՝ հայութեամբ օծուած,
Սիրով բաժնեցիք եւ ընծայեցիք,
Չայ լեզուի լոյսով օրերուն գալիք:

Չաւաքուած այսօր ազգականներով,
Բարեկամներով եւ ընկերներով,
Տօնելու օրը ձեր անուսնութեան,
Եւ տարեդարձը սիրոյ միացման:

Որպէս բարեկամ սրտով ջերմագին,
Ձեզի կը մաղթենք օրեր մեղրածին,
Ապրիք երջանիկ հարազատներով,
Միայն Աստուծոյ ընդմիշտ փառք տալով:



Ժ.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ ԵՒ
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
«ՆՈՒԻՐՈՒՄ»Ի
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ԱՌԹԻԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԱՐԴԸ՝ ԲԱՌԵՐԻ ՄԷՋ
Գրիգոր Հոթոյեանին և նրա «Նուիրում» գրքին ծանոթանալուց յետոյ

Երեւանում ծանօթացանք: Գնացինք սուրբ էջմիածին, եղանք Օշականում, խոնարհուեցինք սուրբ Մեսրոպ Մաշտոցի աճիւնին: Ուր էլ գնացինք՝ սուրբ էր ու սրբութիւն էր: Յաճախ յառնում էր, ուռճանում, երբ նայում էր սուրբգրային մեր լեռանը, յաճախ արտասուում էր, հանկարծ զգացի, որ նա կարող է մտնել բառերի մէջ: Անսովոր ոչինչ չկայ: Մարդը ծնունդ է այդ բառերից, տարիներ, տասնամեակներ շարունակ պահել-պահպանել է իրեն ծնած բառերը ու սրտի ուզած ժամանակ իրաւունք չունի մտնելու իր բառերի մէջ այնպէս, ինչպէս մտնում են հարազատ տուն, այգի, ինչպէս մտնում են ճանապարհ, տրոււմ յուշերին: Եղեռնի միջով անցած ծնողների գաւազը բառի եւ պատմութեան ծնունդ է: Առանց կարգալու զգացի՝ բանաստեղծ է: Ու երբ գըր՝ չեղբայրս՝ Սասուն Գրիգորեանը առաջարկեց կարգար ձեռագիրը, մի պահ երկմտեցի. «Մարդը ծնուած օրից բանաստեղծ է, էլ ի՞նչ կարգամ, էլ ինչո՞ւ կարգամ»: Բանաստեղծի մասին շատերն են հիացմունքի խօսքեր ասել ու գըրել: Յակոբ Կարապենցի եւ Սասուն Գրիգորեանի «գրաւոր մեղադրանքները» բաւական են, որ ձեռքերս կապուեն: Ձեռքերս կապուած են, բայց կարգում եմ եզակի արձակագիր, ափսո՛ս, վաղամեռիկ Յակոբ Կարապենցի սրտայոյզ-նըրբազգաց խօսքը, «Այդ որքա՛ն հարուստ ներաշխարհ ես ունեցել: Այդքան սէր ու կարօտ ինչպէ՞ս են պարփակել սրտիդ մէջ: Սիրեցի թէ՛ հայրենասիրական երգերդ եւ թէ՛ սիրային տագնապներդ»: «Որքան բոցաշունչ են յեղափոխական երգերդ, նոյնքան արտամանոյշ են անձնական տուայտանքներդ», «... այս գրքի մէջ է, որ տեսայ քո գեղեցիկ հայերէնը՝ միանգամայն հասուն, ճկուն ու հարուստ: Ուրեմն, կեցցէ Հալիպը, որ քեզ պէս բանաստեղծ է տուել»: Յաւոք, ես չեմ կարող վիճել Յակոբ Կարապենցի հետ, չեմ կարող ասել՝ ոչ մի քաղաք ու երկիր բանաստեղծ չեն տալիս: Բանաստեղծ տալիս են ծնողները, բանաստեղծ տալիս է լեզուն, բանաստեղծ տալիս է սէրը: Գրիգոր Հոթոյեանը բանաստեղծ է դարձել ծնողների, լեզուի եւ սիրոյ շնորհիւ: Ասենք, որ նրա համար իր ծնողները պատմութիւն են, իր լեզուն պատմութիւն է, իր սէրը պատմութիւն է: Ես չեմ կարող ասել, թէ ինչ ջերմութեամբ (գուցէ եւ սառնութեամբ, անտարբերութեամբ) կ'ընդունուի բանաստեղծի այս նուիրումը, բայց սիրով ասենք, որ բանաստեղծին բանաստեղծ դարձրած «Սիրտը Ափին Մէջ» գիրքը, որը լոյս է տեսել Թորոնթոյում, 1987ին, շատերի ուշադրութիւնն է շեղել առ Գրիգոր Հոթոյեանը: Դրանցից մէկն է Յակոբ Կարապենցը, որի խօսքից առատօրէն ծաղկաքաղեցի: Այսպէս կարող եմ ծաղկաքաղելով «գործս յոլա տանել», բայց «Նուիրում»ը, իրօք որ, նուիրում է պահանջում: Յաճախ բառերի մէջ թաքնուող բանաստեղծը ծննդեան տօն է ստեղծում: Գիրքը, որ բաղկացած է «Իմ Երգարան», «Որդիական», «Նուիրում» եւ յաւելեալ՝ «Հեղինակի մասին» բաժիններից, ամբողջովին, ամէն մի բաժնով, բանաստեղծութեամբ, տող ու տնով նուիրում է: Չմոռանանք, երբ ուսուցիչ Գրիգոր Հոթոյեանն է բանաստեղծում, երբեք չի փորձում դաս տալ, յիշեցնել իր ուսուցիչ լինելը: Դա սքանչելի է: Հեղինակի հետ մտերմիկ պահերը, զրոյցները, լուսութիւնը, իրար արմա-


տի, անցած ճանապարհի իմաստին մօտենալը, տպագրածն ու ձեռագիրը, ա՜սես, մէկ արած, նոյն բանն են յուշում, հայրենի եզերքից, տնից, տեղից գրկը՝ Լածը, Տէր Զօրի անապատներով անցածի սերունդը այլեւս չէր կարող ոչինչ սիրել այնպէս, ինչպէս պէտք է գուրգուրելով, դողահար սիրել մաշտոցեան գիրն ու գրականութիւնը, որի հանդէպ տածած սիրով միայն կարելի է յառնել: Այդպէս կոչուածներից մէկն էլ իր ծնողների, իր ժողովրդի պատմութիւնը քաջ իմացող բանաստեղծ Գրիգոր Հոթոյեանն է, մարդ, որն իրաւունք չուներ մոռանալու իր վարժարանը, իր ուսուցիչներին: Զօներգութիւնների մէջ ամէն մէկն իր արժանի տեղն է գտել: Կ'ասէի՝ բանաստեղծը ոչ միայն իր «նը՝ Լիրատուների» հոգեբանութիւնը լաւ գիտի, այլեւ գիտի սուրբ մաշտոցեան բառերի, կ'ասէի՝ գրերի հոգեբանութիւնը: Այդպէս չլինէր, նա չէր կարող բանաստեղծել. «Մնած մեսրոպեան լեզուի հայաբոյր լոյսով սրբազան»: Հայ բանաստեղծի գրչից շատ է արիւն ծորացել, արիւնոտ բառեր շատ ունենք: Պէտք է ուժ ունենալ սիրոյ երգեր գրելու համար: Ատելու համար նոյնպէս պէտք է սէր ունենալ: Իր ապրած կեանքի գինը, իր խօսքի արժէքը քաջ իմացող բանաստեղծը երբեք իրաւունք չունի մոռանալու, թէ իր արմատները որտեղից են գալիս, ովքեր են իր նախնիք, ծնողներն ի՞նչ են կորցրել: Ինչո՞ւ մոռանալ, որ ծնուել, հասակ է նետել Հալէպի հայաշունչ գաղթօճախի մէջ, պարտական է նաեւ ուսուցիչներին, մտաւորականներին, խմբագիրներին է պարտական: Նա մինչեւ իր կեանքի վերջին պահը չի մոռանալ իր կուսակցութեանը, թրծուել է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հնոցի մէջ: Երգումի նման է հնչում նրա խօսքը. «Հայաստանի սիրտէն Սասունի սրբազան լեռներէն ժառանգած սիրտիս մէջ բոցավառող կրակը գիս երբեք հանդարտ չէ ձգած եւ պիտի չձգէ մինչեւ մահ, որովհետեւ արմատներս կը սերին անձնագոհ Ֆետայիներու այն փաղանգէն, որոնք իրենց կեանքը զոհաբերեցին հայ ժողովուրդի ազատութեան ճանապարհին»: Եթէ բանաստեղծի արձակ այս ազնիւ խոստովանութեան տխուր երաժշտութիւնը, բառերի թախիծն ու լացը, հաւատը, յոյսը փորձենք աւելի մանրամասնել, ապա նոյն պահին կը ստացուի այս ժողովածուն, որ կոչուում է «Նուիրում»: Եթէ չափակչուելու լինենք ապրած կեանքը (տարիքային իմաստով) եւ գրական վաստակը, ապա շահողը լինելու է ճանապարհը, որը սասունցու զաւակի հպարտութեամբ անցել է Գրիգոր Հոթոյեանը: Նա միշտ եղել է հայոց բառ ու բանի հետ: Եթէ ճիշդ է, որ նա պահել է լեզուն, ապա ինքն էլ մեր լեզուի, մեր բառի փրկածն է: Եւ նա ոչ միայն բանաստեղծութիւններ է մեզ նուիրում, այլ բառերի, պատկերների, ապրումների հրավառութիւն է սարքում: Սիրային-քնարական բանաստեղծութիւնների մէջ ասես ծփում է մեր ժողովրդական մեղեդայնութիւնը: Թող միշտ բանաստեղծի գրչին պատկանի «երազանքով քաղցրահամ», «գալարագեղ վարդաստան», «ըղձանքներով սիրավառ», «ուղին մ'թաստուէր», «Չահով օրհնաբեր», նման տասնեակ ու տասնեակ բառապատկերներ, որ լցուած են երգերի մէջ, բայց խորթ պիտի համարեմ, երբ նոյն գրիչը գրում է «գեղեցկուհիս սիրախանձ», եւ նման ոչ բանաստեղծական ամպոտ շերտեր, որ ստուեր են գցում լուսածիր պատկերների վըրայ: Գեղեցկութիւն, սրտի նուիրում համարենք ձօներգերը, որից այս գիրքը պակասութիւն չի քաշում: Նուիրումները յաճախ ալպոմային արժէքի են, բայց գլխաւորը մնում է հեղինակի անկեղծութիւնը: Բանաստեղծը չէր կարող

բանաստեղծութիւններ չնուիրել հայոց լեզուին, չ'ապրէր մեր ճակատագրով, բայց սխալուած չենք լինի, եթէ ասենք, որ մեր սրբութիւններն աւելի են սըրբանում, աւելի մերը դառնում, երբ զգում ես բանաստեղծի արեան կանչի մը տերմութիւնը իր կորուսեալ եւ հաւատի մեծ աշխարհի հետ: Երախտագիտութիւնը պէտք է ուղեկցի մարդուն: Մեր բանաստեղծները երբեք խեղճ չեն եղել եւ տասնեակ ու տասնեակ բանաստեղծութիւններ են նուիրել աշխարհի սարերին ու գետերին, ժողովուրդներին ու քաղաքներին: Կը խնդրէի ընթերցողին, որ նա հանգիստ կարգայ Սիրիային նուիրուած բանաստեղծութիւնը: Սա արդէն պատմութիւն է՝ լուսաբացի ճշմարտութեամբ: Գրիգոր Հոթոյեանը, պարզում է, երգաստեղծ է: Այս գրքում դուք կը հանդիպէք բանաստեղծի գրած շատ խօսքերի, խօսքեր, որ, ինչպէս ասում են, դարձել են երգեր: Հենց բռները յուշում են, որ նա լաւ երգերի խօսքերի հեղինակ է: Շնորհակալ լինենք երաժշտութեան հեղինակներին, դաշնաւորողներին, երանի նրանց, ովքեր կը լսեն եւ կը վայելեն:

Սիրային ինչ երգ էլ գրած լինի ու գրելու լինի Գրիգոր Հոթոյեանը, սիրոյ նրա անսպառ աղբիւրը եղել ու է՝ իր Հայաստանը, Հայոց լեզուն, Արարատը, Հայ ժողովուրդը, իր կուսակցութիւնը: Աղբիւր, որ նա պահել ու պահում է մաքուր: Ու հիմա ինչպէս ուրախ չլինի, երբ սրտի ցանկացած ժամանակ գալիս է Հայաստան: Տեսնելու, լցուելու, հաւատալու: Նրա համար հայրենիքում սիրելը հրաշք է, հայրենիքում նոր երգ գրելը հրաշքի նման բան է: Եւ, որպէս գրող, եկաւ, մասնակցեց Գրողների համահայկական առաջին խորհրդագաթողովին, նորից լցուեց Հայաստանով, հասցրեց իր «Նուիրում»ը նուիրել մեզ ու...

Բարի ճանապարհ, մինչեւ նոր հանդիպում նոր գրքով, մեր պատմութեան, լեզուի, հայրենիքի հետ արմատներով կապուած, Սասունի ասած, պայքարի եւ հաւատի սասունորդի:

**Հրաչյա Սաթեւոյան
Արձակագիր**



Ձախէն աջ՝ Արձակագիր Հրաչեայ Սաթեւոսեան, Գրիգոր Հոթոյեան եւ Գեներալ Մայրո բանաստեղծ Սամուէլ Սաֆարեան

ՔՆԱՐԵՐԳԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Թորոնթոյի «Գլաձոր, գրականութիւն եւ գիրք» ձեռնարկներու շարքին մէջ «Նուիրում» գրքի ներկայացումը 12րդն է:

Հեղինակը, «Հորիզոն»ի ծանօթ թղթակից՝ Գրիգոր Հոթոյեան, ներկայ է ձեռնարկին: Ներկայ են նաեւ հայ եկեղեցիներու հովիւներ Հ. Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան եւ Հ. Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեան: Կիրակի, 12 Յունուար 2003, կ.ե. ժամը 1:30 է եւ Համազգային գրադարանը լեցուն է գրասէրներով:

Համազգային Գլաձոր մասնաճիւղի վարչութեան եւ գրատարածի ա՛նունով բարի գալուստի խօսքը կ'ընէ օրուան հանդիսավար Սարգիս Ղազարեան: Ան կը ներկայացնէ Գրիգոր Հոթոյեանը եւ կ'ըսէ. «Գլխազիր հայ մըն է, հայ ըլլալը հուշիւն է իր գոյութեան համար: Անհուն հայրենասիրութենէն բըխող իր լաւատես հաւատքը անընկճելի է: Անցած է ան, կեանքի բոլոր տառապանքի ուղիներէն եւ հասած յարգելի գիրքի մը՝ բնաւ չկորսնցնելով իր հայութիւնը եւ բնաւ չհեռանալով հայութեան իր սէրէն: Միշտ ըսելիք ունի ան, լեզուն տոկուն է, ճիշդ, յաճախ բաբախուն, սովորաբար՝ պատկերաւոր»: Ղազարեան կու տայ բանաստեղծի կենսագրականը: Գրիգոր Հոթոյեան զաւակն է սասունցիներու, ծնած է Հալէպ, Սուրիա: Վարած է ուսուցչական, տնօրէնութեան եւ հոգաբարձութեան պաշտօններ, հայկական ամէնօրեայ եւ կիրականօրեայ վարժարաններու մէջ: Եղած է նաեւ գրաշար, զինուոր, ենթասպայ, ելեկտրագէտ: 1975ին հաստատուած է Թորոնթօ, ուր շարունակած է ստանձնել ազգային այլ պատասխանատուութիւններ, ինչպէս Համազգայինի ատենապետութիւն, Շրջանային ներկայացուցիչ եւ եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենադըպրութիւն: Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէութեան կողմէ նշանակուած է «Հայրենիք»ի եւ «Հորիզոն»ի թղթակից, Հայ կեդրոնի «Լրատու»ի խմբագիր, նաեւ «Հայ Կեդրոնի Ձայն»ի խօսնակ: Շարքը երկար է իր կամաւոր աշխատանքի ցուցակին: Գանատայի կառավարութենէն եւ հայկական գանազան միութիւններէ պարգեւատրուած է եւ ստացած գնահատագրեր:

1987ին հրատարակած «Սիրտը Ափին Մէջ» հատորը: 2002ին մասնակցած է Գրողներու համահայկական առաջին խորհրդաժողովին, Երեւան: Ան, իր լեզուի հմտութիւնը եւ կարողութիւնը զարգացուցած է ինքնաշխատութեամբ եւ հետեւողականութեամբ: Կարելի չէ թուել թղթակից, յօդուածագիր, խմբագիր, ուսուցիչ, ազգային գործիչ եւ խօսնակ Գրիգոր Հոթոյեանի բոլոր գործերը եւ նուաճումները, որովհետեւ աւելի քան 65 տարի, մասնակցութիւնը, ջանքը, գրիչը եւ ներդրումը բերած է 75-ամեայ այս մշակութասէր, հայրենասէր եւ ծառայասէր մեր քնարերգակը:

«Նուիրում» գիրքը կը ներկայացնէ ընկճ. Անահիտ Պապայեան: Ան, կ'անդրադառնայ գիրքի գանազան բաժիններուն: Առաջին մասը, «Իմ Երգարանը», կ'ընդգրկէ շուրջ 30 բանաստեղծութիւններ, որոնք վերածուած են երգերու, երաժշտութեամբ ծանօթ երաժշտագէտներու եւ խմբավարներու, ինչպէս՝ Էդիկ Յովսէփեան, Սարգիս Համպոյեան, Անահիտ Կուտուզեան, Յակոբ Մանուկեան, Գէորգ Անտոնեան, Գէորգ Յարութիւնեան, Հրաչ Շէհիրեան:

Քերթուածներուն կ'ընկերանան երաժշտական նոթաներ: Պապայեան կը մէջբերէ Նիւ Եորքէն երաժշտագէտ եւ խմբավար Գրիգոր Փիտէճեանի նկատողութիւնը. «Բացառիկ երեւոյթ է բանաստեղծի համար, որ այսքան քերթուածներ վերածուին երգերու»:

Գրքին երկրորդ մասը «Որդիական» խորագիրը կը կրէ, ուր բանաստեղծը կը խորի իր արմատներուն, Սասուն, Սուրիա, Հայաստան, նաեւ իր բաբախուն սիրտը կ'երթայ դէպի «Գողտրիկ երագ», «Անկեղծ սէր», «Գաղտնի սէր»:

Երրորդ մասը, «Նուիրում», ձօնուած է իր սիրելի անձերուն, երաժշտագէտ, բանաստեղծ կամ թոռնիկ:

Պապայեան մէջբերումներ կը կատարէ զանազան արձակագիրներէ եւ բանաստեղծներէ, ինչպէս Հրաչեայ Մաթեոսեան, Յակոբ Կարապետեան եւ Պերճ Թ. Կերոնեան, որոնք Հոթոյեանի ոճը կ'որակէն հարուստ, սահուն եւ ճկուն, կը բացատրեն ոգին, իր անսպառ սէրը դէպի Հայրենիք, Հայաստան, Հայերէն եւ Հ.Յ.Դ.:

Ընկերուհիներ Շուշիկ Պէրպէրեան եւ Անահիտ Պապայեան մերթ ընդ մերթ կը ներկայացնեն իր քերթուածներէն մասեր:

Գրքի մեկենասն է Հոթոյեանի դուստրը, Անին: Այս երեւոյթը գնահատելի է, երբ զաւակները անդրադառնան եւ արժեւորեն իրենց ծնողքի տաղանդը, կու տան իրենց անհուն գոհունակութիւնը: «Նուիրում» գրքի խմբագիրն է Սասուն Գրիգորեան, նախաբանը գրած է Հրաչեայ Մաթեոսեան: Հրատարակիչն է «Ուխտատուն» թանգարան ինստիտուտը: Տպուած է Երեւան, 2002ին:

Անահիտ Կուտսուզեան իր յօրինումով կ'երգէ եւ կիթառի վրայ կը նըլազէ «Հրաժեշտ կու տաս» Հոթոյեանի քերթուածը:

Ըստ գրատարածի աւանդութեան համաձայն, հրատարակուած գիրքեր կը նուիրուի «Նուիրում»ի հեղինակին:

Գրիգոր Հոթոյեան կը հրաւիրուի իր սրտի խօսքը ըսելու: Ան կը բացատրէ ներկայ հեղինակներու դժուարութիւններուն մասին, ըլլայ այդ հրատարակելու կամ տարածելու իրենց գործերը, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ սփիւռքի մէջ: Իր անձնական կեանքին մէջ, կ'անդրադառնայ իր կողակիցին՝ Շաքէին, որ կէս դար թիկունք կանգնած է իրեն: Իր գրական ասպարէզին մասին կ'ըսէ. «Արհեստի աշխարհին մէջ չկարողացայ բարձրանալ եւ հարստանալ գրականութեան սիրոյս պատճառաւ, իսկ ապրուստս ճարելու համար չկարողացայ հմտանալ գրիչիս մէջ»:

Հայր Մեղրիկ Բարիքեանի սրամիտ խօսքերով կ'աւարտի ձեռնարկի պաշտօնական մասը: Սուրճի եւ կարկանդակի հիւրասիրութեան ընթացքին կ'ըլլայ գրքի մակագրութիւն:

Բոլորս կ'ըսենք՝ «Վարձքդ կատար, ընկ. Հոթոյեան, որ եղար մեր գաղութին ճշգրտակար թղթակիցը, եւ քնարերգակ բանաստեղծը»:

«Նուիրում» գիրքը ստանալու համար կարելի է դիմել Համազգայինի Գանատայի գրատարածի կեդրոնները, կամ հեղինակին՝ Գրիգոր Հոթոյեանին, թորոնթօ:

Արշօ Չաքարեան
«ՀՈՐԻՉՈՆ», 10 Մարտ 2003

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ ԵՒ ԻՐ ՆՈՐ ԳՈՐԾԸ

Անհերքելի ճշմարտութիւն է որ լեզուի եւ մշակոյթի պահպանման գլխաւոր սիւներէն մին հայ գիրքն է: Հեղինակը ինչ, ինչ տաղնապներէ եւ դժուարութիւններէ կ'անցնի լոյս ընծայելու համար իր մտքի արգասիքը: Գիրքը արտացոլումն է իր մէջ կուտակուած տառապանքին, հոգեկան ընդվզ՝ գումներուն եւ հայրենասիրական ոգիին:

Ապա տողերը կը գրեմ Գրիգոր Հոթոյեանի նոր ընծայած «Նուիրում» հատորին առիթով: Հեղինակը ինձ ծանօթ էր իր «Միրաբ Ափին Մէջ» քերթը՝ Լաճներու հատորով՝ լոյս տեսած 1987ին: Իր այդ գործով ան մեզ կը փոխանցէր իր պատանեկան եւ երիտասարդական տարիներու հայրենիքի եւ ժողովուրդի հանդէպ իր անհուն սէրը եւ նաեւ սիրով տաղնապող արտայայտ խոր կուտները:

Քայց նախքան բուն նիւթին անցնիլը, կ'ուզեմ փակագիծ մը բանալ հոս հեղինակի մէկ այլ սիրոյ մասին որ կը բնորոշուի իր ծառայութեամբ հայ մամուլին: Արդարեւ ինձ համար հաճոյք էր հետեւիլ իր ճաշակով գրուած ծաւալուն թղթակցութիւններուն, որոնք լոյս կը տեսնէին մեր մամուլին մէջ: Մեր թղթակիցները յաճախ անտեսուած են իրենց կատարած գնահատելի աշխատանքին համար: Փայլուն սերունդ մը նուիրեալներու, որոնք առանց դոյզն ալընկալութեան ծառայած են արտասահմանի մեր մամուլին ապագայ պատմաբանին առատ նիւթ հայթայթելով:

Հեղինակի այս նոր գործը «Նուիրում» հրատարակուած է Երեւանի մէջ: Յառաջաբանը ստորագած է ծանօթ արձակագիր եւ հրապարագիր Հրաչեայ Մաթէոսեան:

Գիրքը բաղկացած է «Իմ Երգարանը», «Որդիական», «Նուիրում» եւ յաւելեալ վկայութիւններ, կարծիքներ եւ գրախօսական բաժիններով:

Գիրքին կարեւոր մասը՝ «Իմ Երգարանը» կ'ընդգրկէ հեղինակի բանաստեղծութիւնները եղանակաւորուած էգիկ Յովսէփեանի եւ այլ հանրածանօթ երաժիշտ-յօրինողներու կողմէ: Այս երգերը այսօր կը հնչեն մեր բեմերէն խրախուսելով մեր ժողովուրդը:

Տեղ մը Հոթոյեան կը գրէ.

«Մասունի սրբազան լեռներէն ժառանգած սրտիս մէջ բոցավառող կը՝
րակը գիս երբեք հանդարտ չէ ձգած եւ պիտի չձգէ մինչեւ մահ, որովհետեւ
արմատներս կը սերին անձնագոհ Ֆետայիններուն այն փաղանգէն, որոնք իրենց
կեանքը գոհաբերեցին հայ ժողովուրդի ազատութեան ճանապարհին»:

Իրեն համար առաջին այցելութիւնը հայրենիք՝ ուխտազնացութիւն մըն էր, ուր ինք առաջին անգամ վայելեց իր երկրի հարազատ բուրմունքը եւ առիթը ունեցաւ տեսնելու Մասնոյ գերդաստանի մնացորդացին արժանաւոր ժառանգորդները այն հերոսներու, որոնք գոհուեցան մեր ազատագրական դատին:

Հոթոյեանի բանաստեղծութիւններուն մէջ զօրաւոր է հայրենասիրական գիծը: Իր տողերուն մէջ կայ խորունկ հաւատք եւ հպարտանք ու մանաւանդ անհուն պաշտամունք մեր հերոսներու հանդէպ:

Ընդհանրապէս կարօտի, բողոքի եւ ըմբոստութեան երգեր են իրը: Անհանգիստ հոգիի մը պոռթկումներն են պատկերաւորուած երազներու փնտրուտութիւնը եւ ջերմութեամբ: Մեր ժողովուրդի ցնցումները, վերիվայրումները խռոված են իր հոգին: Ան իր տողերով կը հաստատէ իր սէրն ու նուիրուածութիւնը մեր հերոսական անցեալի դրուագներուն:

Իր ներաշխարհը կը տապլտըկի կարօտախտէ:

Ահա հատուած մը «Սասունական» բանաստեղծութիւնէն որ փառաբանութիւնն է Սասնոյ:

Ողջոյն Սասուն,
Իմ հայրենիք դիցազնական,
Սանասարի, Պաղտասարի,
Ազատատենչ կամքով շինուած,
Քաջութեան բերդ,
Դրախտային վսեմ երկիր հնադարեան,
Քեզ կ'ողջունեմ հպարտօրէն,
Սասնակարօտ սրտիս խորէն,
Անլռելի զգայնութեամբ,
Ուղեղային պատկառանքով,
Այսօր նորէն կ'ոգեկոչեմ,
Քո՛ւ անցեալի փառքդ արդար,
Հերոսական պայքարներդ,
Օտարազգի ուժերուն դէմ,
Վահագնածին հերոսութեամբ,
Դիմադրելով թուրք ասկարներու արշաւանքներուն
Վայրագ քիւրտերու յարձակումներուն,
Որոնք կու գային գերեվարելու
Սարերը Սասնայ
Եւ գէնքի ուժով ընկճելու ոգին
Ազատ ապրելու, ազատ շնչելու,
Անընկճելի ժողովուրդին Սասունական...

Իր բանաստեղծութիւններու էութիւնը հայրենասիրութիւնն է խոր եւ յամառ, իր նկարագրի նման: Հեղինակը ցայտուն գիծերով կը պատկերացնէ հերոսական Սասնոյ պատմութիւնը իր փառաւոր անցեալով:

Հոթոյեան նաեւ սիրերգակ է եւ իր քնարկական տողերը կը յորդին ազնիւ եւ քնքուշ զգացումներով:

Հոս կ'արտագրեմ իր «Շուշանաբոյր Գեղեցկուհիս» բանաստեղծութիւնը, ճաշակ մը տալու համար իր ներսիրդին կուտակուած սիրոյ վճիտ զգացումներուն:

Հոս յստակ կը տեսնէք բանաստեղծին սիրով գինովցած հոգեվիճակին պատկերը:

Շուշանաբոյր այս գիշերով,
Բարով եկար սիրուն աղջիկ,
Եկար սիրոյս խոր կարօտով,
Սիրատոչոր հեւքով քաղցրիկ:

Գինովցած եմ այսօր նորէն,
Բուրմունքովդ կախարդական,

Յանկայարոյց աչքիդ բոցէն
Բաղձանքներս կը բարձրանան:

Արիւնագոյն շրթունքներէդ,
Քաղուած դիւթիչ համբոյրներով,
Կը վերանամ հեշտանքիդ հետ,
Դրախտային երազանքով:

*Ինչպէս Հրաչ Մաթէոսեան կը հաղորդէ. «Սիրային ինչ երգ էլ գրած
լինի ու գրելու լինի Գրիգոր Հոթոյեանը, սիրոյ նրա աղբիւրը եղել է ու է իր
Հայաստանը, Հայոց Լեզուն, Արարատը, հայ ժողովուրդը, իր կուսակցութիւ-
նը: Աղբիւր որ նա պահել ու պահում է մաքուր»:*

Վարդէս Սիւսեան
Գրող ու հրապարագիր
«ՀԱՅՐԵՆԻՔ» շաբաթաթերթ
8 Նոյեմբեր 2002
Լոս Անճելոս

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ «ՆՈՒԻՐՈՒՄ»ՈՎ ԻՆՔՆԱԲԱՑԱՅԱՅՏՈՒՄԸ

Քիչ անգամ կը հանդիպինք բանաստեղծական հատորի մը, որուն մէջ գտնենք համապարփակ պատմութիւնը մեր եւ «պատմողին»: Բանաստեղծութիւնները այս հատորին, իրենց ենթակայական առումով կը պատկանին ընդհանրապէս հայ ազգութեան, հետեւաբար եւ մեզի:

Ուստի՝ բանաստեղծը ըլլալով հոգեվերլուծման բացայայտումներու ենթագիտակցութեան մղումին մէջ, իր անձէն մեկնելով, իր բոլոր տեսակի հաւատամքներուն եւ ապրումներուն անպատում պատմութիւնները կը ներկայացնէ ինքնակենսագրականութեամբ:

Առաւել, բանաստեղծ Գրիգոր Հոթոյեանի ներծծական զգացումներու յորձանուտին մէջ կը բարեխառնուին խոկումներ, խազերու խաղերով, որոնք թեմայական պատշաճեցումներով կը դառնան աղօթք, հոգեբուխ Տէր Ողորմեա, խոստովանութիւն, դրական կիրքի բոլոր հանգրուաններու եւ մակարդակներու, պատարագային արարողութեամբ:

Իր կեանքի էութիւնը կլանող բոլոր խտացումներու արտադրումները չեն գար իր գրիչէն միայն, այլ կազմուած են ենթաշխարհայինէն, ազգային, մարդկային, զգացողական եւ յուզապրումային փորձառութիւններէն:

Ան տաղերգուն է թոհոբոհային սաղմոսներուն, յեղափոխութիւններուն, երգ-երգոցներուն, եւ հին օրերու կարօտներուն, նոր երգերու ընկալումի յաճախանքներով, անհատական յուշերու արանքներէն ծլարձակումի կոկոններով անպահալած արշալոյսներու ոգորուն ապրումներով:

Բանաստեղծութիւնը իր մօտ ձեւապաշտութիւն չէ, չափազանցութիւն չէ, այլ հոգեմտաւոր խմորումներու ապրումային մատեան, սիրոյ մատեան:

Սէրն է իր նուիրումի հոմանիշը: Սէրը ներքին, պայթուցիկ արտայայտութիւններով, ընդհանրական բացատրութեան գաղափարազգացականութիւն է: Սէրը երգ է, երգ՝ լայն ընդգրկումով, ազատագրական մղկտումներով:

Սէրը՝ ուխտ լինելութեան, համայնական լինելութեան հպարտութեամբ, յաղթանակներու հպարտութեամբ:

Այդ յաղթութեան երգերուն մէջ, բանաստեղծը գիտէ ծիրանաւորել մեծ պայքարի տրիբունները, որոնք աշխարհ եկած են ոչ թէ իշխելու այլ համայնական սրտով նուիրաբերելու: Նուիրաբերուելու իրենց էութեամբ, քալելով այն ամայքներէն, ուր ազատութեան լոյսը իրենց քայլերը կ'առաջնորդէ, անոնք կ'անցնին արնավառ վայրերու գոխներէն, շալակած կեանքի մեղքերը մարդոց, եւ անոնց սրբագրութեամբ սրբութեամբ վերանալու:

Սիրոյ այս հատորին մէջ կայ այնքան թովիչ պատարագներ: Իսկ երազները՝ տարիներու ցոլքերէն կը լուսաւորեն մեր եկեղեցիները հայրենիքէն մինչեւ հեռաւոր ափերը մեր ապրած տարածքներու օճախներուն:

Բնականաբար, լոյսի այս հեղեղներու մէջ պիտի բողբոջին թախիծներու տրտմաշուշաններէն ովասիսները յոյսերու, որոնք հրաւէր են ամէն հայու, նախ մոռնալու մորմոքները հոգետանջ, ընկալելու մղումները եւ յուզա-

կան պահերը ցնծալի տրոփներու ընկալալոյց նշոյլներով, գաղափարական լայնատարած եւ հայագոյն դրօշներով:

Կը մասնակցինք շղթայագերծուած պայքարին, ներքին թէ արտաքին խայտաբղէտ երեւոյթներուն դէմ, գինուած յաւերժական արժէքներով եւ յարատեւ ստեղծումով նոր արժանիքներու:

Այստեղ կը բռնկուի զայրոյթ՝ ընդդէմ մեր ընթացքին մէջ գտնուող ուխտի ուրացողներուն:

Բայց եւ կան ծափողջոյններ՝ այն գինակցութեան, որ կը կոփէ վճռականութիւնը հայ կիզակէտներուն, ի խնդիր միասնականութեան կառոյցներուն:

Եւ կը վերադառնանք կրկին աղօթքի: Գաղափարական թէ գրական ամբասիր բառերով երկնուած աղօթքներու, ուր կայ եւ մեր հոգեւոր սնունդը, որ մեր մէջ կենդանի կը պահէ հայրենի գաղափարի իրապաշտ աշխարհագրութիւնն ու պատմութիւնը, իր մշակութային, հոգեմտաւոր եւ ռազմական ենթամասններով:

Այս աղօթքներու մէջ կայ հայրենական զգացումներու բողբոջներ: Կայ ճշմարտութեան դրօշը: Ծշմարտութեան ղօղանջը կը հնչէ բանաստեղծական երկունքներու շթաքարերուն հետ:

Գրիգոր Հոթոյեան դեռեւս կը պատգամը՝ հայրենիքի ծննդեան համայնական օթեւանի իրապաշտութիւնը: Ինչպիսի վարդապետ արչալոյսներ: Ապրած ենք սառնամանիքներու մէջ, տաքցած ենք անկախութեան միսթարութեամբ եւ վայելած սիրոյ անասման գուրգուրանքը, բոլոր նուիրաբերումներով:

Կը կարդանք բանաստեղծին սրտառուչ կոչը դիմելու արմատներուն: Իսկ մեր ունկերուն կը հասնին՝ Արարատի կանչը, էջմիածնի ղօղանջը, մեր աչքերուն կը շողան Սեւանեան կապուտաչեայ ժպիտները:

Այստեղ է սփիւռքահայ մեր մաքառումներու հօրանքը, անոր յաղթանակի գաղափարաբանութիւնը, նոր եւ հին նուաճումներու հերոսական խոյանքները, Սարգարապատէն մինչեւ Արցախ եւ Շուշի նկրտումներու տքնանքը:

«Նուիրում» հայրենիքին յառելով միայն մեր աչքերը:

Բանակներու շարքերը խտացնելու՝ բոլոր տեսակի մարտերու մէջ:

«Նուիրում» քաղաքական քնարերգութեամբ եւ քնարերգական հայրենասիրութեամբ:

Էջերու աւարտին մեր մէջ կը շարունակուի ընթերցումը, եղանակաւորուած երգերու, բանաստեղծի զեղուն յուզումներով էգիկ Յովսէփեանի կատարողութեամբ:

Գրիգոր Հոթոյեան կրցած է մեր Դատի հին եւ նոր Կտակարանները միացնել յաջողութեամբ:

Արմէն Տօնյեան
Գրող, մտաւորական, հրապարակագիր, հրատարակիչ,
խմբագիր, մշակոյթի գործիչ եւ կրթական մշակ

ԵՐԳԵՐԻ ՄԻՋՈՎ ՔԱՅԼՈՂ ՀԱՅՐ

Մանոթուծյան խարիսխը Երեւանը եղավ: Զգացի, որ կանադահայ իմ նոր բարեկամը հայրենասեր ու բարեհոգի մարդ է: Մի քանի տարի անց նորից հանդիպեցինք, այս անգամ գրողների համահայկական առաջին խորհրդաժողովում: Միջուռփահայ պատվիրակուծյան հետ շրջեցինք Հայաստանի տեսարժան վայրերով եւ կամաց-կամաց ինծ համար Գրիգոր Հոթոյեան մարդն իր մէջ ներառեց անհատականուծյան բազմազոյն ասելիքը:

Սեղանիս նրա երկրորդ ժողովածուն է «Նվիրում» խորագրով: Այս մի հատիկ բառն իսկ բավական է հասկնալու, որ Հոթոյեանն իր հոգու դռներն է բացել ընթերցողի առջեւ: Բառին տվել է անկեղծ ու անմիջական երգելու բազմերգ հնչեղուծյուն: Եւ այդ երգը ընթերցողին մտորելու առիթ է տալիս հանուն սիրո, հայրենասիրուծյան, հանուն մարդու մէջ մարդ մնալու սրբազան առաքինուծյան: Երեւի թէ նույն զգացողուծյունն էր ունեցել վաղամեռիկ արձակագիր Հակոբ Կարապենցը, երբ Հոթոյանի առաջին գրքի հրատարակման առիթով գրել էր. «Այդ որքան հարուստ ներաշխարհ ես ունեցել: Այդքան սեր ու կարոտ ինչպես ես պարփակել սրտիդ մէջ... Տեսա քո գեղեցիկ հայերէնը՝ միանգամայն հասուն, ճկուն ու հարուստ: Ուրեմն կեցցէ Հալէպը, որ քեզ պէս բանաստեղծ է տվել...»:

Գրիգոր Հոթոյանի ե՛ւ բանաստեղծուծյունները, ե՛ւ երգերը, որոնք զետեղված են «Նվիրում» ժողովածուում, մեզ պատկերացում են տալիս մի մարդու մասին, որի գրական ճանապարհը իր խոր ու կենսական արմատներն ունի: Թեպետ նա հեռու է ապրում հայրենիքից, բայց հայաստանյան արեւը Հոթոյանի հոգու գերբնական ուժն է: Հայրենիքի ցավի, տխրուծյան, ուրախուծյան եւ երազանքի արձագանքը Գրիգոր Հոթոյանի համար գոյատեւման թթվածին է: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի եղեռնից հրաշքով փրկված Սերոբ Աղբյուրի եւ Սմբատի նախկին զինվոր սասունցի Հոթոնեցի Ղազարի հարկի ներքով ծնված այս արու գավակը հայ ժողովրդի նման ժառանգել է փյունիկ թռչունի ճակատագիրը:

Գրիգոր Հոթոյանը միշտ հոգեւոր աշխարհի շնչառուծյամբ է ապրել եւ պատահական չէր, որ նրա առաջին բանաստեղծուծյուններն ու թղթակցուծյունները լույս են տեսել «Արեւելք» (Հալէպ) օրաթերթում: Հոթոյանը նաեւ մանկավարժական գործունեուծյամբ է զբաղվել, եղել է ուսուցիչ եւ դպրոցի տնօրեն: Այսօր Գրիգոր Հոթոյանին սիրով են հիշում Սիրիայի Հալէպ եւ Ռակկա քաղաքների հայկական վարժարանի նախկին սաները: Սակայն նրա կոչումը խոսքն ու հոգու թռիչքն է: Բանաստեղծ Գրիգոր Հոթոյանի համար բառը ե՛ւ սիրո նրբուծյուն ունի ե՛ւ պայքարի կոչ է, հայրենասիրուծյան ազատատենչ կամք: Նա, որ թեմայով էլ որ գրում է, արտահայտում է մարդու հոգու շարժումը, իսկ այդ հոգեւոր շարժման հիմքում բանաստեղծն իր հայրենապաշտ գաղափարի հիմնաքարն է դրել. «Հայաստանի սիրտէն, Սասունի սրբազան լեռներէն ժառանգած սիրտիս մէջ բոցավառվող կրակը զիս երբեք հանդարտ չէ ծգած եւ պիտի չձգէ մինչեւ մահ, որովհետեւ արմատներս կսերվին անձնագոհ Ֆետայիներու այն փաղանգեն, որոնք իրենց կյանքը զոհաբե-

րեցին հայ ժողովրդի ազատութեան ճանապարհին»: Դրա վկայութեանն են նըրա բազմաթիվ հայրենասիրական բանաստեղծութիւնները, որոնցից շատերը դարձել են երգեր եւ հնչում են Մփյուռքի, հատկապէս Կանաղայի հայկական բեմերից եւ ձայնասփյուռներից: Ինչպիսիք են «Ղարաբաղը Կը Կանչէ», «Ազատատենչ Իմ Հայաստան», «Ձայն Ազատութեան» եւ ուրիշներ:

Հոթոյան բանաստեղծը իր հոգու ալեկոծումները էջ առ էջ բացում է ընթերցողի առջեւ, չի կեղծում իրեն, չի ձգտում վերանբարձ ոճի: Իր պարզ ու անպաճույճ հոգու նվիրումի ծաղիկներն է բաժանում ընթերցողներին: «Նվիրում» ժողովածուն բաղկացած է «Իմ երգարանը», «Որդիական», «Նվիրում», եւ հավելյալ «Հեղինակի Մասին» բաժիններից: Ամեն մի բաժին իր ուրույն ասելիքն ունի, բայց ներքին անտեսանելի հոգեբանական շղկապով հանգուցված է մեկը մյուսին այնպէս, որ մի կողմ ամբողջութիւն է դառնում, ներկայանալով ընթերցողին որպէս հայոց երկրի հարազատ գաղափարի սիրո վառ արտահայտման դրսեւորում: Գրիգոր Հոթոյանի պոեզիայում պատկերները շատ են տեսանելի, լինեն դրանք հայրենասիրական, թէ սիրոյ բանաստեղծութիւններ: Հեղինակը բառը բառին թելակարելով, ստեղծում է այն բանաստեղծական աշխարհը, որը միայն իրենն է, թույլ է տալիս ընթերցողին տեսնելու իր բառի անցյալն ու ներկան: Բառ, որ իր մէջ լռութիւն ունի, բայց եթէ աչքերիդ բարութեամբ հզվում ես նրան, նա սկսում է ղողանջել, իսկ այդ ղողանջի մէջ ընթերցողը պետք է կարողանան զգալ, լսել բանաստեղծի սրտի զարկերը, որոնք հուշում են, որ հայրենի երկրից հեռու մտավորականն իր ժողովրդի հոգեւոր տագնապներով է ապրում, որ հեռավորութիւնը երբեք չի կարող խաթարել այն, ինչ հարազատ է ու սուրբ:

Չայաստան, Չայաստան, երկիր լուսաշող, երկիր Նայիրեան,
Եռագույն դրոշով ոգեղէն կամուրջ ամբողջ Չայութեան
Արեւաշող, բորբ հայրենիք, Վահագնածին Չայաստան,
Անգուգական իմ հայրենիք, վերածնեալ Չայաստան:

Գրիգոր Հոթոյանի սրտի խորանում բացառիկ տեղ ունեն ոչ միայն այն վարժարանը, ուր ուսանել է եւ այն ուսուցիչները, որոնք հայաշունչ կրակ են վառել բանաստեղծի հոգում, այլեւ մեր ժողովրդի նվիրյալ մտավորականները, որոնց Գրիգոր Հոթոյանը ձոնել է գողտրիկ բանաստեղծութիւններ: Այդպիսիք, են «Խրիմյան Հայրիկ», «Ձօն Սայաթ Նովային», «Սուրբ Կոմիտաս» եւ ուրիշներ: Բանաստեղծն իր հայացքը հառում է աշխարհին ու մարդկանց, իր ընկերներին կոչ անում, որ նրանք չխաբւեն հարստութեամբ, վայելքներով, որովհետեւ այդ բոլորը անցողիկ են: Հոթոյանը գտնում է, որ մարդը պէտք է իր բարի գործերով բարի անուն ունենա, եւ այդ ժամ կարժանանա սիրո եւ հարգանքի: Այն մարդը, որ հոգով աղքատ է, ի՞նչ է թողնելու աշխարհին: Բանաստեղծի համար կարեւոր խնդիր է դառնում մարդուն տեսնելու որպէս բնութեան, կյանքի կարեւորագույն շարժիչ ուժ, ձերբազատված չարութիւնից, նյութական պաշտամունքից: Եվ այդ է պատճառը, որ «Նվիրում» գիրքը առաջին էջից մինչեւ վերջին էջը, տողորված է մարդասիրութեան, հայրենասիրութեան եւ սիրո գաղափարներով: Եվ ինչպէս Հոթոյան բանաստեղծն է հիշեցնում. «Բանաստեղծութիւնը, բնութիւնն ու կյանքը, ժողո-

վըրդի ոգին ու երազանքները կը ցոլացնէ ու կպատգամախոսէ ժողովրդին հասկանալի, գեղեցիկ լեզվով ու պարզութեամբ, ճոխացած զգացումով, գաղափարով, ապրումով ու երեւակայութեամբ»: Այդպիսին է բանաստեղծի հավատամքը եւ այդ հավատամքը լեցուն է առաջին հերթին օտար ափերում հայեցի ոգին պահելու դժվարին աշխատանքով, որն այսօր Մոնթրեալում լույս տեսնող «Հորիզոն» շաբաթաթերթում կատարում է Գրիգոր Հոթոյան բանաստեղծն իր հոգվածներով ու հրապարակախոսութեամբ: Նա կոչ է անում սիրել ու պահպանել հայոց լեզուն, քանզի այս մարդակուլ աշխարհում հայ մարդու համար մայր լեզուն գոյատեւման անձնագիր է, լինելիութեան փարոս:

Ձմայլելի երաժշտութեամբ մեղեդի ես դուն վարարուն,
Մեր հնամնայ տաճարներէն վեր բարձրացող աղօթքի սիւն,
Մեր եռանդուն շինականի ու հովիւի շրթունքներուն,
Յաւերթօրէն թրթռացող, անմահական երգերու տուն:

Բանաստեղծ Գրիգոր Հոթոյանի պոեզիայում կարեւոր ու նշանակալից դեր ունի կինը որպէս սիրո, մայրութեան խորհրդանիշ: Նրա սիրային-քնարական բանաստեղծութունները լեցուն են քնքուշ մեղեդայնութեամբ: Առանց սիրած էակի, բանաստեղծի համար կյանքը ոչինչ է ու դատարկ: Կարոտից ու բաժանումից ծնված բանաստեղծութուններում կնոջ հանդեպ ունեցած սիրո նուրբ պատկերներով, հեղինակը սիրո խոստովանութեան սրտահույզ բառեր է շաղում: Գրիգոր Հոթոյանի համար կնոջ կարեւոր առաքելութունը հայրենասեր զավակներ կրթելու եւ նրանց հայեցի դաստիարակութեամբ օժելու մէջ է:

Հազար պատիւ հայ մայրերուն,
Որոնց վսեմ նուիրումով
Եւ սեփական կեանքի գնով
Հասած է մեզ հայոց լեզուն:

«Նվիրում» ժողովածուն Գրիգոր Հոթոյանի մի յուրօրինակ հատընտիրն է կարծես նրա ապրած կյանքի եւ գրական վաստակաշատ ճանապարհի: Այս ստեղծագործական հանրագումարը, որ դարձել է գիրք, ուրախալի է, որ տպագրվել է հայրենիքում հեղինակի դստեր եւ թոռների մեկենասութեամբ եւ «Ուխտատուն» թանգարան-ինստիտուտի հրատարակչութեան տնօրեն, խմբագիր, բանաստեղծ Մասուն Գրիգորյանի ջանքերով: Այս գիրքը գալիս է հաստատելու, որ օտար ափերում ապրող հայ մարդու՝ հատկապէս բանաստեղծի համար հայրենիքը այն միակ հանգրվանն է, որից երբեք չեն հեռանում, այլ միշտ վերադառնում են, ինչպէս արձակագիր Հրաչյա Մաթեոսյանն է գրում գրքի առաջաբանում. «...նրա համար հայրենիքում սիրելը հրաշք է, հայրենիքում նոր երգ գրելը հրաշքի նման...»:

Ուրեմն ցանկանք, որ Գրիգոր Հոթոյան բանաստեղծն իր նոր բանաստեղծական ժողովածուներով ուրախացնի իր հայաստանյան ընթերցողին:

Բարին ընդ քեզ, իմ հայրենասեր գրչեղբայր...

Լիլիթ
Բանաստեղծ, «Խորան Լուս»
8 Օգոստոս 2002, Երեւան

*Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան
Աստ*

Սիրելի Պրն. Հոթոյեան,

Մեծ հաճոյքով ծանօթացայ ձեր գրչին պատկանող «Նուիրում» երգերու ժողովածուն:

Ձեր երգերու մէջէն ընթերցողը կարող է ծանօթանալ ձեր հայրենասիրական ոգուն, որուն փայլուն վկայութիւնը ժողովածուի Մայր Հայրենիքի մէջ տպագրութիւնն է:

Այս առթիւ իմ շնորհաւորութիւնները Ձեզ եւ Ձեր բանաստեղծութիւնները եղանակաւորող երաժշտագէտներուն եւ բոլոր անոնց որոնք բարոյսապէս եւ նիւթապէս օժանդակեցին «Նուիրում»ի հրատարակութեան:

Թող բարին Աստուած օրհնէ Ձեզ պարգեւելով քաջաւորջ եւ արեւշատ տարիներ:

Սիրով օրհնութեամբ՝

**Տ. Չարեհ Ա. Քիւյ. Չարգարեան
Հոգեւոր Հովիւ Թորոնթոյի
Ս. Երրորդութեան Հայ առաքելական
Եկեղեցւոյ
28 Օգոստոս 2002**

Սիրելի Գրիգոր,

Շնորհակալութեամբ ստացայ շատ գեղեցիկ եւ վառ գոյներով նկարները՝

Այս նկարներով չէ՛ որ միշտ քեզի պիտի յիշեմ, իմ յիշողութեանս մէջ ջըն ես եղած միշտ, քեզի հետ մեր ունեցած անմոռանալի սակայն կարճ պահերը, մանաւանդ այս վերջին հանդիպումը, Օգոստոս 17ի քէրմէսի ժխորին մէջ, սեղանին շուրջ նստած հագիւ իրար կը հասկնայինք: Ինծի համար մեծ հպարտութիւն եւ ուրախութիւն է ունենալ քեզի պէս անկեղծ բարեկամ մը, լեցուն մշակութային առատ մթերքով, որ որչափ որ խօսինք որեւէ նիւթի շուրջ, տակաւին ըսելիքներ կան իրարու, ուրիշ խօսքով «ղաֆատէնկի» ընկեր մը, (կը ներես թրքերէն բառ գործածելուս):

Ինծի նուիրած «Նուիրում» բանաստեղծութիւններու հատորիկը եղած է բարձակից բարեկամս, զոր կը կարդամ կրկին ու կրկին անգամ այդքան սիրած բանաստեղծութիւնները, որոնք իմ սրտին կը խօսին:

Օրինակ՝ էջ 36 «Սիրուն Աղջիկ», էջ 43 «Քեզ Տեսնելով», էջ 45 «Ինչու Համար Սիրելիս», էջ 69 «Կը Սիրեմ Քեզ», եւ այսպէս շարանը երկար է, մէկը միւսէն դիւրեղ:

Երանի քիչ մը նոթա գիտնայի ու երգէի վստահ եմ աւելի սրտառուչ պիտի հնչէ:

Պերճին հետ խօսեցայ շնորհակալութիւն յայտնեց եւ ըսաւ թէ հոն պիտի ըլլայ մօտերս եւ քեզ անպայման պիտի տեսնէ:

Յարգանքներս ազնիւ տիկնոջդ եւ սրտագին բարեւներս քեզի:

Սիրով՝
Վահրամ Պոյաճեան
Գրասէր, Մտաւորական
11 Սեպտեմբեր 2002

Յարգելի Տիար Գրիգոր Հոթոյեան,

Երկու շաբաթ առաջ, խորին շնորհակալութեամբ ստացայ ձեր այնքան գեղեցիկ կազմով պատրաստուած եւ մակագրուած «Նուիրում» բանաստեղծութեանց հատորը:

Յիրաւի ուրախալի երեւոյթ է: Որովհետեւ բազմագոյն ու բազմալեզու տիեզերքին վրայ տարածուած սփիւքացած հայուն համար իր մայրենի լեզուն, գիր ու գրականութիւնը պահելու, ծաղկեցնելու եւ զարգացնելու մաքառումին մէջ իւրաքանչիւր որակաւոր, իմաստալից ու օգտակար հրատարակութիւն յաղթանակ մըն է: Ձեր «Նուիրում» գիրքը այդպիսին է:

Սրտի անհուն գոհունակութեամբ կարդացի եւ մեծ հաճոյքով երգեցի ձեր «Նուիրում» հատորին նիւթերու հարուստ բովանդակութեամբ բանաստեղծութիւններն ու երգերը որպէս ձեր զգայուն եւ տաղանդաշատ բանաստեղծի հոգեւոյ ճառագայթումներու:

Որպէս երաժիշտ ըսեմ որ, չեմ հանդիպած հայ բանաստեղծի մը, որուն գործերը այս համեմատութեամբ եղանակաւորուած ու երգի վերածուած ըլլան: Մեծապէս բախտաւոր եւ շնորհաւորելի էք:

Մաղթանքս պիտի ըլլայ, որ օր մը այս երգերը հայրենի արհեստավարժ լաւ երգողներու կատարումներով խտասալիկի վրայ առնուէին եւ ժողովուրդին մատուցուէին որպէսզի ձեր գործին այդ երեսը եւս ծանօթացուէր հասարակութեան:

Այսու հաճեցէք ընդունիլ կրկին անգամ շնորհակալութեանցս հետ սըրտագին շնորհաւորանքներս հայ գրականութեան անդաստանը ծաղկեցնող այս բանաստեղծութեանց վարդափունջին համար:

Ի սրտէ կը մաղթեմ ոյժ ու կորով եւ կ'ըսեմ գրիչիդ միշտ դալար:

Շնորհակալութեամբ՝
Գրիգոր Փիտեճեան
Գրող, Երաժիշտ, Յօրինող
29 Սեպտեմբեր 2002
Նիւ Եորք

Սիրելի պրն. Հոթոյեան,

Ի՛նչ անակնկալ, ի՛նչ մեծ՝ հաճոյք... Թէեւ երկունքը ձեր քիչ մը երկար տեւեց, սակայն կեանքի կոչուեցաւ «Նուիրումը» ձեր՝ որպէս կտակ մեր զաւակներուն ու թոռներուն, որպէս ձօն՝ մեր ազգին ամբողջ...

Մանօթ ենք ձեր ոճին, հարուստ բառամթերքին, մեր լեզուին հանդէպ ձեր ունեցած գուրգուրանքին, ինչքան ակնածանքով եւ որքա՛ն վարպետօրէն գործածած էք զայն, արտայայտելու համար ձեր հայատրոփ եւ ազգայնաշունչ բանաստեղծութիւնները, չէ՞ որ Սասունցի էք եւ Դաշնակցական...

Հապա սիրերգութիւնները ձեր ջե՛րմ, բարի, վեհ, ազնիւ ու ներող, մարդկայնական եւ Աստուածահաճոյ, չէ՞ որ հաւատացեալ էք եւ կրօնասէր...

Ձե՛րմ շնորհաւորութիւններ եւ խնդակցութիւններ՝

**Կարպիս Թելեան
Յայ Ստաւորական
14 Յոկտեմբեր 2002
Քեպեգ**

Սիրելի Գրիգոր Հոթոյեան,

Ստացած եմ «Նուիրում» խորագրեալ հատորդ անհուն գոհունակութեամբ եւ նոյնքան աւելի մեծ շնորհակալութեամբ: Ձայն լրջօրէն, ծայրէ ի ծայր կարդալու առիթ եւ ժամանակ չեմ ունեցած տակաւին, տօնական օրերու առաջացուցած իրարանցումին, տեղափոխութեանց եւ այլ պատճառներով: Մէջ-ընդ մէջ կատարած այդպէս հապճեպ ընթերցումներէս դատելով սակայն այն համոզումը գոյացուցած եմ, որ շատ հաճելի ու յագեցնող ընթերցում մը կատարելու առիթ պիտի ունենամ:

Կը շնորհաւորեմ ու խնդակցութիւնս կը յայտեմ սոյն հատորին լոյս ընծայման առիթով: Ներկայի Սփիւռքեան մեր պայմաններուն մէջ հայերէն գիրքի լոյս աշխարհ գալը հրաշքի համագօր իրագործում է ու մանաւանդ պատկառանք ազգող, մեր հրաշագեղ Արեւմտահայերէնի գոյատեւումը ապահովելու կոչուած մէկ նոր նուաճում:

Կը մաղթեմ որ գրիչդ միշտ դալար մնայ վերը յիշուած առաքելութեան ճամբուն վրայ: Կը մաղթեմ քեզի տեւական ոյժ ու կորով:

**Ժիրայր Աթաբեան
Գրող-Արձակագիր, Յրապարագիր
28 Դեկտեմբեր 2002
Սիւ Եորք**

Սիրելի ընկեր Հոթոյեան,

Մեծ համակրանքով ու գնահատանքով հետեւած եմ ձեր գրական ու ազգային աշխատանքներուն, որոնք պատկառելի համեմատութեան հասած են:

Ըլլայ ձեր գողտրիկ բանաստեղծութիւններուն մէջ, ըլլայ թղթակցութիւններուն՝ գտած եմ լաւատեսութիւն, գրական մօտեցում եւ յատկապէս նը՝ լիրուածութիւն: Ձեր բանաստեղծութիւններէն նուազ արժէքաւոր չեն ձեր համապարփակ թղթակցութիւնները, որոնց համար Թորոնթոյի համայնքը ընդմիջտ երախտապարտ պէտք է մնայ: Արդարեւ, կը խոնարհիմ բազմատեսակ վաստակիդ առջեւ, մաղթելով քաջառողջութիւն եւ դալար գրիչ՝ շարունակելու համար ընտիր ստեղծագործութիւններդ:

**Միշտ համակրանքով աղօթարար՝
Տ. Արմէն Աւ. Քհնյ. Իշխանեան
18 Յունուար 2003**

Ազատատենչ ողջ հայութեան,
Խրոխտ կամքով Վահագնաժին,
Փիւնիկի պէս ծնար կրկին,
Յաւերժական իմ Հայաստան:

Դուն իմ երագ, իմ միակ սէր,
Դուն իմ արեւ կենսապարգել,
Կարօտավառ քեզի բարեւ,
Իմ Հայաստան աւետաբեր:

Գրիգոր Չոթոյեան

*Թանկագին եւ սիրելի Պրն. Հոթոյեան,
Երախտագէտ սրտով կու գանք յայտնել մեր սէրն ու գոհունակութիւնը Ձեզի այն գեղեցիկ ապրումներուն համար, որոնք բառ ու երգ են դարձած եւ հոգեւոր գործիք թարգմանութեանը համար շատ շատերու զգացմանց, որոնք նոյնը կը զգան ինչ որ ձերն է եւ կը դրսեւորուի ձեր անձին մէջէն:*

Արդարեւ ձեզ կը ճանչնանք դեռ եւս այն տարիներէն, երբ Թորոնթոյի մէջ հովուական ծառայութեան էինք կանչուած: Եւ դուք եղաք ամենուրէջ, ձեր քաղցր ժպիտով եւ ամէն ձեռնարկ վերակենդանացաւ ձեր գրչով, որուն հպարտութեամբը ներշնչեցիք շատ ու շատեր:

«Յաւերժական Իմ Հայաստան» հաւատամքը ձեր՝ դարձուցիք շատերուն հաւատամքը եւ իրօք մեծագոյն նուէրը, որպէս գանձ անկողոպտելի, որուն համար վստահ եղէք սերունդներ երախտապարտ պիտի մնան ձեզի:

Սիրելի եւ յարգելի պրն. Հոթոյեան, երբ կը վերընթերցեմ ձեր հոգեւոր բառերով երգ դարձած «Ազատատենչ Իմ Հայաստան» բառերը, ապա կը զգամ ճշմարիտ հայրենասէրին սրտին կրակի ջերմութիւնը:

Դուն իմ երագ, իմ միակ սէր,
Դուն իմ արեւ կենսապարգել,
Կարօտավառ քեզի բարեւ,
Իմ Հայաստան աւետաբեր:

Բայց, աւելին, այս նոյն ոգին ալ կը խօսի ու կը պատգամէ ձեր բոլոր գրութիւններուն մէջէն: Սիրոյ ու նուիրումի նոյն զգացողութիւնը կը դրսեւորուի «Նուիրում» վերագրուած ձեր հատորի բոլոր էջերուն մէջ, ամէն մէկ բան ու խօսքի մէջ: Եւ ի գուր չէ, որ Հրաչեայ Մաթեւոսեան այնքան արդարօրէն կը գրէ ձեր մասին հետեւեալ բառերով. «Սիրային ինչ երգ էլ գրած լինի ու գրելու լինի Գրիգոր Հոթոյեանը, սիրոյ նրա անսպառ աղբիւրը եղել է ու է՝ իր Հայաստանը... Աղբիւր, որ նա պահել ու պահում է մաքուր»:

Օրհնեալ ըլլայ ձեր գրիչը, վարձքերնիդ կատար:

Մնամ սիրոյ ջերմ ողջունիւ, Աղօթարար՝
Յովնան Արքեպիսկոպոս
Առաջնորդ Գանատահայոց
Մոկրեալ
14 Փետրուար 2003

Նոր Հրատարակություններ

**ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ
«ՆՈՒԻՐՈՒՄ»**

«Գանատա ապրող հայ բանաստեղծ, հրապարակախօս, բազմաթիւ երգերու հեղինակ Գրիգոր Հոթոյեանի ստեղծագործութիւններուն Երեւանի մէջ լոյս տեսնող առաջին գիրքն է այս: Ընթերցողը անոր ստեղծագործութիւններուն ծանօթ է սփիւռքահայ մամուլէն եւ «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծութիւններու ժողովածուէն: «Նուիրում»ին մէջ բացի հայրենասիրական եւ սիրային նոր գործերէն, ընթերցողը առաջին անգամ կը հանդիպի հեղինակին գրած երգերուն եւ անոնց հիման վրայ հիւսուած երաժշտութեան»: Այսպէս կը կարգանք գիրքին երկրորդ էջին վրայ գետեղուած ծանօթութենէն:

Հատորի խմբագիրն է բանաստեղծ, հրապարագիր եւ պատմաբան Սասուն Գրիգորեան, իսկ հրատարակիչ «Ուխտատուն» թանգարան-ինստիտուտը: «Նուիրում»ը լոյս տեսած է 2002 թուականին, Երեւանի մէջ: 216 էջեր հաշուող այս գիրքին չափերն են՝ 55/8/82/8: Հեղինակին եւ անոր ստեղծագործութեան մասին կը կարգանք արձակագիր Հրաչեայ Մաթեոսեանի յառաջաբանին մէջ: Իսկ գիրքին մեկենասութիւնը ստանձնած են հեղինակին դուստրն ու անոր երկու որդիները:

«Նուիրում»ը կը բաղկանայ չորս մասերէ: Իմ երգարանը կոչուող ձայնագրեալ բաժինը նախ առաձին կը ներկայացնէ բանաստեղծութիւնը, ապա՝ ձայնագրեալ էջերը, միշտ նշելով երաժշտին կամ դաշնաւորողին անունը: Թեման Հայաստանն է, Ղարաբաղը, անկախութիւնը, հայոց լեզուն, մայրը, սէրը, ազատամարտիկն ու Դաշնակցութիւնը:

Երկրորդ բաժինը կը կոչուի «Որդիական»: Հոս ամփոփուած են բանաստեղծութիւններ, որոնք հեղինակը կը տանին իր արմատներուն գիրկը՝ Սասուն, Ֆետայիններ, Սուրիա, կիրակնօրեայ վարժարան, սէր ու թախիծ: «Նուիրում» կոչուող երրորդ մասին մէջ կը հանդիպինք վեց բանաստեղծութիւններու, որոնց ներշնչումի աղբիւրը հանդիսացած են հեղինակին հարազատները: Հատորը կը փակուի «Սիրտը Ափին Մէջ» հրատարակութեան առթիւ կատարուած վկայութիւններու եւ գրախօսականներու փունջով մը: Սասուն Գրիգորեանի, Յակոբ Կարապենցի անուններուն կողքին, շուրջ տասնեակ մը հայրենի թէ սփիւռքահայ մտաւորականներու կարծիքներ կը հնչեն Գրիգոր Հոթոյեան բանաստեղծի մասին:

Ուրախալի երեւոյթ է տեսնել սփիւռքահայ գրողի մը գործերուն երաժշտաւորումն ու երգերու վերածումը: Հայ երգն է որ հայը հայախօս պիտի պահէ այս փերուն: Երգ չունեցող ժողովուրդը չունի ապագայ: Այս խոհերով է որ կ'ողջունենք 75-ամեայ Հոթոյեանի երգարանին ծնունդը, յուսալով հայրենասիրական թէ քնարական այդ երգերը լսել մեր վարժարաններու աշակերտութեան շրթներէն:

**Հ. Սեփեթեան
«ՆՈՐ ԿԵԱԼՔ», Մայիս 29, 2003**

**Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան,
Գանատա**

Մրտի անհուն ուրախութեամբ եւ գոհունակութեամբ ստացայ ձեր «Նուիրում» քերթուածներու գեղատիպ հատորը, տպուած՝ Մայր Հայրենիքի մէջ:

Հատորը ինքնին կը փաստէ ձեր հայրենասիրական ու ազգասիրական այն վեհ հոգին, որ իր սկիզբը կ'առնէ «Ղարաբաղը Կը Կանչէ» բանաստեղծութեամբ, որ երաժշտութեան վերածուելով պիտի հնչէ իւրաքանչիւր հայ տան մէջ, ուր հայրենասիրական հոգին գերիվեր է այն ամէն տեսակի երաժշտական յօրինուածքներէն, որոնց մէջ կը պակսի հայրենասիրական հոգին:

Հատորին մէջ, իրարայաջորդ կարգով տեղ տրուած է հայ ժողովուրդի ազատագրական պայքարի ռահվիրաներուն եւ բոլոր այն նուիրեալներուն, որոնք հպարտութիւնն են ստեղծագործ մեր հայ ժողովուրդին: Ակնառու են նաեւ հոն, ձեր սրտի թրթռումները հանդէպ մարդկային անհուն սիրոյ զգացումներուն գորս կ'ունենայ իւրաքանչիւր անհատ, իրար նկատմամբ:

Ջերմապէս կը գնահատենք ձեր այս աշխատասիրութիւնը եւ կը մաղթենք որ ձեր գրիչը միշտ դալար մնայ, այն ակնկալութեամբ, որ մեր նոր սերունդի գաւակները ընթերցեն ձեր այս ստեղծագործական աշխատանքը, եւ պահեն իրենց տրամադրութեան տակ, որպէսզի մեր մեսրոպատառ եւ մեծաքանչ լեզուի բառերը անջնջ լիօրէն դրոշմուին իրենց սրտերուն ու հոգիներուն մէջ, որ բաղձանքն է իւրաքանչիւր հայ անհատի որուն սրտին խորքը լի է ազգասիրական ու հայրենասիրական զգացումներով:

Յաջողութեան եւ քաջառողջութեան լաւագոյն մաղթանքներով

**Աղօթարար՝
Նորայր Քինյ. Բաթանեան
20 Օգոստոս 2003
Սիսնի, Աւստրալիա**

Յարգելի ընկ. Գրիգոր Հոթոյեան,

Երէկ գիշեր մեր Կեդրոնը կը գտնուէի, երբ Կ.Կ.ի քարտուղար ընկեր Յակոբ Յակոբեանը ինծի յանձնեց ձեր «Նուիրում» հատորին օրինակը, զոր ազնուութիւնը ունեցած էիք ինծի վերապահելու, յայտնելով թէ ատենէ մը ի վեր գիրքը գրասենեակին մէջ կը սպասէր, մինչեւ որ չհասցէագրուած պահարանէն դուրս հանելով՝ գրքին մակագրութենէն վերահասու եղաւ, թէ որուն պէտք է յանձնէ:

Այս մանրամասնութիւնները կու տամ, որպէսզի չմտածէք թէ գիրքը շատոնց ստացած եւ սակայն շնորհակալութիւն մը իսկ արտայայտելու թերացած եմ: Ահա թէ ինչու, տուն վերադարձիս, ծայրէ ի ծայր կարդացի քերթը՝ Լածները, որովհետեւ կ'ուզէի առանց յաւելեալ ժամանակ կորսնցնելու ձեզի դրել:

Ուրեմն նախ՝ կը շնորհաւորեմ գրքին լոյս ընծայումը, ապա՝ իմ ջերմ գնահատանքս կը յայտնեմ ազգային-հայրենասիրական-հասարակական թէ անհատական ձեր անկեղծ ապրումները արտայայտող այնքան ջինջ ոճին համար: Պէտք է յայտնեմ, որ հատորին սկիզբը տրուած դաշնաւորումները, որոնց գոյութենէն տեղեակ չէի, յաւելեալ գոհունակութեան աղբիւր հանդիսացան:

Եւ վերջապէս՝ շատ շնորհակալ եմ ձեր ինծի նուիրած օրինակին համար: Կը մաղթեմ, որ Աստուած ձեզի երկար ու քաջառողջ կեանք պարգեւէ, որպէսզի ցարդ ձեր ունեցած գրական-լրագրական-հասարակական գործունէութիւնները միշտ նոյն խանդով, կորովով եւ յաջողութեամբ շարունակէք:

Բարի երթ. ջերմ բարեւեներով՝

**Փրոֆ. Շաքէ Միխսեան
Գրող, հրապարագիր
Մոնթրէալ
16 Յոկտեմբեր 2003**

**ՆԵՐՔՆԱՇԱՂԱԽ
(Յարգարժան պարուն Հոթոյան)**

Սերն է հեւում Հոթոյանի երգերում,
Սերն է թեւում Գրիգորի տաղերում,
Պատանի է սիրով վառված տողերում,
Սեր, նվիրում, քնքշություն կա տողերում:

Սիրուց շաղված մորմոքում կա տողերում,
Լուռ ներումի տառապանք կա տողերում,
Բաժանումի ցրտություն կա տողերում,
Հանդիպումի ջերմություն կա տողերում:

Մայր փնտրողի խոր թախիծ կա տողերում,
Հայրենիքի կարոտ կա իր տողերում,
Սասնո մեծ Տան ծուխն է ելնում տողերում...
Այս ամենը առկայծում է իր հոգում:

Հայկուհի Հովհաննիսյան
(Զեզ նվիրված ցերեկույթից հետո)
7 Յուլիս 2004
Երեւան

Սիրելի ընկ. Գրիգոր Հոթոյեան,

Ժամանակին ստացած եմ բանաստեղծութիւններդ, նմանապէս Եղ-
լարդ Մսրըլեանը ուղարկած էր օրինակներ, զորս արժանաւորներու նուէր
տուած եմ:

Նախ ուրախ եմ որ նման նախաձեռնութեան մը եղած ես: Ես միշտ
հաւնած եմ անձդ եւ քու հոգիիդ մէջ գտած եմ այն հարագատութիւնը որ կու
գայ մեր երկրի արեւէն: Տողերդ կու գան անսեթեւեթ ապրումներէն եւ անոնց
երգային հէնքը ցոյց կու տան պաճուճանքազերծ այս երկնումներդ, որոնք ա-
ւելի զգայնութիւններ են ավելի, ապրումներ են առիթները եղանակի եւ գրե-
լու բերող:

Ես առաջին մէկ օրէն, հաւանաբար տասեանկ մը տարիներ առաջ մօտդ
գտած եմ հեռաւոր ընկերը, որ գիտէ ուրախանալ ընդհանրական յաջողու-
թիւններով: Այս ապրումն էր որ ունեցայ գիրքդ ամբողջութեամբ մի քանի
անգամ կարդալով: Որքան լաւ կարգադրութիւն ըրած էք մեր երգային գրա-
կանութիւնը ճոխացնելով: Ես վստահ եմ այս մասին Հայաստանը եւս պիտի
ուրախանայ, եթէ անշուշտ կարգ մը մարդիկ իրենց մէջէն վանեն սփիւռքա-
հայ ստորագնահատելու սովորութիւնը:

Ինչո՞ւ չես աշխատակցիր «Նաւասարդ»ին:

Ուրախ պիտի ըլլայի եթէ փափաքէիր ստանալ մեր ամսագիրը եւ եր-
բեմն նաեւ գանատահայ գրականութեան մասին գրէիր մեզի:

«Հորիզոն»ի մէջ յաճախ պէտք է երեւիք, ձեզմէ գատ քիչ կան որ այդ
ափերուն հայ գրականութիւնը կանգուն կը պահեն:

Մնացեալը կը կարդաս «Նաւասարդ»ին մէջ:

Համբոյրներով
Արմէն Տօնոյեան
Գրող, Խմբագիր «Նաւասարդ» ամսագրի
20 Յուլիս 2004
Լոս Անճելոս

Սիրելի ընկեր Գրիգոր Հոթոյեան,

Դասական դարձուածքով՝ շնորհակալութեամբ ստացայ «Նուիրում» վերնագրեալ գիրքդ:

Առաջին գիրքիդ ծանօթացայ «Նուիրում»ի վկայութիւններ, կարծիքներ բաժինէն:

Սասուն, Հալէպ, Թորոնթօ... Օտարութիւն, Օտարացում... Երբեք:

Աշուղ մը՝ Սասնոյ սարերէն փրթած կարծր ժայռաբեկոր մը, տափաստաններու վրայ փշրուած ու կտրուած... հեռաւոր հորիզոններու, ցեղի, բարձունքի, մարդու, մարդկային կարօտով...

Եւ... ահա աշուղի մը ծնունդը:

Վստահ եմ որ տաղերը, բառերդ՝ զգացումներդ աւելի եւ աւելի գեղեցկացած են երաժիշտներու ալ թրթռացումներով եւ երանգներով: Կը շնորհաւորեմ. շնորհաւոր ծնունդ:

Բայց՝ վերի ըսածներուս հունցը՝ շաղելով խմորը միապաղաղ հաւասար գանդուած դարձնել: (Մալխասեան) Երկնուած է առաւելաբար Հալէպի «Սեւան» (Սիմոն Սիմոնեան) ուրիշ ժայռաբեկոր մը, «Նայիրի», «Արեւելք» տպարաններուն մէջ, Հալէպի «Ոսկեդար»ի օրերուն, ուր, խտացած էր Հալէպի հազարամեայ հայութեան «Սերուցքը», թագադրուած «Սէպիլի վրաններուն տակ» չարաբախտ օրերով ալ:

Դուն ապրեցար այդ օրերը:

Պարտաւորութիւններ, անշուշտ որ ունիս, ունիմ, ունինք:

«Երագային Հալէպը» ուռուցիկ գործէն ետք, կ'ուզեմ որ դուն ալ տասքու արձակովդ, արձակ-համարձակ Հալէպի տպաւորութիւններդ՝ «Հալէպը»: Ուր պիտի ազատուիս քերթողական օրէնքներու կաշկանդումէն (Ականջը խօսի պրն. Պ. Թ. Կերոնեանէն) ճիշդ մատնանշում մը:

Վերը միայն տպարանները յիշեցինք, հապա ակումբները, հայրենակցական միութիւնները, Տարօնական Շարժումները, ներգաղթը, հայրենասէրն ու հայրենադաւը, թատրոնները, դաշտահանդէսները, Հալէպի երեւելիքները, Սասունցի փռապանները, քէմփերը, դպրոցները: Քու գրիչիդ բան մը չե՞ն ըսեր... Այո՛, արձակ-համաձակ, արձանագրէ որ կորուստը իջնէ նուազագոյնի, ինչե՛ր անհետ կորուստին:

Գոնէ փրթում մը եւս փրկենք:

Ընթերցող բարեկամի մը այսքան պահանջկոտութի՞ւն... Ի սէր Հալէպի՝ մայր գաղութի:

Մառուկեանը իրականութիւնն ու ճշմարտութիւնը գիտցողն էր, բայց... խօսիլը՝ յաճախ սակարկութեան առիթ իրեն համար...:

Առողջութեան մաղթանքներս, չէն մնաս, պայծառ մնաս, աղքատած գանձանակն է:

Նորութիւններուդ սպասող, ընթերցող
Սիրով՝
Ռուբէն Գ. Պարսումեան
Գրագետ, Թատերագիր, Պատմագիր
10 Սեպտեմբեր 2004, Հալէպ

Սիրելի Գրիգոր,

Շատ հաճելի անակնկալ մը եղաւ այս առտու, Նիկողոս Թաշճեանէն՝ «Նուիրում»ի օրինակ մը ստանալաւ: Զերմ շնորհակալութիւն եւ վստահ եմ, որ այսքան բանաստեղծութիւն գրելէ ետք՝ ամէն օր, ամէն ժամ՝ նոր քերթուածներ կը խորհիս ու կը շարունակես թուղթին յանձնել: Մարմաջը կը ճանչնամ, թէեւ չեմ կրնար յաւակնիլ թէ արտադրածս նոյնքան յաջող է: Սրտագին շնորհակարարութիւններ...

Կը տեսնեմ թէ հրատարակիչդ՝ Հայաստան է, իսկ տպագրիչդ Թորոնթօ: Ես յուսահատեր եմ հայ հրատարակիչ փնտռելով ու ի վերջոյ ներփակած գրքոյկիս ձեւին ապաւինած - այսինքն համակագրիչով ես ինքս պատրաստել նախօրինակը եւ 100 օրինակ պատճէագրել ու կազմելէ ետք՝ սենեակի անկիւն մը նետել: Եկուր տես որ Ալիսը կը գանգատի որ ամբողջ մեր տան գետնայարկը եւ նստասենեակը գիրքերուս տուփերով լեցուեր է եւ դժուար կը գտնէ սալայատակը մաքրելը...: Իսկ Համագգայինը՝ Մոնրէալ, Թորոնթօ, Նիւ Եորք կամ Լոս Անճելըս՝ գիրքերը կը ստանայ՝ բայց վճառել չի գիտեր...

Այս բոլորէն պիտի եզրակացնես թէ բուն խնդիրս՝ արտադրածս շուկային անցնել ու սպառել է, բայց հայ կարգացողը ո՞ւր, գրքի շուկայութեամբ ապրուստ մը ճարողը ո՞ւր... Լաւ որ քիչ մը ուսաներ ու որպէս ճարտարապետ ապրուստ մը կը հանեմ:

Վստահ եմ թէ դուն տարիներ առաջ խնդիրը լուծեր ես եւ շատ պիտի խնդրէի որ փորձառութիւնդ իմացնէիր :

Հիացումով՝
Կարպիս Արմէն
Գրագետ, Հրապարակագիր
28 Յոկտեմբեր 2004
Օթթաուա

Հիանալի բանաստեղծ Պրն. Գրիգոր Հոթոյեան,

Ձիս կանխեցիք, մտադրած էի ձեզի գրել «Նուիրում»ին մասին, որովհետեւ ամէն օր կը կարգամ, բայց ահա «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծական հատորը հասաւ, որուն մասին կարգ մը գրախօսականներ եւ կարծիքներ կարողացած էի «Նուիրում» գիրքիդ մէջ: Իրապէս գնահատելի հատոր մըն է:

Եթէ բանաստեղծ Յովհաննէս Շիրազ ողջ ըլլար, ձեզի պիտի կոչեր «Հոթոյենց Գօգօ Սասունի», Սասունի արեւէն, պաղ ջուրէն խմած-մեծցած հօր զաւակ, որուն արեան մէջ կարմիր եւ ճերմակ գնդիկները սիրով լեցուն են: Ամէն ինչ սէր է եւ այս որչա՛փ սէր...:

Քերթուածներդ կարգալով մարդ սիրահարութեան կը մատնուի:

«Նուիրում»ը կարգալով թերթ առ թերթ, կու գամ ըսելու թէ՛ դուք օժտուած էք մեղեդիական եւ քնարական փափուկ ու նուրբ, խոհական ես կարօտաձայն, մերթ յուսաբեկուած, մերթ զոհուելու ցանկութիւնով, բայց իշխողը սէրն է: Քու բանաստեղծութիւններդ կարգալով, իգական սեռի բոլոր սիրուները քեզի պիտի սիրահարին, որովհետեւ անոնց ականջին շատ հաճելի բառեր ունիս:

**Մամ անկեղծօրէն
Խաչիկ Թաշճեան
Ծանօթ ասմունքող եւ երաժիշտ
Լու Անճելլոս**

Ի.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ ԵՒ
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ «Ի
ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ
ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»
ՀԱՏՈՐԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ԱՌԹԻՒ

ՇՆՈՐՀԱՀԱՆՂԵՄ - ԳԻՆԵՉՕՆ
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ
«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»
ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐՈՒ ՀԱՏՈՐԻՆ

Հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Խաթակ Ս. Արք. Յակոբեանի եւ կազմակերպութեան Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին, տեղի ունեցաւ շնորհահանդէս-գինեձօն բանաստեղծ, արձակագիր եւ հրապարակագիր պրն. Գրիգոր Հոթոյեանի «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» պատմուածքներու հատորին, Հինգշաբթի, 5 Մայիս 2005, երեկոյեան ժամը 8:30ին, եկեղեցւոյ «Յովնանեան» սրահին մէջ:

Շնորհահանդէսը իրենց ներկայութեամբ պատուեցին Սրբ. Աստուածածին Եկեղեցւոյ հովիւ՝ Գերպ. Տ. Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեան, Հայ Կաթողիկէ Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հովիւ՝ Գերյարգելի Տ. Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան, Գէմպրիճի Սրբ. Նշան Եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Կոմիտաս Քահանայ Փանոսեան, Վերապատուելի Եսայի Սարմազեան եւ հոծ թիւով գրասէրներ ու բարեկամներ:

Պատրաստուած էր կոկիկ յայտագիր մը, ուր բացման խօսքով հանդէս եկաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ պրն. Սարգիս Ղազարեան, ապա հերթաբար խօսք առին Քրիստոնէական Յանձնախումբի անունով Ալիս Թիթիգեան, Հ. Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան, Վերպ. Եսայի Սարմազեան եւ Յակոբ Մանուկեան, որոնք իրենց սրտի խօսքերով վեր առին Գրիգոր Հոթոյեանի հայ գիրի եւ հայ գրականութեան իր բերած անխոնջ ու անսակարկ սպասարկութիւնը, իր ժողովուրդի մահու եւ կենաց պայքարի ընդմէջէն, Հայ Գողգոթայի անմիջապէս յաջորդող տարիներուն, որպէս հրապարակագիր, բանաստեղծ եւ արձակագիր:

Մէջընդմէջ ասմունքեցին Գրիգոր Հոթոյեանի բանաստեղծութիւններէն Նաթալի Մալաուտ՝ «Սուրբ Մեսրոպ», Տարօն Քէսքինեան՝ «Սուրբ Աստուածածին» եւ Թորոնթոյի Մայրոսեան «Հայաստանեայց Եկեղեցի» եւ ընթերցեցին իր գրութիւններէն՝ Տանիէլ Օհանեան, Նաթալի Ճիկէրճեան եւ Ռուբէն Պետրոսեան, իսկ Սարգիս Ղազարեան կարդաց Արժ. Տ. Արմէն Ա. Քահանայ Իշխանեանի եւ Արմէն Տօնոյեանի այս առիթով ուղարկած գրութիւնները: Գերշ. Տ. Խաթակ Ս. Արք. Յակոբեանի խօսքը ընթերցեց՝ Ռոզաննա Մարկոսեան, իսկ գիրքի վերլուծականը կատարեց պրն. Մուշեղ Գարագաշեան, յատկապէս շեշտելով իր բոլոր պատմուածքներու ընդմէջէն, բարոյական սկզբունքներու փոխանցումը:

Պրն. Յակոբ Ճանպազեան ներկայացուց յոբելիարի կենսագրական գիծերը:

Գրիգոր Հոթոյեան ծնած է Հալէպ՝ 5 Օգոստոս 1927 թուականին, Սասունցի ծնողներէ: Աւարտած է Հալէպի Ազգ. Սահակեան Վարժարանը, ապա հետեւած հայագիտական դասընթացներու:



Շնորհահանդես-Գինեծօնէն տեսարան մը

Երեք տարի ծառայած է Ֆրանսական բանակին Բ. Աշխարհամարտի ընթացքին եւ արձակուած՝ որպէս ենթասպայ: Եղած է գրաշար, խմբագիր, ուսուցիչ եւ տնօրէն ազգային ամէնօրեայ, ամառնային թէ կիրակնօրեայ վարժարաններու, Սուրիա թէ Գանատա:

Աշխատակցած է Հայէպի «Արեւելք» օրաթերթին, «Մեր Կեանքը» եւ «Կանթեղ» ամսագիրերուն: Իր բանաստեղծութիւնները լոյս տեսած են Հայէպի «Արեւելք» օրաթերթերի, «Կանթեղ», «Ակօս», «Մեր Կեանքը» ամսագիրերուն եւ «Սփիւռք» շաբաթաթերթերուն մէջ: Իր բանաստեղծութիւններով, յօդուածներով, թղթակցութիւններով եւ պատմուածքներով աշխատակցած է Սփիւռքի թէ Հայաստանի բազմաթիւ օրաթերթերու, պարբերաթերթերու եւ ամսագիրերու:

1977էն մինչեւ 1987, խմբագրած եւ հրատարակած է Հայ Կեդրոնի «Լըրատու» ամսագիրը եւ եօթը տարիներ խմբագրած եւ ձայնասփռած է «Հայ Կեդրոնի Ձայն»ի հեռաձայնային լուրերը:

Թորոնթոյի մէջ 1987 թուականին հրատարակուած է «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծութիւններու հատորը, իսկ 2002ին՝ «Նուիրում» երգերու եւ բանաստեղծութիւններու հատորը:

Գրիգոր Հոթոյեան գնահատագրեր ստացած է Սուրիոյ, Ֆրանսայի եւ Օնթարիոյ կառավարութիւններէն, ինչպէս նաեւ Կիրիկիոյ Կաթողիկոսութենէն եւ Գանատայի Ազգային Առաջնորդարանէն՝ իր ազգային, եկեղեցական եւ գրական գործունէութիւններուն համար:

Մասնակցած է Հայաստանի Գրողներու Համահայկական առաջին 2002ի եւ երկրորդ 2004ի խորհրդաժողովներուն:

14 Յուլիս 2004ին իր գրական գործունէութեան 60-ամեակին առթիւ, Հայաստանի Գրողներու Միութեան, Ռազմածովագիրներու Միջազգային Ընկերակցութեան Հայկական վարչութեան եւ Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան հիմնարկութեան կողմէ կազմակերպուած

յոբելինական հանդիսութեան, կը պարգեւատրուի Ազատամարտ «Ուխտատուն» թանգարանի Շնորհագիրին եւ Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան անդամակցութեան:

Տեղի ունեցաւ պատկերիզի ցուցադրութիւն Հայաստանի մէջ իր վաթսունամեակի յոբելինական տօնակատարութենէն եւ գինեձօն, ապա պրն. Գրիգոր Հոթոյեան խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց Հ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանին, Սրբ. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Քրիստոնէական Դաստիարակչական Յանձնախումբին, յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերող բոլոր անհատներուն եւ զինք յարգող եւ ձեռնարկին ներկայ գտնուողներուն:

Շնորհահանդէսը փակուեցաւ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքի մակագրութեամբ եւ հիւրասիրութեամբ:

Չարեհ Տերվիշեան
«ՅՈՐԻՉՈՆ»



«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» պատմուածքներու գրքին գինեձօնէն տեսարան մը

**ԲԱՆԱՍՏԵՂԾ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ
«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»
ԳՐՔԻՆ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍԻՆ ԱՌԹԻԻ**

Սիրելի գրասէր ժողովուրդ,

Թոյլ տուէք որ ընկեր Հոթոյեանի համար կազմակերպուած այս շնորհահանդէսի առթիւ ներկայացնեմ կարգ մը մտածումներ, ինչպէս Տէր Արմէն Ա. ՔՏՆ. Իշխանեանի գիրքին շնորհահանդէին առթիւ ներկայացուցած էի: Անոնք ինծի ծանօթ ու բարեկամ երկու հսկայ բեւեռներ են. առաջինը մեր հասուն տարիքին ծանօթացած իսկ երկրորդը երեսայական շրջանի. երկուքն ալ համեստ, տաղանդաւոր ու ազգասէր անձնաւորութիւններ. երկար ապրին:

Ուրախ եմ արտայայտուելու որ մեր յարաբերութիւնները ընկեր Հոթոյեանի հետ եղած են գրաւիչ, առինքնող, դաստիարակչական, կերտող, ուր միշտ ազգային ցաւն ու խինդը առաջնորդած են մեզ դէպի կառուցում միտքերու, գրականութեան եւ երաժշտութեան:

Ես պիտի ուզէի վեր առնել Հոթոյեան բանաստեղծին իւրայատուկ յատկութիւնը, խօսիլ իր կարողութիւններուն մասին, եւ թէ որպիսին են իմ մտածումներս բանաստեղծի մը մասին:

Հիները կ'ըսէին թէ բանաստեղծը կը ծնի, չի շինուիր: Ճիշտ էին, ձեզի վստահեցնելու համար ըսեմ թէ, կարելի է զարգացնել մէկը, արուեստներու կատարեալ ծանօթութիւն տալ, բարեկարգելով աւելի յառաջացնելու համար զինք իր ասպարէզին մէջ, սակայն բոլոր ուսումնառութիւնները աշխարհի չեն կրնար բանաստեղծ մը արտադրել, եթէ ան ի ծնէ բանաստեղծ չէ, ինչպէս մեր այսօրուայ մեծարեալ ընկերը:

Զգոյշ մօտեցումներ ունենալու է բանաստեղծի մը հետ, որովհետեւ դիւրաբեկ կրնան ըլլալ զգացումները իր սիրոյ սրբանին ու նազելի յիշատակարանին:

Այս բոլոր նիւթերը զորս կը ներկայացնէ ընկեր Հոթոյեան իր համառօտ արտայայտութիւններուն ընդմէջէն, կը դրսեւորեն եռանդազին տաղանդ, մտքի ազատ սահունութիւն, ներդաշնակութիւն, կորով, քաջութիւն, ցնծազին ոգի մը, վարժ միտք մը, որպէսզի անով կարենայ մարդկութեան սատարել իր քերթողութեամբ: Բանաստեղծութիւնը իմ հասկացողութեամբ միտքի ու արդար արտայայտութեան գեղեցկագոյնն է եւ գերիվեր այլ պճնագարգութիւններէ:

Բանաստեղծը պէտք է ունենայ միտքի ու խօսքի լայն կարողութիւն դէպի արար աշխարհ բացող հսկայ լուսամուտներու նման, ուրկէ երբ դիտէ ու մեզի ներկայացնէ իր մտածումները, կարենանք տեսնել իր անկեղծ արտայայտութիւններուն ընդմէջէն ճշմարիտ խօսքն ու արդար թելադրանքը:

Պէտք է տիրացած ըլլայ տրամաբանական եւ վերլուծական կարողութիւններու որպէսզի կարենայ լաւագոյնս նպաստել իր արուեստին ու փոխանցել մեզի իր սրտատրոփ պահերը, որովհետեւ բնաստեղծ մը իր ճիւղին մէջ մեծագոյն տրամաբանողն ու յօրինողը ըլլալով կրնայ ուստոստել մէկ ճիւղէն

միևսին առանց դժուարութեան, տարակարծիքի կամ ենթադրութեան: Աչքերը տեսնեն իրական գեղեցկութիւնը աշխարհի, լսողութիւնը՝ ծարաւ երաժշտութեան, եւ մեղեդիական իրագործում տեսնուի ամէն մէկ տողին մէջը քերթողութեան, որպէսզի կարենայ ներկայացնել խօսքերը մեղեդիաբար:

Լայն սիրտ, բազմակողմանի կարողութիւն միտքի ու մտածման արտայայտութեան, յստակ տեսողութիւն, նիւթերու պարզ մօտեցում, եւ առհասարակ ներկայացնելու է բնութիւնն ու բնախօսութիւնը իր կանաչագարդ շնչառութեամբ, որոնք անհրաժեշտ յատկութիւններն են բանաստեղծի մը:

Այսպէս եղած են մեծագոյն բանաստեղծները, որոնք ի ծնէ ունեցած են կախարդական այն ճպտոր, որով դարձած են աղիւրը լոյսի, յոյսի, ժպիտի, յուսադրութեան ու յուզումի, եւ յաջողած են իրենց յղացած ու արտայայտած միտքերուն ընդմէջէն ուրախ ու քաջալերական պահել մարդկութիւնը, եւ հաստատ հիմերու վրայ դնել քերթողութիւնը իր բոլոր ոլորտներով միասին:

Այսպէս, բանաստեղծութեան հսկայ արարիչներէն յիշենք Շնորհալին, Շիրազը, Չարենցը, Թէքէեանը, Տանթէն, Շէյքսպիրը, Դուրեան, Մեծարենց, Դանիէլ Վարուժան, Համօ Սահեանը, Ռազմիկ Դաւոյեանը, որոնց կարգին նաեւ արժանաբար Գրիգոր Հոթոյեան բանաստեղծը. այս հսկաները մեծ կ'անուանուին, որովհետեւ լաւ տեսանողներ, մարգարէներ, երգիչներ եւ խորհողներ եղած են կամ են:

Այժմ յիշենք իր «Հայոց Լեզու» քերթուածին մէջ արտայայտած գեղեցիկ միտքերէն հետեւեալ քառեակը: Եթէ Գրիգոր Հոթոյեան միայն այս քառեակը գրած ըլլար, բաւարար պիտի սեպուէր զինք քերթողութեան պատնէչին վրայ գետեղելու:

Սեր հմամեայ տաճարներէն վեր բարձրացող աղօթքի սիւն ես Հայոց լեզու,
Անդնդախոր մեր ծորերէն հոսող ահեղ գետ մըն ես դուն, Հայոց լեզու,
Երկրագունդին չորս ծագերուն սփռուած հայ բեկորներուն եւ
ճանապարհը կորսնցուցած մեր զաւակներուն փարոսն ես դուն, Հայոց լեզու:

Կնոջս ու իմ բարեմաղթութիւնները քեզի սիրելի ընկեր բանաստեղծ Գրիգոր Հոթոյեան. վարձքդ կատար. մաղթենք որ այսօրուայ շնորհանդէսը իր շարունակութիւնը ունենայ նորանոր գիրքերու հրատարակմամբ:

Յակոբ Մանուկեան
Գրագետ, երաժիշտ
5 Մայիս 2005
Թորոնթօ

**ԽՕՍՈՒԱԾ՝
«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»
ԳԻՆԵՉՕՆԻՆ**

Երբ, Հոգշ. Հայր Մեղրիկ առաջարկեց ինձի, որպէսզի գրագէտ Գրիգոր Հոթոյեանի նոր լոյս տեսած գիրքի գինեձօնին առթիւ յայտագրին մասնակցութիւնս բերեմ, բնագրաբար ծիծաղեցայ ու մերժեցի՝ տարիներ առաջ ինձի հետ պատահած հետեւեալ դէպքը յիշելով.

Պէյրութ ազգականի մը անունը շնորհաւորելու համար այցելութեան գացի, կ'երեւի ուշացած էի, քանի որ խրախճանքի սեղան մը սարքուած էր սենեակին մէջտեղը, որուն շուրջ հաւաքուածները հասած էին արդէն խանդավառութեան բարձր աստիճաններու: Ներկաներէն մէկը ի տես մ'ուտքիս՝ ձեռքին օղիի պարսպ շիշ մը բարձրացուցած ողջունեց զիս գոչելով.

– Ծօ ուր մնացիր. ես արդէն շիշ մը օղի պարպեցի, դուն դեռ նո՞ր կու գաս:

Ես ալ բան մը ըսելու համար,

– Այդ շիշը ամբողջ միւս կողմէն իմեցիր: Իր հաստատական պատասխանին վրայ, զայն հպարտացնելու համար ըսի.– Պռաւօ ակաս, հալալ ըլլայ:

Կը կարծէի թէ այսպէսով վերջ պիտի գտնէր այս նիւթին շուրջ խօսակցութիւնը, բայց սխալած էի, մարդը կատղած ոտքի ելաւ ու...

– Ծօ դուն ո՞վ կ'ըլլաս որ իմ խմելուս պռաւօ կ'ըսես, դուն պէտք է ինձ մէջ առաւել խմող ըլլաս որ իրաւունք ունենաս իմ խմելուս մասին գնահատանք արտայայտելու:

Այս պատահարը պատմելով Հայր Սուրբին, փորձեցի հրաժարիլ այս պարտականութենէն, սակայն ինձի ըսաւ թէ իմ սրտի խօսք է եւ ոչ թէ գրադատութիւն: Այդ պարտականութիւնը ուրիշը պիտի կատարէ:

Արդ, չեմ գիտեր, որ մէկ տիտղոսով արտայայտուիմ, Գրիգոր Հոթոյեան բանաստեղծի, արձակագրի թէ հրապարակագրի, ասոնցմէ եւ ոչ մէկին: Այլ Հայ ժողովուրդի ծով ցաւերու ամոքման համար ապրող նուիրեալ Գրիգոր Հոթոյեանին: Ի զուր չէ որ իր բանաստեղծութիւններու գրքերէն մէկը կոչած է «Նուիրում»:

Ճակատագիրը մեզ՝ Գրիգոր Հոթոյեանն ու զիս միատեսակ ստեղծած է: Նոյն ժամանակը ջանին ծնած ենք, նոյն վայրին մէջ, գաղափարական նոյն հնոցին մէջ կերտուած նկարագրով: Ահա թէ ինչու ինքզինքիս իրաւունք կու տամ զայն՝ իր հոգին լաւագոյնս ճանչնալու:

Գրիգոր Հոթոյեան իր աչքերը բացաւ Հայ Գողգոթային անմիջապէս յաջորդող տարիներուն, տեսաւ տնաւէր մեր ժողովուրդին մահու կենաց պայքարը, տեսաւ իրենց ընտանիքներուն ապրուստ մը ճարելու անկարողութենէն յուսահատ, այլապէս ընտիր հայորդիներու անձնասպանական վախճանները: Եւ դեռ շատ բաներ, որոնք գծեցին իր ապագայի ուղին ու ազնուական նկարագիրը:

Աստուած եկաւ իր կեանքի փորձառութեան վրայ աւելցնել գրելու եւ բանաստեղծելու շնորհը, ու ան անվարան այդ բոլորը նուիրեց իր պաշտած Աստուծոյն եւ սիրած ժողովուրդին:

Երբ սիրած ժողովուրդին կ'ըսեմ, ձիւթ չէ որ կը ծամեմ: Հայ ժողովուրդի հանդէպ իր անհուն սէրն էր որ մղեց զայն դերասանութիւն ալ ընելու, ուսուցչութիւն ալ ընելու, սպառիչ ժողովականութիւն ընելու, եւ այլն: Իրեն համար հայութեան ծառայելու գծով մեծ ու պզտիկ, կարեւոր կամ անկարեւոր գործ չկայ մինչեւ օրս:

Քիչ մը շեղելով իրաւունքէս՝ երկու բառով արտայայտուիմ հրապարակագիր Գրիգոր Հոթոյեանի մասին. այս ճիւղը հայ գրականութեան ինչպէս հայաստանցիները կ'ըսեն ամենէն անշնորհակալ ճիւղն է:

Գրիգոր Հոթոյեան այս իրողութեան շատ լաւ գիտակից է: Սակայն երկար տարիներէ ի վեր Թորոնթոն կ'ապրեցնէ հայ մամուլի էջերէն: Ան շատ դիւրութեամբ կրնար մերժել այդ աշխատանքը եւ նուիրուիլ գրական աւելի մնայուն գործերու արտադրութեան: Սակայն հայ ժողովուրդին անսակարկ ծառայելու սիրոյն գրականութիւնը զոհեց գաղութի բարգաւաճման: Միաժամանակ սակայն, լրագրութիւնն ալ բարձրացնելով գրականութեան աստիճանին: Թորոնթոն այս Հոթոյեանն ալ պէտք չէ մոռնայ:

Այս հակիրճ բայց ի խորից սրտի խօսքերս աւարտելէ առաջ, յայտնեմ թէ, Գրիգոր Հոթոյեան իր ունեցած բարի, նուիրումի պատրաստ ընտիր նկարագրով կրնար եւ պէտք էր որ քահանայ ըլլար: Իր ունեցած բոլոր տուեալները հոն է որ կ'առաջնորդէին զայն: Ափսոս, բայց դեռեւս այն ատեն կռուէինք իրարու հետ եւ այսօր չկարենայի հոս կանգնիլ:

Վարձքդ կատար, գրիչդ դալար սիրելի հարազատ ընկեր. ապրիս մանաւանդ այն կարողութեանդ համար, որ ժամանակին գիտցած ես ընտրել այնպիսի կողակից մը, որ այսքան երկար տարիներ թիկունք կանգնեցաւ ու քաջալերեց քեզ: Տիկին Հոթոյեան ձեր ալ վարձքը կատար եւ շնորհակալութիւն ձեր կրած գրկանքներուն համար: Աստուծոյ աջը միշտ ձեր վրայ:

Արմէն Ա. Քին. Իշխանեան
Սոնթրէալ

**«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան»
Վեղինակ՝ Գրիգոր Վոթոյեան**

**Վրատարակութիւն
Ս. Աստուածածին Վայաստանեայց Առաքելական եկեղեցոյ
Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի
«Շողակաթ» Մատենաշար թիւ 1, 2005, Թորոնթօ**

Արմատներով Սասունցի, նախկին Հայէպահայ եւ այժմու Թորոնթո-հայ՝ բազմավաստակ ուսուցիչ, հրապարակագիր, բանաստեղծ եւ արձակագիր՝ Գրիգոր Հոթոյեանի «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորը, իբրեւ արտաքին տեսք՝ ունի գեղարուեստական ճաշակաւոր ձեւաւորում եւ բարձրորակ ու դիւրընթեռնելի տպագրութիւն:

Նոր լոյս տեսած հատորին կողքի առաջին երեսին կապտաւուն խորքի մը վրայ՝ հեղինակին անունին, գիրքին խորագրին եւ տպագրութեան վայրին ու թուականին հետ՝ գետեղուած է նաեւ՝ Անթիլիասի Ապրիլեան Նահատակաց յուշարձան Մատրան՝ գունաւոր լուսանկարը: Իսկ կողքի վերջին երեսին՝ տըպագրուած է հեղինակին գունաւոր դիմանկարը, հակիրճ կենսագրականը, հեղինակային չորս գործերու անունները եւ մատենաշարի անունը:

Գիրքը իր փոքրագիր 150 էջերով, ունի ընթերցողին դիւրամատչելի նրբափորիկ հատորի մը տեսքը, եւ դիւրընթեռնելի տառատեսակներով տըպագրութիւն: Գիրքը իբրեւ կրօնաբարոյական հրատարակութիւն տպուած է՝ հրամանաւ Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի (Առաջնորդ Գանատայի Հայոց):

Գիրքին առաջին 7 էջերը կը ներկայացնեն՝ հեղինակին «Սրտի Խօսք»ը, ձօնագրութիւնը (Ձօն ճշմարտութեան վկաներուն՝ Հայոց Յեղասպանութեան 90-ամեայ Նահատակներուն), Խաժակ Սրբազանին «Խօսք Հայրական»ը, «Այս Հրատարակութեան Առիթով» Քրիստոնական Դաստիարակութեան Յանձնախումբին Հրատարակչական Բացատրողականը, Արամ Ա. Կաթողիկոսին «Խոհեր 90-ամեակի Սրբատառ Կոնդակէն» եւ Յայտնութեան գիրքէն բընաբան համար մը:

Գիրքին բարոյալից գրութիւնները, 24 առանձին խորագիրներով կը տարածուին հատորին 1-140 թուագրուած էջերուն վրայ: Այս գրութիւնները ունին արձակ գրական սեռերու այլազան մշակումները, ինչպէս՝ պատմուածք, հեքիաթ, լրագրական հարցազրոյց եւ յուշագրութիւն՝ բոլորն ալ գրուած բարոյական պատգամի մը խորքով եւ թելադրականութեամբ:

Բարոյալից այս պատումները, հեղինակը իր «Սրտի Խօսք»ին մէջ կը գրէ, թէ իր մէջ տպաւորուած ու իր կողմէ պատմուած են՝ կիրակնօրեայ դըպրոցներու իր աշակերտութեան եւ ուսուցչութեան շրջաններուն, ապա՝ գրի առնուած եւ «Շողակաթ» ամսաթերթի էջերէն մատուցուելէ ետք ընթերցողներուն, լոյս տեսած են առանձին հատորով, իբրեւ անդրանիկ հրատարակութիւն «Շողակաթ»ի նորահաստատ մատենաշարին:

«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գրութիւններու մեծամասնութեան ընդմէջէն, կարմիր գիծի պէս անցնող՝ բարոյական գլխաւոր պատ-

գամը՝ ազգային զորաւոր ուժի եւ մարդկային ազնիւ նկարագրի գիծերուն փոխանցումն է, որ ի յայտ կու գայ ցեղասպանութենէն վերապրած եւ հայու անկոտորում կամքով իրենց ազգային պատկանելութիւնը պահած տիպարներուն ընդմէջէն:

Ազգայինէն ետք, «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորին պատումներէն ճառագայթող բարոյականութեան գիծը, կրօնասիրական բարեպաշտականն է, հաւատք, երկիրաւորութիւն եւ վստահութիւն Աստուծոյ նախախնամական եւ գերհզօր ուժին հանդէպ: Աղօթքի եւ Աւետարանի պատգամներու զօրութեամբ է որ բարին կը տնօրինուի Հոթոյեանի հերոսներուն կեանքն ու ճակատագիրը: Հոն կը հանդիպինք նաեւ ժխտական տիպարներու, որոնց կեանքը կը յանգի՝ չարին ողբերգական եւ անփառունակ պարտութեան:

«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորին մէջ կը գտնենք նաեւ ընկերային եւ ընտանեկան բարոյախօսական դասեր... Հոթոյեան իր կարգ մը պատմութեան քննարկներուն ընդմէջէն կը պատգամէ՝ ծնողասիրութիւն, յարգանք՝ տարեցներուն հանդէպ եւ երախտագիտութիւն... Հոթոյեանի տիպարները յաճախ մարմնացումն են՝ աշխատասիրութեան, ուսումնասէնչութեան, ընկերասիրութեան եւ բարեսիրութեան բարոյական սկզբունքներուն...:

Սասունէն, Կարինէն եւ Ուրֆայէն ճողոպրած հայ ընտանիքներու ողիսականները պատմելով, Հոթոյեան մեզի կը փոխանցէ՝ հայ ընտանիքին յատուկ՝ աւանդապահութեան, պատուախնդրութեան եւ ազգասիրութեան պատգամները: Յեղասպանութիւն արհաւիրքի տարիներուն իր հերոսները կը խորհրդանշեն հայուն պայքարի եւ վերածնունդի կամքը...: Իբրեւ բարոյական ճշմարտութիւն՝ հոն կը հանդիպինք նաեւ արաբ ժողովուրդը բնորոշող՝ հիւրընկալութեան, հաւատարմութեան եւ մարդասիրական առաքինութիւններուն:

«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորը ունի նաեւ աշխարհագրական եւ պատմագիտական շահեկանութիւն, Հոթոյեան մանրամասն եւ շահեկան տեղեկութիւններ կը փոխանցէ մեզի իր պատումներուն մէջ՝ Կարին, էրզրում քաղաքի աշխարհագրութեան եւ երբեմնի ազգային եռուն կեանքի մասին: Մեզի լաւապէս կը ծանօթացնէ նաեւ՝ Եգիպտոս-Ուրֆայի իր հերոսական պատմութեամբ: Իր արմատներու ճամբով, Հոթոյեան սրտամօտ ջերմութեամբ տեղեկատուական էջեր ունի՝ Ֆետայիներու օրրան՝ Սասունի եւ երազային Հալէպի գաղութային եւ ազգային կեանքի եռուզեռին մասին:

Հատորին մէջ տեղ գտած է նաեւ՝ Սրտագին Ողջոյնի Խօսք մը՝ Խաժակ Սրբազանին գանատական գործունէութեան 35-ամեակին եւ Արքութեան տիտղոսին արժանանալուն առիթով: Իսկ հատորը կը փակուի՝ «Անջնջելի Յուշեր Երանաշնորհ Զարեհ Ա. Կաթողիկոսէն» խորագրով յուշագրութեամբ մը, ուր վեր կը հանուի տառապեալ հայրապետին կրօնաբարոյր ու ազգայնաշունչ կեանքի խորհուրդը:

Այս է, սեղմ գիծերու մէջ, բովանդակութիւնը «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորին, գիրքին 24 գրութիւններէն իւրաքանչիւրը լիովին կ'արդարացնէ ընդհանուր խորագիրը, ազգային, կրօնական, ընկերային, ընտանեկան եւ մարդկային պատգամներով:

Գրիգոր Հոթոյեան, արձակ իր այս մշակումներով գրական, գեղարուեստական մեծ յաւակնութիւններ չունի կարծես, անոր նկարագրական եւ պատմողական ոճին նպատակը՝ աւելի բարոյական պատգամներու փոխանցումըն է, քան՝ գրական, գեղարուեստական մատուցումը, հեղինակին համար ըսելիքն է կարեւորը, քան՝ ըսելու ձեւը, որ աւելի քարոզչական վիպապաշտ ճաշակ մը կը մատնէ իր մէջ, քան՝ գեղապաշտ:

Հեղինակի լեզուն պարզ եւ մաքուր արեւմտահայերէն է, հոն՝ քիչ անգամ կը հանդիպինք քերականական եւ ուղղագրական խախտումներու:

Ես Ապրիլ 24ին, Թորոնթոյէն Օթթաուա բողոքի ցոյցի երթ ու դարձի ճամբուս վրայ, սկսայ եւ աւարտեցի «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքին ընթերցումը: Պէտք է ըսել, որ նպատակադարձ անոթ ընտրած էի՝ հայկական ցեղասպանութեան 90-ամեակին ձօնուած այս գիրքը ընթերցելու, որովհետեւ ես այդ օր Հոթոյեանին եւ իր հերոսներուն հետ կրկնապէս ապրեցայ Հայկական Ցեղասպանութեան եւ վերածնունդին լինելութեան խորհուրդը:

Գրիգոր Հոթոյեան յաջողած էր պատգամախօսական իր առաջադրանքին մէջ... ջերմապէս կը յանձնարարենք գիրքը ընթերցանութեան համար...:

Մուշեղ Գարագաշեան
Ուսուցիչ, Դաստիարակ
5 Մայիս 2005
Թորոնթօ

«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորի հրատարակութեան առթիւ, Հ.Օ.Մ-ի Երկրորդական վարժարանի հայերէն լեզուի ուսուցիչ պրն. Մուշեղ Գարագաշեան, աշակերտներուն կը թելադրէ կարգալ վերոյիշեալ գիրքը եւ իրենց տպաւորութիւններն ու կարծիքները գրաւոր ներկայացնել հայերէնի դասապահին:

Ահա, անոնցմէ հինգ աշակերտներու գրութիւնները:

«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» Գիրքէն

Ինծի համար երկրորդ եւ երրորդ պատմուածքները, «Հայ Հայրերուն» եւ «Յարգենք Մեր Տարեց Հայրերը եւ Օգտուինք Անոնց Իմաստութենէն» ամէնէն շատ հետաքրքրական եւ օգտակար թուեցան, որովհետեւ զոյգ պատմուածքներն ալ կը միտին հայ հօր հանդէպ աւելի մեծ յարգանք եւ գուրգուրանք ցուցաբերել՝ նոր սերունդներուն կողմէ եւ օգտուիլ անոնց երկարամեայ փորձառութենէն:

«Հայ Հայրերուն» պատմուածքը կը միտի բացատրել, թէ դրամի համար, մարդ պէտք չէ իր հարազատ հայրը զոհէ: Բարոյական իմաստը այս պատմուածքին այն է, որ հեղինակը կ'ուզէ մեր նոր սերունդին փոխանցել այն վտանգը, որ կեանքի մէջ պիտի ունենանք, դրամի պատճառով ազգէն, ապագայ կերտելու սխալ խաբկանքով:

«Յարգենք մեծ Տարեց Հայրերը եւ Օգտուինք Անոնց Իմաստութենէն» պատմուածքով հեղինակը նորէն պատմութեան ընդմէջէն կը փորձէ մեզի փոխանցել, թէ ինչպէ՞ս մեր երէցները իբր ձրիակերներ սպաննուելով ձախողութեան կը մատնուին պատերազմի ընթացքին, մինչեւ որ, ազատած ծերունի հօր խրատը մտիկ ընելով զաւակը կը փրկէ բոլոր բանակը սովէ, եւ վերջապէս յաղթանակի կ'առաջնորդէ հայրենիքը:

Այսպէսով պատմուածք առ պատմուածք մենք կը հասնինք գիրքին վերջաւորութեան, բարոյապէս զօրացած եւ զինուած ազգային սովորութիւններով մեր կեանքը սփիւռքի մէջ հայօրէն ապրելու:

Յարութ Գասապեան
ԺԲ. Կարգ

Ես շնորհակալութեամբ, սիրով եւ հաճոյքով կարգացի, հեղինակին կողմէ մեզի նուիրուած «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքը. հեղինակը՝ նախկին Հալէպահայ եւ այժմ Թորոնթոհայ Գրիգոր Հոթոյեան, որ արմատներով Մասունցի է եւ եղած է կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչ՝ իր կեանքն ու հաւատքը կը ցոլացնէ այս գիրքին մէջէն:

Կրնանք ըսել որ այս գիրքը Գրիգոր Հոթոյեանին կեանքին հայելին է, որովհետեւ յաճախ սասունցիներուն հերոսութիւնները եւ հայոց պատմութիւն կը խառնէ իր պատմուածքներուն մէջ, ան նաեւ իր դասաւանդած քրիստոնէական կրօնքին սկզբունքներուն պատգամները կը թելադրէ մեզի իր

պատմուածքներուն մէջէն, օրինակ՝ Աստուծոյ գծած ուղիով մեծնալ, ըլլալ ճշմարտախօս, յարգանք ունենալ ծնողներուն եւ մեծերուն հանդէպ, ըլլալ հայրենասէր ու ազգասէր... Իր տիպարները երբեմն ժխտական մարդիկ են, բայց անոնց մասին գրելով Հոթոյեան մեզի կը սորվեցնէ ծայրայեղութեան գէշ հետեւանքները եւ կը թելադրէ հեռու մնալ անոնցմէ...:

Մաքուր եւ սահուն արեւմտահայերէնով գրուած այս գիրքը ես շատ հետաքրքրական գտայ եւ սիրեցի, իսկապէս բարոյագիտութեան աղբիւր մըն է ան, մանաւանդ նիւթապաշտ եւ բարոյականութեամբ ապականած այս աշխարհի մէջ:

**Գարոլին Չաքուճեան
ԺԲ. Կարգ**

«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքը, գրուած Գրիգոր Հոթոյեանի կողմէ, կը բաղկանայ 139 էջերէ եւ 24 փոքր, իւրաքանչիւր քանի մը էջերով խտացուած պատահարներէ, որոնք առնուած են համեստ մարդոց կեանքերէն: Այս պատմուածքները գրուած են պարզ լեզուով եւ հասկնալի են թէ՛ պատանիին, թէ՛ երիտասարդին, թէ՛ տարեցներուն եւ թէ՛ քիչ ուսում ունեցողներուն կողմէ:

Այս 24 պատմուածքներուն մէջ կան կրօնական դաստիարակիչ պատմութիւններ: Կան ազգային հերոսական պատմութիւններ, սասունցիներուն մասին, որոնք կը ներշնչեն պարկեշտութիւն եւ պարտաւորութիւն հայրենիքին հանդէպ:

Կան պատմուածքներ, յոռի մոլութիւններուն հետեւող անպատկառ մարդոց մասին, որոնք իրենց կեանքի ընթացքին եղած են, իրենց ծնողներուն եւ պարագաներու հանդէպ անկատար, գող, աւագակ, եւ որոնց վերջաւորութիւնը յանգած է բանտարկութեան: Այս գրութիւններով հեղինակը կը փորձէ պարկեշտութիւն ներշնչել ծնողաց հանդէպ, յարգանք՝ ազգին եւ պատուաբեր կեանք ապրիլ:

Հեղինակը խիստ յուզումնալի եւ ցաւալի զգացումներով տարուած, թուրքիոյ զազանային արարքներէն հայոց հանդէպ, գաղթականութեան ոճիրները նկարագրելով, կու տայ պատմութիւնը բարի արաբներուն գութին պտուղը եղած, փրկուած որբերն՝ որոնք իրենց հարազատ զաւակներու համահաւասար դասելով մեծցուցած ապա վերադարձուցած են զիրենք իրենց հայրենակիցներուն, ինչպէս կը պատմէ Ահմէտ Սուլթան անոնցմէ մէկը, որուն բուն անունը Յակոբ է:

**Ծովակ Առաքելեան
ԺԲ. Կարգ**

...Գրիգոր Հոթոյեանին գիրքը, «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան», շատ հետաքրքրական եւ բարոյական դասեր սորվեցնող պատմութիւններու հաւաքածոյ մըն է: Ես շատ սիրեցի եւ տպաւորուեցայ գիրքին 24 պատ-

մուսափոխներէն ալ, որոնց բարոյական դասերը կրօնասիրական, ընտանեասիրական, հայրենասիրական եւ ընկերաբարոյասիրական նիւթերու շուրջ էին... Ես ամենէն շատ սիրեցի առաջին պատմութիւնը՝ «Աղօթքին ուժը», ուր Սասունցի հերոսը իր հաւատքի ուժով կ'ազատի ջարդարար թուրքերէն եւ Հալէպի մէջ կը վերամիանայ իր ազգին...

**Թամար Նաճարեան
ԺԱ. Կարգ**

...Ես Գրիգոր Հոթոյեանին «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքը կարդացի եւ շատ սիրեցի, որովհետեւ իր գրած պատմութիւնները անմահական նիւթերու մասին են: Իր գրածները թէ՛ մեծերուն եւ թէ՛ պզտիկներուն համար են եւ բոլորն ալ բարոյական դասեր կը սորվեցնեն... Իմ ամէնէն շատ սիրած գրութիւնը «Բարիք ցանոզը՝ բարիք կը հնձէ» վերնագրով պատմութիւնն է. այս վերնագիրը շատ իմաստալից խօսք մըն է, իսկ պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, թէ բարիք ընելը սրտէն բխած գործ մը պէտք է ըլլայ եւ ոչ թէ կեղծ... որովհետեւ մարդիկ կան հիմա «բարիք» կ'ընեն՝ բարիք ստանալու համար միայն...

**Մարիա Փիլաճեան
Թ. Կարգ**

ԽՕՍՈՒԱԾ՝
«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»
ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍԻՆ

Նախ եւ առաջ իմ սրտագին շնորհակալութիւնը կը յայտնեմ այս երեկոյեան կազմակերպիչ յանձնախումբին, որ յատուկ հրաւերով մը փափաքեցաւ զիս եւս մասնակից դարձնելու այս ձեռնարկին ու բերելու եւ բաժնելու իմ սրտի ողջոյնը այս առթիւ:

Յարգելի ու սիրելի ներկաներ, այս երեկոյեան արդար, անժամանցելի տրիտուրը կը տրուի հայ գիրի, հայ գրականութեան եւ հայ մշակոյթի հաւատաւոր մշակին, որ աւելի քան կէս դար անշեղ՝ իր հաւատարիմ, անխոնջ եւ անսակարկ սպասարկութիւնը ընծայեց Սփիւռքեան հայ գրականութեան խորանին իր մտքի սլացքներով, իր հոգու տեսիլքներով իր սրտի տրոփումներով եւ իր գրչի երփներանգներով:

Ինչպէս կարելի է այս գինեծօնի սահմանափակ ժամի մը մէջ վրձինել եւ քանդակել հարազատօրէն եւ ճշգրտօրէն յոբելեարին հարազատ դիմանկարը, դիմաքանդակը անոր լման արգասիքը, որպէս բանաստեղծ, հրապարագիր, արձակագիր ու անոր գրական գործունէութեան արդար արժանիքը ըմբռնել արժեւորել եւ մանաւանդ գնահատել:

Սակայն եւ այնպէս, խոր եւ հաստատ համոզումը մեզ կը բերկրացնէ, թէ Գրիգոր Հոթոյեան արդէն վաղուց մուտք գործած է Սփիւռքեան մերօրեայ հայ մշակոյթի գրականութեան կաճառին մէջ՝ գրական ուղիով եւ այնտեղ արդարօրէն կը գրաւէ պատուաւոր, պատուաբեր եւ աչքառու ամպիրոն մը:

Սիրելի Յոբելեար, իմ խօսքը անգոր է թարգմանը հանդիսանալու իմ եւ այս ձեզ չըջապատող ազնուատգի ներկաներուն հարազատ զգացումներուն, սակայն թող թոյլ տրուի, որ որպէս գնահատանք ձեզի եւ վարձատրութիւն Ամենակալէն՝ հայ մշակոյթի ձեր տարած առաքելութեան, սա մաղթանքը ձեզ կատարեմ ձեր կեանքի նշանակալից այս յոբելեանին, որ կը զուգադիպի նաեւ մեր Ապրիլեան ցեղասպանութեան 90-ամեակին:

1991ին՝ ինչպէս որ Աստուծոյ արժանացանք ողջունելու ազատ, անկախ Հայրենիք Հայաստանի երազը՝ թող Աստուած ձեզի սիրելի Գրիգոր, մեզի ու համայն մեր ազգին շնորհէ ողջունելու, լսելու եւ իմանալու Ապրիլեան նահատակաց ցեղասպանութեան պաշտօնական ճանաչումը՝ ոչ միայն Թուրքիայէն, այլ համայն Միացեալ Ազգերու անդամ երկիրներու պետութիւններէն:

Վարձքը կատար, գրիչդ դալար, արժանաւոր յոբելեար՝ Գրիգոր Հոթոյեան:

Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրեշեան
Հոգևոր Հովիւ
Թորոնթոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ
5 Մայիս 2005
Թորոնթօ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾ, ԱՐՁԱԿԱԳԻՐ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ

Բանաստեղծ, արձակագիր եւ հրապարագիր Գրիգոր Հոթոյեանի եր-
րորդ գրքին՝ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորի շնորհահանդէ-
սին եւ հեղինակին գրական գործունէութեան 60-ամեակին նուիրուած այս
հանդիսութեան, ինծի վստահուեցաւ կենսագրական տեղեկութիւններ փոխան-
ցելու քաղցր պարտականութիւնը:

Գրիգոր Հոթոյեան ծնած է Հալէպ, 5 Օգոստոս 1927ին՝ սասունցի ծնող-
ներէ: Աշակերտած է Հալէպի Ազգային Սահակեան Երկսեռ վարժարանը եւ ա-
ւարտած 1941ին:

1943ին զինուորագրուած է Փրանսական բանակին եւ երեք տարիներ
ծառայել է ետք, ենթասպայ աստիճանով հրաժարած է բանակէն: Հօրը մղու-
մով սորված է գրաշարութիւն՝ Հալէպի Ուսուցչական Միութեան «Սեւան»
տպարանին մէջ, որուն պատասխանատու տնօրէնն էր գրագէտ՝ ուսուցիչ պրն.
Սիմոն Սիմոնեանը:

1947ին, որպէս գրաշար, սրբագրիչ, թղթակից եւ աշխատակից մաս
կազմած է «Արեւելք» օրաթերթին անձնակազմին:

1950-51 տարեշրջանին, տնօրէնութեան պաշտօն վարած է Սուրիոյ
Ռազգա քաղաքի Ազգային վարժարանին մէջ, ուր հիմնած է նաեւ կիրակնօր-
եայ դպրոցը, միեւնոյն ժամանակ վարելով անոր տեսուչի պաշտօնը:

1951ին, ան կրկին պաշտօնի հրաւիրուած է «Արեւելք» օրաթերթին
կողմէ ստանձնելու կարգ մը պատասխանատու գործեր:

Մինչեւ իր հասուն տարիքը, Գրիգոր Հոթոյեան, որպէս դպիր ծառա-
յած է Հալէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, դպրապետ ունենալով
պրն. Արմէն Պետրոսեանը եւ պրն. Վարդան Սէրայտարեանը, որոնք իրենց ու-
սումը ստացած էին Մեծի Տանն Կիլիկիոյ Դպրեվանքին մէջ:

Ամէնօրեայ իր դպրոցական ուսման կողքին, Գրիգոր Հոթոյեան, ման-
կութենէն աշակերտած է Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ կիրակնօր-
եայ դպրոցներուն մէջ: Ապա, 1946էն մինչեւ 1975, շուրջ 30 տարի ծառայած է
որպէս ուսուցիչ, աւագ ուսուցիչ, ներքին տեսուչ եւ ընդհանուր տեսուչ՝ Մեծի
Տանն Կիլիկիոյ Կիրակնօրեայ դպրոցներուն մէջ, ազգային եւ կրօնական ու-
սում ջամբելով հազարաւոր ուսումնաստենչ հայ աշակերտներուն, արժանանա-
լով Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.
Վեհափառ Հայրապետի օրհնութեան եւ գնահատանքի գիրին:

Գրիգոր Հոթոյեան, Հալէպի Կիրակնօրեայ Դպրոցներու կեդրոնի բաժ-
նի տեսչութեան առընթեր՝ մաս կազմած է Հալէպի Թեմի Ազգային Առաջնոր-
դարանի Կրօնաբարոյական Դաստիարակութեան Խորհուրդին եւ Կիւլպէնկե-
ան նախկին վարանի հոգաբարձութեան կազմին:

Մանկութենէն անդամակցած է Հալէպի Հ.Մ.Լ.Մ.ի գայլիկներու փա-
ղանգին, մինչեւ երէց սկառուտութիւն, խմբապետական պաշտօն վարած է
Սուրիոյ Օգնութեան Խաչի երիտասարդներու խումբին: Իսկ 1946էն սկսեալ

վարած է Հայլէպի Համազգային Հայ Մշակութային Միութեան գրական յանձնախումբի ատենապետութիւնը, ապա, վարչութեան ատենադպիրի պաշտօնը, մինչեւ 1975 Գանատա հաստատուելը:

Գրիգոր Հոթոյեան, իր հայերէն լեզուի հմտութիւնն ու գիտութիւնը ձեռք բերած է ինքնաշխատութեամբ, գրաշարական աշխատանքով եւ հայագիտական դասընթացքներու հետեւելով: Ան, որպէս թղթակից եւ աշխատակից աշխատակցած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կիրակնօրեայ դպրոցներու «Մեր Կեանքը» ամսագրին, մաս կազմած է նաեւ «Կանթեղ» ամսագրի խմբագրութեան եւ աշխատակցած անոր իր հայրենաշունչ բանաստեղծութիւններով:

Գրիգոր Հոթոյեան առաջին բանաստեղծութիւնները հրատարակուած են 1947էն սկսեալ Հայլէպի «Արեւելք», «Կանթեղ», «Ակօս», «Մեր Կեանքը» ամսագրերուն եւ «Սփիւռք» շաբաթաթերթերուն մէջ: Իսկ թղթակցութիւններ, յօդուածներ, պատմուածքներ եւ բանաստեղծութիւններ լոյս տեսած են «Արեւելք», «Ազդակ», «Հայրենիք», «Ազատ Օր» եւ «Մարմարա» օրաթերթերուն, ինչպէս նաեւ «Սփիւռք», «Ասպարէզ», «Հայրենիք», «Հորիզոն», «Նոր Կեանք», «Հայ Կեանք», «Գանձասար», «Հայ Միտք», «Նոր Դար», «Նաւասարդ», «Դիտակ», «Մարզիկ», «Շողակաթ» շաբաթաթերթերուն եւ ամսագրերուն նաեւ Հայաստանի Գրական հանդէսներուն եւ Ազգային Առաջնորդարանի «Լոյս» Երկամսեային մէջ, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Սփիւռքի մամուլին մէջ:

Ան, ձայներիցի միջոցաւ երկար տարիներ իր հարցազրոյցներով եւ մշակութային ելոյթներով աշխատակցած է նաեւ Ուրուկուէյի «Կոմիտաս» ռատիոկայանին:

1975ին, Թորոնթօ հաստատուելով, «Ս. Թէհլիրեան» կոմիտէի կողմէ կը նշանակուի նախ «Հայրենիք» եւ ապա «Հորիզոն» շաբաթաթերթի որպէս պաշտօնական թղթակից, զոր կը վարէ զայն առաջին օրէն մինչեւ այսօր: Երկար տարիներ կը դառնայ պաշտօնական ներկայացուցիչը գրական «Բագին» ամսագրին, «Ազդակ Շաբաթօրեակ» Դրօշակ»ին, Հայաստանի «Ազատամարտ» եւ «Երկիր» շաբաթաթերթերուն:

Թորոնթոյի մէջ ան վարած է Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Ատենապետի պաշտօնը երեք շրջան, նաեւ մաս կազմած է Գանատայի Համազգային Շրջանային Վարչութեան երեք շրջաններ: Վեց տարիներ մաս կազմած է Ս. Աստուածածին Հայոց Առաքելական Եկեղեցւոյ հոգաբարձութեան, արժանանալով Գանատայի եւ Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի ստորագրութեամբ Առաջնորդարանի Գնահատագիր-օրհնագրին:

Գրիգոր Հոթոյեան 1977էն մինչեւ 1987, տասը տարիներ խմբագրած եւ հրատարակած է Հայ Կեդրոնի «Լրատու» ամսագիրը եւ եօթը տարիներէ աւելի խմբագրած եւ ձայնասփռած է «Հայ Կեդրոնի Ձայն»ի հեռաձայնային լուրերը: 1984 տարեշրջանին, ան ստանձնած է Հ.Օ.Մ.ի Ամառնային Վարժարանի տնօրէնութեան պաշտօնը:

Գրիգոր Հոթոյեանի երիտասարդական տարիներուն գրած բանաստեղծութիւնները, ամփոփուած են 1987ին՝ Թորոնթոյի մէջ հրատարակուած «Սիրտը Ափին Մէջ» բանաստեղծութիւններու հատորին մէջ, արժանանալով գրականագէտներու գնահատանքին:

2002 թվականի Յունիսին, Հայաստանի Գրողներու Միութեան վարչութեան հրաւերով մասնակցած է Գրողներու Միութեան Համահայկական Առաջին Խորհրդաժողովին, եւ ողջոյնի խօսք արտասանած՝ Գանատայի գրողներու անունով:

Նոյն թվականի Յունիսին, Հայաստանի «Ուխտատուն» հիմնարկութեան հրատարակութեամբ եւ բանաստեղծ, պատմաբան, հրապարակագիր եւ Համաշխարհային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան փոխ նախագահ Սասուն Գրիգորեանի խմբագրութեամբ լոյս տեսած է Գրիգոր Հոթոյեանի երկրորդ գիրքը՝ «Նուիրում»՝ երգերու եւ բանաստեղծութիւններու հատորը, որ գնահատուեցաւ գրականասէրներու կողմէ եւ Հայաստանի ու սփիւռքի գրողներ գնահատական գրախօսականներով շեփորեցին Թորոնթոնայ գրագէտին «Նուիրում»ը:

Գրիգոր Հոթոյեան բազմաթիւ գնահատագրեր ստացած է Սուրիոյ, Ֆրանսայի, եւ Օնթարիոյի կառավարութիւններէն, ինչպէս նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն եւ Գանատայի Ազգային Առաջնորդարանէն: 1999ին, ՄԱԿի կողմէ յայտարարուած «Տարեցներու Օրուան» գնահատագրով եւ շքանշանով պարգեւատրուած է Օնթարիո նահանգի կառավարութեան կողմէ:

Գրիգոր Հոթոյեան թէեւ պաշտօնապէս հանգստեան կոչուած է, սակայն տակաւին կը շարունակէ իր գրական մասնակցութիւնը բերել ազգային, եկեղեցական եւ հասարակական կեանքին մէջ:

28 Յունիսէն 5 Յուլիս 2004, Երեւանի մէջ գումարուած Հայ Գրողներու Համահայկական ժողովին, նախաձեռնութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան վարչութեան, Ռազմածովագիրներու Միջազգային Ընկերակցութեան հայկական վարչութեան, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան հիմնարկութեան կողմէ տեղի ունեցաւ Գրիգոր Հոթոյեանի գրական ստեղծագործական եւ հրատարակական գործունէութեան 60-ամեայ՝ յոբելեանը Հայաստանի Գրողներու Միութեան սրահին մէջ, ուր ան արժանացաւ Ռազմածովագիրներու Միջազգային Ընկերակցութեան անդամութեան պատուին եւ Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան հիմնարկութեան «Շնորհագիր»ին:

Սիրելի գրասէրներ,

Այսօր հոս հաւաքուած ենք շնորհահանդէսով եւ գինեձօնով հանրութեան ներկայացնելու վաստակաւոր մեր հայ գրողին երրորդ գրքին՝ «Ի Խընդիր Բարոյական Ճշմարտութեան» պատմուածքներու հատորը, որ նուիրուած է Հայոց Մեծ Եղեռնի 90-ամեակին եւ հրատարակուած Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան յանձնախումբին կողմէ:

Արդար հպարտութեամբ կը տօնենք նաեւ Գրիգոր Հոթոյեանի գրական, ստեղծագործական եւ հասարակական գործունէութեան 60-ամեայ յոբելեանը այն հաստատ համոզումով, որ ան իր 60-ամեայ գրական եւ հրապարակագրական գործունէութեամբ իրեն բաժին ինկած լուծման դրած է Հայ Գրականութեան եւ հայ մամուլի գանձանակին մէջ:

Այստեղ հպարտութեամբ կարելի է անդրադառնալ նաեւ, որ Գրիգոր Հոթոյեանը եղաւ Թորոնթոնայ գաղութի կազմակերպութիւններուն, հաստա-

տուժիչներուն եւ միուժիչներուն գործունէութեանց զնգացող ձայնը, մաքուր եւ ցայտուն հայելին՝ Հայ մամուլին մէջ իր ստորագրած թղթակցութիւններու շնորհիւ էր, որ սփիւռքի եւ հայրենիքի մեր եղբայր-քոյրերը ծանօթացան Թորոնթոնի գաղութի աստիճանաւոր վերելքին անոր ազգօգուտ աշխատանքներուն եւ հայրենիքով բաբախող գաղութային գործունէութեանց:

Ի խորին սրտի կ'արժէ շնորհակալութիւն յայտնել նախ Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Հայր Մեղրիկ Ծ. Վարդապետ Բարիքեանին եւ Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբին, որոնք յաջողութեամբ համագրեցին եւ հրատարակեցին «Շողակաթ»ի մէջ լոյս տեսած Գրիգոր Հոթոյեանի պատմութեանը «Ի Խնդիր Բարոյական Ծշմարտութեան» հատորի մէջ: Ձեր վարձքը կատար սիրելիներ: Իսկ մեր նըւիրեալ յորելեարին կը շնորհաւորենք եւ կը մաղթենք երկար եւ առողջ կեանք մը՝ որպէսզի հայոց գրական անդամստանին մէջ երիտասարդի հոգիով շարունակէ իր ստեղծագործական կեանքը:

Կարդացուած՝
«Ի Խնդիր Բարոյական Ծշմարտութեան»
հատորի շնորհահանդես-գինեծօնին
Պրն. Յակոբ Ճանպազեանին կողմէ
5 Մայիս 2005
Թորոնթօ

Սիրելի պրն. Գր. Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացայ քրիստոնէական դաստիարակութեան յանձնախումբին հրատարակութեամբ լոյս տեսած ձեր սիրելութեան «Ի Խընդիր Բարոյեական Ճշմարտութեան» աշխատութիւնը, ձօնուած՝ Հայոց Յեղասպանութեան 90-ամեայ նահատակներուն:

Հետաքրքրական պատումներով դուրեկան գրքոյկի մը վերածուած է պատեհ առիթներով գրուած ձեր յօդուածները:

Ձեր գրութիւնը կը սիրեմ կարգալ որովհետեւ անոնք հրամցուած են սահուն հայերէնով, պարզ ոճով, իմաստալից բովանդակութեամբ ու դաստիարակիչ մտադրութեամբ:

Կը շնորհակորեմ ձեր բեղուն եւ հայօգուտ գրիչը՝ ձեզի ու ձեր ընտանեկան պարագաներուն մաղթելով երկար եւ արեւշատ օրեր:

Մնաք յարգանքով ու լաւագոյն նկատարումով՝

**Բաբգէն Թօփճեան
Գրագետ, խմբագիր
«ԼՈՅՍ» երկամսեային
8 Մայիս 2005**

*Իմ քաղցր գրչեղբայր, հարազատ,
Սիրելի իմ Գրիգոր,*

Որքան ժամանակը եւ տարածութիւնը հեռանում են, այնքան դու վեհանում ես աչքիս, ես այսօր քեզի հոգու աչքերով դիտեցի, երբ կարդացի քո «Ի Խընդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքը: Ի մարդ Աստուծոյ, թաքնուած տաղանդաւոր արձակագիր, հոգեբան, նրբազգաց մանկավարժ-դաստիարակ եւ լռակեաց վրիժառու սասունցի տեսայ ես ձեր այս աշխատութեան մէջ: Էլ չեմ ասում, թէ ինչ քաղցր յուշագրութիւն եւ ազնուացնող հոգեկերպարներ տեսայ: Չեմ ուզում առանձին-առանձին հոգեկերտուած քներիդ ծալքերը նամակով բանալ, քանզի այն էլ աւել ազնիւ մեկնութեան է արժանի:

Ընդունէք անկեղծ Սիրով, կարոտով լեցուն, Հավետ քո

**Սասուն Գրիգորեան
Բանաստեղծ, Պատմագետ, Հրապարագիր
18 Մայիսի 2005
Երեւան**

Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Գրիգոր Հոթոյեան, ազդուած իր շրջանակէն եւ իր անձնական փորձառութիւններէն, գրած է «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» պատմուածքներու շարքը, ուր ներկայացուցած է ճիշդ ապրելու միջոցները: Ան այս պատմուածքներուն ընդմէջէն պատասխանած է գանազան հարցումներու, որոնք կը ծագին իւրաքանչիւր անհատի մտքին մէջ: Եւ աւելին, անոնք հայու մտածումները կը խճողեն ըլլան անոնք բարոյական, ընկերային կամ ազգային: Գրիգոր Հոթոյեան կարծես այդ պարզ, բայց արժէքաւոր բառերուն տակ պահած է խաղաղութեան ու բարութեան բանալին, որ պիտի փրկէ մարդիկը սխալ ճամբաներէ: Գիրքին մէջ կան նախադասութիւններ, որոնք կարծես դարձած են մէկ մէկ թնդանօթներ եւ «ուբակոծած» են այն հսկայ պարիսպները, որոնք պաշարելով մարդասիրութեան անդաստանը կ'ուզեն խեղդել աստուածային սուրբ կանչը:

Պատմուածքներու այս շարքը կը թափանցէ մարդոց ամէնօրեայ գաղտնիքներուն, ընտանեկան ու ընկերային յարաբերութիւններու եւ ազգային ու հայրենասիրական մտահոգութիւններու մէջ: Հեղինակը ներկայացուցած է այս բոլոր հարցերուն պատճառներն ու լուծումները դէպի լաւին ձգտելու միտումով: Կարգ մը վերնագիրներու տակ ընթերցողը կ'ընայ զգալ Յիսուսի շունչը, կարծես ան հրաշքով մը շարժած է գրագէտին ձեռքը եւ կրկին անգամ ըլլալով փոխանցած է իր պատգամները, ինչպէս Պօղոսին փրկութիւնը «Աղօթքին գօրութիւնը» պատմուածքին մէջ, երբ թուրք գինուորներ իջան այն ձորը, ուր 500է աւելի սասունցի երիտասարդներ արիւնլուայ մեռած էին, թուրքերը տակն ու վրայ ընելով այդ դիակները՝ չկրցան գտնել Պօղոսը, որ արտասանելով «Հաւատով խոստովանիմ»ի 24 համարները՝ ազատած էր այդ հրէշներուն ձեռքէն: «Բարիք գործել ամէն օր» պատմուածքին մէջ կը տեսնենք փոքրիկ մանչ մը Սեդրակը, որ հրաշքով մը կ'ընայ ազատել իր երկու ընկերները՝ Քուէյք գետի յորդառատ ջուրերուն մէջ խեղդուելէն՝ օր մը առաջ ծիծեռնակներու բոյն մը փրկելուն, այսինքն բարիք մը գործելուն պատճառով:

Շարք մը պատմուածքներ կը զօրացնեն ընթերցողին հաւատքը՝ շեշտելով Յիսուս Քրիստոսի պատգամները, ներշնչելով բարիք գործելու շնորհքը եւ իւրացնելով իրաւ քրիստոնեայ ըլլալու տիպարը:

Ուրիշ փունջ մը պատմուածքներու մէջ կ'արտացոլան ընտանեկան ու ընկերային հարցերուն լաւ ու վատ դիմագիծները՝ վատը միշտ յաղթուած անհետանալով: Գրիգոր Հոթոյեան խօսած է հայ ընտանիքի արժէքին մասին՝ փառաբանելով հայ հայրերը, ներկայացնելով գանոնք իբրեւ հայ ընտանիքի առաջնորդներ: Ապա, բացատրած է յարգանքի անհրաժեշտութիւնը տարեց հայրերուն նկատմամբ եւ խրատած է օգտուիլ անոնց իմաստութեանէն: Յետոյ ան ներկայացուցած է ընկերութեան մէջ լաւ անհատ մը ըլլալու միջոցները, ինչպէս՝ «Բարեգործութիւն եւ ընկերային սէր» պատմուածքին մէջ, ուր պրն. Հայկ օգնած է աղքատ սաներու շարունակելու համար իրենց ուսումը: Ուրեմն

ան շեշտած է այն հաստատումը, թէ մարդ պէտք է ապրի միայն իր անձնական շահերուն համար, այլ նաեւ ընկերութեան շահերը հետապնդելով:

Վերջապէս, Գրիգոր Հոթոյեան ձօնելով այս գիրքը Հայկական Յեղասպանութեան նահատակներուն, ցաւով պատմած է 1915 թուականին պատահած իրողութիւններուն մասին, եւ անոնց ընդմէջէն հաստատած է հայուն վեհանձնութիւնը, հայրենասիրութիւնը եւ ազգասիրութիւնը: Ան շարունակած է բացատրելով, թէ թուրքերը ուզեցին բնաջնջել հայ ժողովուրդը, սակայն չկրցան իրագործել իրենց դժոխային ծրագիրը՝ հայու ապրելու զօրաւոր կամքին շնորհիւ: Աւելին ան այս պատմուածքներուն ընդմէջէն կը թելադրէ հայ ժողովուրդին սիրել հայ ազգը, հայ եկեղեցին, հայ մշակոյթը եւ երբեք չմոռնալ մայրենի լեզուն, որովհետեւ այս ազգակներն են, որոնք պիտի պաշտպանեն հայ ժողովուրդը ձուլումէ: Ուստի հայ ժողովուրդը միայն պիտի գոյատեւէ, երբ կը սիրէ իր ազգն ու եկեղեցին, կը սորվի իր պատմութիւնն ու մշակոյթը եւ երբ չի մոռնար իր անցեալն ու մայրենի լեզուն :

Վարդինէ Էթոյեան (Վ. Է.)
«ԱՉԴԱԿ»
26 Սեպտեմբեր 2005

Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացայ ձեր հեղինակած «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գողտրիկ հատորը, զորս ստացայ եկեղեցւոյ գրասենեակէն: Հետաքրքրութեամբ եւ մեծ հաճոյքով ընթերցեցի ու պահ մը տարուեցայ անցեալի այդ գեղեցիկ օրերու անմոռանալի յիշատակներով, զորս դուք ձեր ճկուն գրիչով եւ դէմքերն ու դէպքերը իր իսկական հասկացողութեամբ դիտելու եւ նկարագրելու ճարտարութեամբ ներկայացուցած էք, որ արժանի է ամէն գնահատանքի եւ կ'արդարացնէ գիրքին անունն ու արժէքը: Ընթերցողը, երբ իր կեանքի անցեալի յիշատակները կը կարդայ իր իսկական դիմագրծով ու հասկացողութեամբ, անկասկած որ կը գնահատէ ձեր տարած աշխատանքը, անցեալի քաղցր յիշատակները վերյիշելու, արժեւորելու եւ թարմացնելու երախտապարտ աշխատանքին մէջ:

Ձեզի կ'ուղարկեմ մեր եկեղեցւոյ պաշտօնաթերթ «Լոյս» ամսագիրը, որուն էջերուն մէջ, արդէն իսկ հրատարակուած կը գտնէք «Բարեգործութիւն եւ Ընկերային Մէր» գրութիւնը եւ կը յուսամ, ապագային եւս այլ յօդուածներ տեղ գտնեն մեր եկեղեցւոյ թերթի էջերուն մէջ:

Մեզ համար մեծ ուրախութիւն է, որ Երեւանի մէջ, ձեր գրական գործունէութեան վաթսուներեակի յոբելեանը տեղի ունեցած է եւ ջերմապէս կը շնորհաւորենք ձեզ, մաղթելով որ բարձրեալն Աստուած ձեզի շնորհէ բեղուն, քաջառողջ եւ երկար տարիներ, ձեր գրիչը միշտ դալար մնայ եւ դուք յարատեւօրէն արժեւորէք մեր նախահայրերէն ժառանգուած մեծաքանջ հայերէն լեզուի դիւթիչ բառերը:

Իմ աղօթքն ու մաղթանքն է որ ձեր կեանքի ամբողջ ընթացքը, ըլլայ բերրի, քաջառողջ ու երջանկաբեր ժամանակաշրջան մը լի՝ Աստուծոյ օրհնութեամբ:

*Բարեկամական եւ հարազատի ջերմ սիրոյ ողջունիւ
Աղօթարար՝*

Նորայր Ա. Քն. Բաթանեան
26 Սեպտեմբեր 2005
Սիսնի, Աւստրալիա

Սիրելի Գրիգոր Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացած եմ «Ի խնդիր Բարոյական Ճշմարտութեան» հատորդ, որ բարոյալից պատմուածքներու հաւաքածոն որ նուիրուած է մեր պաշտելի նահատակներուն 90-րդ տարելիցին:

Որպէս հրապարակագիր, բանաստեղծ եւ թղթակից տասնեակներ շարունակ ծառայած ես մեր գրականութեան եւ մշակոյթին: Այս գիրքը եւս արագասիք է քու մտքի եւ սրտի երկունքին:

Շատեր գնահատած են կատարած ազնիւ գործդ եւ զոհաբերութեան ոգիդ: Ուրեմն ես եւս կը ձայնակցիմ անոնց գնահատելով քեզ իբրեւ հայ գիրի եւ մամուլի անխոնջ նուիրեալ, որ միակ նպատակակէտը եղած է եւ է ամբողջական սէր եւ ծառայութիւն մեր ժողովուրդին եւ իր մշակոյթին:

Վարձքդ կատար: Եղբայրական ջերմ բարեւներով:

**Վարդէս Սիւսեան
Գրող, հրապարկագիր
7 Դոկտեմբեր 2005**

*Մեծայարգ Տիար Գրիգոր Հոթոյեան
Թորոնթօ*

Սիրելի հայրենակից,

Վերջերս ձեզի հետ ծանօթանալէ ետք՝ հաճոյքով ստացայ ձեր բարոյալից պատմուածքներու գիրքը, որ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» նշանակալից խորագիրը կը կրէ:

Մեր ժողովուրդը ընդհանրապէս, ու մասնաւորապէս նոր սերունդը պէտք ունի բարձր պահելու հայ ազգին բարձր բարոյականը, ու զայն ուսուցանելու ամէնէն հաճելի ձեւը՝ պատմութիւնն է, որ սիրով կը կարգացուի, ամէն տարիքի անձերու կողմէ: Դուք իրազեկ էք այդ իրողութեան ու զայն գործարարած էք ինքնաբերաբար: Սրտանց կը շնորհաւորեմ ձեզ, ու կը մաղթեմ որ «Շողակաթ» մատենաշարը ճոխացնէք նորանոր հատորներով:

Արեւշատութիւն, քաջառողջութեան ու բեղուն գործունէութեան անկեղծ մաղթանքով, մնամ՝

Ձերդ անկեղծօրէն՝

**Արի Թօփուլիսեան
Խմբագիր «ԲԱՆԲԵՐ» ամսագրին
3 Նոյեմբեր 2005**

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ ԲԱՐՈՅԱԽՕՍ ՈՒՍՈՒՑԻՉԸ

«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»

Պատմուածքներու, գրոյցներու, բանաստեղծական ճշմարտութիւններու այս հաւաքածոն անհրաժեշտութիւն մըն է հայ գրականութեան համար, որովհետեւ անոնց մէջ կը խտանայ հայ ժողովուրդի կենցաղի, ամէնօրեայ կեանքի փիլիսոփայութիւնը, ապրուած անձի մը կողմէ, որ լաւապէս կը ճանչնայ մեր ազգը Հայկէպէն մինչեւ Քանատա եւ Հայաստան: Գրիգոր Հոթոյեան իր թեմաներուն երթահողը առած է Աստուածաշունչի ջինջ ու պարզունակ պատկերներէն եւ մեր կեանքի բարոյական ճշմարտութիւնը վերածած է մնայուն արժէքներու եւ չափանիշներու:

Մեր ուրախութիւնը կը կրկնապատուի, երբ կը տեսնենք որ մեր գրողները այս հոգեկան տուայտումները, դաստիարակչական բարոյախօսութեան կը վերածէ: Այդ ապրումները կը թանձրացնէ իր տարիներու փորձառութեամբ, տրպարներու խմբական կեցադներով եւ անհատական դրսեւորումներով: Եւ այդ բոլորին կը միանայ մարդ անհատին հանդէպ իր հաւատքը, որ կու գայ իր լաւատեսութենէն: Այս գործընթացին մէջ հիմնական ներկայութիւն է Հայ Եկեղեցին, որուն սկզբունքները բարոյական ճշմարտութիւններու կիզակէտներն են:

Կը յիշենք գեղեցիկ էջերը Գրիգոր Օտեանին, գրուած Աղօթքին մասին: Այս անգամ մեր սիրելի Գրիգոր Հոթոյեանը, անկեղծութեամբ հայուն կը բացատրէ զօրութիւնը աղօթքին:

Շատ բաներ կրցած են խլել՝ յափշտակել մեզմէ, բայց մնացած է մեր հոգիներու խորքը թաքնուած ապրելու, գոյատեւելու հաւատքը եւ կը զօրանայ իր պարզ, բայց բովանդակալից շեշտաւորումով:

«Ժամանակին թագաւորները ծպտուած հագուստներով կը շրջէին իրենց ժողովուրդին մէջ, հասկնալու համար անոնց կենցաղը»:

Այսօր, մեր սիրելի հեղինակը, առանց ծպտուելու կը պտըտի հայութեան այլազան շրջանակներու մէջ, որոնելու համար մարդկային կեանքին մարդոց կողմէ ըմբռնուած ճշմարտութեան գործնականացումը: Ուրեմն հայութեան ներքին, հոգեւոր կեանքի պեղումներ են ներկայացուած պատկերները, պեղումներ, որոնք այնքան անհրաժեշտ են յաւերժացնելու համար հաւատքի, ճշմարտութեամբ՝ հոգեկան կեանքին հանդէպ մեր հոգիներէն ներս շողացող լոյսը:

Մեր ապրած 21րդ դարը պէտք ունի նման դաստիարակչական շունչին: Մեր դպրոցները կրօնագիտութեան կողքին պարտին ներկայացնել նման բարոյախօսական գրոյցներ, որպէսի մեր գալիք սերունդները ճանչնան ժողովուրդը, անոր առաքինութիւններով ջրդեղուին, մտնեն հաւատքի բանակներու շարքերէն ներս եւ դառնան ազգային, կրօնական եւ ճշմարտութեան դատի անդաւաճան գիտնորներ:

Մենք միշտ հաւատացած ենք դաստիարակութեան եւ այդ հաւատքը վերապրեցանք այս հատորին ընթերցումով:

Շնորհակալ ենք մեզի ընծայած այս երջանկութեան համար: Ապրիս ուր գրական գործունէութեանդ 60-ամեակը կ'իմաստաւորես նման ստեղծագործ խոհունակութեամբ:

Սիրով՝

Արմէն Տոնյեան
Գրագետ, Դրատարակիչ, Խմբագիր
«ՆԱԻԱՍԱՐԴ» ամսագրին



Խումբ մը գրողներ
Ղարաբաղէն վերադարձի ճամբուն վրայ

Յունուար 10, 2003

Սիրելի ընկ. Հոթյեան

«Հորիզոն»ի խմբագրությունն ու անձնակազմը սրտանց կ'ողջունէ ձեր 75-ամեայ յոբելեանը եւ այդ առթիւ ձեզի կը մաղթէ առողջութիւն եւ աննկուն կամք:

Իբրեւ թերթիս երկարամեայ աշխատակից, ընկ. Հոթյեան ամբողջական նուիրումով եւ անշահախնդրօրէն ծառայած է Հ.Յ.Դաշնակցութեան մամլոյ մեծ ընդհանրութիւն, ուր իր գրած յօդուածներն ու թղթակցութիւնները լոյս տեսած են «Հորիզոն»ի, «Հայրենիք»ի, «Ասպարէզ»ի, «Ապար օր»ի եւ այլ թերթերու մէջ:

Հրապարակագրական իր աշխատանքներուն կողքին, ընկ. Հոթյեան իր ներդրումը բերաւ նաեւ գրական աշխարհին մէջ, եւ իր յաջորդական հրատարակութիւններով ծաղկեցուց հայ գրականութեան անդաստանը:

Սիրելի ընկ. Հոթյեան Ջերմօրէն կը շնորհաւորենք ձեր երկարամեայ վաստակը եւ ձեզի կը մաղթենք բարի տարեդարձ:

Սիրով եւ յաջողութեան լաւագոյն մաղթանքներով

ՎԱՀԱԳՆ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ



ՎԱՐԻՔ ԽՍԲԱԳԻՐ
«Հորիզոն»

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՅԵՐԵԿՈՅԹ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Կազմակերպութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան, ռազմա-ծովագիրներու միջազգային ընկերակցութեան հայկական վարչութեան եւ Մեծ Եղեռնի ու Հայոց ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկին, Չորեքշաբթի, 14 Յուլիս 2004, կ.ե. ժամը 3:00ին, Հայաստանի Գրողներու Միութեան կլոր սեղանի սրահին մէջ տեղի ունեցաւ գանաստահայ բանաստեղծ, արձակագիր եւ հրապարակագիր Գրիգոր Հոթոյեանի գրական-ստեղծագործական եւ հասարակական գործունէութեան 60-ամեակին նուիրուած մեծարանքի ցերեկոյթը, որուն ներկայ գտնուեցան Հայաստանէն եւ Սփիւռքէն գրողներ եւ գրասէր ազգայիններ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան, որ անդրադարձաւ Գրիգոր Հոթոյեանի գրական կեանքին՝ Սուրիոյ Հալէպ քաղաքէն մինչեւ Գանատա, 60 տարիներու վրայ ծաւալող բանաստեղծական, գրական եւ հրապարակագրական ստեղծագործութիւններուն:

Որպէս բանախօս, բանաստեղծ, պատմաբան, հրապարակագիր եւ ռազմածովայիններու միջազգային միութեան փոխ-նախագահ Սասուն Գրիգորեան խօսք առնելով, անդրադարձաւ Գրիգոր Հոթոյեանի կեանքին, տալով անոր կենսագրութեան ամփոփ գիծերը, ընդգծելով կարեւորութիւնը անոր մը շակած գրականութեան՝ հայ ազատագրականի պայքարին, Արցախի ինքնապաշտպանութեան մարտնչումներուն եւ հայ ազատամարտիկներուն նուիրուած բանաստեղծութիւններուն եւ գրութիւններուն ընդմէջէն, ինչպէս նաեւ Հայոց Մեծ Եղեռնի եւ Հայ Դատի յիշատակութեան, ինքնաճանաչման եւ արդարութեան յաղթանակի իրագործման պայքար շեփորող գրութիւններուն:

Խօսք առաւ, Թորոնթոյէն, Հ.Օ.Մ.ի Ամէնօրեայ Վարժարանի տնօրէն Մարգար Շարապխանեան, որ իր անձնական վկայութիւնները տուաւ Գրիգոր Հոթոյեանին հետ իր միութենական եւ գրական գործակցութեան մասին, մանաւանդ գնահատելով, որպէս «Հորիզոն»ի 25-ամեայ թղթակից-աշխատակից անոր կատարած անշահախնդիր աշխատանքները, եւ, որպէս խմբագիր՝ Հայ Կեդրոնի «Լրատու» ամսագրին, 10է աւելի տարիներ անհատոյց աշխատակցութեան:

Այնուհետեւ, հերթականօրէն խօսք առին բանաստեղծուհի Լիլիթ եւ Մետաքսէ, արձակագիր Հրաչեայ Մաթեւոսեան, գեներալ-մայոր բանաստեղծ Սամուէլ Սաֆարեան, պատմական գիտութիւններու դոկտոր արձակագիր Արմենակ Մանուկեան, Հայաստանի Խորհրդարանի անդամ բանաստեղծ Թաթուլ Մանասէրեան եւ Նիւ Եորքէն բանաստեղծ, թատերագիր դոկտ. Հրանդ Մարգարեան:

Խօսողները գնահատանքով արտայայտուեցան Գրիգոր Հոթոյեանի գրականութեան եւ ստեղծագործողութիւններուն, ընդգծելով յատկապէս անոր խոնարհ եւ ազնիւ նկարագիրը եւ անձնուէր ծառայութիւնը իր պատկանած կուսակցութեան՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Հայց. Առաքելական եկեղեցւոյ, որոնց ծառայած է իր մանկութենէն սկսեալ:

Հ.Հ. Ժողովրդական դերակատար Ժենիա Աւետիսեան եւ ասմունքող Գայիանէ Սամուէլեան արտասանեցին Գրիգոր Հոթոյեանի ազգային եւ սիրային բանաստեղծութիւններէն փունջ մը:

Յայտագրի աւարտին խօսք առաւ Գրիգոր Հոթոյեան եւ իր սրտաբուխ շնորհակալութիւնները յայտնեց ձեռնարկը կազմակերպող միութիւններուն եւ կազմակերպութիւններուն, խօսք առնողներուն եւ ասմունքողներուն:

Որպէս գնահատանք, Գրիգոր Հոթոյեանի ազգային, ազատագրական եւ ռազմական գրութիւններուն, Սասուն Գրիգորեան, ռազմածովագիրներուն միութեան անդամատետրը յանձնեց մեծարեալին:

Եւ որպէս գնահատանք Գրիգոր Հոթոյեանի Հայոց Մեծ Եղեռնի եւ Հայ Դատի նուիրած բանաստեղծութիւններուն եւ գրութիւններուն, դոկտ. Արմենակ Մանուկեան Հոթոյեանին յանձնեց Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» հիմնարկի թանգարանի Շնորհագիրը:

Չորեքշաբթի, 14 Յուլիսի գիշերը, Երեւանի հեռատեսիլի 3 հայկական կայանները անդրադարձան ցերեկոյթին:

**Ե.Թ.
Երեւան**

**«ՅՈՐԻՉՈՆ»
2 Օգոստոս 2004**



14 Յուլիս 2004ին, Հայաստանի Գրողներու Միութեան կլոր սեղանի սրահին մէջ տեղի ունեցող Գրիգոր Հոթոյեանի գրական-ստեղծագործական եւ հասարակական գործունեութեան 60-ամեակը: Չեռնարկի վերջաւորութեան Գրիգոր Հոթոյեան խօսք առաւ շնորհակալական խօսք արտասանելու կազմակերպողներուն

**ԲԱՆԱՍՏԵՂԾ, ԱՐՁԱԿԱԳԻՐ, ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ
ԱՐԺԱՆԱՑԱԻ «Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՇՔԱՆՇԱՆԻՆ**

*Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.ի Հինգշաբթի 22 Սեպտեմբերէն մինչեւ Զորեքշաբթի, 5 Հոկտեմբեր 2005 թը-
լականի Գանատայի իր հօտին տուած հովուապետական օրհնաբաշխ այցելու-
թեան ընթացքին, 1 Հոկտեմբեր 2005, Շաբաթ երեկոյեան, Վեհափառ Հայրա-
պետին ի պատիւ կազմակերպուած պաշտօնական ճաշկերոյթին, Վեհափառը,
բանաստեղծ, արձակագիր, հրապարակագիր Գրիգոր Հոթոյեանը պատուեց
«Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, հայ ազգին, հայ եկեղեցիին, հայ դպրոցին,
հայ մշակոյթին, հայ գրականութեան իր 60-ամեայ ծառայութեան որպէս
օրհնութիւն եւ գնահատանք:*



**«Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանի ընկալումէն ետք,
Գրիգոր Հոթոյեան տիկին Շաքէ Հոթոյեանին հետ**

**ԸՆԿ. ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ
«ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐՈՒԱՆ»
ՄՐՅԱՆԱԿԻՆ ԱՐԺԱՆԱՑԱԻ**

1999 թվականը Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կողմէ «Տարեցներու Միջազգային Տարի» հռչակուած ըլլալով, Օնթարիոյի կառավարութիւնը որոշում առած էր յատուկ գնահատագիր-մրցանակներով պատուել Օնթարիո նահապի 130 ընտրաշրջաններէն 130 տարեցներ, որոնք հանգստեան կոչուած թուականէն ետք, կամաւոր գործունէութեամբ օգտակար հանդիսացած են իրենց շրջանի համայնքային կեանքին՝ այլազան ասպարէզներու մէջ:


Օնթարիո նահանգի խորհրդարանի 130 անդամներու կողմէ ներկայացուած 130 գործունեայ տարեցներու մրցանակաբաշխութիւնը տեղի ունեցաւ Օնթարիո նահանգի 5 կեդրոններու մէջ՝ յատուկ յայտագրով եւ հանդիսութեամբ:

Թորոնթոյի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 14 Ապրիլ 1999, կ.ա. ժամը 10:00ին, Թորոնթոյի համալսարանի «Hart House» պատմական սրահին մէջ, որուն ներկայ գտնուեցան Օնթարիոյի կառավարիչ տիկին Հիլարի Մ. Ուեսթըն, տարեցներու հոգածութեան նախարար Գամ Ժագսըն, 48 մրցանակիրներ, իրենց շրջանի երեսփոխաններու ընկերակցութեամբ, պետական անձնաւորութիւններ եւ շուրջ 200 հանդիսականներ:

Հիլարի Ուեսթընի, վարչապետ Հարիսի եւ Գամ Ժագսընի ստորագրութիւնը կրող գեղատիպ մրցանակ գնահատագիրները հերթականօրէն տրուեցան 48 մրցանակակիրներու, Հիլարի Ուեսթընի եւ Գամ Ժագսընի ձեռամբ:

Օնթարիոյի 130 մրցանակի արժանացած տարեցներու միակ հայը՝ «Հորիզոն»ի թղթակից ներկայացուցիչ ընկեր Գրիգոր Հոթոյեանն էր, որուն թեկնածութիւնը ներկայացուցած էր Նորթ Եորքի Օրիոլ շրջանի երեսփոխան պրն. Տէյվիտ Գափլան:

«ՅՈՐԻՉՈՆ»
1999





№ 10-01

«10» հունվարի 2003 թ.

Միության նախագահ
Председатель Правления
Chairman of the Board

Մեծարգո Գրիգոր Հորոյան,

Միրելի գրչեղբայր,

Մայր Հայրենիքում և ողջ Սփյուռքում ստեղծագործող հայ գրողների և Հայրենիքի զինուժտյալների անունից շնորհավորում ենք Ձեզ ծննդյան 75-ամյակի առթիվ, ցանկանում գրական, հրապարակախոսական և ստեղծագործական էլ ավելի հաջողություններ, քաջ առողջություն և արևշատություն ի փառս մեր գրական ընտանիքի հզորացմանն ու մատաղ սերնդի հայեցի դաստիարակման:

Մեր խորհին շնորհակալություններն ենք հայտնում Կանադայում Ձեր ծննդյան 75-ամյակը կազմակերպող ձեռներեցներին, հովանավոր-մեկենասներին և միշտ Ձեզ հետ Հայրենիք - Սփյուռք կապը ամրապնդողներին:

2003 թվականը, տա Աստված, լինի Ձեր բոլոր իղծերի և գրող – տարնցու սուրբ ցանկությունների իրականացման տարի:

Հարգանք, սիրով և համբույրներով:

Միշտ Ձերդ բարեկամներ՝

Լևոն Անանյան
ՀԳՄ նախագահ



Սասուն Գրիգորյան
Ռազմական գրողների միջազգային
ընկերակցության փոխնախագահ
«ՌԻՆՏԱՏՈՒՆ»
թանգարան – ինստիտուտի տնօրեն



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Յօդուածներ

- Մշակոյթը Մեզի Պահապան	15
- Փառահեղ Թուական Մը	17
- Մայիս 28	19
- Թարգմանչաց Տօնին Առթիւ	21
- Համայնավարութեան Իրական Դիրքը Կրօնքի Հանդէպ (Կաթողիկոսական Ընտրութեան Առիթով)	24
- Կազմակերպենք Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները	31
- Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Կարելորութիւնը եւ Օգտակարութիւնը	34
- Հայ Դպրոցը՝ Լոյսի Աղբիւր Մետրոպէան	38
- Կոչ՝ Հայ Ժողովուրդին	41
- Թարգմանիչներու Աւանդը	43
- «Սիրտս Ցաւում Է. Ինչո՞ւ»	50
- Մշակոյթի Ընդունակ Ազգեր Չեն Մեռնիր (Թարգմանչաց Տօնին Առթիւ)	56
- Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղի Ընկերային Ծառայութեան Գրասենեակը	61
- «Հորիզոն» 10 Տարեկան	63
- Դաշնակցական Ընկեր	68
- «Ես Տեսայ Ընկ. Դրոն»	76
- Դրոյի Հետքերով	79
- Զօրավար Դրոյի Նուիրում ժողովրդային Հանդիսութիւն	83
- Զօրավար Դրոյի Աճիւններու Տարեդարձը	86
- Հայ Գրագետը Եւ Իր Ճամբան	89
- Հայ Մամուլի Կարելորութիւն	94
- Փշուր-Փշուր Մանկութիւն	98
- Խոր Վիրապ՝ «Խորհուրդ Խորին»	103
- Վարդանանց Ուղիով	105
- Հայկական Մամուլ Եւ Զարոգչական Աշխատանք	108
- Հայ Գիրքն Է Ճանապարհն Հայուն՝ Աշխարհի Չորս Ծագերուն	112
- Գանատահայ Տաղանդաւոր Երգչուհի Օրդ. Իզապէլ Պայրազտարեան	116
- Հայացնենք Արցախի Ազատագրում Յոյսերը	119
- Անմահութեան Ճանապարհով	123
- Ի Փառս Պատիւ Եւ Հայրենեայց Կեդրոնական Պաշտպանական Շրջանի Մարտական Ուղին	128
- «Լոյս» Երկամսեակի Հրատարակութիւնը	136
- Փոխան Վերջաբանի Ուղերձ Ամ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Ընորհազարդ Կաթողիկոս Մեծն Տանն Կիլիկիոյ	139

Բ. Ուսումնասիրութիւններ

- Ճանչնանք Ռազգան	145
- Դանիէլ Վարուժան	148
- Արշակ Բ.ի Զաղաքականութիւնը	159
- Փետրուարեան Ապստամբութիւնը	174
- Հո՛ն	187
- Յովհաննէս Թումանեան	189
- Անձինք Նուիրելը՝ Սպաղանաց Գալէ	193

Գ. Պատմուածքներ

- Խորտակուած Մէր	205
- Շունի Պատմութիւնը	216
- Ինչպէ՞ս Գտանք Արաբացած Սորաքոյրս	221
- Հայու Ճակատագիր	226
- Կիրակնօրեայ Դպրոցի Դաստիարակութեան Օգտակարութիւնը	231
- Նիւթապաշտութեան Հետեւանքները	234
- Մենք Այլ Մանկութիւն Զունեցանք	239
- Ինչպէս Հիմնուեցաւ Ռազգայի Կիրակնօրեայ Դպրոցը	244
- Հաւատքի Զօրութիւնը	249
- Բարեգործ Հայրս	253
- Ամէն Զարիքի Տակ, Բարիք Մը Կայ	261
- Ապու Սաիտ-Էլ-Պարրի	265
- «Դուք Հրաշալի Ժողովուրդ Էք»	272
- Հայ Գիրքը՝ Կեանքը Հայուն	276
- Հայացած Մեծ Բարերարուհի Միս Զարէն Եփփէ	280

Դ. Թղթակցութիւններ

- Յեղափոխական Ալպոմ	287
- Խորհրդածութիւններ Համազգային Երգչախումբի Համերգին Առթիւ	290
- Սրբազան Համերգ	294
- Հայաստանի Երգի-Պարի Համոյթի Այցելութիւնը Թորոնթոյի Հայ Կեդրոնին	296
- Համազգայինի Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Երգչախումբի Յեղափոխական Երգերու Երեկոն Բացառիկ Յաջողութեամբ Պսակուեցաւ	298
- Հայ Երգը Յաւերժ՝ Արարատի Պէտ	302
- Անխոնջ Մշակը Արժանի Է Մեծարանքի	305
- Էդիկ Յովսէփեանի Յորելիականի Յանձնախումբին	308
- Հայ Երգը Ահշ՝ Ազգապահպանման	311
- Հայ Երգը՝ Չուլալ Աղբիւր Կենսատու	314
- Հայ Երգի Աննախընթաց Փառատօն Թորոնթոյի Մէջ	317
- Սրբազան Համերգ, Երա՞գ ԹԷ Իրականութիւն	321
- Բացառիկ Երգահանդէս	325
- Հ.Օ.Ս.ի Ամառնային Ամէնօրեայ Վարժարանի Աւարտական Հանդէս	329
- Հայ Դպրոցը Սիրտն Է Հայուն (Հ.Օ.Ս.ի Ամէնօրեայ Վարժարանի Ամապերջի Հանդէս)	331
- Հ.Օ.Ս.ի Ամէնօրեայ Ճամբարի Աւարտական Հանդէս	335
- Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Թորոնթօ Այցելութիւնը	338
- Պատմական Օր Մը Թորոնթոյի Հայութեան Համար	341
- Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Հոգօրհներէքի Փառաշուք Տօնակատարութիւնը	345
- Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Հիմնարկէքը Գարեգին Բ. Կաթողիկոսի Հովանաւորութեամբ Լուսաւոր Նոր Էջ Մը Բացաւ...	348
- Երանաշնորհի Չարեհ Սքանչելի Կաթողիկոսի Յիշատակը Երբեք Պիտի Չթառամի	351
- Սուրբ Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Շինութիւնը Շուտով Կը Սկսի	354
- Մեր Հոգիներուն Տունը Սկսաւ Կառուցուիլ	356

- «Մենք Պիտի Շինենք Մեր Եկեղեցին Որպես Յուշարձան Հայութեան»	357
- Հանդիսաւոր Օծում Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Ձեռամբ՝ Գարեգին Բ. Կաթողիկոսի	364
- Վասնզի Մշակը Իր Վարձքին Արժանի Է	369
- «Եկայք Շինեցուցիք զՍուրբ Խորանն Լուսոյ»	372
- Հաւատքի Բերդ Մըն Այլ Բարձրացաւ Թորոնթոյի Մէջ	375
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հովուապետական Անդրանիկ Այցելութիւնը Թորոնթոյի Հայութեան	380
- Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ի Այցելութիւնը Սբ. Աստուածածին Եկեղեցի, Հայ Կեդրոնի եւ Հ.Օ.Մ.ի Ամէսօրեայ Վարժարան	383
- Հիմնարկէքի Արարողութիւն Թորոնթոյի Հայ Աւետարանական Եկեղեցիի	386
- Հայ Եկեղեցւոյ Առաքելութիւնը եւ Հայ Կիւնը	390
- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Թորոնթոյի Մէջ	393
- Աստուածաշունչ Եւ Ժողովուրդ	406
- «Պատիւս Արժանաւորաց»	411
- Երա՞զ ԹԵ Իրականութիւն	416
- Թէյասեղան Ռազգայի Մէջ	419
- Վեց Դպրոցներու Հաւաքական Կիրակնօրեայ Հաւաքոյթ	420
- 1954ի Շրջանաւարտներու Ի Պատիւ Տրուած Հաւաքոյթ	422
- Վկայականաց Բաշխման Հանդէս Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Կեդրոն Բաժնի Մէջ	424
- Վիճաբանական Ասուլիս	429
- Կաղանդի Հանդէս	430
- Ծնողական Հաւաքոյթ	431
- Ողջերթի Երեկոյ	432
- Ամանորեան Հաւաքոյթ	434
- Վարդանանցը Կիրակնօրեայի Կեդրոն Բաժնի Մէջ	435
- Տարօնցի Երիտասարդներու Հաւաքոյթը	436
- Սերոբ Աղբիւրի Ներկայացումը Հալէպի Մէջ	438
- Փետրուարեան Ապստամբութեան Տօնակատարութիւնը Թրիփոլիի Մէջ	440
- Հայոց Մեծ Եղեռնի 67-Ամեակի Ոգեկոչումը Թորոնթոյի Մէջ	443
- Ընդունելութիւն՝ Ի Պատիւ Ամերիկահայ Գրագետներու	447
- Արթօ Չաքմաքճեանի Յուցահանդէսը	449
- Հայ Մշակութային Անսախընթաց Փառատօն՝ Թորոնթոյի Մէջ	450
- Համազգայինի Հայ Կրթական Եւ Մշակութային 12րդ Տարեկան Համախմբումը Թորոնթոյի Մէջ	458
- Համազգայինի Մշակութային 16րդ Համախմբումը	461
- Գինեձօն՝ Արժ. Տ. Արմէն Զին. Իշխանատեանի «Երկու Աշխարհ» Գիրքին	464
- Թորոնթոյի Կրթական Երազներէն ՄԷԿն Այլ Իրականացաւ, Նոր Փեթակը	467
- Հ.Օ.Մ.ի Ամէսօրեայ Վարժարանի Նորակառոյց Շէնքի Բացման Պաշտօնական Հանդիսութիւնը	468
- Հ.Օ.Մ.ի Ամէսօրեայ Վարժարանի Նորակառոյց Շէնքի Բացման Պաշտօնական Հանդիսութիւնը Տեղի Ունեցաւ Խանդավառ Մթնոլորտի Մէջ	474
- Հայ Գրագետները Այցելեցին Հ.Օ.Մ.ի Ամէսօրեայ Վարժարանը	484
- Հայ Դպրոցը Կեանքն Է Հայուն	485
- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Այցելութիւնը Ս. Աստուածածին Հայց. Առաք. Եկեղեցի եւ Հ.Օ.Մ.ի Ամէսօրեայ Վարժարան	489
- «Պայծառ Արշալոյսներու Հրամայականով»	493

- Հայաստանի Նախարարներու Խորհուրդի Նախագահ Ֆադեյ Սարգիսեանի Թորոնթօ Այցելութիւնը	499
- Հայ Կեդրոնի Երեցներու Ընկերակցութեան Հիմնադրութեան 4րդ Տարեդարձը	503
- Ապրիլեան Մեծ Եղեռնի Նահատակներուն Յուշարձանի Բացումը	506
- Հայութիւնը Միակամօրէն Պահանջատէր	508
- Դոքթ. Աբել Աղաբէկեան Թորոնթոյի Հայ Կեդրոնի Մէջ	510
- Էլէնա Պոննըր Եւ Տոքթ. Փրոֆ. Գեորգ Բարսեղով Հայ Կեդրոնի Մէջ	514
- Սենթ Զաթրինգի Նոր Հայ Կեդրոնի Պաշտօնական Բացման Հանդիսութիւնը	517
- 1500 Ազատատենչ Հայորդիներ Անկարագրելի Խանդավառութեամբ Դիմաւորեցին Հայաստանի Անկախութեան Վեհագոյն Արշալոյսը	522
- Իրանահայութեան Պատմական Անցեալը Եւ Ներկայի Դերը՝ Իրան-Հայաստան Փոխ-Յարաբերութեան Մէջ	524
- «Ճորճթաունի Տղաք»ը Կը Պատուուին	532
- «Քելէ Լաօ, Քելէ Էրթանք Մըր Էրկիր»	534
- Արհիպատիւ Տէր Մանուէլ Եպսկ. Պաթագեանի Այցելութիւնը, Հիմնարկէք՝ Հայոց Մեծ Եղեռնի Յուշակոթողին	537
- Հայաստանի Վերանկախացման 10րդ Տարեդարձի Տօնակատարութիւնը	542
- Հայկական Ցեղասպանութեան Նահատակներուն Յիշատակը Յաւերժացնող Կոթող Մը Եւս Բարձրացաւ Թորոնթոյի Մէջ	550
- «Պատիւս Արժանաւորաց»	558
- Չօրավար Արթուր Աղաբէկեան Թորոնթոյի Մէջ	563
- Արցախի Ազատագրական Շարժման 15-Ամեակի Ժողովրդական Ասուլիս Եւ Յուշ Երեկոյ	565

Ե. Հարցագրոյցներ

- Բանաստեղծ Վահագն Դաւիթեանի Հետ	571
- Վիճաբանական Ասուլիս, «Կարելի՞ Է Հայ Մշակոյթ Ստեղծել Սփիւռքի Մէջ»	575
- Հարցագրոյց՝ Հ.Օ.Ս.ի Պապայեան Մանկապարտեզի Եւ Ամէնօրեայ Վարժարանի Տնօրէն՝ Ընկ. Մարգար Շարապիսանեանի Հետ	582
- Հարցագրոյց՝ Թորոնթոյի Հ.Օ.Ս.ի Ամէնօրեայ Վարժարանի Շէնքի Շինութեան Յանձնախումբի Ատենապետ Ընկ. Յարութիւն Շիթիլեանի Հետ	585
- Հարցագրոյց՝ Խաչիկ Թէօլէօլեանի Հետ	588
- Ամենապատիւ Շնորհք Պատրիարք Կը Պատասխանէ Մեր Թղթակիցի Հարցումներուն	598
- Հարցագրոյց՝ Երաժիշտ-Խմբավար Ալֆրետ Մարտոյեանի Հետ	603
- Հարցագրոյց՝ Կորին Եպսկ. Պապեանի Հետ	606
- Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ Շինութեան Շուրջ	612
- Հարցագրոյց՝ Հայր Լեւոն Վրդ. Չէքեանի Հետ	615
- Հարցագրոյց՝ Գեղանկարիչ Գրիգոր Մոմճեանի Հետ	621
- Հարցագրոյց՝ Խորհրդային Հանրային Գործիչ Էլէնա Պոննըրի Հետ	626
- Ստերիմ Չրոյց՝ Երաժիշտ-Խմբավար Յովհաննէս Չէքիճեանի Հետ	630
- Պարի Հրաւերք՝ Որպէս Ինքնութեան Կանչ Հարցագրոյց Տիկին Արուսեակ Սահակեանի Հետ	632
- «Ուժեղ Եւ Ժողովրդական Հայաստանը՝ Եզիտի Ազգի Զաղաքական Ապագան Է»	643

- «Ի՞նչ է Նշանակում ԵՉՏ-ի Եւ Ովքեր Եւ Նրանք» Սկրոտիչ Ասլանեան 649
- «Փոքրամասնություններուն՝ Յառաջիկայ Ընտրություններուն
Ներկայանալ ՄԷկ Ցուցակով» 650
- Նամակ՝ Հայաստանի «Էզդիխանա» Հասարակական-Քաղաքական
Կազմակերպության Նախագահ՝ Ս. Բաքոյեանէն 651
- Հարցազրոյց՝ Քաղաքական Բանտարկեալ Համբիկ Սասունեանի Հետ 652
- Հայ Կեդրոնի Եւ Հ.Օ.Մ.ի Ամենօրեայ Վարժարանի 20-Ամեակի Առիթով
Հարցազրոյց Պատասխանատուներուն Հետ 657
- Հարցազրոյց՝ Սուրբ Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Եւ
Հայ Կեդրոնի Հանգանակիչ Մարմնի Աշխատանքներուն Շուրջ 662
- Հարցազրոյց՝ Մեծն Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Զրիստոնեական
Դաստիարակութեան Բաժանմունքի Փոխ-Վարիչ՝ Հոգեշնորհ Տ. Մաշտոց
Վրդ. Չօպանեանի Հետ 665
- Հարցազրոյց՝ Կիպրահայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ
Գերաշնորհ Տ. Վարուժան Ս. Արք. Հերկելեանի Հետ 668

2. Առիթներով Խօսուածներ

- Խօսուած՝ Ռազգայի Նուպարեան Վարժարանի Ամալերջի Հանդէսին
Տեսրէն Գրիգոր Հոթոյեանի Կողմէ 673
- Խօսուած՝ Թորոնթոյի Միջ-Յարանուանական Մարմնի Կազմակերպած
Հայոց Մեծ Եղեռնի Ոգեկոչական Հանդիսութեան Գրիգոր Հոթոյեանի
Կողմէ 675
- Խօսուած՝ Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Օծման Հանդիսութեան
Առթիւ Գրիգոր Հոթոյեանի Կողմէ 678
- Խօսուած՝ Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Սուրբ Ծննդեան
Ճաշկերոյթին Գրիգոր Հոթոյեանի Կողմէ 680
- Խօսուած՝ Հնչակեան 20 Կախաղաններու Յիշատակութեան 72րդ
Տարեդարձին Գրիգոր Հոթոյեանի Կողմէ 683
- Խօսուած՝ Երանաշնորհի Չարեհ Կաթողիկոսի Վախճանման 25րդ
Տարեկիցին Առթիւ Կազմակերպուած Յիշատակի Հանդիսութեան
Գրիգոր Հոթոյեանի Կողմէ 685
- Խօսուած՝ Սուրբ Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Սուրբ
Ծննդեան Ճաշկերոյթին Գրիգոր Հոթոյեանի Կողմէ 687
- Խօսուած՝ Հնչակեան 20 Կախաղաններու Յիշատակութեան Ձեռնարկին
Գրիգոր Հոթոյեանի Կողմէ 689
- Արտասանուած՝ «Նուիրում» Հատորի Ընտրահանդէսին Գրիգոր
Հոթոյեանի Կողմէ 692
- Արտասանուած՝ Հայ Գրողներու Համագաղութային Ա. Խորհրդաժողովին
Գրիգոր Հոթոյեանի Կողմէ 695
- Չարեհ Ս. Արք. Ազնաւուրեանի Վախճանման Քառասունքին Առթիւ
Խօսուած Գրիգոր Հոթոյեանի Կողմէ 696
- Արտասանուած՝ «Ի Խնդիր Բարոյական Ծճարտութեան» Հատորի
Ընտրահանդէսին, Գիրքի Հեղինակէն 699

Է. Մահագրութիւններ

- Գանատայի Հայութիւնը Ազգային Թաղումով Իր Երախտագիտութիւնը Եւ
Անհուն Սերը Յայտնեց Ընկեր Անդրանիկ Արթիսեանին 703
- Դուն Էլ, Luso՝ (Սիմոն Սիմոնեանի Մահուան Քառասունքի Առթիւ) 706

- Անդրանիկ Ծառուկեանի Անթառամ Յիշատակին (Յուշեր եւ Ապրումներ)	709
- Դո՞ւն Ալ, «Ազգապետ»	716
- Չուարթ Շեհիրեանի Յիշատակին	721
- Ի Յուշ Հանգիստ՝ Արժ. Կ. Վահան Ա. Զին. Ղազարեանի	724
- Ի Յուշ Դար Մը Նուիրում Յովսէփ Օսանեանի (Աշուղ Յովնանի) Յիշատակին	728
- Սրտագին Նամակ Հանգուցեալ Թանկագին Զենեկալիս Ընկ. Սարգիս Կոնճեանին	733
- Կաղնի Մըն Ալ Տապալեցաւ	738
- Կարապետ Սարգիսեանի Յիշատակին	741
- Տերեւաթափ Ազգասեր Եւ Ազնուական Հայրը՝ Յակոբ Սարգիսեանի Ոչ Եւ Է	744
- Ոչ Եւ Է Ընկեր Կարօ Փաշայեան	747
- Ազգային Թաղում Ընկեր Գուրգէն Մակարեանի	753
- Վախճանման Ա. Տարելից Հոգեւոյս Տեր Վարանդ Զին. Պետրոսեանի	756

Ը. Երգեր

- Երբ Ձայնդ Լսեցի	761
- Սուրբ Խաչի Ճամբով	763
- Մաղթերգ՝ Հ.Օ.Մ.ի Ամառնային Ճամբարին	764
- Զեզի Հրեշտակ Կարծեցի	766
- Ի՞նչ Ընեմ	768
- Ծնունդի Գիշեր	770
- Հայոց Լեզու	773

Թ. Բանաստեղծութիւններ

- Յիշատակդ Սիրելիս	783
- Չարեհ Սրբազան Արք. Ազնաւուրեանին	784
- Մաղթերգ Կիլիկեան Դպրեվանքին	785
- Երբ Ձայնդ Լսեցի	786
- Սիրելի Սարիկ Պապեանին	787
- Վարագ Պապեանին	788
- Թռնիկիս՝ Ստեփան-Արմենին	789
- Սիրելի Վարագ Պապեան	790
- Սիրելի՛ Կարօ Փաշայեանին	791
- Սիրելի՛ Արիանէ Ղազարեանին	792
- Երբ Բազէն Ծնաւ	793
- Կնոջս՝ Շաքէին (Մեր Ամուսնութեան 50-Ամեակին Առթիւ)	794
- Նորապսակ Րաֆֆի Եւ Լարա Տուտազլեանին	795
- Զաջ Հովիւը	796
- Սուրբ Աստուածածին	797
- Սիրելի Վարդան Փիլաւճեանին	799
- Ծնունդի Գիշեր	800
- Սուրբ Խաչի Ճամբով	801

- Սիրելի Մարգար Եւ Էլիզ Շարապխանեան 802

**Ժ. Գրախօսականներ Եւ Վկայութիւններ «Նուիրում»ի
Հրատարակութեան Առթիւ**

- Բանաստեղծ Մարդը՝ Բառերի Մէջ 805
- Զնարերգակ Բանաստեղծ Գրիգոր Հոթոյեան 808
- Գրիգոր Հոթոյեան Եւ Իր Նոր Գործը 810
- Գրիգոր Հոթոյեանի «Նուիրում»ով Ինքնաբացայայտումը 813
- Երգերի Միջոցով Զայլող Հայը 815
- Նամակ՝ Տէր Չարեհ Ա. Զին. Չարգարեանէն 818
- Նամակ՝ Վահրամ Պոյաճեանէն 819
- Նամակ՝ Գրիգոր Փիտեճեանէն 820
- Նամակ՝ Կարպիս Թելեանէն Եւ Ժիրայր Աթթարեանէն 821
- Նամակ՝ Տէր Արմէն Աւագ Զ. Իշխանեանէն 822
- Նամակ՝ Յովնան Արք. Առաջնորդէն 823
- Գրիգոր Հոթոյեանի «Նուիրում» - Հ. Սեփեթճեան 824
- Նամակ՝ Նորայր Զին. Բաթանեանէն 825
- Նամակ՝ Փրոֆ. Շաքէ Մինասեանէն 826
- «Ներքնաշաղախ» - Հայկուհի Յովհաննիսեան 827
- Նամակ՝ Արմէն Տօնոյեանէն 828
- Նամակ՝ Ռուբէն Գ. Պարսումեանէն 829
- Նամակ՝ Կարպիս Արմէնէն 830
- Նամակ՝ Խաչիկ Թաշճեանէն 831

**Ի. Գրախօսականներ Եւ Վկայութիւններ «Ի Խնդիր Բարոյական
Ճշմարտութեան» Հատորին Հրատարակութեան Առթիւ**

- Շնորհահանդէս-Գինեձօն Գրիգոր Հոթոյեանի «Ի Խնդիր Բարոյական
Ճշմարտութեան» Պատմութեանը Հատորին 835
- Բանաստեղծ Գրիգոր Հոթոյեանի «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան»
Գրքի Շնորհահանդէսի Առիթով Յակոբ Մանուկեանէն 838
- Խօսուած՝ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» Գինեձօնին Տէր Արմէն
Զին. Իշխանեանի Կողմէ 840
- Խօսուած՝ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» Գինեձօնին Մուշեղ
Գարագաշեանի Կողմէ 842
- Աշակերտական Տպաւորութիւններ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան»
Հատորի Ընթերցումէն Ետք 845
- Խօսուած՝ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» Գրքի Շնորհահանդէսին
Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրեշեանի Կողմէ 848
- Կենսագրական Տեղեկութիւններ Բանաստեղծ, Արձակագիր Եւ
Հրապարակագիր Գրիգոր Հոթոյեանի - Յակոբ Ճանպազեան 849
- Նամակ՝ Բաբգէն Թովմեանէն Եւ Սասուն Գրիգորեանէն 853
- Յօդուած՝ Վարդինէ Էթոյեանէն 854
- Նամակ՝ Նորայր Ա. Զին. Բաթանեանէն 856
- Նամակ՝ Վարդգէս Մինանեանէն Եւ Արի Թօփուզխանեանէն 857
- Գրիգոր Հոթոյեան Բարոյախօս Ուսուցիչը - Արմէն Տօնոյեան 858
- Նամակ՝ «Հորիզոն»ի Վարիչ Խմբագիր Վահագն Գարագաշեանէն 860
- Մեծարանքի Ցերեկոյթ Երեւանի Մէջ 861

- Բանաստեղծ, Արձակագիր, Հրապարակագիր Գրիգոր Հոթոյեան
Արժանացաւ «Ս. Մեսրոպ Մաշտոց» Շքանշանին 863
- Ընկ. Գրիգոր Հոթոյեան «Տարեցներու Միջազգային Տարուան»
Մրցանակին Արժանացաւ 864
- Նամակ՝ Լեւոն Անանեանէն եւ Սասուն Գրիգորեանէն 865